

2012
21 JUL 2009
Ա.Ֆ.
290

ՆՈՐ

ԿՏԱԿԱՐԱՆ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՑ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ՀԱՄԵՄԱՏԵԱԼ ԸՆԴ ՅՈՑՆ ԲՆԱԳՐԻՆ

A. B. S.
20,950

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ց. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

1914



290-2012
ԱԲ290

Ա.ԻՕ ՑԱՎՀԱՆՆԻՍԱՆ
1960
ՆՈՐ - ՋՈՒՂԱ

2892-2009

ՅԱՆԿ

ՆՈՐՈՅ ԿՏԱԿԱՐԱՆԻ

	Գլուխք	Էջ
Ա.ԻԵՏԱՐԱՆ		
ըստ Մատթէոսի	28	1
ըստ Մարկոսի	16	90
ըստ Ղուկասու	24	151
ըստ Յովհաննու	21	247
Գործք Առաքելոց	28	318
ԹՈՒՂԹ ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ		
առ Հռովմայեցիս	16	410
առ Կորնթացիս Ա.	16	448
առ Կորնթացիս Բ.	13	486
առ Գաղատացիս	6	512
առ Եփեսացիս	6	525
առ Փիլիպեցիս	4	538
առ Կողոսացիս	4	548
առ Թեսաղոնիկեցիս Ա.	5	557
առ Թեսաղոնիկեցիս Բ.	3	566
առ Տիմոթէոս Ա.	6	571
առ Տիմոթէոս Բ.	4	582
առ Տիտոս	3	590
առ Փիլիմոն	1	595
առ Եբրայեցիս	13	597

ԹՈՒՂԹ			Գլուխք	Էջ
Յակովբայ Առաքելոյ			5	627
Պետրոսի Առաքելոյ		Ա.	5	637
Պետրոսի Առաքելոյ		Բ	3	649
Յովհաննու Առաքելոյ		Ա.	5	656
Յովհաննու Առաքելոյ		Բ	1	666
Յովհաննու Առաքելոյ		Գ	1	668
Յուդայի Առաքելոյ			1	670
Յայտնութիւն	Յովհաննու	Առաքելոյ	22	674

ԳԼՈՒԽՔ ՄԱՏԹԷՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

	Գլ.	Հմր.
Վասն մոգուցն.	Բ.	1
Վասն կատարածի մանկանցն.	Բ.	16
Վասն յառաջընթաց քարոզութեանն Յովհաննու Մկրտչին.	Գ.	1
Վասն վարդապետութեան Փրկչին.	Դ.	23
Վասն երանութեանն.	Ե.	2
Վասն բորոտին.	Ը.	1
Վասն հարիւրապետին.	Ը.	5
Վասն ղոքանչին Պետրոսի.	Ը.	14
Վասն բժշկութեան ամենայն ցաւոց.	Ը.	16
Վասն՝ որ ոչ ետ հրաման երթալ զկնի.	Ը.	19
Վասն աստեղոյն ի վերայ ջրոցն.	Ը.	23
Վասն դիւահարացն.	Ը.	28
Վասն անդամալուծին.	Թ.	1
Վասն Մատթէի.	Թ.	9
Վասն դստեր ժողովրդապետին.	Թ.	18
Վասն տեառնտեսին.	Թ.	20
Վասն երկուց կուրացն.	Թ.	27
Վասն խլին և համր դիւահարին.	Թ.	32
Վասն Առաքելոցն իշխանութեան.	Ժ.	1
Վասն առաքելոցն ի Յովհաննէ.	ԺԱ.	2
Վասն՝ որոյ ձեռն գօսացեալ էր.	ԺԲ.	10
Վասն կոյր և խուլ դիւահարին.	ԺԲ.	22
Վասն՝ որ խնդրէին նշանս.	ԺԲ.	38

	Գլ.	Հմր.
Վասն այգւոյն առաւկին.	ԻԱ.	33
Վասն կոչեցելոց ի Հարսանիսն.	ԻԲ.	1
Վասն գահեկանին, որով փորձեցին զՏէրն.	ԻԲ.	15
Վասն սադուկեցւոցն.	ԻԲ.	23
Վասն օրինականացն.	ԻԲ.	34
Վասն Տեառն Հարցանելոյն զփարիսեցիսն.	ԻԲ.	41
Վասն վայ տալոյ դպրացն և փարիսեցւոցն.	ԻԳ.	13
Վասն կատարածի.	ԻԴ.	3
Վասն աւուրն և ժամուն.	ԻԴ.	36
Վասն տասն կուսանացն.	ԻԵ.	1
Վասն գտաղանդան տալոյ.	ԻԵ.	14
Վասն գալստեանն Տեառն.	ԻԵ.	31
Վասն օծանելոյ զՏէրն իւղով.	ԻՋ.	6
Վասն պատրաստելոյ զպասեքն.	ԻՋ.	17
Վասն օրինաւոր խորհրդոյն.	ԻՋ.	26
Վասն մատնութեանն Տեառն.	ԻՋ.	47
Վասն ուրացութեանն Պետրոսի.	ԻՋ.	69
Վասն Յուդայի զղջմանն.	ԻԷ.	3
Վասն խնդրելոյ զՏէրունական մարմինն.	ԻԷ.	57
Վասն իւղաքեր կանանցն.	ԻԸ.	1

	Գլ.	Հմր.
Վասն առաքացն.	ԺԳ.	1
Վասն Յովհաննու, և Հերովդէի.	ԺԴ.	1
Վասն հինգ հացիցն.	ԺԴ.	15
Վասն երթալոյն ի վերայ ծովուն.	ԺԴ.	22
Վասն անցելոցն զպատուիրանաւն Աստուծոյ.	ԺԵ.	1
Վասն կնոջն Քանանացւոյ.	ԺԵ.	21
Վասն բժշկելոյ զժողովուրդն.	ԺԵ.	29
Վասն եւթն հացիցն	ԺԵ.	32
Վասն խմորոյ փարիսեցւոցն.	ԺԶ.	6
Վասն՝ որ ի Կեսարիա Փիլիպեայ.	ԺԶ.	13
Վասն այլակերպութեանն Տեառն.	ԺԷ.	1
Վասն լուսնահարին.	ԺԷ.	14
Վասն խնդրելոյ զերկդրամեանն.	ԺԷ.	23
Վասն հարցանելոյ՝ թէ Ո՞ է ի մէնջ մեծ.	ԺԸ.	1
Վասն առակի հարեւր ոչխարին.	ԺԸ.	12
Վասն թողլոյն զբեւր տաղանդն.	ԺԸ.	23
Վասն հարցանելոյն թէ արժա՞ն է արձակել առն զկին.	ԺԹ.	1
Վասն հարցանելոյ մեծատանն զՅիսուա.	ԺԹ.	16
Վասն վարձկանութեան մշակացն.	Ի.	1
Վասն որդւոցն Զեբեդեայ.	Ի.	20
Վասն երկուց կուրացն.	Ի.	29
Վասն իշուն և յովանոակին.	ԻԱ.	1
Վասն կուրացն և կաղացն.	ԻԱ.	14
Վասն չորանալոյ թզենւոյն.	ԻԱ.	18
Վասն հարցանելոյ զՑերն քահանայապետին և ծերոց.	ԻԱ.	23
Վասն երկուց որդւոցն առակաց.	ԻԱ.	28

ԱՒԵՏԱՐԱՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա

1 Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի որդւոյ Դաւ-
թի որդւոյ Աբրահամու։
2 Աբրահամ ծնաւ զիսահակ. Իսահակ ծնաւ զՅա-
կովբ. Յակովբ ծնաւ զՅուդա և զեղբարս նորա.
3 Յուդա ծնաւ զփարէս և զԶարա ի Թամարայ. փա-
4 րէս ծնաւ զԵզրովմ. Եզրովմ ծնաւ զԱրամ. Արամ
ծնաւ զԱմինադաբ. Ամինադաբ ծնաւ զՆաասոն.
5 Նաասոն ծնաւ զՍաղմոն. Սաղմոն ծնաւ զԲոոս
ի Հռաքաբայ. Բոոս ծնաւ զՈվբէդ ի Հռութայ.
6 Ովբէդ ծնաւ զՅեսսէ. Յեսսէ ծնաւ զԴաւիթ ար-
քայ. [1]Դաւիթ ծնաւ զՍողոմոն ի կնոջէն Ուրիայ.
7 Սողոմոն ծնաւ զՐոբովամ. Րոբովամ ծնաւ զԱ-
8 բիա. Աբիա ծնաւ [2]զԱսափ. Ասափ՝ ծնաւ զՅով-
սափատ. Յովսափատ ծնաւ զՅովրամ. Յովրամ
9 ծնաւ զՈզիա. Ոզիա ծնաւ զՅովաթամ. Յովաթամ
10 ծնաւ զԱքազ. Աքազ ծնաւ զԵզեկիա. Եզեկիա
ծնաւ զՄանասէ. Մանասէ ծնաւ [3]զԱմովս. Ամովս՝
11 ծնաւ զՅովսիա. Յովսիա ծնաւ զՅեքոնիա և զեղ-
12 բարս նորա առ գերութեամբն Բաբելացւոց։ Յետ

---

[1] Որմն. Դաւիթ արքայ
[2] Որմն. զԱսա. Ասա
[3] Որմն. զԱմոնէս. Ամոնէս

դերութեանն Բաբելացւոց ծնաւ Յեքոնիա զՍա-
13 ղաթիէլ. Սաղաթիէլ ծնաւ զԶօրաբաբէլ. Զօրա-
բաբէլ ծնաւ զԱբիուդ. Աբիուդ ծնաւ զԵղիակիմ.
14 Եղիակիմ ծնաւ զԱզովր. Ազովր ծնաւ զՍադովկ.
15 Սադովկ ծնաւ զԱքին. Աքին ծնաւ զԵղիուդ. Ե-
ղիուդ ծնաւ զԵղիազար. Եղիազար ծնաւ զՄատ-
16 թան. Մատթան ծնաւ զՅակովբ. Յակովբ ծնաւ
զՅովսէփ զայրն Մարեմայ [1]որում խոսեցեալ զՄա-
րիամ կոյս՝՝ յորմէ ծնաւ Յիսուս, որ անուանեցաւ
17 Քրիստոս: Արդ ամենայն ազգք յԱբրահամէ մինչեւ
ի Դաւիթ՝ ազգք չորեքտասանք. և ի Դաւթէ մին-
չեւ ի գերութիւնն Բաբելացւոց՝ ազգք չորեքտա-
սանք. և ի գերութենէն Բաբելացւոց մինչեւ ի Քրիս-
տոս՝ ազգք չորեքտասանք:

18 Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս.
խոսեալ զմայր նորա Մարիամ Յովսեփու, մինչչեւ
եկեալ առ միմեանս՝ գտաւ յղացեալ ի Հոգւոյն
19 Սրբոյ: Եւ Յովսէփ այր նորա, քանզի արդար էր
և ոչ կամէր առաւակել զնա, խորհեցաւ լռելեայն
20 արձակել զնա: Եւ մինչդեռ նա զայս ածէր
զմտաւ, ահա հրեշտակ Տեառն ի տեսլեան երեւեցաւ
նմա և ասէ, Յովսէփ, որդի Դաւթի, մի՛ երկնչիր
առնուլ առ քեզ զՄարիամ կին քո. քանզի որ
21 ի նմայն ծնեալ է՝ ի Հոգւոյն Սրբոյ է: Ծնցի որդի,
և կոչեսցես զանուն նորա Յիսուս, զի նա փրկեսցէ
22 զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց: Ամէն այս ա-
մենայն եղեւ զի լցցի որ ասացաւն ի Տեառնէ [2]ի
23 ձեռն Եսայեայ մարգարէի՝՝. Ահա կոյս յղասցի և

---

[1] Ի ցՈՒՆԷՆ պՀՈՒՔ [2] ԲՈՂՈՔ, Ի ՁԵՌՆ ՄԱՐԳԱՐԷԻ

ծնցի որդի, և կոչեացեն զանուն նորա Իմմանուէլ,
24 որ թարգմանի՝ Ընդ մեզ Աստուած: Եւ զարթուցեալ Յովսէփ ի քնոյ անտի, արար որպէս հրամայեաց նմա հրեշտակն Տեառն, և առ զինքն զկինն
25 իւր: Եւ ոչ գիտեր զնա, մինչեւ ծնաւ զորդին իւր զանդրանիկ, և կոչեաց զանուն նորա Յիսուս:

ԳԼ. Բ

1 Եւ ի ծնանելն Յիսուսի ի Բեթղեհեմ Հրէաստանի յաւուրս Հերովդի արքայի, ահա մոգք յարեւելից
2 եկին Երուսաղէմ, եւ ասեն, Ո՞ւր է որ ծնաւ արքայն Հրէից. զի տեսաք զաստղն նորա յարեւելս, և եկաք երկիր պագանել նմա:
3 Եւ իբրեւ լուաւ արքայ Հերովդէս, խռովեցաւ, և ամենայն
4 Երուսաղէմ ընդ նմա: Եւ ժողովեալ զամենայն զքահանայապետս և զդպիրս ժողովրդեանն՝ հարցանէր ի նոցանէ թէ ո՛ւր ծնանիցի Քրիստոս:
5 Եւ նոքա ասեն ցնա, Ի Բեթղեհեմ Հրէաստանի. զի
6 այսպէս գրեալ է ի ձեռն մարգարէին. Եւ դու, Բեթղեհեմ, երկիր Յուդայ, ոչինչ կրտսեր ես յիշխանս Յուդայ. ի քէն ելցէ ինձ իշխան, որ հով-
7 ուեսցէ զժողովուրդ իմ զԻսրայէլ: Յայնժամ Հերովդէս գաղտ կոչեաց զմոգսն, և ստուգեաց ի նո-
8 ցանէ զժամանակ աստեղն երեւելոյ. Եւ արձակեալ զնոսա ի Բեթղեհեմ, ասէ, Գնացէք, ստուգեցէք վասն մանկանն, և յորժամ գտանիցէք, ազդ արասջիք ինձ, զի և ես եկեալ երկիր պագից
9 նմա: Եւ նոքա իբրեւ լուան ի թագաւորէն, գնացին. և ահա աստղն զոր տեսին յարեւելս՝ առաջնորդեաց նոցա, մինչեւ եկեալ եկաց ի վերոյ ուր

10 էր մանուկն։ Իբրեւ տեսին զաստղն, խնդացին
11 յոյժ ուրախութիւն մեծ։ Եւ իբրեւ մտին ի տունն,
տեսին զմանուկն Տանդերձ Մարեմամ մօրն իւ-
րով, և անկեալ երկիր պագանէին նմա. և բացեալ
զգանձս իւրեանց մատուցին նմա պատարագս՝ ոսկի
12 և կնդրուկ և զմուռս։ Եւ հրամայեաց առեալ ի տես-
լեան չդառնալ անդրէն առ Հերովդէս՝ ընդ այլ
ճանապարհ գնացին յաշխարհն իւրեանց։
13 Եւ իբրեւ գնացին նոքա անտի, ահա հրեշտակ
Տեառն երեւեր ի տեսլեան Յովսեփու և ասէր, Արի,
առ զմանուկդ և զմայր իւր, և փախիր յԵգիպտոս,
և անդ լինիջիր ցորժամ ասացից քեզ. քանզի ի
14 խնդիր ՙէ Հերովդէս կորուսանել զմանուկդ։ Եւ նա
յարուցեալ առ զմանուկն և զմայր իւր գիշերի, և
գնաց յԵգիպտոս, և անդ էր մինչեւ ցվախճան Հե-
15 րովդի. Չի լցցի ասացեալն ի Տեառնէ ի ձեռն մար-
գարէին որ ասէ, ՚Ի յԵգիպտոսէ ՚կոչեցից զորդի իմ։
16 Յայնժամ իբրեւ տեսս Հերովդէս թէ խաբեցաւ
ի մոգուց անտի, բարկացաւ յոյժ. և առաքեաց
կոտորեաց զամենայն մանկունս որ էին ի Բեթղե-
հեմ և յամենայն սահմանս նորա յերկեմնից և
ի խոնարհ՝ ըստ ժամանակին զոր ստուգեաց ի մո-
17 գուցն։ Յայնժամ կատարեցաւ ասացեալն ի ձեռն
18 Երեմիայ մարգարէի որ ասէ, Ձայն գուժեաց ի
Հռամա, ողբումն և լալումն և աշխարումն յոյժ.
Հռաքէլ լայր զորդիս իւր, և ոչ կամէր միխի-
19 թել, զի ոչ էին։ Եւ ի վախճանին Հերովդի՝ ահա
հրեշտակ Տեառն ի տեսլեան երեւեր Յովսեփայ ին

---

[1] Ց-ՅՆ, լինելոց է

[2] Ց-ՅՆ, կոչեցի

20 գիպատոս, եւ ասէր, Արի, առ զմանուկդ և զմայրն
իւր, և գնա յերկիրն Իսրայելի, զի մեռան որ
21 խնդրէին զանձն մանկանդ։ Եւ նա յարուցեալ առ
զմանուկն և զմայրն նորա, և եկն յերկիրն Իսրա-
22 յելի։ Եւ իբրեւ լուաւ եթէ Արքեղայոս թագա-
ւորեաց Հրէաստանի փոխանակ Հերովդի հօր իւ-
րոյ, երկեաւ երթալ անդր. և հրաման առեալ
23 ի տեսլեան՝ գնաց ի կողմանս Գալիլեացւոց։ Եւ
եկեալ բնակեցաւ ի քաղաքին որ կոչէր Նազարէթ,
զի լցցի բան մարգարէիցն թէ Նազովրեցի կոչեսցի։

ԳԼ. Գ

1 Յաւուրսն յայնոսիկ գայ Յովհաննէս մկրտիչ քա-
2 րոզել յանապատին Հրէաստանի, եւ ասել, Ա-
պաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւն երկ-
3 նից. Զի սա է ասացեալ որոյ ասացաւ ի ձեռն Եսայեայ
մարգարէի, որ ասէ, Ձայն բարբառոյ յանապատի.
Պատրաստ արարէք զճանապարհ Տեառն, և ուղիղ
4 արարէք զշաւիղս նորա։ Եւ ինքն Յովհաննէս ու-
նէր հանդերձ ի ստեւոյ ուղտոյ, և գօտի մաշկե-
ղէն ընդ մէջ իւր, և կերակուր նորա էր մարախ
5 և մեղր վայրենի։ Յայնժամ ելանէին առ նա ա-
մենայն Երուսաղէմացիք և ամենայն Հրէաստան և
6 ամենայն կողմն Յորդանանու, եւ մկրտէին ի նմա-
նէ ի Յորդանան [1]գետ, և խոստովան լինէին զմեղս
7 իւրեանց։ Եւ տեսեալ զբազումս ի սադուկեցւոցն
և ի փարիսեցւոց եկեալս ի մկրտութիւն նորա, ա-
սէ ցնոսա, Ծնունդք իժից, ո՞ ցոյց ձեզ փախչել

[1]Յոհան. գլուխ

8 ի բարկութենէն որ գալոցն է։ Արարէք պտուղ
9 պտուղ արժանի ապաշխարութեան. Եւ մի՛ հա-
մարիցիք ասել յանձինս թէ ունիմք մեք Հայր զԱբ-
րահամ. ասեմ ձեզ, զի կարող է Աստուած ի քա-
րանցս յայսցանէ յարուցանել որդիս Աբրահամու։
10 Զի եւսիկ տապար առ արմին ծառոց դնի. ամե-
նայն ծառ որ ոչ առնիցէ զպտուղ բարի՝ հատանի
11 և ի հուր արկանի։ Ես մկրտեմ զձեզ ջրով յա-
պաշխարութիւն, բայց որ գալոցն իմ գայ՝ հզօրագոյն
է քան զիս, և ես չեմ բաւական բառնալ զկօշիկս
նորա. նա մկրտեսցէ զձեզ ի Հոգին Սուրբ և ի հուր.
12 Որոյ հեծանոցն ի ձեռին իւրում, և սրբեսցէ զկալ
իւր, և ժողովեսցէ զցորեանն ի շտեմարանս իւր, և
զխարդն այրեսցէ անշէջ հրով։
13 Յայնժամ գայ Յիսուս ի Գալիլէէ ի Յորդանան
14 առ Յովհաննէս մկրտել ի նմանէ։ Եւ Յովհաննէս
արգելու զնա և ասէ, Ինձ պիտոյ է ի քէն մկրտել,
15 և դու առ ի՞ս գաս։ Պատասխանի ետ Յիսուս և
ասէ ցնա, Թոյլ տուր այժմ, զի այսպէս վայել է
մեզ լնուլ զամենայն արդարութիւն. և ապա թոյլ
16 ետ նմա։ Եւ իբրեւ մկրտեցաւ Յիսուս, ել վաղվա-
գակի ի ջրոյ անտի, և ահա բացան նմա երկինք, և
ետես զՀոգին Աստուծոյ զի իջանէր իբրեւ զաղաւնի
17 և գայր ի վերայ նորա։ Եւ ահա ձայն յերկնից որ
ասէր, Դա է Որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ։

ԳԼ. Դ

1 Յայնժամ վարեցաւ Յիսուս յանապատ ի Հոգւոյն՝
2 փորձել ի Սատանայէ. Եւ պահեալ զքս աւուրն
սիւ և զքառասուն գիշերս՝ ապա քաղցեաւ։

3 Եւ մատուցեալ փորձիչն ասէ ցնա, Եթէ Որդի
ես Աստուծոյ, ասա զի քարինքս այսոքիկ հաց լի-
4 նիցին։ Նա պատասխանի ետ և ասէ, Գրեալ է թէ
Ոչ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բա-
նիւ որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ։
5 Յայնժամ առեալ սծէ զնա Սատանայ ի քա-
ղաքն սուրբ, և կացուցանէ զնա ի վերայ աշտա-
6 րակի տաճարին, եւ ասէ ցնա, Եթէ Որդի ես Ա-
ստուծոյ, արկ զքեզ աստի ի վայր, զի գրեալ է թէ
Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո, և
ի վերայ ձեռաց բարձցեն զքեզ, զի մի՛ երբեք
7 հարցես զքարի զոտն քո։ Ասէ ցնա [1]դարձեալ
Յիսուս, Գրեալ է թէ Ոչ փորձեսցես զՏէր Ա-
ստուած քո։
8 Դարձեալ առնու սծէ զնա Սատանայ ի լեառն
մի բարձր յոյժ, և ցուցանէ նմա զամենայն թա-
9 գաւորութիւնս աշխարհի և զփառս նոցա, եւ ասէ
ցնա, Զայս ամենայն քեզ տացց, եթէ անկեալ եր-
10 կիր պագանիցես ինձ։ Յայնժամ ասէ ցնա Յիսուս,
Երթ յետս իմ, Սատանայ, զի գրեալ է, Տեառն
Աստուծոյ քում երկիր պագցես և զնա միայն պաշ-
11 տեսցես։ Ապա եթող զնա Սատանայ, և ահա
հրեշտակք մատեան և պաշտէին զնա։
12 ԲՓ Եւ իբրեւ լուաւ Յիսուս եթէ Յովհաննէս
13 մատնեցաւ, մեկնեցաւ գնաց ի Գալիլեա. Եւ թող-
եալ զնազարէթ՝ եկն բնակեցաւ ի Կափառնայում
ի ծովեզերին, ի սահմանս Զաբուղոնի և Նեփթա-
14 ղիմայ. Զի լցցի բանն որ ասացաւ ի ձեռն Եսայեայ

---

[1]Բազմ. դարձեալ Յիսուս գրեալ

15 մարգարէի, երկիր Զաբուղոնի և երկիր Նեփթա-
ղիմայ, ճանապարհ ծովու յայնկոյս Յորդանանու,
16 Գալիլեա Հեթանոսաց. ժողովուրդ որ նստէր ի խա-
ւարի՝ եռեաց լոյս մեծ, և որոց նստէին յաշխարհին
17 և ի ստուերս մահու՝ լոյս ծագեաց նոցա: Յայնմ
հետէ սկսաւ քարոզել Յիսուս և ասել, Ապաշխա-
րեցէք, զի մերձեալ է արքայութիւն երկնից:
18 Մինչդեռ զգնայր Յիսուս ընդ եզր ծովուն Գալի-
լեացւոց, եռեաց երկուս եղբարս, զՍիմովն զկոչեցեալն
Պետրոս և զԱնդրէաս եղբայր նորա, արկեալ ուռ-
19 կան ի ծով, քանզի ձկնորսք էին: Եւ ասէ ցնոսա,
Եկայք զկնի իմ, և արարից զձեզ որսորդս մարդ-
20 կան: Եւ նոցա թողեալ վաղվաղակի զդործսն՝ գնա-
21 ցին զհետ նորա: Եւ մատուցեալ անտի յառաջ ե-
ռեաց այլ երկուս եղբարս, զՅակովբոս Զեբեդեայ և
զՅովհաննէս զեղբայր նորա, ի նաւի Զեբեդեաւ
հայրն իւրեանց, մինչ կազմէին զուռ-
22 կանս իւրեանց, և կոչեաց զնոսա: Նոցա թողեալ
վաղվաղակի զնաւն և զհայր իւրեանց, գնացին
զհետ նորա:
23 Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն կողմն Գալիլեա-
ցւոց, ուսուցանէր ի ժողովուրդս նոցա և քարոզէր
զաւետարանն արքայութեան, և բժշկէր զամենայն
հիւանդութիւնս և զամենայն ախտս ի ժողովըր-
24 դեանն: Եւ ել լուր նորա ընդ ամենայն երկիրն
Ասորւոց, և մատուցին առ նա զամենայն հիւանդս
որ նեղեալ էին ի պէսպէս ցաւս և ի տանջանս, և
զդիւահարս և զլուսնոտս և զանդամալոյծս, և
25 բժշկեաց զնոսա: Եւ երթային զհետ նորա ժողո-
վուրդք բազումք ի Գալիլեէ և ի Դեկապոլեայ և

Երուսաղեմ և ի Հրէաստանէ և յայնկոյս Յորդանանու [1]և բժշկեաց զնոսա՝։

ԳԼ. Ե

1 ԲԳ. Եւ տեսեալ զժողովուրդսն՝ ել ի լեառն. և
իբրեւ նստաւ անդ, մատեան առ նա աշակերտք
2 *նորա. Եւ բացեալ զբերան իւր ուսուցանէր զնո-*
սա և ասէր,
3 *Երանի աղքատաց հոգւով, զի նոցա է արքայու-*
4 *թիւն երկնից։ Երանի սգաւորաց, զի նոքա մխի-*
5 *թարեսցին։ Երանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն*
6 *զերկիր։ Երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն ար-*
7 *դարութեան, զի նոքա յագեսցին։ Երանի ողոր-*
8 *մածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն։ Երանի սր-*
նոցիկ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած
9 *տեսցեն։ Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք*
10 *Աստուծոյ կոչեսցին։ Երանի որ հալածեալ իցեն*
վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն
11 *երկնից։ Երանի է ձեզ յորժամ նախատիցեն զձեզ*
և հալածեսցեն, և ասիցեն զամենայն բան չար
12 *զձէնջ սուտ վասն իմ։ Ցնծացէք և ուրախ լերուք,*
զի վարձք ձեր բազում են յերկինս. զի այսպէս հա-
լածեցին զմարգարէսն որ յառաջ քան զձեզ էին։
13 *Դուք էք աղ երկրի. ապա թէ աղն անհամի,*
ի՞ւ յաղիցի. ոչ իմիք ապդիցէ այնուհետեւ, բայց
եթէ ընկենուլ արտաքս և կոխան լինել ի մարդ-
14 *կանէ։ Դուք էք լոյս աշխարհի. ոչ կարէ քաղաք*
15 *թաքչել որ ի վերայ լերին կայցէ։ Եւ ոչ լուսանեն*

---

[1] Ի Յ--ՆԷ պ-ւ--ե

ճրագ և դնեն ընդ գրուանաւ, այլ ի վերայ աշտանակի, և լոյս տայ ամենեցուն որ ի տանն իցեն։
16 Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է։
17 ԲԴ. Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս. ոչ եկի լուծանել, այլ լնուլ։
18 Ամէն ասեմ ձեզ, Մինչեւ անցցեն երկինք և երկիր, յոտ մի [1]որ նշանախեց մի է՝ ոչ անցցէ յօրինացն
19 և ի մարգարէից մինչեւ ամենայն եղիցի։ Որ ոք լուծցէ մի ինչ ի պատուիրանացս յայսցանէ ի փոքունց և ուսուսցէ այնպէս զմարդիկ՝ փոքր կոչեսցի յարքայութեան երկնից. իսկ որ արասցէ և ուսուսցէ՝ նա մեծ կոչեսցի յարքայութեան երկնից։ Բայց ասեմ ձեզ, զի Եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր աւելի քան զդպրացն և զփարիսեցւոց, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից։
21 Լուարուք զի ասացաւ առաջնոցն Թէ Մի՛ սպաննաներ. զի որ սպանանիցէ՝ պարտական լիցի դատաստանի։ 22 Այլ ես ասեմ ձեզ Եթէ, Ամենայն որ բարկանայ եղբօր իւրում տարապարտուց՝ պարտաւոր լիցի դատաստանի. և որ ասիցէ ցեղբայր իւր Ցիմար՝ պարտաւոր լիցի առեանի. և որ ասիցէ ցեղբայր իւր Մորոս՝ պարտաւոր լիցի ի գեհենն հրոյն։
23 Եթէ մատուցանիցես զպատարագ քո ի վերայ սեղանոյ, և անդ յիշեսցես եթէ եղբայր քո ունիցի
24 ինչ խէթ զքէն, թող զպատարագն քո առաջի սեղանոյն, և երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քում,

---

[1] Յ-ՆՆ, կամ նշանախեց մի

25 և ապա եկեալ մատուսջիր զպատարագն քո։ Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղագոյն, մինչդեռ իցես ընդ նմա ի ճանապարհի. դուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի, և դատաւորն՝ դահճի, և արկա-
26 նիցիս ի բանտ։ Ամէն ասեմ քեզ, ոչ ելանիցես անտի մինչեւ հատուցանիցես զյետին նաքարակիտն։
27 Լուարուք զի ասացաւ, Մի՛ շնար։ (28) Բայց ես ասեմ ձեզ թէ, Ամենայն որ հայի ի կին մարդառ ի ցանկանալոյ նմա՝ անդէն շնացաւ ընդ նմա
29 ի սրտի իւրում։ Եթէ ակն քո աջ գայթակղեցուցանէ զքեզ, խլեա զնա և ընկեա ի քէն. զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ, և մի՛ ամե-
30 նայն մարմինդ քո անկանիցի ի գեհեն։ Եւ եթէ աջ ձեռն քո գայթակղեցուցանէ զքեզ, հատ զնա և ընկեա ի քէն. զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ, և մի՛ ամենայն մարմինդ քո ար-
31 կանիցի ի գեհեն։ Ասացաւ եթէ, Որ արձակիցէ զկին իւր՝ տացէ նմա զարձակմանն. Բայց
32 ես ասեմ ձեզ եթէ, Ամենայն որ արձակէ զկին իւր առանց բանի պոռնկութեան՝ նա տայ նմա շնալ, և որ զարձակեալն առնէ՝ շնայ։
33 Դարձեալ լուարուք զի ասացաւ առաջնոցն, Մի՛ երդնուցուս սուտ, բայց հատուսցես Տեառն
34 զերդմունս քո։ Ահա ես ասեմ ձեզ, Ամենեւին մի՛ երդնուլ, մի՛ յերկինս՝ զի աթոռ է Աստուծոյ,
35 Եւ մի՛ յերկիր՝ զի պատուանդան է ոտից նորա, և
36 մի՛ յԵրուսաղէմ՝ զի քաղաք է մեծի Արքային. Եւ մի՛ ի գլուխ քո երդնուցուս, զի ոչ կարես մազ մի սպի-
37 տակ առնել կամ թուխ։ Ահա եղիցի ձեր բան՝ Այո՝ այո, և Ոչն ոչ. զի աւելին քան զայն ի չարէն է։

38 Լուարուք զի առացաւ, Ակն ընդ ական և առաւն
39 ընդ առամանն։ Ասէլ ես առեմ ձեզ, Մի՛ կալ հա-
կառակ չարին. այլ եթէ ոք ածիցէ ապտակ յաջ
40 ծնօտ քո, դարձո նմա և զմեւան։ Եւ որ կամիցի
ոք դատել և առնուլ զշապիկս քո՝ թող ի նա և
41 զբաճկոն քո։ Եւ որ տարապարհակ վարիցէ զքեզ
42 մղոն մի՝ երթ ընդ նմա և երկուս։ Որում խնդրէ
ի քէն տուր. և որ կամի փոխ առնուլ ի քէն՝ մի՛
դարձուցաներ զերեսս։
43 Լուարուք ապաքէն զի առացաւ, Սիրեսցես զըն-
44 կեր քո, և առեսցես զթշնամին քո։ Ասէլ ես առեմ
ձեզ, Սիրեցէք զթշնամիս ձեր, օրհնեցէք զանիծիչս
ձեր, բարի արարէք առելեաց ձերոց, և աղօթս ա-
բուրէք ի վերայ այնոցիկ որ յղկեն զձեզ և հալա-
45 ծեն. Զի եղիջիք որդիք Հօր ձերոյ որ յերկինսն է. զի
զարեգակն իւր ծագէ ի վերայ չարաց և բարեաց, և ա-
46 ծէ անձրեւ ի վերայ արդարոց և մեղաւորաց։ Զի եթէ
սիրիցէք զայնոսիկ որ սիրեն զձեզ՝ զի՞նչ վարձք ի-
47 ցեն. ո՞չ ապաքէն և մաքսաւորք զնոյն գործեն։ Եւ
եթէ ասցէք միայն ողջոյն [1]բարեկամաց ձերոց, զի՞նչ
աւելի առնէք. ո՞չ ապաքէն [2]մաքսաւորք [3]և մեղա-
48 ւորք՝ զնոյն գործեն։ Արդ եղերուք դուք կատարե-
ալք, որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է։

ԳԼ. Զ

1 ԲԵ. Զգոյշ լերուք ողորմութեան ձերում մի՛ առ-
նել առաջի մարդկան, որպէս թէ ի ցոյց ինչ նոցա

---

[1]Բ—ղ—ս, եղբարց [2]Ո՛—ն, հեթանոսք [3]ի ց—
նէն պ—ւ—ե

գուցէ և վարձս ոչ ընդունիցիք ի Հօրէն ձերմէ որ
2 յերկինս է։ Ա՛րդ յորժամ առնիցես ողորմութիւն,
մի՛ հարկաներ փող առաջի քո, որպէս կեղծաւորքն
առնեն ի ժողովուրդս և ի հրապարակս, որպէս զի
փառաւորեսցին ի մարդկանէ. ամէն ասեմ ձեզ,
3 Ա՛յն իսկ են վարձք նոցա։ Ա՛րդ դու յորժամ ողոր-
մութիւն առնիցես, մի՛ գիտասցէ ձախ քո զինչ
4 գործէ աջ քո։ Որպէս զի եղիցի ողորմութիւն քո
ի ծածուկ, և Հայրն քո որ տեսանէ ի ծածուկ՝ հա-
տուսցէ քեզ յայտնապէս։

5 Եւ յորժամ յաղօթս կայցես, մի՛ լինիցիս որպէս
կեղծաւորքն, զի սիրեն ի ժողովուրդս և յանկիւնս
հրապարակաց կալ յաղօթս, որպէս զի երեւեսցին
մարդկան. ամէն ասեմ ձեզ, Ա՛յն իսկ են վարձք
6 նոցա։ Ա՛րդ դու յորժամ կայցես յաղօթս, մո՛ւտ ի
սենեակ քո, և փակեա՛ զդուրս քո, և կաց յաղօթս
առ Հայր քո ի ծածուկ, և Հայրն քո որ տեսանէ
7 ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս։ Եւ յոր-
ժամ կայցէք յաղօթս, մի՛ շատախօս լինիք իբրեւ
զհեթանոսսն. զի համարին եթէ ի բազում խօսից
8 իւրեանց լսելի լինիցին։ Ա՛րդ մի՛ նմանիցէք նոցա.
զի գիտէ Հայրն ձեր զինչ պիտոյ է ձեզ, մինչչեւ ձեր
9 խնդրեալ ինչ իցէ ի նմանէ։ Եւ արդ այսպէս կա-
ցէք դուք յաղօթս.

Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո.
10 Եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս
11 յերկինս՝ և յերկրի. Զհաց մեր հանապազորդ տուր
12 մեզ այսօր. Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և
13 մեք թողումք մերոց պարտապանաց. Եւ մի՛ տանիր
զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէն.

զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն։

14 Զի եթէ թողուցուք մարդկան զյանցանս նոցա,
15 թողցէ և ձեզ Հայրն ձեր երկնաւոր. Ապա թէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, և ոչ Հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս ձեր։
16 Եւ յորժամ պահիցէք, մի՛ լինի՛ք իբրեւ զկեղծաւորսն տրտմեալք, որ ապականեն զերեսս իւրեանց, որպէս զի երեւեսցին մարդկան թէ պահիցեն. ամէն
17 ասեմ ձեզ, Այն իսկ են վարձք նոցա։ Այլ դու յորժամ պահիցես, օծ գգլուխ քո և լուա զերեսս
18 քո, Զի մի՛ երեւեսցիս մարդկան իբրեւ զպահող, այլ Հօրն քումմ ի ծածուկ. և Հայրն քո որ տեսանէ ի ծածուկ՝ հատուսցէ [1]քեզ։
19 Մի՛ գանձէք ձեզ գանձս յերկրի, ուր ցեց և ուտիճ ապականեն, և ուր գողք ական հատանեն և
20 գողանան։ Այլ գանձեցէք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ ցեց և ոչ ուտիճ ապականեն, և ոչ գողք ա-
21 կան հատանեն և գողանան. Զի ուր գանձք ձեր են՝ անդ և սիրտք ձեր եղիցին։
22 ԲՋ. Ճրագ մարմնոյ ակն է. եթէ ակն քո առատ
23 է, ամենայն մարմինդ լուսաւոր եղիցի։ Ապա եթէ ակն քո չար է, ամենայն մարմինդ խաւարին եղիցի. իսկ արդ եթէ լոյսդ որ ի քեզ է՝ խաւար է, խա-
24 ւարն ո՛րչափ եւս։ Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել. կա՛մ զմին ատիցէ և զմեւսն սիրիցէ, կա՛մ զմին մեծարիցէ և զմեւսն արհամարհիցէ. ոչ կարէք
25 Աստուծոյ ծառայել և մամոնայի։ Վասն այդորիկ

---

[1] Ոմանք, քեզ յայտնապէս

ասեմ ձեզ, Մի՛ հոգայք վասն ոգւոց ձերոց՝ զինչ
ուտիցէք կամ զինչ ըմպիցէք. և մի՛՝ վասն մարմնոց
ձերոց՝ թէ զինչ ագանիցիք. ո՞չ ապաքէն ոգի ա-
ռաւել է քան զկերակուր, և մարմին՝ քան զհան-
26 դերձ: Հայեցարուք ի թռչունս երկնից, զի ոչ վա-
րեն և ոչ հնձեն և ոչ ժողովեն ի շտեմարանս, և
Հայրն ձեր երկնաւոր կերակրէ զնոսա. ո՞չ ապաքէն
27 դուք առաւել էք քան զնոսա: Իսկ արդ ո՞ ի ձէնջ
առ հոգալ խրոմ յաւելուլ կարիցէ ի հասակ
28 իւր կանգուն մի: Եւ վասն հանդերձի զի՞ հոգայք.
հայեցարուք ի շուշանն վայրենի, ո՛րպէս աճէ. ոչ
29 ջանայ և ոչ նիւթէ: Ասեմ ձեզ, Զի և ոչ Սողո-
մովն յամենայն ի փառան իւրում զգեցաւ իրրեւ
30 զմի ի նոցանէ. Իսկ եթէ զխոտն ի վայրի որ այսօր է
և վաղիւ ի հնոց արկանի, Աստուած այնպէս զգե-
ցուցանէ, ո՛րչափ եւս առաւել զձեզ, Թերահա-
31 ւատք: Մի՛ այսուհետեւ հոգայցէք և ասիցէք,
Զի՞նչ կերիցուք կամ Զի՞նչ արբցուք կամ Զի՞նչ
32 զգեցցուք. Զի զայդ ամենայն հեթանոսք խնդրեն.
քանզի գիտէ Հայրն ձեր երկնաւոր թէ պիտոյ է
33 ձեզ այդ ամենայն: Խնդրեցէք նախ զարքայութիւնն
Աստուծոյ և զարդարութիւն նորա, և այդ ամե-
34 նայն յաւելցի ձեզ: Մի՛ այսուհետեւ հոգայցէք
վասն վաղուն, զի վաղիւն վասն իւր հոգասցի.
շատ է աւուրն չար իւր:

ԳԼ. Է

1 ԲԷ. **Մ**ի՛ դատիք, զի մի՛ դատիցիք. (2) Զի որով
դատաստանաւ դատիք՝ դատելոց էք. և որով չա-
3 փով չափէք՝ չափեսցի ձեզ: Զի՞ տեսանես զշիղ

յականն եղբօր քո, և ի քում ականն զգերանդ ոչ
4 տեսանես: Կամ զիա՞րդ ասես ցեղբայր քո, Թո՛ղ
հանից զչիղդ յականէ քումմէ. և ահաւադիկ ի
5 քում ականդ գերան կայ: Կեղծաւոր, հան նախ
զգերանդ յականէ քումմէ, և ապա հայեացիս հա-
նել զչիղն յականէ եղբօր քո:
6 Մի՛ տայք զսրբութիւն շանց, և մի՛ արկանէք
զմարգարիտս ձեր առաջի խոզից, զի մի՛ առ ոտն
կոխիցեն զնոսա, և դարձեալ երդիծուցանիցեն զձեզ:
7 Խնդրեցէք, և տացի ձեզ. հայցեցէք, և գտջիք.
8 բախեցէք, և բացցի ձեզ. Զի ամենայն որ խնդրէ՝
առնու, և որ հայցէ՝ գտանէ, և որ բախէ՝ բացցի
9 նմա: Ո՞ իցէ ի ձէնջ մարդ զոր խնդրիցէ որդի իւր
10 հաց, միթէ քա՞ր տայցէ նմա. Եւ կամ խնդրիցէ
11 ձուկն, միթէ օ՞ձ տայցէ նմա: Արդ եթէ դուք որ
չարքդ էք՝ գիտէք պարգեւս բարիս տալ որդւոց ձե-
րոց, ո՛րչափ եւս առաւել Հայրն ձեր որ յերկինս
է՝ տացէ բարիս այնոցիկ որ խնդրեն զնա:
12 Զամենայն զոր միանգամ կամիջիք թէ արասցեն
ձեզ մարդիկ, այնպէս և դուք արարէք նոցա, զի
այս իսկ են օրէնքն և մարգարէք:
13 Մտէք ընդ նեղ դուռն, [1]քանի՛ ընդարձակ է
դուռնն և համարձակ ճանապարհն որ տանի ի կո-
14 րուստ, և բազումք են որ մտանեն ընդ նա: [1]Քանի՛
անձուկ է դուռնն և նեղ ճանապարհն որ տանի ի
կեանս, և սակաւք են որ գտանեն զնա:
15 Զգոյշ լերուք ի սուտ մարգարէիցն որ գան առ
ձեզ հանդերձիւք ոչխարաց, և ի ներքոյ են գայլք

---

[1] Ոմն., քանզի

16 յափշտակողք՝ ի պաղոյ նոցա ծանիջիք զնոսա. մի-
թէ քաղիցե՞ն ի փշոց խաղող, կամ ի տատասկէ
17 թուզ. Այսպէս ամենայն ծառ բարի՝ պտուղ բա-
18 րի առնէ, և ծառ չար՝ պտուղ չար առնէ: Ոչ
կարէ ծառ բարի պտուղ չար առնել, և ոչ ծառ
19 չար պտուղ բարի առնել: Ամենայն ծառ որ ոչ
առնէ պտուղ բարի՝ հատանի և ի հուր արկանի:
20 Ապա ի պաղոյ նոցա ծանիջիք զնոսա:
21 Ոչ ամենայն որ ասէ ցիս, Տէր, Տէր, մտցէ յար-
քայութիւն երկնից, այլ որ առնէ զկամս Հօր իմոյ որ
22 յերկինս է: Բազումք ասիցեն ցիս յաւուրն յայնմիկ,
Տէր, Տէր, ո՞չ յանուն քո մարգարէացաք, և յա-
նուն քո դեւս հանաք, և յանուն քո զօրութիւնս
23 բազումս արարաք: Եւ յայնժամ ասացից ցնոսա
եթէ, Ոչ երբեք գիտէի զձեզ. ի բաց կացէք յի-
նէն [1]ամենեքեան որք գործէիք զանօրէնութիւն:
24 Ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ և առնէ
զոսոսա՝ նմանեացէ առն իմաստնոյ որ շինեաց զտուն
25 իւր ի վերայ վիմի. Իջին անձրեւք և խաղացին գետք,
շնչեցին հողմք և բախեցին զտունն, և ոչ կործա-
26 նեցաւ, քանզի ի վերայ վիմի հաստատեալ էր: Եւ
ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ և ոչ առնէ
զոսոսա՝ նմանեացէ առն յիմարի որ շինեաց զտուն
27 իւր ի վերայ աւազոյ. Իջին անձրեւք, յարեան
գետք, շնչեցին հողմք, հարին զտունն, և անկաւ.
և էր կործանումն նորա մեծ յոյժ:
28 Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս [1]զամենայն
զբանս զայսոսիկ, զարմանային ժողովուրդքն ընդ

---

[1] ի բազմս պակասէ

29 վարդապետութիւն նորա. Զի իբրեւ իշխանութեամբ [1]ուսուցանէր, և ոչ՝ որպէս դպիրքն նոցա։

ԳԼ. Ը

1 Ա՛յլ իբրեւ էջ ի լեռնէ անտի, գնացին զկնի նո-
2 ցա ժողովուրդք բազումք։ Եւ ահա մեծաւցեալ
բորոտ մի երկիր պագանէր նմա և ասէր, Տէր, եթէ
3 կամիս, կարող ես զիս սրբել։ Զգեաց զձեռն իւր
և հասոյց ի նա Յիսուս և ասէ, Կամիմ, սրբեաց.
և վաղվաղակի սրբեցաւ ի նմանէ բորոտութիւնն։
4 Եւ ասէ ցնա Յիսուս, Զգոյշ լեր, մի՛ ումեք ասիցես, այլ երթ ցոյց զանձն քո քահանային, և մատո
զպատարագն զոր հրամայեաց Մովսէս ի վկայութիւն նոցա։

5 Եւ մտեալ ի Կափառնայում, մատեաւ առ նա
6 հարիւրապետ մի, աղաչէր զնա, Եւ ասէր, Տէր,
մանուկ իմ անկեալ կայ ի տան անդամալոյծ՝ չա-
7 րաչար տանջեալ։ Ասէ ցնա Յիսուս, Ես եկից և
8 բժշկեցից զնա։ Պատասխանի ետ հարիւրապետն և
ասէ, Տէր, չեմ բաւական եթէ ընդ յարկաւ իմով
մտցես. այլ ասա բանիւ, և բժշկեսցի մանուկն իմ։
9 Քանզի և ես այր մի եմ ընդ իշխանութեամբ, ու-
նիմ ընդ ինեւ զինուորս. ասեմ ամն, երթ, և եր-
թայ. և այլում թէ, եկ, և գայ. և ծառայի ի-
10 մում թէ, Արա զայս, և առնէ։ Իբրեւ լուաւ Յի-
սուս, զարմացաւ, և ասէ ցայնոսիկ որ զկետն եր-
թային, Ամէն ասեմ ձեզ, և ոչ Իսրայելի այս-
11 պիսի հաւատս գտի երբեք։ Բայց ասեմ ձեզ զի

---

[1] Յոյն, ուսուցանէր զնոսա

բազումք յարեւելից և յարեւմտից եկեսցեն և բազմեսցին ընդ Աբրահամու և ընդ Սահակայ և ընդ
12 Յակովբու յարքայութեան երկնից. Եւ որդիքն արքայութեան ելցեն ի խաւարն արտաքին. անդ եղիցի
13 լալ և կրճել ատամանց։ Եւ ասէ Յիսուս ցհարիւրապետն, երթ, և որպէս հաւատացերդ եղիցի քեզ. և ողջացաւ մանուկն նորա [1]յաւուր յայնմիկ։ Եւ եկեալ Յիսուս ի տունն Պետրոսի, ետես
15 զի զրքանչ նորա անկեալ դնէր տապացեալ. կալաւ զձեռանէ նորա, և եթող զնա ջերմն. յոտն եկաց և պաշտէր [2]զնա։
16 Իբրեւ եղեւ երեկոյ, մատուցին առ նա դիւահարս բազումս, և եհան զոգիսն բանիւ, և զամենայն հիւանդսն բժշկեաց. Զի լցցի բանն որ ասացաւ ի ձեռն Եսայեայ մարգարէի, Նա զհիւանդութիւնս մեր վերացոյց և զցաւս մեր երաձ։
18 Գկ. Տեսեալ Յիսուսի ժողովուրդս բազումս զիւրեւ, հրամայեաց երթալ յայնկոյս։ Եւ մատուցեալ դպիր մի ասէ ցնա, Վարդապետ, եկից և եսզկնի քո, յոր վայր և երթիցես։ Ասէ ցնա Յի առւս, Աղուեսուց որջք գոն, և թռչնոց երկնից՝ բո ինք, այլ
21 Որդւոյ մարդոյ ոչ գոյ ուր դիցէ զգլուխ իւր։ Եւ մի ոմն յաշակերտաց նորա ասէ ցնա, Տէր, տուր ինձ հրաման զի երթայց նախ թաղեցից զհայր իմ,
22 Ասէ ցնա Յիսուս, Եկ զկնի իմ, [3]թող մեռեալսն թաղել զմեռեալս իւրեանց։
23 Եւ իբրեւ էմուտ ի նաւն, [4]ետևացին զկնի նորա աշակերտքն նորա. Եւ ահա շարժումն մեծ եղեւ

---

[1]Յ-ին, ի ժամուն [2]Ոմանք, զնոսա

ի ծովուն մինչ նաւին ծածկել յալեաց անտի, և
25 ինքն ննջէր։ Եւ մատուցեալ աշակերտքն յարու-
ցին զնա և ասեն, Տէր, փրկեա զմեզ զի կորնչիմք։
26 Եւ ասէ ցնոսա, Ընդէ՞ր վատասիրտք էք, սակա-
ւահաւատք. յայնժամ յարուցեալ սաստեաց հով-
27 մանցն և ծովուն, և եղեւ խաղաղութիւն մեծ։ Եւ
մարդիկն զարմացան, և ասէին, Որպիսի՛ ոք իցէ
սա, զի և հողմք և ծով հնազանդին նմա։
28 Եւ իբրեւ անց յայնկոյս յերկիրն Գերգեսացւոց,
պատահեցին նմա դիւահարք երկու, ելեալք ի գե-
բեզմանացն, չարաչարք յոյժ, որպէս զի չէր հնար
29 անցանել ումեք ընդ այն ճանապարհ։ Եւ ահա ա-
ղաղակեցին և ասեն, Ջի՞ կայ մեր և քո, Յիսուս,
Որդի Աստուծոյ, եկիր տարաժամ տանջե՞լ զմեզ։
30 Եւ էր հեռագոյն ի նոցանէ երամակ մի [1]խոզից ա-
31 բօտական։ Եւ դեւքն աղաչէին զնա և ասէին, Եթէ
հանես զմեզ աստի, հրամայն տուր մեզ երթալ
32 յերամակ խոզիցն։ Եւ ասէ ցնոսա, Երթայք. և
նոքա ելեալ գնացին յերամակն խոզից. և դիմեաց
ամենայն երամակն ի դարէ անտի ի ծով, և մեռան
33 ի ջուրսն։ Եւ խոզարածքն փախեան, և երթեալ ի
քաղաքն պատմեցին զամենայն, և զիրս դիւահա-
34 րացն։ Եւ ահա ամենայն քաղաքն ել ընդ առաջ
Յիսուսի. իբրեւ տեսին զնա, աղաչեցին զի գնաս-
ցէ ի սահմանաց նոցա։

ԳԼ. Թ

1 Եւ մտեալ ի նաւ անց յայնկոյս և եկն ի քաղաք

---

[1] Բ—ղ—ժ, խոզից բազմաց

2 իւր ։ Եւ ահա մատուցին առ նա անդամալոյծ մի որ
դնէր ի մահիճս . և տեսեալ Յիսուսի զհաւատս նո-
ցա՝ ասէ ցանդամալոյծն , [1]Թողեալ լիցին քեզ մեղք
3 քո ։ Եւ ահա ոմանք ի դպրացն ասեն ընդ միտս ,
4 Հայհոյէ դա ։ Եւ ծանուցեալ Յիսուսի զխորհուրդս
նոցա ասէ ցնոսա , Ընդէ՞ր խորհիք դուք չարիս ի
5 սիրտս ձեր . Զի՞նչ դիւրին է . ասել՝ Թողեալ լիցին
6 քեզ մե՞ղք քո , թէ ասել՝ Աւրի և շրջեաց ։ Ա՛յլ զի
գիտասջիք եթէ իշխանութիւն ունի Որդի մարդոյ
յերկրի թողուլ զմեղս , (յայնժամ ասէ ցանդամա-
7 լոյծն,) Աւրի , առ զմահիճս քո և երթ ի տուն քո ։ Եւ
8 յարուցեալ գնաց ի տուն իւր ։ Իրրեւ տեսին ժողո-
վուրդքն , զարմացան և փառաւորեցին զԱս-
տուած , զտուիչն այնպիսի իշխանութեան՝ մարդկան ։
9 ԳԲ. Եւ անցեալ ընդ այն Յիսուսի՝ տեսանէ այր
մի զի նստէր ի մաքսաւորութեան , Մատթէոս ա-
նուն , և ասէ ցնա , Եկ զկնի իմ . և յարուցեալ
10 գնաց զկնի նորա ։ Եւ եղեւ իրրեւ բազմեալ էր նա
ի տանն , և ահա բազում մաքսաւորք և մեղաւորք
եկեալ և բազմեալ էին ընդ Յիսուսի և ընդ աշա-
11 կերտս նորա ։ Իրրեւ տեսին փարիսեցիքն , ասեն ցա-
շակերտս նորա , Ընդէ՞ր ընդ մաքսաւորս և ընդ մե-
12 ղաւորս ուտէ վարդապետն ձեր ։ Իսկ Յիսուս իր-
բեւ լուաւ , ասէ ցնոսա , Ոչ է պիտոյ բժիշկ կա-
13 րողաց , այլ հիւանդաց ։ Երթայք , ուսարուք զի՛նչ
է , Ողորմութիւն կամիմ և ոչ զզոհ . զի ոչ եկի
կոչել զարդարս , այլ [2]զմեղաւորս ։

---

[1]Յ-ՅՆՆ , Քաջալերեաց , որդեակ , Թողեալ
[2]Ո՛ՀԱՆ+ , զմեղաւորս յապաշխարութիւն

14 Յայնժամ մատեան առ նա աշակերտքն Յովհան-
նու և ասեն, Ընդէ՞ր մեք և փարիսեցիքն պահեմք
15 յաճախ, և քո աշակերտքդ ոչ պահեն: Ասէ ցնո-
սա Յիսուս, Միթէ մարթ ի՞նչ իցէ մանկանց ա-
ռագաստի սուգ առնուլ, մինչ փեսայն ընդ նոսա
իցէ. այլ եկեսցեն աւուրք, յորժամ բարձցի ի
16 նոցանէ փեսայն, և ապա պահեսցեն: Ոչ ոք ար-
կանէ կապերտ անթափ ի վերայ հնացեալ ձորձոյ.
զի առնու ելանէ [1]զլրութիւն նորա ի հանդերձէն,
17 և եւս չար պատառումն լինի: Եւ ոչ արկանեն գի-
նի նոր ի տիկս հինս. ապա թէ ոչ՝ տիկքն պատա-
ռին և գինին հեղու, և տիկքն կորնչին. այլ ար-
կանեն գգինի նոր ի տիկս նորս, և երկոքին պահին:
18 ԳԳ. Մինչդեռ նա զայս խօսէր ընդ նոսա, ահա
իշխան մի մատուցեալ երկիր պագանէր նմա և ա-
սէր, Դուստր իմ արդ եւս վախճանեցաւ, այլ եկ-
եալ դիցես զձեռն քո ի վերայ նորա, և կեցցէ:
19 Յարեաւ Յիսուս և գնաց զկնի նորա աշակեր-
տօքն հանդերձ:
20 Եւ ահա կին մի տեառատես երկոտասանամեայ
մատուցեալ յետոյ՝ մերձեցաւ ի դրօշակ հանդերձի
21 նորա. Քանզի ասէր ի մտի իւրում, Թէ միայն մեր-
22 ձենամ ի հանդերձս նորա, փրկիմ: Իսկ Յիսուս իր-
բեւ դարձաւ և ետես զնա, ասէ, Քաջալերեաց,
դուստր, հաւատք քո կեցուցին զքեզ. և փրկեցաւ
կինն ի ժամէն յայնմանէ:
23 Իրբեւ եկն Յիսուս ի տուն իշխանին, և ետես
24 զփողարան և ամբոխ յոյժ, Ասէ ցնոսա, Ի բաց

---

[1] Ա-՛, լրութիւն

գնացէք, զի ոչ եթէ մեռեալ է աղջիկդ, այլ
25 ննջէ. և ծաղր առնէին զնա։ Եւ իբրեւ ել ամբոխն
իբաց, եմուտ, կալաւ զձեռանէ նորա, և յարեաւ
26 աղջիկն։ Եւ ել համբաւս այս ընդ ամենայն եր-
կիրն ընդ այն։

27 ԳԴ. Եւ մինչդեռ անցանէր ընդ այն Յիսուս,
զկնի եղեն նորա կոյրք երկու, աղաղակէին և ա-
28 սէին, Ողորմեաց մեզ, Որդի Դաւթի։ Եւ իբրեւ եկն
ի տուն, մատեան առ նա կոյրքն. և ասէ ցնոսա
Յիսուս, Հաւատա՞յք եթէ կարող եմ առնել ձեզ
29 զայդ. ասեն ցնա, Ա՛յո, Տէր։ Յայնժամ ժերձե-
ցաւ յաչս նոցա, և ասէ, Ըստ հաւատոց ձերոց ե-
30 ղիցի ձեզ։ Եւ բացան աչք նոցա. և սաստեաց նո-
ցա Յիսուս և ասէ, Զգոյշ կացէք, մի՛ ոք գիտաս-
31 ցէ։ Եւ նոքա ելեալ համբաւեցին զնա ընդ ամե-
նայն երկիրն ընդ այն։

32 Եւ յելանելն նոցա արտաքս, ահա մատուցին առ
33 նա այր մի համր դիւահար։ Եւ յելանել դիւին՝
խօսեցաւ համրն. և զարմացան ժողովուրդքն և
ասեն թէ, Եւ ոչ երբեք երեւեցաւ այսպիսի ինչ
34 յԻսրայելի։ Իսկ փարիսեցիքն ասէին թէ, Իշխա-
նաւն դիւաց հանէ դա զդեւս։

35 ԳԵ. Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն քաղաքս
և ընդ գեղս, ուսուցանէր ի ժողովուրդս նոցա, և
քարոզէր զաւետարանն արքայութեան, և բժշկէր
զամենայն ախտս և զամենայն հիւանդութիւնս ի
36 ժողովրդեանն։ Եւ տեսեալ զժողովուրդսն՝ գթա-
ցաւ ի նոսա, զի էին աչխատեալք և ցրուեալք իբ-
37 րեւ զոչխարս որոց ոչ իցէ հովիւ։ Յայնժամ ասէ
ցաշակերտս իւր, Հունձք բազումք են, և մշակք

38 սակաւ. Արդ աղաչեցէք զՏէր հնձոց, զի հանցէ
մշակս ի հունձս իւր։

ԳԼ. Ժ

1 Եւ կոչեցեալ առ ինքն զերկոտասանեսին աշա-
կերտան իւր՝ ետ նոցա իշխանութիւն այսոց պղծոց
հանել զնոսա, և բժշկել զամենայն ցաւս և զա-
2 ժենայն հիւանդութիւնս։ Եւ առաքելոցն երկոտա-
սանից էին անուանք այսոքիկ. առաջին Սիմովն,
անուանեալն Պետրոս, և Անդրեաս եղբայր նորա,
3 Յակովբոս Զեբեդեայ և Յովհաննէս եղբայր նորա,
Փիլիպպոս և Բարթողոմէոս, Թովմաս և Մատթէոս
մաքսաւոր, Յակովբոս Ալփեայ և Ղեբէոս որ ան-
4 ուանեցաւն Թադէոս, Սիմովն Կանանացի և Յու-
5 դա Իսկարիովտացի, որ և մատնեացն զնա։ Զնոսա
երկոտասանեսին առաքեաց Յիսուս, պատուիրեաց
նոցա և ասէ, ի ճանապարհ հեթանոսաց մի՛ եր-
թայցէք, և ի քաղաք Սամարացւոց մի՛ մտանիցէք,
6 Այլ երթայք առաւել առ ոչխարան կորուսեալս
7 տանն Իսրայելի։ Եւ երթայցէք, քարոզեցէք
և ասացէք թէ, Մերձեալ է արքայութիւն երկնից։
8 Զհիւանդս բժշկեցէք, [1]զբորոտս սրբեցէք, զդեւս
9 հանէք, ձրի առէք և ձրի տուք։ Մի՛ ստանայք
ոսկի, և մի՛ արծաթ, և մի՛ պղինձ ի գօտիս ձեր,
10 Մի՛ պարկ ի ճանապարհ, և մի՛ երկուս հանդերձս,
մի՛ կօշիկս, մի՛ ցուպ, զի արժանի է մշակն կե-
11 րակրոյ իւրում։ Յոր քաղաք մտանիցէք կամ ի
գեղ, հարցանիցէք թէ ո՞ է ի նմա արժանի, և անդ

---

[1] Ոմանք, զմեռեալս յարուցէք, զբորոտս

12 լինիջիք, մինչեւ ելանիցէք անտի։ Եւ իբրեւ մտա-
նիցէք ի տունն, ողջոյն տայջիք նմա [1]և ասասջիք,
13 Ողջոյն տանս այսմիկ"։ Եթէ իցէ տունն արժանի,
եկեսցէ ողջոյնն ձեր ի վերայ նորա. ապա թէ ոչ
14 իցէ արժանի, ողջոյնն ձեր առ ձեզ դարձցի։ Եւ որ
ոչ ընկալցի զձեզ և ոչ լսիցէ բանից ձերոց, իբրեւ
ելանիցէք ի տանէն կամ ի քաղաքէն յայնմանէ, թօ-
15 թափեսջիք զփոշին ոտից ձերոց։ Ամէն ասեմ ձեզ,
Դիւրագոյն լիցի երկրին Սոդոմացւոց և Գոմորացւոց
յաւուրն դատաստանի, քան քաղաքին այնմիկ։
16 ԳԶ. Ահաւասիկ ես առաքեմ զձեզ իբրեւ զոչ-
խարս ի մէջ գայլոց. եղերուք այսուհետեւ խորա-
գէտք իբրեւ զօձս, և միամիտք իբրեւ զաղաւնիս։
17 Զգոյշ լինիջիք ի մարդկանէ, զի մատնեսցեն զձեզ
յատեանս, և ի ժողովուրդս իւրեանց տանջեսցեն
18 զձեզ. Եւ առաջի դատաւորաց և թագաւորաց
տանիցին զձեզ վասն իմ ի վկայութիւն նոցա և հե-
19 թանոսաց։ Այլ յորժամ մատնիցեն զձեզ, մի՛ հո-
գայցէք թէ որպէս կամ զինչ խօսիցիք. զի տացի
20 ձեզ ի ժամուն յայնմիկ զինչ խօսիցիք։ Զի ոչ եթէ
դուք իցէք որ խօսիցիքն, այլ՝ Հոգին Հօր ձերոյ որ
21 խօսիցի ի ձեզ։ Մատնեսցէ եղբայր զեղբայր ի մահ,
և հայր՝ զորդի. և յարիցեն որդիք ի վերայ հարց և
22 սպանանիցեն զնոսա։ Եւ եղիջիք ատելեալք յամե-
նեցունց վասն անուան իմոյ. իսկ որ համբերեսցէ ի
23 սպառ՝ նա կեցցէ։ Եւ յորժամ հալածիցեն զձեզ
ի քաղաքիս յայսմիկ, փախիջիք յայլ. [1]և եթէ
յայնմանէ հալածիցեն զձեզ, փախիջիք ի մեւսն։"

---

[1]Յ-մաթ. պ-ղ-ե

ամէն ասեմ ձեզ, ոչ սպառեսջիք զքաղաքս Իսրա-
24 յելի մինչեւ եկեսցէ Որդի մարդոյ։ Ոչ է աշակերտ
առաւել քան զվարդապետ իւր, և ոչ ծառայ
25 քան զտէր իւր։ Շատ իցէ աշակերտին եթէ եղիցի
իբրեւ զվարդապետ իւր, և ծառային իբրեւ զտէր
իւր. եթէ զտանուտէրն Բէեղզերբուղ կոչեցին, ո՛ր-
26 չափ եւս առաւել զընտանիս նորա։ Մի՛ այսուհե-
տեւ երկնչիցիք ի նոցանէ. զի ոչինչ է ի ծածուկ որ
27 ոչ յայտնեսցի, և գաղտնի՛ որ ոչ ծանիցի։ Զոր
ասեմ ձեզ ի խաւարի՛ ասացէք ի լոյս. և զոր ի ե-
28 րեսս յունկանէ՛ քարոզեցէք ի վերայ տանեաց։ Եւ մի՛
երկնչիք յայնցանէ որ սպանանեն զմարմին և զոգի
ոչ կարեն սպանանել. այլ երկերուք դուք առա-
ւել յայնմանէ որ կարող է զոգի և զմարմին կո-
29 րուսանել ի գեհենի։ Ո՞չ ապաքէն երկու ճնճղուկք
դանգի միոջ վաճառին, և մի ի նոցանէ յերկիր ոչ
30 անկցի առանց Հօր ձերոյ։ Ա՛յլ ձեր և ամենայն
31 իսկ հեր գլխոյ թուեալ է։ Եւ արդ մի՛ երկնչիցիք,
32 զի լաւ էք քան զբազում ճնճղուկս։ Ամենայն որ
խոստովանեսցի յիս առաջի մարդկան, խոստովանե-
ցից և ես զնմանէ առաջի Հօր իմոյ որ յերկինս է.
33 Եւ որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացայց
34 և ես զնա առաջի Հօր իմոյ որ յերկինս է։ Մի՛
համարիք եթէ եկի արկանել խաղաղութիւն յեր-
կիր. ոչ եկի արկանել խաղաղութիւն, այլ սուր
35 Քանզի եկի քակել զայր ի հօրէ իւրմէ, և զդուստր
36 ի մօրէ իւրմէ, և զհարսն ի սկեսրայ իւրմէ Եւ թշնա-
37 միք առն՝ ընտանիք իւր։ Որ սիրէ զհայր կամ
զմայր առաւել քան զիս՝ ոչ է ինձ արժանի. և որ
սիրէ զուստր կամ զդուստր առաւել քան զիս՝

38 չէ ինձ արժանի։ Եւ որ ոչ առնու զխաչ իւր և
39 գայ զկնի իմ՝ չէ ինձ արժանի։ Որ գտանէ զանձն
իւր՝ կորուսցէ զնա. և որ կորոյս զանձն իւր վասն
40 իմ՝ գտցէ զնա։ Որ ընդունի զձեզ՝ զիս ընդունի,
41 և որ զիս ընդունի՝ ընդունի զառաքիչն իմ։ Որ ըն-
դունի զմարգարէ յանուն մարգարէի՝ զվարձս մար-
գարէի առցէ. և որ ընդունի զարդար յանուն ար-
42 դարոյ՝ զվարձս արդարոյ առցէ։ Եւ որ արբուսցէ
միում ի փոքրկանցս յայսցանէ բաժակ մի ջուր
ցուրտ միայն՝ յանուն աշակերտի, ամէն ասեմ
ձեզ, ոչ կորուսցէ զվարձս իւր։

ԳԼ. ԺԱ

1 ԳԷ. Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս զպատուէր
երկոտասանից աշակերտացն իւրոց, գնաց անտի
քարոզել և ուսուցանել ի քաղաքս նոցա։
2 Իսկ Յովհաննէս իբրեւ լուաւ ի բանտին զգործս
Քրիստոսի, առաքեաց [1]ի ձեռն աշակերտաց՝ իւ-
3 րոց, Եւ ասէ ցնա, Դո՞ւ ես որ գալոցն ես, եթէ
4 այլում ակն կալցուք։ Պատասխանի ետ Յիսուս և
ասէ ցնոսա, Գնացէք պատմեցէք Յովհաննու զոր
5 լուայք և տեսէք. Կոյրք տեսանեն, կաղք գնան,
բորոտք սրբին, և խուլք լսեն, և մեռեալք յառ-
6 նեն, և աղքատք աւետարանին։ Եւ երանեալ է
որ ոչ գայթակղեսցի յիս։
7 Եւ իբրեւ նոքա գնացին, սկսաւ Յիսուս ասել
ցժողովուրդսն զՅովհաննէ, Ջի՞նչ ելէք տեսանել
8 յանապատին. եղէ՞գն շարժուն ի հողմոյ։ Այլ

---

[1] Ոմն, զերկուս յաշակերտաց

զի՞նչ եղեք տեսանել. մա՞րդ ի հանդերձս փափկութեան զարդարեալ. ահաւանիկ որ զփափկական
9 զգեցեալ են՝ ի տունս թագաւորաց են։ Այլ զի՞նչ եղեք տեսանել. մարգարէ՞. այո, ասեմ ձեզ, եւ
10 առաւել եւս քան զմարգարէ։ Զի նա է վասն որոյ գրեալն է. Ահա ես առաքեցից զհրեշտակ իմ առաջի երեսաց քոց, որ պատրաստեսցէ զճանա-
11 պարհս քո առաջի քո։ Ամէն ասեմ ձեզ, Չէ յարուցեալ ի ծնունդս կանանց մեծ քան զՅովհաննէս մկրտիչ. բայց փոքրիկն յարքայութեան երկ-
12 նից՝ մեծ է քան զնա։ Բայց յաւուրսն Յովհաննու մկրտչի մինչեւ ցայժմ արքայութիւնն երկնից բռնադատի, և բռնաւորք յափշտակեն զնա։
13 Զանազի ամենայն օրէնք և մարգարէք մինչեւ ցՅով-
14 հաննէս մարգարէացան. Եւ եթէ կամիք ընդունել, նա է Եղիա որ գալոցն է։ Որ ունիցի ա-
15 կանջս լսելոյ՝ լուիցէ։ Ո՞ւմ նմանեցուցից զազգս զայս. նման է մանկտւոյ որ նստիցին ի հրա-
17 պարակս, կարդայցեն զընկերս իւրեանց, Եւ ասիցեն, փող հարաք ձեզ և ոչ կատեցարուք, ողբացաք ձեզ և ոչ լացաք։ Եկն Յովհաննէս, ոչ
19 ուտէր և ոչ ըմպէր, և ասեն, Դեւ գոյ ի նմա։ Եկն Որդի մարդոյ, ուտէ և ըմպէ, և ասեն, Ահա այր կերող և արբեցող, բարեկամ մաքսաւորաց և մեղաւորաց. և արդարացաւ իմաստութիւն յորդւոց իւրոց։ Յայնժամ սկսաւ նախատել զքաղաքն
20 յորս եղեն բազում զօրութիւնք նորա և ոչ ա-
21 պաշխարեցին։ Վա՛յ քեզ, Քորազին, վա՛յ քեզ, Բեթսայիդա. զի եթէ ի Տիւրոս և ի Սիդովն եղեալ էին զօրութիւնքն որ ի ձեզ եղեն, վաղուց եւս ար-

22 դեւք խորգով և մխիթով ապաշխարեալ էր։ Բայց
ասեմ ձեզ, Դիւրագոյն լիցի երկրին Տիւրոսի և
23 Սիդոնի յաւուրն դատաստանի քան ձեզ։ Եւ
դու, Կափառնայում, [1]մի՛ մինչեւ յերկինս բարձ-
րասցիս, այլ՝ մինչեւ ի դժոխս իջցես. զի եթէ ի
Սոդոմ եղեալ էին զօրութիւնքն որ ի քեզ եղեն,
24 ապաքէն կային եւս մինչեւ ցայսօր։ Բայց ասեմ
ձեզ եթէ, Երկրին Սոդոմացւոց դիւրագոյն լիցի
յաւուրն դատաստանի քան քեզ։
25 ԴԿ. Յայնմ ժամանակի պատասխանի եւս Յի-
սուս և ասէ, Գոհանամ զքէն, Հայր, Տէր երկնի
և երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստնոց և ի գիտ-
26 նոց, և յայտնեցեր տղայոց։ Ա՛յո, Հայր, զի այս-
27 պէս հաճոյ եղեւ առաջի քո։ Ամենայն ինչ տուաւ
ինձ ի Հօրէ իմմէ. և ոչ ոք ճանաչէ զՈրդի՝ եթէ
ոչ Հայր, և ոչ զՀայր ոք ճանաչէ՝ եթէ ոչ Որդի,
28 և ում Որդին կամիցի յայտնել։ Եկայք առ իս,
ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հան-
29 գուցից զձեզ։ Առէք զլուծ իմ ի ձեզ, և ուսա-
րուք յինէն, զի հեզ եմ և խոնարհ սրտիւ, և
30 գտջիք հանգիստ անձանց ձերոց։ Զի լուծ իմ քաղցր
է, և բեռն իմ փոքրոգի։

ԳԼ. ԺԲ

1 ԴԲ. Յայնժամ գնաց Յիսուս ընդ արտորայսն նո-
ցա ի շաբաթու, և աշակերտքն նորա քաղցեան և
2 սկսան հասկ կորզել և ուտել։ Փարիսեցիքն իրրեւ
տեսին, ասեն ցնա, Ահաւանիկ աշակերտքն քո

---

[1] Որ. մինչեւ յերկինս բարձրացեալ եւ,

3 գործեն զոր ոչ է արժան գործել ի շաբաթու : Եւ
նա ասէ ցնոսա , Ո՞չ իցէ ընթերցեալ ձեր զոր ա-
րար Դաւիթ , յորժամ քաղցեաւն , և որ ընդ նմայն
4 էին . Զի՝ւրդ եմուտ ի տունն Աստուծոյ և եկեր
զհաց զառաջաւորութեանն , զոր ոչ էր օրէն նմա
ուտել , և ոչ՝ որոց ընդ նմայն էին , բայց միայն քա-
5 հանայից : Կամ թէ չիցէ՞ ընթերցեալ յօրէնս , զի
ի շաբաթս քահանայքն ի տաճարին պղծեն զշա-
6 բաթն և անմեղք են : Բայց ասեմ ձեզ , զի մեծ
7 քան զտաճարն է աստ : Եւ եթէ գիտէիք զինչ է
Ողորմութիւն կամիմ և ոչ զզոհ , ապա ոչ դա-
8 տապարտէիք դուք զանպարտսն : Զի տէր է շաբա-
թու Որդին մարդոյ :
9 Եւ գնացեալ անտի Յիսուս՝ եկն ի ժողովուրդն
10 նոցա : Եւ անդ էր այր մի որոյ ձեռն իւր գոսա-
ցեալ էր . Հարցին ցնա և ասեն եթէ , Պա՞րտ իցէ
ի շաբաթու բժշկել , զի չարաիօսեսցեն զնմանէ :
11 Եւ նա ասէ ցնոսա , Ո՞վ է ի ձէնջ մարդ որոյ իցէ
ոչխար մի , և անկանիցի այն ի խորխորատ ի շաբա-
թու , միթէ ո՞չ ունիցի և յարուցանիցէ զնա :
12 Իսկ արդ ո՛րչափ եւս առաւել է մարդ քան
զոչխար . ապա ուրեմն պարտ է ի շաբաթու բա-
13 րիս գործել : Յայնժամ ասէ ցայրն , Ձգեա զձեռն
քո , և նա ձգեաց և եղեւ ողջ իբրեւ զմեւսն :
14 Իսկ փարիսեցիքն ելեալ արտաքս խորհուրդ առին
զնմանէ թէ ո՛րպէս կորուսցեն զնա :
15 Եւ Յիսուս իբրեւ գիտաց , մեկնեցաւ անտի . և
գնացին զհետ նորա ժողովուրդք բազումք , և
16 բժշկեաց զամենեսեան : Եւ սաստեաց նոցա զի
17 մի՛ յայտնեսցեն զնմանէ ումեք . Զի լցի որ ասա-

18 ցաւն ի ձեռն եսայեայ մարգարէի, Ահա մանուկ
իմ զոր ընտրեցի, և սիրելի իմ ընդ որ հաճեցաւ
անձն իմ. եդից զՈգի իմ ի վերայ նորա, և իրա-
19 ւունս հեթանոսաց պատմեսցէ։ Ոչ հակառակեսցի
և ոչ աղաղակեսցէ, և ոչ ոք լուիցէ ի հրապարակս
20 զբարբառ նորա։ Զեղէգն ջախջախեալ ոչ փշրեսցէ,
և զպատրոյկն առկայծեալ ոչ շիջուսցէ, մինչեւ
21 հանցէ ի յաղթութիւն զդատաստանն. Եւ յանուն
նորա հեթանոսք յուսասցին։
22 ԴԳ. Յայնժամ մատուցաւ առ նա դիւահար
մի կոյր և համր, և բժշկեաց զնա, որպէս զի համրն
23 և կոյրն խօսիցի և տեսանիցէ։ Զարմացան ամենայն
ժողովուրդքն և ասէին, Միթէ սա՞ իցէ [1]Քրիստոսն
24 որդի Դաւթի՞։ Բայց փարիսեցիքն իբրեւ լուան,
ասեն, Ոչ իւիք հանէ դա զդեւս, եթէ ոչ Բէեղ-
25 զեբուղաւ իշխանաւն դիւաց։ Իբրեւ գիտաց Յի-
սուս զխորհուրդս նոցա, ասէ ցնոսա, Ամենայն թա-
գաւորութիւն բաժանեալ յանձն իւր՝ աւերի. և
ամենայն քաղաք կամ տուն բաժանեալ յանձն
26 իւր՝ ոչ կացցէ։ Եւ եթէ Սատանայ զՍատանայ
հանէ, յանձն իւր բաժանեցաւ. արդ զիա՞րդ կացցէ
27 թագաւորութիւն նորա։ Եւ եթէ ես Բէեղզեբու-
ղաւ հանեմ զդեւս, որդիքն ձեր ի՞ւ հանիցեն.
28 վասն այնորիկ նոքա եղիցին ձեր դատաւորք։ Ապա
եթէ Հոգւով Աստուծոյ հանեմ ես զդեւս, ուրեմն
հասեալ է ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ։
29 Կամ զիա՞րդ կարէ ոք մտանել ի տուն հզօրի և
զգործիսն նորա յափշտակել, եթէ ոչ նախ կապիցէ

---

[1]Բազմ. ոմ, որդին Դաւթի

30 գՀզօրն, և ապա զտուն նորա յափշտակիցէ։ Որ
ոչ ընդ իս է՝ հակառակ իմ է, և որ ոչ ժողովէ
31 ընդ իս՝ ցրուէ։ Վասն այդորիկ ասեմ ձեզ, Ամե-
նայն մեղք և հայհոյութիւնք թողցին մարդկան,
32 բայց զՀոգւոյն հայհոյութիւն մի՛ թողցի[1]։ Եւ որ
ոք ասիցէ բան զՈրդւոյ մարդոյ՝ թողցի նմա, բայց
որ զՀոգւոյն Սրբոյ ասիցէ՝ մի՛ թողցի նմա, մի՛
33 յայսմ աշխարհի և մի՛ ի հանդերձելումն։ Կա՛մ
արարէք զծառն բարի և զպտուղ նորա բարի,
կա՛մ արարէք զծառն չար և զպտուղ նորա չար։
34 Քանզի ի պտղոյ անտի ծառն ճանաչի։ Ծնունդք ի-
ժից, զիա՞րդ կարիցէք բարիս խօսել որ չարքդ էք։
35 Քանզի ի յաւելուածոյ սրտի խօսի բերան։ Մարդ
բարի ի բարի գանձուց [2]սրտի իւրոյ՝ հանէ զբա-
րիս. և մարդ չար ի չար գանձուց [2]սրտի իւրոյ՝
36 հանէ զչարիս։ Բայց ասեմ ձեզ թէ, Ընդ ամենայն
դատարկ բանի զոր խօսիցին մարդիկ՝ տացեն հա-
37 մար յաւուրն դատաստանի։ Զի ի բանից քոց ար-
դարասցիս, և ի բանից քոց պարտաւորեսցիս։
38 ԴԴ. Յայնժամ պատասխանի ետուն նմա ո-
մանք ի դպրացն և ի փարիսեցւոց և ասեն, Վար-
39 դապետ, կամիմք նշան ինչ տեսանել ի քէն։ Ն՚ա
պատասխանի ետ և ասէ ցնոսա, Ազգ չար և շնա-
ցող նշան խնդրէ. և նշան մի՛ տացի նմա, բայց
40 նշանն Յովնանու մարգարէի։ Զի որպէս էր Յովնան
ի փոր կիտին զերիս տիւս և զերիս գիշերս, նոյնպէս
եղիցի և Որդի մարդոյ ի սիրտ երկրի զերիս տիւս և
41 զերիս գիշերս։ Արք Նինուէացիք յարիցեն ի դա-

---

[1] Մատ. յաւելուն, մարդկան [2] Մատ. իւրոց

տաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ և դատապարտեացեն զսա, զի զղջացան ի քարոզութեանն Յովնանու. և արդ աւասիկ մեծ քան զՅովնան է աստ։
42 Դշխոյն հարաւոյ յարիցէ ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ և դատապարտեացէ զսա. զի եկն ի ծագաց երկրի լսել զիմաստութիւնն Սողոմոնի, և ահա մեծ քան զՍողոմոն է աստ։ 43 Այլ յորժամ ոգին պիղծ ելանէ ի մարդոյ, շրջի ընդ անջրդին տեղիս, խնդրէ հանգիստ և ոչ գտանէ. 44 յայնժամ ասէ, Դարձայց ի տուն իմ ուստի ելի. և եկեալ գտանէ զնա պարապորդ, մաքրեալ և յարդարեալ։ 45 Յայնժամ երթայ և առնու ընդ իւր եւթն այլ ոգիս չարագոյնս քան զինքն, և մտեալ բնակէ անդ. և լինի յետինն մարդոյն այնորիկ չար քան զառաջինն. այնպէս եղիցի և ազգիս այսմիկ չարի։
46 Մինչդեռ նա ընդ ժողովուրդսն խօսէր, ահա մայր նորա և եղբարք նորա կային արտաքոյ և խնդրէին 47 խօսել ընդ նմա։ Եւ ասէ ումն ցնա, Ահա մայր քո և եղբարք քո կան արտաքոյ և խնդրեն խօսել ընդ 48 քեզ։ Նա պատասխանի եառ այնմիկ որ ասացն ցնա, և ասէ, Ո՞վ է իմ մայր, կամ ո՞վ են իմ եղբարք։ 49 Եւ ձգեալ զձեռն իւր յաշակերտսն՝ ասէ, Ահա- 50 ւասիկ մայր իմ և եղբարք իմ։ Զի որ առնիցէ զկամս Հօր իմոյ որ յերկինսն է՝ նա է իմ եղբայր և քոյր և մայր։

ԳԼ. ԺԳ

1 Դե. Յաւուր յայնմիկ ելեալ Յիսուս ի տանէն՝ 2 նստէր առ ծովեզերբն. Եւ ժողովեցան առ նա ժողովուրդք բազումք, մինչեւ մտանել նմա ի նաւն

և նստել. և ամենայն ժողովուրդն կայր առ ծովե-
3 զերբն. Եւ խօսէր ընդ նոսա բազում առակօք և
ասէր,
4 Ահա ել սերմանահան սերմանել. և ի սերմա-
նելն իւրում՝ էր որ անկաւ առ ճանապարհաւ, և
5 [1]եկն թռչուն երկնից և եկեր զնա՝: Եւ այլն ան-
կաւ յապառաժի ուր ոչ գոյր հող բազում, և
վազվազակի բուսաւ առ ի չգոյէ հիւթոյ երկրին.
6 ի ծագել արեւու տապացաւ, և զի ոչ գոյին ար-
7 մատք, չորացաւ: Եւ այլն անկաւ ի մէջ փշոց, և
8 ելին փուշքն և հեղձուցին զնա: Եւ այլն անկաւ
յերկիր բարի, և տայր պտուղ՝ էր որ հարիւրապատիկ,
9 և էր որ վաթսնապատիկ, և էր որ երեսնապատիկ: Որ ու-
նիցի ականջս լսելոյ՝ լուիցէ:
10 Եւ մատուցեալ աշակերտքն ասեն ցնա, Ընդէ՞ր
11 առակօք խօսիս ընդ նոսա: Նա պատասխանի ետ և
ասէ ցնոսա. Քանզի ձեզ տուեալ է գիտել վիճա-
կս արքայութեան երկնից, և նոցա չէ տուեալ:
12 Զի որ գուցէ՝ տացի նմա և յաւելցի, և որ ոչն
13 գուցէ՝ և զոր ունիցին բարձցի ի նմանէ: Վասն
այնորիկ առակօք խօսիմ ընդ նոսա, զի տեսանեն
և ոչ տեսանեն. և լսեն և ոչ լսեն և ոչ առնուն
14 ի միտ: Եւ կատարի առ նոսա մարգարէութիւնն
Եսայեայ որ ասէ, Լսելով լուիջիք, և մի՛ իմաս-
15 ջիք, և տեսանելով տեսջիք, և մի՛ տեսջիք: Զի
թանձրացաւ սիրտ ժողովրդեանս այսորիկ, և ա-
կանջօք իւրեանց ծանուցնս լուան, և զաչս իւրեանց
կափուցին, զի մի՛ երբեք տեսցեն աչօք և ականջօք

---

[1]Բ—ղ—մ+, եկին թռչունք և կերան զնոսա

լուիցեն և սրտիւք իմասցին և դարձցին, և բժշկե-
16 ցից զնոսա: Բայց ձեր երանի է աչացդ զի տեսա-
17 նեն, և ականջաց ձերոց՝ զի լսեն: Ամէն ասեմ
ձեզ, զի բազում մարգարէք և արդարք ցանկա-
ցան տեսանել զոր տեսանէքդ՝ և ոչ տեսին, և
18 լսել զոր լսէքդ՝ և ոչ լուան: Եւ արդ լուարուք
19 դուք զառակ սերմանացանին: Ցամենայնէ որ լսէ
զբանն արքայութեան և ոչ առնու ի միտ, գայ
չարն և յափշտակէ զսերմանեալն ի սիրտ նորա.
20 այն է որ առ ճանապարհաւն սերմանեցաւ: Եւ որ
յապառաժին սերմանեցաւ՝ այն է, որ իբրեւ լսէ
զբանն, և վաղվաղակի խնդութեամբ ընդունի զնա:
21 Բայց քանզի ոչ ունի արմատս յինքեան այլ առ
ժամանակ մի է, ի լինել նեղութեան և հալածա-
22 նաց վասն բանին՝ վաղվաղակի գայթակղի: Իսկ որ
ի մէջ փշոցն սերմանեցաւ՝ այն է, որ իբրեւ լսէ
զբանն, և հոգք աշխարհիս և պատրանք մեծու-
թեան հեղձուցանեն զբանն, և լինի անպտուղ:
23 Իսկ որ յերկիրն բարի սերմանեցաւ՝ այն է, որ իբ-
րեւ լսէ զբանն և ի միտ առնու. և տայ պտուղ,
է որ հարեւր, և է որ վաթսուն, և է որ երեսուն:
24 ԴՋ. Այլ առակ արկ առ նոսա և ասէ, Նմա-
նեցաւ արքայութիւնն երկնից առն, որ սերմանիցէ
25 սերմն բարի յագարակի իւրում: Եւ ի քուն լինել
մարդկան՝ եկն թշնամի նորա և ցանեաց ի վերայ
26 որոմն ի մէջ ցորենոյն, և գնաց: Եւ իբրեւ բուսաւ
խոտն և արար պտուղ, ապա երեւեցաւ և որոմնն:
27 Մատուցեալ ծառայք տանուտեառն ասեն ցնա,
Տէր, ո՞չ սերմն բարի սերմանեցեր յագարակին
28 քումմ, արդ ուստի՞ ունիցի զորոմնն: Եւ նա ասէ

ցնոսա, Ա՛յր թշնամի արար զայն. ասեն ցնա ծառայքն, Կամի՞ս զի երթիցուք քաղեսցուք զայն ի
29 բաց: Եւ նա ասէ ցնոսա, Մի՛, գուցէ մինչ քաղիցէք զորոմնն, և զցորեանն ընդ նմին ի բաց խլի-
30 ցէք: Թոյլ տուք երկոցունց աճել ի միասին մինչեւ ի հունձս, և ի ժամանակի հնձոց ասացից ցհնձողսն, Քաղեցէք նախ զորոմնդ և կապեցէք զայդ ի խրձունս առ ի յայրել, և զցորեանն ժողովեցէք ի շտեմարանս իմ:
31 Ա՛յլ առակ արկ առ նոսա և ասէ, Նմանէ արքայութիւն երկնից հատոյ մանանխոյ, զոր առեալ
32 մարդոյ՝ սերմանեաց յագարակի իւրում. Որ փոքր է քան զամենայն սերմանիս, և յորժամ աճիցէ, մեծ է քան զամենայն բանջարս, և լինի ծառ մինչեւ գալ թռչնոց երկնից և հանգչել յոստս նորա:
33 Ա՛յլ առակ խօսեցաւ ընդ նոսա և ասէ, Նմանէ արքայութիւն երկնից խմորոյ, զոր առեալ կնոջ թաքոյց ի գրիւս երիս ալեր մինչեւ ամենայն խմորեցաւ:
34 Զայս ամենայն խօսեցաւ Յիսուս առակօք ընդ ժողովուրդսն, և առանց առակի ոչինչ խօսէր ընդ
35 նոսա. Զի լցցի ասացեալն ի մարգարէէն, Բացից առակօք զբերան իմ, բխեցից զծածկեալսն ի սկզբանէ աշխարհի:
36 Դէ. Յայնժամ թողեալ Յիսուս զժողովուրդսն՝ եկն ի տուն. մատեան առ նա աշակերտքն նորա և ասեն, Մեկնեա մեզ զառակ որոմանցն ագարակի:
37 Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա, Որ սերմանէ
38 զսերմն բարի՝ է Որդի մարդոյ. Եւ ագարակն աշխարհս է. սերմն բարի նոքա են որ որդիքն արքա-
39 յութեան են, իսկ որոմն որդիք չարին են. Եւ

թշնամին որ վարեաց զայն՝ Սատանայ է, և հունձքն կատարած աշխարհիս է, և հնձողքն հրեշտակք
40 են։ Որպէս ժողովի որոմն և ի հուր այրի, այն-
41 պէս եղիցի ի կատարածի աշխարհիս։ Առաքեսցէ Որդի մարդոյ զհրեշտակս իւր, և ժողովեսցեն յար-
քայութենէ նորա զամենայն գայթակղութիւնս, և
42 զայնոսիկ որք գործեն զանօրէնութիւն։ Եւ արկցեն զնոսա ի հնոց հրոյ. անդ եղիցի լալ և կրճել ա-
43 տամանց։ Յայնժամ արդարքն ծագեսցեն իբրեւ զարեգակն յարքայութեան [1]երկնից։ Որ ունիցի ա-
կանջս լսելոյ՝ լուիցէ։

44 Դարձեալ նման է արքայութիւն երկնից գանձի ծածկելոյ յագարակի, զոր գտեալ մարդոյ՝ թա-
քոյց. և ի խնդութենէ անտի երթայ վաճառէ զա-
մենայն ինչ զոր ունի, և գնէ զագարակն զայն։

45 Դարձեալ նման է արքայութիւն երկնից առն վաճառականի որ խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս.
46 Եւ գտեալ մի պատուական մարգարիտ՝ երթեալ վաճառեաց զամենայն զոր ինչ ունէր, և գնեաց զայն [2]մարգարիտ։

47 Դարձեալ նման է արքայութիւն երկնից ուռ-
կանի արկելոյ ի ծով և յամենայն ազգաց ժողովե-
48 լոյ. Զոր իբրեւ լցաւ, հանեալ ի ցամաք և նստեալ ժողովեցին զբարի բարին յամանս, և զխոտանն ի
49 բաց ընկեցին։ Այնպէս եղիցի ի կատարածի աշ-
խարհիս. ելցեն հրեշտակք և մեկնեսցեն զչարս ի
50 միջոյ արդարոց, Եւ արկցեն զնոսա ի հնոց հրոյն. անդ եղիցի լալ և կրճել ատամանց։

---

[1] Յունաց, Հօր իւրեանց [2] Ի Յունէն պատուական

51 Ասէ ցնոսա Յիսուս, խմացարո՞ւք զայս ամենայն.
52 ասեն ցնա, Ա՛յո, Տէր։ Եւ նա ասէ ցնոսա, Վասն
այսորիկ ամենայն դպիր աշակերտեալ արքայու-
թեան երկնից նմանի է առն տանուտեառն, որ հա-
նէ ի գանձէ իւրմէ զնոր և զհին։
53 Եկն Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս զա-
54 ռակս զայսոսիկ, փոխեցաւ անտի։ Եւ եկեալ ի գա-
ւառ իւր՝ ուսուցանէր զնոսա ի ժողովրդեանն նոցա,
մինչեւ զարմանալ նոցա և ասել, Սմա ուստի՞ իցէ
55 այս իմաստութիւն և զօրութիւնք։ Ո՞չ սա է հիւ-
սեանն որդի. ո՞չ մայր սորա կոչի Մարիամ. և եղ-
բարք սորա՝ Յակովբոս և Յովսէս և Սիմէոն և Յու-
56 դա. Եւ քորք սորա ո՞չ ամենեքեան առ մեզ են.
57 արդ ուստի՞ է սմա այս ամենայն։ Եւ գայթակղէին
ի նա. և Յիսուս ասէ ցնոսա, Չիք մարգարէ անարգ
58 եթէ ոչ յիւրում գաւառի և յիւրում տան։ Եւ ոչ
արար անդ զօրութիւնս բազումս վասն անհաւա-
տութեան նոցա։

ԳԼ. ԺԴ

1 ԵՓ. Յայնմ ժամանակի լուաւ Հերովդէս չորրոր-
2 դապետ զլուր Յիսուսի. Եւ ասէ ցծառայս իւր,
Նա է Յովհաննէս մկրտիչ. նա յարեաւ ի մեռելոց,
և վասն այնորիկ զօրութիւնք լինին նովաւ։
3 Քանզի Հերովդէս կալաւ զՅովհաննէս, կապեաց
զնա և եդ ի բանտի վասն Հերովդիայ կնոջ Փի-
4 լիպպոսի եղբօր նորա։ Զի ասէր ցնա Յովհաննէս,
5 Չէ արժան քեզ ունել զդա։ Եւ կամէր զնա սպա-

---

[1] Ո՞ւր, Յովսէփ

նանել, բայց երկնչէր ի ժողովրդենէ անտի, քանզի
6 իբրեւ զմարգարէ ունէին զնա։ Եւ իբրեւ եղեն
ծնունդք Հերովդի, կաքաւեաց դուստրն Հերով-
դիայ ի մէջ բազմականին. և հաճոյ թուեցաւ Հե-
7 րովդի։ Ուստի և երդմամբ խոստացաւ տալ նմա
8 զինչ և խնդրեսցէ։ Եւ նա յառաջագոյն խրատեալ
ի մօրէ իւրմէ, Տուր ինձ, ասէ, այսր ի վերայ
9 սկտեղ զգլուխն Յովհաննու մկրտչի։ Եւ տրտմե-
ցաւ թագաւորն. բայց վասն երդմանցն և բարձակ-
10 ցացն հրամայեաց տալ նմա։ Եւ առաքեաց գլխա-
11 տեաց զՅովհաննէս ի բանտի։ Եւ բերաւ գլուխ նորա
սկտեղը և տուաւ աղջկանն, և տարաւ առ մայր
12 իւր։ Եւ մատուցեալ աշակերտքն նորա՝ բարձին
զմարմինն և թաղեցին, և եկեալ պատմեցին Յիսուսի։
13 ԵԳ. Եւ իբրեւ լուաւ Յիսուս, գնաց անտի նաւու
յանապատ տեղի առանձինն. իբրեւ լուան ժողո-
վուրդքն, գնացին զհետ նորա հետի ի քաղաքաց
14 անտի։ Եւ իբրեւ [1]ել, ետես ժողովուրդ բազում,
գթացաւ ի նոսա և բժշկեաց զհիւանդս նոցա։
15 Իբրեւ ընդ երեկս եղեւ մատեան առ նա աշա-
կերտքն և ասեն, Տեղիս անապատ է և օրս տարա-
ժամեալ, արձակեա զժողովուրդսդ, զի երթիցեն
16 շուրջ ի շէնսն, գնեսցեն իւրեանց կերակուրս։ Եւ
ասէ Յիսուս, Ոչինչ պիտոյ է դոցա երթալ, դուք
17 տուք դոցա ուտել։ Եւ նոքա ասեն ցնա, Ոչինչ ու-
նիմք աստ՝ բայց հինգ նկանակ և երկուս ձկունս։
18 Եւ ասէ ցնոսա, Բերէք այսր ցայն։ (19) Եւ հրա-
մայեաց բազմեցուցանել զժողովուրդսն ի վերայ խո-

---

[1] Յոյն, ել Յիսուս

տոյ . և առեալ զՀինգ նկանակն և զերկուս ձկունս՝
Հայեցաւ յերկինս , օրհնեաց և երեկ , և ետ ցաշա-
կերտան զնկանակսն, և աշակերտքն՝ ժողովրդոցն։
20 Կերան ամենեքեան և յագեցան, և բարձին զնշխարս
21 կոտորոցն երկոտասան սակառի լի։ Եւ որք կերանն՝
էին արք իբրեւ Հինգ հազար , թող կանայս և
մանկտի ։
22 ԵԴ Եւ [1]ստիպեաց վաղվաղակի զաշակերտան
մտանել ի նաւ և յառաջել յայնկոյս , մինչ ինքն
23 զժողովուրդն արձակիցէ ։ Եւ իբրեւ արձակեաց
զժողովուրդն , ել ի լեառն առանձինն կալ յա-
ղօթս , և իբրեւ ընդ երեկս եղեւ , անդ էր միայն ։
24 Եւ նաւն [2]մէկնէալ էր ի ցամաքէն բազում ա-
պարիսաք՝ ծփեալ յալեացն . քանզի ընդդէմ էր
25 հողմն ։ Եւ ի չորրորդում պահու գիշերոյն եկն առ
26 նոսա Յիսուս գնալով ի վերայ ծովուն ։ Իբրեւ տեսին
զնա աշակերտքն զի գնայր ի վերայ ծովուն , խռովե-
ցան , և ասեն թէ՝ Ա՛ուաչօք ինչ իցէ . և առ ահին
27 աղաղակեցին ։ Եւ վաղվաղակի խօսեցաւ ընդ նոսա
Յիսուս և ասէ , Քաջալերեցարուք , ես եմ , մի՛ եր-
28 կնչիք ։ Պատասխանի ետ նմա Պետրոս և ասէ , Տէր ,
եթէ դու ես , հրամայեա ինձ գալ առ քեզ ի վերայ
29 ջրոցս ։ Եւ նա ասէ , եկ ։ Եւ իջեալ ի նաւէն Պետրոս՝
30 գնաց ի վերայ [3]ջուրցն և եկն՝՝ առ Յիսուս ։ Եւ
տեսեալ զհողմն սաստիկ՝ երկեաւ , և իբրեւ սկսաւ
31 ընկղմել , աղաղակեաց և ասէ , Տէր , փրկեա զիս ։ Եւ
վաղվաղակի Յիսուս ձգեաց զձեռն իւր , կալաւ զնա

---

[1] Ոմանք , ստիպեաց Յիսուս [2] Բազումք , էր ի մէջ ծովուն՝ [3] Ոմանք , ջուրցն , գալ

32 և ասէ, Թերահաւատ, ընդէ՞ր երկմտեցեր։ Եւ իբրեւ
33 ելին ի նաւն, հանդարտեաց հողմն։ Եւ որ ի նաւին
էին՝ մատեան, երկիր պագին նմա և ասեն, Արդարեւ
34 Որդի Աստուծոյ ես դու։ Եւ անցեալ եկին ի ցամաք
35 ի Գեննեսարեթ։ Եւ իբրեւ ծանեան զնա արք տեղ-
ւոյն այնորիկ, առաքեցին ընդ ամենայն գաւառն,
36 և ածին առ նա զամենայն հիւանդս. Եւ ա-
ղաչէին զնա, զի գոնէ միայն ի քղանցս հանդեր-
ձի նորա մերձեսցին. և որ միանգամ մերձեցանն՝
փրկեցան։

ԳԼ. ԺԵ

1 ԵԵ. Յայնժամ մատեան առ Յիսուս որ յԵրու-
2 սաղեմէ փարիսեցիքն և դպիրք, և ասեն, Ընդէ՞ր
աշակերտքն քո անցանեն զաւանդութեամբ ծերոցն.
3 զի ոչ լուանան զձեռս յորժամ հաց ուտեն։ Նա
պատասխանի ետ և ասէ ցնոսա, Իսկ դուք ընդէ՞ր
անցանէք զպատուիրանսն Աստուծոյ վասն ձերոյ
4 աւանդութեանն։ Զի Աստուած [1]ասաց, Պատուեա
5 զՀայր քո և զմայրդ. Եւ որ բամբասէ զՀայր կամ
6 զմայրն՝ մահու վախճանեսցի։ Եւ դուք ասէք, Որ
ասիցէ ցՀայր իւր կամ ցմայր իւր Թէ Պատարագ
է զոր յինէն օգտիցիս, և ոչ պատուիցէ զՀայր
իւր [2]և զմայր իւր՝. և խոտեաք զբանն Աստուծոյ
7 վասն ձերոյ աւանդութեանն։ Կեղծաւորք, բարւոք
8 մարգարէացաւ ի վերայ ձեր Եսայի, և ասէ, Ժո-
ղովուրդս այս [3]շրթամբք պատուէ զիս, և սիրտ

---

[1]Որմն՝, պատուիրեաց և ասէ [2]Յորմն պակաս
[3]Որմն՝, մերձ է առ իս բերանով իւրով, և շրթամբք

9 իւրեանց հեռացեալ մեկուսի է յինէն. Զուր
պաշտեն զիս, ուսուցանեն վարդապետութիւնս
զմարդկան պատուիրեալս։
10 Եւ կոչեցեալ առ ինքն զժողովուրդն՝ ասէ ցնո-
11 սա, Լուարուք և ի միտ առէք. Ոչ որ ինչ մտա-
նէ ընդ բերան՝ պղծէ զմարդ, այլ որ ինչ ելանէ ի
բերանոյ՝ այն պղծէ զմարդ։
12 Յայնժամ մատուցեալ աշակերտացն նորա՝ ասեն
ցնա, Գիտե՞ս, զի փարիսեցիքն իբրեւ լուան զբանն,
13 դայթակղեցին։ Նա պատասխանի ետ նոցա և ա-
սէ, Ամենայն տունկ զոր ոչ տնկեաց Հայրն իմ
14 երկնաւոր՝ խլեացի. Թոյլ տուք զնոսա. [1]կոյրք են
կուրաց առաջնորդք". կոյր կուրի յորժամ առաջ-
նորդէ, [2]սխալէ և" երկոքին ի խորխորատ անկանին։
15 Պատասխանի ետ Նմա Պետրոս և ասէ, Մեկնեա
16 մեզ զառակս զայս։ Ասէ Յիսուս, Տակաւին և
17 դո՞ւք անմիտք էք. Եւ ո՞չ իմանայք եթէ ամենայն
որ մտանէ ի բերան՝ յորովայն երթայ և արտաքս
18 ելանէ։ Իսկ որ ելանէ ի բերանոյ՝ ի սրտէ անտի
19 գայ, և այն պղծէ զմարդ. Զի ի սրտէ ելանեն
խորհուրդք չարք սպանութիւնք, շնութիւնք,
պոռնկութիւնք, գողութիւնք, սուտ վկայութիւնք,
20 հայհոյութիւնք. Ա՛յս ամենայն է որ պղծէ զմարդ,
այլ անլուայ ձեռօք ուտել ոչ պղծէ զմարդ։
21 ԵԶ Եւ ելեալ անտի Յիսուս գնաց ի կողմանս
22 Տիւրոսի և Սիդոնի։ Եւ ահա կին մի Քանանացի
ի սահմանաց անտի նոցա ելեալ՝ աղաղակէր և ա-
սէր, Ողորմեաց ինձ, Տէր, որդի Դաւթի, դուստր

---

[1] Մատ., են առաջնորդք կոյրք [2] Ի Բ–ղ–մ պ–ի–ե

23 իմ չարաչար այսահարի։ Եւ նա ոչ ետ նմա պա-
տասխանի. և մատուցեալ աշակերտքն նորա՝ ա-
ղաչէին զնա և ասէին, Արձակեա զնա զի աղաղակէ
24 զհետ մեր։ Նա պատասխանի ետ և ասէ, Ոչ ու-
րեք առաքեցայ, եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս
25 տանն Իսրայելի։ Եւ նա մատուցեալ երկիր պա-
26 գանէր նմա և ասէր, Տէր, օգնեա ինձ։ Պատաս-
խանի ետ նմա և ասէ, Ոչ է բարւոք առնուլ
27 զհաց մանկանց և արկանել շանց։ Եւ նա ասէ,
Այո, Տէր, քանզի և շունք կերակրին ի փշրանաց
28 անկելոց ի սեղանոյ տեառն իւրեանց։ Յայնժամ
պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ, Ով կին
դու, մեծ են հաւատք քո, եղիցի քեզ որպէս և
կամիս. և բժշկեցաւ դուստր նորա ի նմին ժամու։
29 Եէ։ Եւ գնացեալ անտի Յիսուսի, եկն ի
ծովեզրն Գալիլեացւոց, և ելեալ ի լեառն նստէր
30 անդ։ Մատեան առ նա ժողովուրդք բազումք որ
ունէին ընդ իւրեանս կաղս, կոյրս, համերս, մի-
կողմանիս և այլս բազումս. և բնկեցին զնոսա առ
31 ոտս [1]նորա, և բժշկեաց զնոսա։ Մինչեւ զարմա-
նալ ժողովրդոցն որ տեսանէին, զի համերք խո-
սէին, կաղք գնային, միակողմանիք բժշկէին,
կոյրք տեսանէին. և փառաւոր առնէին զԱստուած
Իսրայելի։
32 Եւ կոչեցեալ առ ինքն Յիսուս զաշակերտան՝
ասէ, Գթամ ի ժողովուրդդ, զի արդ երեք աւուրք
են զի կան առ իս, և ոչ ունին զինչ ուտիցեն. և ար-
ձակել զդոսա նմին չկամիմ, գուցէ նքթիցեն

---

[1]Ոմն., Յիսուսի

33 զճանապարհայն։ Ասեն ցնա աշակերտքն, Իսկ արդ
մեզ յանապատի սատ ուստի՞ իցէ այնչափ հաց
34 մինչ յագեցուցանել զայսչափ ժողովուրդ։ Եւ ա-
սէ ցնոսա Յիսուս, Քանի՞ նկանակ ունիք. և նոքա
35 ասեն, Եւթն և սակաւ ձկունս։ Եւ հրամայեաց
36 ժողովրդեանն բազմել ի վերայ գետնոյ։ Եւ առեալ
զեւթն նկանակն և զձկունսն գոհացաւ և եբեկ և
37 ետ ցաշակերտսն, և նոքա՝ ժողովրդեանն։ Կերան
ամենեքեան և յագեցան. և բարձին զնշխարս կո-
38 տորացն եւթն զամբիղ լի։ Եւ որք կերանն՝ էին
[1]իբրեւ արք չորք հազարք, թող կանայս և
39 մանկտի։ Իբրեւ արձակեաց զժողովուրդսն, եկ ի
նաւ և եկն ի սահմանս Մագդաղեայ։

ԳԼ. ԺԶ

1 Եւ մատուցեալ փարիսեցիքն և սադուկեցիք,
փորձելով խնդրէին ի նմանէ նշան յերկնից ցուցա-
2 նել նոցա։ Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա,[2]
4 Ազգ չար և շնացող նշան խնդրէ, և նշան մի՛ տա-
ցի նմա, բայց նշանն Յովնանու մարգարէի. և ե-
թող զնոսա և գնաց։
5 Գնացին և աշակերտքն յայնկոյս. և մոռացան
6 առնուլ հաց։ Ասէ ցնոսա Յիսուս, Տեսէք և զգոյշ

---

[1]Յ-ո-ն պ-ւ-ե [2]Բ-ղ-մ յ-ե-ր-ն, Յորժամ
երեկոյ լինի, ասէք Թէ Ջեր լինելոց է, քանզի
կարմրացան երկինք. (3) Եւ ընդ այգ՝ Այսօր
ձմեռն, քանզի կարմրացան խոժոռեցան երկինք.
զերեսս երկնից գիտէք քննել, և զնշանս ժամա-
նակաց չկարէիցէ՞ք։

լերուք ի խմորոյ սադուկեցւոցն և փարիսեցւոց։
7 Նոքա խորհէին ընդ միմեանս և ասէին թէ Հաց ոչ
8 բարձաք։ Գիտաց Յիսուս և ասէ, Զի՞ խորհիք ի
միտս ձեր, թերահաւատք, եթէ հաց ոչ ունիք։
9 Տակաւին չիմանա՞յք և ո՞չ յիշէք զհինգ նկանակն
10 ի հինգ հազարսն, և քանի՞ սակաւի բարձէք։ Եւ
ո՞չ զեւթն նկանակն ի չորս հազարսն, և քանի՞
11 զամբիւղս բարձէք։ Արդ զիա՞րդ ոչ իմանա՞յք եթէ
ոչ վասն հացի ասացի ձեզ զգոյշ լինել ի խմորոյ
12 փարիսեցւոցն և սադուկեցւոց։ Յայնժամ ի միտ
առին, եթէ ոչ ասաց զգուշանալ [1]ի խմորոյ, այլ՝
յուսանդոյ փարիսեցւոցն և սադուկեցւոց։
13 ԶԿ Եւ եկեալ Յիսուս ի կողմանս Փիլիպպեայ
կեսարեայն՝ հարցանէր զաշակերտսն և ասէր, Զո՞
ոք ասեն զինէն մարդիկն թէ իցէ Որդի մարդոյ։
14 Եւ նոքա ասեն, Ոմն՝ զՅովհաննէս մկրտիչ, և այլք՝
զնդիա, և կեսք՝ զԵրեմիա կամ զմի ոք ի մարգա-
15 րէից։ Ասէ ցնոսա, Իսկ դուք զո՞ ոք ասէք զինէն
16 թէ իցեմ։ Պատասխանի եւս Սիմոն Պետրոս և ա-
սէ, Դու ես Քրիստոսն, Որդի Աստուծոյ կենդան-
17 ւոյ։ Պատասխանի եւս Յիսուս և ասէ ցնա, Երանի
քեզ, Սիմոն, որդի Յովնանու, զի մարմին և արիւն
ոչ յայտնեաց քեզ, այլ Հայրն իմ որ յերկինս է։
18 Եւ ես քեզ ասեմ, զի Դու ես Վէմ, և ի վերայ
այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, և դրունք դժո-
19 խոց զնա մի՛ յաղթահարեսցեն։ Եւ տացց քեզ
զփականս արքայութեան երկնից. և զոր միանգամ
կապեսցես յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս. և զոր

---

[1] Ուշ., ի խմորոյ հացի

արձակեսցես յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս։
20 Յայնժամ սաստեաց աշակերտացն, զի մի՛ ուրեք
ասասցեն թէ նա է [1]Քրիստոսն։
21 Յայնմ հետէ սկսաւ Յիսուս ցուցանել աշակեր-
տացն թէ պարտ է նմա երթալ յԵրուսաղէմ, և
բազում չարչարանս չարչարել ի քահանայապետից
և ի դպրաց և ի ծերոց [2]ժողովրդեանն և սպանանել,
22 և յերրիր աւուր յառնել։ Եւ առեալ զնա մեկու-
սի Պետրոսի՝ սկսաւ կացել ընդ նմա և ասել, Քաւ
լիցի քեզ, Տէր, մի՛ եղիցի քեզ այդ։ Եւ նա դար-
ձեալ ի Պետրոս՝ ասէ, երթ յետս իմ, Սատանայ,
գայթակղութիւն իմ ես. զի ոչ խորհիս զԱստու-
ծոյն, այլ զմարդկան։
24 Յայնժամ Յիսուս ասէ ցաշակերտսն իւր, Եթէ
ոք կամի զկնի իմ գալ, ուրասցի զանձն և առցէ
25 զխաչ իւր և եկեսցէ զկնի իմ։ Զի որ կամիցի զանձն
իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա և որ կորուսցէ
26 զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա։ Զի՞նչ օգտիցի
մարդ եթէ զաշխարհս ամենայն շահեսցի և զանձն
իւր տուժեսցի. կամ զի՞նչ տացէ մարդ փրկանս
27 ընդ անձին իւրոյ։ Զի գալոց է Որդի մարդոյ փա-
ռօք Հօր իւրոյ հանդերձ հրեշտակօք իւրովք, և
յայնժամ հատուսցէ իւրաքանչիւր ըստ գործս իւր։
28 Ամէն ասեմ ձեզ, զի իցեն ոմանք ի սոցանէ որք
աստ կան, որք ոչ ճաշակեսցեն զմահ, մինչեւ
տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ արքայութեամբ
իւրով։

---

[1] Մատթ. Յիսուս Քրիստոս [2] Ի բազմաց պատճառ

ԳԼ· ԺԷ

1 Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր Յիսուս զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս զեղբայր նորա, և հանէ զնոսա ի լեառն մի բարձր առանձինն.
2 Եւ այլակերպեցաւ առաջի նոցա, և լուսաւորեցան երեսք նորա իբրեւ զարեգակն, և հանդերձք նորա եղեն սպիտակ իբրեւ զլոյս։ Եւ ահա երեւեցան
4 նոցա Մովսէս և Եղիա որ խօսէին ընդ նմա։ Պատասխանի ետ Պետրոս և ասէ ցՅիսուս, Տէր, բարւոք է մեզ աստ լինել· եթէ կամիս, արասցուք երիս տաղաւարս՝ մի քեզ և մի Մովսիսի և մի
5 Եղիայի։ Եւ մինչդեռ նա խօսէր, ահա ամպ լուսաւոր հովանի եղեւ ի վերայ նոցա. ձայն եղեւ յամպոյն և ասէ, Դա է Որդի իմ սիրելի ընդ որ
6 հաճեցայ, դմա լուարուք։ Իբրեւ լուան աշակերտքն, անկան ի վերայ երեսաց իւրեանց և երկեան յոյժ։
7 Եւ մատուցեալ Յիսուս բուռն եհար զնոցանէ և
8 ասէ, Յառն կացէք և մի՛ երկնչիք։ Ամբարձին զաչս իւրեանց և ոչ զոք տեսին՝ բայց միայն զՅիսուս։
9 Եւ մինչդեռ իջանէին ի լեռնէ անտի, պատուիրեաց նոցա Յիսուս և ասէ, Մի՛ ումեք ասիցէք զտեսիլդ, մինչեւ Որդի մարդոյ ի մեռելոց յարիցէ։
10 Հարցին ցնա աշակերտքն և ասեն, Զի՞րդ դպիրքն
11 ասեն եթէ Եղիայի նախ պարտ է գալ։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա, Եղիա գայ և
12 հաստատեսցէ զամենայն։ Այլ ասեմ ձեզ, զի Եղիա եկեալ իսկ է. և ոչ ծանեան զնա, այլ արարին ընդ նա զոր ինչ կամեցան, նոյնպէս և Որդի մարդոյ չարչարելոց է ի նոցանէ։ Յայնժամ

ի միտ առին աշակերտքն Թէ վասն Յովհաննու մկրտչի ասաց ցնոսա։

14 ԶԲ. Եւ իբրեւ եկին ի ժողովուրդն, մատեաւ այր մի, ի ծունր իջանէր և ասէր, Տէր, ողորմեաց որդւոյ իմում, զի լուսնոտի և չարաչար հիւանդանայ, բազում անգամ անկանի ի հուր և [1]ի-
15 բեք ի ջուր։ Եւ մատուցի զնա աշակերտացն քոց,
16 և ոչ կարացին բժշկել։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ, Ով ազգ անհաւատ և թեւր, մինչեւ ցե՞րբ իցեմ ընդ ձեզ, մինչեւ ցե՞րբ անասցեմ ձեզ. [2]առ-
17 զնա առ իս։ Եւ առատեաց ի նա Յիսուս, և ել ի նմանէ դեւն, և բժշկեցաւ մանուկն ի ժամէն յայնմանէ։
18 Յայնժամ մատեան աշակերտքն առանձինն և ասեն ցՅիսուս, Մեք ընդէ՞ր ոչ կարացաք հա-
19 նել զնա։ Եւ նա ասէ ցնոսա, Վասն թերահաւատութեան ձերոյ. ամէն ասեմ ձեզ, եթէ ունիցէք հաւատս քան զՀատ մանանխոյ, ասասջիք լերինս այսմիկ, փոխեաց աստի անդր, և փոխեսցի.
20 և ոչ ինչ անհնարին լինիցի ձեզ։ Բայց այս ազգ ոչ ելանէ, եթէ ոչ աղօթիւք և պահովք։

21 ԶԳ. Եւ մինչդեռ շրջէին նոքա ի Գալիլեա, ասէ ցնոսա Յիսուս, Մատնելոց է Որդի մարդոյ ի
22 ձեռս մարդկան, Եւ սպանցեն զնա, և յերիր աւուր յարիցէ. և տրտմեցան յոյժ։

23 Իբրեւ եկին նոքա ի Կափառնայում, մատեան որք զերկդրամեանն պահանջէին՝ առ Պետրոս, և ասեն, Վարդապետն ձեր ո՞չ տայ զերկդրամեանն.
24 և ասէ, Այո։ Եւ իբրեւ եմուտ ի տուն, յառաջեաց

---

[1] Բ–ղ–մ, բազում անգամ [2] Յ–ղն, ածէք

քան զնա Յիսուս և ասէ, Ջի՞րդ թուի քեզ, Սիմոնի, թագաւորք [1]ազգաց յումմէ՞ առնուն զհարկս
կամ զհասն, յորդւո՞ց իւրեանց՝ թէ յօտարաց:
25 Եւ իբրեւ ասաց թէ Յօտարաց, ասէ ցնա Յիսուս,
26 Ապա ուրեմն ազատ են որդիքն: Բայց զի մի՛ գայթակղեցուսցուք զնոսա, երթ ի ծով և ընկեա
կարթ, և զառաջին ձուկնն որ ելանիցէ՝ առ և բաց զբերան նորա, և գտանիցես ստատեր. և զայն առեալ տացես նոցա ընդ իմ և ընդ քո:

ԳԼ. ԺԸ

1 Յայնմ աւուր մտանեան աշակերտքն առ Յիսուս և ասեն, Ո՞վ իցէ [2]ի մէնջ մեծ յարքայութեան երկ-
2 նից: Եւ կոչեաց առ ինքն Յիսուս մանուկ մի, կա-
3 ցոյց զնա ի մէջ նոցա, Եւ ասէ, Ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ դարձջիք և լինիջիք իբրեւ զմանկտի, ոչ
4 մտանիցէք յարքայութիւն երկնից: Արդ որ խոնարհեցուցանէ զանձն իբրեւ զմանուկս զայս՝ նա է
5 մեծ յարքայութեան երկնից: Եւ որ ոք ընկալցի
6 մանուկ մի այսպիսի յանուն իմ՝ զիս ընդունի: Եւ որ ոք գայթակղեցուցէ զմի ի փոքրկանցս յայսցանէ յիս հաւատացելոց՝ լաւ է նմա եթէ կախիցի երկան իշոյ ընդ պարանոց նորա, և ընկղմիցի ի խորս
7 ծովու: Վա՛յ աշխարհի ի գայթակղութեանց. Հարկ է գալ գայթակղութեանց, բայց վա՛յ մարդոյն
8 այնմիկ յոյր ձեռն գայցէ գայթակղութիւն: Եթէ ձեռն քո կամ ոտն գայթակղեցուցանէ զքեզ, հատ զնա և ընկեա ի քէն. լաւ իցէ քեզ միաձեռանի

---

[1] Յ-ՅՅ, երկրի [2] ի Յ-Ն՝ պ-ի-ե

կամ կաղ մտանել ի կեանս, քան երկուս ձեռս
և երկուս ոտս ունել, և անկանել ի հուրն յաւի-
9 տենական: Եւ եթէ ակն քո գայթակղեցուցանէ
զքեզ, խլեա զնա և ընկեա ի քէն. լաւ իցէ քեզ
միականի մտանել ի կեանս, քան երկուս աչս ու-
նել և անկանել ի գեհեն հրոյն:
10 ՁԴ. Ձգոյշ լերուք, մի՛ արհամարհիցէք զմի ի
փոքրկանցս յայսցանէ. ասեմ ձեզ, զի հրեշտակք
նոցա յերկինս հանապազ տեսանեն զերեսս Հօր
11 իմոյ որ յերկինս է: Ձի եկն Որդի մարդոյ կեցու-
ցանել զկորուսեալն:
12 Ձի՞ դու թուի ձեզ. եթէ լինիցի մարդոյ հարեւր
ոչխար և մոլորիցի մի ի նոցանէ, ո՞չ թողուցու
զիննսուն և զինն ոչխարն ի լերինս, և երթիցէ խնդրի-
13 ցէ զմոլորեալն: Եւ եթէ լինիցի գտանել զնա, ա-
մէն ասեմ ձեզ, զի ուրախ լինի ի վերայ նորա ա-
ռաւել քան ի վերայ իննսուն և ինուն որ չիցեն մո-
14 լորեալ: Այսպէս ոչ են կամք առաջի Հօր [1]իմոյ որ
յերկինս է, եթէ կորիցէ մի ի փոքրկանցս յայսցանէ:
15 Եթէ մեղիցէ քեզ եղբայր քո, երթ յանդիմանեա
զնա, յորժամ դու և նա միայն իցէք. եթէ լուիցէ
16 քեզ, շահեցար զեղբայրն քո: Ապա թէ ոչ լուիցէ
քեզ, առ ընդ քեզ մեւս եւս կամ երկուս, զի ի
բերանոյ երկուց և երից վկայից հաստատեսցի ա-
17 մենայն բան: Իսկ եթէ և նոցա ոչ լուիցէ, ասասջիր [2]յեկեղեցւոջ. ապա թէ և եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրեւ զհեթանոսն և զմաքսաւոր:
18 Ամէն ասեմ ձեզ, Զոր կապիցէք յերկրի՝ եղիցի

---

[1] Ոմանք, ձերոյ [2] Յոմանս, եկեղեցւոյն

կապեալ յերկինս, և զոր արձակիցէք յերկրի՝ ե-
19 ղիցի արձակեալ յերկինս։ Դարձեալ ասեմ ձեզ,
Եթէ երկու ի ձէնջ միաբանիցեն յերկրի վասն ա-
մենայն իրաց, զինչ և խնդրեսցեն՝ եղիցի նոցա ի Հօրէ
20 իմմէ որ յերկինսն է։ Զի ուր իցեն երկու կամ երեք
ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա։
21 Յայնժամ մատեաւ առ նա Պետրոս և ասէ,
Տէր, քանի՞ցս անգամ թէ մեղիցէ ինձ եղբայր իմ
22 և թողից նմա, մինչեւ յե՞ւթն անգամ։ Ասէ ցնա
Յիսուս, Ոչ ասեմ քեզ թէ մինչեւ յեւթն ան-
23 գամ, այլ մինչեւ յեւթանասանեկին եւթն։ Վասն
այսորիկ նմանեցաւ արքայութիւն երկնից առն թա-
գաւորի որ կամեցաւ հաշիւ առնուլ ի մէջ ծա-
24 ռայից իւրոց։ Եւ իբրեւ սկսաւ առնուլ, մատու-
25 ցաւ առ նա պարտապան մի բեւր քանքարոյ։ Իբ-
րեւ ոչ ունէր հատուցանել, հրամայեաց զնա վա-
ճառել տէրն նորա, և զկին նորա և զորդիս և
26 զամենայն որ զինչ և ունիցի, և հատուցանել։ Եւ
անկեալ ծառայն երկիր պագանէր նմա և ասէր,
[1]Երկայնամիտ լեր առ իս, և զամենայն հատու-
27 ցից քեզ։ Գթացեալ տէր ծառային այնորիկ՝ ար-
28 ձակեաց զնա, և զփոխն եթող նմա։ Եւ ելեալ
ծառայն այն եգիտ զմի ի ծառայակցաց իւրոց որ
պարտէր նմա հարեւր դահեկան. և կալեալ զնա
29 խեղդէր և ասէր, Հատո ինձ զոր պարտիսդ։ Արդ
անկեալ ծառայակցին առ ոտս նորա, աղաչէր զնա
և ասէր, Երկայնամիտ լեր առ իս, և [2]հատուցից

---

[1]Ոմանք, Տէր, երկայնամիտ [2]Ոմանք, զամենայն հա-
տուցից

30 քեզ՝ եւ նա ոչ կամէը, այլ չոգաւ, արկ զնա ի
31 բանտ մինչեւ հատուսցէ զպարտսն։ Իրրեւ տեսին
ծառայակիցքն նորա որ ինչ եղեւն՝ տրտմեցան
յոյժ, և եկեալ յուցին տեառն իւրեանց զամենայն
32 որ ինչ եղեւն։ Յայնժամ կոչեաց զնա տէրն իւր
և ասէ, Ծառայ չար, զամենայն զպարտսն թո՛ղի
33 քեզ, վասն զի աղաչեցեր զիս։ Իսկ մրդ ո՞չ էր
պարտ և քեզ ողորմել ծառայակցին քումմ, որպէս
34 և ես քեզ ողորմեցայ։ Եւ բարկացեալ տէրն նո-
րա՝ մատնեաց զնա դահճաց, մինչեւ հատուսցէ
35 զամենայն զպարտսն։ Նոյնպէս և Հայր իմ որ յեր-
կինս է՝ արասցէ ձեզ, եթէ ոչ թողուցուք իւրա-
քանչիւր եղբօր իւրում ի սրտից ձերոց զյանցանս
նոցա։

ԳԼ. ԺԹ

1 Զե. Եւ եղեւ իրրեւ կատարեաց Յիսուս զբանս
զայսոսիկ, փոխեցաւ ի Գալիլէէ և եկն ի սահմանս
2 Հրէաստանի յայնկոյս Յորդանանու։ Եւ գնացին
զհետ նորա ժողովուրդք բազումք, և բժշկեաց
3 զնոսա անդ։ Եւ մատուցեալ առ նա փարիսեցիքն
փորձէին զնա, և ասէին եթէ Արժա՞ն իցէ ումեք
4 արձակել զկին իւր բաւ ամենայն պճառու։ Պա-
տասխանի եւ նոցա և ասէ, Ձիցէ՞ ընթերցեալ ձեր
թէ՝ որ Հաստատեացն ի սկզբանէ՝ արու և էգ ա-
5 րար զնոսա, և ասէ, Վասն այսորիկ թո՛ղցէ այր
զհայր և զմայր՝ և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և
6 եղիցին երկոքեան ի մարմին մի։ Ապա ուրեմն ոչ են
երկու, այլ՝ մի մարմին. արդ զոր Աստուած զու-
7 գեաց՝ մարդ մի՛ մեկնեսցէ։ Ասեն ցնա, Իսկ Մով-

սէս ընդէ՞ր պատուիրեաց մեզ տալ թուղթ մեկ-
8 նելոյ և արձակել։ Ասէ ցնոսա, Մովսէս վասն խըս-
տասրտութեան ձերոյ հրամայեաց ձեզ արձակել
զկանայս ձեր, այլ ի սկզբանէ ոչ եղեւ այնպէս։
9 Բայց ասեմ ձեզ, զի Ամենայն որ արձակէ զկին
իւր, և ոչ վասն պոռնկութեան, և առնիցէ այլ
10 ընայ. և որ զարձակեալն առնէ՝ ընայ։ Ասեն ցնա
աշակերտքն իւր, Եթէ այդպէս ինչ վնաս իցէ ընդ
11 այր և ընդ կին, լաւ է չամուսնանալ։ Եւ նա ասէ
ցնոսա, Ոչ ամենեքեան բաւական են այդմ բանի,
12 այլ որոց տուեալ է։ Զի են ներքինիք որ յորովայ-
նէ մօր իւրեանց ծնան այնպէս. և են ներքինիք
որ ի մարդկանէ եղեն ներքինիք. և են ներքինիք
որ զանձինս իւրեանց արարին ներքինիս վասն ար-
քայութեան երկնից. որ կարող է տանել՝ տարցի։
13 Յայնժամ մատուցան առ նա մանկտի, զի ձեռն
դիցէ ի վերայ նոցա և աղօթս արասցէ. և աշա-
14 կերտքն նոցա սաստէին նոցա։ Ասէ Յիսուս, Թոյլ
տուք մանկտուդդ և մի՛ արգելուք զդոսա գալ առ
15 իս, զի այդպիսեացդ է արքայութիւն երկնից։ Եւ
եդեալ ձեռս ի վերայ նոցա՝ գնաց անտի։
16 ԺԹ. Եւ ահա մատուցեալ ումն առ նա՝ ասէ,
Վարդապետ բարի, զի՞նչ բարի գործեցից զի ըն-
17 դունիցիմ զկեանսն յաւիտենականս։ Եւ նա ասէ
ցնա, Զի՞ [1]հարցանես զիս զբարւոյ, մի է բարի՛.
եթէ կամիս [2]ի կեանսն յաւիտենականս մտանել՛,
18 պահեա զպատուիրանսն։ Ասէ ցնա, Զո՞րս. ասէ

---

[1] Ոմանք, ասես զիս բարի. չիք ոք բարի բայց մի, Աստուած [2] Յոմանս, ի կեանս մտանել

ցնա Յիսուս, զՄի՛ սպանաներն, և Մի՛ շնար, և
19 Մի՛ գողանար, եւ Մի՛ սուտ վկայեր, Պատուեա
զՀայր քո և զմայր, և Սիրեացես զընկեր քո իբրեւ
20 զանձն քո: Ասէ ցնա պատանին, Զայդ ամենայն
պահեցի ի մանկութենէ իմմէ. արդ ի՞ւ իւիք պա-
21 կաս իցեմ: Ասէ ցնա Յիսուս, Եթէ կամիս կա-
տարեալ լինել, երթ վաճառեա զինչս քո և տուր
աղքատաց. և ունիցես գանձս յերկինս, և եկ զկնի
22 իմ: Իբրեւ լուաւ պատանին զբանն, գնաց տըրտ-
23 մեալ, զի ունէր սատցուածս բազումս: Ասէ Յի-
սուս ցաշակերտան, Ամէն ասեմ ձեզ զի դժուա-
բաւ մտցէ մեծատուն յարքայութիւն երկնից:
24 Դարձեալ ասեմ ձեզ, Դիւրին է մալխոյ մտանել
ընդ ծակ ասղան, քան մեծատան յարքայութիւն
25 Աստուծոյ մտանել: Իբրեւ լուան աշակերտքն,
զարմացան յոյժ և ասեն, Իակ ո՞ կարիցէ ապրել:
26 Հայեցաւ ի նոսա Յիսուս և ասէ, Ա՛ռ ի մարդկանէ
այդ անկար է, այլ առ յԱստուծոյ ամենայն ինչ
27 զօրաւոր: Յայնժամ պատասխանի ետ Պետրոս և
ասէ ցնա, Աւասիկ մեք թողաք զամենայն և եկաք
28 զկնի քո, արդ զի՞նչ լինիցի մեզ: Ասէ ցնոսա Յի-
սուս, Ամէն ասեմ ձեզ զի դուք որ եկիք զկնի
իմ, [1]ի միւսանգամ գալստեան՝, յորժամ նստցի
Որդի մարդոյ յաթոռ փառաց իւրոց, նստջիք և
դուք յերկոտասան աթոռս՝ դատել զերկոտասան
29 ազգն Իսրայելի: Եւ ամենայն որ ոք եթող զտուն
կամ զեղբարս կամ զքոյր կամ զհայր կամ զմայր
կամ զկին կամ զորդիս կամ զագարակս վասն

---

[1] Յ-ՆՆ, ի վերստին ծննդեան

անուան իմոյ՝ հարիւրապատիկ առցէ, և զկեանան
30 յաւիտենականս ժառանգեսցէ։ Բազումք եղիցին
առաջինք յետինք, և յետինք՝ առաջինք։

ԳԼ. Ի

1 Փանդի նման է արքայութիւն երկնից առն տա-
նուտեառն, որ ել ընդ առաւօտս ի վարձու ունել
2 մշակս յայգի իւր։ Եւ արկ վարձս մշակացն ա-
ւուրն դահեկան, և առաքեաց զնոսա յայգի իւր։
3 Եւ ելեալ ՚ի երրորդ ժամու՝ տեսս այլս զի կային
4 դատարկք ի հրապարակս։ Եւ ասէ և ցնոսա, երթայք
և դուք յայգի իմ, և որ ինչ արժան իցէ՝ տացից
5 ձեզ։ Գնացին և նոքա. և դարձեալ ելեալ ՚ի վեց
6 ժամու և ՚ի նոյն ժամու՝ արար նոյնպէս։ Եւ ՚ի վե-
ցասաներորդ ժամու ելեալ եգիտ այլս զի կային
դատարկք. ասէ և ցնոսա, Ընդէ՞ր կայք աստ զօրս
7 ցերեկ դատարկք։ Ասեն ցնա, Զի ոչ ոք կալաւ
զմեզ ի վարձու. ասէ ցնոսա, երթայք և դուք
8 յայգին, և որ ինչ արժան է՝ առնուցուք։ Եւ իր-
բեւ երեկոյ եղեւ, ասէ տէր այգւոյն ցգաւառա-
պետ իւր, կոչեա զմշակսն և տուր նոցա վարձս՝
9 սկսեալ ՚ի յետնոցն մինչեւ ցառաջինսն։ Իրրեւ ե-
կին որք զմեստասաներորդ ժամուն՝ առին մէն մի
10 դահեկան։ Եկեալ և առաջինքն՝ համարէին թէ
աւելի առնուցուն, և առին մէն մի դահեկան և
11 նոքա։ Իրրեւ առին, տրտնջէին զտանուտեառ-
12 նէն և ասէին թէ Դոքա յետինքդ մի ժամ գոր-
ծեցին, և հաւասարակորդս մեզ արարեր զդոսա, որ
13 զձանրութիւն աւուրն բարձաք և զտօթ։ Նա պա-
տասխանի ետ միում ի նոցանէ և ասէ, Ընկեր,

չըրկեմ գքեզ, ո՞չ դահեկանի միոջ սակ արկեր
14 ընդ իս. Ա՛ռ գքոյդ և երթ, եթէ կամիմ յետնոցս
15 տալ՝ որպէս և քեզ։ Եթէ չիցէ՞ ինձ իշխանութիւն
յիմմս առնել զինչ և կամիմ. կամ թէ ակն քո
16 չա՞ր է, զի ես առատս եմ։ Այսպէս եղիցին յե-
տինք առաջինք, և առաջինք՝ յետինք. զի բա-
զումք են կոչեցեալք, և սակաւք են ընտրեալք։
17 Ձէ. Իբրեւ ելանէր Յիսուս յԵրուսաղէմ, առ
[1]զերկոտասանան առանձինն, և ի ճանապարհին ա-
18 սէ ցնոսա, Ահաւասիկ ելանեմք յԵրուսաղէմ, և
Որդի մարդոյ մատնեսցի քահանայապետիցն և
19 դպրաց, և դատապարտեսցեն զնա ի մահ· Եւ
մատնեսցեն զնա հեթանոսաց՝ այպանել և հարկա-
նել և ի խաչ հանել, և յերիր աւուր յարիցէ։
20 Յայնժամ մատեաւ առ նա մայր որդւոցն Զեբե-
դեայ որդւովք իւրովք հանդերձ, երկիր պագանէր և
21 խնդրէր ինչ ի նմանէ։ Եւ նա ասէ ցնա, Զի՞նչ կա-
միս. ասէ ցնա, Ասա զի նստցին սոքա երկու որդիք
իմ, մի ընդ աջմէ քումմէ և մի ընդ ահեկէ, յար-
22 քայութեան քումմ։ Պատասխանի եւ Յիսուս և
ասէ, Ոչ գիտէք զինչ խնդրէք· կարէ՞ք ըմպել
զբաժակն զոր ես ըմպելոց եմ, [2]կամ զմկրտութիւնն
զոր ես մկրտելոց եմ՝ մկրտել։" ասեն ցնա, Կա-
23 րող եմք։ Ասէ ցնոսա [2]Յիսուս, Զբաժակն իմ ըմ-
պիցէք, [2]և զմկրտութիւնն զոր ես մկրտելոց եմ՝
մկրտիցիք," բայց [3]նստուցանել ընդ աջմէ և ընդ
ահեկէ իմմէ՝ ոչ է իմ տալ, այլ որոց [4]տուեալ է

---

[1]Բ—ղ—ժ, զերկոտասան աշակերտսն [2]Յ—ն— պ—
ի—է [3]Յ—նն, նստել [4]Յ—նն, պատրաստեալ

24 ի Հօրէ իմմէ ։ Եւ լուեալ տասանցն՝ բարկացան ի
25 վերայ երկուցն եղբարց ։ Յիսուս կոչեաց զնոսա առ
ինքն և ասէ , Գիտէք զի իշխանք ազգաց տիրեն
26 նոցա , և մեծամեծքն իշխեն նոցա ։ Ոչ այնպէս իցէ
և ի ձերում միջի . այլ որ կամիցի ի ձէնջ մեծ
27 լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ . Եւ որ կամիցի ի
28 ձէնջ առաջին լինել՝ եղիցի ձեր ծառայ ։ Որպէս
Որդի մարդոյ ոչ եկն պաշտօն առնուլ , այլ պաշ-
տել , և տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց ։
29 Եկ· Եւ յելանելն նոցա Յերիքովէ , գնացին
30 զկնի նորա ժողովուրդք բազումք ։ Եւ ահա կոյրք
երկու նստէին առ ճանապարհաւն . իբրեւ լուան
թէ Յիսուս անցանէ , աղաղակեցին և ասեն , Ողոր-
31 մեաց մեզ , [1]Յիսուս , Որդի Դաւթի ։ Եւ ամբոխն
սաստեաց նոցա զի լռեսցեն · և նոքա եւս առա-
ւել աղաղակէին և ասէին , Տէր , ողորմեաց մեզ ,
32 Որդի Դաւթի ։ Ջաւեղի առ Յիսուս , կոչեաց զնոսա
33 և ասէ , Զի՞նչ կամիք զի արարից ձեզ ։ Ասեն ցնա ,
34 Տէր , զի բացցին աչք մեր ։ Եւ գթացեալ Յիսուս
մերձեցաւ յաչս նոցա , և վաղվաղակի տեսին և
գնացին զկնի նորա ։

ԳԼ· ԻԱ

1 Իբրեւ մօտ եղեն Յերուսաղէմ և եկին ի Բեթ-
փագէ մերձ ի լեառն Ձիթենեաց , յայնժամ Յի-
2 սուս արձակեաց երկուս յաշակերտացն իւրոց ։ Եւ
ասէ ցնոսա , Երթայք ի գեղդ որ առաջի ձեր է ,
և անդէն գտանիցէք էշ կապեալ և յաւանակ ընդ

[1]Բ—ղ—ի , Տէր

3 նմին . լուծէք , ածէք ինձ : Եւ եթէ ոք ասիցէ ինչ
ձեզ , ասասջիք եթէ Տեառն իւրեանց պիտոյ են .
4 և վաղվաղակի առաքեսցէ զնոսա : Բայց այս ամե-
5 նայն եղեւ զի լցցի բան մարգարէին որ ասէ , Ասա-
ցէք դստեր Սիովնի , Ահա թագաւոր քո գայ քեզ
6 հեզ , և հեծեալ յէշ և յաւանակի իշոյ : Գնացին
աշակերտքն , և արարին որպէս հրամայեաց նոցա
7 Յիսուս : Եւ ածին զէշն և զ յաւանակն , և արկին
8 զնոքօք [1]ձորձս . և նստաւ ի վերայ նոցա : Եւ բա-
զում ժողովուրդք տարածեցին զհանդերձս իւրեանց
ի ճանապարհին , և այլք հատանէին ոստս ի ծառոց
9 և տարածանէին ի ճանապարհին : Եւ ժողովուրդքն
որ առաջին և զկնի երթային՝ աղաղակէին և ա-
սէին , [2]Օրհնութիւն Որդւոյ Դաւթի , օրհնեալ որ
գայ յանուն Տեառն . [2]Օրհնութիւն ի բարձունս :
10 Եւ ի մտանելն նորա յԵրուսաղէմ , դղրդեցաւ
11 քաղաքն ամենայն , և ասէ , Ո՞վ իցէ սա : Եւ ժո-
ղովուրդքն ասեն , Սա է մարգարէն Յիսուս որ ի
Նազարեթէ Գալիլեացւոց :
12 Եւ եմուտ Յիսուս [3]ի տաճարն և հան արտաքս
զամենեսին որ վաճառէին և գնէին ի տաճարի
անդ . և զսեղանս հատուածաճառացն կործանեաց և
13 զաթոռս աղաւնեվաճառացն : Եւ ասէ ցնոսա ,
Գրեալ է , Տուն իմ տուն աղօթից կոչեսցի , և
դուք արարէք զդա այրս աւազակաց :
14 Եւ մատեան առ նա կոյրք և կաղք ի տաճարին ,
15 և բժշկեաց զնոսա : Իրրեւ տեսին քահանայապետքն

---

[1]Մահ. զձորձս իւրեանց [2]Ցղ. [3]Մահ. ի տաճարն Աստուծոյ

և դպիրք զքահանչելիան զոր արար, և զմանկտին որ աղաղակէին ի տաճարին և ասէին, [1]Օրհնութիւն
16 Որդւոյ Դաւթի, բարկացան. Եւ ասեն ցնա, Լսե՞ս զինչ ասեն դոքա ասէ ցնոսա Յիսուս, Այո, չի-
ցէ՞ ընթերցեալ ձեր թէ Ի բերանոյ տղայոց և ծընդ-
17 դեցաց կատարեցեր զօրհնութիւն: Եւ թողեալ զնոսա ել արտաքոյ քաղաքին ի Բեթանիա, և անդ ագաւ:
18 ԷԲ. Եւ այգուցն իբրեւ դարձաւ անդրէն ի քա-
19 ղաքն, քաղցեաւ: Եւ տեսեալ թզենի մի ի վերայ ճանապարհին՝ եկն ի նա, և ոչինչ եգիտ ի նմա, բայց միայն տերեւ, և ասէ ցնա, Մի՛ այսուհետեւ ի քէն պտուղ եղիցի յաւիտեան. և առ ժամայն
20 չորացաւ թզենին: Իբրեւ տեսին աշակերտքն, զար-
մացան և ասեն թէ, Զի՞րդ վաղվաղակի ցամա-
21 քեցաւ թզենին: Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա, Ամէն ասեմ ձեզ, Եթէ ունիցիք հաւատս և ոչ երկմտիցէք, ոչ միայն զթզենւոյդ առնիցէք, այլ Թէպէտ և լերինդ ասիցէք, Բարձիր և անկիր
22 ի ծով, եղիցի: Եւ զամենայն ինչ զոր և խնդրիցէք յաղօթս հաւատովք՝ առնուցուք:
23 Եւ իբրեւ եկն ի տաճարն, մատեան առ նա, մինչդեռ ուսուցանէր, քահանայապետքն և ծերք ժողովրդեանն և ասեն, Որո՞վ իշխանութեամբ առ-
նես զայդ, և ո՞վ ետ քեզ զիշխանութիւնդ զայդ:
24 Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա, Հարցից և ես զձեզ բան մի, զոր թէ ասիցէք ինձ, և ես ձեզ
25 ասացից որո՛վ իշխանութեամբ առնեմ զայս: Մկըր-

---

[1] Յ-ՅՆ, Ովսաննա

տուԹիւնն Յովհաննու ուստի՞ էր, յերկնի՞ց Թէ ի մարդկանէ. և նոքա խորհէին [1]ընդ միմեանս՝ և ա-
26 սէին, Եթէ ասեմք, Յերկնից, ասէ ցմեզ, Իսկ ընդ-
դ՞ր ոչ հաւատացէք նմա. և եթէ ասեմք, Ի մարդ-
կանէ. երկնչիմք ի ժողովրդենէն, զի ամենեքեան
27 զՅովհաննէս իբրեւ զմարգարէ ունէին: Պատաս-
խանի ետուն Յիսուսի և ասեն, Ոչ գիտեմք. ասէ
ցնոսա և նա, Եւ ոչ ես ասեմ ձեզ որով իշխա-
նուԹեամբ առնեմ զայս:
28 Բայց զի՞ դուք Թուի ձեզ. առն միոջ էին երկու
որդիք, և մատուցեալ առ առաջինն ասէ, Որ-
29 դեակ, երԹ այսօր գործեա յայգւոջ: Նա պա-
տասխանի ետ և ասէ, [2]ԵրԹամ, տէր. և ոչ չոգաւ՝:
30 Մատեաւ և առ մեւսն, և ասէ նոյնպէս. Նա պա-
տասխանի ետ և ասէ, [3]Ոչ կամիմ. բայց յետոյ
31 զղջացաւ և չոգաւ յայգին՝: Արդ ո՞ յերկոցունց
արար զկամս հօրն. ասեն, [4]Ցետինն. ասէ ցնոսա
Յիսուս, Ամէն ասեմ ձեզ, զի մաքսաւորք և պոռ-
նիկք յառաջեացեն քան զձեզ յարքայուԹիւն Ա-
32 ստուծոյ: Զի եկն Յովհաննէս ճանապարհաւ ար-
դարուԹեան, և ոչ հաւատացէք նմա. և մաքսա-
ւորք և պոռնիկք հաւատացին նմա, և դուք տե-
սէք, և ոչ զղջացարուք յետոյ հաւատալ նմա:
33 ԷԳ. Ալլ առակ լուարուք. Այր մի էր տա-
նուտէր որ տնկեաց այգի և ցանգով պատեաց զնա,
և փորեաց ի նմա հնձան և շինեաց աշտարակ. և

---

[1] Կ—ՄՓ, ընդ միտս [2] Բ—ԼԸ—ՄՓ, Ոչ կամիմ. բայց յետոյ զղջացաւ և չոգաւ [3] Բ—ԼԸ—ՄՓ, Երթամ տէր. և ոչ չոգաւ [4] Բ—ԼԸ—ՄՓ, Առաջինն

34 եւ զնա ցմշակս, և գնաց ի տարաշխարհ: Իբրեւ
մերձեցաւ ժամանակ պտղոյ, առաքեաց զծառայս
35 իւր առ մշակսն առնուլ զպտուղս նորա: Եւ
կալեալ մշակացն զծառայս նորա, զոմն տանջեցին,
36 զոմն սպանին, զոմն քարկոծեցին: Դարձեալ ա-
ռաքեաց այլ ծառայս բազումս քան զառաջինսն,
37 և արարին նոցա նոյնպէս: Յետոյ առաքեաց առ նո-
սա զորդի իւր, և ասէ, Թերեւս ամաչեսցեն յոր-
38 դւոյ աստի իմմէ: Իսկ մշակքն իբրեւ տեսին զոր-
դին, ասեն ընդ միմս, Սա է ժառանգն, եկայք
սպանցուք զսա և կալցուք զժառանգութիւն ա-
39 րա: Եւ առեալ Հանին զնա արտաքոյ քան զայ-
40 գին և սպանին: Արդ յորժամ եկեսցէ տէր այգ-
41 ւոյն, ի՞նչ արասցէ մշակացն այնոցիկ: Ասեն ցնա,
Չարսն չարաւ կորուսցէ, և զայգին տացէ այլոց
մշակաց, որք տացեն նմա զպտուղս ի ժամու իւր-
42 եանց: Ասէ ցնոսա Յիսուս, Ձիցէ՞ երբեք ընթեր-
ցեալ ձեր ի գիրս, Զվէմն զոր անարգեցին շինողք,
նա եղեւ գլուխ անկեան. ի Տեառնէ եղեւ այս, և
43 է սքանչելի յաչս մեր: Վասն այսորիկ ասեմ ձեզ,
զի բարձցի ի ձէնջ արքայութիւնն Աստուծոյ, և
44 տացի ազգի որ առնիցէ զպտուղս նորա: Եւ որ
անկցի ի վերայ վիմիս այսորիկ՝ փշրեսցի, և յոյր
45 վերայ անկցի՝ հոսեսցէ զնա: Իբրեւ լուան քահա-
նայապետքն [1]և դպիրք՝ և փարիսեցիք զառակս նո-
46 րա, գիտացին թէ վասն նոցա ասաց: Եւ խնդրէին
զնա ունել, բայց երկեան ի ժողովրդոցն, քանզի
իբրեւ զմարգարէ ունէին զնա:

---

[1] ի Յ—ն՝ պ—ե—ք

ԳԼ. ԻԲ

1 ԷԴ. Յարձեալ պատասխանի եւս Յիսուս և ասէ
2 ցնոսա առակօք, Նմանեցաւ արքայութիւն երկնից
առն թագաւորի որ արար հարսանիս որդւոյ ի-
3 րում։ Եւ առաքեաց զծառայս իւր կոչել զհրա-
4 ւիրեալսն ի հարսանիս, և ոչ կամեցան գալ։ Յար-
ձեալ առաքեաց այլ ծառայս և ասէ, Ասացէք
հրաւիրելոցն, Ահաւասիկ զճաշ իմ պատրաստեցի,
զուարակք իմ և պարարակք զեներեալ են, և ամե-
5 նայն ինչ պատրաստ է. եկայք ի հարսանիս։ Եւ
նոքա յուլացեալ գնացին, ոմն՝ յագարակ իւր, և
6 ոմն՝ ի վաճառ իւր. Եւ այլք կալան զծառայս նորա,
7 թշնամանեցին և սպանին։ Իսկ թագաւորն իբրեւ
լուաւ, բարկացաւ, և առաքեաց զզօրս իւր և սա-
տակեաց զսպանողսն զայնոսիկ, և զքաղաքն նոցա
8 այրեաց։ Յայնժամ ասէ ցծառայս իւր, Հարսանիքս
9 պատրաստ են, և հրաւիրեալքն չէին արժանի։ Ելք
երթայք յանցս ճանապարհաց, և զորս միանգամ
10 գտանիցէք՝ կոչեցէք ի հարսանիս։ Եւ ելեալ ծա-
ռայքն ի ճանապարհս՝ ժողովեցին զամենեսեան զոր
և գտին, զչարս և զբարիս, և լցան հարսանիքն
11 բազմականօք։ Եւ մտեալ թագաւորն հայել զբազ-
մականօքն՝ ետես անդ այր մի որ ոչ էր զգեցեալ
12 հանդերձ հարսանեաց։ Եւ ասէ ցնա, Ընկեր, զիա՞րդ
մտեր այսր, զի ոչ ունէիր հանդերձ հարսանեաց։
13 Եւ նա պապանձեցաւ։ Յայնժամ ասէ թագաւորն
ցսպասաւորսն, Կապեցէք զդորա զոտս և զձեռս, և
հանէք զդա ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ

14 և կրճել առաւմանց. Չի բազումք են կոչեցեալք,
և սակաւք՝ ընտրեալք։
15 ԷԵ. Յայնժամ գնացեալ փարիսեցիքն՝ առին
խորհուրդ զնմանէ թէ որպէս զնիցեն նմա որոգայթ
16 բանիւք։ Եւ առաքեն առ նա զաշակերտս իւրեանց
Հերովդիանոսօքն հանդերձ, և ասեն, Վարդապետ,
գիտեմք զի ճշմարիտ ես, և զճանապարհն Աստու-
ծոյ ճշմարտութեամբ ուսուցանես, և ոչ է քեզ
17 փոյթ զումեքէ, և ոչ հայիս յերեսս մարդոյ։ Արդ
ասա մեզ, զիա՞րդ թուի քեզ, պա՞րտ է հարկս
18 տալ կայսեր թէ ոչ։ Գիտաց Յիսուս զխորամանկ-
գութիւն նոցա և ասէ, Չի՞ փորձէք զիս, կեղծա-
19 ւորք. Ցուցէք ինձ զդահեկան հարկին. և նոքա
մատուցին նմա դահեկան մի։ Եւ ասէ ցնոսա, Ո՞ւր
21 է պատկեր այս կամ գիր։ Ասեն, Կայսեր. յայն-
ժամ ասէ ցնոսա, Երթայք, տուք զկայսերն կայ-
22 սեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ։ Իրբեւ լուան,
զարմացան, և թողին զնա և գնացին։
23 Յայնմ աւուր մատեան առ նա սադուկեցիքն որ
24 ասէին թէ Չիք յարութիւն. Հարցին ցնա, Եւ ա-
սեն, Վարդապետ, Մովսէս ասաց, Եթէ ոք մեռ-
ցի անորդի, արասցէ զկին նորա եղբայր իւր, և
25 յարուսցէ զաւակ եղբօր իւրում։ Էին առ մեզ եղ-
բարք եւթն. առաջինն արար կին և մեռաւ. և զի
ոչ ունէր զաւակ, եթող զկինն իւր եղբօր իւրում.
26 նոյնպէս և երկրորդն և երրորդն մինչեւ ցեւթնե-
27 րորդն։ Յետ ամենեցուն մեռաւ և կինն։ (28) Արդ
ի յարութեանն ո՞յր յեւթանցն եղիցի նա կին. զի
29 ամենեքին կալան զնա կին։ Պատասխանի ետ նոցա
Յիսուս և ասէ, Մոլորեալք, ոչ գիտէք զգիրս և

30 ոչ զզօրութիւն Աստուծոյ։ Զի ի յարութեան ոչ
կանայս առնեն և ոչ արանց լինին, այլ են իբրեւ
31 զհրեշտակս [1]յերկինս։ Բայց վասն յարութեանն մե-
ռելոց չիցէ՞ ընթերցեալ զասացեալն ձեզ յԱստուծոյ,
32 եւ եմ Աստուած Աբրահամու, Աստուած Իսահակայ
և Աստուած Յակովբայ. և չէ Աստուած [2]Աստուած
33 մեռելոց, այլ կենդանեաց։ Իբրեւ լուան ժողովուրդ-
քըն, զարմանային ընդ վարդապետութիւն նորա։
34 Իսկ փարիսեցիքն իբրեւ լուան եթէ պապանձե-
35 ցոյց զսադուկեցիսն, ժողովեցան ի միասին. Եւ ե-
հարց մի ոմն [3]ի նոցանէ զնա փորձելով, և ասէ,
36 Վարդապետ, ո՞ր պատուիրան է մեծ յօրէնս
37 Եւ Յիսուս ասէ ցնա, Սիրեսցես զՏէր Աստուած
քո յամենայն սրտէ քումմէ, և յամենայն անձնէ
38 քումմէ, և յամենայն մտաց քոց։ Այս է մեծն և
39 առաջին պատուիրան։ Եւ երկրորդն՝ նման սմին,
40 Սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո։ Յայս եր-
կուս պատուիրանս ամենայն օրէնք և մարգարէք
կախեալ կան։
41 Եւ ի ժողովել փարիսեցւոցն եհարց զնոսա Յի-
42 սուս և ասէ, Զիա՞րդ թուի ձեզ վասն Քրիստոսի.
43 ո՞ր որդի է։ Ասեն ցնա, Դաւթի։ Ասէ ցնոսա Յի-
սուս, Իսկ զիա՞րդ Դաւիթ Հոգւովն կոչէ զնա Տէր,
44 և ասէ, Ասաց Տէր ցՏէր իմ, Նիստ ընդ աջմէ իմ.
մինչեւ եդից զթշնամիս քո պատուանդան ոտից
45 քոց։ Իսկ եթէ Դաւիթ զնա Տէր կոչէ, զիա՞րդ
46 որդի նորա իցէ։ Եւ ոչ ոք կարէր տալ նմա պա.

---

[1]Որ՝ն, Աստուծոյ [2]Յո՛ն պ՚ա՛ն [3]Բ՚ը՛ի, ի նոցանէ օրինական

տասիանի բան մի, և ոչ իշխեր ոք յայնմ օրէ հարցանել զնա և ոչինչ։

ԳԼ. ԻԳ

1 ԷԶ. Յայնժամ խօսեցաւ Յիսուս ընդ ժողովուրդսն
2 և ընդ աշակերտսն իւր, և ասէ, Յաթոռն Մովսի-
3 սի նստան դպիրքն և փարիսեցիք. Զամենայն ինչ
զոր ասիցեն [1]ձեզ՝ արարէք և պահեցէք, բայց ըստ
գործոցն նոցա մի՛ առնէք, զի ասեն և ոչ առնեն։
4 կապեն բեռինս ծանուն և դժուարակիրս, և դնեն
ի վերայ ուսոց մարդկան, և մատամբ իւրեանց ոչ
5 կամին շարժել զնոսա։ Եւ զամենայն գործս իւր-
եանց առնեն ի ցոյց մարդկան. լայնեն զդրապա-
նակս իւրեանց, և երկայնեն զքղանցս հանդերձից
6 իւրեանց։ Սիրեն զյառաջագահս յընթրիս, և զնախա-
թոռս ի ժողովուրդս, և զողջոյնս ի հրապարակս,
7 Եւ կոչել ի մարդկանէ Ռաբբի, Ռաբբի։ (8) Բայց
դուք մի՛ [2]զոք կոչէք Վարդապետ՝, զի մի է ձեր
9 [3]Ուսուցիչ. և ամենեքեան դուք եղբարք էք։ Եւ
Հայր մի՛ կոչէք ձեզ յերկրի, զի ձեր մի է Հայր որ
10 յերկինսն է։ Եւ մի՛ կոչիցիք ուսուցիչք, զի Ուսու-
11 ցիչ ձեր [4]Քրիստոս է՝։ Եւ մեծն ի ձէնջ եղիցի ձեր
12 սպասաւոր։ Որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեա-
ցի, և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի։
13 Վա՛յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց,
զի փակէք զարքայութիւն երկնից առաջի մարդ-

---

[1]Ոմանք, ձեզ պահել [2]Յոմանս, կոչիցիք Ռաբբի
[3]Ոմանք, Ուսուցիչ, Քրիստոս [4]Բազումք, մի է, Քրիստոս

կան. դուք ոչ մոտանէք, և որոց մոտանեննն չտայք
թոյլ մոտանել։[1]
15 Վա՜յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց,
զի յածիք ընդ ծով և ընդ ցամաք առնել եկա-
մուտ մի. և յորժամ լինիցի, առնէք զնա որդի
16 գեհենի կրկին եւս քան զձեզ։ Վա՜յ ձեզ, առաջ-
նորդք կոյրք, զի ասէք, Որ երդնու ի տաճարն՝ չէ
ինչ, բայց որ երդնու յոսկին որ ի տաճարին է
17 արժան է։ Մորոք և կոյրք, զի՞նչ մեծ է, ոսկի՞ն
18 եթէ տաճարն որ սրբէ զոսկին։ Եւ որ երդնու ի
սեղանն՝ չէ ինչ, բայց որ երդնու ի պատարագն որ
19 ի վերայ նորա է՝ արժան է։ Ցիմարք և կոյրք,
զի՞նչ մեծ է, պատարա՞գն՝ եթէ սեղանն որ սրբէ
20 զպատարագն։ Իսկ որդ որ երդուաւ ի սեղանն՝
երդնու ի նա և յամենայն որ ի վերայ նորա է.
21 Եւ որ երդուաւ ի տաճարն՝ երդնու ի նա և ի բնա-
22 կիչն նորա. Եւ որ երդուաւ յերկինս՝ երդնու յա-
թոռն Աստուծոյ և յայն որ նստին ի վերայ նորա։
23 Վա՜յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց,
զի տասանորդէք զանանուխ և զսամիթ և զչաման,
և թողէք զծանր ծանր օրինացն, զդատաստան և
զողորմութիւն և զհաւատս. զայս արժան էր առ-
24 նել և զայն չթողուլ։ Առաջնորդք կոյրք, որ
25 զմիջուկս քամէք և զուղտս կլանէք։ Վա՜յ ձեզ
դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց, զի սրբէք

---

[1] Ոմանք յաւելուն, (14) Վա՜յ ձեզ դպրաց և փարի-
սեցւոց կեղծաւորաց, զի ուտէք զտունս այրեաց,
պատճառանօք երկարէք զաղօթս. վասն որոյ ա-
ւելի դատաստան ընդունիցիք։

զարտաքին զբաժակին և զկաւառակին, և ի ներքոյ լի են յափշտակութեամբ և անխտանութեամբ։
26 փարիսեցի կոյր, սրբեա նախ զներքին բաժակին և
զկաւառակին, զի լինիցի և արտաքինն նոցա
27 սուրբ։ Վա՛յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց, զի նմանեք գերեզմանաց բուելոց, որ արտաքոյ երեւին գեղեցիկք, և ի ներքոյ լի են ոսկերօք մեռելոց և ամենայն պղծութեամբ։ Նոյնպէս
28 և դուք արտաքոյ երեւիք մարդկան արդարք, և ի ներքոյ լի էք կեղծաւորութեամբ և անօրէնութեամբ։
29 Վա՛յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց, զի շինէք զշիրիմս մարգարէից և զարդարէք զգե-
0 րեզմանս արդարոց։ Եւ ասէք, Եթէ էաք յաւուրս հարցն մերոց, ոչ հաղորդէաք արեան մարգարէիցն։
31 Ապա ուրեմն վկայէք դուք ձեզանից, եթէ որդիք էք
32 այնոցիկ որ կոտորէին զմարգարէսն։ Եւ դուք լցէք
33 զչափ հարցն ձերոց։ Օձք, ծնունդք իժից, զիա՞րդ
34 փախուցուք ի դատաստանէ գեհենին։ Վասն այդորիկ ահաւասիկ ես առաքեմ առ ձեզ մարգարէս և իմաստունս և դպիրս, և ի նոցանէ սպանանիցէք և ի խաչ հանիցէք, և ի նոցանէ տանջիցէք ի ժողովուրդս ձեր, և հալածիցէք ի քաղաքէ ի քաղաք։
35 Որպէս զի եկեսցէ ի վերայ ձեր ամենայն արիւն արդար հեղեալ յերկրի, յարենէն Աբելի արդարոյ մինչեւ զարիւնն Զաքարիայ որդւոյ Բարաքեայ զոր
36 սպանէք ընդ մէջ տաճարին և սեղանոյ։ Ամէն ասեմ ձեզ, եկեսցէ այն ամենայն ի վերայ ազգիս այսորիկ։
37 Երուսաղէմ, Երուսաղէմ, որ [1]կոտորէր զմար-

---

[1]կ՚, կոտորէիր

գարէան և քարկոծ [1]առնէր զառաքեալան [2]առնա՞, քանի՞ցս անգամ կամեցայ ժողովել զմանկունս քո, զոր օրինակ ժողովէ հաւ զձագս իւր ընդ թեւովք, 38 և ոչ կամեցարուք։ Ահա թողեալ լիցի ձեզ տունդ 39 ձեր աւերակ։ Բայց ասեմ ձեզ թէ Ոչ եւս տեսանիցէք զիս յայսմ հետէ, մինչեւ ասիցէք, Օրհնեալ եկեալ յանուն Տեառն։

ԳԼ. ԻԴ

1 ԷԷ. Եւ եղեալ արտաքս Յիսուս ի տաճարէն գնայր. և մատեան աշակերտքն ցուցանել նմա 2 զշինուածս տաճարին։ Եւ նա պատասխանի ետ և ասէ ցնոսա, Տեսանէ՞ք զայդ ամենայն. ամէն ա. սեմ ձեզ, Ոչ մնասցէ այդր քար ի քարի վերայ որ 3 ոչ քակտեսցի։ Եւ մինչդեռ նստէր ի լերինն Զի. թենեաց, մատեան առ նա աշակերտքն առանձինն և ասեն, Ասա մեզ, ե՞րբ լինիցի այդ, և կամ զի՞նչ նշան իցէ քոյոյ գալստեանն և վախճանի աշ- 4 խարհիս։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա, 5 Զգոյշ լերուք, գուցէ ոք զձեզ խաբիցէ. Զի բա. զումք գայցեն յանուն իմ և ասիցեն թէ Ես եմ 6 Քրիստոսն, և զբազումս մոլորեցուցանիցեն։ Լսելոց էք պատերազմունս և համբաւս պատերազմաց. գգոյշ լերուք, մի՛ խռովեսջիք, զի պարտ է լինել 7 այնմ՛ ամենայնի, այլ չեւ է կատարած։ Յարիցէ ազգ յազգի վերայ, և թագաւորութիւն՝ ի թագաւորու. թեան, և եղիցին սով և սրածութիւնք և սաս. 8 նութիւնք ի տեղիս տեղիս։ Սակայն և այն ամենայն

---

[1]կամ, առնէիր [2]Ոմանք, առ քեզ

9 սկիզբն է երկանց։ Յայնժամ մատնեսցեն զձեզ ի նեղութիւն, և սպանանիցեն զձեզ, և եղիջիք ա-
10 տելեալք յամենայն ազգաց վասն անուան իմոյ։ Եւ յայնժամ գայթակղեսցեն բազումք, և զմիմեանս
11 մատնեսցեն և ատեսցեն զմիմեանս։ Եւ բազում սուտ մարգարէք յարիցեն և զբազումս մոլորեցու-
12 ցեն։ Եւ վասն բազմանալոյ անօրէնութեանն ցա-
13 մաքեսցի սէր բազմաց։ Բայց որ համբերեսցէ ի
14 սպառ՝ նա կեցցէ։ Եւ քարոզեսցի աւետարանս արքայութեան ընդ ամենայն տիեզերս ի վկայու-
թիւն ամենայն հեթանոսաց, և ապա եկեսցէ կա-
տարած։

15 Արդ, յորժամ տեսանիցէք զպղծութիւն աւերա-
ծոյն, որ ասացեալն է ի ձեռն Դանիէլի մարգարէի, զի կայցէ ի տեղւոջն սրբութեան. (որ ընթեռնուն
16 ի միտ առցէ.) Յայնժամ որ ի Հրէաստանի իցեն
17 փախիցեն ի լերինս. Եւ որ ի տանիս կայցէ՝ մի՛ իջցէ
18 առնուլ ինչ ի տանէ իւրմէ. Եւ որ յանդի իցէ՝ մի՛
19 դարձցի յետս առնուլ զձորձս իւր։ Բայց վա՜յ իցէ
20 յղեացս և առնուսուց յաւուրսն յայնոսիկ։ Ցաղօթս կացէք զի մի՛ լինիցի փախուստն ձեր ձմերան և
21 մի՛ ի շաբաթու։ Զի եղիցի յայնժամ նեղութիւն մեծ, որպիսի ոչ եղեւ ի սկզբանէ արարածոց աշ-
22 խարհի մինչեւ ցայժմ, և ոչ այլ լիցի։ Եւ եթէ ոչ կարճէին աւուրքն այնոքիկ, ոչ ապրէր ամենայն մարմին. բայց վասն բնտրելոցն կարճեսցին աւուրքն
23 այնոքիկ։ Յայնժամ թէ ոք ասիցէ ձեզ, Ահաւասիկ աստ է Քրիստոս կամ անդ, մի՛ հաւատայցէք։
24 Զի յարիցեն սուտ քրիստոսք և սուտ մարգարէք, և տացեն նշանս մեծամեծս և արուեստս,

մինչեւ մեղրեցուցանել, թէ հնար ինչ իցէ, և
25 զընտրեալսն։ Ահա յառաջագոյն ասացի ձեզ։
26 Ապա եթէ ասիցեն ձեզ, Ահաւանիկ յանապատի
է, մի՛ ելանիցէք, և թէ՝ Ահա ի շտեմարանս է, մի՛
27 հաւատայցէք։ Զի որպէս փայլակն որ ելանէ յա-
րեւելից և երեւի մինչեւ յարեւմուտս, այնպէս է-
28 ցի գալուստն Որդւոյ մարդոյ։ Զի ուր գէշն իցէ՝
անդր ժողովեսցին արծուիք։
29 Վաղվաղակի յետ նեղութեան աւուրցն այնո-
ցիկ արեգակն խաւարեսցի, և լուսին ոչ տացէ
զլոյս իւր, և աստեղք անկցին յերկնից, և զօրու-
30 թիւնք երկնից շարժեսցին։ Եւ ապա երեւեսցի
նշան Որդւոյ մարդոյ յերկինս, և յայնժամ կո-
ծեսցին ամենայն ազգք երկրի, և տեսցեն զՈրդի
մարդոյ եկեալ ի վերայ ամպոց երկնից զօրու թեամբ
31 և փառաւք բազմաւք։ Եւ առաքեսցէ զՀրեշտակս իւր
փողով մեծաւ, և ժողովեսցեն զընտրեալս նորա ի
չորից հողմոց, ի ծագաց երկնից մինչեւ ի ծագս
32 նոցա։ Ի թզենւոյ անտի ուսարուք զառակն. զի
յորժամ նորա ոստքն կակղասցին և տերեւն ցցուի-
33 ցի, դիտէք թէ մերձ է ամառն։ Նոյնպէս և դուք
յորժամ տեսանիցէք զայս ամենայն, դիտասջիք
34 թէ մերձ է ի դուրս։ Ամէն ասեմ ձեզ եթէ ոչ
35 անցցէ ազգս այս, մինչեւ այս ամենայն եղիցի։ Եր-
կինք և երկիր անցցեն, և բանք իմ մի՛ անցցեն։
36 Բայց վասն աւուրն այնորիկ և ժամուս ոչ ոք գի-
տէ, ոչ հրեշտակք երկնից, [1]և ոչ Որդի,՝ բայ
37 միայն [2]Հայր։ Եւ որպէս աւուրքն Նոյի, այնպէս

---

[1]Յոհ. ԺԳ. ԼԲ. [2]Ոմն. Հայր իմ

38 եղիցի գալուստն Որդւոյ մարդոյ։ Զի որպէս էին
յաւուրսն որ յառաջ քան զջրհեղեղն, ուտէին և
ըմպէին, կանայս առնէին և արանց լինէին, մինչեւ
39 յօրն յորում եմուտ Նոյ ի տապանն, եւ ոչ գի-
տացին մինչեւ եկն ջրհեղեղն և եբարձ զամենեսեան.
40 այնպէս եղիցի և գալուստն Որդւոյ մարդոյ։ Յայն-
ժամ թէ իցեն երկու յագարակի, մին առնուցու
41 և մեւսն թողուցու Եւ եթէ երկու աղային ի
մի երկանս, մին առնուցու և մեւսն թողուցու։
42 Արթուն կացէք, զի ոչ գիտէք յորում ժամու
43 Տէրն ձեր գայ։ Զայն գիտասջիք, եթէ գիտէր
տանուտէրն յորում պահու գող գայ, հակէր և ոչ
44 տայր ական հատանել զտան իւրոյ. Վասն այսորիկ
և դուք եղերուք պատրաստք, զի յորում ժամու ոչ
45 ակն ունիցիք, գայ Որդի մարդոյ։ Իսկ ո՞վ իցէ հա-
ւատարիմ ծառայ և իմաստուն զոր կացոյց տէր
իւր ի վերայ ծառայից իւրոց տալ նոցա կերակուր
46 ի ժամու։ Երանի է ծառային այնմիկ զոր եկեալ
47 տէրն գտանիցէ արարեալ այնպէս։ Ամէն ասեմ
ձեզ, զի ի վերայ ամենայն ընչից իւրոց կացուսցէ
48 զնա։ Ապա թէ ասիցէ ծառայն չար ի սրտի իւ-
49 րում, Տէր իմ յամէ զգալ. Եւ սկսանիցի հարկա-
նել զծառայակիցս իւր, ուտիցէ և ըմպիցէ ընդ
50 արբեցողս. Գայցէ տէր ծառային այնորիկ յաւուր
յորում ոչ ակն ունիցի, և ի ժամու յորում ոչ
51 գիտիցէ. Եւ կտրեսցէ զնա ընդ մէջ, և զբաժին
նորա ընդ կեղծաւորս դիցէ. անդ եղիցի լալ և
կրճելատամանց։

ԳԼ. ԻԵ

1 Յայնժամ նմանեսցի արքայութիւն երկնից տասն
կուսանաց, որոց առեալ զլապտերս իւրեանց ելին
2 ընդ առաջ փեսային [1]և հարսին՝: Հինգն ի նոցանէ
3 յիմարք էին, և հինգն՝ իմաստունք: Յիմարքն ա-
ռին զլապտերան, և ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին.
4 Իսկ իմաստունքն առին ձէթ ամանովք ընդ լապ-
5 տերս իւրեանց: Եւ ի յամել փեսային նիրհեցին
6 ամենեքեան և ի քուն մտին: Եւ ի մէջ գիշերի ե-
ղեւ բարբառ, Ահա փեսայ գայ, արիք ընդ առաջ
7 նորա: Յայնժամ յարեան ամենայն կուսանքն և
8 կազմեցին զլապտերս իւրեանց: Եւ ասեն յիմարքն ցի-
մաստունսն, Տուք մեզ յիւղոյդ ձերմէ, զի ահա
9 շիջանին լապտերքս մեր: Պատասխանի եւուն ի-
մաստունքն և ասեն, Գուցէ ոչ իցէ մեզ և ձեզ
բաւական, այլ երթայք ի վաճառականսն և գնեսջիք
10 ձեզ: Իսկ նոքա գնացին գնել, եկն փեսայն, և
պատրաստքն մտին ընդ նմա ի հարսանիսն, և փակե-
11 ցաւ դուռնն: Յետոյ գան և այլ կուսանքն և ասեն,
12 Տէր, Տէր, բաց մեզ: Նա պատասխանի ետ և ա-
13 սէ, Ամէն ասեմ ձեզ թէ Ոչ գիտեմ զձեզ: Ար-
թուն կացէք զի ոչ գիտէք զօրն և ոչ [2]զժամն:
14 Որպէս այր մի գնացեալ ի տարաշխարհ, կոչեաց
15 զծառայս իւր և ետ նոցա զինչս իւր. Ումեմն ետ
հինգ քանքար, և ումեմն երկուս, և ումեմն մի.
16 իւրաքանչիւր ըստ իւրում կարի, և գնաց: Ձօդաւ

---

[1] Ի Բազմա պակասէ [2] Ոմանք, զժամն յորում գայցէ Որդի մարդոյ

վաղվաղակի որ առ զՀինդն, գործեաց նոքօք և շա-
17 հեցաւ այլ եւս Հինդ։ Նոյնպէս և որ զերկուսն
18 շահեցաւ այլ եւս երկուս։ Եւ որ զմին առ՝ գնաց,
փորեաց զերկիր, և թաքոյց զարծաթ տեառն իւ-
19 րոյ։ Ձետ բազում ժամանակի գայ տէր ծառա-
20 յիցն այնոցիկ և առնէ համարս ի մէջ նոցա։ Եւ
մատուցեալ որ զՀինդ քանքարն առ՝ մատոյց այլ
եւս Հինդ քանքար, և ասէ, Տէր, Հինդ քանքար
եռուր ցիս, արդ ահաւասիկ Հինդ այլ եւս քան-
21 քար ի վերայ շահեցայ։ Ասէ ցնա տէրն իւր, Ա-
ղէ՛ւ, ծառայ բարի և հաւատարիմ, որովհետեւ ի
սակաւուդ հաւատարիմ եա, ի վերայ բազմաց կա-
ցուցից զքեզ. մուտ յուրախութիւն տեառն քո։
22 Մատուցեալ և որոյ զերկուս քանքարան առեալ
էր, և ասէ, Տէր, երկուս քանքարս եռուր ցիս,
ահաւասիկ երկուս եւս այլ քանքարս գոր ի վե-
23 րայ շահեցայ։ Ասէ ցնա տէրն իւր, Ազնի՛ւ, ծա-
ռայ բարի և հաւատարիմ, որովհետեւ ի սակա-
ւուդ հաւատարիմ եա, ի վերայ բազմաց կացու-
ցից զքեզ. մուտ յուրախութիւն տեառն քո։
24 Մատուցեալ և որոյ զմի քանքարն առեալ էր, և
ասէ, Տէր, գիտէի զի այր մի խիստ եա, հնձես
զոր ոչ սերմանեցեր, և ժողովես ուստի ոչ սփռե-
25 ցեր. երկեայ, գնացի և թաքուցի զքանքարն քո
26 յերկրի. արդ ահաւասիկ քոյդ ցքեզ։ Պատասխա-
նի եւ տէրն և ասէ ցնա, Ծառայ չար և վատ,
գիտէիր եթէ հնձեմ ուստի ոչ սերմանեցի, և ժո-
27 ղովեմ ուստի ոչ սփռեցի. Պարտ էր քեզ արկա-
նել զարծաթդ իմ ի սեղանաւորս, և եկեալ ես
28 տոկոսեօք պահանջէի զիմն։ Արդ առէք ի դմանէ

զքանքարդ, և տուք այնմ որ ունիցի զտան քան-
29 քարն։ Զի ամենայնի որ ունիցի՝ տացի և յաւելցի,
և որ ոչն ունիցի՝ և զոր ունիցին բարձցի ի նմանէ։
30 Եւ զծառայդ անպիտան հանէք ի խաւարն արտա-
քին, անդ եղիցի լալ և կրճել ատամանց։
31 Եւ յորժամ եկեսցէ Որդի մարդոյ փառօք իւ-
րով և ամենայն հրեշտակք ընդ նմա, յայնժամ
32 նստցի յաթոռ փառաց իւրոց։ Եւ ժողովեսցին ա-
ռաջի նորա ամենայն ազգք, և մեկնեսցէ զնոսա ի
միմեանց, որպէս հովիւ զի մեկնէ զօդիս յայծեաց.
33 Եւ կացուսցէ զօդիսն ընդ աջմէ իւրմէ, և զայծիսն՝
34 ի ձախմէ։ Յայնժամ ասասցէ թագաւորն ցայնոսիկ
որ ընդ աջմէն իցեն, Եկայք, օրհնեալք Հօր իմոյ,
ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն
35 ի սկզբանէ աշխարհի։ Զի քաղցեայ, և ետուք ինձ
ուտել. ծարաւեցի, և արբուցէք ինձ. օտար էի,
36 և ժողովեցէք զիս. Մերկ՝ և զգեցուցէք զիս. Հի-
ւանդ էի, և տեսէք զիս. ի բանտի էի, և եկիք առ
37 իս։ Յայնժամ պատասխանի տացեն նմա արդարքն
և ասասցեն, Տէր, ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ,
38 և կերակրեցաք. կամ ծարաւի՝ և արբուցաք. Ե՞րբ
տեսաք զքեզ օտար, և ժողովեցաք, կամ մերկ՝ և
39 զգեցուցաք։ Ե՞րբ տեսաք զքեզ հիւանդ կամ ի
40 բանտի, և եկաք առ քեզ։ Պատասխանի տացէ թա-
գաւորն և ասասցէ ցնոսա, Ամէն ասեմ ձեզ, Որով-
հետեւ արարէք միում յեղբարցս այսոցիկ փոքրկանց՝
41 ինձ արարէք։ Յայնժամ ասասցէ և ցայնոսիկ որ ընդ
ահեկէն իցեն, Երթայք յինէն, անիծեալք, ի հուրն
յաւիտենական, որ պատրաստեալ է Սատանայի և
42 հրեշտակաց նորա։ Զի քաղցեայ, և ոչ ետուք ինձ

43 ուտել. ծարաւեցի, և ոչ արբուցէք զիս. Օտար
էի, և ոչ ժողովեցէք զիս, մերկ էի, և ոչ զգե-
ցուցէք զիս, հիւանդ և ի բանտի՝ և ոչ տեսէք զիս։
44 Յայնժամ պատասխանի տացեն և նոքա և ասասցեն, Տէր, ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ կամ ծա-
րաւի կամ օտար կամ մերկ կամ հի. անդ կամ ի
45 բանտի, և ոչ պաշտեցաք զքեզ։ Յայնժամ պա-
տասխանի տացէ նոցա և ասասցէ, Ամէն ասեմ
ձեզ, Որովհետեւ ոչ արարէք միում ի փոքրկանցս
յայսցանէ, և ոչ ինձ արարէք։
46 Եւ երթիցեն նոքա ի տանջանսն յաւիտենականս,
և արդարքն՝ ի կեանսն յաւիտենականս։

ԳԼ. ԻԶ

1 Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս զամենայն
2 զբանս զայսոսիկ, ասէ ցաշակերտան իւր, Գիտէք
զի յետ երկուց աւուրց զատիկ լինի, և Որդի մար-
դոյ մատնի ի խաչ ելանել։ Վ.Զ
3 Յայնժամ ժողովեցան քահանայապետքն և դպիրք
և ծերք ժողովրդեանն ի սրահ քահանայապետին
4 որում անուն էր Կայիափա. Եւ արարին խորհուրդ
զի նենգութեամբ կալցին զՅիսուս և սպանցեն։
5 Բայց ասէին թէ Մի՛ ի տօնի աստ, զի մի՛ խռովու-
թիւն լինիցի ի ժողովրդեանն։
6 Իբրեւ եկն Յիսուս ի Բեթանիա ի տուն Սիմոնի
7 բորոտի, Մատեաւ առ նա կին մի որ ունէր շիշ
իւղոյ ծանրագնի, և թափեաց ի գլուխ նորա ի
8 բազմականին։ Իբրեւ տեսին աշակերտքն, բարկա-
ցան և ասեն, Ընդէ՞ր է կորուստդ այդ իւղոյդ.
9 Զի մարթ էր վաճառել զդա մեծագնի և տալ

10 աղքատաց : Գիտաց Յիսուս և ասէ ցնոսա , Չի՞
աչխատ առնէք զկինդ զործ մի բարի գործեաց դա
11 յիս : Յամենայն ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք ,
12 բայց զիս ոչ Հանապազ ընդ ձեզ ունիք Արկա-
նել դորա զեւղդ ի մարմին իմ՝ առ ի թաղելոյ զիս
13 Նշանակեաց : Բայց ամէն ասեմ ձեզ , զի ուր և
քարոզեսցի աւետարանս այս ընդ ամենայն աշխարհ ,
խոսեսցի և զոր արար դա ի յիշատակ դորա :
14 Յայնժամ գնաց մի յերկոտասանիցն անուանեալ
Յուդա Իսկարիովտացի առ քահանայապետսն , և
15 ասէ , Չի՞նչ կամիք տալ ինձ , և ես մատնեցից
զնա ձեզ և նոքա [1]կշռեցին նմա երեսուն արծա-
16 թիս : Եւ յայնմ հետէ խնդրէր պարապ զի մատ-
նեսցէ զնա նոցա :
17 Եւ յառաջնում աւուր բաղարջակերացն մատ-
եան աշակերտքն առ Յիսուս և ասեն , Ո՞ւր կամիս
18 զի պատրաստեսցուք քեզ ուտել զզատիկն : Եւ
նա ասէ ցնոսա , Երթայք ի քաղաքն առ այս ա-
նուն և ասացէք ցնա , Վարդապետ ասէ , Ժամա-
նակ իմ մերձեալ է , առ քեզ առնեմ զզատիկն
19 աշակերտօքս Հանդերձ : Եւ արարին աշակերտքն
որպէս հրամայեաց նոցա Յիսուս , և պատրաստե-
ցին զզատիկն :
20 Եւ իբրեւ երեկոյ եղեւ , կայր բազմեալ ընդ եր-
21 կոտասան աշակերտսն : Եւ մինչդեռ ուտէին նոքա ,
ասէ , Ամէն ասեմ ձեզ , զի մի ոմն ի ձէնջ մատ-
22 նելոց է զիս : Եւ արամեցան յոյժ , սկսան ասել
ցնա իւրաքանչիւր ոք ի նոցանէ , Միթէ ե՞ս իցեմ ,

---

[1]կ–մ , խոստացան

23 Տէր՝ Նա պատասխանի ետ և ասէ, Որ մխեաց ընդ
իս զձեռն իւր ի սկաւառակն՝ նա մատնելոց է զիս։
24 Որդի մարդոյ երթայ, որպէս և գրեալ է վասն
նորա, բայց վա՛յ մարդոյն այնմիկ յորմէ ձեռն Որդի
մարդոյ մատնեսցի. լաւ էր նմա թէ չէր ծնեալ
25 մարդն այն։ Պատասխանի ետ Յուդա որ մատնե-
լոցն էր զնա և ասէ, Միթէ ե՞ս իցեմ, վարդա-
պետ. ասէ ցնա, Դու ասացեր։
26 Եւ մինչդեռ ուտէին նոքա, առ Յիսուս հաց,
օրհնեաց և երեկ, և ետ աշակերտացն և ասէ,
27 Առէք, կերայք, այս է մարմին իմ։ Եւ առեալ
բաժակ գոհացաւ, ետ նոցա և ասէ, Արբէք ի
28 դմանէ ամենեքին. Զի այդ է արիւն իմ նորոյ ուխ-
տի, որ ի վերայ բազմաց հեղու ի թողութիւն մե-
29 ղաց։ Բայց ասեմ ձեզ, Ոչ եւս արբից յայսմ հե-
տէ ի բերոյ որթոյ մինչեւ ցօրն ցայն, յորժամ ար-
բից զդա ընդ ձեզ նոր յարքայութեան Հօր իմոյ։
30 Եւ օրհնեցին, և ելին ի լեառն Ձիթենեաց։
31 Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս, Ամենեքին դուք
գայթակղելոց էք յինէն յայսմ գիշերի, զի գրեալ
է թէ Հարից զհովիւն և ցրուեսցին ոչխարք հօտին։
32 Եւ յետ յառնելոյն իմոյ յառաջեցից քան զձեզ
33 ի Գալիլեա։ Պատասխանի ետ Պետրոս և ասէ ցնա,
Թէպէտ և ամենեքեան գայթակղեսցին ի քէն, ա-
34 կայն ես ոչ գայթակղեցայց։ Ասէ ցնա Յիսուս,
Ամէն ասեմ քեզ զի Յայսմ գիշերի մինչչեւ հաւու
35 խօսեալ իցէ, երիցս ուրասցիս զիս։ Ասէ ցնա Պետ-
րոս, Թէ եւ մեռանել հասանիցէ ընդ քեզ, զքեզ
ոչ ուրասցայց. Նոյնպէս և ամենայն աշակերտքն
ասէին։

36 Յայնժամ գայ Յիսուս ընդ նոսա ի գեղ մի ո-
րում անուն էր Գեթսեմանի, և ասէ ցնոսա, Նըս-
տարուք այդր, մինչեւ երթայց կացից յաղօթս։
37 Եւ առեալ ընդ իւր զՊետրոս և զերկուս որդիսն
38 Զեբեդեայ՝ սկսաւ տրտմել և հոգալ։ Յայնժամ
ասէ ցնոսա, Տրտում է ոգի իմ մինչեւ ի մահ,
39 կացէք աստ և սկեցէք ընդ իս։ Եւ մատուցեալ
յառաջ սակաւիկ մի, անկաւ ի վերայ երեսաց իւ-
րոց, կաց յաղօթս և ասէ, Հայր իմ, եթէ հնար
է, անցցէ բաժակս այս յինէն. բայց ոչ որպէս ես
40 կամիմ, այլ որպէս դու։ Գայ առ աշակերտսն, և
գտանէ զնոսա ի քուն, և ասէ ցՊետրոս, Այդպէս
41 ո՞չ կարացէք մի ժամ արթուն կալ ընդ իս։ Ար-
թուն կացէք և աղօթս արարէք զի մի՛ անկանիցէք
ի փորձութիւն. հոգին յօժար է, բայց մարմինս
42 տկար։ Դարձեալ երկրորդ անգամ չոգաւ, եկաց
յաղօթս ցՅիսուս և ասէ, Հայր իմ, եթէ [1]հնար
իցէ՝ անցանել յինէն բաժակիս այսմիկ, [2]ապա թէ
43 ոչ՝ արբից զսա՝, եղիցին կամք քո։ Եւ եկեալ
միւսանգամ եգիտ զնոսա ի քուն, զի էին աչք
44 իւրեանց ծանրացեալք։ Եթող զնոսա և գնաց,
կաց յաղօթս երրորդ անգամ, և դարձեալ զնոյն
45 բան ասաց։ Յայնժամ գայ առ աշակերտսն և ասէ
ցնոսա, Կնջեցէք այսուհետեւ և հանգերուք, զի
ահա հասեալ է ժամ, և Որդի մարդոյ մատնի ի
46 ձեռս մեղաւորաց։ Արիք, երթիցուք. տեսի, զի ա-
հաւասիկ եհաս որ մատնելոցն է զիս։
47 Եւ մինչդեռ նա զայն խօսէր, ահա Յուդա, մի

---

[1]Յ-ՆՆ, չիցէ հնար [2]Յ-ՆՆ, եթէ ոչ արբից զսա

յերկոտասանիցն եկն, և ընդ նմա ամբոխ բազում սրովք և բրօք ի քահանայապետիցն և ի ծերոց
48 ժողովրդեանն։ Եւ որ մատնելոցն էր զնա՝ ետ նոցա նշան և ասէ, Ընդ որում ես համբուրեցից՝ նա է,
49 զնա ունիցիք։ Եւ վաղվաղակի մատուցեալ առ Յիսուս՝ ասէ, Ողջ եր, վարդապետ. և համ-
50 բուրեաց ընդ նմա։ Եւ Յիսուս ասէ ցնա, Ընկեր, վասն որո՞յ եկիր զ. յայնժամ մատուցեալ արկին
51 ձեռս ի Յիսուս և կալան զնա։ Եւ ահա մի ոմն յայնցանէ որ էին ընդ Յիսուսի՝ ձգեաց զձեռն և
եհան զսուր իւր և եհար զծառայ քահանայապե-
52 տին, և ի բաց եհան զունկն նորա։ Յայնժամ ասէ ցնա Յիսուս, Դարձո զսուր քո ի տեղի իւր, զի
ամենեքեան որ սուր առնուցուն՝ սրով անկանիցին։
53 Թէ համարիցիս թէ ո՞չ կարիցեմ աղաչել զՀայր իմ, և հասուցանիցէ ինձ այժմ այսր աւելի քան
54 զերկոտասան գունդս հրեշտակաց։ Այլ զիա՞րդ լինուցուն գիրք թէ այսպէս պարտ է լինել։
55 Յայնժամ ասաց Յիսուս ցամբոխն, Իբրեւ ի վե-
րայ աւազակի՞ ելէք սուսերօք և բրօք ունել զիս. հանապազ առ ձեզ ի տաճարին նստէի և ուսու-
56 ցանէի, և ոչ կալայք զիս։ Այլ այս ամենայն ե-
ղեւ զի լցին գիրք մարգարէիցն։ Յայնժամ աշա-
կերտքն ամենեքին թողին զնա և փախեան։
57 Իսկ նոցա կալեալ զՅիսուս՝ ածին առ Կայիափա քահանայապետ, ուր գպիրքն և ծերք ժողովեալ
58 էին։ Եւ Պետրոս զհետ նորա երթայր բացագոյն մինչեւ ի սրահ քահանայապետին, և մտեալ ի
ներքս՝ նստէր ընդ սպասաւորան տեսանել զկատա-
59 բածն։ Իսկ քահանայապետքն և ամենայն ատեանն

խնդրէին սուտ վկայութիւն զՅիսուսէ, զի սպան-
60 ցեն զնա. Եւ ոչ գտանէին ի բազմաց սուտ վկա-
յիցն մատուցելոց. յետոյ մատուցեալ երկու սուտ
61 վկայք, Ասէին Թէ Սա ասէր, Կարող եմ քակել
62 զտաճարն Աստուծոյ, և զերիս աւուրս շինել։ Եւ
յարուցեալ քահանայապետն ասէ ցնա, Զոտ՞ս
ինչ պատասխանի, զի՞նչ դոքա ամբաստանեն
63 զքեզ։ Եւ Յիսուս լուռ կայր։ Պատասխանի եւ
քահանայապետն և ասէ ցնա, Երդմնեցուցանեմ
զքեզ յԱստուած կենդանի, զի ասասցես մեզ Թէ
64 դո՞ւ ես Քրիստոսն Որդի Աստուծոյ։ Ասէ ցնա Յի-
սուս, Դու ասացեր. բայց ասեմ ձեզ, Ցայսմ հե-
տէ տեսանիցէք զՈրդի մարդոյ նստեալ ընդ աջմէ
65 Զօրութեանն և եկեալ ընդ ամպս երկնից։ Յայն-
ժամ քահանայապետն պատառեաց զհանդերձս
իւր, և ասէ, Հայհոյեաց, զի՞ եւս պիտոյ են մեզ
վկայք, ահա արդ լուայք զհայհոյութիւնն դորա.
66 Զի՞նչ հաճոյ է ձեզ. Նոքա պատասխանի ետուն և
67 ասեն, Մահապարտ է։ Յայնժամ թքին ընդ երեսս
նորա և կռփեցին զնա, և ոմանք ապտակեցին, և
68 ասեն, Մարգարեաց մեզ, Քրիստոս, ո՞վ է որ
եհարն զքեզ։

69 Իսկ Պետրոս նստէր արտաքոյ ի գաւթին. մատ-
եաւ առ նա աղախին մի և ասէ, Եւ դու ընդ Յի-
70 սուսի Գալիլեացւոյ էիր։ Նա ուրացաւ առաջի ա-
մենեցուն և ասէ Թէ Ոչ գիտեմ զինչ խօսիդ։
71 Եւ իբրեւ եկ նա արտաքս քան զդուռնն, ետես
զնա այլ կին մի, և ասէ ցայնոսիկ որ անդն կա-
յին, Եւ սա ընդ Յիսուսի Նազովրեցւոյ էր։
72 Եւ դարձեալ ուրացաւ երդմամբ Թէ Ոչ գիտեմ

73 զայրն ։ Եւ յետ սակաւ մերձ մատուցեալ որք կա-
ային անդ՝ ասեն ցՊետրոս , Արդարեւ և դու ի նո-
ցանէ ես , քանզի և խօսք քո յայտ առնեն զքեզ ։
74 Յայնժամ սկսաւ նզովել և երդնուլ թէ Ոչ գի-
75 տեմ զայրն . և իսկոյն հաւ խօսեցաւ ։ Եւ յիշեաց
Պետրոս զբանն Յիսուսի զոր ասաց թէ Մինչեւ
հաւու խօսեալ իցէ , երիցս ուրասցիս զիս . և ելեալ
արտաքս՝ ելաց դառնապէս ։

ԳԼ. ԻԷ

1 Իբրեւ այգ եղեւ , խորհուրդ արարին ամենայն
քահանայապետքն և ծերք ժողովրդեանն վասն Յի-
2 սուսի սպանանել զնա ։ Կապեցին զնա և տուին
գնացին , և եատուն ի ձեռս Պոնտացւոյ Պիղատոսի
դատաւորի ։
3 Յայնժամ տեսեալ Յուդայի որ մատնեացն զնա
թէ պարտաւորեցաւ , դղջացաւ և դարձոյց [1]զար-
ծաթն առ քահանայապետան և ծերս ժողովըր-
4 դեանն՝ , Եւ ասէ , Մեղայ զի մատնեցի զարիւն
արդար . և նոքա ասեն , Մեզ չէ փոյթ , դու գի-
5 տես ։ Եւ ընկէց զարծաթն ի տաճարին և գնաց , և
6 չոգաւ խեղդեցաւ ։ Իսկ քահանայապետին առեալ
զարծաթն՝ ասեն , Ոչ է արժան ընդունել զայդ ի
7 կորբանն , քանզի գինք արեան են ։ Խորհուրդ ա-
րարեալ , գնեցին այնու զագարակն բրտի ի գերեզ-
8 ման օտարաց ։ Վասն այնորիկ կոչեցաւ ագարակն
9 այն Ագարակ արեան մինչեւ ցայսօր ։ Յայնժամ

---

[1]Յոյն , զերեսուն արծաթին առ քահանայապետան և ծերս

լցաւ որ ասացաւն ի ձեռն [1]Երեմիայի մարգարէի,
և առին զերեսուն արծաթին զգինս վաճառելոյն,
10 զոր արկին յորդւոցն Իսրայելի։ Եւ ետուն զնա
յագարակն բրտի, որպէս հրամայեաց ինձ Տէր։
11 Եւ Յիսուս եկաց առաջի դատաւորին. եհարց
ցնա դատաւորն և ասէ, Դո՞ւ ես թագաւորն Հրէից.
12 և Յիսուս ասէ, Դու ասես։ Եւ ի չարախօսելն նո-
ցա ի քահանայապետիցն և ի ծերոց, ոչինչ ետ
13 պատասխանի։ Յայնժամ ասէ ցնա Պիղատոս. Ո՞չ
14 լսես որչափ դոքա հակառակ քո վկայեն։ Եւ ոչ
ետ նմա պատասխանի և ոչ բան մի, մինչեւ զար-
մանալ դատաւորին յոյժ։
15 Բայց ըստ տօնի սովոր էր դատաւորն արձակել
16 ժողովրդեանն կապեալ մի զոր կամէին։ Ունէին
յայնժամ կապեալ մի նշանաւոր, որում անուն
17 էր [2]Յեսու Բարաբբա։ Իբրեւ ժողովեցան, ասէ
ցնոսա Պիղատոս, Զո՞ կամիք [3]յերկուց աստի զի
արձակեցից ձեզ, զՅեսու Բարաբբա՞'' եթէ զՅի-
18 սուս զանուանեալն Քրիստոս։ Քանզի գիտէր թէ
առ նախանձու մատնեցին զնա։
19 Եւ մինչ նստէր յատենին, առաքեաց առ նա
կինն իւր և ասէ, Զկայ ինչ քո և արդարոյն այ-
նորիկ, զի բազում անգք անցին ընդ իս այսօր յա-
20 նուրջս վասն նորա։ Իսկ քահանայապետքն և ծերք
հաւանեցուցին զժողովուրդն, զի խնդրեսցեն զԲա-
21 րաբբայն, և զՅիսուս կորուսցեն։ Պատասխանի ետ
դատաւորն և ասէ ցնոսա, Զո՞ կամիք զի արձա-

---

[1] Յ–ր–մ–ա–ե–ա ց–ւ–ե–ա [2] Ի Բ–ա–ր–ա–ք ց–ւ–ե–ա [3] Բ–ա–ր–ժ, զի արձակեցից ձեզ, զԲարաբբա՞

կեցից ձեզ յերկուց աստի և նոքա ասեն, զԲա-
22 բաբբա։ Ասէ ցնոսա Պիղատոս, Իսկ զի՞ արարից
23 զՅիսուս զանուանեալն Քրիստոս։ Ասեն ամենեքեան, խաչեցի. և նա ասէ, Զի՞նչ չար արար.
և նոքա առաւել եւս աղաղակէին և ասէին, խա-
24 չեցի։ Եւ տեսեալ Պիղատոսի թէ ոչինչ օգնէ, այլ առաւել խռովութիւն լինի, առեալ ջուր՝
լուաց զձեռս առաջի ժողովրդեանն և ասէ, Քաւեալ եմ ես յարենէ արդարոյդ այդորիկ. դուք
25 գիտասջիք։ Պատասխանի ետ ամենայն ժողովուրդն և ասէ, Արիւն դորա ի վերայ մեր և ի վերայ որդւոց
26 մերոց։ Յայնժամ արձակեաց նոցա զԲարաբբան, և զՅիսուս գան հարեալ՝ ետ ի ձեռս զի խաչեցի։
27 Յայնժամ զինուորք դատաւորին առին զՅիսուս յապարանս, և ժողովեցին ի վերայ նորա զամենայն
28 զգունդն. Մերկացին զնա, և արկին զնովաւ քղամիդ
29 կարմիր։ Եւ բոլորեալ պսակ ի փշոց՝ եդին ի գլուխ նորա, և եղէգն՝ յաջոյ ձեռին նորա. ի ծունր իջեալ
առաջի նորա՝ կատակէին և ասէին, Ողջ եր, Թագաւոր Հրէից։ Եւ թքեալ ի նա՝ առնուին զեղէգնն և
31 ծեծէին զգլուխ նորա։ Եւ յորժամ ձաղեցին զնա, մերկացուցին ի նմանէ զքղամիդն և ազուցին նմա
զիւր հանդերձն, և տարան զնա ի խաչ հանել։
32 Եւ ելեալ արտաքս՝ գտին այր մի Կիւրենացի
անուն Սիմոնէ, զնա կալան պահակ զի բարձցէ
33 զխաչն նորա։ Եւ եկեալ ի տեղին անուանեալ
34 Գողգոթա, որ է տեղի կառափելոյ, Ետուն նմա
ըմպել գինի ընդ լեղի խառնեալ. և իբրեւ ճաշակեաց, ոչ կամեր ըմպել։ Եւ հանեալ զնա ի
խաչ՝ բաժանեցին զհանդերձս նորա վիճակաւ.

[1]զի լցցի բանն որ ասացաւ ի մարգարէէն, Բաժանե-
ցին զՀանդերձս իմ յիւրեանս, ի վերայ պատմու-
36 ճանի իմոյ վիճակս արկանէին։" Եւ նստեալ պահէին
37 զնա։ Եւ եդին ի վերայ գլխոյ նորա գրեալ զվնաս
նորա, Թէ Ա՛յս է Յիսուս, Թագաւորն Հրէից։
38 Յայնժամ Հանին ընդ նմա ի խաչ երկուս աւա-
զակս, մի յաջմէ նորա և մի յահեկէ։
39 Եւ որ անցանէին հայհոյէին զնա, շարժէին զգլու-
40 խս իւրեանց, եւ ասէին, Վա՜հ, որ քակէիր զտա-
ճարն և զերիս աւուրս շինէիր զնա, ապրեցո զքեզ-
41 Թէ Որդի ես Աստուծոյ, էջ ի խաչէդ։ Նոյնպէս և
քահանայապետքն ձաղէին Հանդերձ դպրօքն և ծե-
42 րովք և ասէին, Զայլս ապրեցոյց, զինքն ոչ կարէ
ապրեցուցանել. եթէ Թագաւոր է Իսրայելի, իջցէ
43 այժմ ի խաչէդ, և Հաւատասցուք դմա. Եթէ յու-
սացաւ յԱստուած, փրկեսցէ այժմ զդա, եթէ կամի
44 զդա. քանզի ասաց եթէ Աստուծոյ Որդի եմ։ Զնոյն և
աւազակքն որ խաչեալ էին ընդ նմա՝ նախատէին զնա։
45 Եւ ի վեց ժամէ աւուրն խաւար եղեւ ի վերայ
46 ամենայն երկրի մինչեւ ցիւն ժամ։ Եւ զիւն ժա-
մուն գոչեաց Յիսուս ի ձայն մեծ և ասէ, Էլի,
Էլի, լամա սաբաքթանի. այսինքն է, Աստուած
47 իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս։ Ոմանք
յայնցանէ որ անդն կային՝ իբրեւ լուան, ասէին
48 Զեղիա կարդայ դա։ Եւ վազվազակի ընթացաւ մի
ոմն ի նոցանէ, ա՛ռ սպունգ լի քացախով, Հարեալ
49 յեղեգան՝ եւս ըմպել նմա։ Եւ կէսքն ասէին, Թող
տեսցուք եթէ գա՞յ Եղիա փրկել զդա։

---

[1] Յովհան. պ-ոէսոէ

50 Եւ Յիսուս դարձեալ աղաղակեաց ի ձայն մեծ
և արձակեաց զոգին։
51 Եւ ահա վարագոյր տաճարին ցեղաւ յերկուս ի
վերուստ մինչեւ ի վայր, և երկիր շարժեցաւ, և
52 վէմք պատառեցան։ Եւ գերեզմանք բացան և բա-
53 զում մարմինք ննջեցելոց սրբոց յարեան։ Եւ ել-
եալ ի գերեզմանաց յետ յարութեանն նորա,
մտին ի քաղաքն սուրբ և երեւեցան բազմաց։
54 Իսկ հարիւրապետն և որ ընդ նմա պահէին զՅի-
սուս՝ իբրեւ տեսին զշարժուածն և զեղեալսն, երկեան
յոյժ և ասեն, Արդարեւ Աստուծոյ Որդի էր սա։
55 Էին անդ կանայք բազումք, կային ի հեռաստա-
նէ և հայէին, որք եկին զկնի Յիսուսի ի Գալիլէէ
56 պաշտել զնա. Յորս էր Մարիամ Մագդաղենացի,
և Մարիամ՝ Յակովբայ և Յովսեայ մայր, և մայր
որդւոցն Զեբեդեայ։
57 Եւ իբրեւ երեկոյ եղեւ, եկն այր մի մեծատուն
յԱրիմաթեայ որում անուն էր Յովսէփ, որ և ա-
58 շակերտեցաւ իսկ Յիսուսի։ Սա մատուցեալ առ
Պիղատոս՝ խնդրեաց զմարմինն Յիսուսի. յայնժամ
59 Պիղատոս հրամայեաց տալ զմարմինն։ Եւ առեալ
60 զմարմինն Յովսէփ՝ պատեաց սուրբ կտաւովք, Եւ
եդ ի նոր գերեզմանի զոր փորեաց ի վիմի. և թա-
ւալեցուցեալ կափարիչ դրան գերեզմանին վէմ
61 մի մեծ՝ գնաց։ Անդ էր Մարիամ Մագդաղենացի
և մեւս Մարիամն, նստէին հանդէպ գերեզմանին։
62 Եւ ի վաղիւ անդր որ է յետ ուրբաթուն, ժո-
ղովեցան քահանայապետքն և փարիսեցիքն առ Պի-
63 ղատոս, Եւ ասեն, Տէր, յիշեցաք զի մոլորեցուցիչն
այն ասէր մինչ կենդանին էր, Թէ յետ երից աւուրց

64 յառնեմ։ Արդ հրամայեա զգուշանալ գերեզմանին
մինչեւ ցերիս աւուրս, գուցէ եկեալ աշակերտքն
գիշերի՝ գողանայցեն զնա, և ասիցեն ժողովրդեանն
թէ յարեաւ ի մեռելոց. և լինիցի յետին մոլորու-
65 թիւնն չար քան զառաջինն։ Ասէ ցնոսա Պիղատոս,
Ունիք զզօրականն, երթայք, զգուշացարուք որպէս
66 և գիտէք։ Եւ նոքա երթեալ զգուշացան գերեզմա-
նին, և կնքեցին զվէմն հանդերձ զօրականօքն։

ԳԼ. ԻԸ

1 Եւ յերեկոյի շաբաթուն յորում լուսանայր միա-
շաբաթին, եկն Մարիամ Մագդաղենացի և մեւս
2 Մարիամն տեսանել զգերեզմանն։ Եւ ահա շար-
ժումն մեծ եղեւ, զի հրեշտակ Տեառն իջեալ
յերկնից մատուցեալ ի բաց թաւալեցոյց զվէմն ի
3 դրաց անտի, և նստէր ի վերայ նորա. Եւ էր տե-
սիլ նորա իբրեւ զփայլակն, և հանդերձ նորա
4 սպիտակ իբրեւ զձիւն։ Եւ յահէ անտի նորա խռո-
վեցան պահապանքն, և եղեն իբրեւ զմեռեալս։
5 Պատասխանի ետ հրեշտակն և ասէ ցկանայսն, Մի
երկնչիք դուք, գիտեմ զի զՅիսուս զխաչեալն
6 խնդրէք. Չէ աստ, քանզի յարեաւ, որպէս ասաց։
7 եկայք, տեսէք զտեղին ուր [1]կայր։ Եւ վաղվաղակի
երթայք, ասացէք աշակերտացն նորա թէ [2]յարեաւ
և ահա յառաջանայ քան զձեզ ի Գալիլեա, անդ
8 տեսանիցէք զնա. ահա ասացի ձեզ։ Եւ ելեալ վաղ
վաղակի ի գերեզմանէ անտի ահիւ և խնդութեամբ
բազմաւ՝ ընթանային պատմել աշակերտացն։

---

[1]Բ–ղ–մ, կայր Տէրն [2]Բ–ղ–մ, յարեաւ ի մեռել

9 Եւ ահա պատահեաց նոցա Յիսուս և ասէ, Ո՛ղջ
էք. և նոքա մատուցեալ կալան զոտս նորա և եր-
10 կիր պագին նմա: Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս,
Մի՛ երկնչիք, երթայք, աւանգէք եղբարցն իմոց զի
երթիցեն ի Գալիլեա և անդ տեսցեն զիս:
11 Իրրեւ նոքա գնացին, ահա ոմանք ի զօրականացն
եկին ի քաղաքն, և պատմեցին քահանայապետիցն
12 զամենայն որ ինչ եղեւն: Եւ նոքա ժողովեալ հան-
դերձ ծերովքն, խորհուրդ առեալ՝ արծաթս յոյժ
13 ետուն զօրականացն. Եւ ասեն, Ասասջիք եթէ Աշա-
կերտքն նորա եկեալ գիշերի գողացան զնա, մինչ
14 մեք ի քուն էաք: Եւ եթէ լուր լիցի այդ առ դատա-
ւորն, մեք հաճեացուք զնա և զձեզ անհոգս արաս-
15 ցուք: Եւ նոցա առեալ զարծաթսն, արարին որպէս
ուսանէն. և ել համբաւս այս ի Հրէից մինչեւ ցայսօր:
16 Իսկ ժետասան աշակերտքն գնացին ի Գալիլեա ի
17 լեառնն՝ ուր ժամադիր եղեւ նոցա Յիսուս: Իրրեւ
տեսին զնա, երկիր պագին նմա, և ոմանք յեր-
18 կուածան: Եւ մատուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ
նոսա և ասէ, Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն
յերկինս և յերկրի. [1]որպէս առաքեաց զիս Հայր,
19 և ես առաքեմ զձեզ:" Գնացէք այսուհետեւ, ա-
շակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնո-
20 սա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ: Ու-
սուցէք նոցա պահել զամենայն որ ինչ պատուի-
րեցի ձեզ. և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամե-
նայն աւուրս, մինչեւ ի կատարած աշխարհի:

---

[1] ի յառնէն պոխոէ

ԳԼՈՒԽՔ ՄԱՐԿՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

	Գլ.	Հմր.
Վասն գիւտահարին .	Ա.	23
Վասն Պետրոսի զոքանչին .	Ա.	29
Վասն բժշկութեան պէսպէս հիւանդութեանց .	Ա.	32
Վասն բորոտին .	Ա.	40
Վասն անդամալուծին .	Բ.	3
Վասն Ղեւեայ մաքսաւորի .	Բ.	14
Վասն գօսացեալ ձեռինն .	Գ.	1
Վասն առաքելոցն ընտրութեան .	Գ.	13
Վասն սերմանեացն առակի .	Դ.	2
Վասն սաստելոյ ջուրցն .	Դ.	35
Վասն լեգէոնէացն .	Ե.	1
Վասն դստեր ժողովրդապետին .	Ե	21
Վասն տեառատեսին .	Ե.	25
Վասն համարոյ առաքելոցն .	Զ.	7
Վասն Յովհաննու և Հերովդէի .	Զ.	14
Վասն հինգ հացին և երկուց ձկանցն .	Զ.	35
Վասն ի վերայ ծովուն գնալոյ .	Զ.	47
Վասն անցանելոյն գպատուիրանաւն .	Է.	5
Վասն Ասորւոյ կնոջն փիւնիկեցւոյ .	Է.	24
Վասն համերն և խլին .	Է.	31
Վասն եւթն հացին .	Ը.	1
Վասն խմորոյ փարիսեցւոցն .	Ը.	16
Վասն կուրին .	Ը.	22
Վասն հարցանելոյն ի Կեսարիա .	Ը.	27
Վասն այլակերպութեանն Տեառն .	Թ.	1
Վասն լուսնահարին .	Թ.	16

	Գլ.	Հմր.
Վասն խորհելոյն թէ ո՞վ իցէ մեծ.	Թ.	32
Վասն հարցանելոյն թէ Պա՞րտ է արձակել զկին.	Ժ.	1
Վասն հարցանելոյ մեծատանն զՅիսուս.	Ժ.	17
Վասն որդւոցն Զերեդեայ.	Ժ.	35
Վասն Բարտիմէոսի.	Ժ.	46
Վասն յաւանակին.	ԺԱ.	1
Վասն չորանալոյ թզենւոյն.	ԺԱ.	12
Վասն անյիշաչարութեան.	ԺԱ.	25
Վասն հարցանելոյ քահանայապետիցն զՏէրն	ԺԱ.	27
Վասն այգւոյն.	ԺԲ.	1
Վասն հարցանելոյ զդահեկանէն.	ԺԲ.	13
Վասն ապստակեցւոցն.	ԺԲ	18
Վասն դպրացն.	ԺԲ.	28
Վասն Տեառն հարցանելոյն զփարիսեցիսն.	ԺԲ	35
Վասն երկու յոմմայիցն.	ԺԲ.	41
Վասն կատարածին.	ԺԳ.	3
Վասն աւուրն և ժամուն.	ԺԳ.	32
Վասն օծանելոյ կնոջն զՏէրն իւղով.	ԺԴ.	3
Վասն զատկին.	ԺԴ.	12
Վասն մատնութեանն մարգարէանալոյ.	ԺԴ.	18
Վասն Պետրոսի ուրացութեանն.	ԺԴ.	66
Վասն խնդրելոյ զտէրունական մարմինն.	ԺԵ.	42
Վասն իւղաբեր կանանցն.	ԺԶ.	1

ԱՒԵՏԱՐԱՆ
ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա

1 Սկիզբն աւետարանի Յիսուսի Քրիստոսի, Որդւոյ
2 Աստուծոյ։ Որպէս և գրեալ է ի մարգարէս, Ահա.
ւասիկ ես առաքեմ զհրեշտակ իմ առաջի քո, որ
3 հանդերձեսցէ զճանապարհս քո առաջի քո։ Ձայն
բարբառոյ յանապատի, Պատրաստ արարէք զճա.
նապարհ Տեառն, և ուղիղս արարէք զշաւիղս նո.
4 րա։ Եւ եղեւ ի Յովհաննէս մկրտէր յանապատի
և քարոզէր մկրտութիւն ապաշխարութեան ի թո.
5 ղութիւն մեղաց։ Եւ երթայր առ նա ամենայն
աշխարհն Հրէաստանի և Երուսաղէմացիք ամենե.
քեան, և մկրտէին ի նմանէ ի Յորդանան գետ
6 խոստովանեալ զմեղս իւրեանց։ Եւ էր Յովհաննէս
զգեցեալ առեւ ուղտու, և գօտի մաշկեղէն ընդ
մէջ իւր. և կերակուր նորա մարախ և մեղր վայ.
7 րենի։ Քարոզէր և ասէր, Գայ զօրագոյնն քան զիս
զկնի իմ, որում չեմ բաւական խոնարհել լուծա.
8 նել զքարացս կօշկաց նորա։ Ես մկրտեցի զձեզ
ջրով, և նա մկրտեսցէ զձեզ Հոգւով Սրբով։
9 Եւ եղեւ յաւուրսն յայնոսիկ եկն Յիսուս ի Նա.
զարեթէ Գալիլեացւոց, և մկրտեցաւ ի Յովհաննէ
10 ի Յորդանան։ Եւ նոյնժամայն ընդ վերանալ ի

ջրոցն եառեա ցելեալ զերկինս, և զՀոգին [1]Աստուծոյ իբրեւ զաղաւնի զի իջանէր ի վերայ նորա։
11 Ձայն եղեւ յերկնից և ասէ, Դու ես Որդի իմ սիրելի, ընդ քեզ հաճեցայ։
12 Եւ նոյնժամայն Հոգին հանէ զնա յանապատ։
13 Եւ էր նա անդ զաւուրս քառասուն փորձեալ ի Սատանայէ, և էր ընդ գազանս. և հրեշտակք պաշտէին զնա։
14 ԲԲ. Եւ յետ մատնելոյն Յովհաննու եկն Յիսուս ի Գալիլեա. քարոզէր զաւետարանն Աստուծոյ,
15 և ասէր թէ կատարեալ է ժամանակ, և հասեալ է արքայութիւնն Աստուծոյ, ապաշխարեցէք և հաւատացէք յաւետարանն։
16 Իբրեւ անցանէր առ ծովեզերբն Գալիլեացւոց, եառես զՍիմոնէ և զԱնդրէաս զեղբայր Սիմոնէի, զի արկեալ էր նոցա ուռկանս ի ծով, քանզի ձկնորսք էին.
17 Եւ ասէ ցնոսա Յիսուս, Եկայք զկնի իմ և արարից զձեզ լինել որսորդս մարդկան։
18 Եւ վաղվաղակի թողեալ զուռկանն՝ գնացին զկնի նորա։
19 Եւ մատուցեալ անտի սակաւիկ մի յառաջ՝ եառես զՅակովբոս Զեբեդեայ և զՅովհաննէս զեղբայր նորա, և զնոսա ի նաւին մինչ կազմէին զուռկանս։
20 Եւ կոչեաց [2]զնոսա, և վաղվաղակի թողեալ զՀայրն իւրեանց զԶեբեդէոս ի նաւին վարձկանօքն հանգերձ, գնացին զկնի նորա։
21 ԲԳ. Եւ մտանեն ի Կափառնայում, և իսկ և իսկ ի շաբաթուն մտեալ ի ժողովուրդն՝ ուսուցանէր զնոսա։
22 Եւ զարմանային ընդ վարդապետութիւն նորա, զի ուսուցանէր զնոսա իբրեւ իշխա-

---

[1] Ի ցառնէն պակասէ [2] Բազմ. զնոսա վաղվաղակի, և

23 նուիրեամբ, և ոչ՝ որպէս դպիրքն։ Եւ էր ի ժո-
ղովրդեանն նոցա այր մի, յորում այս պիղծ գոյր
24 ի նմա. որ աղաղակեաց և ասէ, Թոյլ տուր, զի՞
կայ մեր և քո, Յիսուս Նազովրեցի, եկիր կորու-
սանե՞լ զմեզ. գիտեմ զքեզ, ով ես, Սուրբդ Ա-
25 ստուծոյ։ Սաստեաց ի նա Յիսուս և ասէ, Կարկեաց
26 և ել ի դմանէ։ Եւ զարկոյց զնա այն պիղծ, և
27 աղաղակեաց ի ձայն մեծ և ել ի նմանէ։ Եւ զար-
մացան ամենեքին, մինչեւ հնծել ընդ միմեանս և
ասել, Ջի՞նչ է այս նոր վարդապետութիւնս, զի
իշխանութեամբ և այսոց պղծոց ասատէ, և հնա-
28 զանդին ամա։ Եւ ել լուր նորա ընդ ամենայն
կողմն Գալիլեացւոց։
29 Եւ վաղվաղակի ելեալ ի ժողովրդենէն՝ եկն ի
տուն Սիմովնի և Անդրեայ Յակովբաւ և Յովհան
30 նու հանդերձ։ Եւ զոքանչ Սիմովնի դներ ջերմա-
31 ցեալ, և վաղվաղակի ասեն ցնա վասն նորա։ Եւ
մատուցեալ յարոյց զնա՝ կալեալ զձեռանէ նորա
և եթող զնա տենդն, և պաշտեր զնոսա։
32 Եւ իրրեւ երեկոյ եղեւ, ի մտանել արեգականն
բերէին առ նա զամենայն հիւանդս և զդիւահարս
33 Եւ էր ամենայն քաղաքն ժողովեալ առ դրունսն
34 Եւ բժշկեաց բազում հիւանդս ի պէսպէս ախտից,
և դեւս բազումս եհան. և ոչ տայր խօսել դի-
ւացն, զի գիտէին զնա [1]Թէ Քրիստոսն է՞։
35 Բդ. Եւ ընդ այգն ընդ առաւօտն յարուցեալ ել
և գնաց յանապատ տեղի, և անդ կայր յաղօթս
36 Եւ գնաց գՀետ նորա Սիմովն և որ ընդ նմայն էին

---

[1]Յոմանս պակասէ

37 եւ իբրեւ գտին զնա, ասեն ցնա թէ Ամենեքին
38 խնդրեն զքեզ։ եւ ասէ ցնոսա, Եկայք երթիցուք
և յայլ մօտաւոր գեղաքաղաքսն, զի և անդ քա-
39 րոզեցից, զի յայս իսկ եկեալ եմ։ Եւ քարոզէր ի
ժողովուրդս նոցա ընդ ամենայն Գալիլեացիս, և
դեւս հանէր։

40 Գայ առ նա բորոտ մի, աղաչէր, ի ծունր իջա-
նէր և ասէր. Տէր, եթէ կամիս, կարող ես զիս
41 սրբել։ Իսկ Յիսուս գթացեալ ձգեաց զձեռն, մեր-
42 ձեցաւ ի նա և ասէ ցնա, Կամիմ, սրբեաց։ Եւ
իբրեւ ասացն ցնա, վաղվաղակի գնաց ի նմանէ բո-
43 րոտութիւնն, և սրբեցաւ։ Եւ սաստեալ նմա՝ ե-
հան զնա արտաքս վաղվաղակի, և ասէ ցնա,
44 Զգոյշ լեր, մի՛ ումեք ինչ ասիցես. այլ երթ,
ցոյց զքեզ քահանային, և մատո վասն սրբութեան
քո պատարագ, զոր հրամայեաց Մովսէս ի վկա-
45 յութիւն նոցա։ Եւ նա ելեալ սկսաւ քարոզել
յոյժ և հռչակ հարկանել զբանն, մինչ ոչ եւս
կարող լինել նմա յայտնապէս ի քաղաք մտանել,
այլ արտաքոյ յանապատ տեղիս էր. և գային առ
նա յամենայն կողմանց։

ԳԼ. Բ

1 ԲԵ. Եւ մտեալ դարձեալ ի Կափառնայում յետ
2 աւուրց, լուր եղեւ եթէ ի տան է. և ժողովեցան
բազումք, մինչեւ տեղի եւս ոչ լինել և ոչ առ
3 դրանն. և խօսէր նոցա զբանն։ Եւ գային առ նա,
4 բերէին անդամալոյծ մի բարձեալ ի չորից։ Եւ իբ-
րեւ ոչ կարէին մերձենալ առ նա յամբոխէ անն-
տի, քակեցին զյարկն ուր էր Յիսուս, և բացեալ

զառաստաղն՝ իջուցին զմահիճան յորում կայր
5 անդամալոյծն։ Եւ տեսեալ Յիսուսի զհաւատս
նոցա, ասէ ցանդամալոյծն, Որդեակ, թողեալ լի-
6 ցին քեզ մեղք քո։ Եւ էին ոմանք ի դպրաց անդ
որ անդ նստէին և խորհէին ի սիրտս իւրեանց,
7 Զի՞նչ է այս որ խօսի սա զհայհոյութիւնս. ո՞վ
8 կարէ թողուլ մեղս, եթէ ոչ միայն Աստուած։ Եւ
գիտաց Յիսուս յոգի իւր թէ այնպէս խորհին ի
սիրտս իւրեանց, և ասէ, Զի՞ խորհիք զայդ ի սիրտս
9 ձեր։ Զի՞նչ դիւրին է, ասել՞ ցանդամալոյծն՝
թողեալ լիցին քեզ մեղք քո, եթէ՝ ասել, Արի,
10 առ զմահիճս քո և երթ [1]ի տուն քո՞։ Այլ զի
գիտասջիք եթէ իշխանութիւն ունի Որդի մարդոյ
ի վերայ երկրի թողուլ մեղս, (ասէ ցանդամա-
11 լոյծն,) Քեզ ասեմ, Արի, առ զմահիճս քո և երթ
12 ի տուն քո։ Եւ յարեաւ, և վաղվաղակի առեալ
զմահիճն, ել առաջի ամենեցուն, մինչեւ զար-
մանալ ամենեցուն, և փառաւոր առնել զԱս-
տուած և ասել թէ Այսպիսի ինչ երբեք ոչ տեսաք։
13 ԲԶ. Եւ ել դարձեալ ի ծովեզրն, և ամենայն
ժողովուրդն գայր առ նա. և ուսուցանէր զնոսա։
14 Եւ մինչդեռ անցանէր, տեսեալ զԼեւի Ալփեայ զի
նստէր ի մաքսաւորութեան, և ասէ ցնա, Եկ զկէ
15 իմ. և յարուցեալ գնաց զկնի նորա։ Եւ եղեւ ի
բազմել նորա ի տան նորա, և բազում մաքսա-
ւորք և մեղաւորք բազմեալ էին ընդ Յիսուսի և
ընդ աշակերտան նորա. քանզի էին բազումք որ
16 երթային զկնա նորա։ Իսկ դպիրքն և փարիսեցիք

---

[1]ի բազմ. պիտ.

իբրեւ տեսին թէ ուտէ ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս, ասեն ցաշակերտան նորա, Ջի՞ է զի ընդ մեղաւորս և ընդ մաքսաւորս ուտէ [1]և ըմպէ՞,
17 Իբրեւ լուաւ Յիսուս, ասէ ցնոսա, Ոչինչ է պիտոյ բժիշկ ողջոց, այլ՝ հիւանդաց. և ոչ եկի կոչել զարդարս, այլ՝ զմեղաւորս։
18 Եւ էին աշակերտքն Յովհաննու և [2]փարիսեցիքն ի պահս. գան և ասեն ցնա, Ընդէ՞ր աշակերտքն Յովհաննու և [3]փարիսեցիքն պահեն, և քո աշա-
19 կերտքդ ոչ պահեն։ Եւ ասէ ցնոսա Յիսուս, Միթէ մա՞րթ ինչ իցէ որդւոց առագաստի, մինչ ընդ նոսա իցէ փեսայն, պահել. զորքան ընդ իւրեանս
20 ունիցին զփեսայն, ոչ է մարթ պահել։ Այլ եկեսցեն աւուրք, յորժամ վերասցի ի նոցանէ փես-
21 այն, և ապա պահեսցեն յաւուրն յայնմիկ։ Ոչ ոք կապերտ [4]նոր անթափ արկանէ ի վերայ հնացեալ ձորձոյ. ապա թէ ոչ՝ առնու լրութեամբն իւրով նորն ի հնոյ անտի, և չար եւս պատառումն
22 լինի։ Եւ ոչ ոք արկանէ գինի նոր ի տիկս հինս. ապա թէ ոչ՝ պայթուցանէ [5]գինին զտիկսն, գինին հեղու և տիկքն կորնչին. այլ գինի նոր ի տիկս նորս արկանելի է։
23 ԲԷ. Եւ եղեւ նմա ի շաբաթու անցանել ընդ արտորայս, և աշակերտքն ի գնալն իւրեանց ակսան
24 հասկ կոտղել և ուտել։ Եւ փարիսեցիքն ասեն

---

[1]Յոմանս պակասէ [2]Ոմանք, փարիսեցւոցն [3]Ոմանք, փարիսեցւոցն. այլ՝ աշակերտք փարիսեցւոցն [4]Ի Յոննէն պակասէ, որպէս և յոմանս է Հայ. Յերուսաղէմ [5]Ոմանք, գինին նոր

ցնա, Տես, զի՛նչ գործեն աշակերտքն քո ի շաբա-
25 թուս, զոր չէ արժան. Եւ ասէ ցնոսա Յիսուս,
Ո՞չ երբեք իցէ ընթերցեալ ձեր զոր արարն Դա-
ւիթ, յորժամ պիտոյն եղեւ, և քաղցեաւ նա և
26 որ ընդ նմայն էին. Զիա՞րդ եմուտ ի տունն Ա-
տուծոյ առ Աբիաթարաւ քահանայապետիւ, և
զհացն զառաջաւորութեան եկեր, և ետ և այնո-
ցիկ որ ընդ նմայն էին, զոր ոչ էր օրէն ուտել,
27 բայց միայն քահանայիցն. Եւ ասէ ցնոսա, Շաբաթ
վասն մարդոյ եղեւ, և ոչ եթէ մարդ վասն շաբա-
28 թու. Ապա ուրեմն տէր է Որդի մարդոյ և շա-
բաթու.

ԳԼ. Գ

1 Եւ եմուտ միւսանգամ ի ժողովուրդն, և էր անդ
2 այր մի որոյ ձեռն գօսացեալ էր. Եւ սպասէին
նմա եթէ բժշկեսցէ զնա ի շաբաթուն, զի չարա-
3 խօսեսցեն զնմանէ. Եւ ասէ ցայրն որոյ ձեռնն գո-
4 սացեալ էր, Արի, անց ի մէջ. Եւ ասէ ցնոսա,
Զի՞նչ արժան է ի շաբաթու, բարի՞ ինչ գործել
եթէ չար առնել, ոգի մի ապրեցուցանե՞լ եթէ
5 կորուսանել. և նոքա լռեցին. Եւ հայեցեալ ցնո-
սուսի զնոքօք ի ցասմամբ, տրտմեալ վասն կու-
րութեան սրտից նոցա՝ ասէ ցայրն, Զգեա զձեռն
քո. և նա ձգեաց, և ողջացաւ ձեռն նորա.
6 ԳԿ. Եւ ելեալ արտաքս վաղվաղակի փարիսե-
ցիքն Հերովդիանոսօքն հանդերձ, խորհուրդ առ-
նէին վասն նորա թէ զիարդ կորուսցեն զնա.
7 Իսկ Յիսուս աշակերտօքն իւրովք գնաց ի ծո-
վեզրն. և բազում ժողովուրդ ի Գալիլեացւոց եր-

8 թային զՀեսա նորա, և ի Հրէաստանէ, եւ [1]յԵրու-
սաղեմէ և յայնկոյս Յորդանանու և որք ի Տիւրոսէ
և ի Սիդոնէ, բազում ժողովուրդ իրրեւ լսէին որ-
9 չափ ինչ առնէր՝ գային առ նա։ Եւ ասէ ցաշա-
կերտան իւր զի նաւակ մի պատրաստական կայցէ
10 նմա վասն ամբոխին, զի մի՛ նեղեսցեն զնա։ Քան-
զի զբազումս բժշկեաց. մինչեւ գալ խառնել զնո-
վաս, զի մերձենացին առ նա որք ունէին ախտս ինչ։
11 Եւ այսք պիղծք յորժամ տեսանէին զնա, անկա-
12 նէին առաջի նորա, աղաղակէին և ասէին թէ, Դու
ես Որդին Աստուծոյ. և նա յոյժ սաստէր նոցա,
զի մի՛ յայտնի առնիցեն զնա։
13 ԳԲ. Ելանէ ի լեառնն և կոչէ առ ինքն զորս ինքն
14 կամեցաւ, և չոգան առ նա։ Եւ արար երկոտասանս
զի իցեն զնովաս, և զի առաքեսցէ զնոսա քարոզել,
15 Եւ ունել իշխանութիւն բժշկելոյ զցաւս և հանելոյ
16 զդեւս։ Եւ եդ անուն Սիմոնի՝ Պետրոս, (17) Եւ
Յակովբու Զեբեդեայ և Յովհաննու եղբօրն Յա-
կովբայ՝ եդ նոցա անուանս Բանեերգէս, որ է Որ-
18 դիք որոտման. Եւ զԱնդրէաս, և զՓիլիպպոս և
զԲարթողոմէոս, և զՄատթէոս զմաքսաւորն, և
զԹովմաս, և զՅակովբոս Ալփեայ, և զԹադէոս, և
19 զՍիմոնէ կանանացի, Եւ զՅուդա Իսկարիովտացի,
որ և մատնեացն զնա։
20 ԳԳ. Գան ի տուն, և գայ միւսանգամ ընդ
նոսա ժողովուրդն, մինչ զի և հաց եւս ոչ ժա-
21 մանել ուտել նոցա։ Եւ իրրեւ լուան որ իւրքն
էին՝ ելին ունել զնա, զի համարէին թէ մոլեգ-

---

[1]Բ—ը—ժ, յԵրուսաղեմէ և յԵդոմայ

22 նեալ իցէ : Եւ դպիրքն որ Յերուսաղեմէ իջեալ
էին՝ ասէին թէ Բէեղզեբուղ գոյ ի դմա , և իշխա-
23 նաւ դիւացն հանէ դա զդեւս : Եւ կոչեցեալ զնո-
սա առ ինքն՝ առակօք խօսէր ընդ նոսա , Զիա՞րդ
24 կարէ Սատանայ զՍատանայ հանել : Եւ արդ եթէ
թագաւորութիւն յանձն իւր բաժանեսցի , ոչ կա-
25 րէ կալ թագաւորութիւնն այն : Եւ եթէ տուն
26 յանձն իւր բաժանեսցի , ոչ կարէ կալ տունն : Եւ
եթէ Սատանայ ի վերայ անձին իւրոյ յարեաւ և
բաժանեալ իցէ , ոչ կարէ կալ , այլ վախճանեալ
27 է : Այլ ոչ ոք կարէ զկարասի հզօրի , մտեալ ի
տուն նորա , աւար հարկանել , եթէ ոչ նախ
զհզօրն կապիցէ , և ապա զտունն նորա աւար հար-
28 կանիցէ : Ամէն ասեմ ձեզ զի Ամենայն թողի
որդւոց մարդկան մեղք և հայհոյութիւնք , որչափ
29 և հայհոյեսցեն . Բայց որ հայհոյեսցէ զՀոգին Սուրբ ,
ոչ ունիցի թողութիւն յաւիտեան , այլ պարտա-
30 պան լիցի յաւիտենից մեղաց . Զի ասէին թէ Ա-
պիղծ գոյ ի նմա :
31 Գ. Գան եղբարքն և մայր նորա , և արտաքոյ
32 կացեալ՝ յղեցին և կոչէին զնա : Եւ անդ ժողովուրդ
շուրջ զնովաւ նստէր . և իբրեւ ասացին ցնա
Ահաւասիկ մայր քո և եղբարք քո կան արտաքոյ
33 և խնդրեն զքեզ , Պատասխանի ետ նոցա և ասէ ,
34 Ո՞վ է իմ մայր կամ եղբարք : Հայեցաւ շուրջ
զիւրեւ [1]յաշակերտան զի նստէին՝ , և ասէ , Ահա
35 ասիկ մայր իմ և եղբարք իմ . Զի որ առնիցէ
զկամն Աստուծոյ՝ նա է իմ եղբայր և քոյր և մայր

---

[1]Բազմ. յորս նստէին

ԳԼ. Գ

1 ԳԵ. Դարձեալ սկսաւ ուսուցանել առ ծովեզերբն, և խռնեցան զնովաւ ժողովուրդք բազումք, մինչեւ
2 ի նաւ մտանել նմա և նստել ի ծովուն, և ամենայն ժողովուրդն զծովեզերբն զցամաքն ունէին։
3 Եւ ուսուցանէր զնոսա առակօք բազում ինչ, և
4 ասէր նոցա ի վարդապետութեան իւրում, Լսէք.
5 ահաւասիկ ել սերմանող սերմանել։ Եւ եղեւ ի սերմանելն, ոմն անկաւ առ ճանապարհաւ, և [1]եկն
6 թռչուն և եկեր զնա՝։ Եւ այլն անկաւ յապառաժի, ուր ոչ գոյր հող բազում. և վաղվաղակի
7 բուսաւ, քանզի ոչ գոյր հիւթ երկրին. Եւ յորժամ ծագեաց արեւ, ջեռաւ, և զի ոչ գոյին արմատք, ցամաքեցաւ։ Եւ այլն անկաւ ի մէջ փշոց.
8 ելին փուշքն և հեղձուցին զնա, և պտուղ ոչ ետ։
9 Եւ այլն անկաւ յերկիր բարւոք, և ելեալ աճեցեալ տայր պտուղ, և բերէր ընդ միոյ երեսուն և
10 ընդ միոյ վաթսուն և ընդ միոյ հարեւր։ Եւ ասէր, Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։
10 ԳՋ. Եւ իբրեւ եղեւ առանձինն, հարցին զնա որ զնովաւն էին աշակերտօքն հանդերձ զառակն։
11 Եւ ասէ ցնոսա, Ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեան Աստուծոյ, բայց նոցա որ
12 արտաքինքն են՝ ամենայն ինչ առակօք լինի, Զի տեսանելով տեսցեն և մի՛ տեսցեն, և լսելով լուիցեն և մի՛ իմասցին, զի մի՛ երբեք դարձցին և

---

[1] Ի ց-ն՝, -մն՝ եկին թռչունք և կերան զնա. -ն՝ եկին թռչունք երկնից և կերան զնա

13 Թողցի նոցա: Եւ ասէ ցնոսա, Ո՞չ գիտէք զա-
առակս զայս, և զիա՞րդ զամենայն առական գիտի-
14 ցէք: Որ սերմանէն՝ զբանն սերմանէ: (15) Եւ նո-
քա են որ առ ճանապարհաւն՝ ուր բանն սերմա-
նի, և յորժամ լսեն զնա, գոյ Սատանայ և հա-
16 նէ զբանն սերմանեալ ի սիրտս նոցա: Եւ նոքա են
որ յապառաժին սերմանեցան, որք յորժամ լսի-
ցեն զբանն, վաղվաղակի խնդութեամբ ընդունին.
17 Եւ զի ոչ ունին արմատս յանձինս, այլ առ ժա-
մանակ մի են, ապա ի հասանել նեղութեան կամ
հալածման վասն բանին՝ վաղվաղակի գայթակղին:
18 Իսկ որ ի մէջ փշոցն սերմանեցան՝ նոքա են, որ
19 իբրեւ զբանն լսեն, Եւ հոգք աշխարհիս և պատ-
րանք [1]մեծութեան մտանեն և հեղձուցանեն զբանն
20 և անպտուղ լինի: Եւ նոքա են որ յերկիրն բար-
ւոք սերմանեցան, որք լսեն զբանն և ընդունին և
տան պտուղ, ընդ միոյ երեսուն և ընդ միոյ վաթ-
սուն և ընդ միոյ հարեւր:
21 ԳԷ. Եւ ասէ ցնոսա, Միթէ գա՞յ ճրագ զի ընդ
գրուանաւ դնիցի կամ ընդ մահճաք. ո՞չ ապաքէն
22 ի վերայ աշտանակի դնիցի: Զի չէ ինչ ի ծածուկ
որ թէ ոչ յայտնեսցի, և ոչ եղեւ ինչ գաղտնի՝
23 եթէ ոչ ի յայտ գայցէ: Եթէ ոք ունիցի ականջս
24 լսելոյ՝ լուիցէ: Եւ ասէ ցնոսա, Տեսէք զինչ լսէքդ:
և յաւելցի ձեզ որոց լսէքդ. որով չափով չափէք,
25 նովին չափեսցի ձեզ: Որ ոք ունիցի՝ տացի նմա. և
որ ոչն ունիցի, և զոր ունին՝ բարձցի ի նմանէ:
26 ԴԿ. Եւ ասէր, Այսպէս է արքայութիւն Ա-

---

[1]Բազմ. մեծութեան և ցանկութիւնք այլոց իրաց

տուծոյ, որպէս զի այր մի արկանիցէ սերմանիս
27 յերկիր. Եւ ննջիցէ և յառնիցէ գցայգ և գցերեկ,
և սերմանիքն բուսանիցին և աճիցեն. և նա ոչ
28 գիտէ թէ երկիրն ինքնին բերէ զպտուղ. նախ
զխոտն և ապա զհասկն, և ապա զցորեանն առոք
29 ի հասկին: ԵՒ յորժամ տայցէ զպտուղն, վաղ-
վաղակի առաքի մանդաղ, զի հասեալ են հունձք:
30 Եւ ասէր, Ո՞ւմ նմանեցուսցուք զարքայութիւնն
Աստուծոյ, կամ որո՞վ առակաւ առակեսցուք
31 զնա: Որպէս հատն մանանխոյ որ յորժամ սեր-
մանիցի յերկրի, փոքրագոյն է քան զամենայն սեր-
32 մանիս որ են յերկրի. Եւ յորժամ սերմանիցի,
բուսանի և լինի մեծ քան զամենայն բանջար, և
արձակէ ոստս մեծամեծս, մինչեւ բուսականն լինել
33 ընդ հովանեաւ նորա թռչնոց երկնից բնակել: Եւ
այնպիսի առակօք խօսէր ընդ նոսա զբանն, որպէս
34 կարող լինէին լսել. Եւ առանց առակի ոչինչ խօ-
սէր ընդ նոսա, բայց առանձինն աշակերտացն իւ-
րոց մեկնէր զամենայն:
35 ԴԲ. Եւ ասէ ցնոսա յաւուրն յայնմիկ իբրեւ
ընդ երեկս լինէր, Եկայք անցցուք յայն կողմն:
36 Թողուն զժողովուրդն, և առնուն զնա նաւաւն
հանդերձ, և զայլ եւս նաւան որ էին ընդ նմա:
37 Եւ լինէր մրրիկ մեծ հողմոյ, և զալիսն ի նաւն զե-
38 դոյր, մինչ դրեթէ լի իսկ լինել: Եւ ինքն ննջէր ի
ետև նաւին ի վերայ բարձի. զարթուցանէին զնա
և ասէին, Վարդապետ, ոչինչ է քեզ փոյթ, զի
39 կորնչիմք: Եւ զարթուցեալ սաստեաց
հողմոյն, և ծովուն ասէ, Դադարեա, կարկեաց.
և դադարեաց հողմն և եղեւ խաղաղութիւն մեծ,

40 Եւ ասէ ցնոսա, Ընդէ՞ր այդպէս վատասիրտք էք, չէ՞ւ եւս ունիք հաւատս. և երկեան երկեաղ մեծ և ասէին ցմիմեանս, Ո՞ ոք արդեւք իցէ սա, զի և հողմ և ծով հնազանդին սմա։

ԳԼ. Ե

1 Եւ եկն յայնկոյս ծովուն յաշխարհն ¹Գերգեսա.
2 ցւոց։ Եւ ընդ ելանելն նորա ի նաւէ անտի, պատահեաց նմա այր մի ի գերեզմանացն զոր ունէր
3 այս պիղծ. Որոյ և բնակութիւն իւր իակ ի գերեզմանս էր. և ոչ չղթայիւք ոք եւս կարէր կապել
4 զնա, վասն բազում անգամ առնակապօք և շղթայիւք կապելոյ, և խզելոյ ի նմանէ զշղթայսն, և զառնակապսն խորտակելոյ. և ոչ ոք կարէր պարտել
5 զնա. Քանզի հանապազ զցայգ և զգերեկ ի գերեզմանս և ի լերինս ազաղակէր, և կոծէր զանձն իւր
6 քարամբք։ Իրրեւ ետես զՅիսուս ի հեռուստանէ
7 ընթացաւ և երկիր եպագ նմա։ Աղաղակեաց ի ձայն մեծ և ասէ, Ջի՞ կայ իմ և քո, Յիսուս, Որդի Աստուծոյ բարձրելոյ, երդմնեցուցանեմ զքեզ
8 յԱստուած, մի՛ տանջեր զիս։ Քանզի ասէր ցնա,
9 Ել, այդ պիղծ, ի մարդոյ այսմի։ Եւ հարցանէր ցնա Թէ Ջի՞նչ անուն է քո. և ասէ ցնա, Լեգէոն անուն է իմ, քանզի բազումք եմք։
10 Եւ աղաչէին զնա յոյժ, զի մի՛ առաքեսցէ զնոսա արտաքս քան
11 զաշխարհն։ Եւ անդ էր առ լերամբն երամակ մի
12 խոզաց արօտական մեծ։ Աղաչեցին զնա ամենայն դեւքն և ասեն, Առաքեա զմեզ ի խոզսն, զի մըս

---

¹Ոմանք՝ Գադարացւոց

13 ցուբ ի նոսա։ Եւ հրամայեաց նոցա. և իբրեւ ե-
լին այսքն պիղծք, մտին ի խոզան, և դիմեաց երա-
մակն ի դարէ անտի ի ծովն. էին իբրեւ երկու հա-
14 զարք, և հեղձնուին ի ծովուն։ Եւ խոզարածքն
փախեան և պատմեցին ի քաղաքին և յագարակս.
15 և ելին տեսանել զինչ իցէ որ գործեցաւն։ Գան
առ Յիսուս, և տեսանեն զդիւահարն զի նստեր
պզեցեալ և զգաստացեալ, որ ունէր զլեգէոնն,
16 և զահի հարան։ Եւ պատմեցին նոցա որոց տես-
եալն էր, թէ զի՛նչ եղեւ այսահարին և զի՛նչ վասն
17 խոզիցն։ Եւ սկսան աղաչել զնա գնալ ի սահման-
18 նաց նոցա։ Եւ իբրեւ եմուտ նա ի նաւն, աղա-
19 չէր զնա դիւահարն զի ընդ նմա իցէ։ Եւ Յիսուս
ոչ ետ նմա թոյլ, այլ ասէ ցնա, Երթ ի տուն քո
առ բնտանիս քո, և պատմեա նոցա որ ինչ միան-
20 գամ Տէր արար քեզ և ողորմեցաւ քեզ։ Եւ չո-
գաւ և սկսաւ քարոզել ի Դեկապոլին զոր ինչ
արար նմա Յիսուս, և ամենեքին զարմանային։
21 ԴԳ. Եւ իբրեւ անց Յիսուս [1]միւսանգամ յայն
կողմն, ժողովեցաւ առ նա ժողովուրդ բազում, և
22 էր առ ծովեզերբն։ Եւ ահա մի ի ժողովրդապե-
տացն գայր, որում անուն էր Յայրոս, և իբրեւ
23 տեսս զնա անկաւ առ ոտս նորա. Աղաչէր զնա
յոյժ և ասէր թէ Դուստր [2]նորա մերձ է ի մահ,
զի եկեալ [3]դնիցէ նմա ձեռն, որպէս զի ապրեսցի
24 և կեցցէ։ Եւ գնաց ընդ նմա. երթայր և ժողո-
վուրդ բազում զնետ նորա և նեղէին զնա։

---

[1]Բ-ղ-ժ, միւսանգամ նաւաւ [2]Յ-ն, իմ
[3]Յ-ն, գնիցես

25 Եւ կին մի էր ի տեառատեսութեան արեան զեր-
26 կոտասան ամ. Եւ յոյժ վշտացեալ ի բազում
բժշկաց, և ծախեալ զինչս իւր զաւենայն և չէր
27 ինչ օգտեալ, այլ եւս առաւել զայրացեալ՝ իր-
բեւ լուաւ զՅիսուսէ, եկն ի մէջ ամբոխին յետոյ
28 և բուռն եհար զհանդերձէ նորա. Քանզի խորհէր
ի մտի թէ միայն մերձեցայց ի հանդերձս նորա,
29 փրկեցայց՝ Եւ վաղվաղակի ցամաքեցաւ աղբեւր
արեան նորա. և գիտաց ի մարմին իւր թէ բժշկե-
30 ցաւ ի տանջանացն՝ Եւ անդէն վաղվաղակի գի-
տաց Յիսուս յանձն իւր զզօրութիւնն որ ել ի
նմանէ, դարձաւ յամբոխն և ասէ, Ո՞վ մերձե-
31 ցաւ ի հանդերձս իմ՝ Եւ ասեն ցնա աշակերտքն,
Տեսանես զի ամբոխդ նեղէ զքեզ, և ասես թէ Ո՞վ
32 մերձեցաւ ի հանդերձս իմ՝ Եւ շուրջ հայէր տե-
33 սանել թէ ո՛ զայն արար՝ Եւ կինն զարհուրեալ և
դողացեալ [1]գիտացեալ որոյ գաղտն արար՝, քանզի գի-
տէր զի՛նչ եղեւ նմա, եկն անկաւ առաջի նորա,
34 և ասաց զամենայն իրան ստուգութեամբ՝ Եւ Յի-
սուս ասէ ցնա, Դուստր, հաւատք քո կեցուցին
զքեզ, երթ ի խաղաղութիւն և եղիջիր ողջ ի
տանջանաց քոց՝

35 ԴԴ. Մինչդեռ նա զայն խօսէր, գան ոմանք ի
տանէ ժողովրդապետին և ասեն թէ Դուստրն քո
մեռաւ, զի՞ եւս աշխատ առնես զվարդապետդ՝
36 Իսկ Յիսուս իբրեւ լուաւ զբանն ասացեալ, ասէ
ցժողովրդապետն, Մի՛ երկնչիր, բայց միայն հա-
37 ւատա՝ Եւ ոչ զոք եթող ընդ իւր երթալ, բայց

---

[1] ի բազմս պատճէնս

միայն զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս զեղ-
38 բայրն Յակովբայ։ Գայ ի տուն ժողովրդապետին,
և տեսանէ ամբոխ յոյժ և լալականս և աղաղակ
39 յոյժ։ Եւ մտեալ ի ներքս ասէ ցնոսա, Ձի՞ խռո-
վեալ էք և լայք, մանուկն ոչ է մեռեալ, այլ
40 ննջէ։ Եւ ծաղր առնէին զնա. և նորա հանեալ
արտաքս զամենեսեան, առնու ընդ իւր զհայր ման-
կանն և զմայրն և զնոսա որ ընդ նմայն էին, և
41 մտանէ ուր դնէր մանուկն։ Եւ կալեալ զձեռանէ
մանկանն՝ ասէ ցնա, Տալիթա, կո՛ւմի. որ թարգ-
42 մանի, Ա.ղջիկ դու, քեզ ասեմ՝ արի։ Եւ վաղ-
վաղակի յարեաւ աղջիկն և գնայր, քանզի էր ա-
մաց իրրեւ երկոտասանից. և զարմացան մեծաւ
43 զարմանալեօք։ Եւ պատուէր տայր նոցա յոյժ, զի
մի՛ ոք գիտասցէ զայն. և ասաց տալ նմա ուտել։

ԳԼ. Զ

1 ԴԵ. Եւ ել անտի, եկն ի գաւառս իւր. և երթա-
2 յին զհետ նորա աշակերտքն իւր։ Եւ եղեւ ի շա-
բաթուն սկսաւ ուսուցանել ի ժողովրդեանն. և
բազումք իրրեւ լսէին, զարմանային [1]ընդ վարդա-
պետութիւն նորա՝ և ասէին, Ուստի՞ է սմա այս,
կամ զի՞նչ է իմաստութիւնս որ տուեալ է սմա, զի
3 զօրութիւնք այսպիսիք ի ձեռաց նորա լինիցին։ Ո՞չ
սա է [2]մանուկ Հիւսանն և որդին՝ Մարեմայ, եղ-
բայր Յակովբայ և Յովսեայ և Յուդայի և Սիմով-
նի, և չիցե՞ն քորք դորա աստ առ մեզ. և գայ-
4 թակղէին ի նա։ Եւ ասէ ցնոսա Յիսուս, Ոչ է

---

[1] Ի բազմս պակաս [2] Բազմ. Հիւսանն, որդին

մարգարէ անարգ, բայց եթէ ի գաւառի իւրում և
5 յազգատոհմի և ի տան իւրում։ Եւ ոչ կարէր
անդ և ոչ մի ինչ զօրութիւն առնել, բայց սա-
6 կաւ հիւանդաց ձեռն եդեալ բժշկէր զնոսա։ Եւ
զարմանայր վասն անհաւատութեան նոցա։

ԴԶ. Եւ շրջէր շուրջ զգաւառսն և ուսուցա-
7 նէր։ Եւ կոչեաց առ ինքն զերկոտասանեան, և սկը-
սաւ առաքել զնոսա երկուս երկուս, և տայր նո-
8 ցա իշխանութիւն ի վերայ այսոց պղծոց։ Եւ
պատուիրեաց նոցա զի մի՛ ինչ բարձցեն ի ճանա-
պարհ, բայց միայն գաւազան. մի՛ պարկ, մի՛ հաց,
9 մի՛ պղինձ ի գօտիս. Այլ ագանել հողաթափս, և,
10 Մի՛ զգենուցուք, ասէ, երկուս պարեգօտս։ Եւ
ասէր ցնոսա, Որ տուն մտանիցէք, անդէն օթե-
11 ւանս կալջիք մինչեւ ելանիցէք անտի։ Եւ որ ոչ
ընկալցին զձեզ և ոչ լսիցեն ձեզ, յորժամ ե-
լանիցէք անտի, թօթափեսջիք զփոշի ոտից ձերոց
ի վկայութիւն նոցա։
12 Եւ ելեալ քարոզէին զի ապաշխարեսցեն
13 Եւ դեւս բազումս հանէին, և օծանէին իւղով
զբազումս հիւանդս և բժշկէին զնոսա։
14 ԴԷ. Եւ լուաւ արքայ Հերովդէս, քանզի յայտ-
նի եղեւ անուն նորա, և ասէր թէ Յովհաննէս
մկրտիչ յարեաւ ի մեռելոց, և վասն այնորիկ զո-
15 րութիւնք լինին նովաւ։ Այլք ասէին թէ Եղիա
է, իսկ այլքն՝ թէ Մարգարէ է, կամ թէ իբրեւ
16 զմի ի մարգարէից։ Իբրեւ լուաւ Հերովդէս, ասէ
Զորոյ ես զգլուխն հատի զՅովհաննու, սա է նա,
յարեաւ ի մեռելոց։
17 Զի ինքն Հերովդէս առաքեաց կալաւ զՅովհան-

նէս, և կապեաց զնա և եդ ի բանտի վասն Հե-
րովդիայ կնոջ Փիլիպպոսի եղբօր նորա, զի նա կին
18 արար զնա: Քանզի ասէր Յովհաննէս ցՀերովդէս
19 թէ Ո�չ է օրէն քեզ առնել զկին եղբօր քո: Եւ
Հերովդիա ոխացեալ էր ընդ նմա, և կամէր սպանա-
20 նել զնա և ոչ կարէր: Զի Հերովդէս երկնչէր ի
Յովհաննէ, քանզի գիտէր զնա այր արդար և
սուրբ, և սպասէր նմա, և լուեալ ի նմանէ՝ բա-
զում ինչ առնէր, և քաղցրութեամբ լսէր նմա:
21 Իբրեւ օր մի լինէր պարապոյ, յորժամ ընթրիս
տայր Հերովդէս յաւուր ծննդոց իւրոց նախարա-
րաց իւրոց և հազարապետաց և մեծամեծաց Գա
22 լիլեացւոց: Եւ ի մտանել դստերն Հերովդիայ և ի
կաքաւել, հաճոյ եղեւ Հերովդի և բազմականաց-
ասէ թագաւորն ցաղջիկն, Խնդրեա յինէն զոր ինչ
23 կամիս, և տաց քեզ: Եւ երդուաւ նմա [1]բազում
անգամ՝, թէ Զոր ինչ և խնդրեսցես դու յինէն
տաց քեզ, մինչեւ ցկէս թագաւորութեան իմոյ:
24 Նա ելեալ ասէ ցմայր իւր, Զի՞նչ խնդրեցից և
25 նա ասէ, Զգլուխն Յովհաննու մկրտչի: Եւ մտեալ
անդրէն փութանակի առ թագաւորն՝ ասէ, Կա-
միմ զի այժմ տացես ինձ վաղվաղակի ի վերայ
26 սկտեղ զգլուխն Յովհաննու մկրտչի: Եւ տրտմեցաւ
յոյժ թագաւորն, այլ վասն երդմանցն և կոչնա-
27 կանացն ոչ կամեցաւ անարգել զնա: Եւ ա-
ռաքեաց վաղվաղակի թագաւորն դահիճ, և հրա-
մայեաց բերել զգլուխն նորա. և չոգաւ գլխատեաց
28 զնա ի բանտին, Եւ եբեր զգլուխն նորա սկտեղը և

---

[1] ի բազում անգամ

ետ ցաղջիկն, և աղջիկն տարաւ ետ մօր իւրում։
29 Իբրեւ լուան աշակերտքն նորա, եկին, բարձին
զմարմին նորա և եդին ի գերեզմանի։
30 ԵԿ. Ժողովեցան առաքեալքն առ Յիսուս, և
պատմեցին նմա զամենայն ինչ զոր արարին և զոր
31 ուսուցին։ Եւ ասէ ցնոսա Յիսուս, Եկայք դուք ա-
նձինն յանապատ տեղի, և հանգիջիք սակաւ մի,
զի էին բազումք որ երթային և գային, և հաց ան-
32 գամ չժամանէին ուտել։ Եւ գնացին նաւու յանա-
33 պատ տեղի առանձինն։ Եւ [1]տեսին զնոսա զի եր-
թային, և [2]զգացին բազումք. և հետի յամենայն
քաղաքաց խուռն ընթանային անդր, և [3]ժերձենային
34 առ նոսա"։ Եւ ելեալ ետես ամբոխ բազում և
գթացաւ ի նոսա, զի էին իբրեւ ոչխարք որոց ոչ
իցէ հովիւ. և սկսաւ ուսուցանել զնոսա յոյժ։
35 Եւ իբրեւ բազում ժամ եղեւ, մատուցեալ ա-
շակերտքն ասէին, Տեղիս անապատ է. ժինչդեռ
36 աւուր կայ, Արձակեա զժողովուրդսդ, զի երթեալ
շուրջ յագարակս և ի գեղս գնեսցեն իւրեանց
[4]զինչ ուտիցեն", զի ասա ուտել ինչ ոչ ունին։
37 Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա, Դուք տուք
դոցա ուտել. ասեն ցնա, Երթիցուք գնեսցո՞ւք
երկերիւր դահեկանի հաց, և տացուք դոցա ուտել։
38 Ասէ ցնոսա, Քանի՞ նկանակ ունիք, երթայք տե-
սէք. իբրեւ գիտացին, ասեն ցնա, Հինգ՝ և երկու
39 ձկունս։ Եւ հրամայեաց նոցա բազմել երախանս ե-
40 րախանս ի վերայ դալար խոտոյ։ Եւ բազմեցան դաս

---

[1] Ո՛Ն+, ետես ամբոխն [2] Բ—ը—ՀՏ, ծանեան [3] Բ—ը—ՀՏ, յառաջեցին քան զնոսա [4] Ո՛Ն+, հաց

41 դառք՝ ուր Հարեւր և ուր յիսուն։ Եւ առեալ
զչինդ նկանակն և զերկուս ձկունսն՝ հայեցաւ
յերկինս, օրհնեաց, մանրեաց զնկանակսն և ետ ցա-
շակերտսն զի արկցեն նոցա, և զերկուս ձկունսն
42 բաշխեաց ամենեցուն։ [1]Կերան և յագեցան.
43 եւ բարձին զնշխարսն երկոտասան սակառի լի, և
44 ի ձկանց անտի։ Եւ էին որք կերանն իբրեւ արք
հինգ հազար։

45 ԵԲ. Եւ նոյնժամայն ճեպեաց զաշակերտսն
մտանել ի նաւ, և յառաջագոյն քան զնա եր-
թալ յայնկոյս ի Բեթսայիդա, մինչ ինքն զժողո-
46 վուրդսն արձակիցէ։ Եւ հրաժարեալ ի նոցանէ եկ
47 ի լեառն կալ յաղօթս։ Եւ իբրեւ երեկոյ եղեւ, էր
48 նաւն ի մէջ ծովուն, և ինքն ի ցամաքի։ Եւ ետես
զնոսա հոգմակոծեալս ի վարելն, զի էր հողմն ընդ-
դէմ նոցա. և զչորրորդ պահու գիշերոյն գայ առ
նոսա գնալով ի վերայ ծովուն, և կամէր զանց
49 առնել առ նոքօք։ Նոքա իբրեւ տեսին զի գնայր
ի վերայ ծովուն, համարեցան թէ առաչօք ինչ լի-
50 նիցի, և զաղաղակ բարձին։ Քանզի ամենեքեան
տեսին զնա և խռովեցան. և նա անդէն վաղվա-
ղակի խօսեցաւ ընդ նոսա և ասէ, Քաջալերեցա-
51 րուք, ես եմ, մի՛ երկնչիք։ Եւ եկ ի նաւն առ նո-
սա, և դադարեաց հողմն. և առաւել եւս յի-
մարեալ էին ի միտս իւրեանց և զարմանային յոյժ։
52 Քանզի և ի վերայ հացին ոչ իմացան, զի էր սիրտ
53 նոցա թմրեալ։ Եւ իբրեւ անցին յայնկոյս, եկին
54 յերկիրն [2]Գեննեսարէթ։ Եւ իբրեւ ելին ի նաւէ

---

[1] Յ-ՃՃ, կերան ամենեքեան [2] Ի-Ը-Ժ, Գեննեսա-
րէթ, և զետեղեցին զնաւն

անտի, իսկ և իսկ ծանեան զնա արք տեղւոյն այ-
55 նորիկ։ Եւ ընթացեալ այսր անդր ընդ ամենայն
գաւառն, սկսան մահճօք բերել զհիւանդս, ու-
56 լսէին թէ անդ իցէ։ Եւ ուր և մտանէր ի գեղս կամ
ի քաղաքս կամ յատարակս, ի հրապարակս դնէին
զախտաժէտս, և աղաչէին զնա զի գոնէ ի քղանցս
հանդերձից նորա մերձենայցեն, և որ միանգամ
մերձեցանն՝ փրկեցան։

ԳԼ. Է

1 ԵԳ. Եւ ժողովեցան առ նա փարիսեցիքն և ո-
2 մանք ի դպրացն որ եկեալ էին յԵրուսաղեմէ։ Եւ
տեսեալ զոմանս յաշակերտաց անտի, զի խառնակ
ձեռօք, այսինքն է անլուայ, ուտէին հաց, բամ-
3 բասեցին։ Զի փարիսեցիքն և ամենայն Հրեայք ե-
թէ ոչ բռնալիր լուանան զձեռս, հաց ոչ ուտեն·
4 քանզի ունին զաւանդութիւն ծերոցն. Եւ ի
հրապարակէ մտեալ՝ եթէ ոչ նախ մկրտիցին, ոչ
ուտեն. և այլ ինչ բազում է զոր ընկալան
ունել, մկրտութիւնս բաժակաց և սաղմանաց
5 և պղնձեաց և մահճաց։ Ապա հարցանեն զնա
փարիսեցիքն և դպիրք թէ Ընդէ՞ր աշակերտքն
քո ոչ գնան ըստ աւանդութեան ծերոցն, այլ
6 խառնակ ձեռօք հաց ուտեն։ Նա պատասխա-
նի ետ և ասէ ցնոսա թէ Բարւոք մարգարէացաւ
Եսայի վասն ձեր կեղծաւորաց, որպէս ասաց, ժո-
ղովուրդս այս շրթամբք մեծարէ զիս, և սիրտք նո-
7 ցա հեռացեալ ի բացեայ են յինէն. Զուր պաշտեն
զիս, ուսուցանեն վարդապետութիւնս զմարդկան
8 պատուիրեալս։ Թողեալ զպատուիրանն Աստուծոյ

9 առնիք զմարդկան աւանդութիւն[1]։ Եւ ասէ ցնո-
սա, Բարւոք խոտէք զպատուիրանն Աստուծոյ,
10 զի զձեր աւանդութիւնն հաստատիցէք։ Զի Մով-
սէս ասէ, Պատուեա զհայր քո և զմայր. և՝ Որ
չարախօսեսցէ զհօրէ կամ զմօրէ՝ մահու վախճա-
11 նեսցի։ Եւ դուք ասէք, Եթէ ասիցէ ոք ցհայր կամ
ցմայր, Կորբան, որ է պատարագ, զոր յինէն օգ-
12 տեսցիս. Եւ ոչ եւս տայք թոյլ նմա առնել ինչ
13 հօրն կամ մօր։ Եւ անարգէք զբանն Աստուծոյ
ձերով աւանդութեամբն, զոր աւանդեցէք, և բա-
զում ինչ այլ որ այսմ նման է՝ առնէք։
14 Եւ կոչեալ առ ինքն զամենայն ժողովուրդն՝ ասէ
ցնոսա, Լուարուք ինձ ամենեքեան և իմիտ առէք։
15 Ոչ ինչ արտաքուստ ի մարդ մտեալ եթէ կարիցէ
պղծել զնա, այլ որ ելանէ ի նմանէ՝ այն է որ
16 պղծէ զմարդն։ Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։
17 ԵԴ. Եւ իբրեւ եմուտ ի տուն յամբոխէ ան-
տի, հարցանէին զնա աշակերտքն վասն առակին։
18 Եւ ասէ ցնոսա, Այդպէս և դուք անմիտ էք.
ո՞չ իմանայք եթէ ամենայն որ արտաքուստ ի
ներքս մտանէ ի մարդ՝ ոչ կարէ զնա պղծել.
19 Զի ոչ եթէ ի սիրտ նորա մտանէ, այլ յո-
րովայն, և արտաքս ելանէ, և արբէ զամենայն կե-
20 րակուրան։ Եւ ասէր թէ Որ ինչ ի մարդոյն ելանէ՝
21 այն պղծէ զմարդ։ Զի ի ներքուստ ի սրտէ մարդ-
կան խորհուրդք չարութեան ելանեն, շնութիւնք,
22 պոռնկութիւնք, Գողութիւնք, սպանութիւնք,

---

[1]Մահ յատկանի, մկրտութիւնս ստոմանաց և բա-
ժակաց և այլոց ոցին նմանեաց առնէք բազում

ագահութիւնք, չարութիւնք, նենգութիւնք, գի-
ջութիւնք, չարակնութիւն, հայհոյութիւն, ամ-
23 բարտաւանութիւն, անզգամութիւն։ Այս ամե-
նայն չարիք ի ներքուստ ելանեն և պղծեն զմարդ։
24 Եւ անտի յարուցեալ եկն ի սահմանս Տիւրոսի
և Սիդովնի, և մտեալ ի տուն ոչ ումեք կամէր
25 յայտնել, և ոչ կարաց ծածկել։ Լուաւ կինն մի
զնմանէ, որոյ դուստր իւր նեղեալ էր յոգւոյ
26 պղծոյ, եկն անկաւ առաջի նորա։ Եւ կինն էր հե-
թանոս, փիւնիկ Ազգի Սորի յազգէ. և աղաչէր զնա զի
27 դեւն հանցէ ի դստերէ նորա։ Եւ Յիսուս ասէ
ցնա, Թոյլ տուր նախ յագեցին մանկունք, զի ոչ
է բարւոք առնուլ զհաց մանկանց և արկանել
28 շանց։ Նա պատասխանի ետ և ասէ, Տէր, և
շունք ի փշրանաց սեղանոյ մանկանցն կերակրին։
29 Եւ ասէ ցնա, Վասն այդր բանի երթ, ել դեւն
30 ի դստերէ քումմէ։ Գնաց ի տուն իւր և եգիտ
ելեալ զդեւն, և զդուստրն զի անկեալ դնէր ի
մահիճս։
31 Եե. Եւ ելեալ միւսանգամ ի սահմանացն Տիւ-
րոսի և Սիդովնի, և եկն ի ծովեզրն Գալիլեացւոց
32 ի մէջ սահմանացն ի Դեկապոլիս։ Եւ բերին առա-
ջի նորա խուլ մի և համր, և աղաչէին զի ձեռն
33 դնիցէ ի վերայ նորա։ Եւ առեալ զնա ի զուարթ
յամբոխէ անտի, արկ զմատունս իւր ընդ ականջս
նորա և եթուք անդր. և կալաւ զլեզուէ նորա,
34 Հայեցաւ յերկինս. յոգւոց եհան և ասէ, Եփփա-
35 թա, որ է Բացիր։ Եւ նոյնժամայն բացան լսելիք
նորա, և լուծան կապանք լեզուի նորա և խօսէր
36 ուղիղ։ Եւ պատուիրեաց նոցա զի մի՛ ումեք ասէ-

ցեն. և որչափ նա պատուիրէր նոցա, նոքա եւս
37 առաւել քարոզէին. Եւ եւս քան զեւս զարմա-
նային և ասէին, Զամենայն ինչ բարւոք գործեաց
սա, զի խլից լսել տայ և համերց խօսել:

ԳԼ. Ը

1 ԵՋ. Յաւուրսն յայնոսիկ դարձեալ ժողովուրդ
բազում էր, և ինչ ոչ ունէին ուտել. կոչեաց զա-
2 շակերտան իւր և ասէ ցնոսա, Գթամ ես ի վերայ
ժողովրդեանդ, զի արդ երեք աւուրք են մինչ առ
3 իս են, և ոչ ունին զինչ ուտիցեն. Եւ եթէ ար-
ձակեմ զդոսա նօթիս ի տունս իւրեանց, նկճիցեն
ի ճանապարհի. զի ոմանք ի դոցանէ ի հեռաստա-
4 նէ եկեալ են: Պատասխանի ետուն նմա աշա-
կերտքն նորա, Ուստի՞ [1]կարես յագեցուցանել
5 զդոսա հացիւ յանապատի սմա: Եւ հարցանէր
զնոսա, Քանի՞ նկանակ հաց ունիք. և նոքա ասեն,
6 Եւթն: Եւ հրամայեաց ժողովրդեանն բազմել ի
վերայ երկրի. և առեալ զեւթն նկանակն՝ գոհա-
ցաւ, երեկ և տայր ցաշակերտան զի արկցեն. և
7 արկին առաջի ժողովրդեանն: Եւ ձկունս սակաւ
ունէին, և զայն եւս օրհնեաց և հրամայեաց ար-
8 կանել: Կերան և յագեցան. և բարձին զնշխարս
9 կտորոցն եւթն զամբիղ: Եւ էին որ կերանն՝ իբրեւ
չորք հազարք, և արձակեաց զնոսա:
10 ԵԷ. Եւ նոյնժամայն մտեալ ի նաւ հանդերձ ա-
11 շակերտօքն՝ եկն ի կողմանս [2]Դալմանուեայ: Եկին
փարիսեցիքն և սկսան վիճել ընդ նմա, և խնդրէին

---

[1] Յ-ՆՆ, կարիցէ ոք [2] Յ-ՆՆ, Դալմանութեայ

12 ի նմանէ նշան յերկնից փորձելով զնա։ Եւ զայ-
բացաւ յոգի իւր և ասէ, Զի՞ է ի ազգս այս նշան
խնդրէ. ամէն ասեմ ձեզ թէ տացի նշան ազգիս
13 այսմիկ։ Եթող զնոսա, դարձեալ ելեալ ի նաւ և
գնաց յայնկոյս։
14 Եւ մոռացան հաց բառնալ, բայց միայն մի նկա-
15 նակ ունէին ընդ իւրեանս ի նաւին։ Եւ պատուի-
րէր նոցա և ասէր, [1]Դիտէջ եղերուք՝ ի խմորոյ ան-
16 տի փարիսեցւոց և ի խմորոյ [2]Հերովդիանոսաց։ Եւ
խորհէին ընդ միմեանս և ասէին թէ Զի հաց ոչ
17 ունիմք։ Գիտաց Յիսուս և ասէ ցնոսա, Զի՞ խորհիք
[3]ի սիրտս ձեր, թերահաւատք,՝ թէ հաց ոչ ունիք.
տակաւին ո՞չ իմանայք և ո՞չ յիշէք. ապշութի՞ւն
18 ունի զսիրտս ձեր. Աչք գոն և ո՞չ տեսանէք, ա-
կանջք են և ո՞չ լսէք, [4]և ո՞չ իմանայք տակաւին,՝
19 և ո՞չ յիշէք։ Յորժամ զհինգ նկանակն ի հինգ
հազարսն, և քանի՞ սակառս բարձէք զկտորոցն
20 լի. և ասեն ցնա, Երկոտասան։ Եւ յորժամ զեւթն
նկանակն ի չորս հազարսն, քանի՞ զամբիղս լի բար-
21 ձէք զկտորոցն. և նոքա ասեն, Եւթն։ Եւ ասէ
ցնոսա, Իսկ զիա՞րդ ոչ իմանայք։
22 Գան ի Բեթսայիդա, և ածեն առ նա կոյր
23 մի, և աղաչէին զնա զի մերձեսցի ի նա։ Եւ առեալ
զձեռանէ կուրին՝ եհան արտաքոյ շինին, եթուք
յաչս նորա և ձեռն եդ ի վերայ նորա. և հարցանէր
24 զնա թէ տեսանի՞ցէ՞ ինչ։ [5]Բացաւ, և ասէր, Տեսանեմ

---

[1]Բ—ղ—ո՛ւ, Տեսէք, զգոյշ եղերուք [2]Բ—ղ—ո՛ւ, Հե-
րովդի [3]ի Բ—ղ—ո՛ւ պ—ո՛ւ—ե [4]ի Ց—ն՛ն պ—ո՛ւ—ի
[5]Ց—ն՛ն, Հայեցաւ

25 զմարդիկս զի շրջին իբրեւ զծառս։ Դարձեալ եդ
ձեռս ի վերայ աչաց նորա, [1]եբաց, և տեսանէր.
26 ողջացաւ, և տեսանէր համարձակ զամենայն։ Ա-
ծակեաց զնա ի տուն իւր և ասէ, Ի շէնդ մի՛ մտա-
նիցես, [2]այլ երթ ի տուն քո. և յորժամ ի շէնն
մտանիցես, մի՛ ումեք ասիցես ի շինին"։
27 ԶԿ. Եւ ել Յիսուս աշակերտօքն հանդերձ ի
շէնս կեսարեայ Փիլիպպեայ, և ի ճանապարհին
հարցանէր ցաշակերտսն և ասէր, Զո՞ ուստեք ա-
28 սեն զինէն մարդիկն թէ իցեմ։ Նոքա ետուն պա-
տասխանի և ասեն, ԶՅովհաննէս մկրտիչ, և այլք՝
Զեղիա, և այլք՝ Զմի ոք ի մարգարէից անտի։
29 Ասէ ցնոսա, Իսկ դուք զո՞ ուստեք ասէք զինէն
թէ իցեմ. պատասխանի ետ Պետրոս և ասէ ցնա,
30 Դու ես Քրիստոսն։ Եւ սաստեաց ի նոսա զի մի՛
ումեք ասիցեն զնմանէ։
31 Եւ սկսաւ ուսուցանել զնոսա թէ պարտ է Որ-
դւոյ մարդոյ բազում չարչարանս ընդունել, և ա-
նարգել յերիցանց և ի քահանայապետից և ի
32 դպրաց, և մեռանել և յերիր աւուր յառնել։ Եւ
համարձակ զբանն խօսեցաւ. և առեալ զնա մե-
33 կուսի Պետրոսի՝ սկսաւ սաստել նմա։ Եւ նա դար-
ձաւ ետես զաշակերտսն, սպառնացաւ Պետրոսի և ա-
սէ, Երթ յետս իմ, Սատանայ, զի ոչ խորհիս դու
զԱստուծոյն, այլ զմարդկանս։
34 Եւ կոչեցեալ առ ինքն զժողովուրդն աշակերտօքն
հանդերձ՝ ասէ ցնոսա, Եթէ ոք կամի գալ զկնի

---

[1]Բ—ղ—ժ+, ետ հայել [2]Բ—ղ—ժ+, և մի՛ ումեք ա-
սիցես ի շինին

իմ, ուրացցի զանձն իւր և բարձցէ զխաչ իւր և
35 եկեսցէ զկնի իմ։ Զի որ կամիցի ապրեցուցանել
զանձն իւր՝ կորուսցէ զնա. և որ կորուսցէ զանձն
36 իւր վասն աւետարանին՝ ապրեցուսցէ զնա։ Զի՞նչ
օգուտ է մարդոյ եթէ զաշխարհ ամենայն շահեսցի,
37 և զանձն իւր տուժեսցի. [1]Քանզի զի՞նչ տացէ մարդ
38 փոխանակ անձին իւրոյ։ Զի որ ոք ամօթ համա-
րեսցի զիս և զբանս իմ ի շնացող և ի մեղաւոր
ազգիս յայսմիկ, և Որդի մարդոյ յամօթ արասցէ
զնա, յորժամ եկեսցէ փառօք Հօր իւրոյ [2]և հրեշ-
39 տակաց սրբոց՝։ Եւ ասէ ցնոսա, Ամէն ասեմ
ձեզ, զի են ոմանք ի սոցանէ որ աստ կան, որք
մի՛ ճաշակեսցեն զմահ, մինչեւ տեսցեն զարքայու-
թիւն Աստուծոյ եկեալ զօրութեամբ։

ԳԼ. Թ

1 Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր Յիսու
զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս, և հանէ
զնոսա ի լեառն մի բարձր առանձինն, և յայլա-
2 կերպս եղեւ առաջի նոցա։ Եւ ձորձք նորա եղեն
փայլուն սպիտակ [3]յոյժ, որպէս թափիչք երկրի ոչ
3 կարեն այնպէս սպիտակացուցանել։ Եւ երեւեցաւ
նոցա Եղիա Մովսիսիւ հանդերձ, և խօսէին ընդ
4 Յիսուսի։ Պատասխանի եւս Պետրոս և ասէ Յի-
սուս, Ռաբբի, բարւոք է մեզ աստ լինել. և ա-
րասցուք երիս տաղաւարս, մի՛ քեզ, և մի՛ Մով-
5 սէսի, և մի՛ Եղիայի. Քանզի ոչ գիտէր զինչ ի-

---

[1]Յհ.ն.+, կամ [2]Յ-ննն, հանդերձ հրեշտակօք սրբով+
[3]Յհ.ն.+, յոյժ իբրեւ զձիւն

6 սէր, զի զարհուրեալ էին։ Եւ եղեւ ամպ մի հո-
վանի ի վերայ նոցա, ձայն եղեւ յամպոյն անտի և
7 ասէ, Դա է Որդի իմ սիրելի, դմա լուարուք։ Եւ
յանկարծակի հայեցեալ այսր անդր՝ ոչ եւս զոք
ուրեք տեսին, բայց միայն զՅիսուս ընդ իւրեանս։
8 Եւ մինչդեռ իջանէին ի լեառնէ անտի, պատուիրեաց
նոցա զի մի՛ ումեք պատմեսցեն զոր տեսինն, բայց
9 յորժամ Որդի մարդոյ ի մեռելոց յարիցէ։ Եւ նո-
քա զբանն ի մտի ունէին, և խնդրէին ընդ միմեանս
10 թէ զի՞նչ իցէ ի մեռելոցն յառնել։ Հարցին ցնա
և ասեն, Զի՞նչ է այն զոր դպիրքն ասեն եթէ նախ
11 եղիայի պարտ է գալ։ Նա պատասխանի ետ նոցա
և ասէ, Եղիա նախ եկեալ յարդարեսցէ զամենայն.
իսկ զիա՞րդ գրեալ է զՈրդւոյ մարդոյ, զի բազում
12 ինչ չարչարեսցի և անգոնեսցի։ Ա՛յլ ես ասեմ
ձեզ եթէ եղիա եկն, և արարին ընդ նա զինչ և
կամեցան, որպէս և գրեալ է վասն նորա։
13 ՁԲ. Եւ եկեալ առ աշակերտսն, տեսին ամ-
բոխ շուրջ զնոքօք, և դպիրսն՝ զի վիճէին ընդ
14 նոսա։ Եւ վաղվաղակի ամենայն ժողովուրդն իբրեւ
տեսին զնա, զարմացան, և ընդ առաջ ընթացեալ
15 ողջոյն տային նմա։ Եւ եհարց ցնոսա թէ Զի՞նչ
16 վիճէիք ընդ նոսա։ Պատասխանի ետ մի ումն ի ժո-
ղովրդենէն և ասէ, Վարդապետ, ածի զորդի իմ
17 առ քեզ, զոր ունի այս համր. Եւ ուր հասանէ,
զարկուցանէ զնա. և փրփրէ և կրճտէ զատամունս
իւր և ցամաքի. և ասացի ցաշակերտսն քո զի հան-
18 ցեն, և ոչ կարացին հանել զնա։ Պատասխանի
ետ նոցա և ասէ, Ո՛վ ազգ անհաւատ, մինչեւ
յո՞րս իցեմ ընդ ձեզ, մինչեւ ցե՞րս անհնայցեմ

19 ձեզ. ածէք զնա առ իս։ Եւ ածին զնա առ նա.
իբրեւ եառես զնա այն, վազվազակի շարժլեաց
զնա, և անկեալ յերկիր թաւալէր և փրփրեայր։
20 Եհարց ցհայր նորա և ասէ, Քանի՞ ժամանակք են
յորմէ հետէ այդ եղեւ դմա. և նա ասէ, Ի ման-
21 կութենէ։ Բազում անգամ ի հուր արկանէ և ի
ջուր զի կորուսցէ զդա. արդ եթէ կարող ինչ ես,
22 օգնեա մեզ, Տէր, գթացեալ ի վերայ մեր։ Եւ
Յիսուս ասէ ցնա, [1]Ասացեր թէ կարող ես", ամե-
23 նայն ինչ հնարաւոր է այնմ, որ հաւատայն։ Եւ
վազվազակի աղաղակեաց հայր մանկանն և ասէ,
[2]Հաւատամ, օգնեա անհաւատութեանս իմում։
24 Իբրեւ եառես Յիսուս եթէ կուտէ ժողովուրդն ի
վերայ, սաստեաց այսոյն պղծոյ և ասէ, Համրդ և
խուլ այս, ես տամ քեզ հրամանն, ել ի դմանէ, և
25 այլ եւս մի՛ մտանիցես ի դա։ Եւ աղաղակեաց և
յոյժ ակեաց զնա և ել. և եղեւ [3]պատանեակն իբրեւ
զմեռեալ, մինչեւ բազմաց իսկ ասել թէ Մեռաւ։
26 Եւ Յիսուս կալաւ զձեռանէ նորա, յարոյց զնա,
27 և կանգնեցաւ։ Եւ իբրեւ եմուտ նա ի տունն, ա-
շակերտքն առանձինն հարցին ցնա, Մեք ընդէ՞ր ոչ
28 կարացաք հանել զնա։ Եւ ասէ ցնոսա, Այդ ազգ
ոչ իւիք ելանէ, եթէ ոչ պահօք և աղօթիւք։
29 ԶԳ. Եւ անտի ելեալ անցանէին առ Գալիլեաց-
30 ւովք, և ոչ կամէր եթէ ոք գիտասցէ։ Քանզի
ուսուցանէր զաշակերտան իւր և ասէր ցնոսա թէ
Որդի մարդոյ մատնելոց է ի ձեռս մարդկան, և

---

[1] ի ց-ն-ն, ա-ն-ս, եթէ կարող ես հաւատալ
-յլ՝ եթէ կարող ես [2] Ա-ն-ս, Հաւատամ, Տէր
[3] ի ց-ն-ն պ-ւ-ե

սպանցեն զնա, և իրրեւ սպանցի, յերիր աւուր
31 յարիցէ։ Եւ նոքա ոչ գիտէին զբանն, և երկնչէին
հարցանել զնա։
32 Եկն ի կափառնայում, և իրրեւ եմուտ ի տուն,
հարցանէր զնոսա, Զի՞նչ վիճէիք ընդ միմեանս։
33 Եւ նոքա լուռ լինէին, քանզի ընդ միմեանս վիճէին ի ճանապարհին թէ ո՛վ մեծ իցէ։
34 Եւ իրրեւ նստաւ, կոչեաց զերկոտասանսն և ասէ
ցնոսա, Եթէ ոք կամի առաջին լինել, եղիցի ամե-
35 նեցուն կրտսեր և ամենեցուն պաշտօնեայ։ Եւ
առեալ մանուկ մի կացոյց ի մէջ նոցա. և ընդ-
36 կալեալ զնա ի գիրկս իւր՝ ասէ ցնոսա, Որ միան-
գամ յոյսպիսի մանկտւոյ ընկալցի յանուն իմ,
զիս ընդունի. և որ զիսն ընդունիցի, ոչ զիս ըն-
37 դունի, այլ՝ զայն որ առաքեացն զիս։ Պատասխա-
նի ետ նմա Յովհաննէս և ասէ, Վարդապետ, տե-
սաք զոմն ի յանուն քո դեւս հանէր և զմեր կնի
38 ոչ շրջէր, և արգելաք զնա։ Եւ նա ասէ, Մի՛ ար-
գելուք զնա, զի ոչ ոք է որ առնէ զօրութիւնս
39 յանուն իմ, և կարիցէ հայհոյել զիս[1]։ Զի որ ոչն
40 է ընդ [2]մեզ հակառակ՝ [3]ի մեր կոյս է։ Եւ որ ոք
արբուսցէ ձեզ ջուր բաժակաւ [4]յանուն այսո՛
թէ գուք Քրիստոսի էք, ամէն ասեմ ձեզ, մի՛ կո-
41 րուսցէ զվարձս իւր։ Եւ որ ոք գայթակղեցուսցէ
զմի ի փոքրկանցս որ հաւատան յիս, լաւ էր նմա
առաւել եթէ արկեալ էր ընդ պարանոց նորա
42 երկան իշոյ, և ընկեցեալ ի ծով։ Եւ եթէ գայ-
թակղեցուսցէ զքեզ ձեռն քո, հատ ընկեա ի քէն.

---

[1] Բազմ. յաւելուն, վաղվաղակի [2] Ոմն. ձեզ
[3] Ոմն. ի ձեր [4] Ոմն. յանուն իմ

զի լաւ իցէ քեզ խեղ մտանել ի կեանսն [1]յաւիտենից, քան երկուս ձեռս ունել և երթալ ի գե-
44 հեն ի հուրն անշէջ։[2] Եւ եթէ ոտն քո գայթակղեցուսցէ զքեզ, հատ ընկեա զնա ի քէն. լաւ իցէ քեզ կուզ մտանել ի կեանսն [1]յաւիտենից, քան
46 երկուս ոտս ունել և անկանել [3]ի գեհեն։[4] Եւ եթէ ակն քո գայթակղեցուսցէ զքեզ, հան զնա ի բաց. լաւ իցէ քեզ միով ականբ մտանել յարքայութիւն Աստուծոյ, քան երկուս աչս ունել և
47 անկանել ի գեհեն. Ուր որդն նոցա ոչ մեռանի և
48 հուրն ոչ շիջանի։ Զի ամենայն [5]ինչ հրով յա-
49 ղեսցի[6], բարւոք է աղ. և եթէ աղն անհամեսցի, ի՞ւ համեմեսցի. արդ զուք կալարուք յանձինս ձեր զաղն, և խաղաղութիւն արարէք ընդ մի մեանս։

ԳԼ. Ժ

1 ՋՐ. Եւ անտի յարուցեալ գայ ի սահմանս Հրէաստանի յայնկոյս Յորդանանու. և երթայր դարձեալ խռնեալ ժողովուրդն առ նա. և որպէս սովոր էր, միւսանգամ ուսուցանէր զնոսա։
2 Իսկ փարիսեցիքն մատուցեալ փորձելով հարցանէին զնա և ասէին, եթէ Արժա՞ն իցէ առն
3 կնկին իւր արձակել։ Նա պատասխանի ետ նոցա և

---

[1]ԻՑ—ՆԻՆ պ—ե [2]Բ—ը—ժ յ—Է—Ն, 43 Ուր որդն նոցա ոչ մեռանի, և հուրն ոչ շիջանի։ [3]Ո՛Ն—Ժ, ի գեհեն ի հուրն անշէջ [4]Բ—ը—ժ յ—Է—Ն, 45 Ուր որդն նոցա ոչ մեռանի, և հուրն ոչ շիջանի։ [5]Ց—ՅՆ, որ [6]Ո՛Ն—Ժ յ—Է—Ն, և ամենայն զոհ ա. զիւ յաղեսցի

4 ասէ, Ջի՞նչ պատուիրեաց ձեզ Մովսէս։ Եւ նոքա
ասեն, Մովսէս հրաման ետ գիր մեկնելոյ գրել և
5 արձակել։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա,
Վասն խստասրտութեան ձերոյ գրեաց ձեզ զպատ-
6 ուիրանն զայն։ Այլ ի սկզբանէ արարածոց արու
7 և էգ արար զնոսա Աստուած, և ասէ, Վասն այ-
սորիկ թողցէ այր զհայր իւր և զմայր, և երթիցէ
8 զհետ կնոջ իւրոյ, Եւ եղիցին երկուքն ի մարմին
մի, և այնուհետեւ ոչ են երկու, այլ մարմին
9 մի։ Արդ զոր Աստուած զուգեաց, մարդ մի՛ մեկ-
10 նեսցէ։ Եւ ի տան դարձեալ աշակերտքն զնոյն
11 հարցին ցնա։ Եւ ասէ ցնոսա, Եթէ այր արձակես-
12 ցէ զկին իւր և արասցէ այլ, շնայ։ Եւ կին եթէ
ելցէ յառնէ իւրմէ և եղիցի առն այլում, շնայ։
13 Ձե. Եւ մատուցանէին առ նա մանկտի, զի ձեռն
դիցէ նոցա. իսկ աշակերտքն սաստէին այնոցիկ որ
14 մատուցանէինն։ Իրրեւ ետես Յիսուս, բարկացեալ
սաստեաց նոցա և ասէ, Թոյլ տուք մանկտւոյդ
գալ առ իս, և մի՛ արգելուք զդոսա. զի այդ-
15 պիսեացդ է արքայութիւն Աստուծոյ։ Ամէն ասեմ
ձեզ, Որ ոչ ընկալցի զարքայութիւնն Աստուծոյ
16 իբրեւ զմանուկ՝ ոչ մտցէ ի նա։ Եւ առեալ զնոսա
ի գիրկս՝ ձեռն եդ ի վերայ և օրհնեաց զնոսա։
17 Եւ ընդ ելանելն նորա անտի ի ճանապարհ, ա-
հաւասիկ ումն մեծատուն ընթացեալ ի ծունր իջա-
նէր, հարցանէր զնա և ասէր, Վարդապետ բարի,
զի՞նչ արարից զի գկեանան յաւիտենականս ժա-
18 ռանգեցից։ Եւ Յիսուս ասէ ցնա, Ջի՞ ասես զիս
19 բարի. չիք ոք բարի բայց մի Աստուած։ Զպատ-
ուիրանս գիտես. Մի՛ շնար, Մի՛ սպանաներ, Մի՛

գողանար, Մի՛ սուտ վկայեր,[1] Պատուեա զՀայր
20 քո և զմայրն: Նա պատասխանի ետ և ասէ ցնա,
Վարդապետ, զայդ ամենայն արարի ի մանկութե-
21 նէ իմմէ, [2]արդ զի՞նչ եւս պակաս իցեմ:՚՚ Եւ Յի-
սուս հայեցեալ ի նա՝ սիրեաց զնա, և ասէ ցնա,
Մի ինչ պակասէ ի քէն. եթէ կամիս կատարեալ
լինել, երթ, զոր ինչ ունիս վաճառեա և տուր
աղքատաց, և ունիցիս գանձս յերկինս. և առ
22 ջիաչն և կաց զկնի իմ: Եւ նա խոժոռեալ ընդ
բանն՝ գնաց տրտում, զի ունէր ինչս բազումս:
23 Եւ հայեցեալ Յայսկոյս յայնկոյս Յիսուս՝ ասէ ցա-
շակերտան, Զի՞ր դժուարին է որ զինչս ունին,
24 մտանել յարքայութիւն Աստուծոյ: Եւ աշակերտքն
զարմացեալ էին ի վերայ բանիցն նորա. իսկ Յի-
սուս դարձեալ պատասխանի ետ նոցա և ասէ,
Որդեակք, ո՛րչափ դժուարին է յուսացելոց յինչս
25 մտանել յարքայութիւն Աստուծոյ: Դիւրին է
մալխոյ ընդ ծակ ասղան անցանել, քան մեծատան
26 յարքայութիւն Աստուծոյ մտանել: Եւ նոքա ա-
կսեալ եւս զարմանային և ասէին ընդ միմեանս,
27 Իսկ ո՞վ կարասցէ ապրել: Հայեցեալ ընդ նոսա
Յիսուս ասէ, Առ ի մարդկանէ այդ անհնարին է,
այլ ոչ առ յԱստուծոյ[3]:
28 ՁՁ. Սկսաւ ասել ցնա Պետրոս, Ահաւասիկ
29 մեք թողաք զամենայն և եկաք զկնի քո: Պատաս-
խանի ետ Յիսուս և ասէ, Ամէն ասեմ ձեզ, Ո-

---

[1]Բազմ. յունարէն, Մի՛ զրկեր, [2]Ի բազմ. պակաս
[3]Բազմ. յունարէն, զի ամենայն ինչ հնարաւոր է առ ի յԱստուծոյ

ոք է որ եթող զտուն կամ զեղբարս կամ զքոյր
կամ զՀայր կամ զմայր կամ [1]զորդիս կամ զ-
30 գարակս վասն իմ [2]կամ վասն աւետարանին, եթէ
ոչ առնուցու հարիւրապատիկ այժմ յայսմ ժա-
մանակի տունս և եղբարս և քոյրս և մայրս և որ-
դիս և ագարակս հալածանօք հանդերձ, և յաշ-
խարհին որ գալոց է՝ զկեանսն յաւիտենականս:
31 Զի բազումք եղիցին առաջինք՝ յետինք, և յե-
տինք՝ առաջինք:
32 Եւ էին ի ճանապարհի մինչդեռ ելանէին յԵրու-
սաղէմ. և երթայր Յիսուս առաջի քան զնոսա, և
զարմացեալ էին որ զՀետն երթային և երկնչէին:
Զէ· Եւ առեալ միւսանգամ զերկոտասանեան
առանձինն, սկսաւ ասել նոցա զինչ անցք անցա-
33 նելոց իցեն ընդ նա. Թէ Ահաւասիկ ելանեմք յԵ-
րուսաղէմ, և Որդի մարդոյ մատնեսցի քահանա-
յապետիցն և դպրաց, և դատեսցին զնա ի մահ,
34 և մատնեսցեն զնա հեթանոսաց. Եւ կատակեսցեն
զնովաւ, և հարկանիցեն զնա, և թքանիցեն ի նա
և սպանցեն, և յերիր աւուր յարիցէ:
35 Եւ երթային առ նովաւ Յակովբոս և Յովհաննէս
որդիքն Զերեդեայ, և ասեն ցնա, Վարդապետ,
կամիմք զի զոր ինչ խնդրեսցուք ի քէն՝ արասցես
36 մեզ: Եւ նա ասէ ցնոսա, Զի՞նչ կամիք յինէն զի
37 արարից ձեզ: Եւ նոքա ասեն ցնա, Տուր մեզ զի
նստցուք մի յաջմէ քումմէ և մի յահեկէ ի փառսն
38 քում: Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա,
Ոչ գիտէք զինչ խնդրէք. կարէ՞ք ըմպել զբաժակն

---

[1]Որդիս, գկին կամ զորդիս [2]Բազմ., և

զոր ես ըմպելոց եմ, կամ զմկրտութիւնն մկրտել
39 զոր ես մկրտելոցն եմ։ Եւ նոքա ասեն ցնա, Կա-
րեմք և Յիսուս ասէ ցնոսա, Զբաժակն զոր ես
ըմպելոց եմ՝ ըմպիցէք, և զմկրտութիւնն զոր ես
40 մկրտելոց եմ՝ մկրտիցիք։ Այլ նստուցանել ընդ
աջմէ իմմէ և ընդ ահեկէ՝ ոչ է իմ տալ, այլ որոց
41 պատրաստեալ իցէ։ Եւ լուեալ զայն տասանցն՝
42 սկսան բարկանալ Յակովբայ և Յովհաննու։ Եւ
Յիսուս կոչեաց զնոսա առ ինքն, և ասէ ցնոսա,
Գիտէք զի որ յանուանն իշխանքն են հեթանոսաց՝
43 տիրեն նոցա. և մեծամեծք նոցա իշխեն նոցա։ Ոչ
նոյնպէս իցէ և ի ձերում միջի այլ որ կամիցի ի
44 ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ. Եւ որ
կամիցի ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ամենե-
45 ցուն ծառայ. Քանզի և Որդի մարդոյ ոչ եկն առ-
նուլ պաշտօն, այլ պաշտել և տալ զանձն իւր
փրկանս փոխանակ բազմաց։
46 Եկ Եւ գան յԵրիքով. և ընդ ելանելն նորա
յԵրիքովէ աշակերտօքն և բազում ժողովրդովք
որդի Տիմէի Բարտիմէոս կոյր նստէր մուրացիկ
47 յանցս ճանապարհի։ Իրրեւ լուաւ թէ Յիսուս Նա-
զովրեցի է, սկսաւ աղաղակել և ասել, Որդի Դաւ-
48 թի, Յիսուս, ողորմեաց ինձ Եւ սաստէին նմա
բազումք զի լռեսցէ. և նա առաւել եւս աղաղա-
49 կէր, Որդի Դաւթի, ողորմեաց ինձ։ Ջառեղի ա-
Յիսուս և հրամայեաց կոչել զնա. կոչեն զկոյրն և
50 ասեն ցնա, Քաջալերեաց, արի, կոչէ զքեզ։ Եւ
նորա ընկեցեալ զձորձս իւր՝ յարեաւ եկն առ Յի-
51 սուս։ Պատասխանեաւ ետ նմա Յիսուս և ասէ, Ջի՞նչ
կամիս թէ արարից քեզ. ասէ ցնա կոյրն, Ռաբ-

52 բունի, զի բացայց։ Եւ Յիսուս ասէ ցնա, Երթ,
հաւատք քո կեցուցին զքեզ. և վաղվաղակի բա-
ցաւ, և երթայր զհետ նորա ի ճանապարհին։

ԳԼ. ԺԱ

1 Եւ յորժամ մերձ եղեն յԵրուսաղէմ, ի Բեթփա-
գէ և ի Բեթանիա, մօտ ի լեառն Ձիթենեաց, ա-
2 ռաքէ երկուս յաշակերտաց անտի, Եւ ասէ ցնոսա,
Երթայք դուք ի գեղդ որ ընդդէմ ձեր կայ, և
նոյնժամայն իբրեւ մտանէք ի նա, գտանիցէք յա-
ւանակ մի կապեալ, յորոյ վերայ ոչ ոք ի մարդ-
3 կանէ նստաւ. լուծէք զնա և ածէք։ Եւ եթէ ոք
ասասցէ ձեզ Եթէ Ձի՞ լուծանէք զյաւանակդ, ա-
սասջիք Եթէ Տեառն իւրում պիտոյ է. և վաղվա-
4 ղակի առաքեսցէ զնա այսր։ Ազան և գտին զյա-
ւանակն կապեալ առ դուրս արտաքոյ ի փողոցի
5 անդ, և լուծին զնա։ Եւ ոմանք յորոց անդն կային
ասեն ցնոսա, Ձի՞ գործէք զի լուծանէք զյաւա-
6 նակդ։ Եւ նոքա ասեն ցնոսա որպէս ասացն Յիսուս.
7 և թոյլ եառուն նոցա։ Ածեն զյաւանակն առ Յի-
սուս, և արկանեն ի վերայ նորա հանդերձս, և նստաւ
8 ի վերայ նորա։ Եւ բազումք զհանդերձս իւրեանց
տարածանէին ի վերայ ճանապարհին, և այլք
ոմա ի ծառոց հատանէին և արկանէին զճա-
9 նապարհսն։ Եւ որ առաջին և զկնի երթային՝ ա-
ղաղակէին և ասէին, Ովսաննա [1]բարձրելոյն, օրհ-
10 նեալ որ գայդ յանուն Տեառն. Օրհնեալ թա-
գաւորութիւնդ եկեալ հօր մերոյ Դաւթի. [2]խա-
ղաղութիւն յերկինս և փառք՝ ի բարձունս։

---

[1] ի բաղում պիտակս [2] Բազում, ովսաննա

11 Եւ եմուտ Յիսուս Յերուսաղէմ, ի տաճարն, և
հայեցաւ շուրջ զամենեքումբք. և զի էր երեկո-
յացեալ ժամն, ել ի Բեթանիա երկոտասանիւքն
հանդերձ։
12 Եւ ի վաղիւ անդր մինչդեռ ելանէին ի
13 Բեթանիայ, քաղցեաւ։ Եւ տեսեալ թզենի մի ի բա-
ցուստ տերեւոյ եկն թէ գտանիցէ ինչ ի
նմա. և իբրեւ եկն ի նա, ոչինչ եգիտ բայց միայն
14 տերեւս, զի ոչ իսկ էր ժամանակ թզոյ։ Պատաս-
խանի եւ ասէ ցնա, Մի՛ եւս ոք յաւիտեան ի
քէն պտուղ կերիցէ. և լսէին աշակերտքն նորա։
15 Գան Յերուսաղէմ. և մտեալ ի տաճարն՝ սկսաւ
հանել զվաճառականան և զգնողս որ էին ի տա-
ճարին. և զսեղանս հատուածոցն ջրուեաց,
16 և զթռռուս աղաւնեվաճառացն կործանեաց. Եւ ոչ
թողոյր եթէ ոք անօթ ինչ անցուցանիցէ ընդ տա-
17 ճարն։ Եւ ուսուցանէր և ասէր ցնոսա, [1]Գրեալ
է՞, թէ Տուն իմ տուն աղօթից կոչեսցի ամենայն
հեթանոսաց, և դուք արարէք զդա սպրս աւազա-
18 կաց։ Լուան քահանայապետքն և դպիրք, և խնդ-
րէին թէ ո՛րպէս կորուսցեն զնա, բայց երկնչէին ի
նմանէ. զի ամենայն ժողովուրդն զարմացեալ էր
19 ընդ ուսմունն նորա։ Եւ իբրեւ երեկոյ լինէր, ար-
տաքոյ քան զքաղաքն [2]ելանէին։
20 Եւ մինչդեռ այգուցն առ նովաւ անցանէին, տե-
21 սին զթզենին ցամաքեալ յարմատոց։ Յիշեաց Պետ-
րոս և ասէ ցնա, Ռաբբի, ահաւասիկ թզենին զոր
22 անիծեր՝ ցամաքեցաւ։ Պատասխանի եւ Յիսուս և

---

[1] Բ—ղ—ոմ, Զիցէ՞ գրեալ Բ—ղ—ոմ, ելանէր

ասէ ցնոսա, [1]Եթէ ունիցիք զհաւատսն Աստուծոյ,"
23 Ամէն ասեմ ձեզ, Որ ոք ասիցէ լերինս այսմիկ,
բարձիր և անկիր ի ծով, և ոչ երկմտիցէ ի սրտի
իւրում, այլ հաւատայցէ թէ զոր ասէն՝ լինի, ե-
24 ղիցի նմա զոր ինչ և ասիցէ։ Վասն այսորիկ ա-
սեմ ձեզ, Ամենայն ինչ վասն որոյ աղօթս արար-
եալ խնդրիցէք, և հաւատայցէք թէ առնուդուք,
25 եղիցի ձեզ։ Եւ յորժամ յաղօթս կայցէք, թո-
ղուցուք եթէ ունիցիք ինչ զուժեքէ. զի և Հայրն
ձեր որ յերկինս է՝ թողցէ ձեզ զյանցանս ձեր։
26 Զի եթէ դուք ոչ թողուցուք, և ոչ Հայրն ձեր
որ յերկինս է՝ թողցէ ձեզ զյանցանս ձեր։
27 ԷԳ. Գան միւսանգամ Երուսաղէմ, և մինչ-
դեռ ի տաճարի անդ զգնայր, գան առ նա քա-
28 հանայապետքն և գպիրքն և ծերքն։ Եւ ասեն ցնա,
Որո՞վ իշխանութեամբ առնես զայդ, և ո՞վ ետ
29 քեզ զիշխանութիւնդ զայդ։ Պատասխանի ետ Յի-
սուս և ասէ ցնոսա, Հարցից և ես զձեզ բան մի,
տուք ինձ պատասխանի. և ես ասացից ձեզ որով
30 իշխանութեամբ առնեմ զայս։ Մկրտութիւնն Յով-
հաննու յերկնի՞ց էր թէ ի մարդկանէ, տուք ինձ
31 պատասխանի։ Խորհէին ընդ միմեանս և ասէին,
Եթէ՝ ասեմք եթէ յերկնից, ասէ ցմեզ, Իսկ ընդէ՞ր
32 ոչ հաւատացէք նմա. Այլ եթէ ասեմք, ի մարդ-
կանէ, [2]երկնչիմք ի ժողովրդենէն, զի ամենեքին
33 գիտէին զՅովհաննէս թէ մարգարէ էր։ Պատաս-
խանի ետուն և ասեն ցՅիսուս, Չգիտեմք. և Յի-

---

[1]Բ—ղ—մ, Եղիցին ձեր հաւատք յԱստուած։
[2]Բ—ղ—մ, երկնչէին

սուս եւ նոցա պատասխանի և ասէ, Եւ ոչ ես ա-
սեմ ձեզ որով իշխանութեամբ առնեմ զայս։

ԳԼ. ԺԲ

1 Եւ սկսաւ խօսել ընդ նոսա առակօք [1]և ասել՝
Այր մի տնկեաց այգի և ած շուրջ զնովաւ ցանգ,
և գուբ հնձան փորեաց և շինեաց աշտարակ, և
2 եաւ զնա ցմշակս և գնաց ի տարաշխարհ։ Եւ ա-
ռաքեաց առ մշական ի ժամանակի ծառայ մի, զի
3 ի մշակաց անտի առցէ ի պտղոյ այգւոյն։ Եւ նո-
ցա կալեալ՝ գան հարին զնա և արձակեցին ունայն։
4 Դարձեալ առաքեաց առ նոսա այլ ծառայ, և
զնա կատափնաւեցին և արձակեցին անարգեալ
5 Եւ դարձեալ այլ առաքեաց, և զնա սպանին. և
զբազումս այլս՝ զոմանս հարկանէին և զոման
6 սպանանէին։ Ապա որդի մի էր իւր սիրելի, զնա
առաքեաց առ նոսա յետոյ, և ասէ, Թերեւս ա-
7 մաչեսցեն յորդւոյ սատի իմմէ։ Իսկ մշակքն իրրեւ
տեսին զնա թէ գայ, ասեն ցմիմեանս, Սա է ժա-
ռանգն, եկայք սպանցուք զսա, և մեր լիցի ժա-
8 ռանգութիւնն։ Եւ կալեալ զնա սպանին և հա-
9 նին արտաքոյ այգւոյն։ Արդ զի՞նչ արասցէ տէ
այգւոյն. եկեսցէ և կորուսցէ զմշական, և տացէ
10 զայգին ի ձեռս այլոց։ Եւ ո՞չ զգիրն զայն էք
ընթերցեալ ձեր, Թէ Զվէմն զոր անարգեցին շի-
11 նողքն, նա եղեւ գլուխ անկեան. Ի Տեառնէ եղեւ
այս, և է սքանչելի յաչս մեր։
12 Եւ խնդրէին զնա ունել, և երկեան ի ժողովրդեն

---

[1] Ի Յ—ՆԷն գ—ւ—օ—ք

անտի, զի գիտացին թէ առ նոսա ասաց զառակն. և թողին զնա և գնացին։

13 Եւ առաքեն առ նա զոմանս ի փարիսեցւոց ան-
տի և ի Հերովդիանոսաց, զի զնա որսացեն բանիւ։
14 Եւ նոքա եկեալ [1]Հարցանէին զնա նենգութեամբ
և՝ ասէին, Վարդապետ, գիտեմք զի ճշմարիտ ես,
և ոչինչ փոյթ է քեզ զումեքէ. զի ոչ հայիս յե-
րեսս մարդկան, այլ ճշմարտութեամբ զճանա-
պարհն Աստուծոյ ուսուցանես. [1]արդ ասա մեզ,՝
արժա՞ն է հարկ տալ կայսեր եթէ ոչ. տացո՞ւք,
15 թէ ոչ տացուք։ Եւ Յիսուս գիտաց զկեղծաւորու-
թիւն նոցա. ասէ ցնոսա, Զի՞ փորձէք զիս, [1]կեղ-
16 ծաւորք. բերէք ինձ դահեկան մի զի տեսից. Եւ
նոքա բերին. և ասէ ցնոսա, Ո՞յր է պատկերս այս
17 կամ գիր. և նոքա ասեն ցնա, կայսեր։ Պատաս-
խանի ետ Յիսուս և ասէ ցնոսա, [2]Երթայք, տուք
զկայսերն կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ. և
զարմացան ընդ նա։
18 Էդ. Գան առ նա սադուկեցիքն որ ասեն թէ Զկեր
19 յարութիւն. Հարցանէին ցնա և ասէին, Վարդա-
պետ, Մովսէս գրեաց մեզ եթէ ուրուք եղբայր մե-
ռանիցի, և թողուցու կին և որդի ոչ թողուցու,
զի առցէ եղբայր նորա զկինն նորա, և յարուսցէ
20 զառակ եղբօր իւրում։ Արդ եղբարք եւթն էին [1]առ
մեզ՝. առաջինն ա՛ռ կին և մեռաւ, և ոչ եթող
21 զառակ։ Եւ երկրորդն առ զնոյն և մեռաւ, և ոչ նա
22 եթող զառակ. նոյնպէս և երրորդն առ զնոյն։ Եւ
եւթնեքեան իսկ՝ և ոչ թողին զառակ. յետ ա-

---

[1]ի Բ--ղ--մ պ--ե--է [2]ի Ց--նէն պ--ե--է

23 մեռանեցուն մեռանել և կինն։ Արդ ի յարութեան
յորժամ յառնիցեն, ո՞ր ի նոցանէ լինիցի կինն.
24 զի եւթնեքեան կալան զնա կին։ Պատասխանի եւ
Ցիսուս և ասէ ցնոսա, Ո՞չ վասն այդորիկ իսկ մո-
լորեալ էք. զի ոչ գիտէք զԳիրս և ոչ զզօրու-
25 թիւնն Աստուծոյ։ Զի յորժամ ի մեռելոց յարիցեն, ոչ արք կանայս առնուն, և ոչ կանայք ա-
րանց լինին, այլ իբրեւ զհրեշտակս իցեն որ յեր-
26 կինս են։ Այլ վասն յարութեան մեռելոց զի
յառնեն, ո՞չ իցէ ընթերցեալ ձեր ի գիրսն Մով-
սիսի ի մորենւոջն, որպէս ասաց ցնա Աստուած,
Ես եմ, ասէ, Աստուած Աբրահամու, Աստուած
27 Իսահակայ և Աստուած Յակովբայ։ Եւ ոչ է
Աստուած մեռելոց, այլ կենդանեաց. և արդ դու
յոյժ մոլորեալ էք։
28 Եւ մատուցեալ մի ոմն ի դպրացն՝ լսեր նոցա
միմեանց վիճելին. իբրեւ ետես թէ բարւոք ետ նոցա
զպատասխանին, եհարց ցնա [1]և ասէ՝, Ո՞ր պատ-
29 ուիրան է [2]առաջին։ Եւ Ցիսուս ասէ ցնա, Ա-
ռաջին քան զամենայն՝ Լուր, Իսրայէլ, Տէր Աստուած
30 մեր Տէր մի է. Եւ սիրեսցես զՏէր Աստուած քո
յամենայն սրտէ քումմէ, և յամենայն անձնէ
քումմէ, և յամենայն մտաց քոց, և յամենայն
զօրութենէ քումմէ. այս է առաջին պատուիրան
31 Եւ երկրորդն նման ամին, Սիրեսցես զընկեր քո իբ-
րեւ զանձն քո. մեծ քան զսոսա այլ պատուիրան
32 ոչ գոյ։ Եւ ասէ ցնա դպիրն, Բարւոք է, վա-

---

[1] ի ց-ն-ն պ-ւ-ե [2] Բ-պ-ր-ի, առաջին քան զա-
մենայն

դապետ, ճշմարտութեամբ ասացեր թէ մի է Ա-
33 ստուած, և ոչ գոյ այլ քան ի նմանէ. Եւ սիրելն
զնա յամենայն սրտէ[1] և յամենայն զօրութենէ և
յամենայն մտաց, և սիրելն զընկերն իբրեւ զանձն,
34 առաւել է [2]քան զողջակէզս և զզոհս: Եւ տեսեալ
Յիսուսի թէ իմաստութեամբ ետ պատասխանին՝
ասէ ցնա, Ձես հեռի յարքայութենէն Աստուծոյ.
և ոչ եւս ոք իշխէր ինչ հարցանել ցնա:
35 Էե. Պատասխանի ետ Յիսուս և ասէ, մինչ ու-
սուցանէր ի տաճարին, Ձիա՞րդ ասեն դպիրքն թէ
36 Քրիստոս որդի Դաւթի է. Եւ ինքն Դաւիթ Հոգ-
ւովն Սրբով ասէ, Ասաց Տէր ցՏէր իմ, Նիստ ընդ
աջմէ իմմէ, մինչեւ եդից զթշնամիս քո պատուան-
37 դան ոտից քոց: Արդ եթէ ինքն իսկ Դաւիթ զնա
Տէր կոչէ, զիա՞րդ իցէ որդի նորա. և բազում ժո-
ղովուրդ լսէր նմա քաղցրութեամբ:
38 Եւ [3]ասէր ուսուցանելով՝ ի վարդապետութեան
իւրում, Զգոյշ լերուք ի դպրաց անտի, որ կամին
ի հանդերձս երեւելիս շրջել, [4]զնախոզջոյնս խնդրել
39 ի հրապարակս, Եւ զնախաթոռս ի ժողովուրդս, և
40 զգահապալուխս յընթրիս: Որ ուտեն զտունս այր-
եաց, պատճառանօք յերկարեալ զաղօթս, զի ա-
ւելի եւս դատաստանս ընկալցին:
41 Կայր Յիսուս ընդդէմ գանձանակին, տեսանէր
թէ զիա՛րդ ժողովուրդն արկանէր պղինձ ի գան-
ձանակն. և բազում մեծատունք արկին բազում

---

[1]Որ+ յօ-ե-լ-ո-ն, և յամենայն անձնէ [2]Յ-ոյն, քան զամենայն [3]Բ-ա-ր-ո-ւ, ասէր ցնոսա [4]Յ-ոյն, զոզջոյնս

42 ինչ։ Եկն այրի մի և արկ երկուս լումայս, որ է
43 նաքարահիտ մի։ Եւ կոչեցեալ առ ինքն զաշա-
կերտան իւր ասէ ցնոսա, Ամէն ասեմ ձեզ, զի այ-
րին այն տատապեալ շատ արկ քան զամենեսեան
44 որ արկին ի գանձանակն։ Քանզի ամենեքին յաւե-
լորդաց իւրեանց արկին, այլ նա ի չքաւորութենէ
իւրմէ՝ զամենայն ինչ զոր ունէր արկ, զոյիւ չափ
գկեանս իւր։

ԳԼ. ԺԳ

1 ԷԶ. Եւ յելանելն նորա ի տաճարէ ասէ
ցնա մի յաշակերտաց նորա, Վարդապետ, տես
2 որպիսի՛ են քարինքս, և որպիսի՛ շինուածք։ Պա-
տասխանի եւ նմա Յիսուս և ասէ, Տեսանե՞ս զայդ
[1]ամենայն շինուածս. [2]ամէն ասեմ ձեզ եթէ՝ Ո՛չ
թողցի այդր քար ի քարի վերայ որ ոչ քակտեսցի։
3 Եւ մինչ նստէր նա ի լերինն Ձիթենեաց յանդիման
տաճարին, Հարցանէին ցնա առանձինն Պետրոս և
4 Յակովբոս և Յովհաննէս և Անդրէաս, Ասա մեզ ե՞րբ
լինիցի այդ, և զի՞նչ նշան է յորժամ կատարելոց
5 իցէ այդ ամենայն։ Պատասխանի եւ Յիսուս և
ասէ ցնոսա, Զգոյշ կացէք, մի՛ ոք զձեզ խաբէ-
6 ցէ։ Զի բազումք եկեսցեն յանուն իմ, և ասիցեն
Թէ Ես եմ [2]Քրիստոսն, և զբազումս մոլորեցու-
7 ցեն։ Եւ յորժամ լսիցէք պատերազմունս և համ-
բաւս պատերազմանց, մի՛ խռովիցիք, զի պարտ է
8 լինել, բայց չէ՛ է կատարածն։ Զի յարիցէ ազգ
յազգի վերայ, և թագաւորութիւն ի թագաւորու-

---

[1]Յոյնն, մեծամեծ [2]Ի բազումս գրօ-

թեան վերայ, և եղիցին շարժմունք ի տեղիս տեղիս, սովք [1]և արածութիւնք" [2]և խռովութիւնք"
9 այլ այն ամենայն սկիզբն է երկանց։ [3]Եւ դձեզ իսկ մատնեսցեն յատեանս, և ի ժողովուրդս տանջիցիք, և առաջի դատաւորաց և թագաւորաց կայցէք վասն իմ ի վկայութիւն նոցա, [4]և ամե-
10 նայն հեթանոսաց [5]այլ նախ պարտ է աւետարա-
11 նիս քարոզել"։ Եւ յորժամ տանիցին զձեզ մատնել, մի՛ յառաջագոյն հոգայցէք, և մի՛ զմտաւ ածիցէք թէ զի՛նչ խօսիցիք· այլ որ ինչ տացի ձեզ ի ժամուն յայնմիկ՝ զայն խօսիցիք· զի ոչ դուք էք որ խօսիցիք՝ այլ՝ Հոգին Սուրբ։
12 Մատնեսցէ եղբայր զեղբայր ի մահ, և հայր՝ զորդի և յարիցեն որդիք ի վերայ հարց և սպանա-
13 նիցեն զնոսա։ Եւ եղիջիք ատելեալք յամենեցունց վասն անուան իմոյ· այլ որ համբերեսցէն ի սպառ՝ նա կեցցէ։
14 Եւ յորժամ տեսանիցէք զպղծութիւն աւերած-
ծին՝ զի կայցէ ի տեղւոջ ուր չիցէ արժան, (որ ընթեռնուն ի միտ առցէ,) յայնժամ որ ի Հրէաս-
15 տանի իցեն՝ փախիցեն ի լերինս· Եւ որ ի վերայ տանեացն իցէ՝ մի՛ իջցէ ի տուն, և մի՛ մտցէ բառ-
16 նալ ինչ ի տանէ իւրմէ· Եւ որ յագարակին իցէ՝
17 մի՛ դարձցի յետս առնուլ զձորձս իւր։ Բայց վա՜յ իցէ յղեաց և ստնտուաց յաւուրսն յայնոսիկ։

---

[1]Ի Ց--ն՝ պ-ի-ե [2]Ց-մ-ն- պ-ի-ե [3]Բ-ղ-մ-, Զգոյշ լերս ք անձանց, զի [4]Ց-յն, 10 Եւ նախ յամենայն հեթանոս պարտ է աւետարանիս քարոզել [5]Մ-ն- յ--ե-ն, որ ասացեալն է ի ձեռն Դանիէլ մարգարէի

18 Յաղօթս կացէք զի մի՛ ձմերանի լինիցի այն։
19 Եղիցին աւուրքն այնոքիկ նեղութեանց, որպիսի
ոչ եղեն երբեք այնպիսիք ի սկզբանէ արարածոց
20 մինչեւ ցայժմ, և մի՛ այլ լիցի։ Եւ եթէ ոչ էր
կարճեալ [1]Աստուածոյ զաւուրսն զայնոսիկ [2]վասն
ընտրելոց իւրոց՝, ոչ ապրէր ամենայն մարմին.
այլ վասն ընտրելոցն զորս ընտրեաց՝ կարճեաց զա-
21 ւուրսն զայնոսիկ։ Յայնժամ եթէ ոք ասիցէ ձեզ
եթէ Ահաւասիկ է Քրիստոսն կամ Ահաւասիկ, մի՛
22 հաւատայցէք։ Զի յարիցեն սուտ քրիստոսք և
սուտ մարգարէք, և տացեն նշանս և արուեստս
առ ի մոլորեցուցանելոյ, եթէ հնար ինչ իցէ, և
23 զընտրեալսն։ Բայց դուք զգոյշ եղերուք. ահաւա-
սիկ յառաջագոյն ասացի ձեզ զամենայն։
24 Այլ յաւուրսն յայնոսիկ յետ նեղութեանն այ-
նորիկ արեգակն խաւարեսցի և լուսին ոչ տացէ
25 զլոյս իւր։ Եւ աստեղք երկնից թօթափեսցին, և
26 զօրութիւնք երկինս շարժեսցին։ Եւ յայնժամ
տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ամպովք և զօրու-
27 թեամբ և փառօք բազմօք։ Եւ յայնժամ առա-
քեսցէ զՀրեշտակս իւր, և ժողովեսցէ զընտրեալս
իւր ի չորից հողմոց, ի ծագաց երկրի մինչեւ ի
28 ծագս երկնից։ Բայց դուք ի թզենւոյ առեք ու-
սիք զառակն. յորժամ տակաւ ոստքն նորա կակ-
ղանայցեն և տերեւս արձակիցի ի նմա, գիտէք թէ
29 մերձ է ամառն։ Նոյնպէս և դուք յորժամ տես-
անիցէք զայս ամենայն եղեալ, գիտասջիք թէ
30 մերձ է առ դուրս։ Ամէն ասեմ ձեզ թէ ոչ

---

[1] Բ–ղ–ո–ք, Տեառն [2] Ի Բ–ղ–ո–ք գ–ի–ւ–ք

անցցէ ազգս այս, մինչեւ այս ամենայն եղիցի։
31 Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ ոչ անցա-
32 նիցեն Ա՛յլ վասն աւուրն այնորիկ և ժամու ոչ
ոք գիտէ, ոչ հրեշտակք յերկինս և ոչ Որդի,
33 բայց միայն Հայր։ Զգուշ եղերուք, սկեցէք և կա-
ցէք յաղօթս, զի ոչ գիտէք երբ ժամանակն իցէ։
34 Որպէս այր մի գնացեալ ի տարաշխարհ՝ թողու-
ցու զտունն իւր, և տայցէ ծառայից իւրոց իշխա-
նութիւն, և իւրաքանչիւր զգործ իւր, և դռնա-
35 պանին պատուէր տայցէ, զի արթուն լինիցի։ Արդ
արթուն կացէք, զի ոչ գիտէք երբ տէր տանն
գայցէ, յերեկորեա՛յ, եթէ ի մէջ գիշերի, եթէ ի
36 հաւախօսի, եթէ ընդ առաւօտս։ Գուցէ եկեալ
37 յանկարծակի գտանիցէ զձեզ ի քուն։ Բայց զոր
ձեզդ ասեմ՝ ամենեցուն ասեմ, Արթուն կացէք։

ԳԼ. ԺԴ

1 ԷԷ. Եւ էր զատիկն և բաղարջակերք յետ եր-
կուց աւուրց, խնդրէին քահանայապետքն և գպիրք
եթէ զիա՞րդ զնա նենգաւ կալեալ սպանանիցեն։
2 Բայց ասէին թէ Մի՛ ի տօնի ասա, զի մի՛ խռո-
վութիւն լինիցի ի ժողովրդեանն։
3 Եւ մինչ էր ի Բեթանիա ի տան Սիմոնի բորո-
տի բազմեալ, եկն կին մի որ ունէր շիշ իւղոյ
նարդեան ազնուի մեծագնոյ, և բեկեալ զշիշն ե-
4 հեղ ի վերայ գլխոյ նորա։ [1]Եւ աշակերտքն՝ զչա-
րէին և ասէին, Ընդէ՞ր եղեւ կորուստ իւղոյդ այ-
5 դորիկ. Մարթ էր զայդ եւղ վաճառել աւելի քան

[1]Բազմ. Եւ էին ոմանք որ

երեք հարեւր դահեկանի, և տալ աղքատաց. և
6 զայրանային նմա յոյժ։ Եւ Յիսուս ասէ ցնոսա,
Թոյլ տուք դմա, զի՞ աչխատ առնէք, զի գործ
7 մի բարի գործեաց դա յիս։ Զամենայն ժամ զաղ-
քատս ընդ ձեզ ունիք, և յորժամ կամիք, կա-
րող էք առնել նոցա բարիս. զյիս ոչ յամե-
8 նայն ժամ ընդ ձեզ ունիք։ Դա զոր ունէրդ՝ ա-
րար. յառաջագոյն խնկեաց զմարմին իմ ի նշան
9 պատանաց։ Ամէն ասեմ ձեզ, ուր և քարոզեսցի
աւետարանս այս ընդ ամենայն աշխարհ, և զոր
արար դա՝ խօսեսցի վասն յիշատակի դորին։
10 Եւ Յուդա Իսկարիովտացի, մի յերկոտասանից
անտի, գնաց առ քահանայապետան զի մատնեսցէ
11 զնա նոցա։ Նոքա իբրեւ լուան, խնդացին, և
խոստացան տալ նմա արծաթ. և խնդրէր թէ
զիա՛րդ պարապով մատնեսցէ զնա։
12 Եւ յառաջնում աւուր բաղարջակերացն յոր-
ժամ զզատիկն զենուին, ասեն ցնա աշակերտքն,
Ո՞ւր կամիս, երթիցուք պատրաստեսցուք զի կե-
13 րիցես զզատիկն։ Եւ առաքէ երկուս յաշակերտաց
անտի և ասէ ցնոսա, Երթայք ի քաղաք, և իբ-
րեւ մտանիցէք ի քաղաքն, պատահեսցէ ձեզ այր
մի որ սափոր ջրոյ յուսա ունիցի, երթայք գնա
14 նորա։ Եւ յոր տուն մտանիցէ, ասասջիք տա-
նուտերն, Վարդապետ ասէ, Ո՞ւր են իջեւանքն
15 ուր աշակերտօքս ուտիցեմ զզատիկն։ Եւ նա ցու-
ցէ ձեզ վերնատուն մի մեծ զարդարեալ, անդ
16 պատրաստեսջիք մեզ։ Եւ գնացին պատրաստել
աշակերտքն նորա եկին ի քաղաքն և գտին որպէս
ասացն նոցա, և պատրաստեցին զզատիկն։

17 Եւ իբրեւ երեկոյ եղեւ, գայ երկոտասանիւքն
18 հանդերձ։ Եւ իբրեւ բազմեցան և դեռ ուտէին,
ասէ Յիսուս, Ամէն ասեմ ձեզ զի մի ոմն ի ձէնջ
19 մատնելոց է զիս, որ ուտէ իսկ ընդ իս։ Եւ նոքա
սկսան տրտմել և ասել մի ըստ միոջէ, Միթէ ե՞ս
20 իցեմ, և մեւանց՝ Միթէ ե՞ս իցեմ։ Նա պատասխանի
եւ ասէ ցնոսա, Մի յերկոտասանից այսի որ
21 միեաց ընդ իս ի սկաւառակդ։ Այլ Որդի մարդոյ
երթայ որպէս և գրեալ է վասն նորա, բայց վա՛յ
իցէ մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռն Որդի մարդոյ
մատնեսցի. լաւ էր նմա թէ չէր իսկ ծնեալ մարդն
այն։

22 Եւ մինչդեռ ուտէին, առեալ Յիսուս հաց՝ օրհ-
նեաց և բեկ, եւ նոցա և ասէ, [1]Առէք այդ է
23 մարմին իմ։ Եւ առեալ բաժակ՝ գոհացաւ և եւ
24 նոցա, և արբին ի նմանէ ամենեքեան։ Եւ ասէ
ցնոսա, Այս է արիւն իմ նորոյ ուխտի, որ փոխա-
25 նակ բազմաց հեղու։ Ամէն ասեմ ձեզ թէ ոչ եւս
յառելից ըմպել ի բերոյ որթոյ մինչեւ ցօրն ցայն,
յորժամ արբից զնա նոր յարքայութեան Աստուծոյ։
26 Եւ գոհացեալ ելին ի լեառն Ձիթենեաց։ Վ.Ջ
27 Եւ ասէ ցնոսա Յիսուս, Ամենեքին գայթակղե-
լոց էք յինէն յայսմ գիշերի. զի գրեալ է թէ
28 Հարից զհովիւն, և ոչխարքն ցրուեսցին։ Այլ յետ
յարութեան իմոյ յառաջագոյն երթայց քան զձեզ
29 ի Գալիլեա։ Պատասխանի եւ Պետրոս և ասէ ցնա,
Թէպէտ և ամենեքեան գայթակղեսցին, այլ ես
30 ոչ։ Եւ ասէ ցնա Յիսուս, Ամէն ասեմ քեզ թէ

---

[1] Յմն. + Առէք, կերէք

դու իսկ յայսմ գիշերի մինչչեւ [1]հաւու խօսեալ
31 իցէ՝ երիցս ուրասցիս զիս։ Իսկ Պետրոս առաւել
եւս պնդէր և ասէր, Եթէ մեռանելոց եւս հասանի-
ցէ ընդ քեզ, զքեզ ոչ ուրասցայց. նոյնպէս և ա-
մենեքեան ասէին։
32 Գան ի գեղն որում անուն էր Գեթսեմանի, և
ասէ ցաշակերտան, Նստարուք աստ, մինչեւ ես
33 յաղօթս կացից։ Եւ առնու ընդ իւր զՊետրոս և
զՅակովբոս և զՅովհաննէս, և սկսաւ տխրել և հո-
34 գալ։ Յայնժամ ասէ ցնոսա, Տրտում է անձն իմ
մինչեւ ի մահ, մնացէք աստ և արթուն կացէք։
35 Եւ մատուցեալ սակաւիկ մի յառաջ, անկաւ ի
վերայ երեսաց իւրոց յերկիր. և կայր յաղօթս,
36 զի եթէ հնար ինչ է, անցցէ ի նմանէ ժամն։ Եւ
ասէ, Աբբա Հայր, ամենայն ինչ քեզ հնարաւոր
է, անցո զբաժակս զայս յինէն. բայց ոչ որպէս ես
37 կամիմ, այլ որպէս դու կամիս։ Եւ գայ գտանէ
զնոսա զի ննջէին, և ասէ ցՊետրոս, Սիմոնէ,
38 ննջե՞ս. ո՞չ կարացեր ժամ մի արթուն կալ։ Ար-
թուն կացէք և յաղօթս կացէք, զի մի՛ մտջիք ի
փորձութիւն. ոգին յօժար է, բայց մարմին
39 տկար։ Եւ դարձեալ չոգաւ եկաց յաղօթս, և
40 զնոյն բանս ասաց։ Դարձաւ միւսանգամ անդրէն
և եգիտ զնոսա ի քուն. քանզի էին աչք նոցա
ծանրացեալ, և ոչ գիտէին թէ զինչ պատասխանի
41 տային նմա։ Գայ երրորդ անգամ և ասէ ցնոսա,
Ննջեցէք այսուհետեւ և հանգերուք, [2]զի հասեա
է վախճան՝. եկն ժամ և ահա մատնի Որդի մար

---

[1] Բ—ղ—ʃ, հաւու երկիցս [2] Յ—ննն, բաւական է

42 գոյ ի ձեռս մեղաւորաց։ Օն սրիք, գնասցուք, զի
ահաւասիկ մերձեցաւ որ մատնելոցն է զիս։
43 Եւ մինչդեռ նա զայն խօսէր, գայ Յուդա [1]Իս-
կարիովտացի, մի յերկոտասանից անտի, և ընդ
նմա ամբոխ սուսերօք և բրօք ի քահանայապետից
44 և ի դպրաց և ի ծերոց։ Տուեալ էր նշան մատնչին
և ասէր, Ընդ որում ես համբուրեցից՝ նա է. կալ-
45 ջիք զնա և տարջիք զգուշութեամբ։ Եւ մատու-
ցեալ վազվազակի ասէ ցնա. Ռաբբի, Ռաբբի, և
46 համբուրեաց զնա։ Եւ նոքա արկին ի նա ձեռս և
47 կալան զնա։ Եւ մի ոմն յայնցանէ որ զնովաւն
կային՝ ձգեաց սուր, և եհար զծառայ քահանա-
48 յապետին, և ի բաց եհան զունկն նորա։ Պատաս-
խանի ետ Յիսուս և ասէ ցնոսա, Իբրեւ ի վերայ
49 աւազակի՞ ելէք սուսերօք և բրօք ունել զիս։ Հա-
նապազ առ ձեզ էի և ուսուցանէի ի տաճարին,
և ոչ կալարուք զիս. այլ զի լցցին գիրք մարգա-
50 բէից։ Յայնժամ թողին զնա աշակերտքն ամենե-
51 քին և փախեան։ Եւ ոմն երիտասարդ զկնի եր-
թայր նորա՝ արկեալ զիւրեւ կտաւ մի ի մերկուց.
52 ունէին զնա երիտասարդքն։ Եւ նորա թողեալ
զկտաւն՝ փախեաւ մերկ ի նոցանէ։
53 Եւ տարան զՅիսուս առ քահանայապետն [1]Կա-
յիափա և գային ընդ նմա ամենայն քահանայա-
54 պետքն և դպիրք և ծերք։ Եւ Պետրոս երթայր ի
հեռաստանէ զկնի նորա մինչեւ ի ներքս իսկ ի
գաւիթ քահանայապետին, և նստէր ընդ սպասա-
55 ւորան և ջեռնոյր առ լուսով։ Իսկ քահանայա-

---

[1] ի բ-ղ-մ գ-ի-ե

պետքն և ամենայն ատեանն խնդրէին հակառակ
Յիսուսի վկայութիւն ինչ, զի սպանանիցեն զնա,
56 և ոչ գտանէին։ Զի բազումք սուտ վկայութիւն
վկայէին զնմանէ, և նմանի միմեանց ոչ էին վկա-
57 յութիւնքն։ Ապիք յարուցեալ վկայէին սուտ
զնմանէ և ասէին, թէ Մեք լուաք ի դմանէ զի
58 ասէր, Ես քակեցից զտաճարդ զայդ ձեռագործ,
և զերիս աւուրս շինեցից այլ, առանց ձեռագործի։
59 Սակայն և այնպէս չէր նման վկայութիւնն նոցա։
60 Ապա յարուցեալ քահանայապետն ի մէջ՝ հար-
ցանէր զՅիսուս և ասէր, Ոչի՞նչ տաս պատաս-
61 խանի, զի՞նչ դոքա գքէն վկայեն։ Եւ նա լուռ
եւեթ կայր և չտայր ինչ պատասխանի։ Դարձեալ
քահանայապետն հարցանէր զնա կրկին անգամ և
ասէր, Դո՞ւ ես Քրիստոս Որդի [1]Աստուծոյ օրհնե-
62 լոյն։ [2]Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա, Դու
ասացեր թէ ես եմ՝. բայց տեսանիցէք զՈրդի մար-
դոյ նստեալ ընդ աջմէ Զօրութեան, և եկեալ ընդ
63 ամպս երկնից։ Եւ քահանայապետն պատառեաց
[3]վաղվաղակի զպատմուճանս իւր և ասէ, Զի՞նչ
64 եւս պիտոյ են մեզ վկայք։ Ահա [4]լուայք զհայհո-
յութիւնն ի բերանոյ դորա՝, զիա՞րդ
թուի ձեզ. և ամենեքեան դատապարտեցին զնա
65 թէ Մահապարտ է։ Եւ ոմանք սկսան թքանել
ընդ երեսս նորա, ձորձ գլխով արկանել, կռփել
և ասել, Մարգարեաց [3]մեզ, Քրիստոսդ, ո՞վ է

---

[1] Յ—ման— պ—ւ—ե [2] Բ—ղ—ս, Եւ Յիսուս ասէ, Ես եմ
[3] ի բ—ղ—ս պ—ւ—ե [4] Բ—ղ—ս, լուայք զհայհոյու-
թիւնն

այն որ եհարն զքեզ". և սպասաւորքն ապտակս
հանէին նմա։
66 Եւ Պետրոս մինչդեռ էր ի խոնարհ ի գաւթին,
գայ աղախին մի քահանայապետին, և տեսանէ
67 զնա զի ջեռնոյր. հայեցաւ ընդ նա և ասէ, Եւ
68 դու ընդ Յիսուսի Նազովրեցւոյ էիր։ Նա ուրացաւ
և ասէ, Ոչ ճանաչեմ և ոչ գիտեմ զինչ դու դ
ասես, և իբրեւ եկ յարտաքին գաւիթն, և հաւ
69 խօսեցաւ։ Դարձեալ տեսս զնա աղախինն, և
սկսաւ ասել ցայնոսիկ որ շուրջն կային թէ Եւ
70 սա ի նոցանէ է. և նա դարձեալ ուրացաւ։ Եւ
յետ սակաւ միոյ դարձեալ որ շուրջն կային՝ ասեն
ցՊետրոս, Արդարեւ և դու ի նոցանէ ես, քանզի
71 Գալիլեացի ես, և խօսքդ իսկ քո նմանն են։ Եւ
նա սկսաւ նզովել և երդնուլ և ասել թէ Ոչ
72 գիտեմ զայրն զորմէ դուք ասէք։ Եւ նոյնժա-
մայն կրկին հաւ խօսեցաւ. և յիշեաց Պետրոս
զբանն զոր ասաց ցնա Յիսուս թէ Զեւ իցէ հաւս
երկիցս խօսեալ, զի դու երիցս ուրացիս զիս, և
սկսաւ լալ։

ԳԼ. ԺԵ

1 Եւ վաղվաղակի ընդ առաւօտն խորհուրդ արար-
եալ քահանայապետին հանդերձ ծերովքն և
դպրօք և ամենայն ատեանն, կապեցին զՅիսուս և
2 տարան, մատնեցին Պիղատոսի։ Եւ հարց զնա
Պիղատոս և ասէ, Դո՞ւ ես թագաւորն Հրէից.
նա պատասխանի ետ նմա և ասէ, Դու ասես։
3 Եւ չարախօսէին զնմանէ յոյժ քահանայապետքն

4 [1]և նա ոչինչ տալը պատասխանի՝ իսկ Պիղատոս
դարձեալ հարցանէր զնա, Ոչի՞նչ տաս պատաս-
5 խանի, տես քանի՛ ամբաստանեն զքէն։ Եւ Յի-
սուս այնուհետեւ ոչինչ ետ պատասխանի, մինչեւ
զարմանալ յոյժ Պիղատոսի։
6 Բայց ըստ տօնի արձակէր նոցա զմի ոք գկապ-
7 եալ, զոր ինքեանք խնդրէին։ Եւ էր որում անուն
էր Բարաբբա՝ կապեալ ընդ խռովիչսն, որոց ի խռո-
8 վելն՝ այր մի սպանեալ էր։ Ի ձայն բարձր սկսաւ
աղաղակել ամբոխն և խնդրել [2]որպէս սովոր էր,
9 զի արձակեսցէ նոցա զԲարաբբայն՝։ Պատասխանի
ետ Պիղատոս և ասէ ցնոսա, Կամի՞ք զի արձա-
10 կեցից ձեզ զարքայն Հրէից։ Գիտէր թէ ա-
11 նախանձու մատնեցին զնա քահանայապետքն։ Որ
և զամբոխն հաւանեցուցին, զի արձակեսցէ նոցա
12 զԲարաբբայն։ Դարձեալ պատասխանի ետ Պիղա-
տոս և ասէ ցնոսա, Իսկ զի՞նչ կամիք թէ արա-
13 բից զարքայն Հրէից։ Եւ նոքա դարձեալ աղա-
ղակէին [1]յուզեալք ի քահանայապետից՝, Ի խաչ
14 հան զդա։ Ասէ ցնոսա Պիղատոս, Զի՞նչ ինչ չա-
արարեալ իցէ դորա. և նոքա առաւել եւս աղա-
15 ղակէին և ասէին, Ի խաչ հան զդա։ Իսկ Պիղա-
տոս իբրեւ զիւրս կամեցաւ հաճել զամբոխին,
արձակեաց նոցա զԲարաբբայն, և զՅիսուս գա-
հարեալ ետ ի ձեռս զի ի խաչ ելանիցէ։
16 Եւ զինուորքն տարան զնա ի ներքս ի գաւիթն
ուր [3]Հրապարակն էր. և կոչեն միանգամայն զ-

---

[1] Ի Բ-ղ-մ պ-ի-ե [2] Յ-ն, որպէս միշտն առնէ
նոցա [3] Յ-ն, ապարանք, տե՛ս Մատթ. ԻԷ. 27։

17 մեռայն զգուռնդն, եւ զգեցուցանեն նմա [1]զքղամիդ
կարմիր և՝ ծիրանիս, և եդին ի գլուխ նորա պսակ
18 արարեալ ի փշոց։ Եւ սկսան ողջոյն տալ նմա և
19 ասել, Ողջ եր, արքայդ Հրէից։ Եւ ծեծէին գլուխն
եղեգամբ, և թքանէին ընդ երեսս, և ի ծունր իջեալ
20 երկիր պագանէին նմա։ Եւ իբրեւ կատակեցին
զնա, մերկացուցին [1]զքղամիդն և՝ զծիրանիս և
զգեցուցին նմա զիւր հանդերձն, և ածին արտաքս
զի ի խաչ հանցեն զնա։
21 Եւ առնէին պահակ զՍիմոնէ Կիւրենացի, որ ընդ
այն անցանէր՝ եկեալ յագարակէ, զՀայրն Ալեք-
սանդրի և Ռուփայ, զի բարձցէ զխաչափայտն նո-
22 րա։ Եւ ածեն զնա ի Գողգոթա, տեղի մի որ
23 Թարգմանի Տեղի կառափելոյ։ Եւ տային նմա գի-
24 նի զմռսեալ, և նա ոչ առ։ Եւ հանին զնա ի
խաչ, և բաժանեցին զհանդերձս նորա, արկեալ
25 վիճակս ի վերայ Թէ ո՛ զինչ առնուցու։ Էր ժամ
26 երրորդ և հանին զնա ի խաչ։ Եւ էր գիր վէպասու
27 նորա գրեալ Թէ Թագաւոր է Հրէից։ Եւ ընդ նմա
հանին ի խաչ երկուս աւազակս, մի ընդ աջմէ և
28 մի ընդ ահեկէ նորա։ Եւ լցաւ գիրն որ ասէ Թէ
29 Ընդ անօրէնս համարեցաւ։ Եւ որք անցանէինն՝
հայհոյէին զնա շարժեալ գլուխս իւրեանց և ա-
սէին, Վա՛հ, որ քակէիր զտաճարն և զերիս ա-
30 ւուրս շինէիր։ Ապրեցո զանձն քո և էջ ի խաչէդ։
31 Նոյնպէս և քահանայապետքին այսպէս արարեալ
ընդ միմեանս հանդերձ դպրօքն՝ ասէին, Զայլս ապ-
32 րեցոյց, զանձն ոչ կարէ ապրեցուցանել։ Քրիստոսդ,

---

[1] ի բ-ղ-մ պ-ի-ս-ե

արքայդ Իսրայելի, իջցե այժմ ի խաչէ այսի, զի տեսցուք և հաւատասցուք դմա. և որ ընդ նմա ի
33 խաչն ելեալ էին՝ նախատէին զնա։ Եւ իբրեւ վեց ժամ եղեւ, խաւար կալաւ զա-
34 մենայն երկիր մինչեւ ցինն ժամ։ Եւ յիններորդ ժամուն աղաղակեաց Յիսուս ի ձայն մեծ և ասէ,
[1]Էլի, Էլի՛, լա՞մա սաբաքթանի. որ թարգմանի, Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս։
35 Եւ ոմանք ի նոցանէ որ շուրջն կային զնովաւ՝ իբ-
36 րեւ լուան, ասէին թէ զեղիա կարդայ։ Եւ ընթացեալ մի ոմն՝ ելից սպունգ մի քացախով, և հարեալ յեղեգան՝ տայր ըմպել նմա, և ասէ, Թող, տուր, տեսցուք գա՞յ եղիա իջուցանել զդա։
37 Եւ Յիսուս արձակեաց ձայն մեծ և եհան զոգի։
38 Եւ վարագոյր տաճարին պատառեցաւ յերկուս ի
39 վերուստ մինչեւ ի խոնարհ։ Եւ տեսեալ հարիւրապետին որ կայր անդ թէ աղաղակեաց և եհան զոգի, ասէ, Արդարեւ այրս այս Որդի Աստուծոյ
40 էր։ Էին և կանայք որ հայէին ի հեռաստանէ, յորս էր Մարիամ Մագդաղենացի և Մարիամ Յակովբոս փոքրկան և Յովսեայ մայրն և Սողովմէ.
41 Որք յորժամ էրն ի Գալիլեա, զհետ շրջէին նորա և պաշտէին զնա. և այլ բազում կանայք որ ընդ նմա իսկ ելեալ էին յԵրուսաղէմ։
42 Եւ իբրեւ երեկոյ եղեւ, քանզի ուրբաթ էր որ
43 ի շաբաթին մնանէր։ Եկեալ Յովսէփ որ յԱրիմաթեայն էր, այր պարկեշտ նախարար. որ և ինքն իսկ ակն ունէր արքայութեանն Աստուծոյ, հա-

---

[1]Բ—ղ—ժ, Էլոի, Էլոի

մարձակեցաւ եմուտ առ Պիղատոս, և խնդրեաց
44 զմարմինն Յիսուսի: Եւ Պիղատոս զարմացաւ թէ
այնչափ վաղ մեռաւ. և կոչեցեալ առ ինքն զհա-
րիւրապետն՝ եհարց զնա և ասէ թէ Արդարեւ այն-
45 չափ վա՞ղ մեռաւ: Եւ իբրեւ ստուգեաց ի հարիւ-
րապետէ անտի, շնորհեաց զմարմինն Յովսեփայ:
46 Եւ Յովսէփ գնեաց կտաւ, և իջուցեալ զնա՝ պատ-
եաց կտաւովն և եդ ի գերեզմանի զոր էր փորեալ
ի վիմէ. և թաւալեցոյց վէմ մի ի դուռն գերեզ-
47 մանին: Իսկ Մարիամ Մագդաղենացի և Մա-
րիամ Յակովբայ և Յովսեայ տեսին զտեղին ուր
եդաւ:

ԳԼ. ԺԶ

1 Եւ իբրեւ անց շաբաթն, Մարիամ Մագդաղե-
նացի և Մարիամ Յակովբայ և Սողովմէ չոգան
պատրաստեցին խունկս, զի եկեսցեն օծցեն զնա:
2 Եւ ընդ առաւօտս միաշաբաթուն գան ի գերեզ-
3 մանն ընդ արեւագալն: Եւ ասէին ցմիմեանս, Ո՞վ
թաւալեցուսցէ մեզ զվէմն ի դրաց գերեզմանին.
4 (Եւ հայեցեալ տեսին զի թաւալեցուցեալ էր
5 զվէմն ի գերեզմանէն.) քանզի էր մեծ յոյժ: Եւ
մտեալ ի ներքս ի գերեզմանն՝ տեսին երիտասարդ
մի զի նստէր ընդ աջմէ կողմանէ՝ զգեցեալ պատ-
6 մուճան սպիտակ, և զարհուրեցան: Եւ նա ասէ
ցնոսա, Մի՛ երկնչիք. զՅիսուս խնդրէք զՆազով-
րեցի զխաչելեալն, յարեաւ, չէ աստ. ահաւադիկ
7 տեղին ուր եդին զնա: Այլ երթայք, ասացէք
ցաշակերտս նորա և ցՊետրոս, եթէ ահա յառա-
ջագոյն երթայ քան զձեզ ի Գալիլեա, անդ տե-

8 սանիցէք գնա, որպէս ասացն ձեզ։ Եւ իբրեւ
լուան, ելին և փախեան ի գերեզմանէն, քանզի
զահի հարեալ էին. և ոչ ումեք ինչ ասացին, զի
երկնչէին։

9 [1]Յարուցեալ Յիսուս առաւօտուն [2]առաջին մի.
աշաբաթուն՝ երեւեցաւ Մարիամու Մագդաղե.
10 նացւոյ, յորմէ հանեալ էր զեւթն դեւն։ Եւ նա
երթեալ պատմեաց այնոցիկ որ ընդ նմայն էին,
11 մինչդեռ սգային և լային։ Նոքա իբրեւ լուան թէ
կենդանի է և երեւեցաւ նմա, ոչ հաւատացին։
12 Ետոյ երեւեցաւ այլով [3]կերպարանաւ որք եր.
13 թային յանդաստան։ Նոքա չոգան պատմեցին այ.
լոց, և ոչ նոցա հաւատացին։
14 Ետոյ մինչդեռ բազմեալ էին մեռասանքն, ե.
րեւեցաւ նոցա և թշնամանեաց զանհաւատութիւն
նոցա և զխստասրտութիւն. [4]զի որ երեւեցաւ նո.
ցա յարուցեալ ի մեռելոց, և նոքա ոչ հաւա.
տացին"։
15 Եւ ասէ ցնոսա, երթայք յաշխարհ ամենայն, և
քարոզեցէք զաւետարանն ամենայն արարածոց։
16 Որ հաւատայ և մկրտիցի՝ կեցցէ, և որ ոչն հա
17 ւատայ՝ դատապարտեսցի։ Նշանք այնոցիկ որ հա.
ւատան՝ երթիցեն զՀետ, այսոքիկ. յանուն իմ
18 դեւս հանցեն, լեզուս խօսեսցին, ի ձեռս իւրեանց

---

[1] Ա-ոթ փնչ- է ւ-ոթ-ր-ժ ֆլեոյն պ-ւ-ե յ-ր-ն- է ցյն
յե-ֆբ-ց [2] ցյն, յառաջնումն շաբաթուն
[3] ցյն, կերպարանաւ երկուց ի նոցանէ
[4] ցյն, զի որոց տեսին զնա յարուցեալ՝ ոչ հա.
ւատացին

օձս բարձցեն, և եթէ մահացու ինչ դեղ արբցեն, նոցա ինչ ոչ վնասեսցէ. ի վերայ հիւանդաց ձեռս դիցեն, և [1]բժշկեսցեն։

19 Եւ ինքն Տէր Յիսուս յետ խօսելոյն ընդ նոսա համբարձաւ յերկինս, և նստաւ ընդ աջմէ Հօր։

20 Եւ նոքա ելեալ քարոզէին ընդ ամենայն երկիր Տեառն գործակցութեամբ, և զբանն հաստատէին ամենայն նշանօք որ երթային զհետ նոցա։

---

[1]Յն. բժշկեսցին

ԳԼՈՒԽՔ ՂՈՒԿԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

	Գլ.	Հմր.
Վասն աշխարհագրին.	Բ.	1
Վասն բացօթեայ հովուացն.	Բ.	8
Վասն Միմէոնի	Բ.	25
Վասն մարգարէին Աննայի	Բ.	36
Վասն լինելոյ բանին Ադամոյ առ Յովհաննէս	Գ.	2
Վասն որոց հարցանէինն զՅովհաննէս.	Գ.	10
Վասն փորձութեանց փրկչին.	Դ.	2
Վասն որ ունէր զհոգին դիւական.	Դ.	33
Վասն զրքանչին Պետրոսի.	Դ.	38
Վասն որոց բժշկէին ի պէսպէս հիւանդութեանց.	Դ.	41
Վասն որոյ ձկանցն.	Ե.	4
Վասն բորոտին	Ե.	12
Վասն անդամալուծին.	Ե.	17
Վասն Ղեւեայ մաքսաւորին.	Ե.	27
Վասն գօսացեալ ձեռինն.	Զ.	6
Վասն առաքելոցն Համարոյ.	Զ.	13
Վասն երանութեանցն.	Զ.	20
Վասն հարիւրապետին.	Է.	2
Վասն որդւոյ այրւոյն.	Է.	12
Վասն որոց առաքեցանն ի Յովհաննէ.	Է.	19
Վասն օծանելոյ զՏէրն.	Է.	38
Վասն առակի սերմնացանին.	Ը.	5
Վասն սաստելոյ ջուրցն.	Ը.	24
Վասն որ ունէր զլեգէոնին.	Ը.	27
Վասն դստեր ժողովրդապետին	Ը.	41
Վասն տեառնառն կնոջն	Ը.	43
Վասն առաքելոյ զերկոտասանեանն.	Թ.	2

	Գլ.	Համր.
Վասն հինգ հացիցն և երկու ձկանցն.	Թ.	13
Վասն ցաշակերտան Հարցանելոյ.	Թ.	18
Վասն այլակերպութեանն Յիսուսի.	Թ.	29
Վասն լուսնահարին	Թ.	38
Վասն խորհելոյն թէ ո՛վ մեծ իցէ.	Թ.	46
Վասն չտալոյն հրամանն գկնի երթալ.	Թ.	57
Վասն երեւեցուցանելոյ զեւթանասունսն	Ժ.	1
Վասն հարցանելոյ օրինականին.	Ժ.	25
Վասն անկելոյն ի ձեռս աւազակաց.	Ժ.	30
Վասն Մարիամու և Մարթայի.	Ժ	38
Վասն յաղօթս կալոյն.	ԺԱ.	1
Վասն խուլ դիւին.	ԺԱ.	14
Վասն որ կինն ձայն երարձ ի ժողովրդեանն.	ԺԱ.	27
Վասն նշան խնդրելոյն.	ԺԱ.	29
Վասն որ փարիսեցին կոչեաց գՏէրն.	ԺԱ	37
Վասն վայ տալոյ օրինականացն.	ԺԱ.	46
Վասն խմորոյ փարիսեցւոցն.	ԺԲ.	1
Վասն բաժանելոյ զինչսն ընդ եղբօրն.	ԺԲ.	13
Վասն պաղատելոյ անդոյ մեծատանն.	ԺԲ.	16
Վասն Գալիլեացւոցն և որոց ի Սելովամ, և վասն թզենւոյն.	ԺԳ.	1
Վասն կարկամեալ կնոջն այսաւհարի.	ԺԳ.	11
Վասն առակացն.	ԺԳ.	19
Վասն թէ սակա՛ւք իցեն որ ապրելոց իցեն.	ԺԳ.	23
Վասն որք ասացին ցՅիսուս գՀերովդէս.	ԺԳ.	31
Վասն որ ջրգողեալ էր.	ԺԴ.	2
Վասն որք սիրեն զնախաթոռսն.	ԺԴ.	7
Վասն կոչելոյն զՆեթրիսն.	ԺԴ.	12
Վասն չինելոյ աշտարակին.	ԺԴ.	28

	Գլ.	Հմր.
Վասն հարեւր ոչխարացն.	ԺԵ.	4
Վասն գնացելոյն յաշխարհ հեռի առնառակին.	ԺԵ.	11
Վասն անիրաւ տնտեսին	ԺԶ.	1
Վասն մեծատանն և Ղազարու.	ԺԶ.	19
Վասն տասն բորոտացն.	ԺԷ.	12
Վասն անիրաւ դատաւորին.	ԺԸ.	2
Վասն փարիսեցւոյն և մաքսաւորին.	ԺԸ.	10
Վասն հարցանելոյ մեծատանն զՅիսուս.	ԺԸ.	18
Վասն կուրին.	ԺԸ.	35
Վասն Զակքէոսի.	ԺԹ.	2
Վասն գնալոյ առնուլ իւր թագաւորութիւն և դառնալ.	ԺԹ.	12
Վասն առնլոյ զտասն մնասն.	ԺԹ.	13
Վասն յաւանակին.	ԺԹ.	30
Վասն հարցանելոյ քահանայիցն զՏէր	Ի.	1
Վասն առակի այգւոյն	Ի.	9
Վասն դահեկանին.	Ի.	23
Վասն ապստամբեցուցն.	Ի.	27
Վասն թէ զի՛րդ է որդի Դաւթի Քրիստոս.	Ի.	41
Վասն երկու լումայի այրւոյն.	ԻԱ.	2
Վասն հարցման կատարածին.	ԻԱ.	7
Վասն զատկին.	ԻԲ.	2
Վասն վիճելոյն թէ ո՛վ մեծ իցէ.	ԻԲ.	24
Վասն խնդրելոյն Սատանայի.	ԻԲ.	31
Վասն նախատանաց Հերովդի զՏէրն.	ԻԳ.	11
Վասն կոծելոյ կանանցն.	ԻԳ.	27
Վասն ապաշխարելոյ աւազակին.	ԻԳ.	40
Վասն խնդրելոյ զտէրունական մարմինն.	ԻԳ.	52
Վասն կղէովպեանցն.	ԻԴ.	13
Վասն համբառնալոյն Տեառն.	ԻԴ.	51

ԱՒԵՏԱՐԱՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ

ԳԼՈՒԽ Ա

1 Քանզի բազումք յօժարեցին վերատին կարգել
պատմութիւն վասն իրացն հաստատեալոց ի մեզ,
2 Որպէս աւանդեցին մեզ որ ի սկզբանէ ական-
3 տեսք և սպասաւորք եղեն բանին, կամ՝ եղեւ և
ինձ, որ ի սկզբանէ գՀետ երթեալ էի ամենայնի
ճշմարտութեամբ, կարգաւ գրել քեզ, քաջդ Թէ-
4 ոփիլէ, Զի ծանիցես զբանիցն որոց աշակերտեցար՝
զճշմարտութիւն:
5 Եւ եղեւ յաւուրս Հերովդի արքայի Հրէաս-
տանի, քահանայ ոմն անուն Զաքարիա ի դասա-
կարգէ Աբիայ, և կին նորա ի դստերաց Ահարոնի,
6 և անուն նորա Եղիսաբեթ: Եւ էին արդարք ե-
րկոքին առաջի Աստուծոյ, գնային յամենայն պատ-
7 ուիրանս և յիրաւունս Տեառն անարատք: Եւ ոչ
գոյր նոցա որդեակ, քանզի Եղիսաբեթ ամուլ էր,
և երկոքեան անցեալ էին զաւուրբք իւրեանց:
8 Եւ եղեւ ի քահանայանալն նորա ըստ կարգի ա-
9 ւուրցն հասանելոյ առաջի Աստուծոյ, Ըստ օրինի
քահանայութեանն եՀաս նմա խունկ արկանել՝
10 մտեալ ի տաճարն Տեառն: Եւ ամենայն բազմու-
թիւն ժողովրդեանն կային յաղօթս արտաքոյ ի ժա-

11 մու խնկոցն : Եւ երեւեցաւ նմա հրեշտակ Տեառն,
12 ի կայր ընդ աջմէ սեղանոյ խնկոցն : Եւ խռովեցաւ
Զաքարիա , իբրեւ ետես , և անկաւ ահ ի վերայ
13 նորա : Ասէ ցնա հրեշտակն [1]Տեառն , Մի՛ երկնչիր ,
Զաքարիա , զի լսելի եղեն աղօթք քո , և կին քո
Եղիսաբեթ ծնցի քեզ որդի , և կոչեսցես զանուն
14 նորա Յովհաննէս : Եւ եղիցի քեզ ուրախութիւն
և ցնծութիւն , և բազումք ի ծննդեան նորա
15 խնդասցեն . Զի եղիցի մեծ առաջի Տեառն , և գինի
և օղի մի՛ արբցէ , և Հոգւով Սրբով լցցի ան-
16 դրսաին յորովայնէ մօր իւրոյ . Եւ զբազումս
յորդւոցն Իսրայելի դարձուսցէ ի Տէր Աստուած
17 իւրեանց : Եւ ինքն եկեսցէ առաջի նորա [2]Հոգւով
զօրութեամբ Եղիայի , դարձուցանել զսիրտս հարց
յորդիս , և զանհնազանս յիմաստութիւն արդարոց ,
18 պատրաստել Տեառն ժողովուրդ կազմեալ : Եւ ա-
սէ Զաքարիա ցհրեշտակն , Եւ ի՞նչ գիտասցի զայդ .
զի ես ծեր եմ , և կին իմ անցեալ զառուրբք
19 իւրովք : Պատասխանի ետ հրեշտակն և ասէ ցնա ,
Ես եմ Գաբրիէլ որ կամ առաջի Աստուծոյ , և
առաքեցայ խօսել ընդ քեզ և աւետարանել քեզ
20 զայդ : Եւ ահա եղիցես համր , և մի՛ կարասցես
խօսել մինչեւ ցօրն յորում այդ լինիցի . փոխա-
նակ զի ոչ հաւատացեր բանից իմոց , որք լցցին ի
21 ժամանակի իւրեանց : Եւ ժողովուրդն սակն ունէր
Զաքարեայ , և զարմանային ընդ յամելն նորա ի
22 տաճարին : Եւ իբրեւ ել , ոչ կարէր խօսել ընդ
նոսա . և իմացան եթէ տեսիլ ետես ի տաճարին

---

[1] Ի Յոհաննէն պակաս [2] Յոհն , Հոգւով և

և նա նշանացի խօսէր ընդ նոսա և կայր պապան-
23 ձեալ։ եւ եղեւ իբրեւ լցան աւուրք պաշտամանն
24 նորա, գնաց ի տուն իւր։ եւ յետ աւուրցն այ-
նոցիկ յղացաւ Եղիսաբեթ, կին նորա, և թա-
25 քուցանէր զանձն ամիսս հինգ, և ասէր, Զի՛նչ
գործ գործեաց ընդ իս Տէր յաւուրս յորս հայե-
ցաւ յիս բառնալ զնախատինս իմ ի մարդկանէ։
26 Եւ յամենեանն վեցերորդի առաքեցաւ Գաբրիէլ
հրեշտակ յԱստուծոյ ի քաղաք մի Գալիլեացւոց,
27 որում անուն էր Նազարէթ, Առ կոյս խօսեցեալ
առն, որում անուն էր Յովսէփ, ի տանէ Դաւ-
28 թի. և անուն կուսին Մարիամ։ Եւ եկեալ առ
նա ասէ, Ուրախ լեր, բերկրեալդ, Տէր ընդ քեզ։
29 Եւ նա ընդ բանսն խռովեցաւ, և խորհէր ընդ
30 միտս թէ որպիսի՛ ինչ իցէ ողջոյնս այս։ Եւ ասէ
ցնա հրեշտակն, Մի՛ երկնչիր, Մարիամ, զի գտեր
31 շնորհս յԱստուծոյ։ Եւ ահա յղասջիր և ծնցես
32 որդի, և կոչեսցես զանուն նորա Յիսուս։ Նա ե-
ղիցի մեծ, և Որդի Բարձրելոյ կոչեսցի, և տացէ
նմա Տէր Աստուած զաթոռն Դաւթի հօր նորա.
և թագաւորեսցէ ի վերայ տանն Յակովբայ ի յա-
33 ւիտեանս, եւ թագաւորութեան նորա վախճան
34 մի՛ լիցի։ Եւ ասէ Մարիամ ցհրեշտակն, Զիա՞րդ
35 լինիցի ինձ այդ, քանզի զայր ոչ գիտեմ։ Պա-
տասխանի ետ հրեշտակն և ասէ ցնա, Հոգի Սուրբ
եկեսցէ ի քեզ, և զօրութիւն Բարձրելոյն հովանի
լիցի ի վերայ քո. քանզի և որ ծնանելոցն է ի քէն՝
36 սուրբ է, և Որդի Աստուծոյ կոչեսցի։ Եւ ահա Ե-
ղիսաբեթ ազգական քո, և նա յղի է ի ծերութեան
իւրում. և այս վեցերորդ ամիս է նորա որ ամենե-

37 կոչեցեալ էր. Զի ոչ տկարասցի առ ԱԱստուծոյ
38 ամենայն բան։ Եւ ասէ Մարիամ, Ահաւասիկ
կամ աղախին Տեառն, եղիցի ինձ ըստ բանի
քումդ. և գնաց ի նմանէ հրեշտակն։
39 Յարուցեալ Մարիամ յաւուրսն յայնոսիկ՝ գնաց
40 ի լեռնակողմն փութապէս ի քաղաքն Յուդայ. Եւ
եմուտ ի տունն Զաքարեայ և ետ ողջոյն Եղիսա-
41 բեթի։ Եւ եղեւ իբրեւ լուաւ զողջոյնն Մարիամու
Եղիսաբեթ, խաղաց մանուկն յորովայնի նորա. և
42 լցաւ Եղիսաբեթ Հոգւով Սրբով. Եւ ի ձայն բարձր
աղաղակեաց և ասէ, Օրհնեալ ես դու ի կանայս,
43 և օրհնեալ է պտուղ որովայնի քո։ Եւ ուստի՞ է
44 ինձ այս, զի եկեսցէ մայր Տեառն իմոյ առ իս։ Զի
ահաւասիկ իբրեւ եղեւ ձայն ողջունի քո յականջս
իմ, խաղաց ցնծալով մանուկս յորովայնի իմում։
45 Եւ երանի որ հաւատասցէ եթէ եղիցի կատարումն
46 ասացելոցս նմա ի Տեառնէ։ Եւ ասէ Մարիամ,
47 Մեծացուսցէ անձն իմ զՏէր. Եւ ցնծացաւ հոգի
48 իմ ԱԱստուած փրկիչ իմ։ Զի հայեցաւ ի խոնար-
հութիւն աղախնոյ իւրոյ. զի ահա յայսմ հետէ
49 երանեսցեն ինձ ամենայն ազգք։ Զի արար ինձ
50 մեծամեծս Հզօրն, և սուրբ է անուն նորա։ Եւ ո-
ղորմութիւն նորա ազգաց յազգս երկիւղածաց
51 իւրոց։ Արար զօրութիւն բազկաւ իւրով, ցրուեաց
52 զամբարտաւանս մտօք սրտից իւրեանց։ Փակեաց
զՀզօրս յաթոռոց, և բարձրացոյց զխոնարհս։
53 Զքաղցեալսս լցոյց բարութեամբ, և զմեծատունս
54 արձակեաց ունայնս։ Պաշտպանեաց Իսրայէլի ծա-
55 ռայի իւրում՝ յիշել զողորմութիւնս։ Որպէս խո-
սեցաւ առ Հարս մեր՝ Աբրահամու և զաւակի նո

56 բա յաւիտեան։ Եկաց Մարիամ առ նմա իբրեւ
ամիս երիս, և դարձաւ ի տուն իւր։
57 Եւ Եղիսաբեթի լցան ժամանակք ծնանելոյ, և
58 ծնաւ որդի։ Եւ լուան որ շուրջ զնովաւ էին և
ազգատոհմ նորա, զի մեծ արար Տէր զողորմու-
թիւն իւր ընդ նմա և խնդային ընդ նմա։
59 Եւ եղեւ յաւուրն ութերորդի եկին թլփատել
զմանուկն, և կոչէին զնա յանուն հօր իւրոյ Զա-
60 քարիա։ Պատասխանի ետ մայր նորա և ասէ, Ոչ,
61 այլ կոչեցի Յովհաննէս։ Եւ ասեն ցնա, Քանզի
ոչ ոք է յազգի քումմէ, որոյ կոչի անուն Յովհան-
62 նէս։ Ակնարկէին հօրն նորա թէ զի՞նչ կամիցի
63 կոչել զնա։ Եւ խնդրեաց տախտակ, գրեաց և ա-
սէ, Յովհաննէս է անուն դորա. և զարմացան ա-
64 մենեքին։ Եւ բացաւ բերան նորա վաղվաղակի և
65 լեզու նորա, և խօսէր և օրհնէր զԱստուած։ Եւ
եղեւ ահ ի վերայ ամենեցուն որ լսէին զայս և
որ շուրջ բնակեալն էին զնոքօք. և ընդ ամենայն
լեառնակողմն Հրէաստանի պատմէին ամենայն բանք
66 այսոքիկ։ Եւ եդին ամենեքեան որ լսէին՝ ի սիրտս
իւրեանց, և ասէին, Զի՞նչ լինիցի մանուկս այս.
և ձեռն Տեառն էր ընդ նմա։
67 Եւ Զաքարիա հայր նորա լցաւ Հոգւով Սրբով,
68 մարգարէացաւ և ասէ, Օրհնեալ Տէր Աստուած
Իսրայելի, զի յայց եւ մեզ, և արար փրկութիւն
69 ժողովրդեան իւրում։ Եւ յարոյց եղջեւր փրկու-
70 թեան մեզ ի տանէ Դաւթի ծառայի իւրոյ։ Որ-
պէս խօսեցաւ բերանով սրբոց որ յաւիտենից մար-
71 գարէքն նորա էին. փրկութիւն ի թշնամեաց մե-
72 րոց, և ի ձեռաց ամենայն ատելեաց մերոց։ Ա-

նել ողորմութիւն ընդ հարս մեր, և յիշել զուխտն
73 իւր սուրբ՝ Զերդուձին զոր երդուաւ Աբրահամու
74 հօր մերում՝ տալ մեզ, Առանց երկիւղի, ի ձե-
75 ռաց թշնամեաց [1]մերոց փրկեալս, Պաշտել զնա
սրբութեամբ և արդարութեամբ առաջի նորա զա-
76 մենայն աւուրս կենաց մերոց։ Եւ դու, մանուկ,
մարգարէ Բարձրելոյ կոչեսջիր. զի երթիցես առա-
ջի երեսաց Տեառն պատրաստել զճանապարհս նո-
77 րա, Տալ գիտութիւն փրկութեան ժողովրդեան
78 նորա ի թողութիւն մեղաց նոցա։ Վասն գթու-
թեանց ողորմութեան Աստուծոյ մերոյ, որով այց
79 [2]արասցէ մեզ Արեգակն ի բարձանց, երեւել որոյ
ի խաւարի և ի ստուերս մահու նստեալին, ուղղել
զոտս մեր ի ճանապարհս խաղաղութեան։
80 Եւ մանուկն աճէր և զօրանայր հոգւով, և էր
յանապատս մինչեւ յօր երեւելոյ նորա Իսրայէլի

ԳԼ. Բ

1 Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ եւ հրաման
Աւգոստոս կայսերէ աշխարհագիր առնել ընդ ա-
2 մենայն տիեզերս։ Այս առաջին աշխարհագիր է-
3 ղեւ ի դատաւորութեան Սուրիոց Կիւրենեայ։ Եւ
երթային ամենեքեան մտանել յաշխարհագիր յի-
4 րաքանչիւր քաղաքի։ Եւ ել Յովսէփ ի Գալիլեա ի
քաղաքէ Նազարեթէ ի Հրէաստան, ի քաղաքն
Դաւթի որ կոչի Բեթղեհեմ, վասն լինելոյ նորա
5 տանէ և յազգէ Դաւթի, Մատանել յաշխարհա-
գիր Մարեմաւ հանդերձ զոր խոսեալն էր նմա,

---

[1] Յոհան. պոլոե [2] Ոմանք, արար

6 եր յղի։ Եւ եղեւ ի հասանելն նոցա անդր, լցան
7 աւուրք ծննանելոյ նորա։ Եւ ծնաւ զորդին իւր
զանդրանիկ, և պատեաց ի խանձարուրս և եդ զնա
ի մսուր. զի ոչ գոյր նոցա տեղի յիջեւանին։
8 Եւ հովիւք էին ի տեղւոջն յայնմիկ բացօթեայգք,
որք պահէին զպահպանութիւնս գիշերոյ հօտից
9 իւրեանց։ Եւ հրեշտակ Տեառն երեւեցաւ նոցա,
և փառք Տեառն ծագեցին առ նոսա, և երկեան
10 երկեւղ մեծ։ Եւ ասէ ցնոսա հրեշտակն, Մի՛
երկնչիք, զի ահաւասիկ աւետարանեմ ձեզ ու-
րախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեանն։
11 Զի ծնաւ ձեզ այսօր փրկիչ, որ է Օծեալ Տէր, ի
12 քաղաքի Դաւթի։ Եւ այս նշանակ ձեզ. գտանի-
ցէք մանուկ պատեալ ի խանձարուրս և եդեալ ի
13 մսուր։ Եւ յանկարծակի եղեւ ընդ հրեշտակին
ընդ այնմիկ բազմութիւն զօրաց երկնաւորաց, որ
14 օրհնէին զԱստուած և ասէին, փառք ի բարձունս
Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ
15 հաճութիւն։ Եւ եղեւ իբրեւ վերացան ի նոցանէ
հրեշտակքն յերկինս, ասեն ցմիմեանս հովիւքն,
եկայք երթիցուք մինչեւ ցԲեթղեհեմ, և տեսցուք
զինչ է բանն այս որ եղեւ, զոր Տէր եցոյց մեզ։
16 Եւ եկին փութանակի, և գտին զՄարիամ և
17 զՅովսէփ և զմանուկն եդեալ ի մսուր։ Եւ ծանեան
18 վասն բանին որ ասացաւ նոցա զմանկանէն. Եւ
ամենեքին որ լսէին՝ զարմանային վասն բանիցն զոր
19 խօսեցան ընդ նոսա հովիւքն։ Եւ Մարիամ զամե-
նայն զբանս զայսոսիկ պահէր և խելամուտ լինէր
20 ի սրտի իւրում։ Եւ դարձան հովիւքն, փառաւոր
առնէին և օրհնէին զԱստուած վասն ամենայնի

զոր լուան և տեսին, որպէս պատմեցաւ նոցա։
21 Եւ իբրեւ լցան աւուրք ութ թլփատել [1] զնա,
և կոչեցաւ անուն նորա Յիսուս որ կոչեցեալ էր ի
հրեշտակէն, մինչչեւ յղացեալ էր [2] զնա յորովայնի։
22 Եւ իբրեւ լցան աւուրք սրբութեան [3] նոցա ըստ
օրինացն Մովսիսի, ածին զնա յԵրուսաղէմ յան.
23 դիման առնել Տեառն, Որպէս և գրեալ է յօրէնս
Տեառն. Թէ Ամենայն արու որ բանայ զարգանդ
24 սուրբ Տեառն կոչեսցի, և տալ պատարագս ըստ
ասացելոյն յօրէնս Տեառն, զոյգս տատրակաց կամ
25 երկուս ձագս աղաւնեաց։ Եւ ահա էր այր մի յԵ-
րուսաղէմ, որոյ անուն էր Սիմէովն, և էր այրն
այն արդար և երկիւղած, և ակն ունէր մխիթարու-
26 թեանն Իսրայելի. և Հոգի Սուրբ էր ի նմա։ Եւ
էր նորա հրամանն առեալ ի Հոգւոյն Սրբոյ մի՛ տե-
27 սանել զմահ, մինչեւ տեսցէ զՕծեալն Տեառն։ Եւ
եկն Հոգւովն ի տաճարն. և իբրեւ ածին ծնողքն
զմանուկն Յիսուս առնել նոցա ըստ սովորութեան
28 օրինացն ի վերայ նորա, Եւ նա առ ընկալաւ զնա
29 ի գիրկս իւր, և օրհնեաց զԱստուած և ասէ, Արդ
արձակես զծառայս քո, Տէր, ըստ բանի քում ի
30 խաղաղութիւն. Զի տեսին աչք իմ փրկութիւն
31 քո, Զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողո-
32 վրդոց։ Լոյս ի յայտնութիւն հեթանոսաց, և
33 փառս ժողովրդեան քում Իսրայելի։ Եւ էին
[4] հայրն և մայր նորա զարմացեալ ի վերայ բանիցն
34 որ խօսէին զնմանէ։ Եւ օրհնեաց զնոսա Սիմէովն,
և ասէ ցՄարիամ մայր նորա, Ահա սա կայ ի գլո-

[1] Ոմն., զմանուկն [2] Յոյն., նա [3] Ոմն., նորա
[4] Ոմն., Յովսէփ

բուին և ի կանգնուին բազմաց ի մէջ Իսրայելի և
35 ի նշան հակառակութեան։ Եւ ընդ քո իսկ անձն
անցցէ սուր, զի յայտնեացին ի բազում սրտից
խորհուրդք։
36 Եւ անդ էր Աննա մարգարէ դուստր Փանուելի
յազգէ Ասերայ. սա ինքն անցեալ էր զաւուրբք
բազմօք՝ կեցեալ ընդ առն սմա եւթին ի կուսու-
37 թենէ իւրմէ։ Եւ էր այրի ամաց իբրեւ ութսուն և
չորից, որ ոչ մեկնէր ի տաճարէն, այլ պահօք և
38 աղօթիւք պաշտէր զԳայդ և զգերեկ։ Եւ սա ի նմին
ժամու յարուցեալ գոհանայր զՏեառնէ, և խօսէր
զնմանէ ընդ ամենեսին որ սակն ունէին [1]փրկու-
թեանն Երուսաղեմի"։
39 Եւ իբրեւ կատարեցին զամենայն բան օրինացն
Տեառն, դարձան անդրէն ի Գալիլեա ի քաղաքն
40 իւրեանց Նազարէթ։ Եւ մանուկն աճէր և զօրա-
նայր լի իմաստութեամբ, և շնորհք Աստուծոյ էին
ի վերայ նորա։
41 Եւ երթային ծնողքն նորա ամի ամի Երուսա-
42 ղէմ ի տօն զատկին։ Եւ իբրեւ եղեն նորա ամք
երկոտասան, յելանել նոցա Երուսաղէմ բան ա-
43 ւորութեան տօնին, Եւ կատարել զաւուրսն և
դառնալ անդրէն, մնաց Յիսուս մանուկն Երու-
44 սաղէմ. և ոչ գիտացին [2]ծնողքն նորա։ կարծէին
զնմանէ թէ ընդ ուղեկիցան իցէ. եկին իբրեւ ա-
ւուր մի[3] ճանապարհ և խնդրէին զնա ընդ [3]դրա-
45 ցիան և ընդ ծանօթս։ Եւ իբրեւ ոչ գտին, դար-

---

[1]Բ—ղ—ս, փրկութեան Երուսաղէմ [2]Ո՛ւնս, Յովսէփ և մայր [3]Ց—յն, ազգականան

46 ձան անդրէն յԵրուսաղէմ խնդրել զնա : Եւ եղեւ
յետ երից աւուրց գտին զնա ի տաճարին, զի
նստէր ընդ վարդապետան, լսէր ի նոցանէ և հար-
47 ցանէր զնոսա : Զարմանային ամենեքեան որ լսէին
ի նմանէ ընդ իմաստութիւնն և ընդ պատասխանիս
48 նորա : Եւ իբրեւ տեսին զնա, սքանչացան. և ասէ
ցնա մայրն իւր, Որդեակ, զի՞նչ գործ գործեցեր
դու ընդ մեզ. ահաւասիկ հայր քո և ես տառա-
49 պեաք, խնդրեաք զքեզ : Եւ ասէ ցնոսա, Ջի՞
խնդրէիք զիս, ո՞չ գիտէիք եթէ ի տան Հօր իմոյ
50 պարտ է ինձ լինել : Եւ նոքա ոչ իմացան զբանն
51 զոր խօսեցաւ ընդ նոսա : Եւ էջ ընդ նոսա և գնաց
ի Նազարէթ. և էր նոցա հնազանդ. և մայր նորա
պահէր զամենայն զբանսն ի սրտի իւրում :
52 Եւ Յիսուս զարգանայր իմաստութեամբ և հա-
սակաւ և շնորհօք յԱստուծոյ և ի մարդկանէ :

ԳԼ. Գ

1 Ի հնգետասաներորդի ամի տէրութեանն Տիբերի
կայսեր, ի դատաւորութեան Հրէաստանի Պիղա-
տոսի Պոնտացւոյ, և ի չորրորդապետութեան Գա-
լիլեացւոց Հերովդի, և ի փիլիպպոսի եղբօր նորա
չորրորդապետութեան Իտուրացւոց և Տրաքոնացւոյ
աշխարհին, և ի չորրորդապետութեան Լիւսանեայ
2 Աբիլենացւոյ, Եւ ի քահանայապետութեան Ան-
նայի և Կայիափայ, եղեւ բան Աստուծոյ ի վերս
Յովհաննու որդւոյ Զաքարեայ յանապատի անդ
3 Եւ եկն յամենայն կողմն Յորդանանու քարոզել
մկրտութիւն ապաշխարութեան ի թողութիւն մե-
4 ղաց : Որպէս և գրեալ է ի գիրս պատգամաց Եսայեայ

մարգարէի, Զայն բարբառոյ յանապատի, Պատրաստ արարէք զճանապարհ Տեառն, և ուղիղ
5 արարէք զշաւիղս նորա։ Ամենայն ձոր լցցին, և ամենայն լերինք և բլուրք խոնարհեսցին, և եղիցին դժուարինքն ի դիւրինս, և առապարքն ի հարթ
6 ճանապարհս. Եւ տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ։
7 Եւ ասէր ցժողովուրդսն ելեալս մկրտել ի նմանէ, Ծնունդք իժից, ո՞ ցոյց ձեզ փախչել ի բար-
8 կութենէն որ գալոց է։ Արարէք այսուհետեւ պտուղս արժանիս ապաշխարութեան. և մի՛ սկսանիցիք [1]ասել ի մտի ձեր Հայր զԱբրահամ. զայս ասեմ ձեզ, եթէ կարող է Աստուած ի քարանցս
9 յայսցանէ յարուցանել որդիս Աբրահամու։ Բայց ահաւասիկ տապար առ արմատ ծառոց կայ. ամենայն ծառ որ ոչ առնէ զպտուղ բարւոք՝ հատանի և ի հուր արկանի։ Հարցանէին զնա ժողո-
10 վուրդքն և ասէին, Իսկ արդ զի՞նչ գործեսցուք։
11 Պատասխանի ետ և ասէ ցնոսա, Որ իցեն երկու հանդերձք՝ տացէ զմին այնմ որ ոչն գուցէ. և
12 որ կայցէ կերակուր՝ նոյնպէս արասցէ։ Եկին և մաքսաւորքն մկրտել, և ասեն ցնա, Վարդապետ,
13 զի՞նչ գործեսցուք։ Եւ նա ասէ ցնոսա, Մի՛ ինչ
14 աւելի քան զկրամայեալն ձեզ առնիցէք։ Հարցանէին զնա և զինուորքն և ասէին, Եւ մեք զի՞նչ գործեսցուք. ասէ ցնոսա, Մի՛ զոք խուճիցէք և մի՛ զոք զրպարտիցէք, շատ լիցին ձեզ թոշակքն ձեր։
15 Մինչ ակն ունէր ժողովուրդն և խորհէին ամե-

---

[1] Յոյն. ասել յանձինս

նեքեան ի սիրտս իւրեանց վասն Յովհաննու, Միթէ
16 սա՞ իցէ Քրիստոսն, Պատասխանի [1]եւ ամենեցուն
և ասէ, Ես մկրտեմ զձեզ ջրով, բայց գայ զոր
դյն քան զիս, զորոյ չեմ բաւական բառնալ
զկօշիկս, նա մկրտեսցէ զձեզ Հոգւով Սրբով և
17 հրով, Որոյ հեծանոցն ի ձեռին իւրում սրբել
զկալ իւր, և ժողովել զցորեանն ի շտեմարան
18 իւր, և զխարդն այրեսցէ անշէջ հրով: Բազում
և այլ ինչ մխիթարութեամբ աւետարանէր ժո-
ղովրդեանն:
19 Բայց Հերովդէս չորրորդապետ յանդիմանեալ
ի նմանէ վասն Հերովդիայ, [2]կնոջ եղբօր իւրոյ, և
վասն ամենայն չարեացն զոր գործեաց Հերովդէս,
20 Յաւել և զայն եւս ի վերայ ամենայնի, և եդ ի
բանտի զՅովհաննէս:
21 Եւ եղեւ ի մկրտել ամենայն ժողովրդեանն և
ընդ Յիսուսի մկրտելն և կալ յաղօթս, բանալ
22 երկինից, Եւ իջանել Հոգւոյն Սրբոյ մարմնաւոր
տեսլեամբ իբրեւ զաղաւնի ի վերայ նորա. և գալ
ձայն յերկնից որ ասէր, Դու ես Որդի իմ սիրելի
ընդ քեզ հաճեցայ:
23 Եւ ինքն Յիսուս էր ամաց իբրեւ երեսնից սկսեալ,
[3]որոց որպէս և կարծէր, որդի Յովսեփայ, [4]որ Յա-
24 կովբայն," որ Հեղեայն, որ Մատաթեայն, Որ
Ղեւեայն, որ Մեղքեայն, որ Յաննեայն, որ Յով-
25 սեփայն, Որ Մատթեայն, որ Ամովսայն, որ Ն-

---

[1]Յ-ն, եւս Յովհաննէս [2]Ո՛ն+, որ-
ո՛ն+ է Հայ. օբն-ւ-ց, կնոջ փիլիպպոսի, [3]Յ-
և էր, [4]ի Յ-ն պակաս

26 ւումային, որ Եսղեային, որ Նաանգեային, Որ Մահաթային, որ Մատաթեային, որ Սեմեային, որ [1]Յովսեքեային, որ Յովդայի, Որ Յովնանային, որ Րեսային,
27 որ Զորաբաբելին, որ Սաղաթիելին, որ Ներայի,
28 Որ Մեղքեային, որ Ադդեային, որ Կովսամային, որ
29 Ելմովդադայի, որ Երայի, Որ Յեսուայի, որ Եղիազարայի, որ Յովրամային, որ Մատթայի, որ Ղեւ-
30 եայի, Որ Սիմէոնին, որ Յուդայեին, որ Յովսե-
31 փայի, որ Յովնամային, որ Եղիակիմային, Որ Մեղթեայի, որ Մեննայի, որ Մատաթային, որ Նա-
32 թանայի, որ Դաւթին, Որ Յեսսեայի, որ Ովբեդայի, որ Բոոսայի, որ Սաղմոնային, որ Նաասսով-
33 նին, Որ Ամինադաբայի, որ Արամային, [2]որ Ադմինայի, որ Առնեայի,[3] որ Եսրովմայի, որ Փարեսին,
34 որ Յուդայեին, Որ Յակովբայի, որ Իսահակայի, որ
35 Աբրահամուն, որ Թարայեին, որ Նաքովրայի, Որ Սերուգայի, որ Ռագաւայի, որ Փաղեկայի, որ Ե-
36 բերայի, որ Սաղայեին, Որ Կայնանայի, որ Արփաքսադայի, որ Սեմայի, որ Նոյեին, որ Ղամեքայի,
37 Որ Մաթուսաղայեին, որ Ենովքայի, որ Յարեդին,
38 որ Մաղաղիելին, որ Կայնանայի, Որ Ենովսայի, որ Սեթայի, որ Ադամայի, որ Աստուծոյ։

ԳԼ. Դ

1 Եւ Յիսուս լի Հոգւով Սրբով դարձաւ ի Յորդա-
2 նանէ, և վարէր Հոգւովն յանապատ՝ Աւուրս քառասուն փորձեալ ի Սատանայէ. և ոչ եկեր

---

[1] Ոմանք, Յովսեփայի [2] Ի բազումս պակասէ

և ոչ արք յաւուրսն յայնոսիկ. և ի կատարել
նոցա քաղցեաւ։
3 Եւ ասէ ցնա Սատանայ, եթէ որդի ես Աստու-
4 ծոյ, ասա քարիդ այդմիկ զի հաց լիցի։ Պատաս-
խանի ետ նմա Յիսուս և ասէ, Գրեալ է եթէ Ոչ
հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ
Աստուծոյ։
5 Եւ հանեալ [1]զնա ի լեառն մի բարձր՝ եցոյց նմա
զամենայն թագաւորութիւնս աշխարհի ի վայրկեան
6 ժամանակի։ Եւ ասէ ցնա Սատանայ, Քեզ տաց
զայս ամենայն իշխանութիւն և զփառս նոցա, զի
7 ինձ տուեալ է, և ում կամիմ՝ տամ զսա։ Արդ
դու եթէ անկեալ երկիր պագանիցես առաջի իմ,
8 քեզ եղիցի ամենայն։ Պատասխանի ետ նմա Յի-
սուս և [2]ասէ, Գրեալ է, երկիր պագցես Տեառն
Աստուծոյ քումմ, և զնա միայն պաշտեսցես։
9 Եւ ած զնա յԵրուսաղէմ, և կացոյց ի վերպ
աշտարակի տաճարին, և ասէ ցնա, եթէ Որդի ես
10 Աստուծոյ, արկ զքեզ աստի ի վայր. Զի գրեալ
է եթէ Հրեշտակաց իւրոց պատուիրեսցէ վասն
11 քո պահել զքեզ. Զի ի վերայ ձեռաց բարձցեն
12 զքեզ, մի՛ երբեք հարցես զքարի զոտն քո։ Պա-
տասխանի ետ նմա Յիսուս և ասէ, Ասացեալ
13 թէ Ոչ փորձեսցես զՏէր Աստուած քո։ Եւ կա-
տարեալ զամենայն փորձութիւնս Սատանայի՝ ե-
ցաց եկաց ի նմանէ աւր ժամանակ մի։
14 ԲԿ. Եւ դարձաւ Յիսուս զօրութեամբ Հոգւոյն

---

[1]Ոմանք, զնա Սատանայ յեռս իմ, Սատանայ, զի

[2]Ոմանք, ասէ, երբ

ի Գալիլեա. և ել Համբաւ զնմանէ ընդ ամենայն
15 կողմանս գաւառին։ Եւ նա ուսուցանէր ի ժողո-
վուրդս նոցա փառաւորեալ յամենեցունց։
16 Եւ եկն ի Նազարէթ ուր անեալն էր. և եմուտ
բան սովորութեան իւրում յաւուր շաբաթու [1]ի
17 ժողովուրդն։ Եւ եառն նմա գիրս Ղեսայեայ մար-
գարէի. և յարեաւ ընթեռնուլ, և իբրեւ եբաց
զգիրսն՝, եգիտ զայն տեղի յորում գրեալն էր,
18 Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ
զիս, աւետարանել աղքատաց առաքեաց զիս,
19 բժշկել զբեկեալս սրտիւ, քարոզել գերեաց զթո-
ղութիւն և կուրաց տեսանել, արձակել զվիրա-
ւորս ի թողութիւն, քարոզել զտարեկան Տեառն
20 ընդունելի։ Եւ խփեալ զգիրսն՝ ետ ցպաշտօնեայն,
և նստաւ. և ամենեցուն որ ի ժողովրդեանն էին
21 աչք ի նա հայէին։ Եւ սկսաւ ասել ցնոսա, Ա՛յսօր
22 լցան գիրքս այս յականջս ձեր։ Եւ ամենեքին
վկայէին նմա, և զարմանային ընդ բանս շնորհացն
որ ելանէին ի բերանոյ նորա, և ասէին, Ո՞չ սա է
23 որդին Յովսեփայ։ Եւ ասէ ցնոսա, Ապաքէն ասիջիք
առ իս զառակս զայս, Բժիշկ, բժշկեա զանձն
քո. որչափ լուաք զոր արարեր ի Կափառնայում՝
24 արա և աստ ի քում գաւառի։ Եւ ասէ. Ամէն
ասեմ ձեզ թէ Չէ մարգարէ ընդունելի ի քաղաքի
25 իւրում։ Արդարեւ ասեմ ձեզ, զի բազում այրիք
էին յաւուրս Եղիայի ի մէջ Իսրայելի, յորժամ

---

[1]3-ն՝ն, ի ժողովուրդն, և յարեաւ ընթեռնուլ. (17) Եւ եառն նմա գիրս Ղեսայեայ մարգարէի, և իբրեւ եբաց

փակեցանն երկինք զերիս ամս և վեց ամիս, և
26 եղեւ սով մեծ ընդ ամենայն երկիր: Եւ ոչ առ մի
ի նոցանէ առաքեցաւ Եղիա, բայց միայն ի Սա-
27 րեփթա Սիդովնացւոց առ կին մի այրի: Եւ բա-
զում բորոտք էին Իսրայելի առ Եղիսէ մար-
գարէ. և ոչ ոք ի նոցանէ սրբեցաւ, բայց միայն
28 Նեեման Ասորի: Եւ լցան ամենեքին բարկութեամբ
29 ի ժողովրդեանն, իրրեւ լսէին զայս. Եւ յարու-
ցեալ հանին զնա արտաքոյ քաղաքին, և ածին
զնա մինչեւ յարտեւան լերինն, յորոյ վերայ քա-
ղաքն նոցա շինեալ էր՝ գահավիժ առնել զնա:
30 Եւ նա անցեալ ընդ մէջ նոցա՝ գնայր:
31 ԲԲ. Եւ էջ ի Կափառնայում ի քաղաքն Գա-
32 լիլեացւոց, և ուսուցանէր զնոսա ի շաբաթին: Եւ
զարմանային ընդ վարդապետութիւն նորա, զի ի-
33 խանութեամբ էր բան նորա: Եւ էր ի ժողովրդեանն
այր մի զոր ունէր այս դիւ պղծոյ, և աղաղա-
34 կեաց ի ձայն մեծ, Ասէ, Թուլացո, զի՞ կայ մեր
և քո, Յիսուս Նազովրեցի, եկիր կորուսանել
զմեզ. գիտեմք զքեզ ով ես, Սուրբդ Աստուծոյ:
35 Սաստեաց ի նա Յիսուս և ասէ, Պապանձեաց և ել
ի դմանէ. զգետնեաց զնա դեւն ի մէջ անդ և ել
36 ի նմանէ, և ոչինչ վնասեաց նմա: Եւ եղեն զար
մանալիք ի վերայ ամենեցուն, խօսէին ընդ միմեան
և ասէին, Ջի՞նչ է բանս այս, զի իշխանութեամբ
և զօրութեամբ ասաստէ այսոց պղծոց, և ելանեն
37 Եւ երթայր հռչակ զնմանէ ընդ ամենայն տեղի
շուրջ զգաւառսն:
38 Եւ յարուցեալ ի ժողովրդենէ անտի՝ եմուտ
39 տուն Սիմովնի, Ջօրքանչ Սիմովնի տագնապեր ջեր-

40 մամբ մեծաւ. և աղաչեցին զնա վասն նորա։ Եկաց առ նմա, սաստեաց ջերմանն, և եթող զնա. և վաղվաղակի յարեաւ և պաշտէր զնոսա։

41 Եւ ընդ արեւուն մտանել, ամենեքին որոց էին հիւանդք ի պէսպէս ցաւս՝ բերէին զնոսա առ նա. և նա իւրաքանչիւր ուժեք ի նոցանէ դնէր ձեռս
42 եւ բժշկէր զնոսա։ Ելանէին և դեւք ի բազմաց, աղաղակէին և ասէին եթէ Դու ես Որդի Աստուծոյ. եւ նա սաստէր և ոչ տայր նոցա թոյլ խօսել, զի գիտէին զնա թէ Քրիստոսն է։

43 ԲԳ. Եւ իբրեւ տիւ եղեւ, ել գնաց յանապատ տեղի, և ժողովուրդքն խնդրէին զնա. եկին մինչեւ առ նա և արգելուին զնա, զի մի՛ գնասցէ ի
44 նոցանէ։ Եւ նա ասէ ցնոսա, Եւ այլոց քաղաքաց պարտ է ինձ աւետարանել զարքայութիւնն Աս-
45 տուծոյ, զի յայն իսկ առաքեցայ։ Եւ քարոզէր ի ժողովուրդսն Գալիլեացւոց։

ԳԼ. Ե

1 Եւ եղեւ ի խռնել զնովաւ ժողովրդեանն և լսել զբանն Աստուծոյ, և ինքն կայր առ ծովակին Գեն-
2 նեսարեթացւոյ։ Եւ տեսս երկուս նաւս զի կային առ ծովակին, և ձկնորսքն ելեալ ի նոցանէ՝ լուանային
3 զգործիսն։ Ել նա ի մի նաւուցն որ էր Սիմովնի, և աղաչեաց զնա սակաւիկ մի տանել ի ներքս ի ցամաքէն. նստաւ և ուսուցանէր ի նաւէ անտի զժողովուրդսն։

4 Եւ իբրեւ լռեաց ի խօսիցն, ասէ ցՍիմովն, խա-
5 ղացո ի խորն, և արկէք զգործիս ձեր յորս։ Պատասխանի եւ Սիմովն և ասէ ցնա, Վարդապետ,

զամենայն գիշերս աշխատեցաք և ոչինչ կալաք
6 բայց վասն քո բանիդ արկցուք զգործիսս։ Զայս
իբրեւ արարին, փակեցին ի ներքս բազմութիւն
ձկանց յոյժ, մինչեւ պարպատէին ուռկանք նոցա
7 Եւ ակնարկէին որսակցացն ի մեւս նաւն՝ գալ օգ
նել նոցա. և եկին, և լցան երկոքին նաւքն մին
8 չեւ մերձ յընկղմել նոցա։ Իբրեւ եառն Սիմոն
Պետրոս, անկաւ առ ծունկն Յիսուսի և ասէ,
Ի բաց գնա յինէն, Տէր, զի այր մեղաւոր եմ ես։
9 Քանզի ահ պատեաց զնա և զամենեսեան որ ընդ
նմայն էին՝ վասն որսոյ ձկանցն զոր ըմբռնեցին,
10 Նոյնպէս և զՅակովբոս և զՅովհաննէս զորդիսն
Զեբեդեայ, որ էին որսակիցք Սիմոնի. և ասէ
ցՍիմոն Յիսուս, Մի՛ երկնչիր, յայսմ հետէ զմարդ
11 դիկ որսայցես ի կեանս։ Եւ հանեալ զնաւն ի ցա
մաք՝ թողին զամենայն և գնացին զհետ նորա։
12 ԲԴ. Եւ եղեւ ի հասանելն նորա ի մի ի քաղա
քացն, ահա այր մի լի բորոտութեամբ իբրեւ եառն
զՅիսուս, անկեալ ի վերայ երեսաց աղաչեաց զնա
և ասէ, Տէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել
13 Զգեաց զձեռն իւր, հասոյց ի նա և ասէ, Կամիմ
սրբեաց. և վաղվաղակի գնաց ի նմանէ բորոտու
14 թիւնն։ Եւ նա պատուիրեաց նմա մի՛ ումեք ասել,
այլ թէ երթ ցոյց զանձն քո քահանային, և մա
տո պատարագ վասն սրբութեան քո, որպէս և
15 հրամայեաց Մովսէս ի վկայութիւն նոցա։ Եւ յոր
դէր առաւել բանն զնմանէ. և ժողովէին ժողո
վուրդք բազումք լսել և բժշկել ի հիւանդութենէ
16 իւրեանց։ Եւ նա խոյս տայր յանապատս տեղիս և
կայր յաղօթս։

17 ԲԵ. Եւ եղեւ ի միում աւուրց և ինքն ուսու-
ցանէր, և փարիսեցիքն և օրինացն վարդապետք
նստէին, որ ժողովեալ էին յամենայն քաղաքաց
Գալիլեացւոց և Հրէաստանի և Երուսաղեմի. և
18 զօրութիւն Տեառն էր ի բժշկել զնոսա: Եւ ահա
արք բերէին մահճօք զայր մի որ էր անդամալոյծ,
և խնդրէին զնա մուծանել ի ներքս և դնել առաջի
19 նորա: Եւ իբրեւ ոչ գտանէին թէ ընդ որ մուծա-
նիցեն զնա ի ներքս վասն ամբոխին, ելին ի տանիս
և ի ցուցն կախեցին զնա, և իջուցին մահճօքն
20 հանդերձ ի մէջ առաջի Յիսուսի: Եւ տեսեալ
զհաւատսն նոցա՝ ասէ ցնա, Այր դու, թողեալ
21 լիցին քեզ մեղք քո: Սկսան խորհել դպիրքն և
փարիսեցիք, և ասեն, Ո՞ է սա որ խօսի զհայհո-
յութիւնս, ո՞վ կարէ թողուլ զմեղս բայց միայն
22 Աստուած: Իբրեւ գիտաց Յիսուս զխորհուրդսն
նոցա, պատասխանի ետ և ասէ ցնոսա, Զի՞ խոր-
23 հիք ի սիրտս ձեր: Զի՞նչ դիւրագոյն է, ասել՝ Թո-
ղեալ լիցին քեզ մե՞ղք քո, եթէ ասել, Արի և
24 գնա: Այլ զի գիտասջիք եթէ իշխանութիւն ունի
Որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս, (ասէ ցան-
դամալոյծն,) քեզ ասեմ, արի, առ զմահիճս քո
25 և երթ ի տուն քո: Եւ առժամայն յարուցեալ
առաջի ամենեցուն, առ զիւրեւ յորոյ վերայ ան-
կեալն դնէր, գնաց ի տուն իւր, և փառաւոր առ-
26 նէր զԱստուած: Զարմանք կալան զամենեսին, և
փառաւորէին զԱստուած. լի եղեն ահիւ, և
ասեն եթէ Տեսաք այսօր նոր նշան:

27 ԲԶ. Եւ յետ այնորիկ ել անտի և հառս մաք-
սաւոր մի որում անուն էր Ղեւի, զի նստէր ի

28 մաքսաւորութեան և ասէ ցնա, Եկ զկնի իմ։ Եւ
29 թողեալ զամենայն յարեաւ գնաց զկնի նորա։ Եւ
արար ընդունելութիւն մեծ նմա Ղեւի ի տան իւ-
րում. և էր ժողովուրդ բազում մաքսաւորաց և
30 այլոց որ էին բազմեալ ընդ նոսա։ Եւ տրտնջէին
փարիսեցիքն և դպիրքն նոցա [1]զնմանէ առ աշա-
կերտան նորա և ասէին, Ընդէ՞ր ընդ մաքսաւորս և
31 ընդ մեղաւորս ուտէք և ըմպէք։ Պատասխանի ետ
Յիսուս և ասէ ցնոսա, Ոչինչ են պիտոյ բժիշկ
32 ողջոց, այլ հիւանդաց։ Ոչ եկի կոչել զարդարս,
այլ զմեղաւորս յապաշխարութիւն։
33 Եւ նոքա ասեն ցնա, Ընդէ՞ր աշակերտքն Յով-
հաննու պահեն յաւէտ և խնդրուածս առնեն, նոյն
պէս և փարիսեցւոցն, և քոյքդ ուտեն և ըմպեն
34 Եւ նա ասէ ցնոսա, Միթէ կարո՞ղ էք մանկանց
առագաստի, մինչ փեսայն ընդ նոսա իցէ, հրա-
35 ման տալ պահել։ Եկեսցեն աւուրք յորժամ
բարձցի ի նոցանէ փեսայն, ապա պահեսցեն յա-
36 ւուրսն յայնոսիկ։ Ասաց և առակ մի առ նոսա թէ
Ոչ ոք արկանէ ի նոր հանդերձէ ի վերայ հնացեալ
ձորձոյ. ապա թէ ոչ՝ և զնորն պատառէ, և ընդ
37 հնոյն չհիւսանի կապերան որ ի նորոյն։ Եւ ոչ ոք
արկանէ գինի նոր ի տիկս հինս. ապա թէ ոչ՝ պայ-
թուցանէ գինին նոր զտիկան հինս, ինքն հեղու և
38 տիկքն կորնչին։ Այլ գինի նոր ի տիկս նորս ար-
39 կանելի է, և երկոքին պահին։ Եւ ոչ ոք ըմպե
զհինն [2]եւ կամիցի զնորն, քանզի ասէ թէ Հինն
քաղցրագոյն է։

---

[1] ի յ-ան-ն պ-ո-ե [2] Ո՛ահ, և վաղվաղակ

ԳԼ. Զ

1 ԲԷ. Եւ եղեւ ի շաբաթու [1]յերկրորդում առաջնոյն՝ անցանել նմա ընդ արտորայն, և աշակերտքն նորա կորզէին հասկ, շփէին ընդ ափ և
2 ուտէին։ Եւ ոմանք ի փարիսեցւոցն ասեն ցնոսա,
3 Զի՞նչ գործէք զոր չէ օրէն ի շաբաթու։ Պատասխանի ետ նոցա Յիսուս և ասէ, Զիդէ՞ ընթերցեալ
4 ձեր զոր արարն Դաւիթ, յորժամ քաղցեաւն ինքն և որ ընդ նմայն էին։ Զիա՞րդ եմուտ նա ի տունն Աստուծոյ, և զհացն զառաջաւորութեան եկեր և ետ այնոցիկ որ ընդ նմայն էին. զոր ոչ էր օրէն
5 ումեք ուտել, բայց միայն [2]քահանայապետիցն։
6 Եւ ասէ ցնոսա, Տէր է Որդի մարդոյ և շաբաթու։ Եւ եղեւ ի միւսում շաբաթուն մտանել նմա ի ժողովուրդն և ուսուցանել. և էր անդ այր մի և
7 ձեռն իւր աջ գօսացեալ էր։ Եւ սպասէին նմա դպիրքն և փարիսեցիք թէ ի շաբաթուն բժշկիցէ՞,
8 զի գտանիցեն չարախօսութիւն զնմանէ։ Եւ նա գիտէր զխորհուրդս նոցա և ասէ ցայրն որոյ ձեռնն
9 գօսացեալ էր, Ա՛րի, անց ի մէջ. և նա յարուցեալ
10 եկաց։ Ասէ ցնոսա Յիսուս, Հարցից ինչ զձեզ, Զի՞նչ արժան է ի շաբաթու, բարի՞ ինչ առնել եթէ չար գործել, ոգի մի ապրեցուցանե՞լ, թէ կո-
11 րուսանել։ Եւ հայեցեալ շուրջ զամենեքումբք [3]ցայրագին՝ ասէ ցնա, Զգեա զձեռն քո. և նա ձգեաց, և հաստատեցաւ ձեռն նորա [1]իբրեւ զմեւսն։

---

[1] Յ-ոհ-ն պ-ս-ե Մատթ. ԺԲ. 4։ Մարկ. Բ. 26։
[2] Յ-ոյն, քահանայիցն. փո-
[3] ի բ-ղ-մ պ-ս-ե

11 Նոքա լցան յիմարութեամբ, և խօսէին ընդ մի-
մեանս թէ զի՞նչ առնիցեն Յիսուսի։
12 ԳԿ. Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել ի
լեառն կալ յաղօթս, և հանէր զգիշերն ի գլուխ
13 յաղօթիւն Աստուծոյ։ Եւ իբրեւ այգ եղեւ, կոչեաց
զաշակերտան իւր, և ընտրեաց ի նոցանէ երկոտա-
14 սանս, զորս և առաքեալս անուանեաց. ՁՍիմոն
զոր և Պետրոսն անուանեաց, և զԱնդրէաս զեղ-
բայր նորին, և զՅակոբոս, և զՅովհաննէս, և
15 զՓիլիպպոս, և զԲարթողոմէոս, Եւ զՄատթէոս,
և զԹովմաս, և զՅակովբոս Ալփեայ, և զՍիմոն
16 զկոչեցեալն Նախանձայղոյզ, Եւ զՅուդա Յակովբայ,
և զՅուդա Իսկարիովտացի, որ եղեւ իսկ մատնիչ։
17 Եւ իջեալ նոքօք հանդերձ ի տեղի մի տափարակ,
և ժողով աշակերտացն նորա և բազմութիւն յոյժ
ժողովրդեանն յամենայն Հրէաստանէ, և Երու-
սաղեմէ [1]եւ յայնմ կողմանէ՝, և ի ծովեզերէն Տիւ-
18 րոսի և Սիդոնի. Որ եկին լսել ի նմանէ և բժշկել
ի հիւանդութեանէ իւրեանց. և նեղեալքն յոյսոց
19 պղծոց բժշկէին։ Եւ ամենայն ժողովուրդն ձգտէր
մերձենալ ի նա, զի զօրութիւն [2]բազում ելանէր
ի նմանէ և բժշկէր զամենեսեան։
20 Եւ նա ամբարձ զաչս իւր յաշակերտան իւր և
ասէ, Երանի աղքատացդ [1]հոգւով, զի ձեր է ար-
21 քայութիւնն Աստուծոյ։ Երանի որ քաղցեալ [3]էք
այժմ, զի յագեսցի՛ք. երանի որ [4]լան այժմ, զի
22 ծիծաղեսցի՛ք։ Երանի է ձեզ յորժամ ատիցեն

---

[1] ի Բ—ղ—ո—ս պ—ի—ե [2] ի Յ—ն—ի պ—ի—ե [3] Բ—ղ—ո—ս, իցէք այժմ, զի յագեսջիք, ւրդե- և օրհ-
ն Հ—յ—ե—ն [4] Յ—ն—ն, լայք այժմ, զի ծիծաղեսջիք

զձեզ մարդիկ, և յորժամ որոշիցեն զձեզ և նախատիցեն, և հանիցեն անուն չար զձէնջ վասն Որդ-
23 ւոյ մարդոյ: Ուրախ լիջիք յաւուր յայնմիկ և ցնծասջիք, զի ահա վարձք ձեր բազում են յերկինս. ըստ դմին օրինակի առնէին մարգարէիցն հարք
24 իւրեանց: Բայց վա՛յ ձեզ մեծատանդ, զի ընկա-
25 լաք զմխիթարութիւն ձեր: Վա՛յ ձեզ որ յագեալդ էք այժմ, զի քաղցիցէք. վա՛յ ձեզ որ ծի-
26 ծաղիքդ այժմ, զի ոգայցէք և լայցէք: Վա՛յ ձեզ յորժամ բարի ասիցեն զձէնջ [1]ամենայն մարդիկ, զի այդպէս առնէին սուտ մարգարէիցն հարք նոցա:
27 Ա՛յլ ձեզ ասեմ որ լսէքդ, Սիրեցէք զթշնամիս
28 ձեր, բարի արարէք առելեաց ձերոց: Օրհնեցէք զանիծիչս ձեր, աղօթս արարէք ի վերայ նեղչաց
29 ձերոց: Որ հարկանէ զծնօտ քո, մատո նմա և զմեւսն. և որ հանէ ի քէն զբաճկոն քո, մի՛ արգելուր ի
30 նմանէ և [2]զշապիկս: Ա՛մենայնի որ խնդրէ ի քէն՝ տուր, և զոր ինչ հանէ ոք ի քէն՝ մի՛ պահանջեր:
31 Եւ որպէս կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այն-
32 պէս արասջիք և դուք նոցա: Եւ եթէ սիրէք դուք զսիրելիս ձեր, զի՞նչ շնորհ է ձեր, զի և մեղաւորք
33 սիրեն զսիրելիս իւրեանց: Եւ եթէ բարի առնէք բարերարաց ձերոց, ո՞ր շնորհ է ձեր, զի և մեղա-
34 ւորք զնոյն գործեն: Եւ եթէ տայք փոխ այնոցիկ յորոց ակն ունիցիք առնուլ, ո՞ր շնորհ է ձեր, քանզի և մեղաւորք մեղաւորաց փոխ տան, զի առցեն
35 անդրէն զկշիռն: Բայց սիրեցէք զթշնամիս ձեր, և բարի արարէք [3]առելեաց ձերոց՝. և տուք փոխ՝ ուս-

[1]Ց-ման պոլսեցի [2]Ց-ին, զշապիկ քո [3]Ի Ց-նէն պոլսեցի

տի ոչ ակն ունիցիք առնուլ. և եղիցին վարձք ձեր
բազում, և եղիջիք որդիք Բարձրելոյ. զի նա քաղցր
36 *է ի վերայ չարաց և ապաշնորհաց։ Եղերուք*
37 *գթածք, որպէս և Հայրն ձեր գթած է։ Մի՛ դա-*
տիք և ոչ դատիցիք. մի՛ պատժէք և ոչ պատժի-
38 *ցիք, արձակեցէք և արձակիցիք։ Տուք և տացի*
ձեզ. չափ բարւոք, թաթաղուն, շարժուն, զեղուն
տացեն ի գոգս ձեր. նովին չափով որով չափէք
չափեսցի ձեզ։
39 Ասաց և առակ մի առ նոսա, Միթէ կարիցէ կոյր
կուրի առաջնորդել, ո՞չ ապաքէն երկոքին ի խոր-
40 *խորատ անկանիցին։ Ոչ է աշակերտ լաւ քան զվար-*
դապետ իւր. ամենայն կատարեալն եղիցի իբրեւ
զվարդապետ իւր։
41 Զի՞ տեսանես զչիղ յականն եղբօր քո, և ի քում
42 *ական զգերանդ ոչ նշմարես։ Կամ զիա՞րդ կարես*
ասել ցեղբայր քո, Եղբայր, թող հանից զչիղ
յականէ քումմէ, և դու ի քում ական զգերանդ
ոչ տեսանես. կեղծաւոր, հան նախ զգերանդ յա-
կանէ քումմէ, և ապա հայեսջիր հանել զչիղ յա-
43 *կանէ եղբօր քո։ Զի ոչ է ծառ բարի որ առնէ*
պտուղ չար, և ոչ դարձեալ ծառ չար՝ որ առնէ
44 *պտուղ բարի։ Զի իւրաքանչիւր ծառ ի պտղոյ*
իւրմէ ճանաչի. զի ոչ եթէ ի փշոց քաղեն թուզ,
45 *և ոչ ի մորենւոյ կթեն խաղող։ Մարդ բարի ի բա-*
րի գանձուց սրտի իւրոյ բղխէ զբարի, և մարդ չար
[1]*ի չարէն բղխէ զչար. քանզի ի յաւելուածոյ*
46 *սրտին խօսի բերան նորա։ Զի՞ կոչէք զիս Տէր, Տէր*

---

[1] Ոմանք, *ի չար գանձուց սրտի իւրոյ*

47 և զոր ասեմն ոչ առնէք։ Ամենայն որ գայ առ իս,
և լսէ զբանս իմ և առնէ զնոսա, ցուցից ձեզ ումմ
48 նման է։ Նման է առն որ շինիցէ տուն, որ փորեաց
և խորեաց, և եդ հիմն ի վերայ վիմի. ի յառնել
հեղեղաց բաղխեաց գետ զտունն, և ոչ կարաց
շարժել զնա. զի հաստատեալ էր հիմն ի վերայ
49 վիմի։ Իսկ որ լսէ զբանս իմ և ոչ առնէ, նման է
առն, որ շինիցէ տուն ի վերայ հողոյ առանց հի-
մանն. զոր բաղխեաց գետ, և վաղվաղակի անկաւ,
և եղեւ կործանումն տանն այնորիկ մեծ։

ԳԼ. Է

1 ԳԲ. Եւ իբրեւ կատարեաց զամենայն բանս իւր ի
լսելիս ժողովրդեանն, եմուտ ի Կափառնայում։
2 Հարիւրապետի ուրումն ծառայ չարաչար հիւան-
դացեալ՝ մերձ էր ի վախճանել, որ էր նմա պա-
3 տուական։ Իբրեւ լուաւ զՅիսուսէ, առաքեաց
զծերսն ի Հրէից, աղաչել զնա զի եկեսցէ ապրե-
4 ցուսցէ զծառայն նորա։ Եւ նոքա եկեալ առ Յի-
սուս՝ աղաչէին զնա ասէպ և ասէին թէ Արժանի է
5 որում զՆորհս զայս առնես։ Զի սիրէ զազգս մեր,
6 և զժողովրդանոցն նա շինեաց մեզ։ Եւ Յիսուս
գնաց ընդ նոսա. իբրեւ ոչինչ կարի հեռի էր ի
տանէն, յղեաց առ նա հարիւրապետն բարեկամս,
և ասէ ցնա, Տէր, մի՛ ինչ աշխատ լինիր, զի չեմ
բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտանիցես.
7 վասն որոյ և ոչ զանձն համարեցայ արժանի առ
քեզ գալոյ. այլ ասա բանիւ, և բժշկեսցի մա-
8 նուկս իմ։ Քանզի և ես այր մի եմ կարգեալ ընդ
իշխանութեամբ. ունիմ ընդ ինեւ զինուորս, և

ասեմ ամս, երթ, և երթայ. և այլուս թէ եկ,
և գայ. և ծառային իմում թէ Արա զայս, և առ-
9 նէ: Եւ իբրեւ լուաւ զայս Յիսուս, զարմացաւ,
դարձաւ առ ժողովուրդն որ երթայր ի զհետ նորա
և ասէ, [1]Ամէն ասեմ ձեզ թէ և ոչ ի Իսրայէլի
10 այսչափ հաւատս գտի: Եւ դարձան անդրէն պատ-
գամաւորքն ի տուն, և գտին զծառայն հիւանդ
բժշկեալ:
11 ԳԳ· Եւ եղեւ ի վաղիւն երթայր ի քաղաք մի
որում անուն էր Նային. երթային ընդ նմա և [2]ա-
12 շակերտք նորա՝ և ժողովուրդք բազում: Իբրեւ
մերձ եղեւ ի դուռն քաղաքին, և ահա ելանէր
մեռեալ մի որդի միամօր մօր իւրոյ, և նա էր այրի
և ժողովուրդ բազում քաղաքին էր ընդ նմա:
13 Իբրեւ տեսս զնա Տէր, գթացաւ ի նա և ասէ,
14 Մի՛ լար: Եւ մատուցեալ մերձեցաւ ի դագաղն
և որք բարձեալն տանէին՝ զտեղի առին. և ասէ,
15 Պատանի դու, քեզ ասեմ, Արի: Կանգնեցաւ և
նստաւ մեռեալն և սկսաւ խօսել. և ետ զնա ցմայր
16 իւր: Եւ ահ կալաւ զամենեսեան, և փառաւորէ-
նէին զԱստուած և ասէին թէ Մարգարէ մեծ
յարուցեալ է ի միջի մերում, և թէ Այց արար
Աստուած ժողովրդեան իւրում [1]ի բարութիւն:
17 Եւ ել զրոյցս այս ընդ ամենայն Հրէաստան վասն
նորա, և ընդ ամենայն կողմանս աշխարհին:
18 Եւ պատմեցին Յովհաննու աշակերտքն իւր վասն
19 ամենայնի այսորիկ: Եւ կոչեաց առ ինքն երկու

---

[1]ի բազմս պիտոյ [2]Ոմանք, յաշակերտաց նո-
ոչ առկաւք

ամենա յաշակերտացն իւրոց Յովհաննէս, առաքեաց
[1]առ Տէր՝ և ասէ, Դո՞ւ ես որ գալոցն ես, եթէ
20 այլում ակն կալցուք։ Եւ եկեալ արքն առ նա՝
ասեն, Յովհաննէս մկրտիչ առաքեաց զմեզ առ
քեզ և ասէ, Դո՞ւ ես որ գալոցն ես, եթէ այլում
21 ակն կալցուք։ Եւ ի նմին ժամու բժշկեաց զբազումս
ի հիւանդութեանց և ի հարուածոց և յայոց չա-
22 րաց, և կուրաց բազմաց շնորհեաց տեսանել։ Պա-
տասխանի ետ [2]նոցա և ասէ, Երթայք պատմեցէք
Յովհաննու զոր տեսէքդ և լուայք, զի կոյրք տե-
սանեն, և կաղք գնան, բորոտք սրբին, խուլք լսեն,
23 մեռեալք յառնեն, աղքատք աւետարանին. Եւ
երանի իցէ որ ոչ գայթակղիցի յիս։
24 Եւ իբրեւ գնացին հրեշտակքն Յովհաննու, սկը-
սաւ խօսել ընդ ժողովուրդսն վասն Յովհաննու,
Զի՞նչ ելէք յանապատն տեսանել, եղէ՞գն շարժուն
25 ի հողմոյ։ Այլ զի՞նչ ելէք տեսանել, այր ի հան-
դերձս փափկութեան զարդարեալ. ահաւանիկ որք
ի հանդերձս երեւելիս և ի փափկութեան են՝ յար-
26 քունիս են։ Այլ զի՞նչ ելէք տեսանել, մարգարէ.
այո, ասեմ ձեզ, առաւել եւս քան զմարգարէ։
27 Զի սա է վասն որոյ գրեալն է թէ, Ահա առաքեմ
զհրեշտակ իմ առաջի քո, որ յարդարեսցէ զճա-
28 նապարհ քո առաջի քո։ [3]Ամէն ասեմ ձեզ, Մեծ
ի ծնունդս կանանց մարգարէ քան զՅովհաննէս ոչ
ոք է, բայց փոքրիկն յարքայութեան Աստուծոյ
մեծ է քան զնա։

---

[1]Ոմանք, առ Յիսուս
[2]Ոմանք, նոցա Յիսուս
[3]Ոմանք, Զի

29 Եւ ամենայն ժողովուրդն իբրեւ լուաւ և մաք-
սաւորքն, արդարացուցին զԱստուած, զի մկրտե-
30 ցան ի մկրտութիւնն Յովհաննու։ Իսկ փարիսեցիքն
և օրինականքն զխորհուրդն Աստուծոյ անարգեցին
յանձինս իւրեանց, զի ոչ մկրտեցան ի նմանէ։
31 [1]Արդ ո՞ւմ նմանեցուցից զմարդիկ ազգիս այս-
32 րիկ, և ո՞ւմ իցեն նմանողք։ Նմանն են մանկտւոյ
որ ի հրապարակս նստիցին, կարդայցեն զմիմեանս
և ասիցեն, փող հարաք ձեզ և ոչ կատարեցէք.
33 ողբացաք և ոչ լացէք։ Եկն Յովհաննէս մկրտիչ,
[2]ոչ ուտէր և ոչ ըմպէր", և ասէիք, Դեւ գոյ ի
34 նմա։ Եկն Որդի մարդոյ, ուտէ և ըմպէ, և ասէք,
Ահա այր կերող և արբեցող, բարեկամ մաքսա-
35 ւորաց և մեղաւորաց։ Եւ արդարացաւ իմաստու-
թիւն [3]յորդւոց իւրոց։
36 ԳԴ. Աղաչէր զնա ոմն ի փարիսեցւոցն զի կերիցէ
ճաշ ընդ նմա. և մտեալ ի տուն փարիսեցւոյն
37 բազմեցաւ։ Եւ կին մի էր ի քաղաքին մեղաւոր
իբրեւ գիտաց թէ բազմեալ է ի տան փարիսեցւոյն,
38 բերեալ շիշ մի իւղոյ ազնուի, կայր յետոյ առ
ոտս նորա, լայր, և արտասուօքն սկսաւ թանալ
զոտս նորա, և հերով գլխոյ իւրոյ ջնջէր. և համ-
39 բուրէր զոտս նորա և օծանէր իւղովն։ Եւ տեսեալ
փարիսեցւոյն որ կոչեաց զնա՝ ասէր ընդ միտս իւր,
Սա թէ մարգարէ ոք էր, ապա գիտէր թէ ով և
որպիսի ոք կին մերձենայ ի սա. զի մեղաւոր է։

---

[1]Ոմանք, Եւ ասէ Տէր, Արդ [2]Ոմանք, որոյ ն
օրինակ գ չգոյ., ոչ ուտէր հաց և ոչ ըմպէր գինի
[3]Բազումք, յամենայն որդւոց

40 Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա, Սիմոն, ու-
նիմ ինչ ասել քեզ. և նա ասէ, Ասա, Վարդա-
41 պետ. և ասէ, Երկու պարտապանք էին ուրուն
փոխատուի. մինն պարտէր հինգ հարիւր դահե-
42 կան, և մեւսն՝ յիսուն։ Եւ իրրեւ ոչ գոյր նոցա
հատուցանել, երկոցունց շնորհեաց. արդ ասա,
43 ո՞վ առաւել սիրեսցէ զնա։ Ասէ Սիմոն, Ինձ
այսպէս թուի եթէ որում զբազումն շնորհեաց. և
44 նա ասէ ցնա, Ուղիղ դատեցար։ Եւ դարձեալ ի
կինն կողմն, ասէ ցՍիմոն, Տեսանե՞ս զայս կին,
մտի ի տուն քո, ջուր ոտից իմոց ոչ ետուր. իսկ
սա արտասուօք իւրովք եթաց զոտս իմ, և [1]հե-
45 րով իւրով՝ ընջեաց։ Համբոյր մի դու ոչ ետուր
ինձ, սա աւասիկ յորմէ հետէ մտեալ եմ, ոչ դա-
46 դարեաց ի համբուրելոյ զոտս իմ։ Իւղով գլուխ
47 իմ ոչ օծեր, սա իւղով անուշիւ [2]օծ։ Վասն որոյ
ասեմ քեզ, Թողեալ լիցին սմա մեղք իւր բա-
զումք, զի յոյժ սիրեաց. զի որում շատ թողու-
48 ցու՝ շատ սիրէ, և որում սակաւ՝ սակաւ։ Եւ ասէ
49 ցնա, Թողեալ լիցին քեզ մեղք քո։ Եւ սկսան որ
բազմեալն էին ընդ նմա՝ ասել ընդ միտս իւրեանց,
50 Ո՞վ է սա որ զմեղս թողու։ Եւ նա ասէ ցկինն,
Հաւատք քո կեցուցին զքեզ, երթ ի խաղաղութիւն։

ԳԼ. Ը

1 ԳԵ. Եւ եղեւ յետ այնորիկ և ինքն շրջէր ընդ
քաղաքս և ընդ գեղս, քարոզէր և աւետարանէր
զարքայութիւն Աստուծոյ, և երկոտասանքն ընդ

---

[1]Ո՛ահ, հերով գլխոյ իւրոյ [2]Բազո՛ւմ, օծ զոտս իմ

2 նմա. եւ կանայք ոմանք որ բժշկեալ էին չարից եւ ի հիւանդութեանց. Մարիամ որ կոչէր
3 Մագդաղենացի, յորմէ եւթն դեւն ելեալ էր: եւ Յովաննա կին Փուզայ՝ հազարապետին Հերովդի, եւ Շուշան եւ այլք բազումք, որք պաշտէին [1]զնա յընչից իւրեանց:
4 Եւ ի ժողովել բազում ժողովրդոց, եւ ըստ քաղաքաց քաղաքաց եկելոցն առ նա, ասէ առակաւ,
5 Ել սերմանացան սերմանել զսերմանիս իւր. եւ ի սերմանելն իւրում էր որ անկաւ առ ճանապարհաւ եւ եղեւ կոխան, եւ թռչունք երկնից կերան
6 զնա: Եւ այլն անկաւ յապառաժի. եւ ընդ բուսանելն՝ չորացաւ առ ի չգոյէ հիւթոյ:
7 Եւ այլն անկաւ ի մէջ փշոց, եւ ընդ նմին բուսեալ փշոցն՝
8 հեղձուցին զնա: Եւ այլն անկաւ յերկիր բարի [2]և պարարտ՝, եւ բուսեալ՝ արար պտուղ հարիւրապատիկ. զայս իրրեւ խօսեցաւ, ասէ, Որ ունիցի ականջս լսելոյ լուիցէ:
9 Հարցանէին զնա աշակերտքն թէ Ցի՞նչ իցէ առակն:
10 Եւ նա ասէ, Ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեան Աստուծոյ, բայց այլոցն առակօք. զի տեսցեն և մի՛ տեսցեն, լուիցեն և մի՛ իմասցին:
11 Բայց առակն այս ինչ է. Սերմն բանն Աստուծոյ
12 է: Եւ որք առ ճանապարհաւն՝ այնոքիկ են որ լսեն, և ապա գայ Սատանայ հանէ զբանն ի սրտից
13 նոցա, զի մի՛ հաւատասցեն և ապրեսցին: Եւ որք յապառաժին, որք յորժամ լսիցեն, խնդութեամբ

---

[1]Ոմանք, զնոսա [2]Ի բազմս պակասէ

ընդունին զբանն, և արմատս ոչ ունիցին. որք առ
ժամանակ մի հաւատան, և ի ժամանակի փորձու-
14 թեան հեռանան: Իսկ որ ի մէջ փշոցն անկաւ՝
նոքա են, որ իբրեւ լսեն [1]զբանն, և ի հոգս և ի
մեծութիւն և ի ցանկութիւն աշխարհիս զբաղեալ,
15 հեղձնուն և անպտուղ լինին: Իսկ որ յերկիրն
պարարտ, որոց բարւոք և զուարթագին սրտիւ
լուեալ զբանն՝ ընդունին, և տան պտուղ համբե-
րութեամբ:

16 Ոչ ոք լուցանէ ճրագ, և թաքուցանէ ընդ կա-
բասեաւ կամ դնէ ընդ մահճօք. այլ ի վերայ աշ-
17 տանակի դնէ, զի որ մտանեն՝ զլոյս տեսցեն. Զիք
ինչ ծածուկ որ ոչ յայտ լիցի. և ոչ գաղտնի՝ որ
18 ոչ ծանիցի և եկեսցէ ի յայտ: Տեսէք այսուհետեւ
զիարդ լսէքդ. զի որ գուցէ՝ տացի նմա, և որ
ոչն գուցէ, և զոր կարծէն թէ ունիցի՝ բարձցի ի
նմանէ:

19 Եկին առ նա մայրն և եղբարք իւր, և ոչ կա-
20 րէին հասանել ի նա վասն բազմութեանն: Ա.զդ
եղեւ նմա և ասեն, Մայր քո և եղբարք քո կան
21 արտաքոյ և կամին զքեզ տեսանել: Եւ [2]ասէ ցնո-
սա, Մայր իմ և եղբարք իմ սոքա են, որ զբանն
Աստուծոյ լսեն և առնեն:

22 Գշ. Եւ եղեւ ի միում աւուրց ինքն եւ ի նաւ
և աշակերտքն նորա, և ասէ ցնոսա, Եկայք, անց-
23 ցուք յայնկոյս ծովակիս, և գնացին: Եւ մինչդեռ
նաւէին, ի քուն եմուտ. և էջ մրրիկ հողմոյ ի

---

[1] ի բազմս պակասէ [2] ի բազմս, նա պատասխանի
եւ ասէ

24 ծովակն և ուռնոյր, և տագնապէին։ Մատուցեալ
զարթուցին զնա և ասեն, Վարդապետ, վարդա-
պետ, կորնչիմք աւասիկ. և նա յարուցեալ սա-
տեաց հողմոյն և խառվութեան ջրոցն, և հանդար-
25 տեցին, և եղեւ խաղաղութիւն։ Ասէ ցնոսա, Ո՞ւր
են հաւատք ձեր. և զահի հարեալ զարմացան և
ասէին ցմիմեանս, Ո՞վ արդեւք իցէ սա, զի և
հողմոց և ջրոց հրամայ տայ, և հնազանդին սմա-
26 Եւ նաւեցին ի կողին յաշխարհն [1]Գերգեսացւոց, ո-
27 է յայնկոյս հանդէպ Գալիլեայ։ Եւ ընդ ելանել
նորա ի ցամաք, պատահեաց այր մի ի քաղաքէն,
յորում էին դեւք. և բազում ժամանակս չէ
հանդերձ զգեցեալ և ոչ ի տան բնակեալ, այլ
28 գերեզմանս։ Եւ տեսեալ զՅիսուս, աղաղակեաց
և անկաւ առաջի նորա, և ասէ մեծաձայն, Ի՞նչ
կայ իմ և քո, Յիսուս, Որդի Աստուծոյ բարձր-
29 ոյ, աղաչեմ զքեզ, մի՛ տանջեր զիս։ Քանզի հրա-
մայն տայր այսպէն պղծոյ ելանել ի մարդոյ անտի
զի բազում ժամանակս յափշտակեալ էր զնա, և
կապէր ի շղթայս, և պահէր յերկաթս, և խզէր
30 զկապանսն, և վարէր ի դիւէն յանապատս։ Եհար-
ցնա Յիսուս և ասէ, Զի՞նչ անուն է քեզ։ Եւ նա
ասէ, Լեգէովն. զի դեւք բազումք մտեալ էին
31 նա։ Եւ աղաչէին զնա զի մի՛ հրամայն տացէ նոցա
32 երթալ յանդունդս։ Եւ էր անդ երամակ մի խո-
զից բազմաց արօտականն ի լերինն, և աղաչէ-
զնա զի հրամայն տացէ նոցա մտանել ի նոսա։
33 հրամայեաց նոցա։ Եւ ելեալ դեւքն յառնէն մարդ-

---

[1] Ոմանք, Գադարացւոց

ի խոզեանն, և դիմեաց երամակն ի գահէ անտի ի
34 ծովակն և հեղձաւ։ Իրրեւ տեսին խոզարածքն զերան
որ եղեն՝ փախեան, և պատմեցին ի քաղաքին և
35 յագարական։ Եւ իրրեւ ելին տեսանել զգործն,
և եկին առ Յիսուս, և գտին զայրն՝ ուստի դեւքն
ելեալ էին, զգեցեալ և զգաստացեալ նստեր առ
36 ոտն Յիսուսի, և երկեան։ Պատմեցին նոցա որոց
37 տեսեալն էր թէ զիարդ փրկեցաւ դիւահարն։ Եւ
աղաչեր զնա ամենայն բազմութիւնն շուրջ զկող
մանքն [1]Գերգեսացւոց՝ գնալ [2]ի սահմանացն նո-
ցա՝, քանզի ահիւ մեծաւ տագնապէին. և նա
38 մտեալ ի նաւ՝ դարձաւ անդրէն։ Աղաչեր զնա
այրն ուստի դեւքն ելեալ էին՝ շրջել ընդ նմա.
39 արձակեաց [3]զնա և ասէ, Դարձ ի տուն քո և
պատմեա զոր միանգամ արար քեզ Աստուած.
գնաց ի քաղաքն և քարոզէր զոր ինչ արար նմա
Յիսուս։

40 Եւ իրրեւ դարձաւ անդրէն Յիսուս, ընկալաւ
զնա ժողովուրդն, քանզի ամենեքեան ակն ունէին
41 նմա։ Եւ ահա եկն այր մի որում անուն էր Յայ-
րոս, և նա էր իշխան ժողովրդեանն, անկեալ առ
ոտսն Յիսուսի՝ աղաչէր զնա մտանել ի տուն նո-
42 րա. Զի դուստր միամօր էր նորա ամաց իրրեւ եր-
կոտասանից, և էր մերձ ի մահ. և ընդ երթալն
նորա ժողովուրդքն նեղէին զնա։

43 Եւ կին մի էր ի տեառնտեսութեան արեան յա-
մաց երկոտասանից, ·[4]որում ոչ էր լինել հնար

---

[1]Ոմանք, Գադարացւոց [2]Յոյնն, ի նոցանէ [3]Ոմանք, զնա Յիսուս [4]Բազումք, որ ի բժիշկս ծախեալ էր զամենայն ինչս իւր որում

44 յումեքէ բժշկել։ Մատուցեալ յետոյ մերձեցաւ
ի քղանցս հանդերձի նորա. և նոյնժամայն եկաց
45 բղխումն արեան նորա։ Եւ ասէ Յիսուս, Ո՞վ է որ
մերձեցաւն յիս. իբրեւ ամենեքեան ուրանային,
ասէ Պետրոս և որ ընդ նմա էին, Վարդապետ,
46 ժողովուրդքդ պնդեն և նեղեն [1]զքեզ։ Եւ ասէ
Յիսուս, Ոմն մերձեցաւ յիս, քանզի գիտացի եթէ
47 զօրութիւն ել յինէն։ Իբրեւ ետես կինն եթէ ոչ
ծածկեցաւ [2]ի նմանէ, եկն դողալով և անկաւ ա-
ռաջի նորա, թէ վասն որոյ իրաց մերձեցաւ ի նա
պատմեաց առաջի ամենայն ժողովրդեանն, և թէ
48 որպէս բժշկեցաւ առ ժամայն։ Եւ ասէ, Քաջալե-
րեաց, դուստր, հաւատք քո կեցուցին զքեզ, երթ
ի խաղաղութիւն։
49 Եւ մինչդեռ նա խօսէր, գայ ոմն ի տանէ ժո-
ղովրդապետին և ասէ ցնա, Մեռաւ դուստրն քո,
50 մի՛ ինչ աշխատ առներ [3]զդա։ Իսկ Յիսուս իբրեւ
լուաւ, պատասխանի ետ նմա և ասէ, Մի՛ երկնչիր
51 միայն հաւատա, և կեցցէ։ Եւ մտեալ ի տունն
ոչ զոք եթող մտանել, բայց միայն զՊետրոս և
զՅակովբոս և զՅովհաննէս և զհայր մանկանն և
52 զմայրն նորա։ Լային ամենեքեան և կոծէին զնա
և նա ասէ, Մի՛ լայք, զի չէ մեռեալ, այլ ննջէ
53 Եւ նոքա ծաղր առնէին զնա, զի գիտէին թէ մե-
54 ռաւ։ Եւ նորա հանեալ զամենեսեան արտաքս,
55 կալաւ զձեռանէ նորա, բարբառեցաւ և ասէ, Ա-
56 րի, կաց, մանուկ դու։ Եւ դարձաւ ոգի նորա, և

---

[1]Ոմն, զքեզ, և դու ասես եթէ Ո՞վ մերձեցաւ
յիս [2]ի Յ---ն պ-ւ---ե [3]Բ---ղ---ս, զվարդապետ

կանգնեցաւ վաղվաղակի. և հրամայեաց տալ նմա
57 ուտել։ Եւ զարմացան ծնողքն նորա. և նա պա-
տուիրեր մի՛ ումեք ասել որ ինչ եղեւն։

ԳԼ. Թ

1 ԳԷ. Եւ կոչեցեալ [1]զերկոտասան առաքեալսն՝,
ետ նոցա զօրութիւն և իշխանութիւն ի վերայ ա-
2 մենայն դիւաց, և բժշկել զհիւանդութիւնս։ Եւ
առաքեաց զնոսա քարոզել զարքայութիւնն Աստու-
3 ծոյ և բժշկել զախտաժէտս։ Եւ ասէ ցնոսա, Մի՛
ինչ բառնայք ի ճանապարհ, մի՛ գաւազան և մի՛
մսխաղ, մի՛ հաց և մի՛ արծաթ, մի՛ երկուս հան-
4 դերձս ունիցիք։ Եւ յոր տուն մտանիցէք, անդ
5 ապրիք և անտի գնայցէք։ Եւ որք ոչ ընդունիցին
զձեզ, յորժամ ելանիցէք ի քաղաքէն յայնմանէ,
զփոշի ոտից ձերոց թօթափեսջիք ի վկայութիւն նո-
6 ցա։ Եւ ելեալ շրջէին [2]ընդ քաղաքս և՝ ընդ գեղս,
աւետարանէին և բժշկէին ընդ ամենայն տեղիս։
7 Լուաւ Հերովդէս չորրորդապետ զգործսն ամե-
8 նայն, և զարմանայր վասն ասելոյն յոմանց Եթէ
Յովհաննէս յարեաւ ի մեռելոց, և յոմանց՝ Թէ
Եղիա յայտնեցաւ, և յայլոց՝ Թէ Մարգարէ ոմն
9 յառաջնոցն յարեաւ։ Ասէ Հերովդէս, ԶՅովհան-
նէս ես գլխատեցի, իսկ սա ո՞վ իցէ զորմէ զայս-
պիսի իրս լսեմ. և խնդրէր տեսանել զնա։
10 Դարձան առաքեալքն և պատմեցին նմա զամե-
նայն զոր արարին. և առեալ զնոսա՝ խուսեաց

---

[1] Ոմանք, զերկոտասանեան, այլք՝ զերկոտասան աշա-
կերտս իւր [2] ի բազմս պակասէ

առանձինն ի տեղի անապատ քաղաքի միոյ, որում
11 անուն էր Բեթսայիդա: Եւ ժողովուրդքն իբրեւ
գիտացին, գնացին զհետ նորա. և ընկալեալ զնո-
ա՝ խօսէր ընդ նոսա վասն արքայութեան Աստու-
ծոյ, և որոց պէտք էին բժշկութեան՝ բժշկէր:
12 Եւ օրն սկսաւ տարաժամել. մատեան երկոտա-
ասանքն և ասեն ցնա, Արձակեա զժողովուրդսդ, զի
երթեալ շուրջ ի գեղսն և յագարակս, հանդիցեն
և գտցեն կերակուր, զի աստ յանապատի տեղւոջ
13 եմք: Ասէ ցնոսա, Դուք տուք դոցա ուտել. և նո-
քա ասեն, Ոչ գոյ մեր աւելի քան զհինգ նկանակ
և զերկուս ձկունս, բայց եթէ երթիցուք գնեացուք
14 բաւական ժողովրդեանդ կերակուր: Քանզի էին
արք իբրեւ հինգ հազար: Ասէ ցաշակերտան, Բազ-
մեցուցէք զդոսա դասս դասս՝ հիսուն հիսուն: Եւ
արարին այնպէս, և բազմեցուցին զամենեսեան:
16 Եւ առեալ զհինգ նկանակն և զերկուս ձկունսն
հայեցաւ յերկինս, օրհնեաց և եբեկ և տայր ցա-
17 շակերտան՝ արկանել ժողովրդեանն: Կերան և յա-
գեցան ամենեքեան, և բարձին զնշխարս կոտորոց
երկոտասան սակառս:
18 Դէպ եւ եղեւ ի կալն նորա յաղօթս առանձինն
էին ընդ նմա և աշակերտքն նորա. եհարց զնոսա
և ասէ, Զո՞ ոք ասեն զիս էնէն ժողովուրդքն թէ ի
19 ցեմ: Եւ նոցա պատասխանի տուեալ ասեն, ԶՅով-
հաննէս Մկրտիչ. և այլք՝ զԵղիա. իսկ այլք թէ
20 Մարգարէ ոք յառաջնոցն յարեաւ: Ասէ ցնոսա,
Իսկ դուք զո՞ ոք ասէք զիս էնէմ. պատաս-
խանի եւ Պետրոս և ասէ, Զքրիստոսն Աստուծոյ
21 Նա ասաստեաց ի նոսա, և պատուիրեաց մի՛ ումի

22 ասել զայն՝ եւ ասէ թէ Պարտ է Որդւոյ մարդոյ
բազում չարչարել եւ անարգել ի քահանայապե-
տից եւ ի ծերոց եւ ի դպրաց, եւ սպանանել եւ յե-
23 րիր աւուր յառնել։ Եւ ասէր առ ամենեսին, Եթէ
ոք կամի զկնի իմ գալ, ուրասցի զանձն եւ առցէ
24 զխաչ իւր հանապազ եւ եկեսցէ զկնի իմ։ Զի որ
կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա, եւ
որ կորուսցէ զանձն իւր վասն իմ՝ կեցուսցէ զնա։
25 Զի՞նչ օգուտ է մարդոյ եթէ [1]զաշխարհ շահեսցի,
26 եւ զանձն իւր կորուսցէ կամ տուժեսցի։ Զի որ
ամօթ համարեսցի զիս եւ զբանս իմ, զնա եւ Որդի
մարդոյ յամօթ արասցէ յորժամ գայցէ փառօք
27 իւրով եւ Հօր եւ հրեշտակաց սրբոց։ Բայց արդա-
րեւ ասեմ ձեզ եթէ են ոմանք ի դոցանէ որ այդր
կան, որք մի՛ ճաշակեսցեն զմահ, մինչեւ տեսցեն
զարքայութիւնն Աստուծոյ։
28 Եւ եղեւ յետ այսց բանից իբրեւ աւուրք ութ,
առեալ զՊետրոս եւ զՅակովբոս եւ զՅովհաննէս՝ ել
29 ի լեառն կալ յաղօթս։ Եւ ի կալն նմա յաղօթս՝
եղեւ տեսիլ երեսաց նորա այլակերպ, եւ փոխեցաւ
30 հանդերձ նորա եւ եղեւ ապիտակ փայլուն։ Եւ ահա
արք երկու խօսէին ընդ նմա, որ էին Մովսէս եւ
31 Եղիա, երեւեալ փառօք, եւ ասէին զելիցն նորա
32 զոր կատարելոց էր յԵրուսաղէմ։ Իսկ Պետրոս եւ
որ ընդ նմայն էին ծանրացեալք ի քնոյ, զարթեան
եւ տեսին զփառսն նորա եւ զերկուս արսն որ կային
33 առ նմա։ Եւ եղեւ ի մեկնելն նոցա ի նմանէ, ասէ
Պետրոս ցՅիսուս, Վարդապետ, բարւոք է մեզ

---

[1] Յոյն, զաշխարհ ամենայն

ասա լինել, և արասցուք երիս տաղաւարս, մի քեզ
և մի Մովսէսի և մի Եղիայի, և ոչ գիտէր զինչ
34 խօսէր: Եւ իբրեւ զայս ասաց, եկն ամպ և հովանի
եղեւ ի վերայ նոցա. և երկեան ի մտանելն նոցա
35 ընդ ամպովն: Զայն եղեւ յամպոյն և ասէ, Դա է
36 Որդի իմ ընտրեալ, դմա լուարուք: Եւ ընդ լինել
բարբառոյն՝ գտաւ Յիսուս միայն. և ինքեանք
լռեցին, և ոչ ումեք պատմեցին յաւուրսն յայնո-
սիկ և ոչինչ յորոց տեսին:
37 ԴԲ. Եւ եղեւ ի վաղիւն մինչ իջանէին նոքա ի
լեառնէ անտի, ընդ առաջ եղեւ նմա ժողովուրդ
38 բազում: Եւ ահա այր մի ի ժողովրդենէ անտի
աղաղակեաց և ասէ, Վարդապետ, աղաչեմ զքեզ,
39 հայեաց յորդի իմ, զի միամօր է ինձ: Եւ ահա
այս հարկանի ի նմա, և յանկարծ գոչէ. և զար-
կուցանէ զնա և թաւալեցուցանէ զնա և փրփրե-
ցուցանէ, և հազիւ մեկնի ի նմանէ՝ խորտակեալ
40 զնա. Եւ աղաչեցի զաշակերտսն քո զի հանցեն
41 զնա, և ոչ կարացին: Պատասխանի ետ Յիսուս և
ասէ, Ով ազգ անհաւատ և թեւր, մինչեւ երբ
եղէց ընդ ձեզ և անասցեմ ձեզ. մատո այսր զոր-
42 դին քո: Եւ մինչդեռ մատչէր, զարկոյց զնա դեւն
43 և շարժեաց: Սաստեաց Յիսուս այսոյն պղծոյ, և
44 բժշկեաց զմանուկն և ետ զնա հօրն իւր: Եւ զար-
մանային ամենեքեան ի վերայ մեծամեծացն Ա-
ստուծոյ:

Եւ ի զարմանալն ամենեցուն ի վերայ ամենայն
զոր առնէր, ասէ ցաշակերտսն իւր, Դիք դուք ի

---

[1] Որդի, սիրելի

լսելիս ձեր զբանս զայսոսիկ, զի Որդի մարդոյ մատ-
45 նելոց է ի ձեռս մարդկան: Եւ նոքա ոչ գիտէին
զբանն, և էր ծածկեալ ի նոցանէ զի մի՛ գիտասցեն.
և երկնչէին հարցանել ցնա վասն բանին այնորիկ:
46 Եմուտ խորհուրդ ի նոսա թէ ո՛ արդեւք մեծ իցէ
47 ի նոցանէ: Յիսուս իբրեւ ծանեաւ զխորհուրդս
սրտից նոցա, առ մանուկ մի, կացոյց ի մէջ նոցա
48 առ իւր, Եւ ասէ ցնոսա, Որ ոք ընկալցի զմանուկս
զայս յանուն իմ՝ զիս ընդունի, և որ զիս ընդու-
նիցի՝ ընդունի զառաքիչն իմ. զի որ փոքրիկն է յա-
մենեսին ի ձեզ՝ նա եղիցի մեծ:
49 Դ. Պատասխանի ետ Յովհաննէս և ասէ, Վար-
դապետ, տեսաք զոմն որ յանուն քո դեւս հա-
50 նէր, և արգելաք զնա, զի ոչ շրջի ընդ մեզ: Ասէ
ցնոսա Յիսուս, Մի՛ արգելուք զնա, զի որ ոչն է
[1]ձեր թշնամի՝ ի [1]ձեր կողմն է:
51 Եւ եղեւ ի կատարել աւուրց վերանալոյ նորա,
և ինքն զերեսս հաստատեաց երթալ յԵրուսա-
52 ղէմ, Եւ առաքեաց հրեշտակս առաջի երեսաց իւ-
րոց. և իբրեւ չոգան, մտին ի գեղ մի Սամարաց-
53 ւոց՝ պատրաստել ինչ նմա: Եւ ոչ ընկալան զնա,
զի գէմ եղեալ էր նորա երթալ յԵրուսաղէմ:
54 Իբրեւ տեսին աշակերտքն, Յակովբոս և Յովհան-
նէս, ասեն, Տէր, կամի՞ս զի ասասցուք, և իջցէ
55 հուր յերկնից և սատակեացէ [2]զնոսա: Դարձաւ
աստեաց [3]ի նոսա և ասէ, Ոչ գիտէք որոյ հոգւոյ
56 էք դուք. Զի Որդի մարդոյ ոչ եկն զոգիս մարդ-

---

[1] Ոմանք, մեր [2] Ոմանք, զնոսա, որպէս արար Եղիա
[3] Ոմանք, ի նոսա: (56) Եւ գնացին յայլ գեղ

կան կորուսանել, այլ կեցուցանել. և գնացին
57 յայլ գեղ։ Եւ մինչդեռ երթային նոքա ի ճանա-
պարհի, ասէ ոմն ցնա, Եկից զկնի քո ամենայն
58 և երթիցես։ Ասէ ցնա Յիսուս, Աղուեսուց որջք
գոն, և թռչնոց երկնից՝ դադարք, և Որդւոյ մար-
դոյ ոչ գոյ ուր դիցէ գլուխ։
59 Ասէ ցմեւս եւս, Եկ զկնի իմ. և նա ասէ, Տէր,
հրամայեա ինձ երթալ նախ թաղել զհայր իմ։
60 Ասէ ցնա Յիսուս, Թող զմեռեալսն թաղել զմե-
ռեալս իւրեանց, և դու երթ պատմեա զաւրքայու-
թիւնն Աստուծոյ։
61 Ասէ և այլ ոմն, Եկից զկնի քո, Տէր, բայց նախ
62 հրամայեա ինձ հրաժարել ի տանէ իմմէ։ Ասէ
ցնա Յիսուս, Ոչ ոք արկանէ ձեռն զմածաղ և
հայիցի յետս, եթէ յաջողեալ իցէ աւրքայութեան
Աստուծոյ։

ԳԼ. Ժ

1 ԴԴ. Յետ այսորիկ երեւեցոյց Տէր և այլ եւս ¹եւ-
թանասուն և երկուս՝. և առաքեաց զնոսա եր-
կուս երկուս առաջի իւր յամենայն քաղաքս և ի
2 տեղիս ուր ինքն երթալոց էր։ Եւ ասէ ցնոսա,
Հունձք բազումք են և մշակք սակաւ. արդ աղա-
չեցէք զՏէր հնձոց, զի հանցէ մշակս ի հունձս իւր։
3 Երթայք, ահա առաքեմ զձեզ իբրեւ զգառինս ի
4 մէջ գայլոց։ Մի՛ բառնայք քսակ, մի՛ մախաղ,
մի՛ կօշիկս, և ի ճանապարհի ումեք ողջոյն մի՛ տայ-
5 ցէք։ Յոր տուն մտանիցէք, նախ ասասջիք թէ Ող-

---

¹Բազում՛, եւ թանասուն

6 ջոյն տանս այսմիկ. Եւ եթէ իցէ անդ որդի ողջու-
նի, հանգիցէ ի վերայ նորա ողջոյնն ձեր. ապա
7 թէ ոչ՝ ի ձեզ դարձցի: Եւ ի նմին տան ագանի-
ջիք, ուտիջիք և ըմպիջիք ի նոցանէ. զի արժանի
է մշակն վարձու իւրոյ. մի՛ փոխիցիք տանէ ի տուն:
8 Ցոր քաղաք մտանիցէք և ընդունիցին զձեզ, ու-
9 տիջիք զինչ առաջի դնիցեն ձեր. Եւ բժշկեսջիք
որ ի նմա հիւանդք իցեն, և ասասջիք նոցա, Մեր-
ձեալ է ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ:
10 Իսկ յոր քաղաք մտանիցէք և ոչ ընդունիցին զձեզ,
իրրեւ ելանիցէք ի հրապարակս նորա, ասասջիք,
11 Եւ զփոշիս որ կռուեալ է ի քաղաքէ ձերմէ յոտս
մեր՝ թօթափեացուք ի ձեզ. բայց զայս գիտասջիք
12 զի մերձեալ է արքայութիւն Աստուծոյ[1]: Ասեմ
ձեզ, զի Սոդոմացւոց ընդարձակագոյն լիցի յա-
13 ւուրն յայնմիկ քան քաղաքին այնմիկ: Վա՜յ քեզ,
Քորազին. վա՜յ քեզ, Բեդսայիդա. զի եթէ ի Տիւ-
րոս և ի Սիդովն եղեալ էին զօրութիւնքն որ եղեն
ի ձեզ՝ վաղուց եւս արդեւք ի խորտ և ի մոխիր
14 նստեալ ապաշխարեալ էր: Բայց Տիւրոսի և Սի-
դովնի ընդարձակագոյն լիցի ի դատաստանի քան
15 ձեզ: Եւ դու, Կափառնայում, որ մինչեւ յերկինս
16 բարձրացեալ ես, մինչեւ ի դժոխս իջցես: Որ ձեզ
լսէ՝ ինձ լսէ, և որ զձեզ անարգէ՝ զիս անարգէ.
և որ զիս անարգէ՝ զառաքիչն իմ անարգէ. [2]և
որ ինձ լսէ՝ լսէ այնմիկ որ զիս առաքեաց:"
17 Դարձան [3]եւթանասունն և երկուքն՝ խնդութեամբ

---

[1] Որ ձեզ լսէ ինձ լսէ, և որ զձեզ անարգէ զիս անարգէ, ի վերայ ձեր
[2] ի շարս պակաս [3] Բազմ., եւթանասունքն

և ասեն, Տէր, և դեւք հնազանդին մեզ յանուն
18 քո։ Եւ ասէ ցնոսա, Տեսանէի զՍատանայ անկեալ
19 յերկնից իբրեւ զփայլակն։ Ահա ետու ձեզ իշխա
նութիւն կոխել զօձս և զկարիճս և զամենայն զո
րութիւն թշնամւոյն, և ձեզ ոչինչ մեզանչիցեն։
20 Բայց ընդ այն մի՛ խնդայք եթէ այսք հնազանդին
ձեզ. այլ խնդացէք զի անուանք ձեր գրեալ են
յերկինս։
21 Ի նմին ժամու ցնծացաւ Յիսուս Հոգւովն [1]Սրբով
և ասէ, Գոհանամ զքէն, Հայր, Տէր երկնից և
երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստնոց և ի գիտ.
նոց, և յայտնեցեր զայս տղայոց. այո, Հայր, զի
22 այսպէս հաճոյ եղեւ առաջի քո։ Ամենայն ինչ
ետուաւ ինձ ի Հօրէ իմմէ. և ոչ ոք գիտէ թէ ո՞վ
է Որդի, եթէ ոչ՝ Հայր. և ո՞ւ է Հայր, եթէ ոչ
Որդի, և ումի կամիցի Որդին յայտնել։
23 Եւ դարձեալ առանձինն առ աշակերտսն ասէ,
24 Երանի աչաց որ տեսանիցեն զոր տեսանէք դ։ Ասեմ
ձեզ, զի բազումք մարգարէք և թագաւորք կամե
ցան տեսանել զոր դուք տեսանէք, և ոչ տե
սին. և լսել զոր լսէք դ, և ոչ լուան։
25 Դե՛ւ Եւ ահա յարեաւ ոմն օրինական, փորձէր
զնա և ասէր, Վարդապետ, զի՞նչ գործեցից զի
26 զկեանան յաւիտենական ժառանգեցից։ Եւ նա
ասէ ցնա, Յօրէնս զի՞նչ գրեալ է, ո՞րպէս կ
27 թերծնուս։ Նա պատասխանի ետ և ասէ, Սիրեսցե
զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ և
յամենայն անձնէ քումմէ և յամենայն զօրութենէ

---

[1] Յոհան պոլոխ

քումմէ և յամենայն մեռաց քոց, և զընկեր քո
28 իբրեւ զանձն քո: Եւ ասէ ցնա, Ուղիղ եռուր
29 զպատասխանիդ, զայդ արա և կեցցես: Նա իբրեւ
կամեցաւ զանձն արդարացուցանել, ասէ ցՅիսուս,
30 Եւ ո՞վ է իմ ընկեր: Պատասխանի ետ Յիսուս և
ասէ, Այր մի իջանէր յԵրուսաղեմէ յԵրիքով, և
անկաւ ի ձեռս աւազակաց, որք մերկացին զնա և
վէրս ի վերայ եդին, թողին կիսամահ և գնացին:
31 Դէպ եղեւ քահանայի միոջ իջանել ընդ նոյն ճա-
32 նապարհ, և տեսեալ զնա՝ զանց արար: Նոյնպէս
և Ղեւտացի մի եկեալ ընդ նոյն տեղի՝ եւս և
33 զանց արար: Սամարացի ոմն ճանապարհորդեալ
եկն ընդ նոյն առ նովաւ, և տեսեալ զնա գթա-
34 ցաւ: Եւ մատուցեալ պատեաց զվէրս նորա, ար-
կեալ ի վերայ ձէթ և գինի. և եդեալ ի վերայ
գրաստու իւրոյ՝ ած զնա ի պանդոկի մի, և դար-
35 մանեաց զնա: Եւ ի վաղիւ անդր իբրեւ ելանէր ան-
տի, հանեալ ետ ցպանդոկապետն երկուս դահեկանս
և ասէ, Դարմանն տար դմա, և զոր ինչ ծախեացես
ի դա՝ ի միւսանգամ գալստեան իմում հատուցից
36 քեզ: Արդ ո՞ յերեցունց ի նոցանէ թուի քեզ մեր-
37 ձաւոր լեալ անկելոյն ի ձեռս աւազակացն: Եւ նա
ասէ, Որ արար ողորմութիւնն ի վերայ նորա:
Ասէ ցնա Յիսուս, Երթ և դու արա նոյնպէս:
38 Եւ եղեւ ի գնալն նոցա, և ինքն եմուտ ի գեղ
մի. և կին ոմն անուն Մարթա ընկալաւ զնա ի
39 տան իւրում: Եւ նորա էր քոյր մի, որում անուն
էր Մարիամ, որ և եկն նստաւ առ ոտն Տեառն
40 և լսէր զբանս նորա: Եւ Մարթա զբաղեալ էր ի
բազում սպասու, եկն եկաց առ նմա և ասէ, Տէր,

ոչի՞նչ է փոյթ քեզ, զի քոյրդ իմ միայն ետող
զիս ի սպասու. սրդ ասա դմա զի օգնեսցէ ինձ։
41 Պատասխանի ետ Յիսուս և ասէ, Մարթա, Մար-
թա, դու հոգաս և զբաղում իւիք զբաղեալ ես,
42 Բայց [1]ասա սակաւ՝ ինչ պիտոյ է. Մարիամ մասն
բարի ընտրեաց, որ ոչ բարձցի ի ամանէ։

ԳԼ. ԺԱ

1 ԴՋ. Եւ եղեւ ի տեղւոջ ուրեք կալ յաղօթս.
և իբրեւ դադարեաց, ասէ ցնա ոմն յաշակերտացն
իւրոց, Տէր, ուսո մեզ յաղօթս կալ, որպէս և
2 Յովհաննէս ուսոյց աշակերտացն իւրոց։ Ասէ ցնո-
սա, Յորժամ կայցէք յաղօթս, ասասջիք, Հայր
[2]մեր, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայու-
3 թիւն [3]քո։ Զհաց մեր հանապազորդ տուր մեզ
4 [4]զօրըսաօրէն։ Եւ թող մեզ զմեղս մեր, զի և մեք
թողումք ամենայնի որ պարտիցի մեզ. և մի՛ տա-
նիր զմեզ ի փորձութիւն[5]։
5 Եւ ասէ ցնոսա, Ո՞վ է ի ձէնջ որոյ իցէ բարե-
կամ, և երթայցէ առ նա ի մէջ գիշերի և ասիցէ
ցնա, Բարեկամ, տուր ինձ փոխ երիս նկանակս
6 Զի բարեկամ իմ եկն առ իս յուղեւոյ, և ոչ ինչ
7 ունիմ դնել առաջի նորա։ Եւ նա ի ներքուստ
տայցէ պատասխանի և ասիցէ, Մի՛ աշխատ առներ
զիս, զի դուրգդ փակեալ են, և մանկունքս ընդ

---

[1]Բազմ. մի [2]Ոմանք, մեր որ յերկինս [3]Ոմանք,
քո, եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի
[4]Յոյնն, օրըսաօրէ [5]Ոմանք յաւելուն, այլ փրկեա
զմեզ ի չարէ

ինձ կան յանկողնի, ոչ կարեմ յառնել և տալ
8 քեզ։ Ասեմ ձեզ, եթէ ոչ յարուցեալ տայցէ նմա
վասն բարեկամութեանն, սակայն վասն ժառ-
թեանն յարուցեալ տայցէ նմա զինչ և պիտոյ
9 իցէ։ Եւ ես ասեմ ձեզ, խնդրեցէք և տացի ձեզ,
10 հայցեցէք և գտջիք, բախեցէք և բացցի ձեզ։ Զի
ամենայն որ խնդրէ՝ առնու, և որ հայցէ՝ գտանէ,
11 և որ բախէ՝ բացցի նմա։ Ցո՞ ոք ի ձէնջ հայր՝
խնդրիցէ որդի իւր ձուկն, միթէ փոխանակ ձկանն
12 օ՞ձ տայցէ նմա։ Եւ կամ խնդրիցէ ձու, միթէ
13 կարի՞ճ տայցէ նմա։ Իսկ եթէ դուք որ չարքդ էք՝
գիտէք պարգեւս բարիս տալ որդւոց ձերոց, ո՛ր-
չափ եւս առաւել Հայր ձեր յերկնից տացէ [1]բա-
րիս այնոցիկ, որ խնդրեն ի նմանէ։
14 Դէ· Եւ հանէր դեւ մի համր, և եղեւ յելանել
դիւին խօսեցաւ համրն, և զարմացան ամենայն
15 ժողովուրդքն։ Եւ ոմանք ի նոցանէ ասեն, Բէեղ-
16 զեբուղաւ իշխանաւն դիւաց հանէ դա զդեւս։ Եւ
այլք փորձէին և նշան յերկնից խնդրէին ի նմանէ։
17 Իսկ նորա գիտացեալ զխորհուրդս նոցա, ասէ ցնո-
սա, Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն՝
18 աւերի, և տուն բաժանեալ յանձն՝ կործանի։ Ա-
պա եթէ և Սատանայ բաժանեցաւ յանձնէ,
զիա՞րդ կայցէ թագաւորութիւն նորա. զի ասէք
զինէն եթէ Բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց հանէ
19 դա զդեւս։ Եթէ ես Բէեղզեբուղաւ հանեմ զդեւս,
որդիքն ձեր ի՞ւ հանիցեն. վասն այդորիկ նոքին
20 եղիցին ձեր դատաւորք։ Իսկ եթէ մատամբ Ա-

---

[1]Բ—ղ—մ, Հոգի Սուրբ

տուծոյ հանեմ զդեւս, ապա հասեալ է ի վերայ
21 ձեր արքայութիւն Աստուծոյ։ Յորժամ հզօր, ա-
ռեալ պահիցէ զտուն իւր, ի խաղաղութեան են
22 ինչք նորա։ Բայց եթէ հզօրագոյն քան զնա ի վ-
րայ եկեալ յաղթեացէ նմա, զպատառազինութիւնն
նորա հանէ յոր յուսացեալ էր, և զաւար նորա
23 բաշխեացէ։ Որ ոչ է ընդ իս՝ հակառակ իմ է, և
որ ոչ ժողովէ ընդ իս՝ ցրուէ։
24 Յորժամ այսն պիղծ ելանիցէ ի մարդոյ, շրջի
ընդ անջրդին տեղիս, խնդրէ հանգիստ. և իբրեւ
ոչ գտանէ, ասէ, Դարձայց անդրէն ի տուն իմ
25 ուստի ելի։ Եւ գայ գտանէ մաքրեալ և յարդա-
26 րեալ։ Յայնժամ երթայ և առնու եւթն այլ այս-
չար եւս քան զինքն, և մտանէ բնակէ անդ. և
լինի յետինն մարդոյն այնորիկ չար քան զառաջինն։
27 Եւ եղեւ մինչդեռ խօսէր զայս, ձայն երարձ կի-
մի ի ժողովրդենէ անտի և ասէ, Երանի է որովայ-
նին որ կրեացն զքեզ, և առեանցն որ դիեցուցին
28 զքեզ։ Եւ նա ասէ, Նա երանի այնոցիկ է, ո՛
լսեն զբանն Աստուծոյ և պահիցեն։
29 Եւ ի դիզանել ի վերայ նորա ժողովրդոցն՝ սկը-
սաւ ասել, Ազգս այս [1]ազգ չար է, նշան խնդրէ,
և նշան չտրկնիցէ ոչ տացի ամն՝ բայց նշանն [2]Յով-
30 նանու։ Զի որպէս եղեւ Յովնան նշան Նինուէ-
ացւոց, նոյնպէս եղիցի և Որդի մարդոյ ազգիս
31 այսմիկ։ Դշխոյն Հարաւոյ յարիցէ ի դատաստան
ընդ արս ազգիս այսորիկ և դատապարտեսցէ զա-

---

[1] Յոմանս պակասէ [2] Ոմանք, Յովնանու մարգարէ
պրպէս և ոմանք ի Հայերէն օրինակս

զի եկն ի ծագաց երկրի լսել զիմաստութիւնն Սողոմոնի. և ահա առաւել քան զՍողոմոն է
32 աստ։ Արք Նինուէացիք յարիցեն ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ և դատապարտեացեն զսա, զի ապաշխարեցին ի քարոզութեան Յովնանու. և ահա առաւել քան զՅովնան է աստ։
33 ԵԿ. Ոչ ուրուք լուցեալ ճրագ գնէ ի թաքստեան[1], այլ ի վերայ աշտանակի, զի որ մտանեն՝
34 լոյս տեսանիցեն։ Ճրագ մարմնոյ ակն է. յորժամ ակնն առատ է, ամենայն մարմինն լուսաւոր եղիցի. և երբ ակն չար է, և մարմինն խաւարին եղիցի։
35 Արդ զգույշ լեր, գուցե լոյսդ որ ի քեզ է՝
36 խաւար իցէ։ Եթէ մարմինդ քո ամենայն լուսաւոր է և չգուցէ մնան ինչ խաւարին, եղիցի լուսաւոր ամենայն. որպէս յորժամ ճրագն նշողիւք լուսաւորեսցէ զքեզ։
37 Եւ մինչդեռ խօսէր զայս, աղաչէր զնա ոմն փարիսեցի զի ճաշ կերիցէ առ նմա. և նա մտեալ
38 բազմեցաւ։ Իբրեւ ետես փարիսեցին, զարմացաւ,
39 զի նախ ոչ մկրտեցաւ յառաջ քան զճաշ։ Ասէ ցնա Տէր. Այժմ դուք, փարիսեցիք, զարտաքին բաժակին և զպնակին սրբէք, և ներքինն ձեր լի է
40 յափշտակութեամբ և չարութեամբ։ Անմիտք, ո՞չ ապաքէն որ զարտաքինն արար՝ և զներքինն նոյն
41 արար։ Բայց աղէ [2]զարժանն իսկ՝՝ տուք ողորմութիւն, և ահա ամենայն սուրբ է ձեր։
42 Այլ վա՛յ ձեզ փարիսեցւոց, զի տասանորդէք զանանուխ և

---

[1] Բառ՝ յատեան, և ոչ ընդ գրաւանաւ

[2] Յոյն, զոր ի ներքս են՝ ետ, զոր ունիքն՝

զփեգենա և զամենայն բանջար, և անցանէք զիրա-
ւամբք և զսիրոյն Աստուծոյ. զայս արժան էր
43 առնել և զայնոսիկ ոչ անցանել: Վա՛յ ձեզ փարի-
սեցւոց, զի սիրէք զբարձրագահս ի ժողովուրդս և
44 [1]զնախադիմսն ի հրապարակս: Վա՛յ [2]ձեզ, զի էք
դուք իբրեւ զգերեզմանս անյայտս, և մարդիկ գնան
45 ի վերայ և ոչ գիտեն: Պատասխանի ետ ումն յօրի-
նակացն և ասէ ցնա, Վարդապետ, զայդ բան
46 ասելով և զմեզ թշնամանես: Եւ նա ասէ, Եւ
ձեզ վա՛յ օրինականացդ, զի բառնայք մարդկան
բեռինս դժուարակիրս, և դուք մատամբ ձիով ի
47 բեռինն ոչ մերձենայք: Վա՛յ ձեզ, զի շինէք զգի-
բիս մարգարէիցն, և հարքն ձեր սպանին զնոսա:
48 Ապա ուրեմն [3]վկայէք եթէ կամակիցք էք գործոց
հարցն ձերոց. զի նոքա կոտորեցին զնոսա, և դուք
49 զգերեզմանս նոցա շինէք: Վասն այնորիկ իմաս-
տութիւնն Աստուծոյ ասաց, Առաքեցից ի նոսա
մարգարէս և առաքեալս, և ի նոցանէ սպանանի-
50 ցեն և հալածիցեն: Զի խնդրեսցի արիւն ամենայն
մարգարէից հեղեալ ի սկզբանէ աշխարհի յազգէ
51 յայդմանէ, Յարեհէն Աբելի մինչեւ ցարիւնն Զա-
քարեայ կորուսելոյ ընդ սեղանն և ընդ տաճարա-
այո, ասեմ ձեզ, խնդրեսցի յազգէդ յայդմանէ:
52 Վա՛յ ձեզ օրինականացդ, զի թաքուցանէք զգի-
կանս գիտութեանն. դուք ոչ մտանէք, և որ մտա-
նելոցն են՝ արգելուք:
53 [4]Եւ ի խօսելն զայս ամենայն առ նոսա՝ առա՛ջ

---

[1] Յունն, զողջոյնս [2] Ոմանք, ձեզ դպրաց և փարի-
սեցւոց կեղծաւորաց [3] Ոմանք, վկայէք և կա-
մակիցք [4] Ոմանք, Յելանելն նորա արտաքս

ամենայն ժողովրդեանն, զամենից հարկանէին. և
սկսան դպիրքն և փարիսեցիք զչարել և գրգռել
54 ընդ նմա վասն բազումս իրաց. Եւ սպասել որսալ
ինչ բանս ի բերանոյ նորա, [1]զի չարախօսեսցեն
զնմանէ։"

ԳԼ. ԺԲ

1 Որովք ի կուտել բիւրաւորաց ժողովրդեանն մին-
չեւ կոխել զմիմեանս, սկսաւ ասել ցաշակերտսն
իւր. Նախ զգոյշ լերուք անձանց ի խմորոյ փարի-
2 սեցւոցն, որ է կեղծաւորութիւն։ Զի ոչ ինչ է ի
ծածուկ որ ոչ յայտնեսցի, և գաղտնի՝ որ ոչ ծա-
3 նիցի։ Վասն զի զոր ինչ ասիցէք ի խաւարի՝ լսելի
լիցի ի լոյս. և զոր յունկանէն խօսեցարուք ի շտե-
4 մարանս՝ քարոզեսցի ի վերայ տանիցաց։ Բայց ձեզ
ասեմ սիրելեաց իմոց, Մի՛ զարհուրիցիք յայնցանէ
որ սպանանեն զմարմին, և յետ այնորիկ աւելի ինչ
5 ոչ ունիցին առնել. Այլ ցուցից ձեզ յումէ եր-
կնչիցիք. երկնչիջիք յայնմանէ որ յետ սպանա-
նելոյ ունի իշխանութիւն արկանել ի գեհեն. այո,
6 ասեմ ձեզ, յայնմանէ երկնչիջիք։ Ո՞չ ապաքէն
հինգ [2]ձագ երկուց դանգաց վաճառի, և մի ի նո-
7 ցանէ ոչ է մոռացեալ առաջի Աստուծոյ։ Այլ
ձեր և ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ է. մի՛
երկնչիք, զի քան զբազումս ձագս լաւ էք դուք։
8 Ասեմ ձեզ զի Ամենայն որ խոստովանեսցի յիս
առաջի մարդկան, և Որդի մարդոյ խոստովանեսցի
9 զնմանէ առաջի հրեշտակաց Աստուծոյ։ Եւ որ ու-

---

[1]Յոան. գլ. ը. [2]ճնճղուկ. տե՛ս Մատթ. ժ. 29։

բասցի զիս առաջի մարդկան՝ ուրացեալ լինի ա-
10 ռաջի հրեշտակաց Աստուծոյ։ Եւ ամենայն որ ասէ
բան զՈրդւոյ մարդոյ՝ թողցի նմա, բայց որ զՀոգին
11 Սուրբ հայհոյեցէ՝ մի՛ թողցի նմա։ Այլ յորժամ
տանիցին զձեզ ի ժողովուրդս և ի պետութիւնս և
յիշխանութիւնս, մի՛ հոգայցէք որպէս [1]թէ զի՛նչ
12 պատասխանի տայցէք կամ զի՛նչ ասիցէք։ Զի Հո-
գին Սուրբ ուսուսցէ ձեզ ի նմին ժամու զինչ
պարտ իցէ խօսել։
13 ԵԲ. Ասէ ոմն ի ժողովրդենէն ցնա, Վարդապետ
ասա ցեղբայրն իմ բաժանել ընդ իս զժառանգու-
14 թիւնն։ Եւ նա ասէ ցնա, Այր դու, ո՞ կացոյց զիս
15 դատաւոր կամ բաժանարար ի վերայ ձեր։ Եւ
ասէ ցնոսա, Տեսէք և զգուշ լերուք [2]յամենայն ա-
գահութենէ՝ զի ոչ եթէ ի մթերից ընչից ուրուք
16 իցեն կեանք նորա։ Խօսեցաւ առ նոսա առակ մի
և ասէ, Արն ուրումն մեծատան եռուն անդր
17 առհմականս. Եւ խորհէր ի միտս իւր և ասէր, Զի
գործեցից, զի ոչ գոյ տեղի ուր ժողովեցից զպ-
18 դիւնս իմ։ Եւ ասէ, [3]Գիտեմ զինչ՝ արարից. քա-
կեցից զշտեմարանս իմ, և եւս մեծամեծս շինեցից,
և անդր ժողովեցից զցորեան և զամենայն բարս
19 իմ։ Եւ ասացից ցանձն իմ, Անձն, ունի
բազում բարութիւնս համբարեալ ամաց բազմաց
20 հանգիր, կեր, արբ և ուրախ լեր։ Ասէ ցնա Ա-
ստուած, Անմիտ, յայսմ գիշերի զոգիդ ի քէն
բաց պահանջիցեն, իսկ զոր պատրաստեցեր՝ ո՞ւմ

---

[1] Յ-ին, կամ [2] Որ՝ն, յագահութենէ
[3] Յ-ին, Ձայս

21 լինիցի։ Նոյնպէս և որ գանձէ անձին, և ոչ յԱ-
տուածՀ մեծանայցէ։
22 Ասէ ցաշակերտան իւր, Վասն այդորիկ ասեմ
ձեզ, Մի՛ հոգայք ընդ ոգւոյ թէ զի՛նչ ուտիցէք,
23 և մի՛ ընդ մարմնոյ թէ զի՛նչ զգենուցուք։ Զի ոգի
առաւել է քան զկերակուր, և մարմին՝ քան զՀան-
24 դերձ։ Հայեցարուք ընդ ագռաւս, զի ոչ սերմա-
նեն և ոչ հնձեն, որոց ոչ գոն շտեմարանք և ոչ
Համբարանոցք, և ԱստուածՀ կերակրէ զնոսա. ո՛ր-
չափ եւս առաւել զձեզ որ լաւ էք քան զթռո-
25 չունս։ Ո՞վ ի ձէնջ առ հոգալ կարիցէ յաւելուլ
26 ի հասակ իւր կանգուն մի։ Իսկ արդ եթէ ի փո-
քուն չէք բաւականն, վասն այլոցն զի՞ հոգայցէք։
27 Հայեցարուք ընդ շուշանն, ո՛րպէս աճէ. ոչ ջանայ
և ոչ նիւթէ. ասեմ ձեզ, Եւ ոչ Սողոմոնն յա-
մենայն ի փառան իւր զգեցաւ իբրեւ զմի ի նոցանէ։
28 Իսկ եթէ զխոտն որ այսօր ի բացի է և վաղիւ ի հնոց
արկանելի՝ ԱստուածՀ այնպէս զգեցուցանէ, ո՛րչափ
29 եւս առաւել զձեզ, թերահաւատք։ Եւ դուք մի՛
խնդրէք զի՛նչ ուտիցէք կամ զի՛նչ ըմպիցէք, և
30 մի՛ զբաղնուք։ Զի զայն ամենայն հեթանոսք աշ-
խարհի խնդրեն. այլ ձեր Հայր գիտէ զի պիտոյ է
31 այն ամենայն։ Բայց խնդրեցէք զարքայութիւն Ա-
տուածոյ, և [1]այն յաւելցի ձեզ։
32 ԵԳ. Մի՛ երկնչիր, հօտ փոքրիկ, զի հաճեցաւ
33 Հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն։ Վաճառեցէք
զինչս ձեր և տուք ողորմութիւն. և արարէք ձեզ
քսակս առանց հնանալոյ, գանձ անպակաս յեր-

---

[1]Յոյն, այն ամենայն

կինա. ուր ոչ գող մերձենայ և ոչ ցեց ապականէ
34 Զի ուր գանձն ձեր է, անդ և սիրտք ձեր եղիցին
35 եղիցին գօտիք ձեր պնդեալ ընդ մէջս, և ճրա
36 գունք լուցեալք։ Եւ դուք նմանողք մարդկան ո
ակն ունիցին տեառն իւրեանց թէ երբ դառնայցէ
ի հարսանեաց. զի յորժամ գայցէ և բախիցէ
37 վաղվաղակի բանայցեն նմա։ Երանի իցէ ծառայից
այնոցիկ զորս եկեալ տէրն գտցէ արթունս. ամէ
ասեմ ձեզ, զի գօտի ընդ մէջ ածցէ և բազմե
38 ցուսցէ զնոսա, և անցեալ պաշտիցէ զնոսա։ Եւ
եթէ յերկրորդ կամ յերրորդ պահու եկեսցէ և
գտցէ այնպէս, երանելի են ծառայքն այնոքիկ
39 Բայց զայն գիտասջիք, եթէ գիտէր տանուտէր
յորում ժամու գող գայ, [1]չտայր թոյլ տկան հա.
40 տանել ի տան իւրում։ Եւ դուք եղերուք պատ
րաստք, զի յորում ժամու ոչ կարծիցէք, գա
Որդի մարդոյ։
41 [2]Ասէ Պետրոս, Տէր, առ մե՞զ ասացեր զառակդ
42 զայդ թէ առ ամենեսեան։ Եւ ասէ Տէր, Ո՞վ իցէ
հաւատարիմ տնտես և իմաստուն, զոր կացցէ
տէր իւր ի վերայ գերդաստանի իւրոյ տալ ի ժա.
43 մու զկերակուրս։ Երանի իցէ ծառայնն այնմիկ զոր
44 եկեալ տէր իւր գտանիցէ արարեալ այնպէս։ Ա
մէն ասեմ ձեզ զի ի վերայ ամենայն ընչից իւրոյ
45 կացուսցէ զնա։ Ապա թէ ասիցէ ծառայն այն
սրտի իւրում, Յամէ տէր իմ ի գալ. և սկսանիցի
հարկանել զծառայսն և զաղախնայսն, ուտել և
46 ըմպել և արբենալ, Եկեսցէ տէր ծառայիւն այն

---

[1]Բ—ղ—ո—ւ, հակէր և չտայր [2]Ո—ն—ւ, Ասէ ցն

բիկ յաւուր յորում ակն ոչ ունիցի, և ի ժամու
յորում ոչ գիտիցէ. ընդ մէջ կտրեսցէ զնա, և
47 զմասն նորա ընդ անհաւատս դիցէ։ Եւ ծառայ որ
գիտիցէ զկամն տեառն իւրոյ և [1]ոչ պատրաստիցէ՝
48 ըստ կամաց նորա՝ արկցէ գան բազում։ Եւ որ ոչն
գիտիցէ և արժանի գանի ինչ գործիցէ, արկցէ
գան սակաւ. ամենայնի որում շատ տուաւ, շատ
խնդրեսցի ի նմանէ, և որում բազում աւանդե-
ցաւ, առաւել եւս պահանջեսցեն ի նմանէ։
49 ԵԴ. Հուր եկի արկանել յերկիր. և զի՞նչ կա-
50 միմ, թէ արդէն իսկ բորբոքեր։ Եւ մկրտութիւն
մի ունիմ մկրտել, և զիա՛րդ փութամ մինչեւ
51 կատարեսցի։ Համարիք եթէ խաղաղութիւն եկի
52 տալ յերկիր. ոչ, ասեմ ձեզ, այլ բաժին։ Զի
եղիցին յայսմ հետէ հինգ ի տան միում բաժա-
53 նեալք, երեքն յերկուց, և երկուքն յերից։ Բա-
ժանեսցի հայր յորդւոյ, և որդի՛ ի հօրէ, մայր՛ ի
դստերէ, և դուստր՛ ի մօրէ, սկեսուր՛ ի հարսնէ,
և հարսն՛ ի սկեսրէ իւրմէ։
54 Ասաց և ցժողովուրդսն, Ցորժամ տեսանիցէք
ամպ ծագեալ յարեւմտից, իսկոյն ասէք թէ Անձ-
55 րեւ գայ, և լինի այնպէս. Եւ յորժամ հարաւ
շնչեալ, ասէք թէ խորշակ լինի և լինի այնպէս։
56 Կեղծաւորք, զերեսս երկնի և երկրի գիտէք փոր-
ձել, իսկ զժամանակս զայս զիա՞րդ ոչ փորձէք։
57 Ընդէ՞ր և յանձանց իսկ ոչ ընտրէք զարժանն։
58 Ցորժամ երթայցես ընդ ոսոխի քում առ իշխան,
ի ճանապարհի տուր զհաշիւն զերծանել ի նմանէ.

---

[1]Բ–ը–ժ, չիցէ պատրաստեալ և ոչ արարեալ

զի գուցէ քարշիցէ զքեզ առ դատաւորն, և դատաւորն մատնիցէ դահճի, և դահիճն արկանիցէ
59 ի բանտ։ Ամեմ քեզ, ոչ ելանիցես անտի մինչեւ հատուցանիցես զյետին բնիանն։

ԳԼ. ԺԹ

1 Եկին ոմանք ի նմին ժամանակի և պատմեցին նմա վասն Գալիլեացւոցն, որոց զարիւնն Պիղատոս
2 խառնեաց ընդ զոհս նոցա։ Պատասխանի ետ և ասէ ցնոսա, Համարի՞ք եթէ այն Գալիլեացիք եղեն մեղաւորք քան զամենայն Գալիլեացիս, զի զայնպիսի
3 անցս կրեցին։ Ոչ, ասեմ ձեզ այլ եթէ ոչ ա-
4 պաշխարիցէք, ամենեքին նոյնպէս կորնչիջիք։ Կամ նոքա ութտասանքն, յորոց վերայ աշտարակն անկաւ ի Սելովամ և սպան զնոսա, Համարի՞ք եթէ նոքա պարտապանք եղեն քան զամենայն մարդիկ
5 որ բնակեալ են Երուսաղէմ։ Ոչ, ասեմ ձեզ, այլ եթէ ոչ ապաշխարիցէք, ամենեքեան նոյնպէս կորնչիջիք։
6 Ասաց և զառակս զայս. Թզենի մի էր ուրուք տնկեալ յայգւոջ իւրում, և եկն խնդրել պտուղ
7 ի նմանէ և ոչ եգիտ։ Ասէ ցայգեպործն, Ահա երեք ամք են, յորմէ հետէ գամ խնդրել պտուղ ի թզենւոջդ և ոչ գտանեմ. արդ կտրեա զդա, ընդէ՞ր
8 և զերկիրդ խափանէ։ Նա պատասխանի ետ և ասէ, Տէր, թող զդա այս ամ եւս, մինչեւ շուրջ զդա-
9 ւաւ բրեցից և արկից աղբ, Թերեւս արասցէ պտուղ ապա թէ ոչ՝ յամէ եւս հատցես զդա։
10 Եե. Եւ ուսուցանէր ի միում ի ժողովրդեան.
11 ցացն ի շաբաթս։ Եւ ահա կին մի զոր ունէր այս

հիւանդութեան ամն ութուտասն, և էր կարկա-
12 ժեալ, և ոչ կարէր ամենեւին ի վեր հայել։ Եւ
տեսեալ զնա Յիսուսի՝ կոչեաց առ ինքն և ասէ
ցնա, Կին դու, արձակեալ ես ի հիւանդութենէ
13 քումմէ։ Եւ եդ ի վերայ նորա ձեռն, և առժա-
մայն ուղղեցաւ և փառաւոր առնէր զԱստուած։
14 Պատասխանի ետ ժողովրդապետն ցասուցեալ թէ
ընդէր ի շաբաթու բժշկեաց Յիսուս, և ասէ ցժո-
ղովուրդն, Վեց օր է յորս արժան է գործել. յայնս
եկայք բժշկեցարուք, և ոչ յաւուր շաբաթու։
15 Պատասխանի ետ նմա Տէր և ասէ, Կեղծաւորք,
իւրաքանչիւր ոք ի ձէնջ ի շաբաթու ոչ արձակէ
զեզն-իւր կամ զէշ ի մսրոյ և տանի տայ ջուր։
16 Իսկ այս՝ դուստր Աբրահամու էր, զոր կապեաց
Սատանայ ահաւադիկ ութուտասն ամ, ոչ էր ար-
ժան արձակել ի կապանաց անտի ի շաբաթու։
17 Եւ զայս իբրեւ ասաց, յամօթ լինէին ամենեքին
որ հակառակն կային նմա. և ամենայն ժողովուրդն
ուրախ լինէր ի վերայ ամենայն փառաւորութեանցն
որ գործէին ի նմանէ։
18 Եւ ասէր, Ո՞ւմ նման է արքայութիւն Աստու-
ծոյ, և որո՞ւմ նմանութեան նմանեցուցից զնա։
19 Նման է հատոյ մանանխոյ, զոր առեալ մարդոյ
արկ ի պարտէզ իւր. աճեաց և եղեւ [1]ծառ, և
թռչունք երկնից բնակեալ էին յոստս նորա։
20 Եւ դարձեալ ասէ, Ո՞ւմ նմանեցուցից զարքա-
21 յութիւն Աստուծոյ։ Նման է խմորոյ զոր առեալ
կնոջ թաքոյց յալեր երից գրուանց, մինչեւ խմո-
րեցաւ ամենայն։

---

[1] Որթ, ծառ մեծ

22 ԵԶ. Եւ շրջէր ընդ քաղաքս և ընդ գեղս, ու-
սուցանէր. և ճանապարհ արարեալ Յերուսաղէմ
23 Ասէ ոմն ցնա, Տէր, եթէ սակա՞ւք իցեն որ ապրե-
24 լոց իցեն. և նա ասէ ցնոսա, Ջանացարուք մտանել
ընդ դուռն նեղ. ասեմ ձեզ զի բազումք խնդրես-
25 ցեն մտանել և ոչ կարասցեն։ Յորմէ հետէ մտցէ
տանուտէրն և փակեսցէ զդուռնն, և սկսանիցիք կալ
արտաքոյ և բախել զդուռնն և ասել, Տէր, Տէր,
բաց մեզ. և պատասխանի տուեալ ասիցէ ձեզ,
26 Ոչ գիտեմ զձեզ ուստի էք։ Յայնժամ սկսանիջիք
ասել, Կերաք առաջի քո և արբաք, և ի հրապա-
27 րակս մեր ուսուցեր։ Եւ ասիցէ, Ասեմ ձեզ, Ոչ
գիտեմ զձեզ ուստի էք. ի բաց կացէք յինէն ա-
28 մենայն մշակք դո անիրաւութեան։ Անդ եղիցի լալ
և կրճել ատամանց, յորժամ տեսանիցէք զԱբ-
րահամ և զԻսահակ և զՅակով և զամենայն մար-
գարէս յարքայութեան Աստուծոյ, և զձեզ հա-
29 նեալ արտաքս։ Եւ եկեսցեն յարեւելից և յա-
րեւմտից և ի հիւսիսոյ և ի հարաւոյ, և բազմեսցին
30 յարքայութեան Աստուծոյ։ Եւ ահա իցեն յետինք
որ եղիցին առաջինք, և իցեն առաջինք՝ որ լինիցին
յետինք։
31 Ի նմին աւուր մատեան ոմանք փարիսեցիք և ա-
սեն ցնա, Ել և գնա աստի, զի Հերովդէս կամի
32 սպանանել զքեզ։ Եւ ասէ ցնոսա, Երթայք ասա-
ցէք աղուէսուն այնմիկ, Ահաւասիկ հանեմ դեւս,
և բժշկութիւնս կատարեմ այսօր և վաղիւ, և
33 յերիր աւուր կատարիմ։ Բայց պարտ է այսօր և
վաղիւ և ի միւսում աւուր գնալ. զի ոչ է մարգ
մարգարէի կորնչել արտաքոյ քան զԵրուսաղէմ

34 Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ, որ կոտորէիր զմարգա-
րէս և քարկոծ առնէիր զառաքեալսն առ քեզ,
քանի՛ցս անգամ կամեցայ ժողովել զորդիս քո,
որպէս հաւ զձագս իւր ընդ թեւովք, և ոչ կա-
35 մեցարուք: Ահա թողեալ լիցի ձեզ տունդ [1]ձեր.
բայց ասեմ ձեզ, եթէ Ոչ եւս տեսանիցէք զիս,
մինչեւ ասիցէք, Օրհնեալ եկեալն յանուն Տեառն:

ԳԼ. ԺԴ

1 ԵՒ. Եւ եղեւ ի մտանելն նորա ի տուն ուրումն
իշխանացն փարիսեցւոց ի շաբաթու ուտել հաց,
2 և նոքա սպասէին նմա: Եւ ահա այր ումն էր անդ
3 ջրգողեալ առաջի նորա: Պատասխանի ետ Յիսուս
և ասէ ցօրինաւորսն և ցփարիսեցիս, եթէ Արժա՞ն
4 իցէ ի շաբաթու բժշկել: Եւ նոքա լուռ եղեն. և
բռնեն հարեալ զնմանէ՝ բժշկեաց զնա և արձա-
5 կեաց: Եւ ասէ ցնոսա, Ո՞յր ուրուք ի ձէնջ էշ
կամ եզն անկանիցի ի ջրհոր, և ոչ վազվազակի
6 հանիցէ զնա յաւուր շաբաթու: Եւ ոչ կարացին
տալ նմա պատասխանի առ այն:
7 Ասաց և առ կոչնականան առակ մի, հայեցեալ
8 թէ զիա՛րդ բարձրնտիր լինէին, ասէ ցնոսա, Յոր-
ժամ կոչիցէ ոք զքեզ ի հարսանիս [2]կամ ի կո-
չունս", մի՛ բազմիցիս յառաջին բարձին. գուցէ
պատուականագոյն եւս քան զքեզ իցէ կոչեցեալ
9 ի նմանէ. Եւ եկեալ որ զքեզն և զնա կոչեաց՝ ա-
սիցէ ցքեզ, Տուր սմա տեղի. և ապա սկսանիցիս
10 ամօթով զյետին տեղին առնել: Այլ յորժամ կո-

---

[1]Որոնք, ձեր աւերակ [2]ի ցուցին գրեթե

չեցիս, երթիջիր բազմեաջիր ի յեսին տեղւոջ, զի յորժամ գայցէ որ կոչեացն զքեզ, ասիցէ ցքեզ, Բարեկամ, ի վեր մատիր. յայնժամ եղիցին քեզ
11 փառք առաջի բարձակացացն քոց։ Զի ամենայն որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեացի. և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի։
12 Ասէ և ցկոչնաւէրն, Յորժամ առնիցես ճաշ կամ ընթրիս, մի՛ կոչեր զբարեկամս քո, և մի՛ զեղբարս քո, և մի՛ զազգականս քո, և մի՛ [1]զդրացիս քո և մի՛ զմեծամեծս՝. զի մի՛ և նոքա փոխարէն կո.
13 չեացեն զքեզ, և լինիցի քեզ հատուցումն։ Այլ յորժամ առնիցես ընդունելութիւն, կոչեա զաղ-
14 քատս և զխեղս, զկաղս և զկոյրս. եւ երանելի լինիցիս. զի ոչ ունին փոխարէն հատուցանելոյ քեզ, և հատուսցի քեզ փոխարէն ի յարութեան
15 արդարոց։ Իբրեւ լուաւ զայս ումն ի բազմականացն, ասէ ցնա, Երանի որ կերիցէ ճաշ յարքայութեան
16 Աստուծոյ։ Եւ նա ասէ ցնա, Այր ումն գործեաց
17 [2]ընթրիս և հրաւիրեաց զբազումս։ Եւ առաքեաց զծառայ իւր ի ժամու ընթրեացն կոչել զհրաւիրեալսն թէ եկայք, զի ահաւասիկ պատրաստ է
18 ամենայն ինչ։ Եւ սկսան մի բոլ միոջէ ամենեքեան հրաժարել. առաջինն ասէ, Ագարակ գնեցի, և հարկ է ելանել տեսանել զնա. աղաչեմ զքեզ,
19 կալ զիս հրաժարեալ։ Եւ մեւսն ասէ, Լուծս հինգ եզանց գնեցի և երթամ փորձել զնոսա. աղաչեմ
20 զքեզ, կալ զիս հրաժարեալ։ Եւ մեւսն ասէ, Կին

---

[1] Յ-ոյնն, զդրացիս քո մեծատունս

[2] Յ-ոյնն, ընթրիս մեծ

21 ածի, և վասն այնորիկ ոչ կարեմ գալ։ Եւ եկեալ
ծառային պատմեաց զայն տեառն իւրում. յայն-
ժամ բարկացեալ տանուտէրն՝ ասէ ցծառայն իւր,
Եկ վաղվաղակի ի հրապարակս և ի փողոցս քա-
ղաքիդ, և զաղքատս և զխեղս և զկաղս և զկոյրս
22 մոյծ այսր։ Եւ ասէ ծառայն, Տէր, եղեւ զոր հրա-
23 մայեցեր և կայ եւս տեղի։ Եւ ասէ տէրն ցծա-
ռայն, Ել ի ճանապարհս և ի ցանգս, և արա այսր
24 մտանել, զի լցցի տունս իմ։ Ասեմ ձեզ, զի Ոչ ոք
յայնց կոչեցելոց ճաշակեսցէ յընթրեաց իմոց։
25 ՁԿ. Եւ երթային ընդ նմա ժողովուրդք բա-
26 զումք. դարձաւ և ասէ ցնոսա, Եթէ ոք գայ առ
իս, և ոչ ատեայ զհայր իւր և զմայրն և զկին և
զորդիս և զեղբարս և զքոյրս, նա՝ և զանձն եւս
27 իւր, ոչ կարէ իմ աշակերտ լինել։ Զի որ ոչ բառ-
նայ զխաչ իւր և գայ զկնի իմ՝ ոչ կարէ իմ ա-
28 շակերտ լինել։ Ո՞վ ոք ի ձէնջ կամիցի շինել աշ-
տարակ, և ոչ նախ նստեալ համարիցի զծախան,
29 եթէ ունիցի՛ բաւական ի կատարումն. Զի գուցէ
երբեւ արկանիցէ հիմն և ոչ կարիցէ կատարել,
ամենեքին որ տեսանիցեն, սկսանիցին ծաղր առնել
30 զնա, Եւ ասել թէ Այս այր սկսաւ շինել, և ոչ
31 կարաց կատարել։ Կամ ո՞ր թագաւոր երթեալ
տայցէ պատերազմ ընդ այլում թագաւորի, և ոչ
նստեալ նախ խորհիցի, եթէ կարո՛ղ իցէ տասն
հազարաւ դդէմ ունել զայնորիկ որ գայցէ ի վե-
32 րայ նորա քսան հազարաւ։ Ապա թէ ոչ, մինչդեռ
հեռագոյն իցէ, հրեշտակութիւն առաքեալ աղա-
33 չեսցէ ի խաղաղութիւն։ Արդ այսպէս ամենայն ոք
ի ձէնջ որ ոչ հրաժարեսցէ յամենայն ընչից ի-

34 րոց, ոչ կարէ իմ աշակերտ լինել։ Բարւոք է աղ-
35 ապա թէ աղն անհամեցի, ի՞ւ համեմեցի։ Ոչ
յերկիր և ոչ յաղբ է պիտանացու, այլ ընկենուլ
զնա արտաքս։ Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։

ԳԼ. ԺԵ

1 **Եւ** էին մերձ առ նա ամենայն մաքսաւորք և մե-
2 ղաւորք լսել ի նմանէ։ Տրտնջէին փարիսեցիքն և
դպիրք և ասէին, Ընդէ՞ր սա զմեղաւորս ընդունի
և ուտէ ընդ նոսա։
3 Ասաց առ նոսա զառակս զայս. (4) Ո՞վ ոք իցէ
ի ձէնջ մարդ որոյ իցէ հարեւր ոչխար, և կորու-
սանիցէ զմի ի նոցանէ, ո՞չ թողուցու զիննսուն և
զինն յանապատի, և երթայցէ զհետ կորուսելոյն,
5 մինչեւ գտանիցէ զնա։ Եւ իբրեւ գտանէ, դնէ
6 զնա ի վերայ ուսոց իւրոց խնդալով, Եւ երթայ ի
տուն, կոչէ զբարեկամս և զդրացիս, և ասէ ցնո-
սա, Ուրախ եղերուք ընդ իս, զի գտի զոչխարս իմ
7 զկորուսեալ։ Ասեմ ձեզ, զի Այսպէս է ուրախու-
թիւն յերկինս վասն միոյ մեղաւորի որ ապաշխա-
րիցէ՝ քան վասն իննսուն և հինն արդարոց որոց
8 չիցէ պիտոյ ապաշխարութիւն։ Կամ ո՞վ իցէ կին,
որոյ իցեն դրամք տասն. և եթէ կորուսանիցէ
դրամ մի, ո՞չ լուցանիցէ ճրագ և ածիցէ աւել ի
9 տան, և խնդրիցէ ստէպ, մինչեւ գտանիցէ։ Եւ
իբրեւ գտանէ, կոչէ զբարեկամս և զդրացիս և
ասէ, Ուրախ լերուք ընդ իս, զի գտի զդրամն իմ
10 զոր կորուսի։ Այնպէս, ասեմ ձեզ, ուրախութիւն
եղիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ ի վերայ միոյ
մեղաւորի որ ապաշխարիցէ։

11 Եւ ասէ, Առն միոջ էին երկու որդիք. (12) Ասէ
կրտսերն ի նոցանէ ցհայրն, Հայր, տուր ինձ բա-
ժին, որ անկանի ինձ ընդհիդ. և նա բաժանեաց նոցա
13 զկեանսն։ Եւ յետ ոչ բազում աւուրց ժողովեալ
զամենայն կրտսեր որդւոյն՝ գնաց յաշխարհ հեռի.
և անդ վատնեաց զինչս իւր, զի կեայր անառա-
14 կութեամբ։ Եւ իբրեւ սպառեաց զամենայն, եղեւ
սով սաստիկ յաշխարհին յայնմիկ, և սկսաւ ինքն
15 չքաւորել։ Եւ գնացեալ յարեցաւ ի մի ոմն ի քա-
ղաքացւոց աշխարհին այնորիկ. և յղեաց զնա յա-
16 գարակ իւր արածել խոզս։ Եւ ցանկայր լնուլ
զորովայն իւր յեղջերէն զոր խոզքն ուտէին, և ոչ
17 ոք տայր նմա։ Եւ եկեալ ի միտս իւր՝ ասէ, Քանի՛
վարձկանք հացեն ի տան հօր իմոյ հացակից, և ես
18 սաստ սովամահ կորնչիմ։ Յարուցեալ գնացից առ
հայր իմ և ասացից ցնա, Հայր, մեղայ յերկինս
19 և առաջի քո, Եւ ոչ եւս եմ արժանի կոչել որդի
20 քո, արա զիս իբրեւ զմի ի վարձկանաց քոց։ Եւ
յարուցեալ եկն առ հայր իւր. և մինչդեռ հեռա-
գոյն էր, եռես զնա հայրն և գթացաւ. յարեաւ
և ընթացաւ ընդ առաջ, անկաւ զպարանոցսն
21 նորա, և համբուրեաց զնա։ Եւ ասէ ցնա որդին,
Հայր, մեղայ յերկինս և առաջի քո, ոչ եւս եմ
22 արժանի կոչել որդի քո։ Ասէ հայրն ցծառայս
իւր, [1]Վաղվաղակի հանէք զպատմուճանն առաջին
և ագուցէք նմա, և տուք զմատանին ի ձեռս նո-
23 րա, և կօշիկս յոտս նորա. Եւ ածէք զեզն պա-
24 րարակ, զենէք, կերիցուք և ուրախ լիցուք. Զի

---

[1]Յ-հան- պ-ի-ե

այս որդի իմ մեռեալ էր և եկեաց, կորուսեալ
25 էր և գտաւ. և սկսան ուրախ լինել։ Եւ էր երէց
որդի նորա յագարակի. և մինչդեռ գայր և մերձ
եղեւ ի տունն, լուաւ զձայն երգոց և զպարուց.
26 Եւ կոչեցեալ առ ինքն զմի ի ծառայիցն՝ հարցա.
27 նէր թէ զի՞նչ իցէ այն։ Եւ նա ասէ ցնա, Զի եղ-
բայր քո եկեալ է, և եղեն հայր քո զեզն պա.
28 րարակ, զի ողջամբ ընկալաւ զնա։ Բարկացաւ և
ոչ կամէր մտանել, և հայրն ելեալ արտաքս՝ ա.
29 ղաչէր զնա։ Պատասխանի ետ և ասէ ցհայրն, Այ.
քանի ամք են, զի ծառայեմ քեզ, և երբեք զպա.
տուիրանաւ քով ոչ անցի. ուլ մի երբեք ոչ ե.
30 տուր ինձ զի ուրախ եղէց ընդ բարեկամս իմ։ Յոր.
ժամ եկն որդիդ քո այդ որ եկեր զկեանս քո ընդ
31 պոռնիկս, զեներ դմա զեզն պարարակ։ Եւ ասէ
ցնա, Որդեակ, դու հանապազ ընդ իս ես, և ա.
32 մենայն որ ինչ իմ է՝ քո է. Այլ ուրախ լինել և
խնդալ պարտ էր, զի եղբայր քո այս մեռեալ էր
և եկեաց, կորուսեալ՝ և գտաւ։

ԳԼ. ԺԶ

1 ԶԲ. Եւ ասէ առ աշակերտսն, Այր մի էր մե.
ծատուն, որոյ էր տնտես. և եղեւ զնմանէ մա.
բաստանութիւն, որպէս թէ վատնիցէ զինչս նորա։
2 Կոչեաց և ասէ ցնա, Զի՞նչ է այս զոր լսեմ զքէն
տուր զհամար տնտեսութեան քո, զի ոչ եւս կա.
3 րես լինել տնտես։ Ասէ ընդ միտս իւր տնտեսն,
Զի՞նչ գործեցից, զի տէր իմ հանէ զտնտեսու.
թիւնս. գործել ոչ կարեմ, մուրանալ ամաչեմ
4 Գիտեմ զինչ արարից, զի յորժամ ի լաց լինիցիմ

ի տնտեսութենէս, ընկալցին զիս ի տունս իւրեանց:
5 Եւ կոչեցեալ առ ինքն մի ըստ միոջէ ի պարտապանաց տեառն իւրոյ, ասէ ցառաջինն, Քանի՞ ինչ
6 պարտիս տեառն իմում: Եւ նա ասէ, Հարեւր մար ձիթոյ. ասէ ցնա, Կա զգիր քո, և նիստ գրեա
7 վաղվաղակի հինսուն: Յարձեալ ասէ ցմեւսն, Դու քանի՞ ինչ պարտիս. և նա ասէ, Հարեւր քոռ ցորենոյ. և ասէ ցնա, Կա զգիր քո, և նիստ գրեա
8 ութսուն: Եւ գովեաց տէրն զտնտեսն անիրաւութեան, զի իմաստութեամբ արար. զի որդիք աշխարհիս այսորիկ իմաստնագոյն են քան զորդիս
9 լուսոյ յազգս իւրեանց: Եւ ես ձեզ ասեմ, Արարէք ձեզ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան, զի յորժամ պակասիցէ այն, ընկալցին զձեզ ի
10 յարկան յաւիտենականս: Որ ի փոքուն հաւատարիմ է՝ և ի բազմին հաւատարիմ է, և որ ի փո-
11 քուն անիրաւ է՝ և ի բազմին անիրաւ է: Իսկ որդ եթէ յանիրաւ մամոնային չեղէք հաւատարիմք,
12 զո՞ւմարիտն ձեզ ո՞ հաւատասցէ: Եւ եթէ յօտարին չեղէք հաւատարիմք, զձերն ո՞ տացէ ձեզ:
13 Ոչ ոք ծառայ կարէ երկուց տերանց ծառայել, զի [1]եթէ զմին ատիցէ, և զմեւսն սիրիցէ. կա՛մ զմին մեծարիցէ, և զմեւսն արհամարհիցէ. ոչ կարէք
Աստուծոյ ծառայել և մամոնայի:
14 Իբրեւ լսէին զայս ամենայն փարիսեցիքն, քանզի
15 արծամարհասէրք էին, անգոնէին զնա: Եւ ասէ ցնոսա, Դուք էք որ արդարացուցանէք զանձինս առաջի մարդկան, ակայն Աստուած գիտէ զսիրտս

---

[1] Յունն, կա՛մ

ձեր. զի որ առաջի մարդկան բարձր է՝ պիղծ է
16 առաջի Աստուծոյ։ Օրէնքն և մարգարէք մինչեւ
ցՅովհաննէս. յայնմ հետէ արքայութիւն Աստու-
ծոյ աւետարանի, և ամենայն ոք զնա բռնաբարէ։
17 Դիւրին էցէ երկնից և երկրի անցանել, քան յօրի-
18 նացն միոյ նշանախեցի անկանել։ Ամենայն որ ար-
ձակէ զկին իւր և առնէ այլ՝ շնայ. և որ զարձա-
կեալն առնէ՝ շնայ։
19 Այր ոմն էր մեծատուն, և ագանէր բեհեզս և
ծիրանիս և ուրախ լինէր հանապազ առատապէս։
20 Եւ աղքատ ոմն անուն Ղազարոս անկեալ դնէր
21 առ դրան նորա վիրաւորեալ, Եւ ցանկայր լնուլ
զորովայն իւր ի փշրանացն որ անկանէին ի սեղանոյ
մեծատանն. այլ և շունք եւս գային և լիզուին
22 զվէրս նորա։ Եւ եղեւ մեռանել աղքատին, և
տանել հրեշտակաց զնա ի գոգն Աբրահամու. մե-
23 ռաւ և մեծատունն և թաղեցաւ։ Եւ ի դժոխս
ամբարձ զաչս իւր մինչ ի տանջանսն էր. եւես
զԱբրահամ ի հեռաստանէ, և զՂազարոս ի գոգ
24 նորա [1]հանգուցեալ։ Եւ նա աղաղակեաց և ասէ.
Հայր Աբրահամ, ողորմեաց ինձ, և առաքեա զՂա-
զարոս, զի թացցէ զծագ մատին իւրոյ ի ջուր, և
զովացուսցէ զլեզու իմ, զի պապակիմ ի տապոյ
25 սմանի։ Եւ ասէ ցնա Աբրահամ, Որդեակ, յիշեա
զի ընկալար անդէն զբարիս քո ի կեանսն քում,
և Ղազարոս նոյնպէս զչարչարանս. արդ սա առ
26 մխիթարի, և դու այդր պապակիս։ Եւ ի վերոյ
այսր ամենայնի վիհ մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ

[1] ի բազմս գոյ

եթէ կամիցին ասասի առ ձեզ անցանել, ոչ կա-
27 րեն, և ոչ այսի ոք առ մեզ անցանել: Եւ ասէ,
Արդ աղաչեմ զքեզ, Հայր, զի արձակեսցես զդա ի
28 տուն Հօր իմոյ. Ունի իմ անդ եղբարք հինգ, որպէս
զի տացէ նոցա վկայութիւն, զի մի՛ և նոքա գայ-
29 ցեն յայս տեղի տանջանաց: Եւ ասէ Աբրահամ,
Ունին զՄովսէս և զմարգարէսն, նոցա լսիցեն:
30 Եւ նա ասէ, Ոչ, Հայր Աբրահամ, բայց եթէ ի
մեռելոց ոք երթիցէ առ նոսա, և ապաշխարեսցեն:
31 Եւ ասէ ցնա, Եթէ Մովսիսի և մարգարէիցն ոչ
լսեն, և ոչ եթէ ի մեռելոց ոք յառնիցէ, Հաւա-
նեսցին:

ԳԼ. ԺԷ

1 ՋԳ. Ասաց և առ աշակերտսն իւր, Ոչ է մարթ
չգալ գայթակղութեանց, բայց վա՛յ այնմիկ է յոր
2 ձեռն գայցէ: Լաւ էր նմա թէ վէմ երկանաքար
կախէր զպարանոցէ նորա և անկանէր ի ծով, քան
թէ գայթակղեցուցանէ զմի ոք ի փոքրկանցս յայս-
3 ցանէ: Զգոյշ կացէք անձանց, եթէ [1]մեղիցէ եղ-
բայր քո, սաստեա նմա. և եթէ ապաշխարիցէ,
4 թող նմա: Եւ եթէ եւթն անգամ մեղիցէ քեզ,
և եւթն անգամ դարձցի ի քեզ և ասիցէ, Ապաշ-
խարեմ, թողցես նմա:

5 Եւ ասեն առաքեալքն ցՏէր, Յաւել մեզ Հա-
6 ւատս: Եւ ասէ Տէր, Եթէ ունիցիք Հաւատս քան
զՀատ մանանխոյ, և ասիցէք թթենւոյս այսմիկ,
Խլեաց և տնկեաց ի ծովու, և Հնազանդեսցի ձեզ:

---

[1] Ոմանք, մեղիցէ քեզ

7 Իսկ ո՞վ ոք ի ձէնջ, որ ունիցի ծառայ հողագործ կամ հովիւ, որ իբրեւ մտանիցէ յագարակէ,
8 ասիցէ ցնա վաղվաղակի, թէ Անց բազմեաց · Այլ ո՞չ ասիցէ ցնա թէ Պատրաստեա զինչ ընթրելոց իցեմ, և գօտի ածեալ պաշտեա զիս, մինչեւ կերայց և արբից, և ապա կերիցես և արբցես դու։
9 Միթէ շնո՞րհ ինչ ունիցի ծառային այնմիկ, զի
10 արար զամենայն հրամանան.[1] Նոյնպէս և դուք յորժամ առնիցէք զամենայն հրամայեալսն ձեզ, ասասջիք թէ Ծառայք անպիտանք եմք, զոր պարտէաքն առնել արարաք։
11 Եւ եղեւ մինչ երթայր նա Երուսաղէմ, և ինքն անցանէր ընդ մէջ Սամարիայ և Գալիլեացւոց
12 Եւ մինչդեռ մտանէր ի գեղ ուրեմն, պատահեցան նմա տասն այր բորոտ որք կացին ի հեռաստանէ.
13 Բարձին զձայնս և ասեն, Յիսուս վարդապետ, ո-
14 ղորմեաց մեզ։ Եւ իբրեւ տեսս զնոսա, ասէ ցնոսա, Երթայք, ցուցէք զանձինս քահանայիցն. և
15 եղեւ իբրեւ գնացին, [2]առժամայն սրբեցան։ Մի ոմն ի նոցանէ իբրեւ տեսս թէ բժշկեցաւ, դարձաւ անդրէն, ի ձայն մեծ փառաւոր առնէր զԱ-
16 ստուած · Անկաւ ի վերայ երեսաց իւրոց առ ոտս նորա, և գոհանայր զնմանէ. և ինքն էր Սամարա-
17 ցի։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ, Ո՞չ տասն
18 սրբեցան, իսկ արդ ինուինքն ո՞ւր են։ Չի ոչ գտան դառնալ տալ փառս Աստուծոյ, բայց միայն
19 այլազգիս այս։ Եւ ասէ ցնա, Արի գնա, զի հաւատք քո կեցուցին զքեզ։

---

[1] Որ՝ն+ յ-ե-լ-ո-ն, ոչ կարծեմ։ [2] ի ցա-նի պա-հ-ի

20 ՋԴ. Իբրեւ հարցաւ ի փարիսեցւոցն թէ ե՞րբ գայցէ արքայութիւնն Աստուծոյ, պատասխանի ետ նոցա և ասէ, Ոչ գայ արքայութիւնն Աստուծոյ
21 խորանօք. Եւ չասիցեն թէ Ահաւասիկ աստ է կամ անդ, զի ահա արքայութիւն Աստուծոյ ի ներքս ի ձեզ է։
22 Ասաց և առ աշակերտսն, Եկեսցեն աւուրք ցանկանալոյ ձեզ մի յաւուրցն Որդւոյ մարդոյ տեսա-
23 նել, և ոչ տեսանիցէք։ Եւ եթէ ասիցեն ձեզ եթէ
24 Ահաւասիկ է կամ Անդ, մի՛ երթայցէք զհետ։ Զի որպէս փայլակն փայլատակեալ ի ներքոյ երկնից ընդ երկինս ծագիցէ, նոյնպէս և Որդի մարդոյ
25 յաւուրն իւրում։ Բայց նախ պարտ է նմա բա-
26 զում չարչարել և խոտել յազգէս յայսմանէ։ Եւ որպէս եղեւ յաւուրան Նոյի, նոյնպէս եղիցի և
27 յաւուրս Որդւոյ մարդոյ։ Ուտէին, ըմպէին, կանայս առնէին և արանց լինէին, մինչեւ յօրն յորում եմուտ Նոյ ի տապանն, և եկն ջրհեղեղն և
28 կորոյս զամենեսեան։ Նոյնպէս և որպէս յաւուրան Ղովտայ եղեւ, ուտէին, ըմպէին, գնէին, վաճա-
29 ռէին, տնկէին, շինէին։ Եւ յորում աւուր ել Ղովտ ի Սոդոմայ, տեղաց հուր և ծծումբ յերկնից և կո-
30 րոյս զամենեսեան։ Ըստ նմին օրինակի եղիցի և յա-
31 ւուրն յորում Որդի մարդոյ յայտնելոց է։ Յայնմ աւուր որ կայցէ ի տանիս և կարասի իւր ի տան, մի՛ իջցէ առնուլ զայն. և որ յանդի իցէ, նոյն-
32 պէս մի՛ դարձցի յետս։ Յիշեցէք զկինն Ղովտայ։
33 Որ խնդրիցէ զանձն իւր ապրեցուցանել կորուսցէ
34 զնա. և որ կորուսցէ՝ ապրեցուսցէ զնա։ Ասեմ ձեզ, Յայնմ գիշերի թէ եղիցին երկու ի մի մա-

35 հիճա, մին առցի և մեւսն թողցի։ Եւ եթէ եղիցին
երկու աղալ ի միասին, մին առցի և մեւսն թող-
ցի. և եթէ իցեն երկու յանդի, մին առցի և մեւսն
36 թողցի։ Պատասխանի եառն և ասեն ցնա, Ցո՛,
37 Տէր։ Եւ նա ասէ ցնոսա, Ուր մարմին է, անդր և
արծուիք ժողովեսցին։

ԳԼ. ԺԸ

1 Զե. Ասաց և առակ մի նոցա առ այն թէ պարտ
է յամենայն ժամ կալ նոցա յաղօթս և մի՛ ձանձ-
2 բանալ։ Ասէ, Դատաւոր մի էր ի քաղաքի ուրեմն,
ՅԱստուծոյ ոչ երկնչէր և ի մարդկանէ ոչ ամա-
3 չէր։ Եւ այրի մի էր ի նմին քաղաքի, գայր առ
4 նա և ասէր, Դատ արա ինձ յոսոխէ իմմէ։ Եւ ոչ
կամէր ի բազում ժամանակս. յետ այնորիկ ասէ
ի մտի իւրում, Եթէ և ՅԱստուծոյ ոչ երկնչիմ,
5 և ի մարդկանէ ոչ ամաչեմ, Գոնէ վասն աշխատ
առնելոյ դմա այրւոյն՝ արարից նմա դատ դի մի՛ ի
6 սպառ եկեալ թախանձիցէ դմա։ Եւ ասէ Տէր,
Լուարուք զինչ դատաւորն անիրաւութեան ասէր։
7 Իսկ Աստուած ո՞չ առնիցէ վրէժխնդրութիւն [1]ծա-
ռայից իւրոց որ աղաղակեն առ նա ի տուէ և ի
գիշերի, և երկայնամիտ միայն լինիցի առ նոսա։
8 Ա՛յո, ասեմ ձեզ դի արասցէ վրէժխնդրութիւն
նոցա վաղվաղակի. իսկ Որդի մարդոյ եկեալ՝ գտա-
նիցէ՞ արդեւք հաւատս յերկրի։
9 Ասաց և առ ոմանս պանծացեալս յանձինս թէ
արդարք իցեն և խոտիցեն զբազումս, զառակս զայս.

---

[1]Ց-ՆՆ, ընտրեալս

10 Երք երկու ելին ի տաճարն կալ յաղօթս, մին
11 փարիսեցի և մեւսն մաքսաւոր։ Փարիսեցին կայր
[1]մեկուսի և զայս առանձինն աղօթս մատուցանէր,
Աստուած [1]իմ, գոհանամ զքէն, զի ոչ եմ իբրեւ
զայլս ի մարդկանէ, զյափշտակողս և զանիրաւս և
12 զշունս կամ իբրեւ զայս մաքսաւոր։ Ամէ պահեմ
երկիցս ի շաբաթու, և տամ տասանորդս յամե-
13 նայն ստացուածոց իմոց։ Եւ մաքսաւորն կայր
մեկուսի, և ոչ կամէր և ոչ զաչսն ընդ երկինս
ամբառնալ, այլ կոծէր զկուրծս իւր և ասէր, Աս-
14 տուած, քաւեա զիս զմեղաւորս։ Ասեմ ձեզ, Էջ
սա արդարացեալ ի տուն իւր քան զնա. զի ամե-
նայն որ բարձրացուցանէ զանձն իւր՝ խոնարհեսցի.
և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի։
15 ՁՁ. Մատուցանէին առ նա և մանկտի զի ձեր-
ձենայցէ ի նոսա. իբրեւ տեսին աշակերտքն, սաս-
16 տէին նոցա։ Իսկ Յիսուս կոչեցեալ զնոսա առ ինքն՝
ասէ, Թոյլ տուք մանկտւոյդ գալ առ իս, և մի՛
արգելուք զդոսա, զի այդպիսեացդ է արքայութիւն
17 Աստուծոյ։ Ամէն ասեմ ձեզ, Որ ոչ ընդունիցի զար-
քայութիւն Աստուծոյ իբրեւ զմանուկ, ոչ մտցէ ի նա։
18 Եւ եհարց զնա ումն իշխան և ասէ, Վարդապետ
բարի, զի՞նչ գործեցից, զի կեանան ցաւիտեանա-
19 կան ժառանգեցից։ Ասէ ցնա Յիսուս, Ձի՞ ասես
20 զիս բարի. չիք ոք բարի բայց մի Աստուած։ Զպա-
տուիրանս գիտես. Մի՛ շնար, Մի՛ սպանաներ, Մի՛
գողանար, Մի՛ սուտ վկայեր, Պատուեա՛ զհայր
21 քո և զմայր։ Եւ նա ասէ, Զայդ ամենայն պահեցի

---

[1] ի ցառնէն պոյոե

22 ի մանկութենէ իմմէ։ Իբրեւ լուաւ զայն Յիսուս,
ասէ ցնա, Մեւս եւս պակաս է քեզ. զամենայն
ինչ զոր ունիս վաճառեա և տուր աղքատաց, և
23 ունիցիս գանձս յերկինս, և եկ զկնի իմ։ Նա իբրեւ
լուաւ զայս, տրտմեցաւ, քանզի էր մեծատուն
24 յոյժ։ Իբրեւ եաես զնա Յիսուս տրտմեալ, ասէ,
Ո՛րպէս դժուարաւ, որ ինչս ունիցին, մտանիցեն
25 յարքայութիւն Աստուծոյ։ Դիւրագոյն իցէ մալ
խոյ ընդ ծակ ասղան անցանել, քան մեծատուն
26 յարքայութիւն Աստուծոյ մտանել։ Եւ որ լուանն
27 ասէին, Եւ ո՞ կարիցէ ապրել։ Եւ նա ասէ, Ան-
հնարինք առ ի մարդկանէ հնարաւորք են յԱս-
28 տուծոյ։ Եւ ասէ Պետրոս, Ահաւասիկ մեք թողաք
29 զամենայն ինչ զմեր, և եկաք զկնի քո։ Եւ նա
ասէ ցնոսա, Ամէն ասեմ ձեզ եթէ Ոչ ոք է որ
եթող զտուն, կամ զծնողս, կամ զեղբարս, կամ
զկին, կամ զորդիս վասն արքայութեան Աստու-
30 ծոյ, եթէ ոչ առնուցու բազմապատիկ ի ժամանա-
կի յայսմիկ, և յաշխարհին որ գալոցն է՝ զկեանս
յաւիտենականս ժառանգեսցէ։
31 Եւ առեալ զերկոտասանան առանձինն՝ ասէ ցնո-
սա, Ահաւասիկ ելանեմք յԵրուսաղէմ, և կատա-
րեսցին ամենայն գրեալքն մարգարէիւք վասն Որ-
32 դւոյ մարդոյ։ Զի մատնեսցի հեթանոսաց, և [1]կա-
33 տակեսցի. Եւ հարկանիցեն և սպանանիցեն զնա,
34 և յերիր աւուր յարիցէ։ Եւ նոքա ոչինչ իմացան
յայնցանէ, այլ էր բանն ծածկեալ ի նոցանէ, և
ոչ գիտէին զասացեալսն։

---

[1] Յ-ՆՆ, կատակեսցի, և նախատեսցի և թքանիցի

35 Չէ. Եւ եղեւ ի մօտենալն նորա յԵրիքով, կոյր
36 ոմն նստէր առ ճանապարհաւն մուրացիկ։ Իբրեւ
լուաւ զանցանել ժողովրդեանն, հարցանէր թէ
37 Ջի՞նչ իցէ այն։ Եւ պատմեցին նմա թէ Յիսուս
38 Նազովրեցի անցանէ։ Աղաղակեաց և ասէ, Յի-
39 սուս, Որդի Դաւթի, ողորմեաց ինձ։ Եւ որ առա-
ջին երթային՝ սաստէին նմա զի լռեսցէ. և նա եւս
առաւել աղաղակէր, Որդի Դաւթի, ողորմեաց
40 ինձ։ Ջտեղի առ Յիսուս, և հրամայեաց ածել զնա
առ իւր. և իբրեւ մերձ եղեւ առ նա, եհարց զնա
41 և ասէ, Ջի՞նչ կամիս դու զի արարից քեզ. և նա
42 ասէ, Տէր, զի բացցին աչք իմ և տեսից։ Եւ Յի-
սուս ասէ ցնա, Հայեաց, հաւատք քո կեցուցին
43 զքեզ։ Եւ առժամայն ետես և երթայր զհետ նորա
և փառաւոր առնէր զԱստուած. և ամենայն ժո-
ղովրդեանն տեսեալ՝ տայր օրհնութիւն Աստուծոյ։

ԳԼ. ԺԹ

1 Եւ մտեալ շրջէր ընդ Երիքով։ (2) Եւ ահա այր
մի անուն կոչեցեալ Զակքէոս, և նա էր մեքաս-
3 պետ և ինքն մեծատուն. Եւ խնդրէր տեսանել
եթէ ով իցէ Յիսուս, և ոչ կարէր ի բազմութե-
4 նէն, զի կարճ էր հասակաւ։ Եւ ընթացեալ յա-
ռաջ՝ ել ի ժանտաթզենին զի տեսանիցէ զնա.
5 քանզի ընդ այն իսկ անցանելոց էր։ Իբրեւ եկն ի
տեղին, հայեցաւ ի վեր Յիսուս և ասէ ցնա, Զակ-
քէ. փութա էջ այսր, զի այսօր ի տան քում
6 արժան է ինձ ագանել։ Փութացաւ և էջ և ըն-
7 կալաւ զնա ուրախութեամբ։ Իբրեւ տեսին ամե-
նեքին, տրտնջէին և ասէին թէ Առ առն մեղաւորի

8 եմուտ լուծանել։ Եկն եկաց Զակքէոս և ասէ
ցՏէր, Տէր, ահա զկէս ընչից իմոց տաց աղքա-
տաց, և եթէ զոք զրկեցի, հատուցից չորեքկին։
9 Եւ ասէ ցնա Յիսուս, Այսօր եղեւ փրկութիւն
տանս այսմիկ. քանզի և սա որդի Աբրահամու է։
10 Զի եկն Որդի մարդոյ խնդրել և կեցուցանել զկո-
րուսեալն։
11 Եւ մինչդեռ նոքա զայն լսէին, յաւել առակ մի
և ասէ վասն մերձենալոյ նորա յԵրուսաղէմ, և
համարելոյ նոցա եթէ առժամայն յայտնելոց է
12 արքայութիւն Աստուծոյ։ Ասէ, Այր ոմն ազնուա-
կան գնաց յաշխարհ հեռի առնուլ իւր թագաւո-
13 րութիւն և դառնալ։ Եւ կոչեցեալ [1]զծառայս
իւր՝ ետ նոցա տասն մնաս, և ասէ ցնոսա, Յար-
14 գեցէք զայդ մինչեւ եկից։ Եւ քաղաքացիքն նորա
ատէին զնա, առաքեցին հրեշտակս զկնի նորա, և
ասեն թէ Ոչ կամիմք թագաւորել դմա ի վերայ
15 մեր։ Եւ եղեւ դառնալ նմա առեալ զթագաւո-
րութիւնն, և կոչեալ զծառայսն որոց տուեալ էր
զարծաթն, զի գիտասցէ թէ ո՛ զինչ շահեցաւ։
16 Եկն առաջինն և ասէ, Տէր, մնասն քո տասն մնաս
17 արար։ Եւ ասէ ցնա, Ազնի՛ւ, ծառայ բարի, զի ի
փոքուդ հաւատարիմ եղեր, լիջիր իշխանութիւն
18 ունել ի վերայ տասն քաղաքի։ Եկն երկրորդն և
19 ասէ, Մնասն քո արար հինգ մնաս։ Ասէ և ցնա,
20 Եւ դու լիջիր ի վերայ հինգ քաղաքաց։ Եկն մեւս
և ասէ, Տէր, ահա մնասն քո զոր ունէի ծրարեալ
21 ի վարշամակի. Երկնչէի ի քէն, զի այր ստամբակ

---

[1] Յ-ՆՆ, զտասն ծառայս

ես. բառնաս զոր ոչ եդիր, և հնձես զոր ոչ սեր-
22 մանեցեր։ Եւ ասէ ցնա, Ի բերանոյ քումմէ դա-
տեցայց զքեզ, ծառայ [1]անհաւատ. գիտէիր թէ ես
այր մի ստամբակ եմ, բառնամ զոր ոչ եդի, հնձեմ
23 ուր ոչ սերմանեցի։ Եւ ընդէ՞ր ոչ եառուր զարծաթն
իմ ի սեղանաւորս, և եկեալ ես տոկոսեօք պա-
24 հանջէի։ Եւ ասէ ցպատասաւորսն, Առէք ի դմանէ
զմնան, և տարայք տուք այնմ որ ունիցի զտասն
25 մնաս։ (Եւ ասեն ցնա, Տէր, ունի տասն մնաս։)
26 Ասեմ ձեզ եթէ Ամենայնի որ ունիցի՝ տացի. և
յայնմանէ որ ոչն ունիցի, և զոր ունիցին՝ բարձցի
27 ի նմանէ։ Բայց զթշնամիսն իմ զայնոսիկ որ ոչն
կամէին զիս թագաւորել ի վերայ նոցա, ածէք
28 այսր և սպանէք առաջի իմ։ Եւ իբրեւ զսյս ա-
սաց, գնաց յառաջ ելանել յԵրուսաղէմ։
29 ԷԿ. Եւ եղեւ իբրեւ մերձեցաւ ի Բեթփագէ և
ի Բեթանիա մօտ ի լեառնն որ կոչի Զիթենեաց,
առաքեաց երկուս յաշակերտացն իւրոց և ասէ,
30 Երթայք դուք ի գեղն որ հանդէպ մեր կայ. յոր
իբրեւ մտանէք, գտանիցէք յաւանակ կապեալ,
յորում ոք ի մարդկանէ երբեք ոչ նստաւ. լուծէք
31 զնա և ածէք։ Եւ եթէ ոք հարցանիցէ զձեզ թէ
Ընդէ՞ր լուծանէք, այսպէս ասասջիք ցնա թէ Տեառն
32 իւրում պիտոյ է։ Իբրեւ չոգան որ առաքեցանն,
գտին որպէս ասացն ցնոսա, [2]կայր յաւանակն։"
33 Եւ մինչդեռ լուծանէին զյաւանակն, ասեն տեարքն
34 նորա ցնոսա, Ընդէ՞ր լուծանէք զյաւանակդ։ Եւ նոքա
35 ասեն, Տեառն իւրում պիտոյ է։ Եւ ածին զնա

---

[1] Յ-ՅՆ, չար [2] ի Բաղմ. պակաս

առ Յիսուս, և ասէին զնովաւ հանդերձս և հե-
36 ծուցին զՅիսուս: Եւ մինչդեռ երթային, զհանդերձս
37 իւրեանց տարածանէին զճանապարհաւն: Եւ իբրեւ
այն ինչ մերձ եղեւ ի զառ ի վայր լերինն Ձիթե-
նեաց, սկսաւ ամենայն բազմութիւն աշակերտացն
ուրախութեամբ օրհնել զԱստուած ի ձայն մեծ
վասն ամենայն եղելոց զօրութեանցն զոր տեսին,
38 Եւ ասէին, Օրհնեալ որ գայ թագաւորդ յանուն
Տեառն, խաղաղութիւն յերկինս և փառք ի բար-
39 ձունս: Եւ ոմանք ի փարիսեցւոցն յամբոխէ անտի
ասեն ցնա, Վարդապետ, սաստեա աշակերտացդ
40 քոց: Պատասխանի ետ և ասէ, Ասեմ ձեզ զի եթէ
դոքա լռեսցեն, քարինքդ աղաղակեսցեն:
41 Եւ իբրեւ մերձեցաւ, տեսեալ զքաղաքն ելոյ
42 ի վերայ նորա, և ասէ, Եթէ գիտէիր դու գոնէ
յաւուրս յայսմիկ զխաղաղութիւնն քո. բայց այժմ
43 ծածկեցաւ [1]յերեսաց քոց: Զի եկեսցեն աւուրք ի
վերայ քո, և պատեսցեն զքեզ թշնամիք քո պատ-
նէշ, և պաշարեսցեն զքեզ, և նեղեսցեն զքեզ
44 յամենայն կողմանց. Եւ յատակեսցեն զքեզ և
զորդիս քո ի քեզ. և ոչ թողուցուն քար ի քար
վերայ յամենայնի ի քեզ, փոխանակ զի ոչ ծա-
նեար զժամանակ այցելութեան քո:
45 Եւ մտեալ ի տաճարն սկսաւ հանել [2]զաղաւ-
նէվաճառսն և զգնողս, և զսեղանս հատավաճա-
46 ռացն ցրուեաց՝: Եւ ասէ ցնոսա, Գրեալ է, Ի
եղիցի տուն իմ տուն աղօթից, և դուք արարէք

---

[1] Ցոյն, յաչաց [2] Բառ՝ զվաճառողսն. ի
այլ՝ զվաճառողսն և զգնողս

47 զդա այրս աւազակաց։ Եւ ուսուցանէր զնոսա հա-
նապազ ի տաճարին իսկ քահանայապետքն և
դպիրք և գլխաւորք ժողովրդեանն խնդրէին զնա
48 կորուսանել, եւ ոչ գտանէին թէ զինչ արասցեն, զի ժողովուրդն ամենայն կախեալ կայր
զնմանէ ի լսել։

ԳԼ. Ի

1 ԷԲ. Եւ եղեւ ի միում աւուրց՝ յայնցանէ, մինչդեռ ուսուցանէր զժողովուրդն ի տաճարի անդ և աւետարանէր, հասին ի վերայ քահանայապետքն
2 և դպիրք ծերովքն հանդերձ, եւ ասեն ցնա, Ասա մեզ, որո՞վ իշխանութեամբ գործես դու զայդ,
3 կամ ո՞վ է որ ետ քեզ զայդ իշխանութիւն։ Պատասխանի ետ և ասէ ցնոսա, Հարցից և ես ցձեզ
4 բան մի, և ասացէք ինձ. Մկրտութիւնն Յովհաննու յերկնի՞ց էր եթէ ի մարդկանէ։ Եւ նոքա խոր-
6 հեցան ի միտս իւրեանց և ասեն, Եթէ ասեմք, Յերկնից, ասէ, իսկ ընդէ՞ր ոչ հաւատացէք նմա.
և եթէ ասեմք, ի մարդկանէ, ամենայն ժողովուրդն քարկոծ առնեն զմեզ. զի հաստատեալ է ի միտս
7 զՅովհաննէ, թէ մարգարէ է։ Եւ պատասխանի
8 ետուն, չգիտել թէ ուստի իցէ։ Եւ Յիսուս ասէ ցնոսա, Եւ ոչ ես ասեմ ձեզ որով իշխանութեամբ առնեմ զայս։

9 ԷԳ. Սկսաւ ասել առ ժողովուրդն զառակս զայս. Այր ոմն տնկեաց այգի, և ետ զնա մշակաց. և ինքն գնաց ճանապարհ ժամանակս բա-
10 զումս։ Եւ ի ժամու առաքեաց առ մշակն ծառայ, զի ի պտղոյ այգւոյն տացեն նմա. և մշակքն

11 գան Հարին զնա, և արձակեցին ունայն: Եւ յա-
ւել մեւս եւս ծառայ յղել նոքա և զնա եւս գան
12 Հարին, անարգեցին և առաքեցին ունայն: Եւ յա-
ւել զերրորդն առաքել. նոքա և զնա վիրաւորեցին
13 և հանին արտաքս: Ասէ տէր այգւոյն, Ձի՞նչ ա-
րարից. առաքեցից զորդի իմ սիրելի, թերեւս ի
14 ամանէ պատկառեսցեն: Իրրեւ տեսին զնա մշակքն,
խորհեցան ընդ միմեանս և ասեն, Սա է ժառանգն,
սպանցուք զսա, զի մեր լինիցի ժառանգութիւնն:
15 Եւ հանին զնա արտաքս քան զայգին և սպանին.
արդ զի՞նչ արասցէ ընդ նոսա տէր այգւոյն: Ո՞չ
ապաքէն գայցէ և կորուսանիցէ զմշակսն զայնոսիկ
և տացէ զայգին այլոց: Իրրեւ լուան՝ ասեն, Ֆաւ,
17 մի՛ լիցի: Եւ նա հայեցեալ ընդ նոսա՝ ասէ, Իսկ
զի՞նչ իցէ այն որ գրեալն է եթէ վէմն զոր անար-
18 գեցին շինողքն՝ նա եղեւ գլուխ անկեան: Ամենայն
որ ընդհարցի ընդ վէմս ընդ այս՝ խորտակեսցի, և
19 յորոյ վերայ անկցի՝ հոսեսցէ զնա: Եւ խնդրէին
դպիրքն և քահանայապետք արկանել ի նա ձեռս
ի նմին ժամու, և երկեան ի ժողովրդենէն, զի գի-
տացին թէ առ նոսա ասաց զառակն զայն:
20 ԻԴ. Եւ ապա ապասեցին, և առաքեցին դաւա-
ճանս կեղծաւորեալս զանձինս առ արդարս ունել,
զի բմբռնեսցեն զնա բանիւք, առ ի մատնել զնա
21 պետութեան և իշխանութեան դատաւորին: Հար-
ցին ցնա և ասեն, Վարդապետ, գիտեմք եթէ ու-
ղիղ խօսիս և ուսուցանես, և ոչ առնուս ակն,
այլ ճշմարտութեամբ զճանապարհն Աստուծոյ ու-
22 սուցանես: Արժա՞ն է մեզ կայսեր հարկս տալ
23 թէ ոչ: Եւ նայեցեալ ընդ խորամանկութիւն նո-

24 ցա՝ ասէ [1]ցնոսա, Յուցէք՝՝ ինձ զդահեկանն. [2]և նո-
քա ցուցին, և ասէ,՝՝ Զո՞յր պատկեր և գիր ու-
25 նի. պատասխանի ետուն և ասեն, Ձկայսեր։ Եւ
նա ասէ ցնոսա, Արդ երթայք տուք զկայսերն
26 կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ։ Եւ ոչ կարա-
ցին զնա ըմբռնել բանիւք առաջի ժողովրդեանն.
և զարմացեալ ընդ պատասխանին նորա՝ լռեցին։
27 Էե՝ Մատուցեալ ոմանք ի սադուկեցւոցն, որք
հակառակէին չլինել յարութեան, հարցին զնա
28 Եւ ասեն, Վարդապետ, Մովսէս գրեաց մեզ, եթէ
ուրուք եղբայր մեռանիցի, որոյ իցէ կին, և նա
անորդի [3]իցէ, զի առնուցու եղբայր նորա զկինն,
29 և յարուսցէ զաւակ եղբօր իւրում։ Արդ եւթն
եղբարք էին. և առաջնոյն առեալ կին՝ մեռաւ
30 անորդի։ Առ զնա և երկրորդն, մեռաւ և նա ան-
31 որդի։ Ու զնա և երրորդն, նոյնպէս և եւթանեքին.
32 և ոչ թողին [4]որդիս։ Մեռաւ՝՝ և կինն, (33) Արդ
ի յարութեան ո՞ւմ ի նոցանէ լինիցի կին. զի եւ-
34 թանեքին կալան զնա կին։ Պատասխանի ետ Նոցա
Յիսուս և ասէ, Որդիք աշխարհիս այսորիկ կանայս
35 առնեն և արանց լինին. Իսկ որ արժանի լինիցին
այնմ աշխարհի հասանել և յարութեանն որ ի
մեռելոց՝ ոչ կանայս առնեն և ոչ արանց լինին։
36 Քանզի և ոչ մեռանել եւս կարեն, զի հաւասար
հրեշտակաց են, և որդիք Աստուծոյ, քանզի յա-
37 րութեան որդիք են։ Այլ զի յառնեն մեռեալք,

---

[1]Ոմն., ցնոսա, (24) Ձի՞ փորձէք դիս. ցուցէք
[2]Յ-մն. պ-ք [3]Ոմն., իցէ ի մեռանելն [4]Բ-ղ-մ.,
որդիս և մեռան։ (32) Յետ ամենեցուն մեռաւ

և Մովսէս գուշակեաց ի մորենւոջն, որպէս ասէ
զՏեառնէ [1]Աստուածոյ Աբրահամու և [1]զԱստուածոյ
38 Իսահակայ և [1]զԱստուածոյ Յակովբայ։ Եւ Աստուած
չէ մեռելոց, այլ կենդանեաց, զի ամենեքեան նմա
39 կենդանի են։ Պատասխանի ետուն ոմանք ի դպրացն
40 և ասեն, Վարդապետ, բարւոք ասացեր։ Եւ ոչ
եւս ոք իշխեր հարցանել զնա և ոչ ինչ։
41 Եզ. Ասէ և առ նոսա, Զիա՞րդ ասեն զՔրիստո-
42 սէ թէ որդի է Դաւթի. Զի ինքն Դաւիթ ասէ ի
գիրս Սաղմոսաց, Ասաց Տէր ցՏէր իմ, Նիստ ընդ
43 աջմէ իմմէ, Մինչեւ եդից զթշնամիս քո պատուան-
44 դան ոտից քոց։ Իսկ արդ եթէ Դաւիթ զնա Տէր
կոչէ, զիա՞րդ որդի նորա իցէ։
45 Եւ լուա ի լուա ամենայն ժողովրդեանն ասէ ցաշա-
46 կերտան, Զգոյշ լերուք ի դպրացն, որ կամին պատ-
մուճանօք շրջել, և սիրեն ողջոյնս ի հրապարակս,
և զնախաթոռս ի ժողովուրդս, և զբարձերէցս
47 յընթերս։ Որ ուտեն զտուներս այրեաց, և պատճա-
ռանօք յերկարեն զաղօթս. նոքա ընկալցին աւելի
դատաստանս։

ԳԼ. ԻԱ

1 Եւ հայեցեալ ետես զմեծատունսն որ արկանէին
2 զտուրս իւրեանց ի գանձանակն։ Ետես և զկին մի
3 այրի աղքատ, որ արկ անդր երկուս լումայս։ Եւ
ասէ, Արդարեւ ասեմ ձեզ, զի այրին այն աղքատ
4 աւելի արկ քան զամենեսեան։ Ամենեքեան նոքա ի
վթարից իւրեանց արկին յընծայսն [2]Աստուծոյ։

---

[1] Յ-յն, Աստուած [2] Յ-ոմն պ-ից-ք

քայց նա ի կարօտութենէ իւրմէ զամենայն զկեանս
իւր զոր ունէր՝ սրկ ։
5 էէ. Եւ յասել ամանց զտաճարէն թէ գեղեցիկ
6 վիմօք և [1]աշտարակօք զարդարեալ է, ասէ, Զոյդ
ամենայն զոր տեսանէք, եկեսցեն աւուրք յորս ոչ
թողցի այդր քար ի քարի վերայ որ ոչ քակտես-
7 ցի ։ Հարցին ցնա և ասեն, Վարդապետ, ե՞րբ լի-
նիցի այդ, և զի՞նչ նշան իցէ յորժամ այդ լինելոց
8 իցէ ։ Եւ նա ասէ, Զգոյշ կացէք, մի՛ խաբիցիք. զի
բազումք գայցեն յանուն իմ, և ասիցեն թէ Ես
եմ, և մերձեցաւ ժամանակ. մի՛ երթայցէք զկնի
9 նոցա ։ Եւ յորժամ լսիցէք պատերազմունս և խռո-
վութիւնս, մի զարհուրիցիք. զի պարտ է նախ այնմ
10 լինել, այլ ոչ առժամայն կատարած ։ Յայնժամ
ասէ ցնոսա, Յարիցէ ազգ յազգի վերայ և թա-
11 գաւորութիւն ի թագաւորութեան վերայ. Եւ
շարժմունք [2]մեծամեծք և ի տեղիս տեղիս սով՝
և սրածութիւնք եղիցին. արհաւիրք և նշանք մե-
12 ծամեծք յերկնից ։ Բայց յառաջ քան զայս ամե-
նայն մխեսցեն զձեռս իւրեանց ի ձեզ և հալածես-
ցեն, մատնեսցեն ի ժողովուրդս և ի բանտս, և
տանիցին առաջի դատաւորաց և թագաւորաց վասն
13 անուան իմոյ ։ Եւ լինիցի ձեզ այն ի վկայութիւն,
14 Արդ դիք ի սիրտս ձեր, մի՛ յառաջագոյն կրթել
15 տալոյ պատասխանի, Զի Ես տաց ձեզ բերան և
իմաստութիւն, որում ոչ կարիցեն կալ հակա-
ռակ կամ տալ պատասխանի ամենայն հակառա-

---

[1]Յոյն, նուիրօք տեղիս, և սովք

[2]Ամե+, մեծամեծք ի տեղիս

16 կորդքն ձեր։ Մատնեսջիք և ի ծնողաց և յեղբարց
և յազգականաց և ի բարեկամաց, և սպանանիցեն
17 ի ձէնջ։ Եւ եղիջիք ատելք յամենեցունց վասն
18 անուան իմոյ. Եւ մազ մի ի գլխոյ ձերմէ ոչ կո-
19 րիցէ։ Եւ համբերութեամբ ձերով առասջիք զ-
գիս ձեր։
20 Ա՛լ յորժամ տեսանիցէք շուրջ պատեալ զ-
բօք զԵրուսաղէմ, յայնժամ գիտասջիք թէ մեր
21 է աւեր նորա։ Յայնժամ որ ի Հրէաստանի իցեն
փախիցեն ի լերինս, և որ ի միջի նորա իցեն՝ խու-
սեացեն, և որ ի գաւառան իցեն՝ մի՛ մտցեն ի նա։
22 Զի աւուրք վրէժխնդրութեան են այնոքիկ առ ի
23 կատարել ամենայն գրելոց։ Բայց վա՛յ իցէ յղեաց
և ածնաուաց յաւուրան յայնոսիկ. զի եղիցի տագ-
նապ մեծ ի վերայ երկրի, և բարկութիւն՝ ժողո-
24 վրդեանն այնմիկ։ Եւ անկցին ի սուր սուսերի, և
գերեացին յամենայն հեթանոսս. և Երուսաղէմ
եղիցի կոխան ազգաց, մինչեւ կատարեացին ժամա-
25 նակք հեթանոսաց։ Եւ եղիցին նշանք յարեգակն
և ի լուսին և յաստեղս, և յերկրի տագնապ հե-
թանոսաց՝ յահեղ բարբառոյ [1]իբրեւ ծովու և [2]խռո-
26 վութեան, ցեղանելոյ ոգւոց մարդկան յերկիւղ
և ի կարծեաց եկելոց ի վերայ տիեզերաց. զի զո-
27 րութիւնք երկնից շարժեացին։ Եւ յայնժամ տես-
ցեն զՈրդի մարդոյ եկեալ ամպովք զօրութեամ
28 և փառօք բազմօք։ Եւ յորժամ սկսանիցի այս լի-
նել, ամբարձջիք և բարձրացուսջիք գլուխս ձեր,
զի մերձ է փրկութիւն ձեր։

---

[1] ի ցոնէն պոյոսե [2] ցոյն, ալեաց

29 Եւ ասաց առակ մի նոցա, Տեսէք զթզենիդ և
30 զամենայն ծառ. Յորժամ [1]ցուցանիցեն զպտուղ
իւրեանց", տեսանէք և ի նոցանէ ճանաչէք եթէ
31 մերձ է ամառն։ Նոյնպէս և դուք յորժամ տե-
սանիցէք զայս ամենայն եղեալ, գիտասջիք թէ
32 մերձ է արքայութիւն Աստուծոյ։ Ամէն ասեմ ձեզ
թէ Ոչ անցցէ ազգս այս, մինչեւ այս ամենայն ե-
33 ղիցի։ Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ ոչ
34 անցանիցեն։ Զգոյշ լերուք անձանց, գուցէ ծան-
րանայցեն սիրտք ձեր շուայտութեամբ և արբե-
ցութեամբ և հոգովք աշխարհականօք, և յան-
35 կարծակի հասանիցէ ի վերայ ձեր օրն այն. Զի
իբրեւ զորոգայթ հասանիցէ ի վերայ ամենեցուն որ
36 բնակեալ են ընդ ամենայն երեսս երկրի։ Արթուն
կացէք այսուհետեւ, յամենայն ժամ աղօթս արա-
րէք, զի արժանի լինիջիք զերծանել յայնմ ամե-
նայնէ որ լինելոց է, և կալ առաջի Որդւոյ մարդոյ։
37 Եւ ի տուէ ի տաճարին ուսուցանէր, և գիշերս
38 ելեալ ապանէր ի լերինն որ կոչէր Ձիթենեաց։ Եւ
ամենայն ժողովուրդն կանխէր ընդ առաւօտս առ
նա ի տաճարն լսել ի նմանէ։ Վ.Ջ

ԳԼ. ԻԲ

1 Մերձեցաւ տօն բաղարջակերացն որ կոչէր Պաս-
2 քա. Եւ խնդրէին քահանայապետքն և դպիրք թէ
զ՞րպէս սպանանիցեն զնա, բայց երկնչէին ի ժողո-
վրդենէ անտի։
3 Ապա եմուտ Սատանայ ի Յուդա ի կոչեցեալն

---

[1] Բ–ղ–ՀԹ, բողբոջեացին

Իսկարիովաց՝, որ էր ի թուոյ երկոտասանից։
4 Զոգաւ եդ բանս ընդ քահանայապետան և ընդ
դպիրս և ընդ իշխանս ժողովրդեանն, զի մատնեսցէ
5 զնա նոցա։ Եւ խնդացին և խոստացան տալ նմա
6 արծաթ։ Եւ յանձն առ և խնդրէր պարապ մատ-
նել զնա նոցա՝ մեկուսի յամբոխէն։
7 Եկն օր բաղարջակերացն, յորում օրէն էր զե-
8 նուլ զպասեքն։ Եւ առաքեաց զՊետրոս և զՅով-
հաննէս և ասէ, երթայք պատրաստեցէք մեզ զպա-
9 սեքն զի կերիցուք։ Եւ նոքա ասեն, Ո՞ւր կամիս
10 զի պատրաստեսցուք։ Եւ ասէ ցնոսա, Ահա իբրեւ
մտանիցէք ի քաղաքն, պատահեսցէ ձեզ այր մի
բարձեալ սափոր ջրոյ. երթիջիք զհետ նորա ի
11 տունն յոր մտանիցէ. Եւ ասասջիք ցտանուտէր
տանն, Վարդապետ ասէ քեզ, Ո՞ւր են վանքն իմ,
յորում զպասեքն ուտիցեմ աշակերտօքս Հանդերձ
12 Եւ նա ցուցցէ ձեզ վերնատուն մի մեծ զարդարեալ,
13 [2]և անդ պատրաստեսջիք։ Եւ գնացեալ գտին որ-
պէս և ասացն նոցա, և պատրաստեցին զպասեքն։
14 Եւ իբրեւ ժամ եղեւ, բազմեցաւ, և երկոտա-
15 սան առաքեալքն ընդ նմա։ Եւ ասէ ցնոսա, Ցան-
կանալով ցանկացայ զայս պասեք ուտել ընդ ձեզ,
16 մինչչեւ չարչարեալ իցեմ։ Բայց ասեմ ձեզ թէ
ոչ եւս կերայց ի սմանէ, մինչեւ լցցի յարքայու-
17 թեան Աստուծոյ։ Եւ ընկալեալ բաժակ գոհացաւ
18 և ասէ, Առէք զայդ և բաժանեցէք ի ձեզ։ Ասեմ
ձեզ թէ յայսմ հետէ ոչ արբից ի բերոյ որթոյ,
մինչեւ եկեսցէ արքայութիւն Աստուծոյ։

---

[1]Յ-ման պ-ի-ե [2]ի բաղ-մ պ-ի-ե

19 Եւ առեալ հաց՝ գոհացաւ, եբեկ և ետ նոցա և
ասէ, Այս է մարմին իմ, [1]որ վասն բազմաց տուեալ՝.
20 զայս արասջիք առ իմոյ յիշատակի։ Նոյնպէս և
զբաժակն յետ ընթրեացն առ և ասէ, Այս բա-
ժակ է նոր ուխտ իմով արեամբ վասն ձեր հեղելոյ։
21 Բայց աւասիկ ձեռն մատնչի իմոյ ընդ իս ի սե-
22 ղանս։ Եւ Որդի մարդոյ ըստ սահմանելոյն երթայ,
բայց վա՛յ մարդոյն այնմիկ յոյր ձեռն մատնեսցի։
23 Եւ նոքա սկսան խնդրել ընդ միմեանս, թէ ո՛վ է
ի նոցանէ որ զայն գործելոց իցէ։
24 Եւ եղեւ հակառակութիւն ի մէջ նոցա թէ ո՛վ
25 ի նոցանէ համարիցի մեծ։ Եւ նա ասէ ցնոսա,
թագաւորք ազգաց տիրեն նոցա, և որ իշխեն նո-
26 ցա՝ բարերարք կոչին. Այլ դուք ոչ այնպէս, այլ
որ մեծն է ի ձեզ՝ եղիցի իբրեւ զկրտսերն, և ա-
27 ռաջնորդն՝ իբրեւ զպատաւորն։ Ո՞վ է մեծ, բազ-
մեա՞լն եթէ պատաւորն. ո՞չ պարտքէն բազմեալն.
28 բայց ես եմ ի միջի ձերում իբրեւ պատաւոր։ Եւ
դուք էք որ ցանգ կայիք ընդ իս ի փորձութիւնս
29 իմ. Եւ ես ուխտեմ ձեզ, որպէս և Հայր իմ ուխ-
30 տեաց ինձ, զարքայութիւն. Ձի ուտիցէք և ըմպի-
ցէք ի սեղան իմ յարքայութեանն իմում, և նստի-
ցիք [2]յերկոտասան աթոռս՝ դատել զերկոտասան
ազգն Իսրայելի։
31 Եւ ասէ Տէր, Սիմոնէ, Սիմոնէ, ահա Սատանայ
32 խնդրեաց զձեզ խարբալել իբրեւ զցորեան. Այլ
ես աղաչեցի վասն քո զի մի՛ պակասեսցեն հաւատք

---

[1] ի ք-ղ-ս, որ վասն ձեր տուեալ. յ-լ՝ պ-ի-ե
[2] ք-ղ-ս, յաթոռս

քո. և դու երբեմն դարձիր և հաստատեացես
33 զեղբարս քո: Եւ նա ասէ ցնա, Տէր, ընդ քեզ
34 պատրաստ եմ և՛ ի բանտ և՛ ի մահ երթալ: Եւ
նա ասէ ցնա, Ասեմ քեզ, Պետրէ, չիցէ այսօր
հաւու խօսեալ՝ մինչեւ երիցս ուրասցիս զիս չգիտել:
35 Եւ ասէ ցնոսա, Յորժամ առաքեցի զձեզ ա-
ռանց քսակի և մախաղի և կօշկաց, միթէ կար-
36 տացո՞ք իմիք: Եւ նոքա ասեն, Եւ ոչ իմիք. ա-
պա ասէ, Այլ այժմ որ ունիցի քսակ՝ բարձցէ,
նոյնպէս և մախաղ. և որ ոչն ունիցի՝ վաճառեացէ
37 զձորձս իւր և գնեացէ իւր սուսեր: Քայց ասեմ
ձեզ, զի այս եւս որ գրեալ է՝ պարտ է զի կա-
տարեացի յիս թէ Ընդ անօրէնս համարեցաւ. զի
38 որ վասն իմ ինչ է՝ վճարեալ է: Եւ նոքա ասեն,
Տէր, ահաւասիկ են աստ երկու սուրք. և նա ասէ
ցնոսա, Բաւական են:
39 Եւ ելեալ գնաց ըստ սովորութեանն ի լեառն
Ձիթենեաց. գնացին ընդ նորա և աշակերտքն:
40 Իբրեւ եհաս ի տեղին, ասէ ցնոսա, Յաղօթս կա-
41 ցէք չմտանել ի փորձութիւն: Եւ ինքն մեկնեցաւ
ի նոցանէ իբրեւ քարընկէց մի, եդ ծունր, կա-
42 յաղօթս, Եւ ասէր, Հայր, եթէ կամիս, անց-
զբաժակս զայս յինէն. քայց ոչ իմ կամք, այլ
43 քոյդ լիցին: Եւ երեւեցաւ նմա հրեշտակ յերկնից
և զօրացուցանէր զնա. և էր ի տագնապի, և մա-
44 դիւրութեամբ եւս կայր յաղօթս: Եւ հոսէին
նմանէ քրտունք իբրեւ զկայլակս արեան [1]ոլո-
45 ռան՝ հեղեալ յերկիր: Եւ յարուցեալ յաղ-

---

[1] ի ցած պատ

թիցն՝ եկն առ աշակերտան, եգիտ զնոսա ի քուն
46 ի տրտմութենէն. Եւ ասէ ցնոսա, Զի՞ ննջէք. ա-
րիք, կացէք յաղօթս՝ զի մի՛ մտանիցէք ի փորձու-
թիւն։
47 Եւ մինչդեռ խօսէր, ահաւասիկ ամբոխ, և որ
կոչէրն Յուդա, մի յերկոտասանիցն, առաջնորդէր
նոցա. [1]իբրեւ մերձեցաւ առ Յիսուս, համբուրեաց
զնա". [2]քանզի զայն նշան տուեալ էր նոցա, թէ
Ընդ որում ես համբուրեցից, նա է, զնա ունի-
48 ցիք։" Ասէ ցնա Յիսուս, Յուդա, համբուրելո՞վ
49 մատնես զՈրդի մարդոյ։ Իբրեւ տեսին որ զնովաւն
էին որ ինչ եղեւն, ասեն ցնա. Տէր, հարցո՞ւք
50 զնոսա սրով։ Եւ եհար մի ոմն ի նոցանէ զքահա-
նայապետին ծառայ, և ի բաց եհան զաջոյ ունկն
51 նորա։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ, Թոյլ
տուք մինչեւ ցայդ վայր. և մատուցեալ յունկն
52 բժշկեաց զնա։ Եւ ասէ ցեկեալսն ի վերայ նորա,
զքահանայապետսն և ցիշխանս տաճարին և ցծերսն,
Իբրեւ ի վերայ աւազակի՞ ելէք սուսերօք և բրօք։
53 Հանապազ ընդ ձեզ էի ի տաճարին, և ոչ ձգե-
ցէք ձեռս յիս. այլ այս է ձեր ժամ և իշխանու-
թիւն խաւարի։
54 Եւ կալեալ զնա՝ ածին և մուծին ի տուն քա-
հանայապետին. և Պետրոս երթայր ակնի նո-
55 րա հեռագոյն։ Իբրեւ լուցին կրակ ի մէջ գաւթին
և նստան շուրջ, նստաւ և Պետրոս ի մէջ նոցա։
56 Եւ տես զնա աղախին ոմն զի նստէր առ լոյսն, հա-

---

[1]Ց-ՅՆ, և մերձեցաւ առ Յիսուս համբուրել զնա
[2]ի բ-զ-ո-ն պ-ե-ե

յեցաւ ընդ նա և ասէ, Եւ սա ընդ նմա էր որ
57 ընդ նմին էին: Իսկ Պետրոս ուրացաւ և ասէ,
58 Ոչ գիտեմ զնա, կին դու: Եւ յետ սակաւ միոյ
այլ ումն հատեալ զնա և ասէ, Եւ դու ի նոցանէ ես.
59 և Պետրոս ասէ, Այր դու, չեմ ի նոցանէ: Եւ
իբրեւ ժամ մի անց ի վերայ, այլ ումն վիճէր և
ասէր, Ստոյգ և սա ընդ նմա էր, քանզի Գա-
60 լիլեացի է: Ասէ Պետրոս, Այր դու, չգիտեմ զինչ
խօսիդ. և առժամայն մինչդեռ նա զայն ասէր,
61 խօսեցաւ հաւ: Դարձաւ Տէր և հայեցաւ ի Պետ-
րոս. և յիշեաց Պետրոս զբանն Տեառն զոր ասաց
ցնա, Մինչչեւ հաւու խօսեալ իցէ, [1]երիցս ուրա-
62 ցիս [2]չգիտել զիս: Եւ ելեալ արտաքս՝ ելաց դառ-
նապէս:
63 Եւ արքն, որ պահէին զնա, այպն առնէին զնո-
64 վաւ և հարկանէին: Ծածկէին զերեսս նորա [2]և
տանջէին՝, և հարցանէին ցնա և ասէին, Մար-
65 գարեացո, ո՞վ է որ եհարն զքեզ: Եւ այլ բազում
ինչ հայհոյութեամբ խօսէին ի նա:
66 Եւ իբրեւ այգ եղեւ, ժողովեցաւ ծերակոյտ ժո-
ղովրդեանն, քահանայապետքն և դպիրք, և հա-
նին ածին զնա յատեանն իւրեանց և ասեն, Եթէ
67 դու ես Քրիստոսն, ասա մեզ: Ասէ ցնոսա, Եթէ
68 ասացից ձեզ, սակայն ոչ հաւատայք: Եւ եթէ
հարցից ինչ զձեզ, չտայք ինձ պատասխանի կամ
69 արձակիցէք: Բայց յայսմ հետէ նստցի Որդի մար-
70 դոյ ընդ աջմէ զօրութեանն Աստուծոյ: Եւ ասեն
ամենեքեան, Ուրեմն դու ես Որդի՞ն Աստուծոյ. և

---

[1] Ոմանք, այսօր երիցս [2] ի բազմս գիրս

71 նա ասէ ցնոսա, Դուք ասէք թէ ես եմ։ Եւ նոքա
ասեն, Ջի՞նչ եւս պիտոյ է մեզ վկայութիւն, զի
մեզէն իսկ լուաք ի բերանոյ դորա։

ԳԼ. ԻԳ

1 Եւ յարուցեալ ամենայն բազմութիւնն նոցա,
2 ածին զնա առ Պիղատոս։ Եւ սկսան չարախօս լի-
նել զնմանէ և ասել, Գտաք զսա զի թիւրեր զազգս
մեր, և արգելոյր ի տալոյ հարկս Կայսեր, և ասէր
3 զանձնէ եթէ Քրիստոսն իցէ թագաւոր։ Իսկ Պի-
ղատոս եհարց զնա և ասէ, Դո՞ւ ես թագաւորն
Հրէից. Նա պատասխանի ետ նմա և ասէ, Դու ա-
4 սացեր։ Ասէ Պիղատոս ցքահանայապետսն և ցժո-
ղովուրդսն, Ձգտանեմ ինչ ինձ սնաս յառնս յայսմիկ։
5 Եւ նոքա պնդէին և ասէին եթէ խռովէ զժողո-
վուրդս, ուսուցանէ ընդ ամենայն Հրէաստան՝
6 սկսեալ ի Գալիլէէ մինչեւ ցայսր։ Իսկ Պիղատոս
իբրեւ լուաւ զԳալիլէէ, եհարց եթէ Գալիլեացի՞
7 իցէ այրն։ Եւ իբրեւ գիտաց թէ յիշխանութենէ
Հերովդի է, ետ տանել զնա առ Հերովդէս. քան-
զի և նա յԵրուսաղէմ էր յաւուրսն յայնոսիկ։
8 Եւ Հերովդէս իբրեւ ետես զՅիսուս, ուրախ եղեւ
յոյժ, զի ցանկայր ի բազում ժամանակաց տեսա-
նել զնա. քանզի լսեր բազում անգամ զնմանէ,
և ակն ունէր նշան ինչ լինել տեսանել ի նմանէ։
9 Հարցանէր զնա բանիւք բազմօք. և նա ոչինչ ետ նմա
10 պատասխանի։ Կային քահանայապետքն և դպիրք
11 և պնդագոյնս չարախօսէին զնմանէ։ Արհամարհեաց
զնա և Հերովդէս հանդերձ իւրովք զօրականօքն,
և այպն արարեալ՝ արկ զնովաւ հանդերձս սպի-

12 տակս, և ետ տանել անդրէն առ Պիղատոս։ Եւ
եղեն բարեկամք Պիղատոս և Հերովդէս յաւուր
յայնմիկ, քանզի յառաջ թշնամիք էին միմեանց։
13 Կոչեաց Պիղատոս զքահանայապետան և զիշխանս
14 և զժողովուրդն, եւ ասէ ցնոսա, Ածէք մատուցէք
ինձ զայրս զայս իբրեւ զխոտորեցուցիչ ժողովր-
դեանն. և ահաւասիկ առաջի ձեր դատեցայ, և
ինձս ինչ ոչ գտի յառնս յայսմիկ զորոց դուք
15 չարախօսէքդ դմանէ։ Ա՛յլ և ոչ Հերովդէս, քան-
զի [1]եաւս տանել զդա առ նա". և արդ ոչինչ մա-
16 հու արժանի է գործեալ դորա. խրատեցից զդա
17 և արձակեցից։ Զի հարկ էր մի մի բաս ազին ար-
18 ձակել նոցա։ Եւ նոքա աղաղակէին ամենայն բազ-
մութեամբն և ասէին, Բարձ զդա և արձակեա
19 մեզ զԲարաբբաս. Որ էր վասն խռովութեան իրիք
եղելոյ ի քաղաքին և սպանութեան մտեալ ի բանտ։
20 Դարձեալ Պիղատոս սկսաւ խօսել, քանզի կամէր
21 արձակել զՅիսուս։ Եւ նոքա անդրէն աղաղակէին
22 և ասէին, [2]Ի խաչ հան" զդա։ Եւ նա [3]երիցս ասէ
ցնոսա, Զի՞նչ չար արար սա. ոչինչ ինձս մահու գտի
23 ի սմա, խրատեցից զսա և արձակեցից։ Եւ նոքա
ստիպէին մեծաձայն և խնդրէին զնա ի խաչ հանել,
և զօրանային բարբառք նոցա և քահանայապետից։
24 Եւ Պիղատոս հաւանեցաւ առնել զհայցուածս նոցա։
25 Արձակեաց նոցա [4]զԲարաբբայն՝ զոր վասն խռովու-
թեան և սպանութեան արկեալ էր ի բանտ, զոր և

---

[1] Ոմանք, առաքեցի զձեզ առ նա, այլ՝ առաքեաց զնա առ մեզ [2] Բազումք, Ի խաչ հան, ի խաչ հան
[3] Յոմանս, երրորդ անգամ [4] Ի բազումս պակաս

խնդրէին իսկ, և զՅիսուս մնաննեաց կամաց նոցա։
26 Իբրեւ առին գնացին զնա, բմբռնեցին զոմն Սի-
մոնէ Կիւրենացի որ գայր յանդէ, եդին ի վերայ
27 նորա զխաչն բերել զկնի Յիսուսի։ Եւ երթայր
զկնի նորա բազմութիւն ժողովրդեանն և կանանց
28 որ կոծէին և աշխարէին զնա։ Դարձաւ Յիսուս և
ասէ ցնոսա, Դստերք Երուսաղեմի, մի՛ լայք ի վե-
րայ իմ, այլ լացէք ի վերայ անձանց և ի վերայ
29 որդւոց ձերոց։ Զի եկեսցեն աւուրք, յորս ասիցեն
թէ երանի ամլոց և արովայնից որ ոչ ծնան, և
30 ստեանց՝ որ ոչ դիեցուցին։ Յայնժամ սկսանիցին
ասել լերանց թէ Անկերուք ի վերայ մեր, և բլրոց՝
31 թէ Ծածկեցէք զմեզ։ Զի եթէ ընդ փայտ դալար
զայս առնեն, ընդ չորն ո՞ինչ լինիցի։
32 Ածին և այլ երկուս, չարագործս, սպանանել
33 ընդ նմա։ Իբրեւ հոգան ի տեղին կոչեցեալ Գա-
գաթէն, անդ հանին զնա ի խաչ, և զչարագործսն,
34 զոմն ընդ աջմէ և զոմն ընդ ձախմէ [1]խաչեցին։ Եւ
Յիսուս ասէ, Հայր, թող դոցա, զի ոչ գիտեն
զինչ գործեն։ Եւ ի բաժանել զհանդերձս նորա
35 արկին վիճակս։ Եւ կայր ժողովուրդն հայեցեալ.
անգոանէին զնա իշխանքն հանդերձ նոքօք և ասէին,
Զայլս ապրեցոյց, ապրեցուսցէ և զանձն, եթէ դա
36 է Քրիստոս [2]Որդի Աստուծոյ ընտրեալն։ Այսպն
առնէին զնա և զինուորքն, եկեալ առաջի՝ մա-
37 տուցանէին նմա քացախ, Եւ ասէին, եթէ դու
38 ես թագաւորն Հրէից, փրկեա զանձն քո։ Եւ էր
գիր գրեալ ի վերայ նորա Յունարէն և Դաղմատե-

---

[1] ի ցո՛ւյն պ՛ոյ՛ս [2] Բ՛ոզ՛ս՛ի, ընտրեալն Աստուծոյ

բէն և եբրայեցերէն գրով թէ Սա է արքայն Հրէից։
39 Իսկ մի ոմն ի կախելոց չարագործացն հայհոյէր
զնա և ասէր, [1]Ո՞չ դու ես Քրիստոսն, փրկեա
40 զանձն քո և զմեզ։ Պատասխանի եառ ընկերն աս-
տեղով նմա և ասէ, Զերկնչի՞ս դու յԱստուծոյ, զի
41 ի նմին պատժի կաս։ Եւ մեք յիրաւի, զի արժա-
նի որոց գործեցաքն՝ առնումք զհատուցումն. և
42 սա ապիրատ ինչ ոչ գործեաց։ Եւ ասէ ցՅիսուս,
Յիշեա զիս, Տէր, յորժամ գայցես արքայութեամբ
43 քով։ Եւ ասէ ցնա Յիսուս, Ամէն ասեմ քեզ,
Այսօր ընդ իս իցես ի դրախտին։
44 Եւ էր իբրեւ վեցերորդ ժամ, և խաւար եղեւ ի
վերայ ամենայն երկրի մինչեւ ցիններորդ ժամն։
45 խաւարեցաւ արեգակն։ Եւ հերձաւ վարագոյր տա-
46 ճարին ընդ մէջ։ Եւ կարդաց Յիսուս ի ձայն մեծ
և ասէ, Հայր, ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ.
զայս իբրեւ ասաց, եհան զոգի։
47 Եւ տեսեալ հարիւրապետին զոր ինչ եղեւն
փառաւորէր զԱստուած և ասէ, Արդարեւ
48 այրս այս արդար էր։ Եւ ամենայն ժողովուրդքն որ
եկեալ էին, և տեսանէին զտեսիլն զայն և զգործ,
49 բախէին զկուրծս և դառնային։ Կային և ամենայն
ծանօթքն նորա ի հեռաստանէ, և կանայք որ ե-
կեալ էին զհետ նորա ի Գալիլէէ՝ տեսանէին զայն։
50 Եւ ահա այր մի անուն Յովսէփ, որ էր նախա-
51 րար, այր բարեգործ և արդար, (Սա չէր միաբա-
նեալ ընդ խորհուրդս և ընդ գործս նոցա,) յԱրի-
մաթեայ քաղաքէ Հրէից, որ և ինքն իսկ ակն ու-
52 նէր արքայութեան Աստուծոյ։ Սա մատուցեալ

[1] Յոհան, եթէ

53 առ Պիղատոս՝ խնդրեաց զմարմինն Յիսուսի. Եւ
իջուցեալ զնա՝ պատեաց պատառաւակալաւ, և եդ
ի կռածոյ գերեզմանի ուր չէր բնաւ ոք եդեալ։
54 Եւ օրն էր ուրբաթ և շաբաթ լուսանայր։
55 Եւ երթային զհետ նորա կանայք որ եկեալ էին
ընդ նմա ի Գալիլէէ, տեսին զգերեզմանն, և որպէս
56 եդաւ մարմին նորա։ Դարձան և պատրաստեցին
խունկս և եւղս և ի շաբ թուն հանդարտեցին վասն
պատուիրանին։

ԳԼ. ԻԴ

1 Բայց ի միաշաբաթուն վաղ քաջ ընդ առաւօտն
եկին ի գերեզմանն, բերին զխունկսն զոր պատրաս-
2 տեցին, և այլ կանայք ընդ նոսա. Եւ գտին զվէմն
3 թաւալեցուցեալ ի գերեզմանէ անտի։ Եւ մտեալ
4 ի ներքս ոչ գտին զմարմինն Տեառն Յիսուսի։ Եւ
եղեւ ընդ հիանալն նոցա վասն այնորիկ, և ահա
արք երկու հասին առ նոսա ի հանդերձս լուսա-
5 ւորս։ Եւ իբրեւ զահի հարան և խոնարհեցուցին
զերեսս իւրեանց յերկիր, ասեն ցնոսա, Ձի՞ խնդրէք
6 զկենդանին ընդ մեռեալս. Չէ աստ, այլ յարեաւ.
յիշեցէք որպէս խօսեցաւ ընդ ձեզ մինչ էրն ի
7 Գալիլեա, Եւ ասէր թէ Պարտ է Որդւոյ մարդոյ
մատնել ի ձեռս մարդոց մեղաւորաց, և ի խաչ
8 ելանել և յերրորդ աւուր յառնել։ Եւ յիշեցին
9 զբանան նորա։ Եւ [1]դարձան պատմեցին զայս ամե-
10 նայն մեռաւանիցն և այլոցն ամենեցուն։ Եւ էին
Մարիամ Մագդաղենացի և Յովհաննա և Մարիամ
Յակովբայ և այլք ընդ նոսա որ պատմեցին զայս

[1]Բազմ. դարձան ի գերեզմանէն

11 առաքելոցն։ Եւ երեւեցան առաջի նոցա շաղփաղ-
12 փուԹիւն բանքն նոցա և չՀաւատային նոցա։ Բայց
Պետրոս յարուցեալ ընԹացաւ ի գերեզմանն, և
Հայեցեալ տեսանէ զկտաւան յոկ զի կային, և
գնաց ընդ միտս զարմացեալ Թէ զինչ եղեւ։
13 Եւ ահա երկուք ի նոցանէ երԹային ի նմին ա-
ւուր ի գեղ մի որ Հեռի էր յԵրուսաղեմէ ¹Հարեր
և վաԹսուն՝ ասպարիսաւ, և էր անուն նորա Եմ-
14 մաուս։ Եւ նոքա խօսէին ընդ միմեանս վասն ա-
15 մենայն անցիցն անցելոց։ Եւ եղեւ ընդ խօսելն նո-
ցա և ընդ վիճել, և ինքն իսկ Յիսուս մերձեցաւ
16 և երԹայր ընդ նոսա։ Եւ նոցա աչք կալեալ էին
17 առ ի չճանաչելոյ զնա։ Եւ ասէ ցնոսա, Զի՞նչ են
բանքդ վասն որոյ վիճիքդ ընդ միմեանս մինչդեռ
18 գնայիքդ, և տրտմեալ էք։ Պատասխանի ետ մի ոմն
ի նոցանէ որում անուն էր Կղէովպաս, և ա-
ցնա, Դո՞ւ միայն կաս յԵրուսաղէմ, որ ոչ գիտա-
ցեր զինչ գործեցաւ ի նմա յաւուրս յայսոսիկ։
19 Եւ ասէ ցնոսա, Զի՞նչ. և նոքա ասեն, ԶՅիսուսէ
Նազովրեցւոյ, որ եղեւ այր մարգարէ Հզօր ա-
գործիւք և բանիւք առաջի Աստուծոյ և ամենայ-
20 ժողովրդեանն։ Ո՛րպէս մատնեցին զնա քահանա-
յապետքն և իշխանքն մեր ի դատաստան մահու և
21 Հանին զնա ի խաչ։ Մեք ակն ունէաք Թէ նա իցէ
որ փրկելոցն էր գԻսրայէլ. այլ և Հանդերձ այս-
ամենայնիւ այս երրորդ օր է յորմէ Հետէ այն
22 գործեցաւ. Այլ և կանայք ոմանք ի մէնջ զարմա-
ցուցին զմեզ, որք կանխեալ ընդ առաւօտն չոգան
23 ի գերեզմանն, Եւ ոչ գտին զմարմինն նորա. եկն

¹Բ—ղ—ʃ, վաԹսուն

և ասեն թէ և տեսիլ եւս հրեշտակաց տեսին, որք
24 ասէին զնմանէ թէ կենդանի է։ Եւ գնացին ոմանք
ի մէնջ ի գերեզմանն, և գտին նոյնպէս որպէս և
25 կանայքն ասացին բայց զնա ոչ տեսին։ Եւ նա
ասէ ցնոսա, Ո՛վ անմիտք և հեղգասիրտք ի հա-
26 ւատալ ամենայնի զոր խօսեցան մարգարէքն։ Ո՞չ
զնոյնս պարտ էր չարչարել Քրիստոսի, և մտանել
27 ի փառս իւր։ Եւ սկսեալ ի Մովսիսէ և յամենայն
մարգարէիցն՝ մեկնէր նոցա որ ինչ յամենայն գիրս
28 գրեալ էր զնմանէ։ Իբրեւ մերձեցան ի գեղն յոր
երթային, և նա պատճառէր հեռագոյն եւս ուրեք
29 երթալ։ Եւ բռնադատեցին զնա և ասեն, Ա՛ռ մեզ
ապիր, զի ընդ երեկս է և տարաժամեալ է օրս.
30 և եմուտ ապանել անդ ընդ նոսա։ Եւ եղեւ ի
բազմել նորա ընդ նոսա, առեալ զհացն օրհ-
31 նեաց, երեկ ևետ նոցա։ Եւ նոցա բացան աչք և
ծանեան զնա, և նա եղեւ ի նոցանէ աներեւոյթ։
32 Եւ ասեն ցմիմեանս, Ո՞չ իսկ և սիրտք մեր ճմլէին
ի մեզ մինչ խօսէրն ընդ մեզ ճանապարհայն, և
33 բացեալ մեզ զգիրս։ Եւ յարուցեալ նոյն-
ժամայն՝ դարձան յԵրուսաղէմ, և գտին ժողովեալ
34 զմեսասանան և զորս ընդ նոսայն էին. Եւ ասեն
թէ Արդարեւ յարեաւ Տէր և երեւեցաւ Սիմոնի։
35 Եւ նոքա պատմեցին զայն որ ճանապարհայնն, և
թէ զիա՛րդ ետ ծանօթս նոցա ի բեկանել հացին։
36 Մինչդեռ զայն խօսէին, ինքն իսկ Յիսուս եկաց
ի մէջ նոցա և ասէ ցնոսա, Խաղաղութիւն ընդ
37 ձեզ, [1]ես եմ, մի՛ երկնչիք։" Եւ զարհի հարեալ
38 երկնչէին, և համարէին ոգի ինչ տեսանել։ Եւ ասէ

[1] ի բ-ը-մ- գ-ե-ե

ցնոսա, Չի՞ խռովեալ էք, և ընդէ՞ր խորհուրդք
39 ելանեն ի սիրտս ձեր։ Տեսէք զձեռս իմ և զոտս,
զի ես նոյն եմ. շօշափեցէք զիս և տեսէք, զի ոգի
մարմին և ոսկերս ոչ ունի, որպէս զիս տեսանէք
40 զի ունիմ։ Եւ զայս ասացեալ եցոյց նոցա զձեռս
41 և զոտս։ Եւ մինչդեռ տակաւին չհաւատային ի
խնդութենէն և զարմացեալ էին, ասէ ցնոսա, Ու-
42 նի՞ք ինչ կերակուր աստ։ Եւ նոքա ետուն նմա
43 ձկան խորովելոյ մասն [1]և խորիսխ մեղու։" Եւ առ
44 եկեր առաջի նոցա, [1]և զմնացորդսն ետ նոցա։" Եւ
ասէ ցնոսա, Այս բանք են զոր խօսեցայ ընդ ձեզ,
մինչ առ ձեզն էի թէ Պարտ է լնուլ ամենայն գրե-
լոցն յօրէնսն Մովսիսի և ի մարգարէս և ի սաղմոս
45 վասն իմ։ Յայնժամ եբաց զմիտս նոցա իմանալ
46 զգիրս։ Եւ ասէ ցնոսա թէ [2]Այսպէս պարտ էր
չարչարել Քրիստոսի, և յառնել ի մեռելոց յա-
47 ւուրն երրորդի, Եւ քարոզել յանուն նորա ապաշ-
խարութիւն և թողութիւն մեղաց յամենայն ազգս
48 սկսեալ յԵրուսաղեմէ։ Եւ դուք էք վկայք այս-
49 ցիկ։ Եւ ահա ես առաքեմ զաւետիս Հօր իմոյ ի
ձեզ. և դուք նստարուք ի քաղաքիս Երուսաղէմ,
մինչեւ զգենուցուք զօրութիւն ի բարձանց։
50 Եհան զնոսա մինչեւ ի Բեթանիա, և ամբարձեալ
51 զձեռս իւր՝ օրհնեաց զնոսա։ Եւ եղեւ յօրհնել
նորա զնոսա, մեկնեցաւ ի նոցանէ և վերանայր
52 յերկինս։ Եւ նոցա երկիր պագեալ նմա՝ դարձան
53 Երուսաղէմ ուրախութեամբ մեծաւ։ Եւ էին կա-
նապազ ի տաճարին, գովէին և օրհնէին զԱստուած

---

[1] Ի բազմ. պակաս է [2] Յն., Այսպէս գրեալ է
և այսպէս

ԳԼՈՒԽՔ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

	Գլ.	Համ.
Վասն՝ զի անսկիզբն է Բանն Աստուած.	Ա.	1
Վասն Յովհաննու վկայելոյն Բանին Աստուծոյ	Ա.	15
Վասն գալոյն առ նա Գաւրիէն Աստուածոյ.	Ա.	29
Վասն աշակերտացն առ Յիսուս ագանելոյն	Ա.	39
Վասն գտանելոյն զՄեսիա.	Ա.	41
Վասն ի կանա Հարսանեացն.	Բ.	1
Վասն արտաքս հանելոյն ի տաճարէն.	Բ.	15
Վասն Նիկոդեմոսի.	Գ.	1
Վասն ի յԱյհենոյէ մկրտելոյն.	Գ.	23
Վասն խնդիր լինելոյ վասն սրբութեան.	Գ.	25
Վասն կնոջն Սամարացւոյ.	Դ.	7
Վասն թագաւորտղինն.	Դ.	46
Վասն երեսունեւութամեայ հիւանդին.	Ե.	5
Վասն՝ զի Հայր սիրէ զՈրդի.	Ե.	20
Վասն հինգ հացին և երկու ձկանն.	Զ.	9
Վասն գնալոյն ի վերայ ծովուն.	Զ.	19
Վասն մարտնչելոյն ընդ միմեանս Հրէից.	Զ.	41
Վասն շրջելոյն Յիսուսի ի Գալիլէ, և խրատու եղբարցն.	Է.	1
Վասն խնդրելոյն Հրէից ունել զՅիսուս.	Է.	30
Վասն ի ծնէ կուրին.	Թ.	1
Վասն գնելոյն Յիսուսի զանձն ի վերայ ոչխարացն.	Ժ.	15
Վասն նաւակատեացն յԵրուսաղէմ.	Ժ.	22
Վասն Ղազարու յարութեանն.	ԺԱ.	1
Վասն օծանելոյն զՏէրն.	ԺԲ.	3
Վասն՝ որ աւտց Յուդա զիւղջն.	ԺԲ.	5

	Գլ.	Հմր.
Վասն յովանակին.	ԺԲ.	14
Վասն մատչելոյ հեթանոսացն առ Տէր.	ԺԲ.	21
Վասն հատին ցորենոյ.	ԺԲ.	24
Վասն Յիսուսի լոյս գալոյն յաշխարհ.	ԺԲ.	46
Վասն ընթրեացն և լուանալոյ ոտս աշակերտացն.	ԺԳ.	1
Վասն չարչարանացն Յիսուսի, և սփոփելոյ զաշակերտան.	ԺԴ.	15
Վասն գալոյ Հոգւոյն և մխիթարելոյ զաշակերտան.	ԺԴ.	26
Վասն մատնութեանն Յիսուսի.	ԺԸ.	2
Վասն ուրացութեանն Պետրոսի, և հաւուն խօսելոյ.	ԺԸ.	25
Վասն ածելոյն զՅիսուս ի վանացն կայիափայ.	ԺԸ.	28
Վասն տանելոյն զՅիսուս ի Գողգոթա.	ԺԹ.	17
Վասն աւանդելոյ զՀոգին.	ԺԹ.	30
Վասն խնդրելոյն զՏէրունական մարմինն.	ԺԹ.	38
Վասն բերելոյն Նիկոդեմոսի զմիւռս.	ԺԹ.	39
Վասն գալոյ կանանցն ի գերեզմանն.	Ի.	1
Վասն դրօքն փակելով մնանելոյն Յիսուսի առ աշակերտան.	Ի.	19
Վասն զԹովմաս հաստատելոյ Տեառն.	Ի.	27
Վասն ուտելոյն ընդ նոսա, և հարցմանն զՊետրոս.	ԻԱ.	15
Վասն սիրելոյ աշակերտին, և գրելոյ զԱւետարանն.	ԻԱ.	24

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ԳԼՈՒԽ Ա

1 ԲԿ. Ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ
2 Աստուած, և Աստուած էր Բանն: Նա էր ի սկզբ-
3 բանէ առ Աստուած: Ամենայն ինչ նովաւ եղեւ,
և առանց նորա եղեւ և ոչ ինչ որ ինչ եղեւն:
4 Նովաւ կեանք էր, և կեանքն էր լոյս մարդկան.
5 Եւ լոյսն ի խաւարի անդ լուսաւորէ, և խաւար
նմա ոչ եղեւ հասու:
6 Եղեւ այր մի առաքեալ յԱստուծոյ, անուն նմա
7 Յովհաննէս: Սա եկն ի վկայութիւն զի վկայեա-
ցէ վասն Լուսոյն, զի ամենեքին հաւատասցեն նո-
8 վաւ: Ոչ էր նա Լոյսն, այլ զի վկայեսցէ վասն
Լուսոյն:
9 Էր Լոյսն ճշմարիտ, որ լուսաւորէ զամե-
10 նայն մարդ [1]որ գալոց է՝ յաշխարհ: Յաշխարհի էր,
և աշխարհ նովաւ եղեւ, և աշխարհ զնա ոչ ծա-
11 նեաւ: Յիւրան եկն, և իւրքն զնա ոչ ընկալան:
12 Իսկ որք ընկալանն զնա՝ ետ նոցա իշխանութիւն
որդիս Աստուծոյ լինել որոց հաւատասցեն յանուն
13 նորա. Որք ոչ յարեանէ և ոչ ի կամաց մարմնոյ և

---

[1]Գոյն, եկեալ

14 ոչ ի կամաց առն, այլ Աստուծոյ ծնան։ Եւ
Բանն մարմին եղեւ և բնակեաց ի մեզ, և տեսաք զփառս նորա, զփառս իբրեւ զմիածնի առ ի Հօրէ,
լի շնորհօք և ճշմարտութեամբ։
15 Յովհաննէս վկայէ վասն նորա, աղաղակեաց և
ասէ, Սա է զորմէ ասէի, Որ կինի իմ գալոցն էր՝
16 առաջի իմ եղեւ, զի նախ քան զիս էր։ Զի ի
լրութենէ անտի նորա մեք ամենեքեան առաք շնորհս
17 փոխանակ շնորհաց։ Զի օրէնքն ի ձեռն Մովսիսի
տուան, շնորհքն և ճշմարտութիւնն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղեն։
18 ԲԲ. ԶԱստուած ոչ ոք ետես երբեք, բայց միա-
19 ծինն Որդի որ է ի ծոց Հօր, նա պատմեաց։ Եւ
այս է վկայութիւնն Յովհաննու, յորժամ առա-
քեցին առ նա Հրեայքն Երուսաղեմէ քահանայս
և Ղեւտացիս, զի հարցցեն զնա թէ Դու ո՞ ես։
20 Եւ խոստովան եղեւ և ոչ ուրացաւ. խոստովան
21 եղեւ եթէ Ես ոչ եմ Քրիստոս։ Եւ հարցին զնա
Իսկ ո՞վ ես դու, Եղիա՞ ես. և ասէ, Ոչ եմ։ Իսկ
22 մարգարէ՞ն ես դու. պատասխանի ետ թէ Ոչ։ Իսկ
ապա մեզ, Դու ո՞վ ես, զի պատասխանի տար-
ցուք որոց առաքեցինն զմեզ. զի՞ ասես վասն քո։
23 Ասէ, Ես՝ ձայն բարբառոյ յանապատի, Ուղիղ
արարէք զճանապարհն Տեառն, որպէս ասաց Ե-
24 սայի մարգարէ։ Եւ որք առաքեցանն՝ ի փարիսե-
25 ից էին։ Հարցին զնա և ասեն, Իսկ ընդէ՞ մկրտես, եթէ դու չես Քրիստոս, և ոչ Եղիա
26 և ոչ մարգարէն։ Պատասխանի ետ նոցա Յովհան-
նէս և ասէ, Ես մկրտեմ զձեզ ջրով. ի միջի ձե-
27 րում կայ, զոր դուքն ոչ գիտէք։ Որ կինի իմ

[1]գալոցն է", որուամ չեմն արժանի եմէ լուծից
28 զքրացս կօշկաց նորա։ Այս ի Բեթաբրա եղեւ
յայնկոյս Յորդանանու, ուր էրն Յովհաննէս և
մկրտէր։
29 ԲԳ. Ի վաղիւ անդր տեսանէ զՅիսուս զի գայր
առ նա. և ասէ, Ահաւասիկ Գառն Աստուծոյ որ
30 բառնայ զմեղս աշխարհի։ Սա է վասն որոյ ես
ասէի, Ձկնի իմ գայ այր որ առաջի իմ եղեւ, զի
31 յառաջ իակ էր քան զիս։ Եւ ես ոչ գիտէի զնա,
այլ զի յայտնի լինիցի Իսրայելի, վասն այնորիկ
32 եկի ես ջրով մկրտել։ Վկայեաց Յովհաննէս և ասէ
թէ Տեսանէի զՀոգին, զի իջանէր իբրեւ զաղաւնի
33 յերկնից, և հանգչէր ի վերայ նորա։ Եւ ես ոչ
գիտէի զնա, այլ որ առաքեացն զիս մկրտել ջրով՝
նա ասաց ցիս, Ցոյր վերայ տեսանիցես զՀոգին զի
իջանիցէ և հանգչիցի ի վերայ նորա, նա է որ մկրտէ
34 Հոգւովն Սրբով։ Եւ ես տեսի և վկայեցի եմէ Սա
է Որդին Աստուծոյ։
35 ԲԴ. Ի վաղիւ անդր կայր Յովհաննէս, և յաշա-
36 կերտաց անտի նորա երկու։ Եւ նայեցեալ ընդ Յի-
սուս զի գնայր, ասէ, Ահաւասիկ [2]Գրիսատոս Գառն
37 Աստուծոյ։ Լուան ի նմանէ երկու աշակերտքն զի
38 խօսէր, և գնացին զհետ Յիսուսի։ Իբրեւ դարձաւ
Յիսուս ևետես զնոսա զի երթային զհետ նորա,
ասէ ցնոսա, Զի՞նչ խնդրէք. Նոքա ասեն ցնա,
Ռաբբի, (որ թարգմանեալ կոչի Վարդապետ,) ո՞ւր
39 են օթեվանք քո։ Ասէ ցնոսա, Եկայք և տեսէք։

---

[1]Ոմանք, գալոցն է, որ առաջի իմ եղեւ

[2]ի Բաղսամ պատոք

եկին և տեսին ուր էին օթեվանք նորա, և առ նմա ագան այն օր, զի ժամ էր իբրեւ տասներորդ։
40 Էր Անդրէաս եղբայր Սիմովնի Պ֊իմի, մի յերկուց
անտի որ լուան ի Յովհաննէ և գնացին զկնի նո֊
41 րա։ Գտանէ սա նախ զեղբայր իւր զՍիմովն, և ասէ
ցնա, Գտաք զՄեսիան (որ թարգմանի Քրիստոս)։
42 Ա՛ա ած զնա առ Յիսուս. Հայեցեալ ընդ նա Յի֊
սուսի՝ ասէ, Դու ես Սիմովն որդի Յովնանու, դու
կոչեցիս Կեփաս (որ թարգմանի Պետրոս)։
43 Բե. Ի վաղիւ անդր կամեցաւ ելանել ի Գալի֊
լեա. գտանէ զՓիլիպպոս, և ասէ ցնա Յիսուս, Ե՛կ
44 զկնի իմ։ Եւ էր Փիլիպպոս ի Բեթսայիդայ, ի քա֊
45 ղաքէ Անդրեայ և Պետրոսի։ Գտանէ Փիլիպպոս
զՆաթանայէլ և ասէ ցնա, Զորմէ գրեաց Մովսէս
յօրէնսն՝ և մարգարէքն, գտաք զՅիսուս զորդի
46 Յովսեփայ ի Նազարեթէ։ Ասէ ցնա Նաթանայէլ,
Իսկ ի Նազարեթէ մի՞թէ ինչ իցէ բարւոյ իմիք
47 լինել. ասէ ցնա Փիլիպպոս, Ե՛կ և տես։ Իբրեւ
ետես Յիսուս զՆաթանայէլ զի գայր առ նա, ասէ
վասն նորա, Ա՛հա արդարեւ Իսրայելացի յորում նենգ֊
48 գութիւն ոչ գոյ։ Ասէ ցնա Նաթանայէլ, Ուստի՞
ճանաչես զիս. պատասխանի ետ Յիսուս և ասէ
ցնա, Մինչչեւ էր Փիլիպպոսի կոչեցեալ զքեզ՝ զի
49 էիր ի ներքոյ թզենւոյն, տեսի զքեզ։ Պատասխա֊
նի ետ նմա Նաթանայէլ և ասէ, Ռաբբի, դու ես
Որդի Աստուծոյ, դու ես Թագաւորն Իսրայելի։
50 Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ, Փոխանակ
զի ասացի քեզ Թէ տեսի ի ներքոյ թզենւոյն, Հա֊
51 ւատա՞ս. Մեծամեծս եւս քան զայս տեսցես։ Եւ
ասէ ցնա, Ամէն ամէն ասեմ ձեզ, Տեսանիցէք

զերկինս բացեալ, և զՀրեշտակս Աստուծոյ զի ե-
լանիցեն և իջանիցեն ի վերայ Որդւոյ մարդոյ։

ԳԼ. Բ

1 ԲԶ. Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին ի Կա-
2 նա Գալիլեացւոց, և անդ էր մայրն Յիսուսի։ Կո-
չեցաւ և Յիսուս և աշակերտքն նորա ի հարսա-
3 նիսն։ Եւ ի պակասել գինւոյն՝ ասէ մայրն Յի-
4 սուս, Գինի ոչ ունին։ Եւ ասէ ցնա Յիսուս, Ձի՞
կայ իմ և քո, կին դու. չեւ է հասեալ ժամանակ
5 իմ։ Ասէ մայրն նորա ցսպասաւորսն, Որ ինչ ասիցէ
6 ձեզ՝ արասջիք։ Անդ էին թաղոյկք կճեայք վեց ըստ
սրբութեանն Հրէից, տանէին մի մի ի նոցանէ մերս
7 երկուս կամ երիս։ Ասէ ցնոսա Յիսուս, Լցէք զթա-
8 ղոյկսդ ջրով. և լցին զնոսա մինչեւ ի վեր։ Եւ ասէ
ցնոսա, Արդ առէք և բերէք տաճարապետիդ. և
9 նոքա բերին։ Եւ իբրեւ ճաշակեաց տաճարապետն
զջուրն գինի եղեալ, և ոչ գիտէր ուստի իցէ. բայց
սպասաւորքն գիտէին որք արկին զջուրն. խօսի ընդ
10 փեսային տաճարապետն, Եւ ասէ, Ամենայն մարդ
զանոյշ գինին յառաջագոյն պաշտէ. և յորժամ
արբենան, յայնժամ զլոքին. դու պահեցեր զանոյշ
11 գինիդ մինչեւ ցայժմ։ Զայս արար սկիզբն նշանաց
Յիսուս ի Կանա Գալիլեացւոց, և յայտնեաց զփառս
իւր, և հաւատացին ի նա աշակերտքն նորա։
12 ԲԷ. Ցետ այսորիկ էջ ի Կափառնայում, ինքն
և մայր իւր և եղբարք իւր[1]. և անդ լինէր ոչ բա-
զում ինչ աւուրս։

---

[1]Բազմաթ յունարէն, և աշակերտք իւր

13 Եւ էր մերձ զատիկն Հրէից, և ել Յիսուս յե-
14 րուսաղէմ. Եւ եգիտ ի տաճարին զի վաճառէին
զարջառս և զոչխարս և զաղաւնիս, և զլումայա-
15 փոխան որ նստէին։ Եւ արար խարազան չուանեայ,
և եհան զամենեսին ի տաճարէն զոչխարսն և զար-
ջառս, և զպղինձս հատուածացն ցրուեաց, և
16 զսեղանսն կործանեաց։ Եւ որ զաղաւնիսն վաճա-
ռէին ասէ ցնոսա, Առէք զայդ ասա՛ի, և մի՛ առ-
17 նէք զտուն Հօր իմոյ տուն վաճառի։ Ապա յիշե-
ցին աշակերտքն նորա թէ գրեալ է, Նախանձ
տան քո կերիցէ զիս։
18 Պատասխանի ետուն Հրեայքն և ասեն ցնա,
Ջի՞նչ նշան ցուցանես դու մեզ զի զայդ առնես։
19 Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա, Քակեցէք
զտաճարդ զայդ, և զերիս աւուրս կանգնեցից զդա։
20 Ասեն ցնա Հրեայքն, Ջքառասուն և վեց ամ շի-
նեցաւ տաճարս այս, և դու զերիս աւուրս կանգ-
21 նե՞ս զսա։ Բայց նա ասէր վասն տաճարի մարմնոյ
22 իւրոյ։ Իսկ յորժամ յարեաւն ի մեռելոց, յիշեցին
աշակերտքն նորա, թէ այս է զոր ասացն, և հա-
ւատացին գրոյն և բանին զոր ասաց Յիսուս։
23 ԳԿ. Եւ իբրեւ էր յԵրուսաղէմ ի զատկին ի տո-
նի, բազումք հաւատացին յանուն նորա, զի տե-
24 սանէին զնշանսն զոր առնէր։ Բայց ինքն Յիսուս ոչ
հաւատայր զանձն նոցա, քանզի ինքն գիտէր զա-
25 մենայն. Եւ զի ոչ էր պիտոյ եթէ ոք վկայեսցէ վասն
մարդոյ, զի ինքն իսկ գիտէր զինչ կրէր ի մարդն։

ԳԼ. Գ

1 Եւ էր այր մի ի փարիսեցւոց անուն Նիկոդեմոս

2 անուն նորա, իշխան Հրէից։ Սա եկն առ նա գի-
շերի և ասէ ցնա, Ռաբբի, գիտեմք եթէ յԱստու-
ծոյ եկեալ ես վարդապետ. զի ոչ ոք կարէ զայդ
նշանս առնել զոր դու առնես, եթէ ոչ Աստուած
3 իցէ ընդ նմա։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ
ցնա, Ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի
վերուստին, ոչ կարէ տեսանել զարքայութիւն Ա-
4 ստուծոյ։ Ասէ ցնա Նիկոդեմոս, Զիա՞րդ կարէ մարդ
ծնանել որ ծեր ի՞ցէ. միթէ մա՞յրն իւր եղեալ անդ-
րէն յորովայն մօր իւրոյ կրկին մտանել և ծնանել։
5 Պատասխանի ետ Յիսուս և ասէ, Ամէն ամէն ա-
սեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի ի ջրոյ և ի Հոգւոյ,
6 ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ։ Զի
ծնեալն ի մարմնոյ մարմին է, և ծնեալն ի Հոգւոյ
7 հոգի է։ Դու մի՛ զարմանար թէ ասացի քեզ,
8 Պարտ է ձեզ ծնանել վերուստին։ Զի հողմ ուր կամի
շնչէ, և զձայն նորա լսես, այլ ոչ գիտես ուստի
գայ կամ յո երթայ. այսպէս և ամենայն ծնեալն
9 ի Հոգւոյն։ Պատասխանի ետ Նիկոդեմոս և ասէ
10 ցնա, Զիա՞րդ մարթի այդմ լինել։ Պատասխանի
ետ Յիսուս և ասէ ցնա, Դու ես վարդապետ Իս-
11 րայելի և զայդ ո՞չ գիտես։ Ամէն ամէն ասեմ քեզ,
զի զոր ինչ գիտեմք խօսիմք, և զոր տեսաք՝ վկա-
12 յեմք, և զվկայութիւն մեր ոչ ընդունիք։ Իսկ
արդ՝ եթէ զերկրաւորս ասացի ձեզ և ոչ հաւա-
տայք, զիա՞րդ եթէ զերկնաւորսն ասացից, հաւա-
տայցէք։
13 ԳԲ. Եւ ոչ ոք ել յերկինս, եթէ ոչ որ էջն
14 յերկնից՝ Որդին մարդոյ, որ էն յերկինս։ Եւ որ-
պէս Մովսէս բարձրացոյց զօձն յանապատին, նոյն-

15 պէս բարձրանալ պարտ է Որդւոյ մարդոյ։ Զի ա
ւենայն որ հաւատայ [1]ի նա՝ ընկալցի զկեանան յա
16 ւիտենականս։ Զի այնպէս սիրեաց Աստուած զաշ
խարհ, մինչեւ զՈրդին իւր միածին եաս զի ամե
նայն որ հաւատայ ի նա՝ մի՛ կորիցէ, այլ ընկալ
17 զկեանան յաւիտենականս։ Զի ոչ առաքեաց Ա
ստուած զՈրդի իւր յաշխարհ թէ դատեսցի աշ
18 խարհ, այլ զի փրկեսցի աշխարհ նովաւ։ Որ հա
ւատայ ի նա՝ ոչ դատապարտեսցի. և որ ոչ հա
ւատայ ի նա՝ արդէն իսկ դատապարտեալ է, զի
ոչ հաւատաց յանուն միածնի Որդւոյն Աստուծոյ
19 Եւ այս իսկ է դատաստան, զի լոյս եկն յաշխարհ
և սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան զլոյս
20 զի էին գործք իւրեանց չարութեան։ Զի ամենայն
որ զչար գործէ՝ ատեայ լոյս, և ոչ գայ առ լոյս
21 զի մի՛ յանդիմանեսցին գործք նորա։ Իսկ որ առն
ճշմարտութիւն՝ գայ առ լոյս, զի յայտնի լիցի
գործք նորա թէ Աստուծով գործեցան։

22 ԳԳ. Յետ այսորիկ եկն Յիսուս և աշակերտք ն
րա յերկիրն Հրէաստանի, և անդ շրջէր նոքո
23 հանդերձ և մկրտէր։ Մկրտէր և Յովհաննէս ի Ա
յենովն մերձ առ Սաղիմ, զի ջուրք բազումք էի
24 անդ. և գային և մկրտէին. Զի չէր եւս էր ա
կեալ զՅովհաննէս ի բանտ։

25 Եւ եղեւ խնդիր յաշակերտացն Յովհաննու ընդ
26 [2]Հրէի վասն սրբութեան։ Եկին առ Յովհաննէս և
ասեն ցնա, Ռաբբի, որ էրն ընդ քեզ յայնկոյ
Յորդանանու, որում դուն վկայեցեր, ահաւանկ

---

[1] Ոմանք, ի նա՝ մի՛ կորիցէ, այլ [2] Ոմանք, Հրէից

27 նա մկրտէ, և ամենեքին գան առ նա։ Պատաս-
խանի ետ Յովհաննէս և ասէ, Ոչ կարէ մարդ առ-
նուլ յանձնէ և ոչ ինչ, եթէ ոչ իցէ տուեալ
28 յերկնից [1]ի վերուստ։ Դուք ձեզէն վկայէք ինձ, զի
ասացի ձեզ թէ Ձեմ ես Քրիստոսն, այլ թէ ա-
29 ռաքեալ եմ առաջի նորա։ Որ ունի զՀարսն նա
է փեսայ. իսկ բարեկամ փեսային որ կայ և լսէ
նմա՝ ուրախութեամբ ուրախ լինի վասն ձայնի փե-
սային. արդ այս ուրախութիւն որ իմ է՝ լցեալ
30 է։ Նմա պարտ է աճել և ինձ վազմանալ։ (31) Որ
ի վերուստն գայ՝ ի վերոյ է քան զամենայն. որ
32 յերկրէ ասաի է՝ յերկրէ է և յերկրէ խօսի։ Որ
յերկնից [2]գայ՝ զոր՝՝ ինչ եառես և զոր լուաւ՝ վկայէ,
33 և վկայութիւն նորա ոչ ոք ընդունի։ Որ ընդունի
վկայութիւն նորա՝ կնքեաց թէ Աստուած ճշմա-
34 րիտ է։ Զի զոր Աստուածն առաքեաց՝ զբանս Ա-
ստուծոյ խօսի. զի ոչ եթէ չափով տայ Աստուած
35 զՀոգին։ Հայր սիրէ զՈրդի, և զամենայն ինչ ետ
36 ի ձեռս նորա։ Որ հաւատայ յՈրդի՝ ընդունի
զկեանսն յաւիտենականս. և որ ոչ հնազանդի
Որդւոյ՝ ոչ տեսցէ զկեանս, այլ բարկութիւն Ա-
ստուծոյ ՃՆայ ի վերայ նորա։

ԳԼ. Դ

1 ԳԴ. Իբրեւ գիտաց [3]Յիսուս եթէ լուան փարիսե-
ցիքն եթէ Յիսուս բազում աշակերտս առնէ և
2 մկրտէ քան զՅովհաննէս, (4գանգի ոչ եթէ Յիսուս

---

[1]ի Բոլոմս պակասէ [2]Բոլոմս, գայ՝ ի վերոյ է քան
զամենայն, և զոր [3]Բոլոմս, Տէր [4]Յ-ՅՆ, Թէոփհա և

3 ինքնին մկրտէր, այլ աշակերտքն նորա,) Եթող
զՀրէաստան երկիր, և եկն միւսանգամ ի Գա-
4 լիլեա: Եւ էր նմա անցանել ընդ Սամարիա:
5 Գայ նա ի քաղաք մի Սամարացւոց որում անուն
էր Սիւքար, մերձ ի գեղն զոր ետ Յակովբ որդւոյ
6 իւրում Յովսեփայ: Եւ անդ էր աղբեւր մի Յա-
կովբայ. և Յիսուս վաստակեալ ի ճանապարհէն
նստէր ի վերայ աղբերն, և էր ժամ իբրեւ վեցերորդ:
7 Գայ կին մի ի Սամարիայ հանել ջուր. ասէ ցնա
8 Յիսուս, Տուր ինձ ըմպել: Զի աշակերտքն նորա
երթեալ էին ի քաղաք անդր զի կերակուրս գնեսցեն:
9 Ասէ ցնա կինն Սամարացի, Դու որ Հրեայդ
ես, զիա՞րդ յինէն ըմպել խնդրես ի կնոջէ Սամա-
րացւոյ. զի ոչ երբեք խառնակին Հրեայք ընդ Սա-
10 մարացիս: Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ,
Եթէ գիտէիր դու [1]զպարգեւսն Աստուծոյ, և ո՛վ
է որ ասէդ ցքեզ թէ Տուր ինձ ըմպել, դու ար-
դեւք խնդրէիր ի նմանէ, և տայր քեզ ջուր կեն-
11 դանի: Ասէ ցնա կինն, Տէր, դու քանզի և դոյլ
իսկ ոչ ունիս, և ջրհորս խոր է, իսկ արդ ուստի՞
12 ունիցիս զջուրն կենդանի: Միթէ դու մե՞ծ ինչ ոք
իցես քան զՀայրն մեր Յակովբ որ զայս ջրհոր ետ
մեզ. և ինքն աստի արբ և որդիք նորա և խաշինք
13 նորա: Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ, Ա-
մենայն որ ըմպէ ի ջրոյ յայդմանէ՝ միւսանգամ
ծարաւէ, բայց որ ըմպէ ի ջրոյն զոր ես տաց նմա՝
14 մի՛ ծարաւեսցէ յաւիտեան: Այլ ջուրն զոր ես
տաց նմա՝ եղիցի նմա աղբեւր ջրոյ բղխելոյ /

---

[1] Յ-ՆՆ, զպարգեւն

15 կեանան յաւիտենականս։ Ասէ ցնա կինն, Տէր,
տուր ինձ զջուրն զայն, զի մի՛ ծարաւեցից, և մի՛
16 եկից այսր հանել ջուր։ Ասէ ցնա Յիսուս, Երթ
17 կոչեա զայր քո և եկ այսր։ Պատասխանի եւ նմա
կինն և ասէ, Չիք իմ այր. ասէ ցնա Յիսուս,
18 Բարւոք ասացեր թէ Չիք իմ այր. Զի հինգ այր
փոխեալ է քո, և զոր այժմ ունիս՝ չէ քո այր.
19 զայդ արդար ասացեր։ Ասէ ցնա կինն, Տէր, թուի
20 ինձ թէ մարգարէ իցես դու։ Հարքն մեր ի լերինս
յայսմիկ երկիր պագին, և դուք ասէք թէ Ցերու-
սաղէմ եւեթ է տեղի, ուր արժան իցէ երկիր պա-
21 գանել։ Ասէ ցնա Յիսուս, կին դու, Հաւատա
ինձ, զի եկեսցէ ժամանակ, յորժամ ոչ ի լերինս
յայսմիկ և ոչ ի Ցերուսաղէմ երկիր պագանիցեն
22 Հօր։ Դուք երկիր պագանէք որում ոչն գիտէք,
մեք երկիր պագանեմք որում գիտեմքն. զի փրկու-
23 թիւն ի Հրէից է։ Այլ եկեսցէ ժամանակ և
այժմ իսկ է, յորժամ ճշմարիտքն երկրպագուք
երկիր պագանիցեն Հօր հոգւով և ճշմարտու-
թեամբ, քանզի և Հայր այնպիսի երկրպագուս
իւր խնդրէ։
24 Գե. Հոգի է Աստուած, և երկրպագուացն նո-
րա հոգւով և ճշմարտութեամբ պարտ է երկիր
25 պագանել։ Ասէ ցնա կինն, Գիտեմ զի Մեսիա
գայ (անուանեալն Քրիստոս), յորժամ եկեսցէ նա,
26 պատմեսցէ մեզ զամենայն։ Ասէ ցնա Յիսուս, Ես
27 եմ որ խօսիմ ընդ քեզ։ Եւ յայն բան եկին ա-
շակերտքն նորա, և զարմանային զի ընդ կնոջն խո-
սէր. բայց ոչ ոք ասաց ի նոցանէ Թէ Զի՛նչ
28 խնդրես, կամ Զի՛նչ խօսիս ընդ դմա։ Եթող կինն

զաւփորն իւր և չոգաւ ի քաղաքն, և ասէ ցմար-
29 դիկն, Եկայք տեսէք զայր մի որ ասաց ինձ զամե-
նայն որ ինչ իմ գործեալ է. միթէ նա՞ իցէ Քրիս-
30 տոսն։ Ելին ի քաղաքէն և գային առ նա։
31 Եւ մինչչեւ եկեալ էին նոքա, աղաչէին զնա ա-
32 շակերտքն և ասէին, Ռաբբի, հաց կեր։ Նա ասէ
ցնոսա, Ես կերակուր ունիմ ուտել, զոր դուքն ոչ
33 գիտէք։ Ասէին աշակերտքն ընդ միմեանս, Միթէ
34 եբե՞ր ինչ ոք դմա ուտել։ Ասէ ցնոսա Յիսուս,
Իմ կերակուր այն է՝ զի արարից զկամս այնորիկ
որ առաքեացն զիս, և կատարեցից զգործն նորա։
35 Ո՞չ դուք ասէք եթէ Ամ՛ս եւս չորք ամիսք են, և
հունձք գան. ահաւասիկ ես ասեմ ձեզ, Ամբար-
ձէք զաչս ձեր և տեսէք զարտորայսն, զի սպիտա-
36 կացեալ են և ի հունձս հասեալ։ Եւ որ հնձէն՝
վարձս առնու, և ժողովէ զպտուղ ի կեանսն յա-
ւիտենականս. զի որ սերմանէն և որ հնձէ՝ հա-
37 սարակ ցնծասցեն։ Ցայսմ իսկ է բանն ճշմա-
րիտ, զի Ամ՛ս է որ սերմանէ և այլ է որ հնձէ։
38 Ես առաքեցի զձեզ հնձել զոր ոչ դուք վաս-
տակեցէք. այլք վաստակեցին և դուք ի վաստակս
նոցա մտէք։
39 Եւ ի քաղաքէն յայնմանէ Սամարացւոց բազումք
հաւատացին ի նա վասն բանի կնոջն վկայելոյ, եթէ
40 Ասաց ինձ զամենայն որ ինչ իմ գործեալ էր։ Իսկ
իբրեւ եկին առ նա Սամարացիքն, աղաչէին զնա
լինել առ նոսա. և եղեւ անդ աւուրս երկուս։
41 Եւ եւս բազումք հաւատացին ի նա վասն բանին
42 նորա։ Եւ ասէին ցկինն Թէ Ոչ այսուհետեւ վասն
քո խօսիցդ հաւատամք, զի մեզէն իսկ լուաք ի

դմանէ, և գիտեմք եթէ դա է ճշմարտիւ Փրկիչ
[1]աշխարհաց։
43 ԳԶ. Եւ յետ երկուց աւուրց ել անտի և գնաց
44 ի Գալիլեա։ Զի ինքն իսկ Յիսուս վկայեաց եթէ
Մարգարէ յիւրում գաւառի պատիւ ոչ ունի։
45 Ա.Ր. յորժամ եկն նա ի Գալիլեա, ընկալան զնա
Գալիլեացիքն. զի տեսեալ եւս էր զամենայն
նշանան զոր արար Երուսաղէմ ի տօնին. քանզի
և նոքա եկեալ էին ի տօնն։
46 Եկն [2]դարձեալ ի կանա Գալիլեացւոց ուր արար
զջուրն գինի. և անդ էր թագաւորազն մի, որոյ
47 որդի նորա հիւանդ կայր ի Կափառնայում։ Նա
իբրեւ լուաւ եթէ Յիսուս եկեալ է ի Հրէաստանէ
ի Գալիլեա, եկն առ նա և աղաչէր զի իջցէ և
բժշկեացէ զորդի նորա, քանզի մերձ էր ի մեռա-
48 նել։ Ասէ ցնա Յիսուս, եթէ ոչ նշանս ինչ և ա-
49 րուեստս տեսանիք, ոչ հաւատայք։ Ասէ ցնա թա-
գաւորազնն, Տէր, էջ, մինչչեւ մեռանիցէ մա-
50 նուկն իմ։ Ասէ ցնա Յիսուս, Երթ, որդին քո կեն-
դանի է. և հաւատաց այրն բանին զոր ասաց նմա
51 Յիսուս, և գնաց։ Եւ մինչդեռ իջանէր, ընդ ա-
ռաջ եղեն նմա ծառայքն նորա, աւետիս ետուն
52 և ասեն թէ մանուկն նորա կենդանի է։ Հարցա-
նէր ցնոսա վասն ժամուն յորում ապաքինեաց. և
ասեն ցնա, Երէկ յեւթներորդ ժամու եթող զնա
53 ջերմն։ Գիտաց հայրն նորա եթէ յայնմ ժամու
յորում ասացն ցնա Յիսուս թէ Որդին քո կեն-

---

[1]Յ-ՆՆ, աշխարհի, ՙՄՃԻ, աշխարհի՝ Փրկաւոս
[2]ՈՄՃԻ, դարձեալ Յիսուս

դանի է. և հաւատաց ինքն և ամենայն տունն իւր։
54 Զայս դարձեալ երկրորդ նշան արար Յիսուս՝ եկեալ ի Հրէաստանէ ի Գալիլեա։

ԳԼ. Ե

1 ԳԷ. Յետ այսորիկ տօն էր Հրէից, և եկ Յիսուս
2 Յերուսաղէմ։ Եւ [1]էր Յերուսաղէմ ի Պրոբատիկէ [2]աւազանին, որ կոչէր Եբրայեցերէն Բեթհեզդա,
3 [3]հինգ սրահ։ Յորս անկեալ դնէր բազմութիւն յոյժ հիւանդաց՝ կուրաց, կաղաց, գօսացելոց,
4 [4]որ ակն ունէին ջրոցն յուզելոյ։ Եւ հրեշտակ Տեառն ըստ ժամանակի իջանէր յաւազանն և յուզէր զջուրսն և որ նախ ի շարժումն ջրոցն իջանէր, բժշկէր՝ ոչ ունելով նշան հիւանդութեան։
5 Եւ անդ էր այր մի, որոյ երեսուն և ութ ամ էր
6 ի հիւանդութեան իւրում։ Զնա իբրեւ տեսս Յիսուս զի անկեալ դնէր, և գիտաց թէ բազում ժամանակք են այնուհետեւ, ասէ ցնա, կամի՞ս
7 ողջ լինել։ Պատասխանի ետ նմա հիւանդն, Տէր, ոչ զոք ունիմ, թէ յորժամ ջուրքն յուզիցին, արկցէ զիս յաւազանն. և [5]մինչ ես դանդաղիմ,
8 այլ ոք քան զիս յառաջագոյն իջանէ։ Ասէ ցնա
9 Յիսուս, Արի առ զմահիճս քո և գնա։ Եւ [6]ողջացաւ այրն, և [7]յարեաւ առ զմահիճս իւր և շրջէր

---

[1]Յ-ոյնն, է [2]Յ-ոյնն, աւազան [3]Յ-ոյնն, որ ունի հինգ
[4]ի բազմա- ի Յ-ունուքն օրինակաց, որպէս ի բազմ-
ի Հայերէն Ձեռագրաց, պակաս այս հատուած
[5]Յ-ոյնն, մինչեւ ես գամ [6]Բազմա-, առժամայ-
ողջացաւ [7]ի բազմա- պակաս

10 և էր շաբաթի յաւուրն յայնմիկ։ Ասեն Հրեայքն
ցբժշկեալն, Շաբաթի է և ոչ է արժան առնուլ
11 քեզ զմահիճս քո։ Պատասխանի եւ նոցա և ասէ,
Որ բժշկեացն զիս, նա ասաց ցիս, Առ զմահիճս
12 քո և գնա։ Հարցին ցնա և ասեն, Ո՞վ է այրն որ
13 ասաց ցքեզ, Առ զմահիճս քո և շրջեաց։ Եւ
բժշկեալն ոչ գիտէր թէ ով իցէ. քանզի Յիսուս
14 խոյս եաւ վասն ամբոխին ի տեղւոջէ անտի։ Ետ
այսորիկ գտանէ զնա Յիսուս ի տաճարին, և ասէ
ցնա, Ահաւադիկ ողջացար, մի՛ եւս մեղանչեր, զի
15 մի՛ չար եւս ինչ լինիցի քեզ։ Գնաց այրն և պատ-
մեաց Հրէիցն, եթէ Յիսուս էր որ բժշկեացն զիս։
16 Եւ վասն այնորիկ հալածէին զՅիսուս Հրեայք[1],
17 զի զայն առնէր ի շաբաթու։ Եւ Յիսուս պատաս-
խանի եաւ նոցա, Հայր իմ մինչեւ ցայժմ գործէ
18 և ես գործեմ։ Վասն այնորիկ առաւել խնդրէին
Հրեայքն սպանանել զնա, զի ոչ միայն լուծանէր
զշաբաթս, այլ և Հայր իւր կոչէր զԱստուած, և
հաւասար առնէր զանձն Աստուծոյ։
19 Դկ. Պատասխանի եաւ Յիսուս և ասէ ցնոսա,
Ամէն ամէն ասեմ ձեզ, Ոչ կարէ Որդի [2]մարդոյ
առնել յանձնէ և ոչ ինչ, եթէ ոչ տեսանիցէ
զՀայրն զի առնէ. զի զոր նայն առնէ, զնոյն և
20 Որդին նմին նման գործէ։ Զի Հայր սիրէ զՈրդի,
և զամենայն ինչ ցուցանէ նմա զոր ինքն առնէ. և
մեծամեծս եւս քան զայնս ցուցանէ նմա զգործս,
21 ընդ որ դուքդ զարմանայք։ Զի որպէս Հայր յա-

---

[1] Ոմանք յաւելուն, և խնդրէին սպանանել զնա
[2] ի բազումս պակասէ

բուցանէ զմեռեալս և կենդանի առնէ, նոյնպէս և
22 Որդի զորս կամի՝ կենդանի առնէ։ [1]Եւ ոչ ևթէ
Հայր դատի զոք, այլ զամենայն դատաստան ետ
23 Որդւոյ [2]իւրոյ. Զի ամենեքեան պատուեսցեն զՈր-
դի, որպէս պատուեն զՀայրն. որ ոչ պատուէ
զՈրդին, ոչ պատուէ զՀայրն, զոր առաքիչն նորա։
24 Ամէն ամէն ասեմ ձեզ, զի Որ զբանն իմ լսէ և
հաւատայ այնմ որ առաքեացն զիս՝ ընդուն
զկեանան յաւիտենականս. և ի դատաստան ոչ
25 մտանէ, այլ փոխեցաւ ի մահուանէ ի կեանս։ Ա-
մէն ամէն ասեմ ձեզ, զի Գայ ժամանակ և արդէն
իսկ է, յորժամ մեռեալք լսիցեն ձայնի Որդւոյն
26 Աստուծոյ. և որք լսիցեն՝ կեցցեն։ Զի որպէս Հայր
ունի կեանս յանձին իւրում, նոյնպէս ետ և Որդւոյ
27 ունել կեանս յանձին իւրում. Եւ իշխանութիւն
ետ նմա դատաստան առնել, և զի Որդի մարդոյ
28 է։ Ընդ այն [3]զի՞ զարմանայք, զի եկեսցէ ժամանա-
կ յորում ամենեքին որ ի գերեզմանս կայցեն լսի-
29 ցեն ձայնի նորա, Եւ եկեսցեն արտաքս. որոց զբարիս
գործեալ իցէ՝ ի յարութիւն կենաց. և որոց զչա-
30 արսեալ՝ ի յարութիւն դատաստանաց։ Ոչ կարեմ
ես յանձնէ առնել և ոչ ինչ. այլ որպէս լսեմ, դա-
տիմ, և դատաստանն իմ արդար է. զի ոչ խնդրեմ
զկամս իմ, այլ զկամն այնորիկ որ առաքեացն զիս։
31 ԴԲ. ԵՒթէ ես վկայեմ վասն իմ, վկայութիւն
32 իմ չէ ճշմարիտ։ [4]Այլ է որ վկայէ վասն իմ.
[4]գուք գիտէք՝ ևթէ ճշմարիտ է վկայութիւնն զոր

---

[1] Յ---ն , Զի [2] ի Յ---ն պ---ե---ե [3] Յ---ն , մի
[4] Ր---ա---ֆ , ես գիտեմ

33 վկայեաց վասն իմ։ Դուք առաքեցէք առ Յովհան-
34 նէս և վկայեաց ճշմարտութեանն։ Ես ոչ եթէ
ի մարդկանէ առնում վկայութիւն, այլ զայս ա-
35 սեմ զի դուք ապրեսջիք։ Նա էր ճրագն որ լու-
ցեալ էր և ծագէր, և դուք կամեցարուք ցնծալ
36 առ ժամանակ մի ի լոյս նորա։ Ես ունիմ
վկայութիւն մեծ եւս քան զՅովհաննու. զգործան
զոր ետ ինձ Հայր զի կատարեցից զնոսա, նոքին
իսկ գործքն զոր գործեմ՝ վկայեն վասն իմ, եթէ
37 Հայր առաքեաց զիս։ Եւ որ առաքեացն զիս Հայր՝
նա վկայեաց վասն իմ դուք ոչ զձայն նորա եր-
38 բեք լուարուք, և ոչ զտեսիլ նորա տեսէք. Եւ ոչ
զբան նորա ունիք ի ձեզ բնակեալ, զի զոր նա
39 առաքեաց՝ դուք նմա ոչ հաւատայք։ Քննեցէք
զգիրս, զի դուք համարիք նոքօք ունել զկեանան
յաւիտենականս. և նոքին իսկ են որ վկայեն վասն
40 իմ, [1]որովք համարիքն ունել կեանս։" Եւ դուք
41 ոչ կամիք գալ առ իս զի զկեանան ունիցիք։ Ես
42 փառս ի մարդկանէ ոչ առնում։ Այլ գիտեմ զձեզ
43 թէ զսէրն Աստուծոյ ոչ ունիք յանձինս։ Ես եկի
յանուն Հօր իմոյ, և ոչ ընդունիք զիս. եթէ այլ
44 ոք եկեսցէ յիւր անուն, զնա ընդունիցիք։ Զիա՞րդ
կարէք դուք հաւատալ, զի փառս ի միմեանց առ-
նուք, և զփառս զոր ի միոյն Աստուծոյ ոչ խնդրէք։
45 Մի՛ համարիք եթէ ես չարախօս ինչ իցեմ զձէնջ
առ Հօր. գոյ որ չարախօս կայ զձէնջ, Մովսէս,
46 յոր դուքն յուսացեալ էք։ Զի եթէ հաւատայիք
դուք Մովսիսի, հաւատայիք արդեւք և ինձ, զի

---

[1] Ի Բ–ղ–ո պ–ի–ե

47 Նա վասն իմ իսկ գրեաց։ Զի եթէ նորա գրոցն ոչ
հաւատայք, զիա՞րդ իմոց բանիցս հաւատայցէք։

ԳԼ. Զ

1 ԴԳ. Յետ այսորիկ գնաց Յիսուս յայնկոյս ծովուն
2 Գալիլեացւոց Տիբերեայ. Եւ զհետ երթայր նորա
ժողովուրդ բազում, զի տեսանէին զնշանսն զոր
3 առնէր ի վերայ հիւանդաց։ Ել ի լեառն Յիսուս,
4 և անդ նստէր աշակերտօքն հանդերձ։ Եւ էր մերձ
զատիկ տօնն Հրէից։
5 Բարձ ի վեր զաչս իւր Յիսուս և տեսս, զի ժո-
ղովուրդ բազում գայր առ նա, ասէ ցՓիլիպպոս.
6 Ուստի՞ գնեսցուք հաց զի կերիցեն դոքա։ (Զայս
ասէր փորձելով զնա, այլ ինքն գիտէր զինչ առ-
7 նելոցն էր։) Պատասխանի ետ նմա Փիլիպպոս, եր-
կերիւր դահեկանի հաց չէ դոցա բաւական, թէ-
պէտ և իւրաքանչիւր ոք սակաւ ինչ առնուցու։
8 Ասէ ցնա մի յաշակերտացն նորա, Անդրէաս, եղ-
9 բայր Սիմովնի Պետրի. Է տատ պատանեակ մի, որ
ունի հինգ նկանակ գարեղէն և երկուս ձկունս,
10 այլ այն զի՞նչ է առ այդչափ մարդիկդ։ Ասէ Յի-
սուս, Բազմեցուցէք զմարդիկդ. և էր խոտ յոյժ ի
տեղւոջն. և բազմեցան մարդիկն թուով իբրև
11 հինգ հազար։ Եւ առ զհացն Յիսուս, և գոհացաւ
և բաշխեաց [1]բազմականացն. նոյնպէս և ի ձկանցն
12 որչափ և կամեցան։ Եւ իբրեւ յագեցան, ասէ
ցաշակերտսն, ԺողովեցէՔ զնշխարեալ կտորսդ,
13 զի մի՛ ինչ կորիցէ։ Ժողովեցին և լցին երկոտա-

---

[1] Յհն. աշակերտացն, և աշակերտքն՝ բազմականացն

սան սակառն զկոտորոցն ի հինգ գարեղէն նկանակ-
14 կէ անտի, որ յաւելաւ ի կերուղացն։ Իսկ մարդիկն
իբրեւ տեսին զնշանան զոր արար՝ ասէին եթէ Սա
է ճշմարիտ մարգարէն, որ գալոց էր յաշխարհ։
15 ԴԴ. Յիսուս իբրեւ գիտաց եթէ գալոց են յա-
փըշտակել զնա զի արասցեն զնա թագաւոր, գնաց
16 դարձեալ ի լեառն միայն։ Եւ իբրեւ երեկոյ եղեւ,
17 իջին աշակերտքն նորա ի ծովեզրն Եւ մտեալ ի
նաւ՝ գային յայնկոյս ծովուն ի Կափառնայում. և
իբրեւ նեռմացաւ, և չեւ եւս եկեալ էր առ նոսա
18 Յիսուս։ Եւ ծովն ի սաստիկ հողմոյ շնչելոյ յուզէր։
19 Եւ վարեալ իբրեւ ասպարէզս քսան և հինգ կամ
երեսուն, տեսանէին զՅիսուս զի գնայր ի վերայ
20 ծովուն և մերձ էր ի նաւն, զարհուրեցան։ Նա
21 ասէ ցնոսա, Ես եմ, մի՛ երկնչիք։ Եւ կամէին ըն-
դունել զնա ի նաւն. և վաղվաղակի եհաս նաւն
յերկիրն յոր երթային։
22 ԴԵ. Ի վաղիւ անդր ժողովուրդն որ կայր յայն-
կոյս ծովուն, տեսանէր թէ այլ նաւ ոչ գոյր անդ
բայց միայն ի միոյն, յոր մտին աշակերտքն Յի-
սուսի. և զի չէր մտեալ Յիսուս ընդ աշակերտան
իւր ի նաւն, բայց միայն աշակերտքն նորա գնա-
23 ցին։ (1Իբրեւ այլ նաւք գային՝ ի Տիբերեայ մօտ
24 յայն տեղին՝ ուր ջհացն 2կերան։) Իսկ իբրեւ տես
ժողովուրդն եթէ Յիսուս ոչ է անդ և ոչ աշա-
կերտքն նորա, ասին նոքա զնաւսն, և եկին ի կա-
25 փառնայում խնդրել զՅիսուս։ Եւ իբրեւ գտին

1Յոյն, Բայց այլ նաւք եկին

2Բ-ղ-ս, կերան յորժամ գոհացաւ Տէր

զնա յայնկոյս ծովուն, ասեն ցնա, Ռաբբի, ե՞րբ
26 եկիր այսր։ Պատասխանի ետ նոցա Յիսուս և ասէ,
Ամէն ամէն ասեմ ձեզ, Խնդրէք զիս, ըրը ոչ եթէ
զի նշանս ինչ տեսէք, այլ զի կերայք ի հացէ անտի
27 և յագեցարուք։ [1]Երթայք գործեցէք մի՛ զկորսուա-
կան կերակուրն, այլ զկերակուրն որ մնայ ի կեանս
յաւիտենականս, զոր Որդին մարդոյ տացէ ձեզ.
28 քանզի զնա Հայր կնքեաց, Աստուած։ Ասեն ցնա,
Զի՞նչ առնիցեմք զի զգործան Աստուծոյ գործես-
29 ցուք։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա,
Այս է գործն Աստուծոյ, զի հաւատասջիք յոմն
30 զոր առաքեացն նա։ Ասեն ցնա, Զի՞նչ նշան առ-
նիցես զի տեսցուք և հաւատասցուք քի՞նչ գոր-
31 ծիցես։ Հարքն մեր կերան զմանանայն յանապատի
անդ, որպէս և գրեալ է, Հաց յերկնից ետ նոցա
32 ուտել։ Ասէ ցնոսա Յիսուս, Ամէն ամէն ասեմ
ձեզ թէ ոչ Մովսէս ետ ձեզ զհացն յերկնից, այլ
Հայրն իմ տայ ձեզ զհացն յերկնից զճշմարիտ։
33 Զի հաց Աստուծոյ է, որ իջանէն յերկնից և
34 կեանս տայ աշխարհի։ Ասեն ցնա, Տէր, յամենայն
35 ժամ տուր մեզ զհացն զայն։ Ասէ ցնոսա Յիսուս,
Ես եմ հացն կենաց. որ գայ առ իս՝ ոչ քաղցիցէ,
36 և որ հաւատայ յիս՝ ոչ երբէք ծարաւեսցի։ Այլ
ասացի ձեզ եթէ տեսէք զիս և ոչ հաւատայք։
37 Զամենայն զոր տայ ինձ Հայր՝ առ իս եկեսցէ. և
38 որ գայ առ իս՝ ոչ հանիցէ արտաքս։ Զի իջի ես
յերկնից ոչ զի զկամս իմ արարից, այլ զկամս
այնորիկ որ առաքեացն զիս։

---

[1] Ի ցՆէն գ-ւ-ած

39 ԴՋ. Ա՛յս են կամք Հօր իմոյ որ առաքեացն զիս,
զի զամենայն զոր ետ ցիս Հայր՝ ոչ կորուսից ի
նմանէ, այլ յարուցից զնա յաւուրն յետնում։
40 Ա՛յս են կամք Հօր իմոյ, զի ամենայն որ տեսանիցէ
զՈրդի և հաւատասցէ ի նա, ընկալցի կեանան յա-
ւիտենական, և ես յարուցից զնա յաւուրն յետ-
նում։
41 Տրտնջէին զնմանէ Հրեայքն, զի ասաց թէ ես
42 եմ հացն իջեալ յերկնից. Եւ ասէին, Ո՞չ սա է
Յիսուս որդին Յովսեփու, զորոյ մեք գիտեմք զՀայրն
և զմայրն. իսկ արդ զիա՞րդ ասէ եթէ ես յերկնից
43 իջի։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա, Մի՛
44 քրթմնջէք ընդ միմեանս։ Ոչ ոք կարէ գալ առ
իս, եթէ ոչ Հայրն որ զիս առաքեաց՝ ձգեսցէ
զնա. և ես յարուցից զնա յաւուրն յետնում։
45 Գրեալ է ի մարգարէս, Եւ եղիցին ամենեքեան
ուսեալք յԱստուծոյ. ամենայն որ լսէ ի Հօրէ և
46 ուսանի՝ գայ առ իս։ Ի՛րրեւ ոչ եթէ զՀայր ու-
րուք տեսեալ իցէ, եթէ ոչ որ էն յԱստուծոյ՝
47 նա ետես զՀայր։ Ամէն ամէն ասեմ ձեզ զի Որ
48 [1]հաւատայ ընդունի կեանան յաւիտենական։ Ես
49 եմ հացն կենաց։ Հարքն ձեր կերան զմանանայն
50 յանապատին և մեռան։ Ա՛յս է հացն որ յերկնից
իջեալ է, զի որ ուտիցէ ոք ի սմանէ՝ մի՛ մեռա-
51 նիցի։ Ես եմ հացն կենդանի, որ յերկնից իջեալ։
52 Եթէ ոք ուտիցէ ի հացէ յայմանէ, կեցցէ ի յա-
ւիտեան. և հացն զոր ես տաց՝ մարմին իմ է, զոր
ես տաց վասն կենաց աշխարհի։

---

[1]Ոմանք, հաւատայ յիս

53 Մարտնչէին ընդ միմեանս Հրեայքն և ասէին,
Զի՞րդ կարէ սա տալ մեզ զմարմին իւր յուտել։
54 Ասէ ցնոսա Յիսուս, Ամէն ամէն ասեմ ձեզ, Եթէ
ոչ կերիջիք զմարմին Որդւոյ մարդոյ և արբջիք
55 զարիւն նորա, ոչ ունիք կեանս յանձինս։ Որ ու-
տէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, ունի զկեանս
յաւիտենականս, և ես յարուցից զնա յաւուրն
56 յետնում։ Զի մարմին իմ ճշմարիտ կերակուր է,
57 և արիւն իմ ճշմարիտ ըմպելի է։ Որ ուտէ զմար-
մին իմ և ըմպէ զարիւն իմ, յիս բնակեացէ, և ես
58 ի նմա։ Որպէս առաքեաց զիս կենդանին Հայր, և
ես կենդանի եմ վասն Հօր. և որ ուտէն զիս՝ և
59 նա կեցցէ վասն իմ։ Այս է հացն որ յերկնից
իջեալ. ոչ որպէս կերան հարքն ձեր զմանանայն և
մեռան. որ ուտէ զհացս զայս՝ կեցցէ յաւիտեան։
60 Զայս ասաց ի ժողովրդեանն յուսուցանելն ի կա-
61 փառնայում։ Եւ բազումք յաշակերտացն իւրեա-
լսեան, ասեն, Խիստ է բանդ այդ, ո՞վ կարէ լսել
62 զմա։ Իբրեւ գիտաց Յիսուս յանձն իւր եթէ
տրտնջեն վասն այնորիկ աշակերտքն նորա, ասէ
63 ցնոսա, Այդ գայթակղեցուցանէ՞ զձեզ։ Իսկ արդ,
եթէ տեսանիցէք զՈրդի մարդոյ, զի ելանիցէ ու-
64 ր զառաջինն։ Հոգին է կենդանարար, մարմին
ինչ ոչ օգնէ. զբանն զոր ես խօսեցայ ընդ ձեզ
65 հոգի է և կեանք։ Այլ են ոմանք ի ձէնջ որ ոչ
հաւատան. քանզի գիտէր Յիսուս ի սկզբանէ ով
են այնորիկ որ ոչն հաւատան, և ով այն է ո
66 մատնելոցն է զնա։ Եւ ասէր, Վասն այնորիկ ա-
սացի ձեզ թէ ոչ ոք կարէ գալ առ իս, եթէ ոչ
իցէ տուեալ նմա ի Հօրէ իմմէ։

67 Յայսմանէ բազումք յաշակերտացն նորա չոգան
68 յետս, և ոչ եւս շրջէին ընդ նմա: Ասէ Յիսուս
ցերկոտասան աշակերտսն, Միթէ և դո՞ւք կամիք
69 երթալ: Պատասխանի ետ նմա Սիմոն Պետրոս,
Տէր, առ ո՞վ երթիցուք, բանս կենաց յաւիտե-
70 նականաց ունիս: Եւ մեք հաւատացաք և ծանեաք
71 եթէ դու ես [1]Քրիստոսն Որդի Աստուծոյ": Պա-
տասխանի ետ նոցա Յիսուս, Ո՞չ ես զձեզ ցերկո-
տասանսդ ընտրեցի, և միդ ի ձէնջ սատանայ է:
72 Եւ ասէր զՍիմոնէեան [2]Յուդայէ Իսկարիովտացւոյ",
զի նա իսկ մատնելոց էր զնա, և մի էր ցերկո-
տասանիցն:

ԳԼ. Է

1 ԴԷ. Եւ յետ այսորիկ շրջէր Յիսուս ի Գալիլեա,
քանզի ոչ կամէր ի Հրէաստանի շրջել, զի խնդրէին
զնա Հրեայքն սպանանել:
2 Եւ էր մերձ տօնն Հրէից տաղաւարահարաց:
3 Ասեն ցնա եղբարքն նորա, Գնա աստի և երթ ի
Հրէաստան, զի և աշակերտքն քո տեսցեն զգործսդ
4 քո զոր գործես: Զի ոչ ոք է որ ի ծածուկ ինչ
գործէ, և խնդրէ ինքն համարձակ լինել եթէ
զայդ գործես, յայտնեա զանձն քո աշխարհի:
5 Քանզի և եղբարքն իսկ չէին հաւատացեալ ի նա:
6 Ասէ ցնոսա Յիսուս, ժամանակ իմ չեւ է հասեալ,
բայց ձեր ժամանակ յամենայն ժամու պատրաստ
7 է: Ոչ կարէ աշխարհ ատել զձեզ, բայց զիս

---

[1]Որդի, Որդին Աստուծոյ · այլ՝ Որդին Աստուծոյ կենդանւոյ [2]Օրինակ զ, Յուդայէ որ ի Կարիովտայ

ատեայ, զի ես վկայեմ վասն նորա եթէ գործքն
8 իւր չարութեան են։ Դուք երթայք ի տօնն յայն,
ես ոչ [1]երթամ ի տօնն յայն, զի իմ ժամանակ
9 չէ է լցեալ։ Ցայս իրրեւ ասաց, ինքն մնաց անդէն
10 ի Գալիլեա։ Իրրեւ ելին եղբարքն նորա, յայնժամ և
ինքն ել ի տօնն, ոչ յայտնի այլ իրրեւ ի ծածուկ։
11 Եւ Հրեայքն խնդրէին զնա ի տօնի անդ և ասէին,
12 Ո՞ւր իցէ նա։ Եւ [2]քրթմնջիւն էր զնմանէ ի ժո-
ղովուրդեան. կէսքն ասէին թէ բարւոք է, այլքն ա-
13 սէին, Ոչ, այլ մոլորեցուցանէ զժողովուրդն։ Եւ
ոչ ոք համարձակ խօսէր զնմանէ վասն երկիւղին
Հրէից։
14 Եկ. Իրրեւ տօնն ընդմիջեցաւ, ել Յիսուս ի
15 տաճարն և ուսուցանէր։ Զարմանային Հրեայքն և
ասէին, Զի՞րդ զգիրս գիտէ սա, զի ուսեալ չնաւ
16 չիք։ Պատասխանի ետ նոցա Յիսուս և ասէ, Իմ
վարդապետութիւնս չէ իմ, այլ այնորիկ որ առա-
17 քեացն զիս։ Եթէ ոք կամի կամն նորա առնել,
դիտասցէ վասն վարդապետութեանս, յԱստուծոյ
18 իցէ արդեւք եթէ ես ինձ յանձնէ իմմէ խօսիմ։ Որ
յանձնէ իւրմէ խօսի՝ փառս անձին իւրում խնդրէ,
իսկ որ խնդրէ փառս այնորիկ որ առաքեացն զնա
նա ճշմարիտ է, և անիրաւութիւն ոչ գոյ ի նմա։
19 Ո՞չ Մովսէս ետ ձեզ զօրէնսն, և ոչ ոք ի ձէնջ
20 առնէ զօրէնսն։ Զի՞ խնդրէք զիս սպանանել. պա-
տասխանի ետ ժողովուրդն և ասէ, Դեւ գոյ ի քեզ,
21 ո՞վ խնդրէ զքեզ սպանանել։ Պատասխանի ետ նո-

---

[1] Ոմանք, երթամ տակաւին

[2] Բ—ղ—մ, քրթմնջիւն բազում

ցա Յիսուս և ասէ, Գործ մի գործեցէր, և ամենեքին զարմացեալ էք։ 22 Վասն այնորիկ Մովսէս ետ ձեզ թլփատութիւն, (զի ոչ եթէ ի Մովսիսէ էր, այլ ի հարց անտի,) և ի շաբաթու թլփատէք 23 զմարդ։ Իսկ արդ եթէ թլփատութիւն առնու մարդ ի շաբաթու, զի մի՛ օրէնքն Մովսիսի լուծցին, ընդ իս ցասուցեա՞լ էք զի ողջոյն իսկ մարդ բժշկեցի ի շաբաթու։

24 Եբ. Մի՛ բատ աչս դատիք, այլ ուղիղ դատաստան արարէք։

25 Ասէին ոմանք յԵրուսաղէմացւոց անտի, Ո՞չ նա 26 է սա զոր խնդրէին սպանանել. Եւ աւասիկ յայտնապէս խօսի, և չասեն ինչ ընդ դմա. գուցէ արդեւք և իշխանքն գիտացին թէ սա իցէ [1]Քրիստոսն։ 27 Այլ զսա գիտեմք ուստի է, իսկ Քրիստոսն յորժամ գայցէ, ոչ ոք գիտէ ուստի է։ 28 Աղաղակեաց Յիսուս ի տաճարին, ուսուցանէր և ասէր, Ե՛ւ զիս գիտէք, և՛ ուստի եմն գիտէք. և յանձնէ իմմէ ոչ եմ եկեալ, այլ է ճշմարիտ որ առաքեացն զիս 29 զոր դուքն ոչ գիտէք։ Ես գիտեմ զնա, զի ի նմանէ իսկ եմ, և նա առաքեաց զիս։ 30 Խնդրէին զնա ունել՝ [2]և ել ի ձեռաց նոցա։ և ոչ ոք արկ ի նա 31 ձեռն. զի չէր էր հասեալ ժամ նորա։ Եւ բազումք ի ժողովրդենէն հաւատացին ի նա, և ասէին, Քրիստոսն յորժամ գայցէ, միթէ աւելի՞ ինչ նշանս առնիցէ քան զոր սայս առնէ։ 32 Եւ լուան փարիսեցիքն զսոսունջ ժողովրդեանն զնմանէ. և առա-

---

[1] Ոմանք, ճշմարտիւ Քրիստոսն

[2] Ի բազումս պակասէ

քեցին քահանայապետքն և փարիսեցիքն սպասա-
33 ւորս զի կալցին զնա։ Ասէ Յիսուս, փոքր մեւս
եւս ժամանակ ընդ ձեզ եմ, և երթամ առ այն
34 որ առաքեացն զիս։ Խնդրիցէք զիս և ոչ գտանի-
ցէք, և ուր եան երթամ՝ դուք ոչ կարէք գալ։
35 Ասեն Հրեայքն ընդ միմեանս, Իսկ յո՞ երթայցէ
դա, զի մեք ոչ գտանիցեմք զդա. միթէ ի սփիւռս
Հեթանոսա՞ց երթայցէ և ուսուցանիցէ զՀեթա-
36 նոսս։ Զի՞նչ է բանն այն զոր ասաց, Խնդրիցէք
զիս և ոչ գտանիցէք. և ուր եան երթամ՝ դուք
ոչ կարէք գալ։
37 ԵԳ. Ի վերջնում աւուր մեծի տօնին կայր Յի-
սուս, աղաղակէր և ասէր, Եթէ ոք ծարաւի իցէ,
38 եկեսցէ առ իս և արբցէ։ Որ հաւատայ յիս՝ որ-
պէս և ասեն գիրք, Գետք յորովայնէ նորա բղխես-
39 ցեն ջրոց կենդանութեան։ Զայս ասէր վասն Հոգ-
ւոյն զոր ընդունելոց էին որ հաւատային ի նա. զի
[1]չէր էր Հոգի՝, քանզի Յիսուս չէր էր փառաւո-
40 րեալ։ [2]Ոմանք ի ժողովրդենէն իբրեւ լսէին զբան
41 զայս, ասէին, Սա է ճշմարիտ մարգարէն։ Այլք
ասէին, Սա է Քրիստոս. իսկ կէսքն ասէին, Միթէ
42 ի Գալիլեէ՞ գալոց իցէ Քրիստոս։ Ո՞չ գիրք ասեն
եթէ ի զաւակէ Դաւթի և ի Բեթղեհեմ գեղչէ
43 ուր Դաւիթն էր՝ գալոց է Քրիստոս։ Եւ եղեւ
44 հերձուած ի մէջ ժողովրդեանն վասն նորա։ Եւ
ոմանք ի նոցանէ կամեցան ունել զնա, այլ ոչ ոք
մեկաց ի նա ձեռն։

---

[1]Ոմանք, չէր էր տուեալ Հոգի Սուրբ
[2]Ոմանք, Բազումք

45 Եւ եկին անդրէն սպասաւորքն առ քահանայա-
պետան և փարիսեցիս, և ասեն ցնոսա, Ընդէ՞ր
46 ոչ ածէք զնա այսր։ Պատասխանի ետուն սպասա-
ւորքն և ասեն, Ոչ երբեք այնպէս խօսեցաւ մարդ
47 որպէս այրն այն։ Պատասխանի ետուն փարիսեցիքն
48 և ասեն, Միթէ և դո՞ւք մոլորեցարուք։ Միթէ
ոք յիշխանացն հաւատա՞ց ի նա կամ ի փարիսեց-
49 ւոցն Այլ այն խաժամուժ ամբոխ որ ոչ գիտէ
50 զօրէնս, և նզովեալ են։ Ասէ Նիկոդեմոս ցնոսա
(որ եկեալն էր առ նա գիշերի յառաջագոյն, և մի
51 էր ի նոցանէ), Միթէ օրէնքն մեր դատի՞ն զմարդ,
եթէ ոչ լսեն ինչ նախ ի նմանէ, [1]կամ գիտեն
52 ինչ գործէ։ Պատասխանի ետուն նմա և ասեն,
Միթէ և դո՞ւ եւս ի Գալիլէէ իցես. քննեա և
տես, զի մարգարէ ի Գալիլէէ ոչ յառնէ։

ԳԼ. Ը

1 [2]Եւ գնացին իւրաքանչիւր ոք ի տեղի իւր, իսկ
2 Յիսուս գնաց ի լեառն Ձիթենեաց։ Եւ ընդ առա-
ւօտան դարձեալ եկն ի տաճարն, և գայր առ նա
ամենայն ժողովուրդն, և նստեալ ուսուցանէր զնո-
3 սա։ Ածին առ նա դպիրքն [3]և քահանայապետքն՝
և փարիսեցիք կին ի բռնութեան. և
4 կացուցեալ զնա առաջի, Ասեն ցնա, Վարդա-
պետ, կինս այս բռնութեամբ՝ ինքն յայտնապէս շնա-
5 ցեալ է։ Եւ յօրէնսն Մովսէս մեզ պատուիրեաց

---

[1]Յ-ին, և [2]Այս ճեռագրի համար պակասեն ի բա-
զմա ի Յովհաննէ օրինակաց, որպէս և ի բազմա ի Հա-
յերէն նեռագրէ։ [3]ի բազմա պակասէ

զայսպիսիս քարկոծել. արդ դու զի՞նչ ասես վասն
6 դորա։ Զայս ասէին փորձելով զնա, զի ունիցին
ամբաստանութիւն զնմանէ. իսկ Յիսուս ի խոնարհ
7 նայելով գրէր մատամբն յերկրի։ Իսկ երբեւ ասի
պեցին հարցանելով զնա, հայեցեալ ի վեր՝ ասէ
ցնոսա, Անմեղն ի ձէնջ նախ նա ընկեցէ քար ի
8 վերայ դորա։ Եւ դարձեալ ի խոնարհ նայելով
9 գրէր յերկրի։ Եւ [1]լուեալ եւ ելանէին՝ ի բաց մի
ջէ, սկսեալ յառաջնոցն մինչեւ ի վերջինան. և
մնաց միայն Յիսուս, և կինն կայր առաջի նորա։
10 [2]Պատասխանի եւ Յիսուս և՝ ասէ ցնա, Կին դու,
11 [3]ո՞ւր են. ո՞չ ոք՝ զքեզ դատապարտեաց։ Եւ
ասէ, Ոչ, Տէր. և ասէ Յիսուս, Եւ ոչ ես դատա
պարտեմ զքեզ, երթ, յայսմ հետէ մի՛ մեղանչեր։
12 ԵԴ Դարձեալ խօսեցաւ ընդ նոսա Յիսուս և
ասէ, Ես եմ լոյս աշխարհի. որ գայ ինձի իմ՝ ընդ
խաւար մի՛ գնասցէ, այլ ընկալցի լոյսն կենաց։
13 Ասեն ցնա փարիսեցիքն, Դու վասն անձին քո
14 վկայես, և վկայութիւն քո չէ ճշմարիտ։ Պատաս
խանի եւ Յիսուս և ասէ ցնոսա, Թէպէտ և ես
վկայեմ վասն անձին իմոյ, վկայութիւն իմ ճշմա
րիտ է. զի գիտեմ ուստի եկի և յո երթամ. բայց
դուք ոչ գիտէք ուստի գամ կամ յո երթամ։
15 Դուք ըստ մարմնոյ դատիք, ես ոչ դատիմ և ոչ
16 ոք. Թէպէտ և դատիմ ես ոք, դատաստան

---

[1]Ոմն+, լուեալ և յանդիմանեալ ի խղճէ մտաց։ ելանէին [2]Ոմն+, Հայեցեալ Յիսուս ի վեր և ոչ ոք տեսեալ բայց ի կնոջէն, [3]Ոմն+, ո՞ւր են որ չարախօսէինն զքէն. ո՞չ ոք

իմ ճշմարիտ է. զի չեմ միայն, այլ ես և որ ա-
17 ռաքեացն զիս Հայր: Եւ յօրէնսն իսկ ձեր գրեալ
է թէ երկուց մարդոց վկայութիւն ճշմարիտ է:
18 Ես եմ որ վկայեմ վասն իմ, և վկայէ վասն իմ
19 որ առաքեացն զիս Հայր: Ասէին ցնա, Ո՞ւր է
Հայր քո. պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա,
Ոչ զիս գիտէք և ոչ զՀայրն իմ. եթէ զիս գիտէիք,
և զՀայրն իմ թերեւս գիտէիք:
20 Զայս բանս խօսեցաւ ի տան գանձին, յորժամ
ուսուցանէր ի տաճարի անդ. և ոչ ոք կալաւ զնա,
զի չէր եւս հասեալ էր ժամ նորա:
21 Եե. Ասէ դարձեալ ցնոսա Յիսուս, Ես երթամ,
և խնդրիցէք զիս, և ի մեղս ձեր մեռանիցիք. զի
22 ուր ես երթամ, դուք ոչ կարէք գալ: Ասէին
Հրեայքն, Միթէ զիւրովի՞ն երթայցէ, զի ասէ թէ
23 Ուր ես երթամ, դուք ոչ կարէք գալ: Եւ ասէ
ցնոսա, Դուք ի ներքուստ աստի էք, և ես ի վե-
րուստ անտի եմ. դուք յաշխարհէ աստի էք, ես
24 չեմ յայսմ աշխարհէ: Բայց ասացի ձեզ թէ ի
մեղս ձեր մեռանիցիք. զի թէ ոչ հաւատայցէք թէ
25 ես եմ, մեռանիցիք ի մեղս ձեր: Ասէն ցնա, Դու
ո՞վ ես. ասէ ցնոսա Յիսուս, [1]Նախ զի և խօսիմ
26 իսկ ընդ ձեզ՞: Բազում ինչ ունիմ վասն ձեր խո-
սել և դատել. այլ որ առաքեացն զիս՝ ճշմարիտ
է. և ես զոր լուայն ի նմանէ՝ զայն խօսիմ յաշ-
27 խարհի: Եւ ոչ գիտացին թէ զՀօրէ ասէր ցնոսա:
28 Ասէ ցնոսա Յիսուս, Յորժամ բարձրացուցանիք-
ցէք զՈրդի մարդոյ, յայնժամ գիտասջիք թէ ես

---

[1]կամ, Զոր ի սկզբանէ անտի խօսիմ առ ձեզ

եմ. և յանձնէ իմիմէ ոչ ինչ առնեմ, այլ որպես
29 ուսոյց զիս Հայրն իմ, զայն խօսիմ։ Եւ որ առա-
քեացն զիս՝ ընդ իս է. ոչ եթող զիս միայն, զի
ես զհաճոյս նորա առնեմ հանապազ։
30 Իբրեւ զայս խօսեցաւ, բազումք հաւատացին ի նա
31 եզ. Եւ ասէր Յիսուս առ Հրեայն հաւատա-
ցեալս, եթէ դուք կացջիք ի բանի իմում, ճշմա-
32 րիտ աշակերտք իմ էք. Եւ ծանիջիք զճշմարտու-
33 թիւնն, և ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ։ Պա-
տասխանի ետուն նմա և ասեն, Զաւակ Աբրահա-
մու եմք, և ոչ ումեք երբեք ծառայեցաք. զիա՞րդ
34 ասես թէ ազատք լինիջիք։ Պատասխանի ետ նոցա
Յիսուս, Ամէն ամէն ասեմ ձեզ թէ Ամենայն որ
35 առնէ զմեղս՝ ծառայ է մեղաց։ Եւ ծառայն ոչ
յաւիտեան կայ ի տան, իսկ որդին յաւիտեան
36 կայ։ Իսկ արդ եթէ Որդին զձեզ ազատեցուսցէ,
37 ճշմարիտ ազատք լինիջիք։ Գիտեմ զի զաւակ Ա-
բրահամու էք, այլ խնդրէք սպանանել զիս, զի
38 բանին իմոյ չիք տեղի ի ձեզ։ Ես զոր տեսի առ
Հօր իմում՝ խօսիմ, և դուք զոր լուարուք ի հօրէն
39 ձերմէ՝ առնէք։ Պատասխանի ետուն նմա և ասեն,
Հայր մեր Աբրահամ է. ասէ ցնոսա Յիսուս, եթէ
որդիք Աբրահամու էիք, զգործսն Աբրահամու գոր-
40 ծէիք։ Այլ այժմիկ խնդրէք սպանանել զիս, զայր
մի՝ որ ձեզ զճշմարտութիւն խօսեցայ, զոր լուայ
41 [1]ի Հօրէ իմմէ՝. զայդ Աբրահամ ոչ արար։ Դուք
առնէք զգործս հօրն ձերոյ. ասեն ցնա, Մեք ի
պոռնկութենէ չեմք ծնեալ. մի է Հայր մեր, Ա-

---

[1]Բ—ը—ժ, ՀԱստուծոյ

42 տուած։ Ասէ ցնոսա Յիսուս, Եթէ Աստուած էր
Հայր ձեր, սիրէիք արդեւք զիս. զի ես յԱստուծոյ ելի և եկի, և ոչ եթէ յանձնէ ինչ եկի, այլ
43 նա առաքեաց զիս։ Ընդէ՞ր զխօսս իմ ոչ գիտէք
44 դուք. վասն զի ոչ կարէք լսել զբանն իմ։ Դուք ի հօրէ ի Սատանայէ էք, և զցանկութիւնս հօրն ձերոյ կամիք առնել. զի նա մարդասպան էր ի սկզբանէ, և ի ճշմարտութեան ոչ եկաց, զի ոչ գոյ ճշմարտութիւն ի նմա. յորժամ խօսիցի սուտ, յիւրոց անտի խօսի. զի սուտ է և հայր նորա։
45 Իսկ ես զի զճշմարտութիւն խօսիմ, ոչ հաւատայք
46 ինձ։ Ո՞ ի ձէնջ յանդիմանէ զիս վասն մեղաց. եթէ զճշմարիտն ասեմ ձեզ, ընդէ՞ր ոչ հաւատայք ինձ։
47 Որ էն յԱստուծոյ՝ զբանս Աստուծոյ լսէ. և դուք
48 վասն այնորիկ ոչ լսէք, զի չէք յԱստուծոյ։ Պատասխանի ետուն Հրեայքն և ասեն ցնա, Ո՞չ բարւոք ասեմք մեք եթէ Սամարացի ես դու, և
49 դեւ գոյ ի քեզ։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ, Ցիս դեւ ոչ գոյ, այլ պատուեմ զՀայր իմ, և
50 դուք անարգէք զիս։ Ես ոչ խնդրեմ զփառս իմ,
51 է որ խնդրէն և դատի։ Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոք զբանն իմ պահեսցէ, զմահ մի՛ տեսցէ ի
52 յաւիտեան։ Ասեն ցնա Հրեայքն, Արդ գիտացաք թէ դեւ գոյ ի քեզ. Աբրահամ մեռաւ, և մարգարէքն, և դու ասես, Եթէ ոք զբանն իմ պա-
53 հեսցէ, մի՛ ճաշակեսցէ զմահ ի յաւիտեան։ Մի՞թէ դու մե՞ծ ինչ ոք իցես քան զՀայր մեր Աբրահամ, որ մեռաւ, և մարգարէքն մեռան. արդ դու զո՞
54 առնես զքեզ։ Պատասխանի ետ Յիսուս, Եթէ ես փառաւորեմ զանձն իմ, փառքն իմ ոչինչ են.

է Հայր որ փառաւորէ զիս, զորմէ դուքն ասէք թէ
55 Աստուած [1]մեր է. եւ ոչ ճանաչէք զնա, բայց ես
գիտեմ զնա. և եթէ ասեմ թէ ոչ գիտեմ զնա,
ձեզ նման սուտ լինիմ. այլ գիտեմ զնա և զբան
56 նորա պահեմ։ Աբրահամ Հայր ձեր ցանկացաւ
57 տեսանել զօր իմ, ետես և ուրախ եղեւ։ Ասեն
ցնա Հրեայքն, Յիսուն ամ չես եւս է քո, և զԱբ-
58 րահա՞մ տեսեր։ Ասէ ցնոսա Յիսուս, Ամէն ամէն
ասեմ ձեզ, Յառաջ քան զլինելն Աբրահամու եմ
59 ես։ Վէմս առին զի արկցեն ի վերայ նորա, և Յի-
սուս թոյս ետ և ել զնաց ի տաճարէ անտի։

ԳԼ. Թ

1 ԵՏ Եւ մինչդեռ անցանէր, ետես այր մի կոյր ի
2 ծնէ. Եւ հարցին զնա աշակերտքն նորա և ասեն,
Ռաբբի, ո՞վր գնաա է, սորա՞ թէ հօր և մօր իւրոյ,
3 զի կոյր ծնցի։ Պատասխանի ետ Յիսուս, Ոչ դորա
գնաա է, և ոչ հօր և մօր իւրոյ. այլ զի յայտնի
4 լինին գործքն Աստուծոյ ի դմա։ Եւ ինձ պարտ է
գործել զգործս այնորիկ որ առաքեացն զիս, մինչ
աւուր կայ. գայ գիշեր, յորժամ ոչ ոք կարէ
5 գործել։ Մինչդեռ յաշխարհի եմ, լոյս եմ աշխար-
6 հի։ Զայս իբրեւ ասաց, եթուք ի գետին և արար
կաւ ի թքոյն, և ծեփեաց զկաւն ի վերայ աչաց
7 կուրին. Եւ ասէ ցնա, Երթ, լուա յաւազանին
Սիլոամայ, (որ թարգմանի առաքեալ.) չոգաւ
8 լուացաւ, եկն և տեսանէր։ Իսկ դրացիքն և որոց
տեսեալն էր զնա յառաջագոյն թէ [2]մուրացիկ էր

---

[1] Ոմանք, ձեր

[2] Ոմանք, կոյր

ասէին, Ո՞չ սա էր որ նստէր և մուրանայր։ Կէսքն
9 ասէին, Նա է. Այլքն ասէին, [1]Ոչ, այլ՝ նմանն է
10 նմա. և ինքն ասէր Թէ, Ես եմ։ Ասեն ցնա, Իակ
11 զիա՞րդ բացան աչք քո։ Նա եհան պատասխանի,
Այր մի որում Յիսուսն ասեն՝ կաւ արար և ծե-
փեաց զաչս իմ, և ասէ ցիս, Երթ ի Սիլովամ և
12 լուա. չոգայ, լուացայ և տեսանեմ։ Ասեն ցնա,
Ո՞ւր է նա. ասէ ցնոսա, Ոչ գիտեմ։
13 Ածին սա փարիսեցիսն զնա որ երբեմն կոյրն էր։
14 Եւ էր շաբաթի, յորժամ զկաւն արար Յիսուս, և
15 երաց զաչս կուրին։ Դարձեալ հարցանէին զնա և
փարիսեցիքն Թէ զիա՞րդ տեսանէր. և նա ասէ
ցնոսա, Կաւ եդ ի վերայ աչաց իմոց, և լուացայ
16 և տեսանեմ։ Ասեն ոմանք ի փարիսեցւոցն, Ոչ է
այրն այն յԱստուծոյ, զի զշաբաթն ոչ պահէ.
կէսքն ասէին, Իակ զիա՞րդ կարէ մարդ մեղաւոր
այսպիսի նշանս առնել. և էին հերձուածք ի մէջ
17 նոցա։ Ասեն դարձեալ զկոյրն, Դու զի՞ ասես վասն
նորա զի երաց զաչս քո. և նա ասէր Թէ, Մար-
18 գարէ է։ Եւ ոչ հաւատային Հրեայքն զնմանէ Թէ
կոյր էր և բացաւ, մինչեւ կոչեցին զծնողս բաց-
19 ղին։ Հարցին ցնոսա և ասեն, Սա՞ է որդին ձեր,
զորմէ դուքն ասէիք եթէ կոյր ծնաւ, արդ զիա՞րդ
20 տեսանէ։ Պատասխանի ետուն նոցա ծնողքն նորա
և ասեն, Գիտեմք զի սա է որդին մեր, և զի կոյր
21 ծնաւ. Բայց զիա՛րդ այժմ տեսանէ, ոչ գիտեմք.
կամ Թէ ո՛վ երաց զաչս դորա, մեք ոչ գիտեմք.
ցդա իակ հարցէք, ինքնին ի չափ հասեալ է, ինքն

[1]Յոմանս պակաս

22 իսկ խօսեացի վասն իւր՝ Զայս ասացին ծնողքն նո-
րա, զի երկնչէին ի Հրէից. քանզի ուխտ եդեալ
էր Հրէից, եթէ ոք խոստովանեսցի զնա Քրիստոս,
23 ի բաց կացցէ ի ժողովրդենէն։ Վասն այնորիկ ա-
սացին ծնողքն նորա թէ Ինքնին ի չափ Հասեալ
24 է, ցնա իսկ Հարցէք։ Դարձեալ կրկին անգամ
կոչեցին զայրն որ կոյրն էր, և ասեն ցնա, Տուր
փառս Աստուծոյ. մեք գիտեմք զի այրն այն մե-
25 ղաւոր է։ Եւ նա ասէ, Թէ մեղաւոր իցէ, ես ոչ
գիտեմ. բայց զայս գիտեմ, զի կոյր էի և արդ
26 տեսանեմ։ Դարձեալ ասեն ցնա, Ի՞նչ արար քեզ,
27 զիա՞րդ եբաց զաչս քո։ Պատասխանի եաս նոցա։
Ասացի ձեզ և ոչ լուարուք. զի՞ կամիք
միւսանգամ լսել. միթէ և դո՞ւք կամիք աշակեր-
28 տել նմա։ Նոքա հայհոյէին զնա և ասէին, Դու
լինիր նորա աշակերտ, մեք Մովսիսի աշակերտք
29 եմք։ Մեք գիտեմք զի ընդ Մովսիսի խօսեցաւ Աս-
30 տուած, զսա ոչ գիտեմք ուստի՛ իցէ։ Պատասխա-
նի եաս այրն և ասէ ցնոսա, Այդ իսկ են սքանչե-
լիք, զի դուք ոչ գիտէք ուստի՛ իցէ, և զիա զաչս
31 եբաց։ Գիտեմք զի Աստուած մեղաւորաց ոչ լսէ,
բայց եթէ աստուածապաշտ ոք իցէ և զկամս նորա
32 առնիցէ, նմա լսէ։ Ի յաւիտենից ոք ոչ լուաւ
33 եթէ եբաց ոք զաչս կուրի ի ծնէ կոյր ծնելոյ։ Եթէ
ոչ յԱստուծոյ էր այրն այն, ոչ կարէր առնել
34 ինչ։ Պատասխանի եւուն և ասեն ցնա, Ի մեղս
իսկ ծնեալ ես ամենեւին, և դու վարդապե՞տ լի-
նիս մեր. և հանին զնա արտաքս։
35 Լուաւ Յիսուս եթէ հանին զնա արտաքս, և
իբրեւ եգիտ զնա, ասէ ցնա, Դու Հաւատա՞ս Որդի

36 Աստուծոյ։ Նա պատասխանի ետ և ասէ, Տէր,
37 ո՞վ է զի հաւատացից ի նա։ Ասէ ցնա Յիսուս,
և՛ տեսեր զնա, և՛ որ խօսիդ ընդ քեզ՝ նա է։
38 Եւ նա ասէ, Հաւատամ, Տէր, և երկիր եպագ նմա։
39 ԶԿ. Եւ ասէ Յիսուս, Ի դատաստան եկի յաշ-
խարհս յայս, զի որ ոչն տեսանեն՝ տեսցեն, և որք
40 տեսանեննն՝ կուրասցին։ Լուան ոմանք ի փարիսեց-
ւոցն որք ընդ նմա էին, և ասեն ցնա, Միթէ և
41 մե՞ք կոյրք իցեմք։ Ասէ ցնոսա Յիսուս, Եթէ կոյրք
էիք, ոչ էր ձեր մեղ. բայց արդ ասէք եթէ Տեսա-
նեմք, և մեղքն ձեր ի ձեզ հաստատեալ են։

ԳԼ. Ժ.

1 Ամէն ամէն ասեմ ձեզ, Որ ոչ մտանէ ընդ դուռն
ի գաւթի ոչխարացն, այլ ընդ այլ ելանէ՝ նա գող
2 է և աւազակ։ Իսկ որ մտանէ ընդ դուռն՝ հովիւ
3 է ոչխարաց։ Նմա դռնապանն բանայ, և ոչխարքն
ձայնի նորա լսեն, և զիւր ոչխարան կոչէ յանուա-
4 նէ և հանէ զնոսա։ Եւ յորժամ [1]զիւրն զամենայն՝
հանիցէ, առաջի նոցա երթայ, և ոչխարքն զհետ
5 նորա երթան, զի ճանաչեն զձայն նորա։ Զօտարի
զհետ ոչ երթիցեն, այլ փախիցեն ի նմանէ, զի ոչ
ճանաչեն զձայն օտարաց։
6 Զայս առակ ասաց նոցա Յիսուս, և նոքա ոչ
7 գիտէին եթէ զինչ էր որ խօսէրն ընդ նոսա։ Դար-
ձեալ ասէ ցնոսա Յիսուս, Ամէն ամէն ասեմ ձեզ
8 զի ես եմ դուռն ոչխարաց։ Ամենեքեան որ յա-
ռաջ քան զիս եկին՝ գողք էին և աւազակք. այլ

---

[1] Որ+, զիւր ոչխարան

9 ոչ լուան նոցա ոչխարքն։ Ես եմ դուռն, ընդ ի
ևթէ ոք մտանիցէ, կեցցէ. մտցէ և ելցէ և ճարակ
10 գտցէ։ Գող ոչ գայ, եթէ ոչ զի գողասցի և
սպանցէ և կորուսցէ. ես եկի զի կեանս ունիցին,
և առաւել եւս ունիցին։
11 ՁԲ. Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն
12 իւր դնէ ի վերայ ոչխարաց Իսկ վարձկանն որ ոչ
է հովիւ, որոյ ոչ իւր են ոչխարքն, իբրեւ տեսա-
նէ զգայլն զի գայ, թողու զոչխարան և փախչի. և
13 գայլն յափշտակէ զնոսա և ցրուէ. [1]քանզի վարձ.
14 կան է, և չէ փոյթ նմա վասն ոչխարացն։ Ես եմ
հովիւն քաջ, և ճանաչեմ զիմն և ճանաչիմ յի-
15 մոցն։ Որպէս գիտէ զիս Հայրն, գիտեմ և ես զՀայր.
16 և զանձն իմ դնեմ ի վերայ ոչխարաց։ Նա և այլ
եւս ոչխարք են իմ, որ ոչ են յայսմ գաւթէ, և
զայնս եւս պարտ է ինձ ածել այսր, և ձայնի
իմում լուիցեն, և եղիցին մի հօտ և մի հովիւ։
17 Վասն այնորիկ սիրէ զիս Հայրն իմ, զի ես դնեմ
18 զանձն իմ, զի միւսանգամ առից զնա։ Ոչ ոք հա-
նէ զնա յինէն, այլ ես դնեմ զնա անձամբ իմով.
իշխանութիւն ունիմ դնել զնա, և իշխանութիւն
ունիմ միւսանգամ առնուլ զնա. զայս պատուէր
առի ի Հօրէ իմմէ։
19 Պարձեալ հերձուած լինէր ի մէջ Հրէից վասն
20 բանիցս այսոցիկ։ Եւ ասէին բազումք ի նոցանէ,
Դեւ գայ ի նմա և մոլեգնի, զի՞ ընդ լսէք նմա։
21 Ասէին, Ասպիսի բանք ոչ դիւահարի են.
միթէ դեւ կարէ՞ զաչս կուրի բանալ։

---

[1]Ոմն, Իսկ վարձկանն փախչի, քանզի

22 ՁԳ. Եղեն յայնժամ նաւակատիքն Երուսա-
23 ղէմ, և ձմեռն էր։ Եւ շրջէր Յիսուս ի տաճարին
24 ի սրահին Սողոմոնիսի։ Շուրջ եղեն զնովաւ Հրեայքն
և ասեն, Մինչեւ յե՞րբ թափեա զոգիս մեր. եթէ
25 դու ես Քրիստոսն, ասա մեզ համարձակ։ Պա-
տասխանի եւ նոցա Յիսուս և ասէ, Ասացի ձեզ
և ոչ հաւատայք [1]ինձ. զգործսն զոր ես գործեմ
յանուն Հօր իմոյ՝ նոքին իսկ վկայեն վասն իմ։
26 Այլ դուք ոչ հաւատայք, զի ջէք յոչխարաց ան-
27 տի [2]իմոց։ Ոչխարք իմ ձայնի իմում լսեն, և ես
28 ճանաչեմ զնոսա, և գան զկնի իմ զան. Եւ ես տամ
նոցա զկեանսն յաւիտենականս. և մի՛ կորիցեն յա-
ւիտեան, և մի՛ ոք յափշտակեսցէ զնոսա ի ձեռաց
29 իմոց։ Հայրն իմ որ ետ ինձ զնոսա՝ մեծ է քան
զամենայն, և ոչ ոք կարէ յափշտակել ի ձեռաց
30 Հօր իմոյ։ Ես և Հայր [3]իմ միս եմք։ (31) Վէմս ա-
32 ռին Հրեայքն զի քարկոծ արասցեն զնա։ Պատաս-
խանի եւ նոցա Յիսուս, Բազում գործս բարիս
ցուցի ձեզ ի Հօրէ իմմէ. վասն որո՞յ գործոյ ի նո-
33 ցանէ քարկոծ առնէք զիս։ Պատասխանի ետուն
նմա Հրեայքն, Վասն բարւոյ գործոյ ոչ առնեմք
զքեզ քարկոծ, այլ վասն հայհոյութեան. և զի
դու մարդ ես, և զանձն քո Աստուած առնես։
34 Պատասխանի եւ նոցա Յիսուս, Ո՞չ գրեալ
35 գրեալ է, Ես ասացի թէ աստուածք իցէք։ Իսկ
եթէ զնոսա աստուածս ասէ, առ որս բանն Ա-
36 ստուծոյ եղեւ, (և չէ մարթի եղծանել գրոյն,) Իսկ

---

[1] Ի բազմա- պակաս [2] Ոմանք, իմոց, որպէս ասացի
ձեզ [3] Յոմանս պակաս

զոր Հայր սրբեաց և առաքեաց յաշխարհ, դուք
ասէ՞ք թէ Հայհոյես, զի ասացի թէ Որդի Աստու-
37 ծոյ եմ։ Եթէ ոչ գործեմ զգործս Հօր իմոյ, մի՛
38 հաւատայք ինձ։ Ապա թէ գործեմ, թէ և ինձ ոչ
հաւատայք, սակայն գործոցն հաւատացէք. զի գի-
տասջիք և [1]ծանիջիք եթէ Հայր յիս, և ես ի Հայր։
39 Դարձեալ խնդրէին զնա առնել, և ել ի ձեռաց
40 նոցա։ Եւ գնաց միւսանգամ յայնկոյս Յորդանա-
նու ի տեղին ուր էր Յովհաննէս զառաջինն և
41 մկրտէր, և անդ լինէր։ Եկին բազումք առ նա և
42 ասեն, Զի Յովհաննէս[2] նշան ինչ ոչ արար. Բայց
զամենայն զոր ասաց Յովհաննէս վասն նորա, ճշմա-
րիտ էր. և բազումք հաւատացին ի նա անդ։

ԳԼ. ԺԱ

1 ՋԴ. Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս ի Բեթանեայ,
2 ի գեղջէ Մարեմայ և Մարթայի քեռն նորա։ Այ-
սն Մարիամ էր որ օծ զՏէրն իւղով, և ջնջեաց
զոտս նորա հերով իւրով. որոյ եղբայրն Ղազարոս
3 հիւանդ էր։ Առաքեցին առ նա քորքն նորա և
ասեն, Տէր, ահաւասիկ զոր դուն սիրէիր՝ հիւան-
4 դացեալ է։ Իբրեւ լուաւ Յիսուս, ասէ, Այն հի-
ւանդութիւն չէ ի մահ, այլ վասն փառացն Ա-
ստուծոյ. զի փառաւորի Որդի Աստուծոյ
5 այնուհետև։ Եւ սիրէր Յիսուս զՄարթա և զքոյր նո-
6 րա [3]զՄարիամ և զՂազար։ Իբրեւ լուաւ թէ հի-
ւանդացեալ է, զտեղի կալաւ անդէն ուր էր ա-

---

[1] Ոմանք, հաւատասջիք [2] Բազմաք յաւելուն, որ գարեւ [3] Ի յոմանս պակաս

7 ւսւբս երկուս։ Ապա յետ այնորիկ ասէ ցնոսա,
8 եկայք երթիցուք միւսանգամ ի Հրէաստան։ Ասեն
ցնա աշակերտքն, Ռաբբի, այժմ եւս խնդրէին
զքեզ Հրեայքն քարկոծ առնել. և դարձեա՞լ եր-
9 թաս անդրէն։ Պատասխանի ետ Յիսուս, Ո՞չ եր-
կոտասան ժամ է աւուր. եթէ ոք գնայ ի տուըն-
ջեան, ոչ գայթակղի, զի զլոյս աշխարհիս այսորիկ
10 տեսանէ. Ապա թէ ոք գնայ գիշերի, գայթակղի,
11 զի լոյս ոչ գոյ ընդ նմա։ Զայս իրրեւ ասաց, յետ
այսորիկ ասէ ցնոսա, Ղազարոս բարեկամ մեր
12 ննջեաց, այլ երթամ զի զարթուցից զնա։ Ասեն
ցնա աշակերտքն, Տէր, եթէ ննջեաց, ապա ապրի։
13 Այլ Յիսուս վասն մահուն նորա ասէր. Նոցա այս-
պէս թուեցաւ թէ վասն ննջելոյ քնոյն ասէր։
14 Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս յայտնապէս, Ղա-
15 զարոս մեռաւ. Եւ ես ուրախ եմ վասն ձեր, զի
դուք հաւատասջիք [1]ինձ, զի ես չէի անդ. բայց
16 արդ եկայք երթիցուք առ նա։ Ասէ Թովմաս, ա-
նուանեալն Երկուորեակ, ցաշակերտակիցսն, Ո՛ն,
եկայք և մեք զի ընդ նմա մեռցուք։
17 Եկն Յիսուս, եդիտ զնա չորեքօրեայ ի գերեզմա-
18 նի։ Եւ էր Բեթանիա մերձ Յերուսաղէմ իրրեւ
19 ասպարիսօք հնգետասան։ Բազումք ի Հրէից անտի
եկեալ էին առ Մարթա և Մարիամ, զի մխիթա-
20 րեսցեն զնոսա վասն եղբօրն։ Մարթա իրրեւ լուաւ
թէ Յիսուս գայ, ընդ առաջ գնաց նորա, բայց
21 Մարիամ նստէր անդէն ի տան։ Ասէ Մարթա
ցՅիսուս, Տէր, եթէ աստ լեալ էիր, եղբայրն իմ

---

[1] ի Յ—ն պ—ւթ—ւ

22 չէր մեռեալ. Այլ և արդ գիտեմ եթէ զոր ինչ
23 խնդրեացես յԱստուծոյ՝ տացէ քեզ Աստուած։ Ասէ
24 ցնա Յիսուս, Յարիցէ եղբայրն քո։ Ասէ ցնա Մար-
թա, Գիտեմ զի յարիցէ ի յարութեան՝ յաւուրն
25 յետնում։ Ասէ ցնա Յիսուս, Ես իսկ եմ յարու-
թիւն և կեանք. որ Հաւատայ ինձ, թէպէտ և
26 մեռանիցէ, կեցցէ. Եւ ամենայն որ կենդանի է և
Հաւատայ ինձ՝ մի՛ մեռցի ի յաւիտեան. Հաւա-
27 տա՞ս այսմիկ։ Ասէ ցնա, Այո, Տէր, ես Հաւա-
տացի եթէ դու ես Քրիստոսն, Որդի Աստուծոյ,
28 որ յաշխարհ գալոց էիր։ Եւ զայս իբրեւ ասաց,
գնաց և կոչեաց զՄարիամ, զքոյր իւր, լռելեայն
և ասէ, Վարդապետն եկեալ է և կոչէ զքեզ
29 Նա իբրեւ լուաւ, յարեաւ վազվազակի և եկն ա-
30 նա։ Զի եւս էր եկեալ Յիսուս ի գեղն, այլ էր
անդէն ի տեղւոյն ուր ընդ առաջ եղեւ նմա Մար-
31 թա։ Իսկ Հրեայքն որ էին ընդ նմա ի տան անդ
և մխիթարէին զնա, իբրեւ տեսին զՄարիամ թէ
յարեաւ վազվազակի և գնաց, գնացին և նորա
զհետ նորա, համարէին թէ ի գերեզմանն երթայ
32 զի լացցէ անդ։ Իսկ Մարիամ իբրեւ եկն ուր էր
Յիսուս և տեսս զնա, անկաւ առ ոտս նորա և
ասէ, Տէր, եթէ աստ էիր դիպեալ, ոչ էր մեռեալ
33 եղբայրն իմ։ Յիսուս իբրեւ տեսս զնա զի լայր, և
որ ընդ նմանն էին Հրեայքն լային, խռովեցաւ յոգի
34 իւր իբրեւ զայրացեալ, Եւ ասէ, Ո՞ւր եդիք զնա
35 առնն ցնա, Տէր, եկ և տես։ Եւ արտասուեաց
36 Յիսուս։ Ասէին Հրեայքն, Տեսէք, որչափ սիրէր
37 զնա։ Էին ի նոցանէ ասէին, Ո՞չ կարէր սա, որ
բացաց զաչս կուրին, առնել զի և սա մի՛ մեռցի

38 Յիսուս դարձեալ զայրացեալ ընդ միտս իւր, գայ
ի գերեզմանն. և էր այր մի, և վէմ մի եդեալ ի
39 վերայ նորա: Եւ ասէ Յիսուս, Ի բաց արարէք
զվէմդ: Ասէ ցնա Մարթա, քոյր մեռելոյն, Տէր,
40 արդ հոտեալ իցէ, քանզի չորեքօրեայ է: Ասէ ցնա
Յիսուս, Ո՞չ ասացի քեզ, եթէ հաւատասցես,
41 տեսցես զփառսն Աստուծոյ: Եւ իբրեւ ի վեր ա-
ռին [1]զվէմն, Յիսուս ամբարձ զաչս իւր ի վեր և
42 ասէ, Հայր, գոհանամ զքէն զի լուար ինձ: Եւ
ես գիտէի զի յամենայն ժամ լսես ինձ. այլ վասն
ժողովրդեանս որ շուրջ կան [2]առնեմ, զի հաւա-
43 տասցեն թէ դու առաքեցեր զիս: Զայս իբրեւ ա-
սաց, ի ձայն մեծ աղաղակեաց և ասէ, Ղազարէ,
44 արի եկ արտաքս: Եւ ել մեռեալն ոտիւք կապե-
լովք և ձեռօքն երիզապնդօք և երեսօքն վարշամա-
կապատօք. և ասէ ցնոսա Յիսուս, Լուծէք զդա
և թողէք երթալ:

45 Բազումք ի Հրէից որ եկեալ էին առ [3]Մարե-
մեանս, իբրեւ տեսին զոր [4]արարն՝ հաւատացին ի
46 նա: Եւ ոմանք ի նոցանէ գնացին առ փարիսեցիսն,
պատմեցին նոցա զոր արարն Յիսուս:

47 Զգ ժողովեցին քահանայապետքն և փարիսե-
ցիքն ատեան, և ասեն, Զի՞նչ արասցուք, զի այրն
48 այն բազում նշանս առնէ: Եթէ թողումք զնա
այնպէս, ամենեքին հաւատասցեն ի նա. և գայցեն
49 Հռոմք և բառնայցեն զտեղիս մեր և զտեղի: Մի
ոմն ի նոցանէ, անուն Կայիափա, որ քահանայա-

---

[1]Ոմանք, զվէմն ուր դնէր մեռեալն [2]Յոմն, ասացի
[3]Յոմն, Մարիամ [4]Ոմանք, արարն Յիսուս

պետ էր տարւոյն այնորիկ, ասէ ցնոսա, Դուք
50 ոչ ինչ գիտէք, եւ ոչ բնաւ խորհիլ իսկ, թէ լաւ
է մեզ զի այր մի մեռանիցի ի վերայ ժողովրդեանս,
51 և մի՝ ամենայն ազգս կորիցէ։ Զայս ոչ յանձնէ
ինչ ասաց, այլ զի քահանայապետ էր տարւոյն
այնորիկ, մարգարէացաւ եթէ մեռանելոց էր Ցի-
52 սուս ի վերայ ազգին· եւ ոչ ի վերայ ազգին միայն,
այլ զի և զորդիսն Աստուծոյ զցրուեալսն ժողո-
վեացէ ի մի։
53 Ապա յայնմ օրէ խորհուրդ արարին զի սպանցեն
54 զնա։ Եւ Յիսուս այնուհետեւ ոչ եթէ համարձակ
շրջէր ի մէջ Հրէից, այլ գնաց անտի յերկիր մի
որ մերձ էր յանապատ, ի քաղաք մի որում անուն
էր Եփրայիմ, և անդ լինէր աշակերտօքն հանդերձ։
55 Զէ. Եւ էր մերձ զատիկն Հրէից, և բազումք
ելին յերուսաղէմ ի գաւառէ անտի յառաջագոյն
քան զզատիկն, զի սրբեացեն զանձինս իւրեանց։
56 Խնդրէին զՅիսուս, և ասէին ընդ միմեանս մինչ
կայիք ի տաճարին, Զիա՞րդ թուի ձեզ, եթէ ո՞չ
գայցէ ի տօն այսր։ Պատուէր տուեալ էր քահա-
նայապետին և փարիսեցւոց, զի թէ ոք գիտասցէ
թէ ուր է, գուշակեսցէ ցնմանէ զի կալցին զնա։

ԳԼ. ԺԲ

1 Իսկ Յիսուս վեց աւուրբ յառաջ քան զզատիկն
եկն ի Բեթանիա, ուր էր Ղազար մեռեալն, զոր
2 յարոյցն ի մեռելոց։ Եւ արարին անդ նմա ընթրիս,
և ի սպասու կայր Մարթա, և Ղազար մի էր ի
3 բազմելոց ընդ նմա։ Իսկ Մարեմայ առեալ լիտր
մի իւղոյ նարդեան ազնուի մեծագնոյ, օծ զոտն

Յիսուսի, և հերով իւրով մաքրէր զոտս նորա. և
4 տունն լի եղեւ ի հոտոյ իւղոյն։ Ասէ մի ոմն յա-
շակերտաց անտի, Յուդա Իսկարիովտացի, որ
5 մատնելոցն էր զնա, Ընդէ՞ր ոչ եւղդ այդ վաճա-
ռեցաւ երեք հարեւր դենարի և տուաւ աղքա-
6 տաց։ Զայս ասաց, ոչ զի զաղքատաց ինչ փոյթ
էր նմա, այլ զի գող էր և զարկղն ինքն ունէր,
7 և որ ինչ անկանէրն՝ նա կրէր։ Ասէ Յիսուս, Թող
տուր զմա, զի յօրն պատանաց իմոց [1]պահեցէ
8 զայդ. Զաղքատս յամենայն ժամ ընդ ձեզ ու-
նիք, զիս ոչ հանապազ ընդ ձեզ ունիք։
9 Իբրեւ գիտաց ժողովուրդ բազում ի Հրէից թէ
անդ է, եկին, ոչ միայն վասն Յիսուսի, այլ զի
10 և զՂազար տեսցեն, զոր յարոյցն ի մեռելոց։ Խոր-
հուրդ արարին քահանայապետքն, զի և զՂազար
11 սպանցեն. Զանզի բազումք ի Հրէից [2]երթային և
հաւատային ի Յիսուս։
12 Եկ. Ի վաղիւ անդր ժողովուրդ բազում որ ե-
կեալ էր ի տօնն, իբրեւ լուան եթէ գայ Յիսուս
13 Երուսաղէմ, Առին ոստս արմաւենեաց և ելին
ընդ առաջ նորա, աղաղակէին և ասէին, Ովսան-
նա, օրհնեալ որ գայդ յանուն Տեառն, Թագա-
14 ւորդ Իսրայելի։ Եւ գտեալ Յիսուսի էշ մի, նստաւ
15 ի վերայ նորա, որպէս և գրեալ է, Մի՛ երկնչիր,
դուստր Սիովնի, ահաւասիկ Թագաւոր քո գայ
16 նստեալ ի վերայ յաւանակի իշոյ։ Եւ զայն ինչ
ոչ գիտացին աշակերտքն նորա զառաջինն, այլ
յորժամ փառաւորեցաւ Յիսուս, յայնժամ յիշե-

---

[1]Որ՝ն, պահեաց [2]Յայն, երթային վասն նորա

ցին եթէ այն էր որ գրեալն էր վասն նորա , և զայն
17 արարին նմա : Եւ ժողովուրդն վկայէր որ էր ընդ
նմա , եթէ զՂազար կոչեաց եւ եհան ի գերեզմանէն,
18 և յարոյց զնա ի մեռելոց : Եւ վասն այնորիկ ընդ
առաջ եղեւ նմա ժողովուրդն , զի լուան եթէ
19 զայն նշանս արարեալ էր նորա : Իսկ փարիսեցիքն
ասէին ընդ միմեանս , Տեսանէ՞ք զի ոչ ինչ օգտիք.
ահաւասիկ աշխարհ ամենայն զկնի նորա գնաց :
20 Էին անդ ոմանք և Հեթանոսք յելելոցն անդր,
21 զի երկիր պագանիցեն ի տօնին : Նոքա մատեան
առ Փիլիպպոս որ ի Բեթսայիդայ Գալիլեացւոցն
էր , աղաչէին զնա և ասէին , Տէր , կամիմք զՅի.
22 սուս տեսանել : Գայ Փիլիպպոս և ասէ ցԱնդրէաս,
23 Անդրէաս և Փիլիպպոս ասեն ցՅիսուս : Եւ Յիսուս
պատասխանի ետ նոցա և ասէ , Եկաս ժամ զի
փառաւորեսցի Որդի մարդոյ :
24 ԷԲ. Ամէն ամէն ասեմ ձեզ , եթէ ոչ հատ
ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի , ինքն միայն
կայ . ապա եթէ մեռանիցի , բազում արդիւն
25 առնէ : Որ սիրէ զանձն իւր՝ [1]սրճակէ զնա . և ո
ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ՝ ի կեանս
26 յաւիտենականս պահեսցէ զնա : Եթէ ոք զիս պաշ.
տիցէ , զկնի իմ եկեսցէ . և ուր եմն եմ , անդ և
պաշտօնեայն իմ եղիցի . եթէ ոք զիս պաշտիցէ,
պատուեսցէ զնա Հայրն իմ :
27 ԷԳ. Բայց այժմ անձն իմ խռովեալ է . և զի՞նչ
ասացից , եթէ , Հայր , ապրեցո զիս ի ժամէ այ
յայսմանէ . այլ վասն այնորիկ եկի ի ժամս յայ.

---

[1] Ց-ՃՆ , կորուսցէ . տե՛ս Մատթ. ժ. 39 , ԺԶ. 25 :

28 Հայր, փառաւորեա զանուն քո։ Եկն բարբառ
յերկնից, Եւ՛ փառաւոր արարի, եւ՛ դարձեալ
29 փառաւոր արարից։ Եւ ժողովուրդն որ կայր և
լսեր, ասէին՝ Որոտումն լինել. կէսքն ասէին, Հրեշ-
30 տակ խօսեցաւ ընդ նմա։ Պատասխանի եւ Յիսուս
և ասէ, Ոչ վասն իմ ինչ եկն բարբառս այս, այլ
31 վասն ձեր։ Այժմիկ դատաստան է աշխարհիս այ-
սորիկ, այժմիկ իշխան աշխարհիս այսորիկ ընկեցի
32 արտաքս։ Եւ ես յորժամ բարձրացայց յերկրէ,
33 զամենեսին ձգեցից առ իս։ Զայս ասէր նշանակեալ
34 թէ որով մահու մեռանելոց իցէ։ Պատասխանի եւ
նմա ժողովուրդն, Մեք լուաք յօրինաց եթէ Քրիս-
տոսն յաւիտեան կայ, և դու զիա՞րդ ասես թէ
պարտ է բարձրանալ Որդւոյ մարդոյ. ո՞վ է այն
35 Որդին մարդոյ։ Ասէ ցնոսա Յիսուս, Փոքր մեւս
եւս ժամանակ լոյս ընդ ձեզ է. գնացէք մինչդեռ
լոյսն ունիք, զի մի՛ խաւար ձեզ հասցէ. զի որ
36 գնայ ի խաւարի՝ ոչ գիտէ յո երթայ։ Մինչդեռ
լոյսն ընդ ձեզ ունիք, հաւատացէք ի լոյսն, զի
որդիք լուսոյ եղիջիք։ Զայս խօսեցաւ Յիսուս, և
չոգաւ թաքեաւ ի նոցանէ։

37 Եւ այնչափ նշանս արարեալ էր առաջի նոցա,
38 և նոքա ոչ հաւատային ի նա. Զի լցցի բանն Ե-
սայեայ մարգարէի զոր ասաց՝ Տէր, ո՞ հաւատաց
ի լուր մեր, և բազուկ Տեառն ո՞ւմ յայտնեցաւ։
39 Վասն այնորիկ ոչ կարէին հաւատալ, զի միւսան-
40 գամ ասէ Եսայի, Թէ կուրացոյց զաչս նոցա և
ապչեցոյց զսիրտս նոցա, զի մի՛ տեսցեն աչօք և
իմասցին սրտիւք և դարձցին, և բժշկեցից զնոսա։
41 Զայս ասաց Եսայի, զի տեսէ զփառս նորա և խո-

42 սեցաւ վասն նորա : Բայց ամենայն և յիշխանաց ան-
տի բազումք հաւատացին ի նա , այլ վասն փարի-
սեցւոցն ոչ յայտնէին , զի մի՛ ի ժողովրդենէն ելա-
43 նիցեն . Քանզի սիրեցին զփառս մարդկան առաւել
քան զփառսն Աստուծոյ :

44 ԷԴ. Եւ Յիսուս աղաղակեր և ասէր , Ո՛ր հաւա-
տայ յիս՝ ոչ հաւատայ յիս , այլ յայն որ առա-
45 քեացն զիս : Եւ որ տեսանէ զիս՝ զայն տեսանէ որ
46 առաքեացն զիս : Ես լոյս յաշխարհ եկի , զի ամե-
նայն որ հաւատայ յիս՝ ի խաւարի մի՛ մնասցէ :
47 Եւ եթէ ոք լուիցէ բանից իմոց և ոչ պահեսցէ ,
ես ոչ դատիմ զնա . քանզի ոչ եկի Թէ դատե-
48 ցայց զաշխարհ , այլ զի փրկեցից զաշխարհ : Ո՛ր
անարգէ զիս և ոչ ընդունի զբանս իմ , գոյ որ
դատի զնա . բանն զոր ես խօսեցայ , նա դատի զնա
49 յաւուրն յետնում : Զի ես յանձնէ իմմէ ոչ խո-
սեցայ , այլ որ առաքեացն զիս Հայրն , նա ետ ինձ
50 պատուէր զինչ ասացից և զինչ խօսեցայց : Եւ
գիտեմ եթէ պատուէրն այն կեանք են յաւիտե-
նականք . արդ զոր ես խօսիմ , որպէս ասաց ինձ
Հայրն , այնպէս խօսիմ :

ԳԼ. ԺԳ

1 ԷԵ. Յառաջագոյն քան զտօնն զատկի գիտաց
Յիսուս Թէ հասեալ է ժամ նորա զի փոխեսցի
յաշխարհէ առնտի առ Հայրն , սիրեաց զիւրսն որ
յաշխարհի առ են , ի սպառ սիրեաց զնոսա :
2 Եւ ի լինել ընթրեացն (Սատանայի իակ արկեալ
էր ի սիրտ , զի մատնեսցէ զնա , Յուդայ Սիմո-
3 նի Իսկարիովտացւոյ) Գիտաց Յիսուս զի զամենայն ի

եւ Հայր ի ձեռս նորա, և թէ յԱստուծոյ ել և
4 առ Աստուած երթայ, յառնէ յընթրեաց անտի և
դնէ զհանդերձան, և առեալ ընդոյկ մի սփածաւ։
5 Եւ ապա առեալ ջուր արկ ի կոնք, և սկսաւ
լուանալ զոտս աշակերտացն, և սրբէր ընդոյկաւն
6 զոր սփածեալ էր։ Գայ առ Սիմովն Պետրոս. և
նա ասէ ցնա, Տէր, դո՞ւ զիմ զոտս լուանաս։ Պա-
տասխանի եւ ասէ ցնա Յիսուս և ասէ, Զոր ինչ ես
գործեմ դու այժմ ոչ գիտես. բայց ապա գի-
8 տասջիր։ Ասէ ցնա Պետրոս, Ոչ լուասցես զոտս
իմ յաւիտեան. պատասխանի եւ նմա Յիսուս,
Եթէ ոչ լուացից զքեզ, ոչ ունիս բնդ իս մասն։
9 Ասէ ցնա Սիմովն Պետրոս, Տէր, մի՛ միայն զոտս
10 իմ, այլ և զձեռս և զգլուխ։ Ասէ ցնա Յիսուս,
Լուացելոյն չէ ինչ պիտոյ, բայց զի զոտսն լու-
նայցէ, քանզի ամենեւին սուրբ է. և դուք սուրբ
11 էք, այլ ոչ ամենեքին։ Զի գիտէր զայն որ մատ-
նելոցն էր զնա. վասն այնորիկ ասաց Թէ Ոչ ամե-
12 նեքին սուրբ էք։ Եւ յորժամ լուաց զոտս նոցա,
առ զհանդերձան իւր և դարձեալ բազմեցաւ, և
13 ասէ ցնոսա, Գիտէ՞ք զինչ արարի ձեզ Դուք կո-
չէք զիս Վարդապետ և Տէր, և բարւոք ասէք,
14 քանզի եմ իսկ։ Իսկ արդ եթէ ես լուացի զոտս
ձեր, Տէրս և Վարդապետս, և դուք պարտիք զմի-
15 մեանց ոտս լուանալ։ Զի օրինակ մի ետու ձեզ,
զի որպէս ես ձեզ արարի, և դուք առնիջիք։
16 ԷԶ. Ամէն ամէն ասեմ ձեզ, Ոչ է ծառայ մեծ
քան զտէր իւր, և ոչ առաքեալ՝ մեծ քան զայն
17 որ առաքեացն զնա։ Եթէ զայս գիտէք, երանելի
18 եւս էք, եթէ առնիցէք զայս։ Ոչ վասն ամենեցուն

ձեր ասեմ, զի ես գիտեմ զորս ընտրեցիդ. այլ զի
1939 գիրն թէ Որ ուտէր ընդ իս հաց՝ արար ինձ
19 խարէութիւն. Յայսմհետէ իսկ ասեմ ձեզ մինչ-
չեւ եղեալ, զի յորժամ լինիցի, հաւատասջիք թէ
20 ես եմ: Ամէն ամէն ասեմ ձեզ, Որ ընդունի զո-
ր ոք ես առաքեցից՝ զիս ընդունի. և որ զիս ընդու-
նի՝ ընդունի զայն որ առաքեացն զիս:
21 Զայս իբրեւ ասաց Յիսուս, խռովեցաւ յոգի իւր,
վկայեաց և ասէ, Ամէն ամէն ասեմ ձեզ զի մի
22 ոմն ի ձէնջ մատնելոց է զիս: Նայէին ընդ միմեանս
աշակերտքն տարակուսեալք թէ զումէ՛ ասիցէ:
23 Եւ էր մի ոմն յաշակերտացն բազմեալ առ Յի-
24 սուսիւ, զոր սիրէրն Յիսուս: Ակնարկէ նմա Սիմէն
25 Պետրոս հարցանել, ո՛վ իցէ վասն որոյ ասէն: Եւ
նա անկեալ զլանջսքն Յիսուսի՝ ասէ ցնա, Տէր,
26 ո՞վ է: Պատասխանի Յիսուս և ասէ, Այն է,
որում ես թացից զպատառն և տացց. և թացեալ
27 զպատառն տայ [1]Յուդայի Իսկարիովտացւոյ: Եւ
յետ պատառոյն ապա եմուտ ի նա Սատանայ. և
ասէ ցնա Յիսուս, Երդ որ զինչ առնելոց ես՝ արա
28 վաղվաղակի: Եւ զայս ոչ ոք խնդացաւ ի բազմա-
29 կանաց անտի, Թէ առ ինչ ասաց ցնա: Զի ոմանք
համարէին թէ զի զարկղն ունէր Յուդա, ասաց
նմա Յիսուս, Գնեա զինչ որ պիտոյ իցէ մեզ ի տո-
30 նիս, և կամ, զի աղքատաց ինչ տացէ: Իսկ նորա
առեալ զպատառն՝ ել արտաքս վաղվաղակի, և
էր գիշեր:
31 Էէ. Եւ իբրեւ ել, ասէ Յիսուս, Այժմ փա-

---

[1]Բ—ղ—ս, ցՅուդա Սիմոնի

աւուրեցաւ Որդի մարդոյ, և Աստուած փառա-
32 ւորեցաւ ի նմա։ Զի եթէ Աստուած փառաւորե-
ցաւ ի նմա, և Աստուած փառաւորեացէ զնա
յանձն իւր. և վաղվաղակի փառաւորեացէ զնա։
33 Որդեակք իմ, փոքր ինչ ժամանակ ընդ ձեզ եմ.
խնդրիցէք զիս. և որպէս ասացի Հրեայոն եթէ
Ուր եան երթամ, դուք ոչ կարէք գալ, և արդ
34 ձեզ ասեմ։ Պատուիրան նոր տամ ձեզ, զի սի-
րիցէք զմիմեանս. որպէս սիրեցի ես զձեզ, զի և
35 դուք սիրեսջիք զմիմեանս։ Ձայսմ գիտասցեն ա-
մենեքեան եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք
36 զմիմեանս։ Ասէ ցնա Սիմոն Պետրոս, Տէր, յո՞վ
երթաս։ Պատասխանի ետ Յիսուս, Ուր եան եր-
թամ՝ դու ոչ կարես այժմ գալ զկնի իմ, բայց
37 ապա եկեսցես զկնի իմ։ Ասէ ցնա Պետրոս, Տէր,
ընդէ՞ր ոչ կարիցեմ գալ այժմ զկնի քո, արդէն
38 զանձն իմ խակ եդից ի վերայ քո։ Պատասխանի ետ
Յիսուս, Զա՞նձն քո դիցես ի վերայ իմ. ամէն ա-
մէն ասեմ քեզ, Չեւ իցէ հաւու խօսեալ, մինչ
դու երիցս ուրասցիս զիս։

ԳԼ. ԺԴ

1 Մի՛ խռովեսցին սիրտք ձեր, այլ հաւատացէք
2 յԱստուած և յիս հաւատացէք։ Ի տան Հօր իմոյ
օթեվանք բազում են. ապա թէ ոչ՝ ասացեալ էր
իմ ձեզ, [1]եթէ երթամ, և պատրաստեմ ձեզ
3 տեղի։ Եւ եթէ երթամ և պատրաստեմ ձեզ տե-
ղի, դարձեալ գամ և առնում զձեզ առ իս. զի

---

[1] Ի Բ–ղ–մ՝ քանզի, յոմանս պակաս

4 ուր եան իցեմ, և դուք անդ իցէք։ Եւ ուր եր-
թամն գիտիցէք, և զճանապարհն գիտիցէք։
5 Ասէ ցնա Թովմաս, Տէր, ոչ գիտեմք յո՛ երթաս,
6 և զիա՞րդ զճանապարհն կարասցուք գիտել։ Ասէ
ցնա Յիսուս, Ես եմ ճանապարհն և ճշմարտու-
թիւն և կեանք. ոչ ոք գայ առ Հայր եթէ ոչ
7 ինեւ։ Եթէ զիս գիտէիք, ապա և զՀայր իմ գիտէ-
իք, և այսուհետեւ գիտասջիք զնա և տեսէք զնա։
8 Ասէ ցնա Փիլիպպոս, Տէր, ցոյց մեզ զՀայր, և
9 շատ է մեզ։ Ասէ ցնա Յիսուս, Այսչափ ժամա-
նակս ընդ ձեզ եմ, և ո՞չ ծանեար զիս, Փիլիպպէ.
որ տեսանն զիս տեսս զՀայրն. և դու զիա՞րդ ասես
10 եթէ ցոյց մեզ զՀայր։ Ո՞չ հաւատաս եթէ ես ի
Հայր և Հայր յիս է. զբանս զոր ես խօսիմ ընդ
ձեզ, ոչ եթէ յանձնէ ինչ խօսիմ, այլ Հայրն որ
11 յիս բնակեալ է՝ նա գործէ զգործսն։ [1]Հաւատա՛ջք
ինձ, եթէ ես ի Հայր և Հայր յիս է. ապա թէ
12 ոչ՝ գոնէ վասն գործոցն հաւատացէք ինձ։ Ամէն
ամէն ասեմ ձեզ թէ որ հաւատայն յիս, զգործսն
զոր ես գործեմ՝ և նա գործեսցէ, և մեծամեծս
եւս քան զնոսին գործեսցէ. զի ես առ Հայր եր-
13 թամ։ Եւ զոր ինչ խնդրիցէք յանուն իմ՝ արարից
զայն, զի փառաւորեսցի Հայր յՈրդի։[2] Վ.
15 ԸԿ. Եթէ սիրէք զիս, զպատուիրանս իմ պա-
16 հեսջիք։ Եւ ես աղաչեցից զՀայր, և այլ Մխիթա-
րիչ տացէ ձեզ, զի ընդ ձեզ բնակեսցէ ի յաւի-
17 տեան. ԶՀոգին ճշմարտութեան զոր աշխարհս ոչ

---

[1]Յ-ՆՆ, Հաւատացէք [2]Բ-ԼՂ-ՄՔ յ-ԵՐ-Ն, (14) Եթէ
խնդրիցէք ինչ յանուն իմ՝ արարից զայն։

կարէ ընդունել, զի ոչ տեսանէ զնա և ոչ ճանաչէ
զնա. բայց դուք ճանաչէք զնա, զի առ ձեզ բնա-
18 կեացէ և ընդ ձեզ եղիցի։ Ոչ թողից զձեզ որբս,
19 գամ առ ձեզ։ Փոքր մեւս եւս՝ և աշխարհս ոչ
եւս տեսանէ զիս, բայց դուք տեսանիցէք զիս, զի
ես կենդանի եմ, և դուք կենդանի լինելոց էք։
20 Յայնմ աւուր գիտասջիք դուք, զի ես ի Հօր ի-
21 մում, և դուք յիս, և ես ի ձեզ։ Որ ունի զպա-
տուիրանս իմ և պահէ զնոսա՝ նա է որ սիրէ զիս.
և որ սիրէն զիս՝ սիրեսցի ի Հօրէ իմմէ. և ես սի-
րեցից զնա, և երեւեցուցից նմա զիս։
22 Ասէ ցնա Յուդա (ոչ Իսկարիովտացին), Տէր, զի՞
եղեւ զի մեզ յայտնելոց ես զքեզ և ոչ աշխար-
23 հի։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա, Եթէ
ոք սիրէ զիս, զբանն իմ պահեսցէ, և Հայր իմ
սիրեսցէ զնա. և առ նա եկեսցուք և օթեւանս
24 առ նմա արասցուք. Եւ որ ոչն սիրէ զիս՝ զբանս
իմ ոչ պահէ. և բանն իմ զոր լսէք՝ ոչ է իմ, այլ
25 Հօրն որ առաքեացն զիս։ Զայս խօսեցայ ընդ ձեզ,
26 մինչ առ ձեզս եմ։ Իսկ Մխիթարիչն, Հոգին Սուրբ,
զոր առաքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսուսցէ ձեզ
զամենայն, և յիշեցուսցէ զամենայն զոր ինչ ասա-
27 ցի ձեզ։ Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղու-
թիւն զիմ տամ ձեզ. ոչ որպէս աշխարհս տայ,
տամ ես ձեզ. մի՛ խռովեսցին սիրտք ձեր և մի՛
28 զանգիտեսցեն։ Լուայք զի ասացի ես ձեզ Թէ Եր-
թամ և գամ առ ձեզ. եթէ սիրէիք զիս, ապա
ուրախ լեալ էր ձեր եթէ ես առ Հայրն երթամ,
29 զի Հայր իմ մեծ է քան զիս։ Եւ այժմ ասացի
ձեզ մինչչեւ եղեալ, զի յորժամ լինիցի, հաւա-

30 տասջիք։ Ոչ եւս այլ շատ խօսեցայց ընդ ձեզ
գայ իշխան աշխարհիս այսորիկ և յիս ինչ ոչ
31 գտանէ։ Այլ զի ծանիցէ աշխարհ եթէ սիրեմ
զՀայրն. և որպէս պատուիրեաց ինձ Հայրն, այնպէս
առնեմ. օ՛ն արիք գնասցուք աստի։

ԳԼ. ԺԵ

1 Ես եմ որթն ճշմարիտ, և Հայր իմ մշակ է։
2 Ամենայն ուռ որ յիս է և ոչ բերէ պտուղ՝ կարէ
զնա. և ամենայն որ բերէ պտուղ՝ սրբէ զնա, զի
3 առաւել եւս պտղաբեր լիցի։ Դուք արդէն իսկ
4 սուրբ էք վասն բանին զոր խօսեցայ ընդ ձեզ։ Կա-
ցէք յիս և ես ի ձեզ. որպէս ուռն ոչ կարէ պտուղ
բերել յանձնէ իւրմէ, եթէ չիցէ հաստատեալ
յորթն, նոյնպէս և դուք եթէ ոչ յիս հաստա-
5 տեալ իցէք։ Ես եմ որթ և դուք ուռ որ հաս
տատեալ է յիս և ես ի նա, նա բերէ պտուղ
6 յոյժ. զի առանց իմ ոչ ինչ կարէք առնել։ Եթէ
ոք ոչ է հաստատեալ յիս, եղ նա արտաքս իբրև
զուռն և ցամաքեցաւ, և ժողովեն զնա և ի հուր
7 արկանեն, և այրի։ Եթէ կայցէք յիս և բանք իմ
ի ձեզ կայցեն, զոր ինչ կամիցիք՝ խնդրեսջիք, և
8 լինիցի ձեզ։ Ցայսմիկ փառաւորեցաւ Հայր իմ, զի
պտուղ յոյժ բերիցէք, և եղիջիք իմ աշակերտք։
9 Որպէս սիրեաց զիս Հայրն, և ես սիրեցի զձեզ.
10 հաստատուն կացէք ի սէր իմ։ Եթէ պահիցէք
զպատուիրանս իմ, կացջիք ի սէր իմ. որպէս ես
զպատուիրանս Հօր իմոյ պահեցի, և կամ ի սէր
11 նորա։ Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի ուրախութիւն
իմ ի ձեզ իցէ, և ձեր ուրախութիւնն լցեալ եղի.

12 յի՝ Ա՛յս է պատուէր իմ, զի սիրեսջիք զմիմեանս,
13 որպէս և ես սիրեցի զձեզ։ Մեծ եւս քան զայս
սէր ոչ ոք ունի, եթէ զանձն իւր դիցէ ի վերայ
14 բարեկամաց իւրոց։ Դուք բարեկամք էք իմ, եթէ
15 առնիցէք զոր ես պատուիրեմ ձեզ։ Ոչ եւս կո-
չեմ զձեզ ծառայս, զի ծառայն ոչ գիտէ զինչ
գործէ տէրն նորա. այլ զձեզ կոչեցի բարեկամս,
զի զամենայն զոր լուայ ի Հօրէ իմմէ՝ ծանուցի ձեզ։
16 Ոչ եթէ դուք ընտրեցէք զիս, այլ ես ընտրեցի
զձեզ, և եդի զձեզ զի դուք երթայցէք և պտղա-
բերք լինիցիք, և պտուղն ձեր կացցէ, և զոր ինչ
խնդրիցէք ի Հօրէ իմմէ յանուն իմ՝ տացէ ձեզ։
17 Զայս պատուիրեմ ձեզ զի սիրեսջիք զմիմեանս։
18 Եթէ աշխարհ զձեզ ատեայ, գիտասջիք զի նախ
19 զիս ատեաց։ Եթէ յաշխարհէ ատի էիք, աշխարհ
զիւրն սիրէր արդեւք. բայց զի չէք յաշխարհէ,
այլ ես ընտրեցի զձեզ յաշխարհէ, վասն այնորիկ
20 ատեայ զձեզ աշխարհ։ Յիշեցէք զբանն զոր ասա-
ցի ձեզ, թէ Ոչ է ծառայ մեծ քան զտէր իւր.
եթէ զիս հալածեցին, ապա և զձեզ հալածեսցեն.
եթէ զբանն իմ պահեցին, ապա և զձերն պահես-
21 ցեն։ Ա՛յլ զնոյնս արասցեն ընդ ձեզ վասն անուան
22 իմոյ, զի ոչ գիտեն զայն որ առաքեացն զիս։ Իմ
եթէ չէր եկեալ և խօսեցեալ ընդ նոսա, մեղ ինչ
ոչ գոյր նոցա. բայց արդ չիք ինչ պատճառք վասն
23 մեղացն իւրեանց։ Որ զիս ատեայ, և զՀայրն իմ
24 ատեայ։ Եթէ զգործսն չէր գործեալ ի նոսա, զոր
ոչ այլ ոք գործեաց, մեղ ինչ ոչ գոյր նոցա,
բայց արդ տեսին և ատեցին և՛ զիս և՛ զՀայր
25 իմ։ Ա՛յլ զի լցցի բանն որ յօրէնս նոցա գրեալ է

26 թէ՝ Աստեղին զիս տարապարտուց։ Բայց յորժամ
եկեսցէ Մխիթարիչն զոր ես առաքեցից ձեզ ի Հօ-
րէ, զՀոգին ճշմարտութեան որ ի Հօրէ ելանէ, նա
27 վկայեսցէ վասն իմ. Եւ դուք վկայէք, զի ի
սկզբանէ ընդ իս էք։

ԳԼ. ԺԶ

1 Զայս խօսեցայ ընդ ձեզ զի մի՛ գայթակղեսջիք։
2 Ի ժողովրդոց իւրեանց հանիցեն զձեզ. այլ եկեսցէ
ժամանակ զի ամենայն որ սպանանիցէ զձեզ՝ հա-
3 մարիցի պաշտօն մատուցանել Աստուծոյ։ Եւ զայն
արասցեն ընդ ձեզ. քանզի ոչ ծանեան զՀայր և
4 ոչ զիս։ Այլ և զայս խօսեցայ ընդ ձեզ, զի յոր-
ժամ եկեսցէ ժամանակ, յիշիցէք թէ ես ասացի
ձեզ. զայս ի սկզբանէ ոչ ասացի ձեզ, քանզի ընդ
ձեզ էի։
5 Բայց արդ երթամ ես առ առաքիչն իմ, և ոչ
6 ոք ի ձէնջ հարցանէ զիս թէ Ո՞ երթաս։ Այլ զի
զայս խօսեցայ ընդ ձեզ, տրտմութիւն եղիցի զսիրտս
7 ձեր։ Այլ ես զճշմարիտն ասեմ ձեզ, լաւ է ձեզ
եթէ ես երթամ. զի եթէ ես ոչ երթայց, Մխի-
թարիչն ոչ եկեսցէ առ ձեզ. ապա եթէ երթամ,
8 առաքեցից զնա առ ձեզ։ Եւ նա եկեալ՝ յանդի-
մանեսցէ զաշխարհ վասն մեղաց և վասն արդարու-
9 թեան և վասն դատաստանի։ Վասն մեղաց՝ զի ոչ
10 հաւատան յիս. Վասն արդարութեան՝ զի առ
11 Հայր իմ երթամ, և ոչ եւս տեսանէք զիս. Վասն
դատաստանի՝ զի իշխան աշխարհիս այսորիկ դա-
12 տապարտեալ է։ Եւս բազում ինչ ունիմ ասել
13 ձեզ, այլ ոչ կարէք հանդարտել այժմիկ։ Ցոր-

ժամ եկեսցէ նա, Հոգին ճշմարտութեան, առաջնորդեսցէ ձեզ ամենայն ճշմարտութեամբ. զի ոչ
11 եթէ յանձնէ ինչ խօսիցի, այլ զոր լսիցէ՝ խօսիցի,
և զգալոցն պատմեսցէ ձեզ։ Նա զիս փառաւորեսցէ, զի յիմմէ առնուցու և պատմեսցէ
15 ձեզ։ Ջամենայն ինչ զոր ունի Հայր՝ իմ է. վասն այնորիկ ասացի ձեզ թէ յիմմէ առնուցու
16 և պատմեսցէ ձեզ։ Փոքր մի՝ և ոչ եւս տեսանէք զիս, և ապա սակաւիկ մի՝ և տեսանիցէք զիս, և
ես երթամ առ Հայր։
17 Ասէին ոմանք յաշակերտաց անտի ցմիմեանս, Ջի՞նչ է այս զոր ասէս ցմեզ թէ Փոքր մի՝ և ոչ
տեսանէք զիս, և դարձեալ սակաւիկ մի՝ և տեսա-
18 նիցէք զիս, և թէ Ես առ Հայր երթամ։ Եւ ասէին, Ջի՞նչ իցէ այն Փոքր մեւս եւան. չգիտեմք զի՛նչ
19 խօսի։ Գիտաց Յիսուս եթէ կամէին ցնա Հարցանել, և ասէ ցնոսա, Վասն այդորի՞կ խնդրէք ընդ
միմեանս զի ասացի թէ Փոքր մի՝ և ոչ տեսանէք զիս, և դարձեալ սակաւիկ մեւս եւս՝ և տեսանի-
20 ցէք զիս։ Ամէն ամէն ասեմ ձեզ, զի լացջիք և ողբասջիք դուք, և աշխարհ խնդասցէ. դուք տրտմեսջիք, այլ տրտմութիւն ձեր յուրախութիւն եղիցի։
21 Կին յորժամ ծնանիցի, տրտմութիւն է նմա, զի հասեալ է ժամ նորա. այլ յորժամ ծնցի զմանուկն, ոչ եւս յիշէ զնեղութիւնն վասն խնդու-
22 թեանն, զի ծնաւ մարդ յաշխարհ։ Եւ դուք այժմ տրտմութիւն ունիք, այլ դարձեալ տեսից զձեզ,
և ուրախ լիցին սիրտք ձեր. և զուրախութիւնն
23 ձեր ոչ ոք հանիցէ ի ձէնջ։ Եւ յայնմ աւուր զիս ինչ ոչ հարցանիցէք։ Ամէն ամէն ասեմ ձեզ, զի

զոր ինչ խնդրիցէք ի Հօրէ իմմէ յանուն իմ՝ տացէ
24 ձեզ։ Մինչեւ ցայժմ ոչ ինչ խնդրեցէք յանուն իմ.
խնդրեցէք և առնուցուք, զի ուրախութիւնն ձեր
25 լցեալ եղիցի։ Զայս առակօք խօսեցայ ընդ ձեզ.
եկեսցէ ժամանակ յորժամ ոչ եւս առակօք խո-
սեցայց ընդ ձեզ, այլ յայտնապէս զՀօրէ պատ-
26 մեցից ձեզ։ Յայնմ աւուր խնդրեսջիք յանուն իմ.
և ոչ ասեմ ձեզ եթէ ես աղաչեցից զՀայր վասն
27 ձեր. Զի ինքն իսկ Հայր սիրէ զձեզ, զի դուք զիս
սիրեցէք, և հաւատացէք եթէ ես յԱստուծոյ ելի։
28 Ելի ի Հօրէ և եկի յաշխարհ, դարձեալ թողում
զաշխարհ և երթամ առ Հայր։
29 Ասեն ցնա աշակերտքն, Ահա արդ յայտնու-
թեամբ խօսիս, և առակ և ոչ մի ինչ ասես։
30 Այժմիկ գիտեմք եթէ գիտես զամենայն, և ոչինչ
պիտոյ է եթէ ոք հարցանիցէ զքեզ. յայսմիկ
31 հաւատամք եթէ յԱստուծոյ ելեր։ Պատասխանի
ետ նոցա Յիսուս և ասէ, Այժմ հաւատա՞ք.
32 Ահա եկեսցէ ժամ և եկեալ իսկ է, զի ցրուես-
ջիք իւրաքանչիւր տեղիս, և զիս միայն թողու-
33 ցուք. և չեմ միայն, զի Հայր ընդ իս է։ Զայս
խօսեցայ ընդ ձեզ, զի ընդ իս խաղաղութիւն ու-
նիցիք. յաշխարհի ատս նեղութիւն ունիցիք, այլ
քաջալերեցարուք, զի ես յաղթեցի աշխարհի։

ԳԼ. ԺԷ

1 Զայս իբրեւ խօսեցաւ Յիսուս, ամբարձ զաչս իւր
յերկինս և ասէ, Հայր, հասեալ է ժամ, փառա-
ւորեա զՈրդի քո, զի և Որդի քո փառաւորեսցէ
2 զքեզ։ Որպէս ետուր նմա իշխանութիւն ամենայն

մարդոյ, զի ամենայնի զոր ետուր նմա՝ տացէ
3 զկեանն յաւիտենականս։ Ա՛յս են յաւիտենական
կեանք, զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Ա-
4 տուած, և զոր առաքեցեր՝ զՅիսուս Քրիստոս։ Ես
զքեզ փառաւորեցի յերկրի. զգործն կատարեցի
5 զոր ետուր ցիս զի արարից։ Եւ այժմ փառաւորեա
զիս, Հայր, առ ի քէն փառօքն զոր ունէի յառաջ
6 քան զլինելն աշխարհի առ ի քէն։ Յայտնեցի զա-
նուն քո մարդկան զորս ետուր ինձ յաշխարհէ.
քո էին, և ինձ ետուր զնոսա, և զբանն քո պա-
7 հեցին։ Արդ գիտացին եթէ զամենայն ինչ զոր ե-
8 տուր [1]ինձ՝ ետուս նոցա. Եւ" նոքա ընկալան և ծա-
նեան ճշմարտութեամբ թէ առ ի քէն ելի, և հա-
9 ւատացին եթէ դու առաքեցեր զիս։ Արդ ես վասն
նոցա աղաչեմ. և ոչ վասն աշխարհի աղաչեմ, այլ
10 վասն նոցա զորս ետուրն ինձ, զի քո են։ Եւ որ
ինչ իմ է՝ ամենայն քո է. և որ ինչ քո է՝ այն
11 իմ է, և փառաւորեալ եմ ի նոսա։ Եւ ես ոչ
եւս եմ յաշխարհի, և նոքա յաշխարհի են, և ես
առ քեզ գամ. Հայր սուրբ, պահեա զնոսա յա-
նուն քո, [2]որով ետուրն ինձ, զի եղիցին մի, որ-
12 պէս և մեք մի եմք։ Մինչ էի [3]յաշխարհի ընդ նո-
սա, ես պահէի զնոսա յանուն քո, [2]որով ետուրն
ինձ, և պահեցի. և ոչ ոք ի նոցանէ կորեաւ, բայց
13 որդին կորստեան, զի գիրն լցցի։ Բայց արդ առ
քեզ գամ, և զայս խօսիմ յաշխարհի, զի ունիցին

---

[1]Յ-ՆՆ, ինձ՝ առ ի քէն են. (8) Չի զբանն զորս ետուր ինձ՝ ետուս նոցա. և

[2]Բ-ԼՔ-Ր՝ զոր, ՈՅԼ՝ զորս [3]ի Բ-ԼՔ-Ր պակաս

14 զուրախութիւնն իմ լիով յանձինս իւրեանց։ Եւ
եաու նոցա զբանն քո, և աշխարհսատեաց զնո-
սա. զի չեն յաշխարհէ, որպէս և ես չեմ յաշ-
15 խարհէ։ Ոչ զայս աղաչեմ զի բարձցես զնոսա յաշ-
16 խարհէ, այլ զի պահեսցես զնոսա ի չարէ։ Յաշ-
խարհէ աստի չեն, որպէս և ես չեմ յաշխարհէ։
17 Սուրբ արա զնոսա ճշմարտութեամբ քով, զի քո
18 բանդ ճշմարտութիւն է։ Որպէս զիս առաքեցեր
19 յաշխարհ, և ես առաքեցի զնոսա յաշխարհ։ Եւ
ի վերայ նոցա ես սուրբ առնեմ զանձն իմ, զի
20 եղիցին և նոքա սրբեալք ճշմարտութեամբ։ Ալ
ոչ վասն նոցա միայն աղաչեմ, այլ և վասն ամե-
21 նայն հաւատացելոց բանիւն նոցա յիս. Զի ամե-
նեքին մի իցեն, որպէս դու, Հայր, յիս, և ես ի
քեզ, զի և նոքա ի մեզ իցեն. զի և աշխարհ հա-
22 ւատասցէ եթէ դու առաքեցեր զիս։ Եւ ես զփառն
զոր եաուր ինձ՝ եաու նոցա, զի իցեն մի, որպէս
23 և մեք մի եմք։ Ես ի նոսա, և դու յիս, զի եղի-
ցին կատարեալք ի մի. և գիտասցէ աշխարհ եթէ
դու առաքեցեր զիս. և սիրեցի զնոսա, որպէս դու
24 զիս սիրեցեր։ Հայր, զորս եաուրն ինձ, կամիմ զի
ուր եան եմ, և նոքա իցեն ընդ իս, զի տեսանիցեն
զփառն զիմ զոր եաուրն ցիս. զի սիրեցեր զիս
25 յառաջ քան զլինելն աշխարհի։ Հայր արդար, և
աշխարհ զքեզ ոչ ծանեաւ, այլ ես զքեզ ծա-
նեայ. և նոքա ծանեան եթէ դու առաքեցեր զիս։
26 Եւ ծանուցի նոցա զանուն քո և ծանուցից. զի
սէրն զոր սիրեցեր զիս՝ ի նոսա իցէ, և ես ի նոսա։

ԳԼ. ԺԸ

1 Զայս իբրեւ ասաց Յիսուս, ել աշակերտօքն հան-
դերձ յայնկոյս ձորոյն Կեդրովնի, ուր էր պարտէզ,
2 յոր եմուտ ինքն և աշակերտքն իւր: Գիտէր և
Յուդա որ զնայն մատնելոց էր՝ զտեղին, զի բա-
զում անգամ ժողովեալ էր անդր Յիսուսի աշա-
3 կերտօքն հանդերձ: Եւ Յուդայի առեալ ընդ իւր
զգունդն, և ի քահանայապետից և ի փարիսեցւոց
սպասաւորս, գայ անդր ջահիւք և լապտերօք և
4 զինուք: Իսկ Յիսուս իբրեւ ետես զնայն ամենայն
եկեալ ի վերայ նորա, ել և ասէ ցնոսա, Զո՞
5 խնդրէք: Պատասխանի ետուն նմա, ԶՅիսուս Նա-
զովրեցի: Ասէ ցնոսա Յիսուս, Ես եմ: Կայր ընդ
6 նոսա և Յուդա որ մատնէրն զնա: Իբրեւ ասաց
թէ Ես եմ, յետս յետս չոգան և զարկան գետ-
7 նի: Դարձեալ եհարց զնոսա, Զո՞ խնդրէք: Եւ
8 նոքա ասեն, ԶՅիսուս Նազովրեցի: Պատասխանի
ետ նոցա Յիսուս, Ասացի ձեզ թէ Ես եմ. արդ
9 եթէ զիս խնդրէք, թոյլ տուք զոցա երթալ: Զի
լցցի բանն զոր ասաց թէ Զորս ետուրն ցիս՝ ոչ
10 կորուսից ի նոցանէ և ոչ զոք: Իսկ Սիմոն Պետ-
րոս քանզի ունէր սուր, ձգեաց զնա, եհար զքա-
հանայապետին ծառայ, և ի բաց առ զունկն նո-
11 բա զաջոյ. և էր անուն ծառային Մաղքոս: Ասէ
Յիսուս ցՊետրոս, Արկ զսուրդ անդրէն ի պատեանս
իւր. զբաժակն զոր ետ ինձ Հայր՝ ո՞չ ըմպիցեմ զնա:
12 Իսկ գունդն և հազարապետն և սպասաւորք
13 Հրէից կալան զՅիսուս և կապեցին. Եւ ածին զնա
նախ առ Աննա որ էր աներ Կայիափայի, որ քա-

14 հանապազաւրեայ էր տուրգն այնորիկ։ Ահա այն
կայիափա էր որ խրատան ետ Հրէից եթէ Լաւ է
15 առն միում մեռանիլ ի վերայ ժողովրդեանն։ Եւ
երթային զհետ Յիսուսի Սիմովն Պետրոս և մեւս
աշակերտն. և աշակերտն այն, քանզի ծանօթ էր
քահանայապետին, եմուտ ընդ Յիսուսի ի գաւիթ
16 քահանայապետին։ Եւ Պետրոս կայր առ դրանն
արտաքոյ. ել մեւս աշակերտն որ էր ծանօթ քա-
հանայապետին, և ասաց ցդռնապանն և եմոյծ ի
17 ներքս զՊետրոս։ Ասէ աղջիկն որ դռնապանն էր
ցՊետրոս, Միթէ և դո՞ւ յաշակերտաց առնն այ-
18 նորիկ իցես։ Եւ նա ասէ, Ոչ եմ։ Կային անդ ծա-
ռայքն և սպասաւորք խարոյկ արկեալ, քանզի
ցուրտ էր, և ջեռնուին. կայր ընդ նոսա և Պետ-
19 րոս և ջեռնոյր։ Եւ քահանայապետն եհարց զՅի-
սուս վասն աշակերտացն և վասն վարդապետու-
20 թեան նորա։ Պատասխանի ետ նմա Յիսուս, Ես
յայտնապէս խօսեցայ աշխարհի. ես յամենայն ժամ
ուսուցի ի ժողովրդեանն, և ի տաճարի անդ ուր
ամենայն Հրեայք ժողովեալ էին. և ի ծածուկ ինչ
21 ոչ խօսեցայ։ Զի՞ հարցանես զիս, հարց զայնոսիկ
որ լուանն, թէ զինչ խօսեցայ ընդ նոսա. ահա-
22 ւասիկ նոքա գիտեն զինչ խօսեցայ։ Իբրեւ նա զայն
ասաց, մի ոմն ի սպասաւորացն որ անդ կայր, ած
սպատակ Յիսուսի և ասէ, Այդպէս պատասխանի
23 տաս քահանայապետիդ։ Եւ Յիսուս ասէ ցնա,
Եթէ չար ինչ խօսեցայ, վկայեա վասն չարին, իսկ
24 եթէ բարւոյ, ընդէ՞ր հարկանես զիս։ Եւ առաքեաց
զնա Աննա կապեալ առ Կայիափա քահանայա-
25 պետ։ Եւ Սիմովն Պետրոս կայր անդ և ջեռնոյր.

ասեն ցնա, Մինթէ և դո՞ւ յաշակերտաց անտի նո-
26 րա իցես: Նա ուրացաւ և ասէ Չեմ: Եւ ասէ
մի ումն ի ծառայից քահանայապետին, ազգական
այնորիկ զորոյ զունկն եհատ Պետրոս, Ո՞չ ես իակ
27 տեսի զքեզ ի պարտիզի անդ ընդ նմա: Դարձեալ
ուրացաւ Պետրոս, և վաղվաղակի հաւ խօսեցաւ:
28 Եւ ածին զՅիսուս ի վանացն Կայիափայ յա-
պարանս դատաւորին, և էր այգուց. և նոքա ոչ
մտին յապարանսն, զի մի՛ պղծեսցին, այլ զի ու-
29 տիցեն զզատիկն: Ել առ նոսա Պիղատոս արտաքս
և ասէ, Զի՞նչ չարախօսութիւն մատուցանէք զառ-
30 նէն զայնմանէ: Պատասխանի ետուն և ասեն ցնա,
Եթէ չէր չարագործ այրն այն, ապա ոչ մատնէաք
31 զնա քեզ: Ասէ ցնոսա Պիղատոս, Առէք զնա դուք,
և ըստ ձերոց օրինացն դատեցարուք: Ասեն ցնա
32 Հրեայքն, Մեզ ոչ է արժան սպանանել զոք: Զի
լցցի բանն Յիսուսի զոր ասաց, նշանակեալ թէ ո-
33 րով մահու մեռանելոց իցէ: Եմուտ միւսանգամ
յապարանսն Պիղատոս, կոչեաց զՅիսուս և ասէ
34 ցնա, Դո՞ւ ես թագաւորն Հրէից: Պատասխանի
ետ Յիսուս, Ի քէ՞ն ասես զայդ եթէ այլք ասա-
35 ցին քեզ զինէն: Պատասխանի ետ Պիղատոս, Մի-
թէ և ես Հրեա՞յ իցեմ. ազգն քո և քահանայա-
պետք մատնեցին զքեզ ինձ. զի՞նչ գործ գործեալ
36 է քո: Պատասխանի ետ Յիսուս, Իմ արքայու-
թիւն չէ յայսմ աշխարհէ. եթէ յաշխարհէ աստի
էր արքայութիւնն իմ, սպասաւորքն իմ մարտնչէին
արդեւք զի մի՛ մատնեցայց Հրէից, բայց արդ թա-
37 գաւորութիւնն իմ չէ աստի: Ասէ ցնա Պիղատոս,
Ապա թէ այդպէս իցէ, թագաւո՞ր ումն ես դու:

Պատասխանի ետ Յիսուս, Դու ասես թէ թագաւոր իցեմ. բայց ես յայդ իսկ ծնեալ եմ, և ի դոյն իսկ եկեալ եմ յաշխարհ, զի վկայեցից ճշմարտութեանն. ամենայն որ ի ճշմարտութենէ է՝ լսէ
38 բարբառոյ իմոյ: Ասէ ցնա Պիղատոս, Ջի՞նչ է ճշմարտութիւն: Զայս իրրեւ ասաց, դարձեալ ել առ Հրեայսն և ասէ ցնոսա, Ես և ոչ մի ինչ պատ-
39 ճառս գտանեմ ի նմա: Բայց է ձեր սովորութիւն, զի զմի ոք արձակեցից ձեզ ի զատկիս. արդ կա-
40 մի՞ք զի արձակեցից ձեզ զթագաւորն Հրէից: Աղաղակեցին ամենեքեան և ասէին, Մի՛ զդա, այլ զԲարաբբա. և էր Բարաբբայն այն աւազակ:

ԳԼ. ԺԹ

1 Յայնժամ ա՛ռ Պիղատոս զՅիսուս և գան եհար:
2 Եւ զինուորացն արարեալ պսակ ի փշոց՝ եդին ի գլուխ նորա, և զգեցուցին նմա հանդերձ ծիրանի.
3 [1]եւ գային առ նա՝ և ասէին, Ողջ եր, արքայ
4 Հրէից. և հանէին նմա ապտակս: Եւ դարձեալ Պիղատոս արտաքս և ասէ ցնոսա, Ահա ածեմ զնա արտաքս առ ձեզ, զի գիտասջիք թէ ես ինչ ի
5 նմա ոչ գտանեմ: Եւ Յիսուս արտաքս, և ունէր պսակ ի փշոց և հանդերձ ծիրանի և ասէ ցնոսա, Ահա
6 այրդ [2]ցձեզ: Իրրեւ տեսին զնա քահանայապետքն և սպասաւորք, զաղաղակ բարձին և ասեն, Ի խաչ հան, ի խաչ հան [1]զդա. ասէ ցնոսա Պիղատոս, Առէք զդա ի ձեզ, և ձեզէն հանէք ի խաչ. զի ես
7 ի դմա ինչ ոչ գտանեմ: Պատասխանի ետուն

---

[1]Յ-ման- պ-ւ-ս-ե [2]ի Յ-ն-ն պ-ւ-ս-ե

նմա Հրեայքն, Մեք օրէնս ունիմք, և ըստ օրինաց մերոց պարտի մեռանել, զի զանձն իւր Որդի Աստուծոյ արար: Իբրեւ լուաւ զբանս զայս Պիղատոս, առաւել եւս երկեաւ: Եմուտ դարձեալ անդրէն յապարանսն, և ասէ ցՅիսուս, Ուստի՞ ես դու. և Յիսուս ոչ ետ նմա պատասխանի: Ասէ ցնա Պիղատոս, Ընդ իս ո՞չ խօսիս, ո՞չ գիտես եթէ իշխանութիւն ունիմ հանել զքեզ ի խաչ, և իշխանութիւն ունիմ արձակել զքեզ: Պատասխանի ետ Յիսուս, Ոչ ունէիր դու իշխանութիւն ի վերայ իմ և ոչ մի, եթէ ոչ էր տուեալ քեզ ի վերուստ. վասն այնորիկ որ մատնեացն զիս քեզ, նորա մեծ մեղք են: Եւ յայնմանէ Պիղատոս խնդրէր արձակել զնա. և Հրեայքն աղաղակէին և ասէին, Եթէ զդա արձակես, չես բարեկամ կայսեր. ամենայն ոք որ թագաւոր կոչէ զանձն իւր, հակառակ է կայսեր: Իսկ Պիղատոս իբրեւ լուաւ զբանս զայսոսիկ, ած զՅիսուս արտաքս. և նստաւ ի վերայ բեմին ի տեղւոջն որ կոչէր Քարայատակ, և Եբրայեցերէն կապպաթա: (Էր ուրբաթն զատկի, և էր ժամ իբրեւ վեցերորդ,) և ասէ ցՀրեայսն, Ահա թագաւորդ ձեր [1]ցձեզ: Եւ նոքա աղաղակէին, Բարձ [1]ի մէնջ, բարձ [1]ի մէնջ, և հան զդա ի խաչ: Ասէ ցնոսա Պիղատոս, Ես զթագաւորդ ձեր ի խա՞չ հանիցեմ: Պատասխանի ետուն քահանայապետքն, Չիք մեր թագաւոր բաց ի կայսերէ: Յայնժամ ետ զնա ի ձեռս նոցա, զի ի խաչ ելանիցէ:

---

[1] ի ց—ն՝ պ—ս—ե

17 Եւ նոքա առեալ տանէին զնա. և բարձեալ էր
ինքնին զխաչափայտն, և ելանէր ի տեղին որ ա-
նուանեալ էր Գագաթաձան, և կոչէր Եբրայեցերէն
18 Գողգոթա. Ուր և ի խաչն իսկ Հանին զնա, և ընդ
նմա երկուս եւս այլս աստի և անտի, և ի միջի
19 զՅիսուս։ Գրեաց և տախտակ մի Պիղատոս, և եդ
ի վերայ խաչին. և էր գրեալ, ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՎ-
20 ՐԵՑԻ, ԹԱԳԱՒՈՐ ՀՐԷԻՑ։ Զայն տախտակ ընթեր-
ցան բազումք ի Հրէից, զի մօտ էր ի քաղաք անդր
տեղին ուր խաչեցաւն Յիսուս. և էր գրեալ Եբրայե-
21 ցերէն, Դաղմատերէն և Յունարէն։ Ասեն ցՊիղա-
տոս քահանայապետքն Հրէից, Մի՛ գրեր Թագաւոր
Հրէից, այլ թէ Նա ասաց, Թագաւոր եմ Հրէից։
22 Պատասխանի ետ Պիղատոս, Զոր ինչ գրեցի՛ գրեցի։
23 Իսկ զինուորքն իբրեւ Հանին ի խաչ զՅիսուս,
առին զհանդերձս նորա և արարին չորս մասունս,
իւրաքանչիւր զինուորի մասն. իսկ զպատմուճանն,
քանզի էր առանց կարանի ի վերուստ փորանկեալ
24 ամենեւին, Ասեն ցմիմեանս, Մի՛ պատառեսցուք
զայդ, այլ արկցուք վիճակս ի վերայ դորա ումն
և ելցէ. զի լցցի գիրն որ ասէ, Բաժանեցան զհան-
դերձս իմ յիւրեանս, և ի վերայ պատմուճանի
իմոյ վիճակ արկին։ Զինուորքն զայս ինչ գործեցին։
25 Եւ կային առ խաչին Յիսուսի մայրն նորա, և
քոյր մօր նորա, Մարիամ Կղէովպայ, և Մարիամ
26 Մագդաղենացի։ Յիսուս իբրեւ եհաս զմայրն և
զաշակերտն զոր սիրէր, զի կայր մօտ, ասէ ցմայրն,
27 Կին դու, ահա որդի քո։ Ապա ասէ ցաշակերտն,
Ահա մայր քո. և յայնմ ժամանակէ ա՛ռ աշա-
կերտն զնա առ իւր։

28 Յետ այսորիկ իբրեւ գիտաց Յիսուս եթէ ահա
ամենայն ինչ կատարեալ է, (զի կատարեսցի
29 գիրն,) ասէ, Ծարաւի եմ։ Եւ անդ կայր սաման ինչ
լի քացախով. և նոցա սպունգ լցեալ քացախով
[1]ընդ լեզուի" շուրջ եդեալ զմշտկաւ զոպայի մա-
30 տուցին ի բերան նորա։ Իբրեւ ա'ռ Յիսուս զքա-
ցախն [1]Հանդերձ լեզուովք" ասէ, [2]Ամենայն ինչ"
կատարեալ է. և խոնարհեցուցեալ զգլուխն՝ ա-
ւանդեաց զոգին։

31 Իսկ Հրեայքն, քանզի ուրբաթ էր, զի մի՛ ան-
դէն ի խաչին ագանիցին մարմինքն մինչեւ ցշա-
բաթն, (զի էր օր մեծ շաբաթուն այնորիկ,) աղա-
չեցին զՊիղատոս զի խորտակեսցեն զբարձս նոցա
32 և բարձցին։ Եկին զինուորքն և զառաջինոյն խոր-
տակեցին զբարձս, նոյնպէս և զմիւսոյն որ ընդ նմա
33 ի խաչն եղեալ էր։ Բայց իբրեւ եկին առ Յիսուս,
և տեսին զի այն ինչ մեռեալ էր, ոչ խորտակե-
34 ցին զբարձս նորա. Այլ մի ոմն ի զինուորացն տի-
գաւ խոցեաց զկողս նորա, և վազվազակի եկ ա-
35 րիւն և ջուր։ Եւ որ տեսան՝ վկայեաց, և ճշմարիտ
է վկայութիւն նորա, և նա գիտէ թէ ճշմարիտ
36 ասէ, զի և դուք հաւատասջիք։ Այս եղեւ զի
37 լցցի գիրն եթէ Ոսկր նորա մի՛ փշրեսցի։ Եւ դար-
ձեալ մեւս գիր ասէ եթէ Հայեսցին ի նա յոր խո
ցեցինն։

38 Յետ այսորիկ աղաչեաց զՊիղատոս Յովսէփ որ
յԱրիմաթեայ էր, աշակերտ Յիսուսի ի ծածուկ
վասն ահին Հրէից, զի բարձցէ զմարմինն Յիսուսի.

---

[1]ի բազմս գոյոք [2]ի ցոնէն գոյոք

և հրամայեաց Պիղատոս. [1]եկին և բարձին զնա՝
39 եկն և Նիկոդեմոս որ եկեալն էր առ Յիսուս ի
գիշերի զառաջինն, և երեր զմուռս խառն ընդ
40 հալուխս իբրեւ լտերս հարեւր։ Առին զմարմինն
Յիսուսի, և պատեցին կտաւովք խնկովքն հան-
41 դերձ, որպէս օրէն էր Հրէից պատել։ Եւ էր ի
տեղւոջն յորում խաչեցաւ՝ պարտէզ. և ի պար-
տիզի անդ՝ գերեզման նոր յորում ոչ ոք երբեք
42 էր եդեալ։ Անդ վասն ուրբաթուն Հրէից, զի մօտ
էր գերեզմանն, եդին զՅիսուս։

ԳԼ. Ի

1 **Եւ** ի միաշաբաթուոջն Մարիամ Մագդաղենացի
գայ առաւօտուն ընդ արշալոյսն ի գերեզման անդր,
և տեսանէ զվէմն բարձեալ [2]ի դրաց գերեզմանին՝
2 Ապա ընթանայ և գայ առ Սիմովն Պետրոս և առ
մեւս աշակերտն զոր սիրէր Յիսուս, և ասէ ցնո-
սա, Բարձին զՏէր ի գերեզմանէ անտի, և ոչ գի-
3 տեմք ուր եդին զնա։ Ել Պետրոս և մեւս աշա-
4 կերտն և գային ի գերեզմանն։ Ընթանային երկո-
քին ի միասին, և մեւս աշակերտն յառաջեաց ըն-
թացաւ վազագոյն քան զՊետրոս և եկն նախ ի
5 գերեզմանն։ Եւ խոնարհեալ տեսանէ զի կային
6 անդ կտաւքն, բայց ի ներքս ոչ եմուտ։ Եկն և
Սիմովն Պետրոս որ գայր զկնի նորա, և եմուտ ի
գերեզմանն, և տեսանէ զկտաւսն զի կային անդ.

---

[1]Բազմ., եկն և երարձ զմարմինն նորա, այլ՝ եկն և երարձ զմարմինն Յիսուսի

[2]Ոմն., ի գերեզմանէն

7 Եւ վաղիւանկն որ էր ի գլուխ նորա, ոչ ընդ այլ
կոտւան կայր, այլ ուրոյն ծալեալ ի մի կողմն։
8 Յայնժամ եմուտ և մեւս աշակերտն, որ եկեալն էր
յառաջագոյն ի գերեզմանն, ետես և հաւատաց.
9 Զի չեւ եւս գիտէին զգիրս թէ պարտ է նմա ի մեռելոց
10 յառնել։ Զոգան դարձեալ առ միմեանս աշակերտքն։
11 Բայց Մարիամ կայր արտաքոյ գերեզմանին և
լայր. և մինչդեռ լայր, խոնարհեցաւ ի գերեզմանն.
12 Եւ տեսանէ երկուս հրեշտակս ի սպիտակս, զի
նստէին մի ի սնարից և մի յանուսից ուր կայր մար-
13 մինն Յիսուսի։ Եւ նոքա ասեն ցնա, Կին դու, զի՞
լաս։ Ասէ ցնոսա, Զի բարձին զՏէրն իմ [1]ի գերեզ-
14 մանէ աստի՝, և ոչ գիտեմ ուր եդին զնա։ Զայս
իբրեւ ասաց, դարձաւ ի թիկունս կոյս, և տեսա-
նէ զՅիսուս զի կայր. և ոչ գիտէր թէ Յիսուս իցէ։
15 Ասէ ցնա Յիսուս, Կին դու, զի՞ լաս, զո՞ խնդրես։
Նմա այսպէս թուեցաւ թէ պարտիզպանն իցէ,
ասէ ցնա, Տէր, եթէ դու բարձեր զնա, ասա ինձ
16 ուր եդիր զնա, զի ես առից զնա։ Ասէ ցնա Յի-
սուս, Մարիամ։ Եւ նա դարձաւ և ասէ ցնա [2]Եբ-
րայեցերէն, Րաբբունի, որ թարգմանի վարդա-
17 պետ։ Ասէ ցնա Յիսուս, Մի՛ մերձենար յիս, զի
չեւ եւս ելեալ եմ առ Հայր իմ. այլ երթ դու
առ եղբարսն իմ, և ասա ցնոսա, Ելանեմ ես առ
Հայրն իմ և առ Հայր ձեր, և Աստուածն իմ և
18 Աստուած ձեր։ Գայ Մարիամ Մագդաղենացի և
պատմէ աշակերտացն եթէ ետես նա զՏէր, և զայս
ինչ ասաց ցնա։

---

[1]ի յ-ն-ի պ-ի-ւ-ի [2]յ-մ-ն- պ-ի-ւ-ի

19 Եւ էր երեկոյ ի միաշաբաթւոջ աւուրն, և դրօք փակելովք ուր էին աշակերտքն ժողովեալ վասն
ահին Հրէից, եկն Յիսուս և եկաց ի միջի նոցա,
20 և ասէ ցնոսա, Ողջոյն ընդ ձեզ։ Իբրեւ զայս ա-
սաց, եցոյց նոցա զձեռս և զկողն իւր. և խնդա-
21 ցին աշակերտքն իբրեւ տեսին զՏէր։ Ասէ ցնոսա
դարձեալ, Ողջոյն ընդ ձեզ, որպէս առաքեաց զիս
22 Հայր [1]իմ, և ես առաքեմ զձեզ։ Եւ զայս իբրեւ
ասաց, փչեաց ի նոսա և ասէ, Առէք Հոգի Սուրբ.
23 Եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի նո-
ցա. եթէ զուրուք ունիցիք, կալեալ լիցի։
24 Իսկ Թովմաս, մի յերկոտասանիցն, անուանեալն
Երկուորեակ, ոչ էր ընդ նոսա յորժամ եկն Յի-
25 սուս։ Ասէին ցնա այլ աշակերտքն, Եթէ Տեսաք
զՏէր. և նա ասէ ցնոսա, Եթէ ոչ տեսից ի ձեռս
նորա զնշան բեւեռացն, և արկից զմատունս իմ ի
տեղիս բեւեռացն, և մխեցից զձեռս իմ ի կող-
նորա, ոչ հաւատամ։
26 Եւ յետ ութ աւուր դարձեալ էին ի ներքս ա-
շակերտքն, և Թովմաս ընդ նոսա. գայ Յիսուս
դրօքն փակելովք և եկաց ի մէջ, և ասէ, Ողջոյն
27 ընդ ձեզ։ Ապա ասէ ցԹովմաս, Բեր զմատունս քո
և արկ այսր և տես զձեռս իմ, և բեր զձեռն քո
և մխեա ի կողս իմ, և մի՛ լինիր անհաւատ, այլ
28 հաւատացեալ։ Պատասխանի եւս Թովմաս և ասէ
29 ցնա, Տէր իմ և Աստուած իմ։ Ասէ ցնա Յիսուս,
Այդ զի տեսեր զիս և հաւատացեր. երանի որոց
ոչ իցէ տեսեալ և հաւատասցեն։

---

[1] ի ց--ն- պ-ի-ի

30 Բազում և այլ նշանս արար Յիսուս առաջի աշակերտաց իւրոց, որ ոչ է գրեալ ի գիրս յայս-
31 միկ։ Այլ այս այնչափ ինչ գրեցաւ, զի հաւատայցէք եթէ Յիսուս՝ Քրիստոս է, Որդի Աստուծոյ. և զի հաւատալովքդ կեանս յաւիտենական ընդունիցիք յանուն նորա։

ԳԼ. ԻԱ

1 Յետ այսորիկ դարձեալ յայտնեաց զանձն իւր Յիսուս աշակերտացն իւրոց առ ծովեզերբն Տիբերեայ, և յայտնեաց այսպէս. Էին ի միասին Սիմովն Պետրոս, և Թովմաս անուանեալն Երկուորեակ, և Նաթանայէլ որ ի Կանայ Գալիլեացւոց, և որդիքն Զեբեդեայ, և այլք յաշակերտաց անտի երկու։ Ասէ ցնոսա Սիմովն Պետրոս, Երթամ ձուկն որսալ։ Ասեն ցնա, Գամք և մեք ընդ քեզ։ Գնացին և մտին ի նաւ, և յայնմ գիշերի կալան
4 և ոչ ինչ։ Իբրեւ այգ եղեւ, կայր Յիսուս յեզր ծովուն, բայց ոչ ծանեան աշակերտքն թէ Յիսուս
5 իցէ։ Ասէ ցնոսա Յիսուս, Մանկունք, միթէ ուընդ՞ինչ ուտելոյ։ Պատասխանի ետուն և ասեն
6 ցնա, Ոչ։ Ասէ ցնոսա, Արկէք յաջակողմն նաւին զուարկանդ և գտանիցէք։ Արկին, և ոչ կարէին
7 ձգել ի բազմութենէ անտի ձկանցն։ Ասէ աշակերտն այն զոր սիրէրն Յիսուս՝ ցՊետրոս, Տէր է այն։ Սիմովն Պետրոս իբրեւ լուաւ թէ Տէր է, արկաւ զիւրեւ զափածանելին, քանզի մերկ էր, և
8 ընկէց զինքն ի ծովն։ Եւ այլ աշակերտքն նաւաւն իսկ գային, քանզի չէին հեռի ի ցամաքէն, այլ իբրեւ երկերիւր կանգնաւ, քարշէին զգործին հան-

9 դերձ ձկամբքն։ Իբրեւ ելին ի ցամաք, տեսանէն
կրակեղ կայծականց և ձուկն մի ի վերայ և հաց։
10 Ասէ ցնոսա Յիսուս, Բերէք ի ձկանց այսր զոր
11 դուքդ կալարուք այժմիկ։ Եմուտ Սիմոն Պետրոս,
և ձգէր զգործին ի ցամաք լի մեծամեծ ձկամբք
հարեւր յիսուն և երիք, և այնչափ ինչ կայր և
12 ոչ պատառեցաւ գործին։ Ասէ ցնոսա Յիսուս, ե-
կայք ճաշեցէք. և ոչ ոք յաշակերտացն իշխէր
հարցանել թէ Դու ո՞վ ես, զի գիտէին թէ Տէրն
13 է։ Գայ Յիսուս և առնու զՀացն և տայ նոցա,
14 նոյնպէս և զձուկնն։ Զայս երիցս անգամ երեւե-
ցաւ Յիսուս աշակերտացն յարուցեալ ի մեռելոց։
15 Եւ իբրեւ ճաշեցին, ասէ ցՍիմոն Պետրոս Յի-
սուս, Սիմոն Յովնանու, սիրե՞ս զիս առաւել քան
զդոսա։ Ասէ ցնա, Այո, Տէր, և դու գիտես զի
սիրեմ զքեզ։ Ասէ ցնա, Արածեա զգառինս իմ։
16 Դարձեալ ասէ ցնա, Սիմոն Յովնանու, սիրե՞ս
զիս։ Ասէ ցնա, Այո, Տէր, և դու գիտես զի սի-
17 րեմ զքեզ։ Ասէ ցնա, Արածեա զոչխարս իմ։ Ասէ
ցնա երիցս անգամ, Սիմոն Յովնանու, սիրե՞ս զիս։
Տրտմեցաւ Պետրոս, զի ասացն ցնա երիցս թէ Սի-
րե՞ս զիս. և ասէ ցնա, Տէր, դու զամենայն գի-
տես, և [1]դու իսկ զամենայն ճանաչես և եթէ՝ սի-
րեմ զքեզ։ Ասէ ցնա Յիսուս, Արածեա զոչխարս
18 իմ։ Ամէն ամէն ասեմ քեզ, զի մինչ մանուկն
էիր, անձամբ անձին գօտի ածէիր և երթայիր ո՛
և կամէիր. և յորժամ ծերասցիս, ձեռս ի վեր
կալցես, և այլք ածցեն քեզ գօտի, և տարցին

---

[1]Ցոյն, դու ճանաչես եթէ

19 ուր ոչն կամիցիս։ Զայս ասաց նշանակեալ թէ
որով մահու փառաւորը առնիցէ զԱստուած. և
20 զայս խրբեւ ասաց, ասէ ցնա, եկ զկնի իմ։ Դար-
ձաւ Պետրոս և տեսանէ զաշակերտն զոր սիրէր
Յիսուս, զի երթայր զկնի, (որ և անկաւ զլանջսն
նորա և ասէ, Տէր, ո՞վ է որ մատնելոցն է զքեզ։)
21 Զնա տեսեալ Պետրոսի, ասէ ցՅիսուս, Տէր, իսկ
22 սա զի՞։ Ասէ ցնա Յիսուս, Եթէ կամիմ, զի կացցէ
դա մինչեւ ես գամ. քեզ զի՞ փոյթ է, դու եկ
23 զկնի իմ։ Եւ ել բանս այս յեղբարս, և համարե-
ցան թէ աշակերտն այն ոչ մեռանիցի. և ոչ ա-
սաց նմա Յիսուս եթէ Ոչ մեռանիցի, այլ [1]թէ
կամիմ ես թէ կացցէ դա մինչեւ ես գամ [2]։
24 Այս աշակերտ է որ վկայէ վասն այսոցիկ, որ և
գրեացն իսկ զայսոսիկ. և գիտեմք եթէ ճշմարիտ
25 է վկայութիւն նորա։ Բայց է և այլ ինչ բազում
զոր արար Յիսուս, զոր եթէ գրեալ էր ի բուռ
միոջէ, կարծեմ թէ և ոչ աշխարհս բաւական էր
տանել զգիրսն որ թէ գրեալ էին։

---

[1]Յոյն, եթէ [2]Բառ. յոյն, քեզ զի՞ փոյթ է

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

[1]ՂՈՒԿԱՅ ԱՒԵՏԱՐԱՆՉԻ՝

ԳԼՈՒԽ Ա

1 ԶԲԱՆՆ առաջին [1]զոր արարի վասն ամենայնի,
ո՛ Թէոփիլէ, զոր սկսաւ Յիսուս առնել և ուսու-
2 ցանել, Մինչեւ յօրն պատուիրելոյ առաքելոցն ի
ձեռն Հոգւոյն Սրբոյ զորս ընտրեացն, և վերա-
3 ցաւ. Որոց յանդիման կացոյց զինքն կենդանի յետ
չարչարանացն իւրոց ի բազում արուեստս յաւուրս
քառասուն երեւեալ նոցա, և ասել վասն արքա-
4 յութեանն Աստուծոյ։ Եւ ի հաղորդել ընդ նոսա
հացիւ՝ պատուէր տայր նոցա յԵրուսաղեմէ մի՛
մեկնել, այլ սպասել աւետեացն Հօր զոր լսա-
5 բուքն յինէն։ Զի Յովհաննէս մկրտեաց ի ջուր,
այլ դուք մկրտիցիք ի Հոգին Սուրբ, ոչ յետ բա-
6 զում ինչ աւուրցս այսոցիկ։ Եւ նոքա [2]մատու-
ցեալ հարցանէին զնա և ասէին, Տէր, եթէ ի ժա-
մանակի՞ սոսա յայսմիկ հաստուցանելոց իցես զար-
7 քայութիւն Իսրայելի։ Ասէ ցնոսա, Ոչ է ձեզ գի-
տել զժամս և զժամանակս, զոր Հայր եդ յի-
8 բում իշխանութեան. Այլ առջիք զօրութիւն ի
հասանել Հոգւոյն Սրբոյ ի վերայ ձեր. և եղիջիք

---

[1] Ի ցՈՒՆԷՆ պՕՅՕՒՔ [2] ՈՒՄՆԻ, ԺՈՂՈՎԵԱԼ

ինձ վկայք Երուսաղէմ և յամենայն Հրէաստանի
9 և ի Սամարիա և մինչեւ ի ծագս երկրի։ Եւ զայս
իբրեւ ասաց, մինչդեռ հայէին նոքա, վերացաւ.
10 և ամպն կալաւ զնա յաչաց նոցա։ Եւ մինչդեռ
պշուցեալ հայէին ընդ երկինս երթալոյ նորա, և
ահաւասիկ արք երկու երեւեցան նոցա ի հանդերձս
11 սպիտակս, Որք և ասացին, Արք Գալիլեացիք, զի՞
կայք հայեցեալ ընդ երկինս. այս Յիսուս որ վե-
րացաւն ի ձէնջ յերկինս՝ սոյնպէս եկեսցէ զոր օրի-
12 նակ տեսէք զնա երթեալ յերկինս։ Ապա դարձան
Երուսաղէմ յանուանեալ լեռնէն Ձիթենեաց,
որ է մերձ Երուսաղէմ բաստ շաբաթուն ճանա-
13 պարհի։ Եւ իբրեւ մտին, ելին ի վերնատունն ուր
վանքն իսկ էին, Պետրոս և Յակովբոս, Յովհաննէս
և Անդրէաս, Փիլիպպոս և Թովմաս, Բարթողոմէոս
և Մատթէոս, Յակովբոս Ալփեան և Շմաւոն Նա-
14 խանձայոյզ և Յուդա Յակովբեան։ Սոքա ամենե-
քեան էին հանապազորդեալ միաբան յաղօթս
հանդերձ կանանմբք և Մարեմամ մաւրբն Յիսուսի
և եղբարբք նորա։
15 Ա. Եւ յաւուրսն յայնոսիկ յարուցեալ Պետ-
րոս ի մէջ [1]եղբարցն՝ ասէ, (և էր անդ բազմու-
16 թիւն անուանց իբրեւ հարեւր և քսանից,) Արք
եղբարք, պարտ էր կատարել գրոյն, զոր յառա-
ջագոյն ասաց Հոգին Սուրբ ի բերանոյ Դաւթի
վասն Յուդայի, որ եղեւ առաջնորդ առնելեացն
17 Յիսուսի. Զի ի թիւս մեր էր ընդ մեզ, և հասեալ
18 էր նմա վիճակ պաշտամանս այսորիկ։ Սա ստացաւ

---

[1]Որդւոց, աշակերտացն

գեղ ի վարձուց անիրաւութեան, և [1]ուռուցեալ
հերձաւ ընդ մէջ և հեղաւ ամենայն փոր նորա։
19 Եւ յայտնի եղեւ ամենեցուն որ բնակեալ են Ե-
րուսաղէմ մինչեւ կոչել գեղջն այնմիկ բարբա-
ռօիվն իւրեանց Ակեղդամա, այսինքն Ն Գեղ ա-
20 րեան։ Զի գրեալ է ի գիրս Սաղմոսաց, Եղիցի
բնակութիւն նորա աւերակ, և մի՛ ոք իցէ որ բնա-
21 կիցէ ի նմա. և, Զկարգ նորա առցէ այլ։ Արդ
պարտ է յարանցս յայսցանէ եկեղեցս ընդ մեզ
յամենայն ժամանակի յորում մուտ և ել առ մեզ
22 Տէր Յիսուս, Սկսեալ ի մկրտութենէն Յովհաննու
մինչեւ յօրն յորում վերացաւ ի մէնջ, վկայ յա-
րութեան նորա ընդ մեզ լինել միւսմ ի սոցանէ։
23 Եւ կացուցին երկուս, զՅովսէփ որում Բարսաբայն
կոչէին, որ անուանեցաւն Յուստոս, և զՄատ-
24 թիա։ Եւ կացեալ յաղօթս ասեն, Դու, Տէր,
սրտագէտ ամենայնի, յայտնեա զմի ոք զոր ըն-
25 րեցեր ի սոցանէ յերկոցունց, Առնուլ զվիճակ պաշ-
տամանս այսորիկ և զառաքելութեան, յորմէ ան-
26 կաւ Յուդաս գնալ ի տեղի իւր։ Եւ ետուն վի-
ճակս նոցա, և ելանէր վիճակն Մատաթիայ, և
համարեցաւ ընդ մեռասան առաքեալսն։ Վ

Գլ. Բ

1 Եւ ի կատարել [2]աւուրցն Պենտակոստէից էին
2 ամենեքեան միաբան ի միասին։ Եւ եղեւ յանկար-
ծակի հնչիւն յերկնից՝ եկեալ իբրեւ սաստիկ հողմոյ,

---

[1] Ց-ՆՆ, անկեալ գլխիվայր
[2] Բ-Պ-Ի, աւուրն Պենտեկոստէի

3 և ելից զամենայն տունն յորում նստէին։ Եւ երե-
ւեցան նոցա բաժանեալ լեզուք իբրեւ ի հրոյ, և
4 նստաւ իւրաքանչիւր ի վերայ նոցա։ Եւ լցան ա-
մենեքեան Հոգւով Սրբով, և սկսան խօսել յայլ
լեզուս որպէս և Հոգին տայր բարբառել նոցա։
5 Եւ էին յԵրուսաղէմ բնակեալ Հրեայք, արք եր-
կիւղածք, յամենայն ազգաց որ ի ներքոյ երկնից։
6 Եւ իբրեւ եղեւ բարբառս այս, եկն միաբան բազ-
մութիւնն և խառնեցաւ, զի լսէին յիւրաքանչիւր
7 լեզուս խօսել նոցա։ Աքանչանային ամենեքեան և
զարմանային և ասէին ընդ միմեանս, Ո՞չ աւասիկ
8 ամենեքեան սոքա որք խօսինն Գալիլեացիք են. Եւ
զիա՞րդ լսեմք մեք յիւրաքանչիւր բարբառս մեր
9 յորում ծնեալ եմք. Պարթեւք և Մարք և Իղա-
մացիք և որ բնակեալ են ի Միջագետս, ի Հրէաս-
10 տանի և ի Գամիրս, ի Պոնտոս և յԱսիա, ի Փռիւ-
գիա և ի Պամփիւլիա, յԵգիպտոս և ի կողմանս
Լիբէացւոց որ ընդ Կիւրենացիս և որ եկք Հռով-
11 մայեցիք, Հրեայք և եկք նոցուն, Կրետացիք և Ա-
րաբացիք, լսեմք խօսից նոցա ի մեր լեզուս զմեծա-
12 մեծս Աստուծոյ։ Աքանչանային ամենեքեան զար-
մացեալք, և ասէին ցմիմեանս, Ջի՞նչ կամիցի այս
13 լինել։ Եւ կիսոցն ընդ խաղ արկեալ ասէին թէ
գաղցուալից իցեն։

14 Յարուցեալ Պետրոս Հանդերձ մետասանիւքն՝
ամբարձ զձայն իւր և խօսեցաւ ընդ նոսա, Արք
Հրէաստանեայք և որ բնակեալ էք յԵրուսաղէմ,
ամենեքին, այս ձեզ յայտնի լիցի, և ունկն դիք
15 բանից իմոց. Ոչ որպէս դուքդ կարծէք թէ սոքա
արբեալ իցեն, զի դեռ երեք ժամք են աւուրս։

16 Ահա այս է որ ասացաւ ի ձեռն մարգարէին Յովէ-
17 լայ. Եւ եղիցի յետ այսորիկ յաւուրս յետին, ասէ Աստուած, հեղից յոգւոյ իմմէ ի վերայ ամե-
նայն մարմնոյ, և մարգարէասցին ուստերք ձեր և դստերք ձեր, և երիտասարդք ձեր տեսի-
18 ցեն, և ծերք ձեր երազովք յերազեսցին։ Եւ ի վե-
րայ ծառայից իմոց և ի վերայ աղախնանց իմոց յա-
ւուրսն յայնոսիկ հեղից յոգւոյ իմմէ, և մարգա-
19 րէասցին։ Եւ տացից նշանս յերկինս ի վեր, և նշանս յերկիր ի խոնարհ՝ արիւն և հուր և մրրիկ ծխոյ։
20 Արեգակն դարձցի ի խաւար, և լուսին՝ յարիւն,
21 մինչեւ եկեալ իցէ օր Տեառն մեծ և երեւելի։ Եւ եղիցի ամենայն որ կարդասցէ զանուն Տեառն՝ կեցցէ։
22 Բ. Արք Իսրայելացիք, լուարուք զբանս զայսո-
սիկ զՅիսուս Նազովրեցի, զայր ցուցեալ յԱս-
տուծոյ ի ձեզ զօրութեամբ և նշանօք և արուես-
տիւք, զոր արար նովաւ Աստուած ի միջի ձերում,
23 որպէս և դուք իսկ գիտէք, Զնա, նկատեալ խոր-
հրդով և կանխագիտութեամբն Աստուծոյ [1]մատ-
նեալ, ի ձեռս՝ անօրինաց բեւեռեալ ի փայտի
24 սպանէք. Զոր Աստուած յարոյց՝ լուծեալ զերկունս մահու, քանզի ոչ էր հնար բռնուել նմա
25 ի նմանէ։ Դաւիթ իսկ ասէ զնմանէ, Յառաջագոյն տեսանէի զՏէր առաջի իմ յամենայն ժամ, զի է
26 ընդ աջմէ իմմէ, զի մի՛ սասանեցայց. Վասն այ-
սորիկ ուրախ եղեւ սիրտ իմ, և ցնծացաւ լեզու
27 իմ, եւս և մարմին իմ բնակեսցէ յուսով։ Զի ոչ թողցես զանձն իմ ի դժոխս, և ոչ տացես Սրբոյ

---

[1] Յմահ, մատնեալ առէք և ի ձեռն

28 քում տեսանել զապականութիւն։ Ծանուցեր ինձ
զճանապարհս կենաց. լցուցեր զիս ուրախութեամբ
29 երեսաց քոց [1]ի քաղցրութենէ։ Արք եղբարք,
պարտ է համարձակութեամբ ասել վասն նահա-
պետին Դաւթի, զի ե՛ւ մեռաւ ե՛ւ թաղեցաւ, և
գերեզման նորա կայ ի մէջ մերում մինչեւ ցայսօր։
30 Զի մարգարէ էր, և գիտէր եթէ երդմամբ երդուաւ
նմա Աստուած ի պտղոյ որովայնի [2]նորա նստու-
31 ցանել՝ յաթոռ նորա, յառաջագոյն ծանուցեալ
խօսեցաւ վասն յարութեանն Քրիստոսի, զի ոչ
թողաւ ոգի նորա ի դժոխս, և ոչ մարմին նորա
32 եռես զապականութիւն։ Զայս Յիսուս յարոյց
33 Աստուած, որում ամենեքեան մեք վկայ եմք։ Ա-
ջոյն Աստուծոյ բարձրացեալ, զաւետիս Հոգւոյն
Սրբոյ ընկալեալ ի Հօրէ՝ սփռեաց զայս, զոր դուք
34 իսկ տեսանէք և լսէք։ Զի ոչ եթէ Դաւիթ ել
յերկինս, ասէ իսկ ինքն, Ասաց Տէր ցՏէր իմ,
35 Նիստ ընդ աջմէ իմմէ՝ Մինչեւ եդից զթշնամիս քո
36 պատուանդան ոտից քոց։ Արդ ճշմարտիւ գիտաց-
ցէ ամենայն տունդ Իսրայելի, զի ե՛ւ Տէր զնա ե՛ւ
Օծեալ՝ Աստուած արար, զայն Յիսուս զոր դուք
խաչեցէք։

37 Եւ լուեալ զայս՝ դղջացան ի սիրտս իւրեանց, և
ասեն ցՊետրոս և ցայլ առաքեալսն, Զի՞նչ գոր-
38 ծեսցուք, արք եղբարք։ Ասէ ցնոսա Պետրոս, Ա-
պաշաւեցէք և մկրտեսցի իւրաքանչիւր ոք ի ձէնջ
յանուն [3]Տեառն Յիսուսի Քրիստոսի ի թողութիւն

---

[1]ի ցառնէն պոլոռ [2]Որոյ, նորա բուռ մարմնոյ յարուցանել զՔրիստոս նստել [3]Յոմանս պոլոռ

39 մեզաց, և ընկալջիք զաւետիս Հոգւոյն Սրբոյ։ Զի
ձեզ են աւետիքս և որդւոց ձերոց, և ամենայն
40 հեռաւորաց զորս կոչեսցէ Տէր Աստուած մեր։ Եւ
այլովք բազմիւք բազմօք վկայութիւն դնէր, և մխի-
թարէր զնոսա և ասէր, Ապրեցարուք յազգէ աս-
41 տի խոտորելոյ յայսմանէ։ Ոմանք յօժարութեամբ
ընկալեալ զբան նորա մկրտեցան, և յաւելան յա-
ւուր յայնմիկ ոգիք իբրեւ երեք հազարք։
42 Գ. Եւ էին հանապազորդեալք վարդապետու-
թեան առաքելոցն և հաղորդութեան և բեկանելոյ
43 հացին և աղօթից։ Եւ լինէր ամենայն անձին ահ
և երկեւղ, և բազում նշանք և արուեստք ի ձեռս
44 առաքելոցն գործէին։ Ամենայն հաւատացեալքն
էին ի միասին, և ունէին զամենայն ինչ հասարա-
45 կաց։ Եւ զստացուածս և զինչս վաճառէին, և
բաշխէին զայն ամենեցուն ումմ զիարդ պիտոյ ինչ
46 լինէր։ Հանապազօր կանխեալ միաբանութեամբ
ի տաճարն, և առանին բեկանէին զհացն, և առ-
նուին կերակուր ուրախութեամբ և միամտութեամբ
47 սրտի. Օրհնէին զԱստուած և ունէին շնորհս առ
ամենայն ժողովուրդն. և Տէր յաւելոյր [1]ի փրկեալսն
հանապազօր ի նոյն՝՝։

ԳԼ. Գ

1 Պետրոս և Յովհաննէս ելանէին ի տաճար անդր
2 յիններորդ ժամու աղօթից։ Եւ էր այր մի կաղ
յորովայնէ մօր իւրոյ զոր բարձեալ դնէին հա-
նապազ առ դրան տաճարին, որ կոչէր Գեղեցիկ

---

[1] Ոմանք, զփրկեալսն հանապազօր յեկեղեցին

քնդրել ողորմութիւն յայնցանէ որ մտանէին ի
3 տաճարն։ Որոյ տեսեալ զՊետրոս և զՅովհան-
նէս զի մտանէին ի տաճարն, աղաչէր ողորմու-
4 թիւն առնուլ։ Հայեցաւ ի նա Պետրոս Յովհաննու
5 հանդերձ և ասէ, Հայեաց ի մեզ։ Նա դարձաւ ի
6 նոսա և ակն ունէր առնուլ ինչ ի նոցանէ։ Եւ
ասէ Պետրոս, Արծաթ և ոսկի ոչ ունիմ, բայց
զոր ունիմ զայս տամ քեզ. յանուն Յիսուսի Քրիս-
7 տոսի Նազովրեցւոյ արի և գնա։ Եւ կալեալ զա-
ջոյ ձեռանէ նորա՝ յարոյց զնա. և անդէն հաստա-
8 տեցան [1]բարձք նորա և սրունք՝։ Ի վեր վազեաց
և սկսաւ գնալ, և եմուտ ընդ նոսա ի տաճարն,
9 գնայր և վազվազէր և օրհնէր զԱստուած։ Եւ ե-
տես ամենայն ժողովուրդն զնա, զի գնայր և օրհ-
10 նէր զԱստուած. Եւ գիտէին զնա զի սա էր որ
նստէր վասն ողորմութեան առ Գեղեցիկ դրան
տաճարին, և լցան զարմանալեօք ի վերայ նշանին
որ եղեւ։

11 Եւ մինչ նա ունէր զՊետրոս և զՅովհաննէս,
ընթացաւ ամենայն ժողովուրդն առ նոսա ի սրահն
12 որ կոչէր Սողոմոնի՝ զարմացեալք։ Իրրեւ տեսես
Պետրոս, պատասխանի ետ ժողովրդեանն, Արք
Իսրայելացիք, զի՞ զարմացեալ էք ի վերայ այսո-
րիկ, կամ ընդ մեզ զի՞ էք պշուցեալ, իբրու թէ
անձին զօրութեամբ ինչ կամ [2]քաջութեամբ ա-
13 րարեալ իցէ զգնալդ դմա։ Աստուած Աբրահամու
և Աստուած Իսահակայ և Աստուած Յակովբայ,

---

[1]Յ-ՃՂ, Թաթք ոտից նորա և կոճք

[2]Յ-ՃՂ, բարեպաշտութեամբ

Աստուած հարցն մերոց, փառաւորեաց զՈրդի իւր
զՅիսուս, զոր դուքն մատնեցէք և ուրացարուք ա-
14 ռաջի Պիղատոսի ի դատել նորա արձակել եւ
դուք զՍուրբն և զԱրդարն ուրացարուք և խնդրե-
15 ցէք այր մի մահապարտ շնորհել ձեզ։ Եւ զԱռաջ-
նորդ կենացն սպանէք, զոր Աստուած յարոյց ի
16 մեռելոց, որում մեք իսկ վկայ եմք։ Եւ հաւա-
տովք անուան նորա զսա զոր տեսանէք և գի-
տէք՝ հաստատեաց անուն նորա. և հաւատքն որ
նովաւ՝ եառն դմա զառողջութիւնս զայս յանդի-
ման ձեր ամենեցուն։ Եւ արդ, եղբարք, գիտեմ
զի անդիտութեամբ արարէք, որպէս և իշխանք
18 ձեր։ Այլ Աստուած որպէս յառաջագոյն պատ-
մեաց ի բերանոյ ամենայն մարգարէից զչարչարել
19 Քրիստոսի իւրոյ, նոյնպէս և կատարեաց։ Արդ
ապաշաւեցէք և դարձարուք ի ջնջել զմեղս ձեր
20 Որպէս զի եկեսցեն ժամանակք հանգստեան յեր-
սաց Տեառն, և առաքեսցէ զՅառաջագոյն նշա-
21 տեալն ձեզ, զՅիսուս Քրիստոս։ Զոր պարտ է
երկնից ընդունել մինչեւ ի ժամանակս ամենեցուն
Հաստատելոյ զորոց խօսեցաւ Աստուած ի բեր-
նոյ սրբոց իւրոց մարգարէից[1]։
22 Դ. Մովսէս ասաց [2]ցՀարան մեր՝, Թէ Մարգարէ
յարուսցէ ձեզ Տէր Աստուած ձեր յեղբարց ձե-
րոց իբրեւ զիս, նմա լուիջիք բաւ ամենայնի որ
23 ինչ և խօսեսցի առ ձեզ։ Եւ եղիցի ամենայն
անձն որ ոչ լուիցէ մարգարէին այնմիկ՝ սատա-
24 կեսցի ի ժողովրդենէն։ Եւ ամենայն մարգարէք որ

---

[1] Յոյն յաւելու, ի յաւիտենից [2] Յոհան գլ.ւ

ի Սամուելէ և այլ՝ խօսեցան և պատմեցի՛ն զա-
25 ւուրս զայսոսիկ։ Դուք էք որդիք մարգարէիցն և
ուխտին զոր ուխտեաց Աստուած ընդ հարսն մեր,
և ասէ ցԱբրահամ, Ի զաւակի քում օրհնեսցին
26 ամենայն ազգք երկրի։ Ձեզ նախ յարոյց Աստուած
զՈրդի իւր և առաքեաց զնա օրհնել զձեզ՝ ի դառ-
նալ ձեզ իւրաքանչիւր ի չարեաց ձերոց։

ԳԼ. Գ

1 Եւ մինչդեռ խօսէին նոքա ընդ ժողովրդեանն, հա-
սին ի վերայ նոցա [1]քահանայքն և իշխանք տաճարին
2 և սադուկեցիքն, Ցայրագնեալք վասն ուսուցանելոյ
նոցա զժողովուրդն և պատմելոյ Յիսուսիս զյարու-
3 թիւն մեռելոց։ Մխեցին ի նոսա զձեռս իւրեանց, և
եդին զնոսա ի բանտի մինչեւ ի վաղիւն, զի էր ընդ
4 երեկս։ Իսկ բազումք ի լսողաց բանին հաւատացին,
և եղեւ թիւ մարդկանն իբրեւ հազարաց հնգից։
5 Եւ եղեւ ի վաղիւ անդր ժողովել նոցա զիշխանսն
6 և զերիցունս և զդպիրսն յԵրուսաղէմ, Եւ զԱննա
քահանայապետ և զԿայիափա և զՅովհաննէս և
զԱղէքսանդրոս, և որք միանգամ էին յազգէ [2]քա-
7 հանայութեանն։ Եւ կացուցեալ զնոսա ի մէջ
հարցանէին, Որո՞վ զօրութեամբ կամ որո՞վ ա-
8 նուամբ արարէք դուք զայս։ Յայնժամ Պետրոս
լցեալ Հոգւով Սրբով ասէ ցնոսա, Իշխանք ժո-
9 ղովրդեան և երիցունք Իսրայելի, [3]Եթէ արժա՞ն
ինչ իցէ գտանել զմեզ՝ այսօր վասն երախտեաց

---

[1]Ոմն., քահանայապետքն [2]Ոմն., քահանայա-
պետութեանն [3]Յոյն., Եթէ գտանիցիմք

10 առն միոյ տկարի որով սա բժշկեցաւ, ցայտնի
լիցի ամենեցուն ձեզ և ամենայն ժողովրդեանդ
Իսրայելի, զի յանուն Յիսուսի Քրիստոսի Նա-
զովրեցւոյ զոր դուք խաչեցէք, զոր Աստուած յա-
րոյց ի մեռելոց, նովաւ սա կայ աւասիկ առաջի
11 ձեր ողջացեալ։ Նա է վէմն անարգեալ ի ձէնջ
12 շինողաց, որ եղեւ գլուխ անկեան. Եւ չիք այլով
իւիք փրկութիւն, զի և ոչ անուն այլ գոյ ի ներ-
քոյ երկնից տուեալ ի մարդիկ, որով արժան իցէ
կեալ մեզ։
13 Ե. Հայեցեալ ի համարձակութիւնն Պետրոսի և
Յովհաննու, և ի վերայ հասեալ թէ արք տգէտք
և առանց գպրութեան են, զարմանային, զի ճանա-
14 չէին զնոսա թէ ընդ Յիսուսի էին. Եւ զայրն եւս
տեսանէին զբժշկեալն զի կայր ընդ նոսա, և ոչինչ
15 կարէին տալ պատասխանի։ Եւ հրամայեալ նոցա
արտաքս քան զտտեանն ելանել, խորհէցան ընդ
16 միմեանս, Եւ ասեն, Զի՞նչ արասցուք արանցս այ-
սոցիկ, զի երեւելի նշան եղեւ ի ձեռն նոցա ամե-
նայն իսկ բնակչաց Երուսաղեմի յայտ է և ոչ կա-
17 րեմք ուրանալ։ Այլ զի մի՛ առաւել ճարակեսցի
ի ժողովուրդն, սպառնասցուք նոցա մի՛ եւս խօսել
18 յանուանն յայն մի՛ ումեք ի մարդկանէ։ Եւ կոչե-
ցեալ զնոսա պատուիրեցին ամենեւին մի՛ խօսել
19 և մի՛ ուսուցանել յանուն Յիսուսի։ Իսկ Պետրոս
և Յովհաննէս պատասխանի ետուն և ասեն ցնոսա,
Եթէ արժան իցէ առաջի Աստուծոյ ձեզ լսել ա-
20 ռաւել քան Աստուծոյ, ընտրեցէք։ Այլ մեք ոչ
21 կարեմք զոր տեսաքն և լուաք՝ չխօսել։ Նոքա
սպառնացեալ արձակեցին զնոսա, և ոչինչ գտեալ

թէ որպէս պատուհասեացեն զնոսա վասն ժողովրդեանն, զի ամենեքեան փառաւոր առնէին
22 զԱստուած վասն իրացն եղելոց։ Զի ամաց էր այրն աւելի քան զքառասունն, յորոյ վերայ եղեւ նշանս այս բժշկութեան։
23 Եւ անտի արձակեալ եկին առ իւրեանցան, և պատմեցին որչափ ինչ ասացին ցնոսա քահանայապետքն և երիցունքն։ Եւ նոցա լուեալ [1]ամբարձին զձայնս իւրեանց առ Աստուած և ասեն, Դու, Տէր [2]Աստուած, որ արարեր զերկինս և զերկիր և
25 զծով և զամենայն որ ի նոսա, Որ ի բերանոյ [2]Հոգւոյն Սրբոյ՝ Դաւթի ծառայի քո՝ [2]ի ձեռն Հոգւոյն Սրբոյ՝ ասացեր, Ջո՞ւմբ խառնեցան հեթանոսք, և
26 ժողովուրդք խորհեցան ի սնոտիս. Յանդիման եղեն թագաւորք երկրի և իշխանք ժողովեցան ի միասին
27 վասն Տեառն և վասն Օծելոյ նորա։ Ժողովեցան արդարեւ ի քաղաքիս յայսմիկ ի վերայ սրբոյ Որդւոյ քո Յիսուսի զոր օծեր՝ Հերովդէս և Պոնտիոս Փիղաւոս ազգօք և ժողովրդովք Իսրայելի,
28 առնել որչափ ձեռն քո և կամք յառաջագոյն սահմանեցին լինել։ Եւ արդ, Տէր, հայեաց ի սպառնալիս նոցա, և տուր ծառայից քոց ամենայն համարձակութեամբ խօսել զբանն քո.
30 ի ձգել զձեռն քո ի բժշկութիւն, և նշանս և արուեստս լինել առնւամբն սրբոյ Որդւոյ քո Յիսուսի։ Եւ մինչ կային նոքա յաղօթս, շարժեցաւ տեղին յորում էին ժողովեալ, և լցան ամենեքեան Հոգւով Սրբով, և խօսէին զբանն Աստուծոյ համարձակութեամբ։

---

[1]Յոյն, ամբարձին միաբան [2]Յոյն պակաս

32 Զ. Եւ բազմութեան հաւատացելոցն էր սիրտ
և անձն մի. և ոչ ոք ի նոցանէ ասէր զինչից իւրոց
թէ իւր իցէ, այլ էր նոցա ամենայն ինչ հասա-
33 րակաց։ Եւ զօրութեամբ բազմաւ տային վկայու-
թիւն առաքեալքն զյարութեանն Տեառն Յիսուսի
[1]Քրիստոսի. և շնորհք մեծամեծք էին ի վերայ ա-
34 մենեցուն նոցա։ Եւ ոչ ոք կարօտէր ի նոսա, զի
որ միանգամ տեարք էին գեղից կամ տպարանից
35 վաճառէին և բերէին զգինս վաճառելոցն, Դնէին
առ ոտս առաքելոցն. և բաշխէին իւրաքանչիւր որ-
36 պէս ումեք պիտոյ ինչ լինէր։ [2]Յովսէփ որ կոչե-
ցաւն Բառնաբաս յառաքելոց անուն, (որ թարգ-
մանի որդի մխիթարութեան,) Ղեւտացի, յազգէ
37 Կիպրացի, Էր նորա գեղ, վաճառեաց և երեր
գգինան, եդ առ ոտս առաքելոցն։

ԳԼ. Ե

1 Իսկ այր ոմն Անանիա անուն հանդերձ կնաւ ի-
2 րով Սափիրաւ վաճառեաց ագարակ. Եւ խորհեաց
ի գնոց անտի՝ գիտելով և կնոջն, և եբեր մասն
3 ինչ եդ առ ոտս առաքելոցն։ Ասէ Պետրոս, Ա-
նանիա, ընդէ՞ր եղիցէ Սատանայ զսիրտ քո առել քեզ
4 Հոգւոյն Սրբոյ, և խորհել ի գնոց գեղջն. Ո՞չ ա-
պաքէն մինչ կայրն՝ քո էր, և ի վաճառեալն՝ ընդ
քո իշխանութեամբ էր. զի՞ է զի եդիր ի սրտի
քումդ գիրս զայս. ոչ առեցեր մարդկան, այլ Ա-
5 ստուծոյ. Եւ լուեալ Անանիա զբանս զայսոսիկ
անկաւ և եհան զոգի. և եղեւ ահ մեծ ի վերայ

---

[1]Յոհան պոլոե [2]Ոհան, Յովսէս

6 ամենեցուն որ լսանն զայն։ Յոան կացին երիտա-
սարդքն և ամփոփեցին զնա, և տարան թաղեցին։
7 Եւ եղեւ իբրեւ ժամք երեք անցին, և կին նորա
8 ոչ գիտէր զինչ եղեալն էր, եմուտ ի ներքս։ Պա-
տասխանի ետ նմա Պետրոս և ասէ, Ասա դու ինձ
թէ այնչափ գնոց զգեղն վաճառեցէք։ Եւ նա ասէ,
9 Այո, այնչափ։ Եւ ասէ ցնա Պետրոս, Ընդէ՞ է որ
միաբանեցէք դուք փորձել զՀոգին Տեառն. ահա
ոտքն որ թաղեցին զայրն քո ի դրանն՝ հանցեն և
10 զքեզ։ Եւ անկաւ անդէն առ ոտս նորա և եհան
զոգի. մտին երիտասարդքն, գտին զնա մեռեալ
11 և հանին թաղեցին առ առն իւրում։ Եւ եղեւ
երկեւղ մեծ ի վերայ ամենայն եկեղեցւոյն, և ի
վերայ ամենեցուն որ լսանն զայն։
12 Է. Եւ ի ձեռս առաքելոցն լինէին նշանք և ա-
րուեստք բազումք ի ժողովրդեանն. և էին միաբան
13 ամենեքեան ի սրահին Սողոմոնի։ Եւ յայլոց ան-
ձի ոչ ոք իշխէր մերձենալ առ նոսա, այլ յար-
14 գէր զնոսա ժողովուրդն։ Եւ առաւել եւս յաւե-
լուին հաւատացեալքն ի Տէր, բազմութիւն արանց
15 և կանանց. Մինչեւ ի հրապարական հանել զհի-
ւանդս, և դնել պատգարակօք և մահճօք իւրեանց,
զի ընդ անցանելն Պետրոսի՝ գոնէ հովանի նորա
16 հասցէ ումեք ի նոցանէ։ Եւ ժողովէր բազմութիւնն
շուրջ ի քաղաքացն անտի Երուսաղէմ, բերելին
զհիւանդս և զնեղեալս յայլոց պղծոց, որք և
բժշկէին ամենեքեան։
17 Յարուցեալ քահանայապետն և ամենեքին որ
ընդ նմա, աղանդ սադուկեցւոց, լցան նախանձու։
18 Եւ արկին զձեռս յառաքեալսն և եդին զնոսա

19 [1]Հրապարակաւ ի բանտի՝՝։ Ապա հրեշտակ Տեառն գիշերի եբաց զդուռս բանտին, և հանեալ զնոսա՝
20 ասէ, Գնացէք կացէք ի տաճարին, և խօսեցարուք ընդ ժողովրդեանն զամենայն պատգամս կենացս
21 այսոցիկ։ Եւ իբրեւ լուան, մտին ընդ առաւօտն ի տաճարն և ուսուցանէին։ Եկն քահանայապետն և որ ընդ նմա, կոչեցին միաբան զաւետեանն և զա-
մենայն ծերակոյտ որդւոցն Իսրայելի, և առաքե-
22 ցին ի բանտն ածել զնոսա։ Եւ իբրեւ եկին սպա-
սաւորքն, ոչ գտին զնոսա ի բանտին. դարձեալ
23 անդրէն պատմեցին։ Եւ ասեն թէ Զբանտն գտաք փակեալ ամենայն զգուշութեամբ, և զպահ-
պանսն՝ զի կային առ դրանն, բացաք և ի ներքս
24 զոք ոչ գտաք։ Իբրեւ լուան զբանս զայս [2]իշխանք տաճարին և քահանայապետքն, հիանային վասն
25 նոցա, թէ զի՞նչ արդեւք լինիցի այն։ Եւ եկն ոմն պատմեաց նոցա թէ Ահա արքն զորս եդիք ի բան-
տին՝ կան ի տաճարին, և ուսուցանեն զժողովուրդն։
26 Յայնժամ երթեալ իշխանն սպասաւորօքն հան-
դերձ՝ ած զնոսա ոչ բռնութեամբ, քանզի երկնչէին
27 ի ժողովրդենէն զի մի՛ քարկոծեսցին։ Եւ ածեալ զնոսա՝ կացուցին յատենի. եհարց զնոսա քահա-
28 նայապետն եւ ասէ, Ո՞չ պատուիրելով պատուի-
րեցաք ձեզ մի՛ ուսուցանել յանուն յայն, և արդ ահաւասիկ լցէք զԵրուսաղէմ ուսմամբդ ձե-
րով, և կամիք ածել ի վերայ մեր զարիւն զառն զայնորիկ։

---

[1] Յ-ՅՀ, ի հասարակաց բանտի [2] Ո՛ՀՃԽ, քահանայն և իշխանն

29 Պատասխանի ետ Պետրոս և առաքեալքն և ա-
ւետն, Հնազանդել պարտ է Աստուծոյ առաւել
30 քան մարդկան։ Աստուած հարցն մերոց յարոյց
զՅիսուս զոր դուքն սպանէք կախեալ զփայտէ։
31 Զնա Աստուած Առաջնորդ և փրկիչ բարձրացոյց
աջովն իւրով տալ ապաշխարութիւն Իսրայելի և
32 թողութիւն մեղաց։ Եւ մեք եմք նորա վկայք բա-
նից այսոցիկ, և Հոգին Սուրբ զոր ետ Աստուած
33 հնազանդելոց իւրոց։ Եւ նոքա լուեալ, ա-
ռաստանային և խորհէին սպանանել զնոսա։
34 ԲԱ. Յարուցեալ ոմն ի մէջ ատենին, փարիսե-
ցի, որում անուն էր Գամաղիէլ, օրէնսուսոյց,
պատուական ամենայն ժողովրդեանն, հրամայեաց
35 սակաւիկ մի [1]զարան արտաքս առնել։ Եւ ասէ ցնո-
սա, Արք Իսրայելացիք, հայեցարուք ի ձեզ վասն
36 արանցս այսոցիկ զինչ արժան իցէ գործել։ Յառաջ
քան զաւուրս զայսոսիկ յարեաւ Թեւդաս ասել
զանձնէ թէ իցէ ոմն. որ անկան արք թուով
իբրեւ չորեքհարեւր, որ սպանաւ, և ամենեքեան
որ միաբանեալ էին ընդ նմա՝ քակտեցան և եղեն
37 յոչինչ։ Յետ նորա յարեաւ Յուդաս Գալիլեացի
յաւուրս աշխարհագրին, և ապստամբեցոյց ժողո-
վուրդ բազում զկնի իւր. և նա կորեաւ, և ամե-
38 նեքեան որ նմանն հաւանեալ էին ցրուեցան։ Եւ
զարդիս ասեմ ձեզ, Ի բաց կացէք յարանցդ յայդ-
ցանէ և թոյլ տուք դոցա, զի թէ ի մարդկանէ
իցէ խորհուրդդ այդ կամ գործդ, քակտեսցի.
39 Ապա թէ յԱստուծոյ է, ոչ կարէք քակտել

---

[1] Ոմն, զառաքեալն

զդոսա, գուցէ և ասասուածամարտք գտանիցիք։
40 Հաւանեցան նմա, և կոչեցեալ զառաքեալսն գան
Հարին, և պատուիրեցին մի՛ եւս խօսել յանուն
41 Յիսուսի, և արձակեցին զնոսա։ Եւ նոքա գնացին
խնդալով յերեսաց առեներն, զի վասն [1]անուանն
42 արժանի եղեն անարգելոյ։ Եւ զամենայն օր ի տա-
ճարին և առանին ոչ դադարէին ուսուցանել և
աւետարանել զՅիսուս Քրիստոս։

ԳԼ. Զ

4 Եւ յաւուրսն յայնոսիկ ի բազմանալ աշակեր-
տացն եղեւ արտունջ Յունացն առ Հեբրայեցիսն,
զի արհամարհեալ լինէին ի պաշտամանն հանա-
2 պազորդի սպրիք նոցա։ Կոչեցին երկոտասանքն
զբազմութիւն աշակերտացն և ասեն, Ոչ է հաճոյ
մեզ թողուլ զբանն Աստուծոյ և պաշտել զե-
3 զանս։ Ընտրեցէք, եղբարք, վկայեալս ի ձէնջ արս
[2]եւթն, զորս կացուցցուք ի վերայ պիտոյիցս այ-
4 սոցիկ։ Եւ մեք աղօթից և պաշտամանն բանին հպա-
5 տակ լիցուք։ Եւ հաճոյ թուեցաւ բանն առաջի
ամենայն բազմութեանն. և ընտրեցին զՍտեփա-
նոս, այր լի հաւատով և Հոգւով Սրբով, և զՓի-
լիպպոս և զՊրոքորոն և զՆիկանովրա և զՏիմովնա և
6 զՊարմենաս և զՆիկողայոս, զեկն Անտիոքացի. զորս
կացուցին առաջի առաքելոցն, և աղօթս արարեալ
7 եդին ի վերայ նոցա զձեռս։ Եւ բանն Աստուծոյ

---

[1] Ոմանք, անուան Տեառն, այլք՝ անուան նորա
[2] Բազումք, եւթն, լի Հոգւով Սրբով և իմաստու-
թեամբ

աճէը, և բազմանայը թիւ աշակերտացն յոյժ յԵրուսաղէմ. և բազում ժողովք ի քահանայիցն անուային հաւատոցն։

8 ԲԲ. Ստեփանոս, այր լի [1]շնորհօք և զօրութեամբ, առնէր արուեստս և նշանս մեծամեծս ի
9 ժողովրդեանն։ Յարեան ոմանք ի ժողովրդենէն, որ կոչէր [2]Լիբերտացւոց և Կիւրենացւոց և Աղեքսանդրացւոց և որ ի Կիլիկեցւոց և յԱսիա, վիճել ընդ
10 Ստեփանոսի. Եւ ոչ կարէին զդէմ ունել զիմաստութեանն և զՀոգւոյն որով խօսէը։ Յայնժամ հրապուրեցին արս ոմանս ասել թէ Լուաք զդորա խօսել բանս հայհոյութեան ի Մովսէս և յԱս-
12 տուածն։ Եւ խռովեցին զժողովուրդն և զերիցունսն և զդպիրսն. և հասեալ ի վերայ յափշտակեցին
13 զնա և ածին յատեանն։ Եւ կացուցին վկայս սուտս որ ասէին, Այրս այս ոչ դադարէ խօսել բանս հայհոյութեան զտեղւոյն սրբոյ և զօրինացն։
14 Լուաք ի դմանէ զի ասէր թէ Յիսուս Նազովրեցի, նա քակեսցէ զտեղիս զայս, և փոխեսցէ զօրէնս
15 զոր ետ մեզ Մովսէս։ Եւ հայեցեալ ի նա ամենեքեան որ նստէին յատենին, տեսին զերեսս նորա իբրեւ զերեսս հրեշտակի։

ԳԼ. Է

1 **Ա**սէ քահանայապետն՝ եթէ Արդարեւ այդ այդպէս իցէ։ Եւ նա ասէ, Արք եղբարք և հարք, լուարուք ինձ. Աստուած փառաց երեւեցաւ հօր մերում Աբրահամու մինչդեռ ի Միջագետս էր,

---

[1]Որով, հաւատով [2]Յոմն, Լիբերտինացւոց

մինչեւ [1]բնակեցուցեալ էր զնա՝ ի խառան. և
3 ասէ ցնա, ել յերկրէ քումմէ և յազգէ քումմէ,
4 և եկ յերկիր զոր ցուցից քեզ։ Յայնժամ ելեալ
յերկրէն Քաղդէացւոց բնակեցաւ ի խառան և
անտի յետ մեռանելոյ հօր նորա՝ փոխեաց պան-
դխտեցոյց զնա յերկիրս յայսմիկ, յորում դուք
5 այժմ բնակեալ էք։ Եւ ոչ ետ նմա ժառանգու-
թիւն ի սմա և ոչ քայլ մի ոտին. և խոստացաւ
տալ նմա զսա ի բնակութիւն, և զաւակի նորա
6 յետ նորա, մինչ ոչ գոյր նորա որդի։ Խօսեցաւ
Աստուած այսպէս, թէ եղիցի զաւակ նորա պան-
դուխտ յօտար երկրի, և ծառայեցուսցեն զնա և
7 չարչարեսցեն սմա չորեքհարիւր։ Եւ զազգն որում
ծառայեսցեն՝ դատեցայց ես, ասէ Աստուած, և
յետ այսորիկ ելցեն և պաշտեսցեն զիս ի տեղւոջս
8 յայսմիկ։ Եւ ետ նմա ուխտ թլփատութեան. և
ապա ծնաւ զԻսահակ, և թլփատեաց զնա յաւուր
ութերորդի. և Իսահակ՝ զՅակովբ, և Յակովբ՝
9 զերկոտասանն նահապետսն։ Եւ նահապետքն նա-
խանձեալ ընդ Յովսեփայ՝ վաճառեցին Եգիպտոս.
10 և էր Աստուած ընդ նմա, եւ փրկեաց զնա յամե-
նայն նեղութեանց նորա, և ետ նմա շնորհս և ի-
մաստութիւն առաջի փարաւոնի արքային եգիպ-
տացւոց. և կացոյց զնա իշխան եգիպտացւոցն և
11 ամենայն տան նորա։ Եւ եկն սով յամենայն եր-
կիրն եգիպտոսի և ի քանան, և էր նեղութիւն
12 մեծ, և ոչ գտանէին կերակուր հարքն մեր։ Եւ
լուեալ Յակովբայ թէ գտանի կերակուր յեգիպ-

---

[1] Յոյն, բնակեալ էր նորա

13 առ, առաքեաց զՀարան մեր յառաջագոյն։ Եւ
յերկրորդումն ետ ծանօթ Յովսէփ եղբարց իւրոց.
14 և յայտնի եղեւ փարաւոնի ազգն Նորա։ Առա-
քեաց Յովսէփ և կոչեաց զՅակովբ զՀայր իւր և
զամենայն ազգատոհմն, ոգիս եւթանասուն և հինգ։
15 Եւ էջ Յակովբ յԵգիպտոս, և վախճանեցաւ ինքն
16 և Հարքն մեր։ Եւ փոխեցան ի Սիւքեմ և եդան
յայրին զոր ստացաւ Աբրահամ գնոց արծաթով
17 յորդւոցն Եմմորայ ի Սիւքեմ։ Իրրեւ մերձեցաւ
ժամանակ աւետեացն զոր խոստացաւ Աստուած
Աբրահամու, աճեաց ժողովուրդն և բազմացաւ
18 յԵգիպտոս. Մինչեւ յարեաւ այլ թագաւոր յԵ-
19 գիպտոս որ ոչ ճանաչէր զՅովսէփ։ Նա հնարեցաւ
ազգին մերում, և չարչարեաց զՀարան մեր առնել
20 ընկեցիկ զմանկունս նոցա զի մի՛ ապրեացին։ Յո-
րում ժամանակի ծնաւ և Մովսէս, և էր կայտառ
առաջի Աստուծոյ, որ և սնաւ ի տան Հօր իւրոյ
21 ամիսս երիս։ Եւ յընկեցիկն առնել զնա՝ եբարձ
զնա դուստրն փարաւոնի, և սնոյց զնա իւր յոր-
22 դեգիր։ Եւ վարժեցաւ Մովսէս ամենայն իմաս-
տութեամբ Եգիպտացւոցն, և էր զօրաւոր բանիւք
23 և գործովք իւրովք։ Իրրեւ լցաւ Նորա քառասնա-
մեայ ժամանակ, անկաւ ի սիրտ Նորա շրջել զեղ-
24 բարբք իւրովք, զորդւովքն Իսրայելի։ Եւ տեսեալ
զոմն զրկեալ՝ զչարեցաւ, և խնդրեաց զվրէժ զրկե-
25 լոյն՝ ապանեալ զեգիպտացին։ Ջմտաւ ածէր թէ
իմացին եղբարք Նորա, զի Աստուած ի ձեռն Նո-
րա տալոց էր զփրկութիւն նոցա, և նոքա ոչ

---

[1] Բ—ղ—ժ, Յովսեփայ

26 իմացան։ Եւ ի վաղիւ անդր երեւեցաւ նոցա մինչ-
դեռ մարտնչէինն, և վարեաց զնոսա ի խաղաղու-
թիւն, ասէ, Արք, եղբարք էք, ընդէ՞ր զրկէք զի-
27 մեանս։ Իսկ որ զրկէր զընկերն՝ մերժեաց զնա և
ասէ, Ո՞ կացոյց զքեզ իշխան և դատաւոր ի վե-
28 րայ մեր։ Միթէ սպանանե՞լ կամիցիս դու զոր օրի-
29 նակ սպաներ երէկ զեգիպտացին։ Եւ փախեաւ
Մովսէս ի բանիցս յայսցանէ, և եղեւ պանդուխտ
յերկրին Մադիամու, ուր ծնաւ երկուս որդիս։
30 ԲԳ. Եւ ի կատարել ամացն քառասանից՝ երեւե-
ցաւ նմա յանապատի լերինն Սինայ հրեշտակ
31 Տեառն ի բոց հրոյ մորենւոյն։ Եւ Մովսիսի տե-
սեալ՝ զարմացաւ ընդ տեսիլն, և ի մատչելն նորա
32 նշմարել՝ եղեւ ձայն Տեառն, Ես եմ Աստուած
հարց քոց, Աստուած Աբրահամու և Իսահակայ
և Յակովբայ՝. և զահի հարեալ Մովսէս՝ ոչ իշխէր
33 հայել։ Եւ ասէ ցնա Տէր, Լոյծ զկօշիկս ոտից քոց,
զի տեղիդ յորում դու դուդ կացեր՝ երկիր սուրբ է։
34 Տեսանելով տեսի զչարչարանս ժողովրդեան իմոյ
որ յԵգիպտոս, և լուայ հեծութեան նոցա և իջի
փրկել զնոսա. և արդ եկ առաքեցից զքեզ յԵ-
35 գիպտոս։ Զայն Մովսէս զոր ուրացան և ասէին,
Ո՞ կացոյց զքեզ իշխան և դատաւոր ի վերայ մեր,
զնա Աստուած իշխան և փրկիչ առաքեաց ի ձեռն
36 հրեշտակին որ երեւեցաւ նմա ի մորենւոյն։ Նա
եհան զնոսա՝ արարեալ նշանս և սքանչեսս յերկ-
րին Եգիպտացւոց և ի կարմիր ծովուն և յանա-
37 պատին ամս քառասուն։ Այս Մովսէս է որ ասաց

---

[1] Ոմանք, Աստուած Իսահակայ և Աստուած Յակովբայ

ցորդիան Իսրայելի, Մարգարէ յարուսցէ ձեզ Տէր
Աստուած ձեր յեղբարց ձերոց իբրեւ զիս, նմա
38 լուիջիք: Սա է որ եղեւ յեկեղեցւոջն յանապատին
ընդ հրեշտակին, որ խօսեցաւ ընդ նմա ի լերինն
Սինայ և ընդ հարսն մեր, որ ընկալաւ պատգամս
39 կենդանիս տալ մեզ: Որում ոչ կամեցան հնա-
զանդ լինել հարքն մեր, այլ մերժեցին և դար-
40 ձան սրտիւք իւրեանց յԵգիպտոս: Եւ ասեն ցԱ-
հարովն, Արա մեզ աստուածս, որ երթայցեն ա-
ռաջի մեր. զի Մովսէսն այն որ եհան զմեզ յերկ-
41 րէն Եգիպտացւոց՝ ոչ գիտեմք զի՛ եղեւ նմա: Եւ
արարին յաւուրսն յայնոսիկ որթ, և մատուցին
զոհս կռոց, և ուրախ լինէին ի գործս ձեռաց իւր-
42 եանց: Դարձոյց Աստուած և մատնեաց զնոսա ի
պաշտօն զօրութեան երկնից, որպէս և գրեալ է ի
գիրս մարգարէից, Միթէ զոհս և պատարա՞գս մա-
տուցէք ինձ զամս քառասուն յանապատին, տունդ
43 Իսրայելի. Եւ առէք զվրանն Մողոքայ և զաստղն
[1]աստուածոյն Չռեմփայ, զպատկերսն՝ զոր արարէք
երկիր պագանել նոցա. և փոխեցից զձեզ յայն
44 կողմն Բաբելացւոց: Խորանն վկայութեան էր ընդ
հարսն մեր յանապատին. որպէս հրամայեաց որ
խօսէրն ընդ Մովսիսի, առնել զայն ըստ օրինակին
45 զոր եառեալ: Զոր և ընկալեալ բերէին հարքն մեր
հանդերձ Յեսուայ ի վիճակ ազգացն, զորս մեր-
ժեաց Աստուած յերեսաց հարցն մերոց մինչեւ
46 յաւուրս Դաւթի, Որ եգիտ շնորհս առաջի Ա-
ստուծոյ, և խնդրեաց գտանել զյարկս Աստուծոյ

---

[1]Ոմանք, աստուածոյն ձերոյ

47 Յակովբայ։ Նա և Սողոմոնէ շինեաց նմա տուն։
48 Այլ ոչ եթէ Բարձրեալն ի ձեռագործ տաճարս
49 բնակէ. այլ որպէս մարգարէն ասէ, Երկինք ա-
թոռ իմ են, և երկիր՝ պատուանդան ոտից իմոց.
որպիսի՞ տուն [1]շինեցէք ինձ, ասէ Տէր, կամ ո՞ր
50 տեղի հանգստեան իմոյ. Ո՞չ ձեռն իմ արար զայս
51 ամենայն։ Խստասպարանոցք և անթլփատք սրտիւք
և ականջօք, դուք հանապազ Հոգւոյն Սրբոյ հա-
52 կառակ կայք, որպէս հարքն ձեր՝ և դուք։ Զո՞ր
մարգարէից ոչ հալածեցին հարքն ձեր, և սպա-
նին զայնոսիկ որ յառաջագոյն պատմեցին վասն
գալստեան Արդարոյն, որոյ դուք այժմ մատնիչք
53 և սպանողք եղերուք։ Որք առէք զօրէնս ի հրա-
մանս հրեշտակաց, և ոչ պահեցէք։
54 Եւ լուեալ զայս զայրանային ի սիրտս իւրեանց,
55 և կրճէին զատամունս ի վերայ նորա։ Եւ նա էր
լի Հոգւով Սրբով, հայեցաւ յերկինս և ետես
զփառս Աստուծոյ և զՅիսուս զի կայր ընդ աջմէ
Աստուծոյ, և ասէ, Ահա տեսանեմ զերկինս բա-
ցեալ, և զՈրդի մարդոյ զի կայ ընդ աջմէ Աստու-
56 ծոյ։ Աղաղակեալ ի ձայն մեծ՝ խցին զականջս
իւրեանց, և դիմեցին առ հասարակ ի վերայ նո-
57 րա։ Եւ հանեալ արտաքոյ քաղաքին՝ քարկոծէին.
և վկայքն դնէին զձորձս իւրեանց առ ոտս երիտա-
58 սարդի միոջ որ կոչէր Սաւուղ։ Եւ քարկոծ առ-
նէին զՍտեփանոս, որ կարդայր և ասէր, Տէր Յի-
59 սուս, ընկալ զոգի իմ։ Եդ ծունր, աղաղակեաց
ի ձայն բարձր, Տէր, մի՛ համարիր դոցա զայս

---

[1] Յ-ՆՆ, շինիցէք

մեղս։ Եւ զայս իրրեւ ասաց, ննջեաց. և Սաւղոս էր համակից սպանման նորա։

ԳԼ. Ը

1 Եւ եղեւ յաւուր յայնմիկ հալածումն մեծ ի վերայ եկեղեցւոյն Երուսաղէմ. և ամենեքեան ցրուեցան ի գեղս Հրէաստանի և Սամարիայ բաց յառաքելոցն։ 2 Եւ բարձին զՍտեփանոս արք երկիւղածք, և արարին կոծ մեծ ի վերայ նորա։ 3 Բդ. Բայց Սաւղոս ջնաւակար էր եկեղեցւոյն, ի տունս տունս մտանէր, քարշեալ զարս և զկանայս՝ մատնէր ի բանտ։ 4 Եւ սփռեալքն շրջէին, աւետարանէին զբանն։ 5 Իսկ Փիլիպպոս իջեալ ի քաղաքն Սամարացւոց՝ քարոզէր նոցա զՔրիստոս։ 6 Ունկն դնէին ժողովուրդքն բանիցն Փիլիպպոսի միաբան՝ ի լսել նոցա և ի տեսանել զնշանսն զոր առնէր։ 7 Քանզի բազումք որ ունէին զայս պիղծս՝ աղաղակէին ի ձայն մեծ և ելանէին։ 8 Եւ բազում անդամալոյծք և կաղք բժշկէին. 9 Եւ եղեւ ուրախութիւն մեծ ի քաղաքին յայնմիկ։ Այր ոմն Սիմոն անուն յառաջագոյն էր ի քաղաքին, մոգէր և ապշեցուցանէր զազգն Սամարացւոց, ասել զանձն թէ իցէ մեծ ոմն. 10 Որ հայէին ամենեքեան ի փոքուէ մինչեւ ի մեծամեծս, և ասէին, Սա է զօրութիւն Աստուծոյ որ կոչի մեծ։ 11 Հայէին ի նա վասն բազում ժամանակաց մոգութեամբքն ապշեցուցանելոյ զնոսա։ 12 Բայց յորժամ հաւատացին Փիլիպպոսի որ աւետարանէր վասն արքայութեանն Աստուծոյ և անուանն Յիսուսի Քրիստոսի, մկրտէին ամենեքեան արք և

13 կանայք՝ Այլ և ինքն Սիմոնն հաւատաց, և մկրտեալ
կանխէր առ Փիլիպպոս. տեսեալ զնշանսն և զմե-
14 ծամեծ զօրութիւնսն որք լինէին՝ զարմանայր։ Իբրեւ
լուան որ յԵրուսաղէմ առաքեալքն էին թէ և ի
Սամարիա ընկալան զբանն Աստուծոյ, առաքեցին առ
15 նոսա զՊետրոս և զՅովհաննէս. Որք իջեալ կացին
յաղօթս ի վերայ նոցա, որպէս զի առցեն զՀոգին
16 Սուրբ. Չի ցայնժամ չեւ եւս էր և ոչ ի վերայ միոյ
նոցա հասեալ, բայց միայն մկրտեալք էին յանուն
17 Տեառն Յիսուսի։ Յայնժամ եդին զձեռս ի վերայ
18 նոցա, և առնուին Հոգի Սուրբ։ Տեսեալ Սիմոնի
թէ ձեռս ի վերայ դնելով առաքելոցն՝ տուեալ լինի
19 Հոգին Սուրբ, մատոյց նոցա ինչս և ասէ, Տուք և
ինձ զիշխանութիւնս զայս, զի յոյր վերայ դնիցեմ
20 զձեռս՝ առցէ Հոգի Սուրբ։ Եւ Պետրոս ասէ ցնա,
Արծաթդ քո ընդ քեզ լիցի ի կորուստ, զի զպար-
21 գեւան Աստուծոյ համարեցար ընչիւք առանալ։ Ոչ
գոյ քեզ մասն և վիճակ ի բանիդ յայդմիկ, քանզի
22 սիրտ քո ոչ է ուղիղ առաջի Աստուծոյ։ Ապաշ-
ւեաց դու ի չարեացդ քոց յայդցանէ, և աղաչեա
զՏէր, թերեւս թողութիւն լիցի քեզ ի մեղմէ
23 խորհրդոց սրտի քո։ Քանզի ի դառնութիւն մաղձի
24 և ի կնճիռն անիրաւութեան տեսանեմ զքեզ։ Պա-
տասխանի ետ Սիմոնն և ասէ, Աղաչեցէք դուք վասն
իմ զՏէր, զի մի՛ ինչ եկեսցէ ի վերայ իմ յորոց
25 դուքդ ասացէք։ Եւ նոցա եդեալ վկայութիւն՝ խո-
սեցան զբանն Աստուծոյ, և դարձան յԵրուսաղէմ.
և ի բազում գեղս Սամարացւոցն աւետարանէին։
26 ԲԵ. Հրեշտակ Տեառն խօսեցաւ առ Փիլիպպոս
և ասէ, Արի և գնա դու ի կողմն հարաւոյ ընդ

ճանապարհ որ իջանէ յԵրուսաղեմ ի Գազա, վի
27 այս է անապատ: Եւ յարեաւ գնաց. և ահաւա-
սիկ այր մի Եթէովպացի, ներքինի հզօր Կանդա-
կայ թիկնոջ Եթէովպացւոց, որ էր ի վերայ ամե-
նայն գանձուց նորա. որ եկեալ էր երկիր պագա-
28 նել յԵրուսաղեմ. Եւ անդրէն դարձեալ և նստեալ
ի կառս իւրում՝ ընթեռնոյր զմարգարէն Եսայի:
29 Ասէ Հոգին ցփիլիպպոս, Մատիր և յարեաց ի
30 կառսդ յայդոսիկ: Եւ ընթացեալ փիլիպպոս՝ լսէր
զի ընթեռնոյր զԵսայի մարգարէ. և ասէ, Գիտի-
31 ցե՞ս արդեւք զոր ընթեռնուցուսդ: Եւ նա ասէ,
Զիա՞րդ կարիցեմ, եթէ ոչ ոք առաջնորդեսցէ ինձ.
և աղաչեաց զփիլիպպոս ելանել նստել ընդ նմա:
32 Եւ գլուխ գրոցն զոր ընթեռնոյր՝ էր այս. Իբրեւ
զոչխար ի սպանդ վարեցաւ, և իբրեւ զորոջ առա-
ջի կտրչի իւրոյ անմռունչ՝ այնպէս ոչ բանայ զբե-
33 րան իւր: Ի խոնարհութեան նորա դատաստան նո-
րա բարձաւ, և զազգատոհմ նորա ո՞ պատմեսցէ,
34 զի բառնան յերկրէ կեանք նորա: Պատասխանի
եւ ներքինին փիլիպպոսի և ասէ, Աղաչեմ զքեզ,
վասն ո՞յր ասէ մարգարէն զայս, վասն ի՞ւր եթէ
35 վասն այլոյ ուրուք: Եբաց փիլիպպոս զբերան իւր,
և սկսեալ ի գրոցս յայսցանէ՝ աւետարանեաց նմա
36 զՅիսուս: Իբրեւ երթային զճանապարհայն, եկին
ի ջուր ինչ, և ասէ ներքինին, Ահաւասիկ ջուր,
37 զի՞նչ արգելու զիս ի մկրտելոյ: [1]Եւ ասէ ցնա,
եթէ հաւատաս բովորով սրտիւ քով, մկրթի է:
Պատասխանի եւ և ասէ, Հաւատամ եթէ Յիսուս

---

[1]Այս համար պակաս է Բազմա

38 Քրիստոս է Որդի Աստուծոյ:" Եւ հրամայեաց կա-
ցուցանել կառան. և իջին երկոքեան ի ջուրն, փի-
39 լիպպոս և ներքինին, և մկրտեաց զնա: Եւ երբեւ
ելին ի ջրոյ անտի, [1]Հոգին Սուրբ եկն ի վերայ ներ-
քինւոյն, և հրեշտակ Տեառն յափշտակեաց" զփիլիպ-
պոս, և ոչ եւս տեես զնա ներքինին, և գնայր զճա-
40 նապարհ իւր ուրախութեամբ: Բայց փիլիպպոս
գտաւ յԱզովտոս. և շրջեալ աւետարանէր ամե-
նայն քաղաքացն մինչեւ ի գալ նորա ի Կեսարիա:

Գլ. Թ

1 ԲՋ. Իսկ Սաւղոս տակաւին [2]լցեալ սպառնա-
լեօք և սպանմամբ աշակերտացն Տեառն", մատու-
2 ցեալ առ քահանայապետն՝ խնդրեաց ի նմանէ
թուղթս ի Դամասկոս առ ժողովուրդսն. որպէս
թէ զոք գտցէ զայնր ճանապարհաւ, արս կամ
3 կանայս, կապեալսածցէ յԵրուսաղէմ: Եւ ընդ
երթալն նորա՝ եղեւ մերձենալ ի Դամասկոս. յան-
կարծակի շուրջ զնովաւ փայլատակեաց լոյս յերկ-
4 նից: Եւ անկեալ յերկիր՝ լուաւ բարբառ որ ասէր
5 ցնա, Սաւուղ, Սաւուղ, ընդ՞ հալածես դու: Եւ
ասէ, Ո՞վ ես, Տէր: Եւ նա ասէ, Ես եմ Յիսուս
6 զոր դուն հալածես. [3]Այլ յոտն կաց և մտա՛ ի

---

[1]Բ-ղ-մ, Հոգի Տեառն յափշտակեաց

[2]Յ-ղ-ն, ընչեալ սպառնալիս և սպանումն յաշա-
կերտսն Տեառն [3]Ո՛մն յ-ե-ղ-ն, խիստ է քեզ
ընդդէմ խթանի սպանել: (6) Եւ զարհուրեալ և
անշշունչ լեալ՝ ասաց, Տէր, ընչ՞ կամիս առնել
ինձ: Եւ ասէ ցնա Տէր,

քաղաքդ, և պատմեացի քեզ զինչ պարտ իցէ առ-
7 նել: Իսկ արքն որ ընդ նմայն երթային, կային
անշշունչ, զձայնն միայն լսէին, բայց տեսանէին և
8 ոչ ինչ: Յարեաւ Սաւղոս յերկրէ անտի, և աչօք
բացօք ոչ զոք տեսանէր. զձեռանէ առեալ նորա՝
9 մուծին ի Դամասկոս: Եւ էր անդ աւուրս երիս և
ոչ տեսանէր. և ոչ եկեր և ոչ արբ:
10 Եւ էր ումն աշակերտ ի Դամասկոս Անանիա ա-
նուն. ասէ ցնա Տէր ի տեսլեան, Անանիա: Եւ նա
11 ասէ, Ահաւասիկ եմ, Տէր: Եւ ասէ ցնա Տէր,
Յոտն կաց և գնա ընդ փողոցն որ կոչի Ուղիղ, և
խնդրեացես յապարանան Յուդայ Սաւղոս անուն
12 զՏարսոնացի. զի կայ դեռ յաղօթս: Եւետես ի
տեսլեան այր մի Անանիա անուն, մտեալ և եդեալ
13 ի վերայ նորա զձեռն, որպէս զի տեսցէ: Պատաս-
խանի ետ Անանիա, Տէր, լուայ ի բազմաց վասն
առնն այնորիկ, որչափ արար չարիս սրբոց քոց
14 յԵրուսաղէմ. Եւ աստ ունի իշխանութիւն ի քա-
հանայապետէն, կապել զամենեսեան որ կարդան
15 զանուն քո: Ասէ ցնա Տէր, Երթ դու, զի անօթ
ընտրութեան է ինձ նա, կրել զանուն իմ առաջի
հեթանոսաց և թագաւորաց և որդւոցն Իսրայելի:
16 Քանզի ես իսկ ցուցից նմա որչափ պարտ իցէ նմա
17 չարչարել վասն անուան իմոյ: Եւ գնաց Անանիա
և եմուտ յապարանն, և եդեալ ի վերայ նորա
ձեռս՝ ասէ, Սաւուղ եղբայր, [1]ի վեր հայեաց,"
Տէր առաքեաց զիս, Յիսուս որ երեւեցաւն քեզ
ի ճանապարհին յորում գայիր, որպէս զի տես-

---

[1]ի Բազմս պակաս

18 ցես և լցցիս Հոգւով Սրբով։ Եւ վաղվաղակի
անկան յաչաց նորա իբրեւ կեղեւանք. [1]եւ ես
19 և յարեաւ մկրտեցաւ։ Եւ առեալ կերակուր զո-
րացաւ. և եղեւ ի Դամասկոս ընդ աշակերտան ա-
ւուրս ինչ։
20 Եւ վաղվաղակի ի ժողովուրդսն քարոզեաց զՅի-
21 սուս, թէ սա է Որդին Աստուծոյ։ Զարմացեալ
էին ամենեքեան որ լսէինն, և ասէին, Ո՞չ սա էր
որ աւար հարկանէր յԵրուսաղէմ զայնոսիկ, որ
կարդային [2]զանուն Յիսուսի՞. և այսր նմին իրի
եկեալ է, զի կապեալս զսոսա տարցի առ քահա-
22 նայապետսն։ Այլ Սաւղոս առաւել եւս զօրա-
նայր և յաղթահարէր զՀրեայսն որ բնակեալ էին
ի Դամասկոս. և խելամտեցուցանէր թէ սա է Քրիս-
23 տոս։ Իբրեւ կատարէին աւուրք բազումք, խոր-
24 հեցան Հրեայքն սպանանել զնա։ Յայտնեցաւ Սաւ-
ղոսի նենգութիւն նոցա, քանզի պահէին զդրունսն
25 ի տուէ և ի գիշերի որպէս զի սպանցեն զնա։ Եւ
առեալ զնա աշակերտացն ի գիշերի՝ ընդ պարիսպն
կախեալ իջուցին վանդակաւ։
26 Իբրեւ եկն Սաւղոս յԵրուսաղէմ, բնդեղանէր
յարել յաշակերտան. և ամենեքեան երկնչէին ի
27 նմանէ, չհաւատային թէ իցէ աշակերտ։ Բայց
Բառնաբաս առեալ զնա՝ ած առ առաքեալսն, և
պատմեաց նոցա որպէս ի ճանապարհին եւս զՏէր,
և զի խօսեցաւ ընդ նմա, և զի ի Դամասկոս հա-
28 մարձակեցաւ յանուն Յիսուսի։ Եւ էր ընդ նոսա
ի մտանել և ելանել յԵրուսաղէմ, համարձակեալ

---

[1]Որ՝ն+, եւս առ ժամայն [2]Յ-ն՝, զանուն զայս

29 յանուն [1]Տեառն։ խօսէր և վիճէր ընդ Ցոյնան. և նո-
30 քա խոկային սպանանել զնա։ Եւ իմացեալ եղբարց՝
իջուցին զնա ի Կեսարիա, և առաքեցին զնա ի Տարսոն։
31 Բայց եկեղեցին ընդ ամենայն Հրէաստան և ի
Սամարիա և ի Գալիլեա ունէր խաղաղութիւն, շի-
նեալ և երթեալ վնեա երկիւղի Տեառն և մխի-
թարութեամբ Հոգւոյն Սրբոյ բազմանայր։
32 Բէ. Եւ եղեւ ի շրջելն Պետրոսի առ ամենե-
քումբք, իջանել նմա և առ սուրբսն որ բնակեալ
33 էին ի Լիւդդա։ Եւ եգիտ անդ այր մի, որում ա-
նուն էր Ենեա, ութեմեան դնէր ի մահիճս ան-
34 դամալոյծ։ Եւ ասէ ցնա Պետրոս, Ենեա, բժշկէ
զքեզ [2]Տէր Յիսուս Քրիստոս՝, արի և քեզէն թօ-
թափեա զանկողինս քո։ Եւ վաղվաղակի յարեաւ։
35 Եւ տեսին զնա ամենեքեան որ բնակեալ էին ի
Լիւդդա և ի Սարովնա, որք և դարձան իակ ի Տէր։
36 Եւ ի Յոպպէ էր կին մի աշակերտեալ անուն Տա-
բիթա, (որ թարգմանեալ կոչի Ադեմիկ.) սա էր
լի գործովք բարեաք և ողորմութեամբք զոր առ-
37 նէր։ Եւ եղեւ յաւուրսն յայնոսիկ հիւանդանալ
նմա և մեռանել. լուացին զնա և եդին ի դասկո-
38 նի անդ։ Եւ մերձ էր Լիւդդա ի Յոպպէ. աշա-
կերտացն լուեալ եթէ Պետրոս անդ է, առաքեցին
երկուս արս առ նա ազաչել զի մի՛ դանդաղեսցի
39 գալ առ նոսա։ Եւ յարուցեալ Պետրոս եկն ընդ
նոսա, զոր իբրեւ եկն՝ հանին ի վերնատունն. և
կացին շուրջ զնովաւ այրիքն ամենայն, լային և

---

[1] Ոմանք. Տեառն Յիսուսի [2] Յայլ օրինակաց ոմանք, Տէր Յիսուս, այլք, Յիսուս Քրիստոս

ցուցանէին զձորձս և զՀանդերձս, որչափ առնէր
40 նոցա Աւծեմիկն։ Եւ Հանեալ արտաքս զամենեսեան Պետրոսի՝ եդ ծունր, եկաց յաղօթս, և դարձաւ ի մարմինն և ասէ, Տաբիթա, արի կաց [1]յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի՝՝։ Եւ նա երաց զաչս իւր, և տեսեալ զՊետրոս նստաւ կանգուն։
41 Ձեռն ետ նմա և յարոյց զնա. կոչեաց զսուրբսն
42 և զայրիսն, առաջի կացոյց զնա կենդանի։ Եւ յայտնի եղեւ ընդ ամենայն Յոպպէ, և Հաւատացին բազումք ի Տէր։ Եւ եղեւ աւուրս բազումս լինել նմա ի Յոպպէ առ ումեմն Սիմոնի խաղտախորդի։

ԳԼ. Ժ

1 ԳԱ. Այր մի էր ի Կեսարիա անուն Կոռնելիոս,
2 Հարիւրապետ ի գնդէ որ կոչէր Իտալացի. Բարեպաշտօն և երկիւղած Աստուծոյ ամենայն տամբ իւրով, առնէր ողորմութիւնս բազումս ի ժողովրդեանն, և յաղօթս կայր առ Աստուած յա-
3 մենայն ժամ։ Ետես ի տեսլեան յայտնապէս զին-ներորդ ժամու աւուրն զՀրեշտակ Աստուծոյ, զի
4 մտանէր առ նա և ասէր ցնա, Կոռնելիէ։ Եւ նա Հայեցեալ ընդ նա՝ զարհուրեցաւ և ասէ, Ով՞ է, Տէր։ Եւ ասէ ցնա, Աղօթք քո և ողորմութիւնք
5 քո ելին յիշատակս առաջի Աստուծոյ։ Եւ արդ յղեա արս ի Յոպպէ և կոչեա զՍիմոնն զոմն որ կո-
6 չի Պետրոս. Նա մտեալ է առ Սիմոնի ումեմն
7 խաղտախորդի, որոյ է տունն մերձ ի ծով [2]։ Եւ իբրեւ

---

[1] Ի Յ—ն Պ—ս—ե [2] Որ Հ—ե—լ—ն, Նա խոսեցի քեզ պինչ պարտ իցէ քեզ առնել

գնաց Հրեշտակն որ խօսէր ընդ նմա, կոչեաց երկուս ի ծառայից և զինուոր մի բարեպաշտօն ի
8 սպասաւորացն իւրոց, եւ պատմեալ նոցա զամենայն առաքեաց զնոսա ի Յոպպէ։
9 Եւ ի վաղիւ անդր ի ճանապարհ անկանել նոցա և մօտ ի քաղաքն լինել, ել Պետրոս ի տանիսն
10 կալ յաղօթս զվեցերորդ ժամուն։ Քաղցեաւ և կամէր ճաշակել. և ի պատրաստելն նոցա՝ եղեւ ի
11 վերայ նորա զարմացումն։ Եւ տեսանէր զերկինս բացեալ, և զչորեցունց տանոց կապեալ անօթ մի՝ իբրեւ զկտաւոյ մեծի, իջեալ նստեալ ի վերայ
12 երկրի. Յորում էին ամենայն չորքոտանիք և սո-
13 ղունք երկրի՝ և թռչունք երկնից։ Եւ եղեւ ձայն
14 առ նա, Արի, Պետրոս, զեն և կեր։ Եւ Պետրոս
ասէ, Քաւ լիցի, Տէր, զի ոչ երբեք կերայ խառ-
15 նակ ինչ և անսուրբ։ Ձայն եղեւ կրկին անգամ առ նա, Զոր Աստուած սրբեաց՝ դու մի՛ պղծեր։
16 Այս եղեւ երիցս, և վերացաւ անօթն յերկինս։
17 Եւ մինչդեռ զարմացեալ էր ընդ միտս Պետրոս թէ զի՛նչ իցէ տեսիլն զոր ետես, ահա արքն առաքեալք ի կոռնելեայ հարցին զապարանիցն Սիմովնի, կացին առ դրանն. կոչեցին և հարցանէին,
18 եթէ Սիմոնն որ կոչի Պետրոս աստ մտեա՞լ իցէ։
19 Եւ մինչդեռ Պետրոս զմտաւ ածէր վասն տեսլեանն, ասէ Հոգին ցնա, Ահաւասիկ [2]արք ոմանք՝ խնդրեն
20 զքեզ։ Այլ արի էջ և երթ ընդ նոսա առանց խ-
21 րիք խղճելոյ, զի ես առաքեցի զնոսա։ Եւ իբրեւ

---

[1] Որոնք, չորքոտանիք երկրի և գազանք և սողունք
[2] Երեք, արք երեք

էջ Պետրոս առ նոսա, ասէ, Ահաւասիկ ես եմ
22 զոր խնդրէքն. զի՞նչ իրք են վասն որոյ եկիքդ։ Եւ
նոքա ասեն, Կոռնելիոս հարիւրապետ, այր ար-
դար և երկիւղած Աստուծոյ, վկայեալ յամե-
նայն ազգէն Հրէից, հրաման առ ի հրեշտակէ սրբոյ
կոչել զքեզ ի տուն իւր և լսել բանս ի քէն։
23 Կոչեաց զնոսա ի ներքս և առ իւր ագոյց։

Եւ ի վաղիւ անդր յարուցեալ Պետրոս գնաց
ընդ նոսա, և ոմանք յեզբարց անտի որ ի Յոպպէ
24 էին՝ եկին ընդ նմա։ Եւ ի վաղիւ անդր մտին ի
Կեսարիա. և Կոռնելիոս ճնայր նոցա, կոչեցեալ
զազգատոհմն իւր և զկարեւոր բարեկամանն։
25 Գ՚. Եւ եղեւ ի մտանելն Պետրոսի՝ ընդ առաջ
եղեւ նմա Կոռնելիոս, անկեալ առ ոտն երկիր
26 պագանէր։ Եւ Պետրոս կանգնեաց զնա և ասէ,
27 Յառն կաց, և ես ինքն մարդ եմ։ Եւ խօսելով ընդ
նմա եմուտ ի ներքս. և գտանէր անդ ժողովեալ
28 զբազումս։ Եւ ասէ ցնոսա, Դուք ինքնին գիտէք
օ՚րպէս անմարթ է առն Հրէի հպել կամ մերձե-
նալ առ այլազգի. և ինձ Աստուած եցոյց մի՛ զոք
29 խառնակ կամ անսուրբ ասել ի մարդկանէ։ Վասն
այսորիկ և առանց բնդ բանս ինչ ածելոյ եկի կո-
չեցեալ. բայց արդ հարցանեմ, Ձի՞նչ պէտս կոչե-
30 ցեալ զիս։ Եւ Կոռնելիոս ասէ, Յառաջ քան զչորս
աւուրս մինչ ցայս [1]ժամ կայի յաղօթս յինն ժամն
ի տան իմում. և ահա այր մի եկն եկաց առաջի
31 իմ ի հանդերձս սպիտակս, և ասէ, Կոռնելիէ,
լսելի եղեն աղօթք քո, և ողորմութիւնք քո յի-

---

[1] Ոմանք, ժամ պահէի և

32 ընդ առաջի Աստուծոյ. եւ արդ յղեա ի Յոպպէ և
կոչեա զՍիմոնն որ կոչեցեալն է Պետրոս. սա հնեալ
է ի տուն Սիմոնի ուրուն խաղախորդի մերձ ի ծովն.
33 [1]որ եկեսցէ և խօսեսցի ընդ քեզ։" Եւ ես իսկ և իսկ
յղեցի առ քեզ, դու բարւոք արարեր զի եկիր.
արդ ամենեքին մեք առաջի Աստուծոյ կամք լսել
զամենայն, որ հրամայեալ է քեզ ի Տեառնէ։
34 Եբաց Պետրոս զբերան իւր և ասէ, Ճշմարտու-
թեամբ հասեալ եմ, զի ոչ գոյ ակնառութիւն
35 առ ի յԱստուծոյ. Այլ յամենայն ազգս որ երկնչին
ի նմանէ և գործէ զարդարութիւն, ընդունելի է
36 նմա։ [2]Զբանն առաքեաց որդւոցն Իսրայելի աւե-
տարանել զխաղաղութիւն ի ձեռն Յիսուսի Քրիս-
37 տոսի. (սա է ամենայնի Տէր.) Դուք ինքնին գիտէք
զբանն որ եղեւ ընդ ամենայն Հրէաստան սկսեալ
ի Գալիլէէ, յետ մկրտութեանն զոր քարոզեաց
38 Յովհաննէս. ԶՅիսուս որ ի Նազարեթէ, զոր օծն
Աստուած Հոգւով Սրբով և զօրութեամբ, որ շրջե-
ցաւ բարի առնել և բժշկել զամենայն ըմբռնեալսն
39 ի Սատանայէ, զի Աստուած էր ընդ նմա։ Եւ մեք
վկայ եմք ամենայնի զոր արար յերկրին Հրէաս-
տանի և յԵրուսաղէմ. զոր և սպանին կախեալ
40 զփայտէ։ Զնա Աստուած յարոյց յերրորդ աւուր,
41 և ետ նմա յայտնի լինել, Ոչ ամենայն ժողովրդե-
ան, այլ մեզ վկայիցս յառաջագոյն ընտրելոցս
յԱստուծոյ, որք և կերաք և արբաք ընդ նմա յետ
42 յարութեան նորա ի մեռելոց։ Եւ պատուիրեաց
մեզ քարոզել ժողովրդեանն և վկայութիւն դնել,

---

[1]Յոհան. գ-ի-ա-ե [2]Ոմանք, Զբանն զոր

թէ նա է սահմանեալն յԱստուծոյ դատաւոր կեն-
43 դանեաց և մեռելոց։ Նմա ամենայն մարգարէք
վկայեն, թողութիւն մեղաց առնուլ անուամբ նո-
րա ամենայն հաւատացելոց ի նա։
44 Եւ մինչդեռ խօսէր Պետրոս զբանս զայս, հան-
գեաւ Հոգին Սուրբ ի վերայ ամենեցուն որ լսէին
45 զբանն։ Զարմացան որք ի թլփատութենէ անտի
հաւատացեալք եկեալ էին ընդ Պետրոսի, զի և ի
46 հեթանոսս պարգեւք Հոգւոյն Սրբոյ զեղուին։ Գան-
զի լսէին ի նոցանէ խօսել լեզուս և մեծացուցանել
47 զԱստուած։ Յայնժամ պատասխանի ետ Պետրոս,
Միթէ զջուրն ոք արգելուլ կարէ՞ առ ի չմկրտե-
լոյ զսոսա, որք և զՀոգին Սուրբ ընկալան որպէս
48 և մեք։ Եւ հրամայեաց նոցա մկրտել յանուն [1]Յի-
սուսի Քրիստոսի՝. յայնժամ աղաչեցին զնա լինել
անդ աւուրս ինչ։

ԳԼ. ԺԱ

1 ԳԳ. Լուան առաքեալքն և եղբարք որ էին ի կող-
մանս Հրէաստանի, զի և ի հեթանոսս ընկալան
2 զբանն Աստուծոյ։ Բայց յորժամ ել Պետրոս յԵ-
րուսաղէմ, խղճէին ի նմանէ որ ի թլփատութենէ
3 անտի [2]հաւատացեալքն էին. Եւ ասէին եթէ [3]Ե-
4 մուտ առ արս անթլփատս և եկեր՝ ընդ նոսա։ Եւ
սկսաւ Պետրոս պատմել նոցա կարգաւ և ասէ,
5 Ես էի ի քաղաքին ի Յոպպէ յաղօթս, և տեսանէի
ի զարմացմանն տեսիլ, իջանել անօթ մի ինչ իբրեւ

---

[1] Ոմանք, Տեառն [2] Ի յոմանսն պակասէ
[3] Բազումք, Մտեր առ արս անթլփատս և կերար

կառույց մեծի զչորեցունց ատենոց կախեալ յերկ-
6 նից, և եհաս մինչեւ առ իս։ Յոր պշուցեալ հա-
յէի, և տեսի զչորքոտանիս երկրի և զգազանս և
7 զսողունս և զթռչունս երկնից։ Եւ լսայ բարբառ
8 որ ասէր ցիս, Արի, Պետրոս, զեն և կեր։ Եւ ա-
սեմ, Քաւ լիցի, Տէր, զի խառնակ ինչ և անսուրբ
9 ոչ երբեք եմուտ ի բերան իմ։ Պատասխանի ետ
ինձ երկիցս անդամ բարբառն յերկնից, Զոր Ա-
10 ստուած սրբեաց՝ դու մի՛ խառնակ համարիր։ Այս
եղեւ երիցս, և վերացաւ ամենայն դարձեալ յեր-
11 կինս։ Եւ ահա անդէն երեք արք եկին կացին առ
ապարանիցն ուր եաի էի, առաքեալք ի Կեսարիայ
12 առ իս։ Եւ ասէ ցիս Հոգին երթալ ընդ նոսա և
մի՛ ինչ խղճել. եկին ընդ իս և սոքա վեցեքին եղ-
13 բարքս, և մտաք ի տունն առնն այնորիկ։ Եւ
պատմեաց մեզ ո՛րպէս ետես զհրեշտակն ի տան
իւրում զի կայր և ասէր ցնա, Առաքեա ի Յոպ-
14 պէ, և կոչեա զՍիմոնէ զկոչեցեալն Պետրոս. Որ
խօսեսցի բանս ընդ քեզ, որովք կեցցես դու և ա-
15 մենայն տուն քո։ Եւ իբրեւ սկսայ խօսել, եկն Հո-
գին Սուրբ ի վերայ նոցա, որպէս և ի վերայ մեր
16 ի սկզբանն։ Յիշեցի զբանն Տեառն զոր ասէրն, Յով-
հաննէս մկրտեաց ի ջուր, բայց դուք մկրտիցիք ի
17 Հոգին Սուրբ։ Իսկ արդ եթէ զհաւասարակաց պարգեւն
ետ Աստուած և նոցա որպէս և մեզ՝ ի հաւատալն ի
Տէր Յիսուս Քրիստոս, ես զի՞նչ կարող էի արգելուլ
18 զԱստուած։ Եւ լուեալ զայս լռեցին, և փառաւորե
առնէին զԱստուած և ասէին, Ուրեմն և ի հեթա-
նոսս ետ Աստուած զապաշխարութիւն կենաց։
19 Եւ ցրուեալքն ի նեղութենէն որ եղեւ ի վերայ

Ստեփանոսի՝ հասին մինչեւ ի Փիւնիկէ եւ ի Կիպրոս եւ յԱնտիոքիա. ոչ ումեք խօսէին զբանն, բայց
20 միայն Հրէից։ Եւ էին ոմանք ի նոցանէ արք Կիպրացիք եւ Կիւրենացիք, որք մտեալ յԱնտիոք խօսէին ընդ Յոյնան աւետարանեալ զՏէր Յիսուս։
21 Եւ էր ձեռն Տեառն ընդ նոսա, և բազմութիւն
22 հաւատացելոց դարձաւ ի Տէր։ Լուաւ եղեւ բանս այս յականջս եկեղեցւոյն որ էր յԵրուսաղէմ վասն նոցա, և առաքեցին զԲառնաբաս մին.
23 չեւ յԱնտիոք. Որ իբրեւ եկն ևետես զշնորհն Աստուծոյ, ուրախ եղեւ, և մխիթարէր զամենեսեան յօժարութեամբ սրտի կալ նոցա ի Տէր։ Զի
24 էր այր զուարթամիտ և լի Հոգւով Սրբով և հաւատով. և յաւելաւ ժողովուրդ բազում Տեառն։
25 Եւ ել ի Տարսոն խնդրել զՍաւղոս, և գտեալ զնա
26 ած յԱնտիոք։ Եւ եղեւ նոցա զամն ողջոյն ժողովել յեկեղեցին և ուսուցանել ժողովուրդ բազում, և անուանել նախ յԱնտիոք [1]զաշակերտեալսն Քրիստոնեայս։
27 ԳԴ. Ընդ աւուրսն ընդ այնոսիկ իջին յԵրուսա-
28 ղեմէ մարգարէք յԱնտիոք։ Յարուցեալ մի ոմն ի նոցանէ անուն Ագաբոս՝ նշանակեաց Հոգւովն սով մեծ լինել ընդ ամենայն աշխարհ, որ եղեւ առ
29 կղաւդեաս։ Բայց յաշակերտաց անտի, որպէս զիարդ կարող ոք էր՝ իւրաքանչիւր ոք ի նոցանէ որոշեցին առաքել ի պէտս եղբարցն որ բնակեալ
30 էին ի Հրէաստանի. Զոր և արարին իսկ առաքեալ առ երիցունսն ի ձեռն Բառնաբայ և Սաւղոսի։

---

[1] Յ-ՅՆ, զաշակերտսն

ԳԼ. ԺԲ

1 ԳԵ. Ընդ ժամանակն ընդ այնոսիկ արկ Հերովդէս արքայ ձեռն չարչարել զոմանս յեկեղեցւոյն՝
2 եւ սպան զՅակովբոս, զեղբայր Յովհաննու, սրով՝
3 եւ տես եթէ հաճոյ է Հրէից՝ յաւել եւս ունել
4 զՊետրոս. և էին աւուրքն բաղարջակերաց՝ Զոր իբրեւ կալաւ, եդ ի բանտի, և մատնեաց չորից չորբորդաց զինուորաց պահել զնա. և կամէր յետ
5 զատկին ածել զնա ժողովրդեանն՝ Եւ Պետրոս ի պահեստի էր ի բանտին, և աղօթք առէպ լինէին
6 յեկեղեցւոյն վասն նորա առ Աստուած՝ Իբրեւ կամեցաւ զնա ածել Հերովդէս, ի գիշերին յայնմիկ էր Պետրոս ի քուն ի մէջ երկուց զինուորաց՝ կապեալ կրկին շղթայիւք, և պահապանքն առա-
7 ջի դրանն պահէին զբանտն՝ Եւ ահա հրեշտակ Տեառն եկն եկաց ի վերայ, և լոյս ծագեաց ի տանն, և խթեաց զկողն Պետրոսի, յարոյց զնա և ասէ, Արի վաղվաղակի. և անկան շղթայքն ի ձեռաց նո-
8 բա՝ Եւ ասէ ցնա հրեշտակն, Ած զգօտի քո, և արկ զՀողաթափս յոտս քո. և արար այնպէս. և
9 ասէ ցնա, Արկ զձորձս քո և եկ զկնի իմ՝ Եւ ե-լեալ երթայր զհետ, և ոչ գիտէր եթէ ճշմարիտ իցէ որ ինչ եղեւն ի հրեշտակէն. զի համարէր ե-
10 րազ տեսանել՝ Եւ իբրեւ անցին նոքա բաց մի պահ և բաց երկուս, եկին մինչեւ ի դուռնն եր-կաթի՝ որ հանէր ի քաղաքն. որ ինքնին բացաւ նոցա, և մտեալ անցին ընդ փողոց մի. և վաղվա-
11 ղակի ի բաց եկաց ի նմանէ հրեշտակն՝ Եւ Պետրոս իբրեւ ի միտս եղեւ, ասէ, Արդ գիտեմ ճշմա-

բիտ եթէ առաքեաց Տէր զՀրեշտակ իւր, և փրկեաց զիս ի ձեռաց Հերովդի և յամենայն ակնկալութենէ
12 ժողովրդեանն Հրէից: Եւ լեալ ի միտս եկն ի տուն Մարեմու մօր Յովհաննու, որ կոչեցաւն Մարկոս. ուր էին բազումք ժողովեալ և աղօթս առնէին:
13 Եւ ի բախել զդուրս տանն, մատեաւ աղախին մի,
14 ունկն դնէր, որում անուն էր Հռովդէ: Եւ ծանուցեալ զձայնն Պետրոսի՝ ի խնդալոյն ոչ երաց զդուռնն, ի ներքս ընթացեալ պատմեաց թէ Պետրոս առ դրանն կայ:
15 Նոքա ասեն ցնա, Մոլիս. և նա ե՛ւս պնդէր թէ այսպէս է. և նոքա ասէին,
16 Հրեշտակ նորա իցէ: Եւ Պետրոս առէպ բախէր.
17 իբրեւ բացին, տեսին զնա և զարմացան: Եւ նա ձեռամբ ցուցանէր նոցա լռել, և [1]պատմեաց ո՛րպէս և Տէր եհան զնա ի բանտէն, և ասէ, Պատմեցէք Յակովբայ և եղբարց զայս. և ելեալ գնաց
18 յայլ տեղի: Եւ իբրեւ այգ եղեւ, էր խռովութիւն մեծ ի մէջ զինուորացն, զի՞ արդեւք Պետրոսն եղեւ:
19 Իսկ Հերովդէս իբրեւ խնդրեաց զնա և ոչ եգիտ, հարցեալ զպահապանսն՝ հրամայեաց սպանանել. և իջեալ ի Հրէաստանէ ի Կեսարիա և անդ լինէր:
20 Եւ էր Հերովդէս ցասմամբ ընդ Տիւրացիս և ընդ Սիդովնացիս. և նոքա առ հասարակ եկին առ նա, և ի բանի արարեալ զԲղաստոս սենեկապետ արքայի, խնդրէին զխաղաղութիւն, վասն կերակրելոյ
21 երկրին նոցա յարքունեաւն: Յաւուր միում յե. րեւելոջ Հերովդէս զգեցեալ էր զՀանդերձ թա.

---

[1] Գրած, պատմեաց նոցա

գաւառութեան և նստէը յատենի, և խօսէը ընդ
22 նոսա հրապարակաւ։ Եւ ամբոխն աղաղակէը թէ
23 Աստուծոյ բարբառ է, և ոչ մարդոյ։ Եւ անդէն
եհար զնա հրեշտակ Տեառն, փոխանակ զի ոչ ետ
փառս Աստուծոյ. և եղեալ որդնալից՝ աստակեցաւ։
24 Եւ բանն Աստուծոյ աճէը և բազմանայր։
25 ԳԶ. Բառնաբաս և Սաւղոս դարձան յԵրուսաղէմ, իբրեւ կատարեցին զպաշտօնն. առեալ էր ընդ
իւրեանս և զՅովհաննէս որ կոչեցեալն էր Մարկոս։

ԳԼ. ԺԴ.

1 Էին ոմանք յԱնտիոք քան եկեղեցւոյն մարգարէք
և վարդապետք, Բառնաբաս և Շմաւոն կոչեցեալն
Նիւգէը և Ղուկիոս Կիւրենացի և Մանայեն դա-
յեկորդի Հերովդի չորրորդապետի և Սաւղոս։
2 Մինչդեռ ի պաշտամանն Տեառն կային և պահէին,
ասէ Հոգին Սուրբ, Որոշեցէք ինձ զԲառնաբաս և
զՍաւղոս ի գործ յոր կոչեցեալ է իմ զդոսա։
3 Յայնժամ պահեալ և աղօթս արարեալ եդին
զձեռս ի վերայ նոցա և արձակեցին։
4 Եւ նոքա առաքեալք ի Հոգւոյն Սրբոյ՝ իջին ի
5 Սելեւկիա, և անտի նաւեցին ի Կիպրոս։ Եւ հա-
սեալ ի Սաղամինա պատմէին զբանն Աստուծոյ ի
ժողովուրդս Հրէից. ունէին և զՅովհաննէս պաշ-
6 տօնեայ։ Շրջեալ ընդ ամենայն կղզին մինչեւ ի
Պափոս, գտին անդ այր զոմն մոգ առաւ մարգարէ
7 Հրեայ, որում անուն էր Բարեյեսուս. Որ էր ընդ
փոխանակի բդեշխին Սերգեայ Պաւղոսի, առն ի-
մաստնոյ. նորա աղաչեալ զԲառնաբաս և զՍաւ-
8 ղոս խնդրէը լսել զբանն Աստուծոյ։ Ընդդէմ եկաց

նոցա եղիմնա մեզ, քանզի այսպէս թարգմանի ա-
նուն նորա. խնդրէր շրջել զփոխանակ բդեշխին ի
9 Հաւատոց: Իսկ Սաւղոս որ և Պաւղոսն՝ լցեալ
10 Հոգւով Սրբով հայեցաւ ի նա, եւ ասէ, Ով լի
ամենայն նենգութեամբ և խորամանկութեամբ,
որդի Սատանայի, թշնամի ամենայն արդարու-
թեան, ո՞չ լռես ի թիւրելոյ զճանապարհս Տեառն
11 զուղիղս: Եւ արդ՝ ահա ձեռն Տեառն ի վերայ ք՞,
և եղիցիս կոյր չտեսանել զարեւ մինչեւ ի ժամա-
նակ մի. և անդէն անկաւ ի վերայ նորա մէգ և
12 խաւար, և շրջեալ խնդրէր առաջնորդս: Յայն-
ժամ տեսեալ փոխանակի բդեշխին զիրան որ եղեն՝
Հաւատոց, զարմացեալ ընդ վարդապետութիւնն
Տեառն:
13 Եւ ամբարձեալ ի Պափեայ Պաւղոսեանց՝ եկին
ի Պերգէ Պամփիւլեայ. Յովհաննէս մեկնեալ ի նո-
14 ցանէ՝ դարձաւ յԵրուսաղէմ: Եւ նոքա գնացեալ
ի Պերգեայ՝ եկին յԱնտիոք Պիսիդեայ. և մտեալ
15 ի ժողովուրդն յաւուր շաբաթու՝ նստան: Եւ յետ
ընթեռնլոյ զօրէնսն և զմարգարէս, առաքեցին առ
նոսա ժողովրդապետքն և ասեն, Արք եղբարք,
եթէ իցէն ի ձեզ բանք մխիթարութեան առ ժո-
ղովուրդդ, խօսեցարուք:
16 Գէ. Յոտն եկաց Պաւղոս շարժեաց զձեռն և
ասէ, Արք Իսրայելացիք և որք երկնչիք յԱստու-
17 ծոյ, լուարուք: Աստուած ժողովրդեանս այսորիկ
Իսրայելի ընտրեաց զհարսն մեր, և զժողովուրդն
բարձրացոյց ի պանդխտութեան յերկրին Եգիպ-
տացւոց, և ի բազուկ բարձր եհան զնոսա անտի:
18 Եւ իբրեւ քառասնամեայ ժամանակ կերակրեաց

19 զնոսա յանապատի։ Եւ քակեալ ազգս եւթն
յերկրին Քանանու՝ ժառանգեցոյց նոցա զերկիր
20 [1]նոցա իբրեւ ամն չորեքհարիւր և յիսուն։ Եւ յետ
այսորիկ՝ ետ նոցա դատաւորս մինչեւ ի Սամուէլ
21 մարգարէ։ Եւ անտի յոտաչ խնդրեցին թագա-
ւոր, և ետ նոցա Աստուած զՍաւուղ որդի Կի-
22 սեայ՝ այր յազգէ Բենիամինի ամս քառասուն։ Եւ
իբրեւ փոխեաց զնա, յարոյց նոցա զԴաւիթ թա-
գաւոր, որում և ասաց վկայութեամբ, Գտի զԴա-
ւիթ որդի Յեսսեայ այր ըստ սրտի իմում, որ ա-
23 րասցէ զամենայն զկամս իմ։ Ի սորա զաւակէ Աս-
տուած ըստ աւետեացն յարոյց Իսրայելի զփրկիչն
24 Յիսուս. Ընտ յոտաչագոյն քարոզութեանն Յով-
հաննու առաջի երեսաց մտի նորա մկրտութիւն
ապաշխարութեան ամենայն ժողովրդեանն Իսրա-
25 յելի։ Եւ իբրեւ լնոյր Յովհաննէս զընթացսն, ա-
սէր, Զո՞ ոք կարծէք զինէն թէ իցեմ. չեմ ես այն,
այլ ահա գայ զկնի իմ, որում չեմ արժանի զկո-
26 շիկս ոտից լուծանել։ Արք եղբարք, որդիք Ա-
բրահամեան տոհմին, և որ ի ձեզ երկիւղածք իցեն
Աստուծոյ, ձեզ բանս այս փրկութեան առաքե-
27 ցաւ։ Բայց որ բնակեալ են Երուսաղէմ, և իշ-
խանք նոցա անծանօթ եղեն ի նմանէ, և [2]ըստ բար-
բառոյ՝ մարգարէիցն, որ զամենայն շաբաթն ըն-
28 թերցուին, դատեալ կատարեցին։ Եւ ոչ մի ինչ
պատճառս մահու գտեալ՝ խնդրեցին ի Պիղատոսէ
29 սպանանել զնա։ Եւ իբրեւ կատարեցին զամենայն

---

[1]Ոմանք, նոցա։ (20) Եւ յետ այսորիկ իբրեւ ամն
չորեքհարիւր և յիսուն [2]Յոյնն, ի բարբառոյ

որ վասն նորա գրեալ էր՝ ի ջուցեալ ի փայտէն
30 եդին ի գերեզմանի։ Ա՛լ Աստուած յարոյց զնա
ի մեռելոց. որ երևեցաւ աւուրբք բազմօք այնո-
31 ցիկ Որ ելեալ էին ընդ նմա ի Գալիլէէ յԵրուսա-
ղէմ. որք և արդ իսկ վկայք են նորա առ ժողո-
32 վուրդն։ Եւ մեք ձեզ աւետարանեմք զխոստումն
33 որ առ Հարսն եղեալ էր։ Զի զնոյն Աստուած կա-
տարեաց առ մեզ որդիս նոցա՝ յարուցեալ զՅի-
սուս, որպէս և ի Սաղմոսին գրեալ է յերկրոր-
դում, Որդի իմ ես դու, և ես այսօր ծնայ զքեզ։
34 Եւ զի յարոյց զնա ի մեռելոց, և ոչ եւս դառ-
նալոց է յապականութիւն, այսպէս ասէ թէ Տաց
35 ձեզ զսրբութիւնան Դաւթի զհաւատարիմս։ Փան-
զի և ի միւսումն ասէ, Ոչ տացես Սրբոյ քոմ
36 տեսանել զապականութիւն։ Ա՛լ Դաւիթ յազգի
անդ իւրում պաշտեաց և ի կամն Աստուծոյ
ննջեաց, և յաւելաւ առ հարս իւր և եհաս զա-
37 պականութիւն։ Բայց զոր Աստուածն յարոյց՝ ոչ
38 եհաս զապականութիւն։ Յայտնի լիցի ձեզ, արք
եղբարք, զի սովաւ ձեզ թողութիւն մեղաց աւե-
39 տարանի. Եւ յամենայնէ յորմէ ոչ կարացէք օրի-
նօքն Մովսիսի արդարանալ՝ սովաւ ամենայն որ
40 հաւատայ արդարանայ։ Զգոյշ կացէք, գուցէ ե-
կեսցէ ի վերայ ձեր որ ասացեալն է ի մարգարէս.
41 Տեսէք, արհամարհոտք, և զարմացարուք և եղծա-
րուք, զի գործ մի գործեմ ես յաւուրս ձեր, գործ՝
որում ոչ հաւատայցէք, եթէ ոք պատմեսցէ ձեզ։
42 Եւ իբրեւ ելին անտի, աղաչէին ի միւսում շա-
43 բաթու խօսել նոցա զնոյն բանս։ Իբրեւ արձակե-
ցաւ ժողովուրդն, զհետ երիցանին բազումք ի Հրէից

անտի և ի պաշտօնէիցն եկամտից զՊաւղոսի և զԲառնաբայ. որք խօսէին ընդ նոսա, և հաւանեցուցանէին զնոսա կալ ՚ի հաւատս։
41 ԴԱ. Եւ ի գալ միւսոյ շաբաթուն, գրեթէ ամենայն քաղաքն ժողովեցաւ լսել զբանն Աստուծոյ։
43 Իրրեւ տեսին Հրեայքն զամբոխն՝ լցան նախանձու, և ընդդէմ դարձեալ սատակէին զՊաւղոսէ՝ հայհոյէին։
46 Համարձակեալ Պաւղոսի և Բառնաբայ՝ ասէին, Առ ձեզ նախ պարտ էր խօսել զբանն Աստուծոյ. և քանզի դուք մերժէք զնա, և ոչ արժանիս համարիք զձեզ կենացն յաւիտենականաց, ահաւասիկ դառնամք ի հեթանոսս։
47 Զի այսպէս պատուիրեաց մեզ Տէր. Եդի զքեզ ի լոյս հեթանոսաց՝ լինել քեզ ի փրկութիւն մինչեւ
48 ի ծագս երկրի։ Զայս լուեալ հեթանոսացն ուրախ լինէին, և փառաւորէին զբանն Տեառն. և հաւատացին որք էին կարգեալ ի կեանսն յաւիտենական։
49 Եւ շրջէր բանն Աստուծոյ ընդ ամենայն գաւառն։
50 Բայց Հրեայքն դրդռեցին զպաշտօնեայ կանայսն զգաստս, և զգլխաւորս քաղաքին, և յարուցեալ հալածանս ի վերայ Պաւղոսի և Բառնաբայ՝ հանին զնոսա ի սահմանացն իւրեանց։
51 Եւ նոցա թօթափեալ զփոշի ոտից ի վերայ նոցա՝
52 եկին Իկոնիոն։ Եւ աշակերտքն լնուին խնդութեամբ և Հոգւով Սրբով։

ԳԼ. ԺԴ

1 Եւ եղեւ Իկոնիոն ի միասին մտանել նոցա ի ժողովուրդ Հրէից և խօսել նոյնպէս, մինչեւ հաւատալ Հրէից և Յունաց բազմաց յոյժ։ Բայց

անհաւան Հրեայքն յարուցին և չարացուցին զան-
3 ձինս հեթանոսացն ի վերայ եղբարց։ Բազում ժա-
մանակս շրջէին, համարձակեալք ¹Տեառն վկայու-
թեամբ բանի շնորհաց իւրոց, և տալ՝ նշանս և
4 արուեստս լինելոյ ի ձեռս նոցա։ Եւ եղեն հեր-
ձուածք բազմութեան քաղաքին, ոմանք էին ի
5 Հրեայսն, և ոմանք յառաքեալսն։ Իբրեւ եղեւ դի-
մել հեթանոսացն և Հրէից իշխանօքն իւրեանց ի
6 թշնամանել և ի քարկոծել զնոսա, Ազդ եղեալ
նոցա՝ փախեան ի քաղաքսն Լիկայոնացւոց ի
Լիւստրա և ի Դերբէ և շուրջ զգաւառսն, և
անդ աւետարանէին։

7 ԴԲ. Եւ այր մի Լիւստրացի տկար յոտից նստէր՝
կաղ յորովայնէ մօր իւրոյ, որոյ երբեք չէր գնա-
8 ցեալ։ Սա լուաւ զխօսսն Պաւղոսի, որոյ հայեցեալ
ի նա և տեսեալ թէ ունի հաւատս փրկութեան,
9 Ասէ մեծաձայն, ²Զեզ ասեմ յանուն Տեառն Ա-
րոյ Յիսուսի Քրիստոսի," Յոտն կաց ի վերայ ոտից
10 քոց ուղիղ. և վազվազէր և գնայր։ Եւ ժողովրդոցն
տեսեալ զոր արարն Պաւղոս՝ բարձին զձայնս իւր-
եանց Լիկայոնարէն և ասեն, Աստուածք նմանեալք
11 մարդկան իջին առ մեզ։ Եւ կոչէին զԲառնաբաս
Դիոս, և զՊաւղոս՝ Հերմէս, քանզի նա էր առաջ-
12 նորդ բանին։ Իսկ քուրմն Դիոսի որ կայր առաջի
քաղաքին, ցուլս և պսակս հասուցեալ ի դուռնն
13 հանդերձ բազմութեամբքն կամէր զոհել։ Եւ
լուեալ առաքելոցն Բառնաբայ և Պաւղոսի, պա-

---

¹Յ-ՆՆ, ի Տէր որ վկայէր բանի շնորհաց իւրոց, առեալ

²ի Բոլոտմ պոլոե

տառեալ զՀանդերձս իւրեանց՝ արտաքս վազեցին
14 [1]յամրոխէն. աղաղակէին եւ ասէին, Արք, ի՞նչ
գործէք զայդ. մեք ձեզ նմանողք կարեօք մարդիկ
եմք, աւետարանել ձեզ յայդպիսի ունայնու-
թեանց դառնալ յԱստուած կենդանի, որ արար
զերկինս և զերկիր և զծով և զամենայն որ ի նո-
15 սա: Որ յանցեալ ազգսն թոյլ ետ ամենայն հե-
16 թանոսաց գնալ ի ճանապարհս իւրեանց, եւ ա-
կայն ոչ եթէ առանց վկայութեան ինքն եթող՝
բարերարութեամբն տալ յերկնից ձեզ անձրեւս
և ժամանակս պտղաբերս, լնուլ կերակրով և ու-
17 րախութեամբ զսիրտս ձեր: Եւ զայս ասացեալ՝
հազիւ լռեցուցանէին զժողովուրդսն ի չզոհելոյ նո-
ցա. [2]այլ գնալ յիւրաքանչիւր տեղիս:
18 ԴԳ. Եւ ի շրջելն նոցա և յուսուցանել, եկին
հասին յԱնտիոքէ և յԻկոնիոնէ Հրեայք. [2]և ի վի-
ճել նոցա համարձակութեամբ," պատրեցին զժո-
ղովուրդսն [2]ի բաց կալ ի նոցանէ, և ասէին թէ
Ոչինչ ճշմարտութիւն ասեն, այլ զամենայն ստեն".
և քարկոծեալ զՊաւղոս՝ քարշեցին արտաքս քան
19 զքաղաքն, և համարէին զնա մեռեալ: Եւ ի պա-
տել զնովաւ աշակերտացն՝ յարեաւ եմուտ ի քա-
ղաքն, և ի վաղիւ անդր եկ Բառնաբաս Հանդերձ
20 ի Դերբէ: Աւետարանեալ ի քաղաքին յայնմիկ և
աշակերտեալ զբազումս՝ դարձան ի Լիւստրա և
21 յԻկոնիոն և յԱնտիոքիա, Հաստատել զանձինս
աշակերտելոցն և մխիթարել կալ Հաստատուն ի
Հաւատան. և թէ՝ Բազում նեղութեամբք պարտ

---

[1]Յոյն, յամրոխն [2]ի Բ–ց–մ պ–լ–ե

22 է մեզ մնանել յարքայութիւնն Աստուծոյ։ Զեռ-
նադրեցին նոցա ըստ եկեղեցւոյ՝ երիցունս, աղօթս
արարեալ հանդերձ պահովք՝ յանձն արարին զնս-
23 սա Տեառն յոր հաւատացեալ էին։ Եւ շրջեալ
24 ընդ Պիսիդիա եկին ի Պամփիւլիա։ Եւ խօսեցեալ
25 ի Պերգէ զբանն Տեառն իջին յԱտտալիա։ Եւ
անտի նաւարկեալ գնացին յԱնտիոք, ուստի էին
յանձն արարեալ շնորհացն Աստուծոյ ի գործն զոր
26 կատարեցին։ Եկեալ և ժողովեալ զեկեղեցին՝
պատմեցին որչափ արար Աստուած ընդ նոսա. և
27 զի բացաւ հեթանոսաց դուռն հաւատոց։ Շրջէին
ժամանակս ոչ սակաւս ընդ աշակերտսն։

ԳԼ. ԺԵ

1 ԴԴ. Եւ ոմանք իջեալ ի Հրէաստանէ ուսուցանէին
զեղբարս, Եթէ ոչ թլփատիք ըստ օրինացն Մով-
2 սէսի՝ ոչ կարէք ապրել։ Եւ ի լինել ոչ սակաւ
հակառակութեան և խնդրոյ Պաւղոսի և Բառնա-
բայ ընդ նոսա, եդին ելանել Պաւղոսի և Բառնա-
բայ և ոմանց ի նոցանէ առ առաքեալսն և երի-
3 ցունս յԵրուսաղէմ վասն խնդրոյն այնորիկ։ Նոքա
յուղարկեալք յեկեղեցւոյն՝ շրջեցան ընդ Փիւնիկէ
և ընդ Սամարիա. պատմէին դարձն հեթանոսաց,
4 և առնէին ուրախութիւն մեծ ամենայն եղբարց։ Եւ
հասեալ յԵրուսաղէմ, ընկալեալք յեկեղեցւոյն և
յառաքելոցն և յերիցանց՝ պատմեցին որչափ ինչ
5 արար ընդ նոսա Աստուած։ Յարեան ոմանք ի հեր-
ձուածոյն փարիսեցւոց հաւատացեալք, և ասեն
թէ պարտ է թլփատել զդոսա, և պատուիրել
պահել զօրէնսն Մովսիսի։

6 Եւ ժողովեցան առաքեալքն և երիցունք տեսա-
7 նել վասն բանիս այսորիկ։ Եւ յետ բազում խնդիր լինելոյ յոտն եկաց Պետրոս և ասէ ցնոսա, Արք եղբարք, դուք ինքնին գիտէք, զի յաւուրցն ա-ռաջնոց ի միջի ձերում ընտրեաց Աստուած բե-րանով իմով լսել հեթանոսաց բանին աւետարա-
8 նի և հաւատալ։ Եւ սրտագէտն Աստուած վկայ-եաց նոցա, տալով նոցա զՀոգին Սուրբ որպէս և
9 մեզ։ Եւ ոչինչ ընտրութիւն արար ի մէջ նոցա և
10 մեր, հաւատովք սրբեալ զսիրտս նոցա։ Արդ ընդէ՞ր փորձէք զԱստուած, դնել լուծ ի վերայ պարանոցի աշակերտացն, զոր ոչ հարքն մեր և
11 ոչ մեք կարացաք բառնալ։ Այլ շնորհօքն Տեառն Յիսուսի Քրիստոսի հաւատամք ապրել, զոր օրի-նակ և նոքա։

12 Լռեաց ամենայն ժողովուրդն և լսէին Բառնա-բայ և Պաւղոսի պատմելոյն, որչափ արար Աս-տուած նշանս և արուեստս ի հեթանոսս ի ձեռն նոցա։

13 Դե. Եւ յետ լռելոյն նոցա պատասխանի ետ Յակովբոս և ասէ, Արք եղբարք, լուարուք ինձ.
14 Շմաւոն պատմեաց որպէս յառաջագոյն Աստուած այց արար առնուլ ժողովուրդ ի հեթանոսաց ա-
15 նուան իւրոյ։ Եւ սմանմ միաբանին բանք մարգա-
16 րէից որպէս և գրեալ է, Յետ այսորիկ դարձայց և շինեցից զյարկն Դաւթի զանկեալն, և զկործա-նեալսն նորա վերստին շինեցից, և կանգնեցից զնա.
17 Որպէս զի խնդրեսցեն մնացորդք մարդկան զՏէր, և ամենայն հեթանոսք յորոց վերայ կոչեցեալ է ա-
18 նուն իմ, ասէ Տէր, որ առնէ զայս ամենայն, Յայտ-

19 նի [1]է ի յաւիտեանցն՝՝ : Վասն որոյ և ես իրաւունս
համարիմ մի՛ նեղել զայնոսիկ որք ի հեթանոսացն
20 դառնան առ Աստուած : Այլ տալ թուղթս առ
նոսա խորշել ի կերակրոց կուռց և ի պոռնկութենէ
21 և ի մեռելոտւոյ և յարեանէ : Զի Մովսէս յազգացն
առաջնոց բաս քաղաքաց զքարոզիչսն իւր ունի՝ ի
ժողովն բաս ամենայն շաբաթուց ընթերցեալ :
22 Ցայնժամ հաճոյ թուեցաւ առաքելոցն և երի-
ցանցն ամենայն եկեղեցեաւն, արս ընտրեալս ի նո-
ցանէ առաքել յԱնտիոք ընդ Պաւղոսի և ընդ
Բառնաբայ, զՅուդա զկոչեցեալն Բարսաբա և զՇի-
23 ղա՝ [2]արս գլխաւորս. Գրեալ առ եղբարս՝՝ ի ձեռն
նոցա զայս ինչ.

Առաքեալք և երիցունք և եղբարք, յԱնտիոք
և ի Սիւրիա և ի Կիլիկիա եղբարցդ որ ի հեթանո-
24 սացդ էք, ողջոյն : Քանզի լուաք թէ ոմանք իրրեւ
ի մէնջ խռովեցուցին զձեզ բանիւք՝ խախտել զան-
ձինս ձեր, առանց թլփատել և պահել զօրէնսն,
25 որոց ոչ հրամայեցաք, Հաճոյ թուեցաւ մեզ միա-
բան ժողովեալոցս, արս ընտրեալս յղել առ ձեզ
ընդ սիրելիս մեր, ընդ Բառնաբայ և ընդ Պաւղո-
26 սի, Արք՝ որք մատնեցին զանձինս իւրեանց վասն
27 անուան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի : Արդ
առաքեցաք զՅուդա և զՇիղա, և նոցա ի բանից
28 զնոյն պատմել : Զի հաճոյ թուեցաւ Հոգւոյն Սրբոյ
և մեզ մի՛ ինչ աւելի բեռն դնել ձեզ, բայց միայն
29 ի կարեւորացս յայսոցիկ. Ի բաց կալ ի զոհելոյ

---

[1]Ոմն, են ի յաւիտենից Տեառն ամենայն գործք իւր
[2]Ցն, արս գլխաւորս ի մէջ եղբարց. (23) Գրեալ

կոց և յարենէ և ի հեղձուցելոյ և ի պոռնկու-
թենէ. յորոց պահեալ զանձինս բարւոք գործէք.
ողջ լերուք։
30 Եւ նաքա արձակեալք էջին յԱնտիոք, և ժո-
31 ղովեալ զժողովուրդն՝ ետուն զԹուղթն։ Եւ ըն-
թերցեալ ուրախ եղեն ի վերայ մխիթարութեանն։
32 Յուդա և Շիղա, որ և նաքա մարգարէք էին, բա-
նիւք բազմօք մխիթարեցին զեղբարս և հաստատե-
33 ցին։ Եւ եղեալ անդ ժամանակս՝ արձակեցան խա-
34 ղաղութեամբ յեղբարց [1]առ առաքեալսն։ [2]Եւ
35 հաճոյ թուեցաւ Շիղայի մնալ անդէն։ Բայց Պաւ-
ղոս և Բառնաբաս շրջէին յԱնտիոք, ուսուցանել
և աւետարանել և այլով բազմօք զբանն Տեառն։
36 ԴՋ. Իսկ յետ աւուրց ինչ ասէ Պաւղոս ցԲառ-
նաբաս, Դարձցուք և շրջեսցուք զեղբարբք քոսո
ամենայն քաղաքաց յորս քարոզեցաք զբանն Տեառն
37 թէ որպէս ունիցին։ Բառնաբաս կամէր առնուլ
38 և զՅովհաննէս զկոչեցեալն Մարկոս. Բայց Պաւ-
ղոս աղաչէր թէ զմեկնեալն ի նոցանէ ի Պամփիւ-
լեայ և զչեկեալն ընդ նոսա ի գործն մի՛ առնուլ
39 ընդ ինքեանս։ Եւ եղեւ գժտութիւն՝ մինչեւ մեկ-
նել նոցա ի միմեանց, Բառնաբայ առնուլ զՄար-
40 կոս նաւել ի Կիպրոս։ Եւ Պաւղոսի ընտրեալ զՇի-
ղա եւ՝ անձն արարեալ շնորհացն Աստուծոյ յեղ-
41 բարց անտի, եւ շրջէր ի կողմանս Ասորւոց և Կի-
լիկեցւոց, և հաստատէր զեկեղեցիսն։

---

[1]Որ՝ առ որս առաքեցինն զնոսա

[2]Յոմանս պակասէ

Գլ. ԺԶ

1 Եկն եհաս ի Դերբէ և ի Լիւստրա. և ահա աշա-
կերտ ումն էր անդ անուն Տիմոթէոս, որդի կնոջ
2 Հրէի հաւատացելոյ և հօր հեթանոսի. Որ վկայ-
եալ էր ի Լիւստրացւոց և յԻկոնացւոց եղբարց՝
3 Զսա կամեցաւ Պաւղոս ընդ իւր տանել, և առեալ
թլփատեաց զնա վասն Հրէիցն որ էին ի տեղիսն
յայնոսիկ, քանզի գիտէին ամենեքին զհայրն նորա
4 թէ հեթանոս էր։ Իբրեւ անցանէին ընդ քաղաքսն,
աւանդէին նոցա պահել զհրամանսն պատուիրեալս
5 յառաքելոցն և յերիցանցն որք յԵրուսաղէմ։ Եւ
եկեղեցիքն հաստատէին ի հաւատս, և յաւելուին
ի թիւն հանապազօր։
6 Դէ. Եւ շրջեցան ընդ Փռիւգիա և ընդ կողմանս
Գաղատացւոց, արգելեալք ի Հոգւոյն Սրբոյ խօսել
7 զբանն յԱսիա։ Բայց եկեալ առ Միւսեաւս՝ թե-
լադրէին երթալ ի Բիւթանիա, և ոչ համարձա-
8 կեաց նոցա Հոգին Յիսուսի։ Եւ անցեալ զոտ
9 Միւսիա՝ իջին ի Տրովադա։ Եւ տեսիլ երեւեցաւ
ի գիշերի Պաւղոսի. այր ումն Մակեդոնացի կայր,
աղաչէր զնա և ասէր, Անցեալ ի Մակեդոնիա օգ-
10 նեացես մեզ։ Եւ իբրեւ զտեսիլն ետես, վաղվաղակի
խնդրեցաք ելանել ի Մակեդոնիա, տեղեկացեալք
թէ հրաւիրեաց զմեզ Տէր աւետարանել նոցա։
11 Եւ ելեալ ի Տրովադայ դէպ ուղիղ գնացաք ի
12 Սամոթրակէ, և ի վաղիւ անդր ի Նէր քաղաք. եւ
անտի ի Փիլիպպուս, որ է առաջին վիճակ Մակե-
դոնացւոց՝ քաղաք կողոնիա. և անդ ի քաղաքին
13 դադարեալ մեր աւուրս ինչ, Յաւուր շաբաթու

ելաք արտաքոյ քաղաքին առ գետափնն ուր հա-
մարէին աղօթս մատուցանել, և նստեալ խօսեաք
14 ընդ ժողովեալ կանայսն։ Եւ կին ումն անուն Լի-
դիա, ծիրանավաճառ ի Թիւատիր քաղաքէ, եր-
կիւղած Աստուծոյ, լուաւ, զորոյ Տէր իակ երից
15 զսիրտն անցոյց խօսիցն Պաւղոսի։ Եւ իբրեւ մկրտե-
ցաւ ինքն և տունն իւր, աղաչէր և ասէր, Եթէ
համարիք զիս հաւատացեալ Տեառն, մտեալ ի
տունն իմ ապերուք. և բռնադատեաց տարաւ զմեզ։
16 Եւ եղեւ մինչ երթայաք մեք յաղօթս, պատա-
հեաց մեզ աղախին ումն զոր ունէր սյա հարցուկ,
որ շահս բազումս տայր տերանց իւրոց մոգելովքն։
17 Նա զհետ եղեալ Պաւղոսի և մեր՝ աղաղակէր և
ասէր, Արքս սյս ծառայք Աստուծոյ Բարձրելոյ
են, որ պատմեն ձեզ զճանապարհս փրկութեան։
18 Եւ զսյս առնէր ի բազում աւուրս. զայրացեալ
Պաւղոս՝ դարձաւ և ասէ ցսյն, Պատուիրեմ քեզ
յանուն Յիսուսի Քրիստոսի ելանել ի դմանէ և
19 ել ի նմին ժամու։ Իբրեւ տեսին տեարք նորա եթէ
հատաւ յոյս շահի նոցա, առեալ զՊաւղոս և
20 զՇիղա՝ ձգեցին ի հրապարակ առ իշխանան։ Եւ ա-
ծեալ զնոսա առ զօրագլուխան՝ ասեն, Արքս սյս
խռովեցուցանեն զքաղաքս մեր. Հրեայք
21 են, Եւ պատմեն սովս զոր չէ արժան մեզ
ընդունել և ոչ առնել, զի Հռովմայեցիք եմք։
22 Եւ կուտեցաւ ամբոխն ի վերայ նոցա. և զօրա-
գլուխքն պատառեցին զՀանդերձս [1]իւրեանց, հրա-
23 մայեցին գան հարկանել. Եւ բազում վէրս եդեալ

---

[1] Ց-ՅՀ, նոցա

ի վերայ նոցա՝ արկին ի բանտ, պատուիրեցին բան.
24 տապետին զգուշութեամբ պահել զնոսա: Որոյ առեալ զայսպիսի պատուէր՝ արկ զնոսա ի ներքին բանտն, և զոտս նոցա պնդեաց ի կոճեղ:
25 Եւ ի մէջ գիշերոյն Պաւղոս և Շիղա կային յաղօթս և օրհնէին զԱստուած. ունկն դնէին նոցա
26 կալանաւորքն: Եւ եղեւ յանկարծակի շարժումն մեծ մինչեւ շարժել հիմանց բանտին, և բացան անդէն դրունքն ամենայն, և ամենեցուն կապանք
27 լուծան: Իրրեւ զարթեաւ բանտապետն և եռես բացեալ զդուրս բանտին, ձգեաց զսուսեր և կամէր երթալ զիւրովին, կարծէր փախուցեալ գկապեալն: Եւ կոչեաց ի ձայն մեծ Պաւղոս և ասէ,
28 Մի՛ ինչ գործեր ընդ անձն քո չար, քանզի ամենեքին աստ եմք: Խնդրեաց լոյս և դիմեաց ի ներքս,
29 և զահի հարեալ անկաւ առաջի Պաւղոսի և Շիղայի· Եւ ածեալ զնոսա արտաքս, ասէ, Տէարք,
31 զի՞նչ պարտ է ինձ առնել զի ապրեցայց: Եւ նոքա ասեն, Հաւատա ի Տէր Ցիսուս Քրիստոս, և
32 ապրեսցիս դու և [1]ամենայն տուն քո: Եւ խօսեցան նմա զբանն Տեառն, և ամենեցուն որ էին ի
33 տան նորա: Եւ առեալ զնոսա ի նմին ժամու գիշերոյն՝ լուաց ի վիրաց սոսկ, և մկրտեցաւ ինքն
34 և իւրքն ամենեքեան անդէն վաղվաղակի: Եւ ածեալ զնոսա ի տուն իւր՝ եդ առաջի նոցա սեղան. և ուրախ եղեւ ամենայն տումքն հաւատալ Աստուած:
35 Եւ իրրեւ այգ եղեւ, առաքեցին զօրապետքն զնուիրական և ասեն, Արձակեա

---

[1] ի Բ–ղ–ո պ–ի–ո–ե

36 զարթո զայդոսիկ : Եւ պատմեաց բանտապետն
զբանն՝ Պաւղոսի, եթէ Առաքեցին զօրագլուխքն
զի արձակիցիք. արդ ելէք և երթայք խաղաղու-
37 թեամբ : Իսկ Պաւղոս ասէ ցնոսա, Գան հարեալ
զմեզ հրապարակաւ, արս անմեղս Հռովմայեցիս,
արկին ի բանտ, և արդ լռելեա՞յն հանեն զմեզ. ոչ
այդպէս, այլ եկեսցեն ինքեանք իսկ հանցեն զմեզ :
38 Եւ պատմեցին զօրագլխացն նուիրակքն զբանն.
զահի հարան իբրեւ լուան թէ Հռովմայեցիք են,
39 և եկեալ աղաչեցին զնոսա : Եւ իբրեւ հանին, ա-
40 ղաչէին գնալ ի քաղաքէն : Եւ ելեալ ի բանտէն
մտին առ Լիդիա, և տեսեալ զեղբարս՝ մխիթա-
բեցին զնոսա և գնացին :

ԳԼ. ԺԷ

1 ԵԱ. Եւ շրջեալ ընդ Ամփիպոլիս և ընդ Ապողո-
նիա՝ եկին ի Թեսաղոնիկէ, ուր էր ժողովուրդ
2 Հրէից : Եւ ըստ սովորութեանն Պաւղոս եմուտ
առ նոսա, և ի շաբաթս երիս խօսեցաւ ընդ նոսա
3 ի գրոց : Բանայր և դնէր առաջի եթէ պարտ էր
Քրիստոսի չարչարել և յառնել ի մեռելոց, և թէ
նա է Քրիստոսն՝ Յիսուս զոր ես պատմեմ ձեզ :
4 Եւ ոմանք ի նոցանէ հաւանեցան, և վիճակեցան
Պաւղոսի և Շիղայի, բայց պաշտօնէիցն հեթանո-
սաց էր բազմութիւն յոյժ, և ի կանանց գլխաւո-
5 րաց ոչ սակաւք : Եւ նախանձեցան [1]Հրեայքն, և
առեալ արս ոմանս դռեհիկս անօրէնս, ամբոխ ա-
րարեալ խռովեցին զքաղաքն. և կուտեալ յա-

---

[1] Ոմանք, անհաւատն Հրեայքն

պարանան Յասոնին, խնդրէին զնոսա ածել ի հրա-
6 պարակ։ Եւ իբրեւ ոչ գտին զնոսա, քարշէին զՅա-
սոնն և զոմանս եղբարս առ քաղաքապետսն, բո-
ղոք բարձեալ թէ Որք զաշխարհս խռովեցին՝ սոքա
7 և այսր հասին. Զորս ընկալեալ է Յասոնի. և
սոքա ամենեքեան հակառակ հրամանացն Կայսեր
8 գործեն, թագաւոր զոմն ասեն զՅիսուս։ Եւ խռո-
վեցուցին զժողովուրդսն և զքաղաքապետսն որ
9 լսէին զայս։ Եւ առեալ երաշխաւորութիւն առ ի
10 Յասոնեայ և յայլոցն՝ արձակեցին զնոսա։ Բայց
եղբարք վաղվաղակի գիշերոյն յուղարկեցին զՊաւ-
ղոս և զՇիղա ի Բերիա. որք իբրեւ հասին անդր,
11 ի ժողովուրդն Հրէից գնացին։ Զի սոքա էին ազ-
նուագոյնք քան որ ի Թեսաղոնիկն էին. որք ընկա-
լան զբանն ամենայն յօժարութեամբ, հանապազ
12 քննէին զգիրս եթէ իցէ՞ այս այսպէս։ Եւ բազումք
ի նոցանէ հաւատացին և ի յունաց կանանց գաս-
13 տից և յարանց ոչ սակաւք։ Բայց իբրեւ գիտացին
որ ի Թեսաղոնիկէ Հրեայքն էին եթէ և ի Բերիա
պատմեցաւ ի Պաւղոսէ բանն Աստուծոյ, եկին և
անդր շարժել և խռովեցուցանել զժողովուրդսն։
14 Յայնժամ զՊաւղոս վաղվաղակի առաքեցին եղ-
բարք գնալ մինչեւ ի ծովեզր. և մնացին Շիղա և
15 Տիմոթէոս անդէն։ Եւ որք տանէին զՊաւղոս՝ ա-
ծին զնա մինչեւ Աթենս. և առեալ պատուէր
առ Շիղա և Տիմոթէոս զի վաղվաղակի եկեսցեն
առ նա, և գնացին։
16 ԵԲ. Եւ Աթենս ի մնալն նոցա Պաւղոսի՝ ջայ-
րանայր հոգի նորա ի նմա, զի տեսանէր ի կա-
17 պաշտութեան զքաղաքն։ Եւ խօսէր ի ժողովրդեանն

ընդ Հրեայս և ընդ պաշտօնեայսն, և ի հրապա-
18 րակն զամենայն օր որոց և պատահէին։ Ոմանք
Epիկուրեանցն և իՍտոյիկեանց փիլիսոփայից հա-
կառակէին ընդ նմա. և ոմանք ասէին, Ջի՞նչ կա-
միցի սերմանաբաղս այս խօսել. իսկ այլք՝ Թէ Օ-
տարոտի ինն դից Թուի պատմիչ լինելոյ. քանզի
19 զՅիսուս և զյարութիւնն աւետարանէր։ Եւ ա-
ռեալ զնա ածին յԱրիսպագոսն, և ասէին, Կա-
րասցո՞ւք իմանալ Թէ ի՛նչ է նոր վարդապետու-
20 թիւնդ որ ի քէն պատմի։ Օտարացուցչս ինն բե-
րես ի լսելիս մեր, կամիմք դիտել Թէ ի՛նչ կամի-
21 ցի այս լինել։ (Ջի Աթենացիք ամենեքին և եկք
օտարք ոչ յայլ ինչ պարապէին, բայց ասել ինչ
22 կամ լսել նորագոյնս։) Եկաց Պաւղոս ի մէջ Ա-
րիսպագին և ասէ, Արք Աթենացիք, ըստ ամենայ-
23 նի իբրեւ պաշտօնասէրս տեսանեմ զձեզ։ Քանզի
շրջեալ և տեսեալ զպաշտամունս ձեր, գտի բա-
գին մի յորում գրեալ էր Անծանօթի Աստուծոյ.
զոր դուքն յանծանօթս պաշտէք՝ ես զնոյն պատ-
24 մեմ ձեզ։ Աստուած որ արար զաշխարհս և զա-
մենայն որ ի նմա, նա երկնից և երկրի է Տէր. ոչ
25 ի ձեռագործ տաճարս բնակէ, Եւ ոչ ի ձեռաց
մարդկան պաշտի իբրեւ կարօտ իմիք. նա տայ ա-
26 մենայնի կեանս և շունչ և զամենայն ինչ։ Արար
ի միոջէ արեանէ զամենայն ազգս մարդկան՝ բնակել
ի վերայ ամենայն երեսաց երկրի, հաստատեաց
կարգեալ ժամանակս և սահմանագրութիւնս բնա-
27 կութեան նոցա՝ խնդրել զԱստուած. Ջի թերեւս
զննիցեն զնա և գտանիցեն. նա՝ և ոչ հեռի իսկ է
28 յիւրաքանչիւր ումեքէ ի մէնջ։ Ջի նովաւ կեամք

և շարժիմք և եմք, որպէս և ոմանք ի ձերոց ճար-
29 տարաց ասացին, թէ նորա և ազգ իսկ եմք: Եւ
արդ՝ որովհետեւ ազգ եմք Աստուծոյ, ոչ պար-
տիմք համարել ոսկւոյ կամ արծաթոյ կամ քարի
որ ի ճարտարութենէ և ի մտաց մարդոյ քանդա-
30 կեալ իցէ, զԱստուածականն լինել նմանող: Բայց
զժամանակս անգիտութեանն անտես արարեալ
Աստուծոյ, արդ զայս պատուիրէ [1]մարդկան՝ ամե-
31 նայն ումեք" ապաշխարել: Քանզի հաստատեաց օր
յորում պարտ է դատել զաշխարհս արդարու-
թեամբ ի ձեռն առնն որով սահմանեաց տալ հա-
ւատս ամենեցուն՝ յարուցեալ զնա ի մեռելոց:
32 Իբրեւ լուան զյարութիւն մեռելոց, ոմանք ծաղր
առնէին, կէսքն ասէին, Լուիցուք ի քէն վասն այ-
33 դորիկ մեւս անգամ: Եւ ապա Պաւղոս ել գնաց
34 ի միջոյ նոցա: Եւ ոմանք արք անկեալք ի նա՝ հա-
ւատացին, ընդ որս էր և Դիոնեսիոս Արիսպագա-
ցի և կին մի անուն Դամարիս և այլք ընդ նոսա:

ԳԼ. ԺԸ

1 ԵԳ. Յետ այսորիկ մեկնեալ Պաւղոսի յԱթենացւոց
2 անտի՝ եկն ի Կորնթոս. Եւ եգիտ զոմն Հրեայ, ա-
նուն Ակիւղաս, յազգէ Պոնտացի, այն ինչ եկեալ
էր յԻտալիայ, և զՊրիսկիղա կին նորա, վասն հրա-
մանին կղաւդեայ՝ որոշել զամենայն Հրեայս ի
3 Հռովմայ, և յարեցաւ ի նոսա: Եւ վասն զի համա-
րուեստ էր, եղեւ առ նոսա և գործէր, քանզի էին
4 խորանակարք արուեստիւ: Եւ խօսէր ի ժողովրդեանն

---

[1] Յոյն, ամենայն մարդկան ամենայն ուրեք

զամենայն շրջաթիւց, և հաւանեցուցանէր
5 զՀրեայս և զՀեթանոսս։ Իբրեւ իջին ի Մակեդո-
նիայ Շիղա և Տիմոթէոս, սոսկեր Հոգւովն Պաւ-
ղոս դնել վկայութիւն Հրէից թէ Յիսուս է Քրիս-
6 տոսն։ Եւ յընդդէմ դառնալ նոցա և ի հայհոյել,
թօթափեաց զձորձս և ասէ ցնոսա, Արիւն ձեր ի
գլուխ ձեր, քաւեալ եմ ես, յայսմ հետէ ի հե-
7 թանոսս երթամ։ Եւ գնացեալ անտի՝ եմուտ ի
տուն ուրումն, որոյ անուն էր [1]Տիտոս Յուստոս,
պաշտօնեայ Աստուծոյ. որոյ ապարանքն էին մերձ
8 ի ժողովատեղին։ Կրիսպոս ժողովրդապետ Հաւատաց
ի Տէր ամենայն տամբ իւրով. և բազմաց ի Կորնթ-
9 թացւոցն լուեալ՝ Հաւատացին և մկրտեցան։ Եւ
ասէ Տէր ի գիշերի տեսլեամբ ցՊաւղոս, Մի՛ երկնչիր,
10 այլ խօսեաց և մի՛ լռեր, Քանզի ես ընդ քեզ եմ,
և ոչ ոք ընդդէմ դարձցի քո՝ ի չարչարել զքեզ.
քանզի ժողովուրդ է իմ բազում ի քաղաքիս յայս-
11 միկ։ Եւ նստաւ անդ տարի մի և ամիսս վեց՝ ու-
սուցանել նոցա զբանն Աստուծոյ։
12 ԵԴ. Առ Գաղիովնաւ փոխանակաւ բդեշխին Ա-
քայեցւոց յարեան միաբան Հրեայքն ի վերայ Պաւ-
13 ղոսի, և ածին զնա յատեան. Եւ ասէին եթէ Ա-
տաքոյ օրինաց պատրէ սա զմարդիկ՝ պաշտել զԱս-
14 տուած։ Եւ իբրեւ մերձ էր Պաւղոս բանալ զբե-
րան իւր, ասէ Գաղիովն ցՀրեայսն, Եթէ էր ինչ
անիրաւութիւն կամ խարդախութիւն չարեաց, ով
15 Հրեայք, ի դէպ էր ինձ անսալ ձեզ։ Ապա եթէ
խնդիրք ինչ են վասն բանի և անուան և օրինաց

---

[1] Յոհան պոլոխ

ձերոց՝ տեսէք ձեզէն, ըստ նզի դատաւոր այդպիսի
16 իրաց չկամիմ լինել։ Եւ մերժեաց զնոսա յատեանէ
17 անտի։ Եւ առեալ ամենեցուն Ցունացն զՍոսթե-
նէս ժողովրդապետն՝ հարկանէին առաջիատենին,
և ոչինչ զայնմանէ Գաղիովնի փոյթ լինէր։
18 Բայց Պաւղոսի տակաւին ճնացեալ աւուրս բա-
զումս, յեղբարց հրաժարեալ նաւեր յԱսորիս, և
ընդ նմա Պրիսկիղա և Ակիւղաս, փոքրել զգլուխ
19 ի կենքրա, քանզի ուխտադիր էր։ Եւ հասեալ
յԵփեսոս՝ զնոսա եձող անդ, և ինքն մտեալ ի
20 ժողովուրդն խօսէր ընդ Հրեայսն։ Եւ աղաչեցին
զնա բազում ժամանակս լինել անդ, և ոչ ա-
21 յանձն Այլ հրաժարեաց ի նոցանէ և ասէ, [1]Պար.
22 ձեալ շրջեցայց Աստուծոյ կամօքն առ ձեզ. Ամ
բարձաւ յԵփեսոսէ, և իջեալ ի Կեսարիա՝ ել և
23 ետ ողջոյն եկեղեցւոյն, էջ յԱնտիոք։ Եւ եղեալ
անդ ժամանակ մի՝ ել շրջել կարգաւ ընդ Գա-
ղատացւոց աշխարհն և ընդ Փռիւգիա, հաստա-
տել զամենայն աշակերտեալսն։
24 Հրեայ ոմն [2]Ապեղէս անուն Աղեքսանդրացի յազ-
գէ, այր ճարտասանական, եկն ետես յԵփեսոս, զո-
25 րաւոր էր գրովք։ Սա էր տեղեկացեալ ճանա-
պարհին Տեառն, և եռայր հոգւով, խօսէր և ու-
սուցանէր ճշմարտութեամբ վասն [3]Յիսուսի. գիտէր
26 միայն զմկրտութիւնն Յովհաննու։ Սա սկսաւ հա-
մարձակել ի ժողովրդեանն. և լուեալ ի նմանէ

---

[1]Ոմն., Պարտ է ինձ ապաքէն զատաչխիկայ տօնն կատարել յԵրուսաղէմ, բայց դարձեալ
[2]Բ-ղ-ս., Ապողոս [3]Ոմն. Տեառն

Ակիւղայ և Պրիսկիղայ՝ առին զնա առ իւրեանս,
և ճշմարտագոյնս պատմեցին նմա զճանապարհն
27 Ապոլովայ։ Իբրեւ կամեցաւ նա գնալ յԱքայիա,
[1]յօժարեալ եղբարց՝ գրեցին առ աշակերտան
ընդունել զնա. որ իբրեւ եհաս անդր, բազում
նպաստ լինէր հաւատացելոցն ի ձեռն շնորհացն։
28 Քանզի պնդագոյն զՀրեայսն յանդիմանէր հրապա-
րակաւ ցուցանել գրովք՝ եթէ Քրիստոսն է Յիսուս։

ԳԼ. ԺԹ

1 ԵԵ. Եւ եղեւ մինչդեռ Ապողոս ի Կորնթոս էր,
Պաւղոսի շրջեալ գվերին կողմամբքն և իջանել
2 յԵփեսոս, և գտանել զոմանս զաշակերտս, Առ-
ցնոսա, եթէ Հոգի Սուրբ ընկալարո՞ւք ի հաւա-
տալն. Նոքա ասեն ցնա, Այլ և ոչ թէ Հոգի
[3]3 Սուրբ գոյ՝ լուեալ է մեր։ Եւ ասէ, Իսկ յի՞նչ
մկրտեցարուք. Նոքա ասեն, Ի Յովհաննու մկրտու-
4 թիւնն։ Եւ ասէ Պաւղոս, Յովհաննէս մկրտեաց
մկրտութիւն ապաշխարութեան [2]ամենայն ժողո-
վրդեանն և ասէր՝ զի որ գալոցն է յետ նորա՝ ի
նա հաւատասցեն, այսինքն է ի Յիսուս Քրիստոս։
5 Եւ իբրեւ լուան, մկրտեցան յանուն Տեառն Յի-
6 սուսի։ Եւ ի դնել ի վերայ նոցա Պաւղոսի զձեռն՝
եկն Հոգին Սուրբ ի վերայ նոցա, խօսէին լեզուս
7 և մարգարէանային։ Եւ էին ամենեքեան արք իբրեւ
8 երկոտասան։ Եւ մտեալ ի ժողովուրդն՝ համար-
ձակէր ամիս երիս, խօսէր և հաւանեցուցանէր

---

[1]Յոյն., քաջալերեցին եղբարքն,
[2]Յոյն., և ասէր ժողովրդեանն

9 վասն արքայութեանն Աստուծոյ: Իբրեւ ոմանք
խաւսանային և ընդդէմ դառնային բամբասել զճա-
նապարհն առաջի բազմութեանն, մեկնեալ ի նո-
ցանէ՝ որոշեաց զաշակերտսն, հանապազօր խօսէր
10 ի դիւանին Տիւրաննեայ ուրումն: Եւ այս եղեւ զեր-
կեամ մի, մինչեւ ամենայն բնակչացն Ասիացւոց
11 լսել զբանն Տեառն, Հրէից և հեթանոսաց: Եւ
զօրութիւնս ոչ սակաւս առնէր Աստուած ի ձեռն
12 Պաւղոսի. Մինչեւ ի հիւանդս տանել [1]ի քրտանէ
նորա թաշկինակս կամ վարշամակս, և մերժել ի
13 նոցանէ ախտից, և այսոցպէս չարից ելանել: Յան-
դգնեցան ոմանք և ի շրջող Հրէից, որ երդմնե-
ցուցիչք էին, անուանել ի վերայ այնոցիկ որք
ունէին այսպէս չարս՝ զանուն Տեառն Յիսուսի, և ա-
սէին, Երդմնեցուցանեմ զձեզ ի Յիսուս զոր Պաւ-
14 ղոսն քարոզէ: Էին ուրումն Սկեւեայ Հրէի քահա-
15 նապետի եւթն որդի, որ զայս առնէին: Պա-
տասխանի ետ այսն չար և ասէ ցնոսա, Զ՚Յիսուս
գիտեմ և զՊաւղոս ճանաչեմ, բայց դուք ո՞վ էք:
16 Եւ վազեաց այրն յորում էր այսն չար՝ ըմբռնեալ
[2]զերկոսեան յաղթահարեաց զնոսա, մինչեւ մերկս
17 և վիրաւորս փախչել ի տանէ անտի: Եւ այս յայտ-
նի եղեւ ամենայն Հրէից և հեթանոսաց որ բնա-
կեալ էին յԵփեսոս. և անկաւ երկեւղ յամենե-
սեան ի նոսա, և մեծանայր անուն Տեառն Յիսու-
18 սի: Եւ բազումք ի հաւատացելոցն գային, և խոս-
19 տովան լինէին և պատմէին զգործս իւրեանց: Եւ
բազումք ի կախարդասարացն բերէին զգիրսն, ոյ-

---

[1] Յ-ՆՆ, ի մարմնոյ [2] Ո՞ՀՒ, զնոսա

բէին առաջի ամենեցուն. և համարեցան զգինս
նոցա և գտանէին արծաթոյ բեւրս հինգ։
20 ԵԶ. Եւ այսպէս բանն Աստուծոյ աճէր և զօրա-
նայր։
21 Եւ իբրեւ կատարեցաւ այս, եդ Պաւղոս ի մտի
շրջել ընդ Մակեդոնիա և ընդ Աքայիա և գալ
յԵրուսաղէմ. ասէր եթէ ձեւս երթալոյն իմ անդր՝
22 պարտ է ինձ և զՀռովմ տեսանել։ Առաքեաց ի
Մակեդոնիա երկուս ի պաշտօնէիցն իւրոց, զՏիմո-
թէոս և զԵրաստոս, և ինքն ինաց ժամանակս ինչ
յԱսիա։
23 Եւ եղեւ ի ժամանակին յայնմիկ խռովութիւն
24 ոչ սակաւ վասն ճանապարհին։ Իսկ Դեմետրիոս ոմն
անուն արծաթագործ գործէր մեհեանս արծաթիս
Արտեմիս դից, և տայր ճարտարացն լինել ոչ սա-
25 կաւ շահ. Որ ժողովեաց իսկ և զձեւագէտս որ-
ուեւտին և ասէ, Արք, դուք ձեզէն իսկ գիտէք,
26 զի յայսմ գործոյ է շահ մեզ։ Եւ տեսանէք և
լսէք եթէ ոչ միայն զԵփեսացւոց, այլ գրեթէ
զամենայն իսկ Ասիացւոց, Պաւղոս այս հաւանե-
ցուցեալ շրջեաց բազում ժողով՝ ասել թէ Ոչ
27 են աստուածք ձեւագործք։ Եւ ոչ միայն այս ճգնէ
զմեր կողմնս գալ ի յանդիմանութիւն, այլ և զմե-
ծին աստուածոյ Արտեմեայ զմեհեանն յոչինչ հա-
մարել. նա և քակելոց եւս իցէ մեծութիւն նորա,
28 զոր ամենայն Ասիա և տիեզերք պաշտեն։ Եւ զայս
իբրեւ լուան, լի եղեն բարկութեամբ. աղաղակէին
29 և ասէին, Մեծ է Արտեմիս Եփեսացւոց։ Եւ լցաւ
քաղաքն խռովութեամբ, դիմեցին առ հասարակ
ի թէատրոնն, յափշտակեցին զԳայիոս և զԱրիս-

30 տարքոս Մակեդոնացի, զուղեկիցն Պաւղոսի։ Բայց
Պաւղոս իբրեւ կամեցաւ մտանել յամբոխն, ոչ
31 թողին զնա աշակերտքն։ Ոմանք և յԱսիապետացն
որ էին նորա բարեկամք՝ յղէին առ նա և աղա-
32 չէին, մի՛ տալ զանձն ի թէատրոնն։ Այլք պղ
իմն աղաղակէին, զի էր ժողովն նոցա խառնեալ, և
բազումք ի նոցանէ ոչ գիտէին թէ վասն որո ժո-
33 ղովեալ էցեն։ Եւ յամբոխէն բազմութենէ յառաջ
կալան զԱղեքսանդրոս, և իբրեւ ածին զնա յա-
ռաջ Հրեայքն, Աղեքսանդրոս շարժեաց զձեռն և
34 կամէր պատասխանի առնել ամբոխին։ Իբրեւ գի-
տացին թէ այրն Հրեայ է, միաբարբառ եղեալ
յամենեցունց՝ իբրեւ ժամս երկուս աղաղակել թէ
35 Մեծ է Արտեմիս Եփեսացւոց։ Լուեցոյց դպրապետն
զամբոխն և ասէ, Արք Եփեսացիք, իսկ ո՞վ է ի
մարդկանէ որ ոչ գիտէ զԵփեսացւոց քաղաքս մե-
հենազարդ մեծին Արտեմեայ դիցն և Դիոպետեայ։
36 Եւ զի այդ այդպէս է անշուշտ, ձեզ պարտ է
հանդարտեալ և մի՛ ինչ յանդգնութեամբ գործել։
37 Ածէք զարդ զայդոսիկ այսր, ոչ սրբհնակապուտս
38 և ոչ հայհոյիչս աստուածոյն մերոյ։ Զի եթէ Դե-
մետրիոս և որք ընդ նմա ճարտարք ունիցին ինչ
ընդ ումեք բանս, յատեան երթիցեն, և դատա-
39 րքք գոն, և ամբաստանն լիցին զմիմեանց։ Ապա
եթէ վասն այլ իրիք խնդիր իցէ, յօրինաւոր ժո-
40 ղովն վճարեսցի։ Քանզի և մեզ վիշտ վտանգի է
ընդ կացուցս այսր աւուր՝ առանց իրիք յանցանաց
լինելոյ, զորմէ ոչ կարասցուք պատասխանի տալ
վասն ժողովոյս այսորիկ։ Եւ զայս ասացեալ՝ ար-
ձակեաց զժողովն։

ԳԼ. Ի

1 ԵԷ. Եւ յետ դադարելոյ ամբոխին՝ կոչեաց Պաւ-
ղոս զաշակերտսն, [1]և մխիթարեաց." ողջոյն ետ և
2 ել գնաց ի Մակեդոնիա։ Եւ շրջեալ ընդ կողմանսն
ընդ այնոսիկ, և մխիթարեալ զնոսա բանիւք բազ-
3 մօք՝ եկն յԵլլադա։ Իբրեւ արար անդ ամիսս երիս,
եղեւ նմա դաւ ի Հրէից՝ մինչդեռ կամէր ելանել
յԱսորիս. խորհուրդ կալաւ դառնալ ընդ Մակե-
4 դոնիա։ Եւ երթայր ընդ նմա մինչեւ յԱսիա Սո-
սիպատրոս [1]Պիւռեայ Բերիացի, և ի Թեսաղոնի-
կեցւոց Արիստարքոս և Սեկունդոս, և Գայիոս
Դերբացի և Տիմոթէոս, և Ասիացիք՝ Տիւքիկոս և
5 Տրոփիմոս։ Սոքա յառաջ երթեալ՝ ձգային մեզ ի
6 Տրովադա։ Եւ մեք նաւեցաք յետ աւուրցն բա-
զարջակերաց ի Փիլիպպեայ, և եկաք առ նոսա ի
Տրովադա՝ մինչեւ յաւուրս հինգ. անդ դադարեցաք
աւուրս եւթն։

7 Եւ [2]յաւուրն շաբաթուց" մինչդեռ ժողովեալ
էաք բեկանել զհացն, Պաւղոս խօսէր ընդ նոսա
զի գնալոց էր ի վաղիւ անդր. և երկայնեաց զբանն
8 մինչեւ ի մէջ գիշերոյն։ Էին լապտերք բազումք ի
9 վերնատանն ուր էաք ժողովեալ։ Եւ նստէր ոմն
երիտասարդ անուն Եւտիքոս ի վերայ պատուհա-
նին, նիրհէր ի քուն թանձրութեան. ի խօսելն
Պաւղոսի յառաջս, ընկղմեալ ի քնոյ անտի՝ անկաւ
յերրորդ դասիկոնէն ի վայր, և բարձաւ մեռեալ։
10 Եւ իջեալ Պաւղոսի անկանէր զնովաւ, առնոյր

---

[1] Յոմանս պակասէ [2] Յօրն, ի միաշաբաթուէն

զնա ընդ գիրկս և ասէր, Մի խռովիք, քանզի հո-
11 գի սորա ի սմին է։ Եւ ել երեկ զՀացն և ճաշա-
կեաց. և բազում եւս խօսեցաւ մինչեւ յառա-
12 ւօտն, և ապա ել գնաց։ Եւ ածին զպատանին
13 կենդանի, և մխիթարեցան ոչ սակաւ։ Եւ մեք
մտեալ ի նաւն ամբարձաք յԱսոն, անտի ակն
ունէաք ժիւսանդամ առնուլ զՊաւղոս, զի այն-
պէս պատուիրեալ էր, մինչ ինքն [1]դցամնաքաւն
14 երթայր։ Եւ իբրեւ դիպեցաւ մեզ ի յԱսոն,
15 առեալ զնա եկաք ի Միտիլինէ։ Եւ անտի նաւ-
եալ՝ ի վաղիւ անդր հասաք հանդէպ Քիայ, և ի
մեւս օրն հասաք ի Սամոս, և [2]ի վաղիւ անդր ե-
16 կաք ի Միլետոն։ Զի ի մտի եդեալ էր Պաւղոսի
նաւել առ Եփեսոսս, որպէս զի մի՛ լինի նմա ժա-
մանակ ինչ յամել յԱսիա. քանզի փութայր,
եթէ հնար ինչ իցէ նմա, զօրն Պենտակոստէից եր-
թալ յԵրուսաղէմ։
17 ՁԱ. Եւ ի Միլետեայ յղեալ յԵփեսոս՝ կոչեաց
18 զերիցուսն եկեղեցւոյն։ Եւ իբրեւ եկին առ նա,
ասէ ցնոսա, Դուք ձեզէն գիտէք յօրէ յառաջնմէ
յորմէ եկի յԱսիա, ո՛րպէս ընդ ձեզ զամենայն
19 ժամանակն եղէ. Ծառայել Տեառն ամենայն խո-
նարհութեամբ, և բազում արտասուօք և փոր-
ձութեամբք որ դիպեցան ինձ ի նենդութեանց
20 Հրէից։ Ո՛րպէս ոչինչ զանգիտեցի յօգտակարացն
չպատմել ձեզ և ուսուցանել զձեզ հրապարա-
21 կաւ և առանձին. Տալ վկայութիւն Հրէից և Հե-

---

[1] կամ, հետի

[2] Ոմանք, Քնացեալ ի Տրոգիլիոն՝ ի վաղիւ

թանոսաց զսպաշխարութեանն որ առ Աստուած,
22 և զհաւատացն որ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս։ Եւ
արդ ահաւասիկ ես կապեալ Հոգւով երթամ Ե-
րուսաղէմ, և որ ինչ անդ ընդ իս անցանելոց իցէ՝
23 չգիտեմ։ Բայց զի Հոգին Սուրբ բաց քաղաքաց
քաղաքաց վկայէ ինձ, և ասէ եթէ կապանք և
24 նեղութիւնք ինձան քեզ։ Այլ [1]և ոչ՝ իւիք համա-
րիմ զանձն իմ պատուական՝ որպէս զկատարել
զընթացս իմ ուրախութեամբ, և զպաշտօնն զոր
առի ի Տեառնէ Յիսուսէ՝ վկայ լինել աւետարանի
25 շնորհացն Աստուծոյ։ Եւ արդ ահաւասիկ գիտեմ
ես, թէ ոչ եւս տեսանելոց էք զերեսս իմ դուք
ամենեքեան յորս շրջեցայ քարոզել զարքայու-
26 թիւնն [2]Աստուծոյ։ Վասն որոյ վկայութիւն դնեմ
ձեզ յաւուր յայսմիկ զի սուրբ եմ յարենէ ամե-
27 նեցուն։ Քանզի ոչ խորշեցայ ի չպատմելոյ ձեզ
28 զամենայն կամս Աստուծոյ։ Զգոյշ կացէք անձանց
և ամենայն հօտիդ, յորում եղ զձեզ Հոգին Սուրբ
տեսուչս՝ հովուել զժողովուրդ [3]Տեառն, զոր [4]ապ-
29 րեցոյց արեամբ իւրով։ Քանզի գիտեմ ես եթէ
յետ իմոյ մեկնելոյ գայցեն գայլք յափշտակողք ի
30 ձեզ, որ ոչ խնայեսցեն հօտին։ Եւ ի ձէնջ յա-
րիցեն արք որք խօսիցին թեւրա՝ ձգել զաշակերտան
31 զկնի իւրեանց։ Վասն այսորիկ արթուն կացէք
և յիշեցէք զի [5]զերեամ մի զցայգ և զցերեկ ոչ
դադարեցի արտասուօք խրատել զմի մի իւրաքան-

---

[1]Որոնք, ոչ ինչ փոյթ է ինձ, և ոչ [2]Յոմանս
պակաս [3]Որոնք, Աստուծոյ [4]Յոմանս, առաջաւ
[5]Որոնք է Յոյն օրինակաց, որպես և է Ղեւս՝ զերկեամ

32 չիւր։ Եւ արդ յանձն առնեմ զձեզ Աստուծոյ և բանի շնորհաց նորա, որ կարող է շինել և տալ ձեզ ժառանգութիւն ընդ ամենեսեան։
33 Արծաթոյ կամ ոսկւոյ կամ հանդերձից ոչ ու-
34 րուք ի ձէնջ ցանկացայ։ Դուք ինքնին գիտէք զի զպէտսն իմ և որոց ընդ իս էին՝ պաշտէին ձեռք-
35 այս։ Եւ զամենայն ինչ ցուցի ձեզ, զի այսպէս պարտ է վաստակել և գթալ զհիւանդս, և յիշել զբանն Տեառն Յիսուսի, զոր ինքն իսկ ա-
սաց, երանելի է մանաւանդ տալն քան առնուլն։
36 Եւ զայս իրրեւ ասաց, եդեալ ծունր ամենեքումբ՝
37 եկաց յաղօթս։ Բազում լալիւն եղեւ ամենեցուն, և անկեալ զպարանոցսն Պաւղոսի՝ համբուրէին
38 զնա։ Մորմոքէին մանաւանդ ի վերայ բանին զոր ասէր թէ ոչ եւս տեսանելոց են զերեսս նորա. և յուղարկեցին զնա ի նաւ անդր։

ԳԼ. ԻԱ

1 ՋԲ. Եւ իրրեւ եղեւ ելանել մեզ և մեկնել ի նոցանէ, հանդէպ գնացեալ եկաք ի Կով, և ի
2 վաղիւ անդր ի Հռոդոն և անտի ի Պատարա։ Եւ գտեալ նաւ մի զի երթայր ի Փիւնիկէ, ելեալ ի
3 նա գնացաք։ Եւ յայտ եղեալ Կիպրեայ՝ թողեք զնա ի ձախակողմն, նաւեցաք յԱսորիս և իջաք ի Տիւրոս, քանզի անդ էր նաւն թափելոց զբեռինն։
4 Եւ գտեալ զաշակերտան՝ կացաք անդ աւուրս եւթն. որք ասէին ցՊաւղոս ի ձեռն Հոգւոյն՝ մի
5 ելանել Երուսաղէմ։ Եւ իրրեւ եղեւ մեզ կա-տարել զաւուրսն՝ ելեալ գնացաք, յուղարկէալ զմեզ ամենեցուն հանդերձ կանանմբք և որդւովք

մինչեւ արտաքոյ քաղաքին. և եդեալ ծունր առ
6 ծովեզերին՝ կացաք յաղօթս։ Եւ հրաժարեցաք ի մի-
մեանց և ելաք ի նաւն, և նոքա դարձան յիւրեանց
7 տեղիս։ Եւ մեր զնաւն առխիթեալ ի Տիւրոսէ՝ հա-
սաք ի Պտողեմայիդա, և ողջոյն տուեալ եղբարց՝
8 եղեաք օր մի առ նոսա։ Եւ ի վաղիւ անդր ելեալ
անտի՝ եկաք ի Կեսարիա, և մտեալ յառաքեանն
Փիլիպպոսի աւետարանչի որ էր յԵւթանց անտի,
9 ագաք առ նմա։ Նորա էին դստերք չորք կոյսք՝
10 մարգարէք։ Եւ ի լինելն մեր անդ աւուրս բա-
զումս, էջ ոմն ի Հրէաստանէ մարգարէ՝ անուն Ա-
11 գաբոս. Եւ եկեալ առ մեզ, առեալ զգօտին Պաւ-
ղոսի՝ կապեաց զոտս և զձեռս իւր, և ասէ, Այս-
պէս ասէ Հոգին Սուրբ, Զայրն որոյ գօտիս այս է՝
այսպէս կապեսցեն յԵրուսաղէմ Հրեայք և մատ-
12 նեսցեն ի ձեռս հեթանոսաց։ Եւ իբրեւ լսեաք
զայն, աղաչէաք մեք և որ ի տեղւոջէն էին՝ չել-
13 նել նմա յԵրուսաղէմ։ Ցայնժամ պատասխանի
ետ Պաւղոս, Ջի՞նչ գործէք զի լայքդ և ճմլեցու-
ցանէք զսիրտ իմ. քանզի ես ոչ միայն կապելոյ,
այլ և մեռանելոյ յԵրուսաղէմ պատրաստ եմ
14 վասն անուանն Տեառն Յիսուսի [1]Քրիստոսի։ Եւ ի
չանսալն նորա՝ լռեցաք, ասեմք, Տեառն կամք լիցին։
15 ԺԶ. Եւ յետ աւուրցն այնոցիկ հանդերձեալ ե-
16 լանէաք յԵրուսաղէմ։ Եկին ընդ մեզ և յաշա-
կերտաց անտի Կեսարացւոց, և տանէին [2]զմեզ
առ որում վասնս ունելոց էաք՝ Մնասոնի ումեմն
17 Կիպրացւոյ առաջին աշակերտի։ Եւ ի մտանելն

[1]Յ-ման- պ-ոյ-ոք [2]ի ք-ոզ-ո- պ-ոյ-ոք

մեր յԵրուսաղէմ, խնդութեամբ ընկալան զմեզ
18 եղբարքն։ Ի վաղիւ անդր եմուտ Պաւղոս ընդ մեզ
19 առ Յակովբոս, և եկին ամենայն երիցունքն։ Եւ
ողջոյն տուեալ նոցա՝ պատմէր մի ըստ միոջէ զոր
արար Աստուած ի հեթանոսս ի ձեռն պաշտաման
20 նորա։ Եւ նոցա լուեալ փառաւոր առնէին զԱս-
տուած, և ասեն ցնա, Տեսանե՞ս, եղբայր, քանի
բեւրք են հաւատացելոցն Հրէից, և ամենեքեան
21 նախանձաւոր օրինացն են։ Բայց իրազեկ եղեն
վասն քո թէ ապստամբութիւն ուսուցանես ի
Մովսիսէ որոց ի հեթանոսս ամենայն Հրեայք են,
ասես, մի՛ թլփատել նոցա զորդիս, և մի՛ ըստ
22 կրօնիցն գնալ։ Արդ զի՞նչ լինիցի. [1]ապաքէն լսեն՞
23 եթէ եկեալ ես։ Արդ զայս արա զոր ասեմք քեզ.
Են ի մեզ արք չորք ուխտադիրք յանձինս իւրեանց.
24 Զնոսա առեալ՝ սրբեացիս ընդ նոսա. և ծախեա ինչ
ի նոսա զի գերծցեն զգլուխս. և գիտասցեն ամե-
նեքին թէ զորոց իրազեկն եղեն զքէն՝ ոչինչ է, այլ
25 միաբանիս և դու պահել զօրէնսն։ Բայց վասն հա-
ւատացելոցն հեթանոսաց՝ մեք առաքեցաք որպէս
ընտրեցաք, մի՛ ինչ այնպիսի պահել նոցա. բայց
միայն զգուշանալ նոցա ի կռոց զոհելոյ և յարե-
26 նէ և ի հեղձուցելոյ և ի պոռնկութենէ։ Յայնժամ
Պաւղոսի առեալ զարսն՝ ի վաղիւ անդր ընդ նոսա
սրբեալ եմուտ ի տաճարն. յայտ առնել զկա-
տարումն աւուրցն սրբութեան, մինչեւ մատուսցի
ի վերայ իւրաքանչիւր ուրուք ի նոցանէ պատարագ։
27 ԶԴ. Եւ իբրեւ մերձ էին եւթն աւուրքն ի կա-

---

[1] Ոմանք, ապաքէն խռնելոց է ամբոխ, զի լսեն

տարել, տեսեալ զնա ի տաճարին Ասիացւոց Հրէից՝ զեղուին զնովաւ զամենայն զամբոխն. և արկեալ ի նա ձեռս՝ աղաղակէին, Արք Իսրայելացիք, օգնեցէք. այս այր է որ հակառակ ժողովրդեանն և օրինացն և տեղւոյս այսորիկ ամենեցուն ամենայն ուրեք ուսուցանէ, մինչեւ Հեթանոսս եւս եմոյծ ի տաճարն և պղծեաց զսուրբ տեղին: (Քանզի էր յառաջագոյն տեսեալ զՏրոփիմոս զԵփեսացի ի քաղաքին ընդ նմա. զոր կարծէին եթէ ի տաճար անդր եմոյծ Պաւղոս:) Շարժեցաւ քաղաքն ամենայն, և կուտեցաւ ժողովուրդն, և առեալ զՊաւղոս՝ ձգէին արտաքոյ տաճարին. և վաղվաղակի փակեցան դրունքն: Եւ խնդրէին զնա սպանանել. եհաս ղրոյց ի հազարապետ գնդին, եթէ խառնեալ է ամենայն Երուսաղէմ: Որոյ անդէն առեալ զօրականս և հարիւրապետս՝ դիմեաց ի վերայ նոցա. և նոցա տեսեալ զհազարապետն և զզօրականսն, դադարեցին ի հարկանելոյ զՊաւղոս: Յայնժամ մատուցեալ հազարապետն կալաւ զնա, և հրամայեաց կապել կրկին շղթայիւք, և հարցանէր թէ ո՞ իցէ, և զի՞նչ իցէ արարեալ: Այլք այլ ինչ աղաղակէին զնմանէ ի յամբոխին. իբրեւ ոչ կարաց գիտել զատոյգն վասն ամբոխին, հրամայեաց ածել զնա ի բանակն: Եւ իբրեւ եհաս յաստիճանսն, դէպ եղեւ բառնալ բերել զնա ի զօրականացն վասն բռնութեան ամբոխին: Քանզի զհետ երթայր բազմութիւն ժողովրդեանն և աւէին, բարձ զգա: Մինչդեռ մտանելոց էր Պաւղոս ի բանակն, ասէ ցհազարապետն, Եթէ արժա՞ն իցէ ինձ խօսել ընդ քեզ. և նա ասէ, Յունարէն

38 գիտեա՞ս. Մի՛ արդեւք դու իցես Եգիպտացին, որ
յառաջ քան զայս աւուրս ապստամբեցուցեր և
հաներ յանապատ չորս հազարս արս սիկարեանս։
39 Եւ ասէ Պաւղոս, Ես եմ այր Հրեայ ի Տարսոնէ
Կիլիկեցւոց, ոչ աննշան քաղաքի քաղաքացի. ա-
ղաչեմ զքեզ հրամայեա ինձ խօսել առ ժողո-
վուրդդ։
40 Եւ ի հրամայելն նորա, Պաւղոս կացեալ ի վե-
րայ աստիճանացն՝ շարժեաց զձեռն ժողովրդեանն.
իբրեւ բազում լռութիւն լինէր, սկսաւ բարբա-
ռել Հեբրայեցւոց բարբառովն և ասէ,

ԳԼ. ԻԲ

1 Արք եղբարք և հարք, լուարուք ինձ այժմ առ
2 ձեզ պատասխանատուութեանս։ (Իբրեւ լուան
եթէ Հեբրայեցւոց լեզուաւն բարբառեցաւ նոցա՝
3 առաւել եւս դադարեցին ի լռութիւն. Եւ նա
ասէ,) Ես եմ այր Հրեայ ծնեալ ի Տարսոն կիլի-
կեցւոց՝ սնեալ ի քաղաքիս յայսմիկ առ ոտս Գա-
մաղիելի, խրատեալ ըստ ճշմարտութեան հայրենի
օրինացն, նախանձայոյզ էի Աստուծոյ՝ որպէս ա-
4 մենեքեան դուք այսօր։ Որ զսոյն ճանապարհ վա-
րեցի մինչեւ ի մահ, կապել և մատնել ի բանտս
5 արս և կանայս. Որպէս և քահանայապետդ վկայէ
ինձ և ամենայն ծերակոյտդ, յորոց և թուղթս
առեալ առ եղբարս ի Դամասկոս երթայի, ածել
և անտի կապեալս յԵրուսաղէմ, զի պատժեսցին։
6 Եւ եղեւ ինձ ի գնալն և ի մերձենալ ի Դամաս-
կոս, զմիջաւուրքն յանկարծակի յերկնից փայլա-
7 տակեալ լոյս սաստիկ զինեւս. Եւ անկայ յերկիր,

և լուայ բարբառ որ ասէր ցիս, Սաւուղ, Սաւուղ,
8 զի՞ հալածես զիս։ Եւ ես եաւ պատասխանի Թէ
Ո՞վ ես, Տէր. և ասէ ցիս, Ես եմ Յիսուս Նա-
9 զովրեցի զոր դուն հալածես։ Բայց որ ընդ ինն էին
ոյոյն տեսանէին[1], այլ ձայնն ոչ լսէին որ խօսէր
10 ընդ իս։ Եւ ասեմ, Զի՞նչ արարից, Տէր. և ասէ
ցիս Տէր, Յարուցեալ երթիցես ի Դամասկոս, և
անդ պատմեսցի քեզ վասն ամենայնի որ հրամանի
11 է քեզ առնել։ Իբրեւ ոչ տեսանէի ի փառաց լու-
սոյն այնորիկ, զձեռանէ ձգեալ ի նոցանէ որ ընդ
12 իս էին, մտի ի Դամասկոս։ Անանիա ոմն այր եր-
կիւղած ըստ օրինացն, վկայեալ յամենայն բնակ-
13 չաց որ ի Դամասկոս Հրեայքն էին, եկն եկաց առ
14 իս և ասէ, Սաւուղ եղբայր, ի վեր հայեաց։ Եւ
ես նոյնժամայն ի վեր հայեցայ ի նա. և նա ասէ
ցիս, Ասուած հարցն մերոց յառաջագոյն ընտրեաց
զքեզ ճանաչել զկամս նորա, և տեսանել զԱր-
15 դարն և լսել բարբառ ի բերանոյ նորա. Զի եղի-
ցես վկայ նորա առ ամենայն մարդիկ որոց տեսերն
16 և լուար։ Եւ արդ զի՞ հեղգաս, արի, մկրտեաց
17 և լուա զմեղս քո ի կարդալ զանուն նորա։ Եւ
եղեւ ինձ ի դառնալն յԵրուսաղէմ և կալ յա-
18 ղօթս ի տաճարին, լինել ի զարմացման, Եւ տե-
սանել զնա զի ասէր ցիս, Փութա եւ յԵրուսա-
ղեմ վաղվաղակի, քանզի չեն ընդունելոց զքո
19 վկայութիւնդ վասն իմ։ Եւ ես ասեմ, Տէր, ին-
քեանք իսկ գիտեն զի ես էի որ ի բանտն տայի և
զան հարկանէի ըստ ժողովրդոցն զհաւատացեալս

---

[1] Որոնք յաւելուն, և զայն հարան

20 ի քեզ։ Եւ յորժամ հեզոյր արիւնն Ստեփանոսի
վկայի քո, ես ինքն էի որ ի վերայ կայի, և կա-
մակից լինէի սպանման նորա, և պահէի զհանդերձս
21 սպանողացն նորա։ Եւ ասէ ցիս, Գնա, զի ես ի
հեթանոսս հեռաւորս առաքեցից զքեզ։
22 Եւ ունկն դնէին նմա մինչեւ ցայս բան, ապա
բարձին զձայնս իւրեանց և ասեն, Բարձ յերկրէ
23 զայդպիսիդ, զի չէ պարտ այդպիսւոյդ կեալ։ Եւ
յաղաղակելն նոցա և ընկենուլ զհանդերձս և զփո-
24 շին ցանել յօդս, Հրամայեաց Հազարապետն մու-
ծանել զնա ի բանակն, ասէր, զանիւ հարցանել
զնա, զի գիտացից վասն որո՛յ յանցման այնպէս ա-
25 ղաղակէին զնմանէ։ Եւ իբրեւ պրկեցին զնա փո-
կովք, ասէ Պաւղոս ցհարիւրապետն որ ի վերայ
կայր, Եթէ զայր Հռովմայեցի և անարատ պա՞ր
26 իցէ ձեզ զան հարկանել։ Իբրեւ լուաւ հարիւրա-
պետն, մատուցեալ առ Հազարապետն պատմեաց
և ասէ, Զի՞նչ կամիս առնել, քանզի այրս այս
27 Հռովմայեցի է։ Եւ մատուցեալ Հազարապետն
ասէ ցնա, Ասա դու ցիս, Հռովմայեցի՞ ես. և նա
28 ասէ, Այո։ Պատասխանի եառ Հազարապետն, Ե
բազում գլխոց զդինուորութիւնս գայս առայ.
29 ասէ Պաւղոս, Ես ծնեալ իսկ ի դմին եմ։ Եւ վաղ-
վաղակի ի բաց կացին ի նմանէ՝ որ [1]հարկանելոցն
էին զնա. և Հազարապետն իսկ երկեաւ, իբրեւ
գիտաց եթէ Հռովմայեցի է, և զի կապեալ եւ
էր զնա։
30 ԻԲ. Եւ ի վաղիւ անդր կամէր գիտել զճշմա-

---

[1] Կ՚ա՛, հարցանելոցն

բիան, թէ զի՛նչ չարախօսութիւն ի՛ցէ Հրէից, արձակեաց զնա, և հրամայեաց կոչել զքահանայապետսն և զամենայն ատեանն. և իջուցեալ զՊաւղոս՝ կացոյց ի մէջ նոցա։

ԳԼ. ԻԳ

1 Եւ հայեցեալ Պաւղոսի յատեանն՝ ասէ, Արք եղբարք, ես ամենայն ուղիղ մտօք գնացեալ եմ
2 առաջի Աստուծոյ մինչեւ ցայսօր։ Եւ քահանայապետն Անանիա հրամայեաց սպասաւորացն հար-
3 կանել զբերան նորա։ Յայնժամ Պաւղոս ասէ ցնա, Հարկանելոց է զքեզ Աստուած, որմ բռեալ, և դու նստիս դատել զիս բսո օրինաց, և առանց
4 օրինաց հրամայես զիս հարկանել։ Եւ որ շուրջն կային՝ ասեն, Զքահանայապե՞տ Աստուծոյ հայ-
5 հոյես։ Եւ ասէ Պաւղոս, Ոչ գիտէի, եղբարք, եթէ ի՛ցէ քահանայապետ. գրեալ իսկ է, Զիշխան ժո-
6 ղովրդեան քո ոչ հայհոյեացես։ Իրրեւ գիտաց Պաւղոս եթէ մի կողմն սադուկեցւոց է և մեւսն փարիսեցւոց, աղաղակէր ի մէջ ատենին, Արք եղբարք, ես փարիսեցի եմ, որդի փարիսեցւոյ. վասն յուսոյ և յարութեան մեռելոց ես առաջիկ դա-
7 տիմ։ Եւ զայս իրրեւ ասաց, եղեն հերձուածք փարիսեցւոցն և սադուկեցւոց, և պատուհասեցաւ
8 բազմութիւնն, զանգի սադուկեցիքն ասեն, Չիք յարութիւն և ոչ հրեշտակ և ոչ հոգի, բայց փա-
9 րիսեցիքն խոստովանին զերկոսեան։ Եւ եղեւ աղաղակ մեծ. յոտն կացին ոմանք ի դպրաց անտի ի կողմանէ փարիսեցւոց, հակառակէին և ասէին, Ոչինչ չարութիւն գտանեմք յառնս յայսմիկ, բայց

10 եթէ հոգի խօսեցաւ ի դմա կամ հրեշտակ[1]։ Եւ ի
բազմանալ ամբոխին՝ երկուցեալ հազարապետն թէ
գուցէ ճեղքիցի Պաւղոս ի նոցանէ, հրամայեաց
զօրականին իջանել յափշտակել զնա ի միջոյ նո-
11 ցա, ևածել ի բանակն։ Եւ ի վաղուձան գիշերին
եկաց առ նմա Տէր և ասէ, Քաջալերեաց, Պաւղէ,
զի որպէս վկայեցեր վասն իմ Յերուսաղէմ, այն-
պէս պարտ է քեզ և ի Հռոմ վկայել։
12 Զէ։ Եւ իբրեւ այգ եղեւ, [2]արարեալ ժողով
Հրէից՝ նզովեցին զանձինս, ոչ ուտել և ոչ ըմպել
13 մինչեւ սպանցեն զՊաւղոս։ Եւ էին աւելի քան
զքառասունն որոց զայս ընդ միմեանս երդմունս ա-
14 րարեալ էր։ Որք մատեան առ քահանայապետսն
և երիցունս և ասեն, Նզովիւք նզովեցաք զանձինս
15 ոչ ինչ ճաշակել մինչեւ սպանցուք զՊաւղոս։ Բայց
դուք զգացուցէք հազարապետին հանդերձ առ-
նելն, զի իջուսցէ զնա առ ձեզ, որպէս թէ կամի-
ցիք ճշմարտագոյնս ինչ գիտել զնմանէ. և մեք
յառաջ քան զմօտել նորա՝ պատրաստ եմք ի սպա-
16 նանել զնա։ Եւ լուեալ քեռորդւոյն Պաւղոսի
զդաւաճանութիւնն՝ եկն եմուտ ի բանակ անդր,
17 պատմեաց Պաւղոսի։ Եւ կոչեցեալ Պաւղոսի առ
իւր զմի ի հարիւրապետաց անտի՝ ասէ, Զպատա-
նիս զայս տար առ հազարապետն, զի ունի ինչ
18 պատմել նմա։ Եւ նորա առեալ զնա տարաւ առ
հազարապետն և ասէ, Կապեալն Պաւղոս կոչեաց
զիս, և աղաչեաց զպատանիս զայս ածել առ քեզ,

---

[1] Յոյն՝ յոգիէ, այլ մարտիցուք ընդ Աստուծոյ
[2] Յոյն՝ միաբանեալ ոմանց ի Հրէից

19 ունի ինչ խօսել ընդ քեզ։ Առեալ զձեռանէ նո
րա հազարապետին՝ գնաց ի մէկուսի, հարցանէր թէ
20 Ջի՞նչ ունիս խօսել ընդ իս։ Եւ նա ասէ, Հրեայք
միաբանեցին աղաչել զքեզ, զի ի վաղիւ զՊաւղոս
իջուցես յատեան, իբրեւ թէ կամիցին ինչ ճշմար-
21 տագոյնս հարցանել վասն նորա. Արդ դու մի՛
անսայցես նոցա, քանզի դարան գործեալ է նմա
ի նոցանէ սուելի քան զքառասունն, որ նզո-
վեցին զանձինս ոչ ուտել և ոչ ըմպել՝ մինչեւ
սպանցեն զնա. արդ պատրաստ են և սպասեն
22 քումմ հրամանի։ Ապա հազարապետն արձակեաց
զպատանին՝ պատուիրեալ մի՛ ումեք ասել թէ
զայս ղգացուցեր ինձ։

23 Եւ կոչեաց երկուս ի հարիւրապետացն և ասէ,
Պատրաստեցէք զօրականս երկերիւր, որպէս զի
երթիցեն մինչեւ ի Կեսարիա, և հեծեալս եւ-
թանասուն և տիգաւորս երկերիւր, յերից ժա-
24 մուց գիշերոյն, եւ գրաստս պատրաստական՝ որ-
պէս զի իջուցեալ զՊաւղոս ապրեցուցեն առ
փեղիքս դատաւոր. Գրեալ թուղթ որ ունէր օ-
րինակ զայս. Կղաւդիոս Լիւսիաս, առ քաջ
դատաւորդ փեղիքս, ողջոյն։ Զայրս զայս կալ-
եալ ի Հրէից և մերձ ի սպանանել ի նոցանէ,
հասեալ ի վերայ զօրականաւ ապրեցուցի, իմա-
ցեալ թէ Հռովմայեցի է։ Կամեցայ գիտել զպնդան
վասն որոյ ամբաստանէին զդմանէ, իջուցի զդա
յատեան նոցա։ Զոր գտի ամբաստանեալ վասն
հնդրոյ իրիք իւրեանց օրինաց. և ոչինչ որ-
ժանի մահու կամ կապանաց ունէր ինչ։ Իբ-
րեւ ազդ եղեւ ինձ նենգութեան յայրդ լինելոյ

[1]ի նոցանէ՝ յղեցի՛ առ քեզ. հրամանն առեալ և
չարախօսացն խօսել դադարեսցէ առաջի քո. ողջ լեր:
31 Եւ զօրականացն ըստ հրամանի նորա առեալ
32 զՊաւղոս՝ ածին գիշերոյն յԱնտիպատրիս: Եւ ի
վաղիւ անդր արձակեալ զհեծելսն ընդ նմա եր-
33 թալ դարձան ի բանակն: Նորա մտին ի Կեսարիա,
և տուեալ ցդատաւորն զԹուղթն առաջի կո-
34 ացուցին նորա և զՊաւղոս: Իբրեւ ընթերցաւ, ե-
հարց թէ յորմէ՞ նահանգէ իցէ. և առուգեալ
35 եթէ ի Կիլիկեայ է, Լուսից քեզ, ասէ, յորժամ
և չարախօսքն քո եկեսցեն. և հրամայեաց յապա-
րանն Հերովդի պահել զնա:

ԳԼ. ԻԴ

1 ԷԱ. Եւ յետ հինգ աւուր էջ քահանայապետն
Անանիա հանդերձ ծերովք ոմանօք, և ճարտա-
րախօսաւ Տերտիւղեաւ ոմանօք, որք և զդատուցն
2 դատաւորին վասն Պաւղոսի: Եւ ի կոչելն զնա
ակսաւ Տերտիւղոսն ամբաստան լինել և ասել
Բազում խաղաղութիւն գտեալ է ի քէն և իրաց
3 ուղղութիւն ազգիս այսորիկ քով խնամով. Ա-
նայնիւ և ամենայն ուրեք շնորհակալ եմք, քա-
4 փելիքս, ամենայն գոհութեամբ: Բայց զի մի՛ ա-
ւելի եւս աշխատ արարից զքեզ, աղաչեմ լսել
5 մեզ կարճ ի կարճոյ քոյին հեզութեամբդ: Գտաք
զայրս զայս ապականիչ և խռովիչ ամենայն
Հրէից որք են ընդ տիեզերս, և առաջնորդ նա-
6 զովրացւոց հերձուածոյն: Որ և զտաճարն իսկ կա-

---

[1] Ոմանք, ի Հրէից՝ իսկոյն յղեցի

մեցաւ պղծել զոր և կալաք, [1]և ըստ մերոց օրի-
7 նաց դատել կամեցաք։ Եկեալ Լիւսիաս հազա-
րապետ՝ մեծաւ բռնութեամբ ի ձեռաց մերոց ե-
8 հան։ Հրամայեաց և չարախօսացն նորա գալ առ
քեզ։" յորմէ դու իսկ բաւական լինիցիս վերաքին
դատեալ, ամենայնի հասու լինել զորոց մեք մա-
9 բասանեմք զդմանէ։ Միաբանեցին և Հրեայքն,
ասեն, Այդպէս է։

10 Պատասխանի ետ Պաւղոս, յակնարկել նմա դա-
տաւորին խօսել, ի բազում ամաց լինել քեզ դա-
տաւոր ազգիս այսորիկ գիտեմ, յօժարութեամբ
11 վասն իմոց իրաց պատասխանի առնեմ։ Քանզի
կարող ես գիտել, զի ոչինչ աւելի է իմ քան
զաւուրս երկոտասան յորմէ հետէ ելի երկիր պա-
12 գանել յԵրուսաղէմ։ Եւ ոչ ի տաճարի անդ գտին
զիս ընդ ումեք խօսեցեալ, և կամ ժողովս արար-
13 եալ բազմաց, ոչ ի ժողովուրդս, եւ ոչ ի քաղա-
քի. և ոչ յանդիմանն առնել կարեն քեզ վասն
14 որոյ այժմ չարախօսեն զինէն։ Բայց զայս խոստա-
նամ քեզ, եթէ ըստ ճանապարհին զոր ասեն
հերձուած, այնպէս պաշտեմ զՀայրենի Աստուածն։
Հաւատացեալ ամենայնի որ ինչ յօրէնսն և ի
15 մարգարէս գրեալ է։ Ունիմ յոյս առ Աստուած,
որում և դոքա իսկ ակն ունին թէ յարութիւն
16 լինելոց է[2] արդարոց և մեղաւորաց։ Յորում և ես
իսկ ճգնիմ, անխիղճ միտս ունել առ Աստուած
17 և առ մարդիկ յամենայն ժամ։ Ի բազում ամաց
ողորմութիւնս եկի առնել յազգիդ իմում, և

---

[1] Ի բազմ. պալոք [2] Ոմանք յաւելուն, մեռելոց,

18 եւտու պատարագիս. Որովք գտին զիս սրբեալ ի
19 տաճարին, ոչ բազմօք և ոչ ամբոխիւ, Ոմանք
Ասիացւոց անտի Հրեայք, որոց պարտ էր գալ
առաջի քո և ամբաստանն լինել, եթէ ունիցին ինչ
20 զինէն. Եւ կամ ինքեանք սոքա ասասցեն, զի՞նչ
գտին յիս անիրաւութիւն մինչդեռ կայի յատե-
21 նին: Բայց միայն վասն միոյ բարբառոյս այսորիկ
զոր աղաղակեցի մինչ կայինն ի մէջ նոցա, եթէ
Վասն յարութեան մեռելոց դատիմ ես այսօր ի
22 ձէնջ: Եւ յապաղեաց զնոսա Փելիքս, զի ստու-
գագոյնս գիտէր վասն ճանապարհին, ասէ, Յոր-
ժամ Լիւսիաս հազարապետ իջցէ այսր՝ տեղե-
23 կացայց վասն ձեր: Հրամայեաց հարիւրապետին
պահել զնա և ունել յընդարձակի, և մի՛ զք
յիւրոց անտի արգելուլ ի պաշտելոյ զնա:
24 ԷՓ. Եւ յետ աւուրց ինչ եկն Փելիքս հանդերձ
Դրուսիղաս կնաւ իւրով, որ էր Հրեայ, կոչեաց
զՊաւղոս և լուաւ ի նմանէ վասն որ ի Յիսու-
25 Քրիստոս հաւատոցն: Եւ ի խօսելն նորա վասն
արդարութեան և ժուժկալութեան և հանդերձեալ
դատաստանին, զահի հարեալ Փելիքս՝ ետ պա-
տասխանի, Դու առ այժմ երթ, և յորժամ ժամ
26 լիցի, կոչեցից զքեզ: Միանգամայն և ակն ունէր
թէ տացի ինչ նմա ի Պաւղոսէ, վասն որոյ և առէք
27 կոչեցեալ զնա խօսէր ընդ նմա: Եւ ի կատարել
երկուց ամաց՝ եկն փոխանակ Փելիքսի Փեստոս
Պորկիոս. իբրեւ կամեցաւ շնորհս առնել Հրէից
Փելիքս, եթող զՊաւղոս կապեալ:

---

[1] Ոմանք, զնա, կամ յերթալոյ առ նա

ԳԼ· ԻԵ

1 Փեստոս իբրեւ եհաս յիշխանութիւնն, յետ երից
2 աւուրց ել յԵրուսաղէմ ի Կեսարեայ: Եւ զգա-
ցուցին նմա [1]քահանայապետքն և գլխաւորք Հրէիցն
3 զՊաւղոսէ, եւ աղաչէին խնդրեալ շնորհս ի նմա-
նէ, զի կոչեսցէ զնա յԵրուսաղէմ. դարան դոր-
4 ծեալ սպանանել զնա ի ճանապարհի: Իսկ Փես-
տոս արար պատասխանի պահել զնա ի Կեսարիա,
5 թէ ինքն իսկ ընդ հուպ անդր երթալոց էր: Եւ որ
ի ձէնջ կարողքդ իցեն, ասէ, ընդ իս իջցեն, և
եթէ իցէ ինչ յանձն ինչա, ամբաստան լիցին
6 զնմանէ: Եւ լեալ անդ աւուրս ոչ աւելի քան
զութ կամ զտասն, եկն էջ ի Կեսարիա. և ի վա-
ղիւ անդր նստեալ յատեանի՝ հրամայեաց ածել
7 զՊաւղոս: Եւ իբրեւ եկն, կացին շուրջ զնովաւ
որ յԵրուսաղեմէ իջեալ էին Հրեայքն, բազում
և ծանր ինչս դնէին զորս ոչ կարէին ցուցանել:
8 Քանզի առնէր պատասխանի Պաւղոս եթէ Ոչ յո-
րէնս Հրէից և ոչ ի տաճարն և ոչ ի կայսր ինչ
9 ինչ մեղաւոր եմ: Բայց Փեստոս կամեցեալ Հրէիցն
շնորհս առնել՝ պատասխանի ետ Պաւղոսի և ասէ,
կամի՞ս յԵրուսաղէմ երանել, և անդ վասն դոցին
10 իրաց դատել առաջի իմ: Եւ ասէ Պաւղոս, Յա-
տենի կայսեր հասեալ կամ ուր պարտ է ինձ դա-
տել· Հրէից ինչ չեմ մեղաւոր, որպէս և դու
11 իսկ քաջ գիտես: Ապա եթէ մեղաւոր իցեմ և
արժանի ինչ մահու գործեցի, ոչ զանգիտեմ ի

---

[1] Յոյն, քահանայապետն

մեռանելոյ. իսկ եթէ ոչ ինչ իցէ զորոց սոքա ամբաստան լինին զինէն, ոչ ոք կարէ զիս դոցա շնորհել:
12 Ես. ի կայսր բողոքեմ: Յայնժամ Փեստոսի խոսեցեալ ընդ խորհրդակցին արար պատասխանի, ի կայսր բողոքեցեր, առ կայսր երթիջիր:
13 ԷԳ. Իբրեւ անցին աւուրք ինչ, Ագրիպպաս արքայ և Բերինիկէ եկին ի կեսարիա յողջոյն Փես-
14 տոսի: Եւ իբրեւ աւուրս բազումս հանէին անդ, Փեստոս զկոյս արքային զՊաւղոսէ և ասէ, Այր
15 մի է սատ մնացեալ կապեալ ի փելիքսէ: վասն որոյ իբրեւ էոգայ յԵրուսաղէմ, զգացուցին ինձ քահանայապետքն և գլխաւորք Հրէից, խնդրելին
16 զինէն առնել նմա պատուհաս: Որոց ետու պատասխանի եթէ Չէ օրէն Հռովմայեցւոց շնորհել ումեք [1]զոք, մինչեւ ամբաստանեալն յանդիման ունիցի զդատախազն, և տեղի պատասխանւոյ
17 առնուցու վասն ամբաստանութեանն: Եւ իբրեւ եկին այսր, ոչինչ յապաղեցի, այլ ի վաղիւն
18 նստեալ յատենի՝ հրամայեցի ածել զայրն: վասն որոյ մնաուցեալ ամբաստանքն և ոչ մի ինչ ինաս չարութեան ի մէջ բերէին զորոց ես կարծէի.
19 Բայց խնդիրս ինչ որ վասն իւրեանց պաշտամանն ունէին ընդ նմա, և վասն Յիսուսի ուրումն մեռեալ, զոր ասէր Պաւղոս թէ կենդանի է: Իբրեւ յանհնարս մնի վասն այսպիսի իրաց քննութեան, ասեմ եթէ կամիցի երթալ յԵրուսաղէմ, և անդ
21 դատել վասն նոցին իրաց: Բայց ի Պաւղոսի բողբեղն զի պահեսցի ի Քաջի արանցն յանդիմա-

---

[1] Ո՛ՀԱԽ, զոք ի սատակումն

նութիւն, հրամայեցի պահել զնա՝ մինչեւ տաց
22 տանել առ կայսր։ Ագրիպպաս ցփեստոս ասէ,
կամէի և ես լսել առնն. և նա ասէ, ի վաղիւ
լուիցես։
23 Եւ ի վաղիւ անդր իբրեւ եկն Ագրիպպաս և Բե-
րինիկէ բազում երեւելի ոպատուք, և մտին յա-
տեանն հանդերձ հազարապետօքն և արամբք պա-
տուականօք քաղաքին. և հրամայեալ փեստոսի
24 ածին զՊաւղոս։ Եւ ասէ փեստոս, Արքայ Ագ-
րիպպա, և ամենայն արք որք ընդ մեզ էք, տե-
սանէ՞ք զսա. վասն որոյ ամենայն ժողովք Հրէից
ամբաստան եղեն ինձ յԵրուսաղէմ և աստ, աղա-
25 ղակէին թէ Չէ պարտ դմա կեալ։ Բայց ես ի վե-
րայ հասի թէ ոչ ինչ է դորա արժանի մահու գոր-
ծեալ, և դորա ինքնին բողոք կալեալ առ Քաջ
26 արանցն, խորհեցայ յղել։ Վասն որոյ ստուգու-
թեամբ ինչ գրել տեառն իմում ոչ ունիմ. վասն
այնորիկ ածի զդա առաջի ձեր, և մանաւանդ ա-
ռաջի քո, արքայ Ագրիպպա, որպէս զի վերատին
27 քննեալ՝ մարթացից ինչ գրել։ Քանզի անպատեհ
իմն թուի ինձ տալ տանել կապեալ մի, և ոչ ինչ
ձեռս զնմանէ նշանակել։

ԳԼ. ԻԶ

1 Եւ Ագրիպպաս ասէ ցՊաւղոս, Հրամայեալ է
քեզ վասն քո խօսել։ Յայնժամ Պաւղոսի ձգեալ
2 զձեռն առնէր պատասխանի. Վասն ամենայն ամ-
բաստանութեան Հրէիցդ գինէն, արքայ Ագրիպ-
պա, համարիմ զանձն երանելի, զի քո առաջի
3 այսօր տալոց եմ պատասխանի։ Մանաւանդ զի

գիտակ իսկ ես ամենայն կրօնից և խնդրոց Հրէից. վասն որոյ աղաչեմ երկայնմտութեամբ լսել ինձ։
4 Քանզի կենաց իմոց որ ի մանկութենէ, ի սկզբանէ լեալ յազգի անդ իմում յԵրուսաղէմ, տեղեակ
5 են ամենայն Հրեայք։ Յառաջագոյն գիտեն ի վաղուց հետէ, եթէ կամիցին վկայել, զի բաո ճշմարտագոյն կրօնից օրինացն մերոց կեցեալ եմ փա-
6 րիսեցի։ Եւ արդ վասն յուսոյն առ Հարսն եղելոյ աւետեացն յԱստուծոյ՝ դատեալ կամ յատենի.
7 Յոր երկոտասան ազգատոհմին մերոյ անպակաս զցայգ և զցերեկ պաշտեալ ակն ունին հասանել. վասն որոյ յուսոյ ամբաստանիմ, արքայ, ի Հրէից։
8 Զի՞նչ անհաւատ թուի ձեզ եթէ Աստուած զմեռ-
9 եալս յարուցանէ։ Ես իսկ ինքնին պատշաճ համարէի զբազում ինչ հակառակ անուանն Յիսու-
10 սի Նազովրեցւոյ գործել։ Զոր և արարի իսկ յԵրուսաղէմ. և զբազումս ի սրբոցն ես բանտարգել առնէի, ի քահանայապետից առեալ իշխանու-
11 թիւն. և [1]զպատանեալսն նոցա բերէի համար՝ և բազում անգամ պատժեալ զնոսա՝ բռնադատէի հայհոյել. առաւել եւս մոլեալ ի վերայ նոցա՝ հալածէի մինչեւ յարտաքին քաղաքսն։
12 ԷԴ. Որով գնացեալ ի Դամասկոս՝ իշխանու-
13 թեամբ և հրամանաւք քահանայապետից, Զմիջաւուրըն ի ճանապարհի տեսի, արքայ, յերկնից առաւել քան զլուսաւորութիւն արեգական ծագեալ զինեւս լոյս, և զնոքաւք որ ընդ իմն երթային։

---

[1]Յոյն, ի սպանանել նոցա տայի հաւանութիւն

14 եւ յամենեցուն մեր անկանելն երկիր, լուայ ձայն
որ ասէր ցիս Հեբրայեցւոց բարբառովն, Սաւուղ,
Սաւուղ, ընդէ՞ հալածես զիս. խիստ է քեզ ընդդէմ
15 խթանի զքացել։ եւ ես ասեմ, Ո՞ ես, Տէր. և Տէր
16 ասէ, Ես եմ Յիսուս զոր դուն հալածես։ Այլ
արի և կաց ի վերայ ոտից քոց, զի վասն այսորիկ
երեւեցայ քեզ առնուլ զքեզ ի ձեռն պաշտօնեայ
և վկայ որոց տեսերդ [1]զիս, և որոց երեւեցայց
17 քեզ. փրկել զքեզ ի ժողովրդենէդ և ի հեթանո-
18 սաց, յորս ես առաքեցից զքեզ. բանալ զաչս
նոցա, դարձուցանել ի խաւարէ ի լոյս, և յիշխա-
նութենէ Սատանայի՝ յԱստուած. առնուլ նոցա
զթողութիւն մեղաց, և վիճակ ընդ սուրբս հա-
19 ւատովքն որ յիս։ Ուստի, արքայ Ագրիպպա, ոչ
20 եղէ անհաւատ երկնաւոր տեսլեանն. Այլ նախ
որոց ի Դամասկոս և յԵրուսաղէմ էին, և ընդ
ամենայն գաւառսն Հրէաստանի և ի հեթանոսս,
պատմեցի զղջանալ և դառնալ յԱստուած [1]կեն-
դանի, արժանի ապաշխարութեան գործս գործել։
21 Վասն այսորիկ Հրէից կալեալ զիս ի տաճարին՝
22 կամէին սպանանել։ Օգնութիւն հասեալ առ յԱս-
տուծոյ՝ մինչեւ ցայսօր կացի վկայեալ փոքու և
մեծի, ոչ ինչ արտաքոյ ասել քան զոր մարգա-
րէքն և Մովսէս խօսեցան զհանդերձելոցն լինելոյ.
23 եթէ չարչարելոց է Քրիստոսն, եթէ առաջին ի
յարութենէ մեռելոց՝ լոյս պատմելոց է ժողովր-
դեանն և հեթանոսաց։
24 Եւ նորա զայս պատասխանի տուեալ, Փեստոս

---

[1]Յունաց գրոց

ի ձայն մեծ ասէ, Մոլիս, Պաւղէ, բազում դպրու-
25 թիւնք զքեզ ի մոլութիւն դարձուցանեն: Իսկ
Պաւղոս ասէ, Ոչ մոլիմ, քաջդ Փեստոս, այլ
զգաճութեան և զճշմարտութեան բանս բարբա-
26 ռիմ: Գիտակ իսկ է այսոցիկ արքայ, ընդ որում
և համարձակեալդ խօսիմ. քանզի ծածկել ի քէն
իմիք ի սոցանէ չառնում յանձն. զի ոչ եթէ յան-
27 կեան ուրեք գործեալ իցէ այս: Հաւատա՞ս, ար-
քայ Ագրիպպա, մարգարէից. գիտեմ զի հաւա-
28 տաս: Եւ ասէ Ագրիպպաս ցՊաւղոս, փոքու իմն
29 հաւանեցուցանես զիս լինել քրիստոնեայ: Եւ Պաւ-
ղոս ասէ, Ընդրէի ՅԱստուծոյ և՛ փոքու և՛ մե-
ծաւ ոչ միայն զքեզ, այլ զամենեսեան որ լսեն
ինձ այսօր՝ լինել այսպիսի որպէս և ես եմ, բաց
ի կապանաց սոսկ:
30 Յառն եկաց արքայն և դատաւորն և Բերինիկէ,
31 և որ ընդ նոսայն նստէին: Եւ իբրեւ գնացին, խո-
սէին ընդ միմեանս և ասէին թէ Ոչ ինչ արժանի
32 մահու կամ կապանաց գործէ այրս այս: Իսկ Ագ-
րիպպաս ցՓեստոս ասէ, Արձակել մարթ էր զայրս
զայս, եթէ ոչ էր բողոքեալ ի կայսր:

ԳԼ. ԻԷ

1 ԷԵ. Իբրեւ հրամայեցաւ մեզ նաւել Իտալիա,
տային զՊաւղոս և զայլս ումանս կապեալս ցհարիւ-
բապետ մի, որում անուն էր Յուլիոս, Սեբաս-
2 տեան գնդին: Եւ ելեալ ի նաւ մի Ադրամինտա-
ցի, որ երթայր ի կողմանս Ասիացւոց, գնա-
ցաք. էր ընդ մեզ և Արիստարքոս Մակեդոն թե-
3 սաղոնիկեցի: Եւ ի վաղիւ անդր իջաք ի Սիդոն. և

մարդասիրութիւն ցուցեալ Յուլեայ առ Պաւղոս,
հրամայեաց առ բարեկամն երթալ և դարման
4 գտանել։ Եւ անտի ելեալ խոնարհագոյն նաւեցաք
5 ի Կիպրոս վասն հողմոյն ընդդէմ լինելոյ։ Յայնժամ ընդ մէջ ծովուն Կիլիկեայ և Պամփիլեայ
6 նաւեալ՝ իջաք ի Միւռա Լիկիացւոց։ Եւ անդ գտեալ հարիւրապետին նաւ մի Աղեքսանդրացի
7 որ երթայր Իտալիա՝ եմոյծ զմեզ անդր։ Եւ ի բազում աւուրս ծանրանաւեալք՝ հազիւ հասաք առ Կնիդեաւ. և ի չթողացուցանել մեզ հողմոյն,
նաւեցաք խոնարհագոյն ի կրետէ առ Սաղմոնեաւ,
8 Հազիւ անցեալ առ նովաւ՝ եկաք ի տեղի մի որ կոչէր Գեղեցիկ նաւահանգիստ, յոր հուպ էր քա-
9 ղաքն Ղասեա։ Եւ իբրեւ բազում ժամանակք անցանէին, և սկսալ եւս լինէր նաւելոյն. և վասն այն մինչ եւս պահոցն անցանելոյ, տայր խրատ
10 Պաւղոս, Եւ ասէր ցնոսա, Արք, տեսանեմ զի թշնամանօք և բազում վնասու ոչ միայն բեռինդ և նաւիդ, այլ և անձանց մերոց լինելոց է նա-
11 ւարկութիւնս։ Իսկ հարիւրապետն նաւապետին և նաւավարին առաւել անսայր քան բանիցն Պաւ-
12 ղոսի։ Իբրեւ դժպատեհ իմն թուէր նաւահանգիստն առ ի ձմերել, բազումք խորհեցան գնալ անտի. թերեւս կարասցեն հասանել ի փիւնիկէ՝ ձմերել ի նաւահանգստին կրետացւոց որ հայէր
13 ընդ հարաւակողմն և ընդ աշխարհն։ Եւ ի շնչել հարաւոյն, համարեցան ուր դիմեալն էին՝ հասանել. և արկեալ՝ մօտ անցանէին առ կրետեաւ։
14 Եւ ոչ յետ բազում ժամուց անկաւ զնովաւ հողմ
15 ուռուցիկ, որ կոչի Եւրակիկլոնէ։ Ընդ յափշտակել

նաւին և ի չհանդուրժել ընդդէմ հողմոյն, թոյլ
16 տուեալ երթայաք և գայաք։ Ի կղզի ինչ դիմեալ
որ կոչէր Կղաւդա, հազիւ կարացաք ըմբռնել
17 զմակոյկն. [1]Զոր առեալ՝ յօգնականութիւն կա-
պէին ընդ նաւն". երկուցեալք թէ գուցէ ի յոր-
ձանուտն անկանիցին, իջուցեալ զառագաստն՝
18 այնպէս երթային և գային։ Եւ ի սաստկագոյն
վշտանալոյն մերոյ ի վաղիւ անդր զկարասին ն-
19 կեցիկ առնէին։ Եւ յերրորդ աւուր ընդ [2]իւրեանց
20 ձեռն զգործին նաւին [3]ընկեցին։ Իբրեւ ոչ արեւ
և ոչ աստեղք երեւէին ի բազում աւուրս, և
ձմեռն ոչ սակաւ կայր ի վերայ, ապա բառնայր
21 ամենայն յոյս փրկութեան մերոյ։ Եւ զի բազում
աւուրս նօթի էին, յայնժամ Պաւղոս կացեալ ի
մէջ նոցա՝ ասէ, Պարտ էր ձեզ, ով արք, անսալ
ինձ և ոչ ելանել ի Կրետեայ և շահել զվիշտս
22 զայս և զվնասս։ Եւ արդ խրատեմ զձեզ քաջալե-
րել, զի վնաս անձին և ոչ միւսոյ ի ձէնջ լինիցի
23 բաց ի նաւէդ։ Քանզի երեւեցաւ ինձ յայսմ գի-
շերի հրեշտակ Աստուծոյ որոյ եմ եմ և պաշտեմ
24 զնա, Եւ ասէ, Մի՛ երկնչիր, Պաւղէ, կայսեր եւս
պարտ է քեզ յանդիման լինել. և ահա շնորհեալ
է քեզ Աստուծոյ զամենեսեան որ են ընդ քեզ
25 ի նաւիդ։ Վասն այսորիկ քաջալերեցարուք, արք,
զի հաւատամ յԱստուած եթէ այսպէս լինի զոր
26 օրինակ խօսեցաւ ընդ իս։ Բայց ի կղզի ինչ հաս-
նել մեզ անկանել։

---

[1]Ց-ՅՆ, Զոր առին, և օգնութիւնս ի կիր արկեալ՝ ա-
ծին պարան զնաւսն [2]Ո՛ՀԽ, մեր [3]Ո՛ՀԽ, ընկեցաք

27 էջ. Իբրեւ չորեքտասաներորդ գիշեր լինէր,
մինչդեռ ծփէաք ի Հանդրին անդունդս, ի մէջ
գիշերին կարծէին նաւավարքն եթէ հասեալ իցեն
28 յաշխարհ ուրեք։ Եւ ընկեցեալ զդունդան՝ գտին
զիրկս քսան, և սակաւ ինչ դադարեալ՝ դարձեալ
29 ընկեցին և գտին զիրկս հնգետասան։ Զահի հար-
եալ թէ գուցէ ի խիստ ինչ տեղիս անկանիցին,
յետուստ կողմանէ ընկեցին խարիսխս չորս, ըղձա-
30 նային այգուն լինելոյ։ Բայց նաւավարքն խնդրէին
փախչել ի նաւէ անտի, և իջուցեալ զկուրն ի ծով.
անդր՝ պատճառանօք որպէս թէ յառաջոյ կողմա-
31 նէ խարիսխս ձգելոց իցեն։ Ասէ Պաւղոս ցհարիւ-
րապետն և ցզօրականսն, Եթէ ոչ դոքա մնան ի
32 նաւիս, դուք ապրել ոչ կարէք։ Յայնժամ զօ-
րականքն հատին զլարս կրին և ի բաց ընկեցին։
33 Եւ մինչդեռ այգն կամէր լինել, աղաչէր Պաւղոս
զամենեսեան առնուլ կերակուր, ասէ, Այս չո-
րեքտասաներորդ օր է որում ակն ունիք նոքին
34 կատարել, և չէ ինչ ճաշակեալ։ Վասն որոյ ա-
ղաչեմ զձեզ ճաշակել կերակուր, զի այն իսկ
վասն ձերոյ փրկութեան է. զի ոչ ուրուք ի ձէնջ
35 մազ մի ի գլխոյ կորիցէ։ Եւ իբրեւ ասաց զայս,
առեալ հաց՝ գոհացաւ զԱստուծոյ առաջի ամե-
36 նեցուն, երեկ և սկսաւ ուտել։ Եւ քաջալերեցան
37 ամենեքին, և նոքա առին կերակուր։ Եւ էաք ա-
մենայն հոգիք ի նաւին երկերիւր եւթանասուն և
38 վեց։ Իբրեւ յագեցան կերակրոցն, թեթեւացու-
ցին զնաւն՝ թափեալ զցորեանն ի ծովն։
39 Եւ իբրեւ այգ եղեւ, զերկիրն ոչ ճանաչէին,
բայց զգոգ մի նշմարէին թէ ափն ծովուն իցէ. յոր

խորհէին, թէ հնար ինչ իցէ, զերծուցանել զնաւն։
40 Եւ զխարիսխան հատեալ՝ ընկեցին ի ծովն, թողա-
ցուցին զխառնելիս թեւոցն, և [1]ի բաց առին՝ զա-
ռագաստան, և եառն հողմոյն յափն կոյս ծովուն։
41 Անկեալ ի տեղի մի երկծով՝ թիւրեցին զնաւն. և
առաջին կողմն նաւին խրեալ անշարժ մնայր, և
42 յետին կողմն քակէր [2]ի բռնութենէն։ Եւ զօրա-
կանացն խորհուրդ արարեալ զի զկապեալսն սպան-
43 ցեն, և զի մի՛ ոք լուղիցի և փախիցէ։ Եւ Յարիւրա-
պետն քանզի կամեցաւ ապրեցուցանել զՊաւղոս՝
արգել զնոսա ի խորհրդոյն, հրամայեաց զի որ կա-
րողն իցեն լուղել՝ անկանիցին նախ և ի ցամաքն և.
44 լանիցեն. Եւ զայլսն՝ զո՛րս ի տախտակս, և զո՛րս
յայլ ինչ կահ ի նաւէ անտի. և այսպէս եղեւ ա-
մենեցուն փրծանել յերկիր։

ԳԼ. ԻԸ

1 Եւ ապրեալք՝ յայնժամ գիտացաք թէ [3]Մելիտե-
նէ էր անուն կղզւոյն. բայց բարբարոսքն չնորհե-
2 ցին ոչ սակաւ մարդասիրութիւն մեզ. Քանզի լու-
ցին խարոյկ, և ընկալան զամենեսեան զմեզ վասն
3 անձրեւին որ ստիպէր և վասն ցրտոյն։ Եւ ի ժո-
ղովել Պաւղոսի խուրձ մի չինչ բազում և դնել ի վե-
րայ խարուկին, իժ մի ի ջերմութենէն ելեալ՝ կա-
4 լաւ զձեռանէ նորա։ Եւ իբրեւ տեսին բարբա-
րոսքն կախեալ զգազանն զձեռանէ նորա, ասէին
ցմիմեանս, Ուրեմն սպանող է այրս այս, որ թէ-

---

[1] Ցոյն, բացին [2] Ոմանք, ի բռնութենէ ալեաց
[3] Ցոյն, Մելիտէ

պետեւ ապրեցաւ ի ծովէն, իրաւունքն չէտուն
5 կեալ։ Եւ նորա թօթափեալ զգազանն ի հուրն,
6 եղեւ նմա չար և ոչինչ։ Եւ նոքա ակն ունէին նմա
այտնլոյ կամ անկանելոյ և յանկարծակի մեռա-
նելոյ. իրրեւ շատ ակն կալեալ և տեսանէին թէ
ոչինչ ինաս եղեւ նմա, դարձեալ դարձուցին
7 զբանն և ասէին թէ աստուած ումն է։ Եւ շուրջ
զտեղեաւն զայնուիկ էին գեղք գլխաւորի կղզւոյն
որում անուն էր Պոպղիոս. որ առ զմեզ յերաշխի
8 զերիս աւուրս և սիրով ընկալաւ։ Եւ եղեւ հօրն
Պոպղեայ ի ջերմն և յախտ թանչից հիւանդանալ
դնել. առ որ մտեալ Պաւղոս և կացեալ յաղօթս
9 եդ զձեռն և բժշկեաց զնա։ Եւ իրրեւ այս եղեւ,
այլ հիւանդք որ էին ի կղզւոջն գային և բժշկէին,
10 Որք և բազում պատուով պատուեցին զմեզ. և
իրրեւ գնացաք, եւտուն որ ինչ պետք էին։
11 Եէ Եւ յետ երից ամսոց ելաք ի նաւ մի Աղեք-
սանդրացի որ ձմերեալ էր ի կղզւոջն նշանաւորաւ
12 Դիոսկուրացւոց։ Եւ իջեալ ի Սիրակուսա՝ եղեաք
13 աւուրս երիս։ Ուստի գնացեալ հասաք ի Հռեգի-
ոնն. և յետ աւուր միոյ ի շնչել հարաւոյն, երկ-
14 օրեայք եկաք ի Պատիողոս։ Ուր և գտաք եղբարս,
աղաչեցեալք ի նոցանէ լինել աւուրս եւթն. և
15 ապա ելաք ի Հռոմ։ Եւ անտի լուեալ եղբարց
զմեզնջ՝ ելին ընդ առաջ մեր մինչեւ Յորգոստոյն
Ապիեայ և երից կրպակաց. զորս տեսեալ Պաւ-
ղոսի գոհացաւ զԱստուծոյ և քաջալերեցաւ։
16 Եւ իրրեւ մտաք ի Հռոմ, [1]հրամայեցաւ Պաւ-

---

[1]Ոմանք, յանձն արար հարիւրապետն զկապեալսն զօրապետին, և հրամայեցաւ

ղասի լինել առանձինն հանդերձ զինուորաւն պահ-
17 պանաւ իւրով։ Եւ եղեւ յետ երից աւուրց կոչել
նմա զՀրէից գլխաւորս. և իբրեւ եկին, ասէ ցնո-
սա, Ես, արք եղբարք, ոչինչ հակառակ գործեալ
ժողովրդեանն կամ կրօնից հայրենեաց, կապեալ
յԵրուսաղեմէ մատնեցայ ի ձեռս Հռովմայեցւոց։
18 Որք իբրեւ դատեցան զիս, կամեցան արձակել,
վասն և ոչ մի ինչ մեղաս մահու գտանելոյ յիս։
19 Ի հակառակել Հրէից հարկ եղեւ բողոքել ի
կայսր, իբր ոչ եթէ զազգէն իմմէ ունելի ինչ չա-
20 րախօսել։ Վասն այսր պատճառանաց աղաչեցի
զձեզ՝ տեսանել և խօսել. քանզի վասն յուսոյն
21 Իսրայելի կամ ի շղթայս յայսոսիկ։ Եւ նոքա ա-
սեն ցնա, Մեք ո՛չ թուղթս ինչ վասն քո ընկա-
լաք ի Հրէաստանէ, և ո՛չ եկեալ ոք յեղբարց
պատմեաց կամ խօսեցաւ ինչ վասն քո չարու-
22 թիւն։ Բայց աղաչեմք ի քէն լսել թէ զինչ խոր-
հիցիս. զի վասն հերձուածոյդ այդորիկ յայտ իսկ
է մեզ, զի ամենայն ուրեք հակառակութիւն կրէ։
23 Ժամ եղեալ նմա օր մի, եկին ի վանն առ նա
բազումք, որոց պատմէր վկայութեամբ զարքայու-
թիւն Աստուծոյ. և հաւանեցուցանէր զնոսա վասն
Յիսուսի յօրինաց Մովսիսի և ի մարգարէից յայ-
24 գուէ մինչեւ ցերեկոյ։ Եւ ոմանք հաւանէին բա-
25 նից, և կէսք չհաւատային։ Եւ անմիաբանք լինել
ի միմեանց՝ արձակէին, յասելն Պաւղոսի բան մի
թէ Բարւոք խօսեցաւ Հոգին Սուրբ ի ձեռն Եսայ-
26 եայ մարգարէի առ հարսն մեր, Եւ ասէ. Երթ
առ ժողովուրդն, և ասասցես, Լսելով լուիջիք և
մի՛ իմասջիք, և տեսանելով տեսջիք և մի՛ տեսջիք.

27 Չի թանձրացաւ սիրտ ժողովրդեանն այնորիկ, և ականջօք իւրեանց ծանր լուան, և զաչս իւրեանց կափուցին, զի մի՛ երբեք տեսցեն աչօք, և ականջօք լուիցեն, և սրտիւք իմասցին և դարձցին, և
28 բժշկեցից զնոսա: Եւ արդ յայտնի լիցի ձեզ, զի հեթանոսաց առաքեցաւ փրկութիւնս Աստուծոյ,
29 նոքին և լուիցեն: [1]Եւ իբրեւ զայս ասաց, սրտագնացին ի նմանէ Հրեայքն, որք ունէին ի մէջ ինքեանց զբազում խնդիրս:"
30 Եւ եղեւ զերկեամ մի բովանդակ իւրով վար-
31 ձու: Եւ ընդունէր զամենեսեան որ մտանէին առ
32 նա: Քարոզէր զարքայութիւնն Աստուծոյ, և ուսուցանէր վասն Տեառն Յիսուսի Քրիստոսի անխափան ամենայն համարձակութեամբ:

---

[1]Այս համար պակաս յամենս

ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՍ

ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա

1 ԱԲ. **Պ**ԱՒՂՈՍ, ծառայ Յիսուսի Քրիստոսի, կո-
չեցեալ առաքեալ, որոշեալ յաւետարանն Ա-
2 ստուծոյ. Որ յառաջ խոստացաւ ի ձեռն մարգա-
3 րէից իւրոց գրովք սրբովք, վասն Որդւոյ իւրոյ
4 եղելոյ ի զաւակէ Դաւթի ըստ մարմնոյ, Սահմա-
նելոյ Որդւոյն Աստուծոյ զօրութեամբ ըստ Հոգւոյն
սրբութեան, ի յարութենէ ռեռելոց Յիսուսի Քրի-
5 ստոսի Տեառն մերոյ. Որով ընկալաք շնորհս և ա-
ռաքելութիւն՝ ի հնազանդութիւն հաւատոց յա-
6 ժենից հեթանոսաց վասն անուան նորա. Յորս և
7 դուք էք կոչեցեալ Յիսուսի Քրիստոսի. Ամենեցուն
որոց էք ի Հռոմ, սիրելեաց Աստուծոյ՝ կոչեցելոց
սրբոց, շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱ-
ստուծոյ Հօրէ մերմէ և ի Տեառնէ Յիսուսէ Քրիս-
տոսէ:

8 Նախ գոհանամ զԱստուծոյ իմոյ ի ձեռն Յիսուսի
Քրիստոսի վասն ձեր ամենեցուն, զի հաւատք
9 ձեր պատմեալ են ընդ ամենայն աշխարհ: Վկայ
է ինձ Աստուած, զոր պաշտեմն հոգւով իմով
յաւետարանի Որդւոյ նորա, թէ ո՛րպէս զյիշա-

10 տակս ձեր [1]առնեմ. Յամենայն ժամ յաղօթս իմ
աղաչելով զի թերեւս երբեք յաջողեացի ինձ կա-
11 մօքն Աստուծոյ գալ առ ձեզ՝ Քանզի անձկացեալ
եմ առանել զձեզ, զի փոխեցից ի ձեզ շնորհս
12 ինչ հոգեւորս առ ի հաստատել զձեզ. Այսինքն
է մխիթարակից լինել ձեզ վասն ընդ միմեանս
13 իմոյ և ձերդ հաւատոց: Ոչ կամիմ եթէ տգէտք
իցէք, եղբարք, զի բազում անգամ յօժարեցի գալ
առ ձեզ, և արգելեալ մինչեւ ցայժմ. զի և ի ձեզ
14 գտից պտուղ ինչ որպէս և յայլ հեթանոսս: Քան-
զի Յունաց և Բարբարոսաց, իմաստնոց և անմտից
15 պարտապան եմ. Այնպէս՝ որչափ իմովքեանն յօժա-
րութեամբ, և ձեզ որ ի Հռոմ էք՝ աւետարանել:
16 Զի ոչ եթէ ամօթ ինչ համարիմ զաւետարանն,
քանզի զօրութիւն Աստուծոյ է ի փրկութիւն ա-
մենայն հաւատացելոց. նախ Հրէի և ապա հեթա-
17 նոսի: Զի արդարութիւնն Աստուծոյ նովաւ յայտ-
նի հաւատոց ի հաւատս. որպէս և գրեալ է թէ
Արդարն ի հաւատոց կեցցէ:
18 ԱԳ. Քանզի յայտնեալոց է բարկութիւն Աստու-
ծոյ յերկինից ի վերայ ամենայն ամբարշտութեան
և անիրաւութեան մարդկան, որք զճշմարտու-
19 թիւնն անիրաւութեամբ ունին: Վասն զի գիտու-
թիւնն Աստուծոյ յայտնի է ի նոսա. քանզի Աս-
20 տուած իսկ յայտնեաց նոցա: Զի աներեւոյթք նո-
ցա ի սկզբանէ աշխարհի արարածովքս իմացեալ
առանին, այսինքն է [2]միանջենաւորութիւն և զո-

---

[1]Գ՚ՅՆ, առնեմ անգադար

[2]Գ՚ՅՆ, միանջենաւոր զօրութիւն

բութիւն՝՝ և աստուածութիւն նորա. զի ոչ գտա-
21 նիցեն ամենեւին տալ պատասխանի: Զի ծանեան
զԱստուած, և ոչ իբրեւ զԱստուած փառաւորե-
ցին կամ գոհացան. այլ նանրացան ի խորհուրդս
իւրեանց, և խաւարեցան անմտութեամբ սիրտք
22 նոցա: Զանձինս առ իմաստուն ունէին, յիմա-
23 րեցան: Եւ փոխեցին զփառս անեղծին Աստուծոյ
ի նմանութիւն պատկերի եղծանելի մարդոյ և
24 թռչնոց և չորքոտանեաց և սողնոց: Վասն որոյ
մատնեաց զնոսա Աստուած ի ցանկութիւն սրտից
նոցա ի պղծութիւն, անարգել զմարմինս իւրեանց
25 յանձինս իւրեանց, որք փոխանակեցին զճշմար-
տութիւնն Աստուծոյ ընդ ստութեան. [1]Հնազան-
դեցան և պաշտեցին զարարածս և ոչ զԱրարիչն,
26 որ է օրհնեալ յաւիտեանս: Ամէն: Վասն այնո-
րիկ մատնեաց զնոսա Աստուած ի կարիս անար-
գութեան, զի էգք նոցա փոխանակեցին զպէտս
27 բնականս ի պէտս անբնականս: Նոյնպէս և արուացն
թողեալ զբնական պէտս իգութեանն, բորբոքե-
ցան ցանկութեամբք իւրեանց ի միմեանս, արուք
ընդ արուս զխայտառակութիւն գործէին, և զդարձ
փոխարինին որ պարտ էր մոլորութեանն նոցա
28 յանձինս իւրեանց ընդունէին: Եւ որպէս զի ոչ
ընտրեցին զԱստուած ունել ի գիտութեան, մատ-
նեաց զնոսա Աստուած ի միտս անարգութեան
29 գործել զանարժանս. Լցեալք ամենայն անիրա-
ւութեամբ, պոռնկութեամբ, անզգամութեամբ,
ագահութեամբ, չարութեամբ, լի նախանձու,

---

[1] Յունն, երկիր պագին

ապանութեամբ, հեռիւ, նենգութեամբ, չարաբա-
30 րութեամբ. շոգմոգք, Զարախօսք, աստուածա-
տեացք, թշնամանողք, ամբարտաւանք, ամբար-
հաւաճք, գտիչք չարեաց, ծնողս անարգուք,
31 Անմիտք, ուխտադրուժք, անագորոյնք, [1]աննուէրք,
32 անողորմք. Որք հասեալ էին յԱստուծոյ իրա-
ւանցն վերայ եթէ զայսպիսիսն գործեն արժա-
նի են մահու. և ոչ միայն որ զայն առնեն, այլ
և որ կամակիցն լինին գործելեացն:

ԳԼ. Բ

1 Վասն որոյ առանց պատասխանի տալոյ ես, ով
մարդ, որ դատիս. զի որով դատիս զընկերն՝
զանձն քո դատապարտես, զի դու զնոյն գործես՝
որով դատիս:
2 ԱԴ. Քանզի գիտեմք, եթէ Աստուծոյ դատաս-
տանն ճշմարտութեամբ է ի վերայ այնոցիկ որ
3 զայնպիսիսն գործեն: Իսկ արդ խորհիցի՞ս զայս,
ով մարդ, որ դատիս զայնոսիկ որ զայնպիսիսն
գործեն, և դու զնոյն գործես, եթէ դու ապրելոց
4 իցես ի դատաստանացն Աստուծոյ: Եթէ զմեծու-
թեամբ քաղցրութեան նորա և զներելոյն և զեր-
կայնմտութեամբն արհամարհիցես, չգիտիցե՞ս զի
քաղցրութիւնն Աստուծոյ զքեզ յապաշխարու-
5 թիւն ածէ: Այլ ըստ խստութեան քումմ և ըստ
անզեղջ սրտի՝ գանձես անձին քումմ բարկութիւն
յաւուր բարկութեան և յայտնութեան արդար
6 դատաւորութեանն Աստուծոյ. Որ հատուցանէ

---

[1]Յոհան. պաֆաէ

7 իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց. Որ համբերու-
թեամբ են ի գործս բարութեան՝ փառս և պա-
տիւ և անեղծութիւն խնդրեն, կեանսն յաւի-
8 տենից: Իսկ որ ի հակառակութենէ անտի են և
ապստամբք ի ճշմարտութենէն և չհետ երթեալ
զանիրաւութեան՝ բարկութիւն և սրտմտութիւն,
9 նեղութիւն և անձկութիւն ի վերայ ամենայն մար-
դոյ որ գործէ զչար, նախ Հրէի և ապա Հեթանո-
10 սի: Փառք, պատիւ և խաղաղութիւն ամենայնի
որ գործէ զբարի, նախ Հրէի և ապա Հեթանոսի:
11 Զի ոչ է ակնառութիւն առաջի Աստուծոյ:
12 Ասե. Որք միանգամ արտաքոյ օրինացն մեղան՝
արտաքոյ օրինացն և կորնչին. և որք ընդ օրինօքն
13 մեղան՝ օրինօքն և դատեսցին. (Զի ոչ եթէ որ
լսելիք օրինացն են՝ արդարացեալ են առաջի Ա-
14 ստուծոյ, այլ առնելիք օրինացն արդարասցին: Ա-
յրժամ Հեթանոսք որ զօրէնս ոչ ունին՝ բնու-
թեամբ զօրինացն գործիցեն, նոքա որ զօրէնս ոչ
15 ունին՝ անձանց իւրեանց իսկ են օրէնք. Որք ցու-
ցանեն զգործս օրինացն գրեալ ի սիրտս իւրեանց՝
վկայութեամբ մտաց իւրեանց, և յանդիմանել
զմիմեանս ի խորհրդոց իւրեանց, կամ թէ պա-
16 տասխանի իսկ տալ.) Յաւուրն յորում դատիցի
Աստուած զդաղտնիս մարդկան ըստ աւետարանիս
իմում ի ձեռն Յիսուսի Քրիստոսի:
17 Ապա եթէ դու Հրեայ անուանեալ ես, և յեն-
18 ցեալ ես յօրէնսն, և պարծիս յԱստուած, և
գիտես զկամն նորա, և ընտրես զլաւն, և խրա-
19 տեալ ես յօրինացն. Վստահ ես յանձն քո ա-
20 ռաջնորդ լինել կուրաց, լոյս խաւարելոց, խրա-

տիչ անզգամաց, վարդապետ տղայոց, ունել զկերպարանս գիտութեան և ճշմարտութեան յօրինացն։
21 Իսկ արդ որ ուսուցանես զընկերն՝ զանձն քո ո՞չ ուսուցանես. որ քարոզես չգողանալ՝ գողանա՞ս.
22 Որ ասես չշնալ՝ շնա՞ս. որ գարշիս ի մեհենաց՝ զսե-
23 ղա՞նս կողոպտես. Որ օրինօքն պարծիս՝ յանցանել
24 բստ օրէնսն զԱստուա՞ծ անարգես։ Զի անուն Աստուծոյ վասն ձեր հայհոյի ի մէջ հեթանոսաց, որպէս և գրեալ է։
25 ԱՋ. Թլփատութիւն օգնէ, եթէ զօրէնսն պա-
հիցես. ապա եթէ յանցաւոր օրինացն իցես,
26 թլփատութիւն քո անթլփատութիւն եղեւ։ Իսկ եթէ անթլփատութիւնն զիրաւունս օրինացն պա-
հիցէ, ո՞չ ապաքէն անթլփատութիւն նորա ի
27 թլփատութիւն համարեսցի. Եւ դատիցի որ ի բնէ անթլփատութիւնն է, զօրէնսն կատարելով, զքեզ որ գրոցն և թլփատութեամբն յանցաւոր օրինացն
28 իցես։ Զի ոչ եթէ որ յայտնի Հրեայն է, և ոչ
29 որ յայտնի մարմնով թլփատութիւնն։ Այլ որ ի ծածուկ Հրեայն է, և թլփատութիւն սրտի, հոգւով և ոչ գրով. որոյ գովութիւնն ոչ ի մարդկանէ է, այլ յԱստուծոյ։

ԳԼ. Գ

1 Իսկ արդ զի՞նչ աւելի է Հրէին, կամ զի՞նչ օ-
2 գուտ ի թլփատութենէ անտի։ Բազում ինչ ամե-
նայն իրօք. նախ այն իսկ՝ զի հաւատարիմ եղեն
3 պատգամքն Աստուծոյ։ Իսկ արդ եթէ չէր հա-
ւատացեալ ոմանց, միթէ անհաւատութիւն նոցա
4 զԱստուծոյ հաւատան խափանէ՞ր. քաւ լիցի։ Արդ

եղիցի Աստուած ճշմարիտ, և ամենայն մարդ
սուտ, որպէս և գրեալ է, Որպէս արդար եղիցես
5 ի բանս քո, և յաղթեսցես ի դատել քեզ: Իսկ
արդ եթէ ապիրատութիւն մեր զԱստուծոյ ար-
դարութիւնն յանդիման կացուցանէ, ի՞նչ ասեմք·
միթէ անիրա՞ւ ինչ է Աստուած որ ածէ զբար-
6 կութիւն. Ըստ մարդկութեան ասեմ. քանզի լիցի·
ապա թէ ոչ՝ ի՞ւրդ դատի Աստուած զաշխարհ:
7 Զի եթէ ճշմարտութիւնն Աստուծոյ յիմում ստու-
թեանն առաւելաւ ի փառս նորա, ի՞ւ եւս ես իբ-
8 րեւ զմեղաւոր դատիմ: Եւ կամ թէ որպէս հայ-
հոյիմքն, և որպէս ասեն ոմանք զմէնջ ասել թէ
Արասցուք զչար ի եկեսցէ բարի· որոց դատա-
տանքն յիրաւի են:
9 Եւ արդ ի՞ւ իւիք առաւել իցեմք· ապաքէն և
ոչ իւիք· քանզի յառաջագոյն իսկ մեղադիր եղ-
եաք Հրէից և Հեթանոսաց, ամենեցուն ընդ մեղք
10 լինելոյ: Որպէս և գրեալ է թէ Ոչ ոք է արդար
11 և ոչ մի· Եւ ոչ գոյ որ իմանայ, և ոչ ոք է որ
12 խնդրէ զԱստուած: Ամենեքեան խոտորեցան ի միա-
սին և անպիտանացան· ոչ ոք է որ առնէ զքաղց-
13 րութիւն, ոչ ոք է մինչեւ ի մի: Գերեզման բաց
է կոկորդ նոցա· լեզուօք իւրեանց նենգաւորք ե-
14 ղեն· թոյնք իժից ի ներքոյ շրթանց նոցա· Որոց
15 բերանք անիծիւք և դառնութեամբ լի են: Երագ
16 են ոտք նոցա հեղուլ զարիւն· Բեկումն և թշուա-
17 ռութիւն ի ճանապարհս նոցա· Եւ զճանապարհն
18 խաղաղութեան ոչ ծանեան: Ոչ է երկեւղ Ա-
տուծոյ առաջի աչաց նոցա:
19 Բդ· Բայց գիտեմք, որ ինչ միանգամ օրէնքն

ասեն՝ այնոցիկ որ ընդ օրինաւքն են, ասեն. զի ա-
մենայն բերան խցցի, և դատապարտ լիցի ամենայն
20 աշխարհ՝ Աստուծոյ։ Զի ի գործոց օրինաց ոչ ար-
դարասցի ամենայն մարմին առաջի նորա, քանզի
օրինաւքն է գիտութիւն մեղաց։
21 Բայց արդ առանց օրինացն իսկ արդարութիւնն
Աստուծոյ յայտնեալ է՝ վկայեալ յօրինաց անտի
22 և ի մարգարէից։ Քանզի արդարութիւնն Աստու-
ծոյ ի հաւատոց անտի Յիսուսի Քրիստոսի [1]յամե-
23 նայն հաւատացեալս՝՝. և ոչինչ է խտիր։ Քանզի
ամենեքեան մեղան, և նուազեալ են ի փառաց
24 անտի Աստուծոյ։ Եւ արդարանան ձրի նորին շնոր-
հօք ի ձեռն փրկութեանն որ ի Քրիստոս Յիսուս։
25 Զոր յառաջն եդ Աստուած ի քաւութիւն ի ձեռն
հաւատոցն արեամբն նորա, ի հանդէս արդարու-
թեան նորա՝ վասն թողութեան յառաջագոյն մե-
26 ղացն գործելոց ի ներելն Աստուծոյ, ի հանդէս
արդարութեան նորա ի ժամանակի յայսմիկ. զի
եղիցի նա արդար, և արդարացուսցէ զայն որ ի
27 հաւատոցն Յիսուսի։ Իսկ արդ ո՞ւր են պարծանքն.
արգելան. յորո՞ց օրինաց, ի գործո՞ց անտի. ոչ,
28 այլ ի հաւատոցն օրինաց։ Քանզի համարիմք հա-
ւատով արդարանալ մարդոյ՝ առանց գործոց օ-
29 րինաց։ Եթէ Հրէի՞ց միայն իցէ Աստուած և հե-
30 թանոսաց ոչ. այո, և հեթանոսաց։ Զի եթէ մի
է Աստուած որ արդարացուցանէ թլփատութիւնն
ի հաւատոց, ապա և զանթլփատութիւնն նովին

---

[1] Ոմանք, յամենեսին և ի վերայ ամենեցուն որ հա-
ւատանն

31 հաւատովք։ Արդ զօրէնսն ինչ խափանե՞մք հաւա-
տովքս. քաւ լիցի. այլ զօրէնսն հաստատեմք։

ԳԼ. Դ

1 ԲՋ. Իսկ արդ զի՞նչ ասիցեմք զգտանելն Աբրա-
2 համ նահապետին մերոյ ըստ մարմնոյ։ Զի եթէ
Աբրահամու գործովք էր արդարացեալ, ունել
3 ունէր պարծանս, այլ ոչ առ Աստուած։ Իսկ
զի՞նչ ասիցէ գիր. Հաւատաց Աբրահամ Աս-
4 տուած և համարեցաւ նմա յարդարութիւն։ Բայց
այնմ որ գործիցէն, ոչ համարին վարձքն ըստ
5 շնորհաց՝ այլ ըստ պարտեաց։ Իսկ այնմ որ ոչն
գործիցէ, բայց հաւատայցէ յայն որ արդարաց-
ցանէ զամպարիշտս, համարին հաւատք նորա յար-
6 դարութիւն։ Որպէս և Դաւիթ ասէ զերանութիւն
մարդոյ որում Աստուած համարի արդարութիւն
7 առանց գործոց։ Երանի որոց թողան անօրէնու-
8 թիւնք, և որոց ծածկեցան մեղք իւրեանց։ Երան-
եալ է այր որում ոչ համարեսցի Տէր զմեղս նո-
9 րա։ Արդ երանութիւնս այս ի վերայ թլփատու-
թեա՞ն է եթէ ի վերայ անթլփատութեան. քանզի
ասեմք եթէ համարեցան Աբրահամու հաւատքն
10 յարդարութիւն։ Արդ զիա՞րդ համարեցան. միթէ
դեռ ի թլփատութեա՞ն էր՝ եթէ յանթլփատու-
թեան. ոչ ի թլփատութեանն, այլ յանթլփա-
11 տութեան։ Եւ նշանակ առ զթլփատութիւնն,
կնիք արդարութեան հաւատոցն որ յանթլփա-
տութենէ անտի. զի եղիցի նա հայր ամենայն հա-
ւատացելոց որ յանթլփատութենէ անտի իցեն,
12 առ ի համարելոյ և նոցա յարդարութիւն. և

հայր թլփատութեան՝ որոց ոչ ի թլփատութենէ անտի եւեթ, այլ և որոց երթայցեն ընդ հետս անթլփատութեան հաւատոց հօր մերոյ Աբրահամու։

13 Գ. Զի ոչ եթէ օրինօքն են աւետիքն Աբրա-
համու և զաւակի նորա ժառանգ լինել աշխարհի,
14 այլ ի հաւատոցն արդարութենէ։ Զի եթէ որք
յօրինացն են՝ ժառանգք իցեն, ապա ընդունայն
15 են հաւատքն, և դատարկ՝ աւետիքն։ Քանզի օ-
րէնքն զբարկութիւն գործեն. բայց ուր ոչ են օ-
16 րէնք, և ոչ յանցանք ինչ։ Վասն այնորիկ ի հա-
ւատոց անտի, զի ըստ շնորհացն իցէ, առ ի լինել
յոյ հաստատուն աւետեացն ամենայն զաւակին,
ոչ այնմ միայն որ յօրինաց անտի, այլ և այնմ՝
որ ի հաւատոցն Աբրահամու, որ է հայր մեր ա-
17 մենեցուն. Որպէս և գրեալ է եթէ Հայր ազգաց
բազմաց արարի զքեզ, առաջի Աստուծոյ որում
հաւատաց [1]եթէ կենդանի առնէ զմեռեալս, և կո-
18 չէ զչգոյն իբրեւ զգոյ։ Որ յանյոյսն յոյսով հա-
ւատաց՝ լինել նմա հայր ազգաց բազմաց. որպէս
19 և ասացաւն թէ Այնպէս եղիցի զաւակ քո։ Եւ
նա ոչ երկմտեաց ի հաւատոցն [2]թէպէտ և հայե-
ցաւ՝ ի մարմին իւր այնուհետեւ իբրեւ ի մեռեալ,
քանզի զհարիւրամեանիւք ուրեմն էր, և ի մեռե-
20 լութիւն արգանդին Սառայի։ Բայց յաւետեացն
Աստուծոյ ոչ երկմտեաց անհաւատութեամբ, այլ
21 զօրացաւ հաւատովք, ետ փառս Աստուծոյ. Եւ
հաստատեցաւ ի միտս իւր եթէ որ խոստացաւն՝

---

[1] Յն՝ն, որ [2] Որ՝ն, ոչ հայեցաւ

22 կարող է առնել՝ վասն որոյ համարեցաւ նմա
յարդարութիւն։
23 Արդ՝ ոչ գրեցաւն ոչ թէ վասն նորա միայն թէ
24 համարեցաւ նմա. Այլ և վասն մերոց համարե-
լոց է, որք հաւատամք յայն որ յարոյցն զՅիսուս,
25 զՏէր մեր, ի մեռելոց. Որ մատնեցաւ վասն յան-
ցանաց մերոց, և յարեաւ վասն զմեզ արդարա-
ցուցանելոյ։

ԳԼ. Ե

1 Ա՛յսուհետեւ արդարացեալք ի հաւատոց անտի,
խաղաղութիւն կալցուք առ Աստուած ի ձեռն
2 Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. Որով և զին-
ծայութիւնն իսկ ընկալաք հաւատովք ի շնորհս
յայսոսիկ յորում կայք և պարծիմք յուսով փա-
3 ռացն Աստուծոյ։ Եւ ոչ այսչափ միայն, այլ և
պարծիմք եւս ի նեղութիւնս մեր. քանզի գիտեմք
4 եթէ նեղութիւնք զհամբերութիւն գործեն, համ-
5 բերութիւն զհանդէս, հանդէս զյոյս. Յոյս ոչ ե-
րբեք ամաչեցուցանէ. զի սէրն Աստուծոյ սփռեալ
է ի սիրտս մեր ի ձեռն Հոգւոյն Սրբոյ որ տուաւ
6 մեզ։ Զի մինչդեռ տկարքն էաք, Քրիստոս [1]վասն
մեր՝ ի ժամանակի ի վերոյ ամպարշտաց մեռաւ։
7 Զի վասն արդարոյ հազիւ ոք թէ մեռանիցի, այլ
վասն բարւոյ թերեւս համարձակիցի ոք մեռանել։
8 [3]Յայտնեաց Աստուած զսէրն իւր ի մեզ, զի մինչ-
9 դեռ մեղաւորքն էաք, Քրիստոս վասն մեր մեռաւ

---

[1] Յ-ին, մեր որոց [2] ի ք-ղ-ս-ո պ-ի-ե
[3] Յ-ին, Բայց յայտնեաց

ո՛րչափ եւս առաւել յարդարանալս մերում այժմիկ արեամբն նորա՝ սպրեացուք նովաւ ի բարկութենէ անտի։ Զի եթէ մինչ թշնամիքն էաք, հաշտեցաք ընդ Աստուծոյ մահուամբ Որդւոյ նորա, ո՛րչափ եւս առաւել ի հաշտելս մերում սպրեացուք կենօքն նորա։ Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ պարծիմք եւս յԱստուած ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով եւ զհաշտութիւնն իսկ ընկալաք։

12 ԳԶ. Զի որպէս ի միոջէ մարդոյ մեղք յաշխարհ մտին եւ ի մեղաց անտի՝ մահ, եւ այնպէս յամենայն մարդիկ տարածեցաւ մահ, [1]որով ամենեքին
13 մեղան։ Քանզի մինչեւ յօրէնսն մեղք էին յաշխարհի, բայց մեղք ոչ համարին, ուր օրէնք ոչ
14 իցեն։ Այլ թագաւորեաց մահ յԱդամայ մինչեւ ի Մովսէս եւ ի վերայ չյանցուցելոցն բաւ նմանութեան յանցուածոցն Ադամայ, որ է օրինակ հան-
15 դերձելոցն։ Այլ ոչ որպէս յանցանքն նոյնպէս եւ շնորհքն. զի եթէ միոյն յանցանօք բազումք մեռան, ո՛րչափ եւս առաւել շնորհքն Աստուծոյ եւ պարգեւք, շնորհօք միոյն մարդոյ Յիսուսի Քրիստոսի, ի բազումս առաւելան։ Եւ ոչ որպէս ի միոջէ
16 յանցուցելոյն պարգեւքս. զի դատաստանն՝ ի միոջէ [2]յանցուածոյ անտի՝ ի դատապարտութիւն, այլ շնորհքն՝ ի բազմաց յանցուածոցն յարդարութիւն։
17 Զի եթէ ի միոյն յանցանաց մահ թագաւորեաց միովն, ո՛րչափ եւս առաւել, որք զառատութիւն շնորհաց եւ զպարգեւաց արդարութեանն առնուցուն, կենօք թագաւորեսցեն ի ձեռն միոյն Յիսուս-

---

[1] կ՚ը, զի [2] ի ց՚ն պ՚ի ե՚

18 սի Քրիստոսի։ Ապա ուրեմն որպէս միոյն յանցանօք
յամենայն մարդիկ դատապարտութիւն, նոյնպէս և
միոյն արդարութեամբն յամենայն մարդիկ սրդա-
19 րութիւն կենաց։ Զի որպէս անհնազանդութեամբ
միոյն մարդոյ մեղաւորք բազումք եղեն, նոյնպէս և
հնազանդութեամբ միոյն արդարք բազումք եղիցին
20 Բայց օրէնք ի ներքս անկան, զի յանցանքն բազ-
մասցին. զի ուր առաւել եղեն մեղքն, առաւել
21 եւս յաւելան շնորհքն։ Զի որպէս թագաւորեցին
մեղքն ի մահու անդ, նոյնպէս և շնորհքն թագա-
ւորեսցեն արդարութեամբ ի կեանսն յաւիտենից ի
Տեառն Յիսուսէ Քրիստոսէ մերոյ։ Վ.Ջ

Կ. Զ

1 Իսկ արդ զի՞նչ ասիցեմք. յաճախեսցո՞ւք ի մեղս
2 զի շնորհքն բազմասցին։ Քաւ լիցի. որք մեռաք
3 մեղացն՝ զիա՞րդ տակաւին ի նմին կեցցեմք։ Եթէ
ո՞չ գիտէք զի որ միանգամ մկրտեցաք ի Քրիստոս
4 Յիսուս՝ ի մահ անդր նորա մկրտեցաք։ Թաղեցաք
ընդ նմին մկրտութեամբն ի մահ, զի որպէս յար-
եաւ Քրիստոս ի մեռելոց փառօքն Հօր, նոյնպէս
5 և մեք ի նորոգութեան կենաց շրջեսցուք։ Զի եթէ
տնկակից եղեաք նմանութեան մահու նորա, այլ
6 և յարութեան նորա լինիցիմք։ Զայս գիտասջիք
զի հին մարդն մեր խաչակից եղեւ նորա, զի խա-
փանեսցի մարմին մեղացն, մի՛ եւս ծառայել մեզ
7 մեղացն։ Զի որ մեռանին՝ արդարացեալ է ի մե-
8 ղաց անտի։ Իսկ եթէ մեռաք ընդ Քրիստոսի, հա-
9 ւատամք թէ և կեցցուք ընդ նմա։ Գիտեմք եթէ
Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց, այսուհետեւ

10 ոչ մեռանի, և մահ նմա ոչ եւս տիրէ։ Զի որ
մեռաւն՝ մեղացն մեռաւ մի անգամ, և որ կեն-
11 դանին է՝ կենդանի է Աստուծոյ։ Նոյնպէս և դուք
համարեսջիք զանձինս մեռեալս մեղացն, և կեն-
դանիս Աստուծոյ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր։
12 ԳԿ. Մի՛ այսուհետեւ թագաւորեսցեն մեղք ի
մահկանացու մարմինս ձեր՝ հնազանդել ցանկու-
13 թեանց նորա. Եւ մի՛ պատրաստէք զանդամս ձեր
զէն անիրաւութեան՝ մեղացն, այլ պատրաստեցէք
զանձինս ձեր Աստուծոյ, որպէս ի մեռելոց ի կեն-
դանիս, և զանդամս ձեր՝ զէն արդարութեանն
14 Աստուծոյ։ Զի մեղք ձեզ ոչ տիրեսցեն. քանզի
ոչ էք ընդ օրինաւք, այլ ընդ շնորհաւք։
15 Իսկ արդ զիա՞րդ. մեղիցո՞ւք զի չեմք ընդ օրի-
16 նաւք, այլ ընդ շնորհաւք. քաւ լիցի։ Ո՞չ գիտէք թէ
որում պատրաստէք զանձինս ձեր ծառայս ի հնա-
զանդութիւն՝ ծառայ էք որում հնազանդիքն.
եթէ մեղաց՝ մահու, և եթէ ի հնազանդութիւն՝
17 արդարութեան։ Այլ շնո՛րհք Աստուծոյ. զի էիք
ծառայք մեղաց, հնազանդեցարուք ի սրտէ որում
18 աւանդեցայք յառակ վարդապետութեան։ Արդ
ազատեալք ի մեղաց՝ ծառայեցէք արդարութեան։
19 Մարդկօրէն ասեմ վասն տկարութեան մարմնոյ
ձերոյ. զի որպէս պատրաստեցէք զանդամս ձեր
ծառայս պղծութեան և անօրէնութեան յանօրէ-
նութիւն, նոյնպէս և այժմ պատրաստեցէք զան-
դամս ձեր ծառայս արդարութեան ի սրբութիւն։
20 Զի մինչ ծառայքն էիք մեղաց, ազատացեալք էիք
21 յարդարութենէն։ Իսկ արդ զի՞նչ պտուղ ունէիք
յայնժամ, որով այժմ զամօթի հարեալ էք. զի

22 վախճան նոցա մահ է։ Բայց արդ ազատացեալք
ի մեղացն և ծառայեալք Աստուծոյ, ունիք զպտուղ
ձեր ի սրբութիւն, և վախճան նորա կեանք յա-
23 ւիտենից։ Զի թոշակն մեղաց մահ է, այլ շնորհքն
Աստուծոյ կեանք յաւիտենից ի Քրիստոս Յիսուս
ի Տէր մեր։

ԳԼ. Է

1 ԴԴ. Եթէ ո՞չ գիտէք, եղբարք, (զի ընդ գիտուն
օրինացն խօսիմ,) զի օրէնք տիրեն մարդոյ որչափ
2 ժամանակս կենդանի իցէ։ Քանզի կին առնակին
ի կենդանի այր իւր կապեալ կայ օրինօք. իսկ եթէ
մեռանիցի այրն, արձակեալ է յօրինաց առնն։
3 Ապա ուրեմն մինչ կենդանի է այրն, շուն կոչի,
եթէ լինիցի առն այլում. և եթէ մեռանիցի այրն,
ազատ է յօրինացն, չհամարեալ շուն՝ եթէ լինիցի
4 առն այլում։ Այսուհետեւ և դուք, եղբարք, մեռա-
րուք օրինացն մարմնովն Քրիստոսի, լինել այլում
որ ի մեռելոցն յարուցեալ է, զի պտղաբերք լիցուք
5 Աստուծոյ. Քանզի մինչ էաքն մարմնով, կարիք
մեղաց որ օրինօքն էին՝ զօրանային յանդամս մեր,
6 առ ի պտղաբերս առնելոյ զմեզ մահու։ Բայց
այժմ դատարկացաք յօրինաց անտի. քանզի մեռաք
այնմիկ որով ըմբռնեալն էաք՝ առ ի ծառայել մեզ
նորոգութեամբ Հոգւոյն և ոչ հնութեամբ գրոյն։
7 Իսկ արդ զի՞նչ ասեմք. օրէնքն մե՞ղք իցեն. քաւ
լիցի. այլ զմեղս ոչ գիտէի, եթէ ոչ օրինօքն. և
զցանկութիւն ոչ ճանաչէի, եթէ ոչ օրինացն էր
8 ասացեալ, Մի՛ ցանկանայցես։ Պատճառս առեալ
մեղքն պատուիրանաւն, և գործեցին յիս զամ-

նայն ցանկութիւն. զի առանց օրինացդ մեղք մեռ-
9 եալ էին։ Եւ ես առանց օրինացն երբեմն էի կեն-
դանի, այլ իբրեւ եկաս յիս պատուիրանն, մեղքն
10 կենդանացան, Եւ ես մեռայ. և գտաւ ինձ պատ-
11 ուիրանն որ ի կեանսն էր, նոյն ի մահ։ Զի մեղացն
պատճառս առեալ պատուիրանաւն՝ խաբեցին զիս,
և նովին սպանին։
12 ԴԶ. Ա՛յսուհետեւ օրէնքն սուրբ են, և պատ-
ուիրանն սուրբ և արդար և բարեբար։
13 Իսկ արդ ինձ բարւո՞ն մահ եղեւ. քաւ լիցի.
այլ մեղքն, զի երեւեսցին մեղքն բարեաւն դոր-
ծել ինձ զմահ, զի եղիցին բաց առաւելութեան
14 մեղքն մեղաւոր ի ձեռն պատուիրանին։ Գիտեմք
զի օրէնքն հոգեւոր են, այլ ես մարմնաւոր եմ՝ ընդ
15 մեղօք վաճառեալ։ Զի զոր գործեմն ոչ գիտեմ,
ոչ եթէ զոր կամիմն զայն առնեմ, այլ զոր ա-
16 տեամն՝ զայն գործեմ։ Ապա թէ զոր ոչն կամիմ՝
զայն առնեմ, վկայեմ օրինացն եթէ բարւոք են։
17 Այլ արդ՝ ոչ եթէ ես գործեմ զայն, այլ բնա-
18 կեալ յիս մեղքն։ Գիտեմ զի ոչ բնակեալ է
յիս, այսինքն է ի մարմնի իմում, բարի ինչ. զի
կամքն առաջի կան ինձ, և առնել զբարին՝ ոչ։
19 Զի ոչ եթէ զոր կամիմ զբարին առնեմ, այլ զոր
20 ոչն կամիմ զչարն՝ զայն գործեմ։ Ապա եթէ զոր ոչն
կամիմ՝ զայն առնեմ, ոչ եւս ես առնեմ զայն՝ այլ
21 բնակեալ յիս մեղքն։ [1]Եւ արդ՝ գտանեմ զօրէնս
այնորիկ՝ որ կամիցին առնել յիս զբարին. և ինձ՝

---

[1]Յոյն, Եւ արդ գտանեմ զօրէնս, զի յորժամ
կամիմ առնել զբարին, ինձ

22 չարն առաջի կայ։ Հաճեալ եմ ընդ օրէնսն Աս-
23 տուծոյ բաց ներքին մարդոյն. Բայց տեսանեմ այլ
օրէնս յանդամս իմ, պինեալ հակառակ օրինաց
մտաց իմոց, և գերեալ զիս օրինաւքն մեղաց՝ որ են
24 յանդամս իմ։ Այլ մի տառապեալ եմ ես. ո՞վ
25 ապրեցուսցէ զիս ի մարմնոյ սմահու։ Այլ
շնո՛րհք Աստուծոյ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի
Տեառն մերոյ։

Է Կ. Ապա ուրեմն ես ինքնին մտօք իմովք ծա-
ռայեմ օրինացն Աստուծոյ, և մարմնով՝ օրինացն
մեղաց։

Գ Լ. Ը

1 Թէ այդպէս իցէ, ոչինչ դատապարտութիւն է
2 այնոցիկ որ ի Քրիստոս [1]Յիսուս։ Զի օրէնք հոգւոյն
կենաց ի Քրիստոս Յիսուս ազատեցին զիս յօրինաց
3 մեղացն և մահու։ Զի որ անհնարինն էր օրինացն
[2]որով տկարանային՝ մարմնով, Աստուած զՈրդին
իւր առաքեաց ի նմանութիւն մարմնոյ մեղաց, և
վասն մեղաց, և դատապարտեաց զմեղս ի մարմնի
4 անդ. Զի արդարութիւն օրինացն կատարեսցի ի
մեզ, որք ոչ ըստ մարմնոյ գնայցեմք, այլ ըստ
5 հոգւոյն։ Զի որք ըստ մարմնոյն են՝ զմարմնոյն
6 խորհին, և որք ըստ հոգւոյն՝ զհոգւոյն։ Զի խոր-
հուրդ մարմնոյ մահ է, և խորհուրդ հոգւոյ՝
7 կեանք և խաղաղութիւն։ Քանզի խորհուրդ մարմ-
նոյ թշնամութիւն է յԱստուած, զի օրինացն Աս-

---

[1] Ոմանք, Յիսուս, որ ոչ գնան ըստ մարմնոյ, այլ ըստ հոգւոյ [2] Կ՚ոմ, զի տկարանայր

8 տուծոյ ոչ հնազանդի. նա և կարէ իսկ ոչ։ Զի որ
մարմնովն են՝ Աստուծոյ հաճոյ լինել ոչ կարեն։
9 Բայց դուք ոչ էք մարմնով, այլ հոգւով, եթէ իցէ
Հոգին Աստուծոյ ի ձեզ բնակեալ. ապա եթէ ոք
10 զՀոգին Քրիստոսի ոչ ունի, սա չէ նորա։ Իսկ
եթէ Քրիստոս ի ձեզ է, ապա մարմին մեռեալ է
վասն մեղաց. և Հոգին կենդանի է վասն արդա-
11 րութեան։ Եթէ Հոգի այնորիկ որ յարոյց զՅիսուս
ի մեռելոց բնակեալ է ի ձեզ, ապա և որ յարոյցն
զՔրիստոս ի մեռելոց՝ կենդանացուսցէ զմահկա-
նացու մարմինս ձեր բնակեալ Հոգւովն իւրով ի
ձեզ։ Վ.Ջ

12 Այսուհետեւ, եղբարք, պարտապան եմք ոչ
13 մարմնոյ զսա մարմնոյ կեալ։ Զի թէ զսա մարմնոյ
[1]կեցէք, մեռանելոց էք. իսկ եթէ Հոգւով զգործս
14 մարմնոյ սպանանիցէք, կեցջիք։ Զի որ Հոգւովն
15 Աստուծոյ վարին, նոքա են որդիք Աստուծոյ։ Զի
ոչ առէք զՀոգին ծառայութեան միւսանգամ յեր-
կեւղ, այլ առէք զՀոգին որդեգրութեան, որով
16 աղաղակեմք՝ Աբբա Հայր։ Նոյն ինքն Հոգին վկայէ
17 Հոգւոյս մերում, եթէ եմք որդիք Աստուծոյ։ Եւ
եթէ որդիք, ապա և ժառանգք. ժառանգք Աս-
տուծոյ, և ժառանգակիցք Քրիստոսի. եթէ չար-
չարանացն կցորդ լինիմք, և փառացն հաղորդ լի-
նելոց եմք։

18 Ինձ այսպէս թուի եթէ ոչ են արժանի չարչա-
րանք ժամանակիս հանդերձելոց փառացն որ յայտ-
19 նելոց են ի մեզ։ Զի ակնկալութիւն արարածոց

---

[1]Ց-ՀՀ, կեայք

20 յայտնութեան որդւոցն Աստուծոյ սպասէ : Զի
ընդունայնութեան արարածքն հնազանդեցան, ոչ
իւրեանց կամաւ, այլ վասն այնորիկ որ հնազան-
21 դեցոյցն յուսով, Զի և ինքեանք իսկ արարածքն
ազատեսցին ի ծառայութենէ սպականութեան
22 յազատութիւն փառաց որդւոցն Աստուծոյ : Գան-
զի գիտեմք եթէ ամենայն արարածք հեծեծն և
23 երկնեն մինչեւ ցայժմ : Եւ ոչ այսչափ միայն, այլ
և մեք իսկ որ պտուղ Հոգւոյն ունիմք՝ անձամբ
յանձինս մեր հեծեմք, որդեգրութեանն ակն կալ-
24 եալ՝ փրկութեան մարմնոյ մերոյ : Զի յուսով ապ-
րեցաք · այլ յոյս տեսանելի չէ յոյս · զի զոր տե-
25 սանէ ոք՝ զի՞ եւս յուսայ : Ապա եթէ զոր ոչն տե-
սանեմք՝ յուսամք, համբերութեամբ ակն ունիմք :
26 Ոյնպէս և Հոգին ի թիկունս հասանէ տկարու-
թեանս մերում. զի զոր կամքն չաղօթս՝ որպէս
արժան իցէ ոչ գիտեմք . այլ ինքնին Հոգին բա-
27 րեխօս լինի ի հեծութիւնս անմատուցս : Բայց որ
քննէն զսիրտս՝ գիտէ զինչ խորհուրդ է Հոգւոյն,
զի բաց Աստուծոյ բարեխօսէ վասն սրբոց :
28 Բայց գիտեմք եթէ որոց սիրեն զԱստուած
[1]յամենայնի գործակից լինի ի բարիս՝ որք հրաւիրա-
29 նեալ կոչեցան : Զի զորս յառաջն ճանաչէր՝ յառա-
ջագոյն և հրաւիրեաց կերպարանակից լինել պատ-
կերի Որդւոյն իւրոյ . զի եղիցի նա անդրանիկ ի
30 մէջ եղբարց բազմաց : Եւ զորս յառաջագոյնն հրա-
ւիրեաց՝ զնոսին և կոչեաց . և զորս կոչեացն՝ զնո-
սին և արդարացոյց . և զորս արդարացոյցն՝ զնոսին

---

[1] Յամէնայն իրս

31 և փառաւորս արար: Իսկ արդ զի՞նչ ասեմք առ
այս. եթէ Աստուած ի մեր կոյս է, ո՞վ իցէ մեր
32 հակառակ: Որ յիւր Որդին ոչ խնայեաց, այլ
վասն մեր ամենեցուն մատնեաց զնա, զիա՞րդ ոչ
33 նովաւ հանդերձ զամենայն շնորհիցէ մեզ: Ո՞վ
իցէ որ մեղադիր լինիցի ընտրելոց Աստուծոյ. Աս-
34 տուած է որ արդարացուցանէ: Իսկ արդ ո՞վ է
որ դատապարտ առնիցէ. Քրիստոս Յիսուս՝ որ մե-
ռաւն, մանաւանդ թէ յարուցեալ իսկ է, և է
ընդ աջմէ Աստուծոյ, որ և բարեխօս իսկ է վասն
35 մեր: Արդ ո՞վ մեկնեսցէ զմեզ ի սիրոյն Քրիստո-
սի. նեղութի՞ւն, թէ անձկութի՞ւն, թէ հալած-
ա՞նք, թէ սո՞վ, թէ մերկութի՞ւն, թէ վի՞շտք,
36 թէ սո՞ւր. Որպէս և գրեալ է, Վասն քո մեռա-
նիմք զօրհնանապազ, համարեցաք իբրեւ զոչխար
37 ի սպանդ: Այլ յայսմ ամենայնի առաւել յաղ-
38 թեմք նովաւ որ սիրեացն զմեզ: Քանզի հաստա-
տեալ եմ եթէ ոչ մահ և ոչ կեանք և ոչ հրեշ-
տակք և ոչ իշխանութիւնք, և ոչ որ կանս և ոչ
39 հանդերձեալքն, և ոչ զօրութիւնք, Եւ ոչ բարձ-
րութիւն և ոչ խորութիւն, և ոչ այլ ինչ արա-
րած կարէ մեկնել զմեզ ի սիրոյ անտի Աստուծոյ,
որ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր:

ԳԼ. Թ

1 ԵԴ. Ստուգութեամբ ասեմ ի Քրիստոս և ոչ
2 սխալմամբ, վկայեն ինձ միտք իմ ի Հոգի Սուրբ, Զի
տրտմութիւն է ինձ յոյժ և անդադար ցաւք սրտի
3 իմոյ: Զի ուխտիւք խնդրէի ես իսկ ինքնին նզով
լինել ի Քրիստոսէ վասն եղբարց իմոց և ազգա-

4 կանաց ըստ մարմնոյ, Որ են Իսրայելացիք. որոց
որդեգրութիւնն և փառքն և կտակարանքն և օ-
5 րէնադրութիւնն և պաշտօնն և աւետիքն. Որոց
հարքն, յորոց և Քրիստոս ըստ մարմնոյ, որ է ի
վերայ ամենեցուն Աստուած օրհնեալ յաւիտեանս.
6 Ամէն: Ոչինչ է մարթ եթէ անկած լինիցի բանն Ա-
ստուծոյ. զի ոչ ամենեքեան որ յԻսրայելէն են, նո-
7 քա Իսրայելեանք իցեն. Եւ ոչ որ զաւակն Աբրա-
համու են՝ ամենեքեան որդիք իցեն. այլ Իսահակա-
8 կոչեցի քեզ զաւակ: Այսինքն թէ ոչ որ որդիք
մարմնոյն են՝ են որդիք Աստուծոյ, այլ որդիք ա-
9 ւետեացն համարին ի զաւակ: Քանզի աւետեաց
խօսք է բանս այս, Թէ ի ժամանակի յայսմիկ եկից,
10 և եղիցի որդի Սառայի: Եւ ոչ այնչափ միայն՝
այլ ի Հռեբեկայ, ի միոջէ անկողնոյ Իսահակայ
11 հօր մերոյ: Զի մինչչեւ ծնեալ էին, և մինչեւ
բարի ինչ կամ չար գործեալ էր, (զի ըստ ընտ-
րութեանն յառաջադրութիւնն Աստուծոյ հաս-
12 տատեցի, Ոչ ի գործոց, այլ յայնմանէ որ կոչ-
13 եացն,) ասացաւ նմա Թէ, Երէցն կրտսերոյն ծա-
ռայեսցէ. որպէս և գրեալ է Թէ, ԶՅակովբ սի-
րեցի, և զԵսաւ ատեցի:
14 Իսկ արդ զի՞նչ ասեմք. Միթէ անիրաւութի՞ւն
15 իցէ յԱստուծոյ. քաւ լիցի: Զի Մովսիսի ասէ,
Ողորմեցայց որում ողորմեցայցեն, և գթացայց յոր
16 գթացայցեն: Ապա ոչ ըստ այնմ ինչ է որ կամի-
ցին, և ոչ ըստ այնմ՝ որ ընթանայցէ, այլ ըստ
Աստուծոյ որ ողորմի:
17 ԵՋ. Քանզի ասէ գիր ցփարաւոն Թէ, Վասն
այնորիկ գրգռեցի զքեզ, զի ի քեզ ցուցից զզօրու-

թիւն իմ, և պատմեացի անուն իմ ընդ ամենայն
18 երկիր։ Ապա ուրեմն ում կամի ողորմի, և [1]ում
19 կամի խստանայ՝՝։ Իսկ արդ ասիցես ինէ, Մեղ եւս
զի՞ դնէ, զի կամաց նորա [2]ոչ ոք կայ՝՝ հակառակ։
20 Իսկ արդ դու ո՞վ ես, մարդ, որ [3]պատասխանի
տաս Աստուծոյ. միթէ ասիցէ՞ ստեղծուածն ցստեղ-
21 ծիչն թէ Ընդէ՞ր այդպէս արարեր զիս։ Եթէ ո՞չ
ունիցի իշխանութիւն բրուտն կաւոյն, ի նմին
զանգուածոյ առնել անօթ՝ զոմն ի պատիւ և զոմն
22 յանարգանս։ Ապա եթէ կամէր Աստուած ցուցա-
նել զբարկութիւն, և յայտնի առնել զզօրութիւն
իւր, [4]զոր համբերն՝՝ բազում երկայնմտութեամբ
անօթոցն բարկութեան՝ պատրաստելոցն ի կորուստ.
23 Զի յայտնի արասցէ զմեծութիւն փառաց իւրոց ի
վերայ անօթոցն ողորմութեան, զոր [5]պատրաստեաց
24 ի փառս։ Զորս և կոչեաց զմեզ, ոչ միայն ի Հրէից,
25 այլ և ի հեթանոսաց։ Որպէս և յՈվսէէ ասէ, կո-
չեցից զոր ոչ ժողովուրդն իմ՝ ժողովուրդ ինձ, և
26 զչսիրեցեալն՝ սիրեցեալ։ Եւ եղիցի ի տեղւոջ յո-
րում ասացաւ նոցա թէ, Ոչ ժողովուրդ իմ դուք,
անդ կոչեացին նոքա որդիք Աստուծոյ կենդանւոյ։
27 Եսայի աղաղակէ վասն Իսրայելի, Եթէ իցէ թիւ
որդւոցն Իսրայելի իբրեւ զաւազ ծովու՝ [6]սակաւ
28 ինչ մնացորդք մնասցեն՝՝։ Զի բան մի հակիրճ և
համառօտ արդարութեամբ, զբանն հակիրճ ա-

---

[1]Յ-ԸՆ, զոր կամի խստացուցանէ [2]Յ-ԸՆ, ո՞ եկաց
[3]Յ-ԸՆ, հակառակ պատասխանի [4]Յ-ԸՆ, համբեր
[5]Յ-ԸՆ, յառաջագոյն պատրաստեաց
[6]Յ-ԸՆ, մնացորդն ապրեսցի

29 բասցե Տէր ի վերայ երկրի։ Եւ որպէս ասէ Եսայի,
Եթէ ոչ Տեառն զօրութեանց թողեալ էր մեզ զա-
ւակ, իբրեւ զՍոդոմ լինեաք և Գոմորոյ նմանեաք։
30 ԶԿ. Իսկ արդ զի՞նչ ասիցեմք. զի հեթանոսք
որ ոչ երթային զհետ արդարութեան՝ հասին ար-
դարութեան, այնմ արդարութեան՝ որ ի հաւա-
31 տոց անտի. Ա՛լ Իսրայէլ երթայր զհետ օրինացն
արդարութեան, և յօրէնս արդարութեանն ոչ
32 ժամանեաց։ Ընդէ՞ր. զի ոչ ի հաւատոց այլ իբրեւ
ի գործոց օրինաց. քանզի գթեցին նոքա առ վիմին
33 գայթակղութեան. Որպէս և գրեալ է, Ահա-
սիկ դնեմ ի Սիովն քար գայթակղութեան և վէմ
գլորման, և ամենայն որ հաւատասցէ ի նա՝ մի՛ ա-
մաչեսցէ։

ԳԼ. Ժ

1 Եղբարք, իմ կամք սրտի և աղօթք առ Աստուած
2 վասն [1]նոցա են ի փրկութիւն։ Քանզի վկայեմ
նոցա՝ թէ զնախանձ Աստուծոյ ունին, այլ ոչ գի-
3 տութեամբ։ Զի տգէտ են Աստուծոյ արդարու-
թեանն, և զիւրեանցն խնդրեն կացուցանել, զի
արդարութեանն Աստուծոյ ոչ հնազանդեցան։
4 Քանզի կատարած օրինացն Քրիստոս է յարդա-
րութիւն ամենայն հաւատացելոց։
5 ԶԴ. Մովսէս գրէ զարդարութիւնն որ յօրինաց
անտի է, Եթէ արասցէ զայն մարդ, կեցցէ նովին։
6 Իսկ զհաւատոցն արդարութենէ այսպէս ասէ. Մի՛
ասիցես ի սրտի քումմ, Ո՞վ ելանիցէ յերկինս,

---

[1] Ոմն., Իսրայելի

7 այսինքն է զԲրիստոս իջուցանել. կամ, Ո՞վ իջա-
նիցէ յանդունդս, այսինքն է զԲրիստոս հանել ի
8 մեռելոց: Այլ զի՞նչ ասէ [1]գիր. Մերձ է [2]բանն,
ի բերան քո և ի սրտի քում է, այսինքն է բանն
9 հաւատոց զոր քարոզեմք: Զի եթէ խոստովանեսցես
բերանով քով Տէր զՅիսուս, և հաւատասցես
ի սրտի քում թէ Աստուած յարոյց զնա ի մեռե-
10 լոց, կեցցես: Զի սրտիւ հաւատայք յարդարու-
թիւն, և բերանով խոստովանիք ի փրկութիւն:
11 Քանզի ասէ գիր, Ամենայն որ հաւատասցէ ի նա՝
12 մի՛ ամաչեսցէ: Զի ոչ գոյ խտիր Հրէի և Հեթա-
նոսի. քանզի նոյն Տէր է ամենեցուն, բաւական
13 յամենեսին ոյք կարդան առ նա. Զի ամենայն որ
կարդասցէ զանուն Տեառն՝ կեցցէ:
14 Իսկ զիա՞րդ կարդասցեն յոր ոչն հաւատացին.
կամ զիա՞րդ հաւատասցեն որում ոչն լուան. կամ
15 զիա՞րդ լուիցեն առանց ուրուք քարոզելոյ. Կամ
զիա՞րդ քարոզեսցեն, եթէ ոչ առաքեսցին. որպէս
և գրեալ է, Իբրեւ զի՛ գեղեցիկ են ոտք աւետա-
րանչացն խաղաղութեան և աւետարանչացն բա-
16 րութեան: Այլ ոչ ամենեքեան հնազանդ եղեն
աւետարանին. Եսայի ազաղակէ, Տէր, ո՞ հաւա-
17 տաց լրոյ մերում: Ապա ուրեմն հաւատք ի լսելոյ
են, և լուր ի բանէն [3]Քրիստոսի: Վ.Ջ
18 Այլ ասեմ, Միթէ ո՞չ լուան. Մանաւանդ զի
ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա, և ընդ
19 ծագս տիեզերաց՝ խօսք նոցա: Այլ ասեմ, Միթէ

---

[1] Յոհան պօլոս [2] Ոմն, բանն առ քեզ
[3] Ոմն, Աստուծոյ

Իսրայէլ ո՞չ գիտաց. նախ Մովսէս ասէ, Ես նա-
խանձեցուցից զձեզ ոչինչ ժողովրդեամբ, և ազգաւ
20 անմտաւ գկծեցուցից զձեզ։ Բայց Եսայի համար-
ձակի իսկ և ասէ, Գտայ այնոցիկ որ զիս ոչ
խնդրէին, յայտնի եղէ այնոցիկ որ զիննէն ոչ հար-
21 ցանէին։ Առ Իսրայէլ ասէ, Զօր ամենայն
ձգեցի զձեռս իմ առ ժողովուրդ անհաւատ և հա-
կառակող։

ԳԼ. ԺԱ

1 ՁՁ. Իսկ արդ ասեմ, Մի՞թէ մերժեաց Աստուած
զժողովուրդ իւր. քաւ լիցի. քանզի և ես Իսրա-
յէլացի եմ, ի զաւակէ Աբրահամու, յազգէ Բե-
2 նիամենի։ Ոչ մերժեաց Աստուած զժողովուրդ իւր
զոր յառաջն ծանեաւ. Թէ ո՞չ գիտէք ինչ
ինչ ասէ գիր, ո՛րպէս ամբաստան լինի Աստու-
3 ծոյ զԻսրայէլէ, Տէր, զմարգարէս քո կոտորեցին
և զսեղանս քո կործանեցին. ես մնացի միայն, և
4 խնդրեն զանձն իմ։ Առ ինչ ասէ նմա պատաս-
խանին. Թողի ինձ, ասէ, եւթն հազար այր, որ
5 ոչ կրկնեցին ծունր Բահաղու։ Նոյնպէս և յայսմ
ժամանակի մնացորդք ըստ ընտրութեան շնորհացն
6 եղեն։ Իսկ եթէ շնորհօք, ոչ եւս ի գործոց. ապա
7 թէ ոչ՝ շնորհքն ոչ եւս շնորհք լինին։[1] Իսկ արդ
զոր խնդրէրն Իսրայէլ, այնմ ոչ եհաս. բայց ընտ-
8 րութիւնն եհաս, և այլքն կուրացան, (Որպէս
գրեալ է, Ետ նոցա Աստուած հոգի չիմաստու-

---

[1] Յոյն՝ յաւելուն, Իսկ եթէ ի գործոց, ոչ եւս են
շնորհք. ապա թէ ոչ՝ գործն ոչ եւս գործ լինի։

թեան, աչն որովք ոչ տեսանիցեն, և ականջն
9 որովք ոչ լսիցեն,) մինչեւ ցայսօր ժամանակի: Եւ
Դաւիթ ասէ, Եղիցին սեղանք նոցա յորոգայթ և
յորս և ի գայթակղութիւն և ի հատուցումն նո-
10 ցին: Խաւարեսցին աչք նոցա զի մի՛ տեսցեն, և
11 զթիկունս նոցա Հանապազ կորացո: Իսկ արդ ա-
սեմ, Միթէ վասն այնորի՞կ յանցեան զի կործա-
նեսցին. քաւ լիցի. այլ նոցա յանցանօքն փրկու-
12 թիւն հեթանոսաց, զի նախանձ արկցէ նոցա: Իսկ
եթէ յանցանքն նոցա մեծութիւն աշխարհի, և
պարտութիւն նոցա մեծութիւն հեթանոսաց, ա՛ր-
ջափ եւս առաւել լրութիւն նոցա:
13 ԷԿ. Այլ ձեզ ասեմ հեթանոսաց, ցորքան ժա-
մանակս իցեմ հեթանոսաց առաքեալ, զպաշտօնն
14 իմ փառաւոր առնեմ, Զի թերեւս [1]նախանձ ար-
կից նոցա մարմնով իմով՝ և ապրեցուցից զոմանս
15 ի նոցանէ: Զի եթէ մերժումն նոցա հաշտութիւն
աշխարհի է, իսկ ընդունելութիւնն զի՞նչ իցէ,
16 եթէ ոչ՝ կենդանութիւն ի մեռելոց: Իսկ եթէ
սկիզբն սուրբ է, և զանգուածն. և եթէ արմատն՝
17 ապա և ոստքն: Եթէ յոստոց անտի ոմանք փշրե-
ցան, և դու որ ձիթենիդ վայրենի էիր՝ պատուաս-
տեցար ի նոսա, և բաժանորդ եղեր արմատոյն և
18 պարարտութեան ձիթենւոյն, Մի՛ պարծիր առ
ոստովքն. ապա եթէ պարծիցիս, ոչ եթէ դու
19 զարմատն ի վեր ունիս, այլ՝ արմատն զքեզ: Իսկ
արդ ասիցես, Ոստքն փշրեցան, զի ես պատուաս-
20 տեցայց: Բարւոք է, անհաւատութեամբն փշրե-

---

[1] Յոյն, նախանձեցուցից զմարմին իմ

ցան, և դու հաւատով հաստատեցար. մի՛ հպար-
21 տանար, այլ երկիր։ Զի եթէ Աստուած ի բուն
ոտոյն ոչ խնայեաց, գուցէ երբեք և ի քեզ ոչ
22 խնայեացէ։ Արդ տես զքաղցրութիւն և զսաստ-
կութիւնն Աստուծոյ. ի վերայ կործանելոցն՝ սաստ-
կութիւն, և ի վերայ քո՝ քաղցրութիւն [1]Աստու-
ծոյ, եթէ կայցես ի նմին քաղցրութեան. ապա թէ
23 ոչ՝ և դու կոճղոպեացիս։ Եւ նոքա եթէ ոչ ի նմին
անհաւատութեանն կայցեն, պատուաստեացին. զի
կարող է Աստուած միւսանգամ պատուաստել
24 զնոսա։ Զի եթէ դու ի բուն ի վայրենի ձիթենւոյ
անտի հատար, և յանբուն քո ի բարի ձիթենւոյն
պատուաստեցար, ո՛րչափ եւս առաւել նոքա որ
բունքն իսկ են՝ պատուաստեսցին յիւրեանց ձի-
թենւոյն։

25 ԷՓ. Ոչ կամիմ, եղբարք, եթէ տգէտք իցէք
խորհրդոյս այսմիկ, զի մի՛ յանձինս ձեր իցէք ի-
մաստունք. զի կուրութիւն փոքր ի շատէ եղեւ
26 Իսրայելի, մինչեւ լրումն հեթանոսաց մտցէ, եւ
ապա ամենայն Իսրայէլ կեցցէ. որպէս և գրեալ
է, եկեսցէ ի Սիովնէ փրկիչ, և դարձուսցէ զամ-
27 պարշտութիւնսն ի Յակովբայ։ Եւ այս նոցա որ
28 յինէն ուխտ, յորժամ բարձից զմեղս նոցա։ Ըստ
աւետարանին թշնամիք են վասն ձեր, բայց ընտ-
29 րութեանն սիրելիք վասն հարցն։ Քանզի անզեղջ
30 են շնորհքն և կոչումն Աստուծոյ։ Զի որպէս և դուք
երբեմն ապստամբք էիք յԱստուծոյ, և արդ ողոր-
մութիւն գտէք առ նոցա ապստամբութեամբն,

---

[1] Յ-հաս. պ-ի-ե

31 նոյնպէս և նոքա այժմ ապաստամբք [1]եղեն առ
ձերով ողորմութեամբդ, զի և՝ նոքա ողորմութիւն
32 գտցեն։ Քանզի արգել Աստուած զամենեսեան յան-
հաւանութիւն, զի ամենեցուն ողորմեսցի։
33 Ո՛վ խորք մեծութեան և իմաստութեան և գի-
տութեանն Աստուծոյ, ո՛րպէս առանց քննելոյ են
դատաստանք նորա, և առանց զննելոյ են ճանա-
34 պարհք նորա։ Զի ո՞վ գիտաց զմիտս Տեառն, կամ
35 ո՞վ խորհրդակից եղեւ նմա. Կամ ո՞վ եառ նմա
36 փոխ, և առնուցու փոխարէն ի նմանէ։ Զի ի նմա-
նէ և նովաւ և ի նոյն ամենայն. նմա փառք յա-
ւիտեանս։ Ամէն։

ԳԼ. ԺԲ

1 Աղաչեմ զձեզ, եղբարք, գթութեամբք Ա-
ստուծոյ՝ պատրաստել զմարմինս ձեր պատարագ
կենդանի, սուրբ, հաճոյ Աստուծոյ, զիսօսուն պաշ-
2 տօնդ ձեր. Եւ մի՛ կերպարանիք կերպարանօք աշ-
խարհիս այսորիկ, այլ նորոգեցարուք ի նորոգու-
թիւն մտաց ձերոց, առ ի քննել ձեզ [2]զլաւն, և՝
եթէ զինչ են կամքն Աստուծոյ՝ բարին և հաճոյն
և կատարեալն։
3 Զայս ասեմ շնորհօքն Աստուծոյ որ տուեալ են
ինձ, ամենայնի որ է ի ձեզ, մի՛ առաւել ինչ
խորհել քան զարժանն խորհելոյ, այլ խորհել ի
զգաստանալ իւրաքանչիւր՝ որպէս և բաժանեաց
4 Աստուած չափ հաւատոց։ Որպէս ի միում մարմնի

---

[1] Ց-ՆՆ, եղեն, զի առ ձերով ողորմութեամբդ և
[2] ի Բ-ԼՈ-ՄՆ պ-ՅՈՒ-Ե

անդամս բազումս ունիմք, և անդամքն ամենայն
5 ոչ զնոյն գործ ունին. Նոյնպէս և բազումքս մի
մարմին եմք ի Քրիստոս, այլ իւրաքանչիւր մի-
6 մեանց անդամք եմք։ Բայց ունիմք մեք շնորհս ըստ
շնորհացն, որ տուեալ են մեզ տգտս տգտս. եթէ
7 մարգարէութիւն՝ ըստ չափոյն հաւատոց, եթէ
պաշտօն՝ ըստ պաշտամանն, եթէ որ ուսուցանէն՝
8 ըստ վարդապետութեանն, Եթէ որ մխիթարէն՝
ըստ մխիթարութեանն. որ առատն է՝ զուարթու-
թեամբ, որ վերակացուն է՝ փութով, որ ողորմին՝
9 լրջմտութեամբ։ Սէր առանց կեղծաւորութեան,
10 ատեալ զչար, զհետ երթալ բարեաց. Ցեղբայր-
սիրութեան առ միմեանս գթածք. ի պատիւ զմի-
11 մեամբք ելանել. Ի փոյթ՝ մի՛ վհերոտք. Հոգւով
12 եռացեք. Տեառն ծառայեցէք. Յուսով խնդացէք.
նեղութեան համբերեցէք. աղօթից առէպ կացէք.
13 Ի պէտս սրբոց հաղորդեցարուք. զհիւրասիրու-
14 թեան զհետ երթայք. Օրհնեցէք զհալածիչս ձեր,
15 օրհնեցէք և մի՛ անիծանէք. Խնդալ ընդ խնդա-
16 ցողս, լալ ընդ լացողս. Զնոյն միմեանց խորհիջիք.
մի՛ ամբարտաւանէք, այլ ընդ խոնարհս զիջանիցիք.
17 մի՛ լինիք իմաստունք յանձինս ձեր. Մի՛ ումեք
չարի չար հատուցանէք. խորհեցարուք զբարիս ա-
18 ռաջի ամենայն մարդկան։ Եթէ հնար ինչ իցէ ձեզ,
ընդ ամենայն մարդկան զխաղաղութիւն կալջիք։
19 Մի՛ զանձանց վրէժ խնդրէք, սիրելիք, այլ տուք
տեղի բարկութեան. քանզի գրեալ է, Իմ է
20 վրէժխնդրութիւն, և ես հատուցից, ասէ Տէր։ Ալ
եթէ քաղցեալ իցէ թշնամին քո, հաց տուր նմա,
և եթէ ծարաւի՝ ջուր տուր նմա. զայս արարեալ

21 կայծակունս հրոյ կուտեացես ի գլուխ նորա։ Մի՛ յաղթիը ի չարէ, այլ յաղթեա բարեաւն չարին։

ԳԼ. ԺԳ

1 Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ իցէ՝ ի հնազանդութեան կացցէ. քանզի ոչ ուստեք է իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ. և որ ենն 2 յԱստուծոյ կարգեալ են։ Այսուհետեւ որ հակառակ կայ իշխանութեանն՝ Աստուծոյ հրամանին հակառակ կայ, և որք հակառակն կան՝ անձանց դա- 3 տաստանս ընդունին։ Զի իշխանքն ոչ են յերկեաղ բարեաց գործոց, այլ՝ չարաց. կամի՞ս չերկնչել յիշխանութենէ անտի. զբարիս գործեա, և ընկալ- 4 ցիս գովութիւն ի նմանէ. Զի Աստուծոյ պաշտօնեայ է քեզ ի բարիս. ապա եթէ չար գործիցես, երկիր. զի ոչ եթէ վայրապար ածեալ է սուսեր ընդ մէջ. Աստուծոյ ապաստաւոր է վրէժխնդիր ի բարկութիւն 5 այնմ՝ որ զչարն գործիցէ։ Վասն որոյ հարկ է հնազանդ լինել՝ ոչ միայն վասն բարկութեանն, այլ և 6 վասն խղճի մտացն։ Վասն այնորիկ և հարկս հարկանէք, զի Աստուծոյ ապաստաւորք են՝ ի նոյն կան- 7 խեալք։ Արդ հատուցէք իւրաքանչիւր զպարտս. որում զհարկ՝ զհարկն, որում զմնաքս՝ զմնաքսն, որում զերկեաղ՝ զերկեաղն, որում զպատիւ՝ զպատիւն։

8 Եւ մի՛ ումեք պարտապան գտանիցիք, բայց զմիմեանս սիրելոյ. զի որ սիրէ զընկերն՝ զօրէնսն կա- 9 տարէ. Զմի՛ շնայցեան, և Մի՛ սպանանիցես, և Մի՛ գողանայցես, և Մի՛ սուտ վկայիցես, և Մի՛ ցանկանայցես, և եթէ այլ ինչ պատուիրան է՝ յայն բան բովանդակի, եթէ Սիրեացես զընկեր քո իբրեւ

10 զանձն քո։ Սէր ընկերի իւրում չար ոչ առնէ. լրումն օրինացն սէր է։

11 Եւ զայս գիտասջիք վասն ժամանակիս, զի արդ ժամ իսկ է մեզ ի քնոյ զարթնուլ. զի այժմ մերձ է մեզ փրկութիւն քան յորժամ հաւատացաքն.

12 Գիշերն մերժեցաւ և տիւն մերձեցաւ. ի բաց ա. բասցուք այսուհետեւ զգործսն խաւարի, և զգեց.

13 ցուք զզէնն լուսոյ։ Իբրեւ ի տուընջեան զգաստա. ցեալք շրջեսցուք, մի՛ անառակութեամբք և արբեցութեամբք, և մի՛ խառն անկողնով և պղծութեամբք, և մի՛ նախանձու և հակառակութեամբ.

14 Այլ զգեցարուք զՏէր Յիսուս Քրիստոս, և մարմնոյ խնամ մի՛ առնիք ի ցանկութիւնս։

ԳԼ. ԺԴ

1 Այլ զտկարացեալն ի հաւատս ընկալարուք՝ մի՛

2 խղճիւ երկմտութեանց։ Ոմն հաւատայ ուտել զա.

3 մենային, և որ հիւանդն է՝ բանջար կերիցէ։ Որ ուտէն, զայն որ ոչն ուտէ՝ մի՛ անգոնեսցէ, և որ ոչն ուտէ, զայն որ ուտէն՝ մի՛ դատեսցի. քանզի

4 Աստուած զնա ընկալաւ։ Դու ո՞վ ես որ դատիս զայլոյ ծառայ. իւրում Տեառն կայ կամ անկա. նի. բայց կացցէ, զի կարող է [1]Տէրն հաստատել

5 զնա։ Ոմն [2]պահէ օր բաս օրէ և ոմն [2]պահէ զօրհանապազ. իւրաքանչիւր որ զիւր միտս հա.

6 ճեսցէ։ Որ խորհի զօրն՝ Տեառն խորհի, և որ ոչն խորհի զօրն՝ Տեառն չխորհի. և որ ուտէ՝ Տեառն ուտէ, և գոհանայ զԱստուծոյ. և որ ոչն

---

[1] Ո՛հնէ, Աստուած [2] Ց-նն, դատի

ուտէ՝ Տեառն չուտէ, և գոհանայ զԱստուծոյ։
7 Զի ոչ ոք ի մէնջ անձամբ կեայ, և ոչ անձամբ
8 մեռանի։ Եթէ կեամք, Տեառն կեամք, և եթէ
մեռանիմք, Տեառն մեռանիմք. և արդ եթէ՛ կեամք
9 և եթէ՛ մեռանիմք, Տեառն եմք։ Քանզի ի Դոյն
իսկ և Քրիստոս մեռաւ և եկեաց, զի մեռելոց և
10 կենդանեաց առ Հասարակ տիրեսցէ։ Դու զի՞ դա-
տիս զեղբայր քո, կամ ընդէ՞ր անգոնանես զեղ-
բայր քո, քանզի ամենեքեան կալցուք եմք առաջի ա-
11 տենին Քրիստոսի։ Զի գրեալ է, կենդանի եմ ես,
ասէ Տէր, զի ինձ կրկնեսցի ամենայն ծունր, և
12 ամենայն լեզու խոստովան լիցի Աստուծոյ։ Ապա
ուրեմն իւրաքանչիւր ոք ի մէնջ ընդ անձին հա-
13 մարս տացէ Աստուծոյ։ Այսուհետեւ մի՛ զմիմեանս
դատեսցուք, այլ առաւել զայս դիք ի մտի չդնել
14 [1]գայթակղութիւն եղբօրն։ Ջայս գիտեմ և հաս-
տատեալ եմ ի Քրիստոս Յիսուս, զի ոչ ինչ է
պիղծ նովաւ, բայց այնմ որ համարիցի ոք ինչ
15 պիղծ՝ նմա է պիղծ։ Զի եթէ վասն կերակրոյ եղ-
բայրն քո տրտմի, ոչ եւս սիրով գնացեր. մի՛ կե-
րակրովն քով զնա կորուսաներ, վասն որոյ Քրիս-
16 տոս մեռաւ։ Մի՛ հայհոյեսցի բարին ձեր։
17 Զի ոչ է արքայութիւնն Աստուծոյ կերակուր և
ըմպելի, այլ արդարութիւն և խաղաղութիւն և
18 խնդութիւն ի Հոգին Սուրբ։ Զի որ յայսմ ծա-
ռայէ Քրիստոսի, հաճոյ է Աստուծոյ, և ընտիր՝
19 մարդկան։ Ապա այսուհետեւ զկետ երթիցուք
զխաղաղութեան և զշինութեան որ առ միմեանս։

---

[1]Բառ-ար՛, խոչ և գայթակղութիւն

20 Մի՛ վասն կերակրոյ քակեր գործ Աստուծոյ. ա-
մենայն ինչ սուրբ է, այլ չար այնմ մարդոյ է որ
21 [1]խղճիւն ուտիցէ: Լաւ է ոչ ուտել միս և ոչ
ըմպել գինի, և ոչ որով եղբայրն քո գայթակղի
22 կամ դիպէ կամ տկարանայ: Դու ապաքէն հա-
ւատս ունիս, կալ առանձինն առաջի Աստուծոյ.
երանի որ ոչ դատիցի զանձն որով [2]զննկերն փոր-
23 ձիցէ: Բայց որ խղճէն, թէպէտ և ուտիցէ, դա-
տապարտեալ է, զի ոչ ըստ հաւատոց է, զի ա-
24 մենայն ինչ որ ոչ ի հաւատոց է՝ մեղք են: [3]Այլ
այնմ որ կարողն է հաստատել զձեզ ըստ աւե-
տարանիս իմում և ըստ քարոզութեանն Յիսուսի
Քրիստոսի, ըստ յայտնութեան խորհրդոյն ժամա-
25 նակաւքն յաւիտենից լռեցելոյ, եւ յայտնելոյ այժ-
միկ ի ձեռն գրոց մարգարէականաց ըստ հրամանի
մշանջենաւորին Աստուծոյ ի հնազանդութիւն հա-
26 ւատոց, յամենայն հեթանոսս ծանուցելոյ, Միայ-
նոյ իմաստնոյն Աստուծոյ, ի ձեռն Յիսուսի Քրիս-
տոսի, որում փառք յաւիտեանս: Ամէն:"

ԳԼ. ԺԵ

1 ԷԳ. Պարտ է մեզ որ կարողս եմք՝ զտկարութիւն
տկարացն բառնալ, և մի՛ անձանց եւթե հաճոյ
2 լինել, Այլ իւրաքանչիւր ոք ի մէնջ ընկերին հա-
3 ճոյ լիցի ի բարիս վասն շինութեան: Քանզի և

---

[1] Յ-ՆՆ, ի գայթակղութիւն [2] ի Յ-ՆՆ պակ-
[3] Զայս հաստատ առնէն սուրբ Գրոցն, բազում ի
հարցունէ ժԶ գլխոյն ԵՒԵՐ. ինչ սակաւ, ԷԲՐԵՒ պէտ,
Է՛ սուրբ Է՛ անբ:

Քրիստոս ոչ եթէ անձին համոյ եղեւ, այլ որպէս
և գրեալ է, Նախատինք նախատողաց քոց անկան
4 ի վերայ իմ։ Բայց որ ինչ գրեցաւն ի մեր վար-
դապետութիւն գրեցաւ, զի համբերութեամբ և
5 մխիթարութեամբ գրոց զյոյսն ընկալցուք։ Այլ
Աստուած համբերութեան և [1]ամենայն մխիթա-
րութեան՝ տացէ ձեզ զնոյն խորհել ընդ միմեանս
6 ըստ Յիսուսի Քրիստոսի. Զի միաբանութեամբ ի
մի բերան փառաւորս առնիցէք զԱստուած և զՀայր
7 Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Վասն որոյ ըն-
կալարուք զմիմեանս, որպէս և Քրիստոս ընկալաւ
[2]զձեզ ի փառս Աստուծոյ։
8 Այլ ասեմ թէ [3]Քրիստոսի պատասուր թլփա-
տութեանն լինել վասն ճշմարտութեանն Աստուծոյ
էր, առ ի հաստատուն առնելոյ զաւետիս Հարցն։
9 Այլ հեթանոսք վասն ողորմութեան փառաւոր առ-
նեն զԱստուած. որպէս և գրեալ է, Վասն այսորիկ
գոհացայց ցքէն ի հեթանոսս, և անուան քում
10 սաղմոս ասացից։ Եւ դարձեալ ասէ թէ՝ Ուրախ լե-
11 րուք, հեթանոսք, ընդ ժողովրդեան նորա։ Եւ դար-
ձեալ թէ՝ Օրհնեցէք, ամենայն հեթանոսք, զՏէր, և
12 գովեցէք զնա, ամենայն ժողովուրդք։ Եւ դարձեալ
Եսայի ասէ, Եղիցի արմատն Յեսսեայ, և որ կանգ-
նելոցն է իշխան հեթանոսաց, ի նա հեթանոսք յու-
13 սասցին։ Այլ Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ
ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ, առա-
ւելուլ ձեզ յուսով զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ։

---

[1] ի յ--ն պ-ւ-ե [2] Որ-ն, զմեզ
[3] Որ-ն, Յիսուսի Քրիստոսի

14 ԷԴ. Հաստատեալ եմ և ես ինքնին, եղբարք
իմ, վասն ձեր, զի և դուք լի էք բարութեամբ,
լի էք ամենայն գիտութեամբ, կարող էք և զի-
15 մեանս խրատել: Այլ համարձակագոյնս գրեցի ա-
ռ ձեզ, [1]եղբարք, փոքր ի շատէ, իբրեւ յիշեցու-
նելով ձեզ վասն շնորհացն որ տուեալ են ին-
16 ձ Աստուծոյ. Լինել ինձ սպասաւոր Յիսուսի Քրիս-
տոսի ի հեթանոսս, ըղձակերպս առնել զաւետա-
րանն Աստուծոյ, զի եղիցի պատարագն հեթանո-
17 սաց ընդունելի՝ սրբեալ Հոգւովն Սրբով: Ունիմ
այսուհետեւ պարծանս ի Քրիստոս Յիսուս առ
18 Աստուած: Քանզի ոչ իշխեմ խօսել ինչ զոր ոչ
գործեաց Քրիստոս ինեւ ի հնազանդութիւն հե-
19 թանոսաց բանիւք և արդեամբք, Զօրութեամբ
նշանաց և սքանչելեաց, զօրութեամբ Հոգւոյն
[2]Սրբոյ, որպէս ինձ յերուսաղէմէ և շուրջ մինչեւ
ի կողմանս Իլլիւրիկացւոց լնուլ զաւետարանն Քրիս-
20 տոսի: Այնպէս առաւաջեալ յաւետարանել, ոչ
ուր անուանեցաւ Քրիստոս, զի մի՛ իբրեւ յայլոյ
հիմանէ վերայ շինիցեմ, այլ որպէս և գրեալ է թէ,
21 Որոց ոչ պատմեցաւ վասն նորա՝ տեսցեն, և որոց
22 ոչ լսեն լուեալ՝ ի միտ առցեն: Վասն որոյ շատ
23 խափանեցայ գալ առ ձեզ: Բայց արդ ոչ եւս գոյ
ինձ տեղի ի կողմանս այսոսիկ, և անձուկ յոյժ
24 ունիմ ի բազում ամաց գալ առ ձեզ: Զորժամ
անցանիցեմ ի Սպանիա, ակն ունիմ յանցանել
առ նոսա՝ տեսանել զձեզ, և ի ձէնջ յուղարկել
անդր, եթէ նախ իակ փոքր ի շատէ ձեւք լցայց:

---

[1] ի բազումս պակաս [2] Հոգւոյ, Աստուծոյ

25 Բայց այժմ երթամ Յերուսաղէմ պաշտել
26 զսուրբսն։ Քանզի հաճոյ թուեցաւ Մակեդոնացւոցն և Աքայեցւոցն հաղորդութիւն ինչ առնել
27 ընդ աղքատս սրբոցն որ են Յերուսաղէմ։ Հաճոյ թուեցաւ, քանզի և պարտապան իսկ են նոցա. զի եթէ հոգեւորացն նոցա հաղորդ եղեն հեթանոսք, պարտին և մարմնաւորացն կցորդ լինել։
28 Արդ զայս կատարեալ և կնքեալ զպտուղ նոցա,
29 անցից առ ձեզ ի Սպանիա։ Գայս գիտեմ, զի ի գալն իմում առ ձեզ՝ լրութեամբ օրհնութեան [1]աւետարանին Քրիստոսի եկից։
30 Է՛. Աղաչեմ զձեզ, եղբարք, ի տէրն Յեսուն Քրիստոս և սիրով Հոգւոյն, պատերազմակից լինել ինձ յաղօթս վասն իմ առ Աստուած.
31 Զի ապրեցայց յապստամբացն որ ի Հրէաստանի են. և պաշտօնն իմ որ Յերուսաղէմ՝ ընդունելի լիցի
32 սրբոցն. Զի խնդութեամբ եկեալ առ ձեզ ի կամս
33 Աստուծոյ, հանգեայց ընդ ձեզ։ Եւ Աստուած խաղաղութեան եղիցի ընդ ձեզ ամենեսեան։ Ամէն։

ԳԼ. ԺԶ

1 Յանձն առնեմ ձեզ զՓիբէ զքոյր մեր, որ է
2 սպասաւոր եկեղեցւոյն Կենքրացւոց. Զի զնա ընկալջիք ի Տէր արժանի սրբոց, և վերակացու լինիջիք նմա յոր պէտս իրաց և կոչեացէ զձեզ. քանզի և նա վերակացու եղեւ բազմաց, և ինձ իսկ ի գլխովին։
3 Ողջոյն տայջիք Պրիսկեայ և Ակիւղայ՝ գործակցաց

---

[1]Յոհան. պ-ոխոե

4 իմոց ի Քրիստոս Յիսուս. Որք ընդ անձին իմոյ
զիւրեանց պարանոցս մատուցին. զորոց ոչ ես
միայն գոհանամ, այլ և ամենայն եկեղեցիք հե-
5 թանոսաց. եւ առանին եկեղեցւոյն նոցա։ Ողջոյն
տայջիք Եպենետոսի սիրելւոյ իմոյ՝ որ է պտուղ [1]Ա-
6 սիացւոց ի Քրիստոս։ Ողջոյն տայջիք Մարիամ՝ որ
7 բազում վաստակս վաստակեաց ի ձեզ։ Ողջոյն
տայջիք Անդրոնիկեայ և Յունեայ ազգականաց իմոց
և գերեկցաց, որք երեւելիքն իսկ են յառաքեալս,
որք և յառաջ իսկ քան զիս եղեն ի Քրիստոս։
8 Ողջոյն տայջիք Ամպղեայ սիրելւոյ իմոյ ի Տէր։
9 Ողջոյն տայջիք Ուրբանեայ գործակցի իմոյ ի Տէր,
10 և Ստաքեայ սիրելւոյ իմոյ։ Ողջոյն տայջիք Ապե-
11 ղեայ՝ որ ընտիրն է ի Տէր։ Ողջոյն տայջիք նոցա
որ յԱրիստաբուղեայ տանէ անտի են։ Ողջոյն տա-
յջիք Հերովդիոնեայ ազգականի իմոյ։ Ողջոյն տայջիք
այնոցիկ որք ի Նարկիսեայ տանէն իցեն ի Տէր։
12 Ողջոյն տայջիք Տրիփոսեայ և Տրիփոնեայ վաստա-
կաւորաց ի Տէր։ Ողջոյն տայջիք Պերսիդեայ սի-
րելւոյ, որ բազում վաստակս վաստակեաց ի Տէր։
13 Ողջոյն տայջիք Ռուփեայ ընտրելոյ ի Տէր, և մօր
14 նորա և իմոյ։ Ողջոյն տայջիք Ասինկրիտեայ, Փլե-
գոնտեայ, Երմեայ, Պատրոբեայ, Երմեայ, և որ ընդ
15 նոսա եղբարք իցեն։ Ողջոյն տայջիք Փիղողոգեայ,
և Յուղեայ, Ներեայ և քեռւ նորա, և Ողիմպեայ,
16 և որ ընդ նոսա սուրբք ամենեքեան իցեն։ Ողջոյն
տայջիք միմեանց ի համբոյր սրբութեան. ողջոյն
տան ձեզ [2]ամենայն եկեղեցիք Քրիստոսի։

---

[1]Ոմն+, Ասիացւոց [2]Յոմանս պակաս

17 ԷԶ. Աղաչեմ զձեզ, եղբարք, դիտել զայնպիսիսն որ հերձուածս և գայթակղութիւնս առնիցեն
արտաքոյ վարդապետութեանն զոր դուք ուսա-
18 րուք. և խորշեցարուք ի նոցանէ։ Զի այնպիսիքն
Տեառն մերում [1]Քրիստոսի ոչ ծառայեն, այլ իր-
եանց որովայնին. և քաղցրաբանութեամբ և օրհ-
19 նութեամբ պատրեն զսիրտս անմեղաց։ Զի ձեր
հնազանդութիւնդ առ ամենեսեան հասեալ է. և
արդ ի ձեզ ուրախ եմ. բայց կամիմ զձեզ իմաս-
20 տուն լինել ի բարիս, և անմեղս՝ ի չարիս։ Եւ
Աստուած խաղաղութեան խորտակեսցէ զՍատա-
նայ ընդ ոտիւք ձերովք վերձ ընդ վերձ։ Շնորհք
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ։
21 Ողջոյն տայ ձեզ Տիմոթէոս [2]եղբայր և՝ գործա-
կից իմ և Ղուկիոս և Յասոնէ և Սոսիպատրոս՝ ազ-
22 գականք իմ։ (Ողջոյն տամ ձեզ և ես Տերտիոս, որ
23 զթուղթս գրեցի, ի Տէր։) Ողջոյն տայ ձեզ Գայիոս
ասպնջականն իմ և ամենայն եկեղեցւոյն։ Ողջոյն
տայ ձեզ Երաստոս շահապ քաղաքիս և Կուար-
տոս եղբայր։[3]
24 Այլ այնմ, որ կարող է հաստատել զձեզ ըստ
աւետարանիս իմում, և ըստ քարոզութեանն Յի-
սուսի Քրիստոսի, ըստ յայտնութեան խորհրդոյն
25 ժամանակաւքն յաւիտենից լռեցելոյ, Եւ յայտնելոյ
այժմիկ ի ձեռն գրոց մարգարէականաց ըստ հրա-
մանի մշտնջենաւորին Աստուծոյ, ի հնազանդու-

---

[1]Որոնք, Յիսուսի Քրիստոսի [2]Ի Յունին պակաս է
[3]Որոնք յուներէն, Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի ընդ ձեզ ընդ ամենեսին։ Ամէն։

թիւն հաւատոց, յամենայն հեթանոսս ծանուցեր-
26 լոյ, Միայնոյ իմաստնոյն Աստուծոյ ի ձեռն Յիսու-
սի Քրիստոսի, նմա փառք յաւիտեանս. Ամէն:
27 [1]Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ
ամենեսեան:՚՚

Ա֊ Հ֊ՎՅԵՅ֊ ՓՐԵՑ֊ Ի ԿՈՐՆԹՈՍ Ի ՅՆ֊ ՓԻՓԻ֊
ՈՒԼ֊ՈՍՓ:

ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ

ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա

1 ԱՂ. Պաւղոս, կոչեցեալ առաքեալ Յիսուսի
Քրիստոսի կամօքն Աստուծոյ, և Սոսթենէս եղ-
2 բայր. Եկեղեցւոյդ Աստուծոյ որ է ի Կորնթոս,
նուիրեալոց ի Քրիստոս Յիսուս, կոչեցեալոց սրբոց,
ամենեքեան՝ որք կարդան զանուն Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի յամենայն տեղիս՝ նոցա և
3 մեր. Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստու-
ծոյ Հօրէ մերմէ և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ:
4 Գոհանամ զԱստուծոյ իմոյ յամենայն ժամ

[1]ի Յ֊ՆՅՔ պ֊ի֊ոք

վան ձեր ի վերայ շնորհացն Աստուծոյ որ տուեալ
5 են ձեզ ի Քրիստոս Յիսուս. Զի յամենայնի մե-
ծացարուք դուք նովաւ ամենայն բանիւ և ամե-
6 նայն գիտութեամբ. Որպէս վկայութիւնն իսկ Ա-
7 տուծոյ հաստատեցաւ ի ձեզ. Զի դուք մի՛ նուա-
զիցիք և մի՛ իւիք շնորհօք, ակնկալեալ յայտնու-
8 թեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. Որ և
հաստատեսցէ զձեզ մինչեւ ի կատարած անարատս
9 յօրն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Հաւատա-
րիմ է Աստուած, որով կոչեցարուք ի հաղորդու-
թիւն Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի Տեառն
մերոյ:

10 ԱՋ. Աղաչեմ զձեզ, եղբարք, անուամբն Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի. զի զնոյն բան ունիցիք
ամենեքեան, և մի՛ իցեն ի ձեզ հերձուածք. [1]քան-
զի էիք՝՝ հաստատեալք ի նոյն միտս և ի նոյն հան-
11 ճար: Ազդ եղեւ ինձ վասն ձեր, եղբարք, ի Ղլուա-
ցւոց անտի, թէ հակառակութիւնք են ի ձեզ:
12 Եւ արդ ասեմ իսկ, եթէ իւրաքանչիւր ոք ի ձէնջ
ասէ, Ես Պաւղոսեան եմ, և [2]մեւսն՝ եթէ Ես Ա-
պողոսեան և [2]մեւսն՝ եթէ Ես Կեփայեան, և [2]մեւսն՝
13 եթէ Ես Քրիստոսեան: Իսկ արդ բաժանեա՞լ ինչ
իցէ Քրիստոս. միթէ Պաւղո՞ս ի խաչ ելեալ իցէ
վասն ձեր, կամ յանուն Պաւղոսի՞ մկրտեցարուք:
14 [3]Գոհանամ զԱստուծոյ իմոյ զի՝՝ ոչ ոք ի ձէնջ

---

[1]Ց-ին, այլ զի իցէք [2]Ի Ց-ն-ին պակասէ
[3]Ոմն, Գոհանամ զի. այլք՝ Գոհանամ զԱստու-
ծոյ զի, քարչէ- ոմն, էրէ- զնէր, Գոհանամ
զԱստուծոյ իմոյ զի

մկրտեցի քայց միայն զԿրիսպոս և զԳայիոս, զի
15 մի՛ ոք ասիցէ, թէ յիմ անուն մկրտեցարուք։
16 Տալ եւս կնիք և տանն Ստեփանեայ. զայլ ոչ
ոչ գիտեմ ամենեւին թէ մկրտեցի։
17 Զի ոչ առաքեաց զիս Քրիստոս մկրտել, այլ ա-
ւետարանել. ոչ ճարտարութեամբ բանից, զի մի՛
18 ընդունայն լիցի խաչն Քրիստոսի։ Զի ճառ խաչին
կորուսելոցն յիմարութիւն է, այլ փրկելոցս մեզ՝
19 զօրութիւն Աստուծոյ։ Զի գրեալ է, Կորուսից
զիմաստութիւն իմաստնոց, և զխորհուրդս խորհր-
20 դականաց արհամարհեցից։ Ո՞ւր իմաստուն, ո՞ւր
դպիր, ո՞ւր քննիչ աշխարհիս այսորիկ. ո՞չ ապա-
քէն յիմարեցոյց Աստուած զիմաստութիւն աշ-
21 խարհիս այսորիկ։ Քանզի իմաստութեամբն Ա-
ստուծոյ ոչ ծանեաւ աշխարհ իմաստութեամբն
զԱստուած, հաճեցաւ Աստուած յիմարութեամբ
քարոզութեանն ապրեցուցանել զհաւատացեալս։
22 ԲԿ. Իսկ որովհետեւ Հրեայք նշան հայցեն, և
23 Հեթանոսք իմաստութիւն խնդրեն, Մեք քարոզե-
ցուք զխաչեալն Քրիստոս, Հրէից գայթակղու-
24 թիւն և Հեթանոսաց յիմարութիւն. Բայց նոցին
իսկ կոչեցելոցն Հրէից և Հեթանոսաց, զՔրիստոս
Աստուծոյ զօրութիւն և Աստուծոյ իմաստութիւն։
25 Զի յիմարն Աստուծոյ իմաստնագոյն է քան զմարդիկ և տկարն Աստուծոյ զօրագոյն է քան զմարդիկ։
26 Թէպէտ և զձեր իսկ կոչումն տեսէք, եղբարք, զի ոչ բազում իմաստունք ըստ մարմնոյ, և ոչ բազում հզօրք, և ոչ բազում ազնուականք.
27 Այլ զյիմարս աշխարհիս ընտրեաց Աստուած, զի
յամօթ արասցէ զիմաստունս. և զտկարս աշխար-

հիս ընտրեաց Աստուած, զի յամօթ արասցէ
28 զիմաստունս. Եւ զանտոհմն աշխարհի և զարհամարհեալս ընտրեաց Աստուած և զոչինչսն, զի զէսն իմն
29 խափանեսցէ. Որպէս զի մի՛ պարծեսցի ամենայն
30 մարմին առաջի Աստուծոյ: Զի ի նմանէ դուք էք ի Քրիստոս Յիսուս, որ եղեւ մեզ իմաստութիւն յԱստուծոյ, արդարութիւն և սրբութիւն և փրկու-
31 թիւն. Զի որպէս և գրեալ է, Որ պարծին՝ ի Տէր պարծեսցի:

ԳԼ. Բ

1 Եւ ես [1]թէպէտ և եկի առ ձեզ, եղբարք, ոչ ըստ առաւելութեան ինչ բանից [2]իմաստութեան
2 պատմել ձեզ զվկայութիւնն Աստուծոյ: Զի ոչ եթէ ի մտի եդի գիտել ինչ ի ձեզ, բայց միայն
3 զՅիսուս Քրիստոս, և զնոյն ի խաչ ելեալ: Եւ ես տկարութեամբ և երկիւղիւ և դողութեամբ բազ-
4 մաւ եղէ առ ձեզ. Եւ բանն իմ և քարոզութիւն ոչ պատիր բանիւք [3]իմաստութեան, այլ ար-
5 դեամբք Հոգւոյն և զօրութեամբ. Զի հաւատք ձեր մի՛ իցեն իմաստութեամբ մարդկան, այլ զօրութեամբ Աստուծոյ: Վ.Ջ
6 Զիմաստութիւն խօսիմք ընդ կատարեալս, զիմաստութիւն, ոչ զաշխարհիս այսորիկ և ոչ զիշ-
7 խանաց աշխարհիս այսորիկ զեփափանելեացս, Այլ խօսիմք զԱստուծոյ իմաստութիւնն ծածուկ խոր-

---

[1] Յ-ՆՆ, որ եկի առ ձեզ, եղբարք, եկի ոչ
[2] Յ-ՆՆ, կամ իմաստութեան
[3] ՈՀԱ+, մարդկեղէն իմաստութեան

հըրդով, զոր յառաջ քան զյաւիտեանս սահ-
8 մանեաց Աստուած ի փառս մեր. Զոր ոչ ոք յիշ-
խանաց աշխարհիս այսորիկ ծանեաւ. զի եթէ էր
ծանուցեալ, ոչ արդեւք զՏէրն փառաց ի խաչ հա-
9 նէին. Այլ որպէս և գրեալ է, Զոր ակն ոչ ե-
տես և ունկն ոչ լուաւ և ի սիրտ մարդոյ ոչ ան-
կաւ, պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց.
10 Բդ. Այլ մեզ յայտնեաց Աստուած Հոգւովն
իւրով. զի Հոգին զամենայն քննէ և զխորս Ա-
11 ստուծոյ. Զի ո՞ ոք ի մարդկանէ գիտէ զինչ զմար-
դոյն, եթէ ոչ հոգի մարդոյն որ ի նմա. նոյնպէս
և ոչ զԱստուծոյն ոք գիտէ, եթէ ոչ Հոգին Ա-
12 ստուծոյ. Այլ մեք ոչ եթէ զհոգի աշխարհիս այ-
սորիկ առաք, այլ զՀոգին որ յԱստուծոյ. զի ծա-
13 նիցուք զայն որ յԱստուծոյն շնորհեցաւ մեզ. Ե-
զոր խօսիմք՝ ոչ եթէ մարդկեղէն ուսմամբ ճար-
տարութեան բանից, այլ վարդապետութեամբ
[1]Հոգւոյն, ընդ հոգեւորս զհոգեւորսն համեմա-
14 տեմք. Քանզի շնչաւոր մարդ ոչ ընդունի զՀոգւոյն
Աստուծոյ, զի յիմարութիւն է նմա. և ոչ կարէ
15 գիտել, [2]եթէ հոգեպէս քննիցի՝՝, Իսկ հոգեւորն
16 քննէ զամենայն, և ինքն յոմեքէ ոչ քննի. Քանզի
արդ ո՞վ գիտաց զմիտս Տեառն, որ և խրատու
լինիցի նմա. այլ մեք զմիտս Քրիստոսի ունիմք.

ԳԼ. Գ

1 Եւ ես, եղբարք, ոչ կարացի խօսել ընդ ձեզ
իբրեւ ընդ հոգեւորս, այլ իբրեւ ընդ մարմնաւորս,

---

[1]Որ՝ն, Հոգւոյն Սրբոյ [2]Յոյն, զի հոգեպէս քնն

2 իրրեւ տղայոց ի Քրիստոս կաթն ջամբեցի ձեզ և
ոչ կերակուր, զի ոչ եւս կարէիք. նա և արդ իսկ
3 ոչ կարէք, քանզի դեռ մարմնաւորք էք։ Ուր և
արդ են իսկ ի ձեզ հեր և [1]նախանձ, ո՞չ սպա-
4 քէն մարմնաւոր էք և ըստ մարդկան գնայք։ Յոր-
ժամ ասէ ոք [2]ի ձէնջ, Ես Պաւղոսեան եմ, և
մեւնն՝ եթէ Ես Ապողոսեան, ո՞չ [3]մարդիկ էք.
իսկ արդ ո՞վ է Պաւղոս կամ ո՞վ է Ապողոս.
5 Պաշտօնեայք՝ որովք հաւատացէքն, և իւրաքանչիւր
6 որպէս և Տէր ետ։ Ես տնկեցի, Ապողոս ջուր ետ,
7 այլ Աստուած աճեցոյց։ Այսուհետեւ ոչ այն ինչ
ոք է որ տնկեացն, և ոչ այն՝ որ զջուրն ետ, այլ
8 որ աճեցոյցն՝ Աստուած։ Որ տնկեացն և որ զջուրն
ետ՝ մի են. բայց իւրաքանչիւր ոք զիւր վարձս
9 առնուցու ըստ իւրում վաստակոց։ Զի Աստուծոյ
գործակից եմք, Աստուծոյ [4]արդիւն էք, Աստու-
10 ծոյ շինած էք։ Ըստ շնորհացն Աստուծոյ որ տուեալ
են ինձ, իբրեւ իմաստուն ճարտարապետ հիմն եդի,
բայց այլ է որ շինէն. այլ իւրաքանչիւր ոք զգոյշ
11 լիցի թէ որպէս շինիցէ։ Զի հիմն այլ՝ ոք ոչ կարէ
դնել քան զեդեալն, որ է Յիսուս Քրիստոս։ Վ.Ջ
12 Եթէ ոք շինէ ի վերայ հիմանս այսորիկ ոսկի,
արծաթ, սկանս պատուականս, փայտ, խոտ, ե-
13 ղէգն, իւրաքանչիւր գործն յայտնելոց է. զի օրն
ընտրեացէ. զի հրով յայտնելոց է. և զիւրաքան-
14 չիւր գործն զիարդ և լցէ, հուրն փորձեացէ։ Եթէ
ուրուք գործն զոր շինեաց՝ կացցէ, վարձս առցէ.

---

[1]Ոմն. նախանձ և հերձուած [2]ի Յոան. պակաս
[3]Ոմն. մարմնաւոր [4]կամ, արտ

15 Եւ եթէ ուրուք զործն այրեսցի՝ տուժեսցի, բայց
16 ինքն կեցցէ, այլ այնպէս՝ որպէս թէ [1]ի հուր։ Ո՞չ
դիտէք եթէ տաճար էք Աստուծոյ, և Հոգի Ա-
17 ստուծոյ բնակեալ է ի ձեզ։ Եթէ ոք զտաճար Ա-
ստուծոյ ապականէ, ապականեսցէ զնա Աստուած.
զի տաճար Աստուծոյ սուրբ է, որ էք դուք։
18 Մի՛ ոք զանձն խաբեսցէ, եթէ ոք կամիցի ի
ձէնջ իմաստուն լինել յաշխարհիս յայսմիկ, յի-
19 մար լիցի, զի եղիցի իմաստուն։ Զի իմաստութիւն
աշխարհիս այսորիկ յիմարութիւն է առաջի Ա-
ստուծոյ, քանզի գրեալ է թէ, Որ ըմբռնէ զիմաս.
20 տունս ի խորագիտութեան իւրեանց։ Եւ դարձեալ
թէ, Տէր ճանաչէ զխորհուրդս իմաստնոց զի են
21 ընդունայն։ Ածուհետեւ մի՛ ոք պարծեսցի [2]ի
22 մարդկանէ. Զի ամենայն ինչ ձեր է, եթէ Պաւ.
ղոս, եթէ Ապողոս, եթէ Կեփաս, եթէ աշխարհ,
եթէ կեանք, եթէ մահ, եթէ որ կանխ, եթէ հան.
23 դերձեալքն, ամենայն ինչ ձեր է. Դուք Քրիստո.
սի, Քրիստոս՝ Աստուծոյ։

ԳԼ. Դ

1 Ա՛յսպէս համարեսցին զմեզ մարդիկ, իբրեւ
զպաշտօնեայս Քրիստոսի և հազարապետս խորհրդ.
2 ոցն Աստուծոյ։ Ածդ խնդիր է ի մէջ հազարա.
3 պետաց եթէ որ հաւատարիմ գտցի։ Այլ ինձ և
այս [3]անարգանք են՝, եթէ ի ձէնջ դատեցայց կամ
[4]բնաւ իսկ ի մարդկանէ՛. Նաեւ զանձն իմ ոչ

---

[1]Ց-ՆՆ, ընդ հուր [2]Ց-ՆՆ, ի մարդիկ [3]Ց-ՆՆ, դոյզն
ինչ է [4]Ց-ՆՆ, ի մարդկեղէն օրէ (դատաստանէ)

4 քննեմ։ Չի ոչ ինչ գիտեմ զանձին իմով. այլ ոչ
եթէ այսու արդարանամ, զի որ քննէն զիս՝ Տէր
5 է։ Այսուհետեւ մի՛ յառաջ քան զժամանակն
դատիք, մինչեւ եկեսցէ Տէր, որ լուսաւոր առնիցէ զգաղտնիս խաւարի, և յայտնիցէ զխորհուրդս
սրտից. և ապա իւրաքանչիւր գովութիւն եղիցի
յԱստուծոյ։
6 Զայս, եղբարք, առակեցի յանձն իմ և յԱպո-
ղոս վասն ձեր. զի ի ձենջ ուսջիք մի՛ ինչ առա-
ւել քան զգրեալսն իմանալ, զի մի՛ այր քան զըն-
7 կեր հպարտանայցէք ի վերայ ընկերին։ Իսկ արդ
ո՞վ է ¹որ քննիցէ՞ զքեզ. զի՞նչ ունիս զոր ոչ իցէ
առեալ. և եթէ առեր, զի՞ պարծիս իբրեւ ոչ առեալ։
8 Արդէն իսկ յագեալ իցէք և արդէն մեծացա-
րուք, առանց մեր թագաւորեցէք, և երանի թէ
թագաւորէիք, զի և մեք ընդ ձեզ թագաւորէաք։
9 Ինձ այսպէս թուի թէ զմեզ զառաքեալս յետ-
նորդս արար Աստուած իբրեւ զմնհապարտս. զի
տեսիլ եղեաք աշխարհի և հրեշտակաց և մարդ-
10 կան։ Մեք յիմարք վասն Քրիստոսի, և դուք ի-
մաստունք ի Քրիստոս. մեք տկարք՝ և դուք հզօրք.
11 դուք փառաւորեալք՝ և մեք անարգք։ Մինչեւ
ցայսօր ժամանակի և՛ քաղցեաք և՛ ծարաւեցաք
և՛ մերկ գնացաք և՛ կռփահարեցաք և՛ անհան-
12 գիստ եղեաք, Եւ աշխատեցաք ձեռօք մերովք.
բամբասէին զմեզ, օրհնէաք. հալածէին, յանձն
13 առնուաք. Հայհոյէին, աղաչէաք. իբրեւ առակ
նշաւակի եղեաք ²ամենայն աշխարհի, ամենեցուն

---

¹Յ-ՅՆ, որ խարէն ²ի Ց--ՆԷն պ-ի--ե

14 փարելի լինել մինչեւ ցայժմ։ Ոչ եթէ յամօթ ինչ
առնելով զձեզ գրեմ զայս, այլ իբրեւ զորդիս
15 սիրելիս խրատեմ։ Թէպէտ և բեւր դաստիարակ
ունիցիք ի Քրիստոս, այլ ոչ եթէ բազում հայր,
պի ի Քրիստոս Յիսուս աւետարանաւն ես ծնայ
16 զձեզ։ Արդ աղաչեմ զձեզ, նմանողք ինձ ¹եղիջիք։
17 Վասն այնորիկ առաքեցի առ ձեզ զՏիմոթէոս,
որ է իմ որդի սիրելի և հաւատարիմ ի Տէր. որ
յիշեցուսցէ ձեզ զճանապարհս իմ որ ի Քրիստոս
Յիսուս, որպէս և ամենայն ուրեք յամենայն եկե-
18 ղեցիս ուսուցանեմ։ Որպէս թէ ես չիցեմ գալոց
19 առ ձեզ, ոմանք հպարտացան։ Այլ եկից հուպ
ընդ հուպ, եթէ Տէր կամեսցի և ի միտ առից ոչ
20 զբանս հպարտացելոցն, այլ զզօրութիւն։ Զի ոչ
եթէ բանիւք է արքայութիւնն Աստուծոյ, այլ
21 զօրութեամբ։ Արդ, ո՞րպէս կամիք, գաւազանա՞ւ
եկից առ ձեզ, եթէ ²սիրով հոգւոյն հեզութեան
և արդարութեան և խոնարհութեան՝։

ԳԼ. Ե

1 Բնաւ և անուանի իսկ ի ձեզ ³ընդէ՞ր պոռնկու-
թիւն, և այնպիսի պոռնկութիւն՝ որ ոչ և ի հե-
2 թանոսս, որպէս թէ զկին հօր իւրոյ ունել։ Եւ
դուք հպարտացեալ էք, և ոչ առաւել սգացա-
բուք, պի բարձցի ի միջոյ ձերմէ որ զգործն զայն
3 գործեաց։ Զի ես թէպէտ և մարմնով մեկուսի

---

¹Ո՛հ+, եղիջիք, որպէս և ես Քրիստոսի

²Յ-ՆՆ, սիրով և հոգւով հեզութեան

³Ի Յ-ՆՆ պ-ի-ե

եմ, սակայն հոգւով մերձ եմ. բայց արդէն իսկ իբրեւ ի մօտոյ ընտրեցի, զայն որ այնպէսն գոր-
1 ծեաց, Յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ժողովել ձեզ ի միասին և իմոյ հոգւոյս՝ զօրու-
թեամբն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստո-
5 սի, Մատնել զայնպիսին Սատանայի ի սատակումն մարմնոյ, զի ոգին ապրեսցի յաւուրն Տեառն մե-
6 րոյ Յիսուսի Քրիստոսի: Ոչ բարւոք են պարծանքդ ձեր. ո՞չ գիտէք եթէ փոքր մի խմոր զամենայն
7 զանգուածն խմորէ: Սրբեցէք ի բաց զհին խմորն, զի եղիջիք նոր զանգուած, որպէս էքդ անխմորք.
8 քանզի զատիկ մեր զենաւ Քրիստոս: Ա՛յսուհետեւ արասցուք ոչն՝ մի՛ ի խմորն հին և մի՛ ի խմորն չարութեան և անզգամութեան, այլ յանխմոր
ատուգութեան և ճշմարտութեան:

9 ԲՋ. Գրեցի ձեզ ի թղթի այդր չխառնակել ընդ
10 պոռնիկս: Եւ ոչ եթէ ընդ պոռնիկս աշխարհիս այսորիկ կամ ընդ ագահս կամ ընդ յափշտակողս կամ ընդ կռապարիշտս. ապա թէ ոչ՝ պարտէիք
11 և յաշխարհէ իսկ ելանել: Բայց արդ գրեցի ձեզ չխառնակել, եթէ ոք եղբայր անուանեալ կամ պոռնիկ իցէ կամ կռապարիշտ կամ ագահ կամ բամբասող կամ արբեցող կամ յափշտակող, ընդ
12 այնպիսւոյն և հաց մի՛ ուտել: Զի՞ կայ իմ և զարտաքինան դատելոյ. ո՞չ ապաքէն դուք զներքինան
13 դատիցիք. Եւ զարտաքինան Աստուած դատիցի. բարձէք զչարն ի միջոյ ձերմէ:

ԳԼ. Զ

1 Ի՞նչէ՞ ոք ի ձէնջ, եթէ իրք ինչ իցեն ընդ ընկերի

իւրեամ, դատել առաջի անիրաւաց, և ոչ առա-
2 ջի սրբոց։ Եթէ ո՞չ գիտէք զի սուրբք զաշխարհ
դատին և եթէ ձեւք դատի աշխարհ, ապա [1]ոչ
3 էք արժանի անարդ առնից՞։ Ո՞չ գիտէք եթէ
4 գ՚իրեարսակս դատիմք, թող թէ զերկրաւորս։ Զերկ-
րաւոր առեանս եթէ յանձն առնուցուք, [2]զա-
5 նարգս եկեղեցւոյ դատաւորս նստուցանէք՞։ Ա-
մօթի ձերոյ ասեմ. այնչափ ո՞չ գոյ որ իմաս-
տուն ի ձեզ, որ կարիցէ իրաւունս ընտրել ի մէջ
6 եղբօր իւրոյ։ Այլ եղբայր ընդ եղբօր դատի, և
7 զայն ի մէջ անհաւատից։ Եւ արդ ամենևին իսկ
վատթարութիւն է ի ձեզ, զի դատաստանք իսկ
գոն ի միջի ձերում. ընդէ՞ր ոչ դուք զրկիք, և ոչ
8 դուք առաւել նեղիք։ Այլ դուք զրկէք և նեղէք
9 և այդ՝ զեղբարս եւս։ Եթէ ո՞չ գիտէք զի անիրաւք
զարքայութիւն Աստուծոյ ոչ ժառանգեն մի՛ խա-
բիք, ոչ պոռնիկք, ոչ կռապարիշտք, ոչ շունք,
10 Ոչ իգացեալք, ոչ արուապետք, ոչ գողք, ոչ
ագահք, ոչ արբեցողք, ոչ բամբասողք և ոչ
յափշտակողք զարքայութիւն Աստուծոյ ոչ ժա-
11 ռանգեն։ Եւ դուք այնպիսիք ոմանք էիք. այլ
լուացարուք, այլ արբեցարուք, այլ արդարացա-
րուք յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և
ի Հոգին Աստուծոյ մերոյ։
12 ԳԿ. Ամենայն ինչ ինձ մարթի է, այլ ոչ ամե-
նայն ինչ օգուտ է. ամենայն ինչ ինձ մարթի է,

---

[1]Յն. ո՞չ էք արժանի զանարգս դատելոյ
[2]Յն. զանարգս եկեղեցւոջ, զնոսա՞ նստուց-
նէք, կամ, զնոսա նստուցէք

այլ ոչ եթէ ես ընդ իշխանութեամբ ուրուք լի-
13 նիցիմ։ կերակուր՝ որովայնի, և որովայն՝ կերակ-
րոյ· այլ Աստուած զսա և զնոսա խափանեսցէ·
բայց մարմին ոչ պոռնկութեան, այլ Տեառն, և
14 Տէր՝ մարմնոյ։ Այլ Աստուած որ և զՏէրն յա-
րոյց՝ և [1]զձեզ յարուսցէ զօրութեամբ իւրով։
15 Ո՞չ գիտէք եթէ մարմինք ձեր անդամք են Քրիս-
տոսի· արդ առեալ զանդամս Քրիստոսի առնի-
16 ցեմք անդամս պոռնկի՞· քաւ լիցի։ Եթէ ո՞չ գի-
տէք, զի որ մերձենայ ի պոռնիկ՝ մի մարմին է·
17 եղիցին, ասէ, երկոքին ի մարմին մի։ Եւ որ մեր-
18 ձենայ ի Տէր՝ մի հոգի է։ Փախերուք ի պոռնկու-
թենէ· զամենայն մեղս զոր և գործէ մարդ, արտա-
քոյ մարմնոյ իւրոյ է· իսկ որ պոռնկին՝ յիւր մարմինն
19 մեղանչէ։ Եթէ ո՞չ գիտէք, զի մարմինք ձեր տա-
ճար են [2]Հոգւոյն որ է ի ձեզ, զոր ունիք յԱստու-
20 ծոյ, և չէք անձանց տէր։ Գանգի գնոց գնեցարուք·
փառաւորարարէք զԱստուած ի մարմինս ձեր[3]։

ԳԼ· Է

1 Այլ վասն որոյ գրեցէք առ իս, բարւոք է մար-
2 դոյ ի կին մարդ չմերձենալ։ Բայց վասն պոռնկու-
թեան իւրաքանչիւր ոք զիւր կին կալցի, և իւրա-
3 քանչիւր ոք կին զիւր այր կալցի։ Կնոջ այր իւր
զպարտսն հատուսցէ, նոյնպէս և կինն՝ առն իւ-
4 րում։ Ջի կին մարմնոյ իւրում ոչ իշխէ, այլ այրն·
նոյնպէս և այրն իւրում մարմնոյ ոչ իշխէ, այլ

---

[1]Բ—ղ—ս, զմեզ [2]Յ—ն, Հոգւոյն Սրբոյ
[3]Ո—ն ց—է—ն, և յոգիս ձեր որ են Աստուածոյ

5 կինն։ Մի՛ զրկէք զմիմեանս, բայց եթէ ինչ ի միա-
բանութենէ առ ժամանակ մի, զի [1]ուխտիցն պա-
րապիցէք, և դարձեալ ի նոյն դարձջիք, զի մի՛
փորձեսցէ զձեզ Սատանայ վասն անխառնութեան
6 ձերոյ։ Զայս ասեմ ներելով և ոչ հրամանն տա-
7 լով։ Քանզի կամիմ եթէ ամենայն մարդ լինէր
իբրեւ զիս. այլ իւրաքանչիւր ոք զիւր շնորհս ու-
8 նի յԱստուծոյ, ումն այսպէս՝ և ումն այնպէս։ Բայց
ամուրեացն և այրեացն ասեմ, լաւ է նոցա եթէ
9 կայցեն իբրեւ զիս։ Ապա թէ ոչ ունիցին ժոյժ,
ամուսնասցին, զի լաւ է ամուսնանալ քան զջեա-
10 նուլ։ Այլ կանամբեացն պատուիրեմ ոչ ես, այլ
11 Տէր, կնոջ յառնէ մի՛ մեկնել. Ապա եթէ մեկ-
նեսցի, անսայր մնասցէ կամ անդրէն ընդ առն ի-
րում հաշտեսցի, և առն զկին իւր մի՛ թողուլ։ Վ
12 Բայց այլոց ես պատուիրեմ, ոչ եթէ Տէր. եթէ
ոք եղբայր կին ունիցի անհաւատ, և նմա հաճոյ
13 իցէ բնակել ընդ նմա, մի՛ թողցէ զնա։ Եւ կին
որ ունիցի այր անհաւատ, և նմա կամ իցէ բնա-
14 կել ընդ նմա, մի՛ թողցէ զայրն. Զի սուրբ է այրն
անհաւատ՝ կնաւն, և սուրբ է կինն անհաւատ՝
արամբն. ապա թէ ոչ՝ որդիքն ձեր պիղծ են, բայց
15 այժմ սուրբ են։ Ապա եթէ անհաւատն մեկնիցի,
մեկնեսցի. զի ոչինչ հարկ ի վերայ կայ եղբօր
կամ քեռն յայնպիսի իրս, քանզի ի խաղաղու-
16 թիւն կոչեաց զմեզ Աստուած։ Զի՞ գիտես, կին
դու, եթէ զայր քո ապրեցուսցես. կամ զի՞ գի-
17 տես, այր դու, եթէ զկին քո ապրեցուսցես. եթէ

---

[1] Ց-ՅՆ, աղօթից. ՈՒՆԻ, աղօթից և պահոց

ոչ՝ իւրաքանչիւր ումեք որպէս և բաժանեաց Տէր, զիւրաքանչիւր ոք որպէս և կոչեաց Աստուած՝ այնպէս գնասցէ. և այսպէս ընդ ամենայն եկեղեցիս պատուէր տամ։

18 Թլփատեա՞լ ոք կոչեցաւ, մի՛ ցանկասցի անթլփատութեան. յանթլփատութենէ՞ ոք կոչեցաւ, 19 մի՛ թլփատեսցի. Զի թլփատութիւն ոչինչ է, և անթլփատութիւն՝ ոչինչ, այլ պահպանութիւն Աս- 20 տուծոյ պատուիրանացն։ Բայց իւրաքանչիւր ոք 21 յոր կոչումն կոչեցաւ՝ ի նմին կացցէ։ Ծառա՞յ կոչեցար, մի՛ փոյթ լիցի քեզ. այլ թէ կարիցես եւս 22 ազատ լինել, քեզ այնպէս լաւ իցէ։ Զի որ ի Տէր կոչեցեալ իցէ ծառայն՝ ազատ Տեառն է. նոյնպէս և որ ազատն կոչեցեալ է՝ ծառայ Քրիստոսի է։ 23 Գնոց գնեցայք, մի՛ լինիք ծառայք մարդկան։ 24 Իւրաքանչիւր յոր կոչումն կոչեցաւ, եղբարք, ի նմին կացցէ առաջի Աստուծոյ։

25 Գ. Ա՛յլ վասն կուսանաց հրաման ինչ ի Տեառնէ ոչ ունիմ, բայց խրատ տամ [1]որպէս ողորմեալ ուրուք՝՝ ի Տեառնէ հաւատարիմ լինել։ Համարիմ թէ այնպէս [2]լաւ իցէ, բայց վասն վտանգին՝՝ որ ի վերայ կայ, [3]բարւոք է մարդոյ թէ այն- 27 պէս իցէ։ Կապեա՞լ ես ի կին, մի՛ խնդրեր արձակել. արձակեա՞լ ես ի կնոջէ, մի՛ խնդրեր կին։ 28 Զի եթէ ամուսնանայցես, ոչ մեղաւ. և եթէ ամուսնանայցէ կոյսն, ոչ մեղաւ, բայց նեղութիւն մարմնոյ ունիցին այնպիսիքն. այլ ես խնայեցի ի

---

[1] Ց-ՅՆ, որպէս ողորմեալ ոք. [2] Ց-ՅՆ, լաւ իցէ վասն վտանգին [3] Ց-ՅՆ, զի բարւոք

29 ձեզ՝ Բայց զայս ասեմ, եղբարք, եթէ ժամանակս
[1]կարճեալ է այսուհետեւ. զի՝ որ ունիցին կա-
30 նայս՝ որպէս թէ չունիցին, եւ որ լայցեն՝ որպէս
թէ ոչ լայցեն, եւ որ խնդասցեն՝ որպէս թէ ոչ խնդայ-
31 ցեն, եւ որ գնեսցեն՝ որպէս թէ չունիցին, եւ որ
վարեսցեն զաշխարհս՝ որպէս թէ չվայելիցեն. զի ան-
32 ցեալ է վայելչութիւն աշխարհիս այսորիկ։ Այլ
կամիմ զձեզ անհոգս լինել. զի որ անկինն է՝ հո-
33 գայ զՏեառնէ, թէ ո՛րպէս հաճոյ լիցի Տեառն. եւ
որ կանամբին է, հոգայ զաշխարհիս, թէ ո՛րպէս
34 հաճոյ լիցի կնոջ իւրում։ Եւ ահա մեկնեցան ի
միմեանց առնականքն և կոյսն. զի կոյսն հոգայ
զՏեառնէ, զի իցէ սուրբ մարմնով և հոգւով, և
առնականքն հոգայ զաշխարհիս, թէ ո՛րպէս հաճոյ
35 լիցի առն իւրում։ Այլ զայս վասն ձերոյ օգտի
ասեմ. ոչ եթէ խեղդ ինչ արկանեմ ձեզ, այլ
վասն պարկեշտութեան և հպատակութեան Տեառն
առանց զբաղանաց։

36 ԳԶ. Ապա թէ ոք ամօթ համարեսցի վասն կու-
սին իւրոյ, եթէ իցէ ելեալ բուռ չափ, և այնպէս
ինչ պարտ իցէ լինել. զոր կամի արասցէ, ոչ մե-
37 ղանչէ, [2]ամուսնասցի։ Իսկ որ հաստատեալ է ի
սրտի իւրում, և վտանգ ինչ ոչ իցէ նմա, իշխա-
նութիւն ունի ի վերայ կամաց իւրոց. և զոյն
ընտրեաց ի սրտի իւրում՝ պահել զկոյսն իւր,
38 բարւոք առնէ։ Եւ որ ամուսնացուցանէ [3]զկոյսն
իւր՝ բարւոք առնէ. և որ ոչ ամուսնացուցանէ՝

---

[1]Կամ՝ կարճեալ է. այսուհետեւ

[2]Յոյն՝ ամուսնասցին [3]Յոմանս պակաս

39 լաւ եւս առնէ ։ կին [1]կապեալ է՝ ցորքան ժամա-
նակս կենդանի է այր նորա . ապա եթէ ննջիցէ
այր նորա , ազատ է , ում կամիցի ամուսնանալ ,
10 բայց միայն Տէրամբ ։ Բայց երանելի եւս է թէ
այնպէս կացցէ ըստ իմում խրատու . ես այսպէս
համարիմ թէ և յիս ինչ Հոգի Աստուծոյ ։

ԳԼ· Ը

1 Ա՛ԼՈՒ վասն զոհից կռոցն , գիտեմք եթէ ամենե-
քին գիտութիւն ունիմք . գիտութիւն հպարտա-
2 ցուցանէ , այլ սէր շինէ ։ Եթէ ոք [2]կամիցի գիտել
ինչ , չեւ եւս գիտաց որպէս արժան է գիտել ։
3 Բայց որ սիրէ զԱստուած , նա է տեղեկացեալ ի
4 նմանէ ։ Ա՛ԼՈՒ վասն կերակրոցն զոհելոց գիտեմք
եթէ ոչինչ իսկ կուռքդ են յաշխարհի , զի չիք
5 ոք Աստուած բաց ի միոյն ։ Զի թէպէտ և իցեն
անուանեալ աստուածք եթէ յերկինս և եթէ
յերկրի , որպէս և են աստուածք բազումք և տէարք
6 բազումք ։ Ա՛ԼՈՒ մեզ մի է Աստուած , Հայր , յոր-
մէ ամենայն , և մեք ի նա . և մի Տէր Յիսուս Քրիս-
տոս՝ որով ամենայն , և մեք նովաւ ։ ՎՋ
7 Ա՛ԼՈՒ ոչ յամենեսեան գիտութիւն է . ոմանք առ
խղճի մտաց մինչեւ ցայժմ զկռոցն իբրեւ զզոհեալ
ուտեն . և խիղճ մտաց նոցա , քանզի տկար է ,
8 պղծի ։ Ա՛ԼՈՒ կերակուր զմեզ առաջի Աստուծոյ
ոչ կացուցանէ . ոչ եթէ չուտեմք , պակասեմք
9 ինչ , և ոչ եթէ ուտեմք , առաւելութիւն ինչ ։ Բայց
զգոյշ լերուք , գուցէ իշխանութիւնդ ձեր այդ

---

[1]Որոշ , կապեալ է օրինօք Ցոյն , համարիցի

10 գայթակղութիւն լինիցի տկարացն։ Եթէ ոք տեսանիցէ զքեզ որ զգիտութիւնդ ունիս՝ բազմեալ ի մեհենի, ո՞չ ապաքէն խիղճ մտաց նորա որ տկարութեամբն զգածեալ է՝ անդրէն շինիցի ուտել
11 զզոհեալն. Եւ կորնչիցի տկար եղբայրն ի քում
12 գիտութեանն, վասն որոյ Քրիստոսն մեռաւ։ Եւ այնպէս յանցուցեալ յեղբարս, և զխիղճ մտաց տկարացն զայրացուցեալ, ի Քրիստոս մեղանչէ։
13 Վասն որոյ եթէ կերակուր գայթակղեցուցանէ զեղբայրն իմ, ոչ կերայց մի՛ս յաւիտեան, զի մի՛ զեղբայրն իմ գայթակղեցուցից։

ԳԼ. Թ

1 Ո՞չ ապաքէն ազատ եմ, ո՞չ ապաքէն առաքեալ եմ, ո՞չ ապաքէն զՏէր մեր Յիսուս Քրիստոս [1]աչօք իմովք՞ տեսի, ո՞չ ապաքէն գործ իմ դուք էք
2 ի Տէր։ Թէպէտ և այլոց չիցեմ առաքեալ, այլ դէպ ձեզ եմ. զի կնիք իսկ առաքելութեան իմոյ
3 դուք էք ի Տէր։ Իմ պատասխանի, ուր զիս հարցանիցեն, այս է. Միթէ ո՞չ ունիցիմք իշխանու-
4 թիւն ուտել և ըմպել։ Միթէ ո՞չ ունիցիմք իշխանութիւն [2]զքոյս կանայս՞ շրջեցուցանել [1]ընդ մեզ՞. որպէս և այլ առաքեալքն և եղբարքն Տեառն
6 և Կեփաս։ Եթէ միայն ես և Բառնաբա՞ս ոչ ու-
7 նիցիմք իշխանութիւն չգործել զայս։ Ո՞ ոք երբէք զինուորիցի իւրով թոշակօք. ո՞ ոք տնկիցէ այգի, և ի պտղոյ նորա ոչ ուտիցէ. ո՞ ոք արածիցէ խաշն, և ի կաթանէ խաշինն ոչ ուտիցէ։ Միթէ ըստ

---

[1] Ի ձեռն պատուական [2] Ոմն, քոյր կին

մարդկութեա՞ն խօսիցիմ զայս. կամ թէ և օրէնքն
9 զայն ո՞չ ասիցեն։ Ի Մովսիսի իսկ յօրէնսն գրեալ
է, Ոչ կապեսցես գոռուկ եզին կալոտուոյ. միթէ
10 զեզա՞նց ինչ փոյթ էր Աստուծոյ։ Ո՞չ ապաքէն
վասն մեր ասէ, քանզի վասն մեր գրեցաւ. զի յու-
սով պարտի որ երկրմանէն՝ երկրմանել, և որ կա-
11 ուն՝ յուսով վայելել։ Եթէ մեք ի ձեզ զհոգե-
ւորսն սերմանեցաք, մեծ ի՞նչ է եթէ ի ձէնջ
12 զմարմնաւորսդ հնձիցեմք։ Եթէ այլք ձերով իշ-
խանութեամբդ վայելեն, ո՞չ առաւել եւս մեք.
այլ ոչ ի գործ ինչ արկաք զիշխանութիւնս զայս.
բայց ամենայնի համբերեմք, զի մի՛ խափան ինչ
13 լինիցիմք [1]աւետարանին։ Ո՞չ գիտէք, եթէ որ ի
տաճարին գործեն՝ ի տաճարէ անտի ուտեն. և որ
սեղանոյն պաշտօնեայք են՝ ի սեղանոյ անտի վայե-
14 լեն։ Նոյնպէս և Տէր հրամայեաց որոց զաւետա-
րանն աւետարանեն՝ յաւետարանէ անտի կեալ։
15 Բայց ես և ոչ զմի ինչ յայսցանէ արկի ի գործ,
և ոչ գրեցի զայդ զի ինձ այսպէս ինչ լինիցի. լաւ
է ինձ մանաւանդ մեռանել, և ոչ զի զպարծանս
16 իմ ոք ընդունայն համարիցի։ Զի եթէ աւետարա-
նեմ, ոչինչ են ինձ պարծանք, քանզի հարկ ի վե-
րայ կայ. բայց վա՛յ է ինձ՝ եթէ ոչ աւետարա-
17 նեմ։ Եթէ կամաւ զայն առնեմ, վարձք են ինձ.
և եթէ ակամայ՝ տնտեսութիւն յանձն է ինձ։
18 Եւ արդ զի՞նչ վարձք իցեն ինձ. [2]եթէ յաւետա-
րանելն ձրի տացե [3]զաւետարանն՝ զի մի՛ զեզծիցիմ

---

[1] Յոյն, աւետարանին Քրիստոսի [2] Կամ, այն՝ զի
[3] Յոյն, զաւետարանն Քրիստոսի

ինչ իշխանութեամբս իմով յաւետարանի անդ։
19 *Քանզի ազատ էի յամենայնէ, և ամենեցուն զանձնի*
ծառայութեան կացուցի, զի զբազումս շահեցայց։
20 *Եղէ ընդ Հրեայսն իբրեւ զՀրեայ, զի զՀրեայսն*
21 *շահեցայց։ Եղէ ընդ օրինօք իբրեւ զայնոսիկ որ*
ընդ օրինօքն էին, [1]իբր ոչ եթէ ընդ օրինօքն
էի, այլ՝ զի որ ընդ օրինօքն իցեն՝ և զնոսա շահե-
ցայց։ ընդ անօրէնս եղէ իբրեւ զանօրէն, իբր ոչ
եթէ անօրէն ինչ էի Աստուծոյ, այլ ընդ օրինօքն
22 *Քրիստոսի, զի շահեցայց զանօրէնսն։ Եղէ ընդ*
տկարս իբրեւ զտկար, զի զտկարսն շահեցայց։ ընդ
ամենայնի ամենայն եղէ, զի թերեւս ապրեցուցից
23 *զոմանս։ Զայս ամենայն առնեմ վասն աւետարա-*
նին, զի կցորդ եղէց նմա։
24 ԴԿ. Ո՞չ գիտէք եթէ որ յասպարիսին ընթա-
նան՝ ընթանալ ամենեքին ընթանան, բայց մի ոք
առնու զյաղթութեանն. այնպէս ընթացարուք զի
25 *հասանիցէք։ Ամենայն որ պատերազմի՝ ամենայնի*
ժուժկալ լինի. նոքա զի զեղծանելի պսակն առ-
26 *նուցուն, և մեք զանեղծութեանն։ Արդ ես իսկ*
այնպէս ընթանամ, ոչ որպէս յանեւրեւոյթս. այն-
պէս մրցիմ, որպէս ոչ թէ զհողմն ինչ կռնելով։
27 *Այլ ճնշեմ զմարմինս իմ և հնազանդեցուցանեմ,*
զի գուցէ որ այլոցն քարոզեցի՝ ես ինքն անպիտան
գտանիցիմ։

ԳԼ. Ժ

1 Ո՞չ կամիմ եթէ տգէտք իցէք, եղբարք, զի հարք

---

[1] Յոմանս պակաս

մեր ամենեքին ընդ ամպովն էին, և ամենեքին ընդ
2 ծովն անցին. եւ ամենեքեան ի Մովսէս մկրտեցան
3 յամպն և ի ծովն. եւ ամենեքին զնոյն զհոգեւոր
4 զկերակուրն կերան. եւ ամենեքին զնոյն զհոգեւոր
ըմպելին արբին, զի ըմպէին ի հոգեւոր վիմէն որ
երթայր զհետ նոցա. և վէմն էր ինքն Քրիստոս:
5 Այլ ոչ եթէ ընդ բազումս ի նոցանէ հաճեցաւ
Աստուած, քանզի տապաստան անկան յանապատի
6 անդ: Եւ այն՝ օրինակաւ լինէր վասն մեր, զի մի՛
լիցուք ցանկացողք չարեաց, որպէս նոքայն ցան-
7 կացան: Եւ մի՛ կռապաշտիչք լինել որպէս ոմանք
ի նոցանէ, որպէս և գրեալ է, Նստաւ ժողո-
վուրդն ուտել և ըմպել և յարեան ի խաղալ:
8 Եւ մի՛ պոռնկեացուք, որպէս ոմանք պոռնկեցան
ի նոցանէ, և անկան ի միում աւուր քսան և [1]չորք
9 հազարք: Եւ մի՛ փորձեացուք [2]զՏէր, որպէս ոմանք
ի նոցանէ փորձեցին, և յօձից անտի սատակեցան:
10 Եւ մի՛ տրտնջեացուք, որպէս ոմանք ի նոցանէ
11 տրտնջեցին, և կորեան ի սատակչէ անտի: Այլ
այն ամենայն օրինակաւ անցանէր ընդ նոսա. բայց
գրեցաւ վասն մերոյ խրատուս, յորս վախճան յա-
ւիտեանցն եհաս:
12 ԴԴ. Այսուհետեւ որ համարիցի հաստատուն
13 կալ՝ զգոյշ լիցի, գուցէ անկանիցի: Փորձութիւն
ի ձեր վերայ ոչ է եկեալ բայց [3]ի մարդկանէ. այլ
հաւատարիմ է Աստուած որ ոչ արկցէ զձեզ ի
փորձութիւն առաւել քան զկար ձեր, այլ արաս-

---

[1]Բ-ղ-ՀՒ, երեք [2]ՈՀՆ+, զՔրիստոս
[3]Ց-ՆՆ, մարդկեղէն

ցէ ընդ փորձութեանն և զելսն, զի համբերել կա.
բասջիք։
14 Վասն որոյ, սիրելիք իմ, փախերուք ի կռա.
15 պաշտութենէ։ Իբրեւ ընդ իմաստունս խօսիմ.
16 ընտրեցէք ձեզէն զոր ասեմս։ Բաժակն օրհնու.
թեան զոր օրհնեմք՝ ո՞չ ապաքէն հաղորդութիւն
է արեանն Քրիստոսի. Հացն զոր բեկանեմք՝ ո՞չ
ապաքէն հաղորդութիւն է մարմնոյն Քրիստոսի։
17 Զի մի հաց, մի մարմին եմք բազումքս, զի ամ
18 նեքին ի միոջէ հացէ անտի վայելեմք։ Տեսէք զիս.
րայէլն ըստ մարմնոյ. ո՞չ ապաքէն որ ուտեն ի զո.
19 հիցն՝ հաղորդք են սեղանոյն։ Իսկ արդ զի՞նչ ա.
սեմ, թէ զոհեալն իցէ՞ ինչ. և կամ կուռքն իսկ
20 իցե՞ն ինչ։ Այլ զոր զոհեն հեթանոսք, դիւաց և
ոչ Աստուծոյ զոհեն. ոչ կամիմ զձեզ հաղորդս
դիւաց լինել. քանզի ոչ կարէք զբաժակն Տեառն
21 ըմպել և զբաժակն դիւաց. Եւ ոչ կարէք ի սե.
22 ղանոյ Տեառն վայելել և ի սեղանոյ դիւաց։ Եթէ
նախանձ՞ն ինչ արկանիցեմք Տեառն, միթէ զօրա.
գո՞յնք իցեմք քան զնա։
23 Ամենայն ինչ ինձ մարթ է, այլ ոչ ամենայն
ինչ օգուտ է. ամենայն ինչ ինձ մարթ է, այլ
24 ոչ ամենայն ինչ շինէ։ Մի՛ ոք զանձին եւեթ
25 խնդրիցէ, այլ և զընկերին։ Ամենայն ինչ որ ի
սպանդանոցի վաճառի՝ կերայք, և մի՛ խարէք վան
26 խղճի մտաց. Զի Տեառն է երկիր լրիւ իւրով։ Վ
27 Եթէ ոք կոչեսցէ զձեզ յանհաւատից և կամ.
ցիք երթալ, զամենայն ինչ որ առաջի դնիցի.
28 կերայք և մի՛ խարէք վասն խղճի մտաց։ Ապա եթէ
ոք ասասցէ ձեզ թէ Այդ զոհեալ է, մի՛ ուտիցէք

վան նորա ոչ գուշակն եղեւ, և վասն խղճի
29 մտացն։ Ա.ՀԼ զի՞նշդ մտացն ասեմ՝ ոչ զիւրն,
այլ զընկերին. իսկ ընդէ՞ր ընտւ ազատութիւնս
30 իմ դատիցի յայլոյ խղճէ մտաց։ Եթէ ես [2]շնոր-
հօք վայելեմ, ընդէ՞ր հայհոյիցիմ, վասն որոյ եսն
31 գոհանամ։ Արդ եթէ ուտիցէք, եթէ ըմպիցէք,
եթէ զինչ և գործիցէք, զամենայն ինչ ի փառս
32 Աստուծոյ արա՛ջիք։ Առանց գայթակղութիւն
դնելոյ Հրէից և հեթանոսաց լինիցիք և եկեղեցւոյն
33 Աստուծոյ։ Որպէս և ես ամենեւին ամենեցուն հա-
ճոյ լինիմ, ոչ խնդրեմ զանձին օգուտ, այլ զբազ-
մաց՝ զի ապրեսցին։

ԳԼ. ԺԱ

1 Նմանողք ինձ եղերուք, որպէս և ես Քրիստոսի։
2 ԴԶ. Գովեմ [3]զձեզ զի զամենայն ինչ զիս յի-
շէք, և որպէս աւանդեցի ձեզ, զաւանդութիւնսն
3 ունիցիք։ Կամիմ զի գիտիցէք դուք, եթէ առն
ամենայնի գլուխ Քրիստոս է, և գլուխ կնոջ՝ այր,
4 և գլուխ Քրիստոսի՝ Աստուած։ Ամենայն այր յոր-
ժամ յաղօթս կայցէ կամ մարգարէանայցէ և
զգլուխն ծածկեալ ունիցի, յամօթ առնէ զգլուխն
5 իւր։ Եւ ամենայն կին յորժամ յաղօթս կայցէ
կամ մարգարէանայցէ բացաւ գլխով, յամօթ առ-
նէ զգլուխն իւր, զի այնպէս համարբե թէ գեր-
6 ծեալ իցէ։ Զի եթէ ոչ ածղեսցի կին, փոքրեսցէ
զհեր իւր. ապա եթէ անպատեհ է կնոջ փոքրել

---

[1]Որ՚՚, մտացն, զի Տեառն է երկիր լրիւ իւրով
[2]Կ՚՚, շնորհակալութեամբ [3]Որ՚՚, զձեզ, եղբարք,

7 կամ գերծուլ, աքողեսցի։ Առն մարդոյ չէ պարտ
ծածկել զգլուխ իւր, զի պատկեր և փառք Ա-
8 ստուծոյ է. իսկ կինն փառք առն իւրոյ է։ Զի ոչ
9 եթէ այր ի կնոջէ է, այլ՝ կինն յառնէ։ Քանզի ոչ
իսկ հաստատեցաւ այր վասն կնոջ, այլ՝ կինն վասն
10 առն։ Վասն այնորիկ պարտի կինն [1]շուք դնել
11 գլխոյն վասն հրեշտակաց։ Բայց ոչ կինն՝ առանց
12 առն, և ոչ այր՝ առանց կնոջ ի Տէր։ Զի որպէս կինն
յառնէ, նոյնպէս և այր՝ ի կնոջէ, բայց ամենայն
13 յԱստուծոյ։ Այլ դուք ձեզէն տուք զիրաւդ. ար-
ժա՞ն է կնոջ մարդոյ հոլանի յաղօթս կալ առաջի
14 Աստուծոյ։ Եւ ո՞չ բնութիւնն իսկ ուսուցանէ զձեզ,
15 զի այր, եթէ գիսաւոր է, անարգանք են նմա. Բայց
կինն, եթէ գիսաւոր է, փառք են նմա. զի գէօք
16 փոխանակ զգեստու տուեալ են նմա։ Ապա թէ ոք
կամի հակառակող լինել, մեք չունիմք այնպիսի
սովորութիւն, և ոչ եկեղեցիքն Աստուծոյ։ Վ.
17 Այլ զայս պատուիրեմ, ոչ որպէս թէ գովիցեմ,
զի ոչ ի լաւ անդր՝ այլ ի վատթարն [2]նկրտիք։
18 Նախ՝ յորժամ ի մի վայր ժողովիցիք յեկեղեցին,
լսեմ եթէ հերձուածք գոն ի ձեզ, և սակաւ ինչ
19 հաւատացի։ Բայց և հերձուածք լինելոց են ի ձեզ,
20 զի որ ընտիրքն իցեն ի ձեզ՝ երեւեսցին։ Եւ արդ ի
ժողովելն ձեզ ի միասին՝ [3]ոչ է տուն Տեառն ձեզ
21 տեղի հաց ուտելոյ՝։ Զի իւրաքանչիւր ոք զիւր
ընթրիս յառաջանայ ուտել. և ոմն քաղցեալ՝ և ոմն
22 արբեալ։ Միթէ տուն ո՞չ ունիցիք ուտելոյ և ըմ-

---

[1]Յ-ննն, իշխանութիւն [2]Յ-ննն, ժողովիք
[3]Յ-ննն, ոչ է զՏէրունական ընթրիսն ուտել

պելոյ · եթէ զկեղեցեաւն Աստուծոյ արհամարհիցէք, և յամօթ առնէք զչքաւորան. զի՞նչ [1]ասացից · գովեցի՞ց [2]զձեզ յայդմ. ոչ՝ գովեմ: Զի ես ընկալայ ի Տեառնէ, զոր և ձեզն աւանդեցի, եթէ Տէր Յիսուս ի գիշերին յորում մատնէր, ա՛ռ
24 հաց · Գոհացաւ, եբեկ և [3]ասէ, Այս՝ է իմ մարմին, որ վասն [4]ձեր · զայս արարէք առ իմոյ յիշատակի: Նոյնպէս և զբաժակն յետ ընթրեացն
25 [5]առ և՝ ասէ, Այս բաժակ նոր ուխտ է իմով արեամբ · զայս արարէք քանիցս անգամ թէ ըմպիցէք, առ իմոյ յիշատակի: Քանիցս անգամ թէ
26 ուտիցէք զհացս զայս և զբաժակս ըմպիցէք, զմահն
7 Տեառն պատմեցէք, մինչեւ եկեսցէ նա: Այսուհետեւ որ ուտիցէ զհացս, կամ ըմպիցէ զբաժակս Տեառն անարժանութեամբ, պարտական եղիցի մարմնոյ և արեանն Տեառն: Փորձեսցէ մարդ զանձն
28 իւր, և ապա ի հացէ անտի կերիցէ և ի բաժակէն
29 արբցէ: Զի որ ուտէ և ըմպէ [6]անարժանութեամբ՝ դատաստանս անձին իւրում ուտէ և ըմպէ, զի
30 ոչ խտրէ զմարմինն [6]Տեառն: Վասն այնորիկ խակ են ի ձեզ բազում հիւանդք և ախտաժէտք, և
31 շատ եւս այն են որ և ննջեցեալքն խակ իցեն: Զի եթէ զանձինս քննէաք, ապա ոչ դատապարտէաք:
32 Եւ եթէ դատիմք, ի Տեառնէ խրատիմք · զի մի՛
33 ընդ աշխարհի դատապարտեսցուք: Այսուհետեւ, եղբարք, յորժամ ի մի վայր ժողովիցիք ուտել,

---

[1] Յ-ԽՆ, ասացից ձեզ [2] Ո՛ՀՆ+, զձեզ. յայդմ ոչ
[3] Ո՛ՀՆ+, ասէ, Առէք կերայք, այս [4] Ո՛ՀՆ+, ձեր բեկանի [5] ի Յ-ՆԵՆ պ-ւ-ե [6] Յ-Ո՛ՀՆ- պ-ւ-ե

34 միմեանց մեռասջիք։ Ապա թէ ոք քաղցեալ իցէ, ի տան իւրում կերիցէ, զի մի՛ ի դատապարտու-
թիւն ժողովիցիք։ Բայց զայլ ինչ, յորժամ եկից,
յայնժամ պատուիրեցից։

ԳԼ. ԺԲ

1 ԵԿ. Ա՛յլ վասն հոգեւորացն, եղբարք, ոչ կա-
2 միմ եթէ տգէտք իցէք։ Գիտէք իսկ զի մինչ հե-
թանոսքն էիք, առ կուռսն անմռունչս որպէս եր-
3 թայիք, և գայիք։ Վասն որոյ ցուցանեմ ձեզ, զի
ոչ ոք Հոգւով Աստուծոյ խօսի՝ և ասիցէ թէ նզո-
վեալ Յիսուս. և ոչ ոք կարէ ասել Տէր Յիսուս,
եթէ ոչ Հոգւովն Սրբով։
4 Թէպէտ և բաժինք շնորհաց են, այլ Հոգի նոյն
5 է։ Եթէ բաժինք պաշտամանց են, այլ Տէր նոյն
6 է։ Եթէ բաժինք յաջողութեանց են, այլ Ա-
ստուած նոյն է որ յաջողէ զամենայն յամենայնի։
7 Բայց իւրաքանչիւր ումեք տուեալ է յայտնու-
8 թիւն Հոգւոյն՝ [1]առ իւրաքանչիւր օգուտ։ Ումեմն
ի Հոգւոյն տուեալ է բան իմաստութեան. այ-
9 լում՝ բան գիտութեան ըստ նմին Հոգւոյ. Ու-
րումն հաւատք՝ նովին Հոգւով այլում շնորհք
10 բժշկութեանց՝ նովին Հոգւով. Ա՛յլում՝ յաջողու-
թիւնք զօրութեանց, այլում՝ մարգարէութիւն,
այլում՝ ընտրութիւն Հոգւոց, այլում՝ ազգք լե-
11 զուաց, այլում՝ թարգմանութիւն լեզուաց։ Ամ-
զսյս ամենայն յաջողէ մի և նոյն Հոգի, և բա-
ժանէ իւրաքանչիւր որպէս և կամի։

---

[1] Յօգուտ, յօգուտ

12 եդ. Որպէս մարմին մի է և անդամս բազումս
ունի, և ամենայն բազում անդամք մարմնոյն մի
13 մարմին է, նոյնպէս և Քրիստոս։ Քանզի միով
Հոգւով մեք ամենեքեան ի մի մարմին մկրտեցաք,
եթէ Հրեայք, եթէ Հեթանոսք, եթէ ծառայք,
14 եթէ ազատք, ամենեքին զմի Հոգի արբաք։ Քան-
15 զի մարմին ոչ մի անդամ է, այլ բազում։ Եթէ
ասիցէ ոտն, Զի չեմ ձեռն, չեմ ի մարմնոյ անտի,
16 ոչ այնու չիցէ ի մարմնոյ անտի։ Եւ եթէ ասիցէ
ունկն, Զի չեմ աչն, չեմ ի մարմնոյ անտի,
17 ոչ այնու չիցէ ի մարմնոյ անտի։ Եթէ ամենայն
մարմինն աչն էր, ո՞ւր էր ունկն. և եթէ ամե-
18 նայն լսելիք էին, ո՞ւր էին Հոտոտելիք։ Բայց
արդ Աստուած եդ զանդամսն, զմի մի իւրաքան-
19 չիւր ի նոցանէ ի մարմին, որպէս և կամեցաւ։ Ա-
պա թէ էր ամենայն մի անդամ, ո՞ւր էր մարմին։
20 Բայց արդ անդամք բազումք են, և մարմին մի։
21 Ոչ կարէ աչն ասել ձեռն, Թէ Զես ինձ պիտոյ,
և կամ դարձեալ գլուխ ոտսն՝ Թէ Զէք ինձ պի-
22 տոյ։ Այլ առաւել որ Թուին անդամք մարմնոյն
23 Թէ տկարագոյնք իցեն, կարեւորք են. Եւ որ
Թուինն Թէ անարգագոյնք իցեն մարմնոյն, այնց
առաւելագոյն պատիւ առնեմք. և ամօթոյքն մեր
24 առաւել եւս պարկեշտութիւն ունին։ Եւ պար-
կեշտիցն մերոց չէ ինչ պիտոյ. քանզի Աստուած
խառնեաց զմարմինն. և նուաստին առաւել եւս
25 պատիւ ետ. Զի մի՛ իցեն հերձուածք ի մարմնի
անդ, այլ զի նոյնք զմիմեանց հոգայցեն անդամքն։
26 Եւ եթէ վշտանայ ինչ մի անդամի, վշտանան ա-
մենայն անդամքն ընդ նմա. և եթէ փառաւորի մի

անդամին, խնդան ամենայն անդամքն ընդ նմա։
27 Ա՛յլ դուք մարմին Քրիստոսի էք և անդամք [1]յան-
դամոց նորա՛։ ՎՋ
28 Եւ զորս եդն Աստուած յեկեղեցւոջ՝ այս են.
նախ զառաքեալս, երկրորդ զմարգարէս, երրորդ
զվարդապետս, ապա զօրութիւնս, ապա շնորհս
բժշկութեանց, օգնութիւնս, վարիչս, տեսակս լե-
29 զուաց, [2]թարգմանութիւնս լեզուաց։ Մի՞թէ ա-
մենեքի՞ն առաքեալք իցեն. միթէ ամենեքի՞ն մար-
գարէք իցեն. միթէ ամենեքի՞ն վարդապետք իցեն.
30 միթէ ամենեքի՞ն զօրութիւնք իցեն. Միթէ ամե-
նեքի՞ն շնորհս բժշկութեան ունիցին. միթէ ամե-
նեքի՞ն ի լեզուս խօսիցին. միթէ ամենեքի՞ն թարգ-
մանիցեն։
31 Բայց նախանձաւորս լերուք շնորհացն որ լաւն են.
այլ և առաւել եւս ճանապարհ ցուցանեմ ձեզ։

ԳԼ. ԺԳ

1 ԵԶ. Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ և զհրեշ-
տակաց, և սէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրեւ զպղինձ
2 որ հնչէ, կամ իբրեւ զծնծղայս որ զօղանջեն։ Եւ
եթէ ունիցիմ զմարգարէութիւն, և գիտիցեմ
զխորհուրդս ամենայն և զամենայն գիտութիւն, և
եթէ ունիցիմ զամենայն հաւատս մինչեւ զլերինս
3 փոփոխել, և սէր ոչ ունիցիմ, ոչինչ եմ։ Եւ եթէ
ջամբիցեմ զամենայն ինչս իմ աղքատաց, և մատ-
նիցեմ զմարմինս իմ յայրուիլ, և սէր ոչ ունիցիմ,
4 ոչինչ օգտիմ։ Սէր երկայնամիտ է, քաղցրանայ

---

[1]Բ—ղ—մ, ուրոյն ուրոյն [2]ի ց—ն—ն պ—մ—ս

սէր ոչ նախանձի, ոչ ամբարհաւաճձէ, ոչ հպարտանայ· Ոչ յանդգնի, ոչ խնդրէ զիւրն, ոչ գրգռի, ոչ խորհի զչար· Ոչ խնդայ ընդ անիրաւութիւն, այլ խնդայ ընդ ատուգութիւն· Ամենայնի տեւէ, ամենայնի հաւատայ, [1]ամենեւին յուսայ· ամենայնի համբերէ· Սէր ոչ երբէք անկանի· եթէ մարգարէութիւնք են, խափանեսցին, եթէ լեզուք՝ լռեսցեն, եթէ գիտութիւն՝ խափանեսցի· Զանզի փոքր ի շատէ գիտեմք, և փոքր ի շատէ մարգարէանամք· Այլ յորժամ եկեսցէ կատարումն, փոքր ի շատէս խափանեսցի·

ԺԱ. ԶԿ. Մինչ տղայն էի, իբրեւ զտղայ խօսէի, իբրեւ զտղայ խորհէի, իբրեւ զտղայ համարէի· այլ յորժամ եղէ այր, զտղայութեանն ի բաց խափանեցի· Այժմ տեսանեմք իբրեւ ընդ հայելի օրինակաւ, այլ յայնժամ՝ դէմ յանդիման· այժմ խելամուտ եմ փոքր ի շատէ, այլ յայնժամ գիտացից, որպէս և նայն ծանեալ զիս· Բայց արդ մնան հաւատք, յոյս, սէր, սոքա երեքեան, և մեծ քան զսոսա սէր է·

ԳԼ. ԺԴ

ԺԱ. 1 Զհետ երթայք սիրոյ, և նախանձաւոր լերուք հոգեւորացն առաւել զի և դուք մարգարէանայցէք· 2 Զի որ խօսի ի լեզուս՝ ոչ ընդ մարդկան խօսի, այլ ընդ Աստուծոյ· զի ոչ ոք է որ լսէ, բայց Հոգւով խօսի խորհուրդս· 3 Իսկ որ մարգարէանայն՝ մարդկան խօսի շինուածիւն և մխիթարութիւն և սփո-

---

[1] Յոյն, ամենայնի

4 փութիւն։ Որ խօսի ի լեզուս՝ զանձն իւր շինէ. և
5 որ մարգարէանայն՝ զեկեղեցին շինէ։ Կամիմ զի
ամենեքին դուք ի լեզուս խօսիցիք, առաւել՝ զի
մարգարէանայցէք, զի լաւ է որ մարգարէանայն՝
քան զայն որ ի լեզուան խօսիցի. բայց եթէ թարգ-
մանեսցէ, զի եկեղեցին շինուածիւն առնուցու։ Վ.Ջ
6 Բայց այժմ, եղբարք, եթէ եկից առ ձեզ ի լե-
զուս խօսելով, զի՞նչ օգուտ լինիցիմ ձեզ եթէ
ոչ խօսիցիմ կամ յայտնութեամբ կամ գիտու-
թեամբ կամ մարգարէութեամբ կամ վարդապե-
7 տութեամբ։ Այնպէս որպէս անշունչքն ձայն տայ-
ցեն, եթէ՛ փող և եթէ՛ քնար, զի եթէ ընտրու-
թիւն ինչ բարբառոյն չառնիցեն, զիա՞րդ ճա-
նաչիցի փողոյն հարկանել կամ քնարին հնչել։
8 Քանզի եթէ խառնաձայն արձակիցէ փողն, ո՞վ
9 պատրաստեսցի ի պատերազմ։ Նոյնպէս և դուք
եթէ լեզուօք ոչ նշանակիցէք զբանն, զիա՞րդ ճա-
նաչիցին խօսքն զի լինիցի՛ք այնուհետեւ իբրեւ ընդ
10 օդս խօսեցեալք։ Զի այնչափ ազգք ձայնից են
11 յաշխարհի, և ոչ ինչ է անձայն։ Իսկ արդ՝ եթէ
ոչ գիտիցեմ զզօրութիւն ձայնին, լինիցիմ այնմ
որ խօսիցին ընդ իս՝ խուժ, և նա որ խօսիցին ընդ
12 իս՝ դուժ։ Նոյնպէս և դուք քանզի նախանձորդք
էք հոգեւորացն. վասն շինածոյ եկեղեցւոյն [1]խընդ-
13 րէք զի առաւել եւս իցէք։ Վասն որոյ որ խօսի
14 ի լեզուս՝ աղօթս արասցէ զի և թարգմանիցէ։ Եթէ
կամ յաղօթս լեզուաւ, հոգին իմ կայ յաղօթս,
15 այլ միտք իմ անպտուղ են։ Իսկ արդ՝ զի՞նչ իցէ։

---

[1] Յունն, խնդրեցէք

կացից յաղօթս Հոգւով, կացից յաղօթս և մտօք.
աղմնս ասացից Հոգւով, աղմնս ասացից և մտօք։
16 Ապա թէ ոչ՝ եթէ օրհնեացես Հոգւով, որ կայցէ ի
տեղւոջ տգիտին, զիա՞րդ ասիցէ ի քում գովու-
թեանն զԱմէնն. քանզի զոր ասեան՝ նա ոչ գիտէ։
17 Զի դու բարւոք գոհանաս, այլ ընկերն ոչ շինի։
18 ՁԲ. Գոհանամ զԱստուծոյ [1]վասն ամենեցուն
19 ձեր՝ առաւել լեզուաւ խօսիմ։ Այլ ի մէջ եկե-
ղեցւոյն կամիմ բանս հինգ մտօք խօսել զի և
զայլս խրատիցեմ, քան զբազում բանս՝ լեզուաւ։
20 Եղբարք, մի՛ լինիք տղայք մտօք, այլ ի չարեաց
21 տղայացարուք, և մտօք կատարեալք լինիջիք։ Գան-
զի և յօրէնսն գրեալ է եթէ Յօտար լեզուս և ի
շրթունս օտարոտիս խօսեցայց ընդ ժողովրդեանդ
ընդ այդմիկ, ասկայն և ոչ այնպէս լուիցեն [2]ինձ։
22 Ապա ուրեմն լեզուք նշանակի վասն են, ոչ հա-
ւատացելոց, այլ անհաւատից. իսկ մարգարէու-
23 թիւն՝ ոչ անհաւատից, այլ՝ հաւատացելոց։ Ապա
եթէ գայցէ եկեղեցին ամենայն ի մի վայր, և ամե-
նեքին ի լեզուս խօսիցին, և մտանիցեն անդր ագէտք
24 կամ անհաւատք, ո՞չ ասիցեն եթէ զի մոլիք դ։ Իսկ
եթէ ամենեքին մարգարէանայցեն, և մտանիցէ ոք
անդր անհաւատ կամ ագէտ, յանդիմանի յամե-
25 նեցունց, և քննի յամենեցունց, Եւ գաղտնիք
սրտի նորա յայտնի լինին. և ապա անկեալ ի վե-
րայ երեսաց՝ երկիր պագանիցէ Աստուծոյ, և խոս-
տովան լինիցի թէ արդարեւ Աստուած է ի ձեզ։

---

[1] Յ-ՆՆ, զի քան զամենեսին զձեզ

[2] Յ-ՆՆ, ինձ, ասէ Տէր

26 ՀԳ. Եւ արդ զի՞նչ իցէ, եղբարք, յորժամ ի
մի վայր ժողովիցիք, իւրաքանչիւր ոք ի ձէնջ եթէ
սաղմոս ունիցի, եթէ վարդապետութիւն ունիցի,
եթէ յայտնութիւն ունիցի, եթէ լեզուս ունիցի,
եթէ թարգմանութիւն ունիցի, ամենայն ի շինած
27 լինիցի։ Եթէ ի լեզուս ոք խօսիցի՝ երկուք, և եթէ
եւս աւելի՝ երեք, և ապա մի ըստ միոջէ, և մինն
28 թարգմանեսցէ։ Ապա եթէ չիցէ ոք որ թարգմա-
նիցէ, լուռ լիցի յեկեղեցւոջն, ընդ միտս իւր և
29 ընդ Աստուծոյ խօսեսցի։ Բայց մարգարէք երկու
30 կամ երեք խօսեսցին, և այլքն քննեսցեն։ Ապա
եթէ այլ ումեք որ նստիցին՝ յայտնեսցի, առա-
31 ջինն լռեսցէ։ Քանզի կարող էք ամենեքեան մի
ըստ միոջէ մարգարէանալ, զի ամենեքեան ուսա-
32 նիցին և ամենեքեան մխիթարեսցին։ Քանզի և ո-
33 գիք իսկ մարգարէից՝ մարգարէից հնազանդին։ Զի
ոչ եթէ խռովութեան է Աստուած, այլ՝ խաղա-
ղութեան, որպէս յամենայն եկեղեցիս սրբոց։
34 [1]Կանայք [2]յամենայն եկեղեցիս՝՝ լուռ լիցին, զի
ոչ հրամայի նոցա խօսել, այլ հնազանդ լինել,
35 որպէս և օրէնքն իսկ ասէն։ Ապա եթէ ուսանել
ինչ կամիցին, ի տան զարս իւրեանց հարցանիցեն.
քանզի անպատեհ է կնոջ մարդոյ յեկեղեցւոջ խո-
36 սել։ Եթէ ի ձէ՞նջ բանն Աստուծոյ ել, և կամ
37 թէ առ ձե՞զ միայն եհաս։ Իսկ եթէ ոք համա-
րիցի մարգարէ լինել կամ հոգեւոր, գիտասցէ զոր
38 գրեցիդ առ ձեզ թէ Տեառն պատուիրանք են։ Ա-
39 պա թէ ոք տգիտանայցէ, տգիտասցի։ Այսու-

---

[1] Ոմանք, կանայք ձեր [2] Յն. եկեղեցիս

հետեւ, եղբարք, նախանձեցարուք մարգարէանալ,
40 և պիսռելն լեզուօք մի՛ արգելուք։ Եւ ամենայն ինչ
[1]ձեր պարկեշտութեամբ և ըստ կարգի լինիցի։

ՎԺ

ԳԼ. ԺԵ

1 Յուցանեմ ձեզ, եղբարք, զաւետարանն [2]իմ, զոր
աւետարանեցի ձեզ, զոր և ընկալարուք, յոր և
2 հաստատեալք էք. Որով ապրեցէքն, որով բանիւ
աւետարանեցի ձեզ թէ ունիցիք. բայց եթէ ի
3 զուր ինչ հաւատացէք։ Զի ես ձեզ զայն նախ
աւանդեցի՝ զոր և ես ընկալայ, եթէ Քրիստոս
4 մեռաւ վասն մեղաց մերոց ըստ գրոց, Եւ զի թա-
ղեցաւ, թէ՝ և յարեաւ յաւուր երրորդի ըստ
5 գրոց. Եւ թէ՝ երեւեցաւ Կեփայի, և ապա երկո-
6 տասանիցն. Ապա երեւեցաւ աւելի եւս քան զհինգ
հարեւր եղբարց միանգամայն. յորոց բազումք
7 կան մինչեւ ցայժմ, և ոմանք ննջեցին. Եւ ապա
երեւեցաւ Յակովբայ, ապա առաքելոցն ամենե-
8 ցուն։ Յուսկ յետոյ քան զամենեսին իբրեւ անար-
9 գի միոջ երեւեցաւ և ինձ։ Զի ես իսկ եմ որուպն
առաքելոց, որ չեմ իսկ արժանի թէ կոչեցայց ա-
10 ռաքեալ, զի հալածեցի զեկեղեցին Աստուծոյ։ Այլ
շնորհօքն Աստուծոյ եմ զինչ և իցեմ. և շնորհք
նորա որ յիս՝ ընդունայն ինչ ոչ եղեն. այլ առա-
ւել քան զնոսա ամենեսին վաստակեցի, և ոչ եթէ
11 ես՝ այլ շնորհքն Աստուծոյ որ ընդ իս։ Արդ եթէ՛
ես և եթէ՛ նոքա այսպէս քարոզեցաք, և դուք
այսպէս հաւատացէք։

---

[1]ի յ---նէն գ---ե [2]ի բ---ս գ---ե

12 Ապա եթէ Քրիստոս քարոզի թէ ի մեռելոց յա-
րուցեալ է, զիա՞րդ ասեն ոմանք ի ձէնջ եթէ
13 Յարութիւն մեռելոց չիք։ Եթէ յարութիւն մե-
14 ռելոց չիք, ապա և Քրիստոս չէ յարուցեալ։ Եւ
եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն է քա-
րոզութիւնն մեր, ընդունայն են և հաւատքն ձեր.
15 Եւ գտանիցիմք սուտ վկայք Աստուծոյ. զի վկայե-
ցաք զԱստուծոյ թէ յարոյց զՔրիստոս. զոր ոչն
արդեւք յարոյց, եթէ մեռեալք ոչ յառնիցեն։
16 Իսկ եթէ մեռեալք ոչ յառնեն, ապա և Քրիստոս
17 չէ յարուցեալ։ Եւ եթէ Քրիստոս չիցէ յարու-
ցեալ, ընդունայն են հաւատքն ձեր. և տակաւին
18 [1]ի նմին մեղս՝ կայցէք։ [2]Իսկ արդ որ ննջեցինն ի
19 Քրիստոս, կորեա՞ն արդեւք՝։ Եթէ այսու կենաց
միայն յուսացեալ եմք ի Քրիստոս, ողորմելի եմք
քան զամենայն մարդիկ։

20 ԶԴ. Այլ արդ Քրիստոս յարուցեալ է ի մեռե-
21 լոց, առաջին պտուղ ննջեցելոց. Քանզի մարդով
22 եղեւ մահ, և մարդով՝ յարութիւն մեռելոց։ Որ-
պէս Ադամաւն ամենեքին մեռանին, նոյնպէս և
23 Քրիստոսիւ ամենեքին կենդանասցին։ Իւրաքան-
չիւր յիւրում կարգի. նախ Քրիստոս, և ապա
24 Քրիստոսեանք ի գալստեան նորա։ Եւ ապա կա-
տարած, յորժամ տացէ ի ձեռս զԹագաւորու-
թիւնն Աստուծոյ և Հօր, յորժամ խափանեսցէ
զամենայն իշխանութիւնս և զամենայն պետութիւն
25 և զզօրութիւն։ Զի պարտ է նմա թագաւորել

---

[1] Յ-ՆՆ, ի մեղս ձեր [2] Յ-ՆՆ, Նոյնպէս և զ
ննջեցինն ի Քրիստոս, կորեան

մինչեւ դիցէ զամենայն թշնամիս ի ներքոյ ոտից
26 իւրոց։ Յետին թշնամին խափանի՝ մահ. և զամե-
նայն ինչ հնազանդ արար ի ներքոյ ոտից նորա։
27 Ասէ յորժամ ասիցէ թէ հնազանդեալ է նմա ա-
մենայն, յայտ է թէ բաց յայնմանէ որ հնազան-
28 դեցոյց նմա զամենայն։ Ասէ յորժամ հնազան-
դեսցի նմա ամենայն՝ յայնժամ և ինքն Որդի հնա-
զանդեսցի այնմ, որ հնազանդեցոյց նմա զամենայն.
29 զի եղիցի Աստուած ամենայն յամենայնի։ Ապա
թէ ոչ՝ զի՞նչ գործիցեն որ մկրտիցինն վասն մե-
ռելոց, եթէ արդարեւ մեռեալք ոչ յառնիցեն,
30 ընդէ՞ր իսկ բնաւ մկրտին վասն նոցա. Ընդէ՞ր և
31 մեք ճգնիմք յամենայն ժամ. [1]Եւ հանապազ մե-
ռանիմք՝՝, ի պարծանս ձեր երդնում, [2]եղբարք, զոր
32 ունիմ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր։ Եթէ [3]վասն
մարդոյ ի գազանամարտի լինեալ էի Եփեսոս, զի՞նչ
օգուտ էր [4]ինձ, եթէ մեռեալք ոչ յառնեն. կե-
33 րիցուք,՝՝ արբցուք, քանզի վաղիւ մեռանիմք։ Մի՛
խաբիք. ապականեն զբարս քաղցունս բանք չարք։
34 Զե. Սթափեցարուք արդարութեամբ և մի՛ մե-
ղանչէք, զի զգիտութիւն Աստուծոյ ոչ ունին ո-
մանք. առ ամօթոյ ձերոյ ասեմ։
35 Ասէ ոք, Զիա՞րդ յառնեն մեռեալք,
36 կամ որո՞վ մարմնով գայցեն։ Անմիտ, դու զոր
սերմանեաս՝ ոչ կենդանանայ, եթէ ոչ մեռանիցի։
37 Եւ զոր սերմանեաս, ոչ զնոյն մարմին որ ծնանե-

---

[1]Բ—ը—ժ, Եւ հանապազ մեռանիմ
[2]Յ—ման—ն պ—ժ—ե [3]կամ, ըստ [4]կամ, ինձ.
եթէ մեռեալք ոչ յառնեն, կերիցուք, եւլն.

լոցն իցէ սերմանեաս, այլ հատ մերկ, եթէ՛ ցորե-
38 նոյ իցէ և եթէ՛ այլոց սերմանեաց։ Եւ Աստուած
տայ նմա մարմին որպէս և կամի, և իւրաքանչիւր
39 սերմանեացն՝ զիւր մարմին։ Ոչ ամենայն մարմին
նոյն մարմին է, այլ՝ այլ մարմին է մարդկան և
այլ մարմին անասնոց, այլ մարմին թռչնոց և այլ
40 մարմին ձկանց։ Եւ՛ մարմինք երկնաւորք, և՛ մար-
մինք երկրաւորք. այլ՝ այլ փառք երկնաւորաց են,
41 և այլ փառք՝ երկրաւորաց։ Այլ փառք արեգա-
կան և այլ փառք լուսնի, և այլ փառք աստե-
ղաց. և աստղ քան զաստղ առաւել է փառօք։
42 Նոյնպէս և յարութիւն մեռելոց. սերմանի ապա-
կանութեամբ և յառնէ առանց ապականութեան.
43 Սերմանի անարգութեամբ և յառնէ փառօք. սեր-
44 մանի տկարութեամբ և յառնէ զօրութեամբ. Սեր-
մանի մարմին շնչաւոր և յառնէ մարմին հոգեւոր.
45 եթէ գոյ մարմին շնչաւոր, գոյ և հոգեւոր. Այս-
պէս և գրեալ է, Եղեւ մարդն առաջին Ադամ
ի շունչ կենդանի, երկրորդ Ադամ՝ ի հոգի կեն-
46 դանարար։ Բայց ոչ նախ հոգեւորն. այլ շնչա-
47 ւորն, և ապա հոգեւորն։ Առաջին մարդն՝ յերկրէ
48 հողեղէն, իսկ երկրորդ մարդն՝ Տէր յերկնից։ Ո-
պէս հողեղէնն, նոյնպէս և հողեղէնքս. և որպէս
49 երկնաւորն, նոյնպէս և երկնաւորքն։ Եւ որպէս
զգեցաք զպատկեր հողեղինին, զգեցցուք և զպատ-
կեր երկնաւորին։
50 ԶԶ. Բայց զայս ասեմ, եղբարք, եթէ մարմին
և արիւն զարքայութիւնն Աստուծոյ ժառանգել
ոչ կարեն. և ոչ ապականութիւն զանապականու-
51 թիւն ժառանգէ։ Արդ խորհուրդ մի ասեմ ձեզ

[1]Ամենեքեան ննջեսցուք, այլ ոչ եթէ ամենեքեան
52 նորոգեսցուք յանկարծակի՝ յական թօթափել ի
փող յետին, քանզի փող հարկանի, և մեռեալք
յարիցեն առանց ապականութեան, և մեք նորո-
53 գեսցուք։ Զի պարտ է ապականութեանս այսմիկ
զգենուլ զանապականութիւն, և մահկանացուիս
54 այսմիկ՝ զգենուլ զանմահութիւն։ Ապա յորժամ
մահկանացուս այս զգեցցի զանմահութիւն, և ա-
պականութիւնս՝ զանապականութիւն, յայնժամ
եղիցի բանն որ գրեցաւ եթէ Ընկլաւ մահ ի յաղ-
55 թութիւն։ Ո՞ւր է, մահ, յաղթութիւն քո. ո՞ւր
56 է, [2]դժոխք, խայթոց քո։ Խայթոց մահու մեղք
57 են, և զօրութիւն մեղաց՝ օրէնք։ Ապա շնո՛րհք Ա-
ստուծոյ, որ եւս մեզ զյաղթութիւն ի ձեռն Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի։
58 ԱԴ· Ա,յսուհետեւ, եղբարք իմ սիրելիք, հաս-
տատուն եղերուք, անշարժ կացէք, առաւել լե-
րուք ի գործ Տեառն յամենայն ժամ. գիտասջիք
զի վաստակք ձեր ոչ են ընդունայն առաջի Տեառն։

ԳԼ· ԺԶ

1 Ապա վասն հաշուին որ ի սուրբսն է, որպէս
պատուէր եւս եկեղեցեացն Գաղատացւոց, նոյն-
2 պէս և դուք առնիջիք։ Ըստ իւրաքանչիւր միա-
շաբաթուցն իւրաքանչիւր ոք ի ձէնջ [3]անձին իւ-

---

[1]Բ—ղ—ՀԽ, Ոչ ամենեքեան ննջեսցուք, այլ ամե-
նեքեան նորոգեսցուք։ (52) Յանկարծակի
[2]Բ—ղ—ՀԽ, մահ [3]Յ—ՆՆ, դիցէ առ իւր գան-
ձեալ որ ինչ

3 բուռմ գանձեսցէ՝ որ ինչ՞ և յաջողեսցի։ Զի մի՛
յորժամ գայցեմ, յայնժամ հաշիւք լինիցին. այլ
յորժամ եկիցէ, զոր միանգամ [1]ընտրեցէք՝ թղթովք
զնոսա՝՝ առաքեցից տանել զշնորհն ձեր Երու-
4 սաղէմ։ Ապա թէ արժան իցէ և ինձ երթալ, ընդ
5 իս երթիցեն։ Այլ եկից առ ձեզ յորժամ ի Մա-
կեդոնիա անցանիցեմ, [2]բայց իբրեւ չըմնացայց ընդ
6 Մակեդոնիա,՝՝ թէ դէպ լիցի, առ ձեզ միասից և
կամ ձմերեցից, զի դուք յուղարկիցէք զիս ուր և
7 երթալոցն եմ։ Զի ոչ կամիմ զձեզ այժմ ի հա-
բեւանցի տեսանել. ակն ունիմ ժամանակ ինչ առ-
8 նել առ ձեզ, եթէ Տէր հրամայեսցէ։ Բայց այժմ
9 լինիմ Եփեսոս մինչեւ ցՊենտեկոստէ. Զի դուռն
բացեալ է ինձ մեծ և կարեւոր, և հակառակորդք
բազում են։
10 Արդ եթէ եկեսցէ Տիմոթէոս, տեսջիք զի թող
աներկեւղ լինիցի առ ձեզ. զի զգործ Տեառն գոր-
11 ծէ, որպէս և ես։ Մի՛ ոք զնա անգոնեսցէ, և
յուղարկեսջիք զնա խաղաղութեամբ զի եկեսցէ
առ իս. քանզի ակն ունիմ նմա եղբարբք հանդերձ։
12 ԱԶ. Այլ վասն Ապողոսի եղբօր՝ յոյժ աղաչեցի
զնա զի եկեսցէ առ ձեզ եղբարբք հանդերձ. և
արդեւք ոչ էին կամք զի այժմ եկեսցէ, այլ ե-
կեսցէ յորժամ և պարապեսցէ։
13 Հսկեցէք, հաստատուն կացէք ի հաւատս, ժրա-
14 ջարուք, զօրացարուք։ Ամենայն ինչ ձեր սիրով
լիցի։

---

[1] Կամ՝ ընտրիցէք թղթովք՝ զնոսա

[2] Յոյն՝ քանզի անցից ընդ Մակեդոնիա.

Աղաչեմ զձեզ, եղբարք, գիտէք զտունն [1]Ստեփանեայ և փորտունատեայ որ են՝ պտուղ Աքայեցւոց. և ի պաշտօն սրբոցն կարգեցին զանձինս. Ձի և դուք հնազանդ լինիցիք այնպիսեացն, և ամենայնի որ գործակից իցէ և վաստակակից։ Ուրախ եղէ ի գալ Ստեփանեայ և փորտունատեայ և Աքայիկոսի, զի զձեր պակասութիւն նոքա լցին. քանզի հանգուցին զհոգի իմ և զձեր. արդ ծանիջիք զայնպիսիսն։

Ողջոյն տան ձեզ եկեղեցիքն Ասիացւոց։ Ողջոյն շատ տան ձեզ ի տէր Ակիւղաս և [2]Պրիսկա հանդերձ առանին եկեղեցեաւն իւրեանց։ Ողջոյն տան ձեզ եղբարք ամենեքեան։ Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան։

Ողջոյնդ այդ իմոյ ձեռն Պաւղոսի է։ (22) Եթէ ոք ոչ սիրէ [3]զՏէր Յիսուս՝, եղիցի նզովեալ. Մարան աթա։ Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ։ Եւ սէրն իմ ընդ ամենեսեան ձեզ ի Քրիստոս Յիսուս։ Ամէն։

Ա֊ կ֊ն֊ ե֊ա֊ գ֊ ա֊ ե֊ ա֊ ե֊ ա֊ ե

Ա. ԿՈՐՆԹԱՑԻՍ

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա

1 ԲԿ. ՊԱՒՂՈՍ, առաքեալ Յիսուսի Քրիստոսի կա-
մօքն Աստուծոյ, և Տիմոթէոս եղբայր. եկեղեցւոյդ
Աստուծոյ որ է ի Կորնթոս, սրբովքդ ամենեքումբք
2 որ են յամենայն կողմանս Աքայեցւոց. Շնորհք
ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մեր-
մէ և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։
3 Օրհնեալ է Աստուած և Հայր Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի, Հայր գթութեանց և Աս-
4 տուած ամենայն մխիթարութեան. Որ մխիթարէն
զմեզ յամենայն նեղութիւնս մեր, առ ի կարող
լինելոյ մեզ մխիթարել զայնոսիկ որ յամենայն
նեղութիւնն իցեն, մխիթարութեամբն որով մեք
5 մխիթարիմք յԱստուծոյ։ Զի որպէս առատանան
չարչարանքն Քրիստոսի ի մեզ, նոյնպէս և ի Քրիս-
տոսի առատանայ լիցի և մխիթարութիւնն մեր։
6 Զի եթէ նեղիմք, վասն ձերոյ մխիթարութեան և
փրկութեան. և եթէ մխիթարիմք, վասն ձերոյ
[1]մխիթարութեան որ յաջողեալն է համբերու-
թեամբ նոցին չարչարանաց զոր և մեքն չարչարիմք.
7 Եւ յոյսն մեր հաստատուն է վասն ձեր. քանզի

---

[1] Ոմանք, մխիթարութեան և փրկութեան

գիտեմք եթէ որպէս կցորդ եմք չարչարանացն,
8 նոյնպէս և մխիթարութեանն։ Քանզի ոչ կամիմ
տգէտ լինել ձեզ, եղբարք, վասն նեղութեան մե-
րոյ եղելոյ յԱսիա. զի առաւել քան զկար մեր
ծանրացաք, մինչեւ անյոյս լինելոյ մեզ և ի կե-
9 նաց։ Այլ անձամբ յանձինս զվճիռ մահու ընկա-
լաք, զի մի՛ յանձինս ապաստանիցեմք, այլ յԱս-
տուածն որ յարուցանէ զմեռեալս. Որ յայնպիսի
մահուանէ փրկեաց զմեզ և փրկեացէ. 10Քանզի
յուսացեալ եմք, եթէ տակաւին փրկեացէ օգնա-
կանութեամբ աղօթից ձերոց վասն մեր. զի ի բազ-
մադէմ շնորհացն որ ի մեզ, բազմօք յաճախեսցեն
գոհութիւնքն վասն մեր։
12 Բդ. Քանզի պարծանք մեր այս են, վկայու-
թիւն մտաց մերոց, զի սրբութեամբ և առուգու-
թեամբ Աստուծոյ, և ոչ մարմնեղէն իմաստու-
թեամբ, այլ շնորհօքն Աստուծոյ շրջեցաք յաշ-
խարհի, բայց առաւել եւս առ ձեզ։ Քանզի ոչ
եթէ այլ ազգ ինչ գրեմք առ ձեզ, այլ զոր ըն-
14 թեռնուցուք և գիտակ լինիցիք. քանզի յուսամ
եթէ մինչեւ ի վախճան գիտիցիք. Որպէս և խել-
մուտ եղէք մեզ փոքր ի շատէ, զի պարծանք ձեր
եմք, որպէս և դուք մեր՝ յաւուրն Տեառն 2մերոյ
Յիսուսի 2Քրիստոսի։
15 Եւ յայս ապաստան կամէի նախ առ ձեզ գալ,
զի դուք կրկին շնորհս ընդունիջիք. Եւ ի ձէնջ
երթալ ի Մակեդոնիա. և դարձեալ ի Մակեդո-
նիայ գալ առ ձեզ, և ի ձէնջ յուղարկել ի Հրէ-

1Ց-յն, Յոր 2Ց-ման պ-ոբ

17 աստան : Իսկ եթէ զայս խորհեցայ , միթէ թեթև-
ւութեա՞մբ ինչ գնացի . և կամ զոր խորհիմն՝ ըս-
մարմնո՞յ ինչ խորհիցիմ , այլ զի եղիցի յինէն կո-
18 մանէ այո՝ այո , և ոչն՝ ոչ : Հաւատարիմ է Ա-
ստուած զի բանն մեր որ առ ձեզ [1]եհաս՝ ոչ է
19 այո և ոչ : Քանզի Որդին Աստուծոյ Յիսուս Քրի-
ստոս , որ ի ձեզ մեզ քարոզեցաւ , ինեւ և Սի-
ղուանոսիւ և Տիմոթէոսիւ , ոչ եղեւ այո և ոչ , այլ
20 այոն ի նմին եղեւ : Զի որչափ աւետիքն Աստու-
ծոյ՝ են ի նմա Այոն , վասն որոյ և նովին Ամէն
21 մեք ի փառս Աստուծոյ : Այլ որ հաստատեացն
զմեզ ձեզք հանդերձ ի Քրիստոս , և օծ զմեզ Ա-
22 ստուած է . Որ և կնքեացն զմեզ , և ետ զաւհա-
ւատչեայ Հոգւոյն ի սիրտս մեր :
23 ԲԶ· Այլ ես վկայ զԱստուած կոչեմ անձին ի-
մոյ , զի վասն խնայելոյ ի ձեզ ոչ եւս եկի ի
Կորնթոս . զի ոչ եթէ տիրեմք ձեզ հաւատովք
այլ գործակից եմք [2]շնորհացդ ձերոց՝ . քանզի հա-
ւատովք հաստատեալ կայք :

ԳԼ· Բ

1 Բայց զայս [3]եւեթ ընտրեցի՝ , զի մի՛ միւսանգամ
2 տրտմութեամբ եկից առ ձեզ . Զի եթէ ես տրտմ-
ցուցանեմ զձեզ , և ո՞վ է որ ուրախ առնիցէ զի,
3 եթէ ոչ՝ որ տրտմիցին յինէն : Եւ զայս զի գրեցի
զի մի՛ յորժամ գայցեմ , տրտմութիւն ինչ կրի-
ցեմ , ուստի արժանդ իցէ ինձ ուրախ լինել . յու-

---

[1] ի Յ-ն-ն պ-յ-ե [2] կա՛մ , ուրախութեանդ ձե-
ռըս [3] Յ-ն-ն , ընտրեցի ինձ

ացեալ եմ ի ձեզ ամենեսեան, զի իմ ուրախութիւնս ձեր ամենեցուն է: Զի ի բազում վշտաց և ի նեղութենէ սրտի գրեցի առ ձեզ բազում արտասուօք. ոչ զի տրտմիցիք, այլ զի զսէրն իմ գիտասջիք զոր ունիմ առաւելապէս առ ձեզ: Ապա թէ ոք տրտմեցոյց, ոչ ինձ զիս տրտմեցոյց, այլ փոքր ի շատէ, զի մի՛ ծանրացայց ամենեցուն ձեզ: Շատ է այնպիսւոյն պատուհասն այն որ ի բազմաց անտի է: Այսուհետեւ նմին հակառակ՝ մանաւանդ շնորհել ձեզ նմա և մխիթարել. զի մի՛ յառաւել տրտմութենէն ընկղմեսցի այնպիսին: Վասն որոյ աղաչեմ զձեզ հաստատել ի նա զսէրն: Վասն այնորիկ իսկ և գրեցի, զի գչափ առից զձեր եթէ յամենայնի հպատակ իցէք: Զի եթէ ումեք շնորհիցէք, և ես. քանզի և ես եթէ շնորհիցեմ, զոր ինչ շնորհիցեմն՝ վասն ձեր ի դէմս Քրիստոսի. Զի մի՛ գրկիցիմք ի Սատանայէ. քանզի չեմք ինչ անտեղեակ խորհրդոցն նորա:

Գ4. Այլ իբրեւ հասի ես ի Տրովադա յաւետարանն Քրիստոսի, և դուռն բաց էր ինձ ի Տէր, Ոչ ետու հանգիստ հոգւոյ իմում. քանզի ոչ գտի ես անդ զՏիտոս զեղբայր իմ. այլ հրաժարեալ ի նոցանէ գնացի ի Մակեդոնիա:

Այլ Աստուծոյ շնորհքն որ յամենայնի հռչակ հարկանէ զմեզ ի Քրիստոս [1]Յիսուս, և զհոտ գիտութեանն իւրոյ յայտնի առնէ մեւք յամենայն տեղիս: Զի հոտ անոյշ եմք Քրիստոսի առ Աստուած ի մէջ փրկելոցն և ի մէջ կորուսելոցն.

---

[1]ի Բազ–ո պ–ֆաֆ

16 Ումանց հոտ՝ մահաւանէ ի մահ, և ումանց հոտ կեն-
դանութենէ ի կեանս. և առ այս ո՞ բաւական իցէ:
17 Քանզի ոչ եմք իբրեւ զայլսն որ վաճառական լի-
նին բանին Աստուծոյ. այլ իբրեւ ի հաստատու-
թենէ, այլ իբրեւ յԱստուծոյ առաջի Աստուծոյ
ի Քրիստոս խօսիմք:

ԳԼ. Գ

1 [1]Սկսանիմք այսուհետեւ վերստին զանձինս ընծա-
յեցուցանել. [2]թէպէտ և ոչ պիտոյ իցեն մեզ՝ ո-
պէս ումանց՝ թուղթք ընծայութեան առ ձեզ կամ
2 ի ձէնջ: Այլ թուղթք մեր դուք էք՝ գրեալ ի
սիրտս մեր, ծանուցեալ և ընթերցեալ յամենայն
3 մարդկանէ. յայտնեալք՝ զի էք թուղթք Քրիստո-
սի, պաշտեցեալ ի մէնջ, և գրեալ՝ ոչ մրով, այլ
Հոգւովն Աստուծոյ կենդանւոյ. ոչ ի տախտակս
քարեղէնս, այլ ի տախտակս սրտի մարմնեղէնս:
4 ԳԴ. Ցոյս մի այսպիսի ունիմք ի ձեռն Քրիստո-
5 սի առ Աստուած. Իբր ոչ եթէ անձամբ բաւա-
կան եմք խորհել ինչ իբրեւ ի մէնջ. այլ բաւա-
6 կանութիւնն մեր յԱստուծոյ է. Որ և բաւական
արար զմեզ, պաշտօնեայս նորոց կտակարանաց
ոչ գրով, այլ Հոգւով. զի գիրն սպանանէ, այլ
7 Հոգին կեցուցանէ: Զի եթէ պաշտօն մահու գրե-
դրոշմեալ ի տախտակսն քարեղէնս եղեւ փառա-
զի մի՛ կարասցեն հայել որդիքն Իսրայելի յերես
Մովսիսի վասն փառաց երեսաց նորա որ խափ-

---

[1] Ց-ՅՆ, Սկսանի՞մք

[3] Ց-ՅՆ, կամ Թէ իցե՞ն պիտոյ մեզ

8 նեղոցն էր, Ո՞րչափ եւս առաւել պաշտօն հոգւոյն
9 եղիցի փառաւք: Զի եթէ պաշտօն դատապարտու-
թեանն փառաւք էր, ո՛րչափ եւս առաւել պաշտօն
10 արդարութեանն փառաւք: Քանզի ոչ եթէ փառա-
ւորի փառաւորեալն յայսմ մասին՝ վասն առաւե-
1 լութեան փառացն: Զի եթէ որ խափանելոցն էր՝
այն փառաւք էր, ո՛րչափ եւս առաւել որ գալոցն է՝
12 փառաւք իցէ: Եւ արդ՝ զի ունիմք այսպիսի յոյս,
13 բազում համարձակութեամբ վարեսցուք· Եւ ոչ
որպէս Մովսէս արկանէր քող ի վերայ երեսաց իւ-
րոց՝ վասն չհայելոյ որդւոցն Իսրայելի ի վախճան
14 խափանելոցն: Այլ կուրացան միտք նոցա· քանզի
մինչեւ ցայսօր ժամանակի նոյն քող ձգեալ կայ
ի վերայ ընթերցուածոց հին կտակարանացն. և ոչ
15 վերանայ, զի Քրիստոսիւ խափանելոց է: Այլ մին-
չեւ ցայսօր՝ յորժամ ընթեռնուն զՄովսէս, նոյն
16 առագաստ կայ ի վերայ սրտից նոցա: Այլ յոր-
ժամ դարձցին առ Տէր, ապա վերացի առա-
գաստն: Վ.Զ
17 Զի Տէր Հոգին է· ուր Հոգի Տեառն է, անդ ա-
18 զատութիւն է: Բայց մեր ամենեցուն բացաւ ե-
րեսօք զփառսն Տեառն իբրեւ ընդ հայելի տեսեալ՝
ի նոյն պատկեր նորոգիմք փառաց ի փառս, որպէս
և ի Տեառն Հոգւոյ:

ԳԼ. Դ

1 Վասն այսորիկ ունիմք զպաշտօնս զայս, որպէս
2 և գտաք զողորմութիւն. և ոչ ձանձրանամք· Այլ
հրաժարեցաք ի գաղտնեաց ամօթոյն, զի [1]մի՛

[1]Ցոյն, ոչ գնամք

գնասցուք՝՝ խորամանկութեամբ, և [1]մի՛ նենգեսցուք՝՝ զբանն Աստուծոյ. այլ յայտնութեամբ
ճշմարտութեանն [2]ընծայեցուսցուք զանձինս մեր առ ամենայն միտս մարդկան առաջի Աստուծոյ:
3 Ապա թէ իցէ եւս ծածկեալ աւետարանն մեր, ի
4 մէջ կորուսելոցն է ծածկեալ. Որոց աստուած աշխարհիս այսորիկ կուրացոյց զմիտս անհաւատից,
զի մի՛ ծագեսցէ ի նոսա լուսաւորութիւն աւետարանի փառացն Քրիստոսի. որ է պատկեր [3]աներ-
5 ւութին Աստուծոյ: Զի ոչ եթէ զանձինս քարոզեմք,
այլ զՅիսուս Քրիստոս զՏէր, և զմեզ ծառայս ձեզ
6 վասն Քրիստոսի: Զի Աստուած որ ասաց ի խաւարէ լոյս ծագել, [4]որ և՝՝ ծագեաց իսկ ի սիրտս մեր
ի լուսաւորութիւն գիտութեան փառացն Աստու-
7 ծոյ ի դէմս Յիսուսի Քրիստոսի: Ա.յսու հետեւ ունիմք զգանձս զայս յամանս խեցեղէնս, զի առա-
ւելութիւն զօրութեանն իցէ Աստուծոյ, և ոչ ի
8 մէնջ: Յամենայնի նեղեալք՝ այլ ոչ նուաղեալք.
9 կարօտեալք՝ այլ ոչ տարակուսեալք. Հալածեալք՝
այլ ոչ լքեալք. չարչարեալք՝ այլ ոչ սաս-
10 կեալք. Յամենայն ժամ զմահն Յիսուսի ի մարմինս մեր [5]կրեսցուք, զի և կեանքն Յիսուսի ի մար-
11 մինս մեր յայտնեսցին: Քանզի միշտ մեք որ կեն-
դանիքս եմք՝ ի մահ մատնիմք վասն Յիսուսի, զի
և կեանքն Յիսուսի յայտնի լինիցին ի մահկանացու
12 մարմինս մեր: Ա.յսու հետեւ մահ ի մեզ գործի,
13 և կեանք՝ ի ձեզ: Արդ ունիմք զնոյն հոգի հաւա-

---

[1] Յ-ՆՆ, ոչ նենգեմք [2] Յ-ՆՆ, ընծայեցուցանեմք
[3] ի բ-ա-մ պ-ի-ե [4] Յ-ՀՈՎ պ-ի-ե [5] Յ-ՆՆ, կրեմք

տոց, որպէս և գրեալ է, Հաւատացի, վասն որոյ և խօսեցայ. և մեք հաւատամք, վասն որոյ և խո-
14 սիմք իսկ։ Զայս գիտեմք եթէ որ յարոյցն [1]զՅիսուս՝ և զմեզ ընդ Յիսուսի յարուսցէ և յանդիման կա-
15 ցուսցէ ձեւք հանդերձ. Քանզի ամենայն ինչ վասն ձեր է, զի շնորհքն յաճախեալք ի բազմաց գոհու-
թենէ առաւելեսցին ի փառս Աստուծոյ։
16 Վասն որոյ և ոչ ձանձրանամք. այլ թէպէտ և արտաքին մարդս մեր ապականի, այլ ներքին մարդն
17 մեր նորոգի օր ըստ օրէ։ Զի առժամայն յաճախութիւն թեթեւ նեղութեանս մերոյ ի յաւիտենական առաւելութիւն զմեծութիւն փառացն գոր-
18 ծէ ի մեզ։ Քանզի ոչ գիտեմք զերեւելիսս, այլ զաներեւոյթսն. զի երեւելիքս առ ժամանակ մի են, և աներեւոյթքն՝ յաւիտենականք։

ԳԼ. Ե

1 Քանզի գիտեմք զի եթէ երկրաւոր տաճար շինուածոյս մերոյ քակտեսցի, շինած յԱստուծոյ ունիմք տաճար առանց ձեռագործի յաւիտենական, յեր-
2 կինս։ Եւ ընդ այս տաղտկամք, քանզի զբնակու-
3 թիւնն երկնից փափաքեմք զգենուլ. Միայն թէ յոր-
4 ժամ զգենուցուքն՝ ոչ մերկ գտանիցիմք։ Քանզի որ եմք ընդ յարկաւս ընդ այսուիկ՝ տաղտկամք ծանրացեալք. զի ոչ կամիմք մերկանալ, այլ զսյն ի վերայ այսր զգենուլ, զի ընկղմեսցի մահկանացուս
5 ի կենաց անտի։ Այլ որ յաջողէն մեզ ի սյն՝ Աստուած է, որ ետ մեզ զաւհաւատչեայ Հոգւոյն։

---

[1] Ոմանք, զՏէր Յիսուս

6 ԳՋ. Արդ համարձակիմք յամենայն ժամ, և
գիտեմք եթէ որչափ յամեմք ի մարմնի աստ, օտա-
7 բանամք ի Տեառնէ։ (Զի հաւատովք գնամք և ոչ
8 կարծեօք.) Այլ համարձակիմք, և առաւել ևս
հաճեալ եմք ելանել ի մարմնոյ աստի և մտանել
9 առ [1]Աստուած։ Վասն որոյ և առաստանամք, զի
եթէ՛ յամիցեմք և եթէ՛ ելանիցեմք, հաճոյ եւեթ
10 իցեմք նմա։ Քանզի ամենեցուն մեզ յանդիման
լինել կայ առաջի աթոռոյն Քրիստոսի, զի ընկալցի
[2]իւրաքանչիւր իւրով մարմնով զոր ինչ գործեաց
յառաջ՝ եթէ՛ բարի և եթէ՛ չար։
11 Իսկ արդ զահ Տեառն գիտելով չափ՝ զմարդկան
ինչ զմիտս հաճեմք. սակայն առաջի Աստուծոյ
[3]յայտնելոց եմք. բայց ես յուսամ և ի ձեր միտս
12 յայտնի լինել։ Իբր ոչ եթէ միւսանգամ զանձինս
ինչ ընծայեցուցանեմք ձեզ, այլ պատճառս տամք
ձեզ պարծանաց վասն մեր. զի ունիցիք առ այնոսիկ
13 որ առ աչսն պարծիցին և ոչ սրտիւք։ Զի եթէ
առանցաք ինչ՝ այն Աստուծոյ է. և եթէ զգաս-
14 տանամք՝ այն ձեր է. Զի սէրն Քրիստոսի սոսկ
զմեզ. [4]քննել զայս, զի եթէ մին փոխանակ ամե-
նեցուն մեռաւ, ապա ուրեմն ամենեքեան մեռեալ
15 էին. Եւ ի վերայ ամենեցուն մեռաւ, զի որ կեն-
դանիքն իցեն՝ մի՛ անձանց իցեն կենդանիք, այլ
16 այնմ որ ի վերայ նոցայն մեռաւ և յարեաւ։ Ա-
ստուհետեւ մեք ոչ զոք գիտեմք մարմնով. զի թէ-

---

[1] Բ-ղ-ո-ւ, Տէր [2] Յ-ննն, իւրաքանչիւր ըստ որոց գործեացն իւրով մարմնով [3] Յ-ննն, յայտնի
[4] Յ-ննն, դատիմք

պէտ և գիտէաք մարձով զԿրիստոս, այլ արդ
17 ոչ եւս նոյնպէս գիտեմք։ Բայց եթէ [1]ինչ ի Կրիս-
տոս, նոր արարած իցէ. զի հինն անց, և արդ նոր
8 եղեւ [2]ամենայն։ Ա.Յ.Լ ամենայն ինչ յԱստուծոյ
որ հաշտեցոյցն զմեզ ընդ իւր ի ձեռն [3]Կրիստոսի,
ևետ մեզ զպաշտօնն հաշտութեան։ Վ.Ջ.
19 Եւ քանզի Աստուած էր [4]Կրիստոսիւ զաշխարհս
հաշտեցուցանել ընդ իւր, և չհամարել՝ նոցա
զմեղս իւրեանց, և եդ ի մեզ զբանն հաշտութեան։
20 Արդ վասն Կրիստոսի պատգամաւորիմք, որպէս և
Աստուծոյ բարեխօսութեամբ մեւք. աղաչեմք վասն
21 Կրիստոսի հաշտեցարուք ընդ Աստուծոյ։ Զի զայն
որ ոչն գիտէր զմեզ՝ վասն մեր մեզս արար, զի
մեք եղիցուք նովաւ արդարութիւն Աստուծոյ։

ԳԼ. Զ

1 Գործակից եմք ձեր և աղաչեմք, մի՛ ընդունայն
2 զշնորհն Աստուծոյ ընդունել ձեզ։ Զի ի ժամա-
նակի ընդունելութեան, ասէ, լուայ քեզ, և յա-
ւուր փրկութեան օգնեցի քեզ. ահաւասիկ ժամա-
3 նակ ընդունելի, ահա օր փրկութեան։ [5]Մի՛ և մի՛
իւիք տայցէք պատճառս՝, զի մի՛ արատեսցի պաշ-
4 տօնն. Ա.Յ.Լ յամենայնի [6]ընծայեցուցէք զանձինս
ձեր՝ իբրեւ զպաշտօնեայս Աստուծոյ համբերու-

---

[1]Յ-ոյն, ոք [2]Յ-ոյն պ-ւ-ե [3]Ո-ն-ի, Յիսուսի Կրիստոսի [4]Յ-ոյն, որ Կրիստոսիւ զաշխարհս հաշտեցոյց ընդ իւր, և չհամարեցաւ [5]Յ-ոյն, Ոչինչ իւիք տամք պատճառս [6]Յ-ոյն, ընծայեցուցանեմք զանձինս մեր

թեամբ բազմաւ ի նեղութիւնս, ի վիշտս, ի չար-
5 չարանս, ի գանս, ի բանտս, ի խռովութիւնս,
6 յաշխատութիւնս, ի հակմունս, ի պահս, ի սրբու-
թեան, ի գիտութեան, յերկայնմտութեան, ի
քաղցրութեան, ի Հոգի Սուրբ, ի սէր առանց կեղ-
7 ծաւորութեան, ի բանս ճշմարտութեան, ի զօրու-
թեան Աստուծոյ. [1]վասն զինուն արդարութեան
8 որ ընդ աջմէն և ընդ ահեկէն է. փառաւք և ա-
նարգութեամբ, գովութեամբ և պարսաւանօք.
9 իբրեւ մոլարք և ճշմարիտք. իբրեւ անծանօթք և
ծանուցեալք. իբրեւ մահկանացուք և ահաւասիկ
կենդանի եմք. իբրեւ խրատեալք և ոչ մահա-
10 պարտեալք. իբրեւ տրտմեալք և հանապազ ու-
րախ եմք. իբրեւ տնանկք և զբազումս մեծացու-
ցանեմք. իբրեւ ոչ ինչ ունիցիմք, և զամենայն ինչ
11 ունիմք: Բերանք մեր բացեալ են առ ձեզ, կորնթ-
12 թացիք, և սիրտք մեր ընդարձակեալք: Ոչինչ նե-
ղիք ի մէնջ բայց եթէ ի գութս ձեր նեղիցիք.
13 Արդ զնոյն հատուցումն, (իբրեւ ընդ որդեակս [2]ու-
նիմ,) ընդարձակեցարուք և դուք:
14 Եւ մի՛ լինիք լծակիցք անհաւատից. քանզի զի՞նչ
հաղորդութիւն է արդարութեան ընդ անօրէնու-
թեան. և կամ զի՞նչ հաւասարութիւն է լուսոյ
15 ընդ խաւարի. Եւ կամ զի՞նչ միաբանութիւն է
16 Քրիստոսի ընդ Բելիարայ. կամ զի՞նչ բաժին կայ
հաւատացելոյն ընդ անհաւատին. կամ զի՞նչ նմա-
նութիւն է տաճարի Աստուծոյ՝ մեհենաց. ապա-
քէն դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք, որ-

---

[1] Յ-ՆՆ, ի ձեռն [2] Յ-ՆՆ, քոսիմ

պէս ասաց Աստուած թէ բնակեցայց ի նոսա և գնացից ի նոսա, և եղէց նոցա Աստուած և նոքա
17 եղիցին իմ ժողովուրդք։ վասն որոյ ելէք ի միջոյ նոցա և մեկնեցարուք, ասէ Տէր, և ի պիղծս մի՛
18 մերձենայք. Եւ ես ընկալայց զձեզ, և ես եղէց ձեզ ի Հայր, և դուք եղիջիք ինձ յաւատեաս և ի դստեր, ասէ Տէր Ամենակալ։

Գլ. Է

1 Իսկ որովհետեւ զայս աւետիս ունիմք, սիրելիք, սրբեսցուք զանձինս մեր յամենայն պղծութենէ մարմնոյ և հոգւոյ, կատարեսցուք զսրբութիւն ա-
2 հիւն Աստուծոյ։ Տարայք մեզ, զի ոչ ումեք մեղաք, և ոչ զոք եղծաք, և ոչ զոք զրկեցաք։ Ոչ
3 ելեմ ի դատապարտութիւն ինչ ասեմ, քանզի յառաջ իսկ ասացի ելեմ ի սրտի մերում կայք՝ ի կեալ և ի մեռանել ընդ ձեզ։
4 Դկ. Բազում համարձակութիւն է ինձ առ ձեզ. բազում պարծանք են ինձ վասն ձեր. լի եմ մխիթարութեամբ, առաւելեալ եմ ուրախու-
5 թեամբ յամենայն նեղութիւնս մեր։ Քանզի յորժամ հասաք մեք ի Մակեդոնիա, և ոչ միով իւիք հանգիստ գտաւ մարմնոյ մերում, այլ յամենայնի նեղեալք. քանզի արտաքոյ մարտք և ի ներքոյ ար-
6 հաւիրք։ Այլ որ մխիթարէն զխոնարհս՝ մխիթար-
7 եաց զմեզ Աստուած ի գալստեանն Տիտոսի։ Ոչ միայն ի գալստեան նորա, այլ և ի մխիթարու-թեանն զոր մխիթարեցաւ նա ի ձեզ, ի պատմել մեզ զանձնուէն ձեր, զողբումն ձեր, զնախանձն ձեր վասն իմ, մինչ առաւել ուրախ լինել ինձ։

8 Չի թէ և տրտմեցուցի զձեզ թղթովն, ոչ զղջա-
նամ, թէպէտ և զղջացեալ էի. քանզի տեսանեմ
զի թուղթն այն թէ և առ ժամանակ մի տրտմե-
9 ցոյց զձեզ. Արդ ուրախ եմ, ոչ զի [1]տրտմիցիք,
այլ զի յապաշխարութիւն տրտմեցարուք. քանզի
տրտմեցայք դուք ըստ Աստուծոյ, զի մի՛ իւիք
10 զրկեցիք ի միջնէ: Չի որ ըստ Աստուծոյն տրտմու-
թիւն է՝ ապաշխարութիւն ի փրկութիւն առանց
զղջանալոյ գործէ, իսկ աշխարհի տրտմութիւն մահ
11 գործէ: Արդ նոյն իսկ որ ըստ Աստուծոյն տրտմե-
ցարուք, ո՛րչափ ինչ փոյթ գործեաց ի ձեզ, կամ
աղերս, կամ սաստ, կամ երկեւղ, կամ անձուկ,
կամ նախանձ, կամ վրէժխնդրութիւն. քանզի
յամենայնի ընծայեցուցէք զանձինս ձեր՝ սուրբ
12 լինել յիրիդ յայդմիկ: Ապա ուրեմն թէ և գրեցի
ես առ ձեզ, ոչ վասն այնորիկ որ զրկեացն, և ոչ
վասն այնորիկ որ զրկեցաւն, այլ վասն յայտնի
լինելոյ փութոյն [2]ձերոյ որ վասն [3]մեր առ ձեզ
13 առաջի Աստուծոյ: Վասն այնորիկ մխիթարեալ
եմք ի վերայ մխիթարութեանն [4]մերոյ. առաւել
եւս խնդացաք ի վերայ խնդութեանն Տիտոսի.
քանզի հանգուցեալ էր հոգի նորա ի միջնէ ամե-
14 նեցունց: Չի զինչ և պարծեցայ առ նմա վասն
ձեր՝ ոչ ամաչեցի, այլ որպէս զամենայն ճշմար-
տութեամբ խօսեցաք ընդ ձեզ, նոյնպէս և պար-
15 ծանքն մեր առ Տիտոս ճշմարիտ եղեն: Եւ
գութք նորա առաւել եւս են ի ձեզ, քանզի

---

[1] Յ-ՈՒՆ, տրտմեցարուք
[2] Ո՛ՀԱՆ, ձերոյ
[3] Ո՛ՀԱՆ, ձեր
[4] Ո՛ՀԱՆ, ձերոյ

[1]յիշեցուցաներ մեզ՝ զամենեցուն զձեր հնազանդութիւն, թէ ո՛րպէս ահիւ և դողութեամբ ընկալարուք զնա։ Եւ արդ ուրախ եմ, զի յամենայնի համարձակ եմ առ ձեզ։

ԳԼ. Ը

1 ԴԲ Ցուցանեմ ձեզ, եղբարք, զշնորհն Աստուծոյ որ տուեալ են եկեղեցեացն Մակեդոնացւոց.
2 Զի մեծաւ հանդիսիւ նեղութեան՝ առատութիւն խնդութեանն նոցա, և ծանր աղքատութիւնն նոցա առատել եղեւ ի մեծութիւն առատութեան
3 նոցա։ Զի ըստ կարի նոցա, վկայեմ, և աւելի
4 քան զկար ինքնակամ, բազում աղաչանօք [2]աղաչէին զշնորհն և զհաղորդութիւն պաշտամանն որ
5 ի սուրբսն՝ [3]տալ ցմեզ՝։ Ոչ որչափ ակն ունէաք, այլ և զանձինս եւս ետուն, նախ Տեառն և ապա
6 մեզ՝ կամօքն Աստուծոյ, [4]Աղաչել զՏիտոս զի որպէս սկսաւն յառաջագոյն, նոյնպէս և կատարեսցէ ի ձեզ և զայդ եւս շնորհս։
7 Այլ որպէս յամենայնի առատ էք հաւատովք և բանիւ և գիտութեամբ և ամենայն փութով, և որ [5]ի մէնջ ի ձեզ՝ սէրն է, զի և յայդմ եւս շնորհի առատել
8 լինիցիք։ Ոչ որպէս հրամանն տալով ասեմ, այլ վասն այլոց փութոյ, և վասն ձերոյ սիրոյ զմտերմութիւնդ փորձեմ։
9 Քանզի գիտէք զշնորհսն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի վասն ձեր աղքա-

---

[1]Յոյն, յիշէր [2]Յոյն, աղաչէին զմեզ
[3]Յոյն պակաս. յայլս՝ ընդունել մեզ
[4]Յոյն, Յաղաչէլն մեր [5]Որոշ, ի ձէնջ ի մեզ

տացաւ որ մեծատունն էր, զի դուք նորա աղքա-
10 տութեամբն մեծասջիք։ Եւ խրատ մի յայսմիկ
տամ. զի այն իսկ օգտի է ձեզ, որք ոչ միայն
զառնելն այլ և զկամելն յառաջագոյն սկսայք ի
11 հերուն հետէ։ Բայց արդ և զառնելն իսկ կատա-
րեցէք. զի որպէս յօժարութիւնն ի կամաց է, նոյն-
12 պէս և առնելն ըստ գոյին։ Զի եթէ յօժարու-
թիւնն առաջի կայ, ըստ գոյին ընդունելի է՝ և ոչ
13 եթէ ըստ չգոյին։ Զի ոչ եթէ այլոց հանգիստ
14 [1]կամիցիմ, և ձեզ նեղութիւն. Այլ հաւասարու-
թեամբ, յայժմու ժամանակիս ձեր առատելու-
թիւնդ ի նոցա պակասութեանն, զի և նոցա ա-
ռատելութիւնն եղիցի ի ձերում պակասութեանդ.
զի եղիցի հաւասարութիւն, որպէս և գրեալ է,
15 Թէ Որ բազումն [1]առ՝ ոչ առատեալս, և որ սա-
կաւն՝ ոչ նուազեցաւ։
16 ԴԳ. Բայց շնո՛րհք Աստուծոյ, որ արկ զնոյն
17 փոյթ վասն ձեր ի սիրտ Տիտոսի. Զի զաղաչանսն
ընկալաւ, և փութացաւ յօժարագոյնս [1]դիմեաց
18 գալ առ ձեզ։ Եւ առաքեցաք ընդ նմա զեղբայրն,
որոյ գովութիւնն յաւետարանի անդ է ընդ ամե-
19 նայն եկեղեցիս։ Եւ ոչ այսչափ միայն, այլ և
ձեռնադրեալ յեկեղեցեաց անտի՝ ընդ ճանապարհակից մեր
եղեւ ի շնորհս յայսոսիկ, որ պաշտին ի մէնջ ի
20 փառս Տեառն և [2]ի մեր յօժարութիւն։ Բայց զայս
խղճէաք իսկ թէ գուցէ արասցէ ոք ինչ դնիցէ [3]ի
հաստատութեանս յայսմիկ որ պաշտեցաւս ի մէնջ։

---

[1]ի ց-ն-ն պ-ի-ե [2]Ո՛ւն+, ի ձեր
[3]ց-յն, յառաջութեանս

21 ՔանզիՀ խորհիմք զբարիս ոչ միայն առաջի Տեառն,
22 այլ և առաջի մարդկան։ Եւ առաքեցաք ընդ նո-
սա զեղբայրն մեր զոր բնտրեցաք ի բազում իրս՝
բազում անգամ պինդ գտեալ, և առաւել եւս
23 այժմ պնդագոյն՝ յուսով մեծաւ ի ձեզ։ Եթէ
եթէ վասն Տիտոսի ինչ բանք են, իմ հաւասար
է և ձեր գործակից. և եթէ եղբարք մեր, առա-
24 քեալքն եկեղեցւոյ և փառք Քրիստոսի։ Եւ արդ
զՀանդէս սիրոյ ձերոյ և զմերոյ պարծանաց վասն ձեր՝
ի դոսա ցուցջիք յանդիման ամենայն եկեղեցեաց։

ԳԼ. Թ

1 ԴԴ. Այլ վասն պաշտամանն որ ի սուրբսն է, ա-
2 հելի է ինձ և գրել առ ձեզ։ Զի գիտեմ զյօժա-
րութիւն ձեր, զոր վասն ձեր պարծեցեալ եմ ի
մէջ Մակեդոնացւոցն, թէ Աքայեցիքն ի Հերուն
Հետէ պատրաստ են, և ձեր նախանձն զբազում
3 յորդորեաց։ Եւ առաքեցաք զեղբարսն, զի մի՛
պարծանքն մեր որ վասն ձեր՝ ընդունայն լինիցին
ի մասինդ յայդմիկ, այլ որպէս ասէի իսկ, պատ-
4 րաստագոյնք գտանիջիք. Գուցէ յորժամ գայցեն
ընդ մեզ Մակեդոնացիքն, և գտանիցեն զձեզ ան-
պատրաստս, և ամաչեացուք մեք, (զի մի՛ ասասց-
ցուք թէ դուք,) [1]ի մասինդ յայդմիկ [2]պարծանաց։
5 Արդ կարեւոր համարեցայ աղաչել զեղբարս, զի
յառաջագոյն եկեսցեն առ ձեզ, և յառաջագոյն
պատրաստեսցեն զյառաջագոյն խոստացեալ օրհ-
նութիւնն ձեր ի պատրաստի ունել, այնպէս իբրեւ

---

[1]Ց-ՅՆ, ի վստահութեանդ [2]Ց-ՀԱՆ պ-է-ե

6 զօրհնութիւն, և մի՛ իրրեւ զպատհութիւն։ Քան-
զի [1]զայդ որ սերմանէ ճշդելով՝ ճշդելով և հնձես-
ցէ, և որ սերմանէ առատութեամբ՝ առատու-
7 թեամբ և հնձեսցէ։ Իւրաքանչիւր որպէս և յօժա-
րեսցի ոք սրտիւ, մի՛ առ հարկի և արտմութեան,
քանզի զտուրս զուարթատաս սիրէ Աստուած։
8 Ամէն կարող է Աստուած զամենայն շնորհս առա-
ւելուլ ի ձեզ, զի յամենայնի յամենայն ժամ զա-
մենայն բաւականութիւն ընկալեալ՝ առաւելուցուք
9 յամենայն գործս բարութեան, Որպէս և գրեալ
է, Սփռեաց և ետ տնանկաց, արդարութիւն նո-
րա մնայ յաւիտեան։
10 Դե՛ Ամէն այն որ պարգեւէ սերմն սերմնահա-
նաց, և հաց ի կերակուր՝ պարգեւեսցէ և բազմա-
ցուսցէ զսերմանիս ձեր, և աճեցուսցէ զպտուղս
11 արդարութեան ձերոյ. Յամենայնի մեծացեալք ա-
մենայն առատութեամբ՝ որ յօրինէն մեզ գոհու-
12 թիւն Աստուծոյ։ Զի պաշտօն հարկիս այսորիկ ոչ
միայն առ ի լնուլ զպակասութիւն սրբոցն է, այլ
և առաւելուլ բազմօք գոհութիւն Աստուծոյ.
13 Զանգիսիւ պաշտամանս այսորիկ փառաւորել զԱս-
տուած ի վերայ հնազանդութեան խոստովանու-
թեան ձերոյ յաւետարանն Քրիստոսի, և առա-
տութեամբ հաղորդութեանն ի նոսա և յամենե-
14 սին։ Եւ նոցա աղօթք վասն ձեր, քանզի անձկա-
ցեալ են առ ձեզ վասն առաւել շնորհացն Ա-
15 ստուծոյ որ ի ձեզ։ Ամէ՛ն շնո՛րհք Աստուծոյ ի վե-
րայ անպատում պարգեւացն նորա։

---

[1] Ի ցո՛ն պ-ի-ե

ԳԼ. Ժ

1 Ա*յլ* եա իակ Պաւղոս աղաչեմ զձեզ հեզու-
թեամբն և հանդարտութեամբ Քրիստոսի, որ
յանդիման ձեզ իբրեւ տատապեալ մի եմ ի միջի
ձերում. բայց ի հեռուստ համարձակիմ առ ձեզ.
2 Աղաչեմ զի մի՛ ի մօտոյ եւեթ համարձակիցիմ
վստահութեամբ, [1]կամ համարիցիմ յանդգնել
ի վերայ ոմանց որ կարծեն զմեզ եթէ ըստ մարմ-
3 նոյ գնայցեմք։ Զի թէպէտ և մարմնով գնամք,
4 այլ ոչ եթէ ըստ մարմնոյ պինդուորիմք։ (Զի զէն
պինդուորութեան մերոյ ոչ է մարմնաւոր, այլ զո-
5 րաւոր յԱստուծոյ առ ի քակելոյ զամուրս.) Զխոր-
հուրդս քակեմք, զամենայն բարձրութիւն հպար-
տացեալ ի վերայ գիտութեանն Աստուծոյ, և գե-
րեմք զամենայն միտս ի հնազանդութիւն Քրիստո-
6 սի. Եւ ի պատրաստի ունիմք խնդրել զվրէժ ա-
մենայն անհնազանդութեան, յորժամ ձեր եւս
հնազանդութիւնդ կատարեսցի։
7 Դ*ուք*. Ըստ [2]իւրաքանչիւր [3]երեսաց դիտեսջիք՝.
եթէ ոք վստահ յանձն իցէ [4]Քրիստոսի լինել՝, զայս
խորհեսցի դարձեալ ի միտս իւր, թէ որպէս նայն
8 Քրիստոսի է, նոյնպէս և [5]մեք։ Զի թէ առաւել
եւս պարծեցայց վասն իշխանութեանս մերոյ, զոր
եաս մեզ Տէր ի շինել և ոչ ի քակել զձեզ, ոչինչ
9 ամաչեցից։ Զի մի՛ թուեցայց իբրեւ ահ ինչ ար-

---

[1] Յոյն, որով [2] ի յունէն պոլոե [3] Ոմն+, երե-
սա՞ց դիտէք [4] Ոմն+, Քրիստոսի ծառայ լինել
[5] Ոմն+, մեք Քրիստոսի

10 կանել ձեզ թղթովք. [1]Ասիցեն, թուղթքս ծա-
նուն են և սաստիկք, բայց տեսիլ մարմնոյ՝
11 տկար, և բանն արհամարհեալ. Զայս խորհեցի
այնպիսին, զի որպիսիք եմք բանիւք թղթոցդ ի
12 հեռուստ, նոյնպիսիք և ի մօտոյ արդեամբք։ Քան-
զի ոչ իշխեմք կշռել և հաւասարել զանձինս մեր
ոմանց, որ զանձինս իւրեանց [2]ձեզ ընծայեցու-
ցանեն, այլ անձամբ յանձինս՝ զանձինս չափեն, և
ի կշռել անձամբ զանձինս՝ ոչ առնուն ի միտ։
13 Այլ մեք ոչ եթէ յանչափս ինչ պարծեցուք,
այլ բաս չափոյ կանոնին զոր բաժանեաց մեզ Ա-
14 տուածծ չափով հասանել մինչեւ առ ձեզ։ Իբր ոչ
եթէ հասու ինչ չիցեմք ի ձեզ, և ձգտեցուցանի-
ցեմք զանձինս, քանզի մինչեւ առ ձեզ հասաք
15 աւետարանաւն Քրիստոսի։ Եւ ոչ յանչափս ինչ
պարծիմք օտար վաստակօք, բայց յոյս մի ունիմք
զաճմանն հաւատոց ձերոց այդրէն ի ձեզ մեծա-
16 նալոյ՝ բաս կանոնիս մերոյ յառաւելութիւն. Ի վեր
եւս քան զձեզ աւետարանել, ոչ օտար կանոնաւ
17 ի պատրաստականս ինչ պարծել։ Զի որ պարծի-
ցին՝ ի Տէր պարծեսցի։
18 ԲԿ. Զի ոչ եթէ որ զանձն իւր ընծայեցուցանէ՝
նա է ընտրեալ, այլ զոր Տէրն ընծայեցուցանէ։

ԳԼ. ԺԱ

1 Լաւ էր եթէ ներէիք փոքր մի և իմում անզգա-
2 մութեանս. այլ և անհագէք իսկ։ Նախանձեցու-

---

[1] ի Յ—ն՝ սմն՝ Ասեն, այլ՝ Ասէ
[2] ի Յ—ն՝ պակաս

ցանեմ զձեզ ի նախանձն Աստուծոյ. զի խօսեցայ
զձեզ առն միում, իբրեւ զկոյս մի սուրբ յանդի-
3 մանն կացուցանել Քրիստոսի: Բայց երկնչիմ, գու-
ցէ որպէս օձն խաբեաց զՀեւա խորամանկութեամբ
իւրով, ապականեսցին միտք ձեր ի միամտութենէն
4 որ ի Քրիստոս: Զի եթէ [1]որ գալոցն իցէ՝ այլ
[2]Քրիստոս քարոզիցէ զոր մեք ոչ քարոզեցաք,
կամ ոգի օտար առնուցուք զոր ոչ առէք, կամ
աւետարան օտար զոր ոչ ընկալարուք, բարւոք
5 անասիք [3]նոցա: Բայց ես այսպէս համարիմ, թէ
ոչինչ իւիք պակաս իցեմ քան զլաւ առաքեալսն:
6 Թէպէտ և տգէտ եւս իցեմ բանիւ, այլ ոչ եթէ
գիտութեամբ. ասկայն յամենայնի յայտնեցաք
7 զանձինս ամենեւին առ ձեզ: Եւ եթէ ինա՞ս ինչ
գործեցի զի զանձն խոնարհեցուցի, և այն՝ զի դուք
բարձրասջիք, զի ձրի զաւետարանն Աստուծոյ ա-
8 ւետարանեցի ձեզ: Զայլ եկեղեցիս կողոպտեցի,
9 առեալ թոշակ ի ձեր սպասաւորութիւն: Եւ յոր-
ժամ եկի առ ձեզ, թէպէտ և պակասեաց ինչ,
ոչ զոք ի ձէնջ ձանձրացուցի, զի զպակասութիւնն
իմ լցին եղբարքն եկեալք ի Մակեդոնացւոց. և
յամենայնի առանց ծանրանալոյ ձեզ զանձն իմ
10 պահեցի և պահեցից: Զի գոյ ճշմարտու-
թիւն Քրիստոսի՝

ԲԴ. Զի պարծանքս այս ոչ արգելցին լինէն ի
11 կողմանս Աքայեցւոց: Ընդէ՞ր. իբրու թէ ո՞չ սի-
12 րեցեմ զձեզ. զոյն Աստուած դիտէ. Զոր առնեմ,

---

[1] Յ-ՆՆ, որ գայն [2] Բ-ԼՔ-ՀՓ, Յիսուս
[3] ի Յ-ՆՆ պ-ՀՓ-Ե

և արարից, զի հատից զպատճառս այնոցիկ որ
զպատճառան կամիցին. զի որով պարծինն, և նո-
13 քա իբրեւ զմեզ գտանիցին։ Զի այնպիսիքն առա-
ւաքեալք, մշակք նենգաւորք, կերպարանին ի
14 կերպարանս առաքելոց Քրիստոսի։ Եւ չեն ինչ
զարմանք, քանզի և ինքն Սատանայ կերպարանի
15 ի հրեշտակ լուսոյ։ Եւ ոչինչ է մեծ թէ և պաշ-
տօնեայք նորա կերպարանին իբրեւ պաշտօնեայք
արդարութեան. որոց կատարածն եղիցի ըստ գոր-
16 ծոց իւրեանց։ Դարձեալ ասեմ, մի՛ ոք համարեսցի
զիս անզգամ, ապա թէ ոչ՝ գոնէ իբրեւ զան-
զգամ ընկալարուք զիս, զի և ես փոքր մի ինչ
17 պարծեցայց։ Եւ զոր խօսիմ՝ ոչ եթէ ըստ Տեառն
ինչ խօսիմ, այլ իբրեւ անզգամութեամբ՝ ըստ
18 կարգի այդց պարծանաց։ Եւ քանզի բազումք
19 պարծին ըստ մարմնոյ, և ես պարծեցայց։ Մտա-
դեւր իմն անասիքք անմտացն ձերովդ իմաստու-
20 թեամբ։ Քանզի անասիքք [1]եթէ ոք խարէ զձեզ,"
եթէ ոք [2]ծառայեցուցանէ, եթէ ոք ուտէ զձեր,
եթէ ոք առնու ինչ, եթէ ոք հպարտանայ, եթէ
21 ոք զձեզ յանդիման հարկանէ. Ըստ անարգանացդ
ասեմ, իբրեւ թէ մեք տկարացաք արդեւք. յոր
ինչ ոք համարձակիցի, (անզգամութեամբ ասեմ,)
22 համարձակիմ և ես։ Եբրայեցի՞ք իցեն, և ես. Իս-
րայելացի՞ք իցեն, և ես. զաւակ Աբրահամի՞ւ իցեն,
23 և ես. Պաշտօնեայք Քրիստոսի՞ իցեն, (յանդգնա-
գոյնս ասացից թէ) առաւել եւս ես. եթէ վաս-
տակօք, առաւել. եթէ գանիւք, եւս առաւել.

---

[1] ի ցառն պահէ [2] ցյն, ծառայեցուցանէ զձեզ

եթէ բանիւ, աւելի քան զնոսա. եթէ մահուամբք՝
24 բազում անգամ. ի Հրէից հնգից քառասուն միով
25 պակաս արկի. երիցս ձաղկեցայ. մի անգամ քար-
կոծ եղէ. երիցս նաւակոծ եղէ. գիշեր և գիշեր
26 յանդունդս տառապեցայ. ի ճանապարհս՝ բազում
անգամ. վիշտս՝ ի գետոց, վիշտս՝ յաւազակաց,
վիշտս՝ յազգէ, վիշտս՝ ի հեթանոսաց, վիշտս՝ ի
քաղաքի, վիշտս՝ յանապատի, վիշտս՝ ի ծովու,
27 վիշտս՝ ի սուտ եղբարց. ի ջանս և ի վաստակս, ի
տքնութիւնս՝ բազում անգամ, ի քաղց և ի ծա-
րաւ, ի պահս՝ բազում անգամ, ի ցուրտ և ի մեր-
28 կութեան. [1]Թող զայլ նեղութիւնսն, և զի հա-
նապազ խուժանն ի վերայ իմ կուտէը, և հոգ
29 ամենայն եկեղեցեացն": Ո՞ հիւանդանայ, և ոչ
ես հիւանդանամ. ո՞ գայթակղի, և ոչ ես տա-
պանամ:

30 ԲԶ Եթէ պարծել ինչ պարտ իցէ, զտկարու-
31 թեանն պարծեցայց: Աստուած և Հայր Տեառն մե-
ծոյ Յիսուսի գիտէ, որ է օրհնեալ յաւիտեանս,
32 զի ոչ ստեմ: Ի Դամասկոս ազգապետն Արետայ
արքայի պահէը զքաղաքն Դամասկացւոց ունել
33 զիս. Եւ ընդ պատուհանն վանդակաւ կախեցայ
ընդ պարիսպն, և փախեայ ի ձեռաց նորա:

ԳԼ. ԺԲ

1 Արդ պարծել ինչ պարտ իցէ, այլ օգնէ ինչ ոչ.
բայց եկից ի տեսիլս և ի յայտնութիւնս Տեառն:

---

[1]Յոյնն, Թող զորս արտաքինքն են, որ նեղէն զիս
հանապազ՝ է հոգ ամենայն եկեղեցեացն

2 գիտեմ այր մի ի Քրիստոս յառաջ քան զչորեք-
տասան ամ. (եթէ մարմնով, ոչ գիտեմ, և եթէ
առանց մարմնոյ, ոչ գիտեմ, Աստուած գիտէ.)
յափշտակեալ զայնպիսին մինչեւ յերրորդ երկնից.
3 եւ գիտեմ զայնպիսի այր. (եթէ մարմնով և եթէ
առանց մարմնոյ՝ ոչ գիտեմ, Աստուած գիտէ.)
4 Զի յափշտակեցաւ ի դրախտն, և լուաւ բանս ան-
5 ճառս, զոր ոչ է պարտ մարդոյ խօսել։ վասն
այնպիսւոյն պարծեցայց. այլ վասն անձին ինչ ոչ
6 պարծեցայց, բայց եթէ ի տկարութիւնս։ Զի եթէ
և կամիցիմ պարծել, ոչ եղէց անզգամ, քանզի
ճշմարտն ասեմ. այլ անխայեմ, գուցէ ոք համա-
րիցի ինչ յիս աւելի քան զոր տեսանիցէ յիս կամ
7 լսիցէ յինէն։ Եւ զի մի՛ առաւելութեամբ յայտ-
նութեանցն հպարտացայց, տուաւ ինձ խայթ մարմ-
նոյ, հրեշտակ Սատանայ, կռփել զիս, զի մի՛ հպար-
8 տացայց։ Եւ վասն այնորիկ երից անգամ աղա-
9 չեցի զՏէր զի ի բաց արասցէ յինէն։ Եւ ասէ ցիս,
Շատ են քեզ շնորհք իմ, զի զօրութիւն իմ ի
տկարութեան կատարի. և արդ յաւ եւս լիցի ինձ
պարծել ի տկարութիւնս, զի բնակեսցէ յիս զօ-
րութիւնն Քրիստոսի։
10 ԳԴ. վասն որոյ հաճեալ եմ ընդ տկարու-
թիւնս, ընդ թշնամանս, ընդ վիշտս, ընդ հալա-
ծանս և ընդ նեղութիւնս վասն Քրիստոսի. զի
11 յորժամ տկարանամ, յայնժամ զօրանամ։ Եղէ
[1]անզգամ, քանզի դուք [2]ստիպեցէք. զի ինձ պարտ

---

[1] Ոմանք, անզգամ, զի պարծեցայց
[2] Յոյնք, ստիպեցէք զիս

էր ի ձէնջ վկայութիւն առնուլ թէ ոչինչ պակաս գոայ քան զլաւ առաքեալսն, [1]զի թէպէտ և
12 ես ոչինչ եմ։ Սակայն նշանք առաքելոյ գործեցան ի ձեզ ամենայն համբերութեամբ, նշանօք և ա-
13 րուեստիւք և զօրութեամբք։ Եւ արդ զի՞նչ իցէ որով պակաս գոայք քան զայլ եկեղեցիս, բայց եթէ այնու զի ես զձեզ ոչ ձանձրացուցի. շնորհեցէք ինձ զվնասդ զայդ։
14 Ահաւասիկ այս երիցս անգամ պատրաստեալ եմ գալ առ ձեզ, և ձեզ բեռն ինչ ոչ եղէց, զի ոչ խնդրեմ ինչ զձեր, այլ զձեզ. քանզի ոչ պարտին որդիք հարց դանձել, այլ հարք՝ որդւոց։
15 Բայց ես մեծապիւրութեամբ ծախեցից, և ծախեցայց վասն անձանց ձերոց, զի թէպէտ և յառաւել սիրոյն զձեզ՝ սակաւ սիրիցիմ։
16 Այլ գրեթէ ես ոչինչ ծանրացայ ձեզ, այլ
17 քանզի խորագէտ էի, խելօք կալայ զձեզ։ Մի՞թէ որով առաքեցին առ ձեզ՝ նոքօք ինչ ագահեցի՞ ի
18 ձէնջ։ Աղաչեցի զՏիտոս և առաքեցի ընդ նմա զեղբայրն, մի՞թէ ագահեա՞ց ինչ զձեր Տիտոս. ո՞չ նովին ոգւով գնացաք. ո՞չ նովին շաւղօք [1]շրջեցաք։
19 Գ. Դարձեալ համարիցիք եթէ յողոք անկեալ ինչ ձեզ աղերսիցե՞մք. առաջի Աստուծոյ ի Քրիստոս խօսիմք, զի ամենայն ինչ, սիրելիք,
20 վասն ձերոյ շինուածեան է։ Այլ երկնչիմ, գուցէ եկեալ, ոչ որպէս ես կամիմն՝ գտանիցեմ զձեզ. և ես գտանիցիմ ձեզ՝ որպէս և դուք ոչ կամիցիք. գուցէ [1]դարձեալ՝ հեռ, նախանձ, սրտմտութիւնք,

---

[1] ի ցած պոլոե

գրգռութիւնք, չարախօսութիւնք, քսութիւնք,
[1]հպարտութիւնք, ամբարտաւանութիւնք, խռովու-
21 թիւնք. Գուցէ դարձեալ, յորժամ գայցեմ, նկուն
ինչ առնիցէ զիս Աստուած իմ առ ձեզ. և սուգ
առնուցում վասն բազմաց յառաջագոյն մեղուցե-
լոց, և ոչ ապաշխարելոց ի վերայ պղծութեան և
պոռնկութեան և գինեմոլութեան զոր գործեցին։

ԳԼ. ԺԳ

1 Ա՛յս երիցս անգամ գամ առ ձեզ, զի ի բերա-
նոյ երկուց և երից վկայից հաստատեսցի ամենայն
2 բան։ Յառաջ ասացի, և դարձեալ կանխաս ա-
սեմ [2]յանդիմման երկիցս անգամ, և այժմ ի բա-
ցուստ [3]գրեմ յառաջագոյն յանցուցեալոցն և այ-
լոցն ամենեցուն, զի եթէ եկից դարձեալ, ոչ խնա-
3 յեցից. Եթէ զփորձ ինչ խնդրէք զՔրիստոսի որ
ինեւս ընդ ձեզ խօսի, որ հզօրացեալն է ի ձեզ, և
4 ոչ տկարացեալ։ Զի թէպէտ և խաչեցաւ [4]ի մերմէ
տկարութենէ՛, այլ կենդանի է զօրութեամբն Ա-
ստուծոյ. և մեք թէպէտ և տկարանայցեմք [5]վասն
նորա՛, այլ կենդանի լինուք ընդ նմա զօրու-
թեամբն [6]Աստուծոյ։
5 Դկ. Փորձեցէք զանձինս ձեր, եթէ կայցէք ի
նոյն հաւատս. քննեցէք զանձինս, եթէ ո՞չ գիտէք
զանձինս, զի Քրիստոս Յիսուս ի ձեզ է, բայց եթէ

---

[1]Ի Յ—ՆԻՆ պ—ՒՈՒ—Ե [2]Ո՛ՄՆ—, որպէս թէ յանդիման
[3]Ց—Ո՛ՄՆ—ս պ—ՒՈՒ—Ե [4]Ց—ՅՆՆ, ի տկարութենէ
[5]Ի Յ—ՆԻՆ, —Ո՛ՄՆ—, ի նմա, այլ՝ ընդ նմա
[6]Բ—ԱՂ—Ո՛Ի—, Աստուծոյ ի ձեզ

6 անպիտանք իցէք։ Ա՚յլ ակն ունիմ թէ գիտիցէք,
7 զի մեք ոչ եմք անպիտանք։ Ա՚յլ խնդրեմք յԱս-
տուծոյ զի մի՛ ինչ [1]արասցէ ձեզ չար՚՚. ոչ զի
մեք ընտիրք երեւեսցուք, այլ զի դուք զբարիս
8 գործիցէք, և մեք անպիտանք գտանիցիմք։ Զի ոչ
կարեմք ինչ հակառակ կալ ճշմարտութեանն, այլ
9 վերակացու եմք ճշմարտութեանն։ Խրախ եմք,
յորժամ մեք տկարանայցեմք, և դուք զօրաւորք
իցէք. զդոյն իակ և աղօթս առնեմք՝ զձեր հաս-
10 տատութիւնդ։ Վասն այնորիկ գայս ի հեռուստ
գրեմ, զի մի՛ յորժամ եկից, ստատկութեամբ վա-
րեցայց ըստ իշխանութեանս, զոր ետ ինձ Տէր ի
շինել և ոչ ի քակել։
11 Ա՚յսուհետեւ, եղբարք, ողջ լերուք, հաստա-
տուն կացէք, մխիթարեցարուք, միաբան լերուք,
խաղաղութիւն արարէք. և Աստուած խաղաղու-
12 թեան և սիրոյ եղիցի ընդ ձեզ։ Ողջոյն տուք մի-
մեանց ի համբոյր սրբութեան. ողջոյն տան ձեզ
13 սուրբք ամենայն։ Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի և սէրն Աստուծոյ և հաղորդութիւն
Հոգւոյն Սրբոյ ընդ ձեզ ամենեսին։ Ամէն։

Ա՚՚ կ՚ընթայր երէց՚՚ է փետրուար է չոր-
եքշաբթի ։ Ղ՚՚յ։

---

[1]Յոյն, առնիցէք դուք չար

ԱՌ ԳԱՂԱՏԱՑԻՍ

ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա

1 ԴԴ. ՊԱՒՂՈՍ, առաքեալ ոչ ի մարդկանէ և ոչ
ի ձեռն մարդոյ, այլ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի
2 և Աստուծոյ Հօր որ յարոյց զնա ի մեռելոց, և
որ ընդ իս են եղբարք ամենեքեան, եկեղեցեացդ
3 Գաղատացւոց. Շնորհք ընդ ձեզ և խաղաղու-
թիւն յԱստուծոյ ի Հօրէ և ի Տեառնէ մերմէ Ցի-
4 սուսէ Քրիստոսէ, Որ ետ զանձն իւր վասն մեղաց
մերոց, զի զմեզ փրկեսցէ յաշխարհէ աստի չարէ
5 ըստ կամացն Աստուծոյ և Հօր մերոյ. Որում
փառք յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։
6 Զարմանամ զի այդպէս վաղվաղակի փոփոխիք
յայնմանէ որ կոչեացն զձեզ ի շնորհսն Քրիստոսի
7 յայլ աւետարան. Որ ոչ գոյ այլ, բայց եթէ իցեն
ոմանք որ խռովեցուցանիցեն զձեզ, և կամիցին շրջել
8 զաւետարանն Քրիստոսի։ Այլ թէ մեք կամ հրեշ-
տակ յերկնից աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր
9 աւետարանեցաքն ձեզ, նզովեալ լիցի։ Որպէս յա-
ռաջագոյնն ասացաք, և արդ դարձեալ ասեմ,
Եթէ ոք աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր ա-
10 ռէքն, նզովեալ լիցի։ Արդ մարդկա՞ն հաճոյ լի-
նիցիմ, թէ՝ Աստուծոյ. կամ խնդրիցեմ մարդկա՞ն

հաճոյ լինել. եթէ տակաւին մարդկան հաճոյ լինէի, ապա Քրիստոսի ծառայ ոչ էի։
11 ԴՋ. Յուցանեմ ձեզ, եղբարք, զաւետարանն որ աւետարանեցաւ յինէն, զի ոչ է ըստ մարդոյ.
12 քանզի և ոչ ես ի մարդոյ առի, և ոչ ուսայ յումեքէ, այլ ի յայտնութենէն Յիսուսի Քրիստոսի։
13 Քանզի լուեալ իսկ էք ձեր զիմ գնացն որ երբեմն ի Հրէութեան անդ, զի անչափ հալածէի զեկեղեցին Աստուծոյ, և աւար հարկանէի զնա։ Եւ յառաջադէմ էի ի Հրէութեանն քան զբազումս հասակակից իմ որ յազգին իմում էին. առաւել նախանձախնդիր էի իմոյ հայրենի աւանդութեանցն։
15 Այլ յորժամ կամեցաւ Աստուած (որոշեաց զիս յորովայնէ մօր իմոյ, և կոչեաց ի ձեռն շնորհաց
16 իւրոց,) Յայտնել զՈրդին իւր [1]ինեւ, զի աւետարանեցից զնա ի հեթանոսս, անդէն վաղվաղակի
17 ոչինչ զգացուցի մարմնոյ և արեան, Եւ ոչ ելի Երուսաղէմ առ որ յառաջագոյն քան զիս առաքեալքն էին, այլ չոգայ Արաբիա, և դարձեալ դարձայ ի Դամասկոս։ Ապա յետ երից ամաց ելի Երուսաղէմ տեսանել զՊետրոս, և եղէ
19 առ նմա աւուրս հնգետասան։ Զայլ ոք յառաքելոց անտի ոչ տեսի, բայց միայն զՅակովբոս
20 զեղբայրն Տեառն։ Այլ զոր գրեմ առ ձեզ, ահաւասիկ առաջի Աստուծոյ, զի ոչ ստեմ։ Ապա
22 եկի ի կողմանս Ասորւոց և Կիլիկեցւոց։ Եւ յանծանօթս էի երեսօք եկեղեցեացն [2]որ ի Քրիստոս
23 Թենէ անտի էին՝ ի Քրիստոս։ Բայց զի լսելով

---

[1] կամ, յինս [2] Ցայն, Հրէաստանի որ

լուեալ էր թէ Ոը հալածէրն զմեզ յայնժամ,
արդ աւետարանէ զհաւատսն զոր երբեմն քան-
24 տեր. Եւ փառաւոր առնէին ինեւ զԱստուած։

ԳԼ. Բ

1 ԵԿ. Ապա յետ ամաց չորեքտասաներից միւսանգամ
ելի յԵրուսաղէմ ընդ Բառնաբայ՝ առեալ ընդ ի-
2 և զՏիտոս։ Եւ ելի ըստ յայտնութեանն. և զգա-
ցուցի նոցա զաւետարանն զոր քարոզէի ի հեթա-
նոս, առանձինն այնոցիկ որ կարծեալքն էին,
դուցէ ընդունայն ինչ ընթացեալ իցեմ կամ ըն-
3 թացեայ։ Այլ և ոչ Տիտոս որ ընդ իս ի հե-
4 թանոսաց էր՝ բռնադատեցաւ թլփատել։ Այլ
վասն սպրդողաց սուտ եղբարցն, որք սպրդեցին
մտանել դիտել զազատութիւնն մեր զոր ունիմք
ի Քրիստոս Յիսուս. զի զմեզ ծառայեցուսցեն։
5 Որոց և ոչ առ ժամանակ մի անասացաք հնազան-
դութեանն, զի ճշմարտութիւն աւետարանին հա-
6 տատեսցի առ ձեզ։ Բայց զկարծելոցն եթէ իցեն
ինչ, որպիսիք ոք երբեմն էին, չէ ինչ ինձ փոյթ.
քանզի Աստուած ակն մարդկան ոչ առնու. զի
7 ինձ կարծեալքն այնպիսի ինչ ոչ զգացուցին. Այլ
զնորին հակառակն, իբրեւ տեսին եթէ հաւատա-
ցեալ է ինձ աւետարանն անթլփատութեան, որ-
8 պէս Պետրոսի՝ թլփատութեան. (Զի որ յաջողեացն
Պետրոսի յառաքելութիւն թլփատութեանն, յա-
9 ջողեաց և ինձ ի հեթանոսս.) Իբրեւ գիտացին
զշնորհսն որ տուեալ էին ինձ, Յակովբոս և Կե-
փաս և Յովհաննէս որ կարծեալ սիւնքն էին, ձեռս
ետուն հաւանութեան ինձ և Բառնաբայ. զի մեք

10 ի Հեթանոսս, և նոքա՝ ի թլփատութեանն. Բայց
միայն զի զաղքատսն յիշեսցուք, զոր և ես փու-
թացայ զնոյն առնել։
11 ԵԴ. Ա՛յլ յորժամ եկն [1]Կեփաս յԱնտիոք, ընդ-
դէմ դարձայ նորա, քանզի գող իրրեւ ատգտեալ
12 իմն էր։ Քանզի մինչչեւ եկեալ էին ոմանք առ ի
Յակովբայ, ընդ Հեթանոսս ուտէր [2]անխտիր. իսկ
իրրեւ եկին, զատանէր և որոշէր զանձն՝ երկու-
ցեալ յայնցանէ որ ի թլփատութենէ անտի էին։
13 Եւ կեղծաւորեցան ընդ նմա և այլ Հրեայքն, մին-
չեւ Բառնաբաս անգամ խոնարհեցաւ ի նոցա կեղ-
14 ծաւորութիւնն։ Ա՛յլ իրրեւ տեսի թէ ոչ ուղիղ
գնան ի ճշմարտութիւն աւետարանին, ասեմ [3]ցԿե-
փաս առաջի ամենեցուն, Եթէ դու որ Հրեայդ
ես՝ հեթանոսաբար և ոչ հրէաբար կեաս, զիա՞րդ
15 ստիպես հեթանոսաց լինել հրեարէն։ Ձի մեք
բունն Հրեայք եմք, և ոչ ի հեթանոսաց մեղաւորք։
16 Ձայս գիտեմք եթէ ոչ արդարանայ մարդ ի գոր-
ծոց օրինացն, եթէ ոչ ի հաւատոցն Յիսուսի Քրիս-
տոսի. և մեք ի Քրիստոս Յիսուս հաւատացաք, զի
արդարասցուք ի հաւատոցն Քրիստոսի, և ոչ ի
գործոց օրինացն. զի ի գործոց օրինացն ոչ արդա-
17 րասցի ամենայն մարմին։ Իսկ եթէ մինչ խնդրի-
ցեմք արդարանալ ի Քրիստոս, և դտանիցիմք մե-
ղաւորք, սպա ուրեմն Քրիստոս մեղաց պաշտօն-
18 եայ եղեւ. քաւ լիցի։ Ձի եթէ զոր քակեցին՝ զնոյն
միւսանգամ շինիցեմ, սպա յանցաւոր զանձն իմ

---

[1] Ոմանք, Պետրոս [2] ի յոմանսն պակասի
[3] Ոմանք, ցՊետրոս

19 ես ինձէն երեւեցուցանեմ։ Զի ես օրինօք օրինացն
20 մեռայ, զի Աստուծոյ կեցից. [1]ես ընդ Քրիստոսի
ի խաչ [2]ելից. և կենդանի եմ այսուհետեւ, ոչ
ես՝ այլ կենդանի է յիս Քրիստոս։

ԵԶ. Այլ որ այժմ կեամ մարմնով, հաւա-
տովք Որդւոյն Աստուծոյ կեամ, որ սիրեացն զիս,
21 և մատնեաց զանձն վասն իմ։ Ես ոչ անար-
գեմ զշնորհսն Աստուծոյ. զի եթէ յօրինաց անտի
էր արդարութիւն, ապա Քրիստոս զուր մեռաւ։

ԳԼ. Գ

1 Ո անմիտ Գաղատացիք, ո՞ նախանձ արար զձեզ,
որոց գրեթէ առաջի աչաց Յիսուս Քրիստոս գրե-
2 ցաւ ի խաչ ելեալ։ Զայս միայն կամիմ ուսանել
ի ձէնջ. ի գործո՞ց օրինաց զՀոգին ընկալարուք,
3 եթէ ի լրոյ հաւատոց։ Այդչափ անմի՞տ էք.
4 սկսեալ Հոգւով, և արդ մարմնո՞վ վախճանիք։ Ես
այնչափ անցք անցին ընդ ձեզ զո՞ւր, եթէ իցէ
5 զուր։ Իսկ արդ որ բաշխեաց ի ձեզ զՀոգին և յա-
ջողեաց ի ձեզ զզօրութիւնս՝ ի գործո՞ց օրինաց է,
6 եթէ ի լրոյ հաւատոց։ Որպէս Աբրահամ հաւա-
տաց յԱստուած, և համարեցաւ նմա յարդարու-
7 թիւն։ [4]Գիտիցէ՞ք արդեաք", զի որք ի հաւատոց
8 անտի են, նոքա են որդիք Աբրահամու։ Յառա-
ջագոյն գիտեր գիր, եթէ ի հաւատոց անտի ար-
դարացուցանէ Աստուած զհեթանոսս, յառաջա-

---

[1] Ի Յ-ՆՆ պ-ե-ե [2] Յ-ՆՆ, ելի
[3] Ո՞ման ց-ե-ե-ն, ոչ հնազանդել ճշմարտութեան
[4] Ց-ՆՆ, Ապա գիտասջիք

գոյն խոստացաւ Աբրահամու, թէ ի քեզ օրհ-
9 նեսցին ամենայն ազգք։ Այսուհետեւ որք ի հա-
ւատոց անտի են՝ օրհնին ընդ հաւատացելոյն Ա-
10 բրահամու։ Զի որ ժիանգամ ի գործոց օրինացն են,
ընդ անիծիւք են. քանզի գրեալ է թէ Անիծեալ
ամենայն մարդ որ ոչ կացցէ յամենայն գրեալսն
ի գիրս օրինացն՝ առնել զամենայն։ Վ.Ջ
11 Զի օրինաւքն ոչ ոք արդարանայ առաջի Աստու-
ծոյ, այն յայտ իսկ է. զի Արդարն, [1]ասէ, ի հա-
12 ւատոց կեցցէ։ Բայց օրէնքն չեն ի հաւատոց, այլ
13 որ արասցէ զսոյն՝ կեցցէ ի նոսին։ Քրիստոս գնեաց
զմեզ յանիծից օրինացն, եղեալ վասն մեր անէծք,
(զի գրեալ է թէ Անիծեալ ամենայն որ կախեալ
14 կայցէ զփայտէ,) Զի ի հեթանոսս օրհնութիւնն
Աբրահամու եղիցի ի Քրիստոս Յիսուս. զի մեք զա-
15 ւետիս Հոգւոյն Սրբոյ ընկալցուք հաւատովք։ Ըստ
մարդկութեան ասեմ, եղբարք, Ապաքէն զմարդ-
կան հաստատեալ կտակ ոչ ոք կարէ անարգել, և
16 ոչ այլ հրամանն ի վերայ այնր տալ, Իսկ Աբրա-
համու խոստացան աւետիքն և զաւակի նորա. և
ոչ ասէ, Զաւակաց՝ իբրեւ բազմաց, այլ իբրեւ
17 զմիոյ, թէ՝ Եւ զաւակի քումմ, որ է Քրիստոս։ Բայց
զայս ասեմ, Զկտակն յառաջագոյն հաստատեալ
յԱստուծոյ ի Քրիստոս, օրէնքն որ յետ չորեքհա-
րեւր և երեսուն ամի եղան, ոչ կարեն խափանել
18 առ ի խափանելոյ զաւետիսն։ Եթէ յօրինաց անտի
է ժառանգութիւնն, ապա ոչ եւս յաւետեացն.
բայց Աբրահամու աւետեաք շնորհեաց Աստուած։

---

[1] Ի Յ—ն՝ պակաս

19 Իսկ զի՞նչ իցեն օրէնք. յանցուածոց վասն յա-
ւելան, մինչեւ եկեսցէ զաւակն, որում խոստա-
ցեալն էր՝ կարգեալ հրեշտակօք ի ձեռն միջնորդի:
20 Իսկ միջնորդ միոյ աւրուք ոչ է, բայց Աստուած
21 մի է: Իսկ արդ օրէնքն հակառա՞կ ինչ իցեն ա-
ւետեացն Աստուծոյ. քաւ լիցի. զի եթէ տուեալ
էին օրէնքն որ կարող էին կենդանի առնել, ապա
22 հաստատ յօրինաց անտի էր արդարութիւն: Այլ
փակեցին գիրք զամենեսին ընդ մեղս, զի աւե-
տիքն ի հաւատոց անտի Յիսուսի Քրիստոսի տա-
23 ցին հաւատացելոց: Մինչչեւ հաւատքն եկեալ
էին՝ ընդ օրինօք փակեալ պահէաք ի հանդերձեալ
24 հաւատսն, որ յայտնելոց էին ի մեզ: Ապա օրէնքն
դաստիարակ եղեն մեզ ի Քրիստոս Յիսուս, զի ի
25 հաւատոցն արդարասցուք: Այլ իբրեւ եկին հա-
26 ւատքն, ոչ եւս ընդ դաստիարակաւ եմք: Քանզի
ամենեքեան որդիք Աստուծոյ էք հաւատովք ի Յի-
27 սուս Քրիստոս: Որք միանգամ ի Քրիստոս մկրտե-
28 ցարուք, զՔրիստոս զգեցեալ էք. չիք խափր, Ո՛չ
Հրէի և ոչ Հեթանոսի, ոչ ծառայի և ոչ ազա-
տի, ոչ արուի և ոչ իգի. զի ամենեքեան դուք
29 մի էք ի Քրիստոս Յիսուս: Ապա եթէ դուք Քրիս-
տոսի էք, ուրեմն Աբրահամու զաւակ էք, ըստ
աւետեացն ժառանգք:

ԳԼ. Դ

1 ԶԿ. Զայս ասեմ, ցորքան ժամանակս ժառանգն
տղայ է՝ չէ ինչ առաւել քան զծառայն, թէպէտ
2 և տէր իցէ ամենեցուն. Այլ ընդ հսկողսդ
է և ընդ գաւառապետօք մինչեւ ի ժամանակս

3 կէտ հօրն։ Նոյնպէս և մեք մինչ տղայքն էաք,
ընդ տարերըք աշխարհիս ի ծառայութեան կայաք։
4 Այլ իբրեւ եկն լրումն ժամանակին, առաքեաց
Աստուած զՈրդին իւր որ եղեւ ի կնոջէ, և եմուտ
5 ընդ օրինօք · Զի զնոսա որ ընդ օրինօքն էին գնեա-
6 ցէ, զի մեք զորդեգրութիւն ընկալցուք։ Եւ զի էք
դուք որդիք, առաքեաց Աստուած զՀոգի Որդւոյն
իւրոյ ի սիրտս [1]մեր՝ որ աղաղակէ Աբբա, Հայր։
7 Այսուհետեւ չէ՛ ծառայ, այլ որդի. եթէ որդի,
և ժառանգ [2]Աստուծոյ։
8 Այլ յայնժամ մինչ ոչն գիտէիք զԱստուած
ծառայէիք այնոցիկ որ ոչն էին ի բնէ Աստուածք։
9 Այլ այժմիկ ծանեալք զԱստուած, մանաւանդ
թէ ծանուցեալք իսկ յԱստուծոյ, զիա՞րդ դառ-
նայք միւսանգամ ի տարերս տկարս և չտպքաս,
որոց միւսանգամ զանձինս ծառայեցուցանել կա-
10 միք։ Ջառւրս խորէք և զամիս և զժամանակս և
11 զտարիս։ Երկնչիմ ի ձէնջ, գուցէ թէ ի զուր ինչ
վաստակեցի ի ձեզ։
12 Եղերուք իբրեւ զիս, քանզի և ես իբրեւ զձեզդ
էի. եղբարք, աղաչեմ զձեզ, չիք ինչ ձեր մեղու-
13 ցեալ առ իս։ Գիտէք դուք զի տկարութեամբ
մարմնոյ աւետարանեցի ձեզ զառաջինն. և զփոր-
14 ձանսն որ ի մարմնի իմում էին ոչ անարգեցէք
և ոչ անգոանեցէք, այլ իբրեւ զՀրեշտակ Աստու-
ծոյ ընկալարուք զիս, իբրեւ զՔրիստոս Յիսուս։
15 Իսկ արդ ո՞ւր է երանութիւնն ձեր. վկայեմ ձեզ,
եթէ հնար ինչ էր, զաչս ձեր հանէիք և տայիք

---

[1]Ոմանք, ձեր [2]Ոմանք, Աստուծոյ ի Քրիստոս

16 ինձ։ Արդ զի՞ թշնամի իմն եղէ ձեզ, զի պատպղն
17 խօսեցայ։ Ա՛յլ նախանձեցուցանեն զձեզ ոչ ի
բարի, և արգելուլ կամին զձեզ զի նոցա նա.
18 խանձաւորք լինիցիք։ Բայց լաւ է նախանձաւոր
լինել ի բարիս յամենայն ժամ, և ոչ միայն յոր.
ժամ ի ձերում միջի իցեմ։
19 ԶԴ. Որդեակք իմ, զորս դարձեալ վերստին
20 երկնեմ, մինչեւ նկարեսցի Քրիստոս ի ձեզ, կամէի
այժմ գալ առ ձեզ և փոխել զբարբառ իմ, զի
տարակուսեալ եմ ես վասն ձեր։
21 Ասէք ինչ ինձ՝ որ ընդ օրինօքն կամիք լինել,
22 չիցէ՞ [1]ընթերցեալ ձեր զօրէնս։ Զի գրեալ է թէ
Աբրահամու երկու որդիք էին, մի՝ յաղախնոյ ան.
23 տի, և մի՝ յազատէն։ Ա՛յլ որ յաղախնոյն էր՝ ըստ
մարմնոյ ծնեալ էր, և որ յազատէն՝ ըստ աւե.
24 տեացն. Որ է առակ օրինակի. զի այս ինքն են
երկու կտակարանք, մի՝ ի լեռնէ Սինեայ ի ծառա.
25 յութիւն ծնեալ, որ է Հագար. Քանզի Հագարն
լեառն Սինա է յԱրաբիա, հաւասար է [2]այժմ
Երուսաղեմի, զի ծառայէ որդւովք իւրովք հան.
26 դերձ։ Ա՛յլ վերինն Երուսաղէմ ազատ է, որ է
27 մայր մեր [3]ամենեցուն։ Զի գրեալ է, Ուրախ լեր,
ամուլ, որ ոչ ծնանիցիր. գոչեա և աղաղակեա, որ
ոչդ երկնէիր. զի բազում են որդիք սկնդկիդ ա.
28 ռաւել քան զարամբնոյն։ Ա՛յլ մեք, եղբարք,
29 ըստ Իսահակայ աւետեացն որդիք եմք։ Ա՛յլ որ.
պէս յայնժամ, որ ըստ մարմնոյն ծնեալ էր՝ հա.
լածէր զայն որ ըստ Հոգւոյն, նոյնպէս և այժմ։

---

[1]Ց՝ ընդ, լսեալ [2]Ց՝ ընդ, այժմու [3]Ց՝ մեզ ոգւով

30 Այլ զի՞նչ ասէ գիր, Ի բաց հան զաղախինդ և
զորդի դորա, զի մի՛ ժառանգեսցէ որդի աղախ-
31 նոյդ ընդ որդւոյ ազատին։ Վասն որոյ, եղբարք,
չեմք որդիք աղախնոյն, այլ ազատին, [1]ազատու-
թեամբն, որով Քրիստոս զմեզ ազատեցոյց։

Գլ. Ե

1 Պինդ կացէք այսուհետեւ, և մի՛ միւսանգամ
ընդ լծով ծառայութեան մնանէք։
2 ՋՋ. Ահաւասիկ ես Պաւղոս ասեմ ձեզ, զի եթէ
3 թլփատիք, Քրիստոս ինչ ձեզ ոչ օգնէ։ Վկայեմ
ամենայն մարդոյ որ թլփատիցի, թէ պարտական
4 է զամենայն օրէնսն կատարել։ Խափանեալ էք ի
Քրիստոսէ որ օրինօքն արդարանայք, և անկեալ
5 էք ի շնորհաց անտի։ Զի մեք Հոգւովն ի հաւատոց
6 յուսոյն արդարութեան ակն ունիմք։ Զի ի Քրիս-
տոս Յիսուս ոչ թլփատութիւն ինչ կարող է, և
ոչ անթլփատութիւն, այլ հաւատք սիրով ա-
7 շխատեալք։ Բարւոք ընթանայիք. ո՞ կասեցոյց զձեզ
8 ճշմարտութեանն չհաւանել։ Զի այն հրապոյրք ոչ
9 յայնմանէ են որ կոչեացն զձեզ։ Փոքր մի խմոր
10 զամենայն զանգուածն խմորէ։ Այլ ես յուսա-
ցեալ եմ ի ձեզ Տէրամբ, թէ ոչ այլազգ ինչ խոր-
հիցիք, և որ խռովեցուցանէ զձեզ՝ կրեսցէ դա-
11 տաստան, ո՛ եւ իցէ։ Այլ ես, եղբարք, եթէ
թլփատութիւն քարոզէի, ընդէ՞ր տակաւին հա-
լածիմ. ապա ուրեմն խափանեալ իցէ գայթակ-
12 ղութիւն խաչին։ Երանի թէ մնատակտուր իսկ լի-
նէին որ զձեզն խռովեցուցանեն։

---

[1] Ի բազմա. ասոքն սկսանի յօրէրք ֆլօխն

13 Ձի դուք յազատութիւն կոչեցեալ էք, եղբարք
միայն զի ազատութիւն ձեր ոչ լինիցի ի պատ-
ճառս մարմնոյ, այլ սիրով ծառայեցէք միմեանց:
14 Ձի ամենայն օրէնք ի մի բան կատարին, ի Սիրես-
15 ցես զընկեր քո իբրեւ զանձն քո: Ապա եթէ
զմիմեանս խածատիցէք և ուտիցէք, զդուշ լերուք,
գուցէ ի միմեանց սատակիցիք:
16 ԷԴ. Բայց զայս ասեմ. Հոգւով գնացէք, և
17 զցանկութիւն մարմնոյ մի՛ կատարէք: Ձի մարմին
ցանկայ հակառակ հոգւոյ, և հոգի՝ հակառակ
մարմնոյ. և զի սոքա միմեանց հակառակ են, մի՛
18 զոր կամիցիք՝ զայն առնիցէք: Իսկ եթէ Հոգւով
19 վարիք, ապա չէք ընդ օրինաւք: Ձի յայտնի են
գործք մարմնոյ, այսինքն են շնութիւն, պոռնկու-
20 թիւն, պղծութիւն, գիջութիւն, կռապաշտու-
թիւն, կախարդութիւն, թշնամութիւն, հեռ, նա-
խանձ, բարկութիւն, հակառակութիւնք, երկ-
21 պառակութիւնք, հերձուածք, Ձարտկնութիւն,
սպանութիւնք, արբեցութիւնք, անառակութիւնք,
և որ ինչ սոցին նման են. զոր յառաջագոյն իսկ
ասեմ ձեզ, որպէս և կանխաւն ասէի, թէ որ
զայսպիսի ինչ գործեն՝ զարքայութիւն Աստուծոյ
22 ոչ ժառանգեն: Իսկ պտուղ Հոգւոյն այս է. սէր,
խնդութիւն, խաղաղութիւն, երկայնմտութիւն,
23 քաղցրութիւն, բարութիւն, հաւատք, հեզու-
թիւն, ժուժկալութիւն. զայսպիսեաց աստի օ-
24 րէնքն չեն հակառակ: Իսկ որ Քրիստոսեանքն են՝
զմարմինս իւրեանց ի խաչ հանին կարեօքն և ցան-
25 կութեամբք հանդերձ: Եթէ կեամք Հոգւով, ընդ
26 Հոգւոյն և միաբանեացուք: Եւ մի՛ լիցուք անա-

պարծք միմեանց ձայն տալով և ընդ միմեանս նա-
խանձելով։

ԳԼ. Զ.

1 ԷԶ. Եղբարք, եթէ յանկարծ ըմբռնեսցի ոք [1]ի
ձէնջ յինչ և իցէ յանցանս, դուք որ հոգեւորքդ
էք՝ հաստատեցէք զայնպիսին հոգւով հեզութեան.
զգոյշ լինիցիք անձանց զի մի՛ և դուք փորձիցիք։
2 Զմիմեանց բեռն բարձէք, և այնպէս կատարեցէք
3 զօրէնսն Քրիստոսի։ Եթէ համարիցի ոք լինել ինչ,
4 և չիցէ, զանձն իւր խաբէ։ Զգործ իւր կշռեսցէ
իւրաքանչիւր ոք, և ապա անձին իւրում միայն
5 պարծանս տացէ, և մի՛ առ ընկերաւն։ Զի իւրա-
քանչիւր ոք զիւր բեռն բառնալոց է։
6 Հաղորդութիւն արասցէ [2]աշակերտն վարդապե-
7 տին յամենայն բարութիւնս։ Մի՛ խաբիք, Աս-
8 տուած ոչ արհամարհի։ Զի զոր ինչ սերմանէ
մարդ՝ զնոյն և հնձեսցէ. որ սերմանէ ի մարմին
իւր՝ ի մարմնոյ անտի հնձեսցէ զապականութիւն.
և որ սերմանէ ի հոգին՝ ի հոգւոյ անտի հնձեսցէ
9 զկեանսն յաւիտենից։ Այլ զբարիս գործել մի՛
ձանձրասցուք, զի ի ժամանակի իւրում հնձես-
10 ցուք [3]առանց լքանելոյ։ Ա՛յսուհետեւ մինչդեռ
ժամանակս ի ձեռս է, գործեսցուք զբարիս առ
ամենեսեան, մանաւանդ առ ընտանիսն հաւատոյ։
11 Տեսէք որպիսի գրով գրեցի առ ձեզ իմով ձե-
12 ռամբ։ Զի որ միանգամ կամին բարեմարգիկ

---

[1]ի Բ–ղ–մ. պ–ի–ե [2]Յ–ն, որ ուսանին զբանն
[3]Յ–ն, եթէ ոչ լքանիցիմք

լինել մարմնով, նոքա սոսկեն զձեզ թլփատել. միայն զի մի՝ [1]հալածին Քրիստոսի վշտա երթայցեն։
13 Քանզի և որ թլփատեալքն իսկ են՝ նոքա զօրէնսն ոչ պահեն, այլ կամին զի դուք թլփատեսջիք, զի ձերով մարմնովդ պարծեսցին։ Վ.Ջ
14 Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով ինձ աշխարհ ի խաչ ելեալ է, և ես՝ աշխարհի։ [2]Զի ոչ
15 թլփատութիւն ինչ է և ոչ անթլփատութիւն,
16 այլ նոր արարած։ Եւ որ միանգամ այսմ կանոնի միաբան լինին, խաղաղութիւն ի վերայ նոցա և ողորմութիւն, և ի վերայ Իսրայելին Աստուծոյ։
17 Այսուհետեւ աշխատ ոք զիս մի՛ արասցէ, զի ես [3]դէպարչարանսն Քրիստոսի ի մարմնի իմում կրեմ։
18 Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ոգւոյդ ձերում, եղբարք։ Ամէն։

Ա՟ Գ՟ՂՓՈՅԼ՟ ՓՐԵՅ՟ Է ՀՈՎՀ։

---

[1] Յոյն, վասն խաչին Քրիստոսի հալածեսցին
[2] Որ՟ն՟, Զի ի Քրիստոս Յիսուս ոչ
[3] Կո՟, զերաշխէպսն

ԱՌ ԵՓԵՍԱՑԻՍ

ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա

1 ԸԿ. ՊԱՒՂՈՍ, առաքեալ Յիսուսի Քրիստոսի կա-
մաւք Աստուծոյ, սրբոց որ են [1]յԵփեսոս, և հա-
2 ւատացելոց [2]ի Քրիստոս. Շնորհք ընդ ձեզ և խա-
ղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ և ի Տեառնէ
Յիսուսէ Քրիստոսէ:
3 Օրհնեալ է Աստուած և Հայր Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի, որ օրհնեաց զմեզ ամենայն հոգե-
4 ւոր օրհնութեամբ յերկինսաւորս ի Քրիստոս. Որպէս
ընտրեաց զմեզ նովաւ յառաջ քան զլինելն աշ-
խարհի, լինել մեզ սուրբս և անարատս առաջի
5 նորա սիրով: Յառաջագոյն սահմանեաց զմեզ յօր-
դեգրութիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի ի նոյն
6 բան հաճութեան կամաց իւրոց, ի գովեստ փա-
ռաց շնորհաց իւրոց, որով զուարճացոյց զմեզ
7 Սիրելեաւն. Որով ունիմք զփրկութիւն ի ձեռն
արեան նորա, զթողութիւն մեղաց բան մեծու-
8 թեան շնորհաց իւրոց. Որ առաւելաւ ի մեզ ա-
9 մենայն իմաստութեամբ և գիտութեամբ. Եցոյց
մեզ զխորհուրդս կամաց իւրոց բան հաճութեան

---

[1]Յ-մանս պ-ւ-ս [2]Յ-յն, ի Քրիստոս Յիսուս

10 իւրում, զոր յաւուրսդ եդ [1]նովաւ, ի ժամանակս
սուրբ լրման ժամանակաց, բովանդակել զամե-
նայն գրիստոսիս, որ ինչ յերկինս և որ ինչ յերկ-
11 րի ի նմա, որով և վիճակեցաք յաւուրսդ հրա-
ւիրեալք՝ ըստ յաւուրսդ[2]ասացելոյն,
12 որ զամենայն յայղոյէ ըստ խորհրդոց կամաց իւ-
րոց. Լինել մեզ ի գովեստ փառաց նորա՝ յաւու-
13 րսդ յուսացելոցս ի գրիստոս. Որով և դուք
իբրեւ լուարուք զբանն ճշմարտութեան, զաւե-
տարանն փրկութեան ձերոյ, որով և հաւատա-
14 ցեալ կնքեցաք Հոգւովն Սրբով աւետեաց. Որ է
առհաւատչեայ ժառանգութեան մերոյ, ի փրկու-
թիւն [3]նուաճութեան, ի գովեստ փառաց նորա:
15 ԸԴ. վասն այնորիկ և ես իբրեւ լուայ զհա-
ւատսն ձեր որ ի Տէր Յիսուս, և զսէրն որ ընդ
16 ամենայն սուրբս, Ոչ դադարեմ ի դոհանալոյ վասն
ձեր՝ յիշել զձեզ յաղօթս. Զի Աստուած Տեառն
մերոյ Յիսուսի գրիստոսի, Հայրն փառաց, տացէ
ձեզ զՀոգին իմաստութեան և յայտնութեան գի-
18 տութեամբն իւրով. Լուսաւոր առնել զաչս [4]սրտից
ձեր ի գիտելոյ [5]մեզ զի՛նչ է յոյս կոչման նորա,
և զի՛նչ է մեծութիւն փառաց ժառանգութեան
19 նորա ի սուրբս, Եւ զի՛նչ է առաւելութիւն մե-
ծութեան զօրութեան նորա ի մեզ Հաւատացեալս՝
ըստ յաղթոզութեան կարողութեանն
20 իւրոյ, Զոր յաղթեաց ի գրիստոս, զի յարոյց զնա

---

[1]Ոմանք, յինքեան [2]Բազումք, նորա
[3]Ցն, սեպհականութեան, կամ՝ ստացուածոյ
[4]Բազումք, սրտից ձերոց [5]Ցն, ձեզ

ի մեռելոց, և նստոյց ընդ աջմէ իւրմէ յերկնա-
21 ւորս ի վերոյ ամենայն իշխանութեան և պետու-
թեան և զօրութեան և տէրութեան և ամենայն
անուան անուանելոյ, ոչ միայն յաշխարհիս յայս-
22 միկ, այլ և՝ ի հանդերձելումն. Եւ զամենայն ինչ
հնազանդ արար ի ներքոյ ոտից նորա, և զնա եդ
23 գլուխ ի վերոյ ամենայն եկեղեցւոյ, Որ է
մարմին նորա, լրումն՝ որ զամենայն յամենայնի լնու։

ԳԼ. Բ

1 Եւ դուք որ մեռեալն էիք ի մեղս ձեր և յան-
2 ցանս, Յորս երբեմն գնայիք ըստ [1]յաւիտենի աշ-
խարհիս այսորիկ, ըստ իշխանին իշխանութեան օ-
դոյս, այսոյ՝ որ այժմ ընդմուտեալ է յորդիսն
3 ապստամբութեան. Յորս և մեք ամենեքեան շրջեաք
երբեմն ի ցանկութիւնս մարմնոյ մերոյ, և առնէաք
զկամս մարմնոյ և զմտաց, և էաք [2]արդարեւ որդիք
բարկութեան իբրեւ այլքն։
4 ԸՋ. Այլ Աստուած որ մեծն է ողորմութեամբ,
վասն բազում սիրոյն իւրոյ զոր սիրեացն զմեզ,
5 Մինչդեռ մեռեալն էաք ի մեղս մեր, կենդանիս
արար զմեզ ի Քրիստոս. ([3]քանզի շնորհօք ապրե-
6 ցաք՝.) Ընդ նմին յարոյց, և ընդ նմին նստոյց
7 յերկնաւորս ի Քրիստոս Յիսուս։ Զի ցուցցէ ի յա-
ւիտեանան որ գալոցն են՝ զառաւել մեծութիւն
շնորհացն իւրոց քաղցրութեամբ ի մեզ ի Քրիստոս
8 Յիսուս։ Զի շնորհօք [4]նորա էք փրկեալք ի ձեռն

---

[1] Այսինքն, գնացից [2] Յոյն, ի բնէ [3] Յոյն, շնորհօք ապրեցարուք [4] Ի ձեռագիրս պակասէ

հաւատոցն. և այս ոչ ի ձէնջ, այլ Աստուծոյ
9 պարգեւ է. Ոչ ի գործոց, զի մի՛ ոք պարծեսցի:
10 Զի նորա արարած եմք՝ հաստատեալք Քրիստոսիւ
Յիսուսիւ ի գործս բարութեան, յորս յառաջագոյն
պատրաստեաց Աստուած, զի ի նոյնս գնասցուք:
11 Վասն որոյ և դուք յիշեցէք զի երբեմն հեթա-
նոսք էիք մարմնով, (որ կոչեցեալն են անթլփատու-
թիւն յանուանեալ թլփատութենէ անտի մարմ-
12 նաւոր ձեռագործին,) Զի էիք ի ժամանակին յայ-
միկ առանց Քրիստոսի, և օտարացեալք յառա-
քինութենէն Իսրայելի, և տարագիրք յուխտից
աւետեացն, և յոյս ինչ ոչ ունէիք և անաս-
13 տուածք էիք յաշխարհի: Իսկ այժմիկ ի ձեռն Յի-
սուսի Քրիստոսի դուք որ երբեմն հեռաւորքն էիք՝
14 մերձաւորք եղերուք արեամբն Քրիստոսի: Զի նա
է խաղաղութիւն մեր որ արար զերկոսեան մի, և
զմիջնորմն ցանկոյն քակեաց, զթշնամութիւն ի
15 մարմնի իւրում. Եւ զօրէնս պատուիրանացն հրա-
մանաւքն՝ խափանեաց. զի զերկոսին հաստատեսցէ
ինքեամբ ի մի նոր մարդ, և արասցէ խաղաղու-
16 թիւն. Եւ հաշտեցուսցէ զերկոսին միով մարմնով
ընդ Աստուծոյ խաչիւն իւրով. քանզի սպան զթշ-
17 նամութիւն յանձին իւրում: Եւ եկն աւետարա-
նեաց խաղաղութիւն ձեզ հեռաւորաց, և խաղա-
18 ղութիւն՝ մերձաւորաց. Զի նովաւ ունիմք զնա-
19 ճութիւն երկոքին միով Հոգւով առ Հայր. Ապա
այսուհետեւ ոչ էք օտարք և պանդուխտք, այլ
20 քաղաքակիցք սրբոց և բնտանիք Աստուծոյ, շի-
նեալք ի վերայ հիմանն առաքելոց և մարգարէից,
21 որոյ է գլուխ անկեանն Քրիստոս Յիսուս. Ցորում

ամենայն շինուածն յօդեալ և պատչաճեալ՝ աճէ
22 ի տաճար սուրբ Տերամբ, յորում և դուք ընդ
նմին շինիք ի բնակութիւն Աստուծոյ Հոգւով։

ՎԺ

ԳԼ. Գ

1 Վասն այսորիկ ես Պաւղոս, կապեալ Յիսուսի
2 Քրիստոսի վասն ձեր հեթանոսաց· թերեւս լուեալ
իցէ ձեր զտնտեսութիւն շնորհացն Աստուծոյ, որ
3 տուեալ են ինձ ի ձեզ, Զի ըստ յայտնութեան
ցուցաւ ինձ խորհուրդն, որպէս յառաջագոյն գրե-
4 ցի առ ձեզ սակաւուք· Առ ի կարող լինելոյ ըն-
թեռնուլ և ի միտ առնուլ գիմաստութիւնն գիմ
5 ի խորհրդեանն Քրիստոսի· Զի այլոց ազգաց ոչ
ցուցաւ որդւոց մարդկան, որպէս այժմ յայտնե-
ցաւ սրբոց իւրոց առաքելոց և մարգարէից Հոգ-
6 ւովն· Լինել հեթանոսաց ժառանգակից և մարմ
նակից, և հաղորդս աւետեացն ի Քրիստոս [1]Յի-
7 սուս աւետարանաւն, Որոյ եղէ ես սպասաւոր ըստ
պարգեւաց շնորհացն Աստուծոյ որ տուան ինձ ըստ
8 յաջողութեան զօրութեան նորա, (Ինձ՝ որ տրուպս
եմ ամենայն սրբոց, տուան շնորհքս այս,) ի հե-
թանոսս աւետարանել զանքնին մեծութիւնն Քրիս-
9 տոսի, Եւ լուսաւոր առնել զամենեսին, թէ զինչ
է տնտեսութիւն խորհրդոյն որ ծածկեալ էր յա-
մենայն յաւիտեանց առ Աստուծոյ որ զամենայն
10 ինչ արար[2]· Զի յայտնեսցի արդ իշխանութեանց
և պետութեանց որ յերկինս են՝ ի ձեռն եկեղեցւոյ

---

[1] Յունաց պատճէն

[2] Ոմանք յաւելուն, ի ձեռն Յիսուսի Քրիստոսի

11 բազմապատիկ իմաստութիւնն Աստուծոյ։ Ըստ յա-
ռաջադրութեան յաւիտեանից զոր արար ի Քրիս-
12 տոս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. Որով ունիմք
զհամարձակութիւն և զնուաճութիւն յուսով ի
13 հաւատոց նորա։ Վասն որոյ աղաչեմ, մի՛ ձանձրանալ ի նեղու-
թեանս [1]մերում որ վասն ձեր է, որ է փառք
14 [2]ձեր։ Վասն այսորիկ դնեմ ծունր առ Հայր Տեառն
15 մերոյ Յիսուսի Քրիստոսի, Ուստի ամենայն հա-
16 մապետութիւն յերկինս և յերկրի անուանի, Զի
տացէ ձեզ ըստ մեծութեան փառացն իւրոց, հա-
տուտել զօրութեամբ ի ձեռն Հոգւոյն իւրոյ ի
17 ներքինն մարդն. Բնակել Քրիստոսի հաւատովք ի
սիրտս ձեր, սիրով արմատացեալք և հաստա-
18 տեալք։ Զի կարող լինիջիք հասանել ընդ ամ-
նայն սուրբսն, զինչ է լայնութիւն և երկայնու-
19 թիւն և բարձրութիւն և խորութիւն. Ճանաչել
զառաւելութիւն գիտութեան սիրոյն Քրիստոսի,
20 զի լցջիք ամենայն լրութեամբն Աստուծոյ։ Ամե-
նայնմ որ կարող է առաւել քան զամենայն ինչ
առնել յաճախութեամբ քան զոր խնդրեմքն և ի-
մանամք, ըստ զօրութեանն որ յաշխատէլն է ի
21 մեզ, Նմա փառք յեկեղեցւոջն [3]և ի Քրիստոս Յի-
սուս յամենայն ազգս յաւիտենից յաւիտեանս։
Ամէն։

Գլ. Դ

1 **Ա**ՐԴ աղաչեմ զձեզ ես որ կապեալս եմ ի Տէր,

---

[1]Յայնն, իմում [2]Բազում, ձեր [3]ի բազում ցոյց

2 արժանի գնալ կոչմանն յոր կոչեցարուք, Ամե-
նայն խոնարհութեամբ և հեզութեամբ և եր-
3 կայնմտութեամբ անսալ միմեանց սիրով. փու-
թալ պահել զմիաբանութիւն Հոգւոյն յօդիւ խա-
4 ղաղութեան: Մի մարմին և մի Հոգի, որպէս և
5 կոչեցարուք ի մի յոյս կոչմանն ձերոյ. Մի է Տէր,
6 մի հաւատք, մի մկրտութիւն. Մի Աստուած և
Հայր ամենեցուն, որ ի վերայ ամենայնի և ընդ ա-
7 մենեսին և յամենեսին [1]ի մեզ: Ասէ իւրաքանչիւր
ումեք ի մէնջ տուեալ են շնորհք ըստ չափոյ պար-
8 գեւացն Քրիստոսի: Վասն որոյ և ասէ, Ել ի
բարձունս, գերեաց զգերութիւն և ետ պարգեւս
9 մարդկան: Որ ելն զի՞նչ է, եթէ ոչ զի էջ նախ
10 ի ստորին կողմն երկրի: Որ էջն նոյն է և որ ելն ի
վերոյ քան զամենայն երկինս, զի լցցէ զամենայն:
11 Եւ նա ետ զոմանս առաքեալս, զոմանս մարգա-
րէս, զոմանս աւետարանիչս, զոմանս հովիւս և
12 վարդապետս. Ի հաստատութիւն սրբոց, ի գործ
13 պաշտամանն, ի շինուած մարմնոյն Քրիստոսի. Մին-
չեւ հասցուք ամենեքեան ի մի միաբանութիւն
հաւատոց և գիտութեան Որդւոյն Աստուծոյ, յայր
կատարեալ ի չափ հասակի կատարմանն Քրիստո-
14 սի: Զի մի՛ յայսմհետե լիցեմք տղայք խառնեալք
և տատանեալք յամենայն հողմոց վարդապետու-
թեան խաբէութեամբ մարդկան, խորամանկու-
15 թեամբ ի խաբէութիւն մոլորութեան. Այլ ճշմար-
տեալք սիրով՝ աճեցուսցուք ի նա զամենայն, որ
է գլուխ, Քրիստոս. Ուստի ամենայն մարմինն

---

[1]ի Բազմա պիւռե. յամենս՝ ի ձեզ

յօդեալ և պատշաճեալ ամենայն խաղալեօք տա-
րաբերութեան, ըստ ազդեցութեան չափով ըստ
իւրաքանչիւր մասին զաճուձն մարմնոյ գործէ ի
շինած անձին իւրոյ սիրով։
17 Արդ զայս ասեմ և ուխտեմ ի Տէր, մի՛ եւս
ձեզ զնոյն օրինակ գնալ որպէս և այլ հեթանոսք
18 գնան ունայնութեամբ մտաց իւրեանց. Որոց խա-
ւարեալ են սիրտք իւրեանց, և օտարացեալ են
ի կենաց անտի Աստուծոյ վասն տգիտութեանն
որ է ի նոսա, վասն կուրութեան սրտից իւրեանց.
19 Որք [1]զանձանց իւրեանց զյոյսն հատին, և՛ մատ-
նեցին զանձինս գիջութեան, ի գործս ամենայն
20 պղծութեան ագահութեամբ։ Այլ դուք ոչ այս-
21 պէս ուսարուք զՔրիստոս, Թէպէտ և լուարուք
զնմանէ և նովաւ ուսայք, որպէս է ճշմարտու-
22 թիւնն Յիսուսի. Ի բաց մերկանալ ի ձէնջ ըստ
առաջին գնացից զմարդն հին, զապականեալն
23 ցանկութեամբք խաբէութեանն. Եւ նորոգել հոգ-
24 ւովն մտաց ձերոց, Եւ զգենուլ զնոր մարդն որ
ըստ Աստուծոյն հաստատեալ է արդարութեամբ
25 և սրբութեամբ ճշմարտութեանն։ Վասն որոյ ի
բաց ընկեցէք զստութիւն, խօսեցարուք զճշմար-
տութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում, զի
26 եմք միմեանց անդամք։ Բարկանայք, և մի՛ մե-
ղանչէք. արեգակն ի վերայ բարկութեան ձերոյ
27 մի՛ մտցէ։ Եւ մի՛ տայք տեղի Սատանայի։ (28)Ո
գողանայրն՝ մի՛ եւս գողասցի, այլ մանաւանդ
վաստակեսցէ գործել ձեռօք իւրովք զբարիս. զի

---

[1] Ց-ն՝ն, անզգայեալք

29 բաւական իցէ տալ ումեմ պիտոյ իցէ : Ամենայն
բան տգեղ ի բերանոյ ձերմէ մի՛ ելցէ , այլ որ ինչ
բարին է ի շինած պիտոյից , զի տացէ շնորհս այ-
30 նոցիկ որ լսենն : Եւ մի՛ տրտմեցուցանէք զՀոգին
Սուրբ Աստուծոյ , որով կնքեցարուք ¹յաւուրն
31 փրկութեան : Ամենայն դառնութիւն և բարկու-
թիւն և սրտմտութիւն և աղաղակ և հայհոյու-
թիւն բարձցի ի ձէնջ ամենայն չարութեամբն հան-
32 դերձ : Լերուք ընդ միմեանս քաղցունք , գթածք ,
շնորհել միմեանց , որպէս և Աստուած Քրիստո-
սիւ շնորհեաց մեզ :

ԳԼ· Ե

1 Եղերուք նմանողք Աստուծոյ իբրեւ որդիք սիրե-
2 լիք · Եւ գնացէք սիրով , որպէս և Քրիստոս սիր-
եաց զմեզ , և մատնեաց զանձն իւր վասն մեր պա-
տարագ և զենումն Աստուծոյ ի հոտ անուշից :
3 Այլ պոռնկութիւն և ամենայն պղծութիւն կամ
ագահութիւն և անուանեսցի մի՛ ի միջի ձերում ,
4 որպէս և վայելէ սրբոց , Եւ զազրութիւն կամ
խօսք յիմարութեան կամ խեղկատակութիւն որ
5 ոչ վայելէ , այլ մանաւանդ գոհութիւն : Զայս
տեղեկացեալ գիտասջիք թէ ամենայն պոռնիկ
կամ պիղծ կամ ագահ որ է կռապարիշտ՝ ոչ ու-
նի ժառանգութիւն յարքայութեանն Քրիստոսի
6 և Աստուծոյ : Մի՛ ոք զձեզ խաբեսցէ բանիւք
անուսուվք , զի վասն այսորիկ իսկ գայ բարկու-
թիւն Աստուծոյ ի վերայ որդւոցն անհաւանու-

---

¹ Ց-ՅՆ , յօրն

7 թևան։ Ա՛ք այսուհետեւ լինիք բաժանորդք նո-
8 ցա։ Չի թէպէտ և երբեմն էիք խաւար, արդ լոյս
9 էք ի Տէր. իբրեւ զորդիս լուսոյ գնացէք. Չի պտուղ
[1]լուսոյ ամենայն բարութեամբ է և արդարու-
10 թեամբ և ճշմարտութեամբ։ փորձեցէք զինչ է
11 հաճոյ Տեառն. Եւ մի՛ կցորդ լինիք անպտղու-
թեան գործոցն խաւարի, այլ մանաւանդ յանդի-
12 մանեցէք։ Չի որ ի ծածուկ ինչ գործի ի նոսա՝
13 գայն և խօսել աղտեղի է։ Այլ ամենայն ինչ
յանդիմանեալ՝ ի լուսոյ յայտնի լինի. զի ամենայն
14 ինչ որ յայտնի է՝ լոյս է. վասն որոյ և ասէ, Արի
որ ննջեաս, և կանգնեաց ի մեռելոց, և լուսաւոր
լեսցի քեզ Քրիստոս։
15 Ք Կ. Տեսէք ո՛րպէս ճշմարտիւ գնայցէք. մի՛
16 իբրեւ անիմաստք, Այլ իբրեւ իմաստունք. գնե-
ցէք զժամանակս, զի աւուրքս չարութեան են։
17 Վասն այնորիկ մի՛ լինիք անմիտք, այլ իմացո-
18 րուք զինչ են կամք Տեառն։ Եւ մի՛ արբենայք
գինւով յորում զեղխութիւն է, այլ մանաւանդ
19 լցարուք Հոգւով. խօսել [2]ի սիրտս ձեր՝ սաղմոսիք
և օրհնութեամբք և երգովք հոգեւորօք, երգել
20 և սաղմոս ասել ի սիրտս ձեր Տեառն։ Գոհացա-
րուք յամենայն ժամ ի վերայ ամենայնի յանուն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի [3]Հօրն և Աստուծոյ՝։
21 Հնազանդ լերուք միմեանց երկիւղիւն [4]Քրիստոսի։
22 Կանայք իւրեանց արանց հնազանդ լինիլն իբրեւ
23 Տեառն. Չի այր է գլուխ կնոջ, որպէս և Քրիստոս

---

[1]Ոմանք, Հոգւոյն [2]Կամ, ընդ միմեանս
[3]Յոմանս, զԱստուծոյ և զՀօրէ [4]Ոմանք, Աստուծոյ

գլուխ է եկեղեցւոյ, և ինքն է փրկիչ մարմնոյ։
24 Այլ որպէս եկեղեցին հնազանդ լինի Քրիստոսի,
նոյնպէս և կանայք՝ իւրեանց արանց յամենայնի։
25 Արք, սիրեցէք զկանայս ձեր, որպէս և Քրիստոս
սիրեաց զեկեղեցի, և զանձն իւր մատնեաց վասն
26 նորա. Զի զնա սրբեացէ սրբութեամբ [1]աւազանին՝
27 բանիւ. Զի կացուսցէ ինքն իւր յանդիման փա-
ռաւոր զեկեղեցի, զի մի՛ ունիցի ինչ արատ կամ
[2]աղտեղութիւն կամ այլ ինչ յայսպիսեաց, այլ
28 զի իցէ սուրբ և անարատ։ Նոյնպէս պարտին արք
սիրել զիւրեանց կանայս իբրեւ զիւրեանց մար-
29 մինս. որ սիրէ զկին իւր՝ զանձն իւր սիրէ։ Զի ոչ
ոք երբեք ատեաց զանձն իւր, այլ սնուցանէ և
30 դարմանէ զնա, որպէս և [3]Քրիստոս զեկեղեցի. Զի
անդամք եմք մարմնոյ նորա, ի մարմնոյ նորա և
31 յոսկերաց նորա։ Վասն այսորիկ թողցէ այր զհայր
և զմայր իւր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և
32 եղիցին երկոքին ի մարմին մի։ Խորհուրդս այս մեծ
33 է, բայց ես ասեմ ի Քրիստոս և յեկեղեցի։ Այլ
և դուք [4]նոյնպէս մի ըստ միոջէ, զի՝ իւրաքան-
չիւր ոք զիւր կին այնպէս սիրեսցէ իբրեւ զիւր
անձն, և կին երկնչիցի յառնէ իւրմէ։

ԳԼ. Ջ

1 ԹԴ. Որդիք, հնազանդ լերուք ծնողաց ձերոց ի
2 Տէր, զի այն է արժանն։ Պատուեա զհայր քո և
3 զմայր, որ է առաջին պատուիրան յաւետիան, Զի

---

[1]Յ-ին, աւազանին ջրոյ [2]Ի-մ, խորշ
[3]Որմն+, Տէր [4]Ի Յ-ին պակաս

քեզ բարի եղիցի, և երկայնակեաց լինիցիս ի վե-
4 րայ երկրի: Հարք, մի՛ զայրացուցանէք զորդիս
ձեր, այլ անուցանիջիք զնոսա խրատու և ուսմամբ
5 Տեառն: Ծառայք, հնազանդ լերուք տերանց ձերոց
մարմնաւորաց ահիւ և դողութեամբ և միամտու-
6 թեամբ սրտից ձերոց՝ որպէս և Քրիստոսի: Մի՛ ա-
կանէ ծառայել իբրեւ մարդահաճոյք, այլ իբրեւ
7 ծառայք Քրիստոսի առնել զկամս Աստուծոյ: Սրտի
մտօք ծառայել իբրեւ Տեառն, և մի՛ իբրեւ մարդ-
8 կան: Գիտասջիք թէ իւրաքանչիւր ոք որ զինչ առնէ
զբարին, զնոյն ընդունի և ի Տեառնէ, եթէ՛ ծա-
9 ռայ, և եթէ՛ ազատ: Եւ դուք, տեարք, զնոյն
առնիջիք առ նոսա, ներելով առնել զպատուհասն,
գիտասջիք թէ և՛ նոցա և՛ ձեր Տէր գոյ յերկինս,
և ակնառութիւն ոչ գոյ առաջի նորա:
10 [1]Ա՛յսուհետեւ զօրացարուք Տերամբ և կարողու-
11 թեամբ զօրութեան նորա: Եւ զգեցարուք զսպա-
ռազինութիւնն Աստուծոյ, զի կարող լինիջիք կալ
12 ընդդէմ հնարից Սատանայի: Զի ոչ է մեզ պա-
տերազմ ընդ մարմնոյ և ընդ արեան, այլ ընդ իշ-
խանութիւնս և ընդ պետութիւնս և ընդ աշխար-
հակալս խաւարիս այսորիկ, ընդ ոգիս չարութեան
որ ի ներքոյ երկնից:
13 ԹՋ· Վասն այսորիկ առէք զսպառազինութիւնն
Աստուծոյ, զի կարող լինիջիք ի դիմի հարկանել
14 [2]չարին յաւուրն չարութեան: Եւ իբրեւ զամենայն
ինչ կատարիցէք, հաստատուն կացէք, զտեղի

---

[1] Ոմանք, Ա՛յսուհետեւ, եղբարք իմ,

[2] Ի Յոհ. պակասէ

կալջիք, պնդեալ զմէջս ձեր ճշմարտութեամբ, և
15 զգեցեալ զպրահան արդարութեան, Եւ ապուցեալ
զոտս պատրաստութեամբ աւետարանին խաղա-
16 ղութեան։ Եւ ի վերայ ամենայնի առէք զվահանն
հաւատոց, որով կարող լինիջիք զամենայն նետս
17 մուխս չարին շիջուցանել։ Եւ առէք զսաղաւարտն
փրկութեան և զսուսեր Հոգւոյն, որ է բանն Ա-
18 տուծոյ. Ամենայն աղօթիւք և խնդրուածովք ա-
ղօթս առնել յամենայն ժամանակի Հոգւով, և ի
նոյն տքնեալջիք ամենայն ժուժկալութեամբ և
19 խնդրուածովք վասն ամենայն սրբոց. Եւ վասն իմ,
զի ինձ տացի բան ի բանալ բերանոյ իմոյ համար-
ձակութեամբ յայտնել զխորհուրդ աւետարա-
20 նին. Վասն որոյ պատգամաւորիմ կապանօքս, զի
նովին համարձակեցայց որպէս և պարտ իցէ ինձ
խօսել։

21 Բայց զի գիտիցէք և դուք զինչն զինչ գործի-
ցեմ, զամենայն ինչ ցուցցէ ձեզ Տիւքիկոս սի-
րելի եղբայր և հաւատարիմ պաշտօնեայ ի Տէր.
22 Զոր առաքեցի առ ձեզ դմին իրի, զի գիտասջիք
23 դուք զմէնջ, և մխիթարեսցէ զսիրտս ձեր։ Խաղա-
ղութիւն ընդ եղբարս, և սէր հաւատովքն հան-
դերձ յԱստուծոյ ի Հօրէ և ի Տեառնէ Յիսուսէ
24 Քրիստոսէ։ Շնորհք ընդ ամենեսին որք սիրեն զՏէր
մեր Յիսուս Քրիստոս անեղծութեամբ։[1]

Ա՟ ԵՓԵՍՈՑ ԳՐԵՑ՟ Ի ՀՌՄԷ Ի ՅԵՐ ՏԻՔԻԿՈՍԷ։

---

[1]Ոմանք ի ցոյն և ի հայ ձեռագրաց յաւելուն, Ամէն։

Ա՛Ր ՓԻԼԻՊԵՑԻՍ

ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա

1 ԺԿ· ՊԱՒՂՈՍ և Տիմոթէոս, ծառայք Յիսուսի
Քրիստոսի, ամենայն որքունց ի Քրիստոս Յիսուս, որ
են ի կողմանս Փիլիպեցւոց, եպիսկոպոսակցօք և
2 սարկաւագօք. Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն
յԱստուծոյ Հօրէ մերմէ և ի Տեառնէ Յիսուսէ
Քրիստոսէ։
3 Գոհանամ զԱստուծոյ իմոյ ի վերայ ամենայն
4 յիշատակաց ձերոց, Յամենայն ժամ յամենայն
խնդրուածս իմ վասն ձեր ամենեցուն առնել ա-
5 ղօթս խնդութեամբ, վասն հաղորդութեան ձերոյ
ընդ աւետարանին յօրէ յառաջնմէ մինչեւ ցայժմ.
6 վստահ եմ յայդ թէ որ սկսաւն ի ձեզ գործս
բարեաց՝ կատարեսցէ մինչեւ յօրն Յիսուսի Քրիս-
7 տոսի. Որպէս իրաւ իսկ թուի ինձ խորհել զայս
վասն ձեր ամենեցուն, վասն ունելոյ [1]ինձ զձեզ՝ ի
սրտի ի կապանս իմում, և ի պատասխանատուու-
թեան իմում և ի հաստատութեան աւետարանին,
կցորդս ինձ շնորհացդ զձեզ ամենեսեան լինել։
8 [2]Վկայ է ինձ Աստուած, որպէս անձկացեալ եմ

---

[1] Կ՛ոմ, ձեզ պիս [2] Յ՛ոնն, Զի վկայ

առ ձեզ ամենեսին զթովքն Քրիստոսի Յիսուսի։
9 Եւ զայն աղօթս առնեմ, զի սէրն ձեր եւս քան զեւս առաւել լիցի ի գիտութեան և յամենայն
10 իմաստութեան, Ընտրել ձեզ զլաւն՝ զի իցէք [1]հաստատունք և առանց գայթակղութեան յօրն
11 Քրիստոսի. Լցեալ պտղովք արդարութեան ի ձեռն Յիսուսի Քրիստոսի ի փառս և ի գովեստ Աստուծոյ։
12 ԺԴ. Կամիմ թէ գիտիցէք, եղբարք, զի որ ինչ վասն իմ էր, եւս քան զեւս ի յառաջադիմու-
13 թիւն աւետարանին եկն. Մինչեւ կապանաց իմոց յայտնի լինել ի Քրիստոս յամենայն հրապարակիս
14 և առ այլս ամենեսեան. Եւ առ բազում եղբարս ի Տէր, որ վստահ են կապանօքս իմովք առաւել եւս համարձակել առանց երկիւղի զբանն Աստու-
15 ծոյ խօսել։ Ոմանք առ նախանձու և հակառակութեան, և ոմանք մտադիւրութեամբ իսկ զՔրիս-
16 տոս քարոզեն. Եւ ոմանք ի սիրոյ, քանզի գիտեն եթէ ի պատասխանատուութիւն աւետարանին
17 կամ. Եւ ոմանք առ հեաութեան զՔրիստոս պատմեն, այլ ոչ սրբութեամբ. քանզի համարին նեղութիւնս յարուցանել ի վերայ կապանաց իմոց։
18 Բայց այս զի՞նչ է. որով օրինակաւ և իցէ, եթէ՛ պատճառանօք և եթէ՛ ճշմարտութեամբ, Քրիս-
տոս պատմի, և ընդ այս խնդամ, այլ և ուրախ
19 եւս եղէց։ Զի գիտեմ եթէ այս պահի ինձ ի փրկութիւն ի ձերոց խնդրուածոց և ի պարգեւաց
20 Հոգւոյն Յիսուսի Քրիստոսի, Ըստ ակնկալութեան

---

[1] Յն. առանց կեղծաւորութեան

և յուսոյն իմոյ, զի մի՛ իւիք յամօթ եղէց, այլ
ամենայն համարձակութեամբ, որպէս յամենայն
ժամ և այժմ, մեծասցի Քրիստոս ի մարմնի ի.
21 մեռ՛, եթէ՛ կենօք և եթէ՛ մահու։ Զի ինձ կեանք
22 Քրիստոս է, և մեռանել՝ շահ։ Ապա եթէ կեանք
մարմնոյ այս ինձ պտուղ գործոյ է, և զի՛նչ ընտ.
23 րեցից՝ զայն ոչ գիտեմ։ Նեղեալ եմ յերկոցունց,
զցանկալն ելանել և ընդ Քրիստոսի լինել առա.
24 ւել լաւ համարիմ. Եւ կալ ինալ աստէն ի մարմ.
25 նի՝ կարեւոր եւս վասն ձեր։ Եւ զայս յուսացեալ
գիտեմ, եթէ կացից և ինացից ամենեցուն ձեզ,
26 ի ձեր զարգանալ և խրախճ լինել ի հաւատս. Զի
պարծանք ձեր առաւել լիցին ի Քրիստոս Յի.
սուս ինեւ ի միւսանգամ գալստեան իմում առ
ձեզ։ Վ.Ջ
27 Միայն թէ արժանի [1]աւետարանին գնայցէք, զի
եթէ՛ գայցեմ և տեսանիցեմ զձեզ, և եթէ՛ հեռի
իցեմ և լսիցեմ զձէնջ զի հաստատուն կայցէք ի
մի հոգի, և միով շնչով նահատակիցիք ի հա.
28 ւատս աւետարանին. Եւ մի՛ զանգիտիցէք և մի՛
իւիք ի հակառակորդաց անտի, որ է նոցա հան.
29 դէս կորստեան, և ձերոյ փրկութեան։ Եւ այդ
յԱստուծոյ է, որ ձեզ շնորհեցաւ վասն Քրիստո.
սի, ոչ միայն ի նա հաւատալ, այլ և վասն նորա
30 չարչարել։ Զնոյն պատերազմ ունել՝ զոր լիսն տե.
սէք և այժմ լսէք [2]յինէն։

---

[1] Բազմ., աւետարանին Քրիստոսի

[2] Ի ցաւելն՝ յոմանս, լիս, յոմանս՝ պակաս

ԳԼ. Բ

1 Արդ եթէ մխիթարութիւն ինչ իցէ ի Քրիստոս,
եթէ սփոփութիւն սիրոյ, եթէ հաղորդութիւն
2 Հոգւոյ, եթէ գթութիւն և ողորմութիւն, Լ̈ցէք
զխնդութիւնս իմ, զնոյն խորհիլք, զնոյն սէր
յանձին ունիլք, համաշունչք, միախորհուրդք.
3 Մի՛ ինչ ըստ գրգռութեան, և մի՛ ինչ ըստ անա-
պարծութեան, այլ խոնարհութեամբ զմիմեանս
4 լաւ համարել առաւել քան զանձինս. Մի՛ զան-
ձանց եւեթ դիտել, այլ իւրաքանչիւր ոք զընկե-
5 րին: Զայն խորհեսցի իւրաքանչիւր ոք ի ձէնջ որ
6 և ի Քրիստոս Յիսուս. Որ ի կերպարանս Աստու-
ծոյ էր, ոչինչ յափշտակութիւն համարեցաւ զիւ-
7 նքն հաւասար Աստուծոյ. Այլ զանձն ունայնա-
ցոյց՝ կերպարանս ծառայի առեալ, ի նմանութիւն
մարդկան եղեալ, և կերպարանօք գտեալ իբրեւ
8 զմարդ, խոնարհեցոյց զանձն, լինել հնազանդ մա-
9 հու չափ և մահու խաչի: Վասն որոյ և Աստուած
զնա առաւել բարձրացոյց, և շնորհեաց նմա ա-
10 նուն որ ի վեր է քան զամենայն անուն. Զի յա-
նուն Յիսուսի [1]Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի, երկնաւորաց և երկրաւորաց և անդաբամե-
11 տականաց, և ամենայն լեզու խոստովան լինի թէ
Տէր է Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր:
2 ԺԶ. Ա̈յսուհետեւ, սիրելիք իմ, որպէս յամե-
նայնի հնազանդեցարուք, մի՛ միայն ի գալստեան
իմում, այլ առաւել եւս այժմ յորժամ հեռիս

[1] Ի Քրիստոս պակաս

եմ ի ձէնջ, ահիւ և դողութեամբ զանձանց փրկու.
13 թիւն գործեցէք։ Զի Աստուած է որ յայղէ ի
ձեզ զկամելն և զառնելն վասն հաճութեան։
14 Զամենայն ինչ գործեցէք առանց տրտնջելոյ և
15 քրթմնջելոյ. Զի եղիջիք ամբիծք և անարատք, որ.
դիք Աստուծոյ, անաղէք ի մէջ կամակոր և խե.
զաթեւր ազգին, յորոց միջի երեւիցիք իբրեւ լու.
16 սաւորք յաշխարհի, Զբանն կենաց ունել յանձին
ի պարծանս ինձ յաւուրն Քրիստոսի, զի ոչ ընդ.
դունայն ինչ ընթացայ և ոչ ընդունայն վաստա.
17 կեցի։ Այլ թէպէտ և նուիրիմ ի վերայ պատա.
րագի և պաշտաման հաւատոցն ձերոց, խնդամ և
18 ուրախակից եմ ամենեցուն ձեր։ Նոյնպէս և դուք
խնդացէք և ուրախակից եղերուք ինձ։
19 Բայց յուսամ ի Տէր Յիսուս զՏիմոթէոս վաղ.
վաղակի արձակել առ ձեզ, զի և ինձ սրտի դիւր
20 լինիցի, յորժամ գիտիցեմ ինչ զձէնջ։ Զի ոչ զոք
ունիմ հաւասարունչ, եթէ ընատանեբար հոգայցէ
21 վասն ձեր։ Զի ամենեքեան զանձանց խնդրեն, և ոչ
22 զՅիսուսի Քրիստոսի։ Բայց զփորձ նորա գիտէք և
դուք, զի իբրեւ որդի հօր ծառայեաց ընդ իս յաւե.
23 տարանին։ Զդմ զսա ակն ունիմ արձակել՝ որպէս
24 նոյնհետայն զանձնէ առուգեցից։ Այլ յուսացեալ
եմ ի Տէր թէ և ես իսկ ընդ հուպ եկից։ Բայց լաւ
25 համարեցայ զԷպափրոդիտոս զեղբայր և գործակից
և զինուորակից իմ, զձեր առաքեալ և պաշտօնեայ
26 իմոց պիտոյից՝ առաքել առ ձեզ։ Քանզի և ինքն իսկ
յոյժ [1]անձկացեալ է տեսանել զամենեսեան զձեզ՝

---

[1]Բազմ., անձկացեալ է ամենեցուն ձեզ

27 և հոգայը, զի ձեր լուեալ էր թէ խօթացաւ։ Եւ
արդարեւ խօթացաւ մերձ ի մահ, այլ Աստուած
ողորմեցաւ նմա. ոչ նմա միայն՝ այլ և ինձ, զի մի'
28 տրտմութիւն ի վերայ տրտմութեան կրիցեմ։ Արդ
փութապէս յղեցի զնա, զի տեսեալ զնա միւսան-
գամ ուրախ լինիցիք, և ես առանց տրտմութեան
29 եղէց։ Ընկալջիք զնա ի Տէր ամենայն խնդութեամբ,
30 և զայնպիսիսն առ պատուականս ունիջիք. Զի վասն
գործոյ Տեառն մինչեւ ի մահ մերձեցաւ, գուն
գործեալ ոգւովք չափ, զի լցցէ զձեր պակասու-
թիւն իմոյ սպասաւորութեան։ ՎՋ

ԳԼ. Գ

1 Ա յսուհետեւ, եղբարք իմ, ուրախ լերուք ի Տէր.
զնոյն գրել առ ձեզ ինձ ոչ դանդաղելի է, և
2 ձեզ կարի զգուշալի։ Զգոյշ եղերուք ի շանց
անտի, զգոյշ եղերուք ի չար մշակաց անտի,
3 զգոյշ եղերուք ի կրճատութենէ անտի։ Զի թլփա-
տութիւնն մեք եմք, որ [1]Հոգւովն Աստուծոյ՝
պաշտեմք, և պարծիմք ի Քրիստոս Յիսուս, և
4 ոչ ի մարմին պանծացեալ եմք։ Թէպէտ և ես
իսկ զնոյն վստահութիւն ունիմ և ի մարմնի.
եթէ [2]ոք համարիցի այլազգ վստահ՝ լինել ի մար-
5 մին, առաւել եւս ես. Թլփատութեամբ ութ-
օրեայ, յազգէ Իսրայելի, ի ցեղէ Բենիամինի, Ե-
բրայեցի Հեբրայեցւոյ, ըստ օրինացն փարիսեցի.
6 Ըստ նախանձայոյզն լինելոյ՝ հալածէի զեկեղեցին.

---

[1]Ոմանք, Հոգւով զԱստուած

[2]Բազումք, այլ ոք համարիցի վստահ

բան արդարութեան օրինացն լինել անարատ։
7 Ա՛յլ որ ինչ ինձ շահն էր՝ զայն ինձս համարիմ
8 վասն Քրիստոսի։ Ա՛յլ և համարիմ իսկ զամենայն
ինս վասն առաւել դիտութեանն Յիսուսի Քրիս-
տոսի Տեառն մերոյ. վասն որոյ զամենայնէ զրկե-
ցայ, և համարիմ կղկղանս, զի զՔրիստոս շահե-
9 ցայց, եւ գտայց ի նմա. իբրեւ ոչ եթէ զիմ ինչ
արդարութիւն որ յօրինաց անտի է՝ ունիցիմ, այլ
[1]զհաւատացն Քրիստոսի, որ յԱստուծոյ արդա-
10 րութիւնն է՝ հաւատովք. ճանաչել զնա և զզո-
րութիւն յարութեան նորա և զհաղորդութիւն
չարչարանաց նորա, կերպարանակից լինել մահու
11 նորա. թէ որպէս հասից ի մեռելոցն յարութիւն։
12 Իբր ոչ եթէ արդէն առեալ իցեմ, կամ արդէն
կատարեալ իցեմ. զհետ մնեալ եմ թէ հասից,
[2]մանաւանդ թէ ըմբռնեալ իսկ իցեմ՝ ի Քրիստո-
13 սէ Յիսուսէ։ Եղբարք, ես ոչ համարիմ զանձն
իմ թէ հասեալ իցեմ. բայց մի ինչ է՝ զի զառ
յետոյն մոռացեալ է, և ի յառաջադէմն ձգըր-
14 տեալ եմ. Ուշ եդեալ ընթանամ ի կէտ [3]կո-
15 մանն Աստուծոյ ի Քրիստոս Յիսուս։ Ա՛յսուհանեւ
որ միանգամ կատարեալքդ էք՝ զայս խորհեց-
րուք, և եթէ այլազգ ինչ խորհիցիք, սակայն և
16 զայն Աստուած ձեզ յայտնեսցէ։ Բայց յոր ժա-
մանեցաքս, զոյն խորհել և ամին կանոնի միաբան
17 լինել։ Նմանողք ինձ եղիջիք, եղբարք, և գիտաս-

---

[1] Կա՛մ, զարդարութիւն հաւատովքն Քրիստոսի որ յԱստուծոյ է [2] Յ-ոյնն, որոյ վասն ըմբռնեալ եմ
[3] Յ-ոյնն, վերին կոչմանն

ջիք զայնպիսիսն որ այնպէսն գնայցեն, որպէս ու-
18 նիքդ զմեզ [1]ձեզ օրինակ։ Ձի բազումք գնան,
զորոց բազում անգամ ասէի ձեզ, բայց արդ և
լալով իսկ ասեմ, զթշնամեաց խաչին Քրիստոսի։
19 Որոց կատարածն կորուստ է, որոց աստուած որո-
վայնն [1]իւրեանց է, և փառք՝ ամօթն իւրեանց,
20 որք զերկրաւորս եւեթ խորհին։ Ա՛յլ մեր առա-
քինութիւն յերկինս է, ուստի և փրկչին ակն ու-
21 նիմք, Տեառն Յիսուսի Քրիստոսի. Որ նորոգեսցէ
զմարմին խոնարհութեան մերոյ՝ կերպարանակից
լինել մարմնոյ փառացն իւրոց, ըստ զօրութեանն
առ ի կարող լինելոյ հնազանդեցուցանել ընդ ի-
րեւ զամենայն։

ԳԼ. Դ

1 Ա՛յսուհետեւ, եղբարք իմ սիրելիք և անձկա-
լիք, ուրախութիւն իմ և պսակ, այսպէս հաստա-
տուն կացէք ի Տէր, սիրելիք։
2 Զեւոդիա աղաչեմ և զՍինտիք աղաչեմ, զնոյն
3 խորհել ի Տէր։ Ա՛յո, աղաչեմ և զքեզ, մտերիմ
իմ և լծակից, և դու օգնական լինիջիր նոցա որք
յաւետարանին նահատակեցան ընդ իս Կղեմա-
հանդերձ և այլովք գործակցօք իմովք, որոց ա-
4 նուանքն ի դպրութեան կենաց։ Ուրախ լերուք ի
Տէր յամենայն ժամ. դարձեալ ասեմ, Ուրախ լե-
5 րուք։ Հեզութիւն ձեր յայտնի լիցի ամենայն
6 մարդկան. Տէր մերձ է։ Մի՛ ինչ հոգայք, այլ
[2]ամենայն աղօթիւք և խնդրուածովք, գոհու-

---

[1] Ի ցոնէն պահոք [2] Ցամենայնի, յամենայնի

թեամբ խնդրուածք ձեր յայտնի լիցին առ Ա-
7 ստուած։ Եւ խաղաղութիւնն Աստուծոյ որ ի վեր
է քան զամենայն միտս՝ պահեսցէ զսիրտս ձեր և
զմիտս ի Քրիստոս Յիսուս։
8 Ակ. Այսուհետեւ, եղբարք, որ ինչ ճշմարտու-
թեամբ է, որ ինչ պարկեշտութեամբ, որ ինչ
արդարութեամբ, որ ինչ սրբութեամբ, որ ինչ
սիրով, որ ինչ համբաւ բարեաց, որ ինչ քաջու-
թեամբ, որ ինչ գովութեամբ՝ զայն խորհիջիք։
9 Զոր ուսարուք և ընկալարուք և լուայք և տե-
սէք յիս՝ զայն արարէք. և Աստուած խաղաղու-
դութեան եղիցի ընդ ձեզ։
10 Ուրախ եղէ ես ի Տէր յոյժ, զի և դուք զմտա-
ածէք հոգալ ինչ վասն իմ, որպէս և հոգայիքն,
11 բայց [1]բարբարէիք իմիջ"։ Ոչ առ կարօտու-
թեան ինչ ասեմ, զի ես ուսայ որովք կարեմ բա-
12 ւական լինել։ Գիտեմ նուազել, գիտեմ առաւե-
լուլ. յամենայնի ամենեւին խելամուտ եմ և՛
յագել և՛ քաղցեննալ, և՛ առաւելուլ և՛ նուա-
13 զել։ Յամենայնի կարօղ եմ [2]այնու որ զօրացոյն
14 զիս։ Բայց բարւոք արարէք զի կցորդ եղերուք
15 ինձ ի նեղութեանս։ Գիտէք և դուք, փիլիպեցիք,
զի ի սկզբան աւետարանին իբրեւ ելի ես ի Մա-
կեդոնիայ, և ոչ մի եկեղեցի հաղորդեաց ինձ յա-
16 ղագս տալոյ և առնլոյ, բայց միայն դուք. Զի և
ի Թեսաղոնիկ միանգամ և երկիցս զպէտս իմ ե-
17 տուք բերել։ Իբր ոչ եթէ խնդրեմ զտուրսն, այլ
18 խնդրեմ զպտուղն որ յաճախէ ի բան ձեր։ Ալ

---

[1] Այլ՝ բարբարէիք, չէր մարթի [2] Որ՝ առ, Քրիստոսիւ

իմ առեալ զամենայն և առաւելեալ եմ. ընկալայ և լի եմ ի ձեռն Եպափրոդիտեայ, որ է ի
19 ձէնջ հոտ անուշից, պատարագ ընդունելի՝ հաճոյ Աստուծոյ: Եւ Աստուած իմ լի արասցէ զամե-
նայն պէտս ձեր ըստ իւրում մեծութեանն փա-
20 ռաք ի Քրիստոս Յիսուս: Այլ Աստուծոյ և Հօր մերում փառք յաւիտեանս յաւիտենից: Ամէն:
21 Ողջոյն տայջիք ամենայն սրբոց ի Քրիստոս Յի-
22 սուս: Ողջոյն տան ձեզ որ ընդ իս են եղբարք:
23 Ողջոյն տան ձեզ ամենայն սուրբք, մանաւանդ
24 որ ի տանէ կայսեր են: Շնորհք Տեառն Յիսուսի Քրիստոսի [1]ընդ ոգւոյդ ձերում՝՝: Ամէն:

Ա՟ Փիլիպեցւո՟ց երէց՟ է հռո՟մէ ե յե՟ն
եպափրոդիտո՟ս:

---

[1]Ոմանք, ընդ ձեզ ընդ ամենեսին.

ԱՌ ԿՈՂՈՍԱՑԻՍ

ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա

1 ԱԲ. ՊԱՒՂՈՍ, առաքեալ Յիսուսի Քրիստոսի
2 կամօքն Աստուծոյ, և Տիմոթէոս եղբայր, Ա. Կ.
ղոսացիս սուրբս և հաւատացեալս եղբարս ի Քրիս.
տոս. շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստու.
ծոյ Հօրէ մերմէ [1]և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ՝
3 Գոհանամք զԱստուծոյ և զՀօրէ Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի, յամենայն ժամ վասն ձեր
4 աղօթս [2]առնել, Իբրեւ լուաք՝՝ զՀաւատսն ձեր որ
ի Քրիստոս Յիսուս [3]ի Տէր մեր՝՝, և զսէրն զոր ընդ
5 ամենայն սուրբս ունիք· Վասն յուսոյն որ պահի
ձեզ յերկինս, զորմէ յառաջագոյն լուարուք բա.
6 նիւն ճշմարտութեանն աւետարանին, Որ եհաս մա
ձեզ, որպէս ընդ ամենայն աշխարհ աճէ և պտղա.
բերէ, որպէս և ի ձերում միջի, յօրէ յորմէ լուա.
բուք և ծանեայք զշնորհսն Աստուծոյ ճշմարտու.
7 թեամբ. Որպէս և ուսարուք յԵպափրեայ սիրելոյ
ծառայակից մերմէ, որ է հաւատարիմ վասն ձեր
8 պաշտօնեայ [4]Յիսուսի· Որ և պատմեաց մեզ զսէր
սէրն Հոգւով։

---

[1] Յ–մանս պ–ս–ս–ք [2] Յ–յնն, արտաբեալ, (ի) լ–ւեալ
[3] ի Յ–ն–ն պ–ս–ս–ք [4] Յ–յնն, Քրիստոսի

9 Վասն այնորիկ և մեք, յօրէ յորմէ լուաք, ոչ դադարեմք վասն ձեր աղօթս առնել և խնդրուածս մատուցանել, զի լնուցուք [1]զգիտութիւն կամաց նորա ամենայն իմաստութեամբ և հոգեւոր հան-
10 ճարով. Գնալ ձեզ արժանի Տեառն յամենայն հաճութեան, յամենայն գործս բարութեան պտղա-
11 բերք և աճեցուն[ք] գիտութեամբն Աստուծոյ. Ամենայն զօրութեամբ զօրացեալք ըստ զօրութեան փառաց նորա յամենայն համբերութիւն և եր
կայնմտութիւն ուրախութեամբ,
12 Ագ. Գոհանալ [2]զՀօրէ որ [3]կոչեացն [4]զմեզ ի
13 մասն վիճակի սրբոցն ի լոյս. Որ փրկեացն զմեզ յիշխանութենէ խաւարի, և փոխեաց [5]զմեզ յար-
14 քայութիւն Որդւոյն իւրոյ սիրելւոյ. Որով ունիմք փրկութիւն արեամբն նորա, [5]և զթողութիւն մե-
15 ղաց՝ [5]մարմնովն նորա." Որ է պատկեր աներ-
ևութին Աստուծոյ, անդրանիկ ամենայն արարա-
16 ծոց. Զի նովաւ հաստատեցաւ ամենայն որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի, որ երեւին և որ ոչն երեւին, եթէ՛ աթոռք, եթէ՛ տէրութիւնք, եթէ՛ պետութիւնք, եթէ՛ իշխանութիւնք. ամենայն ինչ
17 նովաւ և ի նոյն հաստատեցաւ. Եւ նա է յառաջ քան զամենայն, և ամենայն ինչ նովաւ եկաց ե-
18 վանդակ. Եւ նա է գլուխ մարմնոյ, եկեղեցւոյ. որ է սկիզբն, անդրանիկ ի մեռելոց, զի եղիցի ինքն
19 յամենայնի յառաջացեալ. Զի ի նմա հաճեցաւ

---

[1]կ—ՀՀ, զիտութեամբ [2]ՈՀՀ, զԱստուծոյ Հօրէ
[3]Բ—ՀՀ, բաւական արար [4]ՈՀՀ, զձեզ
[5]ի Ց—ՆԻՆ պ—Հ—Ե

20 ամենայն լրութիւն [1]Աստուածութեանն բնակել. եւ
նովաւ հաշտեցուցանել զամենայն ի նոյն, արար
խաղաղութիւն արեամբ խաչին իւրոյ, [2]որ ինչ
յերկրի և որ ինչ յերկինս:
21 Եւ զձեզ որ երբեմն օտարացեալքն էիք և թշնա-
22 միք խորհրդովք ի գործսն չարութեան, Այժմ ա-
ւադիկ հաշտեցոյց անդամովք մարմնոյ իւրոյ ի
ձեռն մահուան [3]իւրոյ, յանդիման կացուցանել
զձեզ սուրբս և ամբիծս և անարատս առաջի նո-
23 ա. Եթէ կայցէք ի հաւատսն արմատացեալք և
հաստատեալք, և անշարժք ի յուսոյ աւետարա-
նին զոր լուարուք, քարոզելոյ ընդ ամենայն արա-
րածս ի ներքոյ երկնից, որոյ եղէ ես Պաւղոս պաշ-
տօնեայ:
24 ԱԴ. Եւ արդ ուրախ եմ ի չարչարանս իմ վասն
ձեր, և լնում զպակասութիւն նեղութեանցն Քրիս-
տոսի ի մարմնի իմում վասն մարմնոյ նորա, որ է
25 եկեղեցի. Որոյ եղէ ես [4]Պաւղոս պաշտօնեայ ըստ
տնտեսութեանն Աստուծոյ, որ տուեալ է ինձ
26 ի ձեզ կատարել զբանն Աստուծոյ, Զխորհուրդն
որ ծածկեալ էր ի յաւիտեանցն և յազգաց,
27 որ այժմ յայտնեցաւ սրբոց իւրոց. Որոց կամե-
ցաւ Աստուած ցուցանել թէ զինչ է մեծութիւն
փառաց խորհրդոյն նորա ի հեթանոսս, որ է Քրիս-
28 տոս ի ձեզ, յոյսն փառաց. Զոր մեք քարոզեմք,
և խրատեմք զամենայն մարդ, և ուսուցանեմք
զամենայն մարդ ամենայն [4]հոգեւոր իմաստու-

---

[1] ի ցանկն պակաս
[2] ցանկ, նովաւ, որ
[3] ցմահ պակաս
[4] ի բազմս պակաս

թեամբ, զի կացուցցուք զամենայն մարդ կա-
29 տարեալ ի Քրիստոս Յիսուս. Յոր և աշխատիմ
պատերազմեալ ըստ յաջողութեան նորա որ յա-
ջողեալ է յիս զօրութեամբ։

ԳԼ. Բ

1 Կամիմ զի գիտիցէք դուք որպիսի՛ ճգնութիւն ու-
նիմ յանձին վասն ձեր և վասն Լաւոդիկեցւոցն,
2 և որոց չիցէ տեսեալ զերեսս իմ մարմնով. Զի
մխիթարեսցին սիրտք նոցա տեղեկացեալք սիրով,
և յամենայն մեծութիւն լրութեան իմաստութեան՝
ի գիտութիւն խորհրդոյն [1]Աստուծոյ ի Քրիստոս
3 Յիսուս՝. Յորում ամենայն գանձք իմաստութեան
4 և գիտութեան ծածկեալ կան։ Այլ զայս ասեմ,
զի մի՛ ոք զձեզ զառանցուսցէ պատիր բանիւք։
5 Զի թէպէտ և մարմնով հեռի եմ, այլ հոգւով
ընդ ձեզ եմ. քանզամ, իրրեւ տեսանեմ զկարգն
ձեր և զհաստատութիւն հաւատոցն ձերոց որ ի
6 Քրիստոս [2]Յիսուս։ Արդ որպէս ընկալարուք զՔրիս-
7 տոս Յիսուս զՏէր, նովին գնասջիք. Արմատացեալք
և շինեալք ի նա և հաստատեալք ի հաւատս որ-
պէս ուսարուքն, առատեալք ի նմին գոհու-
թեամբ։ ՎՋ

8 Զգոյշ լերուք մի՛ ոք իցէ որ զձեզ կողոպտիցէ
ճարտարմտութեամբ և անոտի խաբէութեամբ, որք
ըստ մարդկան աւանդութեան և ըստ տարերց
9 աշխարհիս, և ոչ ըստ [3]Յիսուսի Քրիստոսի. Զի ի

---

[1] Ոմանք, Աստուծոյ Հօր և Քրիստոսի
[2] ի Յ—ն պ—ք [3] ի Բ—ս պ—ք

նմա բնակէ ամենայն լրումն Աստուածութեանն
10 մարմնապէս։ Եւ էք դուք նովաւ լցեալք, որ է
գլուխ ամենայն իշխանութեան և պետութեան.
11 Որով թլփատեցարուք [1]հաւատով զանձեռագործ
թլփատութիւնն՝ ի մերկանալ զանդամս [2]մարմնոյ
12 թլփատութեամբն Քրիստոսի. Թաղեալք ընդ նմին
ի մկրտութեանն, որով և ընդ նմին յարեալք հա-
ւատով Աստուծոյ ազդեցութեանն, որ յարոյց
13 զնա ի մեռելոց։ Եւ զձեզ որ երբեմն մեռեալն էիք
ի մեղս և յանթլփատութեան մարմնոյ ձերոյ՝ կեն-
դանացոյց յանձին իւրում. շնորհեաց մեզ զամե-
14 նայն յանցանս մեր, Եւ ջնջեաց զձեռագիրն մերոյ
հակառակութեանն հրամանաւքն [1]իւրով որ կայր
մեզ հակառակ, եբարձ զայն ի միջոյ և բեւեռեաց
15 ընդ խաչափայտին. Մերկեաց զիշխանութիւնս և
զպետութիւնս, յայտ յանդիման խայտառակեաց
նշաւակեալ զնոսա յանձին իւրում [1]ի յարու-
թեան իւրում՝՝։
16 Մի՛ ոք այսուհետեւ զձեզ դատեսցի ուտելով
կամ ըմպելով կամ մասամբք տօնից, կամ ա-
17 սամուխք, կամ շաբաթուք. Որ են ստուերք հան-
18 դերձելոցն, այլ մարմին [3]Քրիստոս է։ Մի՛ ոք
զձեզ խաբեսցէ, որ կամիցի խոնարհութեամբ և
կրօնիւք հրեշտակաց, զոր չիցէ տեսեալ, զրահեա
վարել՝ տարապարտ հպարտացեալ ի մտաց մարմ-
19 նոյ իւրոյ. Եւ ոչ ունիցի զգլուխն [4]Քրիստոս,
ուստի ամենայն մարմինն յօդիւք և խաղալե-

---

[1] ի ց-ն-ն պ-ե-ե
[2] Ո՛ան+, մարմնոյ մեղաց
[3] Ց-յն, Քրիստոսի
[4] ի Բ-ա-մ պ-ե-ե

տարաբերեալ և խառնեալ՝ աճէ զաճուճն Աստուծոյ։ Եթէ մեռարուք ընդ Քրիստոսի ի տարերց աշխարհիս, զի՞ եւս իբրեւ զկենդանիս աստէն յաշխարհի կրօնաւորիք. Մի՛ մերձենար, մի՛ ճաշակեր, մի՛ հուպ լինիր. Որ է ամենայն ինչ ի պէտս ապականութեան, բստ պատուիրանաց և վարդապետութեան մարդկան, Որ յիմաստութիւն իմն համարէ ինքնակամ կրօնիւք և խոնարհութեամբ և անխայտութեամբ մարմնոյ, և ոչ ի պատիւ ինչ լրութեան մարմնոյ։

ԳԼ. Գ

1 Եթէ յարերուք ընդ Քրիստոսի, ապա զվերինն խնդրեցէք, ուր Քրիստոսն նստի ընդ աջմէ Աստուծոյ։ 2 Զվերինն խորհեցարուք, մի՛ զոյս որ երկրի աստ է։ 3 Քանզի մեռարուք, և կեանքն ձեր ծածկեալ են ընդ Քրիստոսի յԱստուած։ 4 Իսկ յորժամ Քրիստոս յայտնեսցի, կեանքն ձեր, յայնժամ և դուք ընդ նմա յայտնեսջիք փառօք։

5 Սպանէք այսուհետեւ զանդամս ձեր զերկրաւորս. [1]ի բաց ընկեցէք՝ զպոռնկութիւն, զպղծութիւն, զբիծ, զցանկութիւն չարեաց, և զագահութիւն՝ որ է կռապաշտութիւն. 6 Վասն [2]որոյ գայ բարկութիւն Աստուծոյ ի վերայ որդւոցն անհաւանութեան. 7 Որով և դուք երբեմն գնայիք, մինչ կենդանիքն էիք ի նոսա։ 8 Արդ ի բաց թօթափեցէք և դուք զայն ամենայն. զբարկութիւն, զսրտմտութիւն, զչարութիւն, զհայհոյութիւն, զխեղկա-

---

[1]ի ցառն պակաս [2]ցոյն, որոց

9 տակութիւն ի բերանոց ձերոց։ Մի՛ սակաւ միմեանց
10 ժխկացարուք զկին մարդն գործովքն իւրովք. եւ
զգեցարուք զնորն՝ նորոգեալ ի գիտութիւն ըստ
11 պատկերի Արարչին իւրոյ. Ուր ոչ է Հրեայ և ոչ
հեթանոս, թլփատութիւն և անթլփատութիւն,
խուժ դուժ, Սկիւթացի, ծառայ, աղատ. այլ
12 ամենայն և յամենայնի Քրիստոս։ Զգեցարուք ո-
ւսուհետեւ իբրեւ ընտրեալք Աստուծոյ, սուրբք և
սիրեցեալք, զգուեթ, ողորմութիւն, զքաղցրու-
թիւն, զխոնարհութիւն, զհեզութիւն, զերկայն-
13 մտութիւն. Ներել միմեանց, շնորհել իրերաց,
եթէ ուրուք զուարեքէ տրտունջ ինչ իցէ. որպէս
[1]Աստուած Քրիստոսիւ՝ շնորհեաց ձեզ, նոյնպէս
14 և դուք։ Եւ ի վերայ այսր ամենայնի զսէրն՝ որ է
15 զօգ կատարմանն. Եւ խաղաղութիւնն [2]Քրիստոսի
հաստատեսցի ի սիրտս ձեր, յոր և կոչեցարուք
միով մարմնով. և գոհացողք լինիջիք։
16 Աե. [3]Ձի բանն Քրիստոսի բնակեսցէ ի ձեզ ա-
ռատապէս, ամենայն իմաստութեամբ ուսուց-
նել և խրատել զմիմեանս, սաղմոսիւք և օրհնու-
թեամբ և երգովք հոգեւորօք՝ [3]և շնորհօք օրհ-
17 նել ի սիրտս ձեր զԱստուած։ Եւ զամենայն զոր
և առնիցէք բանիւք և արդեամբք, զամենայն յա-
նուն Տեառն Յիսուսի արասջիք. գոհացողք լինի-
ջիք զԱստուծոյ և զՀօրէ նովաւ։
18 Կանայք, հնազանդ լերուք արանց ձերոց, որպէս
19 և վայել է ի Տէր։ Արք, սիրեցէք զկանայս ձեր,

---

[1] Ի ցն. օրինակաց «ի Տէր», այլ՝ Քրիստոս
[2] Ոմն, Աստուծոյ [3] Ի ցուն պակաս

20 և [1]մի՛ դառնացուցանէք զնոսա՝։ Որդիք, հնազանդ
լերուք ծնողաց ձերոց յամենայնի, զի այն է հաճոյ
21 առաջի Տեառն։ Հարք, մի՛ գայրացուցանէք զորդիս
22 ձեր, զի մի՛ տրտմեսցին։ Ծառայք, հնազանդ լե-
րուք տերանց ձերոց յամենայնի, մի՛ առ ականէ
ծառայութեամբ իբրեւ մարդահաճոյք, այլ միա-
23 մտութեամբ սրտի երկնչել ի Տեառնէ. Զոր ինչ
առնիցէք՝ սրտի մտօք գործեսջիք, իբրեւ Տեառն
24 և ոչ իբրեւ մարդկան։ Գիտասջիք զի ի Տեառնէ
առնուցուք զհատուցումն ժառանգութեան [2]ձե-
25 րոյ. քանզի Տեառն Քրիստոսի ծառայէք։ Իսկ
ապիրատն ընկալցի ըստ իւրում ապիրատութեանն,
զի չիք ակնառութիւն [2]առաջի Աստուծոյ՝։

ԳԼ. Դ

1 Տեարք, զիրաւունս և զհաւասարութիւն ծառա-
յից ձերոց շնորհեցէք, գիտասջիք զի և ձեր Տէր
2 գոյ յերկինս։ Աղօթից առեպ կացէք, տքնել ի նմին գոհու-
3 թեամբ։ Աղօթս արարէք միանգամայն և վասն
մեր, զի Աստուած բացցէ մեզ դուռն բանին՝ խօ-
սել զխորհուրդն Քրիստոսի, վասն որոյ և կապեալս
4 կամ, Զի յայտնի արարից զնա, որպէս արժան
իցէ ինձ խօսել։
5 Զ. Իմաստութեամբ գնասջիք առ արտաքինան՝
6 գնոց առեալ զժամանակս։ Եւ բանն ձեր յամե-
նայն ժամ լի շնորհօք [3]Տեառն՝ իբրեւ՝ աղիւ հա-

---

[1]Յ-ՆՆ, մի՛ դառնասջիք առ նոսա

[2]ի Բ-ԼԵ-Մ պ-ի-ե [3]ի Յ-ՆԻՆ պ-ի-ե

մեմեալ լիցի, գիտել որպէս արժան իցէ ձեզ ի-
բաքանչիւր ումեք տալ պատասխանի :
7 Այլ որ ինչ գինէն իցէ՝ ցուցցէ ձեզ զամենայն
Տիւքիկոս սիրելի եղբայրը և հաւատարիմ պաշտօն.
8 եայ և ծառայակից ի Տէր . Զոր առաքեցի առ ձեզ
դմին իրի, զի գիտասջիք վասն մերոց, և մխիթա.
9 բեսցէ զսիրտս ձեր, Ընեսիմաւ հանդերձ եղբարբ
հաւատարմաւ և սիրելեաւ որ է ի ձէնջ. զամե.
10 նայն ինչ ցուցցեն ձեզ որ ինչ աստ է : Ողջոյն
տայ ձեզ Արիստարքոս գերեկից իմ, և Մարկոս
եղբօրորդի Բառնաբայ . (վասն որոյ առէք պատ.
11 ուէր եթէ եկեսցէ առ ձեզ, ընկալջիք զնա .) Ի-
Յիսուս որ անուանեալն է Յուստոս, որք են ի
թլփատութենէ անտի . զի դոքա միայն գործակից
եղեն ինձ յարքայութեանն Աստուծոյ, որք և ե.
12 ղեն իսկ ինձ մխիթարութիւն : Ողջոյն տայ ձեզ
Եպափրաս որ ի ձէնջ ծառայ Քրիստոսի Յիսուսի
է . յամենայն ժամ պատերազմեալ վասն ձեր յա.
ղօթս, զի կայցէք կատարեալք և լցեալք յամե.
13 նայն կամս Աստուծոյ : Վկայեմ նմա, զի բազում
աշխատութիւն ունի վասն ձեր և վասն Լաւոդի.
կեցւոցն, և վասն այնոցիկ որ Յերապոլիսի են։
14 Ողջոյն տայ ձեզ Ղուկաս բժիշկ [1]և սիրելի, և Դէ.
15 մաս : Ողջոյն տայջիք եղբարց որ են ի Լաւոդիկիա
16 և Նիմփայ և որ առանին եկեղեցին է նորա : Ե
յորժամ ընթեռնուցու առ ձեզ թուղթդ, արա.
ջիք զի և ի Լաւոդիկեցւոց եկեղեցւոյն ընթերցցի.
և զառ ի Լաւոդիկեցւոցն՝ զի և դուք ընթեռնու.

---

[1] ի ցանէն պակաս

17 ցուք՝ եւ ասասջիք ցԱրքիպպոս, Զգոյշ լեր սպա-
սաւորութեանդ զոր ընկալար ի Տէր, զի զայդ կա-
18 տարեսցես՝ Ողջոյնդ ձեռին իմոյ Պաւղոսի է. յուշ
լիցին ձեզ կապանքս իմ՝ Շնորհք ընդ ձեզ՝[1]

Ա- կ-ղ-ո-յ- ե-ր-յ- ե Հ-ւ-ե ե յ-ո- Տ-ե-է-ո-ե
ե Ռ-է-մ-յ՝

ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ

ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա

1 ԲԿ. ՊԱՒՂՈՍ եւ Սիղուանոս եւ Տիմոթէոս, եկե-
ղեցւոյդ Թեսաղոնիկեցւոց յԱստուած Հայր մեր
2 եւ ի Տէր Յիսուս Քրիստոս. Շնորհք ընդ ձեզ եւ
խաղաղութիւն[2]՝

Գոհանամք զԱստուծոյ յամենայն ժամ վասն
ձեր ամենեցուն յիշատակ առնել յաղօթս մեր,
3 Անդադար յիշել զձեր գործն հաւատոց եւ զվաս-
տակ սիրոյ եւ զհամբերութիւն յուսոյ Տեառն մե-
ծոյ Յիսուսի Քրիստոսի առաջի Աստուծոյ եւ Հօր

---

[1] Որոնք ե Յ-ն ե ե Հ-յ յ-ո-ե-ր-ս-ն յ-ո-ե-լ-ն, Ա-մ-է-ն՝
[2] Որոնք յ-ո-ե-լ-ն, յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ ի
Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ

4 մերոյ. Գիտէք, եղբարք սիրեցեալք յԱստուծոյ,
5 զընտրութիւնն ձեր. Զի աւետարանն մեր ոչ եղեւ առ ձեզ միայն բանիւ, այլ և զօրութեամբ և Հոգւով Սրբով և լրութեամբ բազմաւ, որպէս և գիտէք իսկ թէ որպիսիք եղեաք ի միջի ձերում
6 վասն ձեր: Եւ դուք նմանեալք մեզ և Տեառն՝ ընկալայք զբանն ի բազում նեղութեան ընդու-
7 թեամբ Հոգւոյն Սրբոյ. Լինել ձեզ օրինակ ամե-
նայն հաւատացելոց որ են ի Մակեդոնիա և յԱ-
8 քայիա: Զի ի ձէնջ հնչեաց բանն [1]Աստուծոյ, ոչ միայն ի Մակեդոնիա և յԱքայիա, այլ յամե-
նայն տեղիս հաւատքն ձեր որ առ Աստուած են՝ սփռեցան, զի այսուհետեւ ոչինչ է պիտոյ մեզ և
9 խօսել ինչ: Զի նոքին իսկ պատմեն վասն մեր, թէ որպէս եղեւ մեզ մուտ առ ձեզ, և որպէս դար-
ձայք առ Աստուած ի կուռց անտի՝ ծառայել Ա-
10 ստուծոյ կենդանւոյ և ճշմարտի, եւ սպասել Որդւոյ նորա յերկնից, զոր յարոյցն ի մեռելոց, զՅիսուս, որ [2]փրկելոցն է՝ զմեզ ի բարկութենէ անտի որ գալոցն է:

ԳԼ. Բ

1 ԲԴ. Դուք ինքնին գիտէք, եղբարք, զմուտն մեր
2 առ ձեզ, զի ոչ ընդունայն ինչ եղեւ. Այլ յա-
ռաջագոյն չարչարեալք և թշնամանեալք որպէս և դուք իսկ գիտէք, ի մէջ փիլիպեցւոց, համարձա-
կեցաք Աստուծով մերով՝ պատմել ձեզ զաւե-
3 տարանն Աստուծոյ մեծաւ պատերազմաւ: Զի

---

[1]Բ–ղ–մ, Տեառն [2]Յ–յնն, փրկէն

[1]Մխիթարութիւնն մեր ոչ ի մոլորութենէ է և ոչ
4 ի պղծութենէ և ոչ նենգութեամբ. Այլ որպէս
ընտրեցաք յԱստուծոյ հաւատարիմ լինել աւե-
տարանին, նոյնպէս և խօսիմք, ոչ իբրեւ մարդ-
կան հաճոյ լինել, այլ Աստուծոյ որ քննէ զսիրտս
5 մեր: Զի ոչ երբեք բանիւք ողբանաց եղեաք առ-
ձեզ, որպէս և դուք իսկ գիտէք. և ոչ ի պատ-
ճառս ագահութեան, որպէս և Աստուած վկայէ.
6 Եւ ոչ խնդրեաք փառս ի մարդկանէ. ոչ ի ձէնջ
7 և ոչ յայլոց: Կարող էաք որպէս Քրիստոսի ա-
ռաքեալք ծանրանալ, այլ եղեաք հեզք ի միջի
ձերում, որպէս դայեակ մի՝ որ սնուցանիցէ [2]ման-
8 կունս: Նոյնպէս և մեք գթայաք ի ձեզ, հաճոյ
թուէր մեզ տալ ձեզ ոչ միայն զաւետարանն
Աստուծոյ, այլ և զանձինս մեր, քանզի սիրելիք
9 մեր եղերուք: [3]Յիշէք, եղբարք, զվաստակն մեր
և զջան, զի զցայգ և զցերեկ գործեաք վասն չծան-
րանալոյ ումեք ի ձէնջ, և քարոզեաք ձեզ զաւե-
10 տարանն Աստուծոյ: Դուք ինքնին վկայէք, և
Աստուած, ո՛րպէս սրբութեամբ և արդարութեամբ
և անբծութեամբ ձեզ հաւատացելոցդ եղեաք.
11 Որպէս և գիտէք իսկ, զի զիւրաքանչիւր ոք ի ձէնջ,
12 իբրեւ հայր զորդիս, Մխիթարէաք և սփոփէաք և
դնէաք վկայութիւն գնալ ձեզ արժանապէս Աս-
տուծոյ, որ կոչեացն զձեզ յիւր արքայութիւնն
13 և ի փառս: Վասն այնորիկ և մեք գոհանամք
զԱստուծոյ անպակաս, զի առեալ զլուր բանին

---

[1]կամ, յորդորումն [2]Յոյն, զմանկունս իւր
[3]Յոյն, Քանզի յիշէք

Աստուծոյ առ ի մէնջ ընկալարուք, ոչ իբրև զբան մարդկան, այլ որպէս ճշմարտիւ զբան Աստուծոյ. որ և յաջողեալ իսկ է ի ձեզ հաւատա-
14 ցեալսդ: Զի դուք նմանողք եղերուք, եղբարք, եկեղեցեացն Աստուծոյ որ են ի Հրէաստանի ի Քրիստոս Յիսուս. զի զնոյն չարչարանս չարչարե-
ցայք և դուք ի ձերոց ազգականաց, որպէս և նո-
15 քայն ի Հրէից. Որք և զՏէրն Յիսուս սպանին և [1]զմարգարէսն, և զմեզ հալածեցին, և Աստուծոյ յաչաց ելին, և ամենայն մարդկան հակառակ է-
16 ղեն. Եւ արգելուին զմեզ խօսել հեթանոսաց զի ապրեսցին, զի կատարեսցեն զմեղս իւրեանց յա-
մենայն ժամ. քանզի հասեալ է ի վերայ նոցա բարկութիւն մինչեւ ի սպառ:

17 ԲԶ. Այլ մեք, եղբարք, թէպէտ և որբա-
ցաք ի ձէնջ առ ժամանակ մի երեսօք և ոչ սրտիւք, առաւել եւս փութացաք տեսանել զերեսս ձեր
18 մեծաւ ցանկութեամբ: Վասն այսորիկ կամեցայ գալ առ ձեզ ես Պաւղոս մի անգամ և երկիցս,
19 և խափանեաց զմեզ Սատանայ: Քանզի ո՞վ է մեր յոյս կամ խնդութիւն կամ պսակ պարծանաց մի-
րոց, եթէ ոչ դուք [2]ի Տէր առաջի Տեառն մերո-
20 Յիսուսի [3]Քրիստոսի ի նորա գալստեանն: Զի դուք էք փառք մեր և խնդութիւն:

ԳԼ. Գ

1 Վասն որոյ ոչ եւս ունիմք ժոյժ, զի բարւոք

---

[1] Ոմանք, զմարգարէս իւրեանց

[2] ի Յ—ն՝ պակաս [3] Յ—մանս պակաս

2 Թուեցաւ մեզ միայն ճնալ յԱթէնս. եւ առաքեցաք զՏիմոթէոս զեղբայր [1]մեր եւ զգործակից աստուածային Աստուծոյ եւ Հօրն Քրիստոսի՝, հաստատել զձեզ եւ մխիթարել վասն հաւատոցն ձերոց՝
3 Զի մի՛ տագտկայցէք ի նեղութիւնս յայսոսիկ. քանզի դուք ինքնին իսկ գիտէք զի ի սոյն կա՛ք.
4 քանզի մինչ առ ձեզն իսկ էաք, յառաջագոյն ասէաք ձեզ թէ նեղութիւնք հասանելոց են ի վերայ մեր, որպէս և եղեւ իսկ, և գիտացէք։ վասն այնորիկ և ես, զի ոչ եւս ունէի ժոյժ, առաքեցի գիտել զհաւատսն ձեր, գուցէ արդեւք փորձեաց և զձեզ փորձիչն, և ընդունայն լինիցի ջանն մեր։
6 Բայց արդ իբրեւ եկն Տիմոթէոս ի ձէնջ առ մեզ, և եթ մեզ զաւետիս հաւատոցն ձերոց և զսիրոյ, զի ունիք ի մտի զհիշատակս մեր բարեաց յամենայն ժամ, ցանկացեալ էք տեսանել զմեզ, որպէս և մեք զձեզ. վասն այնորիկ մխիթարեցաք ի ձեզ, եղբարք, ի վերայ ամենայն վշտաց և նեղութեանց մերոց՝ ի ձեռն հաւատոցն ձերոց. Զի այժմ կենդանի եմք, եթէ դուք հաստատուն կայցէք ի Տէր։ Զի՞նչ կարեմք գոհութիւն մատուցանել Աստուծոյ վասն ձեր ի վերայ ամենայն խնդութեանն զոր խնդամք վասն ձեր առաջի Աստուծոյ մերոյ։ Զգայգ և զցերեկ առաւել եւս աղաչեմք

---

[1] Ի ց-ՆԴ՝ ՀՄՆԻ, մեր և զպաշտօնեայ Աստուծոյ և զգործակից մեր յաւետարանին Քրիստոսի. ՈՍՏ՝ մեր և զպաշտօնեայ Աստուծոյ յաւետարանին Քրիստոսի

տեսանել զերեսս ձեր, և հաստատել զպակասու-
11 թիւն հաւատոցն ձերոց։ Այլ ինքն Աստուած և
Հայր մեր և Տէր մեր Յիսուս Քրիստոս ուղղեսցէ
12 զճանապարհս մեր առ ձեզ։ Եւ զձեզ ինքն Տէր
բազմապատիկս և առաւելս արասցէ սիրով ընդ
միմեանս և առ ամենեսեսին, որպէս և մեք ի ձեզ,
13 հաստատել զսիրտս ձեր անարատս ի սրբութիւն
առաջի Աստուծոյ և Հօր մերոյ ի գալստեանն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի հանդերձ ամե-
նայն սրբովք իւրովք։

ԳԼ. Գ

1 Գկ. Այսուհետեւ, եղբարք, աղաչեմք զձեզ և
մխիթարեմք [1]ի Քրիստոս Յիսուս", զի որպէս ընկա-
լարուք ի մէնջ, թէ ո՛րպէս պարտ իցէ ձեզ գնալ
և հաճոյ լինել Աստուծոյ. որպէս և գնայիդ իսկ,
2 զի եւս քան զեւս յաւելուցուք ի նոյն։ Եւ գիտէք
թէ որպիսի՛ պատուիրանս տուաք ձեզ ի Տէր Յի-
3 սուս։ Զի այս են կամք Աստուծոյ՝ սրբութիւն ձեր,
4 ի բաց լինել ձեզ ի պոռնկութենէ. Գիտել իւրա-
քանչիւր ումեք ի ձէնջ զիւր աման ստանալ սրբու-
5 թեամբ և պատուով. Մի՛ ի ցաւս ցանկութեան,
որպէս և [2]այլ հեթանոսք որ ոչ գիտեն զԱս-
6 տուած։ Մի՛ զանցանել և զրկել յիրիդ յայդմիկ
զեղբայր իւր, քանզի վրէժխնդիր է Տէր ի վերայ
ամենայնի այդորիկ. որպէս յառաջագոյն ասացաք
7 ձեզ և եդաք վկայութիւն։ Քանզի ոչ կոչեաց
զմեզ Աստուած ի պղծութիւն, այլ՝ ի սրբութիւն։

---

[1] Բազմ. ի, ի Տէր Յիսուս [2] Ի ցոյն պատ.

8 Այսուհետեւ որ անարգէ, ոչ զմարդ անարգէ,
այլ զԱստուած, որ և ետ զՀոգին Սուրբ [1]ի ձեզ:
9 Այլ վասն եղբայրսիրութեան չէ ինչ պիտոյ
գրել առ ձեզ, զի դուք ինքնին իսկ աստուածու-
10 սոյցք էք առ ի զմիմեանս սիրելոյ: Քանզի և առ-
նէք իսկ զդոյն յամենայն եղբարս որ են յամե-
նայն կողմանս Մակեդոնացւոց. աղաչեմք զձեզ,
եղբարք, առաւել եւս առաւելուլ և առատա-
11 նալ. Հանդարտել և գործել զիւրաքանչիւր, և
գործել ձեռօք ձերովք, որպէս և պատուիրեցաք
ձեզ, զի գնայցէք պարկեշտութեամբ առ արտա-
քինան, և մի՛ իւիք կարօտեալք իցէք:
12 Ոչ կամիմ, եղբարք, եթէ տգէտք իցէք վասն
ննջեցելոցն, զի մի՛ տրտմիցիք որպէս և այլքն որոց
13 ոչ դոյ յոյս: Եթէ հաւատամք եթէ Յիսուս մե-
ռաւ և յարեաւ, նոյնպէս և Աստուած զննջեցեալսն
14 ի ձեռն Յիսուսի ածցէ ընդ նմա: [2]Բայց զայս ա-
սեմք՝ Տեառն բանիւ, եթէ մեք որ կենդանիքս եմք
մնացեալք ի գալստեանն Տեառն՝ ոչ [3]ժամանեմք
15 ննջեցելոցն: Զի ինքնին Տէր հրամանաւ, ի ձայն
հրեշտակապետի և ի փող Աստուծոյ իջանէ յերկ-
նից, և մեռեալք ի Քրիստոս յարիցեն յառաջա-
16 գոյն: Ապա և մեք որ կենդանեաւքն մնացեալ իցեմք՝
նոքօք հանդերձ յափշտակեսցուք ամպովք ընդ ա-
ռաջ Տեառն յօդս, և այնպէս յամենայն ժամ
17 ընդ Տեառն լինիցիմք: Այսուհետեւ մխիթարեցէք
զմիմեանս բանիւքս այսոքիւք:

---

[1] Որ+, ի մեզ [2] Յոյն, Քանզի զայս ասեմք ձեզ
[3] Կո՛, յառաջեմք քան զննջեցեալսն

Գ.Լ. Ե

1 ԳԴ. Ա՛ՀԼ վասն ժամուց և ժամանակաց, եղ-
2 բարք, չէ ինչ պիտոյ գրել առ ձեզ. Զի դուք
ինքնին իսկ ատոյգ գիտէք, թէ օրն Տեառն իբրեւ
3 գող գիշերի՝ այնպէս հասանէ։ Յորժամ ասիցեն
թէ խաղաղութիւն և շինութիւն է, յայնժամ յան-
կարծակի հասցէ նոցա սատակումն, որպէս երկն
4 յղոյ, և մի՛ ապրեսցեն։ Ա՛ՀԼ դուք, եղբարք,
ոչ էք ի խաւարի թէ օրն ձեր իբրեւ գող ի վե-
5 րայ հասանիցէ. Զի ամենեքին դուք որդիք լուսոյ
էք և որդիք տուրընջեան. չեմք գիշերոյ, չեմք խա-
6 ւարի։ Ապա մի՛ գքնով անկանիցիմք որպէս և
այլքն, այլ արթունք և զուարթունք եղիցուք։
7 Զի որ ննջենն՝ գիշերի ննջեն, և որ արբենանն՝ գի-
8 շերի արբենան։ Ա՛ՀԼ մեք զի տուրընջեան եմք, ար-
թունք եղիցուք, և զգեցցուք զզրահն հաւատոյ
և զսիրոյ, և դիցուք զսաղաւարտն յուսոյն փրկու-
9 թեան։ Զի ոչ եդ զմեզ Աստուած ի բարկու-
թիւն, այլ ի փրկութիւն կենդանութեան ի ձեռն
10 Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Որ մեռաւն վասն
մեր. զի եթէ՛ արթունք իցեմք և եթէ՛ ննջիցեմք,
11 նովաւ հանդերձ կեցցուք։ Վասն որոյ մխիթարե-
ցէք զմիմեանս և շինեցէք զիրեարս, որպէս և առ-
նէքդ իսկ։
12 ԳԶ. Աղաչեմք զձեզ, եղբարք, ճանաչել զվաս-
տակաւորս և զվերակացուս ձեր ի Տէր, և զխրա-
13 տիչս ձեր. Եւ համարեցարուք զնոսա արժանիս
առաւել սիրոյ վասն գործոյ նոցա. խաղաղութիւն
14 արարէք ընդ միմեանս. Աղաչեմք զձեզ, եղբարք,

խրատեցէք զատահակս, մխիթարեցէք զկարճամիտս, պատապարան լերուք տկարաց, երկայնամիտ լերուք առ ամենեսին։ Զգոյշ լերուք գուցէ ոք չարի չար հատուցանիցէ այլ յամենայն ժամ զբարեաց զկետ երթայք առ միմեանս և առ ամենեսին։ Յամենայն ժամ ուրախ լերուք։ (17) Անդադար աղօթս արարէք։ Յամենայնի գոհացարուք, զի այս են կամք Աստուծոյ Քրիստոսիս Յիսուսիս ի ձեզ։ ԶՀոգին մի՛ շիջուցանէք։ (20) Զմարգարէութիւնս մի՛ արհամարհէք։ Զամենայն ինչ փորձեցէք, զբարին ընկալարուք։ Յամենայն իրաց չարաց ի բաց կացէք։ Եւ ինքն Աստուած խաղաղութեան սուրբս արասցէ զձեզ համօրէնս. և բովանդակ ձեր սգի և շունչ և մարմին անարատ ի գալուստ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի պահեսցի։ Հաւատարիմ է որ կոչեացն զձեզ, որ և արասցէ զնոյն։

25 Եղբարք, աղօթս արարէք և ի մեր վերայ։
26 Ողջոյն տացէք եղբարց ամենեցուն ի համբոյր սրբութեան։ (27) Երդմնեցուցանեմ զձեզ ի Տէր ընթեռնուլ
28 զթուղթդ առաջի ամենայն եղբարց սրբոց։ Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ։[1]

Ա՚ թեսաղոնիկեցւոց ՚՚՚ջին ընդ գրեցաւ յԱթենայ։

---

[1] Ամէն յոյնն, Ամէն։

Ա. ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա

1 Գկ. ՊԱՒՂՈՍ և Սիղուանոս և Տիմոթէոս, եկե-
ղեցւոյդ Թեսաղոնիկեցւոց յԱստուած Հայր մեր և
2 ի Տէր Յիսուս Քրիստոս. Շնորհք ընդ ձեզ և խա-
ղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ և ի Տեառնէ
Յիսուսէ Քրիստոսէ։
3 Գոհանալ պարտիմք զԱստուծոյ յամենայն ժամ
վասն ձեր, եղբարք, որպէս և արժան իսկ է. զի
եւս քան զեւս աճեն հաւատք ձեր, և յաճախէ
սէր իւրաքանչիւր ամենեցուն ձեր առ միմեանս.
4 Որպէս և մեզ ձեւք պարծել յեկեղեցիսն Աստու-
ծոյ վասն համբերութեան ձերոյ և հաւատոց յա-
մենայն հալածանս ձեր և ի նեղութիւնս, որում
5 դուքն համբերէք. Յօրինակ արդար դատաստանին
Աստուծոյ, արժանի լինել ձեզ արքայութեանն
6 Աստուծոյ, վասն որոյ և չձգնութիւնդ կրէք. եթէ
պարտ է առաջի Աստուծոյ հատուցանել նեղչացն
7 ձերոց նեղութիւն. Եւ ձեզ նեղելոցդ հանգիստ
ընդ մեզ ի յայտնութեանն Տեառն մերոյ Յիսուսի
8 յերկնից հրեշտակօք զօրութեան իւրոյ, ի բոց հրոյ
առնուլ վրէժս յայնոցանէ որք ոչ ճանաչեն զԱս-
տուած, և որ ոչ հնազանդին աւետարանին Տեառն

9 մերոյ Յիսուսի Քրիստոսի. Որք տայցեն վրէժս ի
սատակումն յաւիտենից յերեսաց Տեառն և ի փա-
10 ռաց զօրութեան նորա, Յօրժամ գայցէ փառա-
ւոր լինել ի սէջ սրբոց իւրոց, և սքանչելի ի սէջ
ամենայն հաւատացելոց, (զի հաւատաբիմ եղեւ
վկայութիւնն մեր ի վերայ ձեր,) յաւուր յայնմիկ։
11 Յոր և աղօթս առնեմք վասն ձեր յամենայն ժամ,
զի զձեզ արժանիս արասցէ կոչմանն [1]ձերում [2]Ա-
տուածդ, մինչեւ՞ լցցէ զամենայն հաճութիւն բա-
12 րութեան, և զգործս հաւատոցն զօրութեամբ. Զի
փառաւոր լիցի անուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի ի ձեզ, և դուք՝ ի նմա, ըստ շնորհացն Ա-
տուածոյ մերոյ և Տեառն Յիսուսի Քրիստոսի։

ԳԼ. Բ

1 ԴՌ. Աղաչեմ զձեզ, եղբարք, վասն գալստեան
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և մերոյ ժողո-
2 վելոյն առ նա, Մի՛ վաղվաղակի խռովել ձեզ ի
մտաց և մի՛ զարհուրել, մի՛ հոգւով և մի՛ բա-
նիւ և մի՛ թղթովք իբրեւ թէ ի մէնջ, որպէս թէ
3 եկեալ հասեալ իցէ օր Տեառն։ Մի՛ ոք զձեզ
խաբեսցէ և մի՛ իւիք իրաք· զի եթէ ոչ նախ ե-
կեսցէ ապստամբութիւնն, և յայտնեսցի մարդն
4 անօրէնութեան, որդին կորստեան, Հակառակորդն
Հպարտացեալ ի վերայ ամենայնի որ անուանեալ
իցէ Աստուած կամ պաշտօն, մինչեւ նստել նմա
ի տաճարին [3]Աստուծոյ, և ցուցանել զանձն թէ

---

[1] Յ՛ոմն պիսկ [2] Բազում, Աստուած մեր, և [3] Որ՛ոյ, Աստուծոյ իբրեւ զԱստուած

5 Աստուած իցէ : Ո՞չ յիշիցէք զի մինչ առ ձեզն
6 իակ էի , ասէի զայս : Եւ արդ դուք ինքնին գիտէք
զայն որ ունին , յայտնել նմա յիւրում ժամա-
7 նակի : Զի խորհուրդն անօրէնութեան արդէն իակ
զօրանայ . բայց ցայնժամ՝ մինչ ի միջոյ բարձցի որ
8 այժմ ունի : Եւ ապա յայտնեսցի անօրէնն . զոր
Տէր [1]Յիսուս սատակեսցէ հոգւով բերանոյ իւրոյ ,
և խափանեսցէ յայտնութեամբ գալստեանն իւրոյ .
9 Որոյ գալուստն ըստ ազդեցութեան Սատանայի է
ամենայն զօրութեամբ և նշանօք և արուեստիւք
10 սուտք , Եւ ամենայն պատրանօք անիրաւութեան
ի վերայ կորուսելոցն . փոխանակ զի զսէրն ճշմար-
տութեան ոչ ընկալան , զի ապրեսցին . և վասն
այնորիկ առաքեսցէ նոցա Աստուած ազդեցութիւն
11 մոլորութեան հաւատալ նոցա սուտին . Զի
դատապարտեսցին ամենեքեան որ ոչ հաւատա-
ցին ճշմարտութեանն , այլ հաճեցան ընդ անօրէ-
նութիւնն :
12 Այլ մեք պարտիմք գոհանալ զԱստուծոյ յա-
ւէնէ ժամ վասն ձեր , եղբարք սիրեցեալք ի
Տեառնէ , զի ընտրեաց [2]զմեզ Աստուած ի սկզբա-
նէ ի փրկութիւն սրբութեան Հոգւոյն և հաւա-
13 տովք ճշմարտութեան . Յոր և կոչեաց զձեզ
աւետարանաւն մերով ի փրկութիւն փառացն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի :
14 Այսուհետեւ , եղբարք , հաստատուն կացէք և
պինդ կալարուք զաւանդութիւնն զոր ուսարուք ,
15 եթէ՛ բանիւ և եթէ՛ թղթով մերով : Այլ ինքն

---

[1]Յունարէն պատմէ [2]Բազմ. զձեզ

Տէր մեր Յիսուս Քրիստոս և Աստուած և Հայր
մեր, որ սիրեացն զմեզ և ետ մեզ մխիթարու-
6 թիւն յաւիտենից և յոյս բարեաց շնորհօք, Մխի-
թարեսցէ զսիրտս ձեր և հաստատեսցէ յամենայն
բանս և ի գործս բարութեան։

Գլ. Գ

1 ԴՋ. Այսուհետեւ, եղբարք, աղօթս արարէք ի
վերայ մեր, զի բանն Տեառն ընթանայցէ, և փա-
ռաւոր լինիցի յամենայն տեղիս, որպէս և առ
2 ձեզդ. Զի ապրեսցուք յանօրինաց և յանզգամաց
3 մարդոց. զի ոչ ամենեցուն են հաւատք։ Այլ հա-
ւատարիմ է Տէր, որ և հաստատեսցէ զձեզ և
4 պահեսցէ ի չարէ անտի։ Վստահ եմք ի ձեզ Տե-
րամբ, թէ զոր պատուիրեցաքն ձեզ, է՛ւ առնէք
5 է՛ւ առնիցէք։ Այլ Տէր ուղղեսցէ զսիրտս ձեր ի
սէրն Աստուծոյ և ի համբերութիւնն Քրիստոսի։
6 Պատուիրեմ ձեզ, եղբարք, յանուն Տեառն մե-
րոյ Յիսուսի Քրիստոսի խորշել ձեզ յամենայն
եղբօրէ որ ատահական գնայցէն, և ոչ ըստ ա-
7 ւանդութեանն զոր ընկալարուք ի մէնջ։ Զի դուք
ինքնին գիտէք թէ ո՛րպէս պարտ է ձեզ նմանիլ
8 մեզ. զի ոչ երբեք ատահակեցաք առ ձեզ, եւ ոչ
ձրի զուրուք հաց կերաք, այլ ջանիւ և վաստա-
կով գցայգ և գցերեկ գործէաք վասն չծանրանա-
9 լոյ ումեք ի ձէնջ. Ոչ եթէ չունէաք իշխանութիւն,
այլ զի զանձինս օրինակ արասցուք ձեզ՝ նմանողս
10 լինել մեզ։ Քանզի մինչ առ ձեզն իակ էաք, զայս
պատուիրէաք ձեզ, թէ Որ ոչն կամիցի գործել, և
11 կերիցէ մի՛։ Արդ լսեմք զոմանց ի ձէնջ թէ ատա-

հակութեամբ գնան, գործ ինչ ոչ գործեն, այլ
12 *յուսացեալ հետաքրքիր շրջին։ Այնպիսեացն պատուէր տամք, և աղաչեմք ի Տէր Յիսուս Քրիստոս,*
զի հանդարտութեամբ գործեսցեն և զիւրեանց
13 *հաց կերիցեն։ Այլ դուք, եղբարք, մի՛ ձանձրա-*
14 *նայք զբարիս գործել։ Ապա եթէ ոչ ոք հնազան-*
դեսցի բանիս մերում թղթովդ այդուիկ, դուք
նշանակեսջիք զնա, և մի՛ խառնակեսջիք ընդ նմա,
15 *զի պատկառեսցէ։ Բայց մի՛ իբրեւ զթշնամի հա-*
16 *մարեսջիք, այլ խրատեսջիք իբրեւ զեղբայր։ Եւ*
ինքն Տէր խաղաղութեան տացէ ձեզ խաղաղու-
թիւն յամենայն ժամ յամենայն իրս. Տէր ընդ
17 *ամենեսին ընդ ձեզ։ Ողջոյնս իմոյ ձեռին Պաւղոսի*
է, որ է նշանակ յամենայն թուղթս. այսպէս
18 *գրեմ։ Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի*
ընդ ամենեսին ձեզ։

Ա՟ ԹԻՒՂԹԻ ԵՐԿՐԴԻ՝ ԴԷՊՅ՟ ՀԱՆԻՆԿ։

Ա. ՏԻՄՈԹԷՈՍ

ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա

1 Ակ. ՊԱՒՂՈՍ, առաքեալ Յիսուսի Քրիստոսի
ըստ հրամանի փրկչին մերոյ Աստուծոյ և Քրիստո-
2 սի Յիսուսի յուսոյն մերոյ. Տիմոթեոսի, որդւոյ սի-
րելւոյ հաւատովք, շնորհք, ողորմութիւն, խա-
ղաղութիւն յԱստուծոյ Հօրէ և ի Տեառնէ մերմէ
Յիսուսէ Քրիստոսէ:
3 Որպէս աղաչեցի զքեզ կալ յԵփեսոս, մինչ եր-
թայի ի Մակեդոնիա, զի պատուիրեր տացես ոմանց
4 չինել օտարուսմունս, եւ չհայել յառասպելս և
ի տոհմութիւս անչափս. որ մանաւանդ խնդիրս
յուզեն, և ոչ [1]պաշտաւնութիւն Աստուծոյ հաւա-
5 տովք: Քանզի գլուխ պատուիրանին սէր է, ի
սուրբ սրտէ և ի մտաց բարեաց և յանկեղծաւոր
6 հաւատոց. Յորոց ոմանք վրիպեցան՝ խոտորեալք
7 յունայնութիւն բանից. կամին լինել վարդապետք
օրինաց, ինքեանք ոչ իմանան զինչ խօսին, և ոչ
8 վասն որոց պնդեալն են: Գիտեմք եթէ բարւոք են
9 օրէնք, եթէ ոք զնոսա օրինաւք կրեսցէ: Բայց զայս
գիտասցէ, զի ի վերայ արդարոց օրէնք ոչ կան,

---

[1]Ոմանք, զչինութիւն

այլ ի վերայ անօրինաց և անհնազանդից, ամ-
պարշտաց և մեղաւորաց, անարբոց և պղծոց, զհայր
10 և զմայր [1]անարգողաց, մարդասպանաց, պոռնկաց,
արուագիտաց, մարդեղուզաց, ստոց, ստերդմանց,
և եթէ այլ ինչ իցէ հակառակ ողջամիտ վարդա-
11 պետութեանն, Որ ըստ աւետարանի փառաց երա-
նելոյն Աստուծոյ է, որում եղէ ես հաւատա-
րիմ։ Վ.Ջ
12 Շնորհ ունիմ այնմիկ որ զօրացոյցն զիս, [2]ի Քրիս-
տոս Յիսուս ի Տէր մեր՝, զի հաւատարիմ համա-
13 րեցաւ կարգել ի սպասաւորութիւն. Որ յառաջա-
գոյն հայհոյիչն էի և հալածիչ և թշնամանիչ, այլ
գտի ողորմութիւն, զի զայն յանգիտութեան և
14 յանհաւանութեան գործէի. Եւ առաւել եղեն
շնորհք Տեառն մերոյ հաւատովքն և սիրով որ ի
15 Քրիստոս Յիսուս։ Հաւատարիմ է բանս և ամե-
նայն ընդունելութեան արժանի է, զի Քրիստոս
Յիսուս եկն յաշխարհս փրկել զմեղաւորս որոց
16 գլուխն ես եմ։ Այլ վասն այնորիկ գտի ողորմու-
թիւն, զի նախ յիս եցոյց Յիսուս Քրիստոս զամե-
նայն երկայնմտութիւն յօրինակ այնոցիկ որ հա-
17 ւատալոցն իցեն ի նա ի կեանսն յաւիտենից։ Այլ
թագաւորին յաւիտենից, անեղծի և աներեւու-
թի, [3]միոյն Աստուծոյ՝, փառք և պատիւ յաւի-
տեանս յաւիտենից։ Ամէն
18 Զայս պատուիրան աւանդեմ քեզ, որդեակ իմ

---

[1] Յոյն., հարկանողաց

[2] Յոյն., Քրիստոսի Յիսուսի Տեառն մերում

[3] Որդ., միայնոյ իմաստնոյն Աստուծոյ

Տիմոթէոս, ըստ կանխելոց ի քեզ մարգարէու-
թեանցն, զի գու զինուորիցիս նոքօք զգեղեցիկ
19 զինուորութիւնն. Ունիցիս հաւատս սրբովք միօք,
զոր ոմանք մերժեալ յանձանց իւրեանց՝ նաւակո-
20 ծեցան ի հաւատսն. Որոց առակի են Հիմենոս և Ա-
ղեքսանդրոս, զորս մատնեցի Սատանայի, զի խրա-
տեացին չհայհոյել:

ԳԼ. Բ

1 Եւ արդ աղաչեմ նախ քան զամենայն առնել
աղօթս, խնդրուածս, պաղատանս, գոհութիւնս
2 վասն ամենայն մարդկան. [1]Մանաւանդ վասն թա-
գաւորաց և ամենայն իշխանաց, զի խաղաղու-
թեամբ և հանդարտութեամբ վարեսցուք զկեանս
մեր ամենայն աստուածպաշտութեամբ և սրբու-
3 թեամբ: Զի այն է բարի և ընդունելի առաջի
4 փրկչին մերոյ Աստուծոյ, Որ զամենայն մարդիկ
կամի զի կեցցեն և ի գիտութիւն ճշմարտութեան
5 եկեսցեն: Զի մի է Աստուած, և մի միջնորդ Ա-
6 տուծոյ և մարդկան, մարդն Յիսուս Քրիստոս, Որ
ետ զանձն փրկանս ընդ ամենեցուն՝ վկայութիւն
7 ժամանակաց իւրոց. Ցոր եդայ ես քարոզ և ա-
ռաքեալ, (ճշմարիտ ասեմ [2]ի Քրիստոս և ոչ
ստեմ,) [1]եղէ վարդապետ հեթանոսաց հաւատով
և ճշմարտութեամբ:

8 Ադ. կամիմ զի արք կայցեն յաղօթս յամենայն
տեղիս, բառնայցեն զսուրբ ձեռս ի վեր առանց
9 բարկութեան և երկմտութեան: Նոյնպէս և կա-

---

[1] ի ցոն պոլոե [2] ցոմանս պոլոե

նայք ի զարդ խոնարհութեան սկնածութեամբ և
գգաստութեամբ զարդարել զանձինս, մի՛ ի հիւս
ակեմանս ընդելուզեալս մարգարտով, կամ ի հան.
10 դերձս պաճուճեալս, Այլ, որպէս վայելէ կանանց
զաստուածպաշտութիւն յանձն առելոց, գոր.
11 ծովք բարութեան: Կին մարդ [1]ցածութեամբ ուս.
12 ցի, ամենայն հնազանդութեամբ: Այլ ուսուց.
նել կնոջ մարդոյ ոչ հրամայեմ, և ոչ ճոխաբան
13 լինել քան զայր մարդ, այլ ի լռութեան կալ: Զի
14 Ադամ նախ ստեղծաւ և ապա Եւա: Եւ Ադամ
ոչ պատրեցաւ, այլ կինն պատրեցաւ և յանցեաւ,
15 Բայց կեցցէ վասն որդեծնութեանն, եթէ կայցեն
ի հաւատս և ի սէր և ի սրբութիւն պարկեշտու.
թեամբ:

ԳԼ. Գ

1 Հաւատարիմ է բանս, եթէ ոք եպիսկոպոսու.
2 թեան ցանկայ, բարւոյ գործոյ ցանկայ: Պարտ
է եպիսկոպոսին անարատ լինել, միոյ կնոջ այր,
3 [2]հեզ, ցած, պարկեշտ, հիւրասէր, ուսուցիչ. Մի՛
թշնամանող, [3]մի՛ հարկանող՝, այլ հանդարտ. մի՛
4 կռուող, մի՛ արծաթասէր. Զի իւրում տանն իսկ
բարւոք վերակացու լիեալ իցէ, որդեակս ունիցի
որ ի հնազանդութեան կայցեն ամենայն պարկեշ.
5 տութեամբ: (Ապա եթէ ոք իւրում տանն վերա.
կացու չգիտիցէ լինել, զիա՞րդ եկեղեցւոյ Աստուծոյ
6 խնամակալ լիցի:) Մի՛ մեծաղաղուն, զի մի՛

---

[1]Ց-ՆՆ, լռութեամբ [2]Ց-ՆՆ, արթուն, խոհ, զգաստ
[3]Ո՛ՀԱԽ, մի՛ հարկանող, մի՛ զջլաքաղ

հպարտացեալ ի դատաստանն Սատանայի անկա-
7 նիցի: Այլ պարտ է նմա վկայութիւն բարի և յար-
տաքնոցն ունել. զի մի՛ ի նախատինս անկանիցի և
յորոգայթս Սատանայի:
8 Նոյնպէս և զսարկաւագունս պարկեշտս. մի՛ երկ-
9 բանս, մի՛ գինեսէրս, մի՛ զօշաքաղս. Այլ ունիցին
10 զխորհուրդ հաւատոցն սուրբ մտօք: Ինքեանք նախ
փորձեսցին, և ապա ի պաշտօնն մատիցեն, զի
11 անարատք իցեն: Նոյնպէս և կանայք նոցա պար-
կեշտք. մի՛ չարախօսք, [1]հեգք, հաւատարիմք յա-
12 մենայնի: Սարկաւագք լինիցին միոյ կնոջ արք,
որոց որդւոց իւրեանց բարւոք վերակացու լինել
13 իցեն և տանց իւրեանց. Զի որ բարւոքն պաշտի-
ցեն՝ աստիճան բարի անձանց իւրեանց շահին, և
բազում համարձակութիւն ի հաւատսն որ ի Քրիս-
տոս Ցիսուս: ՎՋ
14 Զայս գրեմ առ քեզ, զի ակն ունիմ ի մօտոյ
15 գալ. Ապա թէ յամեցից, զի գիտասցես թէ ո՛ր-
պէս պարտ իցէ քեզ ի տան Աստուծոյ շրջել, որ
է եկեղեցի Աստուծոյ կենդանւոյ, սիւն և հաստա-
տութիւն ճշմարտութեան: Եւ յայտնի իսկ մեծ է
խորհուրդն աստուածպաշտութեան, [2]որ երեւեցաւ
մարմնով, արդարացաւ Հոգւով, յայտնեցաւ հրեշ-
տակաց, քարոզեցաւ ի հեթանոսս, հաւատարիմ
եղեւ յաշխարհի և վերացաւ փառօք:

ԳԼ. Դ

1 ԱՋ. Այլ Հոգին Սուրբ յայտնապէս ասէ թէ ի

---

[1]Ցանձն, արթուն, ի՛մ, զգաստ [2]Որ՝ան֊, Աստուած

ժամանակս յետինս քակեացին ոմանք ի հաւատոցն,
և հայեցին յոյսս մոլորութեան և ի վարդապե-
2 տութիւնս դիւաց, կեղծաւորութեամբ ատելանք,
3 խարեալք իւրեանց խղճիւն մատաց. Որ արգելուցուն
ջամբանանալոյ, և մեկնիցեն ի կերակրոց զոր Ա-
ստուած հաստատեաց ի վայելել ¹հաւատացելոց,
4 և ոչք հասեալ իցեն ի ճշմարտութեանն վերայ։ Զի
ամենայն արարածք Աստուծոյ բարի են, և չիք ինչ
խոտան. մանաւանդ որ գոհութեամբ ընդունիցին.
5 Զի սրբի բանիւն Աստուծոյ և աղօթիւք։ (6) Զայս
խրատ տուեալ եղբարց՝ բարւոք պաշտօնեայ լինի-
ցիս Քրիստոսի Յիսուսի, անանիցիս բանիւք հաւա-
տոց և բարւոք վարդապետութեամբն զորոյ դՀետ
7 իսկ եղեր։ Այլ ի պիղծ բանից և յառասպելաց
պառաւանց հրաժարեաջիր, բայց կրթեա զանձն
8 քո յաստուածպաշտութիւն. Զի մարմնոյ կրթու-
թիւն առ սակաւ ինչ օգտակար է, իսկ աստուած-
պաշտութիւն առ ամենայն ինչ օգտակար է, և
զաւետիս կենաց ունի զարդիս և ջՀանդերձելոցն։
9 Հաւատարիմ է բանս և ամենայն ընդունելու-
10 թեան արժանի։ Զի ի սոյն իսկ վաստակեմք և նա-
խատինս յանձն առնումք, զի յուսացեալ եմք
յԱստուած կենդանի, որ է փրկիչ ամենայն մարդ-
կան՝, մանաւանդ հաւատացելոց։
11 ԲԿ. Պատուէր տուչիր զայդ և ուսուցանիջիր։
12 Զի մի՛ ոք զքո մանկութիւնդ արհամարհիցէ. այլ
օրինակ լինիջիր հաւատացելոց բանիւք, գնացիւք,
13 սիրով, հաւատովք, սրբութեամբ։ Մինչեւ գամ

---

¹Բ—ղ—ֆ, գոհութեամբ հաւատացելոց

ես, միտ դիր ընթերցուածոց, մխիթարութեան,
14 վարդապետութեան։ Մի՛ անփոյթ առներ զշնորհացդ որ ի քեզ են, որ տուաւ քեզ մարգարէութեամբ ի ձեռնադրութենէ երիցութեան։ Ցայդ
15 խորհեաց և ի դոյն կանխեաջիր, զի քո յառաջադիմութիւնդ ամենեցուն յայտնի լիցի։ Զգոյշ լինիջիր անձին և վարդապետութեանդ և ի դմին
16 յամեաջիր. զայդ եթէ առնիցես, և՛ զանձն ապրեցուսցես, և՛ զայնոսիկ որ քեզն լսիցեն։

ԳԼ. Ե

1 Զծերն մի՛ պատուհասիցես, այլ մխիթարեսջիր իբրեւ զհայր. զերիտասարդս՝ իբրեւ զեղբարս,
2 Զպատաւուն՝ իբրեւ զմարս, զմանկամարդս՝ իբրեւ
3 զքոյս ամենայն սրբութեամբ։ Զայրիս պատուեա
4 որ ատոյգ այրիքն իցեն։ Ապա թէ ոք այրի որդիս և թոռունս ունիցի, ուսանիցին նախ իւրեանց տանց բարի առնել, և զփոխարէնն հատուցանել ծնողացն. զի այն է բարի և ընդունելի առաջի
5 Աստուծոյ։ Իսկ որ ճշմարտիւ այրին իցէ և մենացեալ, [1]յուսացեալ յԱստուած, և [2]կանխեալ
6 յաղօթս և ի խնդրուածս զցայգ և զցերեկ. Իսկ
7 գիրգ այրին կենդանւոյն մեռեալ է։ Զայս պատ-
8 ուիրեա զի անարատք իցեն։ Իսկ եթէ ոք իւրոց և մանաւանդ ընտանեաց խնամ ոչ տանիցի, ի հաւատոցն ուրացեալ է, և չար եւս քան զանհաւատն է։ Այրի ընդ այրիս անուանեսցի որ չիցէ
9 պակաս ի վաթսնամեայից, միոյ առն կին լեեալ,

---

[1]Ց-ՆՆ, յուսայ [2]Ց-ՆՆ, կանխէ

10 Եւ ի գործս բարիս վկայեալ. եթէ մանկունս սնու-
ցեալ իցէ, եթէ պնիւրս ընկալեալ իցէ, եթէ
զսրբոց զոտս լուացեալ իցէ, եթէ նեղելոց բաւա-
կան լիեալ իցէ, եթէ զամենայն գործոց բարեաց
11 գնեալ երթեալ իցէ: Ա՛յլ ի մանկամարդաց այր-
եացն հրաժարեա, զի յորժամ խայտան զքրիստո-
12 սիւ, ամուսնանալ կամին. Իսկ զդատաստանս ըն-
դունին, զի զառաջինն հաւատոյն արհամարհեցին:
13 Միանգամայն և դատարկաբանքս ուսանին, շրջել
տանէ ի տուն. և ոչ միայն դատարկք, այլ և
փսաքուսք և հետաքրքիրք. և խօսին որ ինչ ոչ է
14 պիտոյ: Կամիմ զմանկամարդացդ ամուսնանալ,
որդիս ծնանիլ, տնարարս լինել, և մի՛ ինչ պատ-
ճառս տալ հակառակորդին ի հայհոյութեան ա-
15 ղագս: Զի արդէն իսկ ոմանք խոտորեցան զկնի
16 Սատանայի: Եթէ ոք հաւատացեալ այրիս ունիցի,
բաւական լիցի նոցա, և մի՛ ծանրասցի եկեղեցւոյն,
զի ճշմարիտ այրեացն բաւական լինիցի:
17 ԲԴ Որ բարւոք վերակացու լինին երիցունք՝
կրկին պատուոյ արժանի եղիցին, մանաւանդ որ
18 աշխատիցին բանիւ և վարդապետութեամբ: Գան-
զի ասէ գիր, Մի՛ կապեացես զցուռկ եզին կա-
19 լոտոյ, և՝ Արժանի է մշակն վարձու իւրոյ: Զե-
րիցուէ չարախօսութիւն մի՛ ընդունիցիս, բայց եթէ
20 երկուք և երիւք վկայիւք: Իսկ որ մեղանչեն՝ ա-
ռաջի ամենեցուն յանդիմանեա, զի և այլքն ե-
21 կիցեն: Վկայութիւն դնեմ առաջի Աստուծոյ և
Յիսուսի Քրիստոսի և ընտրելոց հրեշտակաց, զի
զայդ պահեացես առանց մտաւհաճութեան, մի՛ ինչ
22 առնել աչառանօք: Զեռս վաղվաղակի յուրուք

վերայ մի՛ դնիցես, և մի՛ կցորդ լինիցիս մեղաց օտարաց. զանձն քո սուրբ պահեսջիր։

23 Ա՛յսուհետեւ մի՛ ջուր եւեթ ըմպիցես, այլ սակաւիկ մի և գինի խառնեսջիր վասն ստամոքսի և ասէպ հիւանդութեանց։

24 Են մարդք որոց մեղքն յայտնի են, և յառաջագոյն հասեալ ի դատաստան, և են՝ որոց զկնի երթան։ 25 Նոյնպէս և բարի գործքն յայտնի են. և որ այլազգ եւս ինչ իցեն՝ թաքչել ոչ կարեն։

ԳԼ. Ջ

1 Ո՛ր միանգամ ընդ լծով ծառայութեան իցեն, զիւրաքանչիւր տեարս [1]պատուի արժանի համարեսցին, զի մի՛ անունն Աստուծոյ և վարդապետութիւնն հայհոյեսցի։ 2 Իսկ որ հաւատացեալ տեարս ունիցին, մի՛ արհամարհեսցեն զի եղբարք են, այլ առաւել ծառայեսցեն, զի հաւատացեալքն են և սիրունք, որք զբարերարութիւնն յանձին ունիցին. զայս ուսուցանիջիր և մխիթարեսջիր։ 3 Իսկ եթէ ոք այլազգ ինչ ուսուցանիցէ, և ոչ անսայցէ ողջմտութեան բանից Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և բուն աստուածպաշտութեան վարդապետութեանն, 4 Ա՛նպիտին հպարտացեալ է և ոչինչ ոչ գիտէ, այլ տապի ի խնդիրս և ի բանս հակառակութեան. ուստի լինին նախանձ, հեռ, 5 հայհոյութիւնք, կարծիք չարեաց, խարդախութիւնք ապականելոց մտաց մարդկան և օտարացելոց ի ճշմարտութենէ անտի, որք շահավաճառ

---

[1] Յոյն, ամենայն պատուոյ

համարին զաստուածպաշտութիւնն. բայց դու մեր-
ժեալքիր յայնպիսեաց անտի։
6 ԲՋ. Ա՛յլ շահավաճառ մեծ աստուածպաշտու-
7 թիւն է բաւականութեամբ հանդերձ։ Զի ոչ
բերաք ինչ յաշխարհս, [1]և ոչ՝ տանել ինչ կա-
8 րասցուք։ Ա՛յլ ունիմք կերակուր և հանդերձս, և
9 այնու շատասցուք։ Իսկ որք կամինն մեծանալ
անկանին ի փորձութիւն և յորոգայթ և ի բազում
ցանկութիւնս անմիտս և վնասակարս, որք ընկղմեն
10 զմարդիկ ի սատակումն և ի կորուստ։ Զի արմատ
ամենայն չարեաց արծաթասիրութիւն է. որում ո-
մանք ցանկացեալ՝ վրիպեցան ի հաւատոցն, և զան-
ձինս սրկին ընդ բազում ցաւովք։
11 Ա՛յլ դու, ո՛վ մարդ Աստուծոյ, փախիր յայն-
ցանէ, և երթ վճեռ արդարութեան, աստուած-
պաշտութեան, վհատութեան, զսիրոյ, վհամբերու-
12 թեան, վհեզութեան. Եւ մարտիր զբարւոք մարտն
հաւատոց, և բուռն հար զկենացն յաւիտենա-
կանաց յոր կոչեցարն, և դաւանեցեր զբարւոք
13 դաւանութիւն առաջի բազում վկայից։ Պատ-
ուիրեմ քեզ առաջի Աստուծոյ որ կենդանի առ-
նէ զամենայն, և Յիսուսի Քրիստոսի որ վկայեաց
առաջի Պոնտացւոյ Պիղատոսի զբարւոք դաւանու-
14 թիւնն, Պահել քեզ զպատուիրանն ամբիծ, ա-
նարատ, մինչև ի յայտնութիւն Տեառն մերոյ Յի-
15 սուսի Քրիստոսի. Զոր ի իւր ժամանակս ցուցցէ
Երանելին և միայն Հզօր, Թագաւոր թագաւորաց
16 և Տէր տերանց. Որ միայն ունի զանմահութիւն

---

[1]Ոմանք, և յայտ իսկ է թէ և ոչ

բնակեալ ի լոյս անմատոյց. զոր ոչ ոք եհես ի մարդկանէ և ոչ տեսանել կարող է, որում պատիւ և զօրութիւն յաւիտեանս: Ամէն:

17 *Մեծատանց որ են յայսմ աշխարհի՝ պատուէր տալջիր մի՛ հպարտանալ և մի՛ յուսալ ի մեծութիւն անոտի, այլ [1]յԱստուածն որ տայ մեզ զա-*
18 *մենայն առատապէս ի վայելել, զբարիս գործել, մեծանալ գործովք բարութեան, առատս, [2]սի-*
19 *բուն, հաղորդս լինել. գանձել անձանց հիմն բարի ի հանդերձեալն, զի բուռն հարկանիցեն [3]զճշմարիտ կենացն՝:*

20 *Ով Տիմոթէէ, պահեա զաւանդն՝ խոտորեալ [4]ի պղծոց և ի նորաձայն բանից և ի հակառակութե-*
21 *նէ և ի մոլարանուն գիտութենէ՝, զոր ոմանց յանձն առեալ՝ վրիպեցան ի հաւատոց անտի: Շնորհք ընդ քեզ:[5]*

Ա– Տիմոթէոս առաջին թուղթ գրեցաւ ի Լաոդիկիա, որ է մայր քաղաք Պհռիգիոյ:

---

[1]Որոշ, յԱստուածն կենդանի [2]ի յունէն պոլոե
[3]Որոշ, զկենացն յաւիտենականաց
[4]Յունն, ի պղծոց բանից անոտեաց (Բ Տիմ. Բ. 16) և հակառակութեանց մոլարանուն գիտութեան
[5]Որոշ յունէն, Ամէն:

Ա. ՏԻՄՈԹԷՈՍ

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա

1 ԳԿ. ՊԱՒՂՈՍ, առաքեալ Յիսուսի Քրիստոսի
կամօքն Աստուծոյ, ըստ աւետեաց կենացն որ ի
2 Քրիստոս Յիսուս, Տիմոթեոսի որդւոյ սիրելւոյ
շնորհք, ողորմութիւն և խաղաղութիւն յԱստու-
ծոյ Հօրէ և ի Քրիստոսէ Յիսուսէ Տեառնէ մերմէ:
3 Շնորհ ունիմ Աստուծոյ զոր պաշտեմն ի նախ-
նեաց մօաք սրբովք, իբրեւ զի անպակաս ունիմ
զքէն յիշատակ յաղօթս իմ գիշեր և գցերեկ.
4 ցանկացեալ եմ տեսանել զքեզ՝ յիշատակեալ
5 զարտասուսն քո, զի լցայց ուրախութեամբ. Զմտաւ
ածեալ զանխիղճ հաւատսն որ են ի քեզ, որ յա-
ռաջագոյն բնակեցաւ ի հանոյ քումդ Լաւոդեայ, և
ի մօր քումդ Եւնիկեայ. Համոզեալ եմ թէ և
6 ի քեզ է: Վասն որոյ յիշեցուցանեմ քեզ զար-
ծարծել զշնորհսն Աստուծոյ որ են ի քեզ ի ձեռ-
7 նադրութենէ իմմէ: Զի ոչ ետ մեզ Աստուած հո-
գի վհատութեան, այլ զօրութեան և սիրոյ և
8 զգաստութեան: Մի՛ այսուհետև ամօթ համարիր
զիս վկայութիւն Տեառն մերոյ, և մի՛ զիս զկա-
պեալ նորա. այլ կցորդ լեր չարչարանաց աւե-
9 տարանին ըստ զօրութեանն Աստուծոյ. Որ փրկեացն

զմեզ և կոչեաց ի կոչումն սուրբ, ոչ ըստ գործոց մերոց, այլ ըստ իւրում յառաջադրութեանն և շնորհաց, որ տուաւ մեզ ի Քրիստոս Յիսուս յառաջ քան զժամանակս յաւիտենից։

10 ԳԴ. Բայց յայտնեցաւ այժմիկ յերեւել Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի. որ խափանեաց զմահ և լուսաւոր արար զկեանս և զանեղծութիւն ի ձեռն
11 աւետարանին. Որոյ եդայ ես քարոզ և առաքեալ
12 և վարդապետ հեթանոսաց։ Վասն որոյ և զայս չարչարանս կրեմ, այլ ոչինչ ամօթ համարիմ, քանզի գիտեմ յո՛ հաւատացեալ եմ, և հաստատեալ եմ թէ կարող է զաւանդն իմ պահել
13 յօրն յայն։ Ունիցիս օրինակ ողջմտութեան բանից զոր յինէն լուար, հաւատովք և սիրով որ
14 ի Քրիստոս Յիսուս։ Զքարւոք աւանդն պահեսջիր ի ձեռն Հոգւոյն Սրբոյ ի մեզ բնակելոյ։

15 Զայս գիտասջիր զի մեկնեցան ի յինէ ամենեքին որ էին յԱսիա, որոց սակի են Փիգեղոս և Հերմո-
16 գենէս։ Տացէ Աստուած ողորմութիւն տանն Ընե-սիփորայ, զի բազում անգամ հանգոյց զիս, և
17 զկապանս իմ ոչ ամօթ համարեցաւ. Այլ իբրեւ եկն ի Հռոմ, պնդագոյնս խնդրեաց զիս և եգիտ.
18 (Տացէ նմա Տէր ողորմութիւն գտանել ի Տեառնէ յաւուրն յայնմիկ.) և որչափ ինչ միանգամ յԵփե-սոս սպաս կալաւ [1]ինձ՝ զայն դու ինքնին քաջ գիտես։

ԳԼ. Բ

1 Այլ դու, որդեակ իմ, զօրացիր շնորհօքն որ ի

---

[1]ի բազմս պակաք

2 Քրիստոս Յիսուս։ Եւ զոր լուար յինէն բազում
վկայիւք՝ զայն աւանդեացես Հաւատարիմ մարդոց,
որք բաւական իցեն և զայլս ուսուցանել։
3 ԳԶ. Վշտակից լեր իբրեւ զբարւոք զինուոր Քրիս.
4 տոսի Յիսուսի։ Ոչ ոք զինուորեալ աստէն ընդ
կեանս աշխարհիս պատահի, եթէ զօրավարին հա.
5 ճոյ լինիցի։ Եւ եթէ մարտիկ ոք իցէ, ոչ պսակի,
6 եթէ ոչ բաւ օրինին մարտիցէ։ Եւ հողագործին
7 աշխատելոյ պարտ է նախ ի պտղոյն վայելել։ Իմա
զինչ ասեմն. տացէ քեզ Տէր իմաստութիւն յա.
8 մենայնի. Յիշեա զՔրիստոս Յիսուս յարուցեալ ի
մեռելոց, ի զաւակէ Դաւթի, բաւ աւետարանիս
9 իմում. Յորում չարչարիմ կապանօք չափ իբրեւ
զչարագործ, այլ բանն Աստուծոյ ոչ եթէ կա.
10 պեալ իցէ։ Վասն այնորիկ ամենայնի համբերեմ
վասն ընտրելոցն, զի և նոքա փրկութեանն հաս.
նիցեն որ ի Քրիստոս Յիսուս [1]երկնաւոր փառօք
11 հանդերձ։ Հաւատարիմ է բանս. զի եթէ ընդ նմա
12 մեռաք, ընդ նմին և կեցցուք. Եթէ համբերեմք,
ընդ նմին և թագաւորեացուք. և եթէ ուրանամք,
13 և նա ուրանայ զմեզ. Եւ եթէ չհաւատամք, նա
հաւատարիմ մնայ, ուրանալ զանձն իւր ոչ կարէ։
14 ԿԻՐ. Զայս յուշ արասջիր՝ վկայութիւն եդեալ
առաջի [2]Աստուծոյ, մի՛ բանակռիւ լինել յոչինչ
15 պէտս ի կործանումն լսողաց։ Փութասջիր զանձն
քո ընտիր կացուցանել առաջի Աստուծոյ, մշակ
առանց ամօթոյ, ուղիղ համառօտել զբանն ճշմար.
16 տութեան։ Այլ ի պղծոց և ի սնոտի խօսից մեր.

---

[1] Յ-ՆՆ, յատիճենական [2] Ո՛ՀԱՆ, Տէրառն

ժեսջիը , զի առաւել յառաջ գայցեն յամպարշտութիւնս . Եւ բանք նոցա իբրեւ գքաղցկեղ ճարակ գտանեն . որոց սակն են Հիմենոս և Փիղետոս . Որք վրիպեցան ի ճշմարտութենէ , և ասեն եթէ յարութիւն [1]ժեռելոց արդէն իակ եղեալ է , և կործանեն զհաւատս ոմանց : Այլ Հաստատուն հիմն Աստուծոյ կայ և ունի զկնիքս զայս , թէ Ծանեաւ Տէր զայնոսիկ որ իւրն են . և՝ Ի բաց լիցի յանիրաւութենէ ամենայն որ անուանէ զանուն [2]Տեառն : Այլ ի տան մեծի ոչ միայն են անօթք ոսկեղէնք և արծաթեղէնք , այլ և փայտեղէնք և խեցեղէնք . են որ ի պատուի են և են որ յանարգութեան : Եթէ ոք սրբեսցէ զանձն իւր յայնպիսեաց անտի , եղիցի անօթ պատուական՝ սրբեալ և պիտանի Տեառն [1]իւրում՝ յամենայն գործս բարութեան պատրաստեալ : Այլ յերիտասարդական ցանկութեանց փախիր , և երթ զհետ արդարութեան , զհաւատոց , զսիրոյ , զխաղաղութեան , [1]զսրբութեան , ընդ այնոսիկ որ կարդան զանուն Տեառն սուրբ սրտիւք : Այլ ի յիմար և յանխրատ խնդրոց հրաժարեա , գիտասջիր թէ ածանին կռիւք . Բայց ծառայի Տեառն ոչ է պարտ կռուել , այլ հեզ լինել առ ամենեսեան , ուսուցիչ , անդրդուական . Հանդարտութեամբ խրատել զհակառակողսն , թերեւս տացէ նոցա Աստուած ապաշխարութիւն ի գիտութիւն ճշմարտութեան . Եւ սթափեսցին յորոգայթից Սատանայի՝ որսացեալք ի նմանէ ի նորա կամն :

---

[1] Ի ց-ն-ն պ-ի-ե [2] Ո՛ն+ , Քրիստոսի

ԳԼ. Գ

1 ԿԻՐ. Զայս գիտասջիր եթէ յաւուրս յետինս ե.
2 կեացեն ժամանակք չարք. Զի եղիցին մարդիկ անձ.
նասէրք, արծաթասէրք, հպարտք, ամբարտա.
ւանք, հայհոյիչք, անհնազանդք ծնողաց, անշնորհք,
3 անսուրբք, Աննուէրք, անգութք, բանսարկուք,
4 անժոյժք, վէնք, անբարեսէրք, Մատնիչք, յան.
դգունք, ամբարհաւածք, ցանկասէրք մանաւանդ
5 քան աստուածասէրք. Որ ունիցին զկերպարանս
աստուածպաշտութեան, և ի զօրութենէ անտի
նորա ուրացեալ իցեն. և խորշասջիր ի նոցանէ։
6 Քանզի ի նոցանէ են որ մտանեն տանէ ի տուն, և
գերեն զկանայս շեղջակուտեալս մեղօք՝ վարեալս ի
7 պէսպէս ցանկութիւնս, Որ յամենայն ժամ ուսա.
նին, և երբեք ի գիտութիւն ճշմարտութեան ոչ
8 հասանեն։ Այլ որպէս Յաննէս և Յամբրէս հա.
կառակ կացին Մովսիսի, նոյնպէս և սոքա հակա.
ռակ կան ճշմարտութեանն. մարդք ապականեալք
9 մտօք՝ անպիտանք ի հաւատս։ Այլ ոչ երբեք գոյ.
ցեն յառաջ ի լաւ անդր. քանզի անմտութիւն
սոցա յայտնի լիցի ամենեցուն, որպէս և նոցայն
10 իսկ եղեւ։ Այլ դու զկնի եկիր վարդապետու.
թեան իմոյ, առաջնորդութեան, յօժարութեան,
հաւատոց, երկայնմտութեան, սիրոյ, համբերու.
11 թեան, Հալածանաց, չարչարանաց, որպիսիք եղեն
ինձ յԱնտիոք և յԻկոնիոն և ի Լիւստրա, որպի.
սի՛ հալածանաց համբերի, և յամենայնէ փրկեաց
12 զիս Տէր։ Եւ ամենեքեան որ կամիցին աստուած.
պաշտութեամբ կեալ ի Քրիստոս Յիսուս՝ ի հալա.

13 ծանս կացցեն՝ Ա՛լլ մարդք չարք և կախարդք
յառաջ եկեսցեն ի չար անդր՝ մոլորեալք և մոլո-
14 բեցուցանիցեն՝ Ա՛լլ դու՝ հաստատուն կաց յոր
ուսարդ և հաւատարիմ եղեր՝ գիտես ուսեալ ու-
15 սար՝ Զի ի մանկութենէ զգիրս սուրբս գիտես՝ որ
կարող են իմաստուն առնել զքեզ ի փրկութիւն
ի ձեռն հաւատոցն որ ի Քրիստոս Յիսուս՝
16 ԴՇ՝ Ամենայն գիրք աստուածաշունչք և օգ-
տակարք ի վարդապետութիւն են և ի յանդիման-
նութիւն և յուղղութիւն և ի խրատ արդարու-
17 թեան՝ Զի կատարեալ իցէ մարդն Աստուծոյ յա-
մենայն գործս բարութեան հաստատեալ՝

ԳԼ՝ Դ

1 Զայս վկայութիւն դնեմ առաջի Աստուծոյ և
Յիսուսի Քրիստոսի՝ որ դատելոց է զկենդանիս և
զմեռեալս ի յայտնութեան իւրում և յարքայու-
2 թեան՝ [1]Եւ դու՝ քարոզեա զբանն՝ հաս ի վերայ
ժամու և տարաժամու՝ յանդիմանեա՝ սաստեա՝
մխիթարեա ամենայն երկայնմտութեամբ և վար-
3 դապետութեամբ՝ Քանզի եկեսցէ ժամանակ զի
ողջմտութեան վարդապետութեանն ոչ անասցեն՝
այլ ըստ իւրաքանչիւր ցանկութեանց կուտեսցեն
իւրեանց վարդապետս՝ ըստ մարմնջելոյ լսելեաց
4 իւրեանց՝ Եւ ի ճշմարտութենէ անտի դարձուցա-
5 նիցեն զլսելիս՝ և յառասպելս կործանեսցին՝ Ա՛լլ
դու զուարթ կաց յամենայնի՝ ճգնեաց՝ զգործս
աւետարանչի գործեա՝ զպաշտօնդ քո կատարեալ

---

[1] ի ց-ն՝ պ-ի-ե

6 կալ։ Զի ես այսուհետեւ նուիրեալ եմ, և ժա-
7 մանակ դարձի իմոյ հասեալ կայ։ Զբարւոք պա-
տերազմ պատերազմեցայ, զընթացն կատարեցի,
8 զհաւատսն պահեցի։ Ասյսուհետև կայ ինձ
պսակն արդարութեան պատկն, զոր հատուսցէ ինձ Տէր յա-
ւուր յայնմիկ արդարն Դատաւորն, ոչ միայն ինձ,
այլ և ամենեցունն որ սիրեցին զյայտնութիւն նորա։
9 ՋԵ. Փութասջիր գալ առ իս վաղվաղակի. զի
Դեմաս եթող զիս և սիրեաց զաշխարհ, և գնաց
10 ի Թեսաղոնիկէ. Կրեսկէս՝ ի Գաղիղեա, Տիտոս՝ ի
11 Դաղմատիա. Ղուկաս միայն է ընդ իս։ Զ Մարկոս
առեալ ընդ քեզ ածիցես, զի է ինձ պիտանի ի
12 սպասաւորութիւն։ ԶՏիւքիկոս առաքեցի յԵփե-
13 սոս։ Զփիլոնն [2]թողի ի Տրովադա առ Կարպոսի,
յորժամ գայցես, բերջիր, և զգիրսն, մանաւանդ
14 զմաշտեանսն։ [3]Աղեքսանդրոս բազում չարչարանս
եցոյց ինձ. հատուսցէ նմա Տէր ըստ գործս նորա։
15 Ցորմէ և դու անձնապահ լինիջիր, զի շատ հակա-
16 ռակ եկաց բանից մերոց։ Ցառաջնում ատենին ոչ
ոք ինձ ի թիկունս եկաց, այլ ամենեքին թողին
17 զիս. մի՛ համարեսցի նոցա այն։ Այլ Տէր օգնեաց
ինձ, և զօրացոյց զիս, զի ինեւ քարոզութիւնն
հաստատեսցի, և լուիցեն ամենայն հեթանոսք. և
18 ապրեցայ ես ի բերանոյ առիւծուն։ Փրկեսցէ զիս
Տէր յամենայն գործոց չարաց, և զերծուսցէ զիս
յարքայութիւն իւր որ յերկինս է, որում փառք
յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

---

[1]Ի Ց-ՆՆ, Բ-Լ-Մ՝ ի Գաղատիա, Ա-Մ-Ն՝ ի Գաղիա
[2]Ց-ՆՆ, զոր թողի [2]Ց-ՆՆ, Աղեքսանդրոս դարբին

19 Ողջոյն տալիր Պրիսկեայ և Ակիւղեայ և Ընեսի-
20 փորայ տանն։ Երաստոս ձնաց ի Կորնթոս. զՏրո-
21 փիմոս թողի ի Մելիտոս հիւանդագին։ Փութա-
ջիր յառաջ քան զձմեռն գալ։ Ողջոյն տան քեզ
Եբուղոս և Պուդէս և Ղինոս և Կղաւդիա և եղ-
22 բարք ամենեքեան։ Տէր Ցիսուս Քրիստոս ընդ
ոգւոյդ քումմ։ Շնորհք ընդ քեզ։[1]

Ա֊ Տի֊մո֊թէ֊ոս երկրորդ ի֊գ֊ր, ո֊ր էր եպի֊սկո֊պոս եկեղեցւոյն Եփեսոս֊ացւոց ա֊ռա֊ջին անդրանիկ, էրեց֊ի Հռո֊մէ, յորմէ՛ երկրորդ անգա՛մ եկաց յորինի Գա֊ղա֊տիայ ներկայ Հռո֊մայ։

[1] Ոմանք յաւելուն, Ամէն։

ԱՌ ՏԻՏՈՍ

ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա

1 ԿԻՐ. ՊԱՒՂՈՍ, ծառայ Աստուծոյ և առաքեալ
Յիսուսի Քրիստոսի, ըստ հաւատոց ընտրելոցն Ա-
ստուծոյ, և ի գիտութիւն ճշմարտութեանն որ ընդ
2 աստուածպաշտութեանն է, յուսով կենացն յա-
ւիտենից, զոր խոստացաւ անսուտն Աստուած յա-
3 ռաջ քան զժամանակս յաւիտենից, Բայց յայտ-
նեաց իւրովք ժամանակօք զբանն իւր քարոզու-
թեամբ, որոյ եղէ ես հաւատարիմ ըստ հրամանի
4 Փրկչին մերոյ Աստուծոյ, Տիտոսի որդւոյ սիրելւոյ
ըստ հաւատոց հաւատոց, շնորհք և խաղաղու-
թիւն յԱստուծոյ Հօրէ և [1]ի Քրիստոսէ Յիսուսէ՝
Փրկչէ մերմէ։
5 Վասն այնորիկ եսկ թողի զքեզ ի Կրետէ, զի
որ ինչ միանգամ պակաս էր՝ ուղղեսցես, և կա-
ցուսցես ըստ քաղաքաց երիցունս, որպէս և ես
6 քեզ պատուիրեցի. Եթէ ոք անարատ էցէ, միոյ
կնոջ այր, որդեակս ունիցի հաւատացեալս, և ոչ
յամբաստանութիւն անառակութեան կամ ան-

---

[1] Յոյն. ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ

7 հնազանդս։ Զի պարտ է եպիսկոպոսին անարատ
լինել, որպէս և Աստուծոյ տնտեսի. մի՛ յանդուգն,
մի՛ բարկացող, մի՛ թշնամանող, մի՛ հարկանող,
8 մի՛ զջշաքաղ, Այլ հիւրասէր, բարեսէր, ցած,
9 արդար, սուրբ, ժուժկալ, վերակացու լինել հա-
ւատարիմ բանին վարդապետութեան, զի կարող
իցէ և մխիթարել ողջմտութեամբ վարդապետու-
10 թեանն, և զհակառակորդան կշտամբել։ Քանզի
բազումք են անհնազանդք, զրախօսք և մոտախաբք,
11 մանաւանդ որ ի թլփատութենէ անտի են. Զորս
պարտ է բմբերանել որք զամենայն տունս կործա-
նեն, և ուսուցանեն զոր չէ արժան, վասն զջշա-
քաղութեան։
12 ԴՇ. Ասաց ոմն ի նոցանէ, իւրեանց իսկ մարգա-
րէ, Կրետացիք հանապազասուտք, չարաճճիք, դա-
13 տարկապորտք։ Եւ ստոյգ է վկայութիւնս այս.
վասն որոյ կշտամբեացես զնոսա խստագոյնս, զի
14 առողջասցին ի հաւատս. Եւ մի՛ հայեսցին ի Հրէ-
ական առասպելս, և ի պատուէրս մարդկան զա-
15 ռածելոցն ի ճշմարտութենէ։ Ամենայն ինչ սուրբ
է սրբոց, բայց պղծոցն և անհաւատից ոչ ինչ է
սուրբ, այլ պղծեալ են միտք և խորհուրդք նո-
16 ցա։ Խոստանան գիտել զԱստուած, և գործովք
իւրեանց ուրանան. պիղծք և անհաւանք և յամե-
նայն գործս քարեաց անպիտանք։

ԳԼ. Բ

1 Այլ դու խօսեաց որ ինչ վայելէ ողջամիտ վար-
2 դապետութեանդ. Ծերոց զգաստս լինել, պար-
կեշտս, ցածունս, ողջամիտս ի հաւատս, ի սէր,

3 ի համբերութեան, [1]ի ժուժկալութեան։ Պատա-
ւանոյ նոյնպէս ի զգաստութեան, ի սուրբ վայել-
չութեան, մի՛ բանասիրութ, մի՛ գինեմոլ, այլ
4 բարեխոհատ. Զի զգաստացուսցեն զմանկամարդսն
5 այրասէրս լինել, որդեսէր, ցածունս, սուրբս,
տնարարս, բարեգործս, հնազանդս իւրեանց ա-
րանց. զի մի՛ բանն Աստուծոյ [2]և վարդապետու-
6 թիւնն հայհոյեսցի։ Զերիտասարդս նոյնպէս աղա-
7 չեսջիր ցածունս լինել. [3]Ամենեցուն զանձն օրի-
նակ կացուցանել գործոց բարութեան, վարդա-
պետութեամբ զանեղծութիւն ունել, [2]զսրբութիւն,
8 զպարկեշտութիւն, Զբանն ողջմտութեան, ան-
պարսաւ լինել, զի որ հակառակորդն իցէ՝ յամթ
լիցի, և մի՛ ինչ ունիցի ասել զմեզ չարութիւն։
9 Ծառայից՝ իւրեանց տերանց հնազանդ լինել և
10 հաճոյս յամենայնի. մի՛ հակառակողս, Մի՛ հա-
տուս, այլ զամենայն հաւատս ցուցանել բարու-
թեամբ. զի զվարդապետութիւն փրկչին մերոյ Ա-
տուծոյ զարդարեսցեն յամենայնի։ Վ.Ջ
11 Քանզի երեւեցաւ շնորհն Աստուծոյ փրկիչ ա-
12 մենայն մարդկան. Որ խրատէն զմեզ զի ուրա-
ցուք զանպարշտութիւն և զաշխարհական ցանկու-
թիւնս, զգաստութեամբ և արդարութեամբ և
13 աստուածպաշտութեամբ կեցցուք յաշխարհիս, ե-
ակնկալցուք երանելի յուսոյն, և յայտնութեան
փառաց մեծին Աստուծոյ և փրկչին մերոյ Յիսուսի
14 Քրիստոսի. Որ ետ զանձն վասն մեր, զի փրկեսցէ

---

[1]Ի Ցո՛ն պ[illegible] [2]Ի Բազմա պ[illegible]
[3]Ցոյն, Յամենայնի զանձն քո

զմեզ յամենայն անօրէնութենէ, և սրբեսցէ իւր ժողովուրդ սեպհական, նախանձաւոր գործոց բա-
15 րութեան։ Զայդ խօսեաց և մխիթարեա և յանդիմանեա ամենայն հասարակ, զի մի՛ ոք իցէ որ զքեզ արհամարհիցէ։

ԳԼ. Գ

1 ՋՇ. Եւ յուշ արասջիր նոցա, իշխանութեանց և պետութեանց հնազանդ լինել և հպատակ կալ, և ամենայն գործոց բարութեան պատրաստ գտա-
2 նել. Մի՛ զոք հայհոյել, անկռիւս լինել, հեզս, զամենայն ցածութիւն առ ամենայն մարդիկ ցու-
3 ցանել։ Զի էաք երբեմն և մեք անմիտք, անհաւանք, մոլորեալք, ծառայէաք ցանկութեանց և պէսպէս անառակութեանց. չարութեամբ և նախանձու շրջէաք, ատելեալք՝ և զմիմեանս ատէաք։
4 Իսկ յորժամ քաղցրութիւն և մարդասիրութիւն
5 փրկչին մերոյ Աստուծոյ յայտնեցաւ, Ոչ ի գործոց արդարութեան զոր արարաք մեք, այլ ըստ իւրում ողորմութեան ապրեցոյց զմեզ ի ձեռն լուացմանին միւսանգամ ծննդեանն, և նորոգու-
6 թեամբ Հոգւոյն Սրբոյ, Զոր եհեղ ի մեզ առատութեամբ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի փրկչին մե-
7 րոյ, Զի արդարացեալք շնորհօքն՝ եղիցուք ժառանգաւորք յուսով կենացն յաւիտենականաց։
8 Հաւատարիմ է բանս. և ի սոյն կամիմ զքեզ հաստատուն լինել, զի փոյթ արասցեն գործոց բարեաց վերակացու լինել հաւատացեալքն Աստուած, զի այն է բարի և օգտակար մարդկան։
9 Այլ գիմարութեան խնդիրս և զտոհմաթիւս և

զՀեռ և զօրինական կռիւսն ի բաց մերժեսջիր. զի
10 անօգուտք են և անոտիք։ Յառնէ հերձուածողէ,
յետ միանգամ և երկիցս խրատելոյ, հրաժարեա.
11 ջիր. Գիտասջիր զի թիւրեալ է այնպիսին, և մե.
ղանչէ՝ անձամբ զանձն դատապարտեալ։
12 Ասյլ յորժամ յղեցից առ քեզ զԱրտեմաս կամ
զՏիւքիկոս, փութասջիր գալ առ իս ի Նիկոպո.
13 լիս, զի անդ եդի ի մտի ձմերել։ Եւ զՋենոն զօրի.
նականդպիր և զԱպողոս փութով արձակեսջիր,
14 զի մի՛ ինչ պակասիցէ նոցա։ Ուսցին և մերքն եւս
բարեաց գործոց վերակացու լինել ի պէտս կարե.
15 ւորս, զի մի՛ անպտուղք լինիցին։ Ողջոյն տան
քեզ որ ընդ իս են ամենեքեան. ողջոյն տուր սի.
րելեաց մերոց Հաւատովք. շնորհք ընդ ձեզ ամե.
նեսեան։[1]

Ա- Տէրս, կրեսցոց եկեղեցոյն սոցին Քեռն.
դրեոլեպէոպոս, գրեցա ի Նիկոպոլեայ Մակեդոնացոց։

---

[1] Ոմանք յաւելուն, Ամէն։

[1]Ա՛Ո ՓԻԼԻՄՈՎՆ

ԵՒ Ա՛Ո ԱՐՔԻՊՊՈՍ ՍԱՐԿԱՒԱԳ

ԵՒ Ա՛Ո ԱՊՓԻԱ ԹՈՒՂԹ՚

1 ՊԱՒՂՈՍ, կապեալ Յիսուսի Քրիստոսի, և Տի-
մոթէոս եղբայրը, Փիլիմոնի սիրելւոյ և գործակցի
2 մերոյ, եւ Ապփեայ [2]քեռ, և Արքիպպեայ պինուռ-
3 բակցի մերոյ, և առաքին եկեղեցւոյդ. Շնորհք
ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ
և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։
4 Գոհանամ զԱստուծոյ իմոյ յամենայն ժամ յի-
5 շատակեալ յաղօթս իմ վասն քո, Լսելով զսէր
զքո հաւատոյն և զսէր զոր ունիս առ Տէր Յիսուս
6 և առ ամենայն սուրբս, Զի հաղորդութիւն հա-
ւատոցն քոց արդեայ լինիցի գիտութեամբ ամենայն
բարութեան որ ի ձեզ է ի Քրիստոս Յիսուս։
7 Խնդութիւն յոյժ ընկալայ և մխիթարութիւն ի
վերայ սիրոյն քո, զի գութք սրբոց քեւ հանգու-
ցեալ են, եղբայր։
8 Վասն որոյ բազում համարձակութիւն ունիմ
9 ի Քրիստոս՝ հրաման տալ քեզ զարժանն, Վասն

---

[1]Ոմանք լսեն, Առ Փիլիմոնէն, այլ՝ Թուղթ Պաւղոսի առաքելոյ առ Փիլիմոնէն [2]Ոմանք, սիրելւոյ

սիրոյ մանաւանդ թէ աղաչեմ իսկ, այնպիսի լինել
որպէս ես Պաւղոս ծերացեալ, արդ և կապեալ
10 եւս Յիսուսի Քրիստոսի: Աղաչեմ զքեզ վասն
որդւոյ իմոյ զոր ծնայ ի կապանս իմ, զՈնեսիմոս.
11 Որ երբեմն անպիտան էր քեզ, բայց արդ քեզ և
12 ինձ պիտանի. Զոր յղեցի առ քեզ. և դու զդա
13 ընկալջիր, այսինքն ե զիմ սրտիս. Զոր կամէի առ
ես արգելուլ, զի ընդ քո ունիցի ինձ սպաս ի կա.
14 պանս աւետարանին: Բայց առանց քո կամաց ոչ ինչ
կամեցայ առնել, զի մի՛ բարիքդ քո ի հարկէ լի.
15 նիցին, այլ՝ կամաւ: Եւ թերեւս վասն այնորիկ
մեկնեցաւ առ ժամանակ մի, զի յաւիտեան ունի.
16 ցիս զդա, Մի՛ եւս իբրեւ զծառայ, այլ ի վեր քան
զծառայ, իբրեւ զեղբայր սիրելի. եթէ ինձ այս.
պէս, ո՛րչափ եւս առաւել քեզ մարմնով և ՝ն.
17 բամբ: Եթէ զիս քեզ հաղորդ համարիցիս, ընկալ
18 զդա իբրեւ զիս: Եւ եթէ յանցուցեալ ինչ իցէ
19 կամ պարտիցի, զայն ինձ համարեաց: Ես Պաւղոս
գրեցի իմով ձեռամբ, ես հատուցից. զի մի՛ ասի.
20 ցեմ քեզ թէ և դու զանձն քո ինձ պարտիս: Այո,
եղբայր, [1]ես քո փոխանակ եղէց՝ ի Տէր. Հանգո
21 ոյացիր իմ ի Քրիստոս: Յուսացեալ ի հնազան.
դութիւնդ քո գրեցի առ քեզ, քանզի գիտեմ թէ
առաւել եւս քան զոր ասեմդ՝ առնիցես:
22 Միանգամայն և պատրաստեայջիր ինձ վանս,
քանզի յուսամ եթէ աղօթիւք ձերովք շնորհեցայց
23 ձեզ: Ողջոյն տայ ձեզ Եպափրաս գերեկից իմ ի
24 Քրիստոս Յիսուս, Եւ Մարկոս և Արիստարքոս և

---

[1] Յ-ՆՆ, օգտեցայց, ՝ա՛, ուրախ եղէց քեւ

25 Դեմաս և Ղուկաս՝ գործակիցք իմ։ Շնորհք Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ոգւոյդ ձերում։[1]

Ա՜ փէլէմ՜ն ՝ Ադէլ՝, փե՜ր՜ ՈՆԷ՜Մ՜, ՝ ա՜
Ար՜էպո՜, ա՜ր՜՝ա՜՜ փ կ՜ղ՜՜ց՜՜ց էլէղէց՜՜ն, ֆրէց՜
՜ Հ՜՜վ՜ն ՝ յէ՜ն ՈՆԷ՜Մ՜ յ ա՜՜ց՜՜յ՝ ։

ԱՌ ԵԲՐԱՅԵՑԻՍ

ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա

1 ԵԿ. ԲԱՋՈՒՄ մասամբք և բազում օրինակօք
կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ Հարսն [2]մեր մար-
2 գարէիւք. ի վախճան աւուրցս այսոցիկ խօսեցաւ
ընդ մեզ Որդւովն զոր եդ ժառանգ ամենայնի, ո-
3 րով և զյաւիտեանսն արար. Որ է լոյս փառաց
և նկարագիր էութեան նորա, որ կրէ զամենայն
բանիւ զօրութեան իւրոյ, [3]սրբութիւն մեղաց մե-
րոց արարեալ՝ նստաւ ընդ աջմէ Մեծութեանն ի
4 բարձունս։ Այնչափ առաւել եղեալ քան զՀրեշ-
տակս, որչափ լաւ եւս քան զնոսա անուն ժա-
5 ռանգեաց։ Քանզի ո՞ երբեք ասաց ի Հրեշտա-

---

[1]Ման՝ յ՜՜ե՜լ՜՜ն, Ամէն։ [2]Ի Բ՜ա՜՜ն պ՜ա՜՜ե՜
[3]Ման՝, անձամբ սրբութիւն

կաց, Որդի իմ ես դու, ես այսօր ծնայ զքեզ. և
դարձեալ թէ Ես եղէց նմա ի Հայր, և նա եղիցի
6 ինձ Որդի: Այլ յորժամ մուծցէ զանդրանիկն յաշխարհ, ասէ, Երկիր պագցեն
7 նմա ամենայն հրեշտակք Աստուծոյ: Այլ [1]առ հրեշտակն՝ ասէ, Ո արար զհրեշտակս իւր հոգիս,
8 և զպաշտօնեայս իւր՝ բոց հրոյ: Իսկ ցՈրդին [2]ասէ, Աթոռ քո, Աստուած, յաւիտեանս յաւիտենից.
գաւազան ուղղութեան՝ գաւազան արքայութեան
9 քո: Սիրեցեր զարդարութիւն ևատեցեր զանօրէ-
նութիւն. վասն այսորիկ օծ զքեզ, Աստուած,
Աստուած քո իւղով ուրախութեան առաւել քան
10 զընկերս քո: Եւ, Դու, Տէր, ի սկզբանէ զերկիր
հաստատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են:
11 Նոքա կորնչին, և դու կաս և ծնաս. ամենեքեան
12 իբրեւ զձորձս մաշեսցին, Եւ իբրեւ զվերարկու
[3]գալարեսցես զնոսա՝ [4]իբրեւ զհանդերձ," և [5]գալա-
րեսցին. բայց դու նոյն իսկ ես, և ամք քո ոչ պակա-
13 սեսցեն: Ցո՞ երբեք ասաց ի հրեշտակաց, Նիստ ընդ
աջմէ իմմէ, մինչեւ եդից զթշնամիս քո պատուան-
14 դան ոտից քոց: Ո՞չ ապաքէն ամենեքեան հոգիք
են հարկաւորք որ առաքին ի սպասաւորութիւն
վասն այնոցիկ որ ժառանգելոցն են զփրկութիւն:

ԳԼ. Բ

1 ԵԴ. Վասն այնորիկ պարտ է մեզ առաւել եւս
ունկնդիր լինել բանիցն ասացելոց, զի մի՛ երբեք

---

[1] կամ, զհրեշտակաց [2] ի ցՈրդին պակաս [3] Ոմն, փոխեսցես [4] ցոմանս պակաս [5] Ցոյնն, փոխեսցին

2 նուագեսցուք։ Զի եթէ որ ի ձեռն հրեշտակաց խո-
սեցաւ բանն՝ հաստատուն եղեւ, և ամենայն յան-
ցաւորութիւն և անհնազանդութիւն ընկալաւ զպա-
3 տիժ պատուհասի, Մեք զիա՞րդ ապրեսցուք հեղ-
գացեալք այնպիսի փրկութենէ, որ սկիզբն ա՛ռ
խօսելոյ ի Տեառնէ, և ի ձեռն այնոցիկ որ լուան՝
4 ի մեզ հաստատեցաւ. Վկայեալ Աստուծոյ նշա-
նօք և արուեստիւք և պէսպէս զօրութեամբք և
մասամբք Հոգւոյն Սրբոյ ըստ իւրոց կամաց։
5 Զի ոչ եթէ հրեշտակաց հնազանդեցոյց զՀան-
դերձեալ աշխարհն, վասն որոյ մեքս խօսիմք։
6 Վկայեաց ոք ուրեք և ասէ, Զի՞նչ է մարդ եթէ
յիշեսցես զնա, կամ որդի մարդոյ թէ այց արաս-
7 ցես նմա։ Փոքր մի խոնարհ սրտերբ զնա քան
զՀրեշտակս. փառօք և պատուով պսակեցեր զնա,
8 և կացուցեր զնա ի վերայ ձեռակերտաց քոց. Ա-
մենայն ինչ հնազանդ արարեր ի ներքոյ ոտից նո-
ցա. արդ ի հնազանդեցուցանելն զամենայն՝ ոչ ինչ
եթող անհնազանդ ի նմանէ. բայց այժմ ոչ եւս
9 տեսանեմք հնազանդեալ նմա զամենայն։ Այլ
զփոքր մի խոնարհեալ քան զՀրեշտակս տեսանեմք
զՅիսուս վասն չարչարանաց մահուն, փառօք և
պատուով պսակեալ, զի շնորհօքն Աստուծոյ վասն
10 ամենեցուն զմահ ճաշակեսցէ։ Զի վայել էր իսկ
նմա (վասն որոյ ամենայն և որով ամենայն) բա-
զում որդիս ի փառս ածել՝ զԱռաջնորդ փրկու-
թեան նոցա չարչարանօք կատարել։ Վ.Ջ
11 Զի որ սրբէն և որ սրբին՝ ի միոջէ [1]էին ամենե-

---

[1]կամ, են

քեան, վասն որոյ ոչ ամօթ համարիմ եղբարս ա-
12 նուանել զնոսա և ասել, Պատմեցից զանուն քո
եղբարց իմոց, ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ։
13 Եւ դարձեալ թէ՝ Ես եղէց յուսացեալ ի նա. և
դարձեալ՝ Ահաւասիկ ես և մանկունք [1]իմ, զոր
14 ետ ինձ Աստուած։ Արդ որովհետեւ մանկունք
հաղորդեցին արեան և մարմնոյ, և ինքն իսկ մեր-
ձաւորութեամբ կցորդ եղեւ նոցունց, զի մահուն
[1]իւրով խափանեսցէ զայն որ զիշխանութիւն մա-
15 հուն ունէր, այսինքն է՝ զԱստանայ. Եւ ապրե-
ցուսցէ զայնոսիկ որ մահուն երկիւղիւ հանապազ
16 կէին վտարանդեալք ի ծառայութիւն։ Քանզի ոչ
երբեք զհրեշտակաց բուռն հարկանէ, այլ զզա-
17 ւակն Աբրահամու բուռն հարկանէ։ Ուստի պարտ
իսկ էր նմա ամենայնիւ եղբարց նմանեալ, զի ողո-
րմած լինիցի և հաւատարիմ քահանայապետ յաս-
տուածակոյս կողմանէ անտի, առ ի քաւելոյ զմեղս
18 ժողովրդեանն։ Զի որով ինքն չարչարեցաւ զփորձ
առեալ՝ կարող է և փորձանաւորացն օգնական
լինել։

ԳԼ. Գ

1 Ուստի, եղբարք սուրբք, երկնաւոր կոչմանն բա-
ժանորդք, նայեցարուք ընդ Առաքեալն և ընդ
քահանայապետ խոստովանութեան մերոյ ընդ Յի-
2 սուս [2]Քրիստոս. Որ հաւատարիմ է արարչին ի-
3 րոյ, որպէս և Մովսէս յամենայն տան նորա։ Զի
առաւել եւս փառաց քան զՄովսէս արժանի է-

---

[1] Ի Յունէն պոլսեայ [2] Յոհաննես պոլսեայ

ղեւ, որչափ առաւել պատիւ ունիցի քան զառնն
4 տանն առնելի։ Զի ամենայն տուն կազմի յումէ
կազմի. իսկ որ զամենայնն արար՝ Աստուած է։
5 Մովսէս հաւատարիմ է յամենայն տան նորա
իբրեւ զծառայ առ ի վկայութենէ բանից ապագե-
6 լոց։ Այլ Քրիստոս իբրեւ որդի ի վերայ տան իւ-
րոյ. որոյ տունն մեք իսկ եմք, միայն թէ զխա-
մարձակութիւն և զպարծանս յուսոյն մինչեւ ի
վախճան հաստատուն ունիցիմք։
7 Վասն որոյ այսպէս ասէ Հոգին Սուրբ, Այսօր
8 եթէ ձայնի նորա լուիցէք, Մի՛ խստացուցանէք
զսիրտս ձեր իբրեւ ի դառնութեանն՝ յաւուրն փոր-
9 ձութեան յանապատի, Ուր փորձեցին զիս հարքն
ձեր, քննեցին զիս և տեսին զգործս իմ քառա-
10 սուն ամ. Վասն որոյ տագնակացայ ազգիս այ-
նուիկ, և ասացի, Միշտ մոլորեալ են սրտիւք,
11 և նոքա ոչ ծանեան զճանապարհս իմ. Որպէս
երդուայ ի բարկութեան իմում թէ Մտցեն ի հան-
գիստ իմ։
12 ԵԶ. Տեսէք, եղբարք, գուցէ երբեք լինիցի
յումեք ի ձէնջ սիրտ չար անհաւատութեան՝
13 ապստամբ լինել յԱստուծոյ կենդանւոյ։ Այլ մխի-
թարեցէք զմիմեանս զօրհանապազ՝ մինչդեռ [1]այ-
սօրդ առաջի կայ", զի մի՛ ոք խստասցի ի ձէնջ
14 խաբէութեամբ մեղաց։ Քանզի բաժանորդք եղեալք
Քրիստոսի, միայն թէ զսկիզբն հաստատութեանն
15 մինչեւ ի վախճան պինդ կալցուք. Ցասէն, Այսօր
եթէ ձայնի նորա լուիցէք, մի՛ խստացուցանէք

---

[1] Յոյն, Այսօր կոչի

16 զսիրաս ձեր իբրեւ ի դառնութեանն։ Քանզի [1]ո-
մանք լուան և դառնացուցին, այլ ոչ՝ ամենեքեան
որ ելեալ էին յԵգիպտոսէ ի ձեռն Մովսիսի։
17 Յումէ՞ տասղակացաւ զքառասուն ամն. ո՞չ ապա-
քէն ի յանցուցելոցն, որոց ոսկերքն անկան յանա-
18 պատի անդ։ Ո՞ւմ երդուաւ չմտանել ի հանգիստն
19 իւր, եթէ ոչ՝ անհաւատիցն։ Եւ տեսանեմք զի ոչ
կարացին մտանել վասն անհաւատութեանն։

Գլ. Դ

1 Երկիցուք այսուհետեւ, [2]գուցէ ի թողուլ զաւե-
տիսն՝ ի մտանելոյ՝՝ ի հանգիստ նորա, գտանիցի
2 ոք ի ձէնջ նուազեալ։ Քանզի եմք աւետարանեալք
որպէս և նոքայն. այլ նոցա ոչինչ օգնեաց լուր
բանին, [3]չամրեցելոցն ի հնազանդութիւն հաւա-
3 տոց՝՝։ Այլ մեք մտանեմք ի հանգիստն որք հա-
ւատացաքս. որպէս և ասացն Թէ Որպէս երդուայ
ի բարկութեան իմում, Թէ Մտցեն ի հանգիստ իմ.
Թէպէտ և արդիւնքն ի սկզբանէ աշխարհի լինեալ
4 էին։ Քանզի ասէ ուրեք վասն աւուրն եւթներորդի
այսպէս. Եւ հանգեաւ Աստուած յաւուրն
5 եւթներորդի յամենայն գործոց իւրոց։ Եւ աստ
6 դարձեալ ասէ Թէ Մտցեն ի հանգիստ իմ։ Եւ
արդ՝ [4]քանզի արգելան ոմանք մտանել՝՝ ի նա, և

---

[1] Կ՚ասէ, ոմք լուան և դառնացուցին. ո՞չ
[2] Յ-ոյն, գուցէ, մինչդեռ կան ձեզ աւետիքն մտա-
նելոյ [3] Կ՚ասէ, զի ոչ ամրեցաւ հաւատովք
յորս լուանն [4] Յ-ոյն, քանզի կայ ձեզ ոմանց
մտանել

որք յառաջագոյն աւետարանեալն էին՝ չմտին վասն
7 անհաւանութեանն։ Դարձեալ այլ օր սահմանէ,
զԱյսօրն ի Դաւթի և ասէ յետ այնչափ ժամանա-
կաց, որպէս յառաջագոյնն ասաց, Այսօր եթէ
ձայնի նորա լուիցէք, մի՛ խստացուցանէք զսիրտս
8 ձեր։ Զի եթէ զնոսա Յեսուայ հանդուցեալ էր,
ապա վասն այլոյ աւուր ոչ խօսէր յետ այնորիկ։
9 Արդ ուրեմն [1]նուաղեալ է՞ շաբաթուայն ժողովրդ-
10 գեանն Աստուծոյ։ Զի որ եմուտ ի հանգիստն նո-
րա, և նա հանգեաւ յիւրոց գործոց անտի, որպէս
և Աստուած յիւրոցն։ Վ.Ջ
11 Փութասցուք այսուհետեւ մտանել յայն հան-
գիստ, զի մի՛ ոք ընդ նմին օրինակաւ անհաւա-
12 նութեանն անկանիցի։ Զի կենդանի է բանն Աս-
տուծոյ և ազդող և հատու քան զամենայն սուր
երկսայրի, և անցանէ մինչեւ ցօրոշումն շնչոյ և
ոգւոյ և յօդից և ուղղոյ, և քննիչ է մտաց և
13 խորհրդոց սրտից։ Եւ չիք արարած աներեւոյթ
յերեսաց նորա, այլ ամենայն ինչ մերկապատրանոց
կայ առաջի աչաց նորա՝ զորմէ մեր բանքս են։
14 Ունիմք այսուհետեւ քահանայապետ մեծ ան-
ցեալ ընդ երկինս, զՅիսուս զՈրդին Աստուծոյ,
15 պինդ կալցուք զխոստովանութիւնն։ Քանզի ոչ եթէ
ունիմք քահանայապետ որ չիցէ կարող չարչարա-
կից լինել տկարութեան մերոյ, այլ փորձեալ է ամե-
նայնիւ ըստ նմանութեան, առանց մեղաց։
16 ԶԿ. Մատիցուք այսուհետեւ համարձակու-
թեամբ առաջի աթոռոյ շնորհացն [2]նորա, զի ըն-

---

[1] Յոյն, կայ ինչ [2] ի յ-ն-ն պ-ի-ե

կալցուք զողորմութիւն և գտցուք շնորհս ի դէպ ժամանակի օգնականութեան։

ԳԼ. Ե

1 Զի ամենայն քահանայապետ ի մարդկանէ առեալ՝ վասն մարդկան կայ յառաջածակոյս կողմն անդր, զի մատուսցէ պատարագս և զոհս վասն
2 մեղաց. Զափով չարչարակից կարող է լինել տգիտաց և մոլորելոց, քանզի և ինքն իսկ տկարու-
3 թեամբ զգածեալ է. Վասն այնորիկ հարկ է որպէս վասն ժողովրդեանն, նոյնպէս և ընդ անձին
4 մատուցանել պատարագս վասն մեղաց։ Եւ ոչ եթէ անձամբ ոք առնու պատիւ, այլ կոչեցեալն
5 յԱառաւծոյ, որպէս և Ահարոն։ Նոյնպէս և Քրիստոս ոչ եթէ անձին ինչ շուք եդ լինել քահանայապետ, այլ որ խօսեցաւն առ նա՝ Թէ Որդի իմ
6 ես դու, ես այսօր ծնայ զքեզ. Որպէս և ի միւսումն ասէ, Դու ես քահանայ յաւիտեան ըստ
7 կարգին Մելքիսեդեկի։ Որ յաւուրս մարմնոյ իւրոյ աղօթս և պաղատանս առ այն որ կարող էր ապրեցուցանել զնա ի մահուանէ՝ աւժիկն գոչմամբ և արտասուօք մատուցաներ, և լսելի լինէր առ
8 լաւութեանն։ Թէպէտ և Որդի է, ուսաւ ի չար-
9 չարանաց անտի զհնազանդութիւն. Եւ իբրեւ կատարեցաւ, եղեւ ամենայն հնազանդելոց իւրոց
10 պատճառք փրկութեանն յաւիտենից. Եւ անուանեցաւ Աառաւծոյ քահանայապետ [1]յաւիտենից ըստ կարգին Մելքիսեդեկի։

---

[1] ի բազումս պակասէ

11 ԶԴ. Վասն որոյ բազումք են մեզ բանք, և դժուարապատում ի մեկնել, քանզի խօթամիտք
12 եղերուք լսելեօք. փոխանակ զի պարտ էր ձեզ լինել վարդապետս վասն ժամանակին, դարձեալ պիտոյ է ձեզ ուսանել թէ զինչ են նշանագիրք սկզբան բանիցն Աստուծոյ. և եղերուք կարօտք
13 կաթին, և ոչ հաստատուն կերակրոյ։ Զի ամենայն որ կաթնկեր է՝ տգէտ է բանին արդարութեան, քանզի տղայ է։ Ա.Ր կատարելոցն է հաստատուն կերակուր, որոց [1]վասն ի չափան հաստատելոյ՝ ճաշակելիքն կիրթ են ընտրութեան բարւոյ
և չարի։

ԳԼ. Զ

1 Վասն որոյ թողեալ զբան սկզբանն Քրիստոսի՝ ի կատարումն եկեսցուք. մի՛ միւսանգամ արկանել հիմն ապաշխարութեան ի մեռելոտի գործոց անու, և հաւատոյն որ յԱստուած, և մկրտու-
2 թեանցն վարդապետութեան, և ձեռնադրութեան ձեռաց, և յարութեան մեռելոց, և դատաստա-
3 նին յաւիտենից։ Եւ արդ արասցուք զայն, եթէ
4 Աստուած հրամայեսցէ։ Քանզի անհնար է միանգամ [2]մկրտելոցն որ ճաշակեցին յերկնաւոր պար-
5 գեւացն, և հաղորդք եղեն Հոգւոյն Սրբոյ, Եւ զգեղեցիկ բանին Աստուծոյ ճաշական ճաշակեցին,
6 և զզօրութիւնս հանդերձելոյ աշխարհին, Եւ կործանեսցին, միւսանգամ նորոգել յապաշխարու-

---

[1] Յն., առ ընդելութեան

[2] Յն., լուսաւորելոցն

թիւն, և վերստին ի խաչ հանել անձանց զՈրդին
7 Աստուծոյ, և դարձեալ խայտառակել։ Քանզի
երկիր որ ըմպիցէ զանձրեւ բազում անգամ եկ.
եալ ի վերայ նորա, և ծնանիցի արդիւնս շայե.
կանս նոցա վասն որոց գործիցին, ընդունի զօրհ.
8 նութիւն յԱստուծոյ. Իսկ որ բերէ փուշ և տա.
տասկ, անպիտան է և մերձ յանէծս, և վախճան
նորա յայրուածն։

9 ՋՋ. Բայց հաստատեալ եմ վասն ձեր, սիրե.
լիք, ի լաւ անդր և որ լին է փրկութեամբ, [1]զի
10 թէպէտ և այսպէս խօսիմք։ Ոչ եթէ անիրաւ լինչ
է Աստուած մոռանալ զգործս ձեր և զսէրն զոր
ցուցէք յանուն նորա, զի պաշտէիք զսուրբսն և
11 պաշտէք։ Եւ մեք ըղձանամք զի իւրաքանչիւր ոք
ի ձէնջ զնոյն փոյթ ցուցանիցէ ի հաստատութիւն
12 յուսոյն մինչեւ ցվախճան. Զի մի՛ հիւանդամիտք
լինիցիք, նմանողք եղերուք այնոցիկ որ հաւա.
տովքն և երկայնմտութեամբ ժառանգեցին զաւե.
13 տիսն։ Զի Աբրահամու խոստացեալ զաւետիսն՝
Աստուծոյ, քանզի յայլ ոք ի մեծ ոչ գոյր երդ.
14 նուլ, ցանձն իւր երդուաւ և ասէ, Այո, օրհնե.
լով օրհնեցից զքեզ, և բազմացուցանելով բազ.
15 մացուցից զքեզ։ Եւ այնպէս երկայնամիտ եղեալ
16 եհաս աւետեացն։ Ապաքէն մարդիկ որ լինչ ի վեր
է քան զինքեանս՝ յայն երդնուն, և ամենայն հա.
կառակութեան նոցա վճիռ ի հաստատութիւն՝
17 երդումն է։ Որով առաւել եւս կամեցեալ Աս.
տուծոյ ցուցանել ժառանգաւորաց աւետեացն

---

[1] ի ցոնէն պոլոսէ

զՀաստատութիւն խորհրդոյն իւրոյ, միջնորդեաց
18 երդմամբ. Զի երկու անփոփոխելի իրօքն որով ան-
հնար իցէ ստել Աստուծոյ՝ Հաստատուն մխիթա-
րութիւն ունիցիմք, որք ապաստան եղեաք բուռն
19 հարկանել զՀանդերձեալ յուսոյն. Զոր իբրեւ
զխարիսխ Հաստատուն և անշարժ ունիցիմք ան-
ձանց մերոց, որ և մտանիցէ ի ներքին կողմն վա-
20 րագուրին. Ուր կարապետն մեր Յիսուս եմուտ
վասն մեր, ըստ կարգին Մելքիսեդեկի եղեւ քա-
հանայապետ յաւիտենից։

ԳԼ. Է

1 Քանզի այս Մելքիսեդեկ թագաւոր էր Սաղիմայ,
քահանայ Աստուծոյ բարձրելոյ, որ ել ընդ առաջ
Աբրահամու, յորժամ դարձեալ գայր ի կոտորա-
2 ծէ թագաւորացն, և օրհնեաց զնա. Որում և
տասանորդս յամենայնէ ետ Աբրահամ. Նախ
թարգմանի թագաւոր արդարութեան, ապա թա-
գաւոր Սաղիմայ՝ որ է թագաւոր խաղաղութեան.
3 Անհայր, անմայր, չհամարեալ յազգս, որոյ ոչ
սկիզբն աւուրց և ոչ կատարած կենաց. Նմանեալ
Որդւոյն Աստուծոյ՝ կայ մնայ քահանայ միշտնջե-
նաւոր։
4 Արդ տեսէք որպիսի ոք էր սա, որում և Աբրա-
համ տասանորդս ետ յաւարէ անտի, նահապետն։
5 Եւ որք յորդւոցն Ղեւեայ զքահանայութիւնն
առնուն՝ պատուէր ունին տասանորդել զժողո-
վուրդն ըստ օրինացն, այսինքն է զեղբարս իւր-
եանց. թէպէտ և ելեալ իցեն յերանացն Աբրա-
6 համու. Իսկ չհամարեալն յազգս ի նոցանէ՝ տա-

սանորդեաց զԱբրահամ, և զնա որոյ զաւետիսն
7 ընկալեալ էր՝ օրհնեաց։ Զի առանց ամենայն հա-
կառակութեան՝ նուաղն ի լաւէ անտի օրհնեացի։
8 Եւ աստ մարդք մահկանացուք տասանորդս առ-
9 նուն. բայց անդ՝ [1]վկայեցաւ թէ կենդանի է։ Եւ
որպէս բանիւ կարգ է ասել, թէ Աբրահամաւ և
Ղևի իսկ որ զտասանորդսն առնոյր՝ տասանորդե-
10 ցաւ. Զի դեռ եւս յերանս հօր իւրոյ էր, յորժամ
ընդ առաջ եղեւ նմա Մելքիսեդեկ։
11 Իսկ արդ՝ եթէ կատարումն ի ձեռն Ղեւտացւոց
քահանայութեանն էր, (քանզի ժողովուրդն յայն
օրէնսդրեցաւ,) զի՞նչ պիտոյ էր ըստ կարգին Մել-
քիսեդեկի այլում քահանայի յառնել, և ոչ ա-
12 սել թէ ըստ կարգին Ահարոնի։ Այլ ի փոփոխել
քահանայութեանն հարկ էր և օրինացն փոփո-
13 խումն լինել։ Զի զորմէ այսպէսն ասի՝ յայլմէ ազ-
գէ կալաւ հաղորդութիւն, յորմէ ոչ ոք երբեք
14 եղեւ հաղորդ սեղանոյն։ Արդ յայտ իսկ է թէ
յազգէ Յուդայ ծագեաց Տէր մեր, յորմէ ազգէ
15 վասն քահանայից Մովսէս ինչ ոչ ճառեաց։ Եւ
եւս առաւել յայտ է թէ ըստ նմանութեան Մել-
16 քիսեդեկի յառնելոց է այլ քահանայ, Որ ոչ ըստ
մարմնաւոր պատուիրանին եղեւ, այլ ըստ զօրու-
17 թեան կենացն անվախճանից։ Քանզի վկայեցաւ թէ
Դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մել-
18 քիսեդեկի։ [2]Արհամարհութիւն լինէր առաջին
պատուիրանին վասն նորին տկարութեանն և ան-

---

[1] Յոյն, որ վկայեցաւն

[2] Յոյն, Զի արհամարհութիւն

19 շահութեան. Քանզի ոչինչ կատարումն գործեցին
օրէնքն, [1]և մուտ ապնուականն յուսոյն որով մեր-
ձենամք առ Աստուած։
20 Եւ այնչափ չի ոչ առանց երդմանն. (չի են ո-
մանք որ առանց երդմանն են կացեալ քահանայք.
21 Բայց սա երդմամբ ի ձեռն այնորիկ որ ասացն ի
նա, Երդուաւ Տէր և ոչ եւս զղջասցի, Դու ես
22 քահանայ յաւիտեան[2].) Եւ այնչափ լաւագոյն ուխ-
տի եղեւ երաշխաւոր Յիսուս։
23 Եւ բազում են կացեալ քահանայք վասն մա-
24 հու արգել լինելոյ ի մշտնջենաւորել։ Իսկ սա վասն
յաւիտեան կալոյ՝ առանց անցանելոյ ունի զքա-
25 հանայութիւնն. Ուստի և կենդանի առնել համե-
րէն կարող է զմատուցեալսն նովաւ առ Աստուած.
քանզի միշտ կենդանի է լինել բարեխօս վասն նոցա։
26 Ա· Զի այսպիսի իսկ և վայել էր մեզ քահա-
նայապետ, սուրբ, անմեղ, անարատ, զատեալ ի
27 մեղաւորաց և բարձրացեալ քան զերկինս. Որում
ոչ հանապազ հարկ է, որպէս այլոց քահանայա-
պետիցն, նախ վասն իւրեանց մեղացն պատարագս
մատուցանել և ապա վասն ժողովրդեանն. իսկ սա
զայն միանգամայն կատարեաց, զի զանձն իւր մա-
28 տոյց պատարագ։ Օրէնքն զմարդիկ կացուցանեն
քահանայապետս, զգածեալս տկարութեամբ, իսկ
բանն երդմանն յետ օրինացն՝ զՈրդի, որ յաւիտեան
կատարեալ է։

---

[1]Յ՝ԱՆ, այլ

[2]Բ՝ԱԼՈՄ ՅՈՒԼՈՆ, ըստ կարգին Մելքիսեդեկի

ԳԼ. Ը

1 Եւ բանից գլուխ խօսից՝ այնպիսի ունիմք քա-
հանայապետ, որ նստաւ ընդ աջմէ Մեծութեան
2 ամենայն յերկինս, Սրբութեանցն պաշտօնեայ, և
խորանին ճշմարտութեան զոր Տէրն կանգնեաց և
3 ոչ մարդ։ Զի ամենայն քահանայապետ վասն մա-
տուցանելոյ զպահս և զպատարագս կայ. ուստի
4 հարկ է և նմա ունել ինչ զոր մատուցանիցէ։ Զի
եթէ էր յերկրի, թերեւս չէր իսկ քահանայ. զի
[1]գոյին որ՞ մատուցանէին ըստ օրինացն պատա-
5 րագ. Որք առակաւ և օրինակաւ պաշտէին երկ-
նաւորացն, որպէս և հրամայեցաւ Մովսիսի, յոր-
ժամ գործելոց էր վրան ժամուն, Տեսջիր, ասէ,
արասցես զամենայն ըստ օրինակին որ ցուցաւ քեզ
6 ի լերինն։ Բայց արդ առաւտագոյն եւս պաշտաման
եհաս [2]Յիսուս, որչափ լաւագոյն եւս ուխտի է
միջնորդ՝ որ յառաւել աւետիան օրինադրեցաւ։
7 Զի եթէ առաջինն անարատ էր, ապա երկրոր-
8 դին տեղի ոչ խնդրէր։ Նա աւանիկ բամբասէ զնո-
սա. և ասէ, Ահաւասիկ աւուրք եկեսցեն, ասէ
Տէր, և կատարեցից ի վերայ տանն Իսրայելի և ի
9 վերայ տանն Յուդայ ուխտ նոր. Ոչ ըստ ուխտին
զոր եդի ընդ հարս նոցա յաւուրն յորում առի
ի ձեռն հանել զնոսա յերկրէն Եգիպտացւոց. և
զի նոքա ոչ կացին յուխտին իմում, և ես ան-
10 փոյթ արարի զնոցանէ, ասէ Տէր [3]ամենակալ։ Այլ

---

[1]Ոմանք, գոյին քահանայք որ

[2]ի Յեսուէն պակասէ

այս է ուխտն զոր եդից տանն Իսրայելի յետ աւուրցն այնոցիկ, ասէ Տէր, տացց զօրէնս իմ ի միտս նոցա, և ի սիրտս նոցա գրեցից զնոսա, և եղէց նոցա Աստուած, և նոքա եղիցին ինձ ի ժողովուրդ։
11 Եւ ոչ եւս ուսուցանիցեն իւրաքանչիւր զքաղաքակից իւր և իւրաքանչիւր զեղբայր իւր, և ասիցեն թէ Ծանիր զՏէր. զի ամենեքին ծանիցեն զիս
12 ի փոքրկանց մինչեւ ցմեծամեծս նոցա. Զի քաւիչ եղէց անիրաւութեանց նոցա, և զմեղս նոցա և զանօրէնութիւնս այլ ոչ եւս յիշեցից։
13 Արդ ասելովն Նոր՝ հնացոյց զառաջինն. և որ հնանայն և ծերանայ՝ մերձ է յապականութիւն։

ՎԺ

ԳԼ. Թ

1 Ունել ունէր և առաջինն իրաւունս պաշտամանն
2 [1]յայնժամ զաշխարհական սրբութիւնն։ Զի խորանն առաջին հանդերձեցաւ [2]այսպէս, յորում աշտանակն և սեղանն և հացն նուիրեաց, որ Սրբութիւնն կոչէր։
3 Եւ յետ երկրորդ վարագուրին՝ խո-
4 րանն որ կոչէր Սրբութիւն սրբութեանց. Յորում կայր բուրվառն ոսկի, և արկղն կտակարանաց պատեալ ներքոյ և արտաքոյ ոսկւով, յորում սափորն ոսկի լի մանանայիւ, և գաւազանն Ահարոնի որ ծաղկեցաւ, և տախտակք կտակարանացն.
5 Եւ ի վերայ նորա քերովբէքն փառաց որ հովանի ունէին ի վերայ քաւութեանն, վասն որոյ ոչ է այժմ ասել մի ըստ միոջէ։
6 Եւ այն ամենայն իբրեւ այնպէս հանդերձեալ

---

[1] կամ, և [2] ի յունին պակաս

կայը, յառաջին խորանն յամենայն ժամ մտանէին
7 քահանայքն զպաշտամունան կատարել. Բայց
յերկրորդն մի անգամ ի տարւոջն քահանայա-
պետն. և զայն ոչ առանց արեան, զոր մատու-
նէր վասն իւր և վասն ժողովրդեանն անգիտու-
8 թեան. Զայս ցուցեալ Հոգւոյն Սրբոյ մինչեւ
յայտնեալ էր ճանապարհի սրբութեանցն, քանզի
դեռ առաջին խորանն ունէր զհաստատութիւն.
9 Որ է առակ ժամանակին որ առաջի կայր, յորում
պատարագք և զոհք մատչէին, որք ոչ կարէին
ըստ միտս կատարել զպաշտօնեային, բայց միայն
10 կերակրովք և ըմպելեօք, և պէսպէս մկրտու-
թեամբք՝ մարմնոյ արդարութիւնքն որ մինչեւ ի
11 ժամանակս ուղղութեանն ի վերայ կային: Այլ
Քրիստոս եկեալ Քահանայապետ հանդերձելոցն
բարեաց, մեծաւն և կատարելով և անձեռագործ
խորանաւն, այսինքն է՝ որ ոչ յայսց արարածոց,
12 և ոչ արեամբ նոխազաց և զուարակաց, այլ ի-
րով արեամբն եմուտ մի անգամ ի սրբութիւնն,
13 [1]յաւիտենական գտեալ ազատութիւն": Զի եթէ
արիւն ցլուցն և նոխազաց և մոխիր երինջոցն ցա-
նեալ՝ զպղծեալսն սրբէր առ ի մարմնոյ սրբութենէ,
14 Ո՛րչափ եւս առաւել արիւնն Քրիստոսի, որ ի ձեռն
Հոգւոյն յաւիտենականի մատոյց զանձն անարատ
[2]պատարագ Աստուծոյ, սրբեսցէ զխիղճ մտաց ձե-
րոց ի մեռելոտի գործոց անտի պաշտել զԱստուած
15 կենդանի: Եւ վասն այնորիկ նորոյ ուխտիս է

---

[1] Ց-ԻՆ, յաւիտենական ազատութիւն գտեալ

[2] ի Ց-ՆԷն պ-ւ-ե

միջնորդ, զի յորժամ մահ լինիցի ի փրկութիւն
վասն առաջին ուխտին յանցանաց, զաւետիս առ-
ցեն հրաւիրեալքն ի ժառանգութիւնն յաւիտե-
16 *նից։ Քանզի ուր կտակ է, հարկ է զմահ ի մէջ*
17 *բերել զկտակապրին. Զի կտակ յետ մահու հաս-*
տատուն է. ապա թէ ոչ՝ ինա՞րդ իցէ հաստա-
18 *տուն, մինչ կտակապրին կենդանի է։ Ուստի և*
19 *ոչ առաջինն առանց արեան նորոգեր։ Քանզի*
ընդեւ պատմեցան ամենայն պատուիրանք օրինացն
ի Մովսիսէ ժողովրդեանն, առեալ զարիւն ցլուցն
և նոխազացն, ջրով և բրդով կարմրով և զոպա-
յիւ, զկտակարանաւքն իսկ և զամենայն ժողովր-
20 *դեամբն արակեաց, եւ ասէ, Այս է արիւն կտա-*
21 *կին զոր պատուիրեաց ձեզ Աստուած։ Եւ զխո-*
րանսն և զամենայն կահիս սպասուն նոյնպէս
22 *արակեաց զարիւնն։ Եւ գրեթէ ամենայն ինչ ար-*
եամբն արբեր ըստ օրինացն, և առանց հեղման
արեան չլինէր թողութիւն։
23 Ապա հարկ էր [1]օրինաւորացն այնպիսեաւքն արբել.
և բուն իսկ երկնաւորացն՝ առաւել եւս պատա-
24 *րագաւք քան զնոսին։ Զի ոչ եթէ ի ձեռագործ*
արբուքիւնան եմուտ Քրիստոս յօրինակս ճշմար-
տութեանն, այլ ի բուն իսկ յերկինս, [2]յանդիման
25 *լինել երեսաց Աստուծոյ վասն մեր։ Ոչ զի բա-*
զում անգամ մատուցանիցէ զանձն [3]պատարագ՝
որպէս քահանայապետն որ մտանէր [4]ի սրբութիւն

---

[1] Յ---ն՝ օրինակացն երկնաւորաց
[2] Յ---ն՝ այժմ յանդիման [3] ի Յ---ն՝ պ---ե
[4] Բ---ղ---ժ՝ ի սրբութիւնն

26 սրբութեանցն՝ ամի ամի արեամբ օտարաւ. Ապա
թէ ոչ՝ պարտ էր նմա բազում անգամ չարչարել
ի սկզբանէ աշխարհի. բայց արդ աւասիկ մի ան-
գամ ի կատարած յաւիտեանց յանարգութիւն
27 մեղաց իւրով պատարագաւն յայտնեալ է: Եւ
զոր օրինակ կայ մեռանիլն մի անգամ մե-
28 ռանել և յետ այնորիկ դատաստան, Նոյնպէս և
Քրիստոս մի անգամ մատուցեալ [1]պատարագ առ
ի բառնալոյ զմեղս բազմաց. իսկ յերկրորդում
առանց մեղաց յայտնեսցի այնոցիկ, որ ակն ունի-
ցին նմա [2]հաւատովք ի փրկութիւն:

Գլ. Ժ

1 Բ. Քանզի զաւուեր հանդերձելոց բարեացն ու-
նէին օրէնքն և ոչ զնոյն կերպարանս իրացն, ամի
ամի զնոյն պատարագս մատուցանեն ցանգ, որք
2 ոչ են կարող զմատուցեալսն կատարել. Ապա թէ
ոչ դադարէին ի մատուցանելոյ, վասն և ոչ մի
ինչ այնուհետեւ խիղճ մեռց ունելոյ պաշտօնէից
3 մի անգամ սրբեցելոց. Այլ անդէն ի նմին ի մի-
4 շտակս մեղացն կային ամի ամի. Քանզի ոչ կա-
րէր արիւն նոխազացն և ցլուց բառնալ զմեղս:
5 Վասն որոյ ի մտանելն իւրում յաշխարհ՝ ասէ,
Զզոհս և զպատարագս ոչ կամեցար, բայց մար-
6 մին հատուցեր ինձ. Ընդ ողջակէզս և ընդ վասն
7 մեղացն ոչ հաճեցար: Յայնժամ ասացի Թէ Աւա-
ւասիկ եկի (ի ճառս գրոց գրեալ է վասն իմ) առ-
8 նել զկամս քո, Աստուած: Վերագոյնն ասէ Թէ

---

[1] ի ցառն պակաս [2] ի բազում պակաս

ընդ զոհս և ընդ պատարագս և ընդ ողջակէզս
և ընդ վասն մեղացն ոչ հաճեցար, և ոչ կամե-
9 ցար (որք բան օրինացն մատչէին), Ապա ասէ, Ա-
հաւասիկ գամ առնել զկամս քո, Առաւած.
մերժէ զառաջինն զի զերկրորդն հաստատեսցէ.
10 Որով կամօք և մեք սրբեցաք ի ձեռն պատարագի
մարմնոյն Յիսուսի Քրիստոսի մի անգամ։
11 Եւ ամենայն քահանայապետ կայ հանապազորդ
ի պաշտամանն, և զնոյն պատարագս մատուցանէ
բազում անգամ, որք ոչ երբեք կարող են բառ-
12 նալ զմեղս. Իսկ սա զմին վասն մեղաց մատոյց
պատարագ, և մշտնջենաւոր նստաւ ընդ աջմէ Ա-
13 տուածոյ. Եւ այսուհետեւ ակն ունի, մինչև դիցին
14 թշնամիք նորա ի ներքոյ ոտից նորա։ Քանզի միով
պատարագաւ կատարեաց զսրբեալսն ի մշտնջե-
նաւորս։
15 Այլ վկայէ մեզ և Հոգին Սուրբ [1]յետ ասելոյ
16 յառաջագոյն, Եթէ՝ Այս է ուխտն զոր եդից [2]ընդ
հարս նոցա՝՝ յետ աւուրցն այնոցիկ, ասէ Տէր,
տացց զօրէնս իմ ի սիրտս նոցա, և ի խորհուրդս
17 նոցա գրեցից զնոսա, Ապա [3]ասէ թէ՝՝ Զմեղս նո-
ցա և զանօրէնութիւնս նոցա այլ ոչ եւս յիշեցից։
18 Իսկ ուր թողութիւն է, ոչ եւս պիտոյ է վասն
մեղաց պատարագի։ Վ.Ջ
19 Ունիմք այսուհետեւ, եղբարք, համարձակու-
թիւն ի մուտս սրբութեանցն արեամբն Յիսուսի,
20 Զոր նորոգեաց մեզ ճանապարհ նորոգ և կենդանի

---

[1] Յ-ՅՆ, զի յետ
[2] Յ-ՅՆ, ընդ նոսա
[3] ի Յ-ՆԻՆ ՃՀՈՍՔ

ի ձեռն վարագուրին, այսինքն է՝ մարմնոյն ի-
21 *րոյ, եւ քահանայ մեծ ի վերայ տանն Աստուծոյ,*
22 *Մատիցուք ճշմարիտ սրտիւք, լրութեամբ հաւա-*
տոց, լուացեալ զսիրտս ի խղճէ չարեաց և մկրտեալ
23 *զմարմին ի ջուրն սրբութեան. Պինդ կալցուք զխոս-*
տովանութիւն անշարժ յուսոյն, զի հաւատարիմ
24 *է որ խոստացաւն: եւ զգուշացուք միմեանց յոր-*
25 *դորմամբք սիրոյ և գործոց բարեաց. եւ մի՛ թող-*
ցուք զժողովս միմեանց, որպէս և սովոր են ոմանք,
այլ մխիթարեացուք, և այնչափ եւս առաւել՝ որ-
չափ տեսանիցէք զօրն մերձենալ:
26 *Զի կամակար մեռօք եթէ յանցանիցեմք յետ ըն-*
դունելութեան գիտութեան ճշմարտութեանն, այ-
նուհետեւ ոչ եւս պիտոյ է վասն մեղաց պատա-
27 *րագ, Այլ ահեղ ակնկալութիւն դատաստանին,*
և նախանձ հրոյն որ ուտիցէ զհակառակորդան:
28 *Արհամարհեալ ուրուք զօրէնսն Մովսիսի, առանց*
ողորմութեանց առ երկուք կամ երիւք վկայիւք
29 *մեռանէր. Իսկ ո՛րչափ առաւել պատժոց արժանի*
համարիցիք զայն, որ զՈրդին Աստուծոյ առ ոտն
եհար. և զարիւն [1]նորոյ ուխտին խառնակ համա-
րեցաւ որով և սրբեցաւն, և զՀոգին շնորհաց
30 *թշնամանեաց: Այլ գիտեմք զայն որ ասացն, Իմ*
են վրէժխնդրութիւնք, և ես հատուցից, ասէ Տէր.
31 *և դարձեալ թէ՝ Դատի Տէր զժողովուրդ իւր: Ահ*
մեծ է անկանիլ ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ:
32 *Արդ յիշեցէք զաւուրսն զառաջինս, յորս լու-*
սաւորեալք բազում ճգանց և չարչարանաց համ-

---

[1] ի յ—ն՝ պ—ւթ—ք

33 բերէք. Մերթ ի նախատինս և ի նեղութիւնս խայ-
տառակեալք, մերթ կցորդ այնպիսեաց վաստակա-
34 ւորացն լինել: Քանզի և [1]ընդ կապեալս՝ չարչարե-
ցարուք, և զյափշտակութիւն ընչից ձերոց խնդու-
թեամբ ընկալարուք, քանզի գիտէիք թէ լաւագոյն
եւս ստացուածս ունիք անձանց յերկինս, ուր
35 կանն և Քրիստոս: Արդ մի՛ մերժէք ի ձէնջ զհամար-
ձակութիւնն ձեր, յորում կայ մեծաց վարձուց
36 հատուցումն: Պիտոյ է ձեզ համբերութիւն, զի
զկամն Աստուծոյ արարեալ՝ հասջիք աւետեացն:
37 Զի փոքր մեւս եւս քան որչափ որ գալոցն իցէ՝
38 եկեսցէ, և ոչ յամեսցէ: Զի արդարն [2]իմ ի հա-
ւատոց կեցցէ. և եթէ յերկմիտս ոք իցէ, ոչ հա-
39 ճեսցի ընդ նա անձն իմ: Բայց մեք ոչ եթէ երկ-
մտութեամբ եմք ի կորուստ, այլ հաւատովք ի
փրկութիւն հոգւոց:

ԳԼ. ԺԱ

1 Զի՞նչ են հաւատք, եթէ ոչ յուսացելոց իրաց
հաստատութիւն, և յանդիմանութիւն որոց ոչն
2 երեւին: Զի նովաւ վկայեցան առաջինքն:
3 Հաւատովք իմանամք հաստատեալ գյաւի-
տեանն բանիւ Աստուծոյ, յաներեւութից զերե-
ւելիսս եղեալ:
4 Հաւատովք լաւ պատարագս Հաբէլ քան զկա-
յէն մատուցանէր Աստուծոյ, որով վկայեցաւ իսկ
արդար լինել. զի ի վերայ պատարագացն եղեւ
վկայութիւն նմա յԱստուծոյ. զի թէպէտ և մե-
ռաւ ի նմին, սակայն տակաւին խօսի:

---

[1]Որոնց, ի կապանս իմ [2]Յորոնց պատճառէ

5 Հաւատովք Ենովք փոխեցաւ, զի մի՛ զմահ ճա-
շակեսցէ. և ոչ ուրեք գտանէր, քանզի փոխեաց
զնա Աստուած. և յառաջ քան զփոխելն նորա
6 վկայեցաւ հաճոյ լինել Աստուծոյ։ Բայց առանց
հաւատոց անհնար է հաճոյ լինել. այլ հաւատալ
արժան է այնմ որ մերձենայ առ Աստուած՝ թէ է
[1]Աստուած. և որ խնդրեն զնա՝ լինի պարգեւատու։
7 Հաւատովք առեալ Հրաման Նոյի վասն չէր եւս
երեւելեացն, զսիրի հարեալ կազմէր զտապանն ի
փրկութիւն տան իւրոյ, որով դատեցաւ զաշխարհն,
և հաւատոցն արդարութեան եղեւ ժառանգաւոր։
8 Հաւատովք [2]որ Աբրահամն կոչեցաւ՝ ունկնդիր
եղեւ ելանել ի տեղին զոր առնլոց էր ի ժառան-
գութիւն. եւ գնաց, և ոչ գիտէր յո՛վ երթիցէ։
9 Հաւատովք պանդխտեցաւ յերկրին աւետեաց
իբրեւ յօտարութեան, խորանօք բնակեաց Իսահա-
կաւ և Յակովբաւ հանդերձ, ժառանգակցօք նո-
10 ցին աւետեաց։ Քանզի ակն ունէր հիմամբք հաս-
տատեալոյ քաղաքին, որոյ ճարտարապետ և արա-
րիչ Աստուած է։
11 Հաւատովք և ինքն Սառա [3]որ ամուլն էր՝, զո-
րութիւն առնլոյ զսերմն [3]որդեծնութեան՝ ընդու-
նէր, և ի տարաժամ հասակի [3]ծնանէր. քանզի հա-
12 ւատարիմ համարեցաւ զայն որ խոստացաւն։ Վասն
որոյ և ի միոջէն ծնանէին, և այն՝ [4]յանցեալ ժա-
մանակի՝, իբրեւ զաստեղս երկնից բազմութեամբ,
և իբրեւ զաւազ առ ափն ծովու առանց թուոյ։

---

[1] Ի ց—ն պ—ս [2] կ—ր, կոչեցեալ Աբրահամ՝
[3] Ի բ—ղ—մ պ—ս—ե [4] ց—ն, ի մեռելոյ

13 Ըստ հաւատոց մեռան ամենեքին սոքա, և չեւ
եւս ընկալեալ զաւետիսն, այլ ի հեռուստ տեսին
զնոսա [1]և ցնծացան, և խոստովան եղեն եթէ օ-
14 տարք և պանդուխտք են յերկրի։ Զի որք զայն-
պիսիսն խօսին՝ յայտ առնեն եթէ գաւառ իմն
15 խնդրեն։ Զի եթէ զայն յիշէին ուստի ելիննն՝ գոյր
16 ժամանակ դառնալոյ անդրէն։ Նա աւանիկ ապ-
նուականի իմն ցանկացեալ են, այսինքն է երկնա-
ւորին. վասն որոյ ոչ ամօթ Համարի Աստուած
կոչել նոցա Աստուած, քանզի պատրաստեաց նո-
ցա քաղաք։
17 Հաւատովք մատոյց Աբրահամ ի փորձութեան
իւրում զԻսահակ [2]պատարագ. և զմիածնն մա-
18 տուցանէր, որոյ զաւետիսն ընկալեալ էր։ Որում
ասացաւն, թէ Իսահակաւ կոչեսցի քեզ զաւակ.
19 Եդ ի մտի իւրում թէ և ի մեռելոց կարող է յա-
րուցանել Աստուած. ուստի և յառակս իսկ ըն-
կալաւ զնա։
20 Հաւատովք վասն հանդերձելոց իրաց օրհնեաց
Իսահակ զՅակովբ և զԵսաւ։
21 Հաւատովք Յակովբ ի մեռանելն իւրում զիւրա-
քանչիւր որք յորդւոցն Յովսեփու օրհնեաց, և եր-
կիր եպագ ի ծագ գաւազանի իւրոյ։
22 Հաւատովք Յովսէփ ի վախճանել իւրում յի-
շեաց զելս որդւոցն Իսրայելի, և վասն ոսկերաց
իւրոց պատուիրեաց։
23 Հաւատովք [3]զՄովսէս իբրեւ ծնաւ՝, թաքուցաւ

---

[1]Ոմանք, և հաւատացին և [2]ի Յոնէն պակասէ
[3]Յոյն, Մովսէս իբրեւ ծնաւ

ամիսս երիս ի հարց իւրոց, քանզի տեսին կայտառ
զմանուկն, և ոչ զանգիտեցին ի հրամանէ թագա-
24 աորին։ Հաւատովք Մովսէս, իբրեւ աճեաց, ու-
25 րացաւ կոչել որդի դստերն փարաւոնի. Լաւ հա-
մարեցաւ չարչարել ընդ ժողովրդեանն Աստուծոյ,
26 քան առ ժամանակ մի վայելել ի մեղս. [1]Կարեւոր
համարեցաւ զնախատինսն Քրիստոսի քան [2]զմե-
ծութիւն գանձուցն՝ Եգիպտացւոց, զի հայեցեալ
27 ակն ունէր վարձուցն հատուցման։ Հաւատովք
թողոյր զերկիրն Եգիպտացւոց, և ոչ երկնչէր ի
ցասմանէ թագաւորին, զի [3]զաներեւոյթն իբրեւ
28 զտեսեալ համբերութեամբ համարեցաւ։ Հաւա-
տովք արար զզատիկն և զհեղումն արեանն, զի
մի՛ ապականիչն անդրանկաց մերձենայցէ ի նոսա։
29 Հաւատովք անցին ընդ ծովն կարմիր իբրեւ ընդ
ցամաք երկիր. զորոյ զփորձ առեալ Եգիպտացւոցն՝
ընկղմեցան։
30 Հաւատովք պարիսպքն Երիքովի անկան, շուրջ
եկեալ զնոքօք զեւթն օր։
31 Հաւատովք Բախաբ պոռնիկ ոչ կորեաւ ընդ
անհաւատսն, որոյ ընկալեալ էր զլրտեսսն խաղա-
ղութեամբ։
32 Եւ արդ զի՞նչ եւս ասացից. զի չէ բաւական
ժամանակս պատմելոյ վասն Գեդէոնի, Բարակայ,
Սամփսոնի, Յեփթայեայ, Դաւթի և Սամուելի և
33 [4]այլոց մարգարէիցն. Որք հաւատովք պարտեցին
զթագաւորութիւնս, գործեցին զարդարութիւն,

---

[1] Յ-ԺՀ, Աւաւել մեծութիւն [2] Յ-ԺՀ, զգանձս
[3] Յ-ԺՀ, զԱներեւոյթն [4] ի Բ-Ը-ից պ-ին-ե

34 Հասին աւետեաց, խցին զբերանս առիւծուց, Շի-
ջուցին զզօրութիւն հրոյ, ապրեցան ի բերանոյ
սրոյ, զօրացան ի տկարութենէ, եղեն զօրաւորք ի
35 պատերազմի, առին զբանակս օտարաց. Ընկալան
կանայք ի յարութենէ զմեռեալս իւրեանց. Իսկ
ոմանք խոշտանգեցան, և չեւ եւս ընկալեալ զփրկութիւն,
36 զի լաւագոյն յարութեանն հասանիցեն. Եւ ոմանք
ցասանջանաց և զգանից զփորձ առին, զկապանաց
37 և զբանտից. Քարկոծեցան, աղոցեցան, փորձեցան,
սպանմամբ սրոյ մեռան, շրջեցան լաշկամաշկօք և
մորթովք այծենեօք. կարօտեալք, նեղեալք, չար-
38 չարեալք. (Զորս ոչ արժէ աշխարհս.) յանապատի
մոլորեալք և ի լերինս և յայրս և ի փապարս երկրի.
39 Եւ սոքա ամենեքին վկայեալք ի հաւատոցն, չեւ
40 եւս ընկալան զաւետիսն. Առաւծոյ վասն մեր [1]լա-
ւագոյն համարեալ, զի մի' առանց մեր կատարեսցին.

ԳԼ. ԺԲ

1 Ա.յսուհետեւ և մեք որ այսչափ շուրջ զմեզ
ճաճեալ ունիմք զրազմութիւն վկայից, [2]զհպար-
տութիւն զամենայն ի բաց ընկեցուք և զմեղս
[3]կարեւորս, համբերութեամբ ընթացուք ի պա-
2 տերազմ որ առաջի կայ մեզ. Հայեցուք ի զօրա-
գլուխն հաւատոց և ի կատարիչն Յիսուս, որ փո-
խանակ ուրախութեանն որ նմա առաջի կայր՝
յանձն առ զխաչն, արհամարհեաց զամօթն,
նստաւ ընդ աջմէ աթոռոյն Առտուծոյ.

---

[1]Ց-ՆՆ, լաւագոյն տեսեալ կանխաւ
[2]Կ-Ի, զծանրութիւն [3]Ց-ՆՆ, որ դիւրաւն պաշարեն

3 Աղէ ածէք զմտաւ, որ զայսպիսի հաճերուքիւն
ի մեղաւորաց հակառակութենէ անտի կրեաց, զի
մի՛ աշխատաք լինիցիք անձամբք ձերովք և լքանիք-
4 ցիք։ Զի չեւ եւս արեամբն չափ պատերազմեալք
5 հակառակ կացէք մեղացն. Եւ մոռացարուք զմխի-
թարութիւնն որ ընդ ձեզ իբրեւ ընդ որդեակս խօսի.
Գ. Որդեակ իմ, մի՛ լքանիր ի խրատու Տեառն,
6 և մի՛ վհատիցիս յանդիմանեալ ի նմանէ։ Զի զոր
սիրէ Տէր՝ խրատէ, տանջէ զամենայն որդի զոր
7 ընդունի։ Ի խրատու համբերութեան կայք, իբրեւ
յորդիս մատուցեալ է ի ձեզ Աստուած. ո՞ր որդի
8 է զոր ոչ խրատիցէ հայր։ Զի եթէ առանց խրա-
տու լինիցիք, որով ամենեքին բաժանորդք եղեն,
9 ապա խորթք իցէք և ոչ որդիք։ Զի եթէ ի մարմ-
նաւոր հարցն մերոց զոր ունիմք խրատիչս՝ պատ-
կառեմք, ո՛րչափ եւս առաւել հնազանդեսցուք
10 Հօրն հոգւոց, և կեցցուք։ Զի սոքա առ սակաւ
ժամանակս ըստ կամաց իւրեանց խրատեն. իսկ նա
վասն օգտի, առ ի յընդունելոյ զսրբութիւն նորա։
11 Ամենայն խրատ առ ժամանակն ոչ ուրախութեան
թուի, այլ տրտմութեան, բայց յետոյ պտուղ
խաղաղութեան նովաւ կրթեցելոցն հատուցանէ
յարդարութիւն։
12 Վասն որոյ զձեռս լքեալս և զծունկս կթոտս
13 հաստատեցէք. Եւ ղշաւիղս ուղիղս արարէք ոտից
ձերոց, զի մի՛ որ կաղն իցէ՝ գլորիցի, այլ մանա-
14 ւանդ բժշկեսցի։ Զխաղաղութեան ձգեա երթայք
ընդ ամենեսին և զսրբութեան, առանց որոյ ոչ ոք
15 տեսանիցէ զՏէր։ Զգոյշ լերուք, գուցէ ոք յետ-
նեալ գտանիցի ի շնորհացն Աստուծոյ. մի՛ ոք ար-

մատ դառնութեան ի վեր երեւեալ նեղիցէ, և նո-
16 վաւ բազումք պղծիցին։ Մի՛ ոք պոռնիկ և պիղծ
իբրեւ զԵսաւ, որ ընդ միոյ կերակրոյ զանդրան-
17 կութիւնն վաճառեաց։ Գիտէք զի թէպէտեւ յե-
տոյ կամեցաւ ժառանգել զօրհնութիւնան, խո-
տան գտաւ. զի և ապաշխարութեան տեղի ոչ ե-
գիտ, թէպէտեւ արտասուօք խնդրեաց զնա։
18 Դ. Զի ոչ էք մատուցեալ առ լեառն շօշափելի,
որ հրովն վառեալ էր, [1]և միգով և մառախղով
19 և խաւարաւ և մթով, Ուր փողն հնչէր և բարբառ
պատգամացն". ուստի որք լսանն՝ [2]հրաժարեցին,
20 զի մի՛ կրկնեացի առ նոսա բանն. Քանզի ոչ հան-
դարտէին հրամանին. [3]Թէպէտեւ գազան մերձե-
21 նայր ի լեառնն, քարկոծ լինէր"։ Եւ այնպէս ահա-
գին էր տեսիլն, զի և Մովսէս ասէր եթէ Զահի
22 հարեալ եմ և դողամ։ Այլ մատուցեալ էք ի
Սիովն լեառն, և ի քաղաք Աստուծոյ կենդանւոյ,
յԵրուսաղէմ յերկինս, և ի բիւրաւոր բանակս
23 հրեշտակաց, Եւ յեկեղեցիս անդրանկաց գրելոց
յերկինս, և առ դատաւորն ամենեցուն Աստուած,
24 և յոգիս արդարոց կատարելոց, Եւ ի նորոց կտա-
կարանաց միջնորդն Յիսուս, և ի հեղումն արեան
նորա որ առաւել խօսի քան զՀաբելին։
25 Զգոյշ լերուք, գուցէ հրաժարիցէք յայնմանէ

---

[1]Յ-ՆՆ, և ոչ ի մէգ և ի խաւար և ի մրրիկ, (19) Եւ
ի հնչումն փողոյ և ի բարբառ պատգամաց
[2]կամ, աղաչեցին [3]Յ-ՆՆ, Մինչեւ իսկ գազան
մերձենայցէ ի լեառնն, քարկոծեսցի, ամենայն յա-
լտն, կամ նետիւք խոցոտեսցի

որ խօսեցաւն. զի եթէ նոքա ոչ կարացին զերծա-
նել, հրաժարեալք յայնմանէ որ յերկրին հրամա՛ն
տայր, ո՞րչափ եւս առաւել մեք, եթէ յերկնա-
26 ւորէն թիկունս դարձուցանիցեմք. Որոյ ձայնն զեր-
կիր շարժեաց յայնժամ, և այժմ խոստացեալ է
և ասէ, Միւսանգամ շարժեցից ոչ միայն զերկիր,
27 այլ և զերկինս: Այլ միւսանգամն յայտ առնէ
զշարժելոցն իբրեւ զեղելոց փոփոխումն, զի հաս-
28 տատուն կացցեն անշարժքն: Վասն որոյ թագա-
ւորութիւն անշարժ ընկալեալ՝ պինդ կալցուք
զնորհն, որով պաշտեմք զԱստուած հաճու-
29 թեամբ՝ ահիւ և դողութեամբ. Քանզի Աստուած
մեր հուր ծախիչ է:

ԳԼ. ԺԳ

1 Եղբայրսիրութիւն հաստատեացի [1]առ ձեզ՝:
2 Զօտարսիրութիւն մի՛ մոռանայք, զի սոյնու-
3 մանէ յանգէտս ընկալան զհրեշտակս: Յուշ լիցին
ձեզ կապեալքն, որպէս թէ դուք ընդ նոսա կա-
պեալք իցէք. և չարչարեալքն, որպէս թէ և դուք
4 իսկ [2]մարմնաւորք էք՝: Պատուական է ամուսնու-
թիւն ամենեւին, և սուրբ՝ անկողինք. բայց զրուն
5 և զպոռնիկս դատի Աստուած: Բարք անարծա-
թասէրք լինիցին, բաւական համարել որչափ ինչ
ի ձեռս իցէ. քանզի ինքն իսկ ասաց, Ոչ թողից
6 զքեզ և ոչ ընդ վայր հարից. Որպէս զի համար-
ձակ լիցուք ասել, Տէր է իմ օգնական և ես ոչ
7 երկեայց, զի՞ արասցէ ինձ մարդ: Յիշեցէք զառաջ-

---

[1] ԻՔ Յառնէն պոլոսք [2] Յոյնն, էք ի մարմնի

նորդս ձեր որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ. հայեցեալք յելս գնացից նոցա՝ նմանողք եղերուք
8 հաւատոցն։ Յիսուս Քրիստոս երէկ և այսօր, նոյն
9 և յաւիտեանս։ Յուսմունս պէսպէս և յօտարա-ձայնս մի՛ դանդաչէք. զի լաւ է շնորհօք հաստա-տել զսիրտս և ոչ կերակրովք. որովք ոչինչ օգ-տեցան որ այնպէսն գնացին։
10 Ե. Ունիմք մեք սեղան, ուստի ոչ ունին իշխա-նութիւն ճաշակել որք պաշտեն զպաշտօն խորա-
11 նին. Զի որոց անասնոց մատչէր արիւնն ի սրբու-թիւնան վասն մեղաց ի ձեռն քահանայապետին,
12 նոցուն մարմինք այրէին արտաքոյ բանակին։ Վասն որոյ և Յիսուս, զի սրբեսցէ իւրով արեամբն զժո-
13 ղովուրդն, արտաքոյ դրանն չարչարեցաւ։ Արդ եկայք ելցուք առ նա արտաքոյ բանակին՝ առեալ
14 յանձն զնախատինս նորա։ Քանզի ոչ ենթէ ունիմք քաղաք որ աստէն ինալոց իցէ, այլ զհանդերձեալն
15 խնդրեմք։ Արդ ի ձեռն նորա մատուսցուք պատա-րագ օրհնութեան յամենայն ժամ Աստուծոյ. այսինքն է՝ զպտուղ շրթանց խոստովանելոց յա-
16 նուն նորա։ Զբարերարութիւն և զհաղորդութիւն մի՛ մոռանայք, զի ընդ այնպիսի պատարագս հաճի
17 Աստուած։ Ունկնդիր լերուք առաջնորդաց ձերոց, և հպատակ կացէք [1]նոցա, զի նոքա տքնին վասն ոգւոց ձերոց, որպէս թէ համարս տալոց իցեն [2]ընդ ձեր". զի խնդութեամբ արասցեն զայն և մի՛ յոգւոց հանելով, զի այն ոչ յօգուտ ձեր է։
18 ԿԻՐ. Աղօթս արարէք վասն մեր, զի հաստա-

---

[1] ի բազմս պիսս [2] ի ցնդի պիսս

տեալ գիտեմք եթէ բարւոք միտս ունիմք, յամե-
19 նայնի կամիմք բարւոք գնացս ցուցանել։ Եւ առա-
ւել աղաչեմ զի զայն առնիցէք, զի վաղագոյն
20 պատապարեցայց ձեզ։ Եւ Աստուած խաղաղու-
թեան որ եհան ի մեռելոց զՀովիւն հօտից զմեծն
արեամբ յաւիտենական ուխտին, զՏէր մեր Յի-
21 սուս, Հատուսցէ զձեզ ի գործս բարութեան
առնել զկամս նորա, և արասցէ [1]ի մեզ զհաճոյն
առաջի իւր ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, որում
փառք յաւիտեանս։ Ամէն։
22 Աղաչեմ զձեզ, եղբարք, անսալ բանիս մխի-
23 թարութեան, քանզի սակաւուք գրեցի ձեզ։ Եւ
ճանաչէք զեղբայրն [2]մեր զՏիմոթէոս զարձակեալն
[3]առ ձեզ՝. ընդ որում, եթէ վաղագոյն գայցէ,
24 տեսից զձեզ։ Ողջոյն տացէք ամենայն առաջնոր-
դաց ձերոց և ամենայն սրբոց. ողջոյն տան ձեզ
25 որ ի կողմանս Իտալիացւոց են։ Շնորհք ընդ ամե-
նեսին ձեզ։[4]

Ա՟ ԵՒՐԱՅԵՑԻ՟ ԳՐԵՑԱ՟ ԱԻԳՈՒՍՏՈՍԻ Ի ՅԵՐՈՒՏԻՍԱՂԵՄ։

---

[1] Որոնք, ի ձեզ
[2] Յորոմ պակաս
[3] Ի ցաղին պակաս
[4] Բազում յունական, Ամէն։

[1]ԹՈՒՂԹ

ՍՐԲՈՑ ԱՌԱՔԵԼՈՑՆ ՅԱԿՈՎԲԱՅ

ԿԱԹՈՂԻԿԷ"

ԳԼՈՒԽ Ա

1 ԱԴ· ՅԱԿՈՎԲՈՍ, Աստուծոյ և Տեառն Յիսուսի
Քրիստոսի ծառայ, երկոտասան ազգացդ որ ի
սփիւռս էք՝ ողջոյն։
2 Ամենայն ուրախութեան արժանի համարիջիք,
եղբարք, յորժամ ի պէսպէս փորձութեանց ի մէջ
3 անկանիցիք. Գիտասջիք զի հանդէս ձերոց հաւա-
4 տոցն յօրինեալ գործէ զհամբերութիւն։ Իսկ համ-
բերութիւնն գործ կատարեալ ունիցի, զի իցէք
ողջանդամք և կատարեալք, և ոչ ինչ իւիք նուա-
զեալք։
5 Ապա թէ ոք ի ձէնջ իցէ նուազեալ յիմաստու-
թենէ, խնդրեսցէ յԱստուծոյ որ տայն ամենայնի
6 առատապէս և ոչ նախատէ, և տացի նմա։ Բայց
խնդրեսցէ հաւատով և մի՛ երկմտեսցէ. զի որ
երկմիտն է՝ նման է հողմնակոծեալ և տատանեալ
7 ալեաց ծովու. Մի՛ ակնկալեցի մարդն այն առնուլ

---

[1] Ոմանք, Թուղթ Յակոբեայ Կաթողիկէ. այլք, որպէս
և ոմանք ի Հայերէն Յեղափրոց, Թուղթ Յակոբեայ

8 ինչ [1]յԱստուծոյ. Զի այր երկմիտ առանց հաստա-
տութեան է յամենայն ճանապարհս իւր։
9 Պարծեսցի եղբայր խոնարհ ի բարձրութիւն իւր,
10 եւ որ մեծատունն իցէ՝ ի խոնարհութիւն իւր.
11 քանզի իբրեւ զծաղիկ խոտոյ անցցէ. Զի ծագեաց
արեւ հանդերձ խորշակաւ և ցամաքեցոյց զխոտն,
և թօշոմափեցաւ ծաղիկն նորա. և կորեաւ վայել-
չութիւն երեսաց նորա. նոյնպէս և մեծատունն
[2]հանդերձ շահիւքն իւրովք՝ թառչամեացի։
12 Երանեալ է այր որ համբերիցէ փորձանաց. զի
եթէ ընտիր եւս գտանիցի, առցէ զպսակն կենաց՝
զոր խոստացաւ սիրելեաց իւրոց [3]Տէր։
13 Ասէ. Մի՛ ոք որ ի փորձութեան իցէ ասիցէ թէ
յԱստուծոյ փորձիմ. զի Աստուած անփորձ է չար-
14 եաց, փորձէ նա և ոչ ոք։ Իւրաքանչիւր ոք փոր-
ձի առ ի յիւրոցն ցանկութեանց ձգեալ և պատ-
15 րեալ։ Ապա այնուհետեւ ցանկութիւնն յղացեալ՝
զմեղս ծնանի, և մեղքն կատարեալ՝ զմահ ծնանին։
16 Մի՛ խաբիք, եղբարք իմ սիրելիք. (17) Զի ամե-
նայն տուրք բարիք և ամենայն պարգեւք կատար-
եալք ի վերուստ են իջեալ առ ի Հօրէն լուսոյ,
յորում չիք փոփոխումն և կամ շրջելոյ ստուեր։
18 Կամեցեալ ծնաւ զմեզ բանիւն ճշմարտութեան,
լինել մեզ [4]պտուղ ինչ առաջնութեան նորա։
19 [5]Գիտասջիք, եղբարք իմ սիրելիք, եղիցի ամե-
նայն մարդ արագ առ ի լսել, և ծանր առ ի խո-

---

[1] Յ-ՆՆ, ի Տեառնէ [2] Յ-ՆՆ, ի գնացս իւր
[3] Յ-ՄԱՆ է Յ-Ն Ա է Հ-Յ ՅԵ-ՓՐ-Ց Պ-ՓՈ-Ք
[4] Ց-ՆՆ, երախայրի [5] Ո-ՄԱՆ, Ուսուի

20 սել, և ծանր առ ի բարկանալ։ Զի բարկութիւն
21 մարդոյ զարդարութիւն Աստուծոյ ոչ գործէ։ Ո-
րով ի բաց թօթափեալ զամենայն աղտեղութիւն
և զյաւելուածս չարեաց, հեզութեամբ ընդունի-
ջիք զբանն ընդարձոյս, որ կարօղն է կեցուցանել
22 զոգիս ձեր։ Լինիջիք առնելիք բանին, և մի՛ լսե-
23 լիք միայն [1]համարեաջիք զանձինս։ Զի եթէ ոք լսե-
լի միայն իցէ բանին և ոչ առնելի, նման է նա
մարդոյ որ պշուցեալ հայիցի ընդ [2]երեսս իւր որ
24 ծննդեցին՝՝ ի հայելւոջ· Զի հայեցեալ եառս զինքն
և զանց արար, և անդէն մոռացաւ թէ որպիսի ոք
25 էր։ Իսկ որ յառեալ ի կատարեալ օրէնս ազա-
տութեանն հայիցի և ի նմին կացցէ, ոչ եղեւ նա
լսող մոռացութեան, այլ՝ առնելի գործոյն. նա
26 յառնելն իւրում լիցի երանելի։ Եթէ [3]ոք կամիցի
կրօնաւոր լինել և ոչ սանձահարիցէ զլեզու իւր,
այլ [4]զրաղեցուցանիցէ զսիրտն իւր, այնպիսւոյն
27 վայրապար է կրօնաւորութիւնն։ Կրօնաւորութիւն
սուրբ և անարատ առ ի յԱստուծոյ և ի Հօրէ այս
է, Այցելու լինել որբոց և այրեաց ի նեղութեան
իւրեանց, անարատ պահել զանձն յաշխարհէ։

ԳԼ· Բ

1 ԱՋ· Եղբարք իմ, մի՛ աչառանօք ունիցիք զՀա-
ւատսն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, [5]որ Տէրն
2 է՝՝ փառաց։ Եթէ մտցէ ի ժողովուրդ ձեր այր որ

---

[1] Կ՚ոմ, խարելով [2] Յ-ՆՆ, երեսս ծննդեան իւրոյ
[3] Ո՛ՒՆ, ոք ի ձեզ [4] Յ-ՆՆ, խաբիցէ
[5] Ի Ց-ՆԻՆ պ-Ւ-Ա

ունիցի մատանի ոսկի և հանդերձս պայծառս,
մատանիցէ անդր և աղքատ ոք ի հանդերձս աղտե-
3 ղիս, Հայիցիք ընդ այն որ ունիցի զհանդերձսն պայ-
ծառս, և ասիցէք եթէ Դու նիստ աստ պատուով,
և ցաղքատն ասիցէք եթէ Ցոտն կաց դու այսր,
կամ թէ՝ Ես նիստ առ պատուանդանիս իմովմ,
4 Ո՞չ խղճիցէք յանձինս և լինիցիք դատաւորք չա-
5 բացն խորհրդոց։ Լուարուք [1]ինձ, եղբարք իմ սի-
րելիք. ո՞չ ապաքէն Աստուած ընտրեաց զաղքատս
աշխարհիս, որ են մեծատունք հաւատովք և ժա-
ռանգաւորք արքայութեանն զոր խոստացաւ սի-
6 րելեաց իւրոց։ Եւ դուք անարգէք զաղքատս. ո՞չ
մեծատունք յաղթահարեն զձեզ, և նոքա քաշեն
7 զձեզ ի դատաստան։ Ո՞չ նոքա հայհոյեն զբար-
8 ւոք անունն որ կոչեցեալ է ի վերայ ձեր։ Ապա
թէ զօրէնսն կատարիցէք զարքունականս ըստ Գրոց,
եթէ՝ Սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո, բար-
9 ւոք առնէք. Իսկ եթէ աչառիցէք, մեղս գործէք՝
10 յանդիմանեալք յօրինացն իբրեւ օրինազանցք։ Որ
ոք զամենայն օրէնսն պահիցէ, և միով իւիք ինչ
11 գիմիցէ, եղեւ ամենայն օրինացն պարտապան։ Զի
որ ասացն թէ [2]Մի՛ պոռնկանիցես, ասաց թէ՝ Եւ
մի՛ շնայցես. զի եթէ պոռնկանիցես ոչ, բայց շնայ-
12 ցես՝՝, եղեր յանցաւոր օրինացն։ Այնպէս խօսեցարուք և այնպէս արարէք, որպէս զի ազատութեան
13 օրինօքն իցէք դատելոց։ Զի անողորմ դատաստան

---

[1] ի Յ—ն՝ պ—ե—ե

[2] Բ—ղ—ժ, Մի՛ շնայցես, ասաց թէ՝ Եւ մի՛ պոռնկանիցես. զի եթէ շնայցես ոչ, բայց պոռնկանիցես

լինելոց է այնմ որ ոչ առնիցէ զողորմութիւն,
[1]քանզի բարձր ի գլուխ պարծի ողորմութիւն առ
դատաստանաւն։
14 Աէ. Ջի՞նչ օգուտ իցէ, եղբարք իմ, եթէ ա-
սիցէ ոք հաւատս ունել և գործս ոչ ունիցի. մի-
15 թէ կարիցէ՞ն հաւատքն ապրեցուցանել զնա։ Եթէ
եղբայր ոք կամ քոյր իցեն մերկք կամ կարօտեալ
16 աւուրն կերակրոյ, Ասիցէ ոք ի ձէնջ ցնոսա, եր-
թայք խաղաղութեամբ, ջեռարուք և յագեցարուք. և տայցէք ոչ նոցա զպէտս մարմնոյն, զի՞նչ
17 օգուտ իցէ։ Այնպէս և հաւատք եթէ գործս ոչ
18 ունիցին, մեռեալ են առանձինն։ Այլ թերևս
ասիցէ ոք, եթէ Դու հաւատս ունիս, և ես գործս
ունիմ. ցոյց ինձ զհաւատան քո առանց գործոց,
19 և ես ցուցից քեզ ի գործոց իմոց զհաւատան։ Դու
հաւատաս զի մի է Աստուած, բարւոք առնես. և
20 դևք հաւատան և սարսեն։ Կամի՞ս գիտել, ով
մարդ անուսի, զի հաւատք առանց գործոց [2]դա-
21 տարկ են։ Աբրահամ հայր մեր ո՞չ ապաքէն ի
գործոց արդարացաւ հանեալ ի սեղան զորդին իւր
22 զԻսահակ [3]պատարագ։ Տեսանե՞ս զի հաւատքն ե-
ղեն գործակից գործոց նորա, և ի գործոց անտի
23 հաւատքն կատարեցան։ Եւ կատարեցաւ Գիրն որ
ասէ, Հաւատաց Աբրահամ Աստուած, և հա-
մարեցաւ նմա յարդարութիւն. և կոչեցաւ բարե-
24 կամ Աստուծոյ։ Տեսանէ՞ք զի ի գործոց արդարա-
25 նայ մարդ, և ոչ ի հաւատոց միայն։ Այնպէս և

---

[1] Ի ցոյն չեռագրաց յամառս, և, յայլս՝ պակասէ
[2] Բազմամ, մեռեալ [3] Ի ցառնէն պակասէ

Բախաբ պոռնիկ ո՞չ ապաքէն ի գործոց արդարացաւ, ընկալեալ զլրտեսան, և ընդ այլ ճանապարհ
26 արձակեաց։ Զոր օրինակ մարմին առանց հոգւոյ մեռեալ է, այնպէս և հաւատք առանց գործոց մեռեալ են։

ԳԼ. Գ

1 ԲԱ. Ա՛ի՛ բազում վարդապետս լինել, եղբարք իմ, գիտասջիք զի մեծ դատաստան ընդունելոց եմք.
2 Քանզի բազում ինչ յանցանեմք ամենեքեան. եթէ ոք բանիւ ոչ յանցանիցէ, նա է մարդ կատարեալ, որ կարօղն է սանձահարել զամենայն մարմինն իւր։
3 Տես զի ձիոց սանձս ի բերան դնեմք առ անսալոյ նոցա մեզ, և զամենայն մարմինս նոցա նուաճեմք։
4 Ահաւասիկ և նաւք որպիսի՛ ինչ են, և ի սաստիկ հողմոց վարին, և փոքր թեւուիւ շրջին յոր կոյս և
5 միտք ուղղչին կամիցին։ Այնպէս և լեզու փոքր ինչ անդամ է և մեծամեծս բարբառի. ահա և
6 սակաւ ինչ հուր զորպիսի՛ անտառս հրդեհէ։ Եւ լեզու հուր՝ [1]զարդ անիրաւութեան. լեզու հաստատեալ է յանդամս մեր, որ զամենայն մարմինն ապականէ, և վառէ հրով զանիւ ծննդեան, և
7 բորբոքեալ առնորի [2]ի գեհենի։ Ամենայն բնութիւն գազանաց և թռչնոց և սողնոց և որ ի ծովու են, հնազանդեալ է և հնազանդի մարդկեղէն բնու-
8 թեան. Բայց զլեզու մարդկան ոչ ոք կարէ հնազանդել, չարն և զանկարգ և զի թունաւոր մահա-
9 բերին։ Նովաւ օրհնեմք [3]զՏէրն և զՀայր. և նովաւ

---

[1] կամ, առնարհ [2] Յունն, ի գեհենէ [3] Ոմանք, զԱստուած

անիծանեմք զմարդիկ որ ըստ նմանութեան Աստուծոյ արարան։ Ի նմին բերանոյ ելանեն օրհնութիւնք և անէծք. ոչ է պարտ, եղբարք իմ, այսպէս լինել։ Միթէ աղբեւր անդամին ի միոյ անկանէ բղխիցէ՞ քաղցր և դառն։ Միթէ մա՞րթ ինչ իցէ, եղբարք իմ, թզենւոյ ձէթ բերել, կամ որթոյ թուզ. [1]և ոչ աղտաղտին տեղւոյ ջուր քաղցր առնել"։

13 ԲԲ. Ո՞վ իցէ իմաստուն և հանճարեղ ի ձեզ, ցուցցէ ի բարւոք գնացից զգործս իւր հեզութեամբ
14 իմաստութեան։ Ապա եթէ նախանձ և դառնութիւն և հակառակութիւն ունիցիք ի սիրտս ձեր,
15 մի՛ պարծիք սուտ առնել զճշմարտութիւնն։ Ոչ է իմաստութիւնս այս իջեալ ի վերուստ, այլ երկրաւոր, շնչաւոր և դիւական։
16 Զի ուր հեւ և նախանձ, անդ է անկարգութիւն և ամենայն իրք
17 չարք։ Իսկ վերին իմաստութիւնն նախ զի սուրբ է, և ապա խաղաղարար, հեզ, դիւրահաւան, լի ողորմութեամբ և պտղովք բարեաց, անխիղճ, առանց կեղծաւորութեան։ Պտուղ արդարութեան
18 խաղաղութեամբ սերմանի այնոցիկ՝ որ առնեն զխաղաղութիւն։

Գլ. Դ

1 Ուստի՞ պատերազմունք, և ուստի՞ կռիւք ի ձեզ. ո՞չ յայդպիսի ցանկութեանց ձերոց որ զօրացեալ
2 են յանդամս ձեր։ Ցանկայք, և ոչ ունիք. սպա-

---

[1] Ոմանք, նոյնպէս և ոչ իմիք աղբեր ջուր քաղցր և աղտաղտին առնել

նանէք և նախանձիք, և ոչ կարէք հասանել. պա-
տերազմիք, կռուիք, և ոչ ունիք, վասն զի ոչ
խնդրէք. խնդրէք և ոչ առնուք, վասն զի չարա-
չար խնդրէք. զի անդէն ի ցանկութիւնս ձեր մա-
4 շեսջիք: Շնացողք, ո՞չ գիտէք զի աշխարհիս
թշնամութիւն է առ Աստուած. զի որ ոք կամիցի
սիրել զաշխարհ, թշնամի առնէ զանձն Աստուծոյ:
5 Կամ թէ վայրապա՞ր համարիցիք զոր ասէ Գիրն,
[1]Ա՛ռ նախանձ ինչ որում փափաքէ հոգին՝ որ բնա-
6 կեաց ի մեզ. [2]Տալ զառաւել շնորհան՝. վասն որոյ
ասէ, Տէր ամբարտաւանից հակառակ կայ, տայ
շնորհս խոնարհաց:
7 Բգ. Հնազանդեցարուք այսուհետեւ Աստուծոյ.
և կացէք հակառակ չարախօսին, և լիցի փախաս-
8 կան առ ի ձէնջ: Մերձեցարուք առ Աստուած,
և մերձեսցի առ ձեզ. սրբեցէք զձեռս, մեղաւորք,
9 և ուղիղ արարէք զսիրտս, երկմիտք. Տառապե-
ցարուք, սգացարուք և լացէք. ծաղր ձեր ի սուգ
դարձցի, և ուրախութիւն ձեր՝ ի տրտմութիւն:
10 Խոնարհեցարուք առաջի Տեառն և բարձրացու-
ցէ զձեզ:
11 Մի՛ բամբասէք զմիմեանս, եղբարք. որ բամբա-
սէ զեղբայր իւր կամ դատի զեղբայր իւր՝ զօրէնսն
բամբասէ և զօրէնսն դատի. իսկ եթէ զօրէնսն
դատիցիս, ոչ առնելի օրինացն ես, այլ դատաւոր:
12 Մի է Օրէնսդիր [3]և Դատաւոր՝, որ կարօղն է փրկել

---

[1]Յ-ՆՆ, Ա՛ռ նախանձ ինչ փափաքէ հոգին, ՚ՈՄ, Ա՛ռ
նախա՞նձ ինչ փափաքիցէ հոգին [2]Յ-ՆՆ, ԱՄԼ
տայ առաւել շնորհս [3]Յ-ՈՄՈՆ պակաս

և կորուսանել. դու ո՞ ես որ դատիս զընկերն։
13 Ահաւասիկ են որ ասեն, Այսօր և վաղիւ եր-
թիցուք յայս անուն քաղաք, եղիցուք անդ տարի
14 մի, վաճառեցուք և շահեցուք. Որք ոչ գիտէք
15 զվաղիւն. Որպիսի՞ ինչ իցեն կեանք ձեր, զի իբրեւ
գոլոյր է, որ առ սակաւ մի երեւեալ՝ և ապա
ապականեալ. փոխանակ զի ասէիք, Եթէ Տէր կա-
մեցի, և կեցցուք, արասցուք զայս ինչ կամ զայն։
16 Եւ արդ պարծիք յամբարտաւանութեան ձերում.
ամենայն ինչ այսպիսի պարծանք չարութեան են։
17 Որ ոք գիտիցէ զբարին և ոչ առնիցէ, մեղք են նմա։

ԳԼ. Ե

1 ԲԴ. Արդ այսուհետեւ, մեծատունք, լացէք և
ողբացէք ի վերայ թշուառութեանցն, որ գալոց
2 են ի վերայ ձեր։ Զի մեծութիւնդ ձեր յոչինչ է,
3 և հանդերձք ձեր՝ կերակուր ցեցոյ։ Եւ արծաթ
ձեր և ոսկի ժանգահար, և ժանգ նոցա լիցի ձեզ
ի վկայութիւն, և կերիցէ զմարմինս ձեր իբրեւ
4 զՀուր. գանձեցէք աւուրցն յետնոց։ Ահաւասիկ
վարձք մշակաց որ գործեն զանդս ձեր, [1]առ ձեզ
են.՝՝ գրկեալն ի ձէնջ, ազաղակէ, և բողոք հնձո-
5 ղացն եհաս յականջս Տեառն զօրութեանց։ Փափ-
կացայք ի վերայ երկրի և զբօսայք, անուցէք զսիրտս
6 ձեր իբրեւ աւուր սպանման։ Զրկեցէք, սպանէք
զարդարն, որ ոչ կայր ձեզ հակառակ։
7 Երկայնամիտ լերուք, եղբարք իմ, մինչեւ ի գա-
լուստն Տեառն. ահա մշակ երկայնամտեալ սպասէ

---

[1] ի ցուն պոյոէ

պատուական պտղոյն երկրի, մինչեւ առցէ [1]զկա-
8 նուխ և զանձրեւն"։ Երկայնամտեցէք և դուք,
հաստատեցէք զսիրտս ձեր. զի գալուստն Տեառն
9 մերձեալ է։ Մի՛ [2]արտմեցուցանէք զմիմեանս", եղ-
բարք, զի մի՛ դատիցիք. ահաւասիկ Դատաւորն
10 առ դուռս կայ։ Օրինակ առէք, եղբարք, չարչա-
րանաց և երկայնմտութեան զմարգարէսն որ խո-
11 սեցան յանուն Տեառն։ Ահաւասիկ երանեմք համ-
բերողաց. զհամբերութիւնն Յովբայ լուարուք, և
զկատարումն Տեառն տեսէք, զի բազմագութ է
Տէր և ողորմած։
12 Բե. Յառաջ քան զամենայն ինչ, եղբարք իմ,
մի՛ երդնուցուք, մի՛ յերկինս, մի՛ յերկիր, մի՛ յայլ
ինչ երդումն, այլ եղիցի ձեր այո՝ այո, և ոչ՝
ոչ, զի մի՛ [3]ի կեղծաւորութիւն ինչ՝ անկանիցիք։
13 Վ չտանայցէ՞ ոք ի ձէնջ, յաղօթս կայցէ. բերկրի-
14 ցի՞ ոք, սաղմոսասասցէ։ Հիւանդանայցէ՞ ոք ի
ձէնջ, կոչեսցէ զերիցունս եկեղեցւոյն, և արասցեն
ի վերայ նորա աղօթս, օծցեն իւղով յանուն
15 Տեառն. Եւ աղօթքն հաւատով փրկեսցեն զյո-
խտեալն, և յարուսցէ զնա Տէր. և եթէ մեղս
16 ինչ իցէ գործեալ, թողցի նմա։ Խոստովան եղէ-
րուք միմեանց զմեղս, և աղօթս արարէք ի վերայ
միմեանց որպէս զի բժշկեսջիք. քանզի յոյժ զօրա-
17 ւոր են աղօթք արդարոյ յօգնականութիւն։ Եղիա

---

[1] Ոմանք, զպտուղն զկանուխ և զանձրեւն. այլք, զանձրեւն զկանուխ և զանձրեւն

[2] Յոյնն, լինիք արտունջ զմիմեանց

[3] Յոյնն, ընդ դատաստանաւ

մարդ էր իբրեւ զմեզ չարչարելի. և յաղօթս [1]ե-
կաց, և ոչ տեղւոյ յերկիր զերիս ամն և զվեց ա-
18 միս: Եւ դարձեալ եկաց յաղօթս, և եառնէր եր-
կինք զանձրեւ, և բուսոյց երկիր զպտուղ իւր:
19 Եղբարք իմ, եթէ ոք ի ձէնջ մոլորեացի [2]ի ճա-
նապարհէ ճշմարտութեան՝, և դարձուսցէ ոք զնա,
20 Գիտասցէ զի որ դարձուսցէ զմեղաւորն ի մոլորու-
թեան ճանապարհէն իւրմէ, փրկեսցէ զոգի [3]իւր ի
մահուանէ և ծածկեսցէ զբազմութիւն մեղաց:

[4]ԹՈՒՂԹ

ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՋԻՆ՝

ԳԼՈՒԽ Ա.

1 ԲՋ. Պետրոս, առաքեալ Յիսուսի Քրիստոսի,
ընտրելոցդ՝ ժիդեհից որ ի սփիւռս Պոնտացւոց,
Գաղատացւոց և Կապադովկեցւոց և Ասիացւոց և
2 Բիւթանացւոց, Ըստ կանուխ գիտութեանն Աս-
տուծոյ Հօր, սրբութեամբ Հոգւոյն, ի հնազան-

---

[1] Յ-ՆՆ, եկաց զի մի՛ տեղասցէ [2] Ո՛ՀԱՆ, ի ճշմար-
տութենէ [3] ի Յ--ՆԷն պակաս: Յ-Ո՛ՀԱՆ՝ նորա
[4] Ո՛ՀԱՆ, Թուղթ Պետրոսի կաթողիկեայ Առաջին. այլ՝
Թուղթ Պետրոսի Առաքելոյ կաթողիկեայ Առաջին

դութիւն և ի հեղումն սրեանն Յիսուսի Քրիստոսի. շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն բազմացի։
3 Օրհնեալ է Աստուած և Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ բազում ողորմութեան իւրում ծնաւ զմեզ վերստին ի յոյսն կենդանի ի յարութենեանն Յիսուսի Քրիստոսի ի մեռելոց,
4 յանեղծ և յանարատ և յանթառամ ժառանգու-
5 թիւնն որ պահեալ է յերկինս ձեզ, Որ զօրութեամբն Աստուծոյ պահեալ [1]էիք հաւատովք ի պատրաստեալ փրկութիւնն, յայտնել ի յետին
6 ժամանակս. Որով ուրախ լինիջիք որք այժմ սակաւիկ ինչ բան պատշաճի իրացդ տրտմեալ էք ի
7 պէսպէս փորձութիւնս. Զի հանդէս ձերոց հաւատոցն [2]առաւել քան զոսկի կորստական պատուական է, որ հրով փորձեալ գտաւ՝ ի գովութիւն և ի փառս և ի պատիւ ի յայտնութենեանն Յիսուսի
8 Քրիստոսի, Զոր ոչն տեսէք և [3]սիրեցէք, ընդ որ այժմ ոչ հայեցեալք բայց [4]հաւատացէք, և ուրախ էք անճառ և փառաւորեալ խնդութեամբն.
9 Ընկալեալ վկայասրութիւն հաւատոցն ձերոց՝ զոգւոցն
10 փրկութիւն։ Վասն որոյ փրկութեան խնդրեցին և քննեցին մարգարէքն, որք վասն որոյ ի ձեզ լինե-
11 լոց էին շնորհքն՝ մարգարէանային. Քննէին յորում և յորպիսի ժամանակի գուշակէր ի նոսա Հոգին Քրիստոսի, որ նախ վկայարանացն Քրիս-

---

[1]Կ՚ե, էք [2]Յ՚ն՚, որ առաւել քան զոսկի կորըստական, թէպէտեւ հրով փորձեալ, պատուական է, գտանիցի [3]Յ՚ն՚, սիրէք [4]Յ՚ն՚, հաւատայք.

12 տոսի վկայէը, և յետ այնորիկ զփառացն։ Որոց և յայտնեցաւ իսկ զի ոչ եթէ անձանց, այլ մեզ մատակարարէք լինէին նոցին, որք այժմ պատմեցան այնոքիւք որ աւետարանեցինն ձեզ Հոգւովն Սրբով, որ առաքէրն յերկնից· զոր ցանկային տեսանել [1]դոնեայ ընդ աղօտ՝՝ հրեշտակք։

13 Բէ· Որով պնդեալ զմէջս մտաց ձերոց, զուարթացեալք, բովանդակ ապաստեցէք հասելոց ձեզ շնորհացն ի յայտնութեանն Յիսուսի Քրիստոսի,

14 Իբրեւ զորդիս հնազանդութեան, մի՛ կերպարանեալք առաջին ձերով անգիտութեանն ցանկու-

15 թեամբք· Այլ ըստ Սրբոյն որ կոչեաց զձեզ՝ և

16 դուք սուրբք յամենայն գնացս [1]ձեր լինիջիք։ Վասն որոյ գրեալ է եթէ Եղերուք սուրբ, զի ես սուրբ

17 եմ։ Եւ եթէ Հայր կոչիցէք զայն որ առանց ակնառութեան դատի ըստ իւրաքանչիւր գործոց, ապա երկիւղիւ զձերոյ պանդխտութեան ժամանակդ

18 գնասջիք։ Գիտասջիք զի ոչ ապականացու արծաթեղինօք և ոսկեղինօքն փրկեցարուք ի ձերոց ունայ-

19 նութեան հայրենատուր գնացիցն, Այլ պատուականն արեամբն Քրիստոսի, իբրեւ անբիծ և անարատ

20 գառինն· Որ յառաջծանօթն էր նախ քան զիսկզբանէ աշխարհի, և երեւեցաւ ի վախճան ժամանակաց

21 վասն ձեր, Որք նովաւ հաւատացէք Աստուած որ յարոյց զնա ի մեռելոց, և ետ նմա փառս· զի

22 հաւատքն ձեր և յոյս իցեն Աստուած։ Զանձինս ձեր սրբել հնազանդութեամբ [2]ճշմարտութեան,

---

[1] ի ցառնէն պակասէ

[2] Որոնք, ճշմարտութեան ի ձեռն Հոգւոյն

յեղբայրսիրութեան առանց կեղծաւորութեան, ի
23 *աւրբ սրտե սիրել սերտիւ զմիմեանս։ Ընդեալք*
վերսին ոչ յապականութեան սերմանէն, այլ
յանապականացուէն՝ կենդանի և մշտնջենական բա.
24 *նիւն Աստուծոյ։ Քանզի ամենայն մարմին իբրեւ*
զխոտ է, և ամենայն փառք մարդոյ իբրեւ զծաղիկ
խոտոյ. խոտն ցամաքեցաւ և ծաղիկն թօթափե.
25 *ցաւ. Եւ բան Տեառն մնայ յաւիտեան, այսինքն*
է բանն որ ի ձեզ աւետարանեցաւ։

ԳԼ. Բ

1 ԳԱ. Ի *բաց թօթափել այսուհետեւ զամենայն*
չարութիւն և զամենայն նենգութիւն և զկեղծա.
ւորութիւնս և զնախանձ և զամենայն չարախօսու.
2 *թիւն, իբրեւ զարդի ծնեալ մանկունս խօսուն և*
անխարդախ կաթինն փափաքիցէք, զի նովաւ ածի.
3 *ցէք* [1]*ի փրկութիւն, ևթէ ճաշակիցէք զի քաղցր է*
4 *Տէր. Առ որ մատուցեալ, ի վէմն կենդանի, որ*
թէպէտ ի մարդկանէ անարգեալ, այլ առ ի Աս.
5 *տուծոյ ընտրեալ և պատուական է. Եւ դուք*
իբրեւ զվէմս կենդանիս շինիք տաճար հոգեւոր,
յանարատ քահանայութիւն, մատուցանել զհո.
գեւորն պատարագս հաճոյս Աստուծոյ ի ձեռն Յի.
6 *սուսի Քրիստոսի։ Քանզի կայ իսկ ի գրի ևթէ Ա.*
հաւասիկ դնեմ ի Սիոնի վէմ ընտիր, գլուխ ան.
կեան պատուական, և որ ի նա հաւատացէ՝ մի
7 *ամաչեսցէ։ Ձեզ այսուհետեւ հաւատացելոցդ՝*
[2]*վէմ պատուական, իսկ անհաւատիցն՝ վէմն զոր*

---

[1] Յ—ման պ—ւթ [2] ի Յ—նէն պ—ւթ

անարգեցին շինողքն, նա եղեւ գլուխ անկեան.
8 եւ վէմ գլորման եւ վէմ գայթակղութեան, որ
գայթակղին ապստամբեալք ի բանէն յոր և եդան։
9 Ա՛յլ դուք ազգ էք ընտիր, [1]թագաւորութիւն,
քահանայութիւն", ազգ սուրբ, ժողովուրդ սեպ-
հական, որպէս զի [2]զձեր առաքինութիւնն նուի-
րիցէք այնմ, որ" զձեզ ի խաւարէն կոչեաց յիւր
10 սքանչելի լոյսն։ Որք երբեմն չժողովուրդ, բայց արդ
ժողովուրդ Աստուծոյ. որք չողորմեալք, այժմ ո-
ղորմութիւն գտէք։
11 Սիրելիք, աղաչեմ իբրեւ պանդուխտս և զնըժ-
դեհս ի բաց մերժել ի մարմնաւոր ցանկութեանցն
12 որ պինդ ընդդէմ ոգւոց. Ձվարս ձեր ի մէջ
հեթանոսաց պարկեշտս ցուցանել, զի որով բամ-
բասիցեն զձեզ իբրեւ զչարագործս, ի բարւոք գոր-
ծոցն ձերոց դիտեալ՝ փառաւոր առնիցեն զԱս-
տուած յաւուրն այցելութեան։
13 Գ. Հնազանդ լերուք ամենայն մարդկեղէն
առեղծուածոյ վասն Տեառն, եթէ թագաւորի՝ իբ-
14 րեւ առաւել ումեք, Եթէ դատաւորաց՝ իբրեւ ի
նմանէ առաքելոց ի վրէժխնդրութիւն չարագոր-
15 ծացն և ի գովութիւն բարեգործացն։ Զի այսպէս
են կամք Աստուծոյ, բարեգործացն պապանձեցու-
16 ցանել զանզգամ մարդոց զանգիտութիւն. Իբրեւ
ազատս լինել, և մի՛ իբրեւ պատրուակ չարու-
թեան ունել զազատութիւնն, այլ իբրեւ Աստու-
17 ծոյ ծառայք։ Զամենեսեան պատուեցէք. զեղբայր-

---

[1]Յոյն, թագաւորական քահանայութիւն
[2]Յոյն, ցուցանիցէք զառաքինութիւնս այնորիկ որ

սիրութիւն սիրեցէք · յԱստուծոյ երկերուք · [1]զթա-
գաւորս պատուեցէք ։
18 Ծառայք հնազանդ լինել յամենայնի երկիւղիւ
տերանց, ոչ միայն բարեբարոյացն և հեզոցն, այլ
19 և կամակորացն ։ Զի այս՝ շնորհք [2]յԱստուծոյ են,
եթէ բարւոք ինչ մնօք տանիցի ոք վշտաց՝ յանի-
20 րաւի ։ Քանզի զի՞նչ [3]երախտիք իցեն, եթէ յոր-
ժամ մեղանչիցէք՝ տանջիցիք և համբերիցէք · այլ
եթէ բարիս գործիցէք, չարչարիցիք և համբերի-
21 ցէք, այն շնորհք [4]յԱստուծոյ են՝ ։ Քանզի ի դոյն
իսկ կոչեցարուք, զի և Քրիստոս վասն ձեր [5]մե-
ռաւ, և ձեզ եթող օրինակ՝ զի զհետ երթայցէք
22 հետոց նորա · Որ ոչն արար մեղս և ոչ գտաւ նենգ
23 գութիւն ի բերան նորա · Որ բամբասեալ, և ոչ փո-
խարէն բամբասէր · չարչարեալ, և ոչ պահէր սպառ-
24 նալիս, բայց [6]իրաւամբք մատնէր դատաւորին՝ · Որ
զմեր մեղս իւրով մարմնովն վերացոյց ի խաչափայտն,
զի լիցուք զերծեալք ի մեղաց անտի, և իցեմք ար-
դարութեանն կենակիցք · որոյ վիրօքն բժշկեցայք ։
25 Քանզի էիք իբրեւ զոչխարս մոլորեալս, այլ այժմ
դարձարուք առ Հովիւն և Տեսուչ ոգւոց ձերոց ։

ԳԼ · Գ

1 ԳԳ · Նոյնպէս և կանայք հնազանդ լինել արանց

---

[1]Յ՝՝՝, զթագաւորն [2]Յ՝՝՝, են, եթէ խղճիւ առ Աստուած տանիցի ոք վշտաց զոր կրիցէ
[3]Յ՝՝՝, պարծանք [4]Յ՝՝՝, են առ Աստուծոյ
[5]Ո՛՝՝+, չարչարեցաւ [6]Յ՝՝՝, յանձն առնէր զանձն որում դատէն իրաւամբք

իւրեանց, զի եթէ իցեն նոքա ապաստամբք ի բանէ
անտի, յաղագս կանանց գնացից և առանց բանի
2 իսկ շահեացին, Դիտել [1]երկիւղիւ զձեր՝ պարկեշտ
3 գնացս, Որոց լինիցի ոչ արտաքուստ հիւսիւք և
ոսկեհուռ ծամակալօք կամ պաճուճեալ զգես-
4 տուք զարդ. Այլ ծածուկ սրտին մարդն՝ անեղ-
ծութեամբ հեզութեան և հանդարտութեան հոգ-
5 ւոյն, որ է առաջի Աստուծոյ բազմապատիկ: Քան-
զի այսպէս երբեմն և [2]կանայք որ յուսացեալ էին
յԱստուած՝ զարդարէին զանձինս [3]հնազանդել
6 իւրեանց արանց: Որպէս և Սառա զի հնազանդ էր
Աբրահամու, և տէր իւր կոչէր զնա, որոյ եղե-
բուքն դուք որդիք, [4]բարեգործք էիք և ոչ կաս-
կածէիք՝ և ոչ ի միոջէ ինչ երկիւղէ:
7 Նոյնպէս և արք իմաստութեամբ բնակեացին ընդ
նոսա, իբրեւ տկար անօթոյ առնիցեն պատիւ կա-
նանց, իբրեւ ժառանգակցաց շնորհացն կենաց, զի
8 մի՛ խափան լիցին աղօթիցն ձերոց: Եւ գլուխ ա-
մենայնի՝ զի համամիտք իցէք, համակարիք, եղ-
9 բայրասէրք, աղնուագութք, խոնարհք: Մի՛ չար
փոխանակ չարի հատուցանել, կամ բամբասանս
ընդ բամբասանաց. այլ զնորին հակառակն՝ օրհ-
նել, զի յայս իսկ կոչեցարուք, զի զօրհնութիւնն
ժառանգիցէք:
10 Գդ. Զի որ կամիցի զկեանս սիրել և տեսանել
աւուրս բարութեան, լռեցուսցէ զլեզու իւր ի չա-

---

[1]Յոյն, զձեր երկիւղիւ [2]Յոյն, սուրբ կանայք
[3]Այլ՝ հնազանդեալ [4]Յոյն, եթէ բարե-
գործք լինիցիք, և ոչ կասկածիցէք

բուլթենէ, և զշրթուննա իւր ի չխօսելոյ զնենգու-
11 թիւն. խոտորեսցի ի չարէ և արասցէ զբարի,
խնդրեսցէ զխաղաղութիւն և երթիցէ զհետ նորա:
12 Զի աչք Տեառն ի վերայ արդարոց, և ականջք
նորա յաղօթս նոցա. երեսք Տեառն ի վերայ չա-
13 րագործաց: Եւ ո՞վ իցէ որ չարչարիցէ զձեզ, եթէ
14 դուք բարւոյն նախանձաւորք լինիցիք: Այլ թէ
և չարչարիցիք եւս յաղագս արդարութեան, երա-
նելի էք. բայց յերկիւղէ նոցա մի՛ երկնչիցիք և մի՛
15 խռովեսջիք: Այլ զՏէր, [1]զնոյն Քրիստոս՝ սուրբ
առնիջիք ի սիրտս ձեր. պատրաստ իցէք տալ
պատասխանի ամենայնի որ խնդրիցէ զբանն՝ որ է
վասն յուսոյն ձերոյ, [2]այլ հեզութեամբ և երկիւ-
16 ղիւ. ունիցիք բարս քաղցունս, զի որով չարա-
խօսիցեն զձէնջ[3] յամօթ լիցին որք բամբասեն զձեր
17 բարւոք գնացս ի Քրիստոս: Զի [4]լաւ է բարեգոր-
ծաց, եթէ կամիցին ըստ Աստուծոյ կամացն չար-
18 չարել, քան չարագործացն՝. Զի և Քրիստոս մի
անգամ վասն մեղաց ի վերայ մեր [5]մեռաւ, ար-
դարն ի վերայ անարդարոց, զի զմեզ մերձեցուսցէ
առ Աստուած. զի թէպէտեւ մեռաւ մարմնով,
19 այլ կենդանի է հոգւով. Որով և ոգւոցն որ էին
20 ի բանտին՝ երթեալ քարոզեաց. Երբեմն ապստամ-
բեցին, յորժամ ներէր նոցա Աստուծոյ երկայն-
մտութիւնն յաւուրս Նոյի յորս տապանն կազ-

---

[1]Որ+, զԱստուած, [2]Յ-որ պ-ե- [3]Որ+ յ-
-ե-ն, իբրեւ զչարագործս [4]Յ-ն, լաւ է բարիս
գործեալ, եթէ կամք իցեն Աստուծոյ, չարչարել,
քան չար գործեալ [5]Ր-ղ-ի, չարչարեցաւ

մէր, [1]յորս նուաղուն՝ այսինքն ոգիք իբրեւ ութ,
21 ապրեցան ի ջրոյն. Որ և [2]զձեզ բան նմին օրինակի կեցուցանէ մկրտութիւնն, (ոչ զմարմնոյ աղտն ի բաց ընկենուլ, այլ զբարւոք մտաց հանդէս առ Աստուած,) ի ձեռն յարութեան Յիսուսի Քրիս-
22 տոսի. Որ է ընդ աջմէ Աստուծոյ, երթեալ յերկինս, ի հնազանդել նմա հրեշտակաց և իշխանութեանց և զօրութեանց:

Գլ. Գ

1 Գե. [3]Քրիստոսի չարչարեալն՝ մարմնով վասն մեր, և դուք ի նոյն միտս վառեցարուք. զի որ չարչարի
2 մարմնով, դադարէ ի մեղաց. Զի մի՛ եւս բան մարդկան ցանկութեանց, այլ բան կամացն Աս-
3 տուծոյ [4]կեցցէ զայլ եւս ժամանակն: Քանզի [5]բաւական է անցեալ ժամանակն՝ լինելոյ կամացն հեթանոսաց, [6]որք գնային՝ գիշութեամբք, ցանկութեամբք, գինեհարութեամբք, անառակութեամբք, արբեցութեամբք, անօրէն կռապաշտութեամբք:
4 [7]Որով օտարացեալք՝ ոչ ընդ ձեզ վարին՝ ի նոյն անկարգութեան զեղխութիւն, և
5 հայհոյեն: Որ տացեն պատասխանի այնմ որ ի պատրաստին ունի դատել կենդանիս և մեռ-
6 եալս: Զի ի սոյն իսկ և մեռելոց խոստացեալ է,

---

[1]Յ-ննն, յորում [2]Որ-նէ, զմեզ այժմ [3]կ-մ, Եւ զի Քրիստոս չարչարեցաւ [4]Յ-ննն կեցցէ ի մարմնի [5]Որ-նէ, բաւական է մեզ անցեալ ժամանակն կեանց [6]կ-մ, որ գնային [7]Յ-ննն, Զոյն իմն օտարոտի համարին զի ոչ վարիք ընդ նոսա

զի դատեսցին բան մարդկան մարմնով և կենդանի լեցին բան Աստուծոյ հոգւով։
7 Ամենեցուն վախճան մերձեալ է. զգաստացարուք այսուհետեւ և լերուք զուարթունք յաղօթս։
8 Նախ քան զամենայն սէր առեր առնել ընդ միմեանս. զի սէր ծածկէ զբազմութիւն մեղաց։
9 Օտարասէրք լինել ընդ միմեանս առանց տրտնջելոյ։
10 Իւրաքանչիւր որ որպէս և ընկալաւ շնորհս ինչ ի միմեանս զնոյն մատակարարել իբրեւ զբարւոք
11 հազարապետս պէսպէս շնորհացն Աստուծոյ։ Եթէ ոք խօսիցի, իբրեւ զԱստուծոյ պատգամս. եթէ ոք մատակարարիցէ, իբրեւ ի զօրութենէ զոր շնորհէ Աստուած. զի յամենայնի փառաւորեցի Աստուած ի ձեռն Յիսուսի Քրիստոսի. որում փառք և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։
12 ԳՋ. Սիրելիք, մի՛ օտարասի համարել զեւանդն ինչ որ ի փորձութիւն ձեզ լինիցի, որպէս թէ օ-
13 տար ինչ իրք ձեզ դիպիցին. Այլ իբրեւ հաղորդեալք Քրիստոսի չարչարանացն ուրախ լինիջիք, զի և ի յայտնութեան փառաց նորա ցնծացեալք
14 բերկրեսջիք։ Իսկ եթէ նախատիցիք ձեւս վասն անուանն Քրիստոսի, երանելի էք. զի փառացն [1]և զօրութեան" [2]անուն և Աստուծոյ Հոգին ի վերայ
15 ձեր հանգուցեալ է[3]։ Մի՛ ոք ի ձէնջ չարչարեսցի իբրեւ զսպանող, կամ իբրեւ զգող, կամ իբրեւ
16 զչարագործ, կամ իբրեւ զօտարատեսուչ։ Ապա

---

[1]Յ–ման– պ–ւ–ե [2]ի յ–ն–ն պ–ւ–ե
[3]Ո–մն+ յ–ե–ն–, թէպէտեւ ի նոցանէ հայհոյի, այլ ի ձէնջ փառաւորի

եթէ իբրեւ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ՝ մի՛ ամաչեսցէ, այլ փառաւորեսցէ զԱստուած [1]անուամբս այսուիկ՝՝։
17 Զի ժամանակ է սկիզբն լինելոյ դատաստանին ի տանէն Աստուծոյ. զի եթէ նախ ի մէնջ, իսկ զի՞նչ կատարած իցէ այնոցիկ որ ոչ հաւանեցան Աս-
18 տուծոյ աւետարանին։ Եւ եթէ արդարն հազիւ կեցցէ, իսկ ամպարիշտն և մեղաւորն ո՞ւր գտանի-
19 ցի։ Որպէս զի որ չարչարիցին ըստ Աստուծոյ կամացն՝ հաւատարիմ Ստեղծին աւանդեսցեն զիւրեանց ոգիս բարերարութեամբք։

ԳԼ. Ե

1 ԳԷ. [2]Զերիցունս այսուհետեւ ազաչեմ՝ իբրեւ զերիցակից և վկայ չարչարանացն ՔՐԻՍՏՈՍԻ, որ և
2 հանդերձեալ փառացն յայտնելոյ հաղորդ. Արածեցէք որ ի ձեզ հօտ է Աստուծոյ, վերակացու լինել՝ մի՛ իբրեւ ակամայ, այլ կամաւ [3]ըստ Աստուծոյ՝՝. մի՛ զշահաքաղութեամբ, այլ յօժարու-
3 թեամբ. Մի՛ իբրեւ տիրելով վիճակացն, այլ լի-
4 նել օրինակ հօտին. Զի յերեւել Հովուապետին ընդունիջիք զանթառամ փառաց պսակն։
5 Նոյնպէս և, երիտասարդք, հնազանդ լերուք ծերոց. ամենեքին ընդ միմեանս զխոնարհութիւն ունիցիք. զի Աստուած ամբարտաւանից հակառակ կայ, տայ շնորհս խոնարհաց։ Խոնարհեցարուք ընդ հզօր ձեռամբն Աստուծոյ, զի զձեզ
7 բարձրացուսցէ ի ժամանակի։ Զամենայն հոգս ձեր

---

[1]Որում, յայսմ մասին [2]Զերիցունս որ ի ձեզ [3]Որում պատեհ

ընկեցէք ի նա, զի նա է որ հոգայ վասն ձեր:
8 ԴԱ. Արթուն լերուք, հսկեցէք, զի սոսկն ձեր
Սատանայ իբրեւ զառեւծ գոչէ, շրջի և խնդրէ թէ
9 զո՛ կլանիցէ: Որում ի դիմի հարկանիցէք հաստա-
տեալք հաւատովք. գիտասջիք զնոյն անցս չար-
չարանաց եղբայրութեան ձերոյ յաշխարհի յան-
ձինս կատարեալ:
10 Եւ Աստուած ամենայն շնորհաց որ կոչեաց
[1]զձեզ յիւր ի յաւիտենական ի փառան Քրիստո-
սիւ Յիսուսիւ, որում փոքր մի եղերուք չարչարա-
կից ք, նա կազդուրեցուսցէ, կարողացուսցէ, հաս-
11 տահիցն [2]արասցէ: Նմա իշխանութիւն և փառք
յաւիտեանս: Ամէն:
12 Ի ձեռն Սիղուանոսի հաւատարիմ եղբօր, որ-
պէս կարծեմ, փոքր ի շատէ գրեցի ձեզ՝ մխիթա-
րել և ի վերայ սորին վկայել, զի և սյս ճշմարիտ
շնորհք Աստուծոյ են յոր հաստատեալ կայցէք:
13 Ողջոյն տայ ձեզ որ ի Բաբելոն ընտրեալակիցն [3]և-
14 կեղեցի է, և Մարկոս որդի իմ: Ողջոյն տայք
միմեանց ի համբոյր [4]սրբութեան: Խաղաղութիւն
ընդ ձեզ ամենեսեան, որ էք ի Քրիստոս Յիսուս:
Ամէն:

---

[1] Ոմն. զմեզ
[2] Ոմն. արասցէ զձեզ
[3] Ի Բաբելոն պոլսեցի
[4] Յոյն. սիրոյ

ԹՈՒՂԹ

ՊԵՏՐՈՍԻ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա

1 ԳԲ. ՇՄԱՒՈՆ Պետրոս, ծառայ և առաքեալ Յի-
սուսի Քրիստոսի, որոց հանգիտութիւնս մեզ հա-
ւասաց յարդարութիւն Աստուծոյ մերոյ
2 և փրկչին Յիսուսի Քրիստոսի. Շնորհք ընդ ձեզ և
խաղաղութիւն բազմացի գիտութեամբն Աստու-
ծոյ և Յիսուսի [1]Քրիստոսի Տեառն մերոյ։
3 Որպէս ամենայն ինչ մեզ իւրոյ աստուածեղէն
զօրութեանն առ ի կեանս և յաստուածպաշտու-
թիւն շնորհեալ ի ձեռն գիտութեան այնորիկ,
որ կոչեացն զմեզ [2]յիւր ի փառան և ի վայելչու-
4 թիւն՝. Որով մեծամեծքն և պատուականն աւետիք
պարգեւեալ են մեզ, զի նոքիմբք աստուածեղէն
բնութեանն լինիցիք հաղորդակիցք, փախուցեալք [3]ի
ցանկութեանց աշխարհիս և յապականութեանց՝,
5 եւ ամին այսմիկ զամենայն փոյթ ի մէջ առեալ՝
ձերով քն հաւատով մատակարարեսջիք զառաքի-
6 նութիւն, և առաքինութեամն զգիտութիւն, եւ

---

[1] ի Բազմ. պիտ. [2] Յմանէ, փառաւք և զօրութեամբ
[3] Յմանէ, յապականութենէ որ յաշխարհի ցանկու-
թեամբ

գիտութեամբն զժուժկալութիւն, և ժուժկալու-
թեամբն զհամբերութիւն, և համբերութեամբն
7 զաստուածպաշտութիւն, եւ աստուածպաշտու-
թեամբն զեղբայրսիրութիւն, և եղբայրսիրու-
8 թեամբն զսէր։ Զայսոսիկ ձեր յանձին կալեալ և
ի սոյն յաճախեալ՝ ոչ դատարկս և անպտուղս
հաստատիցեն զձեզ ի Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
9 տոսի գիտութիւնն։ Իսկ որ ոչն իցեն սոքա մերձ՝
կոյր է և զաչացու. ի մոռացօնս դարձուցեալ
10 զբբութիւն առաջնոց իւրոցն յանցանաց։ Վասն
որոյ, եղբարք, առաւել փութասջիք զի [1]բարեացն
գործովք՝ հաստատուն զձեր կոչումն և զընտ-
րութիւն պահիցէք. զայս արարեալ՝ ոչ երբեք յան-
11 ցանիցէք. Զի այսպէս առատապէս շնորհեսցի ձեզ
մուտ ի յաւիտենական արքայութիւն Տեառն մե-
րոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։
12 ԴԳ. Որով պատրաստ իցեմ միշտ ձեզ յիշե-
ցուցանել վասն սոցին, առաւել եւս՝ գիտակացն
և հաստատելոցն ներկայ հաստել ճշմարտութեանն։
13 Քանզի իրաւունս համարիմ, մինչդեռ եմ ի մարմ-
14 նի սմա, զարթուցանել զձեզ յիշատակօք։ Գի-
տեմ թէ վաղվաղակի է լինելոց մերկանալ յինէն
մարմնոյս, որպէս և Տէր մեր Յիսուս Քրիստոս եցոյց
15 ինձ։ Եւ փութամ ճեպիմ միշտ [2]զձեզ յորդորել՝
զի և յետ իմոյ ելանելոյ յաշխարհէս առնիցէք
16 զյիշատակս սոսոցիկ։ Քանզի ոչ ետիւ պաճուճեալ
ինչ առասպելաց գնետ երթեալ ցուցաք ձեզ
զՏեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զզօրութիւն և

---

[1] Ի բազում պատճէնս [2] Ի ձեռին պատճէնս

զգալուսան, այլ [1]մեզէն եղեալ ականատեսք նո-
17 բա մեծութեանն։ Քանզի առեալ յԱստուծոյ Հօրէ
զփառս և զպատիւ, յեկեալ յայնպիսի բարբառոյ
ի մեծվայելչութեան փառաց անտի, եթէ Դա է
18 Որդի իմ սիրելի ընդ որ ես հաճեցայ։ Եւ զայս
բարբառ մեք իսկ լուաք եկեալ յերկնից որ ընդ
19 նմա իսկ էաք ի սուրբ լերինն։ Եւ ունիմք հաստա-
տագոյն զբանն մարգարէական, որում եթէ ան-
ապցէք, բարւոք առնէք, իբրեւ ճրագի որ տայցէ
լոյս ի խաւարչտին տեղւոջ, մինչեւ տիւն լուսա-
ւորեսցէ և արուսեակն ծագեսցէ ի սիրտս ձեր։
20 ԴԴ. Բայց նախ այսմ գիտակ լինիջիք, զի ամե-
նայն մարգարէութիւն իւրոց գրոց լուծումն ոչ
21 ունի։ Քանզի ոչ եթէ բաո կամաց մարդկան տուաւ
մարգարէութիւն երբեք, այլ ի Հոգւոյն Սրբոյ
կրեալք՝ խօսեցան [2]մարդիկ յԱստուծոյ"։

ԳԼ. Բ

1 Լինէին և սուտ մարգարէք ի ժողովրդեանն, որ-
պէս և այժմ ի ձեզ լինիցին սուտ վարդապետք,
որք սպրդեալ մուծանեն հերձուածս կորստեան,
և [3]զեր Տէր գնեսցն զնոսա" ուրացեալ, ածեն ի վե-
2 րայ անձանց զարագահասն կորուստ։ Եւ բազումք
անկեալ երթիցեն զհետ նոցա անառակութեանցն,
վասն որոյ ճշմարտութեանն ճանապարհ հայհոյի-
3 ցի։ Եւ ագահութեամբ մոլացածին բանիւք առնի-
ցեն զձեզ վաստանդիս. որոց դատաստանն ի բնէ

---

[1] Ի ց-ն-ն պ-ւ-ե [2] Ո՛-ն-ւ, մարդիկ սուրբք Աս-
տուածոյ [3] Ց-յն՝, որ գնեսցն զնոսա զՏէրն

ոչ դատարկանայ, և կորուսան նոցա ոչ նիրհէ։
4 Զի եթէ ի հրեշտական յանցուցեալս Աստուած
ոչ խնայեաց, այլ խաւարին կապանօք արկեալ ի
5 տարտարոսն՝ ետ պահել ի դատաստան. Նա՛ և ոչ
ի սկզբանն աշխարհի խնայեաց. բայց զուխերորդն
պնդ, զարդարութեանն քարոզ, պահեաց ի ջրհե-
6 ղեղէ աշխարհի ամպարշտելոցն ածեալ. Եւ զքա-
ղաքս Սոդոմացւոցն և Գոմորացւոց դարձուցեալ
յաճիւն՝ դատեցաւ, օրինակ առ յապայ ամպա-
7 րշտելոցն կացուցանելոց։ Եւ զարդարն զԼովտ
ձանձրացեալ յանկարգ գիջութեան գնացից՝ փըր-
8 կեաց. Քանզի ականատես և ականջալուր արդարն
բնակեալ ի մէջ նոցա, օր ըստ օրէ զիւր սուրբ
ոգիան նոցա անօրէնն գնացիւքն տանջէր։
9 Դե. Գիտէ Տէր զաստուածապաշտս փրկել ի
փորձութենէ, և զանիրաւս պահել ի տանջանս
10 աւուրն դատաստանի։ Մանաւանդ որ զհետ մարմ-
նոյ պղծալից ցանկութեանց իցեն երթեալ. արհա-
մարհողք տէրութեանն, ժպիրհք, յանդգունք,
11 չզանգիտեն զփառսն հայհոյել. Ուր հրեշտակք զո-
րութեամբ և կարողութեամբ քան զնոսա մեծա-
մեծք չածեն զնոքօք ի Տեառնէ զհայհոյութեանն
12 դատաստան։ Այլ սոքա իբրեւ զանխօս անասունս
բստ բնածին բարուցն յեղծուին և յապականու-
թիւն, որոց չենն գիտակ՝ հայհոյեն, յապակա-
13 նութեան իւրեանց [1]և ապականեացին, Տանջեալք
ի վարձուցն՝՝ անիրաւութեան. որ ցանկութիւն
գաւառն փափկութիւն համարին. բծկանք, արա-

---

[1]Բ–ղ–ք, ապականեացին, (13) Ընկալեալք վարձս

տաւորք, փափկացեալք ի պատիրս իւրեանց՝ լինել
14 ձեզ խրախճանակիցք. Աչս ունին հանգոյնս պոռնը-
կաց, անդադարս ի մեղաց, պատրեն զանձինս յողո-
դողդաց. որ ունին սիրտ հարեալ զագահութեան,
15 մանկունք անիծից. թողեալ զուղղորդ ճանա-
պարհն՝ մոլորեցան, գնետ երթեալ ճանապարհին
Բաղաամայ Բէովրեան [1]զվարձս անիրաւութեան
16 սիրեցին". Որ կշտամբանս իւրոյ անօրէնութեանն
[2]առացաւ զէշն անխօսուն. մարդկեղէն" բարբա-
ռոմն բարբառեալ՝ արգել զմարգարէին [3]զանօրէ-
17 նութիւնն: Աւազիսիքն են աղբեւրք անջրդիք և
մէգք վարեալք ի մրրկէ, որոց աղջամուղջք խա-
18 ւարին յաւիտեան պահեալ կան: Քանզի մեծա-
բանս անոտեաց բարբառեալ պատրեն դիջու-
թեամբք, ցանկութեամբք մարմնոյ զայնոսիկ՝ որ
սոյգն փախչիցին յայնցանէ՝ որ ի մոլորութեանն
19 շրջիցին. Նոցա ազատութիւն խոստանան, և ին-
քեանք ապականութեանն ծառայք են. զի որով
20 իւիք և յաղթիցի ոք, նորին և ծառայ է: Զի եթէ
փախուցեալք ի պղծութեանց աշխարհի գիտու-
թեամբ Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստո-
սի, և դարձեալ ընդ նոյնս շաղեալք պատիցին,
21 եղեւ նոցա վախճանն չար քան զառաջինն: Զի լաւ
էր նոցա եթէ ընաւ իսկ չէր ծանուցեալ զարդա-
րութեանն ճանապարհ, քան, զի ծանեան և յետս
կացին ի սուրբ պատուիրանէն որ նոցա աւանդե-

---

[1] Բ—պ—ր, որ զվարձս անիրաւութեան սիրեաց
[2] Ց-ՆՆ, առացաւ. էշն անխօսուն մարդկեղէն
[3] Ց-ՆՆ, զանմտութիւնն

22 ցաւ։ Եկեալ ի դէպ նոցա ճշմարիտ առակին զգո-
նութեան, եթէ Շուն դառնայ անդրէն ի փսխած
իւր, և խոզ լուացեալ՝ ընդ տիղմ թաւալեալ։

ԳԼ. Գ

1 ԳՋ. Զայս [1]ձեզ, սիրելիք, երկրորդ թուղթ գրեմ,
որով զարթուցից ի յիշատակ զհաստատուն միտս
2 ձեր, ցիշել զյառաջագոյն ասացեալ պատգամս
ի սրբոց մարգարէից և յառաքելոցն ձերոց, զպա-
3 տուէրս Տեառն և Փրկչին։ Բայց զայս նախ գի-
տասջիք, զի յաւուրս յետինս եկեսցեն արհա-
մարհողք, այպանողք, որ ըստ իւրեանց ցանկու-
4 թեանցն գնայցեն. Եւ ասիցեն, Ո՞ւր են աւետիք
գալստեան նորա. զի յորմէ հետէ հարքն ննջեցին,
ամենայն ինչ նոյնպէս կայ ինչ ի սկզբանէ արա-
5 րածոց։ Եւ զայն մոռացեալ իցէ նոցա, որք զայսն
կամին, եթէ երկինք եղեն ի սկզբանէ, և երկիր
ի ջրոց և [2]ջուրք հաստատեալ կան բանիւն Ա-
6 ստուծոյ. Վասն որոյ երբեմն աշխարհ ջրհեղեղաւ
7 ապականեալ կորեաւ։ Եւ այժմ երկինք և երկիր
նովին բանիւ գանձեալ են, հրոյ պահեալք յօրն
դատաստանի և կորստեան ամպարիշտ մարդկան։
8 Եւ այս եւս մի՛ լիցի ի ձէնջ ծածկեալ, սիրելիք, զի
մի օր Տեառն իբրեւ զհազար ամ է, և հազար ամ՝
9 իբրեւ զմի օր։ Ոչ յամեցուսցէ Տէր զաւետիսն,
որպէս ոմանք յամր համարին, այլ երկայնամիտ
լինի առ [3]ձեզ. քանզի ոչ կամի եթէ ոք կորիցէ,
այլ զամենեցուն հասանել յապաշխարութիւն։

---

[1]Ց-ՅՆ, ձեզ այժմ [2]Ց-ՅՆ, ջուրըք [3]ՈՒՆԻ, մեզ

10 ԴԷ. Այլ եկեսցէ օր Տեառն իբրեւ [1]գող, յո-
րում երկինք տագնապաւ անցցեն, և բնութիւնք
հրով կիզեալ լուծցին, և երկիր և որ միանգամ ի
11 նմա գործք [2]գտանիցին։ Եւ ի լուծանել այսպէս
այսր ամենայնի, որպիսի՞ ինչ պարտ իցէ ձեզ գտա-
նել, այլ սուրբ և աստուածապաշտ կարգաւ ակն
12 ունել Եւ փութալ հասանել գալստեան աւուրն
Տեառն. յորում երկինք հրայրեացք լուծանիցին,
13 և բնութիւնք հրդեհեալ հալիցին։ Նորոյ երկնից
և նորոյ երկրի ըստ աւետեացն հայեցեալ սպա-
սեմք, յորս արդարութիւնն բնակէ։
14 Վասն որոյ, սիրելիք, այսոցիկ սպասեալ, փոյթ
յանձին ունիջիք անբիծք և անարատք գտանել
15 նմա ի խաղաղութիւն. Եւ զՏեառն երկայնմտու-
թիւնն փրկութիւն համարեսջիք. զոր օրինակ և
սիրելի եղբայրն մեր Պաւղոս ըստ շնորհելոյ իմաս-
16 տութեանն նմա [3]յԱստուծոյ գրեաց ձեզ. Որպէս
և յամենայն իսկ թուղթսն խօսի վասն այսոցիկ.
յորս գտանի ինչ ինչ դժուարիմաց, զոր անուս-
մունքն և յողդողդք կամակորեն, որպէս և զամե-
նայն իսկ գիրս առ իւրեանց անձանցն կորուստ։
17 Դուք այսուհետեւ, սիրելիք, իբրեւ զկանխագէտս
զգուշասջիք, զի մի՛ անառակ մոլորութեամբն զգա-
ծեալք՝ անկանիջիք [4]յաստեաց հաստատութեանն՝։
18 Աճեցէք շնորհօք և գիտութեամբն Տեառն մերոյ և
փրկչին Յիսուսի Քրիստոսի. Նմա փառք և՛ այժմ
և՛ յօրն յաւիտենից։ Ամէն։

---

[1]Որմն+, գգող ի գիշերի [2]Որմն+, պրեսցին [3]ի Յ—նէն պ—ւ—ե [4]Յ—ն, յանձանց հաստատութենէ

[1]ԹՈՒՂԹ
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ Ա

1 ԵԱ. Որ էրն ի սկզբանէ, զորմէ լուաքն, որում
ականատեսն իսկ եղեաք, ընդ որ հայեցաքն, և
2 ձեռք մեր շօշափեցին ի վերայ Բանին կենաց. (և
կեանքն յայտնեցան, և տեսաք և վկայեմք և
պատմեմք ձեզ զյաւիտենական կենացն, որ էրն
3 առ Հօր և երեւեցաւ մեզ.) Զոր տեսաքն և լուաք,
պատմեմք և ձեզ, զի և դուք հաղորդութիւն ու-
նիցիք ընդ մեզ, և մեր հաղորդութիւնն իցէ ընդ
Հօր և ընդ Որդւոյ իւրում Յիսուսի Քրիստոսի.
4 եւ զայս գրեմք ձեզ, զի ձեր ուրախութիւնն կա-
տարեալ իցէ.
5 Եւ այս են աւետիք զոր լուաք առ ի նմանէ և
պատմեմք ձեզ, զի Աստուած լոյս է, և խաւար ի
6 նմա չիք և ոչ մի. Եթէ ասիցեմք եթէ հաղորդու-
թիւն ունիմք ընդ նմա և ի խաւարի շրջիցիմք,
7 ստեմք և ոչ առնեմք զճշմարտութիւնն. Իսկ եթէ
ընդ լոյս գնայցեմք, որպէս նա ի լոյս է, հաղոր-

---

[1] Ոմն, Թուղթ Յովհաննու կաթողիկեայ Առաջին. այլ, Թուղթ Յովհաննու Առաքելոյ կաթողիկեայ Առաջին

դութիւն ունիմք ընդ միմեանս, և արիւնն [1]Յիսուսի Որդւոյ նորա սրբէ զմեզ յամենայն մեղաց։
8 Եթէ ասիցեմք եթէ Մեղս ինչ ոչ ունիմք, զանձինս խաբեմք, և ճշմարտութիւն ի մեզ ոչ
9 գոյ։ Ապա եթէ խոստովան լինիցիմք զմեղս մեր, հաւատարիմ է նա և արդար առ ի թողուլ մեզ զմեղս մեր, և սրբել զմեզ յամենայն անիրաւութենէ։
10 ԵԲ. Եթէ ասիցեմք, եթէ Ոչինչ մեղաք, սուտ առնեմք զնա, և բանն նորա ոչ է ի մեզ։

ԳԼ. Բ

1 Որդեակք իմ, զայս գրեմ ձեզ զի մի՛ մեղիցէք. և եթէ մեղիցէ ոք, ունիմք բարեխօս առ Աստուած
2 զՅիսուս Քրիստոս, զարդարն [2]և զանարատն, Եւ նա է քաւութիւն մեղաց մերոց, և ոչ եթէ մերոցն միայն, այլ և ամենայն աշխարհի։
3 Եւ յայսմիկ գիտեմք եթէ ծանեաք զնա, եթէ
4 զպատուիրանս նորա պահիցեմք։ Որ ասիցէ եթէ Ծանեայ զնա, և զպատուիրանս նորա ոչ պահիցէ,
5 սուտ է և ճշմարտութիւն ի նմա ոչ գոյ։ Իսկ որ պահէ զբան նորա, արդարեւ ի նմա կատարեալ է սէրն Աստուծոյ. այսուիկ ճանաչեմք եթէ ի նմա
6 եմք։ Որ ասիցէ ի նմա բնակել՝ այնպէս պարտի գնալ, որպէս և նայն գնաց։
7 ԵԳ. [3]Սիրելիք, ոչ եթէ նոր ինչ պատուիրան գրեմ ձեզ, այլ զհին պատուիրանն զոր ի սկզբա-

---

[1] Որմն. Յիսուսի Քրիստոսի [2] ի ց-ն. գ-ի-ե [3] Որմն. Եղբարք

նէ ունէիք. և հին պատուիրան բանն է զոր [1]լուա-
8 րուք։ Դարձեալ նոր պատուիրան գրեմ ձեզ որ
է ճշմարտիւ ի նմա և ի ձեզ. զի խաւարն անցա-
9 նէ, և լոյսն ճշմարիտ արդէն իսկ երեւի։ Որ ասէ
եթէ ի լոյսն իցէ և զեղբայր իւր ատիցէ, [2]սուտ է
10 և՝ ի խաւարի է տակաւին։ Որ սիրէ զեղբայր իւր՝
11 ի լոյս բնակէ, և գայթակղութիւն ի նմա չկայ. իսկ
որ ատեայ զեղբայր իւր՝ ի խաւարի է, և ընդ խա-
ւար շրջի, և ոչ գիտէ յո երթայ, զի խաւարն
կուրացոյց զաչս նորա։
12 Գրեմ ձեզ, որդեակք, զի թողեալ են ձեզ
13 մեղքն ձեր վասն անուան նորա։ Գրեմ ձեզ, հարք,
զի ծանեայք դուք զայն որ ի սկզբանէն է։ Գրեմ
ձեզ, երիտասարդք, զի յաղթեցէք դուք չարին։
14 Գրեցի ձեզ, մանկունք, զի ծանեայք դուք զՀայրն։
Գրեցի ձեզ, հարք, զի ծանեայք դուք զայն որ ի
սկզբանէն է։ Գրեցի ձեզ, երիտասարդք, զի էք
դուք հզօրացեալք, և բանն Աստուծոյ ի ձեզ
15 բնակէ, և յաղթեցէք դուք չարին։ Մի՛ սիրէք
16 զաշխարհս, և մի՛ որ ինչ յաշխարհի է։ Եթէ ոք
սիրէ զաշխարհս, ոչ է ի նմա սէր Հօր, զի ամենայն
որ ինչ յաշխարհի է՝ ցանկութիւն [3]է մարմնոյ և
ցանկութիւն [3]է աչաց և ամբարտաւանութիւն աս-
տի կենացս, [3]որ չէ առ ի Հօրէ, այլ յաշխարհէ
17 աստի է։ Եւ աշխարհս անցանէ և [4]ցանկութիւնն,
իսկ որ առնէ զկամս Աստուծոյ՝ մնայ յաւիտեան։
18 ԵԳ. Որդեակք, յետին ժամանակ է, և որպէս

---

[1]Ոմանք, լուարուք ի սկզբանէ [2]Ի բազումս պակաս
[3]Ի ցոմանս պակաս [4]Ցոմանս, ցանկութիւն նորա

լուարուք եթէ ՆՒՒՆ գալոց է, և արդէն իսկ նե-
ռինք բազումք եկեալ են, որով մարթեմք իմա-
19 նալ եթէ յետին ժամանակ է։ Ա՛ւ ի մէնջ ելին,
այլ ոչ էին ի մէնջ. զի եթէ ի մէնջ էին, ապա
առ մեզ միայն էին. այլ զի յայտնի լինիցին եթէ ոչ
20 էին ամենեքեան նոքա ի մէնջ։ Եւ դուք օծութիւն
21 ունիք առ ի Սրբոյն, և գիտէք [1]ամենեքին։ Ոչ
գրեցի ձեզ եթէ ոչ գիտէք զճշմարտութիւնն, այլ
թէ գիտէք զնա և թէ՝ զի ամենայն ստութիւն ոչ
22 է ի ճշմարտութենէ անտի։ Իսկ ո՞ է սուտ, եթէ
ոչ՝ որ ուրանայ եթէ Յիսուս չէ Քրիստոսն. նա
23 իսկ է ՆՒՒՆ, որ ուրանայ զՀայր և զՈրդի։ Ա՛մե-
նայն որ ուրանայ զՈրդի՝ և ոչ զՀայր ընդունի.
[2]իսկ որ խոստովանի զՈրդի՝ նա և զՀայր ընդու-
24 նի։" Դուք զոր լուարուքն ի սկզբանէ՝ ի ձեզ բնա-
կեսցէ. զի եթէ ի ձեզ բնակեսցէ զոր ի սկզբանէն
լուարուք, և դուք Որդի և ի Հայր բնակեսջիք։
25 Եւ այս են աւետիքն զոր աւետարանեաց նա մեզ,
զկեանան յաւիտենականս։

26 ԵԵ. Զայս գրեցի ձեզ, զի մի՛ ոք զձեզ մոլորե-
27 ցուցանիցէ։ Եւ դուք օծութիւնն զոր ընկալարուք
ի նմանէ՝ բնակեսցէ ի ձեզ. և չէ ինչ պիտոյ եթէ
ոք զձեզ ուսուսցէ, այլ որպէս [3]զի նորա օծու-
թիւնն ուսուցանիցէ" զձեզ վասն ամենայնի, և
ճշմարիտ է և չէ սուտ. և որպէս ուսոյցն զձեզ,
[4]կայք ի նմա։

---

[1]Որմն+, զամենայն [2]Յորում պակաս [3]Որմն+, օծու-
թիւնն այն ուսուցանէ. այլ՝ Հոգի նորա ուսու-
ցանէ [4]Որմն+, կացէք

28 Եւ այժմ, որդեակք, կացէք ի նմին, զի եթէ
յայտնեսցի, ունիցիմք համարձակութիւն, և մի՛
29 ամաչեսցուք ի նմանէ ի գալստեան նորա։ Զի եթէ
գիտիցէք եթէ արդար է նա, իմասջիք եթէ ամե-
նայն որ առնէ զարդարութիւն՝ առ ի նմանէ է
ծնեալ։

ԳԼ. Գ

1 Տեսէք, որպիսի՛ սէր շնորհեաց մեզ Հայրն, զի որ-
դիք Աստուծոյ կոչեսցուք մեք. վասն այսորիկ աշ-
խարհ ոչ ճանաչէ զմեզ, քանզի ոչ ծանեաւ զնա։
2 ԵԶ. Սիրելիք, այժմ որդիք Աստուծոյ եմք, և
չեւ եւս է յայտ եթէ զինչ լինելոց իցեմք. գի-
տեմք, զի յորժամ նա յայտնեսցի, նմանք նմա լի-
նելոց եմք, զի տեսանելոց եմք զնա որպէս և էն։
3 Եւ ամենայն որ ունի զայս յոյս ի [1]յանձին՝ սրբէ
4 զանձն իւր, որպէս և նայն սուրբ է։ Ամենայն որ
զմեզս գործէ, նա և զանօրէնութիւն առնէ, և
5 ինքն իսկ մեղքն անօրէնութիւն է։ Եւ [2]գիտեմք
զի նա յայն ասակս յայտնեցաւ, զի [3]զմեզս բարձ-
6 ցէ, և ի նմա մեղք ոչ են։ Ամենայն որ ի նա է
հաստատեալ՝ ոչ մեղանչէ. և ամենայն որ մեղան-
7 չէ՝ ոչ տեսեալ զնա և ոչ ծանեալ զնա։ Մանկունք,
մի՛ ոք զձեզ խաբեսցէ. որ առնէ զարդարութիւն,
8 արդար է՝ որպէս և նայն արդար է։ Եւ որ առնէ
զմեզս՝ ի սատանայէ է, զի ի սկզբանէ սատանայ
մեղանչէ. վասն այսորիկ յայտնեցաւ Որդին Աս-

---

[1] Ց-ՆՆ, ի նմա [2] Բ-ԼՍ-Ք, գիտէք
[3] Բ-ԼՍ-Ք զմեզս մեր

9 առածոյ, զի լուծցէ զգործս Սատանայի։ Ամենայն
որ յԱստուծոյ է ծնեալ՝ մեղս ոչ առնէ, զի սերմն
նորա ի նմա մնայ. և ոչ կարէ մեղանչել, զի յԱս-
10 տուծոյ է ծնեալ։ Այսուիկ յայտնի են ¹ի միմեանց
որդիք Աստուծոյ և որդիք Սատանայի։

ԵԷ. Ամենայն որ ոչ առնէ զարդարութիւն՝ չէ
11 նա յԱստուծոյ, և որ ոչ սիրէ զեղբայր իւր. Զի
այս է պատուիրանն զոր լուարուք ի սկզբանէ, զի
12 սիրեսցուք զմիմեանս։ Ոչ որպէս Կայէնն ի չարէ
անտի էր և սպան զեղբայրն իւր. և յո՞ր սակս
սպան զնա. զի իւր գործքն չար էին, և եղբօրն՝
13 բարի։ Եւ մի՛ ինչ զարմանայք, եղբարք, եթէ աշ-
14 խարհ զձեզ ատեայ։ Մեք գիտեմք զի փոխեցաք ի
մահուանէ ի կեանս, քանզի սիրեմք զեղբարս. իսկ
15 որ ոչն ²սիրէ, անդէն ի մահու մնայ։ Ամենայն որ
ատեայ զեղբայր իւր՝ մարդասպան է, և գիտէք,
զի ամենայն մարդասպան ոչ ունի զկեանս յաւի-
16 տենական յանձին հաստատեալ։ Այսուիկ գի-
տացաք զսէրն, զի նա զանձն իւր եդ վասն մեր,
և մեք վասն եղբարց ¹մերոց պարտիմք դնել զան-
17 ձինս։ Որ ունիցի զկեանս ինչ զաշխարհիս, և տե-
սանիցէ զեղբայր իւր կարօտեալ իւիք, և փակիցէ
զգութս իւր առ ի նմանէ, զիա՞րդ սէրն Աստու-
ծոյ ի նմա իցէ բնակեալ։

18 ԶԱ. Որդեակք, մի՛ բանիւք և լեզուօք սիրես-
ցուք, այլ արդեամբ և ճշմարտութեամբ։

19 Եւ այսուիկ լիցուք ծանուցեալք եթէ ի ճշմար-
տութենէ անտի իցեմք, և առաջի նորա արաս-

---

¹ի ց--ն̄ն̄ պ-ի-ս ²Ո՛ն̄+, սիրէ զեղբայրն

20 ցուք հանդէս սրտից մերոց։ Եթէ սոգտանիցեն
զմեզ սիրտք մեր, այլ Աստուած մեծ է քան
21 զսիրտս մեր և գիտէ զամենայն։ Սիրելիք, եթէ
սիրտք մեր զմեզ ոչ սոգտանիցեն, համարձակու-
22 թիւն ունիմք առ Աստուած. եւ զոր ինչ հայ-
ցեմք՝ առնումք ի նմանէ, զի զպատուիրանս նորա
23 պահեմք, և զհաճոյս առաջի նորա առնեմք։ Եւ
այս է պատուիրան նորա, զի հաւատասցուք յա-
նուն Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի, և սիրես-
24 ցուք զմիմեանս, որպէս և ետ մեզ պատուէր։ Եւ
որ պահէ զպատուիրանս նորա՝ ի նմա է հաստա-
տեալ և նա ի սմա. և յայսմանէ գիտեմք եթէ
բնակէ ի մեզ, ի Հոգւոյ անտի զոր ետ մեզ։

ԳԼ. Դ

1 ՋԲ. Սիրելիք, մի՛ ամենայն հոգւոյ հաւատայք,
այլ ընտրեցէք զհոգիսն՝ եթէ յԱստուծո՞յ իցեն.
զի բազում սուտ մարգարէք ելեալ են յաշխարհ։
2 Եւ [1]ասէ այսուհետև ճանաչեմք՝ զՀոգին Աստուծոյ.
ամենայն հոգի որ խոստովանի զՅիսուս Քրիստոս
3 մարմնով եկեալ՝ յԱստուծոյ է նա։ Եւ ամենայն
հոգի որ ոչ խոստովանի զՅիսուս Քրիստոս մարմ-
նով եկեալ՝ չէ նա յԱստուծոյ, և այս Եհռինն է,
զորմէ լուարուք եթէ գալոց է, և արդէն իսկ յաշ-
4 խարհի է։ Դուք յԱստուծոյ էք, որդեակք, և
յաղթեցէք նոցա. զի մեծ է որ ի ձեզդ է քան
5 զայն որ յաշխարհին է։ Նոքա յաշխարհէ են,
վասն այնորիկ յաշխարհէ խօսին, և աշխարհ լսէ

---

[1]Բազմ. ասէ, ճանաչէք

6 նոցա։ Մեք յԱստուծոյ եմք. որ զԱստուած ճա-
նաչէ՝ լսէ մեզ, և որ չէ յԱստուծոյ՝ ոչ լսէ մեզ.
այսուիկ ճանաչեմք զՀոգին ճշմարտութեան և զՀո-
գին խաբէութեան։
7 ԶԳ. Սիրելիք, սիրեսցուք զմիմեանս, զի սէր
յԱստուծոյ է. և ամենայն որ սիրէ՝ յԱստուծոյ է
8 ծնեալ և ճանաչէ զԱստուած։ Եւ որ ոչն սիրէ՝ ոչ
9 ճանաչէ զԱստուած, զի Աստուած սէր է։ Եւ զի
յայսմ երեւեցաւ սէրն Աստուծոյ ի մեզ, զի զՈր-
դին իւր միածին առաքեաց Աստուած յաշխարհ,
10 զի եղիցուք նովաւ կենդանիք։ Յայսմ է սէրն, ոչ
զի մեք սիրեցաք զԱստուած, այլ զի նա սիրեաց
զմեզ, և առաքեաց զՈրդին իւր ի քաւութիւն մե-
11 ղաց մերոց։ Սիրելիք, եթէ Աստուած այսպէս սիր-
եաց զմեզ, ապա և մեք պարտիմք զմիմեանս սիրել։
12 ԶԳ. ԶԱստուած ուրուք երբեք չիք տեսեալ.
եթէ սիրեսցուք զմիմեանս, Աստուած ի մեզ բնա-
13 կէ, և սէր նորա ի մեզ կատարեալ է։ Այսուիկ
գիտեմք, եթէ մեք ի նմա եմք բնակեալ, և նա՝ ի
14 մեզ, զի ի Հոգւոյն իւրմէ ետ մեզ։ Եւ մեք տե-
սաք և վկայեմք, զի Հայր առաքեաց զՈրդին իւր
15 Փրկիչ աշխարհի։ Որ ոք խոստովանեսցի եթէ Յի-
սուս է Որդի Աստուծոյ, Աստուած ի նմա բնակէ,
16 և նա՝ յԱստուած։ Եւ մեք գիտացաք և ծա-
նեաք զսէրն Աստուծոյ զոր ունի առ մեզ. Աստուած
սէր է. և որ կայ ի սէրն՝ բնակեալ է յԱստուած,
17 և Աստուած ի նմա բնակէ։ Յայսմիկ կատարեալ
է սէրն ընդ մեզ. զի համարձակութիւն [1]ունիմք

---

[1]Բազմ. ունիցիմք

յաւուրն դատաստանի. զի որպէս և նայն է՝ նոյն-
18 պէս և մեք եմք յաշխարհիս յայսմիկ։ Երկեւղ ոչ
գոյ ի սէր, այլ սէրն կատարեալ ի բաց մերժէ
զերկեւղն. զի երկեւղ ընդ տանջանաւք է. իսկ որ
19 երկնչին՝ չէ կատարեալ ի սէրն։ Մեք [1]սիրեացուք
20 զԱստուած", վասն զի նա նախ սիրեաց զմեզ։ Եթէ
ոք ասիցէ եթէ Սիրեմ զԱստուած, և զեղբայր իւր
ատիցէ, սուտ է. որ ոչ սիրէ զեղբայր իւր զոր
տեսանէ, զԱստուած զոր ոչն տեսանէ՝ դիւ՞րդ կարի-
21 ցէ սիրել։ Եւ զայս պատուէր ունիմք առ ի նմանէ,
զի որ սիրէ զԱստուած՝ սիրէ նա և զեղբայր իւր։

Գլ. Ե

1 Զե. Ամենայն որ հաւատայ եթէ Յիսուս է Քրիս-
տոսն՝ յԱստուծոյ ծնեալ է, և ամենայն որ սիրէ
2 զծնողն՝ սիրէ և զծնեալն ի նմանէ։ Ա յսուիկ ճա-
նաչեմք եթէ սիրեմք [2]զորդին Աստուծոյ, յորժամ
զԱստուած սիրեացուք և զպատուիրանս նորա ա-
3 րասցուք։ Քանզի այս է սէրն Աստուծոյ, եթէ
զպատուիրանս նորա պահեացուք. և պատուիրանք
4 նորա չեն ինչ ծանրունք։ Զի ամենայն որ յԱստու-
ծոյ ծնեալ է՝ յաղթէ աշխարհի. և այս է յաղ-
թութիւնն որ յաղթէ աշխարհի, հաւատքն մեր։
5 Եւ ո՞ իցէ որ յաղթիցէ աշխարհի, եթէ ոչ՝ որ հա-
ւատայցէ եթէ Յիսուս է Որդի Աստուծոյ։
6 Սա է որ եկն ջրով [3]և հոգւով" և արեամբ, Յի-
սուս Քրիստոս. ոչ ջրով միայն, այլ և արեամբ

---

[1] Ոմանք, սիրեմք զնա. այլք՝ սիրեմք զԱստուած
[2] Յոմանս, զորդիս [3] Ի բազումս պակասէ

7 և ջրով. Եւ Հոգին է որ վկայէ, զի Հոգին իսկ է
8 ճշմարտութիւն: [1]Սոքա երեքին՝ են որ վկայեն,
9 Հոգին, ջուրն և արիւնն. և երեքին մի են: Եթէ
զմարդկան ինչ վկայութիւն ունիցիմք, սպասքն
Աստուծոյ վկայութիւնն մեծ իցէ. այս է վկայու-
թիւնն Աստուծոյ, որ վկայեաց ի վերայ Որդւոյն
իւրոյ: Վ.Ջ
10 ԶԶ. Որ հաւատայ յՈրդին Աստուծոյ՝ ունի յան-
ձին զվկայութիւնս զայս. որ չհաւատայ [2]Որդւոյ
Աստուծոյ՝ սուտ առնէ զնա. քանզի չհաւատայ
վկայութեանն զոր վկայեաց Աստուած ի վերայ
11 Որդւոյն իւրոյ: Եւ այս իսկ է վկայութիւնն, զի
կեանս յաւիտենականս ետ մեզ Աստուած, և այս
12 են կեանքն որ յՈրդին նորա են: Որ ընդունի զՈր-
դին, ընդունի և զկեանսն. և որ ոչ ընդունի զՈր-
դին Աստուծոյ, և ոչ զկեանսն ընդունի:
13 ԶԷ. Զայս գրեցի ձեզ զի գիտասջիք եթէ կեանս
յաւիտենականս ունիք, և զի հաւատայցէք յանուն
14 Որդւոյն Աստուծոյ: Եւ այս է համարձակութիւնն
զոր ունիմք մեք առ նա, զի զոր ինչ հայցեսցուք
15 բաւ կամաց նորա՝ լսէ մեզ: Զի եթէ գիտիցեմք
եթէ լսէ հայցուածոցն մերոց, ապա գիտեմք եթէ
առնումք զհայցուածսն զոր հայցեմք առ ի նմանէ:
16 Եթէ ոք տեսցէ զեղբայր իւր մեղուցեալ մեղս
որ ոչ առ ի մահ՝ խնդրեսցէ, և տացէ նմա կեանս
մեղուցելոյն ոչ առ ի մահ. են մեղք որ մահու-
չափ են, ոչ վասն այնորիկ ասեմ եթէ [3]խնդրեսցես:

---

[1]Յոյն, Զի երեք [2]Ի բաւղմ պակաս
[3]Բաւղմ, խնդրեսցէ

17 Ամենայն անիրաւութիւն մեղք են. և են մեղք որ մահու չափ [1]են։
18 Գիտեմք եթէ ամենայն որ յԱստուծոյ է ծնեալ՝ ոչ մեղանչէ. այլ որ յԱստուծոյն է ծնեալ՝ պահէ
19 զանձն, և չարն առ նա ոչ մերձենայ։ Գիտեմք եթէ յԱստուծոյ եմք, և աշխարհ ամենայն ի չարի
20 կայ։ Եւ գիտեմք եթէ Որդին Աստուծոյ եկն, ևետ մեզ միտս զի ծանիցուք զճշմարիտն. և եմք ի ճշմարտին Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի. [2]զի նա է ճշմարիտ Աստուած և կեանք յաւիտենա-
21 կան։ Որդեակք, պահեցէք զանձինս ի կռապաշտութենէ։

[3]ԹՈՒՂԹ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ"

1 Է[4]ա. Յերիցուէ առ ընտրեալդ կիւրիա և առ որդեակս իւր, զոր ես սիրեմ ճշմարտութեամբ, և ոչ եթէ ես միայն, այլ և ամենեքեան որք գիտակ
2 են ճշմարտութեանն. վասն [2]որոյ ճշմարտութեանն որ ի մեզ հաստատեալ է, [4]զի և ընդ ձեզ իցէ".

---

[1]Բ–ը–ս–ո–ւ–թ, չեն [2]ի յ–ա–ն–ի պ–ի–ս–ե
[3]Ո–ճ–ն–ո–ւ, Թուղթ Յովհաննու Առաքելոյ երկրորդ
[4]Բ–ը–ս–ո–ւ–թ, և ընդ մեզ իցէ յաւիտեան

3 [1]և դուք յաւիտենից ընդ մեզ իցէք՝՝ շնորհք,
ողորմութիւն, խաղաղութիւն յԱստուծոյ ի Հօրէ
և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ Որդւոյն Հօր,
ճշմարտութեամբ և սիրով եղիցին ընդ մեզ։
4 Ուրախ եղէ յոյժ, զի գտի յորդեկացդ քոց որ
գնան ճշմարտութեամբ ըստ պատուիրանին զոր
5 առաք ի Հօրէ։ Եւ այժմ աղաչեմ զքեզ, Կիւրիա,
իբրեւ ոչ եթէ նոր ինչ պատուիրան գրեմ քեզ,
այլ զոր ի սկզբանէն ունէաք, զի սիրեացուք զմի-
6 մեանս։ Եւ այս է սէրն, զի գնասցուք ըստ պատ-
ուիրանաց Նորա. և այս է պատուիրանն, զի որ-
7 պէս լուարուք ի սկզբանէ՝ ըստ նմին գնասջիք։ Զի
բազում մոլորեցուցիչք ելին յաշխարհ. [2]որ ոք ոչ
խոստովանի՝՝ զՅիսուս Քրիստոս եկեալ մարմնով,
նա մոլորեցուցիչ է և ՚նեռն։
8 ԷՒ. Զգոյշ լինիջիք անձանց զի մի՛ [3]կորուսանիջեք՝ զոր վաստակեցէքն, այլ զի առնուցուք՝՝ բո-
9 վանդակ վարձան։ Ամենայն որ յանցանիցէ և ոչ
կայցէ ի վարդապետութեանն Քրիստոսի՝ զԱստուած ոչ ճանաչէ. որ կայ ի վարդապետութեանն՝
10 նա և՛ զՈրդին և՛ զՀայր ընդունի։ Եթէ ոք գայցէ
առ ձեզ և զվարդապետութիւնս զայս ոչ ունիցի,
մի՛ ընդունիցիք զնա ի տուն, և մի՛ ողջոյն տայ-
11 ցէք նմա։ Որ տացէ նմա ողջոյն՝ կցորդ լիցի չա-
րաց գործոց նորա։
12 Բազում ինչ ունէի գրել առ ձեզ, այլ ոչ կա-

---

[1] ի ց-ն-էն պ-ի-ե [2] ց-յն՝, որ ոչ խոստովանի
[3] Ո՛մն+, կորուսանիցեմք զոր վաստակեցաքն, այլ զի առնուցումք

մեցայ քարտիսիւ և դեղով. զի ակն ունիմ ինձէն
իսկ գալ առ ձեզ, և բերան ի բերան խօսել. զի
13 ուրախութիւնն մեր իցէ կատարեալ։ Ողջոյն տան
քեզ որդիք քեռ քո ընտրելոյ։ [1]Շնորհք ընդ ձեզ։՚՚

[2]ԹՈՒՂԹ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵՐՐՈՐԴ՚՚

1 ԷԳ. Յերիցուէ առ Գայիոս սիրելի, զոր եսդ
2 սիրեմ ճշմարտութեամբ։ Սիրելի, վասն ամենայն
իրաց քոց յաջողութեան և առողջութեան ազօթս
առնեմ. որպէս է իսկ յաջողութիւն անձինդ քո։
3 Յոյժ ուրախ եղէ ի գալ եղբարց և լինել վկայ
քոյոյ ճշմարտութեանդ, որպէս գնասդ դու ճշմար-
4 տութեամբ։ Մեծ եւս ինչ ուրախութիւն քան
զայս ոչ ունիմ, զի լսեմ եթէ իմ որդեակքն
5 ճշմարտութեամբ գնան։ Սիրելի, հաւատարիմ
գործես զայդ, զոր եթէ առնիցես առ եղբարս՝
6 զդոյն և առ օտարս. Որք վկայեցին քոյոյ սիրոյդ
առաջի եկեղեցւոյ. որոց բարիս արարեալ յու-
7 ղարկես արժանիս Աստուծոյ։ Զի վասն [3]անուանն

---

[1] Ի Բալսամ պոխոե Ասաքելոյ երրորդ

[2] Ոմն, Թուղթ Յովհաննու

[3] Ոմն, անուան նորա

եկին, և [1]ոչինչ յուժեաք առնուն զՀեթանոսակա-
8 նացն»։ Մեք այսուհետեւ պարտիմք ընդունել զայն-
պիսիան, զի գործակից լիցուք ճշմարտութեանն։
9 ԷԴ. Գրեցի ինչ եկեղեցւոյն. այլ որ յառաջա-
դէճն ի նոցանէ է Դիոտրեփէս, ոչ ընդունի զմեզ։
10 Վասն այսորիկ եթէ եկից, յիշեցուցից զգործս նո-
րա զոր առնէ, բանիւք չարօք շաւխօսութեան
առնէ զմեզ աշխատ. և ոչ այսքիւք շատացեալ,
ոչ ինքն ընդունի զեղբարս, և զայնոսիկ որ ընդու-
11 նինն՝ արգելու, նա՛ և յեկեղեցւոյ եւս հանէ։ Սի-
րելի, մի՛ լիցիս նմանող չարի, այլ բարւոյ. զի որ
զբարին առնէ՝ յԱստուծոյ է. և որ զչարիս գործէ՝
12 նա ոչ տեսեալ երբեք զԱստուած։ ՋԴեմետրեայ
վկայեալ է յամենեցունց [2]և յեկեղեցւոյն» և ի
ճշմարտութենէն, և մեք վկայեմք. և դու գիտես
զի ճշմարիտ է մեր վկայութիւնն։
13 Բազում ինչ ունէի գրել քեզ, այլ ոչ կամիմ
14 [3]քարտիսիւ և գեղով գրել». Յի ակն ունիմ ի մո-
տոյ իսկ տեսանել զքեզ, և բերան ի բերան խօ-
15 սել։ Խաղաղութիւն ընդ քեզ. ողջոյն տան քեզ
[4]սիրելիք. ողջոյն տացիր սիրելեաց [5]մերոց իւրա-
քանչիւր յանուանէ։

---

[4]Ոմն+, ոչինչ առնուն ի Հեթանոսաց
[2]Ի Բ-ղ-մ պ-ւ-ե [3]Յ-ն, գեղով և եղեգամբ գրել քեզ [4]Ոմն+, եղբարք [5]Ի Յ-ն-ն պ-ւ-ե

ԹՈՒՂԹ

ՅՈՒԴԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԿԱԹՈՂԻԿԷ

1 Էե. **Յ**ՈՒԴԱ, Յիսուսի Քրիստոսի ծառայ, և եղբայր Յակովբայ, [1]Հեթանոսաց որ՝՝ յԱստուծոյ Հօրէ էք սիրեցեալք, և Յիսուսի Քրիստոսի պահեալք
2 և [2]ընտրեալք, Ողորմութիւն ձեզ և խաղաղութիւն և սէր բազմասցի։
3 Սիրելիք, զամենայն փոյթ յանձին կալեալ գրել ձեզ վասն մերոյ հասարակաց փրկութեանն, հարկ յանձին կալայ գրել ձեզ, և աղաչել զի ճգնիցիք ի վերայ հաւատոցն, որ միանգամ աւանդեցաւն
4 սրբոց։ Քանզի սպրդեցին մեզի մարդիկ, որ յառաջագոյն իսկ [3]կատարեալ էին ի սոյն դատաստան, ամպարիշտք, որ զԱստուծոյ մերոյ շնորհն դարձուցին յանկարգութիւն. և զմի միայն [4]տիշխանն և տէր մեր Յիսուս Քրիստոս ուրացեալք։
5 Յիշեցուցանել ձեզ այսուհետեւ կամ է ինձ որ գիտէքդ [5]զամենայն, զի Աստուած միանգամ՝՝ զժողովուրդն փրկեաց յԵգիպտոսէ, երկրորդ անգամ

---

[1]Յ՝՝՝, որոց [2]Յ՝՝՝, կոչեցեալք [3]Յ՝՝՝, գրեալ
[4]Ո՛՛՛, տիշխանն զԱստուած [5]Ո՛՛՛, միանգամ զայս զի Տէր

6 զանհաւատսն կորոյս։ Եւ զՀրեշտակս որ ոչ պահեցին զիւրեանց իշխանութիւնն, այլ թողին զիւրեանց բնակութիւնն, ի դատաստանս մեծի աւուրն
7 մշտնջենաւոր կապանօք պահեաց ի խաւարի։ Որպէս Սոդոմն և Գոմոր և որ շուրջ զնոքօք քաղաքքն, որ բաս նմին օրինակի պոռնկեցան զհետ բնկերացն մարմնոց, կան առաջի օրինակ՝ զյաւիտենական հրոյն բնկալեալ զդատաստան։
8 Ըստ նմին օրինակի և սոքա իբրեւ քնով դանդաչեալք՝ զմարմին պղծեն, զտէրութիւնս քամնհեն, զփառսն
9 հայհոյեն։ Ուր Միքայէլ Հրեշտակապետն յորժամ բանասարկուն Սատանայի վիճեալ տայր պատասխանի վասն Մովսիսեանն մարմնոյ, ոչ ժպրհեցաւ հայհոյութեանն դատաստանի հանդուրժել. այլ
10 ասէ, Սատեսցէ ի քեզ Տէր։ Իսկ սոքա զոր ինչ ոչն իմանան՝ հայհոյեն. և զայլն եւս զոր բնութեամբ իբրեւ զանխօս անասունք գիտեն, ի նոսին
11 ապականեսցին։ Վա՛յ է նոցա, զի բաս Ճանապարհին Կայենի գնացին, և բաս մոլորութեանն Բաղաամայ զեղխեցան զհետ վարձուց, և բաս հակառակութեանն Կորխայ կորեան։ [1]Սոքա են առեցեալք շոգմոգք՝ երթեալ զհետ ցանկութեանց իւրեանց, ի սերս իւրեանց խարդախութեամբ, լինին ընդ ձեզ ուրախակիցք, աներկեւղ՝ զանձինս ճարակեն. ամպք անջրդիք հողմակոծեալք, ծառք պաղակորոյք, անպտուղք, կրկնամեռք, խլեալք
13 արմատաքի. Անասուն ալիք ծովու, որ միշտ փրփրեն

---

[1]Բազում, Սոքա են ի սերս ձեր արատք, խրախճանակիցք լեալ ձեզ աներկեւղ

զիւրեանց անձանցն զամօթ. ասասեղք մոլորք, ո-
րոց [1]վիհ խաւարին յաւիտենից պահեալ է։
14 ԷԶ. Մարգարէացաւ վասն նոցա և Եւթնեւրորդն
Ադամայ Ենովք, և ասէ, Ահաւասիկ եկն Տէր
15 բիւրովք սրբովք [2]հրեշտակօք, առնել դատաստան
[3]ըստ ամենայնի՝, և յանդիմանել զամենայն ամ-
պարիշտս վասն գործոց իւրեանց զոր ամպարշտե-
ցին. և վասն ամենայն խիստ բանից զոր խօսեցան
16 զնմանէ մեղաւորք [4]և ամպարիշտք։ Սոքա են
տրտնջողք և շոգմոգք, երթեալ ըստ իւրեանց
անձանց ցանկութեանց, և բերանք նոցա զամբար-
տաւանս բարբառին, առնուն ակն երեսաց վասն
օգտի։
17 ԷԷ. Բայց դուք, սիրելիք, յիշեցէք զկանխասաց
բանս զառաքելոցն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստո-
18 սի. Զի ասէին ձեզ եթէ ի յետին ժամանակս է-
ղիցին մարդք արհամարհողք, երթեալ ըստ իւր-
եանց ամպարշտութեանց ցանկութեանց։
19 Սոքա են [5]նշաւակեալք, շնչաւորք, որ զՀոգին
20 ոչ ունիցին։ Ա՛ւ [6]մեք, սիրելիք, եղիցուք՝ շինել
զանձինս սրբութեամբն [7]հաւատոց, ի Հոգին Սուրբ
21 [8]կացցուք յաղօթս՝, Պահել զանձինս սիրովն Ա-
ստուծոյ, ակն ունել ողորմութեանն Տեառն մերոյ
22 Յիսուսի Քրիստոսի ի կեանսն յաւիտենականս։ Եւ

---

[1]Յ-ննն, աղջամուղջ [2]Բ-ղ-մ, իւրովք [3]կ-մ, ի վերայ ամենեցուն [4]ի Յ-ննի պ-ե [5]Յ-ննն, զա-
տուցեալք [6]Բ-ղ-մ, դուք, սիրելիք, եղիջիք
[7]ի Յ-ննի, ա՛մն՝ հաւատոց ձերոց. այլ՝ հաւատոց
մերոց [8]Յ-ննն, կալ յաղօթս

23 ոմանց [1]դատապարտելոց լինիջիք կշտամբիչք՝. եւ
զոմանս ապրեցուցանիջիք յափշտակեալ ի հրոյ. և
ոմանց ողորմեսջիք երկիւղիւ, [2]դառնալ և զպատ-
մուճանն որ ի մարմնոյն իցէ աղտեղեալ։
24 Եւ այնմ՛, որ կարօղն իցէ պահել զձեզ անսա-
սուռս և [3]ամբիծս, հաստատեալ առաջի իւրոց
25 փառաց աներկեւանն ցնծութեամբ, Միոյն Աստու-
ծոյ [4]և Փրկչին մերոյ [5]Յիսուսի Քրիստոսի Տեառն
մերոյ փառք, մեծութիւն, զօրութիւն և իշխա-
նութիւն [6]յառաջ քան զամենայն յաւիտեանս՝,
եւ՛ այժմ եւ՛ յամենայն յաւիտեանս։ Ամէն։

---

[1]Ց՝ՆՆ, երկմտելոց ողորմեսջիք [2]Ց՝ՆՆ, առնել
[3]ի Բ՝ԼՐ՝Մ պ՝ՖՈՒ [4]ի Ց՝ՈՒՆ պ՝ՖՈՒ [5]Ո՛մանք, ի
ձեռն Յիսուսի [6]Ց՝ՄՈՒՈ պ՝ՖՈՒ

[1]ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՅՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԱԶԵԼՈՅ

ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ԱՒԵՏԱՐԱՆՉԻՆ

ԳԼՈՒԽ Ա

1 Յայտնութիւն Յիսուսի Քրիստոսի, [2]ի ձեռն
որոյ ետ Աստուած", ցուցանել ծառայից իւրոց որ
ինչ լինելոց է վաղվաղակի, և նշանակեաց առա-
քելով ի ձեռն հրեշտակի իւրոյ առ ծառայ իւր
2 Յովհաննէս, Որ վկայեաց զբանէն Աստուծոյ, և
զվկայութիւն Յիսուսի Քրիստոսի՝ զոր ետես, [3]որ
3 էր՝ և որ լինելոցն էր յետ այնորիկ։" Երանի [4]որ
ընթեռնուն զբանս մարգարէութեանս այսորիկ, և
որ լսէ և պահէ" զոր ինչ ի նմա գրեալ է. զի ժա-
մանակս մերձեալ է։

4 Ի Յովհաննէ առ եւթն եկեղեցիս որ են յԱսիա,
շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն [5]յէնէն և որ էն" և
որ գալոցն է, և յեւթն [6]զօրութեանց Հոգւոյն՝ որ է"

---

[1]Ոմն, Յայտնութիւն Յովհաննու. այլ՝ Յայտ-
նութիւն Սրբոյ Յովհաննու Աստուածաբանի
[2]Ց՝ՆՆ, զոր ետ նմա Աստուած [3]ի Ց՝Ն՝Ի պակաս
[4]Ց՝ՆՆ, որ ընթեռնու, և որ լսեն զբանս մարգա-
բէութեանս և պահեն [5]Ց՝ՆՆ, յԱյնմանէ որ էն
և որ էրն [6]Ց՝ՆՆ, Հոգւոց որ են

5 առաջի աթոռոյն իւրոյ. Եւ ի Յիսուսէ Քրիստոսէ Հաւատարիմ վկայէն, որ է անդրանիկ ի մեռելոց, և իշխան թագաւորութեանց երկրի. որ սիրեաց զմեզ, և [1]ելոյծ զկապանս մեղաց մերոց՝՝
6 արեամբն իւրով. Եւ արար զմեզ [2]թագաւորս և քահանայս՝՝ Աստուծոյ և Հօր իւրոյ. նմա փառք և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։
7 Ահաւասիկ [3]գալոց է՝՝ ընդ ամպս. և տեսցեն զնա ամենայն աչք, և որք խոցեցինն զնա. և կոծեսցին ի վերայ նորա ամենայն ազգք երկրի։ Այո,
8 Ամէն։ Ես եմ Ալֆ և Օ, ասէ Տէր Աստուած, որ էն և [5]որ է՝՝ և որ գալոցն է, Ամենակալ։
9 Ես Յովհաննէս եղբայր ձեր և հաւասարակից նեղութեան և արքայութեան և համբերութեան որ ի [6]Քրիստոս Յիսուս. եղէ ես ի կղզւոջն որ անուանեալ կոչի Պատմոս՝ վասն բանին Աստուծոյ
10 և վասն վկայութեան Յիսուսի [6]Քրիստոսի։ Եւ [7]եղէ յիս Հոգի՝՝ յաւուր կիւրակէի, և լուայ զկնի իմ ձայն մեծ. իբրեւ զփողոյ, որ ասէր ցիս, [6]Ես
11 եմ Ալֆա և Օվ, Առաջինն և Վերջինն.՝՝ Զոր տեսանես գրեա ի գիրս, և տուր տանել յեւթն եկեղեցիս, որ յԵփեսոս և ի Զմիւռնիա և ի Պերգամոն և ի Թիւատիրս և ի Սարդիկէ և ի Փիլա-

---

[1]Ի Ց՝՝՝՝, ՚՚՚՚՝ ելոյծ զմեզ ի մեղաց մերոց. այլ՝ լուաց զմեզ ի մեղաց մերոց [2]Ո՚՚՚՚, թագաւորութիւն, քահանայս [3]Ց՝՝՝՝, գայ [4]Ո՚՚՚՚ յոհէլ՝՝՝՝, Սկիզբն և վախճան [5]Ց՝՝՝՝, որ էրն [6]Ց՚՚՚՚ պակաս [7]Ց՝՝՝՝, եղէ Հոգւով

12 դեղփիա և ի Լաւոդիկիա՝ եւ դարձայ տեսանել
զձայնն որ խօսէր ընդ իս. և ի դառնալն իմում տեսի
13 եւթն ճրագարան ոսկի՝ եւ ի մէջ եւթն ճրագա-
րանացն նման Որդւոյ մարդոյ, զգեցեալ պատմու-
ճան պճղնաւոր. և գօտեւորեալ առ առեամբքն
14 գօտի ոսկեղէն. եւ գլուխ նորա և հերքն իբրեւ
զսպիտակ և որպէս զձիւն. և աչք նորա որ-
15 պէս բոց հրոյ. եւ ոտք նորա նմանեալ պղնձոյ
ծխելոյ ի մէջ հնոցի հրաշէկ. և ձայն նորա իբրեւ
16 զձայն ջուրց բազմաց՝ եւ ունէր յաջոյ ձեռինն
իւրում աստեղս եւթն, և ի բերանոյ նորա սուր
երկայրի սրեալ ելանէր, և երեսք նորա իբրեւ
17 [1]զարեգակն ճառագայթեալ երեւէին՝: եւ իբրեւ
տեսի զնա, անկայ առ ոտս նորա իբրեւ զմեռեալ.
և եդ ի վերայ իմ զաջ իւր և ասէ ցիս, Մի՛ եր-
18 կնչիր, ես եմ Սկիզբն, և ես եմ Վախճան՝ եւ
ես եմ [2]կեանք և ես եմ որ մեռայն. և աւասիկ
կենդանի եմ յաւիտեանս յաւիտենից՝ [3]Ամէն՝
19 եւ ունիմ զփականս մահու և դժոխոց՝ Գրեա զոր
տեսանես զ, որ էն, և որ հանդերձեալ է լինել
20 յետ այնորիկ. Զխորհուրդ եւթն աստեղացդ զոր
տեսերդ յաջ իմ, և զեւթն ճրագարանս ոսկիս.
եւթն աստեղքն հրեշտակք եւթն եկեղեցեացն
են, և եւթն ճրագարանքն եւթն եկեղեցիքն են՝

ԳԼ. Բ

1 Առ հրեշտակ Եփեսացւոց եկեղեցւոյն գրեա.

---

[1] Յոյնն, զարեգակն որ ծագէ ի զօրութեան իւրում
[2] Յոյնն, որ կեաց [3] ի Բ-ը-ս պ-ւ-ս

Այսպէս ասէ որ ունի զԵւթն աստեղս յաջ իւր,
2 և շրջի ի մէջ եւթն աշտանակաց ոսկւոյ. Գիտեմ
զգործս քո և զվաստակս քո և զՀամբերութիւն
քո. և զի ոչ կարես [1]բառնալ զչարսն՝, և փորձե-
ցեր որ ասեն զինքեանս առաքեալս և ոչ են, և
3 գտեր զնոսա սուտս։ Եւ Համբերեցեր և վշտացար
4 վասն անուան իմոյ՝ և [2]աշխատեցար։ Այլ [3]ասեմ
5 առ քեզ, զի զսէրն քո զառաջինն թողեր։ Յիշեա
այժմ ուստի անկար՝ն, և ապաշաւեա, և զառա-
ջինն գործան [4]քո արա. ապա թէ ոչ՝ [5]գամ ես՝
[6]վաղվաղակի, և շարժեցից զաշտանակս քո ի
6 տեղւոջէ իւրմէ, եթէ ոչ ապաշխարեսցես։ Արդ
զայս [7]արա՝ զի ատեսցես՝ զգործան Նիկողայոսի,
7 զոր ես ատեմ։ Որ ունի ականջս լսելոյ լուիցէ
զինչ ասէ Հոգին առ եկեղեցիս. Որ յաղթէն, տաց
նմա ուտել ի փայտէն կենաց որ է ի մէջ դրախ-
տին Աստուծոյ։

8 Եւ առ Հրեշտակ Ջմիւռնացւոց եկեղեցւոյն
գրեա. Այսպէս ասէ [8]Անսկիզբնն և Անվախճանն՝,
9 որ եղեւ մեռեալ և կենդանացաւ. [9]Տեսի զգործս
քո և զնեղութիւն և զաղքատութիւն, ([10]այլ աղ-
քատութիւն քո մեծութիւն եղիցի՝,) և զՀայհո-
յութիւնն, որ ասէին զինքեանս Հրեայս գոլ և
10 չէին ինչ, այլ ժողով Սատանայի։ Մի՛ երկնչիր,

---

[1] Կ—՛, տանել չարաց [2] Յ—ննն, ոչ թուլացար
[3] Յ—ննն, ունիմ [4] ի Յ—ն՝ն գ—ւ—ե [5] Յ—ննն, գամ
առ քեզ [6] Յ—՛ն— գ—ւ—ե [7] Յ—ննն, ունիս զի ա-
տես [8] Յ—ննն, Առաջինն և Վերջինն [9] Յ—ննն, Գի-
տեմ [10] Յ—ննն, այլ մեծատուն ես

[1]վասն որոյ կամիս չարչարել". ահա հանդերձեալ
է բանսարկուն արկանել ի ձէնջ ի բանտ, զի փոր-
ձիցիք, և ունիցիք նեղութիւն աւուրս տասն. լեր
հաւատարիմ մինչեւ ի մահ, և տացից քեզ զպսակն
11 կենաց: Որ ունի ականջս լսելոյ լուիցէ զինչ Հո-
գին [2]Սուրբ ասէ առ եկեղեցիս. Որ յաղթէ, [3]ոչ
անվրաւի" յերկրորդ մահուանէ:
12 Եւ առ հրեշտակն որ ի Պերգամոյ եկեղեցին
գրեա. Այսպէս ասէ որ ունի զսուրն երկսայրի
13 սրեալ. [4]Ես [5]գործս քո, և" զի բնակեալ ես
ուր աթոռն է Սատանայի, և ունիս զանուն իմ,
և ոչ ուրացար զհաւատս իմ յաւուր յորում
Անթիպաս վկայն իմ հաւատարիմ [6]եղեւ. զի
վկայ է իմ հաւատարիմ ամենայն հաւատացեալ
որ սպանաւ ի ձէնջ, որ կայք" ուր Սատանայ է
14 բնակեալ: Այլ ունիմ առ քեզ սակաւ, զի [7]կայ
առ քեզ վարդապետութիւնն" Բաղաամայ, որ
ուսոյց գԲաղակ դնել գայթակղութիւն առաջի
որդւոցն Իսրայելի, ուտել նոցա զոհեալ և պոռ-
15 նկել: Այսպէս և դու ունիս զվարդապետութիւնն
16 Նիկողայեցեացց զոր ես ատեմ: Արդ ապաշխարեա,
ապա թէ ոչ՝ [8]գամ վաղվաղակի, և պատերազմե-
17 ցայց ընդ նոսա սրով բերանոյ իմով: Որ ունիցի ա-
կանջս լսելոյ՝ լուիցէ զինչ Հոգին ասէ առ եկեղե-

---

[1]Յ-ՆՆ, յորոց կրեցոյն իցես [2]ի Յ--ՆԷն պ-ւ-ե
[3]կ-ւ, ոչ ջնասեցի [4]Յ-ՆՆ, Գիտեմ [5]ի Բ--ը-ս
պ-ւ-ե [6]Յ-ՆՆ, որ սպանաւ ի միջի ձերում
[7]Յ-ՆՆ, ունիս անդ զոմս ունին զվարդապետու-
թիւնն [8]Յ-ՆՆ, գամ առ քեզ

ցիս . Որ յաղթէ՝ տաց նմա ուտել ի մանանայէն
թաքուցելոյ , և տաց նմա [1]զքիրն սրբութեան՝՝ ,
և գրեալ անուն նոր [2]ի քիրն , զոր ոչ ոք գիտէ՝
բայց միայն որ առնուն :
18 Եւ առ Հրեշտակն որ ի Թիւատիրայ եկեղեցին՝
գրեա . Այսպէս ասէ Որդին Աստուծոյ , որոյ աչք
իւր են իբրեւ զբոց հրոյ , և ոտք նորա նման պղնձի
19 ծխելոյ . [3]Ես գործս քո և զսէր և զհաւատ և
զպաշտօն քո [4]համբերութեամբ , զի բազում է
20 վաստակ քո վերջինն քան զառաջինն : Այլ [5]ա-
սեմ առ քեզ [6]բազում . զի թողեր զկինն Զեզա-
բէլ , որ ասէր զինքն մարգարէ , և ուսուցանէր [7]մո-
լորութիւն զծառայս իմ՝ պոռնկել և ուտել զզոհ-
21 եալ : Եւ ետու [8]նոցա ժամանակ ապաշխարել
[9]զպոռնկութիւնն իւրեանց և ոչ ապաշխարեցին՝՝ :
22 Ահաւասիկ ես արկանեմ զնա [10]ի հնոց , և զգոր-
ծակիցս իւր ընդ որս շնացաւ՝ ի նեղութիւնս մե-
ծամեծս , եթէ ոչ ապաշխարեսցեն ի գործոց իւր-
23 եանց : Եւ զորդիս [11]նոցա սպանից մահուամբ , և
ծանիցեն ամենայն եկեղեցիք թէ ես եմ որ յան-
դիմանեմ զերիկամունս և զսիրտս , և տամ ձեզ
24 իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց : Այլ ձեզ ա-
սեմ , որք ի Թիւատիրս էք և ոչ ունիք զվարդապե-

---

[1]Յ-ննն , խիճ սպիտակ [2]Յ-ննն , ի վերայ խճին
[3]Յ-ննն , Գիտեմ [4]Յ-ննն , և զհամբերութիւն
[5]Յ-ննն , ունիմ [6]Ո՛ռ+ , առկաս . յայլ՝ գ-ի-ե
[7]Յ-ննն , և մոլորեցուցանէր [8]Յ-ննն , նմա [9]Յ-ննն , ի
պոռնկութենէ իւրմէ , և ոչ ապաշխարեաց
[10]Յ-ննն , ի մահիճս [11]Յ-ննն , նորա

տուԹիւնս զայս, որ ոչ ծանեայք դիտոյ Սատանային զոր խօսին, Ոչ արկից զձեզ այլ ծանրուԹիւն. Այլ զոր ունիք, պահեցէք մինչեւ ես գամ։
26 Եւ որ յաղԹէ և պահէ զգործս իմ մինչեւ ցվախճան, տացից նմա իշխանուԹիւն ի վերայ ազգաց։
27 Եւ հովուեսցէ զնոսա գաւազանաւ երկաԹեայ, և
28 իբրեւ զանօթի բրտի փշրեսցէ զնոսա։ Որպէս և ես ընկալայ ի Հօրէ իմմէ, և տացից նոցա զաստղն առաւօտուն։ Որ ունի ականջս լուիցէ զինչ Հոգին ասէ առ եկեղեցիս։

ԳԼ. Գ

1 Եւ առ հրեշտակ Սարդիացւոց եկեղեցւոյն գրեա. Այսպէս ասէ որ ունի զեւԹն [1]Հոգին Աստուծոյ և զեւԹն աստեղս. [2]Գիտեմ զգործս քո զի անուն
2 կենդանւոյ ունիս և մեռեալ ես։ Լեր արԹուն և հաստատեա [3]այսուհետեւ. զի հանդերձեալ ես՝ մեռանել. քանզի ոչ գտի զգործս քո կատարեալ
3 առաջի Աստուծոյ։ Արդ յիշեա Թէ որպէս լուար, և պահեա և ապաշխարեա. ապա Թէ ոչ զուարԹանաս, գամ որպէս գող և ոչ [4]ոք իմանայ՝ զգա-
4 լուստ իմ առ քեզ։ [5]Ունիս սակաւ մի զանուն Սարդիացւոցն՝ որք ոչ աղտեղացուցին զհանդերձս իւրեանց, և [6]շրջին ի սպիտակս որում արժանի եղեն՝։

---

[1] Յ-ԽԽ, Հոգիսն [2] Յ-ԽԽ, Գիտեմ [3] Յ-ԽԽ, զՅիսուսեայսն որ հանդերձեալ են [4] Ո՞Ն+, իմասցիս
[5] Յ-ԽԽ, Այլ ունիս սակաւ անուանս ի Սարդիկէ
[6] Յ-ԽԽ, շրջեսցին ընդ իս ի սպիտակս, քանզի արժանի են

5 Որ յաղթէ [1]այսպէս զգեցցի սպիտակս, և ոչ [2]ջնջեցի անուն՝ նորա ի գպրութենէն կենաց. և խոստովանեցայց զանուն նորա առաջի Հօր իմոյ և առաջի [3]հրեշտակաց։ Որ ունի ականջս՝ լուիցէ զինչ
6 ասէ Հոգին առ եկեղեցիս։

7 Եւ առ հրեշտակն փիլադելփեացոց եկեղեցւոյն գրեա. Այսպէս ասէ Սուրբն, ճշմարիտն՝ որ ունի զփականս Դաւթի. բանայ՝ և ոչ ոք է որ փակէ,
8 և փակէ՝ և ոչ ոք է որ բանայ. [4]Ես գործս քո. ահա ետու առաջի քո դուռն բացեալ, զոր ոչ ոք կարէ փակել. զի սակաւիկ ունիս զօրութիւն, և պահեցեր զբանս իմ, և ոչ ուրացար
9 զանուն իմ։ Ահաւասիկ ես տամ քեզ [5]ժողովս Սատանայի, որք ասեն զինքեանս Հրեայս գոլ՝ և ոչ են, այլ ստեն. արարից զնոսա, զի եկեսցեն և երկիր պագցեն առաջի ոտից քոց, և ծանիցեն զի
10 ես սիրեցի զքեզ։ Զի պահեցեր զբան համբերութեան իմոյ, և ես պահեցից զքեզ ի ժամ փորձութեան քո, որ հանդերձեալ է գալ յամենայն տիեզերս՝ փորձել զամենայն բնակեալս յերեսս
11 երկրի։ Ահա գամ վաղվաղակի. կալ զոր ունիս,
12 զի մի՛ ոք առցէ զպսակ քո։ Որ յաղթէ՝ արարից զնա սիւն տաճարի Աստուծոյ իմոյ, և արտաքս այլ մի՛ եւս ելցէ. և գրեցից ի վերայ նորա զանուն Աստուծոյ իմոյ, և զանուն քաղաքի Աստուծոյ իմոյ, զնորն Երուսաղեմի, որ իջանելոց է յերկնից

---

[1] Ոմանք, նա [2] Յ-ին, ջնջեցից զանուն
[3] Յ-ին, հրեշտակաց նորա [4] Յ-ին, Գիտեմ
[5] Յ-ին, ի ժողովոյն

13 Աստուածոյ իմոյ, և [1]անուն նորա՝ նոր։ Որ ունի
ականջս՝ լուիցէ զինչ ասէ Հոգին առ եկեղեցիս։
14 Եւ առ հրեշտակն Լաւոդիկեայ եկեղեցւոյն
գրեա. Այսպէս ասէ Ամէնն, վկայն հաւատարիմ
և ճշմարիտ, Սկիզբն [2]ակզբան արարածոց Աստու-
15 ծոյ. Գիտեմ զգործս քո, զի ոչ ցուրտ ես և ոչ
ջերմ. պարտ էր քեզ ցուրտ լինել և կամ ջերմ։
16 Այլ դու գաղջ ես, և ոչ ջերմ և ոչ ցուրտ,
17 Համպերձեալ ես փսխել ի բերանոյ իմմէ։ Զի ա-
սես, Մեծատուն էի և մեծացայ, և ոչ իւիք կա-
րօտ եմ. և ոչ գիտես եթէ դու ես ողորմելի և
18 հէք և աղքատ, մերկ և կոյր։ Արդ ես խորհրդա-
կից եղէց քեզ. Առ, գնեա յինէն ոսկի փորձեալ
ի հրոյ զի մեծասցիս, և հանդերձս սպիտակս՝ զի
զգեցցիս, զի մի՛ երեւեսցի անվայելչութիւն մեր-
կութեան քո. և դիր դեղ յաչս քո զի տեսցես։
19 Ես զոր սիրեմ յանդիմանեմ և խրատեմ. նա-
20 խանձեա այժմ և ապաշխարեա։ Ահաւասիկ կամ
ես առ դուրս և բախեմ. եթէ ոք լուիցէ ձայնի ի-
մում և բանայցէ զդրունսն, մտից առ նա և ընթ-
21 րիս արարից առ նա, և նա ընդ իս։ Որ յաղթէ՝
տացս նմա նստել ընդ իս յաթոռ իմ, որպէս և ես
22 յաղթեցի և նստայ յաթոռ Հօր իմոյ։ Որ ունիցի
ականջս՝ լուիցէ զինչ ասէ Հոգին առ եկեղեցիս։

Գլ. Դ

1 Եւ յետ այսորիկ տեսի, և ահա [3]դրունք երկնից

---

[1] Յն. զանուն իմ [2] Ի Յն. պակաս
[3] Յն. դուռն բացեալ էր յերկինս, և ձայնն ա-
ռաջին զոր լսեայ՝ էր իբրեւ զփողոյ, որ

բացեալ էին, և ձայն փողոյն առաջնոյ զոր լուայ՝
խօսէր ընդ իս և ասէր, Ել այսր, և ցուցից քեզ
2 զինչ լինելոց է առ յապոյն։ Եւ վաղվաղակի եղէ
3 ես Հոգւով, և ահա աթոռ անդ [1]կերկինս։ Եւ ի
վերայ աթոռոյն նստէր՝ նման տեսլեան ականց
4 յասպսոյ և սարդիոնի։ Եւ [2]բահանայք շուրջ զա-
թոռովն նմանք՝ տեսլեան զմրխատի, և շուրջ զա-
թոռովն աթոռք քսան և չորք, և ի վերայ աթո-
ռոցն նստէին քսան և չորք երիցունք՝ զգեցեալ
Հանդերձս սպիտակս, և ի գլուխս իւրեանց պսակս
5 ոսկեղէնս։ Եւ յաթոռոյ անտի ելանէին փայլատակ-
մունք և ձայնք և որոտմունք. և եւթն ջամբարք
հրոյ բորբոքելոյ առաջի աթոռոյն, որ են եւթն Հո-
6 գիքն Աստուծոյ։ Եւ էր առաջի աթոռոյն ծով ա-
պակեղէն ի նմանութիւն սպիտակութեան սառին,
և ի մէջ աթոռոյն և շուրջ զաթոռովն չորք կենդա-
7 նիք, լի աչօք առաջոյ և յետոյ։ Եւ էր կենդանին
առաջին նման առիւծու, և երկրորդ կենդանին՝
նման զուարակի, և երրորդ կենդանին ունէր երեսս
մարդոյ, և չորրորդ կենդանին՝ նման արծուոյ թռու-
8 ցելոյ։ Եւ չորից կենդանեացն էին միոյ միոյ ի նոցանէ
վեց թեւք շուրջանակի, և ի ներքոյ լի էին աչօք,
և ոչ հանգչէին ոչ զտիւ և ոչ զգիշեր յասելոյ,
[3]Սուրբ, Սուրբ, Սուրբ, Սուրբ, Սուրբ, Սուրբ,
Սուրբ, Սուրբ, Սուրբ՝, Տէր Աստուած Ամենակալ,

---

[1]Յ-ՀՀ, կերկինս. և որ նստէր ի վերայ աթո-
ռոյն։ (3) Եւ որ նստէրն՝ էր [2]Բ-ղ-մ, ծիսածան
շուրջ զաթոռովն նման [3]Բ-ղ-մ, Սուրբ, Սուրբ,
Սուրբ

9 [1]որ էն և ես և որ գալոց ես"։ Եւ յորժամ տային կենդանիքն փառս և պատիւ և գոհութիւն նստելոյն ի վերայ աթոռոյն՝ կենդանւոյն յաւիտեանս յա-
10 ւիտենից, Անկանէին քսան և չորք երիցունքն առաջի նստելոյն յաթոռն, և երկիր պագանէին կենդանւոյն յաւիտեանս յաւիտենից. և դնէին զպսակս
11 իւրեանց առաջի աթոռոյն և ասէին, Արժանի ես, [2]Տէր Աստուած մեր առնուլ փառս և պատիւ և զօրութիւն, զի դու ստեղծեր զամենայն, և ի կամելն քո ստեղծան և կան հաստատուն։

Գլ. Ե

1 Եւ տեսի յաջոյ ձեռինն որ նստէր ի վերայ աթոռոյն գիրս գրեալ ներքոյ և արտաքոյ, և կնքեալ
2 եւթն կնքով։ Եւ տեսի հրեշտակ մի զօրաւոր զի քարոզէր ի ձայն մեծ, Ո՞ է արժանի բանալ զգիրս
3 և լուծանել զկնիք նորա։ Եւ ոչ ոք կարէր ոչ յերկինս և ոչ յերկրի և ոչ ի ներքոյ երկրի բա-
4 նալ զգիրսն, [3]զի ոչ տեսին զնա"։ Եւ ես լայի ուժգին զի ոչ ոք գտաւ արժանի բանալ զգիրսն
5 և հայել ի նա։ Եւ մի յերիցանցն ասէ ցիս, Մի՛ լար. ահաւասիկ յազթեաց Առիւծն յազգէն Յուդայ յարմատոյն Դաւթի՝ բանալ զգիրսն և լու-
6 ծանել զեւթն կնիքսն նորա։ Եւ տեսի ի մէջ աթոռոյն և ի մէջ չորից կենդանեացն և ի մէջ երիցանցն Գառն կայր [4]զենեալ, որ ունէր եւթն

---

[1] Յ-ՆՆ, որ էրն և որ էն և որ գալոցն է
[2] Բ-ԼԼ-Ք, Տէր և Աստուած մեր [3] Յ-ՆՆ, և ոչ հայել ի նա [4] Յ-ՆՆ, իբրեւ զենեալ

եղջեւրս և աչս եւթն, որ են եւթն Հոգիք Աստուծոյ, առաքեալ ընդ ամենայն երկիր։ 7 Եւ [1]եկն ընկալաւ՝ յաջոյ ձեռանէ նորա որ նստէր ի վերայ աթոռոյն։ 8 Եւ յորժամ առ գիրն, չորք կենդանիքն և քսան և չորք երիցունքն անկանէին առաջի Գառինն, և ունէին իւրաքանչիւր քնար և բուրվառ ոսկի լի խնկով, որ է աղօթք սրբոցն։ 9 Եւ օրհնէին երգս նորա և ասէին, Արժանի ես առնուլ գիրդ և բանալ զկնիք դորա, զի զենար և գնեցեր զմեզ Աստուծոյ արեամբդ քով յամենայն ազգաց և ի լեզուաց և [2]ի ժողովոց հեթանոսաց՝։ 10 Եւ արարեր [3]զսոսա Աստուծոյ մերոյ [4]թագաւորս և քահանայս՝ թագաւորել ի վերայ երկրի։ 11 Եւ տեսի, և լուայ զձայն հրեշտակաց բազմաց որք կային շուրջ զաթոռովն և զչորիւք կենդանեօքն և [5]զքահանայիւքն, և էր թիւն նոցա բեւրք բիւրուց և հազարք հազարաց։ 12 Ասէին ձայնիւ մեծաւ, Արժանի է Գառնդ զենեալ առնուլ զմեծութիւն և զիմաստութիւն և զզօրութիւն և զպատիւ և զփառս և զօրհնութիւն։ 13 Եւ ամենայն արարած որ են յերկինս և [6]յերկրի և ի ծովու և որ ի նոսա՝ լուայ զի ասէին, [7]Որ նստի յաթոռն և Գառնն՝ օրհնեալ, բարձրացեալ և փառաւորեալ՝ յաւի-

---

[1]Ո՛ն+, եկն և առ գիրն [2]Ց՛ն՛, ի ժողովրդոց և ի հեթանոսաց [3]Ո՛ն+, զմեզ [4]Ո՛ն+, թագաւորութիւն և քահանայութիւն [5]Ց՛ն՛, զերիցամբքն [6]Բ՛ղ՛մ+, յերկրի և ի ներքոյ երկրի [7]Ց՛ն՛, Ահիմ որ նստի յաթոռն և Գառինն օրհնութիւն և պատիւ և փառք և զօրութիւն

14 տեառնս յաւիտենից, եւ չորք կենդանիքն ասէին, Ամէն. և [1]երիցունքն անկանէին առաջի նորա և [2]երկիր պագանէին՝։

ԳԼ. Զ

1 Եւ տեսի զի երաց Գառնն զմին [3]յեւթն կնքոցն՝, և լուայ ի միոյ ի չորից կենդանեացն իբրեւ զձայն
2 որոտման զի ասէր [4]Թէ Գամ՝։ Եւ տեսի և ահա ձի սպիտակ, և որ հեծեալն էր ի նմա՝ ունէր աղեղն. և տուաւ նմա պսակ, և [5]ելն յաղթող զի յաղթեսցէ՝։

3 Եւ յորժամ երաց զկնիքն երկրորդ, լուայ երկ-
4 րորդ կենդանւոյն զի ասէր, [4]Գամ՝։ Եւ ել այլ ձի կարմիր, և որ հեծեալն էր ի վերայ նորա՝ տուաւ նմա առնուլ զխաղաղութիւն յերկրէ, զի զմիմեանս զեղցեն, և տուաւ նմա սուր մի մեծ։

5 Եւ յորժամ երաց զկնիքն երրորդ, լուայ երրորդ կենդանւոյն զի ասէր [4]Թէ Գամ՝. և տեսի և ահա ձի սեաւ, և որ նստեալն էր ի վերայ նորա՝
6 ունէր կշիռ ի ձեռին իւրում։ Եւ լուայ ձայն ի միջոյ չորից [6]կենդանեացն, կապիճ մի ցորեան՝ դենարի միոջ, և երեք կապիճ գարի՝ դենարի միոջ. և ձէթ և գինի մի՛ վնասեսցես։

---

[1]Ոմն+, քան և չորք երիցունքն [2]Ոմն+, երկիր պագանէին կենդանւոյն յաւիտեանս յաւիտենից
[3]Ոմն+, ի կնքոցն [4]ի ց--ն՝, ոմն+՝ եկ, այլ՝ եկ և տես [5]ի ց--ն՝, ոմն+՝ ել յաղթող և զի յաղթեսցէ. այլ՝ ել յաղթող և յաղթեաց
[6]Ց-ն՝, կենդանեացն որ ասէր

7 Եւ յորժամ եբաց զկնիքն չորրորդ, լուայ ձայն
8 ի չորրորդ կենդանւոյն զի ասէր [1]Թէ Գամ՝։ Եւ
տեսի, և ահա ձի շլոտաս, և որ նստէրն ի վերայ
նորա՝ [2]ունէր զՄահ՝, և Դժոխք երթային զհետ
նորա. և տուաւ [3]նմա իշխանութիւն չորրորդ մա-
սին աշխարհի սատակել սրով և սովով և մահ-
ուամբ և գազանօք երկրի։
9 Եւ յորժամ եբաց զկնիքն հինգերորդ՝ տեսի ի
ներքոյ սեղանոյն զհոգիս [4]սպանելոցն [5]մարդկան զե-
նեալ՝ վասն բանին Աստուծոյ և վասն վկայութեան
10 նորա զոր ունէին։ Որք սաէին ի ձայն մեծ, Մին-
չեւ յե՞րբ, Տէր սուրբ և ճշմարիտ, ոչ դատիս և
11 խնդրես զվրէժ արեան մերոյ ի բնակչաց երկրի։ Եւ
տուաւ [6]նոցա սրկանելիս սպիտակս՝, և ասացաւ
նոցա զի հանգիցեն փոքր մի ժամանակ, մինչեւ
լցցին ծառայակիցք նոցա և եղբարք նոցա որք
հանդերձեալ են կատարել իբրեւ զնոսա։
12 Եւ տեսի յորժամ եբաց զկնիքն վեցերորդ, եղեւ
շարժումն մեծ, և արեգակն եղեւ սեաւ իբրեւ
զկապերտ այծեայ, և լուսինն [7]բոլորովին եղեւ իբ-
13 րեւ արիւն։ Եւ աստեղք երկնից թօթափեցան
յերկիր, [8]որպէս տերեւ թզենւոյ զի ուժգին շար-
14 ժիցի ի հողմոյ՝։ Եւ երկինք իբրեւ զմագաղաթեայ

---

[1] Ի ց-ն-ն, -մ-ն+ ԵԿ, -ւլ+ ԵԿ և տես [2] ց-յն, ա-
նուն նմա Մահ [3] Բ-ա-ր-ն+, նոցա [4] Ի ց-ն-ն գ-
յ-ե [5] Ո-մ-ն+, զննելոց [6] ց-յն, նոցա իւրաքան-
չիւր սրկանելի սպիտակ [7] ց-մ-ն- գ-յ-ե [8] ց-յն,
որպէս թզենի ընկենու զպտուղս իւր խակս, յու-ժ-
գին հողմոյ շարժեալ

գերս գալարին. և ամենայն լերինք և կղզիք ի
15 տեղւոյ իւրեանց շարժեցան։ Եւ թագաւորք երկրի
և իշխանք, հազարապետք և մեծամեծք և զօրա-
ւորք և ամենայն ծառայք և ամենայն ազատք թա-
16 քուցին զինքեանս յայրս և ի ծերպս վիմաց։ Եւ
ասէին [1]լերանց թէ՝ Անկեարուք ի վերայ մեր, և
17 ցբլուրս՝ թէ Ծածկեցէք զմեզ՝։ Զի եկն օր մեծ բար-
կութեան [2]նորա, և ո՞վ կարէ կալ [3]առաջի նորա՝։

ԳԼ. Է

1 Եւ յետ այնորիկ տեսի չորս հրեշտակս զի կային
ի չորս անկիւնս երկրի, և ունէին զչորս հողմս երկ-
րի, զի մի՛ շնչեսցէ հողմ ի վերայ երկրի և մի՛ ի
2 ծովու և մի՛ ի ծառս։ Եւ տեսի այլ հրեշտակ զի
ել յարեւելից, և ունէր զկնիք Աստուծոյ կեն-
դանւոյ, և աղաղակեաց ձայնիւ մեծաւ առ չորս
հրեշտակն՝ որոց [4]առեալ էր իշխանութիւն՝՝ ա-
3 պականել զերկիր և զծով. Եւ ասէր, Մի՛ վնասէք
երկրի, մի՛ ծովու, մի՛ ծառոց. դադարեցէք մինչեւ
4 [5]կնքեցից զծառայս Աստուծոյ [6]իմոյ։ Եւ լուայ
զթիւ կնքելոցն զի էին հարեւր քառասուն և չորք
5 հազարք՝ կնքեալք յազգէ որդւոցն Իսրայելի. Յազ-
գէն Յուդայ՝ երկոտասան հազար կնքեալ, յազգէն
Ռուբենի՝ երկոտասան հազար կնքեալ, յազգէն

---

[1]Յ-ննն, լերանց և վիմաց թէ՝ Անկեարուք ի վերայ մեր և ծածկեցէք զմեզ յերեսաց այնորիկ որ նստի ի վերայ աթոռոյն՝ և ի բարկութենէ Գառինն [2]Ոմն+, նոցա [3]ի Յ-ննն պ-ի-ռ [4]Յ-ննն, տուեալ էր
[5]Յ-ննն, կնքեսցուք [6]Յ-ննն, մերոյ ի ճակատս նոցա

6 Գադայ՝ երկոտասան հազար կնքեալ, Ցազդէն Ա-
սերայ՝ երկոտասան հազար կնքեալ, յազդէն Նեփ-
թաղիմայ՝ երկոտասան հազար կնքեալ, յազդէն
7 Մանասէի՝ երկոտասան հազար կնքեալ, Ցազդէն
Շմաւոնի՝ երկոտասան հազար կնքեալ, յազդէն
Ղեւեայ՝ երկոտասան հազար կնքեալ, յազդէն Ի-
8 սաքարայ՝ երկոտասան հազար կնքեալ, Ցազդէն
Զաբուղոնի՝ երկոտասան հազար կնքեալ, յազդէն
Յովսեփու՝ երկոտասան հազար կնքեալ, յազդէն
Բենիամինի՝ երկոտասան հազար կնքեալ:

9 Եւ յետ այսորիկ տեսի և ահա ժողովուրդ բա-
զում՝ որոց ոչ գոյր թիւ, յամենայն հեթանոսաց
և յամենայն ազգաց և յամենայն լեզուաց և յա-
մենայն ժողովրդոց, որք կային առաջի աթոռոյն
և առաջի Գառինն՝ արկեալ զիւրեամբք հանդերձս
10 սպիտակս, և արմաւենիս ի ձեռս իւրեանց: Աղա-
ղակէին ի ձայն մեծ և ասէին, փրկութիւն Աստու-
ծոյ մերոյ, որ նստի ի վերայ աթոռոյն, և Գա-
11 առինն: Եւ ամենայն հրեշտակք կային շուրջ զա-
թոռովն և զերիցամբքն և զչորիսք կենդանեօքն,
և անկանէին յերեսս առաջի աթոռոյն և երկիր
12 պագանէին Աստուծոյ, Ասելով, Ամէն. օրհնու-
թիւն և փառք և իմաստութիւն և գոհութիւն և
պատիւ և զօրութիւն և [1]շնորհք Տեառն Աստուծոյ
13 մերոյ յաւիտեանս յաւիտենից: Ամէն: Եւ ասէ
ցիս մի յերիցանց անտի, Սոքա որ զգեցեալ են
զհանդերձս սպիտակս՝ ո՞յք են, և [2]կամ ուստի՞
14 գան: Ես ասացի ցնա, Տէր, դու գիտես. և ասէ

---

[1]Ցոյն, կարողութիւն [2]Ի ցառնէն պակաս

ցիս, Սոքա են որ գան ի վշտաց մեծաց, և լուա-
ցին զարկանելիս իւրեանց և սպիտակացուցին զա-
15 եամբ Գառինն։ Վասն այնորիկ են առաջի աթո-
ռոյն Աստուծոյ, և պաշտեն զնա զտիւ և զգիշեր
ի տաճարի նորա, և որ նստի ի վերայ աթոռոյն՝
16 [1]բնակեալ է ի նոսա"։ [2]Ոչ քաղցիցեն և [2]ոչ ծա-
րաւիցեն, և ոչ մեղիցէ նոցա ոչ արեգակն և ոչ
17 ամբ։ [3]Եւ Գառնն ի միջոյ աթոռոյն [4]իւրոյ հով-
ուեսցէ զնոսա, և առաջնորդեսցէ նոցա [5]ի կենաց
աղբեւր ջրոյ կենդանւոյ. քանզի եհատ" Աստուած
զամենայն արտօսր յաչաց նոցա։

ԳԼ. Ը

1 **Եւ** յորժամ եբաց զկնիքն եւթներորդ, եղեւ
2 լռութիւն յերկինս որպէս կէս ժամու։ Եւ տեսի
[6]հրեշտակս եւթն" որ առաջի Աստուծոյ կային. և
3 տուաւ նոցա եւթն փող։ Եւ այլ հրեշտակ եկն և
եկաց առ սեղանն, և ունէր խնկանոց ոսկի, և
տուաւ նմա խունկ բազում, զի մատուսցէ [7]զա-
ղօթս ամենայն սրբոց ի վերայ ոսկեղէն սեղանոյ
4 առաջի աթոռոյն։ Եւ ել ծուխ խնկոցն՝ [7]աղօթք
սրբոցն [8]ի ձեռաց հրեշտակացն" առաջի Աստուծոյ։
5 [9]Եւ ելից հրեշտակն զխնկանոցն" ի հրոյ սեղանոյն,

---

[1]Յ-ննն, եղիցի վրան ի վերայ նոցա [2]Յ-ննն, Ոչ եւս
[3]Յ-ննն, Զի [4]ի Յ--ն-ն պ-ի-ե [5]Յ-ննն, յաղ-
բեւրս կենաց ջրոց. և ջնջեսցէ [6]Յ-ննն, զեւթն
հրեշտակսն [7]Յ-ննն, յաղօթս, ի-ր, ընդ աղօթս
[8]Յ-ննն, ի ձեռանէ հրեշտակին [9]Յ-ննն, Եւ ա'ռ
հրեշտակն զխնկանոցն և ելից զնա

և արկ զնա յերկիր. և եղեւ որոտումն և ձայնք
6 և փայլատակումն և շարժումն մեծ։ Եւ եւթն հրեշտակքն որ ունէին եւթն փողս՝ պատրաստեցին զինքեանս առ ի հարկանել։
7 Եւ առաջին հրեշտակն եհար զփողն, և եղեւ կարկուտ և հուր և արիւն խառնեալ, և անկաւ յերկիր, և զերրորդ մասն երկրի այրեաց, և զերրորդ մասն ծառոց այրեաց, և զամենայն դալար խոտոյ այրեաց։
8 Եւ երկրորդ հրեշտակն փողեաց, և իբրեւ զլեառն մի մեծ հրդեհեալ անկաւ ի ծով, և եղեւ երրորդ
9 մասն ծովու արիւն. Եւ սատակեցաւ երրորդ մասն [1]լուղակաց, և որ ունէր շունչ կենդանի ապականեցաւ"։
10 Եւ երրորդ հրեշտակն փողեաց, և անկաւ յերկնից աստղ մի մեծ՝ բորբոքեալ իբրեւ զպատմոյր,
11 և անկաւ յերրորդ մասն գետոց և աղբերաց. Եւ էր անուն աստեղն [2]դառնութիւն. և բազումք մեռան ի դառնութենէ ջուրցն"։
12 Եւ չորրորդ հրեշտակն փողեաց, և վիրաւորեր երրորդ մասն արեգական և երրորդ մասն լուսնի և երրորդ մասն աստեղաց. [3]և խաւարէր" երրորդ մասն նոցա, [4]և երրորդ մասն գիշերոյ" նոյնպէս։

---

[1]Յ-ննն, արարածոց որ ի ծովու, որոց էր շունչ. և երրորդ մասն նաւուց ընկղմեցաւ [2]Յ-ննն, Աւշինդր, և երրորդ մասն ջուրց եղեւ յաւշինդր, և բազումք ի մարդկանէ մեռան ի ջուրցն, զի դառնացան
[3]Յ-ննն, զի խաւարեսցի [4]Յ-ննն, և արիւն մի՛ ծագեսցէ զերրորդ մասն իւր, և գիշեր

13 Եւ տեսի և լուայ ձայն [1]հրեշտակի թռուցելոյ ի
մէջ երկնից զի ասէր ի ձայն մեծ, Վա՛յ, վա՛յ, վա՛յ,
[2]որ բնակեալ են յերկրի, յորժամ լինիցի ձայն ե-
րիցն և սա փողոց զոր կամիցին հրեշտակքն՝ հարկանել։

ԳԼ. Թ

1 Եւ հինգերորդ հրեշտակն փողէր, և տեսի զի աստղ
մի անկաւ յերկնից, և տուաւ նմա բանալի գբոյն
2 անդնդոց. [3]Եւ ելանէր՝ ծուխ ի գբոյն որպէս ծուխ
3 հնոցի մեծի. և խաւարեցաւ արեգակն և [4]օդ։ Եւ
ի գբոյն՝ ելանէր մարախ յերկիր. և տուաւ նոցա
4 իշխանութիւն իբրեւ զխայթոցս կարճի. Եւ ասա-
ցաւ նոցա զի մի՛ վնասիցեն խոտոյ երկրի [5]և մի՛ ա-
ռնէնոյն ծառոց, բայց միայն [6]մարդոյ երկրպագնոյ՝,
որ ոչ ունիցին [7]զկնիք ի վերոյ ճակատու իւրեանց։
5 Եւ տուաւ նոցա հրամանն զի մի՛ սպանանիցեն զնո-
սա, այլ չարչարեսցեն զնոսա ամիսս հինգ. և չար-
չարանք նոցա իբրեւ զխայթոցս կարճի որ հարկա-
6 նիցէ զմարդ։ Եւ յաւուրսն յայնոսիկ խնդրեսցեն
մարդիկ զմահ, և մի՛ գտցեն. և ցանկան վեռանել,
7 և փախիցէ ի նոցանէ մահ։ Եւ նմանութիւն մա-
րախոյն նմանութիւն ձիոյ պատրաստելոյ ի պա-

---

[1]Ո՛ահ, արծուոյ [2]Յ՚՚՚, որոց բնակեալ են յերկ-
րի ի մնացելոց ձայնից փողոյն երից հրեշտակաց որ
հանդերձեալ են [3]Բ՚՚՚, Եւ երաց զգուբն
անդնդոց, և ելանէր [4]Յ՚՚՚, օդք ի ծխոյ գբոյն։
(3) Եւ ի ծխոյն [5]Բ՚՚՚, և մի՛ առնոյն դա-
լարուոյ, և [6]Յ՚՚՚, մարդկան [7]Բ՚՚՚, զկնիք
Աատուածոյ

տերազմ. և ի վերայ գլխոց նոցա իբրեւ զպսակ նմանեալ ասկւոյ, և երեսք նոցա իբրեւ զերեսս
8 մարդոյ. Եւ հերք նոցա իբրեւ զհերս կնոջ, և ա-
9 տամունք նոցա իբրեւ զառիւծու. Եւ ունէին զրահս իբրեւ զզրահս երկաթի. և ձայն թեւոց նոցա իբրեւ զձայն կառաւարաց ձիոց բազմաց որ ար-
10 շաւեն ի պատերազմ. Եւ ունէին պոչս բոմ նմանութեան կարճի, և խայթոց յպոչս նոցա. և ունէին իշխանութիւն չարչարել զմարդիկ ամիսս հինգ.
11 Եւ ունէին թագաւոր ի վերայ իւրեանց զհրեշտակն գ ժոխոց. և անուն նորա Եբրայեցերէն [1]Ապադոն,
12 որ կոչի [2]ի Հայ բարբառ Կորուստ": Ա հաւասիկ վայ մի էանց, և վայք երկու գալոց են.
13 Եւ վեցերորդ հրեշտակն հարկանէր զփողն, և լսեայ [3]ձայն ի չորից կենդանեացն՝ որ էին առաջի
14 սեղանոյն՝ Ասուածոյ, Զի ասէր ցհրեշտակն վեցերորդ որ ունէր զփողն, Լոյծ զչորս հրեշտակսն
15 զկապեալսն ի վերայ գետոյն մեծի Եփրատայ. Եւ լուծան չորք հրեշտակքն պատրաստեալք ի ժամ և յօր և յամիս և ի տարի, զի սպանցեն զերրորդ
16 մասն մարդկան. Եւ համարք հեծելոց զօրաց նոցա [4]բեւրք բիւրուց և հազարք հազարաց լսեայ՝ զթիւ
17 նոցա. Եւ [5]տեսի ձիս ի տեսլեանն, և հեծեալս ի

---

[1] Ը-ոփ Բ-ուբլն, Ա.պադոնին [2] Յ-ոյն, ի Յոյն բարբառ Ա.պողլիոն [3] Ի Յ-ունն, «մանր՝ ձայն մի ի չորից եղջերաց սեղանոյն ոսկւոյ որ առաջի. այլ՝ ձայն մի յեղջերաց սեղանոյն, ևն. այլ՝ մի ի սեղանոյն, ևն. [4] Յ-ոյն, երկու բեւրք բիւրոց, և լսեայ [5] Յ-ոյն, այսպէս տեսի

նոսա՝ որք ունէին զրահս հրեղէնս և [1]յակինթս հրդեհեալս ծծմբով". և գլուխք ձիոցն իբրեւ զգլուխս առիւծուց. և ի բերանոյ նոցա հուր ելա-
18 նէր և ծուխ և ծծումբ։ Եւ [2]ի հարուածոցս յայսցանէ՝ մեռաւ երրորդ մասն մարդկան՝ ի հրոյն և ի ծխոյն և ի ծծմբոյն որ ելանէր ի բերանոյ նոցա։
19 Զի [3]իշխանութիւն ի բերանս է նոցա և յապիս նոցա, և ապիք նոցա նմանութիւն օձի. և ունէին
20 գլուխս որով [4]առասակէին զանիրաւս"։ Եւ այլք ի մարդկանէ որ ոչ մեռան ի հարուածոցս յայսցանէ՝ ոչ ապաշխարեցին և ոչ դարձան ի գործոց ձեռաց իւրեանց, յերկրպագութենէ դիւաց և կուռց յոսկեղինաց և յարծաթեղինաց և ի պղնձոյ և ի քարէ և ի փայտէ, որք ոչ տեսանել կարեն և ոչ
21 լսել և ոչ գնալ. Եւ ոչ ապաշխարեցին ի մարդասպանութենէ և ի դեղատուութենէ և ի պոռնկութենէ և ի գողութենէ իւրեանց։

ԳԼ. Ժ

1 Եւ տեսի այլ հրեշտակ զօրաւոր զի իջանէր յերկնից, և զգեցեալ էր ամպ, և ծիածան ի գլուխ նորա. և երեսք նորա իբրեւ զարեգակն, և ոտք
2 նորա որպէս սիւն հրոյ։ Եւ ունէր ի ձեռին իւրում գրկոյք մի բացեալ. և եդ զաջն իւր զայջ ի վերոյ
3 ծովու, և զձախն ի վերայ երկրի։ Եւ աղաղակեաց ի ձայն մեծ, գոչեաց իբրեւ զառիւծ. և յորժամ

---

[1]Ց-ՅՆ, յակնթեղէնս և ծծմբեղէնս [2]Ո՞Հ+, յերից հարուածոց սոսի [3]Ո՞Հ+, իշխանութիւն ձիոցն [4]Ց-ՅՆ, վնասակէին

աղաղակեաց, խօսեցան եւթն որոտմունք յիւր-
4 եանց ձայնս։ Եւ յորժամ խօսեցան եւթն որո-
մունքն, կամէի գրել. և լսեայ ձայն յերկնից ըն
ասէր, Կնքեա զոր խօսեցան եւթն որոտմունքն, և
5 մի՛ գրեր։ Եւ հրեշտակն զոր տեսի, որ եդ զոտն
իւր ի վերայ ծովու և զվեւան ի ցամաքի, համբարձ
6 զձեռն իւր զայլ յերկինս. Եւ երդուաւ ի կենդա-
նին յաւիտենից որ [1]հաստատեաց զերկիր և որ ի
7 նմա, զի ոչ եւս կայ՝ այլ ժամանակ. Այլ յաւուրս
ձայնի եւթներորդ հրեշտակին, յորժամ հարցէ
զփող, կատարեսցի խորհուրդն Աստուծոյ որ աւե-
տարանեցաւ [2]ի ձեռն ծառայից իւրոց մարգարէիցն։
8 Եւ ձայնն զոր լսեայ յերկնից՝ դարձեալ խօսե-
ցաւ ընդ իս և ասէ, Երթ, առ զգրկոյն զոր ունի
հրեշտակն բացեալ ի ձեռին իւրում, և կայ ի վե-
9 րայ ծովու և ցամաքի։ Եւ ես երթեալ առ հրեշ-
տակն՝ [3]խնդրեցի ի նմանէ՝. և ասէ ցիս, Առ զսա
և կեր զդոյն, և դառնասցի յորովայն քո, այլ ի
10 բերան քո է քաղցր իբրեւ զմեղր։ Եւ առի զգրկոյն
[4]բացեալ ի հրեշտակէն՝ և կլայ զնա. և էր ի բե-
րան իմ որպէս մեղր. և յորժամ կերայ, դառ-
11 նացաւ որովայն իմ։ Եւ ասէ ցիս, Հաւանէ քեզ
դարձեալ մարգարէանալ ի ժողովուրդս և ի հե-
թանոսս և ի լեզուս և ի թագաւորս [5]երկրի։

---

[1]Յ-ՆՆ, հաստատեաց զերկինս և որ ի նմա, և զեր-
կիր և որ ի նմա, և զծով և որ ի նմա, զի ոչ եւս
իցէ [2]ի Յ-ՆՆ պ-ւ-ե [3]Յ-ՆՆ, ասացի ցնա,
Տուր ինձ զգրկոյն [4]Յ-ՆՆ, ի ձեռանէ հրեշտա-
կին [5]Յ-ՆՆ, բազում

ԳԼ. ԺԱ

1 Եւ տուաւ ինձ եղէգն նման գաւազանի. և կայր հրեշտակն և ասէր ցիս, Արի և չափեա զտաճարն Աստուծոյ և զսեղանն և զերկրպագուսն որ ի նմա:
2 Եւ զդաւիթն որ արտաքոյ տաճարին՝ թող զնա և մի՛ չափեր, զի տուեալ է զնա հեթանոսաց. և զքաղաքն սուրբ կոխեսցեն ամիսս քառասուն և
3 երկուս: Եւ տաց երկուց վկայից իմոց և մարգարէասցին աւուրս հազար երկերիւր և վաթսուն՝
4 զգեցեալ քուրձ: Սոքա են երկու ձիթենիքն և երկու ճրագք, որ կան առաջի [1]Աստուծոյ [2]յերկ-
5 րի: Եւ որք կամիցին վնասել նոցա, հուր ելցէ ի բերանոյ նոցա և կերիցէ զթշնամիս նոցա. և որք կամիցին մեղանչել նոցա՝ այսպէս սատակեսցին:
6 Սոքա ունին իշխանութիւն փակել զերկինս զի մի՛ տեղասցէ զաւուրս մարգարէութեան նոցա. և ունին իշխանութիւն ի վերայ ջուրց դարձուցանել զնոսա յարիւն, և հարկանել զերկիր յամենայն
7 հարուածս՝ քանիցս անգամ և կամիցին: Եւ յորժամ կատարեսցեն [3]զամենայն աւուրս վկայութեան՝ իբրեւ, յայնժամ գազանն որ ելանէ յանդնդոց՝ տացէ ընդ նոսա պատերազմ, և յաղ-
8 թեսցէ նոցա և սպանցէ զնոսա: Եւ դի նոցա [4]անկեալ կայցէ ի մէջ հրապարակաց քաղաքին նոցա մեծի՝, որ անուանեալ կոչի բան հոգւոյն Սոդոմ

---

[1]Բ-ոլ-մ+, Տեառն [2]Ց-ՆՆ, երկրի
[3]Ց-ՆՆ, զվկայութիւնն [4]Ց-ՆՆ, ի հրապարակի քաղաքին մեծի

9 և եգիպտոս, ուր և Տէրն [1]նոցա խաչեցաւ։ Եւ տեսցեն զնոսա ամենայն ցեղք և ժողովուրդք և ամենայն լեզուք և հեթանոսք, զի դի նոցա անկեալ կայցէ զերիս [2]աւուրս. և ոչ տացեն թաղել
10 ի գերեզմանս զոսկերս նոցա։ Եւ որ բնակեալ են յերկրի՝ ուրախ լինին և խնդան ի վերայ նոցա, մինչեւ ընծայս և պատարագս տանել միմեանց. վասն զի սոքա երկոքին մարգարէքս [3]չարչարեացն զբնակիչս երկրի։

11 Եւ յետ երից աւուրց և կիսոյ հոգի կենդանի յԱստուծոյ [4]մտել ի նոսա. և [5]յարիցեն կացցեն՝ ի վերայ ոտից իւրեանց, և ահ և երկեւղ մեծ անկաւ ի վերայ ամենեցուն որ տեսին զնոսա։ Եւ
12 [6]լուայ ձայն մեծ որ ասէր ցնոսա, [7]Վերացէք՝ ելէք ասա՛. և ելին յերկինս ամպովք, և տեսին զնոսա թշնամիք իւրեանց։ Եւ ի ժամուն յայնմիկ շարժուածն մեծ եղեւ, և տասներորդ մասն քաղաքին ընկղմեցաւ, և մեռան ի շարժմանէն արք եւթն հազար. [8]և յետ այնորիկ ահ մեծ եղեւ յամենեսեան՛ և փառս տային Աստուծոյ երկնաւորի։
14 Ահաւասիկ վայն երկրորդ էանց, և վայն երրորդ գալոց է վաղվաղակի։

15 Եւ յորժամ եւթներորդ հրեշտակն հարկանէր զփողն, [9]եղեւ ձայն յերկինս և ասէ՛, Եղեւ թա-

---

[1]Ոմանք, մեր [2]Յոյնք, աւուրս և կէս [3]Յոյնք, չարչարեցին [4]Յոյնք, եմուտ [5]Յոյնք, կացին [6]Բազմաք, լուան [7]Յոյնք, Ելէք այսր [8]Յոյնք, և որք մնացինն՝ զահի հարան [9]Յոյնք, եղեն ձայնք մեծամեծք յերկինս որ ասէին

գաւառութիւն [1]ամենայն տիեզերաց Տեառն մերոյ և Քրիստոսի իւրոյ. և թագաւորեացէ [1]ի վերայ ա-
16 մենայնի՝՝ յաւիտեանս յաւիտենից։ Եւ քանզի և չորք երիցունքն որ նստէին յաթոռս իւրեանց ա-
ւաջի Աստուծոյ՝ անկանէին ի վերայ երեսաց իւրեանց և երկիր պագանէին [1]Տեառն Աստուծոյ, և
17 ասէին, Գոհանամք զքէն, Տէր Աստուած Ամենա-
կալ, որ էն և [2]ես և [3] առեր զզօրութիւն քո մեծ
18 և թագաւորեցեր։ Եւ հեթանոսք բարկացան, և եկն բարկութիւն քո, և ժամանակ մեռելոց զի դատեցին. և տաս վարձս ծառայից քոց մարգա-
րէից և սրբոց, երկիւղածաց անուան քո, փոքունց և մեծամեծաց, և ապականես զապականիչս երկրի։
19 Եւ բացաւ տաճարն Աստուծոյ որ յերկինս, և երեւեցաւ [4]տապանակն [5]Աստուծոյ ի տաճարն իւր, և եղեն փայլատակմունք և ձայնք և որոտմունք և շարժուածն և կարկուտ մեծամեծ։

ԳԼ. ԺԲ

1 Եւ նշան մեծ երեւեցաւ յերկինս. կին մի արկեալ զիւրեւ զարեգակն, և լուսին ի ներքոյ ոտից նորա. և ի վերայ գլխոյ նորա պսակ աստեղեայ յերկո-
2 տասանից։ Եւ էր յղի, և ճչէր յերկնելն, և բա-
զում վշտօք մերձ էր ի ծնանել։
3 Եւ երեւեցաւ այլ նշան յերկինս, և ահաւասիկ վիշապ մի մեծ հրեղէն, որոյ էին գլուխք եւթն և

---

[1]ի ց-ն. պակաս [2]ց-ն, որ էրն [3]Աստ. յա-
ւելուած, որ գալոցն է, [4]ց-ն, տապանակն ուխ-
տին [5]ի ց-ն, ամէն՝ իւրոյ, այլ՝ Տեառն

եղջեւրք տասն. և ի վերայ գլխոց նորա եւթն
4 խոյրք։ Եւ տուան նորա քարշէր զերբորդ մասն աստեղաց երկնից, և արկ զնոսա յերկիր. և վիշապն կայր առաջի կնոջն որ հանդերձեալ էր ծնանել, զի յորժամ ծնցի կինն զորդի իւր, կլցէ զնա
5 [1]վիշապն։ Եւ ծնաւ [1]կինն արու որ հանդերձեալ է հովուել զամենայն հեթանոսս գաւազանաւ երկաթեայ. և յափշտակեցաւ որդի նորա առ Աստուած և առ աթոռ նորա։ Եւ կինն փախեաւ յանապատ ուր էր տեղի նմա պատրաստեալ յԱստուծոյ, զի կերակրեսցի անդ աւուրս հազար երկերիւր և վաթսուն։
7 Եւ եղեւ պատերազմ յերկինս. Միքայէլ և հրեշտակք իւր կռուէին ընդ վիշապին. և վիշապն
8 պատերազմէր [2]զօրօք իւրովք՝։ Եւ ոչ կարացին կալ ընդդէմ, և տեղի ոչ գտաւ նոցա յերկինս։
9 Եւ անկաւ վիշապն մեծ, օձն առաջին, որ անուանեալ կոչի [3]Բէեզեղեբուղ և Սատանայ որ մոլորեցոյց զամենայն տիեզերս [1]երկրի. և հրեշտակք նո-
10 րա ընդ նմա անկան։ Եւ լուայ ձայն մեծ յերկնից որ ասէր, Արդ եղեւ զօրութիւն և փրկութիւն և արքայութիւն Աստուծոյ մերոյ, և իշխանութիւն Օծելոյ նորա. զի անկաւ չարախօսն եղբարց մերոց, որ չարախօսէր զնոցանէ առաջի Աստուծոյ զտիւ
11 և զգիշեր։ Եւ նոքա յաղթեցին նմա արեամբ Գառնին, և բանիւ վկայութեան [4]նորա. և ոչ հաճե-

---

[1]Ի Յ—ՆՆ պ-ի-ե [2]Յ—ՆՆ, և հրեշտակք նորա
[3]Յ—ՆՆ, Բահնսարկու [4]Յ—ՆՆ, իւրեանց. և ոչ սիրեցին զոգի իւրեանց

12 ցան ընդ վիշապն՝ մինչեւ ի մահ։ Ւ ասեն այսորիկ
[1]ուրախ լիցին երկինք՝ և ամենայն որ բնակեալ
[2]են ի նմա. [3]վա՛յ երկրի և ծովու զի անկաւ բան-
սարկուն առ ձեզ, որ ունի պցասումն բազում, [4]և
կացցէ առ սակաւ մի ժամանակս։

13 Եւ յորժամ ետես վիշապն թէ անկաւ յերկիր,
14 զհետ եղեւ կնոջն որ ծնաւ զմանուկն արու։ Եւ
տուան կնոջն երկու թեւք արծուոյ մեծի զի թռի-
ցէ յանապատ ի տեղի իւր՝ ուր կերակրէր անդ
ժամանակ և ժամանակս և կէս ժամանակի յերե-
15 սաց օձին։ Եւ եհեղ օձն ի բերանոյ իւրմէ զհետ
16 կնոջն ջուր զի ընկղմեսցէ զնա։ Եւ օգնեաց երկիր
կնոջն, և երաց երկիր զբերան իւր և եկուլ զջուրն
17 զոր եհեղ վիշապն ի բերանոյ իւրմէ։ Եւ ցասաւ
վիշապն ընդ կնոջն, և գնաց պատերազմել ընդ
այլ զաւակս նորա որք պահէին զպատուիրանս
18 Աստուծոյ, և ունէին զվկայութիւնն Յիսուսի։ Եւ
[5]կաց ի վերայ աւազոյ ծովու։

ԳԼ. ԺԳ

1 Եւ տեսի զի ելանէր ի ծովէն գազան, և ունէր
գլուխս եւթն և եղջերս տասն, և ի վերայ եղջե-
րաց նորա տասն խոյր, և ի վերայ գլխոց նորա ա-
2 նուն հայհոյութեան։ Եւ գազանն զոր տեսի նման
ընձառ, և ոտք նորա իբրեւ զարջառ, և բերան նո-
րա որպէս զառիւծու. ևետ նմա վիշապն զզօրու-

---

[1] Յ՝ՆՆ, ուրախ լերուք, երկինք, [2] Յ՝ՆՆ, էք
[3] Ո՛ՀԱԽ, վա՛յ բնակչաց [4] Յ՝ՆՆ, գիտացեալ եթէ
ունի սակաւ ժամանակ [5] Ո՛ՀԱԽ, կացի

թիւն իւր և զաթոռ իւր և զիշխանութիւն մեծ։
3 Եւ ոմի ի գլխոց նորա [1]վիրաւորեալ էր՝ ի մահ. և
վէր մահուան նորա ողջանայր. և զարմացաւ ամե-
նայն երկիր ընդ գազանն, [2]զի ետ նմա վիշապն
4 զթագաւորութիւն իւր՝։ Եւ երկիր պագին վիշա-
պին որ ետ զիշխանութիւնն գազանին, [3]և ասէին՝,
Ո՞վ իցէ նման գազանիս. կամ ո՞վ կարիցէ պա-
5 տերազմել ընդ դմա։ Եւ տուաւ նմա բերան խօ-
սել զմեծամեծս և զհայհոյութիւն. և տուաւ նմա
6 իշխանութիւն զամիսս քառասուն և երկու։ Եւ
երաց զբերան իւր հայհոյութեամբ առ Աստուած,
և հայհոյեաց զանուն նորա և զխորանն նորա, և
7 [4]զերկնայինն խորանն։ Եւ՝ տուաւ նմա իշխանու-
թիւն ի վերայ ամենայն ազգաց և լեզուաց և ժո-
8 ղովրդոց։ Զի երկիր պագցեն նմա ամենայն որ բնա-
կեալ են ընդ երեսս երկրի. որոց ոչ են գրեալ
անուանք նոցա ի գպրութիւն կենաց Գառնին զեն-
9 լոյ ի սկզբանէ աշխարհի։ Ունկն ունիցի լսել
10 լոյ՝ լուիցեն։ [5]Զի են ոմանք՝ որք ի գերութիւն վա-
րեսցին, և են ոմանք՝ որ սրով մեռցին, և են ո-
մանք՝ որ անձամբ զանձինս սպանանիցեն՝. սոսա է
համբերութիւն և հաւատս սրբոց։
11 Եւ տեսի այլ գազան ի ելանէր յերկրէ, և

---

[1]Յ-ԽՆ, էր որպէս վիրաւորեալ [2]ի Յ-ՆԻՆ պոխոե
[3]Յ-ԽՆ, և երկիր պագին գազանին և ասէին
[4]Յ-ԽՆ, զորս բնակեն յերկինս։ (7) Եւ տուաւ նմա
առնել պատերազմ ընդ սուրբս և յաղթել նոցա, և
[5]Յ-ԽՆ, Եթէ ոք ի գերութիւն վարէ, ի գերութիւն
վարեսցի, եթէ ոք սրով սպանանէ, սրով սպանցի

ունէր եղջերս երկու նման գառինն, և խօսէր
12 իբրեւ վիշապն։ Եւ զիշխանութիւն զամենայն զա-
ռաջնոյ գազանին գործէր առաջի նորա. և առնէր
զերկիր և զամենայն բնակիչս նորա զի երկիր պա-
գանիցեն գազանին առաջնոյ, [1]որ մինչեւ ողջացի
13 վէր մահու նորա"։ Եւ առնէր նշանս բազումս, և
տայր հրոյ իջանել յերկնից յերկիր առաջի մարդ-
14 կան։ Եւ մոլորեցուցանէր զորս բնակեալ են յերկ-
րի՝ նշանօքն որ տուեալ են ի ձեռս նորա, առնել
առաջի գազանին. [2]ասէն ցնա բնակիչք երկրի,
Արա պատկեր գազանին, որ ի վիրաց սրոյն և-
15 կեաց"։ Եւ տուաւ նմա [3]իշխանութիւն զի տացէ
հոգի պատկերի գազանին, և զի խօսեսցի պատ-
կերն. և երկիր պագցեն նմա ամենայն բնակիչք
երկրի, և որ ոչ պագցէ երկիր պատկերի գազա-
16 նին՝ սպանցէ զնա։ Եւ [4]արասցէ զամենայն", զփո-
քունս և զմեծամեծս և զմեծատունս և զաղքատս,
և զազատս և զծառայս, զի տացէ նոցա դրոշմ
17 յաջու ձեռին [5]և ի վերայ ճակատու նոցա։ Եւ ոչ
ոք կարասցէ գնել և վաճառել, եթէ ոչ ունիցի
զդրոշմ [5]գրոյն՝ և" զանուն գազանին [5]և զթիւ ա-
18 նուան նորա։ Աստ է իմաստութիւն. որ ունի
միտս՝ համարեսցի զթիւ գազանին. [6]թիւ եղեալն

---

[1]Ց-ՆՆ, որոյ ողջացեալ էին վէրք մահուան նորա
[2]Ց-ՆՆ, և ասէր ցորս բնակեալ են ի վերայ երկրի առնել պատկեր գազանին որ ունի զվէրս սրոյն, և եկեաց [3]ի Ց-ՆՆ պակաս [4]Ց-ՆՆ, առնէ զամենեսեան [5]Ց-ՆՆ, կամ [6]Ց-ՆՆ, զի թիւ մարդոյ է, և թիւ նորա

մարդոյ, և թիւ անուան նորա է այս," վեց հա-
րեւր վաթսուն և վեց։

ԳԼ. ԺԴ

1 Եւ տեսի, և ահա Գառն կայր ի վերայ լերինն
Սիովնի. և ընդ նմա հարեւր քառասուն և չորք
հազարք, որ ունէին զանուն [1]նորա և անուն" Հօր
2 նորա գրեալ ի վերայ ճակատուց նոցա։ Եւ լուայ
ձայն յերկնից որպէս զձայն ջուրց բազմաց և ձայն
որոտման մեծի. և լուայ իբրեւ զձայն քնարահա-
3 րաց, զի հարկանիցեն զքնարս իւրեանց։ Եւ եր-
գէին զերգս նորս առաջի աթոռոյն և առաջի չո-
րից կենդանեացն և առաջի երիցանցն. և ոչ ոք
կարէ գիտել զերգս նոցա, բայց միայն հարեւր
քառասուն և չորս հազարքն, որք ազատեալ են
4 յերկրէ։ Սոքա են որք ընդ կանայս ոչ խառնա-
կեցան, և են կուսանք. սոքա զկնի երթեան Գա-
ռինն ուր և երթիցէ. սոքա [2]ընտրեցան ի մարդ-
5 կանէ առաջի" Աստուծոյ և Գառինն։ Եւ ի բերան
նոցա ոչ գտաւ սուտ, զի անբիծք են[3]։
6 Եւ տեսի այլ հրեշտակ թռուցեալ ի մէջ երկ-
նից. և ունէր աւետիս յաւիտենական աւետարա-
նել [4]ամենայն ազգաց և լեզուաց որ բնակեալ են
7 յերկրի"։ Եւ ասէր ի ձայն մեծ, երկերուք Աս-

---

[1]Յոհաննու պոլոսէ [2]Յունն, գնեցան ի մարդկանէ յե-
բրախայրիս [3]Ոմն ի յունէ, առաջի աթոռոյն
Աստուծոյ [4]Յունն, որոց բնակեալ են ի վերայ
երկրի, ամենայն ազգաց և ազանց և լեզուաց և
ժողովրդոց

տուծոյ և տուք փառս նմա, զի եկն ժամ դատաստանի նորա. և երկիր պագէք Արարչին երկնի և երկրի և ծովու և աղբերաց ջուրց:

8 Եւ այլ հրեշտակ երկրորդ գայր զհետ նորա և ասէր, Անկաւ, անկաւ Բաբելոն մեծն, [1]ի գինւոյ արբեցութենէ՝ ի ցասմանէ՝ ի պոռնկութենէ իւրմէ՝
9 որ արբեցոյց զամենայն հեթանոսս": Եւ այլ հրեշտակ երրորդ գայր զհետ նոցա, և ի ձայն մեծ ասէր, Ով որ երկրպագեաց գազանին և պատկերի նորա, և կամ ղդրոշմ նշանի նորա ա'ռ ի ճակատ
10 իւր և կամ ի վերայ աջոյ ձեռին իւրոյ, Այնպիսին արբցէ ի բաժակէ ցասմանն Աստուծոյ, արկեալոյ յանապակէ բարկութեան բաժակին, և տանջեսցի հրով և ծծմբով առաջի [2]Աստուծոյ և Գառինն:
11 Եւ ծուխ [3]նոցա ելցէ" յաւիտեանս յաւիտենից. և ոչ ունին [4]հանգիստ որք երկիր պագին գազանին ի տուէ և ի գիշերի, և որք երկիր պագին պատկերին, և առին զդրոշմ և զանուն նո-
12 րա": Եւ համբերութիւն սրբոցն աստ է. [5]այս՝ որք պահեն զպատուիրանս Աստուծոյ և զհաւատս Յի-
13 սուսի: Եւ լուայ ձայն յերկնից որ ասէր ցիս, Գրեա, Երանի մեռելոցն որք ի Տէր ննջեցին՝

---

[1] Յ---, զի ի գինւոյ ցասման պոռնկութեան իւրոյ արբոյց ամենայն հեթանոսաց [2] Յ---, հրեշտակաց սրբոց [3] Յ---, տանջանաց նոցա ելանէ [4] Յ---, հանգիստ ի տուէ և ի գիշերի որք երկիր պագանեն գազանին և պատկերի նորա, և որ միանգամ առնու զդրոշմ անուան նորա [5] ի Յ---ն, յոմանս պակասէ, այլ՝ աստ

[1]այժմիկ վաղվաղակի՝. զայս ասէ Հոգին, քանզի հանգեան յաշխատութենէ իւրեանց. [2]բայց միայն՝ գործք իւրեանց չոգան զհետ նոցա։

14 Եւ տեսի, և ահա ամպ սպիտակ, և ի վերայ ամպոյն նստեր նման Որդւոյ մարդոյ, և ի գլուխ իւր պսակ ոսկի, և ի ձեռին իւրում սուր ունէր գերանդի սրեալ։

15 Եւ այլ հրեշտակ ելանէր յերկնից, աղաղակէր ի ձայն մեծ և ասէր, Որ նստիս ի վերայ ամպոյդ՝ առաքեա զգերանդիդ քո և հնձեա, զի եկն ժամանակ հնձոց, և հասեալ են հունձք երկրի։ 16 Եւ արկ որ նստէր ի վերայ ամպոյն՝ զգերանդին իւր յերկիր, և հնձեր զամենայն բնակիչս երկրի։

17 Եւ այլ հրեշտակ ելանէր ի տաճարէն որ յերկինս, և ունէր և սա գերանդի սրեալ։ 18 Եւ այլ հրեշտակ ելանէր ի սեղանոյն որ ունէր իշխանութիւն ի վերայ հրոյ, և աղաղակեաց ի ձայն մեծ առ հրեշտակն որ ունէր զգերանդին սրեալ, և ասէր, [3]կթեա զողկոյզս յայգւոյ երկրի, զի հասեալ է խաղողդ ի դմա։ 19 Եւ արկ հրեշտակն զգերանդի իւր յերկիր, և կթեր զխաղող նորա, և արկանէր [4]ի հնձանն Աստուծոյ ի մեծ։ 20 Եւ կոխեցաւ հնձանն արտաքոյ քաղաքին, և ելանէր ի հնձանէն արիւն մինչեւ ի սանձս [5]ձիոյն՝ և երկայնութիւն նորա՝ հազար և վեց հարիւր ասպարէզ։

---

[1]Ց-ՆՆ, այսուհետեւ [2]Ց-ՆՆ, զի [3]Ց-ՆՆ, Զգեա զգերանդիդ սրեալ և կթեա [4]Ց-ՆՆ, ի հնձան բաւմանն [5]Ց-ՆՆ, ձիոց ընդ

ԳԼ. ԺԵ

1 Եւ տեսի այլ նշան յերկինս մեծ և սքանչելի.
հրեշտակս եւթն որք ունէին եւթն վերս զկնի. զի
2 նոքօք կատարէր բարկութիւնն Աստուծոյ: Եւ
տեսի որպէս ծով ապակեղէն խառնեալ հրով. և
որք յաղթեցին գազանին և պատկերի նորա և
թուոյ անուան նորա [1]և դրոշմի նորա", նոքա կա-
յին ի վերայ ծովուն ապակեղինի, և ունէին զքնարս
3 Աստուծոյ. Եւ երգէին զերգս Մովսիսի [2]առաջի
Աստուծոյ, և զերգս Գառինն՝ ասելով թէ Մեծա-
մեծ և սքանչելի են գործք քո, Տէր Ամենա-
հաղթեալ, արդար և ճշմարիտ են ճանապարհք քո,
4 թագաւոր [3]ամենայն [4]հեթանոսաց: Եւ ո՞վ ոչ
[5]երկիցէ և փառաւորեսցէ [6]զանուրբ անուն" քո. զի
դու միայն ես սուրբ, [3]և արժանի երկրպագելոյ,"
զի ամենայն հեթանոսք եկեսցեն և երկիր պագցեն
առաջի քո, [7]Տէր, յորժամ արդարութիւնք քո
յայտնեսցին":
5 Եւ յետ այսորիկ տեսի և բացաւ տաճարն խո-
6 րանին վկայութեան որ էր յերկինս: Եւ ելանէին
ի տաճարէն եւթն հրեշտակք որք ունէին եւթն
հարուածս, և զգեցեալ էին կտաւս մաքուրս և
պայծառս, և գօտեւորեալ էին առ ստեամբ
7 իւրեանց գօտիս ոսկեղէնս: Եւ [8]ի չորից կենդան

---

[1]Յոմանս պակասէ [2]Յայնն, ծառայի [3]Ի Յոանն պակասէ [4]կամ, ազգաց. այլ՝ յաւիտենից. և այլ՝ արքոց [5]Յայնն, երկիցէ ի քէն, Տէր, [6]Յայնն, զանուն [7]Յայնն, զի արդարութիւն քո յայտնեցաւ [8]Յայնն, մին ի չորից

եաց [1]առաւ եւթն հրեշտակացն եւթն [2]սկաւառակս ի ցասմամբն Աստուծոյ կենդանւոյն յաւիտեանս յաւիտենից։ 8 Եւ չցաւ տաճարն ծխով փառացն Աստուծոյ և զօրութեան նորա. և ոչ ոք կարէր մտանել ի տաճարն՝ մինչեւ կատարեսցին եւթն հարուածքն եւթն հրեշտակացն։

ԳԼ. ԺԶ

1 Եւ լուայ ձայն մեծ ի տաճարէն զի ասէր ցեւթն հրեշտակն, երթայք, հեղէք զեւթն սկաւառակսդ ցասմանն Աստուծոյ յերկիր։

2 Եւ գնաց [3]առաջին հրեշտակն՝ և հեղ զսկաւառակ իւր յերկիր. և եղեն հարուածք չարաչարք ի վերայ մարդկան որ ունէին զդրոշմ գազանին, և երկիր պագին պատկերի նորա։

3 Եւ [4]երկրորդ հրեշտակն՝ եհեղ զսկաւառակ իւր ի ծով, և [5]դարձան ջուրքն յարիւն մեռեալ՝. և ամենայն շունչ կենդանի որ էր ի ծովու՝ սատակեցաւ։

4 Եւ [6]երրորդ հրեշտակն՝ եհեղ զսկաւառակ իւր 5 ի գետս և յաղբեւրս ջուրց, և եղեւ արիւն։ Եւ լուայ [7]ի հրեշտակէն զի ասէր, [8]Արդար է՝ որ էիր և է, և սուրբ ի գործս իւր՝ զի այսպէս դատեցաւ՝. 6 վասն զի զարիւն սրբոց և զարիւն մարգա-

---

[1]Յ-ննն, եւս [2]Յ-ննն, սկաւառակս ոսկեղէնս
[3]Յ-ննն, առաջինն [4]Բ-ղ-մ, երկրորդն
[5]Յ-ննն, եղեւ արիւն իբրեւ զմեռելոյ [6]Բ-ղ-մ, երրորդն [7]Յ-ննն, ի հրեշտակէն ջուրց [8]Յ-ննն, Արդար ես որ էիր և որ էրն, սուրբդ, զի այսպէս դատեցար

բէիցն հեղին [1]ամպարիշտք. վասն այնորիկ արիւն
7 եառ բմպել նոցա բուռ արժանաւոյն"։ Եւ լուայ ի սե-
ղանոյ անտի զի ասէր, Այո, Տէր Աստուած Ամե-
նակալ, արդար և ճշմարիտ են դատաստանք քո։
8 Եւ [2]չորրորդ հրեշտակն" եհեղ [3]ի սկաւառակէ
9 իւրմէ" ի վերայ արեգականն։ Եւ տուաւ նմա խոր-
շակահար առնել զմարդիկ հրով. և տապացան
մարդիկ ի տապ մեծ, և հայհոյեցին [4]զԱստուած
որ ունի իշխանութիւն ի վերայ հարուածոցս այսո-
ցիկ. և ոչ ապաշխարեցին [5]ի փառս Աստուծոյ։
10 Եւ [6]հինգերորդ հրեշտակն" եհեղ [3]ի սկաւառա-
կէ իւրմէ" ի վերայ աթոռոյ գազանին, և եղեւ
թագաւորութիւն նորա խաւարեալ. և ծամէին
11 զլեզուս իւրեանց յախտէ ցաւոցն, եւ հայհոյեցին
զԱստուած երկնից ի ցաւոց իւրեանց և յախտէ
դառնութեանն, և ոչ ապաշխարեցին ի գործոց
իւրեանց։
12 Եւ [7]վեցերորդ հրեշտակն" եհեղ [3]ի սկաւառակէ
իւրմէ" ի վերայ գետոյն մեծի Եփրատայ, և ցա-
մաքեցան ջուրք նորա զի պատրաստեսցի ճանա-
13 պարհ [8]թագաւորի ելից" արեւու։ Եւ տեսի [9]զի
ելանէին" ի բերանոյ վիշապին և ի բերանոյ գազա-
նին և ի բերանոյ սուտ մարգարէին ոգիք երեք ան-
14 սուրբք իբրեւ զգորտս։ Քանզի նոքա էին ոգիք

---

[1]Յ-ԱՆ, և արիւն եառուր նոցա բմպել զի արժանի են
[2]Բ-ՊՒ-ՀՓ, չորրորդն [3]Յ-ԱՆ, զսկաւառակ իւր
[4]Յ-ԱՆ, զանուն Աստուծոյ [5]Յ-ԱՆ, տալ փառս
[6]Բ-ՊՒ-ՀՓ, հինգերորդն [7]Բ-ՊՒ-ՀՓ, վեցերորդն
[8]Յ-ԱՆ, թագաւորաց որ յելից [9]ի Յ-ՆԻՆ պակաս

դիւականք, որք առնէին զնշանս և երեսից առ թագաւորս ամենայն երկրի ժողովել զնոսա ի պատերազմ յօրն մեծ Տեառն Ամենակալի. (1քանզի
15 այսպէս ասաց Տէր. Ահա գամ իբրեւ զգող, երանի որ իցէ արթուն, և պահեսցէ զհանդերձս իւրեանց. զի մի՛ մերկ շրջեսցին և երեւեսցին ամօթանք իւրեանց.)
16 Եւ ժողովեցին զնոսա ի տեղի մի, որ կոչի եբրայեցերէն Արմագեդոն:
17 Եւ 2եւթներորդ հրեշտակն՝ եհեղ 3ի սկուտառակէ իւրմէ՝ ի վերայ օդոյ. և ել ձայն մեծ 4յերկնից և՝ յաթոռոյն ասելով, եղեւ: Եւ եղեն փայլատակմունք և ձայնք և որոտմունք. և եղեւ շարժումն մեծ, որպիսի չէք եղեալ ի սկզբանէ յորմէ հետէ եղեւ մարդ ի վերայ երկրի այնպիսի շարժումն մեծ:
19 Եւ եղեւ քաղաքն մեծ յերիս մասունս, և քաղաքք ազգացն անկան. և Բաբելոն մեծ յիշեցաւ առաջի Աստուծոյ տալ նմա զբաժակն գինւոյ ցասման բարկութեան նորա:
20 Եւ ամենայն կղզիք փախեան, և լերինք ի միջոյ բարձան:
21 Եւ կարկուտ մեծ իբրեւ կշիռ տաղանդոյ միոյ իջանէր յերկնից ի վերայ մարդկան. և հայհոյեցին մարդիկ զԱստուած 1յերկինս վասն հարուածոյ կարկտին զի մեծ էր 5հարուածն և սաստիկ՝:

ԳԼ. ԺԶ

1 Եւ եկն մի ոմն յեւթն հրեշտակացն որք ունէին

---

1 ի ց-ն պ-ե-ք 2 բ-ղ-մ, եւթներորդն 3 ց-ն, զսկաւառակ իւր 4 ի ց-ն, -մ-ն՝ ի տաճարէն, -յք՝ ի տաճարէն երկնից, 5 ց-ն, հարուած նորա յոյժ

զեւթն սկաւառակն, խօսեցաւ ընդ իս և ասէ, եկ այսր, և ցուցից քեզ զդատաստանս մեծ պոռ-
2 նըկին որ նստի ի վերայ ջուրց բազմաց. ընդ ո-րում պոռնկեցան թագաւորք երկրի, և արբեցան բնակիչք երկրի ի գինւոյ արբեցութեան պոռնկու-
3 թեան նորա: Եւ առ տարաւ զիս յանապատ ի հոգւովն. և տեսի կին մի զի նստէր ի վերայ կարմիր գազանի, և լի էր անուամբ հայհոյութեան, և գազանն զոր տեսի՝ ունէր գլուխս եւթն և եղջերս
4 տասն: Եւ կինն զգեցեալ էր ծիրանիս և կարմիրս, և զարդարեալ ոսկւով և մարգարտով և ակամբք պատուականօք, ունելով բաժակ ոսկի ի ձեռին իւրում, և լի էր գարշելի և անմաքուր
5 պոռնկութեամբ: Եւ ի ճակատն նորա գրեալ անուն՝ [1]խորհրդով մեծն Բաբելոն, մայր պոռնկաց
6 և գարշելեաց երկրի: Եւ տեսի զկինն արբեցեալ յարենէ արբոց և յարենէ [2]ամենայն վկայիցն". և
7 զարմացայ տեսեալ զնա՝ զարմացումն մեծ: Եւ ասէ ցիս հրեշտակն, Ընդէ՞ր զարմացար. ես ասացից քեզ զխորհուրդս կնոջն, և զգազանին որ բարձեալ ունի զնա. որ ունի զեւթն գլուխս և տասն
8 եղջերս: Եւ գազանդ զոր տեսեր, որ էր և չէ, և հանդերձեալ է ելանել ի գժոխոց և ի կորուստ երթալ. և [3]զարմացան ամենեքեան" որ բնակեալ են ի վերայ երկրի որոց ոչ էին գրեալ անուանք նոցա ի գիր կենաց ի սկզբանէ աշխարհի, [4]զոր տե-
9 սանէիր" զգազանն զի էր և չէ, և մերձ է: Ասա է

---

[1] Ց-ին, խորհուրդ, [2] Յ-ին, վկայիցն Յիսուսի
[3] Ց-ին, զարմացցին [4] Ց-ին, տեսեալ

[1]իմաստութիւն՝ որ ունի միտս՝, եւթն գլուխն եւթն լերինք են, ուր կինն նստեալ էր ի վերայ նոցա. և նոքին թագաւորք են եւթն, [2]և թագաւորք եւթն գոլով," Հինգն անկան, և միւն [3]եկաց, և միւնն ոչ է եկեալ. և յորժամ գայ՝ սակաւիկ 11 մի ժամանակ ունի: Եւ գազանն որ էր և չէ, և նա ութերորդ է. և է յեւթանց անտի, և ի կո- 12 րուստ երթալոց է: Եւ տասն եղջիւրն զոր տեսեր՝ տասն թագաւորք են, որոց չեւ եւս է առեալ զթագաւորութիւն, այլ [4]առնուն և կան իշխանք ի մի ժամ. և առնուն նոքա զիշխանութիւն՝ ընդ 13 գազանին: Նոքա մի կամ ունին, և զզօրութիւն 14 և զիշխանութիւն գազանին տան: Եւ ընդ Գառինն պատերազմին, և Գառնն յաղթէ նոցա. զի Տէր է [5]նոցա և թագաւոր թագաւորաց, և որք ընդ նմա՝ կոչեցեալք են, ընտրեալք և հաւատացեալք: 15 Եւ ասաց ցիս, Եւ ջուրքն զոր տեսեր, ուր նստէր պոռնիկն, ժողովուրդք են և բազմութիւնք և ազգք և լեզուք: 16 Եւ տասն եղջիւրքն զոր տեսեր [6]գազանին, նոքա տեսցեն զպոռնիկն և ատեսցեն զնա", և զմարմին նորա կերիցեն և սպրեսցեն զնա հրով: 17 Քանզի Աստուած եդ ի սիրտս նոցա առ ի լինել նոցա մի կամ, և տալ զթագաւորութիւն գազանին մինչեւ կատարեսցի բանն

---

[1]Ց-ննն, միտք որոյ է իմաստութիւն [2]ի Ց-ննն պ-ի-ե [3]Ց-ննն, կայ [4]Ց-ննն, առնուն իշխանութիւն իբրեւ թագաւորք զմի ժամ [5]Ց-ննն, տերանց [6]Ց-ննն, ի վերայ գազանին, նոքա ատեսցեն զպոռնիկն և առնցեն զնա և մերկ

18 Աստուածոյ։ Եւ կինն զոր տեսեր՝ է քաղաքն մեծ,
որ ունի զթագաւորութիւն ի վերայ թագաւորու-
թեանց երկրի։

ԳԼ. ԺԸ

1 Եւ յետ այսորիկ տեսի այլ հրեշտակ իջեալ
յերկնից որ ունէր իշխանութիւն մեծ, և երկիր
2 լուսաւորեցաւ ի փառաց նորա։ Եւ աղաղակեաց
ի ձայն մեծ՝ ասելով, [1]Անկաւ Բաբելոն մեծն, որ
եղեալ էր՝ բնակութիւն դիւաց և արգել ամե-
նայն այսոց պղծոց, և բանտ պահպանութեան ա-
3 մենայն [2]ոգւոց անարբից և ատելոց։ Վասն զի ի
բարկութենէ գինւոյ պոռնկութեան նորա արբին
ամենայն ազգք, և թագաւորք երկրի [3]որ ընդ նմա
պոռնկեցան. և վաճառականք երկրի ի նորա զօ-
4 րութեանն յօրանալոյ մեծացան։ Եւ լսայ [4]ձայն
յերկնից զի ասէր, Ելէք ի միջոյ դորա, ժողովուրդ
իմ, զի մի՛ հաղորդ լիցիք մեղաց դորա, և մի՛
5 [5]զհարուածս դորա ընդունիցիք. Զի հասին կցե-
ցան մեղք դորա մինչեւ յերկինս. և յիշեաց Ա-
6 տուած զամպարշտութիւնս դորա։ [6]Եւ հատու-
ցանէ՝ դմա որպէս և հատոյցն [7]մեզ, և [8]առ-
դա՝ երկապատիկ ըստ գործոց իւրոց. և զբաժակն
7 որով խառնեացն՝ խառնեցէք դմա կրկին։ Որչափ

---

[1]Բ—ղ—ո՛, Անկաւ, անկաւ Բաբելոն մեծն, և եղեւ
[2]Յ—ոյն, թուչնոց [3]ի Յ—ն՝ պ—ո—ե [4]Յ—ոյն, այլ
ձայն [5]Յ—ոյն, ի հարուածոց [6]Յ—ոյն, Հատուցէք
[7]ի Յ—ն՝, է Բ—ղ—ո՛ պ—ո—ե. ամէն ն—ն՝ ձեզ
[8]Յ—ոյն, կրկնեցէք

փառաւորեաց զինքն և խայտաց, այնչափ հառուցէք դմա [1]աւգ. զի ի սրտի իւրում ասէր Թէ Յամենայն ժամ նստայց ես Թագուհի, և այրի ոչ
8 եւս եղէց[2]. Վասն այնօրիկ ի միում աւուր եկեսցեն ի վերայ դորա հարուածք՝ մահ և աւգ և սով, և ի հուր այրեսցի. զի հզօր է Տէր Աստուած որ
9 դատեցաւն զդա։ Եւ լայցեն և կոծեսցին ի վերայ դորա Թագաւորք երկրի, որք ընդ դմա պոռնկեցան և խաղացին. և հեծեսցեն, յորժամ տեսցեն
10 զծուխ կիզման տանջանաց դորա։ Ի հեռաստանէ կայցեն վասն երկիւղի տանջանաց դորա և ասասցեն, [3]Վա՛յ քաղաքիդ մեծի Բաբելոնի, քաղաք հզօր, զի ի միում ժամու եկին հասին դատաս-
11 տանք քո։ Եւ վաճառականք երկրի ողբասցեն և սգասցեն ի վերայ [4]քո, զի զբեռն նոցա ոչ ոք գնէ։
12 [5]Եւ շահք որ ի քէն՝ ոչ եւս իցէ,՚՚ ոսկւոյ և արծաթոյ և ականց պատուականաց և մարգարտոյ և բեհեզոյ և ծիրանւոյ և [6]ոսկեթելի և որդան, և ամենայն փայտ խնկոյ և ամենայն անօթ փղոսկրեայ և ամենայն անօթ ի փայտէ պատուականէ
13 և ի պղնձոյ և յերկաթոյ և ի կճոյ, Եւ կինամոմն և ամենայն խունկ և եւղ և կնդրուկ և գինի և ձէթ և նաշխի և ցորեան, և [7]ստացուածք ամենայն,՚՚ արջառ և ոչխար. և երիվարաց և կառաց
14 [8]որ վայել է մարմնոց՚՚ և ոգւոց մարդկան։ Եւ

---

[1]Յ-ԱՆ, տանջանս և սուգ [2]Բ-ԼՈ-Ի յ-Ե-Լ-Ն, և սուգ ոչ տեսից [3]Յ-ԱՆ, Վա՛յ, վա՛յ [4]Յ-ԱՆ, նորա [5]Յ-ԱՆ, Բեռն, Ո-Ի, Վաճառ [6]Յ-ԱՆ, մետաքսի [7]Ի Յ-ՆԻՆ պ-Ո-Ե [8]Յ-ԱՆ, և մարմնոց

ամենայն [1]ցանկութիւն անձին քո չնաց ի քէն, և ամենայն [2]լուսափայլ վայելչութիւնն, [2]պարարտն և գերն՝ և ոսկեսկան գնաց ի քէն, և ոչ եւս
15 գտցես զայդ։ Եւ ամենայն շահավաճառք [3]այսքիւք մեծացեալք՝ ի քէն՝ ի բաց կացցեն վասն երկիւղի տանջանաց [4]քոց՝ լալով և սուգ առնելով,
16 ասասցեն, Վա՛յ, վա՛յ, քաղաք մեծ, որ զգեցեալ էիր բեհեզս և ծիրանիս և արդան, ոսկեզօծս և
17 քարինս պատուականս և մարգարիտս. Զի ի միում ժամու պակասեցաւ այնչափ մեծութիւն քո. և ամենայն նաւավար և ամենայն որ ի տեղիս տեղիս նաւեն, և նաւազք և որք միանգամ [5]ուռկանաւ
18 գործեն՝ ի հեռաստանէ [6]կայցեն լալով, Եւ աղաղակեացեն՝ տեսանելով զծուխ կիզման նորա, ասելով, Ո՞ նման է քաղաքիս այսմիկ մեծի։ Եւ [7]արկցեն հող ի վերայ գլխոց իւրեանց, և գուժալով
19 ձայնիւ մեծաւ, լալով և սգալով [8]ասասցեն, Վա՛յ, վա՛յ, քաղաք մեծ, [9]որով ամենեքեան մեծանայաք՝ որք ունէաք զնաւս ի ծովս վասն պատուականութեան քո, զի՞ ի միում ժամու ապա-
20 կանեալ կործանեցաւ՝։ Ուրախ լերուք ի վերայ նորա, երկինք և սուրբ առաքեալք և մարգարէք, զի

---

[1]Յ-ննն, պտուղ ցանկութեան [2]Ի Յ-ննն պակասէ
[3]Յ-ննն, սոցա մեծացեալք ի նմանէ [4]Յ-ննն, նորա
[5]Յ-ննն, ի ծովու [6]Յ-ննն, կացին, (18) Եւ աղաղակէին [7]Յ-ննն, արկին [8]Յ-ննն, ասէին [9]Յ-ննն, յորում մեծացան ամենեքին որ ունէին նաւս ի ծովու վասն պատուականութեան նորա. զի ի միում ժամու աւերեցաւ

գատեցաւ Աստուած զդատաստան ձեր ի դմանէ։
21 Եւ ա՛ռ հրեշտակ հզօր քար մի իբրեւ զերկան
մեծ, և ընկէց ի ծով ասելով, Այսպէս [1]յարձակմամբ անկցի Բաբելոն քաղաք մեծ, և այլ ոչ եւս
22 գտցի։ Եւ ձայն քնարերգաց և երաժշտականաց, [2]արուեստականներց և փողահարաց և թմբկի՝ այլ
23 ոչ եւս լուիցի [3]ի քեզ· Եւ լոյս ճրագի և ձայն երկանի՝ այլ ոչ եւս երեւեսցի ի քեզ, և ձայն փեսայի և ձայն հարսին այլ ոչ եւս լուիցի ի քեզ· [4]և ոչ՝ վաճառականք քո [5]փառաւորք և՝ մեծամեծք երկրի, [6]որ զուարճացեալ էին ի քեզ,՝ վասն զի կախարդութեամբ դեղատուութեան քո մոլորեցան ամենայն ազգք։ Եւ [7]ի քեզ ամենայն՝ ա-
24 բիւն մարգարէից և սրբոց գտաւ, և ամենայն [8]գրելոց յերկրին կենդանեաց՝։

ԳԼ. ԺԹ

1 Եւ յետ այնորիկ լուայ ձայն մեծ բազմութեան յերկինս ասելով, Ալէլուիա, փրկութիւն և փառք
2 և պատիւ և զօրութիւն [9]Աստուծոյ մերում. Զի ճշմարիտ և արդար են դատաստանք նորա. զի

---

[1]Յ-ՆՆ, ուժգնութեամբ [2]Յ-ՆՆ, արհեստաւորաց և փողահարաց [3]Յ-ՆՆ, ի քեզ. և ամենայն արուեստագէտ ամենայն արուեստի մի՛ եւս գտցի ի քեզ. և ձայն երկանի մի՛ եւս լուիցի ի քեզ· (23) Եւ լոյս ճրագի [4]Յ-ՆՆ, քանզի [5]Յ-ՆՆ, էին [6]ի Յ-ՆՆ պ-ի-ե [7]Յ-ՆՆ, ի նմա [8]Յ-ՆՆ, սպանելոց ի վերայ երկրի [9]Ո՞ՒՀ, Տեառն Աստուծոյ

գատեաց զպոռնիկն մեծ [1]ի պոռնկութեան իւրոյմ, և խնդրեաց զվրէժ արեան ծառայից իւրոց
3 *ի ձեռաց նորա։ Եւ կրկին անգամ [2]օրհնեցին և՝ ասացին, Ալէլուիա. և ծուխ նորա ելանէր յաւի-*
4 *տեանս յաւիտենից. Եւ անկան քսան և չորք երիցունքն և չորք կենդանիքն, և երկիր պագին Աստուծոյ որ նստէր յաթոռ [2]փառաց, ասելով, Ա-*
5 *մէն, Ալէլուիա։ Եւ ձայն յաթոռոյն ելանէր՝ ասելով, Օրհնեցէք զԱստուած մեր, ամենայն ծառայք նորա, և որք երկնչիք ի նմանէ, փոքունք*
6 *և մեծամեծք։ Եւ լսեայ [3]ձայն բազմութեան մեծի, և իբրեւ զձայն ջուրց բազմաց, և իբրեւ զձայն հզօր որոտման, ասելով [2]դարձեալ, Ալէլուիա, վասն զի թագաւորեաց [4]Աստուած [5]մեր Ամենա-*
7 *կալ։ Խնդամք և ցնծամք և տամք փառս նմա, զի եկն հարսանիք Գառինն, և կինն՝ [2]հարսն նորա*
8 *պատրաստեաց զինքն։ Եւ տուաւ նմա զգենուլ բեհեզս ապիտակս սուրբս [2]և լուսափայլս՝, որ է*
9 *բեհեզն՝ արդարութիւն սրբոցն։ Եւ [2]մի յերիցանցն՝ ասէր ցիս, Գրեա [2]զայդ, երանելիք են ա-ռնելեաւն որ կոչեցեալ են յընթրիս հարսանեաց*
10 *Գառինն[6]։ Եւ ես [7]անկեալ առաջի ոտից նորա, [8]երկիր պագի՝ նմա. և ասէ ցիս, [9]Անսա, մի՛ ան-*

---

[1] Յ-ԽՆ, որ ապականեաց զերկիր ի պոռնկութեան [2] ի Յ-ՆԻՆ պ-ի-ե [3] Յ-ԽՆ, իբրեւ զձայն [4] Բ-ղ-ո-ւթ, Տէր Աստուած [5] ի Բ-ղ-ո-ս պ-ի-ե [6] Յ-ԽՆ յ-ե-ղ-ո-, և ասէ ցիս, Այս են բանք ճշմարիտք Աստուծոյ [7] Յ-ԽՆ, անկայ [8] Յ-ԽՆ, երկիր պագանել [9] Յ-ԽՆ, Զգոյշ լեր, մի՛.

կանիր առաջի իմ, քանզի և ես՝ ծառայակից քո եմ և եղբարց քոց որք ունին վկայութիւնն Յիսուսի [1]Քրիստոսի. Տեառն՝ Աստուծոյ [1]միայն երկըրպագեա. [1]քանզի հաստատութեամբ Յիսուսի է տեսիլդ և հոգի մարգարէութեանդ,՝ զի վկայութիւն Յիսուսի է [2]Հոգւովն Սրբով՝ որ ի մարգարէսն էր՝:

11 *Եւ տեսի զերկինս բացեալ և ահա ձի սպիտակ, և որ հեծեալն էր ի նմա՝ [3]Հաւատարիմ և ճշմարիտ, և արդարութեամբ դատի և պատերազմի.*

12 *եւ աչք նորա բոց հրոյ, և ի վերայ գլխոյ նորա պսակս բազումս. և ունէր անուն գրեալ, զոր ոչ*

13 *ոք գիտէ բայց միայն ինքն: Եւ արկեալ զիւրեաւ հանդերձ ներկեալ արեամբ. և կոչէր անուն նո-*

14 *րա Բան Աստուծոյ: Եւ [1]զօրավարք երկնից և՝ զորք երկնից զհետ երթային նորա [4]ձիովք, զգեցեալք*

15 *բեհեզս սուրբս և սպիտակս: Եւ ի բերանոյ նորա ելանէր սուր սրեալ, զի նովաւ հարցէ զազգս. և նա հովուեսցէ զնոսա գաւազանաւ երկաթեաւ, և նա կոխեսցէ զհնձան գինւոյ բարկութեան*

16 *Աստուծոյ Ամենակալի: Եւ ունէր ի վերայ պատմուճանի իւրոյ և ի վերայ [5]անդամոց իւրոց՝ գիր գրեալ,* ԹԱԳԱՒՈՐ ԹԱԳԱՒՈՐԱՑ ԵՒ ՏԻՐ ՏԵՐԱՆՑ:

17 *Եւ տեսի այլ հրեշտակ որ կայր ի վերայ արեգական, զի աղաղակեաց ի ձայն մեծ ամենայն*

---

[1] ի ցոն. պակաս [2] ցոն., Հոգին մարգարէութեան [3] Բուլմ., կոչի Հաւատարիմ [4] ցոն., ձիովք սպիտակօք [5] ցոն., ազգեր իւրոյ

հաւուց թռուցելոց ընդ մէջ երկնից՝ ասելով, եկայք ժողովեցարուք [1]յընթրիս մեծին Աստուծոյ.
18 եւ՝ կերիջիք զմարմինս թագաւորաց, [2]և զմարմինս հզօրաց, և զմարմինս երիվարաց և [3]ամենայն հեծելոց ի նոսա, և [4]զմարմինս ազատաց և ծառայից, մեծի և փոքու։
19 Եւ տեսի զգազանն և զթագաւորս երկրի և զզօրս նոցա ժողովեալս՝ առնել պատերազմ ընդ այնմ որ հեծեալն էր ի ձին ապիտակ և ընդ զօրս նորա։
20 Եւ ըմբռնեցաւ գազանն և որ ընդ նմա սուտ մարգարէն որ առնէր զնշանսն առաջի նորա, [5]և զորս մոլորեցոյց և ետ առնուլ՝ զդրոշմ գազանին, և զերկրպագուս պատկերի նորա. և կենդանւոյն [6]արկին զնոսա՝ ի լիճ հրոյ այրեցելոյ ծծմբով։
21 Եւ այլքն մեռան ի սրոյ հեծելոյն ի վերայ ձիոյն, յորոյ բերանոյ ելանէր սուրն. և ամենայն թռչունք յագեցան ի մարմնոց նոցա։

Գլ. Ի

1 Եւ տեսի այլ հրեշտակ զի իջանէր յերկնից, և ունէր զփականս դժոխոց և շղթայս մեծ ի ձեռին
2 իւրում. Եւ ըմբռնեաց զվիշապն, զօձն առաջին, որ է Բանսարկուն և Սատանայ, և կապեաց զնա
3 հազար ամ։ Եւ արկ զնա յանդունդս [3]դժոխոց, և

---

[1]Բ—ը—ր, ի մեծ ընթրիս Աստուծոյ, (18) Զի
[2]Ց—յն, և զմարմինս հազարապետաց, և [3]Ի Ց—ն՚ն պ—ե—ե [4]Ց—յն, զմարմինս ամենեցուն, [5]Ց—յն, որովք մոլորեցոյց զորս առին [6]Ց—յն, արկան երկոքին

փակեաց և կնքեաց [1]զնա, զի այլ մի՛ եւս մոլորեցուսցէ զազգս, մինչեւ կատարեսցի հազար ամն. և յետ այնորիկ պարտ է լուծանել նմա սակաւ մի ժամանակ։

4 Եւ տեսի աթոռս, և նստան ի վերայ նոցա. և դատաւորութիւն տուաւ նոցա՝ [2]ընտրել զՅոդիս [3]չարչարելոցն վասն վկայութեանն Յիսուսի և վասն բանին Աստուծոյ, և զորս ոչն երկիր պագին [4]գազանին, և ոչ առին զդրոշմ նորա ի ճակատս իւրեանց և ոչ ի վերայ [5]աջոյ ձեռին իւրեանց. և կացին և թագաւորեցին ընդ Քրիստոսի հազար ամ։

5 Եւ [6]յետ այսորիկ ի մեռելոց ոչ ոք եկեաց՝, մինչեւ ի կատարել հազար ամին. այս է յարութիւն

6 առաջին։ [7]Երանի սրբոցն, որք ունին՝ բաժին ի յարութեանն առաջնում. ի վերայ սոցա երկրորդ մահն ոչ ունի իշխանութիւն, այլ եղիցին քահանայք Աստուծոյ և [5]Տեառն Յիսուսի՝ Քրիստոսի. և թագաւորեսցեն ընդ նմա հազար ամ։

7 Եւ յետ հազար ամին [8]լուծցէ զՍատանայ և հանցէ ի բանտէ անտի. եւ ելցէ՝ և մոլորեցուսցէ զազգս ամենայն ընդ չորս կողմանս երկրի, [9]զԳոգ և զՄագոգ առնել ի ձեռս ժողովել նոքօք զամենայն զօրս՝ ի պատերազմ. որոց թիւ նոցա իբրեւ

---

[1]Յ-ննն, ի վերայ նորա [2]Յ-ննն, և [3]Յ-ննն, գլխատելոցն [4]Յ-ննն, գազանին և պատկերի նորա [5]ի Յ--նէն պ-ւ-ե [6]Յ-ննն, Ընացորդք ի մեռելոց ոչ կեցին [7]Յ-ննն, Երանելի և սուրբ է որ ունի [8]Յ-ննն, լուծցի Սատանայ ի բանտէ իւրմէ, և ելցէ [9]Յ-ննն, զԳոգ և զՄագոգ, ժողովել զնոսա

8 զաւազ ծովու։ Եւ [1]ելցեն ի լայնութիւն երկրի և
[2]պատեսցեն շուրջ զբանակս սրբոցն և [3]զքաղաքին
9 սիրելւոյ։ Եւ իջցէ՞ հուր յերկնից առ ի յԱստուածոյ և [4]կերիցէ զնոսա, և [5]զզօրագլուխն նոցա զԱ-
ատանայ որ մոլորեցոյց զնոսա. և արկցէ զնոսա ի
10 ծովն՞ հրոյ և ծծմբոյ, ուր էր գազանն և առաքեալն մարգարէն. և չարչարեսցին գտիւ և գգիշեր[6]։
11 Եւ տեսի աթոռ սպիտակ մեծ, և ի վերայ նո-
ցա նստեալ՝ յորոյ երեսացն երկնչէին և փախչէին
12 երկինք և երկիր, և տեղի ոչ գտաւ նոցա։ Եւ
տեսի զմեռեալս մեծամեծս և զփոքունս, որ կային
առաջի [7]աթոռոյն. և գրեանք բանային, և այլ
գիրք բացան կենաց. և դատեցան մեռեալք [8]ի
13 գրելոցն ըստ գործոց իւրեանց։ Եւ ետ ծով զմեռ-
եալս իւր, և մահ և դժոխք զիւրեանց մեռեալս.
և դատեցան իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց։
14 Մահ և դժոխք մատնեցան ի լիճ հրոյն[9]։ (15) Եւ
որ ոք ոչ գտաւ ի գիրն կենաց գրեալ՝ արկաւ ի
լիճ հրոյն։

ԳԼ. ԻԱ

1 Եւ տեսի երկին նոր և երկիր նոր. քանզի առա-

---

[1]Ց-ՆՆ, ելին [2]Ց-ՆՆ, պատեցին [3]Ց-ՆՆ, զքաղաքն սիրելի։ (9) Եւ ԷՋ [4]Ց-ՆՆ, կերաւ [5]Ց-ՆՆ, Բանասարկուն որ մոլորեցոյց զնոսա՝ արկաւ ի լիճն
[6]Ց-ՆՆ յ--Ե--, յաւիտեանս յաւիտենից [7]ՈՒՆ, Աստուածոյ [8]Ց-ՆՆ, ի գրելոցն ի գիրսն [9]ի Ց--
ՆԷն, Բ--Ղ--Ի յ--Ե--Ն, այս է մահն երկրորդ. ՍՆԽ՝ այս է մահն երկրորդ, լիճ հրոյն

ջինն երկինք և երկիր էանց. և ծով ոչ գոյր։
2 [1]Եւ զքաղաքն սուրբ զնորն Երուսաղէմ տեսի զի
իջանէր [2]յԱստուծոյ և յերկնից", զարդարեալ և
3 պատրաստեալ որպէս հարսն առն իւրոյ։ Եւ լուայ
ձայն յերկնից որ ասէր, Ահաւասիկ խորանն Ա-
ստուծոյ ի մէջ մարդկան, և բնակեսցէ ընդ նոսա.
և նոքա ժողովուրդ նմա. և [3]ինա Աստուած նոցա։
4 Եւ ջնջեսցէ զամենայն արտօսր յաչաց նոցա. և մահ
ոչ եւս [4]գոյ, ոչ սուգ և ոչ աղաղակ և ոչ ցաւք
[5]և ոչ աշխատանք ոչ եւս գոյ", զի առաջինն էանց։
5 Եւ ասաց ցիս որ նստէրն ի վերայ աթոռոյն, Ա-
հաւասիկ առնեմ զամենայն նոր. և ասէ ցիս,
6 Գրեա, այս բանք ճշմարիտ և հաւատարիմք։ Եւ
ասէ ցիս, [6]եղէ ես" Ալփա և Ով, Սկիզբն և կա-
տարած. ես ծարաւելոցն տամ յաղբերէ ջրոյ կե-
7 նաց ձրի։ Որ յաղթէ՝ ժառանգեսցէ զայս ամե-
նայն. և ես եղէց [7]նոցա Աստուած, և նոքա եղի-
8 ցին ինձ որդիք"։ Եւ [8]ծուլացն և անհաւատից,
[9]ապականողաց և պոռնկաց և կախարդաց և կա-
պաշտից [10]և դեղատուաց", և ամենայն ստոց՝ [10]ամ-
պարշտաց, որոց" բաժինն իւրեանց ի լճին այրեցե-
լոյ հրով և ծծմբով, որ է մահն երկրորդ։
9 Եւ եկն առ իս մի յեւթն հրեշտակացն, որք

---

[1]Ո՛ահ, Եւ ես Յովհաննէս [2]Յ-ննն, յերկնից, յԱ-
ստուծոյ [3]Յ-ննն, ինքն Աստուած եղիցի ընդ նոսա,
[4]Յ-ննն, իցէ [5]Յ-ննն, ոչ եւս իցեն [6]Ո՛ահ, եղեւ.
ես եմ [7]Բ-ղ-ո՛ւ, նմա Աստուած և նա եղիցի
ինձ որդի [8]Յ-ննն, երկչոտաց [9]Յ-ննն, և պղծոց և
ապականողաց [10]ի Յ-ննն պ-ո՛ւ-ահ

ունէին զեւթն սկաւառական լցեալս եւթն [1]վախճանաւ կատարածովք", և խօսեցաւ ընդ իս և ասէ,
10 եկ՝ ցուցից քեզ զՀարանն, [2]և զկին Գառինն։ Եւ առ տարաւ զիս ի լեառն մի բարձր և մեծ, հոգւովն, և եցոյց ինձ զքաղաքն [3]մեծ և" սուրբ՝ Երուսաղէմ. զի իջեալ էր յերկնից առ ի Աստուծոյ. Եւ ունէր զփառս Աստուծոյ. և էր ի նմա
11 լուսաւորութիւն նմանեալ ականց պատուականաց
12 [4]քար յասպիս սառնատեսակ և կենդանի"։ Եւ էին պարիսպք նորա մեծ և բարձր, և ունէր դրունս երկոտասան. և [5]յերկոտասան դրունսն" երկոտասան հրեշտակս, և [6]անուանք իւրաքանչիւրոցն ի վերայ դրանցն գրեալ էին զոյա երկոտասան ցեղիցն
13 Իսրայելի"։ Յարեւելից կողմանէ դրունք երեք, և ի հիւսիսոյ կողմանէ դրունք երեք, և ի հարաւոյ կողմանէ դրունք երեք, և յարեւմտից կողմանէ դրունք
14 երեք։ Եւ պարիսպ քաղաքին ունէր հիմունս երկոտասան, և ի նոսա երկոտասան անուանք երկոտասան առաքելոց Գառինն։
15 Եւ որ խօսէրն ընդ իս, ունէր եղէգն ոսկի ի ձեռին իւրում՝ զի չափեսցէ զքաղաքն և զդրունս նորա և զպարիսպս նորա։ Եւ էր
16 քաղաքն քառակուսի, և որչափ երկայնութիւն նորա՝ նոյնչափ և լայնութիւն, [7]և բարձրութիւն հաւա-

---

[1]Յ---, հարուածովք վերջնովք [2]ի Յ---նէ պ---ե
[3]ի Բ---ս---մ պ---ե [4]Յ---, իբրեւ զքար յասպիս սառնատեսակ [5]Յ---, ի վերայ դրանցն [6]Յ---, անուանս գրեալս ի վերայ, որ են երկոտասան ցեղից որդւոցն Իսրայելի [7]Յ---, և չափեաց զքաղաքն եղեգամբն ասպարէզս երկոտասան հազար.

սար, և էր չափ երկայնութեան նորա երկուտասան հազար ասպարէզս. և լայնութիւն նորա և բարձրութիւն միաչափ կիվս"։ 17 Եւ չափեաց զպարիսպն նորա հարեւր և քառասուն և չորս [1]ասպարէզս. 18 չափ մարդոյ որ է հրեշտակի։ Եւ էր շինուած [2]պարսպաց քաղաքին", յասպիս. և քաղաքն էր ոսկի մաքուր նման սուրբ [3]և սպիտակ" ապակւոյ։ 19 Եւ հիմունք [4]քաղաքին յամենայն ականց [5]պատուականաց. հիմն առաջին [3]պարսպին՝ յասպիս, երկրորդն՝ շափիղայ, երրորդն՝ պղնձագոյն, չոր- 20 րորդն՝ զմրուխտ, հինգերորդն՝ եղինգնաքար, վեցերորդն՝ սարդիոն, եւթներորդն՝ ոսկեքար, ութերորդն՝ բիւրեղ, իններորդն՝ տպազիոն, տասներորդն՝ քրիւսապրասոս, մետասանն՝ յակինթ, երկոտա- 21 սանն՝ ամեթիստ։ Եւ էին երկոտասան դրունք յերկոտասան մարգարտաց՝ [3]միոձեւս. և իւրաքանչիւրոցն դրունքն էին մի մի գաւառն՝ ի միոյ միոյ մարգարտէ. և [6]ընդարձակութիւն քաղաքին ոսկի մաքուր որպէս ապակի պայծառ։ 22 Եւ տաճար ոչ տեսի ի նմա, քանզի Տէր Աստուած Ամենակալ 23 տաճար [7]էր ի նմա և Գառն։ Եւ քաղաքին [8]չէին պէտք արեգական և լուսնի, զի լուսաւորեսցեն զնա. քանզի փառքն Աստուծոյ լուսաւորէին զնա 24 յամենայն ժամ, և ճրագ ի նմա՝ Գառն։ Եւ

երկայնութիւն և լայնութիւն և բարձրութիւն նորա հաւասար էին [1]Ց-ՆՆ, կանգուն [2]Ց-ՆՆ, պարսպի նորա [3]Ի Ց-ՆԻՆ պ-ի-ս-ե [4]Ց-ՆՆ, պարսպի քաղաքին [5]Ց-ՆՆ, պատուականաց զարդարեալ [6]Ց-ՆՆ, հրապարակ [7]Ց-ՆՆ, է [8]Ց-ՆՆ, չեն

[1]գնային հեթանոսք ի լոյս նորա. և թագաւորք
25 երկրի [2]լուսազգեաց լինէին ի փառաց նորա"։ Եւ
դրունք նորա ոչ [3]փակէին ի տուէ և ի գիշերի,
այլ բաց կային հանապազորդ. և գիշեր ոչ եւս
26 լինէր ի նմա. Անդ փառք և պատիւ ազգաց"։
27 Եւ ոչ մտցէ անդ ամենայն [4]չարակամ և պիղծ"
և ստութիւն, բայց միայն որ գրեալ են ի գպրու-
թիւն կենաց Գառինն։

ԳԼ. ԻԲ

1 **Եւ** եցոյց ինձ [5]մաքուր [6]գետ կենդանի ջրոյ սաս-
նատեսակ", որ ելանէր յաթոռոյն Աստուծոյ և
2 Գառինն։ Եւ [7]գնայր ի մէջ հրապարակաց քաղա-
քին. և զեղերբք գետոյն" ասէ և անտի ծառ կե-
նաց որ բերէր պտուղս երկոտասան, ըստ միոյ միոյ
ամսոյ տային զպտուղս իւրեանց. և տերեւ ծա-
3 ռոյն էր բժշկութիւն հեթանոսաց։ Եւ նզովք անդ
ոչ եւս էին. և աթոռն Աստուծոյ և Գառին նորա
4 էր ի նմա, և ծառայք նորա [8]պաշտէին զնա. Եւ
[9]տեսանէին զերեսս նորա. և անուն նորա գրեալ
5 [10]էր ի ճակատս նոցա։ Եւ գիշեր [11]ոչ անդ, և

---

[1]Ց-ՆՆ, գնասցեն [2]Ց-ՆՆ, զփառս իւրեանց բերցեն
առ նա [3]Ց-ՆՆ, փակեսցին ի տուէ, զի գիշեր ոչ
եղիցի անդ. (26) Եւ բերցեն զփառս և զպատիւ
ազգաց առ նա [4]Ց-ՆՆ, խառնակ, և որ առնէ
պղծութիւն [5]ի Բ-ոլ-ո-ր պ-ո-ւ-ե [6]Ց-ՆՆ, գետ ջրոյ
կենաց պայծառ իբրեւ զակն վանի [7]Ց-ՆՆ, ի մէջ
հրապարակի նորա և գետոյն [8]Ց-ՆՆ, պաշտեսցեն
[9]Ց-ՆՆ, տեսցեն [10]ի Ց-ՆՆ-ի պ-ո-ւ-ե [11]Ց-ՆՆ, ոչ եղիցի

չէր ինչ անդ պէտք [1]ճրագի և լուսոյ արեգական, վասն զի Տէր Աստուած [2]լուսաւորէր զնոսա. և թագաւորեսցեն յաւիտեանս յաւիտենից։

6 Եւ ասէ ցիս, Այս բանք հաւատարիմ են և ճշմարիտ, և Տէր Աստուած [3]մարգարէից սրբոց՝ առաքեաց զհրեշտակ իւր [4]ծառայիդ իւրում՝ ցու-
7 ցանել զոր լինելոց է վաղվաղակի։ Ահա գամ վաղվաղակի. երանի որ պահէ [5]զբան մարգարէու-թեանն զայս՝։

8 Եւ ես Յովհաննէս լուայ և տեսի զայս ամենայն. և յորժամ լուայ և տեսի, անկայ [6]և երկիր պա-գի՝ հրեշտակին որ ցուցանէր ինձ զայս ամենայն։
9 Եւ ասէ ցիս, [7]Մի՛ անկանիր առաջի իմ և երկիր պագաներ՝. քանզի և ես ծառայակից քո եմ և եղբարց քոց որ պահեացեն զբան մարգարէութեան
10 գրոյս այսորիկ. Աստուծոյ երկիր պագ։ Եւ ասէ ցիս [8]դարձեալ, Մի՛ կնքեր զբանս մարգարէական
11 գրոցս այսմիկ, քանզի ժամանակս մերձ է։ Որ [9]ամպարշտեալոցն է՝ ամպարշտեսցի, և որ [10]աղտե-ղանալոցն է՝ աղտեղասցի, և որ [11]արդարանալոցն
12 է՝ արդարասցի, և որ [12]սրբեալոցն է՝ սրբեսցի։ Ա-հա գամ վաղվաղակի, և վարձք իմ ընդ իս՝ հա-
13 տուցանել իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց։ Ես

---

[1] Ո՛ն+, լուսոյ ճրագի [2] Յ-ննն, լուսաւորեսցէ
[3] Ո՛ն+, ոգւոց մարգարէից [4] Յ-ննն, ծառայից իւ-րոց [5] Յ-ննն, զբանս մարգարէութեանն այսորիկ
[6] Յ-ննն, երկիր պագանել [7] Յ-ննն, Զգոյշ լեր, մի՛
[8] ի Յ-ննն պ-ո-ե [9] Յ-ննն, ամպարշտին [10] Յ-ննն, աղտեղին [11] Յ-ննն, արդարն է [12] Յ-ննն, սուրբն է

եմ Ալփա և Ով, Սկիզբն և կատարած, Առաջին
14 և Վերջին։ Երանելիք են որ պահեն զպատուիրանս
նորա. Նոքա ունին իշխանութիւն [1]ուտել ի փայ-
տէն՝ կենաց և մտանել ընդ դրունս քաղաքին։
15 Այլ ելցեն արտաքս շունք և դեղատուք [2]և սպա-
նողք և կռապաշտք, և ամենեքեան որ [3]սիրեն
զատութիւն։

16 Ես Յիսուս առաքեցի զհրեշտակ իմ վկայել զայս
ձեզ եկեղեցեացդ. ես [4]արմատ և սերմ ի Դաւթայ՝,
17 և աստղ պայծառ առաւօտին։ [5]Եւ Հոգի, և Փե-
սայն՝ որ գալոցն եմ. և որ լսէ՝ ասելով թէ եկ,
և որ ծարաւի իցէ՝ եկեսցէ, և որ ոք կամի առ-
նուլ՝ զջուրն կենաց ձրի։

18 Վկայեմ և ես ամենայնի որ լսէ զբանս մարգա-
բէութեան գրոցս այսմիկ, թէ ոք յաւելցէ ի սա,
յաւելցէ Աստուած ի վերայ նորա [6]զեւթն հար-
19 ուածան՝ գրեալս ի գիրս յայս։ Եւ եթէ ոք պա-
կասեցուսցէ ի բանից մարգարէութեան գրոյս այս-
միկ, պակասեցուսցէ և Հատցէ Աստուած զբաժին
նորա [7]ի ծառոյն կենաց և ի քաղաքէն սրբոյ, [8]որ
20 գրեալ է ի գիրս յայս՝։ Ասաց որ վկայեացն զայս,
Գամ ես վաղվաղակի։ Ամէն, եկ, Տէր Յիսուս

---

[1]Յ-ննն, ի վերայ փայտին [2]Յ-ննն, և պոռնիկք և
[3]Յ-ննն, սիրեն և առնեն [4]Յ-ննն, եմ արմատ և
ազգ Դաւթի [5]Յ-ննն, Եւ Հոգի և Հարսն ասեն,
եկ. և որ լսէն՝ ասասցէ, եկ. և որ ծարաւի իցէ՝
եկեսցէ, և որ կամիցին՝ առցէ [6]Յ-ննն, զՀար-
ուածան [7]Ո՛ռն+, ի դպրութենէն [8]Ո՛ռն+, և ի
գրելոց ի մատենիս յայսմիկ

21 [1]Քրիստոս։ Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի [2]ի վերայ ամենայն սրբոց"։ Ամէն։

---

[1]ի Յ--ն՝ պակաս [2]ի Յ--ն, «Ահա՛ ընդ ամե-
նայն աւուրբս, այո՛ ընդ աւուրբս, և այո՛ ընդ հետ
ամենեսեան

ՎԱԽՃԱՆ ՆՈՐՈՑ ԿՏԱԿԱՐԱՆԻ

ԱԽԹ ՑՓՀՀԱՆՆԻՍԵԱՆ
1960
ՆՈՐ - ՋՈՒՂԱ

